ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄԲԻՈՆ
THE ARMENIAN DEPARTMENT OF HAIGAZIAN UNIVERSITY

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

هايكازيان
مجلّة الدّراسات الأرمنيّة

HAIGAZIAN ARMENOLOGICAL REVIEW

Volume 42/1

ՈՂՋՈՒՅՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՑԱՆՑԻՆ

Քսաներորդ դարավերջի արհեստագիտական մեծագոյն նորութիւնը համացանցն էր: Զարգացող ու աճող այս նորութեան մեծադղորդ իրագործումներու գործընթացը դեռեւս չէ հասած իր աւարտին: Երեսնամեակի մը հեռաւորութենէն, սակայն, արդէն աւելի քան նկատելի են համացանցին գործած (եւ պարտադրած) ազդեցութիւնը մարդկութեան բոլոր բնագաւառներուն վրայ անխտիր:

Համացանցի դաշտը հայ իրականութեան առջեւ ալ բացաւ հաղորդակցական հսկայ աշխարհ մը եւ աւելին: Իր մասնակիցներու թէ գրառումներու առատութեամբ, բովանդակային այլազանութեամբ, անմիջականութեամբ, քննարկումի արագ, գրեթէ չընդհատող տեւողութեամբ եւ այլ հնարաւորութիւններու աննախընթաց դիւրութեամբ, այն արդէն դարձած է անխուսափելի ներկայութիւն մը, որ կրնայ շուտով աւելի մեծ ընդգրկում եւ դեր ունենալ քան հայկական թղթային նիւթը, յարաբերութիւններու այլ ոլորտները:

Ան նաեւ փոխակերպեց հետազօտական կարելիութիւնները՝ նիւթական, ժամանակի, աշխարհագրական եւ այլ խոչընդոտներու նուազեցմամբ: Աւելին. ցարդ չհանրայնացուած հայկական հումքը առիթ ու միջոց ունեցաւ մատչելի դառնալու, իսկ հանրայնացուածը՝ արհեստագիտական նորագոյն միջոցներով դարձաւ առաւել դիւրընկալելի:

Անգնահատելի եղաւ - եւ է - համացանցին դերը յատկապէս վերջին տարիներուն, երբ առցանց հանդիպումները մեծապէս փոխարինեցին անմիջական ձեռնարկները, համաժողովները եւն.:

Զուտ հայագիտական կտրուածքով եթէ հայինք մատուցուածին՝ ապա ուշագրաւ են հայուն անցեալի ու ներկայի կենսագործունէութեան բոլոր երեսակներուն վերաբերող ձայնային, լուսանկարային, ձեռագիր-տպագիր եւ այլ թուայնացած նիւթերու անհաշուելի քանակը: Այսու՝ կը ցցուի գիտական մտահոգութիւնը. հայագիտական այս հսկայ հումքը ու՞ր եւ ինչպէ՞ս կը դասակարգուի ու կ'օգտագործուի: Հայագիտական տպագիր-թղթացուած նիւթի գլխաւոր կեդրոնները յստակ են, անոնց մատչելու եւ անոնցմէ օգտուելու (որքան ալ դիւանական թէ այլ դժուարութիւններ ըլլան կարգ մը պարագաներու) գործընթացն ու ընթացակարգը որոշ չափով կանոնակարգուած են: Նոյնը կարելի՞ է ըսել համացանցի հայկական-հայագիտական դաշտին մասին:

Համացանցը կը յատկանշուի ներքին ուժական յարափոփոխութեամբ, որ նորութիւններու հետ անմիջականօրէն քայլ պահելու առիթ ընձեռելով հանդերձ, բացարձակ կարելիութիւններ չ'ընծայեր եւ ենթակայ է վտանգներու՝ կայքերու դադրեցումին, կայքահէնութեան: Հայագիտական առումով նոյնպէս, միանշանակ չեն համացանցին մէջ զանազան ոլորտներու բաւարար, հաւասար ու բազմընդգրկուն առկայութիւնը, ներկայացուածին հաւաստիութիւնը, նիւթի յարատեւ թարմացումը: Թէեւ ցանկալի՝ բայց դժուար թէ ան երբեւէ պարփակէ տպագիր եւ ձեռագիր ամբողջ նիւթը, ուստի եւ ամբողջապէս փոխարինէ զայն:

Հակառակ վերոյիշեալ վտանգներուն ու մտահոգութիւններուն, միայն գերագնահատել կարելի է համացանցին օգտաշատութիւնը. ան արխիւային աւանդներու, գիրքերու, մամուլի եւ այլ նիւթերու առձեռնութեան, իրազեկումի հրաշալի իրականութիւն է:

ԻԱ. դարու հայագիտութիւնը համացանցային քարտէսին վրայ իր լիարժէք տեղը ունենալու մարտահրաւէրին դիմաց է:

ԱԶԴ

*Հայկազեան Հայագիտական Հանդէս*ը
այսուհետեւ լոյս կը տեսնէ տարեկան երկու գիրքով:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ
Անդրանիկ Տագէսեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
Արտա Էքմէքճի (ի պաշտօնէ), Արշալոյս Թոփալեան, Արմէն Իւրնէշլեան, Սիլվա Փափազեան

ԽՈՐՀՐԴԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ
Սիլվիա Աճէմեան, Նանօր Գարակէօզեան, Ժիրայր Դանիէլեան, Երուանդ Երկանեան, Հրանուշ Խառատեան, Մուրատ Հասրաթեան, Հրաչ Չիլինկիրեան, Մկրտիչ Պուլտուքեան, Սեդա Տատոյեան, Սուզըն Փեթի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՀՀՀ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ
Հայ Աւետարանչական Ընկերակցութեան Գրասենեակ

HAIL TO THE ARMENIAN INTERNET

The internet was the most important technological innovation of the late 20th century. The impact of this novelty, which is still growing and progressing, has not come to its end yet.

However, a glance at the past three decades makes obvious the effects of the internet on all aspects of human life with no exceptions.

The internet also opened up a huge world of Armenian communications.

The facilities and attributes of this social network include the abundance of participants, multiplicity of content, promptness, immediacy of comments, and the almost uninterrupted stream of discussions, to list a few. These and other unprecedented capacities and the ease of use have made it a ubiquitous presence, and may soon encompass more than has been previously published in Armenian Studies, and contest other means of communications.

It has transformed research facilities and reduced, particularly, financial, time-related and geographic deterrents. Furthermore, it has rendered unpublished Armenian material the chance of accessibility, and has enabled further easy access and viewing of already published materials through modern technological devices and programs.

One can hardly exaggerate the role the internet has played – and still does – during the last few years when Zoom events largely replaced face-to-face meetings and conferences.

Looking at this phenomenon from an Armenian Studies perspective, one can see the incalculable amount of audiovisual, written or printed digitized material related to all aspects of past and present Armenian output.

This fact raises a scientific concern: How is this immense quantity of raw material being classified and utilized?

The main centers of both published and archival material of Armenian data are well known and the procedures and norms for access to them (no matter how hard bureaucratic red-tape is in certain cases) are regulated. However, can we make a similar statement regarding Armenian Digital material?

The internet is characterized by its inherent dynamic of constant change, which, though it offers opportunities to keep pace with

immediate novelties, does not grant unlimited possibilities and is subject to hacking, pauses/interruption or closure of sites. Besides, not all fields of Armenian Studies have attained an equal level of content, credibility and ongoing progress. The internet will never be able to include all the published and non-digitized material.

Notwithstanding the above-mentioned caveats and concerns, one can hardly exaggerate the internet's utility. It is a wonderful, handy and informative universe of archival, newspapers', published and other digitized items.

21st-century Armenian Studies is challenged to have a highly respected place on the world internet map.

NOTE

As of 2022 *Haigazian Armenological Review* will publish two books per year.

EDITOR-IN-CHIEF
Antranik Dakessian

EDITORIAL BOARD
Arda Ekmekji (ex-officio), Silva Papazian, Arshalouyse Topalian, Armen Urneshlian

CONSULTATIVE BODY
Sylvia Agemian, Megerditch H. Bouldoukian, Seta Dadoyan, Murad Hasratian, Nanor Karageozian, Hranush Kharatian, Susan Pattie, Jirair Tanielian, Hratch Tchilingirian, Yervand Yerkanian

***HAR* REPRESENTATIVE IN ARMENIA**
AMAA Yerevan Office

ՅՕԴՈՒԱԾ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ (ԹՈՒՐՔ-ԹԱԹԱՐԱԿԱՆ) ՀԻՆ-ՆՈՐ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ. ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ[1]

ՎԱՐԴԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ (vardan.mkhitaryan.g@gmail.com)

…տարբեր ժամանակներում, տարբեր թաթարական ցեղերի կողմից ձեւաւորուեց մարզի (Հայկական Մարզի - Վ.Մ.) մահմեդական բնակչութիւնը…:

Իւան Շոպէն

Հայաստանի թագաւորների օրօք այն առանձնայատուկ մի գաւառ կամ իշխանապետութիւն էր՝ Սիւնիք կամ Սիսական անուամբ, որն ունէր բազմաթիւ շրջանների բաժանուած տարածքներում ապրող մեծաթիւ ազգաբնակչութիւն: Տարածաշրջանը ծածկուած էր գիւղերով, եկեղեցիներով եւ ունէր բազում քաղաքներ ու գեղեցիկ վանքեր:

Ֆրեդերիկ Դիւ Բուա

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Մրցակցութիւնը դասւում է մարդկութեանն ուղեկցող եւ յարատեւող երեւոյթների շարքին: Մրցակցային պայքարն ընթացել է ողջ պատմութեան ընթացքում եւ գոյութիւն ունի մինչ օրս: Այն իր դրսեւորումն է գտնում հասարակութեան կեանքի բոլոր ոլորտներում: Մրցակցութեան ծայրայեղ ձեւը զինուած հակամարտութիւնն է՝ պատերազմը, որի ելքով է պայմանաւորուած հակամարտող կողմերի յետագայ կարգավիճակը:

Հազարամեակներ շարունակուող այս մրցակցութեան ընթացքում հայ ժողովրդի պատմութիւնը, ցարդ գոյատեւած աշխարհի հնագոյն ժողովուրդների նման, հարուստ է ինչպէս փառահեղ յաղթանակներով եւ վերելքներով, այնպէս էլ կորուստներով: Այսուամէնայնիւ, հայ ժողովուրդն իր հերոսական մաքառումների շնորհիւ, այսօր պահպանել է իր պետականութիւնն ու ինքնութիւնը եւ տէր է իր պատմական հայրենիքի, թէկուզեւ փոքրիկ, մօտ 1/10 հատուածին, իդէմս երկու հայկական պետութիւնների՝ Հայաստանի եւ Արցախի Հանրապետութիւնների[2]: Համաշխարհային մըր-

---

[1] Հրատարակութեան է նախապատրաստուել Գալուստ Կիւլպենկեան Հիմնադրամի աջակցութեամբ:

[2] Յօդուածի շարադրանքի տրամաբանութիւնը կառուցուած է Արցախի Հանրապետութեան (1991 Սեպտեմբերի 2ին ընդունուեց «Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան հռչակման մասին» որոշումը, որով նախկին ԼՂԻՄ եւ Շահումեանի շրջանի տարածքում ձեւաւորուեց անկախ հայկական պետութիւն՝ ԼՂՀ (ԱՀ)ն) դէմ Ադրբեջանի Հանրապետութեան յարձակման հետեւանքով ծագած զինուած հակամարտութեան (1988-94) արդիւնքում՝ 1994 Մայիսի 16ին ստորագրած համաձայնագրից մինչեւ 2020 Սեպտեմբերի 27ի իրողութիւնների

ցակցային պայքարի արդիւնքում, մօտաւոր տուեալներով, քաղաքական քարտէզից միայն հին աշխարհում անհետացել է շուրջ 200 պետութիւն[3]:

Արդի պայմաններում, հայկական պետականութիւնները աքցանուած, մեծամասամբ շրջափակուած թիւրքական աշխարհով, փորձում են դիմակայել նոր մարտահրաւէրին, որը դրսեւորւում է նաեւ տեղեկատուական պատերազմի ձեւով: Թուրքիայի եւ Ադրբեջանի կողմից ՀՀի եւ Արցախի Հանրապետութեան դէմ սանձազերծած տեղեկատուական պատերազմը սովորական պատերազմից տարբերւում է միայն ձեւով. այն օրըստօրի աւելի է սաստկանում եւ դառնում առաւել ընդգրկուն: Նրանց պետական կառոյցների տեղեկատուական այս արշաւը նպատակ է հետապնդում «պատմականօրէն» արդարացնել իրենց որդեգրած ռազմամոլական քաղաքականութիւնն ու աւելի հեռուն գնացող իրական նպատակները: Այդ ճանապարհին փորձ է արւում տեղեկատուական մեծ հոսքերի միջոցով ուղղորդել եւ ազդել ինչպէս հայ հասարակութեան, այնպէս էլ սեփական բնակչութեան գիտակցութեան վրայ: Այս խնդիրներն իրականացնելու համար օգտագործւում են առկայ բոլոր աղբիւրները եւ տեղեկատուական դաշտի ընձեռած հնարաւորութիւնները՝ դրանցում ներգրաւելով նաեւ օտարերկրեայ քաղաքական գործիչների, գիտնականների, գրողների, դերասանների, երգիչների, մարզիկների եւ այլոց մասնակցութիւնը:

Հայաստանի եւ Արցախի դէմ տեղեկատուական պայքարը լայն թափ է ստացել դեռեւս 1960ականներից: Հսկայածաւալ աշխատանք է տարւում ընդամէնը միքանի տասնամեակ առաջ ստեղծուած Ադրբեջան[4] կոչուող պետական կազմաւորմանը վերագրելու հնագոյն ժողովուրդներին բնորոշ քաղաքակրթական առանձնայատկութիւններ՝ հնագոյն պետականութիւն,

---

վրայ (*Ղարաբաղեան ազատագրական պատերազմ. 1988-1994, հանրագիտարան*, հայկական հանրագիտարան հրատ., Երեւան, 2004, էջ 11, 243. նաեւ՝ Մ. Գէորգեան, *ԼՂՀ հռչակումը եւ անկախութեան հանրաքուէն Արցախի պետականութեան կայացման համատեքստում. նիւթերի ժողովածու*, ԱԵԳՄՄ, Երեւան, 2017, էջ 238):

[3] *Список исчезнувших государств Древнего мира (Հնագոյն աշխարհի անհետացած պետութիւնների ցանկ)* (URL: https://ru.wikipedia.org/wiki/Список_государств_Древнего_мира#cite_ref-104 , մատչում՝ 18 Ապրիլ 2021):

[4] 1918ին արհեստականօրէն, Արաքս գետից հիւսիս Ադրբեջան կոչուող երկրի առաջացումն ու անուանումն առնուազն տարակուսանք է առաջացրել ոչ միայն հայկական, այլեւ իրանական քաղաքական գործիչների, մտաւորականների մէջ (R. Galichian, *The Invention of History, Azerbaijan, Armenia and the Showcasing of Imagination*, London/Yerevan, Printinfo, 2010, էջ 6-7. նաեւ՝ A.K. Moghaddam, *Where is the Real Azerbaijan*, Bonn, Aseman, 2008, էջ 38 (պարսկերէն). նաեւ՝ K. Bayāt, *Storm over the Caucasus: A Glance at the Iranian Regional Relations with the Republics of Azerbaijan, Armenia and Georgia in the First Period of Independence 1917-1921*, Ministry of Foreign Affairs Tehran, 2002, էջ 45-7:

աւանդոյթներ, մշակոյթ եւն.: Կեղծիքները «հիմնաւորելու» նպատակով շրջանառւում է այն «թեզը», թէ տարածաշրջանում հայերը եկուորներ են, իսկ ադրբեջանցիները՝ տեղաբնիկների՝ աղուանների (Աղուանից Թագաւորութեան) յետնորդները[5]: Ըստ նրանց՝ ադրբեջանցիների՝ աղուանների ժառանգներ լինելու «թեզը» կը հիմնաւորի, օրինակ, զաւթած տարածքներում քրիստոնէական[6] մշակութային արժէքների առկայութիւնը, որից բխեցւում է այն «փաստը», որ հայկական համարուող պատմամշակութային արժէքները ոչ այլ ինչ են, բայց՝ «աղուանա-ադրբեջանական»:

Բացայայտ սուտն ու կեղծիքը, հակասական եւ հակագիտական «թեզերը» ազեհրի «պատմագրութեան» մէջ առաջ են բերել մեծ խառնաշփոթ: Զաւեշտալի է եւ այն, որ այդ տարածքում ապրած ազգերի ու ժողովուրդների հայրենիքը, նիւթական եւ մշակութային ժառանգութիւնը անվարան իւրացնողները... չեն խուսափում աշխարհին ներկայանալ որպէս «մեծ դաւադրութեան զոհեր»: Դրա վառ օրինակն է Ադրբեջանի ԱԳՆ հրատարակած *War Against Azerbaijan. Targeting Cultural Heritage* գիրքը[7]:

Ներկայ փուլում հայութեան դէմ կիրառուող տեղեկատուական պատերազմի սահմանները հասել են այն եզրագծին, ուր ադրբեջանցիները փորձում են օգտագործել նաեւ պատմահայր Մովսէս Խորենացու աշխատութիւնները, մեր իսկ ազգային արժէքների եւ ինքնիշխանութեան դէմ[8]:

Նման հրապարակումները, որոնք այսօր արդէն համատարած են[9], հրատարակւում են կովկասեան ադրբեջանցիների առաջնորդ Ադրբեջա-

---

[5] З. Буниятов, *Азербайджан в VII-IX веках* (Ադրբեջանը Է.-Թ. դարերում), ԱԽՍՀ ԳԱ, Բաքու, 1965. նաեւ՝ З. Буниятов, (ред.), Сборник, *История Азербайджана по документам и публикациям* (Ժողովածու, Ադրբեջանի պատմութիւնն ըստ փաստաթղթերի եւ հրապարակումների), Էլմ, Բաքու, 1990. նաեւ՝ А. Алекперов, *Терракоты древнего Азербайджана* (Հին Ադրբեջանի տերակոտաները), Էլմ, Բաքու, 1994. նաեւ՝ Ю. Джафаров, *Гунны и Азербайджан* (*Հոները եւ ադրբեջանը*), Ազերնեշր, Բաքու, 1993. նաեւ՝ И. Алиев, (ред.), *История Азербайджана, С древнейших времен до начала XX века* (Ադրբեջանի պատմութիւն. հնագոյն ժամանակներից մինչեւ Ի. դարի սկիզբ), Ադրբեջանի ԳԱ, Բաքու, Էլմ, 1995 եւն.:

[6] Աղուանքի Թագաւորութեան պաշտօնական՝ Աղուանից Եկեղեցին, Արեւելեան հակաքաղկեդոնական եկեղեցի է: Այն ընդունել է Հայ Եկեղեցու գահերէցութիւնը եւ «ի հոգեւորս» ենթարկուել նրան: Գ. դարից սկսած՝ բուն Աղուանքում ձեւաւորուել են քրիստոնէական համայնքներ (*Քրիստոնեայ Հայաստան. հանրագիտարան*, հայկական հանրագիտարան, Երեւան, 2002, էջ 41-42):

[7] *War Against Azerbaijan. Targeting Cultural Heritage,* Ministry of Foreign Affairs of the Republic of Azerbaijan, Heydar Aliyev Foundation, Բաքու, 2007:

[8] Г. Сафаралиева, *Исторические памятники и топонимы Азербайджана. Библиография* (Ադրբեջանի պատմական յուշարձաններն ու տեղանունները. մատենագիտութիւն), ԱՆԲ, Բաքու, 2016:

[9] A. Alakbarli, *The Monuments of Western Azerbaijan,* Ministry of Culture and Tourism of Azerbaijan Republic, Nurlan, Բաքու, 2007. նաեւ՝ С. Алиярлы, (ред.), *История*

նի նախագահ Իլհամ Ալիեւի բարձր հովանաւորութեամբ եւ քաջալերմամբ: Այդ մասին են վկայում Ալիեւի հրապարակային որոշ ելոյթներ, որոնք արժանի են առանձնակի ուշադրութեան: Այսպէս, ըստ նրա "մտորումներին".

> Իրեւանի (Էրեւանի - Վ.Մ.) խանութիւնը, Զանգեզուրը եւ Գէյչէն (Գէօքչան՝ Սեւանայ լճի աւազանի մեծագոյն մասը - Վ.Մ.) ադրբեջանական ժողովրդի պատմական հողերն են... Իրեւանը մեր պատմական տարածքն է, եւ մենք՝ ադրբեջանցիներս, պէտք է վերադառնանք այդ պատմական հողը: Դա մեր քաղաքական եւ ռազմավարական նպատակն է[10] ...Լեռնային Ղարաբաղը միշտ եղել է Ադրբեջանի անբաժանելի մասը [իսկ] բոլոր հին քարտէզներում, այդ թւում՝ ցարական Ռուսաստանի ..., Լեռնային Ղարաբաղի բոլոր տեղանուանումներն ունեն ադրբեջանական ծագում... Ղարաբաղի ժողովրդագրական պատկերը փոխուել է ԺԹ. դարում՝ հայերի ներգաղթի պատճառով[11]:

Ըստ ադրբեջանական պատմագրութեան՝ Հայաստանի եւ Արցախի հանրապետութիւնները ընդամէնը Արեւմտեան Ադրբեջան են[12], հայկական մշակութային հարստութիւնը՝ թուրք-թաթարական: Ակնյայտ է, որ այս ամէնը կրում է համակարգուած բնոյթ, որին Ադրբեջանում լծուել են բոլորը: Բազմաթիւ հակահայկական ուղղուածութեան աշխատանքներ՝ շքեղ ձեւաւորմամբ, հրատարակւում են տարբեր լեզուներով եւ տարածւում ազգային գրադարաններ, դիւանագիտական ու գիտաուսումնական հաստատութիւններ եւն.: Ադրբեջանցիները նենգափոխելով իրականութիւնը եւ հետապնդելով հեռահար քաղաքական նպատակներ, յատկապէս շատ են կարեւորում Ռուսական Կայսրութեան տիրապետութեան ժամանակաշրջանը՝ թիրախաւորելով պատմաաշխարհագրական սկզբնաղբիւրներն ու պատմական (հին) քարտէզները: Այս է պատճառը, որ նրանց «գոհար-

---

Азербайджана: с древнейших времен до 70-х гг. XIX в. (Ադրբեջանի պատմութիւն. հնագոյն ժամանակներից մինչեւ ԺԹ. դարի 70ականներ), Չիրագ, Բաքու, 2008. նաեւ՝ И. Алиев, К. Мамедзаде, *Албанские памятники Карабаха* (Ղարաբաղի ալբանական յուշարձանները), Ազերնեշր, Բաքու, 1997. նաեւ՝ *Собрание старинных карт: Азербайджан* (Հին քարտէզների հաւաքածու. Ադրբեջան), Ալֆարէտ, Ս. Պետերբուրգ, 2012:

[10] И. Алиев, *«Стратегической целью Азербайджана является «возвращение» Еревана»* (Ադրբեջանի ռազմավարական նպատակը Երեւանի 'վերադարձն' է), Ռազմական տեսութիւն, (URL: https://topwar.ru/135683-aliev-strategicheskoy-celyu-azerbaydzhana-yavlyaetsya-vozvraschenie-erevana.html , մատչում՝ 8-4-2020):

[11] И. Алиев, «На всех старых картах, в том числе, и картах царской России, все названия местностей Нагорного Карабаха имеют азербайджанское происхождение» («Բոլոր հին քարտէզներում, ներառեալ՝ ցարական Ռուսաստանի, Լեռնային Ղարաբաղի բոլոր վայրերի անուանումներն ունեն ադրբեջանական ծագում»), Գալա, (URL: https://galatv.am/ru/2787996/ , մատչում՝ 22-7-2020):

[12] Г. Гафарова, *Памятники Западного Азербайджана* (Արեւմտեան Ադրբեջանի յուշարձանները), Բաքու, Կրթութիւն, 2013:

ներին» անդրադարձ կատարելուց զատ, նպատակայարմար ենք գտնում նաեւ հետազօտել իրենց իսկ նախընտրած թեմաների շուրջ:

Այստեղ մենք կ'առանձնացնենք Սեւանայ լճի աւազանի բնակչութեան եւ բնակավայրերի խնդիրը (1828-32 շրջան): Մեր հետազօտութեան հիմքում ընկած են Հայկական Մարզի եւ Սեւանայ լճի աւազանի վերաբերեալ հաւաստի ու առաւել ամբողջական տեղեկութիւններ պարունակող Իւան Իւանի Շոպէնի[13], Ֆրեդերիկ Դիւ Բուա դը Մոնպերոյի[14] աշխատութիւննե-

---

[13] Իւան Իւանի Շոպէն (1798–1870), ռուս (ծագումով ֆրանսիացի) պետական գործիչ, ազգագրագէտ եւ պատմաբան: 1829-32՝ զբաղուել է Հայկական Մարզի (Էրեւանի եւ Նախիջեւանի խանութիւններ) մանրամասն ուսումնասիրութեամբ: Ժամանակակիցները շատ բարձր են գնահատել նրա կատարած ուսումնասիրութիւնը: 1840ին նրա «Հայկական մարզի *կամերալ* նկարագրութիւն» աշխատութիւնը արժանանում է Ռուսաստանի ԳԱ ազգագրագէտների դրական կարծիքին (գրախօսներ Մ.Հ. Բրոսսէ եւ Պ. Ի. Կեպպէն), իսկ այնուհետեւ Ս. Պետերբուրգի Կայսերական ԳԱ «դեմիդովեան պարգեւ»ին: 1830ին նա ստանձնել է հայկական մարզային կառավարման խորհրդականի պաշտօնը: 1833ին եղել է Հայկական Մարզի եկամուտների եւ պետական գոյքի բաժանմունքի նախագահը, իսկ այնուհետեւ, աշխատել է որպէս Այսրկովկասեան Երկրամասի գլխաւոր կառավարչի յատուկ յանձնարարութիւնների գծով պաշտօնեայ: 1838ին, տեղափոխուելով Ս. Պետերբուրգ, աշխատանքի է անցել պետական գոյքի նախարարութիւնում: 1840ից եղել է ներքին գործերի նախարարութեան վիճակագրական վարչութեան թղթակից անդամ (*Հայկական սովետական հանրագիտարան, հտր. 8*, ՀԽՍՀ ԳԱ, Երեւան, 1982, էջ 542-43. նաեւ՝ (URL: https://ru.wikipedia.org/wiki/Шопен,_Иван_Иванович , մատչում՝ 8 Ապրիլ 2020):

[14] Ֆրեդերիկ Դիւ Բուա դը Մոնպերօ (1798–1850), շվէյցարացի (ծագումով ֆրանսիացի) ճանապարհորդ, եւ գիտնական: 1831-34՝ միայնակ սկսում է վտանգալից իր գիտահետազօտական ճանապարհորդութիւնը դէպի Ղրիմ եւ Կովկաս: Այդ ընթացքում հաւաքած, մշակած ու խմբագրած նիւթերի հիմամբ 1839-43՝ Փարիզում հրատարակւում է նրա վեցհատորեայ «ճանապարհորդութիւն»ը, իսկ 1843ին Նէօշատէլում՝ նրա կազմած «ատլաս»ը: Ժամանակակիցները շատ բարձր են գնահատել նրա աշխատանքը: «Ճանապարհորդութիւն»ը ամբողջութեամբ թարգմանւում է գերմաներէն: Փարիզի Աշխարհագրական Ընկերութիւնը նրան պարգեւատրում է Grand prixով: Լոնդոնի Երկրաբանական Ընկերութիւնը բարձր է գնահատում կատարուած աշխատանքը, իսկ ռուսական կառավարութիւնը 20,000 ռուբլի դրամական պարգեւ է յանձնում Դիւ Բուային՝ «ատլասը» հրատարակելու համար: Նիկոլայ Ա. ցարը նրան պարգեւատրում է Ս. Ստանիսլաւի շքանշանով եւ նուիրում ադամանդակուռ մատանի: Պրուսիայի թագաւորը նրան պարգեւատրում է Մեծ Ոսկէ Մեդալով (Grande medaille d'or)՝ գիտութեան բնագաւառում յաջողութիւնների համար: Լոնդոնի, Բեռլինի եւ Սանկտ Պետերբուրգի աշխարհագրական ընկերութիւնները նրան ընտրում են իրենց թղթակից անդամ (F.A.M. Jeanneret, et J.H. Bonhôte, *Biographie Neuchâteloise, t. 1*, Locle, chez Eugène Courvoisier, Libraire-éditeur, 1863, էջ 279-80. նաեւ՝ D. Knoepfler, *Université, Histoire de l'Université de Neuchâtel, t. 1*, La première Académie, 1838-48, Univ. de Neuchatel [u.a.], Neuchatel, 1988, էջ 257-304):

րը, տարբեր ժամանակներում հրատարակուած քարտէզները, Հայաստանի Ազգային Արխիւի նիւթերը եւ այլ աղբիւրներ:

Հետազօտութիւնների մի շարք մեթոդների կիրառման, աղբիւրների համադրման, վերլուծութեան (անգամ չմխրճուելով, եւ շրջանառութեան մէջ չդնելով աւելի հին՝ հայկական եւ օտար աղբիւրները) եւ եզրայանգումների հիման վրայ փորձելու ենք ներկայացնել Հայաստան Աշխարհի մի հատուածի՝ նախկինում բացառապէս հայերով բնակեցուած Սեւանայ լճի աւազանի իրական պատկերը: Կազմելու ենք երկու նոր թեմատիկ քարտէզ, ինչպէս նաեւ Հայկական Մարզի վարչատարածքային քարտէզը: Պատմական որոշ աղբիւրների եւ ականատեսների՝ վերոյիշեալ աշխատութիւնների հեղինակների վկայութիւնների համաձայն (1828-35), յօդուածի սահմաններում, փորձելու ենք բացայայտել ադրբեջանական «պատմագրութեան» նենգափոխութիւնները:

ՍԵՒԱՆԱՅ ԼՃԻ ԱՒԱԶԱՆ. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Սեւանայ լճի աւազանը (երկարութիւնը 120 կմ, լայնութիւնը՝ 30-80 կմ, մակերեսը շուրջ՝ 4,890 կմ^2) բնակեցուած է եղել դեռեւս վաղնջական ժամանակներից: Այդ են վկայում տարածաշրջանում յայտնաբերուած եւ տարբեր ժամանակաշրջաններով թուագրուող հնագոյն կառոյցների, հնագիտական իրերի եւ յուշարձանների բազմազանութիւնը (բրոնզէդարեան (վաղ, միջին, ուշ), երկաթէդարեան շրջանի դամբարաններ, կիկլոպեան ամրոցներ, «վիշապ» կոչուող քարակոթողներ, նիզակներ, սայլեր, ռազմակառքեր, սափորներ, արձանիկներ, կենցաղային իրեր, երկաթէ իրեր, զարդեր եւն.)[15]: Գտածոների աշխարհագրութիւնը եւ քանակը վկայում են այն մասին, որ Սեւանայ լճի աւազանը եղել է խիտ բնակեցուած, որը շատ բանով պայմանաւորուած էր տարածաշրջանում քաղցրահամ լճի եւ բարենպաստ բնակլիմայական պայմանների առկայութեամբ:

Մի շարք բնակավայրերի տարածքում յայտնաբերուել են ուրարտական (Վանի Թագաւորութեան) արքաների թողած արձանագրութիւնները, որոնց համաձայն, վերոյիշեալ տարածաշրջանը նուաճելու եւ իրենց հպատակեցնելու համար նրանք ստիպուած են եղել մարտնչել տեղաբնիկ ցեղային միութիւնների դէմ, որոնց առաջնորդներին յիշատակում են «թա-

[15] Ս. Սարդարեան, *Նախնադարեան հասարակութիւնը Հայաստանում*, ԵՊՀ, Երեւան, 1967. նաեւ՝ Գ. Միքայէլեան, «Սեւանի աւազանի կիկլոպեան ամրոցները», *Հայաստանի հնագիտական յուշարձանները, հտր. 1,* ՀՍՍՀ ԳԱ հնագիտ. եւ ազգագր. ինստ., Երեւան, 1968. նաեւ՝ Օ. Խնկիկեան, «Ցլագլուխ կոթողներ Վարդենիսի լեռներից եւ «վիշապաքարերի» մեկնութեան հարցի շուրջ», *Լրաբեր հասարակական գիտութիւնների*, 3:1997. նաեւ՝ Է. Խանզադեան, «Լճաշէնի վիշապը», *Հին Հայաստանի մշակոյթը, հ. XIII*, Երեւան, 2005 եւն.:

գաւոր» պատուանունով[16]: Արգիշտի Ա.ի գահակալման տարիներին (Ք.ա. 786-64) տէրութեան սահմաններում ընդգրկուեց նաեւ Սեւանայ լճի աւազանը: Նա կարողացաւ միաւորել Հայկական Լեռնաշխարհի մեծ մասը մէկ կենտրոնացուած պետութեան մէջ, դառնալով Առաջաւոր Ասիայի հզօրագոյն տէրութիւններից մէկը[17]:

Նպատակ չհետապնդելով ներկայացնել Հայաստանի եւ նրա անքակտելի մաս կազմող Սեւանայ լճի[18] աւազանի պատմութեան դարաւոր ընթացքը՝ նախընտրում ենք յօդուածի շրջանակներում քննարկել միայն վերոբերեալ թեմային առնչուող ժամանակաշրջանը:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ ՍԵՒԱՆԱՅ ԼՃԻ ԱՒԱԶԱՆՆ ԸՍՏ ՇՈՊԷՆԻ

Պատմական յայտնի իրադարձութիւններց յետոյ, 1826-28 ռուս-պարսկական եւ 1828-29ի ռուս-թուրքական պատերազմների աւարտով Ռուսական Կայսրութեանն յաջողւում է իր ռազմաքաղաքական դիրքերը ամրապնդել Այսրկովկասում, որը կարող էր ցատկահարթակ հանդիսանալ Միջերկրական եւ Հնդկաց ովկիանոս նրա առաջխաղացման համար:

1828 Փետրուարի 10ին կնքուած Թուրքմենչայի պայմանագիրը ռուս-պարսկական պետական սահմանագիծը հարաւում հաստատում է Արաքս գետը: Պարսկաստանը պաշտօնապէս ճանաչում է Էրեւանի ու Նախիջեւանի խանութիւնների միացումը Ռուսաստանին: Իսկ 1828 Մարտի 21ին Նիկոլայ Ա.ի հրամանագրով Արեւելեան Հայաստանի նոր գրաւուած տարածքներում կազմաւորւում է Հայկական Մարզ (Армянская область) վարչական միաւորը (1828-40)՝ Էրեւան (Էրիւան, Երեւան) կենտրոնով:

Նորաստեղծ վարչական միաւորի մասին բազմակողմանի եւ հաւաստի վիճակագրական տեղեկատուութիւն ստանալու նպատակով ցարական կառավարութեան՝ կովկասեան առանձին զօրաբանակի գլխաւոր հրամանատար եւ Կովկասի քաղաքացիական մասի գլխաւոր կառավարիչ կոմս

---

[16] Г. Меликишвили, *Урартские клинообразные надписи* (Ուրարտական սեպագիր արձանագրութիւնները), ԽՍՀՄ ԳԱ, Մոսկուա, 1960:

[17] Բ. Յարութիւնեան, Վ. Մխիթարեան, *Վանի Թագաւորութիւնը Ք.ա. IX-VII դարերում*, *Հայաստանի պատմութեան ատլաս, Ա. մաս*, Մակմիլան Արմենիա, Երեւան, 2004, էջ 14-15. նաեւ՝ Բ. Յարութիւնեան, (խմբ.), *Հայոց պատմութիւն, հնագոյն եւ հին շրջան, դասագիրք 6*, Մանմար, Երեւան, 2013, էջ 46:

[18] Սեւանայ լիճը տասնեակ դարերի ընթացքում բազմիցս անուանափոխուել է՝ Գեղամայ ծով, Գեղամայ լիճ, Լիխնիտէս լիճ, Գեղա(ր)քունեաց ծով, Գեղա(ր)քունեաց լիճ, Սեւանայ ծով, Սեւանայ լիճ, Ճելուկելարի, Դարիա Շիրին, Գէօքչայ եւն. (Թ. Յակոբեան, Ստ. Մելիք-Բախշեան, Յ. Բարսեղեան, *Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, հտր. 4*, ԵՊՀ, Երեւան, 1998, էջ 577):

Ի. Պասկեւիչի[19] յանձնարարութեամբ 1829ին սկսւում են Հայկական Մարզի *կամերալ* նկարագրութեան կազմման գործընթացները[20]: Հետազօտութիւնների իրականացումը յանձնարարւում է Շոպէնին:

Շոպէնի աշխատութիւնը[21] կարելի է համարել անգնահատելի ու հաւաստի սկզբնաղբիւր հայոց պատմական հայրենիքի մի հատուածի մասին:

Շոպէնը իր աշխատութիւնը շարադրելիս, Հայկական Մարզին վերաբերող պաշտօնական ամբողջական տեղեկատուութիւնից զատ, փնտըռտել, գտել եւ թարգմանել է Այսրկովկասի մասին առկայ բոլոր աշխատութիւնները, անհրաժեշտութեան դէպքում գրականութիւն է ձեռք բերել Փարիզից, Պետերբուրգից եւ Մոսկուայից, որի արդիւնքում, կարողացել է շարադրել Հայաստանի պատմութեան, աշխարհագրութեան, ազգագրութեան եւ հնագիտութեան բաժինները[22]:

Շոպէնը աշխատութեան առաջին գլուխը վերնագրում է «Մեծ Հայքի հնագոյն աշխարհագրութեան կարճ նկարագրութիւնը»: Այն սկսւում է հետեւեալ պարբերութեամբ.

> Երկիրը, որը յայտնի է Հայաստան անուամբ, ներկայացնում էր երբեմնի բաւական հզօր պետութիւն, որը երկարութեամբ՝ 1,500 վերստ (1,600 կմ - Վ.Մ.) ձգւում էր Եփրատ գետից մինչեւ Կուր եւ Կասպից ծով, իսկ լայնութեամբ՝ 1,200 վերստ (1,280 կմ - Վ.Մ.)՝ Լազերի երկրից, Կոլխիդայից, Կովկասեան Լեռներից եւ Իբերիայից մինչեւ Դիարբեքիրի հարաւային սահմանները: Այս ընդարձակ երկիրը, որը ներառում է շուրջ 1,800,000 վերստ^2 (2,048,400 կմ^2 - Վ.Մ.)[23] տարածք, հնագոյն ժամանակներից բնակեցուած է հայերով: Հայրենիքին հասցուած դժբախտութիւնների պատճառով ստիպուած՝ հայերը յաճախ տեղահանւում էին ամբողջ բնակավայրերով եւ փոխարինւում Փոքր Ասիայում փոխնիփոխ գերիշխող տարբեր ժողովուրդների նոր վերաբնակներով[24]:

Իսկ Մեծ Հայքի Թագաւորութեան տեղադիրքը եւ սահմանները նկարագրելիս նա գրում է.

---

[19] Երեւանի գրաւման համար Պասկեւիչն ստացել է «Կոմս Էրիւանսկի» պատուանունը (URL: https://ru.wikipedia.org/wiki/Паскевич,_Иван_Фёдорович , մատչում՝ 8 Ապրիլ 2020):

[20] Հայկական Մարզում ուսումնասիրութիւնները սկսւում են 1829 Ապրիլին եւ աւարտւում 1832 Մայիսին (И.И. Шопен, *Исторический памятник состояния Армянской области в эпоху её присоединения к Российской империи* (Պատմական յուշարձան Հայկական Մարզի կացութեան մասին՝ այն Ռուսական Կայսրութեանը միացնելու ժամանակաշրջանում), Ս. Պետերբուրգ, 1852, էջ I:

[21] Նոյն:

[22] Նոյն, էջ I, III-IV:

[23] Հեղինակը Մեծ Հայքի մակերեսը հաշուելիս օգտագործել է նշուած տարածքի առաւելագոյն երկարութեան (1,500 վերստ) եւ լայնութեան (1,200 վերստ) արտադրեալը (1,800,000 վերստ^2)՝ հաշուի չառնելով երկրի սահմանների ձեւը:

[24] Նոյն, էջ 1:

> Մեծ Հայքը արեւմուտքից սահմանակցել է Փոքր Հայքին, որից բաժանւում էր Եփրատ գետով, հարաւում՝ Միջագետքին, Ասորեստանին եւ Քրդստանին, որոնցից բաժանւում էր Տաւրոսի լեռնաբազուկներով: Արեւելքում սահմանակցում էր Պարսկաստանի Ատրպատական (Ադերբայջան) նահանգի եւ Կասպից ծովի, իսկ հիւսիսում՝ Ալբանիայի (այժմ Շաքի եւ Շիրվան), Իբերիայի (Վրաստան) եւ Կոլխիդայի (Մինգրելիա, Իմերեթիա եւ Գուրիա) Թագաւորութեան եւ նրա մաս՝ Տրապեզոնդի (Տրապիզոնի - Վ.Մ.) փաշալիքի հետ[25]:

Շոպէնը խանդավառուած, մեծ ակնքալիքով լի, կարծիք է արտայայտում Ռուսաստանին միացուած տարածքներում կատարուելիք ապագայ ուսումնասիրութիւնների եւ դրանց արդիւնքների մասին: Նա գրում է, որ Արեւելքը մարդկութեան օրրանը լինելուց զատ, նաեւ նրա հնութիւնների գանձարանն է: Այս առումով Անդրկովկասն ընդհանրապէս, իսկ Հայաստանը յատկապէս, արժանի է ամէնայն ուշադրութեան: Ռուսական Անդրկովկասում հետազօտութիւնները խոստանում են մեծ բացայայտումներ հնագոյն թագաւորութիւնների՝ Աղուանքի կամ Ալբանիայի եւ Իբերիայի, հայկական հնագոյն մարզերի (Մեծ Հայքի Թագաւորութեան աշխարհների - Վ.Մ.)՝ Ուտիքի, Արցախի, Փայտակարանի, Սիւնիքի, Տայքի ու Գուգարքի մի մասի վերաբերեալ: Հետազօտութիւնների համար բաց են Մայր Աթոռ Ս. Էջմիածինը՝ իր բազմաթիւ վանքերով, եւ ամբողջ երկրամասը՝ մեծաթիւ հնագոյն եկեղեցիներով ու վանքերով: Այդ յուշարձաններից իւրաքնչիւրը Արեւելքի պերճախօս պատմութեան մի էջ է[26]:

Շարունակելով պատմական ժառանգութեան թեման՝ նա գրում է նաեւ հայոց լեզուի մասին.

> Հայերն ասում են, որ ամենասուրբ եւ ամենաանձեռնմխելի ժառանգութիւնը, որ հայրը կարող է թողնել իր երեխաներին, դա հայրենի լեզուն է: Բոլոր ազգերի մէջ միայն հայերը կարողացան հարիւրամեակների միջով՝ Նոյից մինչեւ մեր օրերը, փոխանցել եւ ամբողջական պահպանել այդ թանկագին արժէքը[27]:

Հայկական Մարզի նկարագրութեան մէջ ասւում է. «*Հայկական Մարզը զբաղեցնում է պատմական (Մեծ Հայքի Թագաւորութեան - Վ.Մ.) Արարատեան եւ Սիւնիքի մարզերի (աշխարհների - Վ.Մ.) մեծ մասը եւ Վասպուրականի երկու գաւառը*»[28]: Մարզը ունի մօտ 24,000 վերստ^2 (կամ 27,314 կմ^2 - Վ.Մ.)[29] մակերես: Ընդհանուր պետական սահմանի երկարու-

---

[25] Նոյն, էջ 1-2:

[26] Նոյն, էջ 221-22:

[27] Նոյն, էջ 177:

[28] Նոյն, էջ 250:

[29] Շոպէնը իր աշխատութիւնում, Հայկական Մարզի զբաղեցրած մակերեսին անդրադառնալով, գրել է, որ իր հաշուարկով այն զբաղեցնում է մօտ 24,000 վերստ^2, ինչն, ըստ մեր հաշուարկի, հաւասար է 27,314 կմ^2: Սակայն, մեզ յայտնի գրականութեան մէջ տարածքի մակերեսը տրւում է շատ աւելի փոքր (20,720, 21,000 կմ^2), քան իրականում եղել է (27,314 կմ^2) (նոյն, էջ 353):

թիւնը մօտ 480 վերստ (կամ 512 կմ - Վ.Մ.) է, որից Թուրքիայի հետ սահմանագծի երկարութիւնը՝ 230 վերստ (կամ 245 կմ - Վ.Մ.), իսկ Պարսկաստանի հետ՝ 250 վերստ (կամ 267 կմ - Վ.Մ.): Մարզային սահմանի երկարութիւնը 430 վերստ (կամ 458,7 կմ - Վ.Մ.) է: Սահմանների ընդհանուր երկարութիւնը՝ 910 վերստ (կամ 970,7 կմ - Վ.Մ.)[30]:

Հայկական մարզը բաղկացած է Էրիւանի[31] եւ Նախիջեւանի պրովինցիաներից (նահանգներից) ու Օրդուբադի օկրուգից (շրջանից)[32]:

Մարզն ունի 3 քաղաք՝ Էրեւանը, Նախիջեւանը եւ Օրդուբադը: Մարզի կենտրոնը՝ գլխաւոր քաղաքը Էրեւանն է: Գիւղերը՝ 1111 են, որից բնակեցուած է 752ը, իսկ անմարդաբնակները (դատարկ հողը)՝ 359ն են[33]:

Շոպէնը աշխատութիւնում անդրադառնում է նաեւ մարզի բնակչութեան ազգային կազմի ձեւաւորման պատճառներին.

> ԺԱ. դարի կէսերից սկսեցին Պարսկաստանում, Հայաստանում, Վրաստանում եւ Փոքր Ասիայում երեւալ վայրի ցեղերի՝...սելջուկների, մոնղոլների, թաթարների եւ թուրքերի ահեղ հորդաները: Առաջին ներխուժումը Հայաստան եղել է սելջուկների, երկրորդը՝ Չինգիզ խանի, իսկ վերջինը՝ Լենկթիմուրի կողմից, որից յետոյ Հայաստանը եւ Վրաստանը դարձան մուսուլմանների հարկատուները: Նրանց իւրաքանչիւր ներխուժման ժամանակ սուրը անխնայ ոչնչացրեց տեղաբնիկներին...: Իսկ յաղթողները հաստատուեցին ամայացած եւ դատարկ բնակավայրերում: Այսպիսով, տարբեր ժամանակներում, տարբեր թաթարական ցեղերի կողմից ձեւաւորուեց մարզի մահմեդական բնակչութիւնը, ուր առկայ է նաեւ արաբական հետքը[34]:

Ըստ Շոպէնի՝ մարզում հայերից (25,151 մարդ) զատ բնակւում էին տարբեր ազգութիւններ՝ թաթարներ (իսլամի շիա եւ սուննի ճիւղերին դաւանող տարբեր ցեղախմբեր՝ բայաթ, ղաջար, ղազախ, այրումլի, մուղանլի, սադարակլի, շահդիլին, կարակոյունլու, քիանգարլի եւն.), քրդեր (շիա եւ սուննի), քրդեր-եզդիներ, ցիգաններ՝ գնչուներ (քրիստոնեայ՝ բոշաներ, սուննի՝ միւթրուբներ, շիա՝ ղարաչիներ) եւն.:

---

[30] Նոյն, էջ 352-53:

[31] Ըստ Շոպէնի, հայերէնում քաղաքը կոչուել է Էրեւան: Այստեղ Էրիւան անուան փոխարէն օգտագործում ենք Էրեւան տարբերակը (նոյն, էջ 463): Էրեւան (Երեւան) անունը կապում են Էրեբունի բերդաքաղաքի անուան հետ: Վերջինս կառուցուել է Ք.ա. 782ին՝ ուրարտական Արգիշտի Ա. թագաւորի օրօք: Յիշատակւում են նաեւ Այրիվան, Երիւան, Երուանդաւան, Էրեուն, Էրիւան, Իրիւան, Րեւան եւ Րիւան անուանումները (Յակոբեան, Մելիք-Բախշեան, Բարսեղեան, *հտր. 2*, Երեւան, ԵՊՀ, 1988, էջ 215):

[32] Шопен, էջ 448:

[33] Հայկական Մարզի անմարդաբնակ գիւղերի ցուցակի վերաբերեալ նա գրում է. «Կցուած ցուցակը ապացուցում է, որ իր ժամանակին ինչ աստիճան ծաղկուն եւ մարդաշատ է այն (Մարզի տարածքը - Վ.Մ.) եղել: Իմիջայլոց, այդ գիւղերը տարի առ տարի վերականգնւում են» (նոյն, էջ 485-519):

[34] Նոյն, էջ 529-30:

Անդրադառնալով Հայկական Մարզում հայերի վերաբնակեցման՝ նա արձանագրում է, որ այն իրականացուել է երկու փուլով.-

- 1828-29՝ Պարսկաստանից (6,946 ընտանիք - 18,836 տղամարդ, 16,723 կին – *ընդամէնը՝ 35,560* մարդ),
- 1830՝ Թուրքիայից՝ Բայազէտից, Կարսից, ինչպէս նաեւ Մուշի, Վանի եւ Արզ(ե)րումի փաշայութիւններից (3,682 ընտանիք - 11,417 տղամարդ, 10,249 կին – *ընդամէնը՝ 21,666* մարդ):

Ընդհանուրը՝ 57,226 մարդ[35]:

Ըստ Շոպէնի՝ Հայկական Մարզի ազգաբնակչութեան վերաբերեալ վերջին տուեալները, որոնք հիմնուած են 1828-30ի հաւաստի *կամերալ* նկարագրութեան վրայ, հետեւեալն են.-

- հայերը (տեղաբնիկներ՝ 25,151; պարսկահայեր՝ 35,560; արեւմտահայեր՝ 21,666), *ընդամէնը՝ 82,377 մարդ.*
- թաթարները, քրդերը (բոլոր մուսուլմանները)՝ 81,749 մարդ.
- եզդիները՝ 324 մարդ:

Ընդհանուրը՝ 164,450 մարդ[36]:

Շոպէնի արձանագրած վերոբերեալ տուեալներից ակնյայտ են դառնում նոր իշխանութիւնների՝ Ռուսական Կայսրութեան որդեգրած ազգային քաղաքականութեան մօտեցումները: «Հայկական Մարզ» վարչական միաւորի սահմաններում պահպանել հաւասարութիւնը, մի կողմից՝ հայ քրիստոնեաների (82,377 մարդ), միւս կողմից՝ բոլոր մուսուլմանների ու փոքրաքանակ եզդիների (82,073 մարդ) միջեւ (տե՛ս քարտէզ 1)[37]:

1833 Փետրուարի 27ին, բարձրագոյն իշխանութեան կողմից, հաստատւում է Հայկական Մարզի զինանշանը[38]:

ՍԵՒԱՆԱՅ ԼՃԻ ԱՒԱԶԱՆԸ

Վերոյիշեալ վարչական բաժանման մէջ մեր հետազօտութեան նիւթ հանդիսացող Սեւանայ լճի աւազանը զբաղեցնում է Էրեւանի նահանգի, համանուն շրջանի Գէօքչայի մահալը (գաւառը) ամբողջութեամբ եւ Դարաչիչակի գաւառը մասամբ՝ լճին յարող հատուածը:

Շոպէնը տեղագրական առումով մարզի գաւառները բաժանել է երեք խմբի՝ լեռնային, միջին եւ հարթ տարածքների: Ըստ այդ բաժանման, լեռնային՝ Գէօքչայի, Դարաչիչակի եւ Աբարանի գաւառներից երկուսը, ինչպէս նկատում ենք, համարւում են մեր ուսումնասիրութեան առարկան[39]:

---

[35] Նոյն, էջ 525-40:

[36] Նոյն, էջ 542, 635-42:

[37] Վ. Մխիթարեան, քարտէզ 1, Հայկական մարզի վարչատարածքային բաժանումը (1828-1840):

[38] Шопен, էջ 461:

[39] Նոյն, էջ 346:

Նա մարզի ֆիզիկաաշխարհագրական նկարագրութեան ժամանակ չի թաքցնում հիացմունքով արտայայտուել նաեւ մեզ հետաքրքրող տարածքների մասին. «*Դարաչիչակը (Ծաղիկների ձորը) պատուած է երփներանգ ծաղիկներով եւ բաւական մեծ լայնատերեւ անտառով: Այն, Գէօքչայի եւ Դարալագեազի գաւառներն Օրդուբադի շրջանի հետ միասին, կարելի է անուանել Անդրկովկասեան Շվէյցարիա, յատկապէս Ձօդի (Սոթքի - Վ.Մ.) հովիտը, Գիւնէի*[40] *եւ Թաշ պիլակի*[41] *միջեւ, հրաշալի է*»[42]:

Նա անդրադառնում է Սեւանայ լճի պատմութեանը, անուան ծագումնաբանութեանը, նշելով, որ հնում լիճը կոչուել է հայկեան տոհմի թագաւորներից մէկի անունով Գեղամայ, իսկ Պտղոմէոսը այն յիշատակում է Լիխնիտէս ձեւով: Խօսում է լճի ժամանակակից անուան մասին, փաստելով, որ թուրքերը, պարսիկները եւ ռուսները այն կոչում են Գէօքչայ (Կապոյտ ջուր), եւ, որ նրա ջուրը քաղցրահամ է, ուր թափւում են 36 գետ: Դիտարկումներ է անում լճի ծագման[43], նրա հայելու մակերեսի՝ մօտ 1,200 վերստ^2 (կամ 1,366 կմ^2 - Վ.Մ.), ջրի որակի, հանքային աղբիւրների, աւազանի կլիմայի եւ այլ հարցերի շուրջ: Այդ թւում նշում է, որ լիճը երբեք չի եղել նաւարկելի, իսկ նրանից սկիզբ առնող Զանգա (Ձանգու - Վ.Մ.) գետը հնում կոչուել է Հրազդան, Հուրաստան կամ Բժնի ջուր[44]:

Գրելով կղզու մասին՝ հեղինակը նշում է, որ այն կոչւում է Գեղամայ կամ Սեւանայ, եւ, որ այնտեղ է գտնւում Սեւանայ վանքը իր եկեղեցիներով ու վանականների խցերով՝ զբաղեցնելով ամբողջ կղզին: Նա կղզու նկարագրութեանը յաւելում է. «*Անընդմէջ ասպատակութիւնների եւ գիշատիչ կողոպուտի ժամանակ, քաոսի մատնուած երկրում, ուր մարդկանց որսը համարւում էր հիմնական զբաղմունքներից մէկը մերձակայ հարեւանների համար, այս վայրը, մէկ անգամ չէ, որ տուել է վստահելի ապաստան ճնշուածներին*»[45]:

Շոպէնը Դարաչիչակի պատմամշակութային արժէքներին անդրադառնալիս՝ նշում է. «*Այս գաւառի գրեթէ բոլոր գիւղերը լեցուն են հնագոյն շի-*

---

[40] Արեգունի, Գիւնէիք-. գաւառակ Սեւանայ լճի աւազանում, լճի հս.-արլ. կողմում: Մեծ Հայքի Սիւնիք աշխարհի Գեղարքունիք գաւառի մի մասն էր (Յակոբեան, Մելիք-Բախշեան, Բարսեղեան, *հտր. 1*, ԵՊՀ, Երեւան, 1986, էջ 420):

[41] Հաւանաբար Թաշ Պիլակը Կարմիր դար լեռնագագաթն է Վարդենիսի լեռնաշղթայում, նրա հս. կողմում, Մարտունու եւ Վարդենիսի սահմանագլխին:

[42] Шопен, էջ 350:

[43] Ըստ Շոպէնի՝ լիճն ունի հրաբխային ծագում: Սեւանայ լճի ծագման եւ դրա աւազանի խնդիրների ուսումնասիրութեամբ զբաղուել են անուանի գիտականներ՝ Հ. Գաբրիէլեանը, Ս. Սարգսեանը, Լ. Վարդանեանցը, Կ. Պաֆենհոլցը, Վ. Օբրուչեւը, Դ. Անուչինը, Մ. Միտտէն եւ այլք: Այսօր ձեւաւորուել է ընդհանուր կարծիք, թէ Սեւանայ լճի գոգաւորութիւնը ունի հրաբխատեկտոնական ծագում:

[44] Шопен, էջ 10-11, 248, 395:

[45] Նոյն, էջ 402:

նութիւններով. դրանց հանդիպում ենք լեռներում եւ բնակիչների կողմից լքուած բնակավայրերում, որոնց մի մասը ծածկուել է անտառով»[46], իսկ Գէօքչայի վերաբերեալ հատուածում շարադրում է. «*Գէօքչայի գաւառի յուշարձանների մանրամասն նկարագրութիւնը կը զբաղեցնէր մէկ ամբողջ հատոր եւ պատմութեան համար կը հաղորդէր բաւական հետաքրքիր փաստեր... Գիւղերն ու ձորերը լցուած են հնագոյն եկեղեցիներով, վանքերով, խաչերով, արձանագրութիւններով ծածկուած տապանաքարերով: Ամէն ինչ ապացուցում է հնում այստեղ ապրող բնակիչների բազմաթուութիւնն ու հարստութիւնը*»[47]:

Գէօքչայի գաւառի բնակչութեանը եւ բնակավայրերին վերաբերող թեման քննարկելիս՝ հեղինակը զուգահեռներ է անցկացնում պատմական ոչ-վաղ անցեալի եւ ներկայի միջեւ: Նա յղում անելով աղբիւրներին՝ եզրակացնում է, որ տարածաշրջանի բազմաթիւ գիւղերի աւերուածութեան եւ ամայացման հիմնական պատճառներից են նաեւ 1319ի աւերիչ երկրաշարժը, 1730ականներին պարսկական բանակի գործողութիւնները եւ լեզգիների կործանիչ յարձակումները: Շոպէնը յիշատակում է նաեւ պարսից Շահ Աբբասի կազմակերպած բռնագաղթը[48], որն իսկական արհաւիրք դարձաւ տարածաշրջանի համար: Այս իմաստով, Շոպէնը ցաւով նշում է, որ այդ ընդարձակ տարածաշրջանում մարդ (հայ - Վ.Մ.) չկայ, ով կը կարողանար բացատրել լճի աւազանի բնակավայրերի մեծ մասի անունները[49]: Նա գրում է. «*Այդ գիւղերի մի մասը պահպանել են հնագոյն անունները, մի մասը նոր անուններ են ստացել, իսկ միւս մասն ընդհանրապէս մոռացուել է*»[50]:

Շոպէնը, բաւական հանգամանալից անդրադառնում է նաեւ մեր ուսումնասիրութեան նիւթ հանդիսացող տարածքների լեռնագրութեանը, ջրագրութեանը, հողերին, կլիմային եւն.:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ ՍԵՒԱՆԱՅ ԼՃԻ ԱՒԱԶԱՆԸ ԸՍՏ ՖՐԵԴԵՐԻԿ ԴԻՒ ԲՈՒԱ ԴԸ ՄՈՆՊԵՐՈՅԻ

Ռուսական Կայսրութեան տիրապետութեան տակ գտնուող տարածքներում՝ Ղրիմում եւ Կովկասում, եւ յատկապէս Հայկական Մարզում, 1834ին իր «ճանապարհորդական» գործունէութիւնն է ծաւալել Եւրոպայում եւ Ռուսաստանում մեծ ճանաչում ձեռք բերած յայտնի ճանապարհորդ եւ գիտնական Ֆրեդերիկ Դիւ Բուա դը Մոնպերօն: Արդիւնքում, նա հրատարակել է *Voyage autour du Caucase, chez les Tcherkesses et les Abkhases, en*

[46] Նոյն, էջ 312,
[47] Նոյն, էջ 315:
[48] Նոյն, էջ 706:
[49] Նոյն, էջ 316:
[50] Նոյն, էջ 510:

Colchide, en Géorgie, en Arménie et en Crimée, վեցհատորեայ աշխատութիւնը[51] եւ Ատլասը՝ *Voyage au Caucase, chez les Tcherkesses et les Abkhases, en Colchide, en Géorgie, en Arménie et en Crimée, ATLAS*[52]:

Տարիներ առաջ, Դիւ Բուայի աշխատութիւնների մասին մեր երկրում հրատարակուած որեւէ նիւթ գտնելու ջանքերն ապարդիւն անցան: Այդ բացթողումը լրացնելու նպատակով, մեր նախորդ հրապարակումներում փորձել ենք ներկայացնել յանիրաւի մոռացութեան մատնուած Դիւ Բուայի կեանքն ու գործունէութիւնը, անդրադարձել նրա գիտական ժառանգութեանը[53]: Լինելով բազմակողմանի զարգացած անձնաւորութիւն, նա իր աշխատութիւններում արձանագրել է տուեալ ժամանակաշրջանում Կովկասում եւ Ղրիմում տիրող իրավիճակը, շրջանառութեան մէջ է դրել պատմական, աշխարհագրական, քարտէզագրական եւ մշակութային հսկայ նիւթ, որը հնարաւորութիւն է ընձեռում կատարել համեմատութիւններ եւ վերլուծութիւններ: Լաւ տիրապետելով Արեւմտեան Եւրոպայում ուսումնասիրուող տարածաշրջանին առնչուող նիւթին, ինչպէս նաեւ ծանօթ լինելով պատմական եւ «ժամանակակից» քարտէզներին՝ փորձ է արել համեմատել եւ քննականօրէն վերաբերուել եղած տեղեկատուութեանը: Գիտական շրջանակներում ունեցած անձնական կապերի եւ նոր ծանօթութիւնների շնորհիւ կարողացել է օգտուել նաեւ չհրատարակուած նիւթերից եւ պատմական փաստաթղթերից: Այս առումով հարկ է յիշատակել նրան մեծապէս օժանդակած Մարի-Ֆելիսիտէ Բրոսէի անունը[54]:

---

[51] Frédéric DuBois de Montperreux, *Voyage autour du Caucase, chez les Tcherkesses et les Abkhases, en Colchide, en Géorgie, en Arménie et en Crimée, T. I-III, IV, V-VI,* Librairie de Gide, Editeur des annales des voyages, Paris, 1839, 1840, 1843:

[52] Frédéric DuBois de Montperreux, *Voyage au Caucase, chez les Tcherkesses et les Abkhases, en Colchide, en Géorgie, en Arménie et en Crimée, ATLAS*, Neuchatel en Suisse, chez l'Auteur, Paris, 1843:

[53] Վ. Մխիթարեան, «Ֆրեդերիկ Դիւ Բուա դը Մոնպերոյի քարտէզը ադրբեջանական գիտական եւ քաղաքական շահարկումներում», *Հայագիտութեան հարցեր*, 3:2014, Երեւան, էջ 34-52. նաեւ նոյնի՝ "Les cartes françaises de la Transcaucasie comme sources historiques," *L'Arménie et la Géorgie en Dialogue avec l'Europe, du Moyen Âge à nos Jours*, France, 2016, էջ 274-82. նաեւ նոյնի՝ «Ֆրեդերիկ Դիւ Բուա դը Մոնպերօ՝ այդչափ յայտնի եւ մեզանում այդքան անծանօթ շվէյցարացի ճանապարհորդը (պատմաաշխարհագրական եւ քարտէզագրական ուսումնասիրութիւն)», *ՀՀ եւ մերձաւոր արտասահմանի երկրների տնտեսութեան զարգացման եւ տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրները, գիտական յօդուածների ժողովածու*, Մեկնարկ, Երեւան, 2017, էջ 80-88. նաեւ՝ Վ. Մխիթարեան, Գ. Ղամբարեան, «Սեւանայ լճի աւազանի քարտէզը Հայաստանում՝ գծահանուած ռուս ինժեներների կողմից 1832 թ.՝ որպէս պատմական աղբիւր», *Հայագիտութեան հարցեր*, 3(18):2019, Երեւան, էջ 35-48:

[54] Ф.Д. Монперэ, *Путешествие вокруг Кавказа. У черкесов и абхазов, в Колхиде, в Грузии, в Армении и в Крыму* (Ճանապարհորդութիւն Կովկասի շուրջ:

Դիւ Բուայի աշխատութիւնները կարելի է դասել մեզ համար անչափ հետաքրքիր եւ անգնահատելի պատմական սկզբնաղբիւրների շարքին:

Իդէպ, թէեւ նրա ուսումնասիրութիւններում Հայաստանն ու հայերը ներկայացուած են բարեացակամ դիրքից, այնուամէնայնիւ, ադրբեջանցիները այլազգի յօդուածագիրների միջոցով, ջանասիրաբար փորձում են նրա աշխատանքները օգտագործել հայերի դէմ[55]:

Դիւ Բուայի երկի, Հայկական Մարզին վերաբերող հատուածում, բաւական մեծ տեղ է յատկացուած հայ ժողովրդի պատմութեանը, թագաւորներին եւ մայրաքաղաքներին, կրօնին, ճարտարապետական յուշարձաններին, մարզի աշխարհագրութեանը, երկրաբանութեանը եւն.:

Իր պատմական ակնարկներից մէկում, շարունակելով Հայաստանի մայրաքաղաքների թեման, Դիւ Բուան գրում է. «*Արմաւիրն, ըստ հայերի*՝

Չերքէզների ու աբխազների մօտ, Կոլխիդա, Վրաստան, Հայաստան եւ Ղրիմ), *հտր. 1*, թրգմ. ֆրանսերէնից՝ Ն.Ա. Դանկեւիչ-Պուշչինա, խմբ. Ա.Վ. Ֆադէեւ, ԽՍՀՄ ԳԱ վրացական մասնաճիւղ, Սուխումի, 1937:

[55] О. Буланова, *Азербайджан и «Путешествие вокруг Кавказа» Дюбуа де Монпере в 1833-1834 г.* (Ադրբեջանն ու Դիւբուա դը Մոնպերէի «ճանապարհորդութիւն Կովկասի շուրջը» 1833-1834 թթ.), Azer History (URL: https://azerhistory.com/?p=8880 , մատչում՝ 08 Ապրիլ 2020 թ.). նաեւ՝ նոյնի՝ *Азербайджан и Эривань 1833-1834 годов в зарисовках Дюбуа де Монпере* (1833-1834 թթ. Ադրբեջանն ու Էրիւանը Դիւբուա դը Մոնպերէի նկարներում), Azer History (URL: https://azerhistory.com/?p=8883 , մատչում՝ 08 Ապրիլ 2020):
Վերոբերեալ երկու յօդուածների ուսումնասիրութիւնը մեզ թոյլ է տալիս կարծիք յայտնել առ այն, որ Բուլանովան շատ վատ է պատկերացնում քննարկուող պատմական ժամանակաշրջանը, աւելին, կարելի է ասել, որ պատշաճ չի տիրապետում քննարկուող նիւթ՝ Դիւ Բուայի աշխատութիւններին: Հուսկ, նա հրապարակել է «դատողութիւններ», որոնք շատ հեռու են իրականութիւնից, ունեն միայն քարոզչական բնոյթ եւ որեւէ գիտական հետաքրքրութիւն ու կարեւորութիւն չեն ներկայացնում:
Այս պարագայում մեզ համար յստակ են 'գիտնականի' մօտեցումները, դրդապատճառները եւ նպատակները: Կամայական մեկնաբանելով եւ նենգափոխելով պատմական իրողութիւնն ու Դիւ Բուայի աշխատութիւնների փաստերը՝ նա հետապնդել է միքանի նպատակ.-
ա) Շրջանառել այն միտքը, թէ իբր մինչեւ ԺԹ. դարի 30ականները Մեծ Հայք-Հայաստան անունով երկիր երբեք գոյութիւն չի ունեցել:
բ) Ստուեր նետել Դիւ Բուա գիտնականի եւ նրա աշխատութիւնների ճշմարտացիութեան վրայ:
գ) Մեղադրել ռուսներին, որոնք իբր, յանուն իրենց շահի եւ ի նպաստ հայերի, հովանաւորել են հանրայայտ գիտնական ճանապարհորդին՝ «պատմական կեղծիքներ» կատարելու դիմաց:
դ) «Ապացուցել», որ Ադրբեջանը հնագոյն երկիր է, իսկ ադրբեջանցիները բնիկներ են:
ե) Ադրբեջանը ներկայացնել իբրեւ հնագոյն մշակոյթի կրող երկիր:

հիմնադրուել է Ք.ա. 2000ին Արմայիս (Արամայիս - Վ.Մ.) թագաւորի կողմից եւ 18 դար շարունակ եղել Հայաստանի թագաւորների նստավայրը»[56]:

Իսկ գրքի մէկ այլ հատուածում շարադրում է.

Հիմա էլ միքանի բառ՝ Էջմիածնի պատմութեան վերաբերեալ:

Վաղարշապատը՝ Քասախ գետի վրայ գտնուող՝ Կոտայքի գաւառում, հնում կրում էր Արտիմէդ քաղաք, այսինքն՝ Դիանայի քաղաք անունը: Այն կառուցուել է Երուանդ Ա.ի կողմից՝ Ք.ա. 600ին: Այնուհետեւ կոչուել է Վարդգէսաւան՝ հայ իշխան Վարդգէսի անուամբ, ով ամուսնացել էր Երուանդ թագաւորի քրոջ հետ եւ դարձել այդ քաղաքի տէրը:

Տիգրան Բ.ն Ք.ա. 100ին այնտեղ հիմնեց հրեաների գաղութ, եւ այն դարձաւ մեծ առեւտրական քաղաք: Երկրորդ դարի աւարտին մօտ Վաղարշ թագաւորը քաղաքը շրջապատեց պարիսպներով, նրան տուեց իր անունը եւ դարձրեց թագաւորանիստ քաղաք: Նաեւ այն անուանուեց Նոր քաղաք ու մինչեւ 344 եղաւ Հայաստանի թագաւորների նստավայրը[57]:

Անդրադառնալով Արտաշատ քաղաքին, նա նշում է. «*Վազեցի դէպի աւերակները եւ լիուլի վայելեցի այդ անծայրածիր տարածքը, քանզի երբեք նման բան չէի տեսել թէ՛ ընդգրկմամբ եւ թէ՛ աւերածութեամբ:*

Ստրաբոնն ասում է, որ Արտաքսատան կառուցուել է ըստ մի յատկագծի, որ Հաննիբալն է տուել Արտաշէսին, որն էլ այն դարձրել է Հայաստանի մայրաքաղաքը»[58]:

Դիւ Բուան իր ճանապարհորդութեան ընթացքում, ըդգծուած մանրամասնութեամբ է ներկայացնում Հայ Եկեղեցին եւ հոգեւոր ժառանգութիւնը. «*Սուրբ Գրիգորը դարձաւ Հայաստանի առաջին պատրիարքը եւ այդ երկրի առաջին տաճարը կառուցեց այն վայրում, որտեղ, նրա իսկ հաւաստմամբ, Յիսուս Քրիստոսը յայտնուել էր իրեն: Այդտեղ խոյանում էր Անահիտ կամ Վեներա աստուածուհուն նուիրուած մի տաճար...: Այդ եկեղեցին հայերէնում կոչուեց Էջմիածին, այսինքն՝ Միածին որդու էջք, եւ մեր օրերում այն դարձեալ Հայաստանի պատրիարքական եկեղեցին է*»[59]:

Հեղինակը գրում է, դարեր առաջ եւ ոչ-վաղ անցեալում երկրաշարժի աւերիչ հետեւանքների մասին.

Հայաստանի պատմութիւնը նշում է նաեւ 1319ի ցնցումը, որն աւերեց շատ քաղաքներ ու գիւղեր:

1827 Նոյեմբեր ամսին այս կարգի մի իրադարձութիւն տապալեց Կեչառիսի սքանչելի գմբէթը եւ Գէօքչայի շատ այլ եկեղեցիներ:

Հայաստանի արեւմտեան մասում, Կուլպէի, Երուանդակերտի, Երուանդաշատի, Անիի բոլոր գեղեցիկ եկեղեցիները գետնին են տապալուել, եւ վիթխարի բեկորներն այս ու այն կողմ են նետուել՝ ասես գնդակի հարուածից

---

[56] Frédéric DuBois de Montperreux, *T. III*, էջ 419:

[57] Նոյն, էջ 363-64. նաեւ՝ Saint-Martin, *Mémoires*, *I մաս*, էջ 115:

[58] Նոյն, էջ 404:

[59] Նոյն, էջ 369-70:

վայր ընկած կեգլիներ: Այս կողմերում դժուարութեամբ կարելի է գտնել անվնաս, չճաքճքուած շէնք[60]:

Դիւ Բուան եւս իր գրքում անդրադարձել է Սեւանայ լճի աւազանին՝ երկրաբանական կառուցուածքին, ֆիզիկաաշխարհագրական նկարագրութեանը, լճի անուան ծագումնաբանութեանը եւ դրա չափերին, ջրի որակի ու աւազանի գետային ցանցի հետ կապուած որոշ հարցերին: Կատարել է տարածքի դիտարկում՝ ջերմաստիճանի չափումներ, ներկայացրել տարածաշրջանի պատմական ակնարկը՝ իր մեկնաբանութեամբ, անդրադարձել վերաբնակեցուած գիւղերին, հայ նոր վերաբնակներին, հայկական մշակութային ժառանգութեանը եւն.:

Երբ խօսքը վերաբերում է Սեւանայ լճի անուանը, նա նշում է.

Թուրքերն այս լճին տալիս են Կուկչէի դարիա, Կապոյտ ծով անունը, որը ռուսական քարտէզներում վերարտադրւում է Գէօկչայ կամ Գոկչա անուամբ: Հայաստանում այն անուանում են նաեւ Քաջարսու կամ Քաղցրահամ լիճ: Հին հայերն այն գիտէին որպէս Գեղամայ լիճ՝ իրենց նախկին թագաւորներից մէկի անուամբ:

Քաղցրահամ լիճ անուանումը նրան տրուել է ի հակադրութիւն Վանայ եւ Թաւրիզի լճերի, որոնք աղի են, եւ որոնց ջրերը բնաւ պիտանի չեն խմելու ...[61]:

Հեղինակը նկարագրելով Սեւանայ լճի աւազանը գալիս է հետեւեալ եզրայանգմանը. «*Լճափի հարաւ-արեւելեան, հարաւային ու արեւմտեան ողջ հատուածը առաջարկում է դիտելու համար սքանչելի երկրամաս՝ իր թագաւորների օրօք խիտ բնակեցուած Հայաստանի ամենահարուստ եւ ամենագեղեցիկ մասերից մէկը, եւ... շրջապատուած է պորֆիրային կամ հրաբխային բարձր լեռներով...*»[62]:

Անդրադառնալով լճի աւազանի պատմութեանը, հին եւ վերաբնակեցուած բնակավայրերին, բնակչութեանը եւ ճարտարապետական յուշարձաններին, նա նշում է.

Հայաստանի թագաւորների օրօք այն առանձնայատուկ մի գաւառ կամ իշխանապետութիւն էր՝ Սիւնիք կամ Սիսական անուամբ, որն ունէր բազմաթիւ շրջանների բաժանուած տարածքներում ապրող մեծաթիւ ազգաբնակչութիւն: Տարածաշրջանը ծածկուած էր գիւղերով, եկեղեցիներով եւ ունէր բազում քաղաքներ ու գեղեցիկ վանքեր:

Սակայն պարսիկների դէմ՝ թուրքերի, վրացիների եւ ռուսների պատերազմների ընթացքում, քանիցս աւերուած այդ երկիրը վերածուել էր անապատի, եւ գրեթէ ամբողջ հայ ու այլազգի բնակչութիւնը ստրկութեան էր տարուել:

Ռուսական կառավարութեան առաջին հոգսը, հենց որ դարձաւ այդ երկրի տէրը, այն վերաբնակեցնելն էր՝ այնտեղ նորաբնակներ ուղարկելով: Այդտեղ հաստատուեցին Պարսկաստանից եւ Թուրքիայից եկած հայերը, թաթարները,

---

[60] Frédéric DuBois de Montperreux, *T. III*, էջ 476:

[61] Նոյն, էջ 306:

[62] Նոյն, էջ 308:

որոնք այդ ընդարձակ տարածաշրջանը բաժանեցին իրար մէջ: Հայերը զբաղեցրին լճափի արեւմտեան մասը, մինչդեռ թաթարները գնացին հաստատուելու հարաւ-արեւելքում՝ չվախենալով Ղարաբաղի թաթարներից, որոնք սիրում են թալանել՝ անցնելով սարերով, եւ որոնց նրանք ընդունում են զէնքը ձեռքին: Այսօր 53 գիւղեր վերաբնակեցուած են, եւ դեռեւս երեւում են չվերաբնակեցուած 45 այլ գիւղերի աւերակները:
Անցած ժամանակների վեց գեղեցիկ եկեղեցիներ վերստին հօտեր են գտել[63]:

Նա շարունակում է. «*Սիւնիքի ամենայայտնի վայրը միշտ եղել է Զօտ կամ Զօդ (Սոթք - Վ.Մ.) քաղաքը, որն ունէր եկեղեցի եւ գտնւում էր լճից 20 վերստ հեռաւորութեան վրայ, Զօտի գեղեցիկ հովտում: Դա Սոթք /Sodk'h/ գաւառի գլխաւոր քաղաքն էր, հաւանաբար, Պտղոմէոսի Սոդուսենէն*»[64]:

Դիւ Բուայի գրքի Սեւանայ աւազանի վերաբնակներին առնչուող մասում տեղ է գտել շատ յուզիչ մի պատմութիւն. «Երբ ռուսները Սեւանայ լճի ափ ուղարկեցին Թուրքիայից եկած հայ նոր վերաբնակների, բախտի բերմամբ, նոր ժամանածների մի ընտանիքի տեղաւորեցին լքուած եկեղեցիներից մէկի մօտ: Նորեկների մէջ էր նաեւ սպիտականեր մի ծերունի, ով ժամանման առաջին իսկ պահից արտասովոր անհանգստութիւն էր դրսեւորում: Տեսնում էին, թէ նա ինչպէս էր պտտւում այդ եկեղեցու շուրջը, նայում մերթ այս, մերթ այն կողմից: Միւս հայերը՝ խիստ զարմացած նրան հարցրին, թէ ինչն էր նրան այդպէս մտահոգում: «*Ինձ թւում է, որ ես եղել եմ այստեղ,- ասել է նա,- որ ճանաչում եմ այս եկեղեցին: Եկեղեցու երգչախմբի տեղում պիտի որ լինի այսպիսի կամ այնպիսի բան, որ առաջներում տեսել եմ: Հենց այստեղ էի գալիս խաղալու, երբ ջահել տղայ էի՝ նախքան մեր ամբողջ ընտանիքի հետ սփրկութեան տարուելը Թուրքիա: Տեսէ՛ք, ինձ ծանօթ է սա, նաեւ՝ սա»: Վերջապէս, միանգամայն յստակօրէն տեղը բերեց ամէն բան, եւ ամէնեւին կասկած չկար, որ դա եկեղեցին էր իր գիւղի, որտեղից նրան տարել էին ութից ինը տարեկանում, եւ որտեղ ճակատագիրն այնքան անսպասելիօրէն բերում էր՝ աւարտելու կեանքի վերջին օրերը*»[65]:

Բնաւ զարմանալի չէ, որ Գէօքչայի գաւառի նկարագրութեան ժամանակ իր գրքում այս միջադէպը արձանագրել է նաեւ Շոպէնը[66]: Ըստ նրա՝ 1830ին Բայազէտից գաղթած մօտ 120ամեայ այդ ծերունին վերաբնակուել էր Փաշաքենդ[67] գիւղում: Մարդկային ճակատագրին վերաբերող այս

---

[63] Նոյն, էջ 311:

[64] Նոյն, էջ 312:

[65] Նոյն, էջ 312-13:

[66] Դիւ Բուան անձամբ ճանաչել է Շոպէնին, եւ Հայկական Մարզում գտնուելու ընթացքում նոյնիսկ գործակցել (Frédéric DuBois, *T. III*, էջ 413):

[67] Փաշաքենդ գիւղը յետագայում վերանուանուել է Հացառատ: Այժմ՝ Գաւառ քաղաքի թաղամաս:

փոքրիկ պատմութիւնը նա աւարտում է հետեւեալ տողերով. «*Մահանալով 1831ին, թաղուելով հայրենի հողում, նա մխիթարուեց*»[68]:

Դիւ Բուայի կազմած *Ատլաս*ում տեղ է գտել նաեւ «Սեւանայ լճի աւազանի քարտէզը Հայաստանում՝ գծահանուած ռուս երկրաչափների կողմից 1832» խորագիրը կրող ֆրանսերէն քարտէզը (տե՛ս քարտէզ 2)[69]:

Քարտէզի հետազօտութեան ընթացքում, մի շարք հարցերի հետ մէկտեղ, կարողացել ենք պարզել.-

ա) Սեւանայ լճի աւազանում բնակավայրերի տեղադրութիւններն ու անուանումները:

բ) «Սեւանայ լճի աւազան»ի ռուսական քարտէզը, մինչեւ *Ատլաս*ում տեղ գտնելը, ամէնայն հաւանականութեամբ, առանձին չի հրատարակուել, այլ եղել է ընդամէնը քարտէզի կազմողական բնօրինակը:

գ) «Սեւանայ լճի աւազան»ի քարտէզը մեզ հետաքրքրող տարածքի խոշոր չափսի ամենահին քարտէզն է՝ ընդհանրապէս եւ Հայկական Մարզի առաջին խոշորաչափ քարտէզն է, որ կազմուել է ռուսների կողմից[70]:

դ) 1832ին Սեւանայ լիճը ծովի մակարդակից ունեցել է շուրջ 1916 մ. բացարձակ բարձրութիւն[71]:

Իդէպ, Բուան Սեւանայ լճի աւազանի ֆրանսերէն քարտէզը կազմել է ռուսական քարտէզի օրինակով: Յայտնի է՝ ռուսական քարտէզներում լճի անունը տրւում էր օտարալեզու Гёр-чай, Гокча տարբերակներով: Իսկ հեղինակը իր քարտէզում կիրառել է լճի անուան հայկական տարբերակը՝ Սեւանայ լիճ (Lac Sévang) ձեւով: Ընդ որում, նա այդ սկզբունքին հարազատ է մնացել նաեւ իր գրքի շարադրանքում:

Դիւ Բուայի *Ատլաս*ում տեղ գտած նկարի[72]՝ «Տեսարան Սեւանայ լճից, Հայաստանում, հայեացք Չուբուկլուից»[73] միջոցով հեղինակը կարողացել

---

[68] Шопен, էջ 316-17:

[69] Frédéric DuBois, *Carte du bassin du lac Sévang en Arménie, relevée par les ingénieurs russes en 1832*, Lithographie de H. Nicolet à Neuchatel (Suisse), ATLAS, Série de géographie ancienne et moderne ou Ie Série, Pl. VII:

[70] Մխիթարեան, «*Ֆրեդերիկ Դիւ Բուա դը Մոնպերո՝ այդչափ*», էջ 80-88:

[71] 1832ի դրութեամբ Սեւանայ լճի մակարդակի բարձրութեան ճշգրտումը մեզ համար կարեւորւում է այնքանով, որ այսօր գոյութիւն ունի «Սեւանայ լճի հիմնահարց» հասկացութիւնը, եւ աւազանի բնահամակարգի խախտումը հիմնականում պայմանաւորուած է լճի մակարդակի արհեստական իջեցմամբ: 2021 Փետրուարի 2ի դրութեամբ, Սեւանայ լիճը ծովի մակարդակից գտնուել է 1900 մ. 52 սմ բարձրութեան վրայ (URL: https://armenpress.am/arm/news/1042260.html , մատչում՝ 31 Մայիս 2021):

[72] Չուբուկլու բնակավայրը յայտնի է նաեւ Ճապոտիկ (դեռեւս ԺԳ. դարում յիշատակել է Կիրակոս Գանձակեցին), Մուրացան եւ Չիբուխլու ձեւերով: Բնակավայրը Ծովագիւղ է վերանվանուել 1935ին (Յակոբեան, Մելիք-Բախշեան, Բարսեղեան, *Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, հտր. 2*, ԵՊՀ, Երեւան, 1988, էջ 860):

է մեզ հաղորդել շուրջ երկուհարիւր տարուայ վաղեմութեան հայ գիւղացու կենցաղին վերաբերող հետաքրքիր տեղեկութիւն, որը կարող է պատմական հրաշալի սկզբնաղբիւր լինել ուսումնասիրութեան համար:

Վերոյիշեալ երկու նկարների վերաբերեալ հարկ է նշել որ բնաւ պատահական չէ նկարների մակագրութիւններում Դիւ Բուայի կողմից շրջանառուած Մեծ Հայք եւ Հայաստան երկրանուանումների օգտագործման հանգամանքը որպէս հոմանիշներ՝ հաւասարութեան նշան դնելով դրանց միջեւ[74]:

ՔԱՐՏԷԶՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ

Մեր հետազօտութիւնների արդիւնքում կազմել ենք մէկ վարչական եւ երկու թեմատիկ քարտէզ:

Հայկական Մարզի վարչատարածքային բաժանումը (1828-40) քարտէզն[75] ընդհանուր պատկերացում է տալիս մարզի սահմանների (պետական, մարզային), վարչական բաժանման (նահանգ, շրջան, գաւառ) եւ Սեւանայ լճի աւազանի աշխարհագրական տարածքի վերաբերեալ:

Մշակուել են Սեւանայ լճի աւազանի քարտէզների կազմողական բնօրինակների տարրերը եւ դրանց արտայայտման ձեւերը: Համապատասխանեցուել են առկայ (1828ի սկիզբ) եւ հայերով վերաբնակեցուած բնակավայրերի (1828-32) ցանկերը, ազգային կազմը, դրանց տեղադրութիւնն ու անուանումները՝ համեմատելով «Սեւանայ լճի աւազանի քարտէզը Հայաստանում (1832)» քարտէզը հին (պատմական) եւ ժամանակակից քարտէզների հետ եւն.:

Սեւանայ լճի աւազանի բնակավայրերն ըստ ազգային կազմի (1828ի) քարտէզում[76] (քարտէզ 3) ակնյայտօրէն երեւում է, որ Ռուսաստանին անցնելու նախօրէին Հայկական Մարզի տարածքի Սեւանայ լճի աւազանը գործնականում հայաթափուած էր՝ վերոյիշեալ պատմական իրադարձութիւններով պայմանաւորուած: Երբեմնի հայաշատ ու ծաղկուն այդ ընդար-

---

[73] Frédéric DuBois, *Vue du lac Sévang, en Arménie, prise de Tchoubouklou*, ATLAS, Série pittoresque ou II[e] Série, Pl. XXXIII:

[74] Հրատարակութեան ենք նախապատրաստւում մի աշխատութիւն, որտեղ թարգմանաբար կը ներկայացուի Դիւ Բուայի վեցհատորեայ գրքից ու *Ատլասի*ց Հայաստանին եւ հայերին վերաբերող ընդգրկուն հատուածը: Յուսով ենք, որ այն իր ուրոյն տեղը կը գտնի եւրոպացի հեղինակների հայերի եւ Հայաստանի մասին հրապարակումների շարքում՝ պատմութեան, աշխարհագրութեան, տեղանուանաբանութեան, քարտէզագրութեան, երկրաբանութեան, ջրաբանութեան, կլիմայի, հնագիտութեան եւ ազգագրութեան մասին արժէքաւոր, անաչառ տեղեկութիւններ պարունակելու շնորհիւ:

[75] Մխիթարեան, քարտէզ 1:

[76] Մխիթարեան, քարտէզ 3, Սեւանայ լճի աւազանի բնակավայրերն ըստ ազգային կազմի (մինչեւ 1828):

ձակ ֆիզիկաաշխարհագրական շրջանում (երկարութիւնը 120 կմ, լայնութիւնը՝ 30-80 կմ, մակերեսը շուրջ՝ 4,890 կմ^2) կար 37 բնակավայր (Գէօքչայի գաւառում՝ 36, իսկ Դարաչիչակի գաւառում՝ 1), որոնցից ընդամէնը 2ն էին հայաբնակ (Երանոսը - Գէօքչայում՝ 81 բնակիչ, Գոմաձորը – Դարաչիչակում՝ 142 բնակիչ) եւ 1 բնակավայր, ուր թաթարների հետ համատեղ ապրում էին փոքրաթիւ հայեր (Զարզիբիրը - Գէօքչայում՝ 9 բնակիչ)[77], իսկ մնացած բնակավայրերը զբաղեցուած էին թաթարական տարբեր ցեղախմբերի կողմից (կարափափախ, դեմուրչիլի, միլլի, թաքերլու, ալիկանլու, այրումլի եւ կարակոյունլու)[78]:

Անմարդաբնակ՝ աւերակ բնակավայրերի թիւը - ըստ Շոպէնի հաւաստի - պաշտօնական տուեալների, Գէօքչայի գաւառում հասնում էր 67ի, իսկ Դարաչիչակում 16ի[79]:

Սեւանայ լճի աւազանի բնակավայրերն ըստ ազգային կազմի (1828-32) քարտէզում[80] (քարտէզ 4) տրուած են նաեւ Թուրքմենչայի պայմանագրից յետոյ պարսկահայ եւ արեւմտահայ գաղթականների կողմից վերաբնակեցուած գիւղերը: Այդ ժամանակահատուածում լճի աւազանում արդէն գոյութիւն ունէր 64 բնակավայր (Գէօքչայի գաւառում՝ 59, իսկ Դարաչիչակի գաւառում՝ 5), որոնցից հայաբնակ էին 25ը՝ Գէօքչայում (8,647 բնակիչ) եւ 5ը՝ Դարաչիչակում (1,563 բնակիչ)[81]: Այսպիսով, եթէ 1828ի սկզբին Սեւանայ լճի աւազանի բնակչութեան թիւը 5,839 էր (232 հայ եւ 5,607 թաթար), ապա 1832ի վերաբնակեցումից յետոյ բնակչութեան թիւը աճել եւ հասել էր 15,817ի (10,210 հայ եւ 5,607 թաթար):

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՎԱՉԿԱՏՈՒՆ ԹՈՒՐՔ-ԹԱԹԱՐՆԵՐԻ ԵՒ ԹԻՒՐՔԱԼԵԶՈՒ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Կարծում ենք տեղին է ներկայացնենք նաեւ տարածաշրջանում զարգացած «պատմական գործընթացներ»ը (ԺԱ. դարի Ա. կէս-ԺԹ. դարի Ա. կէս): Նման ներկայացումը հնարաւորութիւն կ'ընձեռնի լուսաբանել մինչեւ 1828 Արեւելեան Հայաստանում մեծաթիւ քոչուոր ցեղերի յայտնուելու պատճառների եւ թիւրքալեզու տեղանունների միջեւ գոյութիւն ունեցող պատճառահետեւանքային կապն, ու այդ իրավիճակի նախապատճառները:

---

[77] Шопен, էջ 591-602:

[78] Հ.Մ. Յարութիւնեան, *Նոր Բայազէտի գաւառը 1828-1913 թթ.*, ՀՀ ԳԱ-ԵՊՀ, Երեւան, 2008. նաեւ՝ *Հայաստանի Ազգային Արխիւ*, ֆ. 90, ց. 1, գ. 89, թթ. 2-324; ֆ. 90, ց. 1, գ. 88, թթ. 2-336:

[79] Шопен, էջ 515-17:

[80] Վ. Մխիթարեան, քարտէզ 4, Սեւանայ լճի աւազանի բնակավայրերն ըստ ազգային կազմի (1828-1832):

[81] Шопен, էջ 591-602:

ԺԱ. դարից իվեր Հայաստանի տարածքը ենթարկուել է սելջուկ-թուրքական[82] հորդաների՝ ժամանակակից թիւրքալեզու բնակչութեան (Բալկաններում, Փոքր Ասիայում, Հայկական Լեռնաշխարհում[83] եւ նրա մասը կազմող Այսրկովկասում սփռուած) նախնիների կողմից յարձակման: Թիւրք քոչուորների Հայկական Լեռնաշխարհ ներթափանցումը լի էր հայ ժողովրդի համար աննախադէպ, անկանխատեսելի եւ կործանարար հետեւանքներով: Թիւրքական տարրի ձեռնարկած աւերիչ արշաւանքները սկզբնաւորեցին հայ բնակչութեան բնաջնջման եւ տարահանման բազմադարեան գործընթացը, իր իսկ հայրենիքում՝ պատմական Հայաստանում:

Թիւրք վաչկատուների Հայկական Լեռնաշխարհ ներխուժման յաջորդ փուլերը պայմանաւորուած էին մոնղոլ-թաթարների (ԺԳ. դար) եւ Լենկթիմուրի (ԺԴ. դար) արշաւանքներով: Արդէն ԺԵ. դարում Հայաստանի տարածքի մի հատուած գտնւում էր թիւրքական ցեղախմբերի կողմից ստեղծուած Ակկոյունլուների եւ կարակոյունլուների պետութիւնների ներքոյ:

Չնայած վերոյիշեալ արհաւիրքիներին, դեռ երկար ժամանակ պատմական Հայաստանի ողջ տարածքը համարւում էր հայկական, ուր հայ բնակչութիւնը կազմում էր մեծամասնութիւն: Այդ են վկայում նաեւ Մարկօ Պոլոյի (1254-1324) հետեւորդներից՝ վանական Ժուրդէն դը Սեւերակի ճանապարհորդութիւնների (1320ականներ) գրառումները, որտեղ գրուած է.

> Այս երկրում ապրում են հիմնականում հայեր-հերետիկոսներ (հերետիկոս՝ ոչուղղափառ, տարբեր վարդապետութիւն քարոզող - Վ.Մ.): ...Այս Հայաստանը ձգւում է Սեբաստից (Սիվասից - Յ.Շ.) մինչեւ Օրոգանի (Մուղանի - Յ.Շ.)

---

[82] *История Востока, Восток в средние века. Закавказье в XI-XV вв.* (Արեւելքի պատմութիւն, Արեւելքը միջնադարում. Անդրկովկասը XI-XV դդ.), *հտր. 2*, Մոսկուա, «Արեւելեան գրականութիւն» ՌԳԱ, 2002, էջ 515-16:

ա) «Թիւրքերի առանձին խմբեր ներխուժել են տարածաշրջան եւ նախկինում, հիմնականում հիւսիսից (խազարներ, բուլգարներ եւն.), սակայն նրանք չեն փոխել էթնիկ կազմը»:

բ) «Ժամանակակիցների նկարագրութիւններում սելջուկեան ներխուժումը ներկայանում է որպէս աղէտ Անդրկովկասի երկրների համար: Սելջուկներն ամէնից արագ հաստատուեցին հայկական հարաւային հողերում, որտեղից հայ բնակչութիւնը ստիպուած էր արտագաղթել Բիւզանդիա: Այսպէս առաջացաւ Կիլիկիայի Հայկական Թագաւորութիւնը (1198-1375 - Վ.Մ.), որը գոյատեւեց մինչեւ ԺԴ. դարի վերջը: Եկուոր թիւրքերի կողմից Հայկական Լեռնաշխարհում սկսուեց հայ եւ քուրդ բնակչութեան դուրս մղման բազմադարեայ գործընթացը: Նոյնը տեղի ունեցաւ նաեւ Անդրկովկասի սահմաններում»:

[83] «*Հայկական Լեռնաշխարհ.- արեւմտեան Ասիայի լեռնային շրջան: Այն հիմնականում գտնւում է Թուրքիայում, զբաղեցնում է ամբողջ Հայաստանը եւ ներառում է հարաւային Վրաստանը, արեւմտեան Ադրբեջանը եւ հիւսիսարեւմտեան Իրանը: Լեռնաշխարհը զբաղեցնում է գրեթէ 154,400 քառակուսի մղոն (400,000 կմ²)...*» (*Encyclopedia Britannica*, URL: https://www.britannica.com/place/Armenian-Highland , մատչում՝ 8 Մայիս 2021):

հարթավայրը, իսկ լայնութեամբ՝ Բարքար լեռներից մինչեւ Տաուրիս (Թաւրիզ - Я.С.) ...: ... Այս լեռը կոչւում է Արարատ, եւ նրա մօտ է գտնւում Սեմուր (Վան? - Я.С.) քաղաքը: Ժամանակին նա մեծ էր, բայց այն կործանեցին թաթարները: Ես ճանապարհորդել եմ, գրեթէ, այս երկրով մէկ[84]:

ԺԶ. դարից սկսած, պատմական Հայաստանի արեւելեան տարածքները դառնալով Օսմանեան Կայսրութեան եւ Սէֆեան Պարսկականի միջեւ աւելի քան 300 տարի ձգուող հակամարտութիւնների՝ պարբերաբար կրկնուող աւերիչ պատերազմների թատերաբեմ, ամայացան[85]: Աւերածութիւններն ու կողոպուտը ուղեկցւում էին հայ բնակչութեան ֆիզիկական բնաջնջմամբ, գերեվարութեամբ, տարագրութեամբ, սովով, համաճարակներով, կրօնական հալածանքներով եւ ուծացմամբ:

Աւելին, այս աղէտներին աւելացան եւս երկուսը: Հակամարտող կողմերը երկուստեք որդեգրել էին «այրուած հողի» եւ թիւրքական ցեղերով տարածաշրջանը վերաբնակեցնելու մարտավարութիւնները:

• Կիրառելով «այրուած հողի» մարտավարութիւնը, իրականացւում էին բնիկ ժողովուրդների մեծաթիւ տեղահանութիւններ: Այս գործողութիւնները նպատակ ունէին հակառակորդին զրկել մարդկային եւ բնական աղբիւրներից, որպէսզի խոչընդոտեն թշնամու զօրքերի առաջխաղացումը: Նմանատիպ մօտեցումը յաճախ էր օգտագործւում յատկապէս պարսիկների կողմից: Օսմանեան զօրքերի յարձակումից առաջ պարսիկները տեղահանում էին տասնեակ հազարաւոր տեղաբնիկներին, որի արդիւնքում, հայկական տարածքները հեղեղւում էին թիւրքական քոչուոր ցեղերով:

• Օգտագործելով թիւրքական ցեղերով տարածաշրջանը վերաբնակեցնելու մարտավարութիւնը թուրքերն ու պարսիկները հետապնդում էին հիմնականում երկու նպատակ. ա) տեղերում ամրապնդել սեփական իշխանութիւնը, իրենց հաւատարիմ ցեղերով՝ նրանց առաջնորդներին շնորհելով պաշտօններ եւ տարածքներ, եւ, բ) ի հաշիւ տեղաբնիկ ժողովուրդների, իրենց ենթակայութեան տակ գտնուող հողերում փոխել էթնիկ պատկերը:

Այսպէս, «այրուած հողի» քաղաքականութեան սահմռկելի օրինակ է Սէֆեան Պարսկականի կողմից իրականացրած բռնի տեղահանութիւնը: 1604ին օսմանեան զօրքերի առաջխաղացումից առաջ Շահ Աբբաս Ա.ը (1588-1629) կազմակերպեց Հայաստանի՝ Էրզրումի եւ Թաւրիզի

---

[84] Я.М. Свет, (пер. и прим.), *После Марко Поло. Путешествия западных чужеземцев в страны трех Индий* (Մարկօ Պոլոյից յետոյ. Արեւմտեան օտարերկրացիների ճանապարհորդութիւնները երեք Հնդկաստանի երկրներ), Մոսկուա, Նաուկա, 1968, էջ 137-38:

[85] ԺԶ.-ԺԸ. դարերի թուրք-պարսկական պատերազմների ընթացքում Երեւանի բերդը 14 անգամ ձեռքից ձեռք է անցել
(URL: https://hy.wikipedia.org/wiki/Երեւանի_բերդ , մատչում՝ 8 Մայիս 2021):

արանքում ընկած Երեւանի ու Նախիջեւանի ուղղութեամբ ձգուած տարածութեան բնակիչների[86] բռնի գաղթեցումը (շուջ 300,000 որոշ տուեալներով 500,000 հայ)[87], դէպի Պարսկաստան՝ Սպահան (1605ին)[88]: Նրանց մի մասը զոհուեց ճանապարհին[89]: Աննախադէպ այս բռնագաղթը, որը ժամանակակիցներն անուանեցին «մեծ սուրգուն»[90՝ ահաւոր էր իր չափերով ու հետեւանքներով: Հայկական մարդաշատ բնակավայրերը աւերուեցին եւ դատարկուեցին[91], տարածքում հայ բնակչութեան

---

[86] J. Chardin, *Voyages en Perse et autres lieux de l'Orient, t. II*, Amsterdam, 1711, էջ 304-05. նաեւ՝ Մ. Զուլալեան, *Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմութեան հարցերը ըստ եւրոպացի հեղինակների*, ՀՀ ԳԱ, Երեւան, 1990, էջ 151-52:
Ժան Շարդէնը գրում է. «*Աբբաս Մեծն էր, որ աւերեց Ջուլֆան եւ այն ամէն ամրութիւնները ինչ ռազմարուեստը այստեղ սփռել էր. նոյն այդ պատճառով նա աւերեց Նախիջեւանը եւ Հայաստանի նոյն գծի վրայ գտնուող այլ վայրերը, որպէսզի թուրքական բանակին զրկէր պարենից: Այս նուրբ քաղաքական գործիչն ու մեծ զօրավարը, տեսնելով իր ուժերի թուլութիւնը թշնամու նկատմամբ, եւ մտածելով, թէ ինչ միջոցներով է հնարաւոր խոչընդոտել իւրաքանչիւր տարի թուրքական զօրքերի մուտքը Պարսկաստան, նուաճումներ կատարել այնտեղ ու իր գերիշխանութեան տակ պահել, որոշեց ամայացնել Էրզրումի եւ Թաւրիզի արանքում ընկած Երեւանի ու Նախիջեւանի ուղղութեամբ ձգուած երկիրը, որ թուրքերի արշաւանքի սովորական ուղին էր եւ նրա բանակի պարենաւորման վայրը: Նա այնտեղից տեղափոխեց բնակչութիւնն ու անասնահօտերը, աւերեց ամէն տեսակի շինութիւնները, հրկիզեց դաշտերն ու այգիները եւ թունաւորեց նոյնիսկ ջրի աղբիւրները*»:

[87] «Իրան», *Հայկական սովետական հանրագիտարան, հտր. IV*, ՀԽՍՀ ԳԱ, Երեւան, 1978, էջ 451:

[88] «Թիւ 226», *Հայերէն ձեռագրերի ԺԷ. դարի յիշատակարաններ (1601-1620 թթ.), հտր. Ա*, ՀԽՍՀ ԳԱ, Երեւան, 1974, էջ 183-84:

[89] Լ.Գ. Դանեղեան, *Առաքել Դաւրիժեցու երկը որպէս Սէֆեան Իրանի XVII դարի պատմութեան սկզբնաղբիւր*, ՀԽՍՀ ԳԱ, Երեւան, 1978, էջ 65-110:

[90] Սկզբնաղբիւրներում «մեծ սուրգուն» անուանումը ստացել է թուրքերէն «sürgün» (արտաքսում, տեղահանութիւն, բռնագաղթ) բառից:

[91] Antonio de Gouvea, *Relation des grandes guerres et victoires obtenues par le roi de Perse Schah-Abbas, etc.*, Roven, 1646, in-4°, էջ 342-43. նաեւ՝ Զուլալեան, էջ 148:
Անտոնիո դէ Գուէան գրում է. «*Եթէ մենք փնտռելու լինենք մի ժողովրդի՝ խլուած իր սեփական երկրից եւ հին բնակավայրից, ապա մենք նրան կը գտնենք հայերի մէջ: Նրանք բռնութեամբ ու ուժով հանուած են պարսից թագաւորի հրամաններով եւ նրանք, ովքեր ի կատար են ածել այդ հրամանները, այնպիսի քմահաճոյք ու կատաղութիւն էին դրսեւորել, որ հայերը երկու սովորական օրուանից աւել ժամանակ չունեցան թողնել այն ծննդավայրերը, ուր մեծացել էին, եկեղեցիները, ուր նրանց հայրերն ու մայրերը թաղուած էին, փները, որ իրենք կառուցել էին, այգիները, որ փնկել էին, ժառանգութիւնը, որ ստացել էին, կարճ՝ այն ամէնը, ինչ մարդուն գոհացում կարող է պատճառել եւ հաճելի յիշողութիւններ արթնացնել*»:

թուաքանակը կտրուկ պակասեց՝ հասնելով նուազագոյնին: Միւս կողմից, բնականաբար, այն մեծապէս նպաստեց եւ ճանապարհ հարթեց թիւրքական ցեղերի անարգել տեղաշարժի համար, որոնք յետագայում զբաղեցրեցին լքուած հայկական գիւղերն ու քաղաքները:

Բռնագաղթից յետոյ, 1606-09ին Հայաստանում մոլեգնում է սովը[92]:

Վերաբնակեցման ցայտուն օրինակ կարող է հանդիսանալ Աբբասղուլի աղա Բաքիխանովի[93] գրքում տեղ գտած յիշատակումը. «*Հին պաշտօնական գրագրութիւնից (ԺԶ. դարասկզբ - Վ.Մ.) երեւում է, որ Շահ Իսմայիլը (Իսմայիլ Ա., 1487-1524 - Վ.Մ.) Իրաքից բայաթ ցեղին գաղթեցրել է մասամբ Էրիւան եւ մասամբ Դերբենդ եւ Շաբրան, որպէսզի հզօրացնի տեղական տիրակալներին*»[94]:

Հայկական տարածքներում վերաբնակեցուած բայաթ ցեղից յետոյ իր նշանակութեամբ երկրորդը՝ ղաջարական ցեղն էր, որ Փոքր Ասիա էր ներթափանցել թաթարական ներխուժումից յետոյ եւ սկզբնական շրջանում հաստատուել Սիրիայում[95]:

Յիշատակութեան են արժանի Մեծ Հայքի Գուգարք Աշխարհի արեւելեան, ինչպէս նաեւ Ուտիքի ու Արցախի վերին գաւառներում իրականացուած վերաբնակեցումները: ԺԶ. դարավերջում Կուրի հովտում հաստատւում է ղազախլու-ղազախ թիւրքական ցեղը: Իսկ ԺԷ. դարասկզբին Գանձակից հարաւ ընկած հարթավայրային շրջաններում տեղակայւում է ղզլբաշական զուլքադար ցեղի շամսադդինլու ճիւղը: Ըստ ԺԸ. դարի

---

[92] 1606-09ին Հայաստանում մոլեգնած սովի հիմնական պատճառներից մէկը, որի հետեւանքով մահացել է միքանի հարիւր հազար եւ արտագաղթել տասնեակ հազարաւոր մարդ, ի թիւս 1596-1610 (1591-1611)ի Օսմանեան Կայսրութիւնում ջալալիական շարժման, ԺԶ.-ԺԷ. դարերի սահմանագլխին կլիմայական պայմանների փոփոխութիւնների՝ 1607ի երաշտի, 1603-18ի թուրք-պարսկական պատերազմի եւ համաճարակների, եղել է նաեւ 1604ի բռնագաղթը (Առաքել Դաւրիժեցի, *Գիրք պատմութեանց*, աշխ.՝ Լ. Խանլարեան, ՀԽՍՀ ԳԱ, Երեւան, 1990, էջ 112. նաեւ՝ Մ. Մալխասեան, «1606-1609 թթ. մեծ սովը Հայաստանում», *Բանբեր Երեւանի համալսարանի. հայագիտութիւն*, 2(23):2017, էջ 17-34:

[93] Աբբասղուլի աղա Բաքիխանով (1794--1847), «ադրբեջանցի» բանաստեղծ, գրող, լուսաւորիչ, «ադրբեջանական գիտական պատմագրութեան» հիմնադիր (URL: https://ru.wikipedia.org/wiki/Бакиханов,_Аббас-Кули-ага , մատչում՝ 8 Մայիս 2021):

[94] *Аббас-Кули-ага Бакиханов* (Աբբաս-Կուլի-աղա Բակիխանով), խմբ., մեկնաբանութիւններ, ծանօթ. եւ ցանկեր՝ ԱԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Զ.Մ. Բունիաթովի, Գիւլիստանի Իրամ, Բաքու, Էլմ, 1991, էջ 49:

[95] Шопен, էջ 531:

պատմագիր Վախուշտի Բագրատիոնի՝ 1620ականներին Գուգարքի արեւելեան տարածքները Շահ Աբբասը Ա.ը վերաբնակեցնում է բորչալու ցեղով[96]:

Ինչպէս յայտնի է, որոշ ժամանակ անց, իրական տեղանունները անուանափոխուեցին, ու վերոնշեալ տարածքները սկսեցին կոչուել նոր վերաբնակեցուած քոչուոր ցեղերի անուններով. օրինակ՝ Ղազախ, Շամշադին եւ Բորչալու:

Հայկական տեղանունների անուանափոխութեան, եւ յետագայում դրանց մոռացութեան մատնելու հարցում շատ կարեւոր դեր է խաղացել այն, որ թիւրքական տարրի կողմից զաւթած տարածքներում հայ բնակչութեան արագ բնաջնջումը, կամ ընդհանրապէս, զանգուածային կազմակերպուած տեղահանութիւնները չէին ենթադրում տեւական որեւէ «համակեցութիւն» տեղաբնիկ հայերի եւ թիւրքական ցեղերի միջեւ: Այդ «գործընթացները» յետագայում տարածաշրջանում յանգեցրեցին մշակութային լանդշաֆտի եւ աշխարհագրական անուանումների կտրուկ փոփոխութեան[97]: Վաչկատուն ցեղերը, հայ բնակչութեան բացակայութեան պայմաններում, նոր միջավայրում, անծանօթ լինելով հայկական տեղանուններին, ամբողջութեամբ կամ մասամբ դրանք փոխարինեցին իրենց քիմքին հաճոյ թիւրքերէնով:

Մինչ 1828 նմանատիպ իրավիճակ էր ստեղծուել Սեւանայ լճի աւազանում: Հայկական տեղանունների գերակշիռ մասը մոռացութեան էր մատնուել՝ անուանափոխուելով վերաբնակեցուած թուրք-թաթարների կողմից: Այդ իրողութեան ճշմարտացիութիւնը իր աշխատութեան մէջ հաստատել է Շոպէնը: Նա գրում է. «*Անցեալ դարում ամայացման ենթարկուած այդ գաւառը (Գէօքչայի - Վ.Մ.) մնացել էր միանգամայն դատարկ: Հետեւաբար, երբ Էրիւանի*[98] *վերջին սարդար Հուսէյն խանը 1814ին ձեռնամուխ եղաւ կարափափախներով այն վերաբնակեցնելուն, ոչ ոք չէր կարող յիշել նրա աւերուած գիւղերի անունները, որոնք, այդ ժամանակից իվեր սրացան նոր անուանումներ*»[99]:

Շոպէնի այս վկայութիւնը հաստատւում է նաեւ մեր հետազօտութիւնների արդիւնքներով, որոնց համաձայն 1828ին – ինչպէս վերեւում

---

[96] Ա. Եսայեան, «Թիւրքական ցեղերի բնակեցումը հիւսիսարեւելեան Հայաստանում Սէֆեանների օրօք (XVI-XVII դդ.)», *Բանբեր Մատենադարանի*, 27:2019, Երեւան, էջ, 288-95:

[97] A. Saparov, "The alteration of place names and construction of national identity in Soviet Armenia," *Cahiers du monde russe*, 44/1:2003, էջ 179-98:

[98] «Նոյնիսկ Երեւանի անուանման՝ ադրբեջաներէնում գործածական İrəvan տարբերակը թիւրքական չի կարող լինել շատ պարզ պատճառով՝ դրանում խառնուած է ձայնաւորների ներդաշնակութեան օրէնքը, ուստի ադրբեջաներէնում այն վստահաբար փոխառութիւն է պարսկերէն ایروان [Iravān] ձեւից» (Վ. Ոսկանեան, URL: https://analitik.am/news/view/626156 , մատչում՝ 8 Մայիս 2021):

[99] Шопен, էջ 446:

ասեցինք - ամբողջ Սեւանայ լճի աւազանը՝ շուրջ 4,890 կմ^2 մակերես ունեցող տարածքը գրեթէ ամայացուած էր, կար ընդամէնը 37 բնակավայր՝ 5839 բնակչով, որից հայեր էին միայն 232ը, իսկ մնացած 5607ը՝ թուրք-թաթար (կարափափախ, դեմուրչիլի, միլլի, թաքերլու, ալիկանլու, այրումլի եւ կարակոյունլու ցեղերից)[100]:

Իսկ առկայ 37 բնակավայրերի անուանումներից միայն երկուսն էին հայկական, Երանոսը՝ Գէօքչայի եւ Գոմաձորը՝ Դարաչիչակի գաւառներում, միւս 35 գիւղերի անուանումները օտարահունչ էին:

Յաւելենք, որ ըստ՝ Շոպէնի, Սեւանայ լճի աւազանում կար շուրջ 83 աւերակ բնակավայր[101]:

Դիւ Բուայի աշխատութիւններում կարելի է գտնել տեղանունների անուանափոխութեան բազմաթիւ օրինակներ: Այսպէս, Սեւանայ լճի աւազանը պատկերող նկարում եւ քարտէզում (քարտէզ 2) յիշատակւում է Չուբուկլու (Չիբուխլու) տեղանունը: Ինչպէս նշել էինք, դեռեւս ԺԳ. դարում այս գիւղը Գանձակեցու կողմից յիշատակւում է որպէս Ճապոտիկ[102], որը յայտնի էր նաեւ Ճիպոտիկ ձեւով[103]: Ամէնայն հաւանակութեամբ, տեղանուան թիւրքական տարբերակը հայերէնից թարգմանաբար օգտագործուած ձեւն է:

Դիւ Բուայի Սեւանայ լճի աւազանի քարտէզում (քարտէզ 2) տեղ է գտել օրինակ՝ Սատանախաչ (Սատանագաչ) անուամբ լեռը: Սա, հայկական տեղանուան մասնակի փոխառման վառ օրինակ է: Բառը բաղկացած է, քրիստոնեաների համար անընդունելի, արհեստականօրէն միացուած երկու՝ սատանայ եւ խաչ մասերից: Անշուշտ, անիմաստ տեղանուն է, եւ որն է այս երկու բառերի միջեւ կապը դժուարանում ենք կռահել: Իսկ թուրք-թաթարի համար միեւնոյն էր:

ՎԵՐՋԱԲԱՆ

Մերօրեայ «հարեւանը» 1828ին հայերի պատմական հայրենիքում՝ Արեւելեան Հայաստանում, թուրք-թաթարների եւ թիւրքալեզու տեղանունների առկայութեան հանգամանքը ընդունելով իբրեւ «հիմք/հիմնաւորում», այսօր իրեն իրաւունք է վերապահում յաւակնութիւններ ունենալ Երեւանի, Սեւանայ լճի աւազանի մեծ մասի, Սիւնիքի եւ Արցախի նկատմամբ: Ակնյայտ է, որ նա շրջանառութեան մէջ դնելով «Արեւմտեան Ադրբեջան» արհեստածին հասկացութիւնը, հետապնդում է հեռահար քաղաքական նպատակներ:

---

[100] Յարութիւնեան. նաեւ՝ ՀԱԱ:

[101] Шопен, էջ 515-17:

[102] Յակոբեան եւ այլք, *հտր. 2*, էջ 860:

[103] URL: ttps://hy.wikipedia.org/wiki/Ծովագիւղ , (մատչում՝ 8 Մայիս 2021):

Կարեւորելով եւ վերլուծելով 1828-35ի պատմական ժամանակաշրջանը, որը յետագայում շրջադարձային սահման հանդիսացաւ այսրկովկասեան տարածքում ապրող բնիկ ժողովուրդների եւ այնտեղ ներթափանցած քոչուոր ցեղերի համար, փորձել ենք անաչառ, հաւաստի աղբիւրների համադրմամբ, խարսխուելով պատմական տուեալների եւ ժամանակակից հեղինակների (1830ականներ) երկերի ուսումնասիրութիւնների վրայ, բացայայտել ադրբեջանցիների (թուրք-թաթարների) եւ նրանց առաջնորդի վերոյիշեալ կեղծիքներն ու սուտը, ճշմարտութեան դէմ գործած խարդաւանքները, որով ողողել են տեղեկատուական-գիտաերեւակայական դաշտը:

Աւելին, վերոյիշեալ լուսաբանումներին յաւելենք որ 1835ին Ռուսաստանում հրատարակուած *Статистическое описание Закавказского края*[104] պաշտօնական աշխատութեան «Անդիկովկասի երկրամասի բնակիչների բաժանումն ըստ՝ ժողովուրդների, լեզուի եւ դաւանանքի» գլխում ներկայացուած է 12 կարգից բաղկացած ցուցակ: Հայերից բացի (որոնց թուաքանակը Այսրկովկասում կազմում էր մօտ 370,000[105]) նշւում է եւս տասնմէկը՝ վրացի, պարսիկ, յոյն եւ այլ: Սակայն, այս դէպքում նոյնպէս ադրբեջանցի անուանումը չկայ[106], փոխարէնը ներկայացուած են, օրինակ՝ թաթարները (որոնց թուին են պատկանում՝ 1) թաթարները, 2) թուրքերը (օսմանլի), 3) սելջուկեան թուրքերը եւ 4) ղազախները)[107]:

Այն, որ երկերի հեղինակներ Շոպէնը, Դիւ Բուան եւ Եւեցկիյը գէթ մէկ անգամ իրենց աշխատութիւններում չեն յիշատակել ադրբեջանցի բառը՝ թէկուզեւ ցեղի, ցեղային միութեան կամ առաւել եւս, մէկ այլ ձեւակերպմամբ՝ զարմանալի չէ: Եւ բնական է, որ նման դէպքում խօսել այսպէս կոչուած «Ադրբեջան»ի կամ «պատմական Ադրբեջան»ի մասին՝ գիտականօրէն հիմնազուրկ է:

Այս փաստերը եւս մէկ անգամ հիմք են տալիս պնդելու այն պարզ ճշմարտութիւնը, թէ մեր տարածաշրջանում՝ տուալ դէպքում գոնէ մինչեւ 1830ականները «ադրբեջանցի» կամ «պատմական ադրբեջանական պետութիւն» գոյութիւն չի ունեցել: Իսկ իրականում, անհերքելի յայտնի փաստ է, որ «Ադրբեջան» եւ «ադրբեջանցի» եզրոյթները շատ աւելի ուշ շրջանի «բացայայտութիւն» են:

Ինչպէս նկատում ենք, մերօրեայ «հարեւանի» յաւակնութիւնները Արեւելեան Հայաստանի՝ հայկական տարածքների նկատմամբ անհիմն են,

---

[104] О.С. Евецкий, составил, *Статистическое описание Закавказского края* (Օ.Ս. Եւեցկիյ (կազմ.), Անդրկովկասեան երկրամասի վիճակագրական նկարագրութիւնը), Ս. Պետերբուրգ, Ներքին Պահպանութեան առանձին զօրաբանակի շտաբի տպարան, 1835:

[105] Նոյն, էջ 29-30:

[106] Նոյն, էջ 28:

[107] Նոյն, էջ 32:

իսկ նրանց ներկայացրած «պատմութիւնը Ադրբեջանի եւ ադրբեջանցիների» մասին՝ մտացածին: Հետեւաբար, յանուն ճշմարտութեան արդար կը լինէր, որ ադրբեջանցիները տեղեկատուական պատերազմ սանձազերծելու փոխարէն իրենց հայեացքը յառէին արեւելք, եւ թուրք-թաթարական կորսուած հայրենիքի փնտռտուքներն շարունակէին համապատասխան տարածաշրջանում:

Մինչեւ անգամ Շոպէնն է նկատել ստի ու կեղծիքի նկատմամբ թուրք-թաթարների հակուածութիւնը եւ իր աշխատութեան մէջ, բնութագրելով նրանց, գրում է, որ նրանք սովոր են խաբելուն, եթէ մինչեւ անգամ դրանից օգուտ չունեն, անխղճօրէն շողոքորթում են, նենգ են եւ աչքի են ընկնում պատուի մասին օրէնքների չիմացութեամբ[108]:

THE AZERBAIJANIAN (TURKISH-TATAR) OLD/NEW THREATS: INFORMATION WARFARE

(Summary)

VARDAN MKHITARYAN (vardan.mkhitaryan.g@gmail.com)

The paper focuses on the geographical claims made by Azeri historians concerning the native population of the Nagorno Karabagh area and its surrounding regions.

The paper argues that these claims falsify historical facts and politically aim at legitimizing Azeri claims of historical presence in the area.

Basing his research on the maps and studies of 19th century world renowned topographists Ivan Ivanovich Chopin and Frédéric DuBois de Montperreux, the author examines in a detailed manner the areas east of Lake Sevan, refutes Azeri allegations and asserts that the area and its adjacent parts have historically been a part of the Armenian Highland and constituted the *Hayots Arevelits Goghmank*, the eastern edges of historical Armenia.





Քարտէզ 1 եւ 2

[108] Շոպեն, էջ 709-10:


ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԱՎԱԶԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՆ
ԸՍՏ ԱԶԳԱՑԻՆ ԿԱԶՄԻ (մինչև 1828 թ.)

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԱՎԱԶԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՆ
ԸՍՏ ԱԶԳԱՑԻՆ ԿԱԶՄԻ (1828-1832 թթ.)

Քարտէզ 3 եւ 4

ԹԵՍԱՂՈՆԻԿԷԻ (ՍԱԼՈՆԻԿ) ՀԱՅՕՃԱԽԸ 1990-2017 ՇՐՋԱՆԻՆ[1]

ՅՈՎԻԿ ԳԱՍԱՊԵԱՆ
(kassapianhovik1977@gmail.com)

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Աշխատութեան նիւթը կը վերաբերի Թեսալոնիկէի (Սալոնիկ) հայօճախի արդի իրավիճակին, անոր ժողովրդագրա-ընկերային կտրուկ փոփոխութեանց, որոնք տեղի ունեցած են 1988-90ականներէն յետոյ, երբ Հայաստանի Հանրապետութենէն եւ Վրաստանէն մեծաթիւ հայեր հաստատուեցան հոն: Արդարեւ Թեսալոնիկէի մէջ, 1990էն ետք, կը ձեւաւորուի նոր համայնքային պատկեր մը, նոր հրամայականներով, նոր խնդիրներով եւ դժուարութիւններով:

Այս ուսումնասիրութեամբ պիտի փորձենք լուսաբանել որոշ հիմնախնդիրներ, որոնք կապուած են Սալոնիկի հայօճախի մերօրեայ վիճակին: Այս աշխատասիրութիւնը կ'ընթանայ միջ-ուսմունքային սկզբունքի հիման վրայ: Օգտագործած ենք հարցաթերթիկներու եւ անհատական հարցազրոյցներու դրութիւնը: Փորձած ենք անմիջական դիտարկումներով եւ դաշտային հետազօտութեամբ պարզաբանել Սալոնիկի հայութեան ծագումնաբանական շերտաւորումը, անհատական գործօնը, մտածելակերպը եւ իրենց ազգային ինքնադրսեւորման եւ ինքնագիտակցութեան աստիճանը: Կը կարծենք, որ այս թեզը իր դիտարկումներով եւ եզրակացութիւններով կրնայ որոշ ընդհանրութիւններ ունենալ ո՛չ միայն Յունաստանի, այլեւ ժամանակակից արեւմտեան Սփիւռքին հետ:

Սալոնիկահայութեան մասին գրականութիւնը սահմանափակ է եւ կը վերաբերի յատկապէս աւելի հին ժամանակաշրջանին[2]: Հեղինակը իբրեւ

[1] Երեւանի Պետական Համալսարանի պատմութեան ֆակուլտէտի սփիւռքագիտութեան ամբիոնի մագիստրական թեզ, 2016: Աշխատանքիս համար կարեւոր խորհուրդներ ստացայ աւարտաճառիս ղեկավար Տաթեւ Մինասեանին կողմէ, որուն կը յայտնեմ շնորհակալութիւնս:

[2] Այս ուսումնասիրութեան պատմական տուեալները քաղուած յատկապէս Ա. Մակարեանի *Յուշագիրք Թրակիոյ եւ Մակեդոնիոյ հայ գաղութներու* (Սելանիկ, Աթլաս, 1929) եւ Իոանիս Խասիոթիսի *Η Αρμενική Κοινότητα της Θεσσαλονίκης, Ιστορία, Σημερινή Κατάσταση, Προοπτικές* (Թեսալոնիկէի հայկական համայնքը,

Սալոնիկի հայօճախի անդամ, կը ջանայ հանդէս գալ նաեւ որպէս սկզբնաղբիւր:

Դաշտային հետազօտութիւնները կատարուեցան 2016ի ամռան, Սալոնիկի մէջ:

ՀԱՅՕՃԱԽԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՒ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Թեսաղոնիկէն (Thessaloniki, Salonique, Selanik) հիմնուած է Ք.ա. 315ին, Հիւսիսային Յունաստանի Մակեդոնական Թագաւորութեան Քասանտրոս թագաւորին կողմէ: Թեսաղոնիկէն Աղեքսանդր Մակեդոնացիի քոյրն էր[3]:

Բիւզանդական ժամանակաշրջանին, Սալոնիկը ապրեցաւ իր պատմութեան ամենափայլուն շրջանը՝ վերածուելով կայսրութեան երկրորդ կարեւորագոյն քաղաքին՝ Կոստանդնուպոլիսէն ետք:

1430ին քաղաքը ինկաւ օսմանեան տիրապետութեան տակ՝ նուաճուելով Մուրատ Բ.ի կողմէ, բայց պահպանեց իր տնտեսական եւ մշակութային կեդրոնի հանգամանքը, ունենալով նաեւ բարձր ռազմավարական դիրք:

1840-1912՝ քաղաքը - քառապատկուած բնակչութեամբ - դարձաւ պալքաններու ամենանշանաւոր նաւահանգիստը: 27 Հոկտեմբեր 1912ին, պալքանեան պատերազմին ընթացքին, քաղաքը ազատագրուեցաւ օսմանեան լուծէն եւ կցուեցաւ նորաստեղծ անկախ Յունաստանին:

Այսօր, Սալոնիկը կը համարուի արդիական եւրոպական քաղաք մը, կը պահպանէ իր կարեւոր առեւտրամշակութային համբաւը իբրեւ Յունաստանի Հանրապետութեան երկրորդ ամենամեծ քաղաքը եւ Պալքանեան Թերակղզիի «մեթրոպոլիս»ը[4]:

Սալոնիկի հայութեան պատմական պարբերացումը հնարաւոր է կատարել հետեւեալ ձեւով.-

Ա. փուլ.- Ժ. դարէն (բիւզանդական ժամանակաշրջան) մինչեւ Օսմանեան Կայսրութեան անկման ժամանակները՝ ԺԹ. դարու վերջերը:

Բ. փուլ.- 1880-90ականներէն մինչեւ Փոքր Ասիոյ աղէտը՝ 1922-23:

Գ. փուլ.- կը սկսի 1922ի Իզմիրի եւ այլ փոքրասիական շրջաններու եւ Արեւելեան Թրակիոյ հայ գաղթականներու տեղահանութեամբ եւ Հիւսիսային Յունաստան տեղափոխութեամբ: Այս փուլը կը տեւէ մինչեւ 1946-47, երբ տեղի կ'ունենայ ներգաղթը:

պատմութիւն, ներկայ կացութիւն, հեռանկարներ), University Studio Press, Thessaloniki, 2005) աշխատութիւններէն:

[3] Etymology՝ https://www.wikiwand.com/en/Thessaloniki (25-12-2016): (Հին յունական բառ Թէսալո-նիկի, որ կը նշանակէ թեսալացիներու դէմ յաղթանակ):

[4] Thessaloniki: Brief history՝ http://www.inthessaloniki.com/en/thessaloniki-brief-history , (20.06. 2016):

Դ. փուլ.- կը սկսի 1948էն եւ կը տեւէ մինչեւ 1990, երբ ՀՀէն եւ Վրաստանէն զանգուածային արտագաղթով հայեր կը հաստատուին Թեսաղոնիկէ:

Ե. փուլ.- կը սկսի 1990ին:

«*Թեսանողիկէի հնագոյն եւ սկզբնական հայ գաղութին ճշգրիտ [հիման վրայ] թուականը՝ անծանօթ կը մնայ մեզի: Սակայն օտար հեղինակներու վկայութեան համաձայն Մեծն Աղեքսանդր Մակեդոնացիին քրոջ անունին նուիրուած այս քաղաքը, մօտ 7 հազարեակ մը տարի առաջ լսած է հայ ոտքերու թփոտոցը կամ հայ բարբառի հնչիւնը*»[5]: Առաջին արձանագրութիւնը, ուր կը յիշատակուի հայկական ներկայութիւնը Սալոնիկի մէջ, կու գայ ԺԱ. դարէն, երբ կը յիշատակուի «Յովհաննէս հայ» անուն արհեստաւոր մը[6]:

Ընդհանուր առմամբ, Սալոնիկի հայութեան վաղ ներկայութիւնը բաւական մշուշոտ է, բայց կասկած չկայ, որ բիւզանդական զօրքի հայ վարձկաններ եկած են Սալոնիկ՝ ծառայելով կայսերական բանակին մէջ[7]: Հետեւաբար կրնանք ըսել, թէ հայերու ներկայութիւնը Սալոնիկի մէջ կ'առնչուի ընդհանուր բիւզանդական պատմութեան[8]:

1185ին Սալոնիկի մեթրոպոլիտ (առաջնորդ) Եւսդաթէոսի վկայութեամբ, զանազան հայկական ենթօճախներ գոյութիւն ունէին Սալոնիկի եւ ընդհանրապէս Մակեդոնիոյ եւ Թրակիոյ գաւառներու մէջ[9]:

Հակառակ անոր որ հատուկենտ վկայութիւններ կան Մակեդոնիոյ եւ Թրակիոյ հայկական գաղութներուն շուրջ, ասոնք սակայն չեն վերաբերիր մշտական ներկայութիւն ունեցող հայերուն[10]:

Փաստեր կան, որ 1872էն սկսեալ միքանի հարիւր հայեր կը հասնին Թրակիա, մասնաւորաբար՝ Ալեքսանդրուպոլիս, իբրեւ բանուորական ուժ՝ մասնակցելու համար Սալոնիկ-Պոլիս երկաթուղիի կառուցման աշխա-

---

[5] Մակարեան, էջ 84:

[6] *Հայ գաղթաշխարհի պատմութիւն (միջնադարից մինչեւ 1920թ.), Հտր. 2*, խմբ.՝ Վարդգէս Միքայէլեան, ՀՀ ԳԱԱ Գիտութիւն հրատ., Երեւան, 2003, էջ 48:

[7] Բիւզանդական բանակին մէջ հայերու ներկայութեան համար կան վաղուց ի յայտ եկած աղբիւրներ՝ Յուստինիանոս կայսրի ժամանակէն (528): Այդ վկայութիւնները կը հասնին մեզի Պրոկոպիոս Կեսարացիին կողմէ, որ կը յիշատակէ 17 հայ զօրահրամանատարներ եւ հայերէ բաղկացած բազմաթիւ գունդեր (Մակարեան, էջ 85. նաեւ՝ Հ. Բարթիկեան, *Գաղտնի պատմութիւն Պրոկոպիոս Կեսարացիի*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1987, էջ 11-12):

[8] I. Hassiotis, Giula Kassapian, *The Armenian Colony of Thessaloniki*, Սելանիկ, 1990, էջ 258:

[9] Χ. Μ. Μπαρτικιάν, *Ελληνισμοσ και Αρμενια,* Ἱδρυμα Γουλανδρή Χόρν, Աթենք, 1991, էջ 75-76:

[10] Մակարեան, էջ 85:

տանքներուն[11]: Սալոնիկահայութեան մասին առաջին եւ ստոյգ վկայութեան կը հանդիպինք 1881ին, երբ պոլսահայ Մկրտիչ Մինասեան կ'այցելէ Սալոնիկ ուր կը հանդիպի մօտ 20-25 անդամներէ բաղկացած փոքրաթիւ գաղութի մը: Ասոնք եկած էին Փոքր Ասիայէն եւ Կոստանդնապոլիսէն որպէս օսմանեան պետական պաշտօնեաներ կամ անհատ ձեռներէցներ, առեւտրականներ, արհեստաւորներ եւն.[12]: Այդ գաղութին մասին, սակայն բաւարար գրաւոր արձանագրութիւններու կամ արխիւային նիւթի չենք հանդիպած, թերեւս որովհետեւ գաղութը կազմակերպուած չէր[13]:

Սալոնիկահայութեան պատմութեան մէջ կարեւոր անկիւնադարձ կը նկատուի 1884ը, երբ կը կազմուի առաջին ազգային մարմինը («թաղային մարմին»)՝ խորհրդակցական ժողովի մը կողմէ ընտրուած: Մարմինը կը վաւերացուի Պոլսոյ պատրիարքարանին կողմէ[14]: 1885ին առաջին անգամ Պոլսոյ պատրիարքարանէն Սալոնիկ կ'ուղարկուի Տէր Միքայէլ քհնյ. Յովհաննէսեանը, որ կը մնայ ընդամէնը մէկ տարի[15]:

1888ին հայկական գաղութը, շնորհիւ Գրիգոր Բաշայեանի եւ տէր Արսէն քհնյ. Խաչոյեանի ջանքերուն, կը յաջողի օսմանեան տեղական մարմիններէն նուէր ստանալ հողամաս մը, որ օգտագործուի իբրեւ ազգային գերեզմանատուն: Սալոնիկի մէջ հայկական եկեղեցի կառուցելու համար, 1887ին գաղութը կը կազմակերպէ հանգանակութիւն, որուն կը մասնակցին տեղաբնակ թէ ոչ-տեղացի հայեր[16]:

6 Նոյեմբեր 1903ին կը կատարուի Թեսանողիկէի Ս. Աստուածածին եկեղեցւոյ նաւակատիքը, որ անշուշտ համապատասխան լիազօրութիւն ստացած էր տարի մը առաջ սուլթան Ապտուլ Համիտ Բ.ի կողմէ: Տաճարը կ'արժէ մօտաւորապէս 100 օսմանեան ոսկի եւ կը կառուցուի իտալացի ճարտարապետ Vitaliano Posellի (1838–1918) կողմէ[17]: Եկեղեցին կը մնայ մինչեւ այսօր սալոնիկահայութեան հոգեւոր եւ ազգային կեդրոնը եւ կը հանդիսանայ Սալոնիկի նորագոյն պատմութեան յուշարձաններէն մին:

1887-88ականներէն ունենալով իր գերեզմանատունը եւ եկեղեցին (որ ենթակայ էր Պոլսոյ պատրիարքարանին), Սալոնիկի հայութիւնը կը ստանայ մնայուն տեղաբնիկի հասկացութիւն: Առ այդ, հոգեւոր հովիւներ կ'ու-

---

[11] Σοφία Ζαχαροπούλου, “Οι αρμένιοι πρόσφυγες στην Αλεξανδρούπολη 1922-2013 (Από το Αραράτ στον Όλυμπο θέματα αρμενικής λαογραφίας) επιμέλεια Μ. Γ. Σέργις - Ελ. Κ. Χαρατσίδης - Γαρύφ. Γ. Θεοδωρίδου, εκδοτικός οίκος Κ&Μ Άντ. Σταμούλης, Թեսաղոնիկէ, 2015, էջ 207-21:

[12] Նոյն, էջ 86:

[13] Նոյն, էջ 88:

[14] Մակարեան, էջ 89:

[15] Նոյն, էջ 91:

[16] Նոյն, էջ 92:

[17] Փոսելլի մեծ ներդրում կ'ունենայ Սալոնիկի ատենի ճարտարապետական պատմութեան մէջ (Χασιώτης, էջ 56):

ղարկուին Պոլիսէն՝ սպասարկելու եկեղեցւոյ ու գաղութին ազգային եւ հոգեւոր կեանքին:

Ընդամէնը միքանի տասնեակ հայ ընտանիքներէ բաղկացած գաղութին թիւը կ'աճի եւ 1885ին կը հասնի մօտ 183ի[18], ինչը կը մղէ տեղի քահանան, որ 1887ին փայտաշէն մատուռի մը մէջ հիմնէ դպրոց մը, 10-12 աշակերտով, իսկ ինք կը գործէ իբրեւ ուսուցիչ: 1907ին աւելի կանոնակարգուած շէնքի մը մէջ կ'ընթանայ հայերէնի դասաւանդումը՝ 30-35 աշակերտներով[19], մինչ գաղութին թիւը 1908ին կը բարձրանայ 300ի[20]: 1911ին աշակերտներու թիւը կը բարձրանայ 50ի: Բայց, պալքանեան պատերազմին պատճառով դպրոցը կը փակուի եւ կ'օգտագործուի իբրեւ օսմանեան բանակի հայ զինուորներու ապաստարան[21]: Համաշխարհային պատերազմէն ետք հայոց թիւը կը բարձրանայ 500-600ի[22]:

1917ին Սալոնիկ կ'ապաստանին օսմանեան բանակի հայ զինուորներ: Սակայն, անոնցմէ քիչեր կը հաստատուին հոն: 1923ին Արեւելեան Փոքր Ասիոյ աղէտին հետեւանքով Սալոնիկի բնակչութեան ընդհանուր թիւը կտրուկ բարձրացում կ'արձանագրէ: Հազարաւոր յոյներ Արեւելեան Թրակիայէն, Փոքր Ասիայէն, Իոնիայէն անմխիթար վիճակի մէջ կը հասնին Սալոնիկ: Յոյն գաղթական զանգուածներուն մէջ կային նաեւ մեծաթիւ հայեր: Ըստ որոշ հաշուարկներու 1919-23՝ Յունաստան տարագրուած հայերուն թիւը կը հասնէր 85,000ի[23]: Յիրաւի, Հայոց Ցեղասպանութեան եւ փոքրասիական կոտորածներու հետեւանքով, «Յունա*ստանը… դարձաւ լայն բացուած դարպասներով հիւրընկալ ապաստան ահաւոր սպանդից ճողոպրած ու փախստական դարձած բիւրաւոր հայերի*»[24]: Հայ գաղթականները Սելանիկը կը նկատէին բնակութեան համար «յարմար միջավայր»[25]:

Այսպիսով, շուրջ 250-300 հոգի հաշուող Սալոնիկի հայօճախը, 1923էն ետք, քանի մը տարուան ընթացքին կը վերածուի 10-11 հազար հաշուող

---

[18] Hassiotis, Kassapian, էջ 215:

[19] Մակարեան, էջ 98-99:

[20] Hassiotis, Kassapian, էջ 215:

[21] Մակարեան, էջ 100:

[22] Hassiotis, Kassapian, էջ 215:

[23] Χασιώτης, էջ 24:

[24] Յովիկ Մելիքսէթեան, *Արեւմտահայերի բռնագաղթը եւ սփիւռքահայերի հայրենադարձութիւնը Սովետական Հայաստան*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1975, էջ 113:

[25] Դորա Սաքայեան, *Զմիւռնեան արկածներս*, Արօտ հրատ., Մոնթրէալ, 1997, էջ 65:

հայկական մեծ գաղթօճախի[26], եւ իր տեղը կը գրաւէ սփիւռքահայ քարտէսին վրայ[27]:

Յաջորդող տարիներուն կը կազմակերպուի փոքր ներգաղթ մը դէպի Սովետական Հայաստան եւ շուրջ 3000 հայեր կը հայրենադարձուին: Այս եւ այլ պատճառներով հայօճախին թիւը 1929ին կը նուազի շուրջ 6500ի[28]:

Բ. աշխարհամարտի ալեկոծ օրերը անդրադարձ կ'ունենան սալոնիկահայութեան կեանքին վրայ: Բ. համաշխարհային պատերազմին՝ գերմանական բանակը կը գրաւէ Յունաստանը: Փոթորկալի այդ ժամանակամիջոցին, մեծ թիւով հայեր կը մասնակցին յունական դիմադրական շարժումին եւ կը զոհուին[29]: 1946ին, քաղաքի թաղային խորհուրդն ու Աթենքի ազգային իշխանութիւնը կը յաջողին յունական կառավարութենէն բանակ չծառայելու խոստում ստանալ այն հայերուն համար, որոնք ատենին հեռացած էին Օսմանեան Կայսրութեան տարածքներէն եւ ապաստանած Յունաստան[30]:

Կեանքի ահաւոր վատ ու ծանր պայմանները, ինչպէս նաեւ 1945էն ետք Յունաստանի ներազգային պատերազմը պատճառ կը դառնան որ հայեր առաւել խանդավառուին հայրենադարձութեան գաղափարով: 14 Օգոստոս 1946ին Սալոնիկէն կը մեկնի ներգաղթողներու առաջին կարաւանը: Յաջորդ տարուան Օգոստոս 16ին, Փիրէաս նաւահանգիստէն ներգաղթեալներու երկրորդ զանգուած մը կը մեկնի՝ յունահայ հայրենադարձներու ընդհանուր թիւը հասցնելով աւելի քան 18,000ի[31]: Ինչպէս յունահայ գաղութը ներգաղթին պատճառով նուազեցաւ շուրջ 9635 հոգիի, նոյնպէս եւ Սալոնիկի հայութիւնը ներգաղթի պատճառով կորսնցուց իր 12,000 անդամներու 5/6ը, եւ 1947ին կը հաշուէր 462 ընտանիք կամ 1344 հոգի: Այս թիւը եւս մեծ արագութեամբ կը նուազի, երբ շատ հայեր կը գաղթեն Քանատա, Մ. Նահանգներ, Արժանթին, Ֆրանսա եւն.: Թիւի նուազումը նաեւ հետեւանք

---

[26] Χασιώτης, էջ 25:

[27] 'Diaspora': Beyond the Jewish Experience՝ http://www.academia.edu/9111245/_Diaspora_Beyond_the_Jewish_Experience (15.08.2016):

[28] Χασιώτης, էջ 26:

[29] "Η παρουσία των Αρμενίων στον Ελλαδικό χώρο" (Հայոց ներկայութիւնը յունական տարածքին մէջ), (Μέρος Β') http://www.armenika.gr/koinotita/75-istoria-paroikias/609-i-parousia-ton-armenion-ston-elladiko-xoro-meros-b (16.08.2016):

[30] Մակարեան, էջ 104-05:

[31] Համլէտ Սարգսեան, «1946-1948թթ. հայրենադարձութեան աշխարհագրութիւնը եւ ժողովրդագրութիւնը»՝ *«1946-1948 թթ. հայրենադարձութիւնը եւ դրա դասերը. Հայրենադարձութեան հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողով, զեկուցումների ժողովածու*, [ա.խ.], Լիմուշ հրատ., Երեւան, 2008, էջ 48-59:

էր ուծացման[32]: Հայօճախին անդամները, առաւել եւս Սալոնիկ ծնած (կամ մանուկ հասակին հոն գաղթած) նոր սերունդը ինքզինք փախստական կամ գաղթական չի զգար այլեւս: Միւս կողմէ, հայերու եւ յոյներու միջեւ խառն ամուսնութիւնները նորութիւն մը չէին, մանաւանդ արեւմտեան Փոքր Ասիայէն եւ Պոլիսէն եկած հայերուն համար[33]:

1957ին Սալոնիկի մէջ արձանագրուած էին ընդամէնը 1157 հայեր կամ 451 հայ ընտանիք[34]: Կ'արժէ նշել, որ 1920-46՝ Սալոնիկի մէջ գոյութիւն ունէին հայկական ամէնօրեայ երեք դպրոցներ, որոնք կեանքի կոչուեցան հայկական բարեսիրական կազմակերպութիւններու՝ ՀԲԸՄի, ՀՕՄի եւ Կիւլպէնկեան Հաստատութեան կողմէ: Այս դպրոցները կը գոյատեւեն մինչեւ 1946 եւ կը փակուին աշակերտութեան թիւի կտրուկ նուազումով[35]:

1947էն ետք Սալոնիկի հայօճախի նօսրացման պատկերը աւելի մատչելի դարձնելու համար, կը ներկայացնենք Թեսաղոնիկէի Ս. Աստուածածին եկեղեցւոյ ամուսնութիւններու արձանագրութեանց մատեանը:

Հայօճախին պսակադրութեան պատկերը ըստ Թեսաղոնիկէի Ս. Աստուածածին եկեղեցւոյ ամուսնութիւններու արձանագրութեանց տոմարի[36]	
տարի	քանակ
1933-1934	32
1945-46	35[37]
1946-47	55
1947-48	31
1948-49	11
1949-50	14
1951-52	9
1952-53	7
1953-54	4
1954-55	4

1947-90՝ հայօճախը կ'ապրի կայացման եւ ընդլայնման շրջան մը: Ան չ'ունենար քանակական վերիվայրումներ, նկատի առնելով որ Միջին Արեւելքէն գաղթող հայեր սկսած են արտագաղթել եւ հաստատուիլ Աթենք կամ

[32] *Book Review Armenian-Americans: From Being to Feeling Armenian by Anny Bakalian*՝ http://www.academia.edu/5537852/Book_Review_Armenian-Americans_From_Being_to_Feeling_Armenian_by_Anny_Bakalian (16.09.2016):

[33] Ι.Κ. Χασιώτης, ΜΝΗΜΗ ΑΓΚΟΠ ΚΑΣΑΠΙΑΝ (1946-1990), Αρμενικός Πολιτιστικός Σύλλογος "Χαμασκαΐν", 1992, էջ 16:

[34] Χασιώτης, էջ 26-27:

[35] Նոյն, էջ 69:

[36] Թեսաւնողիկէի Ս. Աստուածածին եկեղեցւոյ ամուսնութիւններու արձանագրութեանց մատեան (1932-2005) (ԹՍԱ):

[37] 1945ի այս պսակներէն առնուազն երեքը յոյն կանանց հետ խառն ամուսնութիւններ են (ԹՍԱ):

ալ երկիրներ[38]: Ըստ Խասիոթիսի, 1960ականներուն Սալոնիկի հայերու երրորդ սերունդը նոր թափով մը մերձեցման եւ ընդգրկման ընթացք կ'ունենայ քաղաքի յունական հասարակական կեանքէն ներս[39]:

Մեր կարծիքով 1946էն անդին կրնանք օգտագործել համայնք հասկացութիւնը իր բառին բուն իմաստով, քանզի մինչեւ այդ ժամանակ համայնք բառով նկատի ունէինք «Արմենոխորի» (հայոց գիւղ) եւ «Խարմանգէօյի» (խառն գիւղ) գաղթականները, ուր տարագրեալ հայութիւնը կը գոյատեւէր նեղլիկ փայտաշէն խրճիթներու մէջ:

Ընդհանուր առմամբ, 1946-90՝ ազգային կեանքը եղած է անդորր, առանց անկիւնադարձային իրադարձութիւններու: Սակայն պէտք է նշուի, որ 1957ին յունահայութեան ընդհանուր ազգային կեանքը պառակտուեցաւ եկեղեցական պատկանելիութեան ենթակայութեան խնդիրի պատճառով: Յունաստանի թեմը մինչեւ 1923 վարչական առումով ենթակայ էր Պոլսոյ պատրիարքութեան եւ անուղղակի ձեւով՝ մայր աթոռ Ս. Էջմիածինի կաթողիկոսութեան: 1957-58՝ յունահայոց թեմը անցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան ենթակայութեան, եւ այդպէս կը մնայ մինչ օրս:

Բնականաբար, այդ փոփոխութիւնը որ խրախուսուեցաւ ՀՅԴի կողմէ, ստեղծեց լարուած իրավիճակ մը ընդդիմադիր թէ ոչ-դաշնակցական գաղափարները կիսող հայօճախին անդամներուն միջեւ[40]:

ԹԵՍԱՂՈՆԻԿԷԻ ՀԱՅՕՃԱԽԻՆ ՀՈԼՈՎՈՅԹԸ 1990ԷՆ ՄԻՆՉԵՒ ՕՐՍ

Այս ժամանակաշրջանին համար չկայ համապատասխան գրականութիւն: Այսուհետեւ կը հիմնուինք մանաւանդ մեր անձնական դաշտային թէ այլ տուեալներուն վրայ:

1991ը հայ ժողովուրդի պատմութեան համար եղաւ անկիւնադարձային: Հայաստանի Գ. Հանրապետութեան հռչակումը եւ արցախեան ինքնորոշման իրաւունքի պայքարը ստեղծեցին ծանր տնտեսական եւ հասարակական իրավիճակ մը նորանկախ Հայաստանի Հանրապետութեան համար: Մեծաթիւ հայեր արտագաղթեցին սեփական հայրենիքէն, արտասահմանի մէջ որոնելով աւելի բարեկեցիկ ապագայ մը: Ասոնցմէ Յունաստան եկածները «*մեծամասնութեամբ եկած են անշուշտ ...աշխատանքի հեռանկարով, որոշ ժամանակի մը համար որպէսզի աշխատին ու յետոյ վերադառնան իրենց հայրենիքը: Սակայն այդ վերադարձը շարունակ կը յետաձգուի քանի որ կը յետաձգուի Հայաստանի տնտեսական բարելաւումը*»[41]:

---

[38] Χασιώτης, էջ 25:

[39] Նոյն, էջ 132:

[40] Նոյն, էջ 41-42: Դաշնակցութիւնը եւ իր յարակից միութիւններու գործունէութիւնը սկսած էր գաղթականութեան ժամանակներէն:

[41] Նոյն, էջ 21:

Սալոնիկի հայօճախը եռաշերտ էր. առաջին շերտը 1880ականներու փոքրաթիւ հայերու խումբն է, որ եկաւ քաղաք որպէս Օսմանեան Կայսրութեան պաշտօնեայ կամ անհատ ձեռներէց: Ասոնք հանդիսացան հայօճախի հիմնադիր զանգուածը: Երկրորդ շերտը 1915-23ի տարագրեալ հայերու խոշոր զանգուածն է, որ ստեղծեց հայօճախին սփիւռքեան կառոյցները եւ եղաւ հայօճախի գլխաւոր մարդուժը: Երրորդ շերտը 1990էն ետք ՀՀէն եւ Վրաստանէն եկած հայերն են, որոնք հասան նօսրաթիւ, սակայն կայուն հայօճախի մը քով, եւ հանդէս եկան իբրեւ նոր ուժ: Այս շերտաւորումը պատմական առումով ճիշտ է, բայց եթէ խնդիրին մօտենանք աշխարհագրականօրէն, ապա պիտի հասկնանք որ եռաշերտաւորումը կը վերածուի երկշերտաւորման, քանի որ առաջին երկուքը իվերջոյ Օսմանեան Կայսրութեան հայեր էին, որոնք իբրեւ հայրենիք ունէին Կ.Պոլիսը, Փոքր Ասիան եւ Կիլիկիան: Առաւել եւս ունէին ընդհանուր հասարակ յայտարարներ: Անոնք կը խօսէին թրքերէն/արեւմտահայերէն/արեւմտահայ բարբառներ, ունէին նոյնատիպ սովորութիւններ ու կենցաղ: Ի տարբերութիւն ասոնց, 1990ին Սալոնիկ հասած հայերը ունէին որոշակի տարբերութիւններ, որոնք կը դժուարացնեն ներհայկական միաձուլման ընթացքը: Փակագիծով մը անդրադառնանք «համայնք» բառի հասկացութեան:

1880ականներէն 1990 «գաղութ» հասկացութիւնը եւ իր սահմանները բազմիցս փոխուեցան եւ միշտ չէ, որ գաղութի թիւը եւ ընդհանուր հայութեան թիւը նոյնացած են: Կարելի է ըսել որ միայն 1880-1922 եւ 1947-90ին է, որ հայութեան թիւը կը համընկնի (շատ քիչ բացառութիւններով) հայօճախին քանակին, երբ հայերը կ'ապրին Սալոնիկ եւ եկեղեցւոյ կառուցումէն առաջ եւ ետք հանդէս կու գան իբրեւ հայ առաքելական եկեղեցւոյ հաւատացեալներ: Իսկ 1923-47ի շրջանը պէտք է նկատել գաղթօճախ, երբ չկայ համարակալուած անդամներու ցանկ եւ անդամը կը բնակի Սալոնիկի մօտակայ գաւառներու գաղթակայաններուն մէջ: Իսկ այսօր, անհրաժեշտ է աւելի քան երբեւէ հասկնալ եւ աւելի ճշգրիտ ըմբռնել հայ համայնքի սահմանումը գործնական ու օրէնսդրական դիտանկիւնէ: Եթէ 2014ի թեմական ընտրութիւններուն Սալոնիկի շրջանի ցանկին մէջ արձանագրուած էր 756 հոգի (ներառեալ բաւական թիւով նոր եկող հայեր) կրնանք ենթադրել, որ ազգային կեանքին հետ (թէկուզ սահմանափակ կապ ունեցողներու եւ անչափահասներուն թիւը հաշուելով) կը հասնի 1000-1100ի: Իսկ, եթէ հաշուի առնենք այն փաստը, թէ 1990էն սկսեալ մօտ 15 հազար հայեր ներգաղթեցին Յունաստան (յատկապէս Հիւսիսային Յունաստան) ՀՀէն եւ Վրաստանէն՝ կու գանք այն եզրակացութեան, թէ համայնքային կեանքի հետ կապ ունեցողները պարզապէս տեղւոյս հայութեան փոքրամասնութիւն մը կը կազմեն:

Հայոց եկեղեցին չունի նոր ներգաղթեալ ընտանիքներու ցանկ, այլ միայն թեմական ընտրացանկ մը: Ամուսնութիւններու եւ մկրտութիւններու ցանկերը յստակ պատկեր մը չեն կրնար մատուցել, քանի որ շատ հայեր

(նախկին ԽՍՀՄէն) ամուսնացած են կամ իրենց զաւակները մկրտած յունական եկեղեցիներու մէջ: Բայց եւ այնպէս այդ ցանկերը ուսումնասիրելով կարելի է տեսնել հայօճախին քանակային ձեւափոխումը տասնամեակէ տասնամեակ:

Նորահաստատ հայութեան թուաքանակի պարզաբանման ի խնդիր՝ դիմեցինք Աթենքի ՀՀ դեսպանութեան: Նախկին հիւպատոս Մարիամ Յարութիւնեանի (ՀՀ Աթենքի դեսպանութեան երրորդ քարտուղար հիւպատոս 2013-16) տուեալներուն համաձայն մեծ թիւով հայեր, որոնք չեն ստացած յունական քաղաքացիութիւն, ունին թղթաբանական (անձնագիրերու վերավաւերացում) հարցերու դասաւորման խնդիր դեսպանութեան ներկայացուցիչին հետ: Առ այդ, կը ներկայացնենք մեր դիմումին ստացած պատասխանը.

> Յունաստանում բնակուող հայերի հիմնականում վերջին 20-25 տարիներին Հայաստանից արտագաղթածների թուաքանակը վերջին տարիներին զգալիօրէն նուազել է կապուած Յունաստանի տնտեսական ճգնաժամի հետ: Յունաստանում, ինչպէս նաեւ այլ երկրներում, հայերի կոնկրէտ թիւ նշելը շատ դժուար է: Դա կապուած է տարբեր գործօնների հետ: Մարդիկ կան կտրուած համայնքից, հետեւաբար չեն մասնակցում միջոցառումներին, ոմանք ունեն Յունաստանի քաղաքացիութիւն, հետեւաբար դեսպանութիւն չեն այցելում հիւպատոսական ծառայութիւնների համար, կան մարդիկ, որոնք բնակութեան եւ աշխատելու իրաւունք չունեն եւ որոշ դէպքերում վախենում են դեսպանութիւն այցելելուց: Բազմաթիւ չափահաս տղաներ բանակի խնդիր ունեն եւ նոյնպէս վախենում են դեսպանութիւն այցելելուց: Չնայած այն ամէնի՝ կարելի է ասել, որ Հիւսիսային Յունաստանում հայերի թիւը տատանւում է 3000-5000ի սահմաններուն:

Հաւանաբար այս թիւը չի վերաբերիր միայն Սալոնիկի նահանգին, այլ կը ներառէ նաեւ մօտակայ գաւառներն ու Թրակիոյ որոշ շրջաններ: Պէտք է ընդգծել թէ բազմաթիւ հայեր տարիներէ իվեր ստացած ըլլալով յունական քաղաքացիութիւն՝ որեւէ կապ չունին դեսպանութեան հետ: Կ'աւելցնենք նաեւ, որ բազմաթիւ իգական սեռի հայ քաղաքացիներ ամուսնացած ըլլալով յոյներու հետ, ստացած են յոյն քաղաքացիի կարգավիճակ: Այս հաշուարկին մէջ եթէ գումարենք հայաստանածին յունական ծագում ունեցող նախկին քաղաքացիները (Ալավերտիի, Հանքաւանի, Ախթալայի եւ Մեհմանա-Արցախի եւ Երեւանի շրջաններէն), որոնք 1990-94էն իվեր ստացան յունական քաղաքացիութիւն, թիւը շատ աւելի կը բարձրանայ, եւ - կ'ենթադրենք - հայութեան քանակը միայն Սալոնիկի ու մօտակայ շրջաններուն մէջ 5-6 հազարը կ'անցնի:

Հայօճախի թիւին խնդրով մեր դիմումին՝ հայօճախի իրաւաբան եւ թեմական ընտրութիւններու պատասխանատու Սեպուհ Սահաճեան տուաւ հետեւեալ պատկերը.- «2001ի ընտրութիւններուն արձանագրուած է 582 անձ, որոնցմէ միայն 311ը մասնակցած է ընտրութիւններուն: 2007ի ընտրացանկը կը հաշուէր 704 հոգի՝ 352 մասնակիցներով: 2015ի վերջին ընտրութիւններուն ընտրացանկի 931 հոգիէն միայն 263ը քուէարկած է: Այս թի-

ւերը կը վերաբերին չափահասներուն, ներառեալ փոքր թիւով ՀՀ քաղաքացիներուն, որոնք անդամագրուեցան հայօճախի պաշտօնական ցանկերուն»[42]:

Ամփոփելով, կրնանք ըսել, թէ Սալոնիկի եւ ընդհանրապէս Հիւսիսային Յունաստանի մէջ ունինք մեծաթիւ լայնօրէն ցրուած հայեր եւ շատ սակաւաթիւ հայօճախներ (Սալոնիկ, Քաւալա, Քսանթի, Քոմոթինի, Ալեքսանդրուպոլիս, Տիտիմոթիխօ, Օրեսթիատա): Այս համեմատականով կրնանք ենթադրել, որ Յունաստանի - եւ հաւանաբար արեւմտեան Սփիւռքի - տարածքին տեղի կ'ունենայ բաւական արագ ծուլման եւ օտարացման գործընթաց մը:



ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ՍԱԼՈՆԻԿԻ ՀԱՅՕՃԱԽԻՆ

Կրօնական կառոյց

Սալոնիկի հայկական եկեղեցին կը պատկանի Յունաստանի թեմին: Թեմս կը գործէ 1866ի ազգային սահմանադրութեան օրէնքներուն համաձայն (համապատասխան բարեփոխումներով, որոնք տեղի ունեցած են ժամանակի ընթացքին): Թեմական Խորհուրդը կ'ընտրուի հնգամեայ շրջանի մը համար (երբեմն կազմակերպական պատճառներով կ'երկարաձգուի ան): Թեմականները իրենց կարգին կ'ընտրեն ազգային իշխանութիւնը, որ կը բաղկանայ արդէն ընտրուած թեմականներէն: Ազգային իշխանութիւնը կը վաւերացնէ Յունաստանի հայկական եկեղեցիներու թաղային մարմինները՝ առաջարկուած անդամներէ բաղկացած: Ան կը ճշտէ նաեւ առաջնորդ սրբազանի կեցութիւնը: Բոլոր թաղային մարմինները, որոնք կը ներկայացնեն տուեալ շրջանի եկեղեցին եւ հայօճախը, պարտաւոր են իրենց տնտեսական պարտաւորութիւնները լիուլի կատարել ազգային իշխանութեան դիմաց: Թեմականներու թիւը կը կազմուի շրջաններու անդամագրուած թիւին հիմամբ: Այսպէս՝ Աթենքի շրջանը ունի 11 թեմական անդամ, որոնք կը ներկայացնեն Աթենք (կեդրոն), Նէոս-Քոսմոս, Փիրէաս-Քոքինիա եւ Քարէաս-Քեսարիանի հայօճախի եկեղեցիները: Սալոնիկը ունի 7 թեմականներ: Ըստ վերջին թեմական ընտրութեան հաշուարկի 6րդ թեմական ներկայացուցիչը կ'ընտրուի Սերէս քաղաքի նորակազմ հայօճախին կողմէ առաջադրուած ընդհանուր Սալոնիկի քուէաթերթիկով: Արդա-

[42] Անձնական խնդրանքով կատարուած հաղորդագրութիւն, գրաւոր ստացուած 2016ի ամառը:

րեւ, 2015էն իվեր Սալոնիկ եւ Սերէս քաղաքները կը կազմեն ընդհանուր ընտրական շրջան: Թրակիոյ մնացած քաղաքները կ'ընտրեն թեմական 3 ներկայացուցիչ:

Թեմական ընտրութիւններուն գլխաւոր դերակատարը Յունաստանի Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (ՀՅԴ) միաւորն է, որ իր կարգին կ'ապահովէ կուսակցութեան պատկանող կամ համակիր թեմականներու հաւասարակշռութիւնը: Այդ պատճառով Աթենքի Ռամկավար Ազատական Կուսակցութեան միաւորը վերապահ մօտեցում ունի եւ չի մասնակցիր ընտրական գործունէութեան: Թեմական ընտրութիւններուն չեն մասնակցիր նաեւ Աթենքի Փերիստերիի շրջանի Ս. Մարիամ Աստուածածին եկեղեցին եւ իր ծխականները, քանի որ կապուած են Ս. Էջմիածնի մայր աթոռի հետ: Կրետէ կղզիի Իրաքլիոն քաղաքի Ս. Յովհաննէս եկեղեցին նոյնպէս մաս չի կազմեր թեմին, որովհետեւ կը գործէ իբրեւ անկախ շրջան՝ կապուած Պոլսոյ պատրիարքութեան[43]:

Առ այդ, Յունաստանի հայ առաքելական թեմը պաշտօնապէս կը գոյացնէ հետեւեալ հայկական եկեղեցական եւ համայնքային շրջանները.-

1. Ս. Գրիգոր Լուսաւորիչ առաջնորդարանիստ եկեղեցի, Աթենք՝ կեդրոն:
2. Ս. Յակոբ եկեղեցի, Քոքինիա-Փիրէաս (Աթենքի շրջան):
3. Ս. Կարապետ եկեղեցի, Նէոս-Քոսմոս (Աթենքի շրջան):
4. Առանց եկեղեցական կառոյցի Քարէաս-Քեսարիանի:
5. Ս. Մարիամ Աստուածածին եկեղեցի, Սալոնիկ:
6. Ս. Խաչ եկեղեցի, Քաւալա:
7. Ս. Մարիամ Աստուածածին եկեղեցի, Քսանթի (Արեւմտեան Թրակիոյ շրջան):
8. Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի, Քոմոթինի (Կեդրոնական Թրակիա կամ Ռոտոփիի շրջան):
9. Ս. Կարապետ եկեղեցի, Ալեքսանդրուպոլիս (Արեւելեան Թրակիոյ շրջան):
10. Ս. Գէորգ եկեղեցի, Տիտիմոթիխօ (Արեւելեան Թրակիա կամ Էւրոսի շրջան)[44]:

Այս բոլոր շրջանները ունին իրենց թաղային մարմինները, որոնք կը զբաղին եկեղեցական եւ ընդհանրապէս համայնքներու խնդիրներով: Անոնք կը համադրեն միութենական աշխատանքները եւ կը մատակարարեն այն եկամուտները, զորս կը ստանան եկեղեցապատկան կալուածներէն:

---

[43] Armenians in Crete՝ http://www.armenianchurch.gr/ (30.11.2016): Իդէպ, ընդհանրապէս Կրետէ կղզիի յունադաւան եկեղեցիներ եւս չեն պատկանիր Յունաստանի արքեպիսկոպոսութեան, այլ կը գործեն որպէս մեկուսի շրջան, կապուած Պոլսոյ տիեզերական պատրիարքութեան:

[44] Արեւելեան Թրակիա ըսելով կը հասկնանք յունապատկան Թրակիան եւ ոչ արեւելեան Թրակիա հասկացութիւնը ըստ Լոզանի Պայմանագրին, որ կը պատկանի Թուրքիոյ:

Թաղային մարմինները ունին նաեւ համայնքի ներկայացուցիչի դեր, այդ հանգամանքով ալ հանդիպումներ կ'ունենան քաղաքապետի հետ կամ ուրիշ քաղաքական պատկան մարմիններու հետ եւն.:

Սալոնիկի թաղային խորհուրդը ներկայիս կը բաղկանայ ինը անդամներէ, որոնցմէ հինգը ՀՅԴ տեղւոյն կոմիտէութեան անդամներ են: Իսկ մնացած անդամները կա՛մ համակիր են, կա՛մ՝ չէզոք: Թաղականութիւնը կը ներկայանայ Սալոնիկի հասարակութեան եւ իշխանութիւններուն առջեւ իբրեւ համայն հայօճախի ներկայացուցիչ:

Թաղականութեան ժողովներուն կը մասնակցի նաեւ շրջանի հոգեւոր հովիւը իբրեւ խորհրդական՝ առանց քուէի իրաւունքի: Թաղային վարչութիւնները - հակառակ որ ներքին կանոնագրութեամբ աշխարհականներէ կազմուած եկեղեցական մարմիններ են - ունին շատ աւելի ընդլայնուած գործունէութիւն եւ պարտականութիւններ (տե՛ս՝ ստորեւ):

Աթենքի մէջ գոյութիւն ունին հայ կաթողիկէ եւ հայ աւետարանական եկեղեցիները, որոնք անմիջական կապ ունին ընդհանուր հայօճախին եւ ազգային կեանքին հետ, բայց մաս չեն կազմեր թեմական կառոյցին: Այդ երկու յարանուանութիւնները ունին իրենց հոգաբարձուները, ինչպէս նաեւ իրենց կրօնական դասը:

Հայերը Յունաստանի մէջ, օրէնքի սահմանումով, ճանչցուած են իբրեւ կրօնական համայնք: Օրէնսդրական եզրերը սահմանուած են Յունաստանի կրթութեան եւ կրօնքներու նախարարութեան կողմէ: Ըստ յօդուած 01ի, կրօնական համայնք կը կազմուի այն համապատասխան անձերէ, որոնք ունին տուեալ ծանօթ կրօնքի ընկալում եւ մնայուն կերպով հաստատուած են որոշ շրջանի մը մէջ: Անոնց գլխաւոր նպատակը կ'ըլլայ կրօնական բոլոր ծէսերու եւ պարտաւորութիւններու ճշգրիտ կատարումը:

Ըստ յօդուած 017ի, իւրաքանչիւր համոզում եւ դաւանանք որ իր ծիսական կատարումներուն եւ իր հանրային դրսեւորման համար կը գործէ պետական յատուկ արտօնութեամբ՝ կը ճանչցուի իբրեւ ծանօթ կրօնք: Իր նստավայրի (եկեղեցի, «Նաոս» տաճար) կամ հաւաքատեղիի գործարկման համար պէտք է ունենայ համապատասխան արտօնագիր:

Յօդուած 013ով հետեւեալ եկեղեցիները եւ կրօնական նստավայրերը կը ճանչցուին իբրեւ օրէնքի սահմանէն ներս գործող հաստատութիւններ, կրօնական միաւորներ, կամ կրօնական համայնքներ.-

1. Անկլիքան Եկեղեցին.
2. Եթովպիական Օրթոտոքս Եկեղեցին.
3. Յունական Աւետարանական Եկեղեցին (իր հաւաքատեղերով եւ անշարժ գոյքերով).
4. Ղպտի Օրթոտոքս Եգիպտական Եկեղեցին (իր տաճարներով եւ անշարժ գոյքով).

5. Օրթոտոքս հայերու մեթրոպոլիս (իր համապատասխան եկեղեցիներով եւ անշարժ գոյքով)[45]:

Յունաստանի սահմանադրութեամբ հաստատուած վերոյիշեալ յօդուածներու համաձայն, յայտնի է որ հայկական համայնքը ունի կրօնական եւ ո՛չ ազգային համայնքի ճանաչում եւ կարգավիճակ: Յունաստանը ունի մէկ ճանչցուած փոքրամասնութիւն, որ Հիւսիսային Յունաստանի Ռոտոփի շրջանի իսլամական զանգուածն է: Ան կազմուած է մեծամասնութեամբ Փոմաք ցեղէն: Շուրջ 98 հազար հաշուող այս փոքրամասնութեան գոյութիւնը սահմանուած է Լոզանի Պայմանագիրով եւ վաւերացուած յունական կառավարութեան կողմէ 1954ին, իբրեւ իսլամական փոքրամասնութիւն[46]:

Իբրեւ ազգային եւ կրօնական համայնք գոյութիւն ունի նաեւ Յունաստանի Կեդրոնական Իսրայէլական Խորհուրդը, որու հովանիին տակ կը գործեն Աթենքի եւ Սալոնիկի իսրայէլական համայնքները[47]:

Հակառակ անոր որ հայօճախը ունի կրօնական քան թէ ազգային կարգավիճակի օրէնքի սահմանում, սակայն իր կեցուածքն ու իր գործունէութիւնը ունին մշակութային եւ քաղաքական-ազգային դրսեւորում: Յունահայութեան գործելադաշտը շատ աւելի լայն ու բազմատեսակ է եւ չի կրեր նեղ կրօնական դաւանանքի սահմանափակ բնոյթ:

Արտաքին կապեր

Անցեալին, հայօճախին յարաբերութիւնները Յունաստանի Հանրապետութեան հետ կախուած էին աւելի յաճախ քաղաքական գործօններէ, որոնք ունէին արտաքին, քան՝ ներքին բնոյթ: Ա. աշխարհամարտի նախասեմէն իվեր, յոյն կառավարութիւնները (նամանաւանդ Էլեֆթերիոս Վենի-

[45] Άρθρο 13 – Αναγνώριση νομικής προσωπικότητας υφιστάμενων Εκκλησιών και νομικών προσώπων τους. Տես. http://www.opengov.gr/ypepth/?p=1862 (10.09.2016): Օրթոտոքս բառը ունի պայմանական հասկացութիւն եւ ոչ-կրօնական կամ դաւանանքային ընկալում հայկական եկեղեցւոյ պարագային:

[46] Օրէնք 3065/1954 ΦΕΚ Α' 239,9, 10, 1954 (“Μουσουλμανική μειονότητα Θράκης” (Թրակիոյ մուսուլմանական փոքրամասնութիւն)՝ http://www.hri.org/MFA/foreign/musmingr.htm (10.10.2016):

[47] Օրէնք 1657/1951 ΦΕΚ Α' 20 (Η νομική προσωπικότητα των ισραηλιτικών κοινοτήτων και του Κεντρικού Ισραηλιτικού Συμβουλίου Ελλάδος (Κ. Ι. Σ. Ε.), τα ισραηλιτικά σχολεία και η φορολογία τους (Իսրայէլական համայնքներու եւ Յունաստանի իսրայէլական կեդրոնական խորհուրդի իրաւական կարգավիճակը, իսրայէլական դպրոցները եւ իրենց հարկային պարտականութիւնները)՝ https://www.kis.gr/index.php?option=com_content&view=article&id=1147:2015-01-22-08-19-32&catid= 54:2009-05-27-11-10-17&Itemid=30 (12.10.2016):

զելոսի օրօք) քաղաքական դրդապատճառներով, ունէին շատ բարեացակամ վերաբերմունք՝ յունահայ բնակչութեան հանդէպ[48]:

Մեր օրերուն, նոյնպէս, հայօճախը կը վայելէ այդ բարեացակամ վերաբերմունքը՝ Յունաստանի պետութեան եւ տեղական իշխանութիւններուն կողմէ: Թաղային մարմինը եւ գրեթէ բոլոր միութիւնները ունին գործնական կապ եւ գործակցութիւն՝ նահանգապետարաններու ու քաղաքապետարաններու հետ: Փոխյարաբերութիւններու ուղեգիծը կը մշակուի նախապէս Հայ Դատի Յանձնախումբին կողմէ, որ պատասխանատու դեր ունի արտաքին քաղաքական կապերու մէջ:

1996ին Յունաստանի Հանրապետութիւնը ճանչցաւ Հայոց Ցեղասպանութիւնը: Այդ ճանաչման բանաձեւին բովանդակութեան մէջ յատուկ յօդուածով մը, յունական պետութիւնը Ապրիլ 24ը հռչակեց «Մեծ Եղեռնի յիշատակի օր»: Հետեւաբար, գլխաւոր ձեռնարկներու համար պետական տեղական մարմինները պարտաւորուած եղան կազմակերպելու եւ մասնակից դառնալու այդ ձեռնարկներուն: Առ այդ, Աթենքի, Սալոնիկի եւ Քսանթիի նահանգապետութիւնները պարտաւոր կ'ըլլան տնտեսապէս եւ բարոյապէս գործակցելու տեղական համայնքներու մարմիններու հետ համապատասխան ձեռնարկներու կազմակերպման համար: Բացի ատկէ, պետութեան ներկայացուցիչները պարտին ֆիզիքական ներկայութեամբ պատուել օրուան խորհուրդը[49]:

Գործակցութեան եզրերը չեն սահմանափակուիր միայն Ցեղասպանութեան առնչուող ձեռնարկներով. թաղականութիւնը եւ միութիւնները կապ ունենալով պատկան պետական մարմիններուն հետ կազմակերպած են ու կը շարունակեն կազմակերպել բազմաթիւ մշակութային, բարեսիրական, կրթական եւ այլ ձեռնարկներ՝ ստանալով երբեմն նիւթական օժանդակութիւն պետութեան կողմէ[50]:

Այսօր, քաղաքական յարաբերութիւնները կը մնան ընդհանուր լաւ մթնոլորտի մէջ[51]: Այդ դրական մթնոլորտը կար եւ կը մնայ մինչ օրս, թէեւ ոչ-միշտ լիարժէք կ'օգտագործուի ան:

---

[48] Χασιώτης, էջ 117:

[49] Այդ ներկայութիւնը կար նաեւ վերոյիշեալ օրէնքի հաստատումէն առաջ եւս ի յարգանք հայոց զոհերուն:

[50] Վերջին տարիներուն Յունաստանի մէջ տիրող տնտեսական ճգնաժամին հետեւանքով խանգարուեցաւ այս նիւթական աջակցութիւններու դրութիւնը:

[51] Որպէս օրինակ, թրքական հիւպատոսարանին դիմաց ՀՅԴ Երիտասարդականի նախաձեռնած 24 Ապրիլ 2007ի բողոքի ցոյցին հրկիզուեցաւ թրքական դրօշակի նմուշ մը: Այդ արարքը 1980ականներէն արդէն տեղի կ'ունենար Աթենքի եւ յետոյ՝ Սալոնիկի Մեծ Եղեռնի պահանջատիրական ցոյցերու ընթացքին: Սակայն, այդ տարին, թրքական դեսպանութեան կողմէ Յունաստանի արտաքին գործոց նախարարութեան բողոք ներկայացուեցաւ, որու հետեւանքով յունական ոստիկանութիւնը այդ արարքը գործող անձերը յանձնեց արդարադատութեան դատա-

Հանրային իրադարձութիւններ եւ յարաբերութիւններ

Վերջին տարիներուն, Աթենք եւ Սալոնիկ այցելող թրքական պատուիրակութիւններու դիմաց ցոյցերու ընթացքին միջադէպեր կը պատահին հայ ցուցարարներու եւ յոյն ոստիկաններու միջեւ: Բարձրացուած աղմուկը համապատասխան անդրադարձ կ'ունենայ յունական զանգուածային լրատուամիջոցներուն կողմէ[52]:

2010-11ին, զոր օրինակ, Սալոնիկի նորընտիր քաղաքապետ Իանիս Պութարիսը, որ ընդհանրապէս դրական տրամադրութիւն ունի հայօճախին հանդէպ, առաջարկեց որ քաղաքիս կեդրոնական փողոցներէն մէկը անուանուի «Մուսթաֆա Քեմալ Աթաթուրք»ի փողոց: Այդ առաջարկին դէմ էին անշուշտ քաղաքիս հայօճախն ու քաղաքի պոնտոսցիներու, թրակիացիներու եւ փոքրասիացիներու միութիւնները: Թեկնածու քաղաքապետի եւ թաղականութեան ու ՀՅԴ Հայ Դատի Յանձնախումբին հետ հանդիպումին հայերու դժգոհութիւնը արտայայտուեցաւ:

Այդ որոշման դէմ էր նաեւ յոյն հասարակութեան մեծամասնութիւնը եւ հետեւաբար այդ նախագիծը չգործադրուեցաւ: 2013ի ամռան, արդէն իսկ ընտրուած քաղաքապետ Պութարիսը թաղային մարմնի ատենապետ Վարդգէս Գունտաքճեանին հետ այցելելեցին Գիւմրի, ուր տեղի ունեցաւ քաղաքին եղբայրացումը Սալոնիկի հետ[53]: Եղբայրացման որոշումը առնուած էր 2000ին, բայց զանազան ձգձգումներու պատճառով իրագործուեցաւ 2013ին: Այս եղբայրացումը մինչ օրս ունի միայն ձեւական եւ բարոյական բնոյթ ու ցարդ չեն մշակուած աւելի գործնական նախաձեռնութիւններ:

2015ին Եղեռնի 100ամեակին առթիւ Սալոնիկի քաղաքապետարանը որոշում կայացուց, որ Սալոնիկի մէջ կառուցուի Ցեղասպանութեան յուշարձան մը: Քաղաքապետարանի նիւթական վիճակը շատ ծանր ըլլալուն, այս ծրագիրի նիւթական պարտաւորութիւնը իննկաւ հայօճախին վրայ, եւ մինչ օրս չէ իրագործուած: Ընդհանուր առմամբ, թաղային մարմնի եւ Սալոնիկի քաղաքապետարանի ու նահանգապետարանի միջեւ գոյութիւն ունի փոխհասկացողութեան տրամադրութիւն եւ գործակցութեան բարի կամեցողութիւն:

Հայկական եւ յունական եկեղեցիներու միջեւ եղած յարաբերութեանց մասին կրնանք ըսել հետեւեալը. նախ՝ դժուար է տարանջատել Սալոնիկի,

---

րան, քրէական յանցանքի մեղադրանքով Յովիկ Գասապեանը ամբաստանուեցաւ, 15-10-2007ին դատավարութիւն ընթացաւ, եւ ան անպարտ հռչակուեցաւ:

[52] Πορείες μνήμης για τη Γενοκτονία των Αρμενίων σε Αθήνα και Θεσσαλονίκη. Έκαψαν συμβολικά την τουρκική σημαία՝ http://www.huffingtonpost.gr/2016/04/24/koinonia-armenia-genoktonia_n_9767788.html (23.10.2016):

[53] Armenian minister of diaspora hosts Thessaloniki mayor՝ http://www.tert.am/en/news/2013/07/16/hranushhakobyan-salonik/820128 (23.10.2016):

յունահայ թեմի եւ յունական եկեղեցիի յարաբերութիւնները ընդհանուր Հայ Առաքելական Եկեղեցւոյ եւ Յոյն Ուղղափառ Եկեղեցւոյ փոխյարաբերութիւններէն: Այսօր, Սալոնիկի հայկական եկեղեցւոյ եւ քաղաքիս յունաց մեթրոպոլիսի (առաջնորդարան) ներկայացուցիչներու միջեւ գոյութիւն ունին լաւ յարաբերութիւններ, որոնք բաւական դիւանագիտական են:

1990ականներուն, Սալոնիկի առաջնորդ Փանտելէիմոնաս Բ.ի ժամանակ, յառաջացաւ անտարբերութիւն եւ վանողական վերաբերմունք մը հայկական եկեղեցւոյ հանդէպ, առանց հիմնաւոր պատճառի: 2004էն իվեր Սալոնիկի նոր առաջնորդ Անթիմոսը ունի աւելի դրական մօտեցում հայկական եկեղեցւոյ նկատմամբ քան իր նախորդը: Մեթրոպոլիսի ներկայացուցիչները կը մասնակցին հայկական եկեղեցւոյ հիմնադրման ամէնամեայ գոհաբանական աղօթքին (Նոյեմբեր 16): Սալոնիկի առաջնորդը եւս, կամ իր կողմէ ուղարկուած կղերական դասի ներկայացուցիչը, կը մասնակցի Հայ Դատի եւ Սալոնիկի նահանգապետարանին կողմէ կազմակերպուած Ապրիլ 24ի ամէնամեայ կեդրոնական ձեռնարկներուն: Հայ եկեղեցւոյ կրօնաւորը եւ թաղային մարմնոյ ատենապետը ամէն տարի կը հրաւիրուին մասնակցելու Ս. Տիմիթրիոսի տօնին: Արամ Ա. կաթողիկոսի Սալոնիկ կատարած հերթական այցելութիւններուն (1996, 2002, 2014) ներկայ գտնուեցան յունական եկեղեցւոյ ներկայացուցիչները՝ առանց մասնաւոր հանդիպումի[54]:

2005ին Հին Ջուղայի հայկական յուշակոթողներու քանդումին առթիւ, Աթենքի Հայ Դատի Յանձնախումբը եւ առաջնորդ Խորէն արք. Տողրամաճեան հանդիպում ունեցան Յունաստանի երջանկայիշատակ Խրիսթոտուլոս արք.ին հետ, որ բողոքագիր յղեց Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին:

2014ին Արամ կաթողիկոս իր երրորդ այցելութեան ժամանակ, Թրակիոյ Քոմոթինի քաղաքին մէջ պատմական հանդիպում ունեցաւ Կոստանդնուպոլսոյ տիեզերական պատրիարք Բարթողիմէոսի հետ[55], ուր քննարկուեցան Թուրքիոյ մէջ գտնուող Սիսի աթոռին պատկանող ազգապատկան կալուածներու հետ կապուած խնդիրները:

Սալոնիկի Արիստոտէլի Համալսարանի աստուածաբանական հիմնարկի ուսանողները ամէն տարի, օտար կրօնքներու դասընթացքներու ծրագիրի շրջագիծին մէջ կը կատարեն այցելութիւն հայկական եկեղեցի, ուր պա-

---

[54] Արամ Առաջինն այցելել է Սալոնիկ եւ հանդիպել տեղի հայութեանը՝ http://armenpress.am/arm/news/777778/aram-arajinn-aycelel-e-salonik-ev-handipel-texi-hayutyany.html (24.10.2016):

[55] “Ο Οικουμενικός Πατριάρχης μαζί με τον Αρμένιο πατριάρχη Αράμ στην Κομοτηνή” (Տիեզերական պատրիարքը հայ պատրիարք Արամին հետ Քոմոթինիի մէջ)՝ http://fanarion.blogspot.am/2014/09/blog-post_83.html (24.10.2016):

տարագ կը մատուցուի, որմէ ետք կը կատարուի քննարկում դաւանաքային եւ ծիսական խնդիրներու շուրջ:

Յոյն կղերի շրջանակներու մէջ գոյութիւն ունին նաեւ աւելի ծայրայեղ կամ նեղ կրօնաբանական մօտեցումներ: Ոմանք հայերը կ'ընկալեն իբրեւ աղանդաւորականներ (հերետիկոս, միաբնակ կամ գրիգորեանական)[56]: Սակայն, այս համոզումները չեն ներկայացներ Յոյն Եկեղեցւոյ պաշտօնական կեցուածքը[57]:

Մինչեւ 2000՝ եւրոպական երկիրներու քաղաքացիներու անձնագիրի տուեալներուն մէջ կը նշուէր կրօնական պատկանելիութիւնը: Այդ շրջանին, Յունաստանի իւրաքանչիւր առնչեալ պետական պաշտօնեայ իր տրամաբանութեամբ կը վերծանէր Հայ Եկեղեցի հասկացութիւնը: Այդպիսով, ի յայտ եկան զաւեշտական եւ անհեթեթ գրութիւններ հայերու անձնագիրերուն մէջ, ինչպէս օրինակ՝ «հայ օրթոտոքս», «հայ եկեղեցի քրիստոնեայ», «յունահայ եկեղեցի քրիստոնեայ»... եւն., բայց երբեք՝ «Հայ Առաքելական Եկեղեցի»: Անձնագիրերուն մէջ կրօնական պատկանելիութեան սխալ արձանագրումը երկար ժամանակ դժգոհութիւն կամ նեղութիւն պատճառած է յունահայերուն: Յունահայերուն մեծամասնութիւնը այսօր ինքզինք «օրթոտոքս» կը դաւանի, նկատի ունենալով բառացի թարգմանութիւնը եզրին, որ կը նշանակէ ուղիղ եւ ոչ թէ ծուռ կամ հաւատքի մէջ շեղած[58]:

Պէտք է ըսել, թէ 1922ի փոքրասիական աղէտէն ետք, Յունաստան գաղթած հայերու մէջ կային նաեւ քաղկեդոնական հայեր, որոնք Յունաստան գալով ժամանակի ընթացքին ձուլուեցան յոյն հասարակութեան մէջ[59]: Այդ հայերը կը կոչուէին նաեւ հայ հոռոմներ[60]:

Պէտք է նշել, որ Յունաստանի հայկական եկեղեցիներու տոմարային եւ ծիսակարգային արարողակարգը կը հետեւի Հայ Առաքելական Եկեղեցւոյ

---

[56] Είναι οι Αρμένιοι Ορθόδοξοι; Οι θέσεις του Μ. Φωτίου. Πρωτ. Θεόδωρος Ζήσης՝ http://anavaseis.blogspot.am/2011/01/blog-post_952.html (25.10.2016):

[57] Սալոնիկի Ս. Աստուածածին եկեղեցւոյ բակի մուտքին կը տեսնենք մարմարեայ յունարէնով ցուցանակ մը, որուն վրայ գրուած է «Օրթոտոքս հայկական եկեղեցի՝ Ս. Աստուածածին» (Ορθόδοξος Αρμενική Εκκλησίας της Παναγίας): 1970ականներուն այդ պիտակը զետեղուեցաւ (սխալ կամ անիմաստ տրամաբանութեամբ) ատենի թաղային մարմնին կողմէ: Օրթոտոքս բառը օգտագործուած է պայմանական մօտեցումով, նկատի ունենալով որ օրթոտոքս կը նշանակէ ուղիղ հաւատք, ուղղափառ եւ ոչ թէ ուղղափառ եկեղեցիի պատկանող:

[58] Ներկայիս ընդունուած համաեւրոպական օրէնքով կրօնքը չ'արձանագրուիր անձնագիրերուն վրայ՝ անհատական իրաւունքներու եւ խտրականութեան դէմ դրսեւորումի պատճառաբանութեամբ:

[59] Οι Χάι-χορώμιδες Οδοιπορικό στην ιστορία των Αρμενίων - Ρωμαίων του Ακν՝ http://www.armenika.gr/istoria/83-istoriki-ereuna/446-oi-xay-xoromides-odoiporiko-sthn-istoria-twn-armeniwn-rwmaiwn-tou-akn (27.10.2016):

[60] Ανεστίδης Σταύρος, "Χάι-Χορούμ, (Αρμενόγλλωσοι Έλληνες)" [Հայ-հոռոմ, (հայալեզու յոյներ)], *Δελτίο Κέντρου Μικρασιατικών Σπουδών*, 1984:5, Աթήնա էջ 37-46:

բոլոր օրէնքներուն եւ աւանդութիւններուն: Միակ տարբերութիւնը այն է, որ Աւագ Շաբաթը եւ Ս. Զատիկը վաղուց կը տօնուի ըստ յունաց տոմարին[61]:

Այդ արարողութեան ժամանակ, Սալոնիկի հայկական եկեղեցւոյ հաւատացեալներու թափօրը շրջագայելով եկեղեցւոյ մօտակայ փողոցները կը հանդիպի յունական Ս. Կոստանդինոսի եկեղեցւոյ ծխականներուն հետ: Երկու եկեղեցիներու կղերներն ու դպրաց դասերը փոխադարձաբար համբուրելով միմեանց Աւետարանները, բացօթեայ աղօթք կը կատարեն երկու լեզուներով:

Հայկական եկեղեցին հայօճախներու ամենակարեւոր ազդակներէն մէկն է, որ կը նպաստէ ոչ միայն կրօնական պարտականութիւններուն, այլեւ ընդհանուր ազգային կեանքին եւ հայութեան համախմբման: Յոյն եւ հայ եկեղեցիներու միջեւ պարզապէս լաւ յարաբերութիւնները կրնան աւելի սերտանալ՝ սատարելով երկու ժողովուրդներու եւ պետութիւններու արդի մարտահրաւէրներու յաջող դիմագրաւումին:

Հայօճախը կապեր ունի նաեւ քաղաքիս այլ ազգային միաւորներու հետ: Այսօր Սալոնիկի մէջ գոյութիւն ունի փոքրաթիւ հրէական համայնք մը: Մինչեւ Բ. համաշխարհային պատերազմ մօտ 60,000 հոգիէ բաղկացած հրէական մեծ համայնք մը կար: Այսօր, հայկական ու իսրայէլեան համայնքներուն միջեւ կը տիրեն դիւանագիտական յարաբերութիւններ: Կան փոխադարձ կապեր, որոնք առնչուած են զանազան ձեռնարկներու եւ պարզ քաղաքավարութիւն են, չունին էական գործակցութեան շունչ:

Սալոնիկի մէջ կան նաեւ բազմաթիւ յունական հայրենակցական կազմակերպութիւններ, որոնք հիմնուած են 1922էն ետք Փոքր Ասիայէն, Արեւելեան Թրակիայէն եւ մանաւանդ Պոնտոսէն տեղահանուած զանգուածներու կողմէ: Հայօճախը եւ Հայ Դատի Յանձնախումբը ունին լայն գործակցութիւն անոնց հետ: Յատկապէս պոնտական գլխաւոր կազմակերպութիւններուն հետ հաստատուած է շատ բարեկամական, բայց միայն աւանդական եւ զգացական բնոյթ կրող գործակցութիւն[62]: Յունաստանի Հայ Դատի

---

[61] Այս որոշումը առնուած է թեմական ժողովէն եւ կաթողիկոսութեան համաձայնութեամբ, նպատակ ունենալով պարզ գործնականութիւն ապահովել (ոչ-աշխատանքային օրեր, դպրոցներու եւ աշակերտներու հանգստեան օրեր եւ ընդհանուր տօնական միջավայր): Տեղական սովորութիւններու հիման վրայ տեղական հայկական եկեղեցին ընդունած է Աւագ Ուրբաթը եւ համայն համայնքի մասնակցութեամբ Քրիստոսի դագաղի շրջագայութիւնը տուեալ եկեղեցւոյ կից փողոցներուն մէջ: Օրթոտոքս եկեղեցւոյ պատկանող այս սովորութիւնը իբրեւ աւանդոյթ որդեգրած են Յունաստանի բոլոր հայկական եկեղեցիները:

[62] Այսուամէնայնիւ, դրական կրնան նկատուիլ Եւրոպայի մէջ Պոնտոսի յոյներու ցեղասպանութեան միջազգայնացման քայլերը: Այս գործընթացը սկսաւ Սալոնիկի մէջ եւ Եւրոպայի Հայ Դատի Յանձնախումբի օժանդակութեամբ (Պրիւքսէլ) զգեցաւ աւելի քաղաքականացած նախաձեռնութիւններ (Եւրոպայի Պոնտոսցիներու Համագումար, փոքրիկ լոպիստական շարժում... եւն.): Այս գործընթացը քիչ մը

Յանձնախումբի, Հայ Դատի կեդրոնական գրասենեակի (Երեւան) եւ Աթենքի ՀՀ դեսպանութեան ջանքերով 2015ին ՀՀն ճանչցաւ Պոնտոսի յոյներու ցեղասպանութիւնը[63]:

Կապեր՝ սփիւռքեան այլ հայօճախներու հետ

Սալոնիկի եւ ընդհանրապէս Յունաստանի հայօճախը չունի մասնաւոր կապեր Սփիւռքի այլ հայօճախներու հետ: Գոյութիւն ունի անշուշտ, հայօճախներուն մէջ գործող համահայկական ծանօթ կազմակերպութիւններու (ՀՕՄ, ՀՄԸՄ, Համազգային, Հայ Դատ, Հայաստան Հիմնադրամ) փոխգործակցութիւն՝ հիմնուած այդ կազմակերպութիւններուն ներքին կանոնագրութեան վրայ: Յատկապէս Մակեդոնիոյ եւ Թրակիոյ Հայ Գթութեան Խաչի (ՀՕՄի միաւոր) մանկական ամառանոցին կը մասնակցին երեխաներ այլ երկիրներէ (Լիբանան, Սուրիա, Ֆրանսա, Կիպրոս եւն.): Եւրոպայի Հայ Դատի Յանձնախումբին կազմակերպած Պրիւքսէլի համաեւրոպական ժողովին կը մասնակցին ներկայացուցիչներ Յունաստանի համայնքներէն:

Միակ հայօճախը, որուն հետ Սալոնիկի եւ Հիւսիսային Յունաստանի որոշ ենթօճախներ յաճախակի շփում ունին՝ Պուլկարիոյ Փլովտիւ (Ֆիլիպէ) քաղաքի հայօճախն է: 1990էն ետք, երկաթեայ վարագոյրի քանդումով, Պուլկարիան եւ ընդհանրապէս բոլոր պալքանեան երկիրները մատնուեցան շատ վատ տնտեսական եւ հասարակական կացութեան: 1991ի առաջին շաբաթը Սալոնիկի հայօճախը կազմակերպեց մարդասիրական օգնութեան առաքելութիւն՝ ուղղուած Փլովտիւի հայութեան: Այդ առիթով հայօճախէն մօտ 50 հոգի այցելեց Փլովտիւ՝ օգնութիւն բաժնելու համար իրենց հայրենակիցներուն: Պատմական այդ հանդիպումը առաջինն էր, որ տեղի կ'ունենար յետխորհրդային եւ Վարշաւիոյ Ուխտի երկիրներէն մէկուն հայօճախին եւ դասական Սփիւռքի Արեւմտեան Եւրոպայի հայօճախի մը միջեւ: Այդուհետեւ, երկու հայօճախները պահպանեցին յաճախակի կապը՝ հիւրախաղերու թէ այլ տօնակատարութիւններու միջոցով, փոխայցելութիւններով թէ այլապէս[64]:

1990ականներուն, Սալոնիկի հայօճախը ստեղծեց նաեւ ջերմ յարաբերութիւններ Սերպիոյ (Պելկրատ) փոքրաթիւ հայութեան հետ, որ համայնքային կազմակերպական իրավիճակ եւ աւանդ չունէր: Սերպահայ պատանիներ (նաեւ խառն ամուսնութեանց ծնունդներ) քանի մը տարի մասնակ-

---

պարագայական կը թուի եւ ոչ այնքան կազմակերպուած, քանի որ Յունաստանի պաշտօնական արտաքին քաղաքականութիւնը զուսպ կը մնայ հարցերու նկատմամբ, որոնք կրնան թուրք-յունական յարաբերութեանց լարուածութիւն ստեղծել:

[63] Armenia Recognizes Assyrian and Greek Genocides՝ http://armenianweekly.com/2015/03/24/armenia-assyrian-greek-genocides/ (28.10.2016):

[64] Ձոր օրինակ, 2015ին Փլովտիւի համայնքի երգչախումբը Սալոնիկի մէջ մասնակցեցաւ Դաշնակցութեան Օրուան հանդիսութեան՝ ստեղծելով խանդավառ մթնոլորտ մը:

ցեցան Հայ Գթութեան Խաչի ամառանոցին: Կատարուեցան նաեւ հանդիպումներ Պելկրատի հայութեան ներկայացուցիչին հետ, սակայն ակնկալուած արդիւնքները չտուին:

Սալոնիկի հայօճախը ունէր բոլոր հնարաւորութիւնները համադրելու եւ կազմակերպական առումով հանդէս գալու իբրեւ Պալքանեան Թերակղզիի հայութեան կեդրոնական հայօճախ: Սակայն, տեղական քաղաքական պայմանները (Եուկոսլաւիոյ քաղաքացիական պատերազմները), հայերու անկազմակերպ վիճակը եւ պալքանահայութեան նօսր թիւը (ի բացառեալ՝ Պուլկարիոյ) չնպաստեցին այդ նպատակի իրագործման[65]:

Յարաբերութիւններ՝ Հայաստանի եւ Արցախ հանրապետութեանց հետ

Հայօճախը Հայաստանի Հանրապետութեան անկախացման առաջին օրերէն պատրաստակամ գտնուեցաւ ՀՀ նորաստեղծ հրամայականներուն: Սալոնիկահայութիւնը, հակառակ իր փոքրաթիւութեան, կազմակերպեց բազմաթիւ մարդասիրական առաքելութիւններ դէպի Հայաստան: 1988ի երկրաշարժի մարտահրաւէրը, 1990ի քաղաքական զարգացումները եւ արցախեան ինքնորոշման իրաւունքի գոյամարտը հայրենիքի նկատմամբ պարտականութեան զգացումները աշխուժացուցին հայօճախը: Այդ ժամանակաշրջանին եւ յատկապէս 1991-96ին Յունաստանի հայութիւնը եւ մասնաւորապէս Սալոնիկի գաղութը, Յունաստանի պետութեան գործակցութեամբ, կազմակերպեցին մարդասիրական թռիչքներ դէպի ՀՀ: Յունաստանի կառավարութիւնները անտարբեր չգտնուեցան յունահայերու դիմումներուն, ընդհակառակը տրամադրեցին Olympic Airwaysի օդանաւեր, որոնց միջոցաւ օգնութիւն փութացուեցաւ ՀՀ[66]: Հայօճախը Հայ Գթութեան Խաչի ՀՕՄի միաւորի եւ տեղացի հայ գործիչներու անձնական ջանքերով յաջողեցաւ նաեւ մարդասիրական օգնութիւն ապահովել յունական սննդամթերքային մեծ ընկերութիւններէն[67]:

---

[65] Նման ծրագիր մը կարիքն ունի Պալքաններու եւ յատկապէս Ալպանիոյ, Սերպիոյ, Մոնթէնեկրոյի եւ այլ երկիրներու հայութեան մասին անհրաժեշտ աւելի լայնատարած հետազօտութիւններու (The Forgotten Diaspora: Bulgarian-Armenians after the end of Communism՝ http://oxbridgepartners.com/hratch/index.php/component/content/article/2-uncategorised/123-the-forgotten-diaspora-bulgarian-armenians-after-the-end-of-communism (30.10.2016):

[66] Յոյն կառավարութիւնը տրամադրեց նաեւ զինուած ուժերու բեռնատարական C-130 օդանաւեր, որոնք սննդամթերք, դեղօրայք, վիրաբուժական իրեր եւ այլ մարդասիրական օգնութիւն փոխադրեցին Երեւան:

[67] Այս մարդասիրական նուիրումին կազմակերպական շարժիչ ուժը եղաւ սալոնիկահայ ազգային գործիչ հրապարակախօս եւ ՀՀ 1991-92ի պատուակալ առաջին լիազօր յունահայ Կարապետ Գալֆայեանը (1933-2013) (Caucasus Chronicles: Nation-building and Diplomacy in Armenia, 1993-1994՝

Իդէպ, Սալոնիկի օդակայանի բեռնատարական պահեստներուն մէջ կը հաւաքուէր ԱՄՆի պետութեան կողմէ ՀՀ ղրկուած օգնութիւնը[68]:

Նոյն ժամանակաշրջանին, Համազգային Կրթական եւ Մշակութային Միութեան նախաձեռնութեամբ եւ քաղաքի պետական իշխանութիւններու գործակցութեան եւ տնտեսական աջակցութեան շնորհիւ ՀՀէն Սալոնիկ հրաւիրուեցան բազմաթիւ գեղարուեստական խումբեր եւ անհատ արուեստագէտներ: Կազմակերպուեցան բարձրորակ ձեռնարկներ Սալոնիկի քաղաքապետարանի հովանաւորութեամբ: Հիւրերը ներկայացուցին հայկական մշակոյթի նմուշներ, որոնք առիթ հանդիսացան ամրապնդելու նաեւ երկու ժողովուրներու աւանդական, բարեկամական կապերը:

Քաղաքի «Տիմիթրիա» փառատօներու սրահին ձեռնարկներուն մասնակից դարձան գեղարուեստական համոյթներ, ինչպէս Յովհաննէս Չեքիճեանի, Լորիս Ճգնաւորեանի, Արամ Ղարապէկեանի ղեկավարութեամբ պետական երգչախումբը, ֆիլհարմոնիք նուագախումբերը, ինչպես նաեւ Կոմիտաս Քառեակը, Քատանս Համոյթը... եւն.:

1997ին «Սալոնիկ 1997 Եւրոպայի Մշակութային Մայրաքաղաք» փառատօնի մշակութային ձեռնարկներու ծիրէն ներս կազմակերպուեցան տարբեր ոլորտի ձեռնարկներ, որոնցմէ ամենէն ազդեցիկը «Հայաստանի Փոքրիկ Երաժիշտներ»ու երգչախումբի ելոյթն էր (little singers of Armenia): Վերջինս եւ այլ խմբակներ յոյն գեղարուեստասէր զանգուածին մօտ թողած տպաւորութեան պատճառով միքանի անգամ հրաւիրուեցան Սալոնիկ[69]:

Սալոնիկի հայօճախին այցելութիւն տուած են ՀՀ առաջին երկու նախագահները: 1996ին հայօճախ այցելեց ՀՀ առաջին նախագահ՝ Լեւոն Տէր Պետրոսեանը: Այդ այցելութիւնը ընթացաւ անշուք ձեւով՝ հայօճախին անդամներու միտումնաւոր բացակայութեամբ, ՀՅԴի եւ ՀՀ իշխող կազմա-

---

https://books.google.am/books?id=cELflNDAH0oC&pg=PA52&lpg=PA52&dq=garabed%20kalfayan%20thessaloniki&source=bl&o#v=onepage&q=garabed%20kalfayan%20thessaloniki&f=false (32.10.2016)

[68] 1994ի աշնան Սալոնիկի եկեղեցւոյ կից կեդրոնական մայր պողոտայի վրայ զետեղուած է խաչքար մը՝ ի յիշատակ Յունաստանի եւ ԱՄՆի մարդասիրական օժանդակութեան: Խաչքարին վրայ փորագրուած է հետեւեալ յունարէն արձանագրութիւնը. «Յիշատակի սիրոյն Հայաստանը պատուելով Յունաստանին եւ ԱՄՆին 1993ի օգնութեան համար Սալոնիկի միջոցաւ զետեղեց այս յուշարձանը»: ΜΝΗΜΗΣ ΧΑΡΗΝ, Η ΑΡΜΕΝΙΑ ΤΙΜΩΝΤΑΣ ΤΗΝ ΕΛΛΑΔΑ ΚΑΙ ΤΙΣ ΗΝΩΜΕΝΕΣ ΠΟΛΙΤΕΙΕΣ ΑΜΕΡΙΚΗΣ ΓΙΑ ΤΗ ΒΟΗΘΕΙΑ ΤΗΣ ΜΕΣΩ ΘΕΣΣΑΛΟΝΙΚΗΣ ΤΟ 1993 ΕΣΤΗΣΕ ΑΥΤΟ ΤΟ ΜΝΗΜΕΙΟ:

[69] Concerts dedicated to the 100th anniversary of the Armenian Genocide in Thessaloniki՝ http://www.mfa.am/en/press-releases/item/2015/04/06/concert_greece/ (31.10.2016): Այս բոլոր ծրագիրերու իրականացման մէջ կարեւոր դեր ունեցաւ Սալոնիկի քաղաքապետարանի երաժշտական խումբի հիմնադիր եւ ղեկավար խմբավար Քոզմաս Ղալիլէասը (1936-2000), Սալոնիկի Համազգայինի վարչութեան վաստակաւոր անդամ Տիրուհի Գալֆայեանի ամուսինը (Χασιώτης, էջ 158):

կերպութեան՝ Հայոց Համազգային Շարժումի (ՀՀՇ) միջեւ առկայ քաղաքական լարուածութեան պատճառով, որով ՀՅԴ Յունաստանի կեդրոնական կոմիտէն անտարբեր եւ վանողական կեցուածք որդեգրեց նախագահին հանդէպ:

1997ին Թեսաղոնիկէ ժամանեցին Արցախի նախագահ Արկադի Ղուկասեանը եւ «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրէն Նայիրա Մելքումեանը, որոնք հրաւիրուած էին Հայ Դատի Յանձնախումբին կողմէ:

2001ին ՀՀ երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեան այցելեց Սալոնիկ եւ հանդիպում ունեցաւ հայօճախի միութիւններու ներկայացուցիչներուն հետ:

2007ին հայօճախ ժամանեց եւ բանախօսեց ՀՅԴ Բիւրոյի անդամ Վահան Յովհաննիսեանը (1956--2014) նաեւ՝ Արցախի արտաքին գործոց նախարար Գէորգի Պետրոսեանը:

2010ին իբրեւ նորաստեղծ Սփիւռքի նախարարութեան ներկայացուցիչ Հրանուշ Յակոբեան Սալոնիկ ժամանեց եւ հանդիպում ունեցաւ հայօճախի ներկայացուցիչներու հետ՝ բարձր գնահատելով գաղութիս կազմակերպական եւ ազգային գործունէութիւնը:

2010ին նաեւ ՀՀ Առաջին Ալիք Հ1ի «Օտար ամայի ճամփէքի վրայ» հաղորդաշարը այցելեց Յունաստան եւ Սալոնիկ ու նկարահանումներ կատարեց նպատակ ունենալով հայօճախը լաւագոյնս ծանօթացնել հանրութեան:

2015ին Եղեռնի 100ամեակի ոգեկոչման առթիւ հայօճախը օժանդակեց Մանուէլ Սարիբէկեանի (Man-production) կողմէ *Փրկութեան քարտէզ* (*The Map of Salvation*) ֆիլմի աշխատանքներուն, երբ նկարահանումներ եղան Սալոնիկի մէջ[70]: Ֆիլմը 15 Նոյեմբեր 2016ին ցուցադրուեցաւ Սալոնիկի կինօփառատօնի շրջագիծէն ներս: Այս գործընթացին համար մեծ ներդրում ունեցաւ հայօճախիս Համազգային Մշակութային Միութիւնը:

ՀՅԴ Բիւրոյի անդամ Կիրօ Մանոյեանը 2016ի աշնան, ՀՀ անկախացման 25ամեակին առիթով այցելեց Յունաստան եւ Սալոնիկ ու բանախօսեց հայօճախին անդամներու ներկայութեամբ:

Ինչ կը վերաբերի հայօճախին եւ Աթենքի ՀՀ դեսպանութեան գործակցութեան, ՀՀ դեսպանատան նախկին հիւպատոս Մարիամ Յարութիւնեան (ՀՀ Աթենքի դեսպանութեան երրորդ քարտուղար հիւպատոս 2013-16), հետեւեալը կը վկայէ.

> Դեսպանութեան յարաբերութիւնները Սալոնիկի հայկական համայնքի հետ բաւականին լաւ են: Համայնքն աջակցում է դեսպանութեան նախաձեռնութիւններին՝ տարբեր մշակութային միջոցառումներին Սալոնիկ քաղաքում ցուցահանդէսներ, համերգներ: Ամիսը մէկ անգամ այստեղ տեղի է ունենում հիւպատոսական ընդունելութիւն Սալոնիկ քաղաքում Հիւսիսային Յունաստանում

[70] *Map of Salvation Film in Commemoration of the 100th Anniversary of the Armenian Genocide*՝ http://mapofsalvation.com/en/ (2.11.2016):

բնակուող հայերի համար: Հիւպատոսական ընդունելութեան համար տարածքը տրամադրում է հայկական համայնքը[71]:

Նշենք նաեւ, որ Սալոնիկի հայօճախը եւ թաղային մարմինը մասնակցեցան ՀՀ դեսպանատան Աթենքի շէնքի սեփականացման 2004ի դրամահաւաքին:

ՆԻԽԹԱԿԱՆ ԱՂԲԻՒՐՆԵՐ

Հայօճախին նիւթական աղբիւրները կրնանք բաժնել երկուքի.- ա) եկեղեցական, բ) պետական: Ստորեւ՝ Սալոնիկի եկեղեցւոյ նիւթական աղբիւրները, որոնց մատակարարման միակ լիազօր մարմինը թաղականութիւնն է եւ ազգային իշխանութեան տնտեսական յանձնախումբը[72]:

Ա.- Ազգային տուրք

Ազգային սահմանադրութեամբ սահմանուած ազգային տուրքն ու գերեզմանատան տուրքը մասամբ կը բանին: Թաղային մարմինը չի կրնար ստիպել հայօճախի անդամները որ իրենց տնտեսական պարտականութիւնները կատարեն համայնքին եւ եկեղեցիին հանդէպ: Հակառակ ասոր, հայօճախի անդամները պարտաճանաչ են իրենց պարտականութիւններուն մէջ: Եկամուտային այս աղբիւրը սակայն, բաւական տկար կը համարուի:

Բ.- Նուիրատուութիւններ

Դասական Սփիւռքի մէջ զարգացած է նուիրատուութիւններու աւանդոյթը՝ եկեղեցւոյ կամ որեւէ միութեան ուղղուած: Հայօճախի անդամներ շատ յաճախ նուիրատուութիւններ կը կատարեն իրենց հանգուցեալ հարազատներու յիշատակին՝ յուղարկաւորութիւններու կամ հոգեհանգիստներու առթիւ: Այս եկամուտը ունի նաեւ բարոյական նշանակութիւն, քանի որ կ'ամրապնդէ անհատին պարտականութեան գիտակցութիւնն ու զգացումը՝ հանդէպ իր հայօճախին եւ ազգային կեանքին: Սակայն, այս եկամուտը հետեւողական եւ մնայուն բնոյթ չունի, իսկ գումարի արժէքը կը տարբերի ըստ պարագայի:

Գ.- Եկեղեցական սպասարկութիւններու եկամուտ

Եկեղեցական սպասարկութիւններու (ծիսական արարողութիւններ, հարսանիք, մկրտութիւն, յուղարկաւորութիւն, հոգեհանգիստ, տնօրհնէք...) համար սահմանուած է առաջնորդարանի կողմէ համապատասխան սակ: Փոքրանդամ հայօճախներու համար, սակայն, այս եկամուտն ալ չունի մեծ կշիռ: Տնօրհնէքի պարագային ճշտուած գումար չկայ եւ կը տրուի որպէս «ժամուց»՝ հայօճախի հոգեւոր հովիւին: Իսկ յուղարկաւորութիւններու կամ հոգեհանգիստներու պարագային, եթէ հանգուցեալը ազգանուէր գործունէութիւն ունեցած է, թաղականութիւնը յատուկ որոշումով անվճար արարո-

[71] Անձնական հարցազրոյց, Յուլիս 2016ին:

[72] Միութենական տնտեսական խնդիրներու մասին պիտի անդրադառնանք յաջորդող էջերուն մէջ:

ղութեան դրութիւն կ'ապահովէ: Նման պարագաներու, ընտանեկան եւ ընկերային շրջապատը նուիրատուութիւններու միջոցաւ կը կատարէ այդ պարտականութիւնը: Մոմերու վաճառքը ունի մնայուն բնոյթ, բայց փոքրաթիւ ծխականներու պատճառաւ, հաւաքուած գումարը սահմանափակ է:

Դ.- Եկեղեցապատկան ազգային կալուածներ եւ անշարժ գոյք

Ժամանակի ընթացքին որոշ անշարժ գոյքեր (յարկաբաժին, խանութ, հողամաս) ժառանգուեցան հայկական եկեղեցւոյ անզաւակ կամ անժառանգ հայրենակիցներու կողմէ՝ նպաստելով եկեղեցական գանձին: Այս եկամտային աղբիւրը միակն է, որ մնայուն շարունակականութիւն ունի եւ աւելի արդիւնաւէտ գործօն է:

Այս կալուածներուն վերահսկումը եւ մատակարարումը կը կատարուի թաղային մարմնի լիազօր իրաւաբանին եւ հաշուակալին կողմէ, որոնք հաշուետու են թաղային մարմնին, գանձապահին եւ անդամներուն: Յունաստանի տնտեսական ճգնաժամին պատճառաւ, սակայն, վերջին տարիներուն որոշ թիւով յարկաբաժիններ եւ խանութներ մնացին առանց վարձակալի: Միւս կողմէ, ըստ Սալոնիկի թաղային մարմնի լիազօր հաշուապահ Քարոլոս Երամեանի, վերջին տարիներուն պետութեան հարկային մարմիններու սահմանած ծանր տուրքերու պատճառաւ կալուածներուն եկամուտները մեծապէս նուազած են[73]:

Ե.- Պետութեան կողմէ օժանդակութիւններ

Մինչեւ Յունաստանի 2010ի տնտեսական ճգնաժամը, եկամուտի այս աղբիւրը շօշափելիօրէն նշանակալից էր: 1997ին, «Սալոնիկ՝ Եւրոպայի Մշակոյթի Մայրաքաղաք» փառատօնին ծիրէն ներս, օրինակ, պետական հովանաւորութեամբ նորոգուեցաւ հայկական եկեղեցին եւ վերադասաւորուեցաւ ու արդիականացաւ հայօճախին պատմական արխիւը: Նման օժանդակութիւններ շարունակուեցան տարիներու ընթացքին զանազան միութենական, մշակութային նախաձեռնութիւններու համար[74]: Թաղականութիւնը տնտեսապէս ազատ մնաց ձեռնարկներ քաջալերելու կամ վարկեր հաւասարակշռելու խնդրէն:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Հասարակական կազմակերպութիւններ (միութիւններ)

Հայօճախը որպէս դասական Սփիւռքի մասնիկ, բաղկացած է գրեթէ այն բոլոր միութիւններէն, որոնք կը գործեն Սփիւռքի մէջ:

---

[73] Անձնական հարցազրոյց Կարլոս Երամեանի հետ, Յուլիս 2016:

[74] 26/5/2009 - "Ο υπουργός κ. Σταύρος Καλαφάτης συναντήθηκε με εκπροσώπους της αρμενικής παροικίας Θεσσαλονίκης" (Նախարար Պ. Սթաւրոս Քալաֆաթիսը հանդիպեցաւ Թեսաղոնիկէի հայկական գաղութի ներկայացուցիչներուն հետ)՝ http://www.mathra.gr/default_3123.aspx (4.11. 2016):

Ա.- *Հայ Գթութեան Խաչի (ՀՕՄի միաւոր) Մակեդոնիոյ եւ Թրակիոյ շրջանային վարչութիւն եւ մասնաճիւղեր* (Αρμενικός Σταυρός Ελέους Μακεδονίας Θράκης): Ան կը գործէ պետական վաւերացումով եւ հաշուետու է պետական հարկային դաշտին՝ նախատեսուած համապատասխան օրէնքներով[75]:

Յունաստանի մէջ գոյութիւն ունի ՀՕՄական երկու միաւոր: Աթենքի ՀՕՄի միաւորը կը կոչուի Հայ Կապոյտ Խաչ (Αρμενικός Κυανός Σταυρός): Իսկ Սալոնիկի եւ Հիւսիսային Յունաստանի գաղութներու մէջ գործող ՀՕՄի միաւորը կը կոչուի Հայ Գթութեան Խաչ: Այս երկու միաւորները անջատաբար ուղղակիօրէն կապուած են ՀՕՄի Կեդրոնական Վարչութեան, Պոստոն:

Մակեդոնիոյ եւ Թրակիոյ ՀԳԽն Հիւսիսային Յունաստանի մէջ գործունէութեան սկսած է 1920ականներէն, նպաստելով գաղթական, տարագրեալ զանգուածներու ամոքման: ՀԳԽն կը մասնակցի ՀՕՄի բոլոր համահայկական ծրագիրերուն: 1990ականներուն, ան մարդասիրական մեծ օգնութիւն ուղարկեց ՀՀ եւ Արցախ: ՀԳԽն բարեսիրական կազմակերպութիւն ըլլալէ անդին ունի նաեւ մեծ դեր հայապահպանման եւ ազգանուէր գործունէութեան մէջ:

ՀԳԽի շրջանային վարչութիւնը, որուն նստավայրը Սալոնիկն է, ունի մասնաճիւղեր Քաւալա, Քսանթի, Քոմոթինի, Ալեքսանդրուպոլիս եւ Տիտիմոթիխօ-Օրեսթիատա քաղաքներուն մէջ:

Մասնաճիւղերու վարչութիւններու ներկայացուցիչները երկամեայ դրութեամբ կը գումարեն շրջանային ժողով, ընտրելու շրջանային վարչութիւն:

ՀԳԽի լայնածաւալ գործունէութեան ամենակարեւոր երեսակներէն են հայապահպանման եւ կրթական առաքելութիւնները.-

ՀԳԽի, ինչպէս նաեւ հայօճախի բոլոր միութիւններուն համար, 1990էն ետք ի յայտ եկաւ նոր մարտահրաւէր մը՝ ՀՀէն արտագաղթած նոր սերունդի ներգրաւման եւ հայեցի դաստիարակութեան խնդիրը: 1947էն ետք սակաւաթիւ հայօճախը ունէր 20-25 աշակերտներէ բաղկացած շաբաթօրեայ Մալաքեան-Գասպարեան ծաղկոցը, ուր հայօճախին երեխաները կը ստանային տարրական հայեցի կրթութիւն: 1990էն ետք, երբ ի յայտ եկաւ

[75] Έκγριση προϋπολογισμου έτους 2015 του Κληροδοτήματος "Σιρανούς Κασπαριάν" το οποίο το διαχειρίζεται το Σωματείο με την επωνυμία "Αρμενικός Σταυρός του ελέους Μακεδονίας Θράκης"՝ http://gdel.damt.gov.gr/images/dkp/%CE%9A%CE%A9%CE%9D%CE%A3%CE%A4%CE%91%CE%9D%CE%A4%CE%99%CE%9D%CE%91/1%CE%9A%CE%91%CE%A3%CE%A0%CE%91%CE%A1%CE%99%CE%91%CE%9D-%CF%80%CF%81%CE%BF%CF%85%CF%80%CE%BF%CE%BB%CE%BF%CE%B3%CE%B9%CF%83%CE%BC%CE%BF%CF%82_2015-%CE%B5%CE%B3%CE%BA%CF%81%CE%B9%CF%83%CE%B7-%CE%9D_4182-132013.pdf (5.11.2016):

ՀՀէն եւ Վրաստանէն Սալոնիկ ապաստանած հայրենակիցներու ձուլման վտանգը՝ թափ տրուեցաւ շաբաթօրեայ դպրոցին, որուն աշակերտութեան թիւը 1993-94ին բարձրացաւ մօտ 60-70ի: Յաջորդող տարիներուն, այդ թիւը հասաւ մօտ 160ի: Ասոնցմէ ընդամէնը 4-5 հոգին բնիկ յունահայերու զաւակներ էին:

Ծովափնեայ սեփական հողամասի վրայ 1990էն իվեր սկսաւ գործել «ՀԳԽի Խալքիտիքիի ամառանոցը», ուր կամաւորներ սիրայօժար կը ծառայեն: Վերջինս եղաւ նաեւ հայապահպանման միջոց՝ ներգրաւելով նորահաստատ հայերու զաւակները[76], ինչպէս նաեւ այլ հայօճախներէ եկած պատանիներ: Ան գործեց մինչեւ 2014, իսկ 2015ին դադրեցուց իր գործունէութիւնը Յունաստանի տնտեսական ծանր իրավիճակին պատճառով: Կ'ակնկալենք որ յառաջիկային ՀԳԽի ամառանոցը վերաշխատի, թէկուզ ներկայ ծանր տնտեսական իրավիճակի պայմաններու մէջ:

Ամառանոցը (որ կը գործէր Յուլիսին) եւ հայկական դպրոցը (որ կը գործէ Սեպտեմբերէն Մայիս), շատ ծախսալից են: Հակառակ ասոր, սակայն, ՀԳԽն եւ գաղութիս թաղային մարմինը միշտ տրամադրուած են այդ ուղղութեամբ օգտագործելու ձեռքբերուած նիւթական միջոցները՝ շարունակելու համար երթը այս զոյգ հաստատութեանց:

1994էն ետք, եղան որոշ մտածումներ ամէնօրեայ հայկական դպրոց հիմնելու մասին, որոնք երբեք լուրջ զարգացում եւ հասունացում չունեցան, իտես Աթենքի հայկական ամէնօրեայ դպրոցներու տնտեսական խնդիրներուն, նաեւ՝ նիւթական խոշոր աղբիւրներու պակասի պատճառաւ, որեւէ վարչութիւն յանձնառու չեղաւ իրականացնել այդպիսի նախաձեռնութիւն[77]:

Մալաքեան-Գասպարեան ծաղկոցը պէտք է ընկալել որպէս հայապահպանման բոյն եւ ո՛չ միայն կրթական հաստատութիւն: Ծաղկոցին գլխաւոր նպատակը հայրենասիրական ոգիի, հայոց լեզուի, պատմութեան եւ մշակոյթի տարրական գիտելիքի փոխանցումն է երեխաներուն: 1994էն ետք, ծաղկոցին ուսուցչական կազմը կը բաղկանար ՀՀէն Սալոնիկ հաստատուած ուսուցչուհիներէ, որոնք գրեթէ սիրայօժար դասաւանդեցին երկար տարիներ: Այսօր, ծանօթ տնտեսական պատճառներով, ծաղկոցի ուսուցչական կազմին նոր սերունդը կը ծառայէ լիովին կամաւոր հիմունքներով:

---

[76] ՀԳԽն հոգաց անոնց զաւակներուն ամառանոց կեցութեան ծախքերը:

[77] Այսօր Աթենքի հայկական դպրոցները գոյատեւման լուրջ հարցականի առջեւ են եւ ոչ ոք վստահ կրնայ երաշխաւորել անոնց յարատեւութիւնը: Օրինակի համար կրթութեան նախարարութեան վերջին որոշումով Աթենքի հայկական դպրոցներու եւ իսրայէլական համայնքի դպրոցներուն համար պետութեան կողմէ ուղարկուած ուսուցիչներու թոշակը պէտք է հոգայ տուեալ դպրոցներու հոգաբարձութիւնը (05-08-16 Αποσπάσεις σε Αρμενικό Κυανού Σταυρό, Γενική Αρμενική Ένωση Αγαθοεργίας & Ισραηλιτική Κοινότητα՝ https://www.minedu.gov.gr/eidiseis/22664-05-08-16-apospaseis-se-armeniko-kyanoy-stavro-geniki-armeniki-enosi-agatho (5.11.2016):

ՀԳԽն բացի դպրոցէն եւ ամառանոցէն կը կազմակերպէ զանազան այլ ներհամայնքային ձեռնարկներ, ինչպէս աւանդական դարձած ամէնամեայ կամաւորական արիւնատուութիւնը՝ Ապրիլ 24ի եւ եկեղեցւոյ հիմնադրման օրը: Հաւաքուած արիւնը, յանուն ՀԳԽի, կը տրամադրուի անհրաժեշտ պարագայի տակ գտնուող քաղաքի հայերուն, անխտիր:

ՀԳԽն այսօր կը շարունակէ իր գործունէութիւնը դիմագրաւելով բաւական ծանր տնտեսական դժուարութիւններ՝ Յունաստանի տնտեսական տագնապին ծիրին մէջ:

Բ.- *Համազգային Կրթական եւ Մշակութային Ընկերակցութիւն* (Αρμενικός Πολιτιστικός Σύλλογος "Χαμασκαΐν")

Համազգայինը Սալոնիկի մէջ կը ներկայանայ «Ղազար Սարեան» մասնաճիւղի անուան տակ, ուր ներգրաւուած են գոհացուցիչ թիւով ՀՀէն նոր հաստատուած հայեր: Աթենքի մէջ կը գործեն երկու մասնաճիւղեր եւ շրջանային վարչութիւնը, որ կը համադրէ Համազգայինի ընդհանուր գործունէութիւնը Յունաստանի մէջ, կապ հաստատելով Համազգայինի կեդրոնական վարչութեան հետ[78]: Ան պետութեան կողմէ ճանչցուած օրինական միութիւն է: «Ղազար Սարեան» մասնաճիւղը չունենալով հանդերձ սեփականութիւն ուստի եւ՝ որեւէ մնայուն նիւթական աղբիւր[79], իր ծաւալած գործունէութիւնը չի սահմանափակեր հայօճախի սահմաններով: 1990ականներէն սկսեալ միութիւնս կազմակերպեց ձեռնարկներ, որոնց մասնակցեցան ՀՀէն հրաւիրուած խմբաւորումներ: Այդ բոլոր ներկայացումները հանրային բնոյթ ունէին եւ ուղղուած էին մասնաւորաբար յոյն հասարակութեան: Այդ ձեռնարկներու ծախսերը հոգացին Սալոնիկի նահանգապետարանը կամ քաղաքապետարանը: Սալոնիկի ազատագրման 100ամեակին առիթով, 2012ին, պետական հովանաւորութեամբ եւ գործակցութեամբ Համազգայինը կազմակերպեց շարք մը հայկական ձեռնարկներ[80]:

2010-11ին, Համազգայինը տեղաբնակ հայաստանցիներու առաջարկին անսալով ՀՀէն հրաւիրեց ժամանակակից երգիչներ (Թաթա Սիմոնեան,

---

[78] Αρμένικος Πολιτιστικός Σύλλογος "Χαμασκάϊν"՝ http://www.democu.gr/el/business-listing/%CE%B1%CF%81%CE%BC%CE%AD%CE%BD%CE%B9%CE%BA%CE%BF%CF%82-%CF%80%CE%BF%CE%BB%CE%B9%CF%84%CE%B9%CF%83%CF%84%CE%B9%CE%BA%CF%8C%CF%82-%CF%83%CF%8D%CE%BB%CE%BB%CE%BF%CE%B3%CE%BF%CF%82-%CF%87%CE%B1%CE%BC%CE%B1%CF%83%CE%BA%CE%AC%CF%8A%CE%BD (6.11.2016):

[79] Մասնաճիւղի յատկապէս ներքին ձեռնարկներու իրականացման համար թաղային մարմինը միշտ սատար կը հանդիսանայ:

[80] Εκδηλώσεις Αρμένικης κοινότητας Θεσσαλονίκης՝ http://www.cityportal.gr/articles_det1.asp?subcat_id=40&article_id=32663 (7.11.2016)

Եւա Րիւազ, Արմենչիկ): Այդ երկու ձեռնարկներուն ներկայ գտնուեցան ՀՀէն Սալոնիկ հաստատուած 2000-2500 հայեր[81]:

Գ.- *Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն* (Ένωση Αρμενίων Αθλητών Θεσσαλονίκης)

Սալոնիկի ՀՄԸՄի միաւորը ունի հարուստ պատմութիւն, սակայն վերջին տարիներուն գրեթէ կազմալոյծ վիճակի մէջ կը գտնուի եւ իր գործունէութիւնը համապատասխան չէ իր անցեալին ու բաւական հեռու է նոր օրերու ակնկալիքներէն: Մասնաճիւղը որպէս առանձին հասարակական կազմակերպութիւն ճանչցուած է յունական պետութեան կողմէ (Սալոնիկի Հայ Մարզիկներու Միութիւն (Ένωση Αρμενίων Αθλητών Θεσσαλονίκης) կամ Արմենիքի "Արմենուհի" անունով եւ ինքնամփոփ անջատողական գործընթացի մօտեցում մը որդեգրեց 1980ականներու վերջերը[82]: Ան չի մասնակցիր Յունաստանի ՀՄԸՄի ընդհանուր համակարգին եւ չ'ընդունիր Աթենքի շրջանային վարչութեան կամ առաւել եւս համասփիւռքեան ՀՄԸՄի կեդրոնական վարչութեան որոշումները:

Այսօր, Սալոնիկի հայօճախին մէջ ՀՄԸՄը անգործութեան մատնուած է, ան չունի պէտք եղած աշխուժութիւնը եւ ներկայութիւնը: Գոյութիւն ունի պասքէթի խումբ մը, որուն կը մասնակցին մեծ թիւով յոյներ[83]: Իսկ խումբը իր հայ անդամներով միշտ կը մասնակցի համահայկական խաղերուն:

2015ի Ապրիլին, Ցեղասպանութեան 100ամեակին առիթով ՀՄԸՄը կազմակերպեց հեծանուարշաւ մը քաղաքիս կեդրոնական փողոցներուն մէջ, որուն մասնակցեցան նաեւ հայօճախէն մեծ թիւով երիտասարդներ[84]: Այդ մէկը արդէն ապացոյց է, որ հայօճախի երիտասարդութիւնը պատրաստ է մասնակցելու ՀՄԸՄի նախաձեռնութիւններուն, կը բաւէ որ այդպիսի նախաձեռնութիւններ տեղի ունենան:

---

[81] Համազգայինը վերապահութեամբ յանձն առաւ ձեռնարկներուն իրագործումը: Ձեռնարկներուն տեղացի հայերէն հազիւ 5-6 հոգի մասնակցեցաւ: Ժամանակակից հայաստանեան երաժշտութիւնը բաւական հեռու է բուն սալոնիկահայերէն:

[82] Անձնական եւ քաղաքական համոզումներու տարակարծութիւններ պատճառ դարձան որ ՀՄԸՄը որդեգրէ ինքնագլուխ գործունէութեան ճանապարհը: Հակառակ այն բոլոր տարակարծութիւններուն, որոնք երբեմն կը ձեւաւորուին համայնքի անդամներու միջեւ, կը կարծենք որ պէտք է իվերջոյ տիրէ պէտք եղած ողջախոհութիւնը եւ ընդհանուր գաղափարի մը շուրջ համախոհութիւնը:

[83] Ξεκίνημα της Αρμενικής՝ http://northbasket.gr/%CE%BE%CE%B5%CE%BA%CE%AF%CE%BD%CE%B7%CE%BC%CE%B1-%CF%84%CE%B7%CF%82-%CE%B1%CF%81%CE%BC%CE%B5%CE%BD%CE%B9%CE%BA%CE%AE%CF%82/ (7.11.2016):

[84] Ποδηλατοπορεία για τη Γενοκτονία των Αρμενίων στη Θεσσαλονίκη՝ http://www.thestival.gr/culture/actions/item/235343-tora-ksekinise-i-podilatoporeia-gia-ti-genoktonia-ton-armenion-sti-thessalonik (6.11.2016):

Միութիւնը ունի սեփական հողամաս, ուր պէտք էր կառուցուէր պասքեթի մարզադաշտ: Այդ կալուածը ցարդ կը մնայ չօգտագործուած վիճակի մէջ: Միութիւնը չունի որեւէ կարեւոր նիւթական աղբիւր:

Դ.- *Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն* (Արմենική Գենική Ένωση Αγαθοεργίας)

ՀԲԸՄը մօտաւորապէս 2000էն իվեր չունի որեւէ կազմակերպական ընթացք եւ գործունէութիւն: Այս միութիւնը ժամանակին բաւական հզօր էր, բայց արդէն 1970-80ականներէն սկսեալ սահմանափակ կամ ինքնամփոփ, անուանական, կազմալոյծ ներկայութիւն մը ունէր հայօճախին ազգային կեանքէն ներս: Սալոնիկի ՀԲԸՄի միաւորը ունի հսկայ հարստութիւն եւ անշարժ գոյք: Նախկին ատենապետ Գէորգ Գույումճեան կը վկայէ, որ այսօր ՀԲԸՄի գանձանակը կը մատակարարուի լիազօրուած իրաւաբանի մը կողմէ եւ ամէն տարի ճշտուած գումարները կ'ուղարկուին միութեան կեդրոնական վարչութեան: Միութիւնը չունի վարչական կազմ, այլ միայն պատասխանատու անձ մը, յանձին Հայկանուշ Փորթուգալեանի, որ կը զբաղի տնտեսական հարցերով: Ան նաեւ հիմնած է Փորթուգալեան Հիմնարկը եւ զայն կտակած Սալոնիկի քաղաքապետարանին[85]:

[85] Πρόγραμμα δωρεάν ενισχυτικής διδασκαλίας (Πνευματικό Κοινωνικό Κέντρο <<ΠΟΡΤΟΚΑΛΙΑΝ>>)՝ http://www.thessaloniki.gr/portal/page/portal/DioikitikesYpiresies/GenDnsiDioikOikonYpiresion/DnsiKoinProstDimYgeias/TmimaKoinPolitIsotFylon/Anakoinwseis/portokalian-plirofories (7.11.2016):

Ե.- *Ղարաբաղի եւ Հայաստանի Բարեկամներ* (Φίλοι της Αρμενίας και του Καραμπάχ)

Կազմակերպութիւնը հիմնուեցաւ 2002ին, սալոնիկահայ Միքայէլ Պասմաճեանի կողմէ[86]: Ընկերակցութիւնը ունի պետական ոչ-կառավարական կազմակերպութեան գրանցում՝ համաձայն պետութեան նախատեսուած օրէնսդրութեան, եւ ունի տեղական հայրենակցական միութեան բնոյթ: 2002էն իվեր ան կատարած է շարք մը բարեգործական աշխատանքներ ՀՀ Նոյեմբերեանի մարզի Ճիլիզա սահմանամերձ գիւղին ջրամատակարարման ցանցի եւ այլ գիւղատնտեսական արդիականացման բարեկարգումներ: Վերջերս, հիմնուեցաւ տեղական գորգի արտադրման աշխատանոց մը, ուր կ'աշխատին գիւղի որոշ կանայք[87]:

Զ.- *Եկեղեցասէր Տիկնանց Մարմին* (Ένωση Κυριών Αρμενικής Εκκλησίας)

Միաւորումը ունի զուտ ներհամայնքային բնոյթ՝ ներգրաւելով բոլոր այն կանայք, որոնք կ'ուզեն սիրայօժար մաս կազմել հայկական եկեղեցւոյ աւանդոյթներուն եւ տօնական ծիսակատարումներու սպասարկման: Ան կը կազմակերպէ մատաղօրհնութեան, ծնունդի, զատիկի, խաղողօրհնէքի եւ այլ եկեղեցական տօնակատարութիւնները, պահպանելով հայ առաքելական եկեղեցւոյ աւանդոյթները: Ան չունի որեւէ այլ արտաքին գործունէութիւն եւ հետեւաբար չունի պետական ճանաչում:

Է.- *Գալֆայեան Ընտանիքի Հաւաքածոն* (Συλλογή Καλφαγιάν)

Գալֆայեաններու հաւաքածոն միութիւն մը չէ, սակայն սալոնիկահայ պատմութեան մէջ իր ունեցած կարեւոր դերակատարութեան համար անհրաժեշտ կը գտնենք այս մասին անդրադառնալ: Հանգուցեալներ Կարապետ եւ Անահիտ Գալֆայեաններու որդիները՝ Արսէն եւ Ռուբէն Գալֆայեաններ, որպէս *անթիք* իրերու մասնագէտներ, ունին անձնական հայկական արուեստի նմուշներ:

2010ի ամռան, Սալոնիկի Բիւզանդական Թանգարանին (Βυζαντινό Μουσείο Θεσσαλονίκης) մէջ տեղի ունեցաւ հայկական արուեստի ցուցահանդէս, կազմակերպութեամբ Գալֆայեաններու ընտանիքին[88]: Անկէ առաջ, Կարապետ Գալֆայեանի (1933--2013) ջանքերով եւ Յունաստանի մշակոյթի նախարարութեան տնտեսական եւ բարոյական աջակցութեամբ,

---

[86] Պասմաճեանի հօրեղբայրը Մանուկ, եղած էր այն վերապրող անձերէն մէկը, որ 24 Ապրիլ 1915ի գիշերը ձերբակալուած է Պոլսոյ մէջ եւ աքսորուած:

[87] Պասմաճեանի կարծիքով Սփիւռքի դերակատարութիւնը ՀՀ զարգացման ի խնդիր բաւարար չէ, իսկ սփիւռքեան կառոյցները չեն ցուցաբերեր համապատասխան աշխուժութիւն այդ նպատակի իրագործման համար: Ըստ Պասմաճեանի, անհատ բարեգործական ձեռնարկութիւնները, որոնք կ'իրագործուին տեղւոյն վրայ, շատ աւելի արդիւնաւէտ են հայրենիքի զարգացման համար:

[88] "Aspects of Armenian Art from the Kalfayan Collection"՝ http://mbp.gr/en/exhibitions/%E2%80%9Caspects-armenian-art-kalfayan-collection%E2%80%9D (8.11.2016):

2002ի աշնան Պենաքի Աթենքի Թանգարանին մէջ կազմակերպուեցաւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան գանձերու եռամսեայ ցուցահանդէսը[89]: Սալոնիկի Գալֆայեան Արուեստի Ցուցասրահը (Kalfayan Galleries) նաեւ հանրածանօթ է յոյն արուեստասէր հասարակութեան իբրեւ ժամանակից արուեստի ցուցասրահներու եւ ցուցադրութիւններու կեդրոն[90]:

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն

1947էն ետք, Սալոնիկի հայօճախին մէջ միակ քաղաքական կազմակերպութիւնը ՀՅԴ կառոյցն ու ենթակառոյցներն են, որոնք ցայսօր կը գործեն:

ա. Սալոնիկի ՀՅԴ Յունաստանի Երիտասարդական Միութեան «Սողոմոն Թեհլիրեան» Խումբ (Αρμενική Νεολαία Ελλάδος): ՀՅԴ Սալոնիկի «Սողոմոն Թեհլիրեան» խումբը կը պատկանի ՀՅԴ Յունաստանի Երիտասարդական Միութեան, որ ունի երեք խումբ, որոնցմէ երկուքը կը գործեն Աթենքի մէջ: Անոնք կը գումարեն ամէնամեայ պատգամաւորական ժողովներ, ուր կ'ընտրուի կեդրոնական վարչութիւն: Սալոնիկի խումբը կը բաղկանայ մօտ 20-25 անդամներէ, որոնց մեծամասնութիւնը Հայաստանէն Սալոնիկ հաստատուած 49 ընտանիքներու զաւակներ են: Խումբերը չունին առանձին պետական ճանաչում, այլ միայն՝ որպէս ընդհանուր միութիւն, որ կը ներկայանայ կեդրոնական վարչութիւնով[91]: Սալոնիկի մէջ երիտասարդականի գործունէութիւնը կեդրոնացած է մանաւանդ ազգային խնդիրներու եւ մարտահրաւէրներու վրայ[92]:

Տեղական վարչութիւնը անմիջական գործակցութիւն ունի քաղաքիս ՀՅԴ կոմիտէութեան հետ: Միութեան անդամները մասնակից են բոլոր արտաքին ձեռնարկներուն, որոնք առնչուած են Հայ Դատին եւ Արցախի ինքնորոշման իրաւունքին[93]: Անդամները կը զբաղին յատկապէս հրապարակային քարոզչական գործունէութեամբ, սատար կանգնելով ընդհանուր հայօճախին բոլոր արտաքին ու ներքին ձեռնարկներուն:

---

[89] Armenian Relics of Cilicia from the Museum of the Catholicosate in Antelias, Lebanon՝ http://www.benaki.gr/index.asp?id=50501&lang=en&sid=279 (8.11.2016):

[90] Kalfayan galleries՝ http://www.kalfayangalleries.com/index1en.htm (8.11.2016. նաեւ՝ Απεβίωσε ο κοσμοπολίτης συλλέκτης, Καραμπέτ Καλφαγιάν Σε ηλικία 80 ετών. http://www.naftemporiki.gr/story/684652/apebiose-o-kosmopolitis-sullektis-karampet-kalfagian (8.11.2016):

[91] Αρμενική Νεολαία Ελλάδος՝ http://ayfgreece.com/ (9.11.2016):

[92] Θεσσαλονίκη: Έστησε περίπτερο ενημέρωσης η Αρμένικη Νεολαία Ελλάδος՝ http://www.zougla.gr/greece/article/8esaloniki-estise-periptero-enimerosis-i-armeniki-neolea-elados (9.11.2016):

[93] Ο λόγος της Αρμενικής Νεολαίας Ελλάδος στην πολιτική εκδήλωση της Θεσσαλονίκης՝ http://ayfgreece.com/o-logos-tis-armenikis-neolaias-ellados-stin-politiki-eksilosi-tis-thessalonikis/ (9.11.2016):

ՀՅԴ երիտասարդականի անունով եւ կազմակերպութեամբ ամէն տարի Ապրիլ 24ի օրը բողոքի ցոյց կը կազմակերպուի Աթենքի թրքական դեսպանատան առջեւ եւ Սալոնիկի թրքական հիւպատոսարանին դիմաց[94]:

Միութիւնս գործօն մասնակցութիւն ունի նաեւ ներքին ազգային կեանքին եւ հայապահպանման առաքելութեան: Հակառակ շարքերուն ազգանուէր տրամադրութեան, կը նկատուի սակայն գիտելիքներու պակաս՝ ազգային հարցերու պատմաիրաւական հիմքերու նկատմամբ:

Յունաստանի ընդհանուր երիտասարդականի կառոյցը չունի նիւթական մասնաւոր աղբիւրներ եւ կը գործէ կուսակցութեան ու հայօճախին տնտեսական աջակցութեամբ:

բ. Սալոնիկի ՀՅԴ Յունաստանի Պատանեկան Միութեան «Լեւոն Շանթ» խումբ (Αρμενική Προνεολαία Ελλάδος) Յունաստանի ՀՅԴ Պատանեկան Միութիւնը ունի երեք խումբ, որոնցմէ մին կը գործէ Սալոնիկի մէջ: Պատանեկանը ներհամայնքային ներկայութիւն եւ գործունէութիւն ունի, նպատակ ունենալով դաստիարակել նոր սերունդը՝ կամաւոր ազգանպաստ կազմակերպուած աշխատանքի:

Այսօր, Սալոնիկի մէջ պատանեկանը կը բաղկանայ միայն ՀՀէն եկած ընտանիքներու որդիներէ: Այս իրողութիւնը փաստ մըն է, որ հայօճախին ազգային կեանքի յաջորդ սերունդը պիտի բաղկանայ ջախջախիչ մեծամասնութեամբ նորեկ ընտանիքներու շառաւիղներէն:

գ. Սալոնիկի ՀՅԴ «Յակոբ Գասապեան» Կոմիտէութիւն

ՀՅԴ Յունաստանի կառոյցը (Տարօնի շրջան) բաղկացած է հինգ կոմիտէներէ: Երեք կոմիտէութիւններ կը գործեն Աթենքի շրջանին մէջ. մէկը՝ Սալոնիկ, միւս ենթակոմիտէութիւնը՝ Քսանթի քաղաքին մէջ: Երկամեայ դրութեամբ կը գումարուի շրջանային ժողով, որ իր կարգին կ'ընտրէ կեդրոնական կոմիտէ: Սալոնիկի կուսակցական կազմը ունի 40ի մօտ շարքայիններ: Կոմիտէն կը զբաղի բոլոր ներհամայնքային խնդիրներով: Իր անդամներուն մեծամասնութիւնը մաս կը կազմէ գրեթէ բոլոր վերոնշեալ յարակից միութիւններու աշխատանքներուն: Կոմիտէն կը մշակէ նաեւ հայօճախին արտաքին մարտահրաւէրներու դիմագրաւումը եւ քարոզչական աշխատանքը: Ասոնք կ'իրագործուին Հայ Դատի Յանձնախումբի անուան տակ:

Պէտք է շեշտել, որ կուսակցութիւն հասկացութիւնը փոքր հաւաքականութիւններու համար, ինչպէս Սալոնիկը, կը կրէ աւելի ընդլայնուած հայրենասիրական կազմակերպութեան բնոյթ եւ ոչ՝ զուտ քաղաքական միաւորի գործելաձեւ եւ ըմբռնում:

---

[94] Πορεία μνήμης στη Θεσσαλονίκη για την 101 επέτειο της Γενοκτονίας των Αρμενίων՝ (http://www.ethnos.gr/koinonia/arthro/poreia_mnimis_sti_thessaloniki_gia_tin_101_epeteio_tis_genoktonias_ton_armenion-64366566/ (9.11.2016):

դ. ՀՅԴ Յունաստանի Հայ Դատի Յանձնախումբ (Արմենική Εθνική Επιτροπή Ελλάδος)

Հայ Դատի Յանձնախումբը պատասխանատու է բոլոր արտաքին յարաբերութիւններու եւ ընդհանուր արտաքին քարոզչութեան իրականացման: Հակառակ որ Հայ Դատի Յանձնախումբի դերակատարութիւնը Յունաստանի մէջ շատ կարեւոր ու աշխուժ է, ան չունի որեւէ պետական գրանցում[95]: Ան կը ներկայանայ որպէս համայն հայութեան ներկայացուցիչ եւ ընդհանուր կամ տեղական հայութեան շահերը պաշտպանող մարմին:

Քարոզչական աշխատանքը Յունաստանի, առաւել եւս Սալոնիկի ու Թրակիոյ շրջաններուն մէջ բաւական հեզասահ է, քանի որ յոյն հասարակութիւնը բարեացակամ է հայերու հանդէպ՝ գիտակցելով նոյն Թուրքիոյ կողմէ սպառնացող վտանգին: Կարելի է ըսել նաեւ, որ պետական իշխանութիւններու հետ ալ կը գոյանայ այդ հայամերձ բարենպաստ քաղաքական մթնոլորտը, սակայն վերջին տարիներուն այդքան ալ միանշանակ չէ այս մէկը:

Յունաստանի նոր սերունդի իշխանաւորները աւելի մօտ են իրատես քաղաքականութեան (real politic), որոշ չափով հեռանալով աւանդական զգացական ազգային մտածելակերպէ[96]: Յամէնայնդէպս, թրքական ճնշումը Յունաստանի նկատմամբ միշտ առկայ է[97] եւ այդ պատճառաւ հայկական գործունէութիւնը եւ հայութեան պահանջքները աւելի դիւրաւ ընդունելի կ'ըլլան, քան այլ երկիրներու մէջ[98]:

Հայ Դատի Յանձնախումբը Յունաստանի մէջ յոյն քաղաքական գործիչներու հետ շատ լաւ յարաբերութիւններ կը պահպանէ, միաժամանակ՝ չէզոք քաղաքական կողմնորոշում ունի յունական կուսակցութիւններուն նկատմամբ եւ չի միաւորուիր (թէկուզ պաշտօնապէս) որեւէ քաղաքական ուժի հետ:

---

[95] Institutions and their Agents in Diaspora: A Comparison of Armenians in Athens and Alevis in Germany Martin Sökefeld and Susanne Schwalgin՝ http://www.transcomm.ox.ac.uk/working%20papers/schwal.pdf (7.11.2016):

[96] Αρμένικη Εθνική Επιτροπή Ελλάδος՝ http://www.armenianportal.gr/politiki/armeniki-ethniki-epitropi-ellados-deltio-typou (9.11.2016):

Մ. Նահանգներու մէջ, ցեղայնութիւնը իրաւական համակարգի տարր եղած է երկրի հիմնադրութեան ժամանակէն՝ ցեղապաշտութեան կողքին, որուն ամենէն խորհրդանշական երեւոյթը ստրկատիրութիւնը եղած է: Երկրի տիրական տարրը՝ սպիտակ, անգլօ-սաքսոն եւ բողոքական (WASP = White, Anglo-Saxon Protestant) ամերիկացիները, նախախնամական տնօրինումով երկիրը ծովէ ծով նուաճելու եւ անոր հարստութիւնը շահարկելու ամբողջական ազատութեամբ օժտուած էին, ու այսպիսով՝ իրենց ընկերային յառաջդիմութիւնն ու տնտեսական բարօրութիւնը ապահովելու: Տեղաբնիկ ցեղերը ջարդելու եւ անոնց մնացորդացը իբրեւ ստորադաս տարր իրաւազրկելու, ինչպէս եւ ԺԷ.-ԺԹ. դարերուն ներմուծուած սեւամորթ ստրուկները անոնց ազատագրումէն ետք երկրորդական քաղաքացիի դիրքին մէջ պահելու կողքին (1864-1965), տիրական մեծամասնութիւնը երկդիմի ու հակասական դիրքորոշումներով եւ անհամաչափ հակազդեցութեամբ դիմաւորած է այլ ցամաքամասերէ եկող մեծաքանակ գաղթականութիւնը, որ կու գար բաժնեկից ըլլալու ընկերա-տնտեսական յարաբերութիւններուն, ինչպէս եւ քաղաքական բռնութենէ խոյս տալու:

Այդ հակազդեցութեան անդրադարձող՝ սպիտակամորթութեան նուիրուած գրականութիւնը, յաճախ յիշած կամ համառօտ կերպով քննարկած է հայերու պարագան, զայն կապելով Ի. դարու առաջին տասնամեակներուն անոնց դիմագրաւած իրաւական խոչընդոտներուն հետ:

ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹԻՒՆ. ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՒ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ (ԺԸ.-ԺԹ. ԴԱՐԵՐ)

Ամերիկեան անկախութեան պատերազմի (1776-83) ընթացքին, ֆրանսացի դիւանագէտ Միշէլ տը Քրեւեքէօր արդէն հարց կու տար, թէ ո՞վ էր ամերիկացին ու կը պատասխանէր. «Եւրոպացի մըն է կամ եւրոպացիի մը շառաւիղը...»[3]: Սահմանադրութեան հռչակումէն ետք վաւերացուած 1790ի ամերիկեան հպատակութեան օրէնքը ամերիկացի դառնալու իրաւունքը կը սահմանափակէր «որեւէ օտարականի, որ ազատ սպիտակ անձ է» (“any alien, who are a free white person”): Հարաւային Քարոլինայի դատաւոր Հենրի Սմիթ, 1914ին սուրիացիի մը քաղաքացիութեան հարցը քննելով (*in re Dow*), ամէնայն անկեղծութեամբ հաստատած է. «*Միացեալ Նահանգներու միջին քաղաքացին այդ ժամանակ հաստատապէս համոզուած էր իր սեփական սպիտակ եւրոպական ցեղին գերակայութեան՝ աշխարհի մնացորդին վրայ: Ամերիկացի հնդիկներէն շատերը սպրկացուցած էր այդ հիմնաւորումով: Միեւնոյն սկզբունքով ու պատրաստակամու-*

[3] J. Hector St. John de Crèvecoeur, *Letters from an American Farmer and Sketches of Eighteenth-Century America,* Fox, Duffield, New York, 1904, էջ 54:

թեամբ, ան սպրկացուցած պիտի ըլլար մաւր մը, պետեւի մը, սուրհացի մը, թուրք մը կամ արեւելեան հնդիկ մը, եթէ իր ձեռքը անցած ըլլային»[4]: Քաղաքացիական պատերազմէն (1861-65) եւ ստրկութեան ջնջումէն (1864) ետք, քաղաքացիութիւնը կը դառնար նախկին տէրերուն եւ նախկին ստրուկներուն իրաւունքը միաժամանակ: Արդարեւ, 1870ին ԱՄՆ քոնկրէսը քաղաքացիութեան իրաւունքը շնորհած է «*օտարականներու, որոնք ազատ սպիտակ անձեր են, եւ ափրիկեան ծնունդով օտարականներու, եւ ափրիկեան ծագումով անձերու*», ըստ վերաքննուած օրէնքներու թիւ 2169 բաժնին[5]:

Իրաւաբան Ֆրանսիս Լիէպէր «ազատ սպիտակ անձեր» բանաձեւը հետեւեալ ձեւով մեկնաբանած էր. «*Ամէն ոք գիտէ, որ "սպիտակ" բառը կը գործածուի նշելու համար կովկասեան (Caucasian) ցեղին շառաւիղները, որոնց արիւնը խառնուած չէ սեւամորթներու, հնդիկներու կամ որեւէ այլ "գունաւոր" ցեղի արեան հետ: Դրոյթը չի կրնար չեղեալ համարուիլ այն առարկութեամբ, որ իրական սպիտակ մարդ գոյութիւն չունի*»[6]: Քաղաքացիական պատերազմին յաջորդած, այսպէս կոչուած Վերաշինութեան կարճատեւ շրջանի աւարտէն եւ խտրականութիւնը վերահաստատող օրէնքներու վաւերացումէն ետք (1876), յաջորդ իննսուն տարիներուն սեւամորթները տեղաւորուած են երկրորդ կարգի քաղաքացիութեան ոլորտի մը մէջ, «անջատուած բայց հաւասար», մինչ տեղաբնիկները՝ երկրի նախկին սեփականատէրերը, արդէն փաստացիօրէն իրաւազուրկ եւ յատուկ առանձնավայրերու (reservation) մէջ մեկուսացած դրսեցիներ, որոնց ամերիկեան քաղաքացիութիւնը իրաւականօրէն ճանչցուած է 1924ին. «*Ցեղը կեդրոնական էր ո՛չ միայն ծեւական, օրինաւոր քաղաքացիութեան համար (ո՞վ կրնար հպատակ դառնալ եւ ո՞վ հաշուի կ'առնուէր մարդահամարին մէջ), այլեւ քաղաքական միաւորման (polity) անդամակցութեան լայն զգացողութեան համար*»[7]: Ներքին գունաւոր վտանգին՝ սեւամորթներու եւ բնիկներու հաշիւը փակելէ ետք, արտասահմանէն եկող գունաւոր վտանգը՝ ոչ-սպիտակամորթ կամ «նուազ» սպիտակամորթ օտարականները դիմագրաւելու կարգն էր: Անձնական նկարագրի վրայ յենած «հաւա-

---

[4] "Cases Argued and Determined in the Circuit Courts of Appeals and Circuit and District Courts of the United States", *The Federal Reporter with Key-Number Annotations,* vol. 213, June-July 1914, էջ 365:

[5] William Mack and William B. Hale (eds.), *Corpus Juris: Being a Complete and Systematic Statement of the Whole Body of the Law,* vol. II, New York and London, The American Law Book Co. and Butterworth and Co., 1915, էջ 1113:

[6] Francis Lieber, *Legal and Political Hermeneutics, or Principles of Interpretation and Construction in Law and Politics,* Boston, Charles C. Little and James Brown, 1839, էջ 106:

[7] Ariela J. Gross, *What Blood Won't Tell: A History of Race on Trial in America,* Harvard University Press, Cambridge (Ma.) and London, 2008, էջ 8:

սարապաշտ» եւ ազգային ակունքներու վրայ հիմնուած «ցեղայնական» ընտրութիւններուն միջեւ ընթացած բանավէճը շուտով լուծուած է վերջինին ի նպաստ[8]: Ըստ էութեան, ցեղայնութիւնը ցանցնուած էր իւրաքանչիւր ժողովուրդի անդամներու ուղղուած անհատական որակումներով, որոնք ընդհանրական՝ տուեալ հաւաքականութեան յայտանշաններու վերածուած են:

Ցեղայնացման ենթարկուած եւ բնականօրէն ստորադաս նկատուած ոչ-սպիտակ կամ «նուազ» սպիտակամորթ օտարականները հնարաւոր վտանգ մը կը ներկայացնէին սպիտակամորթներու (որոնց հիմնական տարրը անգլօ-գերմանական ծագում ունէր) բացայայտ ճակատագրին համար: ԺԹ. դարու վերջին քառորդին եւ Ի. դարու առաջին երկու տասնամեակներուն տեղի ունեցած ամերիկեան պատմութեան ամենամեծ գաղթալիքին անմիջական հետեւանքը եղած են խռովքն ու անձկութիւնը՝ աշխատատեղերու եւ տնտեսական ապահովութեան հնարաւոր կորուստին շուրջ, երկրի թէ՛ արեւելեան եւ թէ՛ արեւմտեան շրջաններուն մէջ: Այդ խռովքը պիտի աճէր ու բարձր մակարդակի հասնէր, ծնունդ ու սնունդ տալով բնիկապաշտ (nativist) զգայնութեան, որ պիտի օգտուէր արդէն ճամփայ գտած ընկերային տարվինականութենէն՝ օտարատեաց ցեղապաշտութեամբ սնելու եւ ուրոյն տեսակէտեր յառաջ բերելու համար: Դեռակուտական Չարլզ Սըմնըրի առաջարկը (1870)՝ «սպիտակ» բառը ջնջելու քաղաքացիութեան օրէնքի թիւ 2169 բաժնէն եւ, այսպէսով, այդ օրէնքը անկախութեան յայտարարութեան եւ սահմանադրութեան հաւասարազօր դարձնելու՝ պարտութեան մատնուած է արեւմտեան նահանգներու վճռական քուէով, քանի որ հպատակութեան դիմելու իրաւունք պիտի տար Խաղաղականի ափին հաստատուած ու անցանկալի համարուած չինացիներուն[9]:

Բնիկապաշտութեան կեդրոնական պատուարը՝ Քալիֆորնիա, 1882ին յաջողած է Չինացիներու Բացառման դաշնակցային օրէնքին վաւերացումը: Յաջորդ վաթսուն տարիներուն, տասնամեայ երկու երկարաձգումներու ենթարկուած այս օրէնքը «դեղին» գաղթականութիւնը արգիլած է, ինչպէս եւ չինացիներուն ամերիկեան քաղաքացիութեան շնորհումը, մինչեւ վերջնական չեղարկումը 1943ին: Անոր հետեւած են իրացական (concrete) գործողութիւններ «սպիտակ», «սեւ» եւ «դեղին» ցեղերուն միջեւ տեսականօրէն գտնուող, այսպէս կոչուած «սրճագոյն» (brown) կամ «սպիտական-

[8] Patrick Weil, "Races at the Gate: Racial Distinctions in Immigration Policy. A Comparison between France and the United States", տե՛ս՝ Andreas Fahrmeir, Olivier Faron, and Patrick Weil (eds.), *Migration Control in the North Atlantic World: The Evolution of State Practices in Europe and the United States from the French Revolution to the Inter-War Period,* Berghahn Books, New York, 2003, էջ 272:

[9] Max J. Kohler, "Naturalization and the Color Line", *Journal of the American Asiatic Association,* February 1907, էջ 10:

ման» (off-white) տարրերուն դէմ[10]: Ամենէն ցայտուն պարագաները եղած են հնդիկները եւ ճափոնցիները. ամերիկեան դատարանները երկիցս մերժած են վերջիններուն հպատակութեան իրաւունքը 1907էն առաջ, իսկ նոյն տարուան ճափոնա-ամերիկեան Ասպետական Համաձայնութիւնը կտրուկ կերպով նուազեցուցած է անոնց գաղթականութիւնը: Աշխատանքի Ամերիկեան Դաշնակցութեան (American Federation of Labor) հիմնադիրն ու առաջին նախագահը՝ Սեմուըլ Կոմփըրզ, որ չինական օրէնքին գլխաւոր մղիչ ուժերէն եղած էր, յստակօրէն նշած է 1902ին. «*Վաթսուն տարուան շփում չինացիներու հետ, քսանհինգ տարուան փորձառութիւն ճափոնցիներու հետ, եւ երկու-երեք տարուան ծանօթութիւն հնդիկներու հետ պէտք է բաւարար ըլլան՝ սովորական խելացի մարդ մը համոզելու, որ անոնք իբրեւ կովկասեան [= սպիտակամորթ - Վ.Մ.] դատուելու չափանիշեր չունին*»[11]:

ՀԱՅԵՐԸ ԻԲՐԵՒ ԱՆՑԱՆԿԱԼԻ ՏԱՐՐ

Բնիկապաշտութիւնը սկսած էր աճիլ Շիքակոյի Հէյմարքէթ հրապարակի ռմբահարումէն, անոր յաջորդող խռովութենէն ու եւրոպական ծագումով ութը անիշխանականներու կախաղան բարձրացումէն ետք (Մայիս 1886): 1887ին, *Public opinion* շաբաթաթերթը քաղաքական տարբեր ուղղութիւններու թերթերու կարծիքները հաւաքած է գաղթականութեան մասին՝ խորագիրերու հասարակաց յայտարարի մը տակ. «Բացարձակ վտանգ մը», «Ընկերային պատուհաս եւ հրձիգներ», «Կը սպառնան մեր ազգային շէնքին կործանումը», «Պէտք է դուրս պահուին», «Սահմանափակման պահանջ մը», «Պէտք է խստիւ բացառենք զանոնք», «Օտարականները պարսերով կու գան», եւ ուրիշներ[12]: Աշխատանքի Ասպետներու

[10] 1826ին, աշխարհացոյց մը հայերը կ'ընդգրկէր «սպիտակ ցեղի առաջին բաժանմունքին» կամ «ամենէն սրճագոյնին» ("brownest") մէջ՝ արաբներու, հին եբրայեցիներու, տիւրզիներու, հիւսիսային ափրիկեցիներու, եթովպացիներու, հնդիկներու, պարսիկներու, սուրիացիներու, վրացիներու եւ մենկրելներու հետ (John L. Blake, *A Geographical, Chronological, and Historical Atlas,* Cooke, New York, 1826, էջ 103):

[11] Samuel Gompers and Herman Gutstadt, *Meat vs. Rice: American Manhood against Asiatic Coolieism. Which Shall Survive,* Asiatic Exclusion League, San Francisco, 1908, էջ 17: Հակաճափոնական նկրտումը կ'արձագանգէր Ճափոնի քաղաքական ու զինուորական ծաւալումին առթած անձկութեան. անգլօ-ամերիկացիներու դէպի արեւմուտք ծաւալումի հասկացութեան դէմ, «*ճափոնցիները տեսան երկու մշակութային մղումներ, որոնք կը բախէին քաղաքակրթութեան ծագումնային նստատեղիէն՝ Պարսկաստանի եւ Հայաստանի մէջ, մէկը դէպի արեւելք եւ մէկը դէպի արեւմուտք*», Ճափոնը ընկալելով որպէս Եւրոպայի եւ Ասիոյ լաւագոյն համադրութիւնը (Mae M. Ngai, *Impossible Subjects: Illegal Aliens and the Making of Modern America,* Princeton University Press, Princeton and London, 2004, էջ 38):

[12] "Undesirable Immigration", *Public Opinion,* April 30, 1887, էջ 49-51:

(Knights of Labor) կազմակերպութեան ղեկավարը՝ Թոմըս Փաուտըրլի, 1888ին, Հռոմէական Կայսրութեան անկումի ժամանակը ոգեկոչող շեշտով կը խօսէր գաղթականներու «կիսաբարբարոս հորդաներու սպառնալից ներխուժումին» մասին: Այդ շեշտադրումը յաջորդ քառասնամեակին հակագաղթականական գրականութեան յատկանշական երեսներէն մէկը պիտի ըլլար[13]: 1890ականներուն, հարաւ-արեւելեան եւ արեւելեան Եւրոպայէն գաղթականութիւնը սկսած է մեծաքանակ հոսիլ դէպի Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկա, իսկ 1901-10ին, Մ. Նահանգներ մուտք գործողներու տարեկան թիւը չորս անգամ միլիոնը պիտի անցնէր: Անոնք սպիտակամորթ էին, ինչպէս աւելի հին գաղթականները, բայց անոնց մորթին սպիտակութիւնը, ըստ անգլօ-սաքսոն չափորոշիչներու, աւելի ցած աստիճանի էր. օտարական էին, ինչպէս աւելի հին գաղթականները, բայց անոնց այլութիւնը (otherness) անգլօ-սաքսոն ընկերութեան համարկուելու անկարողութիւն որակուած էր: ԱՄՆի հիւսիս-արեւմուտքի քաղաքական, ընկերային եւ մշակութային ընտրանին, որ Նիւ Ինկլընտի շրջանի բարձրակարգ համալսարանները (Հարվըրտ, Եէյլ եւն.) դաստիարակուած էր, կը հետեւէր արեւմտեան Եւրոպայի նորագոյն միտումներուն՝ մարդաբանութեան եւ յարակից գիտութիւններու մէջ, եւ ցեղային մաքրութեան ու անգլօ-սաքսոնականութեան ինքնակոչ պաշտպանի ու ախոյեանի դերը ստանձնած է:

1880-90ականներուն, իրլանտացիներու եւ անոնցմէ «անիծապարտ թուրքեր» (God damned Turks) նախատալից ծաղրանունին արժանացած հայերու միջեւ կռիւներու դէպքեր արձանագրուած են հնագոյն հայկական գաղթավայրին՝ Ուստրի մէջ (Մեսեչուսէց)[14]: Յաջորդ երեսնամեակին, հայերը, իբրեւ նորագոյն գաղթալիքին մէկ մասը, ոչ-բարեկամական նկրտումներու հանդիպած են ԱՄՆի արեւելեան ափին, շեշտօրէն ցեղապաշտ տեսակէտերու հետեւողական թիրախ դառնալով: Նոյն երեւոյթը նաեւ, աւելի երկարատեւ բնոյթով, արձանագրուած է Քալիֆորնիա, յատկապէս՝ Ֆրեզնոյի մէջ:

«Նոր» գաղթականութեան ամենէն բուռն հակառակորդներէն մէկը՝ ծերակուտական Հենրի Քապոթ Լոճ, 1891ին զայն բնորոշած է իբրեւ «*ցեղեր, որոնց հետ անգլիախօս մարդիկ ցարդ երբեք չեն խառնուած, եւ որոնք ամբողջովին օտար են Մ. Նահանգներու ժողովուրդի մեծ մարմինին*»[15]: Նոյն տարին գրուած ուրիշ յօդուածի մը մէջ, Լոճ իր ընդդիմադիր

[13] David R. Roediger, *Working toward Whiteness: How America's Immigrants Became White. The Strange Journey from Ellis Island to the Suburbs.* Basic Books, New York. 2005, էջ 14-15:

[14] Robert Mirak, *Torn Between Two Lands: Armenians in America 1890 to World War I,* Harvard University Press, Cambridge (Ma.), 1983, էջ 142:

[15] Henry Cabot Lodge, *Speeches and Addresses, 1884-1909,* Houghton Mifflin Company and The Riverside Press Cambridge, Boston and New York, 1909, էջ 247:

դիրքորոշումը ամրացուցած է շարան մը տուեալներով, որուն միացուցած է կառավարութեան եւրոպական գաղթականութեան բաժանմունքի զեկոյցէն մէջբերում մը, որ Արեւելքէն գաղթի աճը կը մատնանշէր: Մէկ կողմէ, գրած է Լոճ, «սուրիացիներն ու հայերը կը սկսին ժամանել», իսկ միւս կողմէ՝ «*ամենէն անցանկալի գաղթականները ռուս հրեաներն են, որոնք մեծաւ մասամբ շրջիկ մանրավաճառներ են*»[16]: 1901ին, Սիաթըլի *Վեստրա փոստէն* շուէտական թերթը իր համաձայնութիւնը պիտի յայտնէր Լոճի մէկ ուրիշ առաջարկին, թէ նախընտրելի էր հայերը, յոյները եւ թուրքերը (իմա՛ սուրիացիները) Փիլիպպեան Կղզիները ճամփել[17]:

Նախորդ երկու դարերուն, Մ. Նահանգներու բնակչութեան մայր գիծի աղբիւրը եղած էր այն նոյն ցամաքամասը՝ Եւրոպան, որմէ կու գային մեղադրանքի տարափին տակ գտնուող նորեկները: Այսպիսի բարբաջանքները կը ցոլացնէին հոգեբանական անձկութիւն մը, որ իր բացայայտ դրսեւորումը ունեցած է 1896ին, երբ ԱՄՆի մարդահամարի նախկին գերատեսուչ Ֆրենսիս Ուոքըր գրած է, թէ եկուորները «ծեծուած ցեղերէ ծեծուած մարդիկ են», որոնք «*կը ներկայացնեն ամենէն խոր ծախողութիւնը գոյապայքարի մէջ եւ որոնց կը պակսին այն գաղափարներն ու կարողութիւնները, որոնցմով մարդիկ յանձն կ'առնեն (...) սեփական խնամքի եւ ինքնակառավարման խնդիրը*»[18]: Պատմութիւնը ականատես եղած էր Նոր Աշխարհ ժամանող իտալացի հետախոյզներուն եւ աշխարհի գիտութիւնը յեղաշրջող կարգ մը գիւտերու հեղինակ արաբներուն, բայց տիրող գաղափարաբանութիւնը կանգ չէր առներ նման մանրամասնութիւններու առջեւ: Ենթադրաբար, նոր գաղթականները զուրկ էին անգլօ-սաքսոններու նախաձեռնութեան ոգիէն: Գաղթականութեան ընդդիմադիրները կը ձեռնարկէին գաղթականներու կրթութեան պարտադիր քննութիւնը հաստատելու կոչուած օրինագիծի մը վաւերացումին նուիրուած արշաւ մը. նորեկները ենթադրաբար «պակաս խելացի» էին, այսինքն՝ անգրագէտ: 1897ին, Փրեսքոթ Հոլ՝ Գաղթականութեան Սահմանափակման Լիկայի հիմնադիր քարտուղարը, այս կէտը կը շեշտէր հռետորական հարցումով, թէ արդեօք ամերիկացիները «*կ'ուզե՞ն, որ այս երկիրը բնակեցուի բրիտանական, գերմանական եւ սկանտինաւեան ցեղերով, պատմականօրէն*

Լոճ պիտի անդամակցէր 1918ին Վահան Գարտաշեանի կազմակերպած Հայաստանի Անկախութեան Ամերիկեան Կոմիտէին (Armenian Committee for the Independence of Armenia), իսկ 1920ին Հայաստանի առաջին անկախ Հանրապետութեան ամերիկեան հոգատարութեան առաջարկը ձախողութեան պիտի մատնէր, իբրեւ ծերակոյտի անոր ընդդիմութեան պարագլուխներէն մէկը:

[16] "The Need for Restricting Immigration", *The Review of Reviews,* June 1891, էջ 589:

[17] Jorgen Dahlie, *A Social History of Scandinavian Immigration, Washington State, 1895-1910,* Arno Press, New York, 1980, էջ 109:

[18] Francis A. Walker, *Discussions in Economics and Statistics,* vol. II, Henry Holt and Company, New York, 1899, էջ 447:

ազատ, ուժական եւ յառաջդիմական, կամ սլաւական, լատինական եւ ասիական ցեղերով, պատմականօրէն հալածուած, առհասական եւ լճացած»[19]: Նոյն տարին, թէեւ Լիկան յաջողած է օրինագիծին վաւերացումը քոնկրէսի կողմէ, բայց նախագահ Կրովըր Քլիվլընտ զայն վեթոյի ենթարկած է: Այդ ուղղութեամբ կատարուած վերանորոգ փորձերը ձախողութեան պիտի մատնուէին յաջորդ երկու տասնամեակներուն:

1897ին, Փաուտըրլիի ներգաղթի ընդհանուր լիազօր նշանակումով, յաջորդ տարի, գաղթականութեան գրասենեակը գործադրութեան դրած է ինքնաստեղծ, 35 անուններէ բաղկացած «Ցեղերու եւ ժողովուրդներու ցանկ» մը, որ գաղթականներու դասակարգումի հիմք դարձած է մինչեւ 1952: Ցանկին հիմքը բացայայտօրէն ցեղային եւ ո՛չ թէ աշխարհագրական ծագումն էր: Ցեղը կը գործածուէր «ժողովրդային», աւելի քան «ազգաբանական» իմաստով, ըստ Փաուտըրլիի, թէեւ անուններէն ո՛չ մէկը ցեղային մասնայատկութիւն ունէր: Այդ անուններուն շարքին էր "Armenian"ը, թէեւ հետաքրքրական է, որ որեւէ այլ միջինարեւելեան ժողովուրդ ընդգրկուած չէր: Սակայն, մինչեւ 1903, ճամփորդական ցուցակները ցեղի վերաբերեալ որեւէ հարցում չեն պարունակած[20]:

Միջոցին, 1890ականներու համիտեան ջարդերը, սովը եւ գործազրկութիւնը հայերու զանգուածային գաղթը խթանած էին: 1891-98ին, Մ. Նահանգներ մտած են 12,500 հայեր՝ նախորդ վաթսուն տարիներէն (1500 հոգի) ութը անգամ աւելի[21]: Իհարկէ, լրիւ անծանօթ չէին, շնորհիւ 1830ականներէն ամերիկացի միսիոնարներու գործունէութեան Օսմանեան Կայսրութեան մէջ, որոնք հայերը սահմանած էին իբրեւ «Արեւելքի անգլօ-սաքսոններ» ("Anglo-Saxons of the East")[22]: Ինչպէս յայտնի է, Փոքր Ասիոյ մէջ տարածուած ամերիկեան վարժարաններու շրջանաւարտները Ամերիկա գաղթած առաջին հայերու շարքին եղած են 1870-80ականներէն:

Համիտեան ջարդերէն ազատած 200-300 հայ փախստականներ, որոնք Նիւ Եորք բերուած էին անգլիացի եւ ամերիկացի մարդասէրներու

---

[19] Prescott F. Hall, "Immigration and the Educational Test", *The North American Review,* October 1897, էջ 395:

[20] Roediger, էջ 15-16. նաեւ՝ Weil, էջ 273:

[21] Mirak, էջ 71:

[22] Rev. H. G. O. Dwight, *Christianity in Turkey: A Narrative of the Protestant Reformation in the Armenian Church,* James Nisbet, London,1854, էջ 14: Այս արտայայտութեան ծագումը արդէն մոռցուած էր վեց տասնամեակ ետք. «*Ֆիզիքապէս, մտապէս եւ բարոյապէս, հայերը աշխարհի միւս ցեղերուն հաւասար են: (...)* Անոնք կը նուաճեն բարձրագոյն տեղերը կրթական մշակոյթի մէջ. այսօրուան Ամերիկայի մէջ, բազմաթիւ հայեր ղեկավար դիրքեր կը վարեն գոլէճներու եւ համալսարաններու մէջ: Արեւելականութիւն (Orientalism) չկայ հայ մտքին մէջ: *Թուրքերը* զիրենք կոչած են Արեւելքի "անգլօ-սաքսոնները"» (Nishan Der-Hagopian, "Persecuted Armenia", *The Century,* September 1918, էջ 662. ընդգծումը մերն է):

կողմէ, ընդդիմութեան հանդիպած էին ու անշարժութեան մատնուած՝ Էլիզ Այլընտի գաղթականին մէջ: Պոստոնի գաղթականութեան լիազօր Թոմըս Տելըհընթի խոստացած է փախստականներ ետ դարձնել Թուրքիա, եթէ հանրային բեռ հռչակուէին, «նոյնիսկ եթէ հաւանական ըլլար, որ թրքական դաժանութեան ձեռքը իյնան», իսկ երբ տարաձայնութիւններ եղած են, թէ անոնք՝ «հայերու հորդա մը, որոնք օտարական ու աղքատ էին», կրնային Նիւ Ճըրզի հաստատուիլ, նահանգի բնակիչները բողոքած են «ընդդէմ յիշեալ օտարականներուն ու աղքատներուն՝ համայնքը ղրկելու մասին»: Ամերիկացիներու եւ հայերու ջանքերը, ի վերջոյ, ապահոված են նորեկներուն ազատ արձակումը[23]:

Հետաքրքրական է նշել, որ արեւելեան նահանգներուն մէջ տարածուած ժխտական քարոզչութեան փոխարէն, Նիւ Մեքսիքօ նահանգի հանրային դպրոցներու վերակացուն նոյն տարին ընդունած էր հայոց օժանդակութեան Շիքակոյի յանձնախումբի առաջարկը՝ նահանգին մէջ հայ վերաբնակիչներ տեղաւորելու: Լրատուութիւնը կ'աւելցնէր, թէ «*ան հայերու նկարագիրը ուսումնասիրած է եւ զանոնք կը համարէ վերաբնակիչներու շատ ցանկալի դասակարգ մը*»[24]:

Հայ գաղթականները նկարագրային երկու գիծեր կը բերէին: Բոլորին յատուկ էր թշնամական միջավայրի մէջ վերապրելու ընդունակութիւնը, իսկ աւետարանական հայերու պարագային՝ ամերիկեան ընկերութեան բարոյականութիւնը (ethics)[25]: Այսուհանդերձ, անոնց ժամանումը հակասական կերպով ընկալուած է: Սեմուէլ Քոքս՝ ամերիկեան նախկին դեսպան Օսմանեան Կայսրութեան մէջ, զանոնք նկատած էր «աշխարհի ամենէն սուր միտք ունեցող մարդիկը» եւ «Արեւելքի եանքիները՝ առաւել մտային սրութեամբ»[26]: Ըստ պատմաբան Ճոն Ռիտփաթի, հայերը «արեւելեան Եւրոպայի ժողովուրդներէն ոչ-շատ տարբեր» էին դիմագծով եւ «խորամանկ ու բաւական մտաւորական ցեղ» մը, որ «*եթէ չըլլար հին՝ կրօնական եւ ընկերային աւանդութիւններու հետեւանքը, արդիական լաւ զարգացման ընդունակութիւն պիտի ունենային*»[27]: Ուրիշ պատմաբան մը՝ Պենճըմին Հուիլըր, յայտարարած է, որ հայերու ուժականութիւնը, գործունէութիւնը եւ ձեռքբերումի (acquisition) նախասիրութիւնը «գրեթէ գեր-արեւմտեան» էին: Դրուատելով մանրամասնութիւններու հանդէպ անոնց սուր

---

[23] Mirak, էջ 69:

[24] "New Mexico Offers Homes to the Armenians", *The Irrigation Age,* February 1896, էջ 97-98:

[25] Sarkis Atamian, *The Armenian Community: The Historical Development of a Social and Ideological Conflict,* Philosophical Library, New York, 1955, էջ 131:

[26] Samuel S. Cox, *Diversions of a Diplomat in Turkey,* Charles L. Webster, New York, 1887, էջ 181:

[27] John Clark Ridpath, *Great Races of Mankind, vol. I,* Jones Brothers, Cincinnati, 1893, էջ 612-13:

միտքը, զանոնք բնորոշած է իբրեւ անձնասէր, ֆիզիքապէս ոչ-գրաւիչ եւ ազնուականութիւն ու սեփական անձի հանդէպ յարգանք չունեցող[28]:

Զանազան հայ եւ հայասէր գրողներ, մեծաւ մասամբ՝ աւետարանական, աշխատած են հայոց եւրոպական նկարագիրը հաստատել: 1892ին, վեր. Մկրտիչ Գաբրիէլեան կը գրէր. «*Գիտնականները կ'ընդունին, որ հին հայերը մօտէն կապուած էին հին արիացիներուն հետ (...) որ արիացի էին եւ անոնց օրինական շառաւիղները այսօր կը խօսին լեզու մը, զոր արդի ազգաբանները վճռապէս կը դիտեն, որ կը պատկանի արիական կամ հնդկա-գերմանական լեզուներուն*»[29]: Երկու տարի ետք, Անդրանիկ Աժտէրեան շեշտօրէն կը զանազանէր հայերը եւ թուրքերն ու առհասարակ արեւելքցիները. «*Հայերը, որոնք ծանօթ են իբրեւ "Արեւելքի անգլօ-սաքսոնները", զուտ կովկասեան արիւն ունին եւ կը պատկանին արեւմտեան քաղաքակրթութեան յառաջիմական ազգերուն, ցեղերու մեծ արիական ընտանիքին, մինչ թուրքերը՝ ասիացիներու զօրաւոր բազմութեան մը հետ, թուրանական ցեղին կը պատկանին եւ մոնկոլեան արիւն ունին*»[30]:

Համիտեան ջարդերուն նուիրուած յօդուածի մը մէջ, եգիպտաբան Հենրի Հայվըրնաթ գրած է, թէ «արդի հայերը ամբողջութեամբ կը պատկանին սպիտակ արիական ցեղին»[31], այսինքն՝ տիրական ցեղին անդամ էին եւ անոր լեզուներէն մէկը կը խօսէին: Ոմն Ճորճ Ուիլսըն ցեղային հիմքով դաշինքներ կը հոլովէր, յայտնելով, թէ «հին ցեղին մաքրագոյն» մարդիկը Սկանտինաւիոյ եւ Ռուսաստանի մէջ կ'ապրէին, ինչպէս եւ Ամերիկայի սկզբնական բնակութեան նահանգներուն մէջ (Վըրճինիա եւ Հիւսիսային ու Հարաւային Քարոլինա), իսկ «արիական արիւնը տկարագոյն» էր երկրի հիւսիս-արեւելեան շրջանին մէջ: Հետեւաբար, կ'եզրակացնէր, թէ ամերիկացիները պէտք է դաշնակցէին Ռուսաստանի հետ՝ Թուրքիոյ յաղթելու եւ «մեր արիացի ազգական հայերը ազատելու համար», բայց *«այսօրուան գրեթէ ոչ-արիացի անգլիացիները հայկական բնաջնջումը կը դիտեն առանց յուզուելու, մինչդեռ եթէ պարզապէս "արիացի" բառը ըսէինք, Ռու-*

---

[28] Benjamin Ide Wheeler, "Greece and the Eastern Question", *Atlantic Monthly,* էջ 727-28:

[29] Rev. M. C. Gabrielian, *The Armenians, or the People of Ararat,* Allen, Lane, and Scott, Philadelphia, 1892, էջ 123: Այս պարբերութիւնը բառացիօրէն կրկնուած է պատ. Օհան Կայծակեանի հատորին մէջ (Rev. Ohan Gaidzakian, *Ilustrated Armenia and the Armenians,* B. H. Asnive, Boston, 1898, էջ 89), որ բանաքաղուած է Գաբրիէլեանի գիրքէն:

[30] Antranig Azhderian, *Under Oriental Skies or Asia Minor and Her Inhabitants,* The Williams Publishing and Electric Company, Cleveland, 1894, էջ 85:

[31] Rev. Henry Hyvernat, "Armenia, Past and Present", *The Catholic World,* December 1895, p. 314: Վերատպումը տե՛ս՝ Arman J. Kirakosian (ed.), *The Armenian Massacres 1894-1896: U.S. Media Testimony,* Wayne State University Press, Detroit, 2004, էջ 102:

սաստանը մեզի պիտի միանար թուրքը հին արիական փունէն՝ Ասիայէն վտարելու համար...»[32]:

Վեր. Գէորգ Ֆիլեան կը յայտարարէր, թէ հայերը «*կը պատկանին նախապէս յաբեթական, յետոյ կովկասեան (Հայաստանի հիւսիսը գտնուող Կովկաս լեռնէն), այնուհետեւ հնդեւրոպական, եւ այժմ արիական կոչուող ցեղին՝ մարդկութեան ամենէն յառաջադէմ տեսակը եւ ֆիզիքապէս ամենէն գեղեցիկը*»[33]: Երկրի հոչակաւոր կրօնական ղեկավարներէն վեր. Թոմըս Տըուիթ Թալմէյճ, վերջինիս կ'արձագանգէր, նկարագրելով Հայաստանը իբրեւ Ադամի ու Եւայի դրախտավայրը եւ Նոյեան տապանի կանգնումի վայրը, որուն բնակիչները «կովկասեան տիպի բարձրագոյն տեսակ մըն են»[34]: Վեր. Ֆրետըրիք Կրին կը գրէր, թէ հայերը կը պատկանէին «յաբեթական ճիւղին», իսկ «*անոնց դիմագիծն ու ֆիզիքական կազմուածքը զիրենք կը կապեն կովկասեան ցեղի լաւագոյն տեսակներուն հետ*»[35]: Յառաջադէմ եւ վայելուչ ցեղերուն հետ նոյնացումը ուղղուած էր մուտք գործելու ամերիկեան ցեղայնական գիտակցութեան մէջ: Ֆիլեան, յիշելով, որ անգլօ-սաքսոնները «կ'օգնեն իրենց հոգեկան եղբայրները՝ Արեւելքի անգլօ-սաքսոնները», գրած է. «*Եւ ի՞նչ է Միացեալ Նահանգներու ժողովուրդը: Քամական կամ սեւակե՞րպ (Negroid): Անշուշտ՝ ոչ: Սեմակա՞ն (արաբ, հրեայ): Որոշապէս՝ ոչ: Յաբեթական կամ արիական* են նաեւ՝ ճիշտ *հայերուն պէս: Ի հարկէ, դէմքի տեսակը նոյնն է, ինչպէս եւ նկարագրի տեսակը*»[36]:

1898ին, Աժտէրեան կը կրկնէր հայեր-կովկասցի-արիական-արեւմտեան եւ թուրքեր-ասիացի-թուրանեան-մոնկոլեան-արեւելեան համեմատութիւնը, վերջիններուն մասին աւելցնելով. «*Այսպիսով, անոնք չեն պատկանիր նոյնիսկ յաջորդ լաւագոյն ցեղին՝ սեմականին, այլ ցեղային սանդուխի ստորին տեղը կը գտնուին*»[37]: Արամայիս Վարդուկեան, քննադատելով Հայկական Հարցին նուիրուած միսիոնարական այն գիրքերը, որոնք առիթէն օգտուած էին յարձակում գործելու Հայ Առաքելական Եկեղեցւոյ վրայ, դիտել տուած է, որ «*հայերը, իբրեւ ցեղ, բոլորը պատկանելով ազ-*

---

[32] George Wilson, *The Financial Philosophy or The Principles of the Science of Money*, Henneberry and Co., Chicago, Donnohue, 1895, էջ 219:

[33] George H. Filian, *Armenia and Her People or the Story of Armenia by an Armenian,* American Publishing Company, Hartford (Ct.), 1896, էջ 41:

[34] James Wilson Pierce (ed.), *Story of Turkey and Armenia*, R. H. Woodward, Boston, 1896, էջ 332:

[35] Frederick Greene, *The Rule of the Turk,* G. P. Putnam's Sons, New York and London, 1896, էջ 132:

[36] Filian, էջ 41, 104.

[37] Antranig Azhderian, *The Turk and the Land of Haig or Turkey and Armenia: Descriptive, Historical, and Picturesque,* The Mershon Company, New York, 1898, էջ 64:

գային Եկեղեցւոյ, իրենց ցեղային իւրայատկութիւնը պահած են: Հայերը ցեղ են, բայց թուրքերը՝ ո՛չ: Հայերը խառնուրդ մըն են ցեղային բազմաթիւ տեսակներու եւ անոնց ազգութեան բաղկացուցիչը կրօնքն է»[38]:

Այն հաւաստիացումները՝ թէ հայերը «*արեւմուտքցիներու նոյն արիւնը, դիմագծերը, կրօնքը եւ քաղաքակրթութիւնը ունին, եւ անոնց իսկական եղբայրներ ու քոյրեր են (...)*»[39], հակազդած են օրուան ցեղային տեսութիւններուն եւ ամերիկեան հիմնադրական պատումին: Սակայն, հրապարակ իջած հայազգի եւ հայասէր գրիչները պիտի չհասնէին իրենց նպատակին: Սպիտակամորթ, եւրոպական եւ բողոքական պատկանելիութեան պնդումները հակագաղթականական հոսանքը համոզելու բաւարար չէին, բայց 1916ին պիտի յիշուէին իբրեւ օրինակ, թէ ինչպէ՞ս ամերիկեան իրարայաջորդ կառավարութիւնները «թոյլ տուած են որ իրենց օտարերկրեայ քաղաքականութիւնները քուէով առաջարկուին», պնդած է ԱՄՆի նախկին արտաքին գործոց օգնական նախարար Ճոն Քալըն Օ'Լոլին, որ աւելցուցած է, թէ *«մեր հայերը, բարեմիտ միսիոնարներու զօրակցութեամբ, գրեթէ պատճառ դարձան Մ. Նահանգներու եւ Թուրքիոյ միջեւ պատերազմի*»[40]:

Արդարեւ, հակագաղթականութեան ցեղային տեսաբանը՝ ընկերաբան Ուիլիըմ Ռիփլի, կը կարծէր, որ արիական լեզուներ խօսողներ չկային Կովկասի մէջ, բայց վստահ չէր, թէ հայերն ու հրեաները սեմական լեզուական ընտանիքի ներկայացուցիչներն էին շրջանին մէջ: Ցայտուն հակասութիւն մը կար իր կասկածներուն մէջ. Ռիփլի գրած է, թէ հայերէնը «*կը թուի* արիական ըլլալ», այս արտայայտութեան կցելով ծանօթագրութիւնը՝ «եթէ հայերէնը իրանական, սեմական կամ եզակի է, *վստահաբար* արիական է»[41]: Բնագէտ Ուիլէթ Ռոցէլ ա՛լ աւելի հետեւողականութեան պակաս ցուցաբերած է, որդեգրելով հայերու հինցած սեմական դասակարգումը («*բաւական խելացի եւ ինքնատիպ, [բայց] անոնց կը պակսի այն յարատեւութիւնը, որ այնքան անհրաժեշտ է մնայուն յառաջդիմութեան համար*») եւ զանոնք խմբաւորելով քաղդէական ճիւղին մէջ՝ սուրիացիներու, ասորեստանցիներու, բաբելացիներու եւ հրեաներու հետ: Սակայն, միւս

---

[38] Armais P. Vartooguian, *Armenia's Ordeal: A Sketch of the Main Features of the History of Armenia,* n.p., New York, 1896, էջ 42:

[39] Filian, էջ 41.

[40] John Callan O'Laughlin, *Imperiled America: A Discussion of the Complications Forced upon the United States by the World War,* The Reilly & Britton Co., Chicago, 1916, էջ 38:

[41] William Z. Ripley, *The Races of Europe: A Sociological Study,* New York, D. Appleton, 1899, էջ 436, 438, 443 (ընդգծումը մերն է):

կողմէ, զանոնք յիշած է իբրեւ արիական լեզուական ընտանիքի տասը խումբերէն մէկը[42]:

Հուիլըր դիտել տուած է, որ Արեւմուտքի յատկանիշները՝ ստեղծագործութիւն, յառաջդիմութիւն եւ անհանգստութիւն, կը հակադրուէին Արեւելքի անշարժութեան, համակերպութեան եւ լճացման: Հայերը սահմանած է որպէս «անձնապէս անհրապոյր», «չափազանց վրդովեցուցիչ» եւ «վնասական անձեր», Թուրքիան բնորոշելով իբրեւ «խորապէս արեւելեան, ներկայացուցչականօրէն արեւելեան իր քաղաքական ոգիով», որուն «հաւասարակշիռ կառավարութեան պակասը» գլխաւոր պատճառը եղած էր, որ հայերը դառնային «պատուհաս մը կայսրութեան համար»: Սակայն, աւելցուցած է, որ հայերը «*սեփական լեզու, գրականութիւն եւ կրօնք, ազգային ու ցեղային լաւ սահմանուած փեսակ ունին, եւ մենք՝ արեւմուտքցիներս, կը հաւատանք, որ անհատականութեան եւ անձնաւորութեան այսքան փարրեր ունեցող ժողովուրդ մը սեփական կառավարութեան իրաւունք ունի*»[43]:

Գրագիտութեան քննութիւն հաստատելու ձախող փորձերէն մէկուն ընթացքին, Սահմանափակման Լիկայի գործադիր յանձնախումբի ատենապետ Ռոպըրթ Տըքուրսի Ուորտ 1902ին կոչ ուղղած է «*սահմանափակելու մեծաքանակ ոչ-որակեալ մշակներու գաղթականութիւնը, որոնք այժմ այս երկիրը կու գան հարաւային եւ արեւելեան Եւրոպայէն ու Ասիայէն՝ Նիւ Եորքի նաւահանգիստի միջոցով*», աւելցնելով.-

> Աւելի՛ն. ընդունելով հանդերձ, որ ներկայ անգրագէտ գաղթականներէն շատերը կարելի է գործի լծել անմիջապէս՝ ցած աշխատավարձով, մեր ներկայ արտակարգ բարգաւաճումի վիճակին մէջ, պէտք է յիշուի, որ այս ծանր ձեռային աշխատանքը կատարողները մեր անգրագէտ գաղթականներուն ամբողջութիւնը չեն կազմեր: Այսպէս, մինչ հարաւային իտալացիները, լեհերն ու սլովաքները կրնան ներկայիս ծանր ձեռային աշխատանք գտնել, մեր գաղթականներուն մեծագոյն մասը, ինչպէս, օրինակ, եբրայեցիները, սուրիացիները, հայերը եւն., սովորական մշակներ չեն դառնար[44]:

Բժիշկ Ալան ՄաքԼոլին նախատալից յօդուածի մը մէջ պնդած է, որ սուրիացիներն ու հայերը «համբաւաւոր էին իրենց կեղծաւոր եւ անսկզբունք յատկանիշերով», իսկ անոնց «ծառայամիտ ու ստրկաբարոյ խոնարհութիւնը եւ ոգիի լիակատար բացակայութիւնը» կը ծառայէր իբրեւ «ծածկոյթ՝ արեւելքցիի նենգութեան»: Առաջ անցնելով, զանոնք պիտակած է «Մերձաւոր Արեւելքի մակաբոյծներ» եւ «Լեւանթի տականք»՝ յոյներու եւ

---

[42] W. E. Rotzell, *Man: An Introduction to Anthropology,* John Jos. McVey, Philadelphia, 1905, էջ 135-136, 139:

[43] Wheeler, էջ 727:

[44] *Regulation of Immigration: Report of the Committee on Immigration, U.S. Senate, on the Bill (H.R. 12199) to Regulate the Immigration of Aliens into the United States,* Government Printing Office, Washington, 1902, էջ 74, 78:

թուրքերու կողքին, որոնք «*ցանկալիութեան իմաստով այնքան ցած [են] բոլոր միւսներէն, որ առանձին դասակարգ մը կը կազմեն*»[45]:

Յաջորդ տարի, ընկերաբան Էտուըրտ Ռոս կ'արձագանգէր Ֆրենսիս Ուոքըրի խօսքներուն. «*Գաղթականութեան հեղեղը այժմ կը հոսի փարբեր ակերէ, սնելով նախորդ ալիքէն աւելի սփոր մարդկային աղբիւրներէ: Խրուաթիայէն ու Տալմաթիայէն եւ Սիկիլիայէն ու Հայաստանէն, մեզի կը նետեն ծեծուած ցեղատեսակներու ծեծուած անդամները, յաճախ ամենէն նախնական մարդիկը, որոնք մէկ կողմ նետուած են կամ եւրեւ մնացած են ուժեղագոյն եւրոպական ցեղերու օրօրներուն մէջ*»[46]: Յօդուածը լոյս տեսած էր *Independent* շաբաթաթերթին մէջ, որ նոյն թիւով խմբագրական քննադատական մը կը հրատարակէր, ուր, ընթացիկ կարծրատիպերու հետեւելով հանդերձ, նպաստաւոր գաղափար կը յայտնէր Նիւ Եորքի հայերուն (թէեւ փոքրամասնութեան մը) մասին. «*Այդ "ծեծուած" հայերը աղքատանոցներ չեն երթար, այլ հարուստ կը դառնան: Արեւելքի մէջ ասացուածք մը ունէին, թէ հրեայ մը հաւասար է երկու թուրքի, յոյն մը՝ երկու հրեայի, եւ հայ մը՝ երկու յոյնի. փիրող թուրքը շարքին խորը կ'երթայ, իսկ ճնշուած հայը՝ գագաթը: Անոնք յաջող վաճառականներ են այս քաղաքին մէջ*»[47]: 1906ին, Փրեսքոթ Հոլ կ'ընդունէր, առարկայական մօտեցում ձեւացնելով, թէ «*կարգ մը հայ վաճառականներ բաւական խելացի են եւ անցանկալի գաղթականներ չեն: Միւս կողմէ, սփորին դասակարգէն շատերը չափազանց առարկելի են*»: Իր եզրակացութիւնը, այդուհանդերձ, այն էր, որ հայերը, «ընդհանրապէս, ցանկալի գաղթականներ չեն»[48]:

Տնտեսագէտ Ճոն Քոմմընզ, բնութագրումի եւրոպական ընթացիկ փորձերուն հետեւելով, հայերուն մասին կը գրէր, թէ «*Արեւելքի ամենէն խորամանկ վաճառականներու, առեւտրականներու եւ լումայափոխներու շարքին կը պատկանին եւ, հրեաներու նման, գիւղացիութիւնը զիրենք կ'ատէ եւ կառավարութիւնը կը հալածէ,*- աւելցնելով.- *Հրեաներուն պէս նաեւ, կրօնական հալածանքը զիրենք միացուցած է՝ 5.000.000ի թիւով,*

---

[45] Allan McLaughlin, "Hebrew, Magyar, and Levantine Immigration", *The Popular Science Monthly,* September 1904, էջ 440-442: Սեւամորթ մամուլը արձագանգ եղած է այս բառապաշարին. 1907ին, *Colored American Magazine* կը գրէր, թէ «*արդէն օրը հասած է, երբ Եւրոպայի փականքը մեզի հետ է՝ աղքատները, դատապարտեալները, ընկերվարականները, անիշխանականները*» (մէջբերումը՝ Stephen Steinberg, *The Ethnic Myth: Race, Ethnicity, and Class in America,* Beacon Press, Boston, 2001, էջ 202):

[46] Edward Alsworth Ross, "The Value Rank of the American People", *The Independent,* November 10, 1904, էջ 1063 (վերատպումը՝ idem, *Foundations of Sociology,* The Macmillan Company, New York and London, 1905, էջ 393):

[47] "The 'Lesser Breeds'", *The Independent,* November 10, 1904, էջ 1099:

[48] Prescott F. Hall, *Immigration and Its Effects upon the United States,* Henry Holt and Company, New York, 1906, էջ 42:

նշանակալիօրէն զտարիւն եւ շրջակայ ցեղերէն տարբեր ցեղային տեսակով»[49]:

Ամերիկացի հոչակաւոր վիպասան Հենրի Ճէյմզ վերադարձած է 1904-05ին՝ քառորդ դար Անգլիա ապրելէ ետք, ու գրի առած յօդուածներու ժողովածու մը, ուր արձանագրած է իր տպաւորութիւնները ամերիկեան ազգութեան վրայ գաղթականութեան ներգործութեան մասին: 1895-96ի հայկական ջարդերուն, Ճէյմզ իր վրդովումը յայտնած էր Եւրոպայի ցուցաբերած անշարժութեան հանդէպ՝ Ապտիւլ Համիտի վայրագութեան դիմաց: Տասը տարի ետք, սակայն, նոյն հայերը կը դառնային Ճէյմզի կողմէ «*ամենէն աւելի ծաղր ու ծանակի ենթարկուած գաղթականական խմբաւորումը*»[50]: Գրագէտը պատահական հանդիպում մը յիշած է երիտասարդ հայու մը հետ՝ Նիւ Հեմփշիրի բլուրներուն վրայ՝ իբրեւ ապացոյց հաղորդակցութեան պակասին բնիկի եւ օտարականի միջեւ, որ ցոյց կու տար համարկելու անկարելիութիւնը, եւ այնուհետեւ վերադարձած է հայկական օրինակին՝ հաղորդակցութեան չգոյութեան այդ զգացումը շեշտելու համար: Ճէյմզ ենթադրած է, որ ձուլումի անկարելիութիւնը հետեւանքն էր փակ կեանքի զարգացման եւ ներհամայնական համերաշխութեան իրողութեան գաղթավայրին մէջ.

> Ցամաք իջած հայուն, օրինակ, հոն կը սպասէ այնքան տաք ու կահաւորուած հայկական անկիւն մը, որ անկէ զերծ ըլլալու փոյթի կարիքը հետզհետէ նուազ նախապայման մը կը դառնայ: Անկիւնը աւելի ու աւելի տաք կը դառնայ, կ'ենթադրուի, հարուստ կուտակումներով, եւ ուրեմն աւելի ու աւելի ժամանակ կ'առնէ շրջապատող տարրին մէջ կլանուիլը իրեն համար, եւ ան փաստօրէն կրնայ զգալ՝ աւելի ու աւելի, որ կրնայ ատիկա ընել ըստ իր դրած պայմաններուն[51]:

Ալֆրէտ Շուլց քննած է ցեղային խառնուրդի ենթադրեալ ազդեցութիւնը պատմութեան վրայ, փորձելով մատնանշել անոր հետեւանքները ամերիկեան գաղթականութեան վրայ: Հարաւային եւ հարաւ-արեւելեան եւրոպացիները (իմա՛՝ նաեւ Օսմանեան Կայսրութեան բնակիչները) նկատած է «աշխարհի ամենէն խառնացեղ ժողովուրդը», բացառութեամբ հարաւային ամերիկացիներուն, զանոնք պիտակելով «*ազգութիւններ որ ներկայիս աւելի լաւ ցեղերու փարիաներն (pariah) են, ու եղած են դարերով, բազմիցս զրպարտուած թուրքէն անհունապէս սփոր*»[52]: Եզրակացուցած է, որ

---

[49] John R. Commons, *Races and Immigrants in America,* Macmillan, 1907, New York, էջ 100-01:

[50] Roediger, էջ 4: Համիտեան ջարդերուն հանդէպ Ճէյմզի կեցուածքին մասին, տե՛ս՝ Peter Balakian, *The Burning Tigris: The Armenian Genocide and America's Response,* HarperCollins, New York, 2003, էջ 124:

[51] Henry James, *The American Scene,* Harper and Brother, New York and London, 1907, էջ 116, 120:

[52] Alfred P. Schultz, *Race or Mongrel?,* L. C. Page and Co., Boston, 1908, էջ 322:

«*ներկայիս եկող ցեղերուն պատմութիւնը անտարակուսելիօրէն կը փաստէ անոնց մտային ստորակայութիւնը սլաւներէն ու լատիններէն առաջ գաղթող ցեղերուն: Եթէ գաղթականութիւնը տակաւին օրինութիւն մըն է, ուրեմն դիմացկուն նորմանտական ցեղերը ամէն ձեւով նախընտրելի են, քան անցած ցեղերու հարաւային եւ հարաւ-արեւելեան բեկորները*»[53]:

1909ին, կրթական հարցերու մասնագէտ Էլվուտ Քըպերլիի բանաձեւումը խնդրոյ առարկայ կը դարձնէր Շուլցի մօտեցումը, թէ «*դպրոցը չի կրնար ցեղի մը մասնայատկութիւնները ներարկել ուրիշ ցեղի մը մանուկներուն մէջ*»[54]: Կեդրոնանալով կրթութեան միջոցով ընկերային ճարտարագիտութեան վրայ, Քըպերլի պնդած է, որ նկատելի էր նոր գաղթականութեան նկարագրային փոփոխութիւնը, ներառեալ «հարաւէն յոյներ, սուրիացիներ եւ հայեր»: Գրած է. «*Անգրագէտ, հլու, ինքնավստահութեան եւ նախաձեռնութեան պակասներով, օրէնքի, կարգի ու կառավարութեան անգլօ-գերմանական հասկացութիւնները չունենալով, անոնց գալուստը ծառայած է մեր ազգային տոհմագիծը խորապէս նօսրացնելու եւ մեր քաղաքացիական կեանքը աղաւաղելու*»: Քըպերլի մակերեսային ընդհանրացումներէն անցնելով ձուլումով ընկերային կարգը պահպանելու անհրաժեշտութեան՝ կը թելադրէ. «*անոնց երեխաներուն մէջ արմատաւորել, որքան կարելի է՝ արդարութեան, օրէնքի ու կարգի եւ ժողովրդային կառավարութեան, եւ անոնց մէջ արթնցնել յարգանք մը մեր ժողովրդավարական հաստատութիւններուն եւ մեր ազգային կեանքի այն բաներուն համար, որոնք, իբրեւ ժողովուրդ, կը նկատենք, որ արժանի է պահպանել*»[55]: Սեպտեմբեր 1908ին, Ամերիկայի Ագարակապաններու Կրթական եւ Համագործակցական Միութիւնը (Farmers' Educational and Cooperative Union of America) միեւնոյն կեցուածքը կ'որդեգրէր, յորդորելով որ գաղթականութեան օրէնքները գործադրուէին երկրի «*հաստատութիւնները պահպանելու, քաղաքացիութիւնը պաշտպանելու եւ անգլօ-սաքսոն քաղաքակրթութիւնը պահելու ապագայի համար...*»: Սակայն, առաջադրած է հակառակ լուծումը՝ դաշնակցային եւ նահանգային օրէնսդրութեան վաւերացումը, որպէսզի «ներկայ օտար ներհոսքը հարաւ-արեւելեան Եւրոպայէն եւ արեւմտեան Ասիայէն» դուրս մնար[56]:

Իր գիրքին մէջ, Ռիփլի գոված էր հայերը.

Բոլոր արեւելքցիներուն մէջ, ամենէն խելացիները, աշխատասէրները եւ խաղաղասէրներն են: Հրեաները կը յիշեցնեն նկարագրի շատ գիծերով, յատկա-

---

[53] Նոյն, էջ 254-55:

[54] Նոյն, էջ 261:

[55] Ellwood P. Cubberley, *Changing Concepts of Education,* Houghton Mifflin, Boston, 1909, էջ 14-16:

[56] *Reports of the Immigration Commission: Statements and Recommendations Submitted by Societies and Organizations Interested in the Subject of Immigration,* Government Printing Office, Washington, D.C., 1911, էջ 382:

պէս առեւտրական գործերու իրենց ընդունակութեամբ եւ իրենց յատկանշական ժուժկալութեամբ, որ կը մօտենայ ժլատութեան (...) Մարդաբանօրէն, այս մարդիկը գերագոյն կարեւորութիւն ունին իբրեւ ֆիզիքական տեսակի մաքրութեան օրինակ, որ կը բխի նշանաւոր ընկերային եւ կրօնական համերաշխութենէ: Դարձեալ կը մրցին հրեաներուն հետ այս իմաստով[57]:

Սակայն, չափաւոր լեզուի գործածութիւնը յարաբերական էր: 1908ին, Ռիփլի ակնարկած է ազնուապետական դասակարգի անկատար ակնկալիքին՝ անմիջական ձուլման. «*Եւրոպայի մէջ, բնակչութիւնը հողէն աճած է: Դեռ ներհիւսուած է անոր մէջ, անոր մասն է: (...) Բայց Ամերիկայի մէջ, մարդ գրեթէ կրնայ ըսել, թէ ժողովուրդը երկինքէն ինկած է: Հողին վրայ են, բայց փակաւին անոր լիակատար մասը չեն: Բնակչութեան արդիւնքը արուեստական է ու փարաշխարհիկ: Դեռեւս կապ չունի իր ֆիզիքական միջավայրին հետ: Արդիւնքը՝ աշխարհի պատմութեան մէջ եզակի մարդկային երեւոյթ մը*»[58]:

Ռիփլի աւելի մտահոգ էր տարբեր տեսակներու «խառնուրդ»ով (intermixture)՝ նպաստելով եզակի «ամերիկեան տիպ»ի մը յառաջացումին, որուն կողմնակից եղած է, հաւանական համարելով ատիկա՝ «հին անգլօ-սաքսոն ցեղի» ընկերային եւ անջրպետային տեղաշարժին միջոցով: Հարցը կը դառնար այդ եզակի տիպին գերակայ կամ ստորակայ ըլլալուն շուրջ. Ռիփլի անցողակի յիշած էր, թէ «*նոյնիսկ Եւրոպայի քաղաքական կոնքին դիմած են, եւ հիմա մեծաթիւ յոյներ, հայեր եւ սուրիացիներ կը ներգրաւենք: Բաւականաչափ չար կամ ստոր ժողովուրդ չկայ, որ ապաստան չփնտռէ մեր ափերուն*»: Բայց վերլուծումը անոր վստահութիւն կը ներշնչէր, որ «անգլօ-սաքսոն բեռը» կրնար ամբողջանալ, «*սնելու, բարձրացնելու եւ ներշնչելու այս բոլոր գաղթական ժողովուրդները, որոնք, ժամանակի ընթացքին, նոյնիսկ եթէ անգլօ-սաքսոն ցեղը ֆիզիքապէս ողողուի կլանող հեղեղով, անոր քաղաքակրթութեան եւ իդէալներու ջահը դեռ պիտի շարունակէ ճանապարհը լուսաւորել*»[59]: 1909ին, սակայն, դրուատած է «*մեր ափերուն վրայ այժմ իջնող հորդային (...) գերազանց ֆիզիքական որակը*» եւ ընդգծած, թէ «*գլխաւորաբար կ'ընդունինք գիւղացիութեան եւ սփորին դասակարգերու լաւագոյն, ամենէն յառաջադէմ եւ արթնամիտ տարրը, որ տրամադրելի է վերջերս յայտնուած այս նոր երկիրներուն կողմէ*»[60]:

Գնդապետ ու բժիշկ Չարլզ Վուտրըֆ կենսաբանական եւ ցեղային գերակայութեան երանգը մուծած է խօսակցութեան մէջ: Ձուլման կողքին,

---

[57] Ripley, *The Races of Europe,* էջ 446.

[58] William Z. Ripley, "Races in the United States", *The Atlantic Monthly,* December 1908, էջ 745:

[59] Ripley, "Races in the United States", էջ 748-59:

[60] William Z. Ripley, "Race Progress and Immigration", *The Annals of the American Academy of Political and Social Science,* July 1909, էջ 130:

ան պնդած է, որ արիացիներէն (= սպիտակամորթներէն) ստորադաս նոր-եկները պարզ մակաբոյծներ էին.

> Գաղթականները այժմ կու գան Եւրոպայի եւ Ասիոյ մասերէ, ուր շատ աւելի քիչ ուղեղ կայ, քան արիացիի ունեցածը. տարբեր ցեղերէ մարդիկ, դժուար ձուլելի արիացիներու հետ: "Անգրագէտներու հորդաներ", "Եւրոպայի տականք", "մուրացկաններ", եբրայեցիներ, լեհեր, սլովաքներ, խրուաթներ, հունգարացիներ, իտալացիներ, սուրիացիներ, որոնք չեն կրնար հասկնալ արիական ժողովրդավարութիւնը, երբեք չեն կարողացած դիմադրել արիացիներուն, աճած են արիացիներու հազարամեակներ շարունակ կերտած բարձր քաղաքակրթութեան մէջ եւ միշտ եղած՝ կերակրակից օրկանիզմներ (commensal organisms)[61]:

Ընկերաբան Հենրի Փրաթ Ֆերչայլտ նման զուգահեռ մը գծած է սեւամորթներու հետ, յոյն գաղթականներուն նուիրուած հատորի մը մէջ. «*Այսուհանդերձ, միջին ամերիկացիի մտքին մէջ, արդի գաղթականները առհասարակ ստորադաս ժողովուրդներ կը նկատուին, ցեղեր, որոնց վրայ վերէն կը նայի, որոնց հետ չ'ուզեր կապ ունենալ՝ ընկերային հաւասարութեան իմաստով*»[62]:

Ցեղի ու գաղթականութեան հարցին մէջ, աշխատաւորական շարժումը իր դասակարգային դիրքորոշումէն հեռու էր: Գաղթականներուն դէմ կեցուածք ճշտած էր, այն պատճառաբանութեամբ, որ անոնք կրնային համաձայնիլ աշխատավարձերու նուազումին եւ գործարաններու ղեկավարութեան կողմէ կանոններու դրժումին: 1904ին, Ռիփլի դիտել տուած էր, որ «*արհեստակցականներուն կողմէ ամենէն ատելի ազգութիւնները Եւրոպայի խուժանն է, որ հիմա կու գայ յարաճուն թիւերով, իչպէս հայերը, յոյները եւ սուրիացիները: Ասոնք բոլորը խմբուած են առանձին դասակարգի մէջ, իբրեւ գործադուլ ապրողներ (strike breaker)*»[63]: 1890էն մինչեւ 1909, կամայ թէ ակամայ, հայերը ներգրաւուած էին նման գործունէութեան մէջ, եւ ասիկա բազմիցս նիւթ դարձած է ամերիկեան եւ հայ մամուլին մէջ[64]: Վիքթոր Պերկէր՝ ԱՄՆի Ընկերվարական Կուսակցութեան առաջին ներկայացուցիչը քոնկրէսի մէջ, սպիտակ ցեղի յաղթանակը նկատած է աշխատաւոր դասակարգի յաղթանակի երաշխիքը: Յունիս 1911ի ճառի մը մէջ, պնդած է, որ գործարանատէրերը ձեռնարկած էին կազմակերպելու նուազ ցանկալի գաղթը մթին նպատակներով. «*Մինչ մեր գործարաններու արտադրանքները մեծապէս պաշտպանուած են [փուրքերով], երբեմն՝ մինչեւ 200*

---

[61] Charles E. Woodruff, *Expansion of Races,* Rebman, London and New York, 1909, էջ 389:

[62] Henry Pratt Fairchild, *Greek Immigration to the United States,* Yale University Press, Henry Frowde, New Haven, London, 1911, էջ 237:

[63] William Z. Ripley, "Race Factors in Labor Union", *The Atlantic Monthly,* March 1904, էջ 301.

[64] Տե՛ս, օրինակ՝ «Ամերիկահայ քրօնիկ», *Հայրենիք,* 17 Օգոստոս 1907 եւ 7 Սեպտեմբեր 1907: Հմմտ.՝ Mirak, էջ 88-89:

առ հարիւրի մակարդակով, զանոնք արտադրողները բնաւ պաշտպանուած չեն: Ընդհակառակը, վերջին քսան տարիներուն, սլաւոնները, իտալացիները, յոյները, ռուսերը եւ հայերը միլիոններով մուծուած են երկրին մէջ: Պարզապէս աւելի ցած ապրուստի մակարդակ ունենալուն համար, մեր պաշտպանուած ճարտարարուեստի աշխատանոցներէն, գործարաններէն եւ հանքերէն դուրս դրած են ամերիկացիները, գերմանացիները, անգլիացիները եւ իրլանտացիները»: Այդ ժամանակ արդէն ապացուցուած էր, որ այս պնդումները անճիշտ էին. ո՛չ աշխատավարձերը նուազած էին եւ ո՛չ ալ նոր գաղթականները փոխարինած էին հին աշխատաւորները, որոնք իրականութեան մէջ մագլցած էին՝ աւելի հմտութիւն պահանջող գործերու անցնելով[65]:

ՀԱԼԱՃԵԱՆԻ ԴԱՏԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

1870ի քաղաքացիութեան օրէնքի բարենորոգումը ազատօրէն օգտագործուած էր մինչեւ 1906, եւ հունգարացիներ, ֆինլանտացիներ, հայեր, թուրքեր, սուրիացիներ եւ հնդիկներ քաղաքացիութիւն ստացած էին Քալիֆորնիոյ մէջ: Արտաքին գործոց նախարարութիւնը, յատուկ հրահանգով, ցուցմունք տուած է դատարաններուն օրէնքներու ճիշտ գործադրութեան մասին: Ազատամտութիւնը խարդախութեան աղբիւր դարձած էր տարբեր շրջաններու մէջ: Օրինակ, ըստ դատաւոր Չարլզ Ամիտընի 1906ի դատավճիռին, տեղացի կաշառակեր քաղաքական գործիչներ հաւաքած էին օտարականներու խումբեր (հունգարացի, իտալացի, հայ եւ հրեայ) Սենթ-Լուիզի մէջ ու զանոնք տարած դատարան՝ քաղաքացիութեան երդումը տալու առանց այլեւայլ հարցումներու[66]:

29 Յունիս 1906ին, ամերիկեան քոնկրէսը գաղթականութեան օրէնք մը վաւերացուցած է, որ ուղղուած էր վերջ դնելու նահանգային դատարաններու միօրինակութեան բացակայութեան, նաեւ՝ կանոնաւորելու քաղաքացիութեան շնորհումի ընթացակարգերը, հաստատելով կեդրոնացած վարչութիւն մը: Սահմանափակելով քաղաքացիութեան հարցերով զբաղող դատարաններու թիւը, կը ստեղծէր Գաղթականութեան եւ Քաղաքացիութեան Վարչութիւնը (Bureau of Immigration and Naturalization), որուն քաղաքացիութեան բաժանմունքի վարիչը եղած է Ռիչըրտ Քեմպըլ

---

[65] Alexander Kadison, "Berger and Wilson: The Socialist's Remarks on Immigration from Southern Europe", *The New York Times,* July 15, 1912. նաեւ՝ Isaac A. Hourwich, *Immigration and Labor: The Economic Aspects of European Immigration to the United States,* New York, G. P. Putnam and Sons, London, Knickerbocker Press, 1912, էջ 394-395. նաեւ՝ Henry Reed Burch and S. Howard Patterson, *American Social Problems: An Introduction to the Study of Society,* The Macmillan Company, New York, 1918, էջ 114-15:

[66] David P. Dyer, *Autobiography and Reminiscences*, William Harvey Miner, St. Louis, 1922, էջ 277:

(1906-13): Այս գրասենեակին վստահուած էր իրաւապահութիւնը եւ պայքարը՝ կասկածելի դէպքերու դէմ:

Սեպտեմբեր 1909ին, Սինսինաթիի շրջանային դատարանին դիմում եղած է վճռելու, թէ հպատակութեան դիմած թուրք մը կրնա՞ր ոչ-ասիացի եւ, հետեւաբար, սպիտակամորթ նկատուիլ: Թէեւ թուրք գաղթականները փոքրաթիւ էին, դատը կը հետաքրքրէր «հունգարացի եւ մաճար (Hunnish and Magyar) (sic) ժողովուրդներու ներկայացուցիչները», գրած է *Նիւ Եորք թայմզ*ի խմբագրականը, «*որոնց ցեղը նման է թուրքերուն, եւ որոնք մեր գաղթականներու կարեւոր մէկ մասը կը կազմեն*»: Յօդուածը թրքական արշաւանքներու պատմութեան եւ թուրքերու մոնկոլական ծագումին թռուցիկ ակնարկ մը նետելէ ետք, դիտել տուած է, որ «*դէպի արեւմուտք յառաջխաղացքին մէջ, թուրքերը ազատօրէն խառնուած էին իրենց լուծին տակ ինկած կովկասեան ցեղերուն հետ*»: Պոլսոյ բնակիչները արաբներու, քիւրտերու, սլաւներու, ալպանացիներու եւ յոյներու շառաւիղներ էին, ինչպէս եւ «աւելի խառն ծագումով օտար ստրկուհիներու»: Սակայն, խմբագրականը ամերիկացի գրողներէ վկայութիւններ բերած է Անատոլիոյ թուրքերու ոչ-սպիտակ դիմագծին մասին եւ թէ՝ «թրքական միտքը չ'աշխատիր մերինին նման...»: Եզրակացուցած է, որ «*թէեւ դաժան ու ջարդարար ժողովուրդ մըն են (...) անոնք նաեւ եւրոպացի են, այնքան "սպիտակ" որքան հունգարացիները, ֆինլանդացիները եւ քոզաքները*»[67]:

Լիբանանցի մարոնի լրագրող Սալլում Մոքարզէլ ի պատասխան գրած է, թէ «ամբողջովին սպիտակամորթ սուրիացի»ի մը քաղաքացիութեան շնորհումը մերժուած էր թրքահպատակութեան պատճառով, ու այս վարքագիծը որակած՝ «անտեղի նախապաշարում» եւ «տգիտութիւն»: Թուրքերը սպիտակամորթ ըլլալու փոխանորդական իրաւունք ստացած էին, հետեւաբար Մոքարզէլ *էթնիկ* լուսաբանութեան անհրաժեշտութիւնը շեշտած է, հարցադրելով, թէ «*ինչպէս կարելի էր խնդրոյ առարկայ դարձնել յոյնին, սլաւին, հայուն, արաբին եւ սուրիացիին կովկասեան (= սպիտակ) արիւնը, քանի որ անոնք բնիկ էին իրենց ապրած հողերուն, եւ քանի որ վաղ թուրքերը իրենց կիները առած էին այն ժողովուրդներէն, որոնց սպիտակ ցեղը գերակայ է (...)*»[68]:

Արդարեւ, 20 Սեպտեմբեր 1909ին, Ֆրեզնոյի մէջ մերժուած էր Մատթէոս Յակոբեանի քաղաքացիութեան դիմումը, ուր ըսուած էր, թէ «բնիկ թուրքիացի» (native of Turkey) էր: *Ասպարէզ* կը կատարէր հետեւեալ տեղեկատուութիւնը.

---

[67] "Is the Turk a White Man?", *The New York Times,* September 30, 1909:

[68] "Turkish Subjects: Declares That Prejudice Exists Against Their Becoming American Citizens", *The New York Times,* October 3, 1909: Դատը բեկանուած է Սենթ Լուիզի շրջանային դատարանին կողմէ:

Այդ խնդրագիրը ըստ սովորութեան Ուաշինկթըն ղրկուած ըլլալով, այն տեղի քաղաքացիական պիւրոյին պետը եղող Րիչըրտ Քէմըլ [sic] անուն պաշտօնեայէն հրաման եկած էր Ֆրէզնոյի կառավարական պաշտօնեայ Ճօնզի որ յիշեալ Յակոբեանի քաղաքացիութեան վկայական չի տայ՝ սա պատճառաւ որ Յակոբեան բնիկ թիւրքիացի մը ըլլալով, ծագումով պատկանած ըլլալու է մոնկոլ ցեղին որ ամերիկեան քաղաքացի չի կրնար ըլլալ, նաեւ թիւրքերը բազմակնութեան հաւատացող ըլլալով, չեն կրնար ամերիկ[եան] քաղաքացի ըլլալ, եւ ուստի Յակոբեանն ալ չի կրնար ըլլալ[69]:

Շարունակութեան մէջ, թերթը Քեմպըլը նկատած է «*աշխարհագրութեան ու մարդկային պատմութեան վրայ ուղղէ մը շատ աւելի տեղեկութիւն*» չունեցող՝ ամերիկեան կառավարութեան «այդպիսի ապուշ պաշտօնեաներու» շարքէն մէկը, «որ հայը բազմակին մոնկոլներու շարքը կը դասէ»: Սակայն, «*այդ Մր. Քէմըլ ըսուած մարդուկը, ով որ ալ ըլլայ», փոաած էր «հայերը "մոնկոլ" ու "բազմակին" թիւրքերու երկրացի ըլլալնուն համար ամերիկեան քաղաքացիներու ցանկէն դուրս ձգուելու հրահանգը*», ինչ որ կենսական բնոյթ ունէր ամերիկահայութեան համար[70]:

Ֆրեզնօ մորնինկ րիփապլիքըն օրաթերթի խմբագրականը բուռն կերպով կը քննադատէր Քեմպըլի հրահանգը ու կը յայտնէր, թէ «*հայերը քրիստոնեայ եւ արիական են - մեր ցեղէն ու կրօնքէն մարդիկ - եւ թրքական պայմաններէն այնքան դժգոհ են, որքան որ մենք պիտի ըլլայինք*»: Աւելցնելով, որ հայերն ու թուրքերը «անունէն կրնան զանազանուիլ»՝ «եան» վերջածանցը յիշելով, թերթը եզրակացուցած է, որ «*որեւէ "թուրքիացի", որուն անունը Յակոբեան է, թուրք չէ, ոչ ալ մոնկոլ, ոչ ալ բազմակին, այլ մեր ցեղէն ու փեսակէն մարդ մը, իր սեփական երկրի հերոսներէն մէկուն անունով կոչուած, որ ամերիկեան գաղափարականներ եւ ձգտումներ ունի եւ որ հոս եկած է լաւ քաղաքացի մը ըլլալու եւ պիտի՛ ըլլայ, եթէ թոյլ տանք*»[71]:

Յաջորդ թիւին մէջ, *Ասպարէզ* կը տեղեկացնէր դէպքերու թաւալգլոր ընթացքին մասին: 22 Սեպտեմբերին, Լոս Անճելըսի մէջ մերժուած էր Ճորճ Ա. Շէյշինի («ինքզինք թիւրք կոչող մէկը») քաղաքացիութեան դիմումը՝ թուրքերու մոնկոլական ծագումի պատճառով, իսկ նոյն օրը՝ Ֆրեզնոյի բարձրագոյն դատարանի դատաւոր Հ. Զ. Օսթին Գաղթականութեան Վարչութենէն հրահանգ ստացած էր մերժել Մարտիրոս Տէրտէրեանի դիմումը, «*սա հիման վրայ թէ թիւրք մը քաղաքացի չի կրնար ըլլալ, վասնզի "ճերմակ մարդ" չէ եւ թիւրք ըլլալով, բնականաբար բազմակնութեան հա-*

---

[69] «Հայը եւ ամերիկեան քաղաքացիութիւնը», *Ասպարէզ*, 24 Սեպտեմբեր 1909:

[70] Նոյն: Կը թուի, թէ Campbell անունին սխալ տառադարձութիւնը՝ *Քէմըլ* (Camel), պատճառ դարձած է «ուղտ»ի (camel) հետ զուգորդումին կամ բառախաղին:

[71] "Not 'Turks'", *The Fresno Morning Republican*, 21 September 1909: Ամբողջական թարգմանութիւնը տե՛ս՝ «Հայը եւ ամերիկեան քաղաքացիութիւնը»:

ւափացող մըն է»[72]: Այս կացութեան մասին, *Ֆրեզնօ մորնինկ րիփապլիքընի* նոր խմբագրական մը փաստեր կը բերէր հայերու եւրոպացի ու սպիտակամորթ ըլլալուն, յայտնելով այն կարծիքը, թէ եղածը իրազեկութեան պակաս էր.

> Այսպէս, եթէ "Եւրոպա" պիտի առնուի պատմական իմաստով, աւելի քան աշխարհագրական, հայերը եւրոպացի են ա՛յնքան որքան որ հրեաները, եւ նոյն պատճառով: Միակ տարբերութիւնը այն է, որ քաղաքացիական բաժանմունքի պետ Ռիչըրտ Ք. Քէմպըլ այս փաստերուն իրազեկ է հրեաներու պարագային, բայց իրազեկ չէ հայոց պարագային: Կը նշանակէ, թէ ընդամէնը պէտք է քիչ մը տեղեկութիւն հաղորդել Ռիչըրտ Ք. Քէմպըլին[73]:

Սակայն, այս բարեացակամ դիրքորոշումը, որ պատահածը դիւանակալական սխալի կը վերագրէր, խոտոր կը համեմատէր Քեմպըլի դատական վիճարկումներու աշխատանքային ցուցակին, որ կ'ընդգրկէր հնդիկները, թուրքերը, Հիւսիսային Ափրիկէի եւ Եգիպտոսի ժողովուրդները, պարսիկները, սուրիացիները եւ «այլ ասիացիներ», անպայման հայերն ալ նկատի ունենալով[74]: Ինչպէս պատմաբան Մարիան Սմիթ դիտարկած է, «*մինչ Քեմպըլի գրութիւնները ցոյց կու տան, որ ինք անձամբ "թերի գոյնով (off-color) ցեղերը" կը նկատէր "ո՛չ միայն անպէտք, այլեւ անցանկալի յաւելումներ քաղաքական մարմնին", անոր ռազմավարութիւնը ճիգ կը թափէր դատարանները սփիռել, որ այս կամ այն ձեւով վճիռներ տան*»[75]:

Հոկտեմբերի վերջերուն, *Ասպարէզի* խմբագրականը կ'անդրադառնար Ֆրեզնոյի հայերը շահագրգռող երեք խնդիրներու, որոնցմէ առաջինը քաղաքացիութեան հարցն էր: Հայոց դէմ յարուցուած արգելքները արդէն ո՛չ միայն Քալիֆորնիոյ, այլեւ արեւելեան նահանգներուն մէջ զգալի դարձած էին: Սուրիացիները, որոնք թիւով աւելի շատ էին հայերէն, արդէն այդ արգելքներուն դէմ գործի անցած էին Լոս Անճելըսի մէջ: Թերթը կը թելադրէր լծակից չըլլալ սուրիացիներուն, որոնք հայերէն տարբեր էին ֆիզի-

---

[72] «Հայոց ամերիկեան քաղաքացիութիւնը», *Ասպարէզ,* 1 Հոկտեմբեր 1909: Նիւ Ճըրզիի մէջ ալ քաղաքացիութիւնը մերժուած է դիմող հայերու, սակայն *Կոչնակ,* յիշելով նաեւ Ֆրեզնոյի պարագան, հաւանական նկատած էր, որ խնդիրը հաւանաբար «սխալ հասկացողութեան մը արդիւնքն է Ուաշինկթընի մէջ», առանց մտածելու, որ «ծանրակշիռ հանգամանք մը ունի» («Ամերիկահայ լուրեր», *Կոչնակ,* 9 Հոկտեմբեր 1909, էջ 972):

[73] "Are 'Europeans'", *The Fresno Morning Republican,* 27 September 1909: Ամբողջական թարգմանութիւնը տե՛ս՝ «Հայերը եւրոպացի են», *Ասպարէզ,* 1 Հոկտեմբեր 1909:

[74] Earlene Craver, "On the Boundary of White: The Cartozian Naturalization Case and the Armenians, 1923-1925", *Journal of American Ethnic History,* Winter 2009, էջ 34:

[75] Marian L. Smith, "INS Administration of Racial Provisions in U.S. Immigration and Nationality Law Since 1898", *Prologue,* Summer 2002, էջ 94:

քական, լեզուական ու կրօնական իմաստով, եւ նկատի ունենալ, որ քաղաքացիութենէ զրկումը մեծագոյն հարուածը կ'ըլլար երկրի ամբողջ հայութեան համար, որուն կրնար հետեւիլ Մ. Նահանգներ գաղթելու արգելքը՝ քաղաքացիութիւն ստանալու իրաւունքէն զուրկ ազգութեան համար.

> Յամենայնդէպս խնդիրը շատ կարեւոր է ամբողջ ամերիկահայ գաղութին համար. կ'արժէ որ ամէն տեղ հայեր հետամուտ ըլլան թէ ի՛նչ կերպով կարելի է այս դժուարութեան մէջէն ելլել: Ֆրէզնոյի հայերս պարտինք կա՛մ քոնկրէսի մեր ներկայացուցիչ Մր. Նիտըմի միջոցով եւ կամ ուրիշ յարմար միջոցով մը խնդիրը քննել եւ պէտք եղած քայլերը առնել դեռ շատ ուշ չեղած[76]:

30 Հոկտեմբերին, հեռագրալուր մը կը հաղորդէր, թէ Նիւ Եորքէն գաղթականներու պաշտպան սուրիացի Ճասթին Քիրրէ (Justin S. Kirrah) արշաւի ձեռնարկած էր սուրիացիներու, թուրքերու, հնդիկներու եւ ոչ-սպիտակամորթ նկատուած ուրիշներու անունով: Ան տեսակցութիւն ունեցած էր արտաքին գործոց նախարար Հանթինկթըն Ուիլսընի եւ այլ բարձրաստիճան պաշտօնատարներու հետ[77], իսկ երկու օր ետք բողոքագիր գրած՝ առեւտուրի եւ աշխատանքի նախարար Չարլզ Նէյկըլին, մեղադրելով Քեմպըլը «անձնական չարամտութիւն» ցուցաբերելու որոշ խմբաւորումներու դէմ[78]: Սակայն, 3 Նոյեմբերին, Քեմպըլ վճռած է, որ թուրքերը, հայերը, սուրիացիները եւ արաբները «ազատ սպիտակ անձեր» չէին եւ քաղաքացիութեան իրաւունք չունէին՝ «դեղին ցեղ»ին պատկանելու պատճառով.

> Առանց սպիտակամորթ անձը սահմանել կարենալու, սովորական մարդը փողոցին մէջ յստակօրէն նշանակութիւնը կը հասկնայ, եւ դժուարութիւն պիտի չունենար թուրք մը կամ սուրիացի մը դեղին ցեղին յատկացնելու, այնքան դիւրութեամբ, որքան նոյն անուանումը պիտի տար չինացիի մը կամ գորէացիի մը[79]:

Սակայն, ինչպէս իրաւագէտ Ճոն Հենրի Ուիկմոր յստակօրէն ցոյց տուած էր 1894ին, «սպիտակամորթ»ի որեւէ գոհացուցիչ սահմանում չկար: Եթէ խօսքը գոյնի մասին էր, բազմաթիւ հարաւայիներ կը բացառուէին, իսկ եթէ խօսքը կովկասեաններուն կամ արիացիներուն կ'ակնարկէր, ուրեմն կը ներառէր ասիական ժողովուրդներ (պարսիկներ, հնդիկներ, աֆղաններ) եւ կը բացառէր հունգարացիներն ու ռուսերը: Բայց եթէ կը նոյնանար «եւրոպացի» հասկացութեան հետ, ուրեմն կը խախտէր անգլերէնի օրէնքները (որովհետեւ նմանօրինակ իմաստ գոյութիւն չունէր) եւ կը բացառէր հայերը, օրինակ: Ուիկմոր եզրակացուցած էր, որ բառը համակարգային կիրարկումի յարմար չէր եւ այլընտրանք մը ան-

---

[76] «Երեք տեղական խնդիրներ», *Ասպարէզ,* 22 Հոկտեմբեր 1909:

[77] «Քաղաքացիութեան խնդիրը», *Ասպարէզ,* 5 Նոյեմբեր 1909:

[78] Smith, էջ 94:

[79] Մէջբերումը տե՛ս՝ "Is the Armenian Alien a Free White of Europe?", *The Fresno Morning Republican,* November 7, 1909:

հրաժեշտ էր[80]: Այդուհանդերձ, դատարանները կը շարունակէին «սպիտակ» բառը մեկնաբանել ըստ իրենց հայեցողութեան: «Ազատ» բառի ժամանակավրէպ օգտագործումը խնդրոյ առարկայ չէր:

4 Նոյեմբերին, ընդհանուր դատախազի օգնական Ուիլիըմ Հար կը յայտարարէր, թէ «*Միացեալ Նահանգաց ընդհ. դատախազներուն հրահանգ պիտի ղրկուի թէ վերոյիշեալ ցեղերէն [սուրիացիներ, թուրքեր, պարսիկներ, եգիպտացիներ, արաբներ եւ "ուրիշ այդ կարգէ ազգութիւններ"] խնդրագիր մատուցանողներուն քաղաքացիութեան դէմ բերուած բոլոր դատերը եփ առնուին մինչեւ որ խնդիրը լաւ մը քննուի*»: Լուրը կ'աւելցնէր, թէ այս քայլը առեւտուրի նախարարութեան հաւանութիւնը ստացած էր: Միւս կողմէ, նոյն օրը, Լոս Անճելըսի Գերագոյն Դատարանի դատաւոր Ճորճ Հաթթըն սուրիացիի մը ամերիկեան քաղաքացիութեան դիմումը ընդունած էր, ի հեճուկս Գաղթականութեան Վարչութեան ընդդիմութեան, պնդելով, «*թէ հազարաւոր սիւրիացիներ քաղաքացի եղած են այս երկրին մէջ եւ եթէ հիմա կ'ուզուի որ քաղաքացիութենէ զրկուին, թող այդ մասին քոնկրէսը օրէնք մը անցընէ*»[81]:

5 Նոյեմբեր 1909ին, Ամերիկեան Եբրայական Միաբանութիւններու Միութեան քաղաքացիական իրաւունքներու հոգաբարձութիւնը բողոքած է Նէյճըլին՝ Գաղթականութեան Վարչութեան կողմէ թուրքերու, սուրիացիներու, հայերու, պաղեստինցիներու եւ հրեաներու քաղաքացիութեան մերժումին մասին, այն հեգնական նշումով, թէ «*եթէ ողջ ըլլային, Դաւիթն ու Եսային եւ նոյնինքն Յիսուս Նազովրեցին կը բացառուէին*»[82]: Ըստ Ամերիկեան Հրէական Կոմիտէի (American Jewish Committee) անդամ Սայրըս Ատլէրի Դեկտեմբեր 1909ի նամակի մը, անգամ մը որ սուրիացիները սպիտակամորթ նկատուելէ կը դադրէին, հրեաներուն «ասիացի» հոչակումը շատ հեռու չէր[83]:

*Նիւ Եորք թայմս*ը դիտել տուած է, որ յիշեալ ժողովուրդները կովկասեան (= սպիտակ) էին ցեղային առումով եւ միայն թուրքերը իրենց թաթար ծագումին հետքը պահած էին: Ասիացիները 1790ի քաղաքացիութեան օրէնքի օրերուն յիշուած չէին, քանի որ հազիւ ծանօթ էին: Արտաքին գործոց նախարարութիւնը համաձայն չէր Գաղթականութեան Վարչութեան, իսկ արդարութեան նախարարութիւնը հրահանգած էր այդ ուղղութեամբ քայլ չառնել ցնոր տնօրինութիւն[84]: 9 Նոյեմբերին, *Fresno morning republican*ի հերթական խմբագրականը կը նշէր, թէ «*հայերը, այս խնդրին մէջ, սահմանում մը կատարելու փորձի մը չնախատեսուած զոհերն են*»,

---

[80] Kohler, էջ 11:

[81] «Խնդիրը նոր կերպարանք կ'առնէ», *Ասպարէզ,* 12 Նոյեմբեր 1909:

[82] Smith, էջ 94:

[83] Eric L. Goldstein, *The Price of Whiteness: Jews, Race, and American Identity,* Princeton University Press, Princeton and Oxford, 2006, էջ 103:

[84] "Free White Persons," *The New York Times,* November 7, 1909:

քանի որ գաղթականութեան բաժանմունքը կը փորձէր չընդունիլ հայերու եկած տեղի շատ մը ազգութիւններու քաղաքացիութեան իրաւունքը. «*Այս ցեղերուն մեծամասնութիւնը այնպիսի փարբեր արիւն եւ այնպիսի փարբեր քաղաքակրթութիւն ունին, որ Ամերիկայէն շատ բան է պահանջել, որ ձուլեն զանոնք: Հայերը, անշուշտ, բացառութիւնն են: Մեր ցեղէն, մեր կրօնքէն ու մեր քաղաքակրթութենէն են, պարզապէս արկածով խցանուած մուսուլմանական հորդային մէջտեղը, որ այդ քաղաքակրթութենէն ամէն ինչ քշած է Եւրոպայի մէջ*»[85]: 11 Նոյեմբերին, Նէյճըլ սաստած է Քեմպըլը՝ իր գլխաւոր բաժանմունքին դատարաններուն յատուկ գործառոյթներ յատկացուցած ըլլալուն համար, եւ խորհուրդ տուած՝ «աւելի մտահոգուիլ դիմորդի ներկայ համբաւով, քան սկզբնական ծագումով»[86]:

Մինչ այդ, Ֆրեզնոյի հայութիւնը բաւական իրարանցումի մատնուած էր, ինչպէս ցոյց կու տային *Ասպարէզի*ի մէջ լոյս տեսած յօդուածները, ներառեալ՝ 21 Նոյեմբերին տեղի ունենալիք խորհրդակցական ժողովի մը լուրը[87]: Անոնցմէ մէկը կ'անդրադառնար անշարժ կալուածներու հնարաւոր կորուստին՝ քաղաքացիութենէ զրկուելու պարագային. «*Եթէ այսօր օրէնքը փրամադրէ որ հայերը իրենց սփացուածքը ծախեն, այս փեղի ամբողջ հայութեան ահագին մեծամասնութիւնը իրենց ամբողջ սփացուածքը ծախել-փոխելով՝ մօրկէճը [mortgage] չեն կրնար գոցել, այսչափ փարիներու միջոցին ըրած վճարումին, շահը եւ գործածին վրայ փալով: Պիփի ըսեն մերկ եկանք ու մերկ կ'երթանք*»[88]: Բացատրելէ ետք, թէ սուրիական քաղաքացիութեան դատին յաղթանակը Լոս Անճելըսի մէջ տեղի ունեցած էր, երբ համայնքը հանգանակութեան դիմած եւ լաւագոյն փաստաբանները վարձած էր, Մատթէոս Ֆերահեան հարց կու տար.

> Սակայն մենք հայերս մեր ցեղին ուղղուած անարգութենէն եւ անպատուութենէն ազատելու, մեր ցեղը ոեւէ ճերմակ ցեղին չափ աղէկ եւ ընդունակ եւ անոնց հաւասար փաստելու, մեր ծագումը եւ անցեալը անոնցինին հետ բաղդատելու համար ի՞նչ ըրած ենք եւ ի՞նչ պիտի ընենք: Սիւրիացւոց իրենց ցեղին իրաւունքը պաշտպանելու եւ անոր տէրը ըլլալու համար մղած կռիւին լոկ ականատես պիտի ըլլանք, այդ անարգանաց տարբեր անտարբեր պիտի մնա՞նք[89]:

---

[85] "Armenians", *The Fresno Morning Republican,* 9 November 1909: Ամբողջական թարգմանութիւնը տե՛ս՝ «Հայերը զրկուելու չեն», *Ասպարէզ,* 12 Նոյեմբեր 1909:

[86] Smith, էջ 94:

[87] «Հայերը ժողովքի կը հրաւիրուին», *Ասպարէզ,* 12 Նոյեմբեր 1909. նաեւ՝ «Ընդհանուր ժողով քաղաքացիութեան խնդրոյն համար», *Ասպարէզ,* 19 Նոյեմբեր 1909:

[88] Տր. Ս. Թֆէնքճեան, «Ֆրէզնոյի ճգնաժամը», *Ասպարէզ,* 12 Նոյեմբեր 1909. նաեւ՝ Յ. Գ. [Յովհաննէս Գապատայեան], «Գործել պէտք է», *Ասպարէզ,* 12 Նոյեմբեր 1909. նաեւ՝ Խաչիկ Եղիկեան, «Հայերը կովկասեան են», *Ասպարէզ,* 12 Նոյեմբեր 1909:

[89] Մ. Գ. Ֆէրահեան, «Ամերիկեան հայ քաղաքացիութիւնը», *Ասպարէզ,* 19 Նոյեմբեր 1909:

Ուրիշ յօդուածագիր մը, Էօժէն Սիւի *Թափառական հրեայի* յաւերժական հալածանքի նիւթը հայութեան հետ կապելով, կը յայտնէր, թէ «հալածուած ժողովուրդներու վերջին ապաստարանին» մէջ «դժոխալուր յանկերգը» սկսած էր լսուիլ: Քաղաքացիութեան արժէքին գիտակցելու եւ կազմակերպուելու անհրաժեշտութեան վրայ շեշտը դնելով, կոչ ուղղած է ձեռնծալ չմնալու.

> Արդ՝ անծայր թշուառութեան բաժակին մինչեւ վերջին մրուրը չքամած՝ մեր մարդկային եւ ցեղային անբռնաբարելի իրաւանց մասին նախանձախնդիր՝ մենք ամերիկահայերս պէտք է ըմբոստանանք Միաց. Նահանգաց գաղթականութեան բաժնին տնօրէն Քէմպըլի արձակած վճիռին դէմ, եւ յթոյլատրենք որ հայերս Ասիայէն եկած ըլլալով չինացիներու եւ ճաբոնցիներու համար խմբագրուած մասնաւոր օրինաց տրամադրութեան ենթարկուինք: Ամերիկեան քաղաքացիութեան առանձնաշնորհումներէն զրկուելու այս տիտանեան անիրաւութեան դէմ պատրաստ ըլլալու ենք միահամուռ բողոքել: Հոս է որ անհատէն աւելի ազգին պատիւը կ'ոտնակոխուի, եւ պարզապէս անձնասպանութիւն պիտի ըլլայ ձեռնամած նստիլ եւ անտարբեր դիտել թէ ի՛նչ ստոր մեթոտներով այս երկրին պաշտօնեաներէն ոմանք կ'ուզեն մեր քաղաքացիութեան գլուխները կտրել[90]:

Նիւ Եորքի մէջ, *Կոչնակի* մէկ խմբագրականը կը յիշէր լրագրական տեղեկութիւն մը, թէ Քաղաքացիութեան Վարչութիւնը ծրագիր ունէր բոլոր «ասիացի»ներուն քաղաքացիութիւնը մերժելու. «*Եթէ աս իրականանայ՝ Ասիայի դէմ հսկայ շարժում մըն է: Անոր թէ՛ ուղղակի եւ թէ՛ անուղղակի ազդեցութիւնը մեծ պիտի ըլլայ բոլոր Ասիացիներու վրայ: Անով ցեղային խտրութիւնը ահաւոր կերպով երեւան պիտի գայ եւ սեւ մուր մը քսէ քաղաքակրթութեան ճակատին*»[91]: Յաջորդ թիւին մէջ յիշելով ամերիկեան մամուլէն արձագանգներ, շաբաթաթերթը կը տեղեկացնէր, թէ Ռոտ Այլընտի մէջ, դատաւոր Արթըր Պրաուն մերժած էր կառավարութեան առարկութիւնները եւ վճռած, որ հայերն ու թուրքերը «ազատ սպիտակ անձեր» պիտի նկատուէին նահանգին մէջ[92]:

«ՀԱԼԱՃԵԱՆ ԳՈՐԾ»Ը (1909)

«*Կէս դարէ ի վեր Հայեր հոս սփռացած են Ամերիկեան քաղաքացիութիւն, եւ ցարդ անոնց այս իրաւունքն ժխտող եղած չէ ցեղային տեսակէտի վրայ*»՝ Հոկտեմբեր 1909ին յօդուածագիր մը կը գրէր *Կոչնակի* մէջ[93]: Հայերու եւ այլ ազգութիւններու քաղաքացիութիւն ստանալու իրաւունակու-

---

[90] Գ., «Հալածանքի յանկերգը (քաղաքացիութեան խնդրոյն առթիւ», *Ասպարէզ,* 17 Դեկտեմբեր 1909:

[91] «Քաղաքացիութիւն», *Կոչնակ,* 13 Նոյեմբեր 1909, էջ 1073:

[92] «Քաղաքացիութեան խնդրոյն շուրջը», *Կոչնակ,* 20 Նոյեմբեր 1909, էջ 1116:

[93] Գ. Ս. Քէպապեան, «Հայերը կրնան քաղաքացիանալ», *Կոչնակ,* 30 Հոկտեմբեր 1909, էջ 1030:

թիւնը վիճարկուած է, ըստ ամերիկեան հասկացողութեան, դատարաններու մէջ: Իւրաքանչիւր դատ վերածուած է աշխարհագրական, մարդաբանական եւ լեզուական փաստարկներու տողանցքի մը: Հայերու իրաւունակութիւնը երկիցս խնդրոյ առարկայ դառնալով, իր դրական հաստատումը պիտի գտնէր դատերով՝ 1909ին եւ 1924-25ին: Այստեղ պիտի անդրադառնանք առաջին՝ «Հալաճեանի գործ»ին, այլ առիթի ձգելով երկրորդին՝ «Գարթոզեանի գործ»ի պատմականը:

Հայու ինքնութեան հարցին նուիրուած *Կոչնակի* եռամսեայ խմբագրական մը դիտել կու տար իր առաջին մասին մէջ, թէ «յայտնի է թէ Ամերիկայի մէջ մեր մասին հին նպաստաւոր զգացումը չկայ» եւ թէ աննպաստ գաղափարներ եւ զգացումներ կը տիրէին որոշ խաւերու մէջ. «*Նոյնիսկ ջանքեր կ'ըլլան զմեզ բոլորովին այս երկրէն քաղաքացիութենէն զրկելու՝ մինչդեռ առաջ շատեր կը համոզէին զմեզ քաղաքացի ըլլալ եւ շատ դիւրաւ քաղաքացիութեան թուղթը կուտային*»: Ընդունելով հանդերձ, որ այդ ջանքերուն արմատը հայութեան թիւը կամ կրօնքը չէր, խմբագրականը լռութեամբ կ'անցնէր ցեղային զատորոշման եւ ստորակայութեան վրայէն, թէեւ կը կանխատեսէր, որ հայերը կրնային օր մը նկատուիլ «նուաստ, խոտելի, մերժելի, արհամարհելի ազգ մը, ժողովուրդ մը», ինչ որ բազմաթիւ առանձնաշնորհումներէ զրկուելու դուռը կրնար բանալ[94]: Երկրորդ բաժնին մէջ, կ'ակնարկէր մամուլին մէջ «մոնկոլ», «ասիացի» եւ նման խառնափնթոր գաղափարներու արծարծումին, ինչպէս եւ սպիտակ կամ ասիական այլ ցեղերու. «*Յեղաբանական եւ մորթաբանական այս զուարճալի, քիչ մըն ալ մեզ կծող, խնդիրը հիմա դատարաններու առջեւ է եւ անոնք պիտի որոշեն մեր արդէն յայտնի "ինս"ը եւ "ճինս"ը:* Խմբագրականը այնուհետեւ շեշտը կը դնէր «մեր երկրի 'ասիական'»ին վրայ, պատմական ընդարձակ պտոյտով մը, պնդելով որ *«այսօր եկեղեցիէն մինչեւ փուն, սահմանադրութենէն մինչեւ դատարանը, պատմութենէն մինչեւ կեանքը՝ [ամերիկացիներուն] մէջ աւելի բան կայ որ "Ասիական" է քան Եւրոպական կամ Ամերիկեան*»[95]:

Արդարեւ, Դեկտեմբեր 1909ի սկիզբին, Գաղթականութեան Վարչութիւնը դատ բացած էր Պոստոնէն չորս հայերու դէմ (Յակոբ Հալաճեան, Մկրտիչ Էքմէքճեան, Աւագ Մուրատեան եւ Պաշար Պայենց), որոնք քաղաքացիութեան համար դիմած էին Մեսեչուսէցի առաջին շրջանային դատարանին: Առաջին երեքը ծնած էին յաջորդաբար Այնթապ, Տիարպեքիր եւ Ատանա, իսկ չորրորդը՝ Պոլսոյ արուարձան մը, «Վոսփորի արեւմտեան կողմը»: Շրջանային օգնական դատախազի տրամաբանութիւնը այն էր, որ անոնք «ասիացի» եւ ոչ-սպիտակ էին, քանի որ անոնց հայրենիքը Վոսփորի արեւելքը կը գտնուէր: Այս շեշտակի հարցադրումին պատասխանը

[94] «Մենք ո՞վ ենք», *Կոչնակ,* 11 Դեկտեմբեր 1909, էջ 1170:
[95] «Մենք ո՞վ ենք», *Կոչնակ,* 18 Դեկտեմբեր 1909, էջ 1193-95:

արագընթաց եղած է. 24 Դեկտեմբերին, դատաւոր Ֆրենսիս Լօուըլլ առանց այլեւայլի կառավարութեան դիմումը մերժած է, խորապէս ուսումնասիրելէ ետք ցեղի սահմանումը, պատմական վկայութիւններ եւ անհրաժեշտ գրականութիւն[96]: Ան եզրակացուցած է, որ հայերը «ազատ սպիտակ օտարականներ» էին եւ որ անպաշտպանելի էր կառավարութեան պնդումը, թէ «ասիական կամ դեղին ցեղ մը կայ, որուն կը պատկանին բոլոր ասիացիները, ներառեալ այս խնդրարկուները», քանի որ «*այս տեսութիւնը հիմնաւորելու ո՛չ մէկ հեղինակութիւն կը յիշուի՝ պատմութեան, հին թէ արդի ազգաբանական տեսութեան կամ ֆիզիքական երեւոյթի առնչութեամբ*»[97]:

Մերժելով Ասիոյ բոլոր բնակիչներուն «ասիական» ցեղի մը պատկանելիութիւնը, Լօուըլլ առաջադրած է ժողովուրդներու միջանկեալ դասակարգ մը, որ Օսմանեան Կայսրութեան Արեւելք-Արեւմուտք սահմանային բնոյթը կը կիսէր եւ աշխարհագրականօրէն կը պատկանէր Ասիոյ, բայց ցեղայնօրէն՝ Եւրոպայի, աւելցնելով, որ «*իրենց երեւոյթով, խնդրարկուները ոմանք կամ բոլորը անզանազանելի պիտի ըլլային արեւմտեան Եւրոպայի մէջ: Անոնք աւելի թխադէմ չեն, քան շատ արեւմտեան եւրոպացիներ, եւ իրենց դիմագիծով չինացիներուն այնքան կը նմանին, որքան ամերիկեան բնիկներուն*»[98]: Եզրակացութեան մէջ, հաստատած է հետեւեալ կէտերը.

Ա) Եւրոպական կամ սպիտակ ցեղ չկայ, ինչպէս Միացեալ Նահանգները կը պնդէ, եւ ո՛չ ալ ասիական կամ դեղին ցեղ, որ կը ներառնէ ըստ էութեան Ասիոյ ամբողջ ժողովուրդը.

Բ) Վերջին 25 դարերու ցեղերու խառնուրդը արեւմտեան Ասիոյ մէջ կասկած կը յարուցանէ, թէ անոր անհատ բնակիչները կրնան դասակարգուիլ ըստ ցեղի,

Գ) Եթէ սովորական դասակարգումը այսուհանդերձ կը շարունակուի, հայերը միշտ նկատուած են կովկասեաններ *եւ* սպիտակ անձեր.

Դ) Անոնց քաղաքակրթութեան հայեացքը ուղղուած է դէպի Եւրոպա.

Ե) [Հ]այերը, ինչպէս սուրիացիներն ու թուրքերը, ցարդ ազատօրէն քաղաքացիութիւն ստացած են այս դատարանին մէջ, թէեւ օրէնքները այս իմաստով էապէս անփոփոխ մնացած են առաջին Գոնկրէսէն իվեր: (...) Գոնկրէսը կրնայ

---

[96] "Cases Argued and Determined in the Circuit Courts of Appeals and Circuit and District Courts of the United States", *The Federal Reporter (annotated),* vol. 174, January-March 1910, էջ 835. նաեւ՝ "Citizenship for Armenians. Circuit Court Declines to Bar Them on Government's Plea", *The New York Times,* December 25, 1909. նաեւ՝ "Decision for Armenians", *The Boston Globe,* December 25, 1909. նաեւ՝ «Հայեր քաղաքացի ընդունուած», *Կոչնակ,* 1 Յունուար 1910, էջ 20: Հմմտ.՝ Gross, էջ 232-33: Հայկական ուշ աղբիւր մը դատը թուագրած է 1902ին, դատաւորը «Հոլմզ» կոչելով (H. B. Boghosian, *Highlights of Armenian History and Its Civilization,* [Pasadena, Boghosian], 1957, էջ 10):

[97] "Cases Argued and Determined in the Circuit Courts", էջ 838.

[98] Նոյն:

սրբագրել օրէնքներու այս իմաստը: Ցանկալի կը թուի աւելի մանրամասն յայտնել, թէ որ անձերը կրնան ընդունուիլ քաղաքացիութեան: Մինչ օրէնքները անփոփոխ կը մնան, առանց փաստի, եթէ փաստը ընդունելի է, որ "սպիտակ" բառի իմաստը առաւել եւս սահմանափակուած է, այս դատարանը իրենց գոյնին պատճառով քաղաքացիութիւն պիտի չմերժէ հայերու նման օտարականներու, որոնց զայն շնորհած է մինչեւ հիմա[99]:

Հետաքրքրական էր «կովկասեաններ եւ սպիտակ անձեր» արտայայտութեան գործածութիւնը: Թէեւ երկու գաղափարները գործնապէս իբրեւ հոմանիշ կը կիրարկուէին, «կովկասեան»ի եւ «սպիտակ»ի միջեւ նուրբ տարբերութիւն մը կար. 1920ականներուն, «կովկասեան» բառը միջոցը պիտի ըլլար դառնալու, ինչպէս ամերիկացի պատմաբան Մեթիու Ֆրայ Ճէյքոպսըն գրած է, «*հաստատօրէն, վաւերականօրէն, գիտականօրէն* սպիտակ»[100]:

Ֆիզիքական նկարագրի հաստատումը, որ հայերը իրենց երեւոյթով կը նոյնացնէր արեւմտեան եւրոպացիներու հետ, հաշուի առնուած չէ վերջին շրջանի այն պնդումին մէջ, որ «խտրական օրէնքները կը ճերմկցնէին մարդիկ, որոնք այլապէս "ճերմակ" պիտի չըլլային», ինչպէս «չորս թուխ հայերը», որոնք «կասկածելիօրէն թուխ էին», որովհետեւ դատաւորը անոնց ի նպաստ վճռած էր «*վկայակոչելով Հարաւի խտրական օրէնքներ, որոնք հայերը կը տեղաւորէին գիծի "սպիտակ" կողմը*»[101]: Խտրական օրէնսդրութիւնը անշեղօրէն ուղղուած էր կրկնակի գիծ մը հաստատելու սեւի ու սպիտակի հակադիր բեւեռներուն միջեւ: Հայերը ներգրաւող սպիտակամորթութեան մասին խօսելէ ետք, անոր հակադիր՝ բացառող սպիտակամորթութեան որպէս փաստ, Լօուըլ մէջբերած է Արքանզասի օրէնք մը որ «սպիտակ եւ ափրիկեան ցեղեր»ու համար ճամփորդութեան անջատ յարմարութիւններ կը պահանջէր եւ յայտնապէս ոչ-ափրիկեցի բոլոր անձերը սպիտակ կը նկատէր, յղում ընելով նաեւ, իբրեւ լրացում, Ֆլորիտա, Վըրճինիա եւ Հարաւային Քարոլինա նահանգներու նման օրէնքներուն[102]:

---

[99] Նոյն, էջ 845:

[100] Matthew Frye Jacobson, *Whiteness of a Different Color: European Immigration and the Alchemy of Race,* Harvard University Press, Cambridge, Ma. and London, 1998, էջ 95 (ընդգծումը՝ բնագրային):

[101] A. D. Powell, *"Passing" For Who You Really Are: Essays in Support of Multiracial Whiteness*, Palm Coast (Fl.), Backintyme, 2005, էջ 105: Այս տողերը վերաշարադրուած են հետեւեալ նախադասութենէն. «Որոշ խումբերու համար, որոշ պահերու, սեւամորթներու հանդէպ խտրականութիւնը կը սպիտակացնէր, եւ վճռապէս կը սպիտակացնէր» (Jacobson, էջ 110):

[102] "Cases Argued and Determined in the Circuit Courts," էջ 845.

Հիմնազուրկ է այն պնդումը, որ դատին արդիւնքը պայմանաւորուած էր հայկական քաղաքական ճնշումներով[103]: Հարիւրամեակ մը առաջ, ամերիկահայ համայնքը որեւէ նշանակալից լծակ չունէր Ուաշինկթընի քաղաքական շրջանակներուն մէջ եւ հաւանական է, որ նոյնիսկ աննպաստ դատավճիռի մը հետեւանքներէն լաւ տեղեակ չէր: Չորս խնդրարկուները որեւէ հաւաքական օժանդակութիւն վայելած չեն: Անոնց միակ արտաքին նեցուկը «իրաւաբանական գրութիւն» մըն էր, որ ներկայացուած էր «փաստաբանական կաճառի երկու անդամներու կողմէ իբրեւ amici curiae [ժողովուրդի բարեկամներ]» (Մուրֆիլտ Սթորի՝ քաղաքացիական իրաւունքներու յայտնի դէմք, եւ գործարար Ճէյմզ Կրանթ Ֆորպզ), ինչպէս եւ «*նոթեր եւ յղումներ, որոնք ուրիշ անձեր հայթայթած են, դատի կարեւորութենէն մղուած*», առանց յաւելեալ տեղեկութիւններու[104]: Սթորի խոր համակրանք ունէր հայերու հանդէպ. 1896ին մասնակցած էր Էլիզ Այլընտ մնացած փախստական հայերուն մուտքի արտօնութիւն ապահովելու ճիգին, իսկ 1916ին դրական կարծիք պիտի տար դերկոմս Ճէյմզ Պրայսի եւ Առնոլտ Թոյնպիի հրատարակած Կապոյտ Գիրքին[105]:

Հրեաները 1899ին դասակարգուած էին իբրեւ ցեղ եւ «եբրայեցի» կոչուած 1909ին, ինչ որ վախ յարուցած էր, թէ յաջորդ քայլը ոչ-սպիտակամորթ ըլլալու յայտարարութիւն մը պիտի ըլլար: Լօուըլ գրած էր, որ «*եթէ առհասարակ չենք խօսիր ասիական կամ դեղին ցեղի մը մասին, որ կ'ընդգրկէ "ըստ էութեան Ասիոյ բոլոր բնիկ ժողովուրդները", դժուարութիւնը ա'լ աւելի մեծ է՝ այս անունը կիրարկելու արեւմտեան Ասիոյ եւ Միջերկրականի արեւելեան ափերուն ներկայ բնակիչներուն (...)*»[106]: Այս հաստատումը կը վիճարկէր հրեաներու ցեղային դասակարգումը, քանի որ անոնց պատմական հայրենիքը Միջին Արեւելքի մէջ էր եւ շրջանին մէջ բաւական մեծ հրէական բնակչութիւն կար: Դատաւորը ցոյց տուած է Գաղթականութեան Վարչութեան հետեւողականութեան պակասը երկաթեայ տրամաբանութեամբ. «*եթէ "Ասիոյ բնիկ ժողովուրդները" դուրս կը մնան քաղաքացիութենէ, ինչպէս Միացեալ Նահանգները կը պնդէ, դժուար է սողանցք մը գտնել եբրայեցիները ընդունելու համար*», քանի որ «*Միացեալ Նահանգները կ'ընդունի, որ անոնք չեն պատկանիր "ասիական կամ դեղին ցեղին", եւ պէտք է ընդունուին քաղաքացիութեան*»[107]: Այս հաստատումը մտահոգիչ բնոյթ ունէր հրեաներուն համար, որոնք ար-

---

[103] Rodolfo F. Acuña, *U.S. Latino Issues,* Greenwood Publishing Group, Westport (Ct.), 2003, էջ 24:

[104] "Cases Argued and Determined in the Circuit Courts," էջ 835, 845:

[105] Mirak, էջ 69. նաեւ՝ Vahakn Dadrian, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus,* Berghahn Books, Providence and Oxford, 1995, էջ 228-29:

[106] "Cases Argued and Determined in the Circuit Courts," էջ 838:

[107] Նոյն, էջ 838-39:

դէն ահազանգի մատնուած էին չորս այլ միջինարեւելեան ժողովուրդներու «ասիացի» յորջորջումէն, հակառակ անոր, որ անհամեմատ աւելի կարողութիւն ուէին պայքարելու գաղթականներու իրաւունքներուն համար[108]: *Independent*ի խմբագրական ակնարկը հետեւած է այս մտածողութեան գիծին, հաստատելով, որ «հայերը սպիտակ արիացիներ են», եւ աւելցնելով, որ «*զիրենք բացառող որեւէ կանոն, ինչպէս դափաւոր Լօուըլ ցոյց կու տայ, պիտի բացառէր հրեաները, որ ասիական ցեղէ են*»[109]:

Ներկայացուցիչներու Տան Քալիֆորնիոյ անդամ մը՝ Էւերիս Հէյս, 12-13 Ապրիլ 1910ին գաղթականութեան նուիրուած չորս օրինագիծեր մտցուցած է, ապահովելու համար, որ քաղաքացիութեան օրէնքները միայն պիտի կիրարկուէին «կովկասեան ցեղի սպիտակ անձերու» համար եւ որ քաղաքացիութեան օրէնքի թիւ 2169 բաժինը պէտք չէ հասկցուէր «հայ, սուրիացի կամ հրեայ եղող ասիացիները քաղաքացի դառնալը» ժխտելու համար[110]: Այս բառապաշարը անհանգստացուցած է հրէական գլխաւոր կազմակերպութիւնները, որովհետեւ ասիացիներու հետ հաւասարումը հրեաները ոչ-սպիտակ համարելու ճանապարհ կրնար բանալ: 1910ի վերջերուն, սուրիացիներու ի նպաստ դատական շարք մը վճիռներ կանխած են օրինագիծին քննարկումը եւ թեթեւցուցած՝ այդ մտահոգութիւնները[111]:

Ինչպէս գրեցինք վերը, Լօուըլ ճանչցած էր, որ հայերը, սուրիացիներուն եւ թուրքերուն պէս, քաղաքացիութիւն ստացած էին մինչ այդ, եւ կը թելադրէր, որ քոնկրէսը այժմէականացնէր օրէնքները, ճշտելու համար քաղաքացիութեան չափանիշերը: Միջոցին, աւելցուցած էր, «*այս դափարանը պիտի չմերժէ քաղաքացիութիւնը գոյնի պատճառով օտարականներու որոնք, ինչպէս հայերը, մինչեւ հիմա ստացած են զայն*»[112]: Հալաճ-

---

[108] John Higham, *Strangers in the Land: Patterns of American Nativism, 1860-1925,* Atheneum, New York, 1972, էջ 124:

[109] "Armenians Naturalized", *The Independent,* January 6, 1910, էջ 61-62:

[110] *The American Jewish Year Book,* The Jewish Publication Society of America, Philadelphia,1911, էջ 209: Հմմտ.՝ Donald Ritchie, "Congress Confronts the Armenian Genocide"՝ Jay M. Winter (ed.), *America and the Armenian Genocide of 1915,* Cambridge University Press, Cambridge, 2003, էջ 280:

[111] Goldstein, էջ 103-4, որ օրինագիծ(եր)ը վերագրած է հրէական ծագումով Նիւ Եորքի ներկայացուցիչի մը՝ Հառի Կոլտֆոկըլ:

[112] "Cases Argued and Determined in the Circuit Courts", էջ 845: Ըստ Ճանիս Օքումեանի, դատաւորը հայկական սպիտակամորթութեան պատում մը արտադրած է, որուն հիմքը «*չափազանցուած (այս պարագային՝ ասիական) փարբերութիւն մըն էր եւ օգտագործուած է սահմանելու եւ բացառելու ասիական այլութիւնը*» (Janice Okoomian, "Becoming White: Contested History, Armenian American Women, and Racialized Bodies", *Journal of the Society for the Study of the Multi-Ethnic Literature of the United States (MELUS)*, 27:2002, էջ 120): Լօուըլ պատրաստ էր սուրիացիները, հայերը եւ թուրքերը քաղաքացի դարձնելու, հիմնուելով որպէս սպիտակամորթ անոնց աւանդական ճանաչումին վրայ:

եանի գործի իր վճիռէն քանի մը օր ետք, վկայակոչած է այդ վճիռը երբ Մուտարրի անունով սուրիացիի մը քաղաքացիութիւն տուած է, այն վերապահութեամբ, որ «անոնք որ զիրենք ցեղով սուրիացի կը կոչեն, հաւանաբար աւելի խառն արիւն ունին, քան անոնք որ զիրենք իբրեւ հայ կը նկարագրեն»: Ան նաեւ նշած է, որ «*ցեղի կովկասեան-մոնկոլեան դասակարգումը ազգաբաններու որեւէ նկատելի թիւի մը կողմէ վաւերական չի համարուիր*»: Հետեւաբար, տեղին չէր գործածել «*դատական ընթացք մը, որ ապահովաբար օրէնքն ու անոր կիրարկումը կը վարկաբեկեն*», կրկին կոչ ուղղելով քոնկրէսին, որ «սպիտակ»ի նշանակութիւնը լուսաբանէր[113]:

ԲՆԻԿԱՊԱՇՏ ԱՐՇԱԻԸ ՄԻՆՉԵՒ Ա. ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏ

Բնիկապաշտ հոսանքը շարունակած է իր անդադրում արշաւը: Սահմանափակման Լիկայի անդամ մը՝ Ճոն Ն. Փոմրոյ (Սան Ֆրանսիսքոյէն), Մարտ 1910ին կրկնած է Տըքուրսի Ուորտի փաստարկները ծերակոյտի գաղթականութեան յանձնաժողովին եւ խնդրած 1882ի օրէնքի տարածումը բոլոր ասիացիներուն, «ներառեալ Թրքական կայսրութեան հպատակները», ինչպէս եւ հարաւ-արեւելեան եւ արեւելեան եւրոպացիներու վրայ, պնդելով, որ «*ներկայ գաղթականութեան երեք հինգերորդին ցեղային նկարագիրը մտահոգութեան լրջագոյն նիւթն է*»: Սեմուէլ Պենճըմին՝ ԱՄՆի առաջին դեսպանը Պարսկաստանի մէջ, համաձայն գտնուած է: Կրկնելէ ետք սովորական դարձած խօսքերը՝ հիւսիս-արեւմտեան Եւրոպայի գաղթականութեան յարմարութեան մասին, բաղդատմամբ իտալականին, Պենճըմին կրկնած է, որ ասիացիները «երբեք ինքնակառավարման որեւէ յստակ գաղափար ունեցած են»: Անակնկալ չէր, որ ասիկա նկատէր «արեան խնդիր մը իր ծագումին մէջ, աւելի քան կրթութեան», ու առաջարկէր, որ քաղաքացիութիւն շնորհուէր անոնց՝ ընտրովի, առանց թոյլատրելու, որ մեծ թիւ ըլլային երկրին մէջ[114]: Փրաթ Ֆերչայլտ դիտել տուած է, որ «օտար ազգութիւններու այս մեծ հորդաները» իսկապէս ձուլուած չէին, եւ հարց տուած, թէ երկիրը պատրա՞ստ էր «*ձեռք զարնելու ահռելի պատասխանատուութեան՝ ընդունելու օտարականներու հսկայական հորդաները, որ իւրաքանչիւր տարի կը խոնուին մեր ափերուն վրայ*»[115]: Հենրի Սաքստորֆ աւելի կտրուկ արտայայտուած է.

> Գաղթականներու այս դասակարգը, որպէս ընդհանուր կանոն, կը պատկանի անկումային եւ ցեղերու, որոնք, այդ պատճառով, ոչ-յառաջադէմ են, լճացած եւ ոսկրացած իրենց գաղափարներուն, սովորութիւններուն եւ տեսլականներուն մէջ: (...) Արեւելեան եւ հարաւարեւելեան Եւրոպայի ժողովուրդները շատ յե-

[113] "Cases Argued and Determined in the Circuit Courts of Appeals and Circuit and District Courts of the United States", *The Federal Reporter with Key-Number Annotations*, vol. 176, April-May 1910, էջ 466.

[114] *Reports of the Immigration Commission*, էջ 127, 130.

[115] Fairchild, էջ 242:

տամնաց են արուեստի, գիտութեան, գրականութեան, կրօնքի, կառավարումի, երկրագործութեան, ճարտարուեստի եւ առեւտուրի մէջ: Նշանակալից ոչինչ կը սկզբնաւորեն, կը յայտնագործեն կամ կը ստեղծեն: Հազիւ թէ բանով մը կը նպաստեն պիտանի գիտելիքներու ընդհանուր շտեմարանին:
(...) Արեան մէջ է: Ամուլ ու քարացած ռուս մը, սլաւոն մը, հունգար մը, յոյն մը, թուրք մը, իտալացի մը կամ սուրիացի մը երբեք յառաջադէմ ամերիկացիի մը պիտի չվերածուի[116]:

Գրեթէ բոլոր հեղինակները հայերը յականէ-յանուանէ յիշած չեն, սակայն, բնական է, որ զանոնք հիւսիս-արեւելեան եւրոպացիներու շարքին բացառութիւն չնկատելով, լռելեայն զանոնք անցանկալի համարած են, նոյնիսկ հակառակ Պոստոնի դատավճիռին:

Գաղթականներու դէմ խաչակրութիւնը շարունակուած է՝ միեւնոյն յանկերգը հնչեցնելով ու հայերու բազմաթիւ յիշեցումներով: Մարտ 1912ին, պահպանողական *New York Evening Sun* օրաթերթը դիտարկած է, որ «*Ամերիկան մէկ բան է, իսկ Եւրոպայի ամենէն տգէտ եւ անվստահելի բաժիններու մեծ շերտերով ծածկուած Ամերիկան՝ ուրիշ մը*», կոչ ուղղելով «որեւէ սահմանափակող ծրագիր» մշակելու: Թերթը ահազանգած էր. «*Հարցը (...) գլած-անցած է զուտ տնտեսական քննարկման մակարդակը եւ մտած՝ կալուածի մը մէջ, ուր բոլոր ամերիկացիները պէտք է միասնաբար դէմ դնեն ազգի համերաշխութեան դէմ սպառնալիքին*»[117]: Բժիշկ Ալֆրէտ Ռիտ նկարագրած է Էլիզ Այլընտ ժամանողներու առողջապահական վիճակը, խօսք ուղղելով ընդդէմ «*օտար երկիրներու տականքին եւ թափթփուկներուն, անցանկալիները՝ որոնցմէ իրենց սեփական ազգերը ազատելու խիստ հետամուտ են, որոնք բազմութիւններով կու գան մեր ափերը*»: Առաջարկած է արգիլել Յունաստանէն, հարաւային Իտալիայէն եւ Սուրիայէն գաղթականութեան մուտքը, «*ինչպէս եւ եբրայեցիներու, հունգարացիներու, հայերու եւ թուրքերու մեծամասնութեան*»[118]: Վեր. Փիթըր Ռոպըրց պնդած է, որ ամերիկեան ճարտարարուեստը եւ «Արեւելքի արիւնը» հեռու էին համաքայլ ըլլալէ. «*Սուրիացին ու յոյնը, հայն ու եբրայեցին, կը նախընտրեն նստիլ կրպակի մը մէջ օրական տասնվեց ժամ, անցորդներու առեւտուրը բռնելով, յուսալով որ հոսանքին պտոյտը զիրենք հարստութեան առաջնորդէ*»[119]: 1914ին, Է. Ռոս քով-քովի բերած է սուրիացիները, հայերը, արաբներն ու թուրքերը, եւ, անոնց բնական խելքը

[116] Henry Suksdorf, *Our Race Problems,* The Shakespeare Press, New York, 1911, էջ 340, 342:

[117] Մէջբերումը՝ Frank Warne, *The Tide of Immigration,* D. Appleton, New York, 1916, էջ 356:

[118] Alfred Reed, "The Medical Side of Immigration", *Popular Science,* April 1912, էջ 391-92:

[119] Peter Roberts, *The New Immigration: A Study of the Industrial and Social Life of Southeastern Europeans in America,* Macmillan, 1912, էջ New York, 61:

դրուատելէ ետք, ձաղկած է անոնց մաքրութեան, ֆիզիքական եւ բարոյական քաջութեան պակասը, եւ «գաղութներու մէջ կծկուելու» միտումը, որ «կը կասեցնէ ձուլումը անոնց, որոնք ձուլուելու պէտք ունին» եւ «ատակ են խճողումի, հիւանդութեան եւ անբարոյականութեան բոյներ դառնալու»[120]: Իրեն բնորոշ յայտնութենական եղանակով, չէ վարանած մարգարէանալ. «*Միայն ԻԱ. դարուն փիլիսոփայ պատմաբանը պիտի կարենայ գիտական ճշմարտութեամբ յայտարարել, թէ վաղ Ի. դարուն ամերիկեան ժողովուրդին վրայ հասած խորհրդաւոր անկումին պատճառը ժողովրդական խելքի փճացումն է՝ մեծաթիւ յետադէմ գաղթականներու ընդունելութեամբ*»[121]:

Սպիտակ գերակայութեան ախոյեանները գաղթականութեան եւ Ամերիկայի մէջ տիրող ցեղի հարցը ա՛լ աւելի ծայրայեղ կերպով պիտի ներկայացնէին: Ցեղային ու մտային զարգացման «օրէնքներ» բանաձեւելով, Չ. Վուտրըֆ յանգած է այն գաղափարին, որ «*արհական փիրապետութիւնը կենդանի կը պահէ փասը միլիոն սեւամորթ: Ամերիկայէն հանեցէք իւրաքանչիւր սպիտակամորթ, եւ սեւամորթները անձնասպան կ'ըլլան*»: Եթէ ասիկա արտակարգ բնորոշում մը չէր այնպիսի ժամանակի մը, երբ Միացեալ Նահանգներու հարաւը, գլխաւորաբար, խտրականութիւնը նուիրագործող օրէնքները կը վխտային, եզրակացութիւնը առաւել եւս ահարկու էր. «*Աշխարհի արհականացում կոչուածը անոր վերահսկողութիւնն է Եւրոպայի հիւսիս-արեւմտեան անկիւնէն, որուն միջոցով կեանքը, ազատութիւնը եւ երջանկութեան հետապնդումը բոլորի՝ բարձր կամ սփոր, հասողութեան սահմանին մէջ կը գտնուին*»[122]:

Ամերիկեան քաղաքացիութեան ուսումնասիրութիւն մը հաստատած է, որ «*“սպիտակ անձեր” խօսքը մեկնաբանուած է որպէս թէ կը յղէ ցեղի աւելի քան գոյնի, եւ ուրեմն կ'ընդգրկէ այնպիսի ժողովուրդներ, ինչպէս մեքսիքացիները, հայերը, պարսիկները, սուրիացիները, եւ դուրս կը ձգէ չինացիները, ճափոնցիները, հաուայեան-քանաքաները եւն.*»[123]: Ըստ դատական վճիռներու, սուրիացիները սպիտակ էին 1909ին (Մեսեչուսէց) եւ 1910ին (Օրեկոն), բայց ոչ 1913ին[124], երբ Հարաւային Քարոլինայի շրջա-

---

[120] Edward Alsworth Ross, *The Old World in the New: The Significance of Past and Present Immigration to the American People,* The Century, New York, 1914, էջ 190-4:

[121] Նոյն, էջ 256.

[122] Charles Woodruff, "Some Laws of Racial and Intellectual Development", *The Journal of Race Development,* October 1912, էջ 175:

[123] Arnold Johnson Lien, “Privileges and Immunities of Citizens of the United States”, տե՛ս՝ *Studies in History Economics and Public Law,* Columbia University, New York, 1913, էջ 26:

[124] Ian F. Haney López, *White by Law: The Legal Construction of Race,* New York University Press, New York, 1996, էջ 67. նաեւ՝ Sarah M. A. Gualtieri, *Between Arab*

նային դատարանի դատաւոր Հենրի Սմիթ փաստարկած է, որ 1790ին «ազատ սպիտակ անձ» կը նշանակէր «եւրոպական ցեղերուն պատկանող անձ», բայց ո՛չ «կովկասեան», «արիական» կամ «հնդեւրոպական», եւ մերժած՝ «ասիական ծնունդով արդի սուրիացի» Ֆարաս Շահիտի ամերիկեան քաղաքացիութիւն շնորհել[125]: *Արդի սուրիացիի ծագումը* երկլեզու՝ արաբերէն ու անգլերէն հատորին մէջ (1914), լիբանանցի մտաւորական ու երիցական եկեղեցւոյ պատուելի Խալիլ Ա. Պշարա հաստատած է, որ սուրիացին ասիացի էր «*այն իմաստով, որ ան բնիկ է բոլոր սպիտակ ժողովուրդներու նախնական օճախի մերձակայ մասին*», այսինքն, զուտ աշխարհագրական իմաստով: «Ասիացիներ» բառը յստակօրէն գործածուած էր իբրեւ հոմանիշ «մոնկոլեաններ»ու (չինացիներ, ճափոնցիներ եւ Ծայրագոյն Արեւելքի այլ ժողովուրդներ), «*որոնք քաղաքակրթութեան իւրայատուկ տեսակ մը ունին, որ գրեթէ անկարելի կը դարձնէ ամբողջ մոնկոլեան գաղթականութեան ցեղային խառնումը եւ ազգային ձուլումը*»: Ընդհակառակը, ըսած է, «*իբրեւ Ասիոյ բնիկ, սուրիացին պէտք է բնականօրէն դասաւորուի հայուն, եբրայեցիին, յոյնին (ասիական) եւ պարսիկին հետ: Եւ միայն սուրիացիին արգիլել մեր ամերիկեան հպատակութիւնը այնքան բացայայտօրէն անարդար եւ անհեւրեւողական պիտի ըլլար, որքան անխոհեմ՝ օրէնքը ընդհանրացնել բացառելով բոլոր ասիացիները, սպիտակ ու դեղին, քրիստոնեայ եւ հեթանոս միասին*»[126]:

1915ին, Մ. Նահանգներու Վճռաբեկ Ատեանը բեկանած է Սմիթի դատավճիռը եւ յայտարարած, թէ «*օրէնքին կրուած է այս, աւելի ազատական մեկնաբանութիւնը՝ "ազատ անձ" եզրոյթին մէջ սուրիացիները, հայերը եւ պարսիկները ներառելու համար*»[127]: Նոյն տարին, իրաւագէտներ Ուիլիըմ Մաքի եւ Ուիլիըմ Հէյլի խնդիրը ցոլացուցած են իրենց մեկնաբանութեամբ.

---

and White: Race and Ethnicity in the Early Syrian American Diaspora, University of California Press, Berkeley and Los Angeles, 2009, էջ 60-63:

[125] Sidney L. Gulick, *American Democracy and Asiatic Citizenship,* Charles Scribner's Sons, New York, 1918, էջ 70:

[126] Kalil A. Bishara, *The Origin of the Modern Syrian,* Al-Hoda, New York, 1914, էջ 40-1:

[127] *United States Circuit Courts of Appeals Reports with Annotations,* vol. 140, St. Paul: West Publishing Co., 1916, էջ 552. նաեւ՝ Helen Hatab Samhan, "Not Quite White: Race Classification and the Arab-American Experience," in Michael W. Suleiman (ed.), *Arabs in America: Building a New Future,* Temple University Press, Philadelphia, 1999, էջ 217: Անցեալ դարասկիզբին, Ալապամա նահանգի գերագոյն դատարանը որպէս թէ վճռած է, որ հայ մը սպիտակ ցեղին չէր պատկաներ (Jerry F. Hough, *Changing Party Coalitions: The Mystery of the Red State-Blue State Alignment,* Agathon Press, New York, 2006, էջ 96): Նման վճիռի որեւէ ապացոյց գտած չենք:

> “Ազատ անձ” եզրոյթին պէտք է տրուի իր հասարակ կամ ժողովրդական իմաստը: Ինչպէս սովորաբար կ'ըմբռնուի, արտայայտութիւնը կը ներառէ բոլոր եւրոպական ցեղերը եւ այն կովկասեանները, որոնք կը պատկանին Միջերկրական ծովուն շրջակայ ցեղերուն, թէկուզ համարուած ըլլան “բաց սպիտակներ” կամ “մուգ սպիտակներ”, եւ, հակառակ անոր, որ հարաւային եւ արեւելեան եւրոպական ցեղերէն ոմանք թեքնիք իմաստով դասակարգուած են իբրեւ մոնկոլեան կամ թաթարական ծագում ունեցողներ, այս մեկնաբանութեամբ համարուած է, որ [“ազատ անձեր” արտայայտութիւնը] կը ներառէ սուրիացիները, հայերը, բարձր խաւի հնդիկները եւ պարսիկները[128]

Միացեալ Նահանգներու օրէնսդրական հաւաքածոն (1916) ընթացիկ կերպով ցուցակագրած է ասիական Թուրքիա եւ Վոսփորի արեւմտեան ափը ծնած հայերը «ազատ սպիտակներ»ու շարքին[129]

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Կոչնակի 1910ի նոր տարուան խմբագրականը լաւատես տողեր կը պարունակէր.

> Ամերիկա կարծես արդէն սկսած է Մովսէսի մը պէս արդար զայրոյթով փշրել Հայկական եւ Սիւրիական զոհեր պահանջող նոր հորթն եւ վերջ տալ մորթապաշտութիւն ներմուծել ջանացող քուրմերու ջանքին գէթ Հայերու եւ Սիւրիացիներու պարագային: Քաղաքացիութեան խնդիրը յուսալից երեւոյթ կ'առնէ[130]:

Սակայն, Լօուըլի դիրքորոշումն ու դատավճիռը բացառութիւն մըն էին, քանի որ 1909-23ի դատաստանական վճիռներուն մեծ մասը հաստատած է այն գաղափարը, որ խառն կամ ասիական ժառանգ ունեցող մարդիկ սպիտակ ցեղին չէին պատկաներ: Անոր դատավճիռը հիմնուած էր փաստերու վրայ, որոնք նորէն կրնային կասկածի տակ դրուիլ տուեալ պահու մը՝ իրաւական կամ կեղծ-գիտական պատճառաբանութիւններու կիրարկումով, գլխաւորաբար՝ ֆիզիքական երեւոյթի հետ կապուած, որ բոլորովին ենթակայական հասկացողութիւն մըն էր: Ահա թէ ինչու հայերու «սահմանային սպիտակամորթութիւն»ը (borderline whiteness)[131] զիրենք խոցելի կը դարձնէր: 1911ին, Տենիըլ Ֆոլքմըրի կողմէ Գաղթականութեան Յանձնաժողովին համար պատրաստուած ցեղերու եւ ժողովուրդներու բառարանը ցոլացուցած է այս երկդիմութիւնը: Արդարեւ, հայերը սահմանած է իբրեւ «ասիական Թուրքիոյ արիական ցեղը կամ ժողովուրդը», բայց կասկած յայտնած՝ անոնց կարճ հասակին եւ կարճագլուխ գանկերուն պատճառով, որուն տափակութիւնը համեմատուած է մալայացինե-

---

[128] Mack and Hale, *Corpus Juris,* էջ 1113-1114.

[129] John A. Mallory (comp.), *United States Compiled Statutes: Annotated,* vol. 5, St. Paul, West Pub. Co., 1916, էջ 5325.

[130] «Վերջացող տարին», *Կոչնակ,* 1 Յունուար 1910, էջ 3:

[131] Jacobson, էջ 232:

րու, այսինքն՝ «մոնկոլեաններ»ու գանկերուն հետ[132]: Հանրամատչելի գրականութիւնը՝ գանկաբաշխութենէն (phrenology) մինչեւ կրօնք, շարունակած է տարածել հայերու ժամանակավրէպ դասակարգումը սեմական «ցեղ»ին մէջ[133]: Մեծ Եղեռնի օրերուն հայերու հանդէպ մեծ համակրանքով գրուած յօդուած մը ամբողջ բաժին մը նուիրած է հայերու եւ հրեաներու նմանութիւններուն *The National Geographic*ի մէջ [134]:

Արդարեւ, ամերիկեան մամուլը լայնածաւալ անդրադարձով կը լուսաբանէր վերադաս եղեռնամիտ թուրքին նոր փորձը՝ համակարգուած ջարդ կիրարկելու ստորադաս հպատակ հայուն դէմ, եւ ժամանակաւորապէս կը կասեցնէր հակագաղթականական ու ցեղապաշտ երանգներով ընթացիկ պատումը անոնց դէմ: *The Outlook* թերթը նոյնիսկ կը գրէր. «*Իբրեւ ժողովուրդ, հայերը ամենէն աւելի արծագանգ հանդիսացած են արդի կրթութեան կոչերուն: Սուրիայէն հիւսիսը գտնուող դպրոցներու 25.000 աշակերտներուն մեծամասնութիւնը պատմական ու առնական ցեղէն եղած են: Հազարաւորներ յետ-աւարտական դասընթացքներու հետեւած են Միացեալ Նահանգներու մէջ:* Կարելի է ըսել, թէ Ամերիկա յայտնագործեց հայկական ցեղը եւ զայն ներկայացուց արեւմտեան աշխարհին»[135]: 1923ին, պատմաբան Ալպերթ Պուշնէլ Հարթ տխրահռչակ խտրական ու ցեղապաշտ կազմակերպութեան՝ Քու Քլաքս Քլանի վերածնունդն ու հզօրացումը իբրեւ հանգիտութիւն օգտագործելով, յայտարարած է, թէ «թուրքը միջինարեւելեան Քու Քլաքս Քլան մըն է», որ *«ջարդեց մշակոյթով, կրօնքով, պատմութեամբ եւ ազգ մը կազմող ամէն ինչով շատ աւելի գերադաս ցեղ մը»*[136]:

1915-23 շրջանին, սակայն, ամերիկեան բնիկապաշտ եւ հակագաղթականական հոսանքը արդէն նոր թափ ամբարած էր՝ հետզհետէ օրէնսդրական նուաճումներ կատարելու, ինչ որ պիտի յանգէր 1924ի Ազգային Ա-

---

[132] *Dictionary of Races and Peoples,* Government Printing Office, Washington, 1911, էջ 16. նաեւ՝ *Abstracts of the Report of the Immigration Commission,* vol. 1, Government Printing Office, Washington, 1911, էջ 217:

[133] Տե՛ս, օրինակ՝ V. G. Rocine, *Heads, Faces, Types, Races,* Vaughn-Rocine Pub. Co, Chicago, 1910, էջ 295, որ պնդած է, որ հայերը, հրեաները եւ արաբները սեմական ցեղին կը պատկանէին եւ որ անոնց մայրենի լեզուն քաղդերէնն էր, կամ՝ Franklin E. Parker, *Christian Wisdom: A Key to Lessons in Earth Life,* The University Press, Cambridge (Ma.), 1916, էջ 174, ըստ որուն «Սեմ հաստատուած է Պարսկաստանի, Արաբիոյ եւ Սուրիոյ մէջ՝ եբրայեցիներ, հայեր, պարսիկներ, քաղդէացիներ անուններով ծանօթ սրճագոյն ցեղերուն հետ»:

[134] Hester Donaldson Jenkins, "Armenia and the Armenians," *The National Geographic,* September 1915, էջ 334-36:

[135] "The Turkish Atrocities in Armenia", *The Outlook,* September 29, 1915, էջ 262-3:

[136] Albert Bushnell Hart, "Reservations as to the Near Eastern Question", *The Annals of the American Academy of Political Science,* July 1923, էջ 123:

կունքներու («քոթա»յի) օրէնքի վաւերացումին: Ասիկա, զուգահեռաբար, վերանորոգ վտանգներ պիտի ստեղծէր, ի շարս այլոց, հայոց քաղաքացիութեան իրաւունքին ու, ըստ էութեան, հայոց ներկայութեան Միացեալ Նահանգներու մէջ, որու խորհրդանիշը պիտի դառնար Գարթոզեան փորձադատը՝ հայութեան սպիտակամորթ ըլլալու երկրորդ քննութիւնը:

THE HALLADJIAN CASE (1909): FIRST CHALLENGE FOR ARMENIAN CITIZENSHIP IN THE UNITED STATES

(Summary)

VARTAN MATIOSSIAN (**varny1@yahoo.com**)

Nativism was on the rise in the United States at the end of the nineteenth century and became the driving force of a wide conversation and a series of legislative measures on immigration, citizenship, ethnic identity, class, and discrimination, based on the dominant discourse of race. The reform to the Citizenship Act in 1870 gave the right of citizenship to free aliens of white and African descent. The concept of "white" became the crux of the problem: who would be the immigrants rightfully granted citizenship?

After the Chinese Exclusion Act (1882), attempts were made to restrict the "new immigration" of the 1890s, which brought millions of "off-white" immigrants from southeastern and eastern Europe and the eastern Mediterranean, including Armenians. Those immigrants were considered "races most alien to the body of the American people" (Henry Cabot Lodge), lacking the spirit of enterprise and self-government.

The paper discusses the discourse of the nativist and anti-immigration current with regards to the Armenians until World War I. Their social and moral features, their degree of whiteness, and their ability to integrate within American society were thoroughly questioned. In 1909 the American government disputed their whiteness for the first time in the courts, claiming that Armenians did not have the right to become U.S. citizens, but the swift ruling of the Boston Circuit Court in the Halladjian et al. case dispelled that challenge.

Boghos Nubar Pasha. Source: *La Nouvelle Égypte*, p. 211. Source: https://carnegieendowment.org/sada/61405, (accessed April 30, 2019).

IN SEARCH OF HAVEN AND SEEKING FORTUNE: THE ECONOMIC ROLE OF OTTOMAN ARMENIAN MIGRANTS IN BRITISH-OCCUPIED EGYPT (1882-1914) (PART II)[1]

BEDROS TOROSIAN (btorosian@uci.edu)

A LITTLE ARMENIAN KINGDOM OF CIGARETTES AND CAMERAS: EGYPT DURING THE *FIN DE SIÈCLE*

In 2007, writing nostalgically about Egypt's long-dead cosmopolitan past, Bruce Fleming noted that many of the cigarette manufacturers in the country used to be of Armenian, Greek, and Jewish origins.[2] This also holds true for Bulgaria, where an Armenian of Ottoman extraction named Megerditch Tomassian is described as the "founding father" of the country's tobacco industry.[3] Apart from cigarette production, photography was another occupation in which Armenians excelled for many decades, not only in Egypt but also in the entirety of what became the Middle East. Beginning with the last two decades of the nineteenth century, with the continuous migration of Ottoman Armenians from their ancestral towns and cities in Anatolia and the *Armenian Vilayets* of Ottoman Turkey, a large number of cigarette producers and photographers also made their way to Egypt. What is significant is that their large number was disproportionate to their small demographic presence, thereby, constituting, as it were, what can

[1] The first part of this paper was published in the 40th (2020) volume of the *Haigazian Armenological Review*.

[2] Bruce Fleming, "In the Brief Egyptian Spring," *The Antioch Review*, 65/4:2007, p. 643.

[3] Relli Shechter, "Selling Luxury: The Rise of the Egyptian Cigarette and the Transformation of the Egyptian Tobacco Market, 1850-1914," *International Journal of Middle East Studies*, 35:2003, p. 60; Mary C. Neuburger, *Balkan Smoke: Tobacco and the Making of Modern Bulgaria*, Cornell University Press, Ithaca, 2016, p. 51.

be described as a "little kingdom" within the actual Egyptian kingdom (i.e., the Khedivate).

This section does not aim to provide a comprehensive history of tobacco or photography in Egypt. It is rather an attempt to elaborate the less-studied role of Armenians in, and their contribution to, these two sectors of the Egyptian economy, in light of newly identified and still untapped primary sources. In addition, this section also seeks to give voice to the often-neglected, but essential, subalterns employed by Armenian-owned cigarette factories.

CIGARETTES

From Small Tobacco Merchants to Entrepreneurs: The Birth of Armenian Cigarette Workshops and Factories in Egypt

The manufacture of cigarettes by Armenians in Egypt preceded the massive migration of Ottoman Armenians in the late 1890s by more than a decade. What were the actual cause(s) that led to the relocation of several Armenian cigarette producers from Anatolia to Egypt? First, in 1872, the Ottoman state established the Tobacco Monopoly Administration to manage the proceeds generated by the lucrative tobacco trade, a position it maintained until 1877. Then, following the Empire's bankruptcy in 1875 and its devastating defeat in the war against Russia in 1877-1878, the tobacco monopoly was ceded to the European-controlled Ottoman Public Debt Administration (OPDA, founded in 1881), created exclusively to administer the state's revenues in order to regularize repayment of the debts previously incurred by the Ottoman government. Finally, in 1883, the OPDA bequeathed its tobacco monopoly rights to the Ottoman Régie Company formed by a consortium of European financial institutions (the Ottoman Bank, the Crédit Ansalt, and the Bleichröder banks).[4]

As Donald Quataert has noted, the Régie proved to be both beneficial and deleterious to different segments of Ottoman society at the same time. Apart from creating a wide range of employment opportunities for thousands of Ottoman subjects (approximately 4000-4500 people), the inauguration of the Régie also delivered a significant blow to the already-operating tobacco cultivators, cigarette manufacturers, money lenders, and cigarette retailers of diverse ethnic and religious backgrounds.[5] It came to control every single

[4] Can Nacar, "The Régie Monopoly and Tobacco Workers in Late Ottoman Istanbul," *Comparative Studies of South Asia, Africa and the Middle East* 34/1:2014, pp. 207-8.

[5] Donald Quataert, *Social Disintegration and Popular Resistance in the Ottoman Empire, 1881-1908: Reactions to European Economic Penetration*, London, New

step of the tobacco production cycle from growing the crop to the point of determining the prices of manufactured cigarettes in the market.[6] This brought about a wave of hostility and aversion against the said company's self-interest, both in terms of prices and the obligation of collecting debts formerly incurred by the Ottoman government, compelling local tobacco cultivators to sell their harvests at cheap prices and closing down more than 300 cigarette factories in Anatolia in favor of its own.[7] These developments no doubt explain why at this particular moment in time several Armenian tobacconists chose to settle on Egyptian soil, encouraged to do so by the country's more liberal political and economic environment and the availability of an abundant and inexpensive labor force, as well as its suitable climate for the processing of a variety of cigarette types.[8]

The Matossians and Melkonians came to Egypt immediately after the formation of the Ottoman Régie, in 1882. Hovhaness Matossian was among the first Ottoman Armenians to settle in Egypt and get involved in the tobacco industry there. Drawing on his experience as a young tobacco merchant and a cigarette producer in Bafra, Samsun, and Tokat in Northern Anatolia, he founded the Matossian Tobacco Commercial House in Alexandria. Observing his brother's economic successes, Garabed, Matossian's younger brother, left his ancestral homeland in 1886 and took up residence in Egypt. He established a separate business in Cairo known as the Garabed Matossian Tobacco Company. Almost a decade later, in 1896, most probably to guard against financial risks in a highly competitive market, both businesses were amalgamated giving birth to the O. and G. Matossian Co., headquartered in Cairo with an initial capital of £E 100,000 divisible into 10,000 shares. These were distributed solely among the members of the Matossian family. The company in time turned into one of the most famous Armenian cigarette factories inside and outside Egypt. Its capital rocketed to £E 150,000, and its branches spread well beyond Cairo, to places like Tanṭa and Aṣyuṭ.[9]

York University Press, New York, 1983, pp. 15-8. In 1899, the Régie employed around 8814 people.

[6] Joan Chaker, "Eastern Tobacco and the Ottoman Régie: A History of Financiers in the Age of Empire," (MA diss., American University of Beirut, 2012), p. 64.

[7] Quataert, p. 20; Nacar, p. 208.

[8] Shechter, "Selling Luxury," p. 54. By 1911, only 12 cigarette producing factories, dispersed between Istanbul, Samsun, Smyrna and Salonica, functioned in Anatolia (Quataert, pp. 17-8; Georges Lecarpentier, *L'Égypte Moderne*, P. Roger, Paris, 1925, p. 81.

[9] "Hovhaness Bey Matossian," *Arev*, February 23, 1927. The Egyptian government decorated Matossian with the Nile order and conferred upon him the first and second levels of *bey*ship. According to Rif'at, 15 years before Matossian's arrival in

In 1882, like the Matossians, the two affluent brothers Krikor and Garabed Melkonian of Kayseri also moved to Egypt. Strikingly, in a period not longer than six years since their arrival, the Melkonians succeeded in establishing a cigarette factory in Cairo as well as tobacco shops in various parts of the country, creating, in the process many job opportunities for locals and fellow nationals. This, of course, was also true for other Armenian factories as well. Due to political push factors, the Gamsaragans also chose to transfer their tobacco trade to Egypt from Istanbul, where they had run a tobacco business since 1856. Their decision to depart was mostly influenced by the rising intolerance of Armenians in Ottoman domains but also due to Egypt's expanding economy. In 1894, immediately after their arrival in Egypt, the two sons of Khatchadur Gamsaragan, namely Armenag and Dikran, established a cigarette factory in Zagazig in Lower Egypt, replacing their former factory in Smyrna, which had functioned until the formation of the Ottoman Régie in 1883.[10]

Այս տեսանկիւնից առանձնայատուկ ուշադրութեան արժանի է ամէնայն հայոց կաթողիկոս Ղուկաս Կարնեցու գահակալութեան շրջանը, երբ Պարսկաստանի տիրապետութեան տակ գտնուող Արեւելեան Հայաստանում (Երեւանի խանութիւնում) տիրում էր քաղաքական, ընկերատնտեսական անկայուն եւ դժուարին կացութիւն: Երկիրը գտնւում էր պարսկական խաների միջեւ մղուող ներքին կռիւների, ծանր հարկային քաղաքականութեան, աւերի ու կողոպուտի, արտաքին յարձակումների պայմաններում, իսկ Էջմիածնի կաթողիկոսական աթոռը՝ մշտական վտանգի տակ:

Պարսկական խաների տիրապետութեան ժամանակ, հայ կաթողիկոսները դիմում էին ամենատարբեր միջոցների՝ հայութեանն ու մայր աթոռը հնարաւոր վնասներից զերծ պահելու համար: Այդ հիմամբ էլ ձեւաւորւում է "գործակցութեան", քաղաքական յարաբերութիւնների ուրոյն համակարգ՝ մի կողմից Էջմիածնի կաթողիկոսի եւ Երեւանի խանի, միւս կողմից՝ կաթողիկոսի ու խանութեան տարբեր տիրակալների միջեւ:

Կաթողիկոսը, որպէս հոգեւոր առաջնորդ, մեծ ազդեցութիւն ունէր ոչ միայն հայութեան, այլեւ պարսիկ կառավարիչների շրջանում. վերջիններս հաշուի էին նստում նրա հետ: Դրան նպաստում էր տարածաշրջանում հայերի ու Հայաստանի զբաղեցրած կարեւոր տնտեսական եւ ռազմաքաղաքական դիրքը: Օգտագործելով պատեհ պահը, կաթողիկոսները փորձում էին Երեւանի խանութիւնում, Պարսկաստանում իշխող տիրակալներից, անգամ պարսից շահից ձեռք բերել հրամանագրեր, որոնցով վերահաստատւում էին կաթողիկոսի կալուածային, հարկային եւ այլ իրաւունքները:

ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑԻ ԱՄԷՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Իր գահակալութեան ամբողջ ընթացքում Կարնեցին մեծ ջանքեր գործադրեց Հայ Եկեղեցու իրաւունքների, վանքի գոյքի պահպանման, վանականների անվտանգութեան, հայ բնակչութեանը աւերածութիւններից, կոտորածներից ու գերեվարումից զերծ պահելու ուղղութեամբ: Մշտական պատերազմների ու երկպառակութիւնների պատճառով դժուար էր պաշտպանել մայր աթոռը: Ուստի կաթողիկոսը որդեգրեց իւրօրինակ գործելաոճ՝ ընտրելով օտար իշխողների հետ յարաբերութիւններ պահպանելու, փոխզիջումների, սիրաշահումների դիմելու, նուիրատուութիւններ կատարելու տարբերակը: Այդ միջոցներով Կարնեցին ապահովում էր Երեւանի, Նախիջեւանի, Խոյի եւ այլ վայրերի պարսիկ իշխողների հետ իր կապերը: Կաթողիկոսին յաջողւում էր այդօրինակ ճանապարհով ոչ միայն հարթել տարբեր վէճեր, հաստատել հանդարտութիւն, այլեւ՝ պահպանել էջմիածինը, հայերի վերաբերեալ բազմաթիւ խնդիրներ լուծել:

Հայոց կաթողիկոսի միջնորդութիւնների շնորհիւ տարբեր վայրերի իշխողներն լուծում էին ներքին ու արտաքին, քաղաքական, տնտեսական եւ այլ խնդիրներ, կարեւորագոյն հարցեր, ինչպէս՝ Երեւանի խանի ընտրութիւնը, մահմեդական տիրակալների միջեւ հաշտութիւն հաստատելը: Այդպիսով Կարնեցին փորձում էր կանխել հայ բնակչութեան գալիք չարիքը:

Երկրի դրութիւնը վատթարանում է յատկապէս Երեւանի Հուսէյին Ալի խանի (1762–83) գահակալութեան ժամանակ, երբ քոչուոր ցեղեր, օգտուելով խանի թուլութիւնից, ապստամբում են խանութեան դէմ, յարձակում եւ կողոպուտներ գործում: Վարուցանքի անհնարինութեան եւ ուտելիքի պաշարների սպառման այս պայմաններում՝ երկրում սով է սկսւում[1]:

Իրավիճակն աւելի է սրւում՝ 1783 Նոյեմբերի 10ին Հուսէյն Ալի խանի մահին յաջորդած ներքին գահակալական պայքարի պատճառով: Խանութեան մեծամեծները Երեւանում հաւաքւում են խորհրդի, հրաւիրում են նաեւ կաթողիկոսին: Կարնեցին 1783 Դեկտեմբերի 20ին Կ. Պոլիս՝ Իսահակ վարդապետին գրած նամակում, տեղեկացնում է որ խորհուրդը որոշում է խան հաստատել Հուսէյն Ալի խանի աւագ որդի Ղուլամ Ալիին (1783-85)[2]: Վերջինիս կարճատեւ կառավարման ընթացքում երկրում ստեղծուած ծանր ու խառը վիճակի մասին Կարնեցին 1784 Յուլիսի 16ին գրում է. «*Զի մեք թէ յորպիսի՞ հոգոց եւ տառապանաց միջի կամք ի ձեռս կեղեքիչ եւ խորամանկ պարսից, որք ոչ տան թոյլ առ ի բանալ զաչս մեր*»[3]: 1784 Հոկ-

[1] Այս ամէնի մասին կաթողիկոսի արժէքաւոր տեղեկութիւնները տե՛ս՝ Վարդան Գրիգորեան, *Երեւանի Խանութիւնը XVIII դ. վերջում*, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1958, էջ 70:

[2] Նոյն, էջ 81-82:

[3] *Դիւան հայոց պատմութեան, հտր. Ա.*, աշխ.՝ Վ. Գրիգորեան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1984, էջ 441:

տեմբերի 14ին նոյն վարդապետին նա գրում է «*…քանզի յաւուրց սպանման իշխողին երկրիս մինչեւ ցարդ կարօտ մնամք խաղաղութեան…*»[4]:

Ղուլամ Ալին դաւադրութեան զոհ դառնալով, իշխանութեան է գալիս նրա եղբայր Մահմէդ խանը (1785–1803): Վերջինիս անչափահաս լինելու պատճառով իյայտ են գալիս խնամակալութեան միքանի թեկնածուներ, որոնց միջեւ ռազմական բախումը դառնում է անխուսափելի: Այն կանխւում է Կարնեցու շնորհիւ, որը կարողանում է հաշտեցնել կողմերին[5]:

Նոր խանի գահակալութեամբ, երկրում սկիզբ են առնում նոր խժդժութիւններ: Սպանուած խանի կողմնակիցները՝ դժգոհ Մահմէդ խանից, ապստամբում են նրա դէմ, յարձակումներ գործում խանութեան գիւղերի վրայ: Այրմալու ցեղի[6] ահից Էջմիածնի շրջակայ հայ եւ թաթար գիւղերի բնակիչները թողնում են բնակավայրերն ու հաւաքւում Էջմիածնի վանքում: Ապստամբածներից մի խումբ յարձակւում եւ յափշտակում է վանքի եւ Վաղարշապատ[7] գիւղի բնակիչներին պատկանող ընտանի կենդանիները[8]:

Ստեղծուած անկայուն վիճակը շարունակւում է երկար: Իրավիճակին միջամտում է վրաց արքայ Հերակլ Բ.ը (1744–98)[9]՝ սպառնալով օգնական զօրք ուղարկել Մահմէդ խանին, ապստամբութիւնը ճնշելու: Այս միջամտութիւնը անհանգստացնում է կաթողիկոսին: Վերջինս չկամենալով կռիւների շարունակուելը եւ կանխելու համար նոր աւերածութիւններ, կրկին միջնորդում եւ յաջողում է հաշտութիւն կայացնել[10]:

Սակայն երկրում կայունութիւն չի հաստատւում. խանութեան կենտրոնախոյս ուժերը շարունակում են խռովութիւնները: Կաթողիկոսն իր նամակներում ու գրութիւններում նկարագրում է Խոյի, Նախիջեւանի եւ Երեւանի խանութիւնների միջեւ ընթացող ընդհարումները: Օգտուելով առիթից, մուղանլու թուրքերն[11] ասպատակում են երկիրը, յարձակւում Էջմիածնի վանքապատկան Օշական գիւղի վրայ, գրաւում վանքի հողերը:

---

[4] *Դիւան…, հտր. Ա.*, էջ 474:

[5] Մաղաքիա արք. Օրմանեան, *Ազգապատում, հտր. Բ.*, հրատ.՝ Վ. եւ Հ. Տէրեան-սէսեան, Կոստանդնուպոլիս, 1914, էջ 3201:

[6] Սկզբնաղբիւրներում յիշատակուող այրմալու ցեղը հաւանաբար այրումներն են՝ այժմեան ադրբեջանցի անունը կրող ժողովրդի ցեղախմբերից մէկը:

[7] Որպէս խոշոր կալուածատէր Էջմիածնի վանքն ունէր բազմաթիւ շինութիւններ, հողատարածքներ, ջրանցքներ, գիւղեր եւն., որոնցից տարեկան զգալի եկամուտ էր ստանում: Վանքը ութ վանքապատկան գիւղերից՝ Վաղարշապատ, Օշական, Աշտարակ, Եղվարդ, Աղաւնատուն, Ծաղկավանք, Կիրաշլու (վերջինս աւերուած էր) ստանում էր համախառն բերքի տասանորդը, այսինքն՝ *մուլքը*:

[8] Գրիգորեան, *Երեւանի Խանութիւնը*, էջ 91:

[9] Երեւանի բէկլարբէկ Հասան Ալի խանի (1755-62) իշխանութիւնից սկսած Երեւանի խանութիւնը դարձել էր վրացական պետութեան հարկատու, ինչը հնարաւորութիւն էր տալիս վրացական արքային միջամտել խանութեան դէպքերին:

[10] *Դիւան…, հտր. Ա.*, էջ 58-59, նաեւ՝ ծան. 1, էջ 92-93:

[11] Նախիջեւանի տարածքում բնակուած թիւրքական ծագմամբ քոչուոր ցեղ:

Այդ իրադարձութիւնների, ինչպէս նաեւ Պարսկաստանում տիրող անկայուն քաղաքական իրավիճակի մասին դարձեալ պատմում է Կարնեցին[12]: Կ. Պոլսում Էջմիածնի նուիրակ[13] Մինաս վարդապետին 1790 Սեպտեմբերին հասցէագրած նրա նամակներից մէկը կրում է «Պատմութիւն գալստեան խօյեցւոց եւ նախչուանցւոցն յերկիրս Երեւանու, եւ վնասուցն զոր անցուցին ընդ սա եւ ընդ Սուրբ Աթոռս» խորագիրը: Այն նուիրուած է երեք խանութիւնների միջեւ տեղի ունեցած բազմաթիւ զինուած ընդհարումների նկարագրութեանը, թէ ինչպէս արշաւող զօրքերը փոխադարձաբար աւերում են իրենց հակառակորդների գիւղերը: Նամակում նկարագրում են Արեւելեան Հայաստանի բնակչութեան թշուառ ու ողբերգական վիճակը, Էջմիածնում ստեղծուած տագնապալի իրավիճակը, արշաւող զօրքերի հրամանատարների ու Երեւանի խանի՝ կաթողիկոսին արուած իրարամերժ առաջարկները, վրաց թագաւորի կողմից Երեւանի խանին զինուած օգնութիւն ցոյց տալու առաջարկը եւն.[14]:

Նամակում ասւում է որ այդ ամէնն սկսուեց Խոյի խանի եղբայր Ջաֆարղուլի եւ Նախիջեւանի Քելբալի խաների դէմ Երեւանի խանի անյաջող արշաւանքներից, ինչից յետոյ Երեւանի խանը փախչում եւ ապաստանում է Երեւանում՝ այնտեղ ժողովելով շրջակայքի բնակչութեանը: Կաթողիկոսը՝ Երեւանի խանի անխոհեմ արարքների, ոչ-ճիշտ ռազմական քաղաքականութեան պատճառ է նկատում խանի «մանուկ»[15] լինելը: Պարսկական տեղական խաները, հետապնդելով Մահմադ խանին մինչեւ Երեւանի բերդ, աւերում ու հրկիզում են ճանապարհի բնակավայրերը: Այնուհետեւ ամրանում են Նորագաւիթ գիւղում, որտեղից Ջաֆարղուլի խանը կաթողիկոսին նամակ է յղում, յստակացնելով որ խաները կաթողիկոսի հետ թշնամութիւն չունեն, այլ՝ Երեւանի խանի: Նման բովանդակութեամբ նամակ է գրում Կարնեցուն նաեւ Երեւանի խանը՝ փորձելով իր կողմն ուղղել կաթողիկոսի

---

[12] *Դիւան…, հտր. Ա.*, ծան. 1, էջ 122-23, 125, 127:

[13] Էջմիածնի կողմից թեմեր գործուղուած անձ, ով պէտք է տուեալ վայրում հաւաքէր հոգեւոր հասոյթը, ժողովարարութիւն՝ հանգանակութիւն կատարէր յօգուտ թեմի, զբաղուէր հոգեւոր այլ գործերով:

[14] Այս նամակի բնագիրը գտնւում է Մատենադարանի կաթողիկոսական դիւանում (թղթ. 6, վաւ. 189), իսկ սեւագիր օրինակն ընդգրկուած է 4501 թուահամարի ձեռագրում (թթ. 1461-62): Սեւագրի մէջ նշուած չէ ամսաթիւը, դա գրուել է մաքրագրելու եւ առաքման ժամանակ: Այս նամակին որոշ չափով անդրադարձել են Հ. Շահխաթունեանը (*Դիւան հայոց պատմութեան, հտր. Ա-Բ.*, էջ 18-23) եւ Գրիգորեանը (*Երեւանի խանութիւնը,* էջ 143-45): Նամակն ամբողջութեամբ հրատարակուել է Գրիգորեանի կողմից («Ղուկաս Կարնեցու մի անտիպ երկասիրութիւնը», *Բանբեր Մատենադարանի*, 6:1962, էջ 429-35), այնուհետեւ՝ նոյն հեղինակի կողմից կազմուած աշխատասիրութեան մէջ (Վ. Գրիգորեան, *Դիւան հայ վիմագրութեան, հտր. Բ.*, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 2003, էջ 556-58):

[15] Նկատի ունի 18 տարեկանում գահակալած Երեւանի Մահմէդ խանին:

համակրանքը: Նորագաւիթում բանակած խաներն իվերջոյ ստիպուած հեռանում են գիւղից՝ պարենի պակասի պատճառով (կաթողիկոսը գրում է սովի պատճառով, ինչը, բնականաբար վերաբերւում է ամբողջ երկրին): Այնուհետեւ, քանի որ լուրեր են տարածւում, որ վրաց արքան զօրքով գալիս է, Օգոստոսի 29ին նահանջելով դէպի Էջմիածին, երկու խաների զօրքերը հրկիզում են իրենց ճանապարհին ընկած Փարաքար գիւղը, աւերում բնակավայրերը: Շրջակայքի մահմեդականները եւս, օգտուելով առիթից, գլուխ են բարձրացնում, մտնում վանքի տարածքները, յափշտակում վանքի ու շրջակայ բնակիչների նախիրը, կողոպտում հայ բնակչութեանը:

Հասնելով Ս. Գայիանէ վանքի մօտերքը, պարսիկները պահանջում են, որ կաթողիկոսն իրենց մօտ բանագնաց ուղարկի, սակայն վերջինս մերժում է՝ պատճառաբանելով, որ վանքը վերահսկւում է Երեւանի խանի մարդկանց կողմից[16]: Կարնեցին սակայն, Խաչատուր եւ Ներսէս վարդապետերի միջոցով գրութիւն է յղում խաներին՝ փորձելով մեղմել իրավիճակը: Կաթողիկոսն ակնարկում է, որ ընդհանուր բարեկամութիւնը խախտել են խանները՝ վանքի նախիրը քշել-տանելով, միքանի հոգու գերելով եւ պահանջում է վերադարձնել աւարն ու մարդկանց: Խաները դրա փոխարէն կաթողիկոսից ընծաներ են պահանջում, ինչը չստանալով, հեռանում են, ետդարձի ճանապարհին աւերածութիւններ կատարելով[17]:

Նկարագրելով խաների արշաւանքի հետեւանքները, Մաղաքիա արք. Օրմանեանը գրում է. «*Արշաւանքին արդիւնքը Երեւանի գաւառին հայերուն ընդհանրապէս, եւ մայր աթոռին մասնաւորապէս կրած վնասներն եղան, ոչ միայն ի թշնամեաց անտի, այլեւ յերկրացի աւազակասարաս սրիկայիցն*»[18]:

Երեւանի խանը մտադրւում է դէպի Նախիջեւան արշաւանք կազմակերպել՝ խաներից վրէժ լուծելու համար: Խանի 1790 Հոկտեմբերի արշաւանքն անյաջողութեան է մատնւում. «*…եւ այսքանեօք յարուցմամբք զերկիրս եւ զմեզ վնասեաց, քան թէ զթշնամիսն*»[19]: Կարնեցին նկարագրում է այս արշաւանքների հետեւանքով Խոյի հայերին, Արարատեան տարածքի, յատկապէս Երեւան քաղաքի բնակիչներին պատճառուած վնասների մասին, վկայում որ այդ արշաւանքի պատճառով երկրում բազմաթիւ եկեղեցիներ եւ վանքեր աւերուեցին, բնակիչներ զոհուեցին, մարդիկ գերուեցին[20]:

Արշաւանքների ընթացքում, ինչպէս նախկինում, խաները փորձում են ձեռք բերել հայոց կաթողիկոսի գործակցութիւնը: Ջաֆարղուլի բէկը Ղու-

---

[16] Օրմանեան, էջ 3212:

[17] *Դիւան…, հտր. Ա.*, ծան. 1, էջ 146-47:

[18] Օրմանեան, էջ 3213:

[19] *Դիւան հայոց պատմութեան, հտր. Բ.*, էջ 568:

[20] Օրմանեան, էջ 3213, ծան. 1, էջ 141:

կաս կաթողիկոսին նամակ է գրում՝ իր բարեկամութիւնն առաջարկելով կաթողիկոսին՝ ընդդէմ Երեւանի Մահմէդ խանի:

Մահմէդ խանն իր հերթին վախենալով, որ Ջաֆարղուլի բէկը կարող է յարաբերութիւնների մէջ մտնել կաթողիկոսի հետ եւ նրանից ստանալ պարեն իր զօրքի համար, իր հերթին նամակ է ուղարկում Կարնեցուն՝ գրելով, որ ինքը պատրաստութիւն է տեսնում թշնամու վրայ յարձակուելու: Հետեւաբար, խանն արգելում է կաթողիկոսին որեւէ յարաբերութիւն ունենալ Ջաֆարղուլի բէկի հետ, իսկ վերջինիս զօրքերը Էջմիածնի վրայ գալու դէպքում պահանջում է դիմադրութիւն ցոյց տալ եւ ետ մղել[21]:

Փաստօրէն, երկու կողմերի համար խիստ կարեւոր էր կաթողիկոսի դիրքորոշումը, քանի որ վերջինս իր հեղինակութեամբ կարող էր նպաստել որեւէ կողմի յաջողութեանը: Բացի այդ, Էջմիածինը նրանց համար կարող էր հանդիսանալ պարենի եւ դրամի աղբիւր, ծառայել որպէս օթեւան, ինչից մշտապէս օգտւում էին պարսիկ առաջնորդները:

Կաթողիկոսը, չարձագանգելով Ջաֆարղուլի բէկի առաջարկին, նրա մօտ ո՛չ մարդ է ուղարկում, ո՛չ ընծայ, ինչը վերագրւում է կաթողիկոսի վախկոտ բնաւորութեանը[22]: Կարծում ենք, կաթողիկոսն իր քայլը կատարել է հաշուարկելով երկու խաների՝ միմեանց նկատմամբ յաղթանակի հասնելու հաւանականութիւնն ու նրանցից ունեցած Հայաստանի կախուածութիւնը: Իվերջոյ, Երեւանի խանութիւնը գտնւում էր Մահմէդ խանի տիրապետութեան տակ եւ կաթողիկոսի օգնութիւնը Ջաֆարղուլիին կարող էր խիստ թանկ արժենալ ոչ միայն կաթողիկոսի, այլեւ հայ բնակչութեան համար:

Դեռեւս չէին դադարել երկրի առաջ ծառացած ներքին ու արտաքին սպառնալիքները, երբ սկսուեց պարսիկ Աղա Մուհամադ խանի[23] արշաւանքը: Նա 1794ին Պարսկաստանի շահ հռչակուելով՝ մտածում է վերահաստատել պարսկական տիրապետութիւնն Արեւելեան Հայաստանի, Քարթլի-Կախէթի եւ պարսկահպատակ միւս տարածքների վրայ: Լսելով շահի առաջխաղացման մասին, կաթողիկոսը նախազգուշական միջոցների է դիմում: Նոյն 1794ին նա միաբանների ժողով գումարելով, Էջմիածնի բոլոր թանկարժէք եւ հազուագիւտ զգեստները, իրերը, գրքերը եւն. 21 սայլով ուղարկում է Թիֆլիս[24]:

Այդ ամէնի մասին 1794 Յունիսին Կարնեցին Էդիրնէի (Ադրիանուպոլիս) մահտեսի պարոն Գէորգին գրում է, որ շահ դարձած աղա Մուհամադը Թաւրիզի Սուլէյման սարդարին 20,000 զօրքով ուղարկել է Թաւրիզ, տա-

---

[21] *Դիւան…, հտր. Ա.*, ծան. 1, էջ 145:

[22] Նոյն:

[23] Աղա Մուհամադ խանը (1743--97) Պարսկաստանում Ղաջարների Հարստութեան հիմնադիրն էր. նա շահ հռչակուելով, նուաճողական լայն ծրագիր է մշակում Անդրկովկասի դէմ՝ փորձելով պարսից տիրապետութիւնը տարածել այստեղ:

[24] Գ. Աղանեանց, *Դիւան հայոց պատմութեան Դ.*, Տպ. Տ. Ռօտինեանցի, Թիֆլիս, 1902, էջ ԾԷ:

րածքի բոլոր խաներին հպատակեցրել է, եւ լուրեր կան, որ ինքն էլ գալիս է դէպի Երեւան: «Անհնարին աղէտք հասին բնակչացն»[25], գրում է Կարնեցին Սուլէյմանի ու Խոյի խանի արշաւանքների հետեւանքների մասին:

Երեւանի խանը, անհանգստանալով, կաթողիկոսին հրաւիրում է ստեղծուած իրավիճակի շուրջ խորհրդակցութեան: Այստեղ է հաւաքւում նաեւ խանի կողմից տեղահան արուած շրջակայքի եւ Երեւան քաղաքի բնակչութիւնը: Այս իրադարձութիւնների մասին կաթողիկոսը Կ. Պոլիս՝ մահտեսի Նիկողայոս Եղիազարեանին 1794 Յունիսին գրում է. «*…այժմոյս կարի վրդովեալ գոյ երկիրս մեր եւ մեզ ոչ գոյ հանգստութիւն*»[26]:

Երեւանում գտնուելու ընթացքում կաթողիկոսը մի վարդապետի միջոցով նամակ է գրում շահին՝ փորձելով մեղմել վերջինիս բարկութիւնը եւ համոզել չյարձակուել երկրի վրայ[27]: Կարելի է ենթադրել, որ ամէնայն հաւանականութեամբ կաթողիկոսը այն գրել է Երեւանի խանի առաջարկով եւ ցանկութեամբ: Մինչ կաթողիկոսը Երեւանում էր, շահի ու սարդարի կողմից գրութիւն է ուղարկւում թէ առայժմ յարձակում չեն գործի:

Այնուամէնայնիւ, կաթողիկոսը չվստահելով շահի խոստմանը, Թաւրիզի, Խոյի եւ այլ վայրերի հայ հոգեւոր եւ աշխարհական գործիչների միջոցով իր ուշադրութեան կենտրոնում է պահում շահի ճանապարհի ուղղութիւնը[28]: Ծանօթների միջոցով տեղեկանալով նրա Արդաբիլ հասնելու մասին, Կարնեցին նրա մօտ է ուղարկում Յովհաննէս վարդապետին՝ խնդրելով արշաւանքի ժամանակ էջմիածնի վանքը զերծ պահել աւերից ու կողոպուտից: Նոյնաբովանդակ նամակներ է ուղարկում շահի զինակիցներ Միրզա Շեֆիին, Թաւրիզի սարդար Սուլէյմանին, Հուսէյին ու Ջաֆարղուլի խաներին[29]: Յատկանշական է, որ Կարնեցին առաջին անգամ նշուած անձանց, ինչպէս կարգն է, նուէրներ չի ուղարկում՝ սպասելով դէպքերի յետագայ ընթացքին[30]:

Կաթողիկոսի ջանքերի եւ փրկագինի շնորհիւ էջմիածինը զերծ է մնում յարձակումներից: Այդուհանդերձ, կաթողիկոսը շարունակում էր հաւատ չընծայել շահին, ինչի ապացոյցն է այն, որ նա նախապատրաստական աշխատանքներ էր տանում հնարաւոր յարձակումից խուսափելու համար, այդ թւում՝ վանքի նախիրը տեղափոխում է Գօշավանք[31]:

Այդ ընթացքում Երեւանի խանի փորձերը՝ ռազմական օգնութիւն ստանալու Հերակլ արքայից, ապարդիւն են անցնում եւ նա հարկադրուած

---

[25] Մեսրոպ Մաշտոցի Անուան Հին Ձեռագրերի Ինստիտուտ (ՄՄ), ձեռ. հմր. 4538, թ. 33ա:

[26] ՄՄ, ձեռ. հմր. 4538, թ. 17ա:

[27] ՄՄ, ձեռ. հմր.4538, թթ. 17ա, 22բ:

[28] ՄՄ, ձեռ. հմր. 4424, թ. 120ա:

[29] *Դիւան…, հտր. Ա.*, էջ 28, ծան. 1, էջ 156:

[30] ՄՄ, ձեռ. հմր. 4424, թ. 120ա:

[31] *Դիւան…, հտր. Ա.*, ծան. 1, էջ 157:

պատրաստւում է Սուլէյման սարդարի մօտ պատանդներ ու ընծաներ ուղարկել: Ամբողջ ծախսը կատարւում է ժողովրդի հաշուին: Կաթողիկոսը գրում է, որ խանի մարդիկ կատաղութեամբ գիւղացիներից սկսում են հարկեր հաւաքել: Էջմիածնի վանքից պահանջում են մեծ գումար, կաթողիկոսն աշխատում է պակասեցնել գումարը, բայց չի յաջողւում. «*…Եւ որքան փորձեցինք պակասացնել՝ բողոքելով, խնդրելով, չեղաւ*»[32՝] գրում է Կարնեցին Կ. Պոլսի Զաքարիա պատրիարքին:

Գումարի մի մասը կաթողիկոսը փոխ է առնում Երեւանի վաճառականներից: Աւարն ու գումարը հաւաքուելուց յետոյ Երեւանի խանն այդ ամէնն ուղարկում է Նախիջեւան՝ Սուլէյման սարդարին, վերջինս էլ՝ Աղա Մուհամադ շահին[33]:

Սակայն դրանով եւս յարձակման վտանգը չի վերանում եւ կաթողիկոսը, ոչ ոքից օգնութիւն չյուսալով, փորձում է ինքնուրոյն բանակցութիւններ վարել շահի ներկայացուցիչ սարդարի հետ եւ անձամբ գնում է սարդարի մօտ: Այդ այցի հետեւանքների վերաբերեալ նա գրում է. «*…նեղութիւն եւ վնասս կրեցաք եւ ծանր պարտքեր դիզուեցին, բայց Աստծոյ նախախնամութեամբ շինութիւնը Սուրբ Աթոռի եւ մեր գեղջն անխանգարելի մնաց*»[34]: Փաստօրէն կաթողիկոսը թանկարժէք նուէրներ եւ մեծ գումարներ նուիրաբերելով, հերթական անգամ վանքը զերծ է պահում յարձակումից:

1795 Յունիսի վերջին Աղա Մուհամադ շահը 50,000 զօրքով անցնում է Արաքսը եւ ներխուժում Անդրկովկաս: Միաժամանակ նրա զինակից Ալիղուլի խանը պաշարում է Երեւանի բերդը: Աւելի քան մէկ ամիս (35 օր) տեւած Երեւանի պաշարման ընթացքում Երեւանն ու ամբողջ երկիրը ենթարկւում են մեծ աւերածութիւնների:

1795 Յուլիսի 27ին Կարնեցին բանագնաց է ուղարկում Ալիղուլի խանի մօտ, իսկ յաջորդ օրը գնում խանի բանակը՝ բանակցութիւններ վարելու փրկագնի վերաբերեալ. «*Գնաց Ղուկաս կաթուղիկոս բազում ընծայիւք ի տեսութիւն նմա, եւ մեծարի ի նմանէ առ երեսս ըստ խորամանկութեան Պարսից, բայց եւ ինքն Աղա-մահմատ շահ անցեալ ընդ Երասխ ի Խուտպափրին՝ դիմէ ի յԱրցախ…*»[35]: Խանը կաթողիկոսից պահանջում է 10,000 թուման[36]. վերջինս կարողանում է պակասեցնել գումարը՝ 4000ի: Այդքան գումար չունենալով, Կարնեցին պարտք է վերցնում Զաֆարղուլի խանից՝ 400, Մարաղայի Ահմէդ խանից՝ 200 թուման[37]: Փրկագնի միջոցով էջ-

---

[32] ՄՄ, ձեռ. հմր. 4538, թթ. 27ա, 45ա:

[33] *Դիւան…, հտր. Ա.*, ծան. 1, էջ 154:

[34] ՄՄ, ձեռ. հմր. 4538, թ. 45ա:

[35] «Յիշատակարան ազգային արդեան պատմութեան համար», *Կռունկ հայոց աշխարհին*, Թիֆլիս, 1862:Դ, էջ 284:

[36] Պարսկական դրամական միաւոր:

[37] ՄՄ, ձեռ. հմր. 4481, էջ 351ա-352ա:

միածնի մայր աթոռն ազատւում է թալանից, իսկ նրա պարիսպների ներսում հաւաքուած հայ բնակչութիւնը՝ կոտորածից ու գերեվարումից[38]:

1795 Օգոստոսի վերջերին Երեւանի խանի եւ Աղա Մուհամադ շահի ներկայացուցիչ Ալիղուլի խանի միջեւ հաշտութիւն է կնքւում, ապա շահն անցնում է հիւսիս եւ աւերելով Թիֆլիսը, գնում Գանձակ, հուսկ՝ Մուղանի դաշտ:

Թիֆլիսի ճանապարհին նա աւերում ու կողոպտում է ամէն ինչ, յափշտակելով նաեւ Էջմիածնի 6 սայլ կազմած գոյքը (նաեւ՝ Ղազար Ա. Ջահկեցի (1737–51) կաթողիկոսի թագը, վակասը եւ շուրջառը) եւ գերիներ տանում[39]:

Կաթողիկոսը հասկանում էր, որ վտանգը չէր նահանջել եւ Թիֆլիսի բախտին կարող էին ենթարկուել նաեւ մայր աթոռն ու շրջակայքը: Ուստի, երբ լուրեր են հասնում, որ Աղա Մուհամադը Թիֆլիսից վերադառնում է, նա փորձում է նոր բանակցութիւններ սկսել շահի հետ: 1796ին նա Դաւիթ եւ Յովհաննէս վարդապետերին թանկարժէք նուէրներով ուղարկում է շահի մօտ, յայտնում նրան իր հպատակութիւնը եւ հրովարտակ խնդրում: Շահը վարդապետերին ընդունում է «*…հաճութեամբ …եւ հրովարտակաւ միամտութեամբ դարձուցանէ անդրէն*»[40]:

Կաթողիկոսի ձեռնարկումների արդիւնքում Հոկտեմբերին շահը Մուղանի դաշտից Երեւան է ուղարկում Սուլէյման սարդարին, որն իր հետ բերում է նաեւ հրամանագիր կաթողիկոսի անունով: Կարնեցին այն ստանալու դիմաց ստիպուած է լինում թանկարժէք նուէրներ տալ, որից «*…անպատելի վնասակրութիւն եղեւ եւ ի գորգոյ եւ յայլոց դատարկեցաք*»[41՝] գրում է նա: Այդ գնով կաթողիկոսին յաջողւում է ստանալ շահի կողմից հաստատուած կաթողիկոսի իրաւունքներ, իսկ Էջմիածինը զերծ պահել հնարաւոր հարստահարութիւններից ու թալանից:

Այդ ընթացքում Երեւանի խանն իր հերթին ստիպուած էր գնալ Աղա Մուհամադ շահի մօտ՝ իր հպատակութիւնը յայտնելու, ինչի համար կաթողիկոսից վերցնում է 200 թուման, 7 ջորի եւ 14 ուղտ: Կարնեցին ստիպուած է լինում 1795 Դեկտեմբերին նամակով Կարինի հայ մեծահարուստ պարոն Հայրապետից խնդրել 10,875 ղուրուշ[42]:

Աղա Մուհամադ խանի արշաւանքները ծանր հարուած հասցրին Անդրկովկասի բնակչութեանը: Երեւանի խանութեան թշուառ վիճակի, սովի,

---

[38] *Հայոց պատմութիւն, հտր. 3, գիրք I*, ՀՀ ԳԱԱ հրատ., Երեւան, 2010, էջ 380:

[39] Հայրապետը յետագայում բազմաթիւ հայ եւ վրացի գերիների դրամով գնեց եւ մեծ դժուարութեամբ վերադարձրեց նաեւ կողոպտուած աթոռապատկան իրերի մեծ մասը: Լսելով, որ Ղազար կաթողիկոսի կողոպտուած կաթողիկոսական իրերը ձեռքից ձեռք են անցնում, նա տարբեր ուղղութիւններով նամակներ է յղում՝ կոչ անելով գտնել, փրկագնել եւ ուղարկել մայր աթոռ (Աղանեանց, էջ ԾԷ-ԾԸ. նաեւ՝ Օրմանեան, էջ 3216-17):

[40] *Դիւան…, հտր. Ա.*, ծան. 1, էջ 177, 180:

[41] Նոյն, էջ 166:

[42] Նոյն, էջ 169:

աղքատութեան, հարկերի, բնակչութեան երկիւղի, Երեւանի խանի կողմից բնակչութեան հանդէպ սահմանուած նոր պարտաւորութիւնների, մայր աթոռի տնտեսական ծանր վիճակի մասին վկայում են Կարնեցու նամակները[43]: «*…Ձի յայս երեք տարիս մինչ ներքինի բռնաւորն յայս կողմն շարժեցաւ, անհնարին աղէտք հասին յարեւելեան տանս եղելոց մերազնեայց եւ չափազանց վնասք Սուրբ Գահիս եւ նեղութիւնք մեզ…*»[44], գրում է Կարնեցին Իզմիրի Կարապետ Չելիկեանին: Ի լրումն այս ամէնի, Ալիղուլի խանը հրաման է արձակում Արարատեան Երկրից իր համար հայ օրիորդներ հաւաքել[45]: Նա նաեւ նուէրի կարգով մեծ գումար է պահանջում կաթողիկոսից: Վերջինս գնում է Երեւան, 38 օր մնում այնտեղ՝ փորձելով պակասեցնել գումարը, բայց չի յաջողւում, ստիպուած մի մասը վճարում է, միւսի դիմաց «սանատ»՝ պարտամուրհակ տալիս[46]:

Շահն այդ ընթացքում պատրաստւում էր դարձեալ յածակուել Այսրկովկասի վրայ, ինչը նորից մեծապէս անհանգստացնում է կաթողիկոսին: Արշաւանքն սկսուեց 1797ի գարնանը, սակայն Մայիսի կէսերին շահը սպանւում է Շուշիում: Այդ առիթով կաթողիկոսը Հերակլին ու Գէորգի արքայորդուն նամակով յայտնում է բռնակալից ազատուելու իր ուրախութիւնը[47]:

Անգամ շահի մահից յետոյ երկար ժամանակ երկիրը չի կարողանում ուշքի գալ արշաւանքների հետեւանքներից. շարունակւում են պարսկական ասպատակութիւնները: Կարնեցու գահակալութեան վերջին տարիներին Երեւանի վրայ յարձակւում է Մակուի սուլթանի որդի Հասան խանը եւ գրաւում բերդը: Կաթողիկոսը գնում է խանին տեսութեան՝ հաւանաբար որոշելու խանի նպատակներն ու նրա հետ բանակցելու հնարաւորութիւնները[48]:

Իրենց կեղեքիչ քաղաքականութիւնը շարունակում էին տեղի խաները եւս. «*Աչք չենք բացում թէ՛ բռնաւորի կողմից, թէ՛ եւր բարձման նրա՝ ի նորացնոցն նորա, նաեւ ի մերձաւորացից մերոց տզրկաբարոյ եւ կեամաշ կեղեքչաց, որով իբրու գոյաթափ եղեւ Սուրբ տունս…*»՝ գրում է Կարնեցին երկրի ներքին ու արտաքին վիճակի մասին[49]:

---

[43] *Դիւան…, հտր. Ա.*, ծան. 1, էջ 178-79, 182:

[44] ՄՄ, ձեռ. հմր.4538, թ. 60բ:

[45] Իմանալով այդ մասին, Կարնեցին կարգադրում է ութ տարեկանից բարձր բոլոր աղջիկներին ամուսնացնել, եւ երբ խանի ծառայողները կամենում են իրագործել նրա հրամանը, Երեւանի խանութեան մեջ խանին տանելու օրիորդ այլեւս չէր մնացել (Մ. Մսերեանց, *Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի. ի Սիմէօնէ մինչ Յովհաննէս Ը*, տպագրութիւն Ղարսաուաբ Մսերեանց, Մոսկուա, 1870, էջ 11):

[46] *Դիւան…, հտր. Ա.*, ծան. 1, էջ 182:

[47] ՄՄ, ձեռ. Հմր. 2922, թ. 33բ. նաեւ՝ Աղանեանց, էջ 657:

[48] *Դիւան…, հտր. Ա.*, էջ 34. նաեւ նոյնի՝ *Երեւանի խանութիւնը*, էջ 185:

[49] ՄՄ, ձեռ. հմր. 4538, թթ. 60բ, 67ա:

Երեւանի խանը որոշ դէպքերում փորձել է անգամ Էջմիածնի վանքից զինուորներ ստանալ[50]: Կաթողիկոսն ամէն գնով խուսափել է՝ փոխարէնը խանին ուղարկելով դրամական օգնութիւն: Խաները նաեւ տնտեսական պահանջներ էին ներկայացնում կաթողիկոսին: Բաւական է միայն նշել, որ Մահմէդ խանը Երեւանի բերդում շինարարական աշխատանքներ կատարելու նպատակով տանում էր Էջմիածնի վանքի համար աշխատող քարհատներին եւ միւս վարպետերին, ինչի պատճառով վանքի շինարարական աշխատանքները դանդաղում կամ կանգ էին առնում. «*…Եւ զգտանեցեալսն եւս իշխօղն տանի վասն իւր շինուածոցն*»[51], գրում է հայրապետը:

Ժամանակի այնպիսի թանկարժէք ու կարեւոր առարկայ, ինչպիսին ժամացոյցն էր, պարսիկ իշխողները մշտապէս պահանջել են Էջմիածնից: Աւելին, դրանց անսարքանալու դէպքում ժամացոյցները վերադարձւում էին Էջմիածին՝ վերանորոգման տալու[52]: 1787 Յունիսին Խոյ եւ Թաւրիզ յղած նամակները փաստում են, որ Մաղազբերդի[53] բէկերը, ինչպէս նաեւ այլ խաներ կաթողիկոսից խնդրել են ուղարկել ժամացոյց[54]:

Այսպիսով, մայր աթոռն ու երկիրը կողմնակի յաւակնորդներից զերծ պահելու նպատակով կաթողիկոսը հարկադրուած որդեգրել էր խուսանաւող դիրքորոշում: Մի կողմից գործակցել պարսիկներին թշնամի ու նրանց դիմակայելու ընդունակ ուժերի հետ, միւս կողմից երբեմն ստիպուած էր լինում հանդէս գալ որպէս պարսիկ խաների պահանջների կատարածու:

Պարզւում է, որ Խոյի խաներից Սաֆաթալին ըմբոստանալով Ջաֆարղուլի խանի դէմ, ապաստանել էր թիֆլիսաբնակ երեւելի Եսայի Արղութեանցի ընտանիքում: Ջաֆարղուլին կաթողիկոսին միջնորդում է՝ խանին յանձնել իրեն: Կաթողիկոսն Արղութեանին յորդորում է յանձնել խանին՝ ըզգուշացնելով, որ Ջաֆարղուլին այժմ սարդար է եւ նրա խօսքը «զանց առնել ո՛չ լինէր»[55], քանի որ դա կարող էր վտանգաւոր հետեւանքներ ունենալ ամբողջ մայր աթոռի համար. «*…եւ եթէ ի կողմանէ տաճկիդ զիրս պահանջեցէք մեք եմք վճարելոց, քանզի մինչ բռնաւորն ծանեաց ձեզ եւ գրեաց մեզ հոգն արկանէ ի պարանոց մեր եւ ծանրութիւն ի վերայ Սրբոյ Աթոռոյս է*»[56]:

Նման իրավիճակում Կարնեցին աչալուրջ հետեւում էր շրջակայ երկրների ամենատարբեր իրավիճակներին: Թէ որքան լաւատեղեակ էր նա ժամանակի քաղաքական իրադարձութիւններին՝ երեւում է իր նամակներից, որոնք տեղեկացնում են շրջակայ պետութիւնների վերաբերեալ[57]:

---

[50] *Դիւան…, հտր. Բ.*, էջ XVI:

[51] Նոյն, էջ 569:

[52] Նոյն, էջ 255, 256:

[53] Բերդ Արարատեան Երկրում, պատմական Շիրակում, Ախուրեան գետի ափին:

[54] *Դիւան…, հտր. Բ.*, էջ 253-54, 515:

[55] ՄՄ, ձեռ. հմր.4538, թ. 63բ:

[56] ՄՄ, ձեռ. հմր.4538, թ. 64ա:

[57] *Դիւան…, հտր. Ա.*, ծան. 1, էջ 128. նոյնի՝ *Դիւան…, հտր. Բ.*, էջ 137-38:

Նամակներն ու Կարնեցու գրութիւններն արտայայտում են կաթողիկոսի նուրբ դիւանագիտութիւնը, շրջահայեաց ու զգուշ վերաբերմունքը: Կարնեցին իրեն յատուկ զգուշաւորութեամբ Կ. Պոլսի պատրիարք Զաքարիային եւ այլոց գրած նամակներում սոսկ փոքրիկ ակնարկներով, մէկ նախադասութեամբ ծանուցում է պարսկական արշաւանքների մասին՝ նշելով «երկրի վրդովելը», «երկրի խառնակ վիճակը»[58]:

Այսպիսով, Ղուկաս Կարնեցու հովուապետութեան շրջանում Հայոց Եկեղեցին շարունակեց իր քաղաքական շրջահայեաց գործունէութիւնը: Եկեղեցին իր արտաքին քաղաքական հայեցակարգով կարողացաւ պահպանել երկրի ներսում նուազագոյն խաղաղութիւնը: Իր գործունէութեամբ կաթողիկոսը կարողացաւ շատ անգամ Էջմիածնի վանքն ու շրջակայքի հայ բնակչութեանը զերծ պահել պարսիկների կողմից սպասուող իրական վտանգից: Միւս կողմից պահպանուեցին ու ամրապնդուեցին Էջմիածնի եւ հայկական թեմերի, այդ թւում՝ պարսկական, յարաբերութիւնները:

THE SOCIO-POLITICAL ROLE PLAYED BY THE PASTOR CATHOLICOS GHUKAS KARNETSI (1780-1799)

(Summary)

HASMIK AMIRJANYAN (Amirjanyan.hasmik@rambler.ru)

The article highlights the role played by the Catholicos Ghukas Karnetsi (1780-1899) from his seat in the Cathedral of Holy Etchmiadzin at a time when Eastern Armenia was under Persian rule and the local khans and emirs fought against each other.

The paper argues that the Catholicos played a role that went far beyond his religious mission. The recurring fighting between the different local rulers devastated the area, which was mainly populated by Armenians. The latter were forced into misery and were financially ruined. Catholicos Ghukas, as the religious leader of the Armenians, took the initiative to address the socioeconomic needs of his flock. However, his initiatives surpassed these needs as he acquired the role of peacemaker between the belligerent Persian rulers. At certain points the Catholicos preempted the attacks, invasions and infighting of neighboring rulers through mediation and offering gifts and presents in order to forestall the ruining of villages and residential areas mainly populated by Armenians.

[58] ՄՄ, ձեռ. հմր.4424, թթ. 100բ, 121ա:

ԱՐՑԱԽԻ ԿՈՒՍԱՆԱՑ ԱՆԱՊԱՏՆԵՐԸ

ՀԵՂԻՆԷ ՄԿՐՏՉԵԱՆ (heghmk@yahoo.com)

ՄՈՒՏՔ

Հայ Եկեղեցու պատմութեան ընթացքում կանանց մենաստանները մեծ տարածում չեն գտել: Սակաւ են նաեւ կուսանոցների մասին պատմագրական ու մատենագրական տեղեկութիւնները: Այդուհանդերձ, յայտնի են մի շարք հայ կուսանաց վանքեր, որոնք պատմական տարբեր ժամանակներում[1] գործել են ինչպէս Հայաստանում, այնպէս էլ Հայաստանի սահմաններից դուրս: Առաւել յայտնի են կուսանոցների վերազարթօնքի դարաշրջան համարուող ԺԷ. դարի կուսանոցները, որոնցից նշանաւոր են յատկապէս Սիւնեաց Աշխարհի գրչութեան կենտրոն կուսանոցները:

Այս յօդուածում կ'անդրադառնաք Արցախի կուսանաց անապատներին, որոնք գործել են պատմական Արցախի տարբեր գաւառներում:

Հարկ է նշել, որ դարերի ընթացքում փոփոխուել են Արցախի սահմաններն ու վարչական բաժանումները: Մեր ուսումնասիրութեան մէջ ներկայացուող կուսանոցներն ընդգրկում են Արցախի պատմական գաւառներն այն աշխարհագրութեամբ, ինչպիսին այն նկարագրել է Մակար եպիսկոպոս Բարխուդարեանցն իր յայտնի *Արցախ* աշխատութիւնում:

Բարխուդարեանցը հետեւեալ կերպ է գծագրում պատմական Արցախի սահմանները. «*Երասխ, Կուր, Խրամ եւ Ձորագետ (միացած) եւ Հակարի գետերի եւ Կայէնի, Դիլիջանի, Գեղամեան ամենաբարձր լեռների գագաթնագծի մէջ եղած տարածութիւնն*»[2]: Նա առանձնացնում է 23 գաւառ[3],

---

[1] Մխիթարեան միաբան հայր Վարդան Հացունին առանձնացնում է Հայ Եկեղեցում կանանց վանքերի առաւել ծաղկուն երեք դարաշրջան՝ Դ. դարի երկրորդ կէսից մինչեւ Ե. դարը, ԺԲ. դարը, եւ՝ ԺԷ. դարը (Վ. Հացունի, «Կուսաստանք Հայաստանի մէջ», *Բազմավէպ*, 1923, Մարտ, էջ 77):

[2] Մակար եպս. Բարխուտարեանց, *Արցախ*, տպ. «Արօր», Բագու, 1895, էջ 2: Ուշագրաւ են Ռուբէն Գալիչեանի հրապարակած Արցախի հին քարտէզները: Մասնաւորապէս՝ պատմական Արցախի նշուած տարածքն ընդգրկուած է Շիրակացու *Աշխարհացոյցի* հիման վրայ Վենետիկում 1751ին հրապարակուած Հայաստանի քարտէզում: ԺԸ. դարից սկսած արեւմտեան, ինչպէս նաեւ մահմեդական քարտէզներում Ղարաբաղ անուամբ է նշուած Արաքսի (Երասխի) հիւսիսային հատուածում՝ Սեւանայ լճի հարաւ-արեւելեան աւազանից մինչեւ Կուր եւ Արաքս գետերի հատման տեղը (R. Galichian (Galchian), "Karabagh (Artsakh) in Old Maps," *Բանբեր հայագիտութեան*, 2:2017, էջ 57-64. նաեւ՝ 3:2017, էջ 34-38:

[3] Բարխուդարեանցը նշում է գաւառների պատմական անուանումները՝ ժամանակի կրած բոլոր փոփոխութիւններով, ինչպէս նաեւ դրանց՝ իր ժամանակի, հիմնականում թրքացած, անուանումները: Այդ գաւառներն են՝ **Ա.**- Պիանք (Ջաբրայէլի), **Բ.**- Մուխանք (Մուղան, Միլին դաշտ), **Գ.**- Արանոոտ եւ **Դ.**- Տոի (յետագայում երկուսը միասին՝ Քեաբիրլու), **Ե.**- Ռոցպատեան եւ **Զ.**- Աղուէ (միաւոր-

որոնք տարածւում են Արցախի Դաշտային (Ստո-րին), Լեռնային (Միջին) եւ Հարաւային (Վերին) աշխարհագրական հատ-ուածներում:

ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՑԱԽ ԵՒ ՈՒՏԻՔ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ ԸՍՏ «ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ»-Ի
Հրատար՝ ԱԼԵՔՍԱՆ ՅԱԿՈԲԵԱՆ
© 2009
ՄԱՍՇՏԱԲ՝ 1:1.500.000
ՀԱՅԱՍՏԱՆ
ԱՐՑԱԽ
ՍՅՈՒՆԻՔ
ՈՒՏԻՔ
ԱՐՑԱԽԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐ
ՍՅՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐ
ՈՒՏԻՔԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐ
ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ
ՄԻՋԻՆ ՀԱՏՎԱԾ
ՍՏՈՐԻՆ ՀԱՏՎԱԾ

Արցախի կուսանոցների մասին կարեւոր աղբիւրներ են ինչպէս ձեռագիր յիշատակարաններն ու վիմագիր արձանագրութիւնները, այնպէս էլ՝ տեղագրական ու ճամփորդական յուշագրութիւնները, ժողովրդական տարբեր աւանդազրոյցները:

Ուշագրաւ են Սարգիս արք. Ջալալեանցի ու ազգագրագէտ Երուանդ Լալայեանի ԺԹ. դարի յուշագրութիւնները: Առաւել ուշագրաւ են Բարխուդարեանցի հաղորդումներն Արցախի պատմական գաւառների մասին, որում առաջին անգամ համապարփակ ներկայացուած են բազմաթիւ պատմական յուշարձաններ ու սրբավայրեր: Նոր ժամանակների երախտաւորներից են Շահէն Մկրտչեանն ու Սամուէլ Կարապետեանը:

Ժամանակագրական առումով Արցախի կուսանոցները թուագրւում են հիմնականում ԺԷ. դարով: Սակայն յայտնի են նաեւ այլ դարաշրջանների կուսանոցներ:

Ստորեւ՝ Արցախի նշուած սահմաններում գործած կուսանոցները:

Աւետարանոցի Կուսանաց Անապատ

Արցախի կուսանաց անապատներից առաւել յայտնին Աւետարանոցի[4] ԺԷ. դարի Կուսանաց Անապատն է պատմական Վարանդա[5] գաւառում:

Կուսանոցը հիմնադրուել է 1616ին, որի մասին վկայում է մուտքի բարաւորին արուած արձանագրութիւնը. «Եկեղեցիս թվ. ՌԿԵ»[6]:

---

[4] Ըստ աւանդազրոյցների՝ Աւետարանոցը հիմնել է Վաչագան Գ. բարեպաշտ թագաւորը: Աւանդութիւնը Կուսանաց Անպատի հիմնադրութիւնը եւս այս արքային է վերագրում, իսկ կուսանոցի առաջին միանձնուհի համարում Վաչագան թագաւորի դստերը (Սարգիս արք. Ջալալեանց, *Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մաս Բ.*, տպ. Ներսիսեան հոգեւոր դպրոցի, Տփխիս, 1858, էջ 248. նաեւ՝ Երուանդ Լալայեան, «Վանադայ», *Ազգագրական հանդէս, գիրք Բ.*, 1897, Թիֆլիս, էջ 42. նաեւ՝ Е. Мелик-Шахназаров, "Древности селения Чанахчи," *Сборник материалов для описания местностей и племен Кавказа*, выпуск 19-й («Չանախչի բնակավայրի հնութիւները», նիւթերի ժողովածու Կովկասի տեղանքի եւ ազգութիւնների մասին, 19րդ պրակ, հրատ. Կովկասի ուսումնական շրջանի վարչութեան), Թիֆլիս, 1894, էջ 81:

[5] ԺԲ. գաւառն է Լեռնային կամ Միջին Արցախում, որ կոչուել է նաեւ Միւս Հաբանդ կամ Հաբանդ-Ամարաս: Գտնւում է Գարգար (Կարկառ) գետի վերին հոսանքի շրջանում (Բարխուտարեանց, էջ 23. նաեւ՝ Թ. Յակոբեան, Ստ. Մելիք Բախշեան, Յ. Բարսեղեան, *Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, հտր. 4*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1986, էջ 772):

[6] Բարխուտարեանց, էջ 96. նաեւ՝ *Ազգագրական հանդէս*, էջ 42: Բարխուդարեանցը ներկայացնում է նաեւ այլ արձանագրութիւններ, որոնց մեծ մասը 1960ականներին Խորհրդային Հայաստանից Ադրբեջան գործուղուած հայ գիտարշաւի մասնակիցները տեղում չեն գտել (*Դիւան հայ վիմագրութեան. Արցախ, պրակ V*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1982, էջ 150-51):

Ինչպէս արդէն նշել ենք, ԺԷ. դարը Հայ Եկեղեցում կուսանոցների վերարթնացման շրջան էր, նշանաւոր՝ Սիւնիքի կուսանաց անապատներով ու իր գրչուհիներով: Լինելով նոյն դարաշրջանի ծնունդ՝ Աւետարանոցի կուսանոցը եւս, ինչպէս Սիւնիքի Շէնհէրի կուսանոցը, գրչութեան կենտրոն էր:

ԺԹ. դարի կէսերին Ջալալեանցն Աւետարանոցում տեսել է կուսանոցի մայրապետերից Գայիանէ[7] գրչուհու 1671ին ընդօրինակած Աւետարանը[8], որի յիշատակարանը մեզ է փոխանցում կուսանաց անապատի հիմնադրի ու առաջին մայրապետի, ինչպէս նաեւ այլ երախտաւորների անուններ.

> Արդ այսմ Աստուածեղէն եւ երկնապարգեւ գանձիս, եւ լուսափայլ մարգարտիս եղեւ ցանկացօղ եւ եռափափագ սիրով գծագրօղ եւ ստացօղ աստուածասէրք եւ բարեպաշտուհիք սրբասնունդք եւ կուսակրօնք հարազատքն գծօղ սուրբ Աւետարանիս մայրապետն **Գայիանէ** եւ անդրանիկն իւր **Հռիփսիմէ**, որ եղեւ սկիզբն շինութեան սուրբ կուսաստանին Ղարաբաղու, որ ի գիւղաքաղաքն Աւետարանոցին ընդ հովանեաւ սուրբ Նշանին եւ այլում սրբութեանց՝ որ են աստ: Արդ ես նուաստս բնաւից եւ անարհեստս արուեստաւորաց բազմամեղ **Գայիանէս** ջերմեռանդ սիրով ծրեցի զսուրբ Աւետարանս թվին Հայոց ռճի յիշատակ հոգւոյ ծնողին իմոյ եւ մարմնաւոր հարազատին **Հռիփսիմէին** եւ հոգեւոր հօրն իմոյ բազմաշխատ տէր Առաքելին, որ քրտնաջան երկամբք աշխատեալ է ի վերայ Անապատիս ի մանկութենէ մինչեւ ի ծերութիւն եւ

---

[7] Գայիանէի անձի հետ կապուած կայ մի թիւրըմբռնում, որ շրջանառւում է նաեւ մեր օրերում: Ժողովրդական աւանդութեամբ Րաֆֆին նրան համարում է մելիք Հուսէյնի եւ նրա կողակից Աննա Խաթունի դուստրը, որն 1733ին աչքի է ընկել իր հերոսութեամբ՝ օսմանցի զօրախմբի դէմ պայքարում: Ինչպէս գրում է Րաֆֆին՝ սպանելով օսմանցի զօրապետին, Գայիանէն «*իր անձը նուիրեց կուսակրօնութեան եւ մտաւ Աւետարանոց գիւղի կուսանաց անապատը*»: Այս նոյն Գայիանէին էլ Րաֆֆին նոյնացնում է մեր յօդուածում նշուած 1671ի Աւետարանի Գայիանէ գրչուհու հետ: Այստեղ ժամանակագրական սխալ կայ այն պարզ պատճառով, որ Գայիանէ գրչուհու ձեռագրերը գրուել են աւելի վաղ՝ ԺԷ. դարում (Րաֆֆի, էջ 48. նաեւ՝ Հրաչեայ Աճառեան, *Հայոց անձնանունների բառարան, հտր. Ա.*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1942, էջ 445. նաեւ՝ *Դիւան. Արցախ*, էջ 147-48. նաեւ՝ Թամարա Մինասեան, *Արցախի գրչութեան կենտրոնները,* Նայիրի հրատ., Երեւան, 2015, էջ 48):

[8] 1881ին Աւետարանոցում այս նոյն Աւետարանը տեսել է նաեւ Րաֆֆին: Աւելի ուշ Աւետարանոց այցելած Լալայեանն Աւետարանն այլեւս չի գտել: Այսօր էլ Աւետարանի ճակատագիրն անյայտ է (Րաֆֆի, *Խամսայի Մելիքութիւնները*, տպ. Կովկասի Կառավարչ. Գլխ. Կառավ., Թիֆլիս, 1882, էջ 48. նաեւ՝ *Ազգագրական հանդէս*, էջ 42):

բազմերախտ Մարտիրոս Արհի եպիսկոպոսին եւ ծնողացն իմոց եւ այլ համայն ազգականաց իմոց՝ ամէն[9]:

Գայիանէ գրչուհուն է պատկանում նաեւ Ձեռաց Մաշտոցի[10] մի ընդօրինակում, որ պահւում է Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանում:

Կուսանոցի գրչուհիներից է նաեւ Կատարինէ կոյսը, որի 1650ին ընդօրինակած Աւետարանը ծաղկել է նոյն Գայիանէ գրչուհին:

Ուշագրաւ են ձեռագրի յիշատակարանում Կատարինէ գրչուհու գրառումները: Նա խնդրում է յիշել *«զմայրագութ եւ սննդամայրն վարպետն իմ՝ զՄարիամ կուսանուհի, զոր սնոյց զիս եւ կարդացոյց բազում աշխատութեամբ եւ յետ իւրոյ աշխատութեանն եւ զիս ի ձեռն փէր Աստուածատուր քահանային վասն շարականի եւ գիր ուսուցանելոյ, որ էր խոստովանահայր անապատին Շէնհերու»*[11]:

Դատելով այս յիշատակարանից՝ Կատարինէ կոյսը, որ իրեն «ղարիպ» է կոչում, գրչութեան արուեստ է սովորել Շէնհէրի կուսանոցում, որտեղից էլ տեղափոխուել է Աւետարանոց. փաստ՝ որ վկայում է այս երկու կուսանոցների առնչութիւնների մասին:

Բարխուդարեանցի բերած մեկ այլ ձեռագիր յիշատակարանից կարելի է եզրակացնել նաեւ, որ կուսանոցի միանձնուհիներ են եղել նաեւ Վարանդայի մելիքների դուստրերից: Թերեւս, նրանցից են, մելիք Բաղու կուսակրօն դուստրերը, որոնց անունները նշւում են Աւետարանոցի եկեղեցում պահուող Աւետարանի՝ 1737ին գրուած մի յիշատակարանում. «*Սուրբ աւետարան սրբագիր եւ ոսկեզօծ վախմ եւ յիշատակ է Աբրահամ պարոն-Տէրին, որ տվան Մէլիք Պաղուն կուսակրօն դստերացն Հռուբսիմին եւ Դալաթին եւ Շահանդուխտին ձեռքն ի վայելումն.... գրեցաւ մատամբ փէր Եղիազարին մայիսի ԻԵ. օրն թվ. ՌՃՁՋ. էր...*»[12]:

Թէ ե՛րբ է Աւետարանոցի Կուսանաց Անապատը դադարել գործելուց՝ յայտնի չէ: Կարելի է միայն ենթադրել, որ դա տեղի է ունեցել մինչ ԺԹ. դարը՝ ԺԸ. դարի վերջերին՝ 1797ին Իրանի շահ աղա Մուհամադ խանի Անդրկովկաս արշաւանքների ժամանակ[13], երբ Վարանդայից Վրաստան է

---

[9] Ջալալեանց, էջ 246-47. նաեւ՝ Հեղինէ Մկրտչեան, «Հայկական ձեռագրերի յիշատակարանները կանանց մենաստանների եւ կուսակրօն կանանց վերաբերեալ», *Էջմիածին*, Բ:2013, էջ 99:

[10] *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, հտր. Ը.*, «Նայիրի» հրատ., Երեւան, 2013, էջ 17-24. նաեւ՝ Մինասեան, էջ 48-49:

[11] *Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի յիշատակարաններ (1641-1660), հտր. 3*, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1984, էջ 627. նաեւ՝ Մկրտչեան, էջ 98:

[12] Բարխուտարեանց, էջ 95:

[13] Այս առիթով յիշատակելի է կուսանոցին վերաբերող մի աւանդազրոյց, ըստ որի 1797ին, շահի արշաւանքի ժամանակ կոյսերը, փախչելով պարսիկ զինուորներից, թաքստոց են գտնում անտառում: Կոյսերից մէկը, սակայն, յապաղելով զին-

փախել Մելիք-Շահնազարեանների տոհմից մելիք Ջումշուդը: Նոյն շրջանում Արցախում սկսուած սովի ու ժանտախտի պատճառով Վրաստան է գաղթել նաեւ Վարանդայի բնակչութիւնը[14]:

Այսպէս թէ այնպէս՝ Ղարաբաղի *կոնսիստորիայի*[15] կազմած 1825ի վան-քերի ցանկում Աւետարանոցի կուսանոցն այլեւս անշէն է. «*Անշէն անա-պատ Կուսանաց, կառուցեալ մերձ գեղջն Աւետարանոց Վարանդայ գա-ւառակի, եկեղեցին ամբողջ, տանիք գաւթին խախտեալ, յորում ամփոփ-եալ կան մարմինք ոմանց Մելիքաց ցեղին Մելիք-Շահնազարեանց, եւ այ-լոց հոգեւորականաց, սենեակքն բոլորովին կործանեալք*»[16]:

Աւետարանոցի արդէն ամայացած կուսանոցի մասին է հաղորդում նաեւ Ջալալեանցը ԺԹ. դարի կէսերին. «*Մենաստան Կուսանաց անկանի ի հարաւային կողմն այսր գեղջ կառուցեալ ի ծայր ապառաժ վիմի սագաշէն եւ փոքրիկ, շուրջ զորով են հարիւրաւոր սենեակք միաբան Կուսանաց արդէն ամայի*»[17]:

Երբեմնի նշանաւոր կուսանոցը ԺԹ. դարի վերջին նկարագրում է նաեւ Բարխուդարեանցը, երբ արդէն աւերուած էր միաբանուհիների կացարանների մեծ մասը, անապատի պարսպի պատերը տեղ-տեղ վնասուած:

> Անապատս շինուած է անտաշ քարով երկու կամարի վերայ, որի երկարութիւնն է 11 մետր եւ լայնութիւնն 9, (խիստ անմաքուր է):
>
> Անապատս ունի եւ գաւիթ, որ շինուած է նոյն ոճով, երկարութիւնն 5 մետր 75 սանթիմ, լայնութիւն 8 մետր 90 սանթիմ (հարաւից հիւսիս): Ինչպէս անապատս եղած է յատուկ կուսանոց, նոյնպէս գաւիթս եղած է յատկապէս դամբարան Մէլիք Շահնազարեանի իշխանական ցեղին: Գաւթումս ամփոփուած են Մանուէլ վարդապետի, Մէլիք-Միրզայի, Մէլիք-Յիւսէյինի, Մէլիք-Յովսէփի եւ սոցա տիկնանց մարմիններն[18]:

ուորի սրից, կարողանում է միայն խոյս տալ՝ ժայռից իրեն ցած նետելով: Ըստ աւանդազրոյցի՝ աներեւոյթ ուժի զօրութեամբ նա անվնաս հասնում է ցած: Արշաւանքի ժամանակ կուսանոցում պահուող կենաց փայտի մասունքով արծաթապատ խաչը գերի է տարւում, որը աղաւնի դարձած վերադառնում է վանք ու կրկին խաչի ձեւ ստանում: (Լալայեան, էջ 43):

[14] Այս դէպքերի մասին տե՛ս՝ Արտակ Մաղալեան, *Վարանդայի Մելիքութիւնը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւն. անցեալը, ներկան եւ ապագան (միջազգային գիտաժողովի նիւթեր)*, Երեւանի համալսարան հրատ., Երեւան, 2007, էջ 141-42:

[15] Վարչադատական գործերով թեմական-եկեղեցական մարմին Ռուսաստանում:

[16] *Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան, գիրք Թ.*, «Ոսկան Երեւանցի» հրատ., Երեւան, 2001, էջ 47:

[17] Ջալալեանց, էջ 246-47:

[18] Բարխուտարեանց, էջ 95-96:

Շուշիի Սուրբ Աստուածածնայ Կուսանաց Անապատ

Երկու դար անց՝ 1816ին, երբ արդէն լքուած ու կիսաւեր էր Աւետարանոցի անապատը, մի նոր կուսանոց է հիմնուել **Շուշիում**՝ կոյս Հռիփսիմէ Բահաթուրեանցի եւ իր եղբայրների նախաձեռնութեամբ:

1856ին Էջմիածնի սինոդին ուղղած նամակում, կուսանոցի մայրապետ Հռիփսիմէն ներկայացնում է կուսանոցի հիմնադրման պատմութիւնը.

> Ի ժամանակ խանական կառավարութեան երկրին Ղարաբաղու՝ յորժամ ես՝ գոլով մէն ի մանկական հասակի՝ ցանկայի հրաժարիլ ի զբաղմանց աշխարհի, ջանայի թողուլ զազգատոհման եւ մեկնիլ ի նոցանէ, գնալ յանապատ իմն հեռի եւ լցուցանել զփափագ սրտիս ի կուսակրօնութեան: Հարազատ եղբարքն իմ հանգուցեալ Իսրայէլ եւ Աստուածատուր եւ այժմ կենդանի Պետրոսն Բահադուրեանց չտալով թոյլ կամաց իմոյ աշխատեալ են շինել աստ վասն իմ զտեղի միայնակեցութեան[19]:

Ներկայում հիմնովին աւերուած կուսանոցի եկեղեցին Շուշիի առաջին քարաշէն եկեղեցին էր, որի դռան ճակատակալ քարին նոյնպէս Հռիփսիմէի եւ իր եղբայրների անուններն էին. «*Շինեցաւ սուրբ եկեղեցիս յանուն Սուրբ Աստուածածնայ արդեամբ ձեռագործ աշխատանաց Կոյս Հռիփսիմեայ օժանդակութեամբ երից եղբարց իւրոց հարազատաց Իսրայէլի, Աստուածատրոյ եւ Պետրոսի Գրիգորեանք Բահադուրեանց ի թվն 1816 ամի*»[20]:

Բարխուդարեանցն յաւելում է. «*Միեւնոյն բազմաշխատ Կոյս Հռիփսիմէն շինել տուած է զանգատունը առանց օժանդակութեան այլոց*»[21]:

Կուսանոցի այս եկեղեցում էլ, ինչպէս նշում է Հռիփսիմէ Բահաթուրեանցը, «*ի քսանամեայ հասակի ձեռնադրեալ ի նախկին փեղական Սարգիս մետրապօլիտէն Աղուանից մնացել եմ ի միայնակեցութիւն ի նոյն սբ. վանս*»[22]:

Շուշիի Կուսանաց Անապատը Արցախի միակ կուսանոցն է, որի մասին պահպանուած արխիւային նիւթերը բաւականաչափ տեղեկութիւններ են հաղորդում կուսանոցի գործունէութեան մասին: Այն գործել է աւելի քան 100 տարի: Կոյսերի առաւելագոյն թիւը չի գերազանցել մէկ տասնեակը: Ուշագրաւ է, որ նրանց մեծ մասը, ինչպէս Հռիփսիմէ մայրապետը, եղել են ձեռնադրուած սարկաւագուհիներ՝ մի երեւոյթ, որ բնորոշ է այս շրջանի Հայ Եկեղեցու կուսանոցներին, ինչպէս Թիֆլիսի Ս. Ստեփանոս եւ Նոր Ջուղայի Ս. Կատարինէ վանքերին:

---

[19] ՀՀ Ազգային Արխիւ (ԱԱ), ֆ. 56, ց.1, գ. 3453: Հմմտ.՝ Հեղինէ Մկրտչեան, «Շուշիի Կուսանաց Անապատը» («Շուշին՝ հայկական մշակոյթի օջախ» գիտական կոնֆերանսի զեկոյց) *«Կաճառ» գիտական կենտրոնի տարեգիրք*, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., Շուշի, 2014, էջ 205:

[20] Բարխուտարեանց, էջ 148:

[21] Նոյն:

[22] ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3453:

Կուսանոցի 100ամեայ պատմութիւնն իր ողբերգական վախճանին է հասել 1920ին՝ Շուշիի հայկական թաղամասում մուսաւաթականների սանձազերծած մարտեան կոտորածներից[23]:

Արդէն կիսաւեր Կուսանաց Անապատն ադրբեջանցիներն հիմնայատակ աւերել են 1960-70ականներին[24]: Կուսանոցի միակ վկաները Շուշիի հայկական հին գերեզմանոցում պահպանուած միքանի կոյսերի տապանաքարերն են, որոնց առիթ ենք ունեցել այցելելու 2012ին:

Դրամատիկ է նաեւ կուսանոցի վերջին սարկաւագուհու՝ կոյս Նունէ Սարգսեանի ճակատագիրը: «*Արտաքին չարութեան, ներքին ամբարտաւան]ութեան հետեւանքով Հայաստանի շատ գաւառների հետ միասին կործանուեց եւ գեղեցիկ Շուշին եւ նրա մէջը մեր մենաստան-անապատը*»[25]՝ 1925ին Գէորգ Ե. Սուրէնեանց կաթողիկոսին յղած նամակում գրել է լքուած անապատի սարկաւագուհին կաթողիկոսից նպաստ կամ կացարան խնդրելով:

Յետագայում Նունէ կոյսին տեսնում ենք արդէն Բաքուի հայկական եկեղեցում: 1956ի *Էջմիածին* ամսագրից տեղեկանում ենք. «*Բաքուի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում երկար տարիներից իվեր ապրում եւ ծառայում է Սարգսեան կոյս Նունէն: Վերջերս նա լանջախաչով պարգեւատրուեց Վեհափառ Հայրապետի կողմից: Նորին Ս. Օծութեան բարեհաճ կարգադրութեամբ կոյս Նունէն թոշակ է սպանում Մայր Աթոռից*»[26]:

---

[23] Ըստ ադրբեջանական աղբիւրների՝ 1920 Մարտի 22ին Շուշիում սպանուել է շուրջ 8000 հայ (*Нагорный Карабах в 1918-1923гг., Сборник документов и материалов [Լեռնային Ղարաբաղը 1918-1923ին, յօդուածների եւ նիւթերի ժողովածու]*, ՀԱԱ ԳԱ հրատ., Երեւան, 1992, էջ 416. նաեւ՝ Բակուր Կարապետեան, *Շուշի բերդաքաղաքը*, ԵՊՀ հրատ., Երեւան, 2000, էջ 278-82. նաեւ՝ Համլէտ Յարութիւնեան, «Շուշիի հայութեան կոտորածները (1919թ. Յունիս եւ 1920թ. Մարտ)», *Բանբեր հայագիտութէան*, 1:2015, էջ 58-63. նաեւ՝ Ալիկ Ղարիբեան, «Շուշիի 1920թ. կոտորածը», *Շուշին հայոց քաղաքակրթութեան օրրան (Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նուիրուած գիտաժողովի նիւթեր)*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2007, էջ 175-80:

[24] Շահէն Մկրտչեան, Շչորս Դաւթեան, *Շուշի. ողբերգական ճակատագրի քաղաքը*, Գասպրինտ, Երեւան, 2008, էջ 112:

[25] *Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան. 1921-1938թթ.*, կազմող Ս. Բեհբուդեան, ՀՀ կառավարութեանն առընթեր արխիւային գործի վարչութիւն, ԵՀ տպարան, Երեւան, 1994, էջ 70:

[26] Ն. Տէր Կարապետեան, *Ադրբեջանի թեմն այսօր, Էջմիածին*, Դեկտեմբեր, 1956, էջ 101:

Մեծ Ղարամուրատի Սուրբ Աստուածածին Կուսանաց Անապատ

Կուսանոցների վերարթնացման ԺԷ. դարի կանանց վանքերից է նաեւ պատմական **Փառիսոս**[27] գաւառի **Մեծ Ղարամուրատ**[28] բնակավայրի **Սուրբ Աստուածածին** կուսանաց անապատը:

Կուսանոցը հիմնադրուել է 1636ին, Փիլիպպոս կաթողիկոսի օրհնութեամբ ու անմիջական մասնակցութեամբ: Այդ մասին տեղեկանում ենք Նոր Ջուղայում ընդօրինակուած Յայսմաւուրքի յիշատակարանից: Գրչագիր այս մատեանն էլ Փիլիպպոս կաթողիկոսի ընծան է կուսանաց անապատին:

> Յիշատակ է Յայսմաւուրքս ի դուռն **Ղարամուրատու** կուսանաց **Սուրբ Աստուածածնին**, զի ի յամի, որում թվականն էր Հայոց ՌՁԵ, սրբազան եւ երիցս երանեալ հայրապետն՝ տէր **Փիլիպպոսն** ետուր զսա ի դուռն Սուրբ ուխտիս եւ հաստատեաց զսա [եր]դմամբ գո նզովիւք, թէ որչ[ա]փ այս անապատ հաստատ, ով ոք հակառակութիւն անի եւ հեռացուցանէ՝ նզովեալ լիցի ի սուրբ հայրապետաց, զի ինքն հայրն մեր՝ վերոյգրեալ սուրբ հայրապետս խնամարկեալ հիմն արկեաց եւ հաստատեաց զանապատս աղջկանց եւ նախախնամեաց սպասուք եւ ամենայն զարդուք, եւ կացոյց մայրպետ՝ զ**Հռիփսիմէ** կոյսն, եւ պարկեշտ վ[ա]րուք, եւ միաբանքն եւս նոյնպէս[29]:

Կուսանոցի առաջին մայրապետ Հռիփսիմէի անունը նշուած է նաեւ ԺՋ. դարի Շարակնոցի յիշատակարանում: Այս ձեռագիրը եւս 1636ին ընծայուել է կուսանոցին. «*Յիշատակ է Շարակնոցս Ղարամուրատի աղջկանց անապատին, ի թվին ՌՁԵ, յառաջնորդութեան Հռիփսիմէ եւ իւր սրբակրօն միաբանիցն*»[30]:

---

[27] ԺԷ. գաւառը գտնւում է Լեռնային Արցախի հատուածում: Տարածւում է Կուրի աջակողմեան Շամխոր վտակի, Գեղամայ լեռնաշղթայի շարունակութեան եւ Տաւուշ գետակի միջեւ (Բարխուտարեանց, էջ 24. նաեւ՝ Յակոբեան, Բախշեան, Բարսեղեան, *հտր. 5*, ԵՀ հրատ., Երեւան, 2001, էջ 239):

[28] Գտնւում է Ադրբեջանի Գետաբեկի շրջանում: Հայաթափուել է ԺԸ. դարի վերջերին: Ներկայում անմարդաբնակ տարածք է (Յակոբեան, Մելիք-Բախշեան, Բարսեղեան, *հտր. 3*, ԵՀ հրատ., Երեւան, 1991, էջ 536. նաեւ՝ *Հիւսիսային Արցախ*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2004, էջ 88-89):

[29] *Հայերէն ձեռագրերի ԺԷ. դարի յիշատակարաններ, հտր. Բ.*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1978, էջ 656: Հայերէն ձեռագրերի մայր ցուցակում հրապարակուած այս նոյն յիշատակարանում նշուած է ՌՁԷ. տարեթիւը՝ 1638: Ըստ նոյն ձեռագրի՝ մէկ այլ յիշատակարանի՝ Յայսմաւուրքի պատուիրատու եւ ստացող Էրտամը 1638ին ձեռագիրը նուիրել է Փիլիպպոս կաթողիկոսին, որն էլ, ըստ մեզ արդէն ծանօթ յիշատակարանի, այն նուիրել է Ղարամուրատի Կուսանաց Անապատին նոյն՝ 1638ին: Հակուած ենք կարծելու, որ իրական է ՌՁԵ տարեթիւը (*Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, հտր. Ե.*, «Նայիրի» հրատ., ԵՊՀ հրատ., Երեւան, 2009, էջ 39):

[30] *Հայերէն ձեռագրերի ԺԷ. դարի յիշատակարաններ, հտր. Բ.*, էջ 669:

Կուսանոցն հաւանաբար հարուստ է եղել ձեռագիր մատեաններով, որոնք մենաստանի փակուելուց յետոյ յայտնուել են այլ վայրերում: Այսպէս, Բարխուդարեանցը ԺԹ. դարի վերջերին Գարդման գաւառի Մեծ Բանանց գիւղի եկեղեցում տեսել է 1671ի գրչագիր Աւետարան, որը եւս ժամանակին նուիրաբերուել է Ղարամուրատի Կուսանաց Անապատին:

> Շնորհօք եւ օժանդակութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի աւարտեցաւ նոր կտակարանս.. ձեռամբ.. Մխիթարի ի թուականութեան հայկական տումարի ամի հազարերորդի, հարիւրերորդի, քսաներորդի... ի յայս ամի սաստիկ մահ յերկիրս Վերին Զակամայ, որ օր մի ՚ի տան միում եօթն հոգի վախճանեցաւ... ի հայրապետութեան տեառն Պետրոսի Սրբազան Կաթուղիկոսին Սրբոյ Գանձասարայ, ի առաջնորդութեան նահանգիս Մինաս վարդապետի եւ ի տէրութեան Պարսից Շահ Սուլէիմանին ի յերկիրս Վերին Զակամայ ՚ի գեօղս որ կոչի Սուլտանեցիք ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս ի խնդրոյ բարեմիտ Եւային եւ այրն (առն) իւրոյ Ոսկանին...: Արդ ես Եւայս ստացայ զայս աւետարանս եւ ետու վախմ ի դուռն Ղարամուրատ Կուսանաց անապատի Սուրբ Աստուածածնի[31]:

Ղարամուրատի կուսանոցը գործել է առնուազն մինչեւ 1701. դրա վկայութիւնն է եկեղեցու դռան վրայի արձանագրութիւնը.

> Շնորհիւ Աստուծոյ ես Ովանէս վարդապետս, որդի ապաշխարողի շինեցի զեկեղեցիս (անապատ կուսանաց) արդեամբ գուիք (գոյիւք) ամենայն քրիստոնէից՝ յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց եւ ամենայն աշխատողաց ՚ի մայրապետութեան անապատիս Թագուհւոյն եւ Կայինային ՚ի ՌՃԾ. թվ.[32]:

Ե՞րբ եւ ի՞նչ հանգամանքներում է փակուել կուսանոցը՝ յայտնի չէ: Կարելի է ենթադրել միայն, որ այն դադարել է գործել մինչ Մեծ Ղարամուրատի հայաթափումը, որ տեղի է ունեցել 1770ականներին: Նման ենթադրութեան առիթ է տալիս այն, որ կուսանոցում պահուող ձեռագրերը ԺԸ. դարի երկրորդ տասնամեակի վերջերին այլեւս այլոց ձեռքին էին:

Այսպէս, Փիլիպպոս կաթողիկոսի նուիրաբերած Յայսմաւուրքի վերջին ստացողը «*աստուածայսէր, ողորմած եւ բարէբաշդ՝ Վարդանն*»[33] է, որ 1733ին նորոգել է այն: Կուսանոցի վերոյիշեալ Աւետարանը եւս 1729ին այլ անձի ձեռքում էր. «*Զվերջին ստացող զսուրբ աւետարանս... Մէլիք Սարգիս եւ ծնողացն հայրն իմոյ Ովանէսն... թվին ՌՃՀԸ*»:

---

[31] Բարխուտարեանց, էջ 282. նաեւ՝ Մինասեան, էջ 69:

[32] Բարխուտարեանց, էջ 309. նաեւ՝ Ե. Լալայեան, «Գանձակի գաւառ», *Ազգագրական հանդէս, գիրք Ե.*, 1899, Թիֆլիս, էջ 326-27: Արձանագրութիւնը 1960ականներին արդէն ոչնչացուած էր (*Դիւան հայ վիմագրութեան. Արցախ*, էջ 273):

[33] *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, հտր. Ե.*, էջ 40:

Տող կամ Դող աւանի Կուսանաց Անապատ

Պատմական **Դիզակ**[34] գաւառի **Տող** կամ **Դող** աւանի կուսանոցի հիմնադրման ժամանակի մասին աղբիւրները լուռ են: Նշենք, սակայն, որ կուսանոցի մասին մեզ հասած տեղեկութիւններում յիշատակւում են Դիզակի մելիքների անուններ, որից հաւանական է դառնում, որ այս կուսանոցը եւս ԺԷ. դարի է:

«*Յաջ կողմն այսր գեղջ է սագաշէն եկեղեցի եւ անապատ կուսանաց, շուրջ զորով գտանին գերեզմանք պատուելի արանց*»[35]՝ այսպէս է նկարագրում Ջալալեանցը Տողի կուսանոցը:

Կուսանոցի մասին պահպանուել է նաեւ աւանդազրոյց, ըստ որի իշխանազուն մի այր հարկադրաբար կրօնափոխ է եղել՝ ընդունելով մահմետականութիւն: Ապա զղջալով ապաշխարել է եւ «*ի նշան ճշմարիտ ջերմեռանդութեան կառոյց զեկեղեցին սուրբ Սրբեփանոսի եւ զանապատն Կուսանաց*»[36]:

> Բարխուդարեանցն առաւել մանրամասն է ներկայացնում անապատը. Հանգստարանիս վերեւի ծայրում կայ մի այլ քարուկիր եկեղեցի եւս, կառուցեալ մի կամարի վերայ, որի ճակատի խաչի վերայ փորագրուած է. «Խաչս Վարդան»: Եկեղեցուս մէջ է Մէլիք-Բախտամի գերեզմանն, որ ծածկուած է հողով: Եկեղեցուս մօտ նշմարուում են խուցերի եւ կացարանների բակեր եւ բեկորներ, որոց մասին պատմում են թէ կուսանոց եղած է անապատս[37]:

Ժողովրդական զրոյցների իսկութիւնը հաստատում է գիւղի Ս. Յովհաննէս եկեղեցում պահուող խաչածեւ արծաթեայ մասնատուփի վրայի արձանագրութիւնը. «*Յիշատակ է Մէլիք Եսայի (ու) որդի Սափարի բէկին, որ եւր Դողա կուսանաց Անապատին. սա է Յակովբ հայրապետին եւ Թէոդորոսի մասունք…*»[38]:

Ոսկանապատի Սուրբ Աստուածածին Կուսանաց Անապատ

Արցախում ԺԷ. դարի եւս մէկ կուսանոց է **Գարդման**[39] գաւառի **Ոսկանապատ**[40] բնակավայրի **Սուրբ Աստուածածին** կուսանաց անապատը,

---

[34] ԺԱ. գաւառն է Հադրութի եւ Դիզափայտի լեռնաշղթայի միջեւ: Յիշատակւում է նաեւ Պազկանք անուամբ (Բարխուտարեանց, էջ 23. նաեւ՝ Յակոբեան, Մելիք-Բախշեան, Բարսեղեան, *հտր. 2*, ԵՀ հրատ., Երեւան, 1988, էջ 107):

[35] Ջալալեանց, էջ 259:

[36] Նոյն:

[37] Բարխուտարեանց, էջ 77:

[38] Նոյն, էջ 74:

[39] ԺԶ. գաւառն է, որ յետագայում ստացել է Գանձակ անուանումը: Ընկած էր Կուրակ եւ Շամքոր գետակների, դաշտաբերանի եւ Մռաւեան լեռնաշղթայի գագաթնագծի շարունակութեան մէջ (Բարխուտարեանց, էջ 24):

ըստ աւանդութեան՝ հիմնուած ոմն մելիք Ոսկանի[41] կողմից, որից եւ Ոսկանապատ անունը:

Բարխուդարեանցի նկարագրութեամբ՝ եկեղեցին գիւղի վերին ծայրում էր, Ոսկանապատ գետի ձախ ափին: Եկեղեցու հարաւային պատի մօտ Յարութիւն պապի 1821ի տապանաքարն էր. «*Այս է տապան Յարութիւն պապին, որ վերսփին նորոգեաց սուրբ եկեղեցիս թվ. ՌՄՀ.*»[42]:

Բարխուդարեանցը **Սուրբ Աստուածածինը** աւելի նմանեցնում է եկեղեցու, քան՝ վանքի.

> Ունի եկեղեցու ձեւ եւ ոչ վանքի, սակայն ունեցած է միաբանից խուցեր տաճարս իւր արեւմտեան կողմում, որպէս վկայում են տեսողք. բայց յորդ անձրեւի հեղեղներն քանդած եւ տարած են սոյն սենեակները եւ կոյտ կոյտ խիճեր դիզած խուցերի տեղերում[43]:

Սուրբ Աստուածածնի կուսանոց լինելու հանգամանքը կրկին հաստատում են ձեռագիր յիշատակարանները: 1679ին ընդօրինակուած Աւետարանը[44] ԺԹ. դարի վերջին պահուել է Ղազախի Սեւքար գիւղի եկեղեցում, որտեղ եւ ձեռագրի երկու յիշատակարան օրինակել ու մեզ է փոխանցել տեղագիրը:

Յիշատակարաններից մէկում նշւում են գրչի եւ պատուիրատուների անունները: Վերջիններս, լինելով անզաւակ ամուսիններ, Աւետարանը նուիրել են կուսանաց անապատին:

> Ի խնդրոյ բարեմիտ եւ մեծահաւատ եւ իշխանազուն պարոն Միրումին, որ է որդի Սարուխան-Պէկին, թոռն մեծ Միրումանին: Զի ահա այս Միրում-պէկս, ոչ ունելով որդի մարմնաւոր, վասնորոյ, կողակից Միրում-պէկին, Խաթուն աղէն, եռափափագ սիրով եւ ջերմեռանդ սրտիւ, կատարեալ յուսով եւ լիակատար հաւատով: Ըստացաւ սուրբ աւետարանս որդի անմահ եւ յիշատակ յաւիտենական, եւ պաշար հոգոյ իւրոյ ի անդարձ ճանապարհին, որ տանի առ Քրիստոս յոյսն ամենեցուն: Ունելով ի մտի զբանն եւ զհրամանն տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ ասէ. երանի որ ունիցի զաւակ ի Սիոն, եւ ընտանի Ե-

---

[40] Գիւղը ներկայում յայտնի է Զուռնաբադ անուամբ: Գտնւում է 1988-91ին ամբողջովին հայաթափուած, Ադրբեջանի Խանլարի շրջանում (Յակոբեան, Մելիք-Բախշեան, Բարսեղեան, *հտր. 4*, ԵՀ հրատ., Երեւան, 1998, էջ 173. նաեւ՝ *Հիւսիսային Արցախ*, էջ 303):

[41] Նման անձի իսկութիւնը պատմութիւնը չի հաստատում (*Արձագանք*, 1886, թիւ 20, Թիֆլիս, էջ 294. նաեւ՝ *Հիւսիսային Արցախ*, էջ 407):

[42] Բարխուդարեանց, էջ 275:

[43] Նոյն, էջ 275:

[44] Մինասեանը գրչութեան ժամանակ է նշում 1669ը, որը չի համապատասխանում մեզ յայտնի յիշատակարանում նշուած թուականին. «*Արդ՝ գրեցաւ սուրբ եւ Աստուածաշունչ աւետարանս, ի թուականիս հայոց ՌՃԻԸ. Ամին*» («Ճանապարհորդական յիշատակարան», *Արձագանք*, 1886, թիւ 20, Թիֆլիս, էջ 294. նաեւ՝ Մինասեան, էջ 77):

րուսաղէմ, եւ դարձեալ եթէ գանձեցէք ձեզ գանձս յերկինս, ուր ոչ գող մերձենայ եւ ոչ ցեց ապականէ. սակս որոյ ըստացաւ զսուրբ աւետարանս, ի հալալ արդեանց եւ ի արդար վաստակոց իւրոց, բարեսէր կինն Խաթուն աղէն ետ ի դուռն սուրբ անապատիս, ոսկանա...տու, որ է մ....տան կու... յաղագս առիթ յիշման հոգոյ իւրոյ, եւ ծնողացն, հօր իւրոյ, խոցատեղին եւ մօրն իւրոյ Գաւհարին, եւ եղբարցն Աստուածատրին եւ Սարգսին, որք ի Քրիստոսէն հանգուցել: Իսկ ով ոք եթէ, իւրոց կամ օտարաց հանել կամիցի Ոսկանապատու, եւ ի դրանէ սուրբ անապատիս, կամ գրաւ դնելով, կամ վաճառելով պարտակա... ի առաջի ահեղ ատենին Քրիստոսի...[45]:

Յաջորդ յիշատակարանից յայտնի է դառնում, որ ինչ-ինչ պատճառներով ձեռագիրը յայտնուել է «անօրինաց» ձեռքին եւ կրկին վերադարձուել կուսանոցին 1684ին:

Եւ արդ ես Սարգսի որդի, Խօջա Պատիս, առի զսուրբ աւետարանս ի ձեռաց անօրինաց. եւ ետու վախմ ի դուռն Ոսկանապատու կուսանաց անապատին, Աստուածածին սուրբ տաճարին, մի ոք իշխեսցէ հանել անտի, քանզի բնական այլ ու այնմ անապատին անուան էր գրեալ եւ տվեալ բայց յետ ժամանակաւ ի յարկածից չարին կողակսն հատեալ էին եւ մեք եւս տվաք յիշատակ թուականիս Հայոց, ՌՃԼԳ[46]:

1980ականներին՝ մինչ գիւղի հայաթափումը, Սամուէլ Կարապետեանին յաջողուել է լուսանկարել դեռեւս կիսաւեր Կուսանաց Անապատի եկեղեցին եւ չափագրել այն[47]: Կարապետեանի դիտարկմամբ՝ եկեղեցին իր յօրինուածքով ԺԷ. դարի է, որ հաստատում է Կուսանաց Անապատի՝ նոյն ԺԷ. դարի պատկանելիութիւնը:

Այլ Կուսանաց Անապատներ ըստ աւանդազրոյցների

Պատմական Գարդմանը, թերեւս, հարուստ է եղել կուսանոցներով: **Գարդմանի Գետաշէն**[48] աւանի արեւմտեան մասում գտնուող փոքր եկեղեցին, ըստ աւանդազրոյցների, եւս կուսանոց էր: Այն հաստատում է 1885ի եկեղեցական մի վաւերագիր, որտեղ այս եկեղեցին յիշատակուած է «Կուսանոց Սբ. Տիրամօր եկեղեցի» անունով[49]:

---

[45] «Ճանապարհորդական յիշատակարան», էջ 294. նաեւ՝ հայր Համազասպ Ոսկեան, *Արցախի վանքերը*, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1953, էջ 141:

[46] «Ճանապարհորդական յիշատակարան», էջ 294:

[47] *Հիւսիսային Արցախ*, էջ 415-417:

[48] Գտնւում է Ադրբեջանի Հանրապետության Խանլարի շրջանում: Ամբողջովին հայաթափուել է 1991ին:

[49] *Հիւսիսային Արցախ*, էջ 340:

Բարխուդարեանցը եկեղեցու շինութեան թուական է համարում 1749ը՝ ներկայացնելով մուտքի խոյակի վրայ արուած արձանագրութիւնը. «ԹՎ. ՌՃՂԸ.»[50]:

«*Հաստատում են թէ Կուսանոց եղած է այս, երկար ժամանակ նստած են այստեղ կուսանք, որոց մէջ եղած է եւ մի կոյս Մէլիք-Բէկլարեանների տոհմից, որի պատճառաւ Մէլիք-Թամրազին որդին նորոգել տուած է ա-նապատս*»[51]՝ գրում է Բարխուդարեանցը, նշելով նաեւ որ եկեղեցու շուրջ դեռ պահպանւում են միքանի խցեր:

Մինչ Գետաշէնի հայաթափումը, Կուսանաց Անապատի այս եկեղեցին եւս դեռեւս կիսաւեր վիճակում էր, որի յատակագիծը եւ միքանի լուսան-կարներ հրապարարակել է Կարապետեանը[52]:

Ըստ աւանդազրոյցների, կուսանաց անապատ էր նաեւ **Ջրաբերդ**[53] գաւառի **Ղարաբուլաղ**[54] գիւղին կից եկեղեցին:

«*Գիւղին կից կայ մի եկեղեցի, որ գիւղացիք անուանում են «Կուսանաց անապատ»: Եկեղեցու վրայ արձանագրութիւն չկայ, բայց կիսականգուն են երկու միաբանութեան խուցերը*»[55]՝ գրում է *Նոր-դար*ի թղթակիցն այս եկեղեցու մասին:

Կարապետեանի հաղորդմամբ՝ 1980ին Կուսանաց Անապատի միաբա-նական խցերն հիմնովին աւերուած էին: Պահպանուած էին միայն եկեղե-ցու խորանին ու հիւսիսային ճակատին յարող հատուածները[56]: Ըստ Կա-րապետեանի այս եկեղեցու շինարուեստը եւս բնորոշ է ԺԶ.-ԺԷ. դարերին:

Պատմական Արցախի կուսանոցների շարքն այսքանով չի լրանում: Արցախի կուսանոցների մասին յայտնի են այլ աւանդազրոյցներ, որոնց արժանահաւատութիւնը երբեմն կարող է եւ կասկածի տեղիք տալ:

---

[50] Բարխուդարեանց, էջ 264:

[51] Նոյն, էջ 265. նաեւ՝ Լալայեան, «Գանձակի գաւառ», էջ 319:

[52] *Հիւսիսային Արցախ*, էջ 342-43:

[53] ԺԵ. գաւառը՝ Մռաւ լեռնաշղթայի, դաշտաբերանի, Թարթառ եւ Կուրակ գետերի սահմաններում (Բարխուտարեանց, էջ 24):

[54] Այս անունով յայտնի են մի շարք բնակավայրեր: Նշուած գիւղը գտնւում է Ա-դրբեջանի Խանլարի շրջանում: Խորհրդային տարիներին վերանուանուել է Մարտունաշէն (Յակոբեան, Մելիք-Բախշեան, Բարսեղեան, *հտր. 3*, էջ 524):

[55] Գ. Աշոտեան, «Թղթակցութիւն», *Նոր-դար*, 1894, թիւ 73, էջ 3: Հմմտ.՝ *Հիւսի-սային Արցախ*, էջ 385:

[56] *Հիւսիսային Արցախ*, էջ 386:

Այսպէս, աւանդազրոյցի համաձայն՝ կուսանաց անապատ է եղել նաեւ **Փառիսոս** գաւառի **Ծաղկոց Անապատը՝ Գառնակեր**[57] գիւղի հարաւային կողմում:

«*Քարաշէն, թաղակապ փոքրիկ եկեղեցի. ունի մի գաւիթ, ուր կան երկու անյայտ գերեզմաններ, որոնց Գառնակերցիք պատւում են իբրեւ սրբեր: Նրանց ասելով՝ այս տաճարն եղել է կուսանաց անապատ եւ Ծաղիկ մայրապետի անունով կոչուել է Ծաղկոցայ: Բայց եթէ արդարեւ կուսանաց մենաստան եղած լինի այս, Ծաղիկ անունից Ծաղկոցայ կոչուել չէր կարող. գուցէ Ծաղկանոցի կրճատումն է Ծաղկոցը*»[58], ընդգծուած երկմտութեամբ գրում է տեղագիրը:

Որքանո՞վ են իրական այս զրոյցները՝ դժուար է ասել: Սակայն յայտնի է նաեւ, որ Հայ Եկեղեցում կուսանոցներն յաճախ գործել են նշանաւոր վանքերի հովանու ներքոյ, եւ չպէտք է բացառել, որ մոռացուած նման կուսանոցների մասին յիշողութիւնը կարող էր սերնդէսերունդ փոխանցուել սոսկ աւանդազրոյցի միջոցով:

Այսպէս՝ խոշոր վանքերի հովանու ներքոյ մեզ անյայտ մի կուսանոցի գոյութեան մասին է յուշում պատմական Ծարում[59] 1684ին Վառվառէ գրչուհու ընդօրինակած ձեռագրի յիշատակարանը.

> Գրեցաւ ի յերկիրս Ծար՝ Փոքր Սիւնիս կոչեցեալոյ, ի սուրբ վանս կուսանաց, ընդ հովանեաւ Դադէի Սուրբ Առաքելոյն եւ Սուրբ Կաթուղիկէին եւ Սուրբ Աստուածածնին եւ ամենազօր Սուրբ Նշանին Մարդաղաւնեաց եւ այլ սրբոց, որ անդ կան գումարեալ ձեռամբ ամենավրէպ եւ թշուառ անձին Վառվառիա միայնաւորի[60]:

Մեր ժամանակներում համացանցում եւ ճամփորդական ուղեցոյցներում իբրեւ կուսանաց անապատ է նշւում նաեւ Դադիվանքից ոչ-հեռու ԺԲ.-ԺԷ. դարերի Ս. Աստուածածին վանքը[61]: Աղբիւրագիտական որեւէ

---

[57] Գտնւում է Ադրբեջանի Շամխորի շրջանում (Յակոբեան, Մելիք-Բախշեան, Բարսեղեան, *հտր. 1*, ԵՀ հրատ., Երեւան, 1986, էջ 771. նաեւ՝ *Հիւսիսային Արցախ*, էջ 476):

[58] «Ճանապարհորդական յիշատակարան», *Արձագանք*, 1886, թիւ 21, էջ 308: Հմմտ.՝ Ոսկեան, էջ 161. նաեւ՝ *Հիւսիսային Արցախ*, էջ 480:

[59] Ներկայում՝ Ադրբեջանի վերահսկողութեան ներքոյ է: Ծարի հայկական սրբավայրերի մեծ մասը ադրբեջանցիները ոչնչացրել են խորհրդային տարիներին՝ խաչքարերը, տապանաքարերն օգտագործելով իբրեւ շինանիւթ (Սամուէլ Կարապետեան, *Հայ մշակոյթի յուշարձանները Խորհրդային Ադրբեջանի բռնակցուած շրջաններում*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 1999, էջ 56):

[60] *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, հտր. Ջ.*, «Նայիրի» հրատ., Երեւան, 2012, էջ 1323:

[61] Կարապետեան, *Հայ մշակոյթի յուշարձանները Խորհրդային*, էջ 76-81:
Կարապետեանը ուսումնասիրութիւններ է կատարել այս վանքում 1990ականներին, Քարվաճառի ազատագրումից յետոյ: Ներկայում այն կրկին ադրբեջանա-

տուեալ այս մասին՝ մեզ յայտնի չէ, թեեւ չի բացառւում, որ վանական այս համալիրի ներքոյ գործել է եւս մէկ Կուսանաց անապատ:

Եզրափակելով կարող ենք արձանագրել, որ Հայ Եկեղեցու ոչ-մեծաթիւ կուսանոցների շարքում Արցախի կուսանաց անապատները նշանակալի տեղ են զբաղեցնում: Դրանք հիմնականում ԺԷ. դարի կուսանաց անապատներ են: Մեզ յայտնի աղբիւրները, սակայն, հիմնականում արձանագրում են կուսանաց վանքերի, միանձնուհիների ու մայրապետերի անուններ՝ անպատասխան թողնելով այդ վանքերի կրօնա-եկեղեցական գործունէութեանը վերաբերող հարցեր:

Հիմնովին աւերուած կամ կիսաւեր այդ վանքերն անհերքելիօրէն Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգութեան մաս են կազմում: Ներկայում դրանք ամբողջութեամբ Ադրբեջանի վերահսկողութէան ներքոյ են, եւ յայտնի չէ դրանց յետագայ ճակատագիրը:

THE NUNNERIES OF ARTSAKH

(Summary)

HEGHINE MKERTCHYAN (heghmk@yahoo.com)

Despite the small number of nunneries in the Armenian Church, there have been about ten nunneries in different provinces of historical Artsakh. They date back to the 17th century, when such convents faced a period of revival. Similar convents whose dates preceded and followed this are less well documented.

These nunneries of Artsakh were not only convents, but also cultural centers, where manuscripts were copied and illustrated. One such manuscript is the famous Gospel Manuscript at a nunnery in the historical province of Varanda, which dates back to the 17th century.

The nunneries of Artsakh undeniably constitute an important part of the spiritual and cultural heritage of Artsakh. However, currently they are either completely or partly destroyed and are controlled by the Azeris, which makes their future unclear.

կան իշխանութեան ներքոյ է (*Հայ մշակոյթի յուշարձանները Խորհրդային Ադրբեջանի,* էջ 76-81):

ԱՅՐԻՎԱՆՔԻ ՏԱՃԱՐԻ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՊԱՏԻ ԻՒԱՆԷ Ա. ՋԱՔԱՐԵԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ (ԺԳ. ԴԱՐ) ԵՒ ՅԱՐԱԿԻՑ ՀԱՐՑԵՐ

ՌՈՒԲԷՆ ԳԱՍՊԱՐԵԱՆ (ruga55@mail.ru)

Այրիվանքը (Գեղարդ)[1] գտնւում է Մեծ Հայքի Այրարատ նահանգի Կոտայք գաւառում: Հնավայրի մասին ուշագրաւ տեղեկութիւն է յայտնում հայր Ղեւոնդ Ալիշանը: Նա գրում է, որ Գեղամայ լեռների հարաւարեւելեան ստորոտին, «Այրարատեան գետոց» (միջին դարերում՝ «Գառնոյ ջուր»[2]) «*Ոստ մի Գեղայ լերի*» մերձակայ անդնդախոր ձորակում հիմնուած «*գերահռչակ.. հզօրագունին իմացուածոց մարդկան՝ կրօնից հրաշակերտ, Այրիվանքն*»[3]: Այրիվանքը, գիտնականի բնորոշմամբ, կազմուած է *ընդարձակ Ժամատնից* կամ, ինչպէս ինքն է անուանում «*առաջին (բուն) եկեղեցի (Ա)*», ինչին տալիս է նաեւ Կաթուղիկէ անուանումը[4]:

Այրիվանքի[5] Կաթուղիկէ տաճարի հարաւային պատի արեւելեան մասում, արտաքուստ 2,5-3մ բարձրութեան վրայ փորագրուած է հինգ տող:

Արտօնագիրն առաջինն ընդօրինակել է հայագէտ Գարեգին Յովսէփեանը[6]: Նկատենք՝ անառարկելի են վեհափառ հայագէտի ընդօրինակութեան առանձնակի տարբերութիւնները, քանի որ այն աւելի է մօտեցուած մայր՝ գրաբարեան լեզուին: Առաջին տողում գիտնականը յաւելել է *«[Կամաւն ԱՅ այս է]»* բառակապակցութիւնը, որն ընդունելի է: Այնուհետեւ, նոյն տողի աւարտին եւ երկրորդի սկզբին՝ հեղինակը վերծանել է «*փիեզերակալին Զա[քարիայի որդոցն] Աւագ Սարգսի*»: Իրականում Իւանէ Ա. Զաքարեանը «*փիեզերակալ*» է համարել հօրը՝ ամիրսպասալար Սարգիս (Մխարգրձէլ) Զաքարեանին, թէեւ տեղին է *Զաքարէ Մեծի* անուան յաւելադրումը Յովսէփեանի կողմից, քանի որ յիշատագրում նշուած է մեծանուն զօրապետի որդու՝ *Շահնշահ-Սարգիս* անունը: «Շահնշահ» անուան *հնշ* բաղաձայն տառաշարքի մէջ հեղինակը իրաւամբ վերականգնել է *Ը* գաղտնավանկը, որ, ըստիս, պատին *ը* տառի ստորին գիծը փորագրուած չէ կամ աննշան է: Գիտնականի յաջորդ սրբագրումը «*Կայծոնաւ մինչ [ի*

---

[1] Հ. Ղեւոնդ Ալիշան, *Այրարատ*, Վենետիկ,1890, էջ 336:

[2] Նոյն, էջ 331:

[3] Նոյն, էջ 331-32:

[4] Նոյն, էջ 338:

[5] «*Ի խորանի աստ փաճարիս պահիւր երբեմն պարծանք սրբութեան Հայոց՝ Գեղարդն քրիստոսեան, որ այժմս յԷջմիածին է, եւ յոր սակս յաճախագոյն քան զհին անուն Այրի-վանից՝ լսի Գեղարդայ վանք, որպէս եւ լեառնն՝ Գեղարդայ սար եւ ձորն եւս կոչեալ է ուրեք Գեղարդաձոր*» (նոյն):

[6] Գարեգին Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ*, Վաղարշապատ, 1928, էջ 1:

Բարկուշատն *մինչ*]», հաւանաբար, յաւելադրուել է՝ նկատի ունենալով նոյն սրբավայրի Վասակ Խաղբակեանի արձանագրութեան, Սիւնեաց պատմիչ Ստեփանոս Օրբէլեանի եւ *Մանր ժամանակագրութեան* տեղեկութիւնները[7]: Երրորդ տողում գիտնականը սրբագրել է՝ «*եկի ի սբ ուխտս յԱ*[րի վանս[8] եւ տեսի զ]*եկեղցիքս*», իսկ չորրորդում՝ «*եւտ*[ու յիշատակ ինձ]» եւ յաւելել «զ..ո» անհասկանալի տառաշարքը: Անէծքի բանաձեւում հայագէտը վերծանել է «*ոք որ հակառակ*ողի *սեւերես գայ եւ էրից ս*[ուր]բ ժողովոյն[9] նզովեալ *եղիցի եւ որ որեայ ՅԱՅ*»[10]:



[7] *Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց*, Աղանեան, Թիֆլիս, 1910, էջ 391, *«:ՈԺ: (1201) Մեծ սպառապէտքն Հայոց եւ Վրաց Իւանէ եւ Զաքարէ առին Դւին եւ կոտորեցին եւ թափեցին զաշխարհս Հայոց ի փաճկաց, ի Կուռ գետոյ մինչեւ յԵրասխ եւ Բարգուշատայ, մինչ ի Մժնկերտ»* (*Մանր ժամանակագրութիւններ XIII-XVIII դդ., հտր. 1*, կազմ.՝ Վ. Յակոբեան, Հայկ. ՍՍՌ ԳԱ, Երեւան, 1956, էջ 37), «*Վասակ որդի Խաղբակո կողմնապահ ի Գառնոյ մինչեւ ի Բարգուշատ*», (Յովսէփեան, էջ 1):

[8] Ուշագրաւ է, որ աթաբէկ Իւանէն սրբավայրն անուանում է «սուրբ ուխտս»՝ առանց նշելու վանքի անունը:

[9] Երեք տիեզերական ժողովների՝ Նիկիա՝ 325, Կոստանդնուպոլսիս՝ 381, Եփեսոս՝ 431, սահմանումները Հայոց Եկեղեցու դաւանաբանական ընդունելի բանաձեւումներն են:

[10] Հաւանական է սրբագրական սխալ է, պէտք է լինի «ողորմեայ»:

ԹԱԳԱԶՆՈՅՆ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԿԱԼ ԱԹԱԲԱԿ ԻՒԱՆԷԻ ԵՒ ԱՐԵԱՆ ՀԱ-ՐԱԶԱՏԻ ԻՒՐՈՅ ՏԻԵԶԵՐԱԿԱԼԻՆ ԶԱՒ/ԱԳ ՍԱՐԳՍԻ ԱՄԻՐՍՊԱՍԱԼԱ-ՐԻՆ ԵՒ ՈՐԴՈՅ ՆՈՐԻՆ ԱՒԱԳԻՆ ԵՒ ՇԱՀԸՆՇԱՀ, ՈՐ ԱՌԻ ԿԱՅԵ-ՆՈՎ[11] ԵՒ ԿԱՅԾՈՆՈՎ[12] ՄԻՆՉ/ՅԱԿԱՆԱ ԵՒ ՄԻՆՉ Ի ՆԱԽՃԱՒԱՆ ԵՒ ԱՆԴ Ի ՄԻՆՉ Ի ԿԱՐՍ ԱՌԻ ԱՅ ԱՒԳՆՈՒԹ [ԵԱՄԲ] Ն: ԵՒ ԱՊԱ ԵԿԻ Ի ՍԲ ՈՒԽՏՍ Ի ՅԱՅ/ԵԿԷՂԷՑԻՔՍ ԵՒ ԶՍ[ՈՒՐ]ԲՔՍ ԵՒ ԻՆՁ ԱՆՈՒՇ ԹՈՒԵՑԱՒ ՅԻՄ ԱՆՈՒՆ ԱՐԱՐԻ ՁԻՄ ՅԻՇԱՏԱԿՍ Ի ՎԵՐԱ ԳՐԵՑԻ ԵՒ ԷՏ/ԲԵՐԴԱՂՆ[13] Ս[ՈՒՐ]Բ ԿԱԹՈՂԻԿԷԻՍ ԼՈՒՍԱՑՈՒ ԵՒ ՈՔ ՈՐ ՀԱԿԱ-ՌԱԿԻ ՅԻՍ ՍԵՒԷՐԵՍ ԳԱՅ ԵՒ **Յ**ԵՐԻՑ Ս[ՈՒՐ]Բ ԺՈՂՈՎՈՅՆ ՆԶՈ-ՎԵԱԼ/ՅԱՅ ԱՄԷՆ:

Ուշագրաւ է, որ նշեալ արձանագրութեան մասին ակներեւաբար խօ-սում է նաեւ Յ. Ա. Օրբելին[14]:

Որոշակի աղերսներ կարելի է նկատել Հաղպատի մեծ գաւթի[15], Սա-նահինի ՈԼ (1181)[16] եւ Հաղարծինի գաւթի բարաւորի վիմագիր յիշատակու-

---

[11] Կայան-Աղջկաբերդ, Ամրոց Հաղպատի Ս. Նշանի, Աշոտ Երկաթի բերդ, Դսե-վանք, Դրսեվանք, Կայան, Կայանաբերդ.- գտնւում է Մեծ Հայքի Գուգարք Աշ-խարհում, Հաղպատ եւ Սանահին գիւղի միջեւ: Ըստ շինարարական վկայագրի՝ կառուցել է Հաղպատի վանքի առաջնորդ Յովհաննէս եպիսկոպոսը 1233ին: Ա-ւելի ուշ կոչուել է նաեւ Ամրոց Հաղպատի Ս. Նշանի եւ Դսեվանք (Թ. Յակոբեան, Ստ. Մելիք-Բախշեան, Յ. Բարսեղեան, *Հայաստանի եւ յարակից շրջանների տե-ղանունների բառարան, հտր. 4*, ԵՊՀ հրատ. Երեւան, 1988, էջ 927): Փաստւում է, որ «*Գաւառում կառուցուել էին ճանապարհները հսկող բերդեր, որոնցից գլխաւորն էր Կայանայ բերդը (ներկայի Աղջկայ բերդը Իջեւանի շրջ.)*» (*Հայ ժողովրդի պատմութիւն, հտր. III*, ԳԱ հրատ., Երեւան, 1976, էջ 105. նաեւ՝ Ռ. Ի. Մաթեւոսեան, *Տաշիր-Ձորագետ (Xդ.-XIIդ.սկիզբ)*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ, 1982, էջ 21-50. նաեւ նոյնի՝ «Կայան բերդի եւ գաւառի տեղադրումը», *Լրաբեր հասարակական գիտութիւնների*, 2:1972, էջ 60:

[12] Կայծոն-*Գայծոն, Գիձեն, Գիջեն, Կիծեն.*- բերդ, ամրոց, քաղաք Մեծ Հայքի Գու-գարք Աշխարհում, Տաշիր գաւառում, ՀՀ Թումանեանի շրջանի Շնող գիւղի տա-րածքում: Այն վկայում են Դաւիթ Քոբայրեցին (ԺԲ.դ.), Վարդան Արեւելցին (ԺԳ. դ.), Մխիթար Այրիվանեցին (ԺԳ.դ.): Հիմնադրուել է հաւանաբար Թ.-ԺԱ.դդ.: Ե-ղել է Կիւրիկեան թագաւորների հիմնական ամրոցը (Յակոբեան, Մելիք-Բախշ-եան, Բարսեղեան, *հտր. 4*, էջ 930):

[13] Բերդաղ գիւղը յիշատակւում է Հաղպատի Ս. Նշան եկեղեցու հարաւային պատի ԺԱ.դ. վիմագրում, ուր Դաւթի որդի Կիւրիկէն գիւղը նուիրաբերել է եկեղեցուն. «*..հրամանք է Կիւրիկէի, որդոյ Դաւթի, որ եփու Բերդաղն ի Հաղբատ*» (Կարօ Ղաֆադարեան, *Հաղբատ*, Հայկ.ՍՍՌ ԳԱ, Երեւան, 1963, էջ 156):

[14] *Դիւան հայ վիմագրութեան, պրակ I*, կազմ.՝ Յ. Ա. Օրբելի, ՀՍՍՌ ԳԱ, Երեւան, 1966, էջ VII:

[15] Ղաֆադարեան, *Հաղբատ*, էջ 168:

[16] Կարօ Ղաֆադարեան, *Սանահնի վանքը եւ նրա արձանագրութիւնները*, Երեւան, Հայկ. ՍՍՌ ԳԱ, 1957, էջ 104:

թիւնների հետ, ուր *«յազգէ Բագրատունեան»*, «*բարէպաշտ*» իշխանաց իշխան Սարգիս Մեծի որդիներ՝ Զաքարէ եւ Իւանէ Զաքարեաններն ազդարարում են, որ «*նախախնամութիւնն* ԱՅ» տիրել են *վերստին* իրենց *նախնիների սեփական ժառանգութեանը*: Նոյն յաղթական ոգին է գերիշխում Անտառուտի խաչարձանի արձանագրութիւնում, ուր *«Հայոց եւ Վրաց»* ամիրսպասալար, «*Մեծ սպարապետ եւ շահնշահ արեւելեան կողմանցն*»[17] Զաքարէ Մեծ Զաքարեանը յայտնում է, որ ՈԽԹ (1200) թուականին գրաւել է՝ «առի զանառիկ ամրոցս զԱնբերդոյ *յախնայծին որդոցն* Հաքարու»[18], ինչը նոյնպէս փաստում է Իւանէ (Ա) Երկայնաբազուկը՝ Հաղարծինի յիշատակագրում «զանառիկ դղեակն *Անբերդ* եւ զթագաւորանիստ *քաղաքն Անի*», ապա Բջնին, Մարանդ, Թաւրիզ, Կարինը, Շաքին, Շիրվանը եւ Պարտաւը մինչեւ Բելուկան[19]:

Այրիվանքի (Գեղարդի) արձանագրութեամբ, աթաբէկ Իւանէ Զաքարեանն առաջին դէմքով տեղեկացնում է, որ Աստուծոյ օգնութեամբ սկզբից «*առի*»՝ ազատագրել է *Կայէնն* ու *Կայծոնը* մինչեւ *Ականայ* եւ *Նախիճաւան*, եւ այնտեղից մինչեւ Կարս: Ըստ յիշատակութեան, նա է որ Գեղարդի սուրբ Կաթողիկէի հոգեւոր հաստատութեանը նուիրել է *Բերդաղն* ծուխը[20], պատգամելով՝ ով հակառակի իր որոշմանը՝ «*սեւերես եւ յէրից ժողովոյն նզովեալ [եղիցի] ՅԱՅ*»:

«*Թագազնոյն*[21] եւ *աշխարհակալ աթաբակ*» Իւանէ (Ա) Զաքարեանի արձանագիր-յիշատակագիրն *անթուակիր* է, սակայն Յովսէփեանի բնորոշմամբ՝ այն գրուել է «1215*ից* յետոյ՝ *ճիշդ* 1219 թ.»[22]: Ուստի, ըստ հայագէտի թուագրութեան, կարելի է հետեւեցնել ուշագրաւ մի իրողութիւն, որ աթաբ(ա)էկ Իւանէ (Ա.ը) նշեալ թուականներին, նկարագրական եղանակով, յիշողութեամբ վերապատմում է՝ «առի՝ Կայենով եւ Կայծոնով մինչեւ

---

[17] Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն հայոց*, աշխ.՝ Կ. Ա. Մելիք-Օհանջանեան, Հայկ. ՍՍՌ ԳԱ, Երեւան,1961, էջ 168:

[18] Ղաֆադարեան, *Հաղբատ*, էջ 168: Որոշակի նմանութիւն է զգացւում նաեւ Յովհաննավանքի ՈԽԹ: (1200) բնագրի հետ (Կարօ Ղաֆադարեան, *Յովհաննավանքը եւ նրա արձանագրութիւնները*, Հայկ. ՍՍՌ ԳԱ, Երեւան, 1948, էջ 76):

[11] *Դիւան հայ վիմագրութեան, պրակ VI,* կազմ.՝ Սուրէն Ա. Աւագեան, Հռիփսիմէ Մ. Ջանփոլադեան, ՀՍՍՀ ԳԱ, Երեւան, 1977, էջ 22:

[20] Գիւղը նշուած է Հաղբատի Ս. Նշան եկեղեցու հարաւային պատի վիմագրում. «*..Այս իմ հրամանք է Կիւրիկէի, որդի Դաւթի, եփու զԲերդաղն ի Հաղբատ*» (Ղաֆադարեան, *Հաղբատ*, էջ 156):

[21] Աշոտ Յովհաննիսեանի ընդգծմամբ՝ նշեալ «Թագազնոյն» բառով Զաքարեան Իւանէն շեշտում է իրենց ազգակցութեան կապը՝ Բագրատունեաց թագաւորական տոհմի հետ (Ա. Յովհաննիսեան, *Դրուագներ հայ ազատագրական մտքի պատմութեան, հտր. Ա.*, Հայկ. ՍՍՌ ԳԱ, Երեւան, 1957, էջ 156): Կարծում ենք՝ այն նաեւ ընդգծում է Իւանէ աթաբէկի փաստացի տիրական դիրքը հայոց մէջ:

[22] Յովսէփեան, էջ 102:

ի յԱկանայ եւ մինչեւ Նախճաւան եւ անդ ի մինչ ի Կարս» *Աստուծոյ օգնութեամբ,* կրկնակի անգամ ընդգծելով «առի»-*գրաւել* բայը: Ասել կ'ուզի՝ տուեալ արտօնագրով աթաբէկ Իւանէն հաստատում, ընդգծում է աշխարհագրական այն տարածքը, որ պատմագրութեան մէջ ընդունուած է ասել պատկանում էր վերջինիս իշխանութեանը: Այն է՝ Լօռու մի մասը, Այրարատեան նահանգի արեւելեան միքանի շրջանները, Սեւանայ լճի շուրջ գտնուող գաւառները, գլխաւորապէս Գեղարքունիքի, Սոդքի, Վայոց ձորի, հիւսիսարեւելեան Սիւնիքի ու միքանի այլ տարածքները[23]:

Խնդրոյ առարկայ վիմագրին պատշաճ ուշադրութիւն չի դարձրել նաեւ հայագէտ Նիկողայոս Ադոնցը՝ Յովսէփեանի *Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ* աշխատութեան գրախօսականում:

Հարկ է պարզել, թէ աթաբէկ Իւանէ Զաքարեանը ե՛րբ է գրաւել («*առի*») Կայէն ու Կայծոն ամրոցները:

Հայաստանում (Կա(ե)եան) Կայէն եւ Կայծոն բերդ-ամրոցներն ըստ ուսումնասիրողների հիմնուել են Բագրատունեաց Հարստութեան շրջանում, ծառայել են որպէս ռազմակայաններ, որոնք ապահովել են երկրամասի պաշտպանութիւնը[24]: Այս ամրոցները ԺԱ. դարի սկզբին որպէս տիրոյթներ պատկանում էին Բագրատունի Գագիկ Ա.ի (990-1020) հզօր թագաւորի երէց որդի Յովհաննէս-Սմբատ արքային: Վերջինս, Մատթէոս Ուռհայեցու ուշագրաւ բնութագրմամբ, եղել է «*իմաստուն եւ հանճարեղ յոյժ, բայց* մարմնովն տարտամ եւ հեղգ եւ թուլամորթ *ի պատերազմունս* եւ *անկիրթ*»[25]: Իսկ կրտսեր եղբայր՝ Աշոտը, բոլորովին վերջինիս հակապատկերն էր՝ արի եւ քաջ «*այլ.. եւ զօրաւոր, անպարտելի եւ յաղթող ի*

---

[23] *Հայ ժողովրդի*, էջ 541: Խորանաշատի Աւետարանի յիշատակարանում Ջաջուռ Խաղբակեանի դուստր Վանենին նշում է մեծ իշխան Իւանէ Զաքարեանի իշխանութեան սահմանները. «*Ի ժամանակս թագաւորութեան դստեր Թամարին՝ թոռին Գէորգեայ, եւ ի տերութեան Այրարատեան նահանգին եւ Խաչենոյ, մինչ մի կողմանս Չարեքին աթաբակ Իւանէի*» (*Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ ԺԳ. դար*, կազմ. Ա. Ա. Մաթեւոսեան, ՀՍՍՀ ԳԱ, Երեւան, 1984, էջ 140):

[24] Վարդան Վարդապետի վկայութեամբ, երբ 978ին Աշոտ Ողորմած թագաւորը եւ նրա կողակից Խոսրովանուշ թագուհին մահանում են «*Հանգեան ի Քրիստոս ի չորս հարիւր քսան եւ եօթն թուին թողլով երիս որդիս որոնց անուանքն-Սմբատ եւ Գագիկ եւ Գուրգէն*»: Երէց որդին՝ Սմբատը, որ նաեւ *փիեզերակալ* է կոչուել, կառուցել է մայրաքաղաք Անիի մեծանիստ պարիսպները եւ հիմնարկել Կաթողիկէ եկեղեցին: Կրտսեր եղբայրը՝ Գուրգէնը, ժառանգել է «*զՏաշիր Սեւորդւովք Ձորոյ գետին եւ զԿայան եւ զԿայծոն եւ զխորխոռունք-որ ի Խոռայ շինեցաւ, որ է Խոշոռնի. եւ զխորակերտ եւ զԲազունք*» (*Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն փիեզերական*, Մոսկուա, 1861, էջ 122. նաեւ՝ Մաթեւոսեան, *Տաշիր-Ձորագետ* էջ 21, 24. նաեւ նոյնի՝ «Կայան բերդի», էջ 53):

[25] Մատթէոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, գրաբար բնագիր՝ Մ. Մելիք-Ադամեան եւ Ն. Տէրմիքայէլեան, աշխարհաբար թարգմ. եւ ծանօթ.՝ Հ. Բարթիկեան, ԵՊՀ հրատ., Երեւան, 1991, 10:

պատերազմունս»[26]: Երկուսի միջեւ ծայր է առել թագին տիրելու արիւնահեղ գահակալական պայքար, որին միջամտել են Բագրատունի, Պահլաւունի աւատատէրերը, Պետրոս Գետադարձ կաթողիկոսը եւ Ափխազաց ու վրաց իշխանաւորները[27]: Ձեռք բերուած «հաշտութեամբ» երկիրը *մասնատրուել* է. հայոց թագաւոր է դարձել Յովհաննէս-Սմբատը: Վերջինիս տիրոյթներն են եղել Վարդան Արեւելցու հաւաստմամբ՝ Անի մայրաքաղաքը, Շիրակը, Արարատեան դաշտը, Աշոցաց ձորը, Ամբերդը, *Կայէն* եւ Կայծոն բերդերը եւ Տաւուշ գաւառը[28]: Նոյն պատմիչի յիշատակմամբ, 1120ականների սկզբին, վրաց թագաւոր Դաւիթ (Դ) Շինարարը (1089-1125), նշանակալի ընդարձակում է Վրաստանի սահմանները: Նա – հաւանաբար 1123/24ին - պատմիչի պատկերաւոր արտայայտութեամբ, գրաւել էր Ուտեաց աշխարհի մի շարք գաւառներ, հայոց Կիւրիկեանների եւ Բագրատունիների տիրոյթները, այդ թւում Աղստեւի հովտի Կայան եւ Կայծոն ամրոցները. «*Եւ ընդարձակեալ Դաւիթ զսահմանս Վրաց, առեալ զՈւխտիս եւ զսահմանս իւր, զԳագ, եւ զՏէրունականն, եւ զՏայուշ, եւ զԿայեան, եւ զԿայծոն, եւ զԼոռէ եւ զՏաշիր, եւ զՄահկանաբերդ, եւ զբոլոր իշխանութիւն Հայոց Կիւրիկէի եւ Աբասայ, հնազանդէր եւ զլեառն Կովկասու, եւ զթագաւորութիւնն Սոնաց, զՄրաճուլք, եւ զՃքեթ, եւ զԴուալէթ, եւ զՀերեթ եւ մինչեւ զծովն Կազբից եւ զՀաբանդ, եւ զՇապուրան քաղաք*»[29]:

Նոյն դարի վերջին *Կայէն* եւ *Օրբէթի* ամրոցների տէրը, վրաց աղբիւրի տեղեկացմամբ, Վարդան Դադեանն է. «*Վարդան Դադեանն* (Դադիանն) (дзе)[30] *էր* Որբեթի եւ Կայէնի տէրը»[31]: Հաւանական է՝ այս Դադեանը տե-

---

[26] Նոյն:

[27] Նոյն: «*Եւ յայնժամ մի ոմն իշխան ի զօրաց թագաւորին Վրաց ի դեսպանութիւն եկեալ առ Յովհաննէս արքայ. վասն զի մայրն Յովհաննիսի եւ Աշոտոյ դուստր էր Վրաց թագաւորին Գէորգէ՝ Կապրամիդէս թագուհին: ..Եւ յայնժամ սուրբ հայրապետն Պետրոս եւ իշխանքն ամենայն ելին առ Աշոտ եւ մեծաւ երդմամբ նստուցին զԱշոտ Դրուց աշխարհին՝ թագաւոր ամենայն տանն Հայոց, եւ Յովհաննէս նստցի թագաւոր ի քաղաքն յԱնի*», էջ 14:

[28] Բարձրբերդցի, էջ 125. նաեւ՝ *Հայ ժողովրդի*, էջ 144: Ըստ Մաթեւոսեանի՝ Բագրատունի «Հայոց եւ Վրաց» շահնշահ Գագիկ Ա.ը 1001ին ըմբոստացած Դաւիթ Անհողինից խլեց որոշ շրջաններ եւ յանձնեց աւագ որդուն, դրանց. թւում պէտք է լինէին Կայէնն ու Կայծոնը (Մաթեւոսեան, *Տաշիր-Ձորագետ*, էջ 24):

[29] Բարձրբերդցի, էջ 119. նաեւ՝ Լ. Մելիքսէթ-Բէկ, *Վրաց աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին, հտր. Ա.*, Մելգոնեան ֆոնդ եւ Հայկ. ՍՍՌ ԳԱ, Երեւան, 1936, էջ 217-218. նաեւ՝ *Հայ ժողովրդի*, էջ 525. նաեւ՝ *Картлис Цховреба* (Վրաստանի պատմութիւն), Թբիլիսի, 2008, էջ 244:

[30] *Картлис Цховреба*, էջ 264:

[31] Լ. Մելիքսէթ-Բէկ, *Վրաց աղբիւրները, հտր. Բ.*, Մելքոնեան ֆոնդ եւ Հայկ. ՍՍՌ ԳԱ, Երեւան, 1936, էջ 13. նաեւ՝ *Картлис Цховреба*, էջ 265: Մարգարեանը յաւելում է, որ մինչ 1176-77ի ապստամբութիւնը բերդերը պատկանել են Հասան Կայէնեցուն: Վերջինս Ռ. Մաթեւոսեանի հաւաստմամբ՝ Ամիր Քուրդ Արծրունու

ղական իշխան աւատատէր է, եւ Կայէն ու Օրբէթ ամրոցները «հայրենի» տիրոյթ են, թէեւ չի բացառւում, որ վերջինս պայմանական բնոյթի՝ աւատ լինի: Սակայն Կայէն ամրոցը գտնւում է Աղստեւի հովտում[32], Հայաստանում, եւ իշխանը պէտք է լինէր տեղական աւատատէր:

Քարթլիս ցխովրեբայի վկայութեան համաձայն՝ Թամար թագուհու գահակալութեան սկզբում ենթադրելի է, որ վերոնշեալ *Դաւեանն* իր տէրութեան ղեկավարութեանը, ակներեւաբար, գահակից է դարձրել որդուն՝ Յովհաննին (Իւանէ)[33]: Սակայն վերջինս համալրել է ապստամբ խռովարարների շարքերը: Այդ խռովութեան մասին ուշագրաւ տեղեկութիւն է յայտնում ժամանակակից մատենագիր, իրաւագէտ-առակագիր Մխիթար Գօշը. «*Եւ թագաւորութիւնն Վրաց* շփոթեալ կայր, *զի Թամարն՝ դուստր Գէորգեայ թագաւորի,* եթող *զայրն առաջին [որ թա]գաւորին Ռըզոց (Ռուսաց ՌԳ) եւ եառ* այլ *այր յԱլանաց թագաւորութենէն՝ ի մայրենի ընտանութենէ իւրմէ Սաւսլան անուն, որ եւ Դաւիթ ի թագաւորելն անուանեցաւ: Եւ եղեւ այս ի հայրապետութեանն տեառն* Գրիգորի Հայոց կաթողիկոսի *եւ յեպիսկոպոսութեան տեառն Բարսղի հռչակաւոր ուխտիս Հաղբատայ: Բայց գրեցաւ յանապատիս* Գետկայ»[34]: Ինչպէս նկատելի է Գետիկ «յանապատում» գրուած յիշատակարանի տեղեկացմամբ՝ Գօշը յղում է, թէ «թագաւորութիւնն *Վրաց* շփոթեալ *կայր*», երբ թագուհի Թամարը «*եթող*»՝ բաժանուել է «զայրն *առաջին* [որդի թա]գաւրին Ռըզոց» եւ «էառ (ամ-

---

որդին է, մասնակցել է Իւանէ Օրբելու խռովութեանը (Ռ. Մաթեւոսեան, *Տաշիր-Զորագետ,* էջ 25): Ապստամբութեան պարտութիւնից յետոյ Հասան Կայէնեցին զրկուել է այդ տիրոյթներից (Հ. Մարգարեան, *Հիւսիսային Հայաստանի եւ Վրաստանի ԺԲ. դարի մի քանի հարցեր*, ՀՍՍՀ ԳԱ, Երեւան, 1980, էջ 218): Ամիր Քուրդ Արծրունու՝ Հասան Կայէնեցու հայր լինելը, իրաւացիօրէն առարկում է Մարգարեանը՝ նշելով. «*Անկարելի է Ամիր-Քրդին Հասան Կայէնեցու հայր համարել*» (Մարգարեան, էջ 215): Ղաֆադարեանը նոյնպէս որեւէ տեղ չի յիշատակում, որ Ամիր Քուրդ Արծրունին *հայրն է* Հասան Կայէնեցուն (Ղաֆադարեան, *Հաղբատ*, էջ 188):

[32] Մաթեւոսեան, «Կայան բերդի եւ գաւառի տեղադրութիւնը», էջ 62:

[33] Մելիքսէթ-Բէկ, *Վրաց աղբիւրները, հտր. Բ.*, էջ 13: Այստեղ հաւանական է սրբագրական սխալ կայ, «Յովհան (Իւանէ) Վարդանի որդին՝ Գագի տէրը, Մռա՝ Կայծոնի տէրը, Կայէնը նոյն Վարդանինն էր» ռուսերէն յիշատակութեամբ՝ «Иван, сын Вардана, владетель Гаги, Мака, владетель Каецони, – Каэни принадлежал самому Вардану» Մական, հաւանաբար, բնակավայր է (*Картлис Цховреба*, էջ 265):

[34] *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան մատենադարանի, հտր. Ը*, խմբ.՝ Գ. Տէր-Վարդանեան, Նաիրի հրատ., Երեւան, 2013, էջ 679 ըստ՝ Մխիթար Գօշ, «Մեկնութիւն մարգարէութեանն Երեմիայ», էջ 681-82: Այս մասին տեղեկացնում է նաեւ Վարդան վարդապետը. *«..(Թամար) Թէպէտ ընկեց զայրն Ռուզ եւ, էառ զՕսն Ասլան, յորմէ ծնաւ միամօր որդի եւ կոչեաց զնա Լաշայ»*, Վարդան Բարձրբերդցի, էջ 183:

ուսնացել) այլ *այր* յԱլանաց» Սոսլան թագաւորազնի հետ: Այդ առիթով վրաց պատմութեան հատորեակը նշում է թագուհի Թամարի ամուսնութիւնը ռուս արքայազն Եուրիի հետ, որ Վրաստանում ճանաչուել է *Գեորգի* անունով: Հաւանաբար ամուսնութիւնը տեղի է ունեցել 1185ին, երբ վերջինս *եկել է Թբիլիսի*[35]: Սակայն, նորապսակների ամուսնութիւնը երկար չի տեւել: Նրանք ամուսնալուծուել են երկու տարի անց (1187)[36], եւ Թամար թագուհին 1189ին ամուսնացել է *Սոսլան-Դաւթի* (յԱլանաց) արքայազնի հետ[37]: Վրաց սկզբնաղբիւրից անյայտ են ապստամբութեան դրդապատճառը եւ սկիզբը: Արդեօ՞ք, այդ խռովութիւնը ծագել է ամուսնալուծութիւնից, եւ կազմակերպիչը եղել է ռուս արքայազն Գեորգին՝ պարզ չէ:

Պատմագիտութեան մէջ իշխում է այն կարծիքը, թէ Թամարի իշխանութեան սկզբնական շրջանում պարզորոշ ընդգծւում է, որ Գեորգի Գ.ին չէր յաջողուել ընկճել վրաց աւատական աւագանուն. վերջիններս պատեհ առիթով վերստին խռովութիւն են բարձրացրել[38]: Հաւանական է, որ խռովութիւնը ծագել է այն ժամանակ, համաձայն *Քարթլիս ցխովրեբայի* վկայութեան, երբ թագուհի Թամարը գահակալութեան սկզբում արքունիքում իրեն յուսալի հաւատարիմներին նշանակալից կարեւոր պաշտօններ է շնորհել: Նա «ամիրսպասալար եւ մանդատուրթախուցէս» գործավար է նշանակում ղփչաղ Ղուպասարին, որին տարեգիրը մեծարում է՝ բնութագրելով որպէս *բարի դիւցազուն* եւ *ասպետ* («добрый витязь и рыцарь»[39]), յաւելելով՝ թագուհի Թամարը «ոչ մի թիզ չպակասացնելով Լօռիին,

---

[35] Ն. Ա. Բերդձենիշվիլի, Դ. Դոնդուա, Կ. Դումբադձէ, Գ. Ա. Մելիշվիլի, Շ. Ա. Մեսխիա, *Վրաստանի պատմութիւն*, Թբիլիսի, 1962, էջ 201:

[36] Վրաց տարեգրի հաւաստմամբ՝ «ամուսնալուծութիւնը» տեղի է ունեցել այն պատճառով, որ ռուս արքայազնի հոգին ու սիրտը սողոսկել էին սատանայական մտայղացումներ, որին երկու տարուց աւելի դիմացել էր Թամար թագուհին: Վերջինս չի վստահել ռուս ամուսնուն, որն արժանի էր մահապատժի, ինչպէս ընդգծում է տարեգիրը, սակայն Թամարը նրան առատօրէն վարձատրել է եւ ճանապարհել Պոլիս: Ուստի, վեզիրների ու դիդեբուլների իմացութեամբ, զոյգերն ամուսնալուծուել են՝ խուսափելով եղբայրասպան պատերազմից (*Картлис Цховреба*, էջ 261): Ի՛նչ էին այդ «սատանայական մտայղացումները», որոնք պատճառ կարող էին հանդիսանալ արքունիքում եղբայրասպան պատերազմի հրահրման՝ տարեգիրը չի մասնաւորեցրնում: Այսինքն, հեղինակը չի յայտնում ընկերա-քաղաքական կարեւորագոյն իրողութիւնների նախադրեալները:

[37] Բերդձենիշվիլի, Դոնդուա, Դումբադձէ, Մելիշվիլի, Մեսխիա, էջ 201: Ըստ Յակոբ Մանանդեանի՝ Թամարի ամուսնալուծութիւնը Գեորգի ռուս ամուսնուց, տեղի է ունեցել 1187/8ին (Յ. Մանանդեան, *Երկեր, հտր.* Գ., Հայկ. ՍՍՀ ԳԱ Երեւան, 1977, էջ 139):

[38] Մարգարեան, *Հիւսիսսային*, էջ 221:

[39] *Картлис Цховреба*, էջ 256: Մարգարեանը յաւելում է, որ Խուբասարին Թամարի իշխանութեան օրօք շնորհուել է նաեւ մանդատուրթուխուցէս գործավարութիւնը (Մարգարեան, *Հիւսիսային*, էջ 205):

որը ..նրան էր շնորհուած»[40]: Սոյն պատմական իրողութիւնը հաստատւում է նաեւ Օրբէլեանի հետեւեալ վկայութեամբ, միայն այն տարբերութեամբ, որ Խուպասարը սպասալար է *նշանակուել* Գեորգի Գ.ի կողմից. «զՕրբէլին բաժանեաց զհայրենիս նոցա Գէորգի, զոմանս ետ թշնամեացն եւ մատնողացն, եւ զայլս *եւթ* Խփչախին որ *Խուպասար կոչիւր*. .. եւ մատոյց զնա ի գահ իշխանութեան նոցա, եւ եդ սպասալար ամենայն Վրաց»[41]: Այդ առիթով Մանանդեանը նկատել է, որ (Խ)Ղուպասարը Լօռիում չի կարողացել հաստատել իր իշխանական իրաւունքները (վերջինս կաթուածահար է եղել[42], եւ դարձել անդամալոյծ, անաշխատունակ):

Վրացական աղբիւրի յաջորդ վկայութեամբ՝ Թամար թագուհին բանտարկել է «*գանձարանապետ*[43] *Ղութլու Արսլանին*»՝ վրաց աւատատէրերից մէկին, որը, թէեւ ծագումով ստորին խաւից էր[44], սակայն տարեգրի բնութագրմամբ՝ օժտուած էր դաւադիր խարդաւանքով[45]: Վերջինս Իսանի դաշտում վրան էր դրել եւ «ինչ-որ ծրագիր նախաձեռնելով» գործադրում էր դատ ու դատաստան, ու «ինքնիշխանաբար» իրեն յայտարարել էր կարեւորագոյն բարձր պաշտօնի *գործատր*՝ *ամիրսպասալար*, փորձելով *տիրանալ* Լօռի երկրամասին[46], ինչին տեղեակ լինելով թագուհի Թամարը՝ *վիրաւորւում* է[47]:

Պատմական այս իրավիճակը վրաց պատմագրութիւնում մեկնաբանւում է, թէ աւագագոյն իշխանները (*ազնաւուրները*) թերահաւատ են մօտեցել[48] Թամար թագուհու գահակալութեանը պահանջելով՝ երիտասարդ թագուհու լրացուցիչ թագադրութիւն[49]: Ակնյայտ է, որ նման մեկնաբանութիւնից բխում է միանշանակ այն իրողութիւնը, որ Թամարն իշխանութիւնն ստանձնել է մեծատոհմիկ ազնուականութեան համաձայնութեամբ: Սակայն *Քարթլիս ցխովրեբա*յի հայերէն եւ ռուսերէն թարգմանութիւնների տեղեկութիւններից նման հետեւութիւն անելը դժուար է, քանի

---

[40] Մելիքսէթ-Բէկ, *Վրաց աղբիւրները, հտր. Բ.*, էջ 11. նաեւ՝ *Картлис*, էջ 256:

[41] Ստեփանոս Օրբէլեան, էջ 391:

[42] Մանանդեան, էջ 136. նաեւ՝ *Картлис*, էջ 256-57:

[43] *Картлис Цховреба*, էջ 257. նաեւ՝ *Հայ ժողովրդի*, էջ 531:

[44] *Картлис Цховреба*, էջ 256:

[45] Անդ:

[46] Մելիքսէթ-Բէկ, *Վրաց աղբիւրները, հտր. Բ.*, էջ 11: Մարգարեանը նկատում է, որ թագուհի Թամարի իշխանութեան առաջին տարիների խռովութիւնը խօսում է այն մասին, որ Գեորգի Գ.ին չէր յաջողուել սասանել մեծատոհմիկների դիրքերը, վերջիններս պայքարի նոր փուլում փորձում էին ձեռք բերել այն ամէնը, ինչին նրանք ձգտում էին անցեալում (Մարգարեան, *Հիւսիսային*, էջ 221):

[47] *Картлис Цховреба*, էջ 256-257:

[48] Բերդծենիշվիլի, Դոնդուա, Դումբադձէ, Մելիշվիլի, Մեսխիա, էջ 196:

[49] Անդ:

որ վրացական աղբիւրը, պատմական իրողութիւնները ներկայացնում է նկարագրական եղանակով՝ զուրկ թուային ստոյգ արձանագրումից:

Ապացուցելու համար մեր ասածը՝ վերլուծենք տարեգրի վերոնշեալ տեղեկութիւնը: Ե՞րբ կարող էր (Ղ)Խութլու-Արսլանը «ինքնիշխանաբար» իրեն յայտարարել «ամիրսպասալար»-գործաւոր. ակներեւաբար, այն ժամանակ, երբ ղփչաղ Խուպասարը դարձել էր անաշխատունակ, խեղանդամ[50]: Ուստի, թագուհի Թամարը իրեն հաւատարիմ արքունական ռազմուժով, զօրական Մխարգրձել Սարգիս Զաքարեանի ղեկավարութեամբ, որը տարեգրի բնութագրմամբ՝ «բարեծնունդ էր եւ արշաւանքների ու քաջագործութիւնների մէջ սնուած»[51], որդու Զաքարէի[52] (գուցէ եւ որդիների) հետ գերեվարել, «բանտարկել»[53] էր անկարգութիւններ հրահրող գանձապետ, ինքնակոչ, աւատատէր Խութլու-Ասլանին: Խռովութեան ճնշման յաղթական աւարտից յետոյ Թամար թագուհին, Մխարգրձել Սարգիս Զաքարեանին նշանակել է հայոց եւ վրաց զօրքերի գլխաւոր հրամանատար՝ ամիրսպասալար: Վերջինիս որդիները՝ Զաքարէն եւ Իւանէն, տուեալ պահին, ըստ վկայութեան, դարձել են «Դարբազի»[54] ծառայողներ՝ հայրենիք

---

[50] *Картлис Цховреба*, էջ 256:

[51] Մելիքսէթ-Բէկ, *Վրաց աղբիւրները, հտր. Բ.*, էջ 11, «Արշաւանքների մէջ սնուած» ասելով, հաւանական է, տարեգիրը նկատի ունի 1174ի Գեորգի Գ.ի կողմից երրորդ անգամ Անիի գրաւումը, երբ կառավարիչ նշանակուեց Իւանէ Օրբէլեանը եւ նրա օգնական կարգուեց Սարգիս Զաքարեանը՝ Սադուն Արծրունի Ա.ի փոխարէն (*Картлис Цховреба*, էջ 245. նաեւ՝ *Հայ ժողովրդի*, էջ 528. նաեւ՝ Մարգարեան, *Հիւսիսային*, էջ 105):

[52] Տարեգիրը շեշտում է. «Саргис Мхаргрдзели с сыном и племянником», «որդուս»՝ Զաքարէի: Երիտասարդ Զաքարէն 1176/78ին աչքի ընկնող, ճանաչուած, անուանի զօրական էր (*Картлис Цховреба*, էջ 251):

[53] Տարեգիրը յայտնում է, որ «Когда об этом узнали военные присягнувшие ему и готовые поддержать его козни, они собрались и, отложивши [свой план], постановили крепко стоять за освобождение Кутлу-Арслана и не допустить, чтобы ему нанесен был какой-нибудь вред» (*Картлис Цховреба*, էջ 257): Անհասկանալի է տարեգրի «военные»՝ «զինուորականներ» արտայայտութիւնը, որոնք Խութլու-Արսլանին երդում են տուել, սատարել, նոյնիսկ վճռականօրէն փորձել են ազատել: «Զինուորականներ, որոնք երդում են տուել նրան», պէտք է հասկանալ իր հայրենատիրութեան ստորադաս վասալներ, եւ ոչ արքունական բանակի զինուորներ:

[54] Дарбази (Դարբազ), – Государственный Совет (*Картлис Цховреба*, էջ 297): Տարեգրի մի այլ տեղեկութեան համաձայն՝ Զաքարէն պաշտօնական ընդունուել է, իսկ Իւանէն՝ ոչ. «После этого сыновья Саргиса и Варама Мхаргрдзели, юноши отменные, старейшины Захария и Захария, официально принятые [во дворце] 180, Иван и Саргис, еще непринятые, предприняли поход в страну Двинскую» (*Картлис Цховреба*, էջ 260):

ստանալով Լօռին «ի *իշխանութիւն* եւ ի *տիրապետութիւն Սոմխիթի*»[55]: Ինչպէս նկատելի է՝ կարեւոր, վճռական դերակատարում է ունեցել Սարգիս Զաքարեան մխարգրձէլը Գեորգի Գ.ի դստեր Թամարի գահակալութեան սկզբում ծագած դաւադրութեան ճնշման գործում: Նրա դերը վճռական ու մեծ է նաեւ 1176/78ին թագաւոր Գեորգի Գ.ի դէմ բռնկուած Օրբելիների լայնածաւալ ապստամբութեան ճնշման ժամանակ, ինչպէս իրաւամբ նկատում է Յովսէփեանը, քանի որ Սարգսին խոստացուել էր «զամենայն *հայրենիս* եւ *փարթամութիւնս* Օրբէլեանց խոստանայր տալ նոցա»[56]: Մխարգրձէլ Սարգիսը, որ խռովարարներից երես էր թեքել եւ անցել վրաց թագաւոր Գեորգի Գ.ի կողմը[57], գործակցելով իր աներորդու «ամիրապետն Տփխեաց, *Քուրդն* անուանեալ» Արծրունի իշխանի հետ, Մահկանաբերդի մերձակայքում ջախջախիչ պարտութեան է մատնում Իւանէ Օրբելու ապստամբ ուժերին[58]:

Հայկական եւ վրացական վերոնշեալ վկայութիւններում տարեթուային հակասութիւն է նկատւում: Այսպէս, Մխիթար Գօշի եւ Վարդան Վարդապետի վկայութիւններում ապստամբութեան սկիզբը՝ «շփոթեալ կայր» այն ժամանակ է, երբ Թամարն բաժանուել էր իր ռուս ամուսնուց, այսինքն՝ դէպքերը կատարւում են 1187ին: Իսկ վրացական աղբիւրի

---

[55] Յովսէփեան, *Խաղբակեանք*, էջ 7. նաեւ՝ *Картлис Цховреба*, էջ 257: Հաւանական է՝ Լօռին իր շրջակայքով «ի իշխանութիւն եւ ի տիրապետութիւն» տրուել է ամիրսպասալար Սարգիս Զաքարեանին, եւ ոչ որդիներին: Սկզբնաղբիւրից դատելով՝ Լօռին տրուել է որպէս տիրոյթ, եւ ոչ «հայրենիք»: Տուեալ պատմական իրողութիւնը, Մանանդեանի բնորոշմամբ՝ տեղի է ունեցել 1186ին (Մանանդեան, էջ 136): Այսինքն՝ իշխանի ամիրսպասալար գործավարութիւնը շատ կարճ է տեւել:

[56] Օրբէլեան, էջ 385. նաեւ՝ Յովսէփեան, *Խաղբակեանք*, էջ 6:

[57] Վրաց տարեգիրը չի մասնաւորել, թէ ինչպիսի հանգամանքների բերումով է, որ Սարգիս Մխարգրձէլը՝ «սիրելին» («любимец») ապստամբ Օրբելիների, հեռացել վերջիններից՝ զօրակցելով թագաւոր Գեորգի Գ.ին (*Картлис Цховреба*, էջ 245), որի մասին լռում են նաեւ հայկական աղբիւրները:

[58] Վ. Յակոբեան, «Դաւիթ Քոբայրեցու յիշատակարանը», *Տեղեկագիր*, 1952:8, էջ 119. նաեւ՝ *Յիշատակարանք ձեռագրաց*, էջ 472: Այդ առիթով Յովհաննիսեանը նկատում է. «Հայ ֆէոդալներից Իւանէի դէմ ասպարէզ եկաւ Մահկանաբերդի տէր Քուրդ Արծրունին»: Հեղինակը զարգացնում է խիստ ուշագրաւ վարկած յայտնելով, թէ «Երես շուռ տալով Վրաստանից, գուցէ Արծրունիները եւս յոյս ունէին վարձատրուել եթէ ոչ Լօռիի, գէթ Վասպուրականի թագով» (Յովհաննիսեան, *Դրուագներ, հտր., Ա.*, էջ 147): Սակայն Վասպուրականի երկրամասը ԺԲ. դարի եօթանասունականի վերջին չէր պատկանում Վրաստանին, այն գրաւուեց Զաքարէ Մեծի կողմից բաւականին ուշ, ինչպէ՞ս կարող էր Քուրդ Արծրունին նման իղձեր փայփայել (Յակոբեան, «Դաւիթ Քոբայրեցու», էջ 119-20. նաեւ՝ *Յիշատակարանք ձեռագրաց*, էջ 472. նաեւ՝ Մարգարեան, *Հիւսիսային*, էջ 205. նաեւ՝ Մաթեւոսեան, էջ 33):

վկայութեամբ՝ պատմական նշեալ իրողութիւնները տեղի են ունեցել աւելի վաղ: Եւ ամենակարեւորը, որն անհամոզիչ ու անհաւանական է, այն է, որ Սարգիս Զաքարեանը, մի անձնաւորութիւն, որ անցեալում դժուարին ճակատամարտերում աչքի էր ընկել որպէս տաղանդաւոր ու հմուտ զօրական, յանկարծ բանակի գլխաւոր հրամանատար՝ ամիրսպասալար է դառնում՝ միայն ճնշելով «ինքնակոչ» (Ղ)Խութլու-Արսլանի «ինքնագործունէութիւնը», թէեւ տարեգիրը փորձում է համոզել, որ վերջինիս «ինքնագործունէութիւնը» ընկերաքաղաքական *վտանգներ էր* սպառնում թագաւորական իշխանութեանը[59], ինչը համոզիչ եւ ընդունելի չէ, քանի որ Գեորգի Գ.ը 1178ի ապստամբութեան յաղթանակից յետոյ, իր դուստր Թամարին դարձրել էր իրեն գահակից *օծեալ* թագաւոր[60], եւ վերջինիս ենթակայութեան տակ էր, ինչպէս վերը նշեցինք, իրեն հաւատարիմ բանակը՝ Մխարգրձել Սարգիս Զաքարեանի ղեկավարութեամբ:

1184/87ին Թամար թագուհու գահակալութեան սկզբում տեղի ունեցած պատմական կարեւորագոյն բազմաթիւ իրադարձութիւնները միանշանակ առնչւում են ամիրսպասալար Սարգիս Զաքարեանի գործունէութեան, թէեւ տարեգիրը վերջինիս անունը, գուցէ միտումնաւոր, չի յիշատակում: Նա յայտնում է, որ ռուսների եւ աբխազների թագաւորը (իշխան Եուրին, որին Վրաստանում Գեորգի էին անուանում - Ռ.Գ.) ելոյթ է ունեցել Թբիլիսիում՝ ծածանելով յաղթութեան դրօշն ու խաչը, արշաւել Կարս, Կարնեփոր, մինչեւ Բասէն[61]: Դէպքը պէտք է կատարուած լինի 1187ի սկզբին, քանի որ այդ թուականին է Գեորգի Ռուսը բաժանուել Թամար թագուհուց, եւ արշաւանքին հաստատապէս պէտք է մասնակից լինէր զօրաբանակի ամիրսպասալար Սարգիս Մխարգրձէլը: Պատմագրութեան մէջ նշեալ «ապստամբութեան» աւարտը համարւում է 1184/8ը[62], սակայն աւելի ստոյգ կը լինէր 1185/86ը, քանի որ ամիրսպասալար Խուպասարի կաթուածահար լինելը եւ Խութլու-Արսլանի «ինքնագործունէութիւնը» որոշակի ժամանակում պէտք է տեղի ունենար, այսինքն՝ մեր մատնանշած թուականին:

---

[59] *Картлис Цховреба*, էջ 256:

[60] Բերդձենիշվիլի, Դոնդուա, է Մելիշվիլի, Մեսխիա, «Ճնշելով 1178ին բռնկուած ապստամբութիւնը Գեորգի Գ.ը մեծ հանդիսաւորութեամբ Թամարին բարձրացրեց եւ թագադրեց: Հայրն ու դուստրը համատեղ թագաւորում էին մինչ Գեորգի Գ.ի մահը 1284», էջ 195:

[61] *Картлис Цховреба*, «Որից յետոյ նրանք սկսեցին պատրաստուել արշաւանքի: Թբիլիսիում ելոյթ ունեցաւ ռուսների եւ աբխազների թագաւորը: Ծածանեցին արշաւանքի երջանկաբեր դրօշը եւ արքայական գաւազանի պաշտպան ու պահապան կենարար խաչը, նախեւառաջ գնացին Կարի եւ Կարնիֆորի երկիրը, որոնք աւերեցին մինչեւ Բասիանի», էջ 259:

[62] Մարգարեան, *Հիւսիսային*, էջ 205:

Սարգիս Զաքարեանը զինուորական բուռն կեանքով է ապրել: Նա իր ռազմական տաղանդով աչքի է ընկել դեռ Գեորգի Գ.ի ժամանակ՝ 1161/62ին: 1174ին Անին գրաւելուց յետոյ Սարգիս Զաքարեանը նշանակուել է քաղաքի կառավարիչ Իւանէ Օրբելու տեղակալ-օգնական[63]: Նա մահացել է ՈԼՋ (1187) եւ թաղուել Սանահնի վանական համալիրում: Նրա դամբանին կանգնեցուած է խաչքար[64], որդիների՝ Զաքարէ Մեծի եւ Իւանէի կողմից 1189ին կառուցուած Տապանատանը[65]:

Ակներեւաբար, 1185/86ին Սարգսին յաջողուել է համոզել թագուհի Թամարին՝ վերադարձնելու Թբիլիսիի նախկին ամիրապետ Արծրունի Քուրդ իշխանին՝ Մահկանաբերդի եւ Կայէնի տիրոջը[66], որը Կիրակոս Գանձակեցու վկայութեամբ՝ Օրբելիների դաւադրութիւնը ճնշելուց յետոյ, «սարտուցեալ *ի թագաւորէն* վրաց» Գեորգի Գ.ի հետ եւ պաշտօնազրկուել էր՝ ապաստանելով Կարնոյ քաղաքի ամիրայի մօտ[67]:

Հիւսիսային Հայաստանի վիմագիր վաւերագրերում յայտնի չէ, որ Արծրունի Ամիր Քուրդ իշխանը Կայէն ամրոցի տէրն է: Սակայն Գանձակեցին յայտնում է, որ ԺԲ. դարի վերջերին երկրում տեղի է ունեցել աշխարհակործան «շարժ սաստիկ»[68], որի հետեւանքով խոնարհուել է հին *Գետկայ* տաճարը. «տապալեաց զբարձրաբերձ շինուածս, ընդ որս խախտեցաւ եւ եկեղեցին Գետկայ սաստիկ յոյժ»[69], որից յետոյ, վարդա-

---

[63] Սամուէլ Անեցի, *Հաւաքմունք ի գրոց պատմագրաց*, Վաղարշապատ, 1893. նաեւ՝ *Հայ ժողովրդի*, էջ 528. 137. նաեւ՝ Մելիքսէթ-Բէկ, *Վրաց աղբիւրները, հտր. Բ.*, էջ 8, 43. նաեւ՝ *Картлис Цховреба*, էջ 245:

[64] Ղաֆադարեան, *Սանահնի*, էջ 178-79:

[65] Անդ, էջ 35, 178-79: Քաղաքամայր Անիի, Սարգսի աշտարակի վիմագրում, Զաքարէ Մեծը յետին թուով հօրն՝ ամիրսպասալար Սարգսին, մեծարում է շահնշահ պատուանունով. «Թիւս :ՈԿԴ: (1215) ի պարոնութե մանդատորթախուցէս ամիրսպասալար շահանշահ Զաքարիահ, որդւոյն շահնշահ Սարգսի» (*Դիւան, պր. I*, էջ 2):

[66] Յովսէփեան, *Խաղբակեանք*, էջ 6. նաեւ՝ Մաթեւոսեան, էջ 27:

[67] «..Կարնոյ քաղաք: Եւ անդ.. զբարեպաշտ իշխանն՝ զանուանեալ Քուրդ, եւ հաւատովն քրիստոնեայ, որ ընդ այն ժամանակս անդ լինէր՝ սարտուցեալ ի թագաւորէն վրաց» (Գանձակեցի, էջ 208. նաեւ՝ *Հայ ժողովրդի*, էջ 530. նաեւ՝ Հ. Մարգարեան, «Մահկանաբերդցիների (Սադունեանների) իշխանական տունը ԺԲ.-ԺԴ. դարերում», *Հայկազեան հայագիտական հանդէս*, 1998:ԺԸ, էջ 20):

[68] Գանձակեցի, էջ 210:

[69] Անդ, էջ 210: Ըստ Աւագեանի եւ Ջանփոլադեանի՝ «շարժ սաստիկ» կործանար երկրաշարժը տեղի է ունեցել 1185ից յետոյ, եւ Գօշը Քուրդ Արծրունու միջնորդութեամբ դիմել է վերջինիս քրոջ որդիներ՝ Զաքարիային եւ Իւանէին՝ նոր տեղ խնդրելով վանքի կառուցման համար (*Դիւան, պր. VI*, էջ 62): Սակայն, 1185ին երկրամասի տէրը Զաքարեան երիտասարդ անուանի իշխանները չեն, այլ Վրաց թագաւորութեան նորանշանակ ամիրսպասալար Սարգիս Մխարգրձէլն է՝ նրանց հայրը: Հաւանական է, Հին Գետիկ վանքը երկրաշարժից խոնարհուել,

պետ Գօշը, միաբանութիւնը չցրուելու պատճառով[70], մեծ իշխան Իւանէ Զաքարեանից՝ նոր կառուցուող եկեղեցու տեղ է խնդրել: Վերջինս անսալով մեծահամբաւ օրէնսգէտի խնդրանքին՝ տեղ է յատկացրել *Կայէնոյ* բերդ-ամրոցի մերձակայքում, ուր իշխելիս է *եղել ամիր Քուրդ Արծրունին*. «Ապա չոգան միաբան առ մեծ *իշխանն Իւանէ*, եղբայր զօրավարին Վրաց Զաքարէի, որդիք քեռ բարեպաշտ իշխանին Քրդին, որ ընդ այն ժամանակս *իշխէր բերդին Կայենոյ*[71] եւ գաւառին, եւ ցուցին նմա զխնդիրս իւրեանց»[72]:

Իշխանի եւ խոստմնալից իրաւագէտ մատենագրի ծանօթութիւնը խիստ մտերմիկ բնոյթ են կրել: Վերջինս իշխանին պատուել, մեծարել է «եղեալ նորա ծանօթ, սիրեցաւ ի նմանէ *իբրեւ զհայր*»[73]: Պատմագրի վկայութեամբ ակնյայտ է, որ տարագիր Արծրունի Քուրդ իշխանին վերստին յաջողուել է հաստատուել իր տիրոյթներում, այս անգամ Թամար թագուհու իշխանութեան օրօք, կրկին պատուել եւ մեծարուել վերջինիս կողմից. «..Եւ բազում *մեծարանս* եդ նմա թագուհին Վրաց, որ *Թամար կոչէր*, դարձուցանելով *ի* նա զհայրենի *տեղիս* եւ այլս յոլովս»[74]: Իշխանի գործունէութեան մասին վաղագոյն տեղեկութիւնը հաղորդում է Սանահնի Ամենափրկիչ ժամատան վիմագիրը. «ՈԼ: (1181) Ի ժամանակս յաղթող թագաւորին Գեորգա եւ *յամիրսպասա[ալ]արութեն Սարգսի* եւ որդոց իւրոց Զաքարէի եւ Իւանէի եւ *յամիրութե Քրդին*: Ես՝ Յ[ո]վ[աննէս] առաջնորդ ուխտիս շինեցի զերբեմն լեալ զեկեղեցիս *աւգնութե ամիր Քրդին* եւ վարդապետ մեծի Գրիգորի, եւ զգաւիթս ի հիմնաց: Զաշխատակից եղբարքս եւ զհայր Յովհանես զարժանին ամենայն աւրհնութեան, զի յաւուր սորա կրկին ազատեցան եկեղեցիքս մեր յամենայն հարկէ»[75]:

կամ նորակառոյց եկեղեցու տեղը յատկացուել է 1187ից յետոյ, երբ մահացել էր Սարգիս Զաքարեանը եւ Տաւուշի այդ հատուածը ժառանգել էր կրտսեր որդին՝ Իւանէն:

[70] Ակնյայտ է, որ դէպքերը տեղի են ունենում Թամար թագուհու օրօք:

[71] Պատմիչի «..ընդ այն ժամանակս իշխէր բերդին Կայենոյ եւ գաւառին» խօսքը պէտք է հասկանալ, որ Ամիր Քուրդ իշխանն ամրոցի տէրն էր, ինչը եւ հանդիսանում էր իշխանական նստոց: Այս իրողութիւնը հաստատւում է Վարդան վրադապետի հետեւեալ խօսքով. «..զոր շինեալ էր հրամանաւ.. մեծի իշխանին Քրդին,.. զի յայնմ ժամանակի նա ունէր զԿայեն հայրենօք ի Հասանայ Կայենեցւոյ» (Բարձրբերդցի, էջ 183):

[72] Գանձակեցի, էջ 208:

[73] Անդ:

[74] Անդ, էջ 209:

[75] Ղաֆադարեան, *Սանահնի*, էջ 104. նաեւ՝ *Դիւան հայ վիմագրութեան, պրակ IX, Լոռու մարզ*, կազմ.՝ Ս. Գ. Բարխուդարեան, Կ. Գ. Ղաֆադարեան, Ս. Տ. Սաղումեան, ՀՀ ԳԱԱ հրատ., Երեւան, 2012, էջ 36: Ակադեմիկոս Սուրէն Երէմեանը թէական է համարել վիմագրի թուականը եւ առաջարկել ՈԼին յաւելել Դ միաւորը, այսինքն, թուականը կարդալ 1185 (Ս. Տ. Երէմեան, «Եուրի

Նկատենք, որ վիմագրագէտ հնագէտ Ղաֆադարեանը նշեալ արտօնագիրը ընդօրինակելով, բնաւ չի անդրադարձել բնագրում աւանդած ընկերաքաղաքական իրողութիւններին, չի վերլուծել ու մեկնաբանել արձանագրութիւնը, զանց առնելով Յովսէփեանի զգուշաւոր՝ «..1181 թուից, ուր Սարգիսը «ամիրսպասալար» տիտղոս ունի.. որ արդարեւ *նորութիւն էր* այդպիսի ընդարձակ հասկացողութեամբ Զաքարեան տան համար»[76] յայտնած վարկածը, ինչը շրջանցել են նաեւ *Դիւան հայ վիմագրութեան* մատենաշարի Թ. պրակի կազմողները: Ուստի, հարկ է անդրադառնալ յիշատակագրի մեկնաբանութեանը՝ երեւան հանելով արտօնագրում արծարծուած մի շարք իրողութիւններ, որոնք առնչւում են մեզ հետաքրքրող անմիջական խնդրին: «ՈԼ: (1181) թւին յաղթող թագաւորին Գեորգան» վրաց թագաւոր *Գեորգի* Գ.ն է, որը թագաւորել է (1155/6-1184ին)[77]: Իսկ «յամիրսպասալարութե[ա]ն Սարգսի»՝ Սարգիս Մեծ Զաքարեանը, որն ինչպէս վերը պարզեցինք, ամիրսպասալարութեան պատիւը ստացել է բաւականին ուշ՝ Գեորգի Գ.ի դստեր Թամար թագուհու *օրօք* 1185/6ին եւ ոչ 1181ին: Ինչպէս նկատելի է Սանահնի 1181ի վիմագրի տեղեկութիւնից, վանահայր Յովհաննէսը, փաստում է, թէ երբեմնի «սուրբ ուխտը շինել» է «յամիրութեամբ» եւ «աւգնութեամբ» ամիր Քրդի *իշխանութեան* եւ Գրիգոր Տուտէորդու ժամանակ: Այսինքն՝ արտօնագիրը փաստում է այն, որ հայազգի իշխան Քուրդ Արծրունին, ով Տփղիսի (հաւանական է նաեւ Քարթլիի[78]) *ամիր* գործաւորն էր այդ ժամանակ (ընդգծուած է՝ «յամիրութե[ան]»), երկրորդ անգամ, փորագրող գրիչի կողմից շեշտադրւում է *ամիր* տիտղոսով: *Ամիրն* անուան բաղադրիչ չէ, այլ վերջինիս գործավարութեան տիտղոս-պատիւը[79]): Ասել է, թէ 1181ին Արծրունի Քուրդ Մահկանաբերդցին վրաց արքունիքում զբաղեցնում էր *ամիրայի* նշանակալից բարձր պաշտօնը[80], որի օժանդակութեամբ («աւգնութեամբ») կառուցուել է Սանահնի Ամենափրկիչ

Բոգոլիւբսկին հայկական եւ վրացական սկզբնաղբիւրներում, *Научные труды* (գիտական աշխատ.ներ) 1946:XXIII, ԵՊՀ, էջ 405-8): Մարգարեանի յայտնած տեղեկութեան համաձայն, Երէմեանի նշեալ թուականը հիմնաւորապէս մերժել է Ի. Ցինցաձէն (Մարգարեան, *Հիւսիսային*, էջ 210): Երէմեանի առաջարկած թուականն ընդունելի չէ, քանի որ 1185ին Գեորգի Գ.ը մահացած էր:

[76] Յովսէփեան, *Խաղբակեանք*, էջ 4:

[77] *Հայ ժողովրդի*, էջ 527:

[78] Յովսէփեան, *Խաղբակեանք*, էջ 6. նաեւ նոյնի՝ *Հաւուց թառի Ամենափրկիչը եւ նոյնանուն յուշարձանները հայ արուեստի մէջ*, Երուսաղէմ, 1937, էջ 56. նաեւ՝ *Հայ ժողովրդի*, էջ 530. նաեւ՝ Մարգարեան, *Հիւսիսային*, էջ 210:

[79] Ղաֆադարեան, *Սանահնի*, էջ 105:

[80] Քուրդ Արծրունին եղել է «էրիսթաւների էրիսթաւ, ամիրաների ամիր, միաժամանակ նաեւ մեչուրչլէթ-ուխուցէսի՝ արքունի գանձապետ» (*Հայ ժողովրդի*, էջ 530-31):

եկեղեցու ժամատունը, ինչն ուղղակիօրէն փաստում է, որ վերջինս դեռեւս գժտուած չէր վրաց թագաւորի հետ: Այդ իրողութիւնն է հաստատում նաեւ Հաղարծինի հնավայրի ՈԼԳ (1184) թուականի բնագիրը, ուր «մեծամեծ իշխանացն» միայն Արծրունի իշխանն է հանդէս գալիս պատիւ-տիտղոսով. «Ի ՈԼԳ թուիս Հայոց *ի թագաւորութեանն* Ափխազաց *Գեորգեա*, ի հայրապետութեանն Հայոց ՏՆ Գրիգորիսի, ես՝ Խաչատուր վարդապետ եւ Սուքիաս նորոգեցաք զՍԲ Գրիգորս, հրամանաւ թագաւորին եւ *իւր մեծամեծ իշխանացն՝ Սարգսի*[81]*, Ամիր Քրդին,* Անտոնի Ճղունտելին, Ելիբեկին»[82]: Իշխանի *ամիրա* գործավարութեան մասին են վկայում նաեւ Մորոյ ձորոյ հնավայրի երկու վէմ-յիշատագրերը, ուր նշուած է Ամիր Քուրդ իշխանի կողմից եկեղեցին ապահարկելու եւ հոգացողութեան մասին. ա.) «Կամաւն ԱՅ եւ ողորմութեամբ թագաւորին Գիաւրգէ, ես՝ *Ամիր Քուրդս* առի *գիր* ազատութե ի թագ[աւորէ] սբ Աճածնիս Մորո ձորո հաւրն Յովանիսի», բ.) «Անուամբն ամենակալին ԱՅ, ես՝ Գիաւրգի թագաւորաց թագ[աւոր] ետու զՄորո ձորո վանքս հաւրն Յովանիսի եւ *արարի ազատ* յամենայն հարկէ, Ամիր Քրդին հոգացողութ[եամ]բ»[83]:

Նշեալ բնագիր-վիմարձանագրերից ելնելով՝ կարելի է ընդգծել, որ իշխանը դեռեւս պաշտօնազրկուած չէր, իսկ ընդհարումը վրաց թագաւոր Գեորգի Գ.ի հետ, հաւանաբար, տեղի է ունեցել առկայ վիմագրերը փորագրելուց յետոյ, 1184ի սկզբին. պարզ չէ թէ պաշտօնազրկման պարագան ինչն է հանդիսացել[84]:

---

[81] Քուրդ Արծրունուց առաջ ընդգծուած «Սարգսի» անձանունը, ամէնայն հաւանականութեամբ, մեծ իշխան Սարգիս Զաքարեանն է, որը զարմանալիօրէն հանդէս է գալիս առանց տիտղոսի:

[82] *Դիւան, պր. VI*, էջ 37: Սոյն բնագիրը հետաքրքիր է երկու առումով՝ նախ տեղեկացնում է, որ Գեորգի Գ.ի օրօք վերականգնուել են Ս. Գրիգոր վանքի հողատիրական իրաւունքները «Ափխազաց Գեորգա.. հրամանաւ թագաւորին... զիին եւ զնոր կազմութիւնս գրով ետ ի սբ Գրիգորս», եւ երկրորդ՝ եկեղեցու նորոգումը կատարուել է մեծահամբաւ վարդապետ եւ երաժիշտ Խաչատուր Տարօնացու եւ Սուքիասի եռանդով (Մարգարեան, *Հիւսիսային*, էջ 212):

[83] *Դիւան, պր. VI*, էջ 139. նաեւ՝ Սուրէն Աւագեան, *Վիմագրական պրպտումներ*, ՀՍՍՀ ԳԱ, Երեւան, 1986, էջ 82: «Առի գիր ազատութե ի թագ[աւորէ]» բնագրի ապահարկութեան իրողութիւնը, ակնյայտօրէն ընդգծում է Քուրդ Արծրունու բարձր դիրքը եւ թագաւորի հետ մտերիմ լինելու պարագան: Աւագեանը բնագիրը թուագրել է 1177/78: Ըստ Մարգարեանի՝ այդ կարեւոր զիջումը վանքին կարող էր արուել միայն Քուրդի վերադարձից յետոյ, որեւէ աչքի ընկնող ծառայութեան դիմաց: Հեղինակի կարծիքով վիմագրերը փորագրուած են 1177-84ի ընթացքում (Մարգարեան, *Հիւսիսային*, էջ 211):

[84] Այս հաստատում է նաեւ Յովսէփեանի հետեւեալ անորոշ արտայայտութիւնը. «Վրէժխնդրութեան այս գործողութիւնը կատարուել է 1183/4 թթ.», ինչը վերաբերում է Ի. Օրբելիի ապստամբութեանը (Յովսէփեան, *Խաղբակեանք*, էջ 6): Անհամոզիչ է վեհափառի վարկածը. Օրբելին 1177/78ի խռովութեան

Տփղիսի ամիրայութեան եւ դրա հետ կապուած արքունի գանձապետի՝ *նացվալի-մեչուրչլէթ-սիսայի* պաշտօնը հանդիսացել է Մահկանաբերդի Արծրունի իշխանների *ժառանգական* արտօնութիւնը[85]:

Քարթլիս ցխովրեբայի յայտնած ուշագրաւ տեղեկութեան համաձայն, թագուհի Թամարի թագաւորութեան սկզբում Քարթլի եւ Թբլիսիի «է(ա)միր» է յիշատակւում ոմն Աբուլ(Հ)հասան. «Էմիր (ամիր) Քարթլիի եւ Տբլիսիի Աբուլասան»[86]: Եթէ սկզբնաղբիւրի յայտնած տեղեկութիւնը վստահելի եւ ընդունելի է, ապա վրաց արքունիքն ունեցել է միքանի *ամիր* գործաւորներ, քանի որ 1232ին գրուած Բագնայրի Աւետարանի գրիչ Իգնատիոսի վկայութեամբ՝ իշխանաց իշխան պատրոն Խոռասը, որդին էր Ամիր-Սարգսի, վերջինս մօրեղբայրն էր մեծ զօրավարներ Զաքարէի եւ Իւանէի. «...նահատակեալ ի վերայ տանս Հայւոց, մեծապատիւ իշխանաց իշխանն պատրոն Խաւռաս, որդի Ամիր-Սարգսի[87], որ էր եղբայր մաւր կեսառոսաց *Հայոց եւ Վրաց* եւ *ամենայն Ափխազաց,* բարեպաշտիցն եւ Աստուծով զաւրացելոցն մեծին Զաքարիայի եւ Իվանէի»[88]:

Ակադ. Սուրէն Երէմեանը զարգացրել է այն թեզը, որ հայկական աղբիւրների Ամիր-Քուրդը եւ վրաց մատենագիրների յիշատակած Էմիր Աբուլասանը միեւնոյն անձնաւորութիւններն են[89]: Ամիր Քուրդը վրաց

պարտութիւնից յետոյ, մինչեւ 1183 ողջ չէր կարող լինել: Ակներեւաբար, Սանահնի ՈԼԲ (1183) Օրբելու վիմագրի թուականը փորագրուած է յետին թուով: Իշխանի ընդվզման կապակցութեամբ Մարգարեանը նշում է՝ Ամիր Քուրդ իշխանի եւ թագաւոր Գեորգի Գ.ի միջեւ գժտութիւնը տեղի է ունեցել 1176/78ի ապստամբութիւնից առաջ, եւ Քուրդ Արծրունին այդ թուականներին յիշւում է Թբիլիսիի քաղաքապետ: Հեղինակի հաւաստմամբ՝ իշխանը վերադառնալով՝ հաշտուել է թագաւորի հետ, եւ խռովութեան ճնշման ժամանակ, ապացուցել իր հաւատարմութիւնը գահի նկատմամբ (Մարգարեան, *Հիւսիսային*, էջ 209):

[85] *Հայ ժողովրդի*, էջ 531:

[86] *Картлис Цховреба*, էջ 258: Մեր նպատակից դուրս է առարկել անուանի գիտնականներին, սակայն, հաւանաբար, նկատելի է՝ Ամիր Քուրդ Արծրունու եւ վրաց տարեգրի անուան նոյնացման մէջ շփոթ կայ:

[87] «..Յոյժ մեծարէր պատուով զշահապ քաղաքին Տփխեաց՝ զՎասակ որդի Վահրամայ իշխանի եւ եղբայրս զՔուրդն կոչեցեալ եւ զՍարգիս» (Ղ. Ալիշան, *Հայապատում*, Վենետիկ, 1901, էջ 389-90): Ամիր Սարգիսը մահացել է 1187ին (Գ. Յովսէփեան, *Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի պատմութեան, հտր. Ա.*, Երեւան, 1983, էջ 291):

[88] *Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԳ. դար*, էջ 178. նաեւ՝ Մարգարեան, «Մահկանաբերդցիների», էջ 11: Եթէ *ամիրն* այս դէպքում տոհմական *մակդիր* չէ, քանզի Սարգիսը եղբայրն էր Ամիր Քրդի, ապա վրաց արքունիքն ունեցել է միքանի *ամիրա*:

[89] Երէմեան, էջ 395, 399, 416-18. նաեւ՝ *Հայ ժողովրդի*, էջ 531: Ըստ Մելիքսէթ-Բէկի՝ Աբուլասանը եղբայրն է Թբիլիսիի Կապոյտ վանքի («Լուրջի մոնաստէր») ճակատին «ցարդ պահպանուած վրացերէն գլխատառ արձանագրութիւնում

արքունիքում 1186-91՝ վայելում էր մեծ հեղինակութիւն, պետական խորհրդի (Դարբազի) անդամ էր[90]: Ուշագրաւ է, որ *Քարթլիս ցխովրեբայի* վկայութեան համաձայն «*էմիր Աբուլասանը*» միջնորդ է եղել եւ ամուսնացրել թագուհի Թամարին ռուս իշխան Անդրէյի որդի Եուրիի հետ[91], որին վրացիները Գեորգի անունով են կոչել[92], թէեւ թագուհի Թամարը յա-

---

յիշուած ... Քարթլիի Վասիլ արքեպիսկոպոս»ի, որն ըստ Երէմեանի կռահման՝ նոյն դաւանափոխ հայոց Բարսեղ արքեպիսկոպոսն է (Լ. Մ. Մելիքսէթ-Բէկ, «Հին Թբիլիսիի եւ հայ-վրացական կուլտուրական կապերի պատմութիւնից», *Պատմաբանասիրական հանդէս*, 1958:3, էջ 155): Զարմանալի է, որ Յովհաննիսեանը եւ յատկապէս Լեւոն Բաբայեանը այս իրողութիւնը զանց են առել: Դրան որեւէ առիթով չեն անդրադարձել նաեւ Պարոյր Մուրադեանը եւ Ռաֆայէլ Մաթեւոսեանը: Այդ առիթով Մարգարեանը նկատում է, որ Թբլիսիի «Կապտավանքի» եւ Անդրէաս առաքեալի սրբապատկերի շրջանակի արձանագրութիւններից յայտնի Աբուլասանի հօրը՝ Յոբին եւ եղբօրը՝ Բասիլիին, անհնար է նոյնացնել Ամիր Քրդի հայր Վահրամի եւ ԺԲ. դ. երկրորդ կէսի Հաղպատի արքեպիսկոպոս Բարսեղի եւ «Կապտավանքի» վիմագրում յիշուող «Քարթլիի նախկին արքեպիսկոպոս» Բասիլիի հետ, այն պատճառով, որ Հաղբատի առաջնորդ եւ Վրաստանում ապրող հայերի արքեպիսկոպոս Բարսեղը Ուքանանց տոհմից է: Իրաւացի է հեղինակը պնդելով, որ Ամիր Քուրդը եւ արքեպիսկոպոս Բարսեղի եղբայր *Քուրդ իշխանը* տարբեր անձեր են (Մարգարեան, *Հիւսիսային*, էջ 214): Մարգարեանը ժխտում է Ամիր Քրդի եւ Աբուլասանի անձերին նոյնութիւնը. «Ամիր-Քուրդ Արծրունին ամիրայութեան պաշտօնում վերջին անգամ յիշւում է 1184թ., իսկ 1185թ. սկզբին Թբիլիսիի քաղաքապետն էր արդէն Աբուլասանն», եւ յաւելագրում է, որ «Ամիր-Քուրդի պաշտօնանկութիւնը, հաւանաբար, տեղի է ունեցել 1184-1185թթ., երբ փոփոխութիւնների ենթարկուեց ողջ արքունական պաշտօնէութիւնը»: (Վկայակոչուած է վրացերէն աղբիւր: Անդ, էջ 219): Գիտնականի նշեալ *թուականն* անընդունելի եւ անհամոզիչ է. այն որը սպրդել է անուշադրութեան հետեւանքով, քանի որ նախ՝ Քուրդ Արծրունու փեսայ Մխարգրձել Սարգիս Զաքարեանը, թագուհի Թամարի կողմից նոր (1185/86) էր նշանակուել հայ-վրացական զօրաբանակի գլխաւոր հրամանատար՝ ամիրսպասալար, եւ գուցէ, այդ թուականներին էր ամիրսպասալար Սարգսին յաջողուել համոզելու Թամարին՝ վերադարձնելու տարագիր աներորդի իշխանին, երկրորդ՝ Թամարը 1185/87ին ամուսնացած էր ռուս Գեորգիի հետ, վերջինս, ըստ աղբիւրի, կարելի է կարծել՝ բարեկամն էր Քուրդ Արծրունու:

[90] *Հայ ժողովրդի*, էջ 531: Վրացիները Ամիր Քրդին անուանում էին Աբուլ-Հասան, որ արաբերէն նշանակում է «Հասանի հայր» («История и восхваление венценосцев» грузинский текст первел предисловием и примечаниями снабдил ак К. Кекелидзе, Թբիլիսի, 1954, էջ 40):

[91] *Картлис Цховреба*, էջ 258:

[92] Վարդան վարդապետը յայտնում է. «(Թամար) Թէպէտ ընկեց զայրն Ռուզ եւ, էառ զՕսն Ասլան, յորմէ ծնաւ միամօր որդի եւ կոչեաց զնա Լաշայ» (Բարձրբերդցի, էջ 183-84): Այդ կապակցութեամբ Օրբէլեանը մի փոքր ընդարձակ տեղեկութիւն է յայտնում. «Եւ կալաւ զթագաւորութիւնն դուստրն

մառօրէն դէմ է *եղել* ամուսնանալու ռուս արքայազնի հետ[93], սակայն, ըստ աղբիւրի՝ ողջ արքունիքը՝ *պատրիարքը, դիդեպուլները, ազնաւուրները եւ ասպետները* պատրաստուել են թագուհու *հարսանիքին*[94]: Վերոնշեալ մտերմութիւնն է, գուցէ, հիմք հանդիսացել, որ տեւական, ընդլայնուած բնոյթ կրող ապստամբութեան ժամանակ Քուրդ Արծրունին («Էմիր Աբուլ-Հասանը») սատարել է ռուս իշխանին՝ խռովութեանը մասնակից դարձնելով նաեւ որդուն՝ Հասանին, որը վրաց սկզբնաղբիւրում կրում է *Գուզան Տոսկանելի* անունը[95]: Վերջինս Կղարջքի, Շարշէթի էրիսթաւն էր[96] եւ աղբիւրի տեղեկացմամբ ապստամբութեան ժամանակ առանձնացել է իր աշխուժութեամբ[97], *երկու* անգամ խռովութեան դիմելով, ընբոստացել է Թամար թագուհու դէմ: Ստոյգ յայտնի չէ, թէ առաջին ապստամբութիւնն ինչպէս է աւարտուել, սակայն եկրորդի դէպքում՝ միանշանակ՝ իշխանը պարտուել է, եւ տարեգրի վկայութեամբ՝ անցել Պարսկաստան: Ակներեւաբար, հեղինակն նկատի ունի Հայաստանը, որ չի բարձրաձայնում: Նրան գերեվարել է Զաքարիա Ասպանիսձէն եւ յանձնել «Դարբազին»: Խռովարարներից միակն է, որ կուրացուել ու մահապատժի է ենթարկուել[98], հետեւաբար պէտք է կարծել, որ վերջինս խիստ վտանգ է ներկայացրել Վրաց Թագաւորութեան համար[99]:

որում ածին այր զորդի Ըռուաց թագաւորին որում անուն էր Գէորգի: Սա էառ զԴվին քաղաք՝ եւ սակաւակեաց մեռանի. եւ առնու Թամարն միւս եւս այլ այր Սօսլան անուն. եւ լինի նմա որդի մի Լաշայ Գէորգի անուն» (Օրբէլեան, էջ 391): Գեորգի Ռուսը յիշատակուած է Սանահնի ժամատան հիւսիսային մուտքի բարաւորին, «Ի թագաւորութեանս վրաց Գաւրկէ, յամիրսպասալարութեան Զաքարէի եւ Իւանէի եղբաւր իւրո, ի ՈԽ (1191) ես Քուրդս, Հասան, Համազասպ, Սարգիս, որդիք Սմբատա» (Ղաֆադարեան, *Սանահնի*, էջ 105):

[93] *Картлис Цховреба*, էջ 259:

[94] Անդ:

[95] *Картлис Цховреба*, էջ 259: Գանձակեցին Արծրունի Ամիր Քրդի որդիներին նշելիս՝ զարմանալիօրէն Հասան անունը չի տալիս. «..որդւոց Քրդին՝ Դաւթի եւ Սադունին» (Գանձակեցի, էջ 215): Եւ դժուար է պնդել, թէ Հասան Կայէնեցին Ամիր Քրդի որդին է, քանի որ Վարդան Վարդապետի եւ Օրբէլեանի վկայութիւնների համաձայն՝ Հասան Կայէնեցին գուցէ տարիքով մեծ է Քուրդ Արծրունուց: Այդ կարելի է դատել Վարդանի վկայութիւնից «նա (Քուրդ Արծրունի - Ռ.Գ.) ունէր զԿաեն հայրենօք ի Հասանայ Կայենեցւոյ» (Բարձրբերդցի, էջ 183. նաեւ՝ Օրբէլեան, էջ 384):

[96] *Հայ ժողովրդի*, էջ 531. նաեւ՝ *Картлис Цховреба*, էջ 215, 264:

[97] *Картлис Цховреба*, էջ 215:

[98] *Картлис Цховреба*, էջ 215. Այս առիթով Յովհաննիսեանը նկատում է. «Անհաւանական չէ, որ հայ ֆէոդալների որոշ հոսանքը տնտեսական կամ քաղաքական շօշափելի շահախնդրութիւններով կապուած է Խլաթի «խաղաղասէր» այս էմիրների հետ: Ըստ երեւոյթին նման կապերի հետեւանքով է, որ Գուզան

Վրացական աղբիւրը քանիցս շեշտում է, որ Դաւեան Վարդանը մսախուրթուխուցէս[100] պատուին արժանանալով՝ իշխել է Օրբէթի լեռնային շրջանին եւ Կայէն ամրոցին: Սակայն վերջինիս գահակից որդին՝ Իւանէն, որին տարեգիրը բացասական երանգով է ներկայացրել, իշխելիս է եղել բաւականին ընդարձակ տարածքի՝ Գագին, Մակին, Կայծոնին ու Կայէնին[101]: Վերջիններս այդ տիրոյթներից զրկւում են՝ մասնակցելով Գեորգի Ռուսի ապստամբութեանը: Ըստ ուսումնասիրողների՝ նշեալ դէպքը տեղի է ունեցել 1185ից մինչեւ 1191[102]:

Այս թուականն առարկելի է: Թէեւ Գանձակեցին Հայաստանում տեղի ունեցած սաստիկ երկրաշարժի մասին ստոյգ տարեթիւ չի նշում, որի ժամանակ խոնարհուել էր Հին Գետիկի տաճարը, սակայն վերջինիս յայտնած պատմական իրողութիւնը աներկբայելի է: Հետեւաբար երկրաշարժը պէտք է տեղի ունեցած լինի 1185/86ին: Երկրորդ, ինչպէս

Արծրունին՝ Տայքի եւ Կղարջքի տէրը՝ երես դարձրեց Թամարից եւ ենթարկուեց շահի-Արմէնների պետութեանը» (Յովհաննիսեան, *Դրուագներ, հտր. Ա.*, էջ 148):

[99] Տարեգրի վկայութիւնից դժուար է կռահել, թէ Գուզան Տաոսկորելին քաղաքական ինչ դրդապատճառով է գրաւել «Տաոս-Կարին, Վաշլովանին եւ մի շարք ամրոցներ»՝ երես թեքելով, գուցէ վիրաւորուելով Թամար թագուհուց, գնացել է Շահ-Արմէնների մօտ, որին հետեւել են վերջինիս համակրող իշխաններն ու նրանց որդիները (*Картлис Цховреба*, էջ 259, 267): Զարմանալի է, որ պատմական այդ իրողութեան մասին լռում են մատենագիրներ Գանձակեցին եւ Բարձրբերդցին, սակայն այդ երկրամասում յայտնի Հասան Կայէնեցու մասին յիշատակում է Սիւնեաց պատմիչը՝ ակնարկելով վերջինիս՝ ապստամբ Իւանէ Օրբելիին շրջապատած իշխանների շարքում. «Ամենայն գլխաւորք եւ ազատք Վրաց ընդ Իւանէի.. Քարթլիս Հէրիսթաւքն եւ Ղաւրղաւրայքն եւ Ջաւախուրքն. Կախայն եւ որդիք իւր եւ Կամրագէլն մեծ եւ Ջաղելմեմնայն եւ Տաշրացիքն եւ Կայենեցին Հասան եւ Անեցին Գրիգոր Ապիրատեանց» (Օրբէլեան, էջ 384): Այնուհետեւ *Հասան Կայէնեցու* մասին որեւէ տեղեկութիւն չկայ: Հաւանական է իշխանը մապատժի է ենթարկուել ապստամբութեան պարտութիւնից յետոյ: Որքանով է Գուզան Տաոսկորելին եւ Հասան Կայէնեցին նոյն անձն, առաւել եւս, որ վերջինը համարւում է Քուրդ Արծրունու որդին՝ դժուար է հաստատել հայկական որեւէ աղբիւրով: Յովսէփեանը գրում է, որ Վասակ Խաղբակեանի որդի Պապաքը յիշւում է Գեղարքունեաց Ղարանլուխ գիւղի մօտ Գազան Լօռեցու կանգնեցրած խաչի արձանագրութեան մէջ. «*ՈԿԹ (1220) ի իշխանութեան Վասակայ եւ որդւոյ իւրոյ Բաբաքին*» (Յովսէփեան, *Խաղբակեանք*, էջ 79): Ով է այս Գազան Լօռեցին, եւ ինչ կապ կայ Խաղբակեան իշխանական տան հետ՝ անյայտ է, թէեւ խաչքարը 1220 թուականիր է:

[100] Անդ, էջ 257, 260: Ըստ Մարգարեանի՝ Կայէն ամրոցը Վարդան Դաւեանը ստացել է 1185ին՝ փոխարինելով Աֆրիդոնին (Մարգարեան, *Հիւսիսային*, էջ 218):

[101] *Картлис Цховреба*, էջ 252, 265: Մելիքսէթ-Բէկը Մակա տեղանունը թարգմանել է «Մռա՝ Կայծոնի» ձեւով (Մելիքսէթ-Բէկ, *Վրաց աղբիւրները, հտր. Բ.*, էջ 13):

[102] Մարգարեան, *Հիւսիսային*, էջ 218:

վերը նկատեցինք, անտարակոյս է նաեւ, որ այդ թուականներին Վրաց Թագաւորութեան ռազմուժի՝ ամիրսպասալարի բարձրագոյն պաշտօնը զբաղեցրել է Սարգիս Մխարգրձել Զաքարեանը: Ակներեւաբար, վերջինիս այդ ժամանակ է յաջողուել համոզել թագուհի Թամարին, թոյլատրել վերադառնալու իր վտարանդի աներորդի Քուրդ Արծրունուն, հայրենի տիրոյթներ, ինչպէս յայտնում է Գանձակեցին[103]: Ուստի, 1185/86/87ին, վրացական աղբիւրի վկայութեամբ, Վարդան Դադեանը չէր կարող *տէր* լինել Կայէն ամրոցին, որովհետեւ երկրամասի մեծ (աւագագոյն) իշխանը Քուրդ Արծրունին էր, ինչը փաստում են վերը նշուած՝ Սանահնի, Հաղարծինի, Մորոյ ձորոյ վիմագիր վաւերագրերը եւ Գանձակեցին:

Ինչպէս վերը նկատեցինք, 1187ին մահացել է Սարգիս Մեծը եւ վրաց բանակի գլխաւոր զօրապետ էր դարձել Գամրկէլ Թորելին[104]: Ակներեւաբար, 1187/88ին իր մահականացուն է կնքել նաեւ Արծրունի Քուրդ իշխանը: Եւ հաւանական է՝ այդ թուականներին Կայէն ամրոցին տէր է դարձել Դադեան Վարդանը, ինչպէս հաղորդում է վրացական աղբիւրը: Սակայն արքունական բարձր դիրքում գտնուող մսախուր-թուխուցէս Դադեանի իշխանական տունը զարմանալիօրէն յարել է նախկին վրաց թագաւոր Գեորգի Ռուսի խռովութեանը եւ դաւադրութեան պարտութիւնից յետոյ, զրկուել նշեալ տիրոյթներից:

1188/89ին Վրաստանում բռնկւում է նոր խռովութիւն, որին խթան է հանդիսանում ռուս իշխան Եուրիի (վրաց՝ Գեորգի) Թամարի նախկին ամուսնու վերադարձը Պոլիսից՝ Երզնկայի եւ Կարնոյ քաղաք[105]: Վերջինիս դիմաւորում է Գուզան Տոսկանելին, ում միանում է նաեւ Բոgo անունով իշխանը[106]: Տարեգիրը յաւելել է, որ Տոսկանելին օգնութեան էր եկել որդին Շահ-Արմէնների զօրքով, որի անունը չի յայտնում: Վերջիններս ամբողջ ընտանիքով գերի են ընկնում եւ զրկւում իրենց տիրոյթներից[107]:

---

[103] Գանձակեցի, էջ 210:

[104] *Картлис Цховреба*, էջ 265:

[105] Անդ, էջ 264. նաեւ՝ Մելիքսէթ-Բէկ, *Վրաց աղբիւրները, հտր. Բ.*, էջ 13:

[106] *Картлис Цховреба*, էջ 264:

[107] Անդ, էջ 267: Ճարտարապետ Վարազդատ Յարութիւնեանի կողմից Դդմաշէնում յայտնաբերուել է մի արձանագրութիւն, որը յայտնում է «[Քր]դին իշխանաց իշխանին եւ մանդատուրտուխուցիսին որդոյ Հասանայ Կայենեցո շինեցի զհոգետունս ի մէջ լեռանց ի ոտս Փուսա հաստատ հայրենիցս մեր Կայենի եւ կանգնցի զխաչս վասն արեւշատութեան եւ վասն երկար կենդանութեան ինձ եւ զաւակաց իմոց յիշեցէք»: Անուանի ճարտարապետը «[Քր]դին իշխանաց իշխանին» արտայայտութեան անձնանունը կապում է Ամիր Քրդի անուանը (Վարազդատ Յարութիւնեան, «Միջնադարեան Հայաստանի աշխարհիկ ճարտարապետութիւնը», *Տեղեկագիր*, 1957:8, էջ 80. նաեւ նոյնի՝ *Միջնադարեան Հայաստանի քարաւանատներն ու կամուրջները*, Երեւան, 1960, էջ 45. նաեւ՝ Մաթեւոսեան, էջ 24, 26): Մարգարեանը, անդրադառնալով նշեալ

Ապստամբներին յաղթող զօրականի անունը, տարեգրի վկայութեամբ Զաքարիա Ֆանասկերտցի է[108]: Ո՞վ է Զաքարիա Ֆանասկերտցին, որեւէ ծանօթագրութիւն տրուած չէ, արդեօ՞ք այդ խռովութեան ճնշման ժամանակ բացի Զաքարէ Մեծից այլ Զաքարէ զօրական կամ զօրապետ կար. բանասէրներից ոչ ոք այս հարցին չի անդրադարձել: Թէեւ, տարեգրի վկայութեան համաձայն, դէպքերը ծաւալւում են Գամրեկէլ Թորելու ամիրսպասալարութեան օրօք: Հաւանական է, վերջինս այդ ժամանակ մահանում է եւ ամիրսպասալարութիւնը շնորհւում է Զաքարէ Մեծ Զաքարեանին[109]:

Ուշագրաւ է այն հանգամանքը, որ տարեգրի վկայութեամբ, ապստամբների դէմ բոլոր ռազմական գործողութիւններն իրագործւում են Թամար թագուհու անմիջական հրամանատարութեամբ ու տեղեկութեամբ, այսինքն, վերջինս օժտուած է եղել ռազմական ունակութեամբ: Այսպէս, ըստ *Քարթլիս ցխովրեբայի*՝ թագուհի Թամարը հրամայել է *ամիրսպասալար* Գամրկէլ Թորելուն եւ չորս Մխարգրձէլներին հակայարձակ լինել ապստամբներին: Վերջիններս, ըստ վկայութեան, գրաւել էին բաւականին ընդարձակ տարածքներ, եթէ ոչ Վրաստանի կենտրոնական կարեւորագոյն շրջանները եւ ռազմուժի քանակով աւելին էին, քան արքունի զօրաբանակը[110]: Սակայն արքունական սակաւաթիւ բանակին յաջողւում է պարտութեան մատնել ապստամբների մեծաքանակ ուժերին[111]: Յաղթանակից յետոյ թագուհի Թամարը տիրոյթներ է շնորհել իր հաւատարիմ իշխան-զօրականներին՝ Վարդանի (Վահրամ) որդի Զաքարիային՝ «Գագը, Քուրդ-վաճառը [ձոր]ով հանդերձ, մինչ Գանձակ»[112]: Իսկ վաղամեռիկ ամիրսպասալար Սարգիս Մխարգրձէլի կրտսեր որդի Իւանէին (Յովհան), որը ռազմական գործողութիւնների ընթացքում վիրաւորուել էր, որպէս *առաջնութիւն* շնորհւում է (*մսախուրթուխուցէս*) գործակալի

վիմագրի «[Քր]դին իշխանաց իշխանին» տեղեկութեանը, իրաւացիօրէն անընդունելի է համարել Քրդին անձնանունը միանշանակօրէն համարել Տփղիսի ամիրապետ Քուրդ Արծրունին, որովհետեւ միւս արտայայտութիւնը՝ «մանդատուրտուխուցիսին որդոյ Հասանայ Կայենեցո» ցուցում է, որ Քուրդը պէտք է լինի Հասան Կայէնեցու որդին: Ուշագրաւ է նաեւ Մարգարեանի այն դիտողութիւնը, որ որդոյ Հասանայ Կայէնեցո «մանդատուրթուխուցիսին» պատիւտիտղոսը «մանդատուրթուխուցէսների ցանկում չենք հանդիպում եւ սպասելի էլ չէ», ընդգծել է հեղինակը (Մարգարեան, *Հիւսիսային*, էջ 216):

[108] *Картлис Цховреба*, էջ 267:

[109] Անդ, 266:

[110] Անդ, էջ 259:

[111] Անդ: Ագարակը ներկայումս կոչւում է Ախթալա, ուր Դաւիթ Քոբայրեցու տեղեկացմամբ 1177ին ամրացել էր ամիրսպասալար Իւանէ Օրբելին՝ իր մերձաւորներով (*Դիւան, պր. IX*, էջ 257):

[112] Մելիքսէթ-Բէկ, *Վրաց աղբիւրները, հտր. Բ.*, էջ 13:

պաշտօն-պատիւը եւ Կայէնն ու Կայծկոնը՝ Գեղարքունիքով (Գելաքունով)»[113]: Ասել է, թէ Իւանէ Մխարգրձէլը 1189/90ին դարձել է «Դարբազի» *գործաւոր* (մսախուրթուխուցէս) եւ տիրոյթներ էր ստացել նշուած երկրամասերը[114]: Գեղարքունիք երկրամասն Իւանէն նուաճել է բաւականին ուշ եւ ոչ այդ ժամանակ, ինչի մասին խօսւում է մի շարք վկայութիւններում: Հեղինակը մի այլ վկայութեամբ յայտնում է, որ Կայէնի տէր Յովհան (Իւանէ) գործակալը, որը մսախուրթուխուցէսի պատիւ *ունէր*, *դրդել* է Դաւիթ թագաւորին (Սոսլան) մի վճռական նոր արշաւանք ձեռնարկել աւերելու մեծ Գեղարքունիքը, Պարսից-բազարն ու Գորլաքունը[115]:

Ակնյայտ է, որ այդ պատմական իրողութիւնը կատարուել է բաւականին ուշ. ասել է, թէ Կայէն ամրոցին *փիրելուց* յետոյ, քանի որ հեղինակը շեշտադրում է («Կայէնի *տէր* Յովհան (Իւանէ)»: Եթէ տարեգրի հաղորդած պատմական տուեալները վստահելի են եւ ստոյգ, ապա Գեղարքունիքի ազատագրումն Իւանէի հրամանատարութեամբ իրագործուել է միքանի արշաւանքներով, քանի որ երկրամասը դժուար է եղել գրաւել՝ սելջուկների կողմից վերաբնակեցուած թրքացեղ զանգուածի մեծաքանակ[116] լինելու պատճառով:

Հայրավանքի եկեղեցու եւ Արծուաքարի Դոլակ գիւղատեղի խաչքարի բնագիր վիմագրերը փաստում են, որ ՈԿ (1211)ին ազատագրուած է եղել Գեղարքունիքի երկրամասը[117]: Հայրավանքի բնագիրը տեղեկացնում է, որ երկրամասի տէր, մեծ սպարապետ Բուբաքը նորոգել եւ եկեղեցուն է նուիրաբերել Առինջ գիւղի Ոսկեբակ այգին («Ի թվ :ՈԿ: (1211) նորոգեցաւ եկեղեցիս յառաջնորդութե Յովասափի եւ Ներսիսի, մեծ սպարապետն Բուբայն տէր երկրիս, ետ յԱռինջք զայգին Ոսկեբակս»)[118]: Առանձնակի ուշագրաւ է նաեւ ոմն Դաւթի որդի Մխիթար Փեճուրանցի յայտնած տեղեկութիւնը, թէ ինքը մեծ իշխան Իւանէի հրամանով դարձել է Նորադուսի տանուտէր-առաջնորդը, ինչը փաստում է, որ մինչ այդ թուականը ազատագրուել էր Գեղարքունիքը եւ երկրամասը պատկանում էր Իւանէին. «Ի :ՈԿ: (1211) թվ ի ժամանակս բարեպաշտ իշխանաց մերոց Զաքարէի եւ Իւանէի, ես Մխիթար Փեճուրանց որդի Դաւիթ շնորհիւն ԱՅ

---

[113] Անդ. նաեւ՝ *Картлис Цховреба*, էջ 265, 266:

[114] Մելիքսէթ-Բէկ անդ. նաեւ՝ *Картлис Цховреба*, էջ 266:

«Սրանից յետոյ Կայէնի տէր Յովհան (Իւանէ) գործակալը (մսախուրթուխուցէս) դրդեց Դաւիթ [թագավորին] վճռական, անուանի եւ մեծ ուժով արշաւանք ձեռնարկել աւերելու մեծ Գեղարքունիքը (Գելաքունը), Պարսից-բազարն ու Գորլաքունը, [որը դարձեալ վրաց յաղթութեամբ վերջացաւ]» (Մելիքսէթ-Բէկ, *Վրաց աղբիւրները, հտր. Բ.*, էջ 15):

[116] *Картлис Цховреба*, էջ 259:

[117] *Դիւան, պրակ, IV*, կազմ. Ս. Գ. Բարխուդարեան, ՀՍՍՀ ԳԱ, Երեւան, 1973, էջ 25, 69:

[118] Անդ, էջ 69:

եւ *հրամանաւ* մեծին Իւանէի եղէ առաջնորդ մեծահռչակ գեաւղիս Նորատուց»[119]:

Տարեգիրը քանիցս յայտնում է, որ վրաց *միացեալ* ուժերը (ակներեւաբար նաեւ՝ չորս Մխարգրձէլները) շարժուել են (ելան) Գեղարքունիք եւ անցել Խաչէն (Խաչիանն) իջել Կարկար (Ղարղարի) երկիրը, հասնելով Բալական (Բալղան), աւերել ամբողջ Առանը, գրաւել Շամքորը (Շանքոր)[120]:

Տարեգրի հաղորդածի որոշ հատուածներ, ինչպէս նկատում ենք, համընկնում է Գեղարդի վերոնշեալ արձանագրութեանը. («..առի Կայենով եւ Կայծոնով մինչ *յԱկանա*[121] եւ մինչեւ ի Նախճաւան եւ անդ ի մինչ ի Կարս առի ԱՅ աւգնութ[եամ]բն»): Այլ դրուագում, տարեգիրը, բնութագրելով Իւանէին որպէս *պատերազմում քաջամարտիկ*, յայտնում է, որ վերջինս *փոքր արշաւախմբով* անցաւ Գեղարքունիքը (գուցէ արդէն գրաւուած էր) եւ Գանձակի մերձակայքում ենթարկուել է յարձակման թշնամիների կողմից, յաւելելով, որ վերջինս գնացել է Սուրմարի (Սուրմանի) երկիրը եւ [Խոր]-Վիրապի վանքը[122]:

1196ին հայ-վրացական բանակը Մխարգրձէլ եղբայրների գլխաւորութեամբ ջախջախեցին Գանձակի Ամիրայութեան ռազմական ուժերը[123]: Ակներեւաբար, յաջորդ տարին, Ատրպատականի եւ Գանձակի աթաբէկ Աբու-Բաքրը մեծաքանակ զօրքով, Գանձակի ու Շամքորի մերձակայքում մարտի էր բռնուել հայ-վրացական ռազմուժի ղեկավար Զաքարեան եղբայրների հետ եւ կրել ծանր, ջախջախիչ պարտութիւն, որով դիւրացուել է յաղթարշաւը դէպի Արցախ-Խաչէն[124]: Տարեգրի վկայութեամբ՝ «Դարբազի» գործաւոր Իւանէ Զաքարեանը «մեծ զօրքով» արշաւել է Խաչէն, տօնել յաղթանակ եւ բազմաթիւ գերիներով ու հարուստ աւարով վերադարձել Թբիլիսի. «[Իսկ] Յովհան (Իւանէ) գործակալը (մսախուրթուխուցէսը) մեծ զօրքով [արշաւեց] եւ անթիւ աւար ուղարկելով՝

---

[119] Անդ, 25:

[120] Մելիքսէթ-Բէկ, *Վրաց աղբիւրները, հտր. Բ.*, էջ 14:

[121] Բագրատ Ուլուբաբեան, *Խաչէնի իշխանութիւնը X-XVI դարերում*, ՀՍՍՀ ԳԱ, Երեւան, 1975, էջ 153: Ըստ Ուլուբաբեանի, Իւանէ Զաքարեանը Հաթերքի իշխանութիւնը, որը զրկուել էր գահերէցութեան ժառանգորդից, միացրել է Վերին Խաչէնի կամ Ծարի իշխանութեանը, ուր հարս էր գնացել վերջինիս քոյր՝ Դոփ իշխանուհին, որի հետեւանքով իշխանուհին դարձել էր «Խաչէնի մեծագոյն մասի լիիրաւ տնօրէն» (էջ 148). նաեւ՝ Ա. Յարութիւնեան, «Եսայի Հասան-Ջալալեանի վիմագրական վաստակը (ըստ ՄՄ Հ 7821ձեռագրի)», *Էջմիածին*, 2015:Ժ, էջ 128:

[122] Մելիքսէթ-Բէկ, *Վրաց աղբիւրները, հտր. Բ.*, էջ 16:

[123] *Հայ ժողովրդի*, էջ 533:

[124] Անդ:

Խաչէնցի մեծամեծերին բերեց թագաւորի մօտ: [Ապա վրաց զօրքը] ամէն ինչ աւերելով՝ հասաւ Բասէն»[125]:

Արդ, ե՞րբ է գրաւուել Արցախ աշխարհն Իւանէ Զաքարեանի կողմից: Վարդան Արեւելցու հաւաստմամբ «ի վեց հարիւր յիսուն եւ հինգ թուին առին զԿարս թագաւորին եւ ապա զԳետաբեկն եւ զՉարեքն»[126]: Կարսը Զաքարէ Մեծի կողմից ազատագրուել է 1206ին[127], ուստի «զԳետաբեկն եւ զՉարեքն» պէտք է ազատագրուէր 1206ից յետոյ: Սիւնեաց պատմիչն աւելի ընդարձակ, բայց ընդհանրացուած վկայում է պատմական այդ իրողութիւնները խոստովանելով, որ Զաքարեան եղբայրները այդ երկրամասերը գրաւել են «*յայլ եւ յայլ թուականս*», եւ բացառուած չէ՝ Արցախի եւ Սիւնեաց աշխարհի ազատագրումը տեղի է ունեցել 1211ին, ինչպէս յայտնում է Օրբէլեանը[128]:

1214ին Հաթերքի բուն տէր Վախթանգ իշխանի մահուանից յետոյ այն տրուել է Իւանէին տեղական իշխանաւորների կողմից «Ի վեց հարիւր վաթսուն եւ երեք թուին զՀաթերք յԻւանէ տուին տեարք նորա: ..Զի մեռաւ Վախթանկ բուն տէր նորա եւ որդիք իւր տարաժամ»[129]:

Ինչպէս նկատելի է, Այրիվանքի վաւերագիրը մի փոքր շեղւում է Վարդան Արեւելցու վերոնշեալ վկայութիւնից, այլ ընդգծում, որ «առի.. եւ մինչեւ *ի Նախճաւան* եւ անդ *ի մինչ* ի Կարս առի ԱՅ *աւգնութ[եամ]բն*»: Այսինքն՝ վաւերագիրը ստուգապէս փաստագրում է, որ Իւանէն *Արցախից* յետոյ *ազատագրել* է «*մինչեւ ի Նախճաւան*», որը պէտք է հասկանանք՝ Դուինը եւ նրա շրջակայ երկրամասերը[130]: Չի կարելի բացառել, որ Մխարգրձէլների բանակը (հայկական բանակը վրաց աղբիւրում էլ է առանձին, Իւանէն շեշտադրում է «*առի*») գուցէ բաժանուած էր երկու եղբայրների՝ Զաքարէի եւ Իւանէի միջեւ, ինչը փաստում է Փարպիի Ծիրանաւորի ՈԽ (1191) վիմագիրը «Ես՝ Զաքարիա ամիրսպասալար Հաոց եւ Վրաց առի

---

[125] Մելիքսէթ-Բէկ, *Վրաց աղբիւրները, հտր. Բ.*, էջ 16:

[126] Բարձրբերդեցի, էջ 181:

[127] *Հայ ժողովրդի*, էջ 537. նաեւ՝ Ս. Տ. Սաղումեան, *Աշտարակ*, Երեւան, 1998, էջ 36:

[128] «Առին զԿարս, զՎաղարշակերտ, զԿաղզվան, զՍուրբ Մարի, զԱնի, զԱնբերդ, զԲջնի եւ զԳառնի, զԴվին մայրաքաղաք, զԳարդման, զԳանձակ, զՉարէք, զՀերթ, զՇամքոր, զՇաքի, զՊարտաւ, զՉարաբերդ: Առին ի 660 թուին զՍիւնիս, զՈրոտն, զԲորոտան, զԲղեն, զԲարկուշատ» (Օրբէլեան, էջ 392): Մելիքսէթ-Բէկը դէպքերը դնում է 1211-19ին (Մելիքսէթ-Բէկ, *Վրաց աղբիւրները, հտր. Բ.*, էջ 46):

[129] Բարձրբերդեցի, էջ 183. նաեւ՝ Ուլուբաբեան, էջ 145:

[130] Թէեւ աթաբէկ Իւանէն Հաղարծինի վիմագրում շեշտում է («..տիրել սէփական ժառանգութե(ան) նախնաց մերոց...քաղաքն Անի, ապա զամուրն Բջնի, զՄարանդ, միչք եւ Գավզանք ի Թաւրէժ, զԿարնոյ քաղաք»), *Դիւան, պր. VI*, էջ 22:

զաշխարհս ի տաճկաց»[131]: Ըստ Սաղումեանի ընդունելի եւ համոզիչ մեկնաբանութեան՝ սկզբից ազատագրուել է Շիրակ-Փարպի-Աշտարակ ուղեգիծը, ապա Անի-Ամբերդ, երկու տարի յետոյ Բջնին 1201ին, որից յետոյ Դուինը 1203ին[132]: Զաքարեան եղբայրները, յաղթանակելով Շիրակում, Անիում, Արագածոտնում, ձեռնամուխ են եղել նաեւ Կարնոյ եւ Խլաթի երկրամասերն ազատագրելուն, որոնցից ամենազօրեղն էր Իկոնիա-Ռումի սելջուկեան տէրութիւնը: Ամիրայութեան ղեկավար, սուլթան Սուլէյման Բ. Շահ Ռուքնադդինը (1196-1204/5), ցանկանալով կասեցնել հայ-վրացական ռազմուժի յաղթերթը՝ Բասէնի մերձակայքում, որի մասին յայտնում է Մշոյ Ս. Առաքելոց վանքի Տօնականի յիշատակարանը - գրուած նոյն այդ ժամանակ՝ 1204/5ին[133]- պարտութիւն է կրում: 1206/7ին հայ-վրացական զօրքերը, Զաքարէ ամիրսպասալարի առաջնորդութեամբ, պաշարել ու գրաւել են Մանազկերտ-Խլաթի ամիրայութեան ենթակայ Կարս քաղաքը[134]: Կարսի գրաւման մասին վրաց տարեգիրը յայտնում է մի ուշագրաւ տեղեկութիւն, որը քիչ-համոզիչ է եւ առարկելի. պաշարուած եւ յաղթուած քաղաքի բնակչները, անձնատուր լինելուց առաջ, պահանջել են վրաց թագուհի Թամարին եւ նրանից խնդրել, որ «*ոչ ոքի* չյանձնի Կարսը *...ինչպէս Անին...* եւ *Դուինը, այլ իր թագաւորութեանը կցի*»[135]: Սա *բացառիկ* պատմական տեղեկութիւն է, քանի որ տարեգրի վկայութեամբ՝ տարբեր ժամանակներում, վրաց զօրաբանակը բազմիցս պաշարել է քաղաքը եւ, գուցէ բերդամրոցի անառիկութեան պատճառով, չի կարողացել գրաւել: Հապա պատճառն ի՞նչն է, որ բնակիչները չեն ցանկացել անձնատուր լինել Զաքարէին՝ մեծահամբաւ զօրավարին, այլ յայտնել են իրենց ցանկութիւնը՝ ենթարկուելու անմիջապէս թագուհուն: (Հաւանական է դա տարեգրի անձնական կարծիքն է): Ըստ այդմ՝ քաղաքը համարուեց արքունապատկան՝ կառավարիչ նշանակելով Իւանէ

---

[131] Սուրէն Աւագեան, *Վիմական արձանագրութիւնների բառաքննութիւն*, ՀՍՍՀ ԳԱ, Երեւան, 1978, էջ 108. նաեւ՝ Սաղումեան, էջ 145. նաեւ՝ Ա. Մանուչարեան, *Վիմագրերը որպէս Հայաստանի քաղաքական պատմութեան սկզբնաղբիւրներ*, ՀՍՍՀ ԳԱ, Երեւան, 2015, էջ 180:

[132] «Մխարգրձէլ Զաքարիան՝ մանդատուրթուխուցէսն ու սպասալարը, [եւ] նրա եղբայր Յովհան (Իւանէ) աթաբակը գրաւեցին Դուինը [Թամարի] թագաւորութեան իններորդ տարի, երբ քրոնիկոնի [չորս] հարիւր տասներեքն էր: Հենց նրանք գրաւեցին Գեղարքունիքը, Բջնին, Ամբերդն ու Բարգուշատը, Անիի վերին մասը մինչ Խով[դ]ափրիդի կամուրջը» (Մելիքսէթ-Բէկ, *Վրաց աղբիւրները, հտր. Բ.*, էջ 43. նաեւ՝ Սաղումեան, էջ 145):

[133] Ալիշան, *Հայապատում*, էջ 448:

[134] Մելիքսէթ-Բէկ, *Վրաց աղբիւրները, հտր. Բ.*, էջ 20:

[135] Անդ, էջ 15. նաեւ՝ *Հայ ժողովրդի*, էջ 542:

Ախալցխացուն, որպէս «(է)ամիրաց (է)ամիր», իսկ *Քարթլիս ցխովրեբան*՝ Էջիպ-քաղաքապետ[136]:

Հայ մատենագիրները զարմանալիօրէն բաւարար տեղեկութիւններ չեն հաղորդում Նախիջեւանի երկրամասի գրաւման մասին, ինչը քանիցս նշւում է վրացական սկզբնաղբիւրում տարբեր առիթներով, որն երկբայելի, անհամոզիչ ու «անընդունելի» է: Հաւանական է, երկրամասն իրականում, ազատագրուել է 1211/12ին ամիրսպասալար Զաքարէ Մեծ Զաքարեանի պատժիչ արշաւանքի ժամանակ: Վրացական աղբիւրի վկայութեամբ՝ Գեորգի Գ.ը իր զօրաբանակը սպասալարներով հանդերձ՝ ուղարկում էր մինչ Նախիջեւանի դուռը[137]: Այսինքն, Նաիջեւանի երկրամասը Գեորգի Գ.ի օրօք նուաճուած չէր: Սկզբնաղբիւրի համաձայն, երկրամասի գրաւումը, տեղի է ունեցել Դաւիթ Սոսլանի մահուանից որոշ ժամանակ յետոյ, երբ ձմռանը, Գեղութում եկեղեցական տօնակատարութեան ժամանակ, թագաւորի, Զաքարէ ամիրսպասալարի ու միւս իշխանաւորների ներկայութեամբ յայտնում են Անիի սոսկալի աղէտի մասին[138]:

Թագուհի Թամարի երկրորդ ամուսին Սոսլան Դաւթի մահը տեղի է ունեցել 1207/8ին[139]: Չի բացառում, որ Արդաբիլի սուլթանի յարձակումը կատարուել է 1207/8ին, ինչպէս մեկնաբանուել է պատմագրութեան մէջ: Սակայն կարծում ենք, Արդաբիլի սուլթանի արշաւանքն Անի, հաւանական է, տեղի է ունեցել Խլաթի անյաջող արշաւանքից յետոյ 1208/9ին, երբ Իւանէ Զաքարեանը գերի էր ընկել, մատնուելով անյաջողութեան[140]: Ակներեւ է, որ սուլթանը խորամանկօրէն հաշուի է առել Երկայնաբազուկ եղբայրների բացակայութիւնը Շիրակի մայրաքաղաքից, եւ օգտուելով իրադրութիւնից անակնկալ յարձակուել սրի է մատնել քաղաքը, այրելով ու կողոպտելով այն[141]: Զարմանալի է, որ յարձակումը տեղի է ունեցել ձմռանը, Ծննդեան տօնին, Յունուարի առաջին տասնօրեակում: Հաւանական է ձմեռը մեղմ է եղել այդ ժամանակ: Դատելով Գանձակեցու վկայութիւնից, անուանի զօրապետը, շատ կարճ ժամանակում, նախանձա-

---

[136] Մելիքսէթ-Բէկ, *Վրաց աղբիւրները, հտր. Բ.*, էջ 20. նաեւ՝ *Картлис*, էջ 282:

[137] Մելիքսէթ-Բէկ, *Վրաց աղբիւրները, հտր. Բ.*, էջ 10:

[138] Մելիքսէթ-Բէկ, *Վրաց աղբիւրները, հտր. Բ.*, էջ 22. նաեւ՝ *Картлис*, էջ 286:

[139] Մանանդեան, էջ 148:

[140] Գանձակեցի, էջ 164. նաեւ՝ *Մանր ժամանակագրութիւններ, հտր. I*, էջ 38՝ «ԶԻւանէ աթաբակն ի Խլաթ կալան.. հայոց ՈԾԸ (1209).. ՈԿԱ (1212) թվին Մելիք Արշափն մեռաւ եւ Մելիք Ավիաղինն նստաւ: Յայսմ ամի Զաքարէ եւ Իւանէ կամեցան միաբանել զՀայս եւ զՎիրս եւ ժողովք արարին ի Գետակն բազում հարանց եւ վարդապետաց.. խրոխտացեալ Զաքարէ վարդապետացն, նզովեցաւ ի նոցանէ, եւ գնաց յԱրտաւիլ եւ կոտորեաց: Եւ ի գալ ամն մեռաւ ճանապարհին եւ եդաւ ի Սանահին ուխտ»:

[141] Մելիքսէթ-Բէկ, *Վրաց աղբիւրները, հտր. Բ.*, էջ 22. նաեւ՝ *Картлис*, էջ 286:

խնդրօրէն պատրաստուել է պատժիչ արշաւանքին, ինչի մասին լռում են հայոց աղբիւրները[142]:

1211/12ին, Երկայնաբազուկ եղբայրները, Գանձակեցու վկայութեամբ «*չոգան զօրօք բազմօք ի քաղաքն Մարանդ,* եւ առին զնա *եւ* աւերեցին զգաւառսն, որ շուրջ զնոքօք»[143], նմանապէս գրաւել-աւերելով նաեւ *Արտաւիլ* (Արդաբիլ) քաղաքն ու շրջակայ երկրամասերը, գերելով սուլթանին ու նրա ընտանիքին: Նախիջեւանում այրելով սպանեցին 12 հազար «տաճիկք»[144]: Ինչպէս երեւում է պատմագրի վկայութիւնից, ակներեւաբար մեծանուն զօրապետը մինչ այդ տառապել է չարորակ հիւանդութեամբ, եւ արշաւանքից տունդարձի ճանապարհին մահացել եւ յուղարկաւորուել Սանահնի իրենց տոհմական գերեզմանատանը «..Ի մեծ եկեղեցւոջն, առաջի դրան խորանին ներքոյ»[145]:

Մեզ թւում է Գեղարդի սոյն վիմագիրը փորագրուել է ոչ թէ 1214/19ին, այլ աւելի ուշ՝ 1225ին Գառնիի տխուր ճակատամարտից յետոյ[146], քանի որ, ինչպէս իրաւամբ նկատել է Յովսէփեանը յայտնի չէ, թէ Հայաստանում ե՞րբ աւարտուեց ազատագրական պատերազմը, եւ ե՞րբ Վասակ Խաղբակեանը նշանակուեց իշանապետ-կուսակալ. ստոյգ տարեթիւ նշել չենք կարող[147]: Թէեւ վերջինս Արատեսի ՈԿԳ (1214) բնագրի հաւաստմամբ կուսակալ էր «*ի Գառնոյ մինչեւ ի Բարգուշատ*»[148]: Գառնիում կամ Կոտայքում, ինչպէս նշում է Յովսէփեանը, Խաղբակեանների յայտնի կենտրոնը Այրիվանք (Գեղարդ) էր, որը *գանձագին* էր *արարել «ի տերանց աշխարհիս» «բարեպաշ պարոն»*[149] Պռօշ իշխանը՝ Վասակի որդին[150]:

---

142 Մեզ թւում է տարեգրի յայտնած տեղեկութիւնները երկբայելի են, Անիի աղէտը տեղի է ունեցել 1209/10ին, ինչպէս փաստում է *Մանր ժամանակագրութիւնների* վկայութիւնը (ծնթ. 131):

143 Գանձակեցի, էջ 185:

144 Անդ, էջ 186. նաեւ՝ Օրբէլեան, էջ 342. նաեւ՝ Մելիքսէթ-Բէկ, *Վրաց աղբիւրները, հտր. Բ.*, էջ 22:

145 Մելիքսէթ-Բէկ, *Վրաց աղբիւրները, հտր. Բ.*, էջ 22:

146 Գանձակեցին յայտնում է, որ Խամշի տաճարի կառուցումը խափանուեց, որովհետեւ խորեզմացի հրոսակները սուրացել էին ողջ երկրով մէկ. «...զի եկն սուլտանն Խորասանայ՝ Ջալալադինն կոչեցեալ, եւ եհար զթագաւորութիւնն վրաց, ..աւերել զաշխարհս Հայոց, Աղուանից եւ Վրաց» (Գանձակեցի, էջ 182):

147 Յովսէփեան, *Խաղբակեանք*, էջ 35, 67:

148 Օրբէլեան, «նմանակէս եւ զմիւս իշխանն զամենօրհնեալն զՎասակ Խաչենեցի» էջ 397. նաեւ՝ «ՈԿԹ ի թագաւորութեան վրաց Լաշային եւ յաշխարհակալութե Իւանէի աթաբակի, ես Վասակ որդի Խաղբակա կողմնապահ ի Գառնոյ մինչեւ ի Բարգուշատ» (*Դիւան, պրակ 3,* ՀՍՍՀ ԳԱ, Երեւան, 1967, էջ 123): Վերոնշեալ ՈԿ (1211) Հայրավանքի եւ Արծուաքարի գիւղատեղի բնագրերը աւելի վաղ են արձանագրում կուսակալ-երկրամասերի առկայութիւնը (*Դիւան, պրակ IV*, էջ 25, 69):

149 Օրբէլեան, էջ 397:

Մխիթար Այրիվանեցու վկայութեամբ Վասակ Խաղբակեանի մահուանից յետոյ «*էառ զդրօշայն որդի նորա քաջն Պռոշ*»[151]: Ուստի աթաբէկ Իւանէի Այրիվանքի բնագիրը չէր կարող փորագրուել 1214-19ին, եւ դժուար է հաւաստել, որ մօտաւորապէս այդ ժամանակներում է Իւանէն այցելել հոգեւոր կենտրոն, ծանօթացել միաբանութեան կենցաղին: Այդ ժամանակ հայերի եւ վրացիների միջեւ լարուածութիւն է նկատուել, ինչպէս հաւաստում է Գանձակեցին: Վրաց մեծամեծները եւ գուցէ Իւանէն նոյնպէս բարիդրացիական չեն տրամադրուած դռկից հայութեանը, որի պատճառով Գառնիի ճակատամարտում չարաչար պարտութիւն են կրում, ինչն աւելի *ընդունելի* եւ *հաւաստի* է. «Եւ *հպարտութեամբ* մեծամէծս *փքանային, եւ* դաշինս եդեալ էին, եթէ *յաղթեսցեն նմա* (Ջալալ-ադ Դինին - Ռ.Գ.), *զամենայն* հայ մարդ[152] *ի կրօնս վրաց դարձուսցեն*, որք ընդ իշխանութեամբ նոցա, եւ զընդդիմանալսն՝ *սրով բարձեն*»[153]: Թէեւ հայ-վրացական ռազմուժը երբեք իրականում չէր կարող յաղթել Խորեզմի շահ Ջալալ-ադ-Դինին, քանի որ վրացական աղբիւրի հաւաստմամբ, դեռեւս Գեորգի Լաշայի օրօք վրաց արքունիքում, ողջ «*դիդեբուլներն ու զօրքերը*» վճռել էին *այլեւս* չմասնակցել *արշաւանքին* եւ *ոչ էլ թագաւորի* արքունիքում *լինել*: «Յուժ տխրած» տրամադրութեամբ են եղել վրաց ողջ իշխանները, յատկապէս Իւանէ աթաբէկն ու Զաքարիայի որդի Վահրամ Գագեցին, որոնք հրաժարուել են արքունիքում *գտնուելուց,* եւ բարձրաձայնել՝ «Գլուխ չենք տայ, քո թագաւոր լինելուն»[154]: Այսինքն, նկատելի է վրաց արքունիքում 1220/22ին ընկերաքաղաքական իրավիճակի խիստ սրուած ու հեղհեղուկ լինելը. եւ մեղադրել աթաբէկ Իւանէին «*ծերացած, գաղտնի վանական լինելու*[155]*, ուր կախ գցելու, հին*

---

[150] «Գանձագին արարի ի տերանց աշխարհիս (Իւանէի կամ Աւագի տան) սուրբ ուխտս Այրիվանից լերամբ եւ դաշտաւ եւ ամենայն կազմութեամբ» (Յովսէփեան, *Խաղբակեանք*, էջ 62):

[151] Մխիթար Այրիվանեցի, *Պատմութիւն հայոց*, Մոսկուա, 1860, էջ 65: Դա նշանակում է, որ այդ ժամանակ Պռոշ իշխանը նոր է ստանձնել կողմնապետութեան նշանը, սպարապետական եւ իշխանապետական իրաւունքը տոհմում (Յովսէփեան, *Խաղբակեանք*, էջ 74):

[152] Պէտք է հասկանալ Հայաստանի բնակչութիւնը կամ հայկական եկեղեցին:

[153] Գանձակեցի, էջ 224:

[154] «*Վրաց ժամանակագրութիւն» (1207-1318),* թարգմանութիւնը հին վրացերէնից, առաջաբ. եւ ծանօթ.՝ Պարոյր Մուրադեան, ՀՍՍՀ ԳԱ, Երեւան, 1971, էջ, 47, 48:

[155] Չի բացառւում, որ աթաբէկ Իւանէն կեանքի մայրամուտին յարել է վանական կեանքին, ինչպէս ընդգծում է վրաց տարեգիրը, սակայն հայկական աղբիւրները, անգամ ակնարկի ձեւով, նման տեղեկութիւն չեն հաղորդում. հակառակն ընդգծում են նրա *ինքնակալ* լինելը. «Ի թագաւորութեանն վրաց Թամարի եւ ինքնակալ տէրութեան Իւանէի եւ Շահնշահի, ի հայրապետութեան ՏՆ Վրթանիսի» (*Դիւան, պրակ. IV*, էջ 19): Բանասիրութեան մէջ զանց է առնուել նաեւ Իւանէի «խոտորեցաւ յաղանդն Քաղկեդոնի.. հրապուրեալ նա ի

թշնամանք ու նախանձ» տեսնելու տոհմակիցների մէջ, որոնք, ըստ տարեգրի, նախադրեալներ են հանդիսացել պարտուելու Գառնիի ճակատամարտում, ինչը բնաւ համոզիչ, անաչառ, պատմական ստուգութիւն չէ, որին առարկում է նաեւ հայագէտ Մուրադեանը իրաւացիօրէն պատճառաբանելով, որ աթաբէկ Իւանէն չէր կարող «նախանձ» ունենալ ախալցխացի ազգակից հարազատների նկատմամբ, քանի որ ինքը բոլորից աստիճանով եւ դիրքով բարձր էր[156]:

Գանձակեցու վկայութեամբ, ակնյայտօրէն ընդգծում է ճակատամարտում հայոց աշխարհիկ եւ հոգեւոր աւագանու դժկամութիւնն եւ տարակարծութիւնը եւ մարտադաշտում կրաւորական լինելը:

Ակներեւաբար ճակատամարտից յետոյ (ստոյգ տարեթիւ չենք կարող նշել), աթաբէկ Իւանէն այցելելով Այրիվանքի հոգեւոր հաստատութիւն, զրոյցի բռնուելով հոգեւորականութեան հետ, խոստովանում է՝ իրեն «անուշ թուեցաւ»[157] միաբանութեան օջախը եւ իր յիշատակն է թողել Ս. Կաթողիկէին նուիրելով Բերդաղ ծուխը: Գուցէ իրաւացի է Յովսէփեանը, երբ աթաբէկ Իւանէ Զաքարեանի մահը դնում է ոչ թէ 1227ին, այլ աւելի ուշ:

1212ին Զաքարէ Մեծի մահուանից յետոյ, Զաքարեան աւատական տան աւագութիւնը բնականաբար անցել էր Իւանէ (Ա) Զաքարեանին, քանի որ Զաքարէի որդի Շահնշահ-Սարգիսը փոքր էր՝ հինգ կամ եօթ տարեկան[158]:

Ուշագրաւն այն է, որ վրաց տարեգիրը Թամար թագուհու իշխանութեան սկզբում ծագած երկրորդ ապստամբութեան ճշման ժամանակ, անգամ ակնարկով, որեւէ խօսք չի յայտնում Իւանէի աւագ եղբօր Զաքարէ Մեծի, նրա գործունէութեան մասին, թէեւ վերջինս ապստամբութեան ճնշումից յետոյ հանդէս է գալիս թագաւորութեան բարձրագոյն «մանդատուրթուխուցէս, ամիրսպասալար» տիտղոսներով, որից ակնբախօրէն կարելի է հետեւցնել, որ յաղթանակի առիւծի բաժինը միանշանակ պատկանում է հենց նրան, թէեւ տարեգիրը չի մասնաւորեցնում: Շիրակաւանի ՈՁ (1231) բնագրում աթաբէկ Իւանէի կինը՝ Խոշաքը, թէեւ խօսում է ամուսնու՝ աթաբէկ Իւանէի անունից,

---

թագուհւոյն՝ որ Թամար կոչէր» (Գանձակեցի, 166) դաւանափոխութեան տարեթիւը: Հաւանական է, նա Լօռիի եւ Անիի ժողովների ժամանակ արդէն դաւանափոխ էր (*Մանր ժամանակագրութիւններ, հտր. 1*, էջ 38):

[156] *Վրաց ժամանակագրութիւն*, էջ 196:

[157] Ենթադրելի է՝ հոգեւորականները աթաբէկ Իւանէին տեղեկացրել են «Գեղարդի»՝ ռազմուժի յաղթական զօրութեանը, ինչը, ակներեւաբար, դուր է եկել վերջինիս, սակայն բնագրում չի փորագրուել:

[158] «Ի թվին ՈԿԱ (1212) վախճանի Զաքարէ ուղափառ հաւատով եւ թաղի ի Սանահին եւ մնաց տղա մի Է (7) ամաց Շահնշահ անուն, որ եւ զնայ դարձոյց ի հաւատն Քաղկեդոնի Խոշաքն կին Իւանէի» (*Մանր ժամանակագրութիւններ XIII-XVIII դդ., հտր. 2*, կազմ.՝ Վ. Ա. Յակոբեան, ՀՍՍՌ ԳԱ, Երեւան. 1956, էջ 136):

սակայն, հաւանական է, Իւանէն արդէն ողջ չէ, բայց իրաւացիօրէն ընդգծել է Մխարգրձէլ եղբայրների առանձնակի կատարած գործողութեան դերը «վերաշինող *տանս* վրաց»՝ վրաց թագաւորութեան հաստատման գործում, ինչը տարեգիրը զանց է առել, նսեմացնելով վերջինների դերը. «Ի թւ. ՈՁ կամաւն ԱՅ ես Աթաբակ Իւանէ եւ Խոշակս վերաշինող տանս վրաց եւ հայոց եւ նովին թագուհի»[159]:

Այսպիսով, նկատելի է, որ Կայէն, Կայծոն բերդ-ամրոցները Ժ. դարում եղել են հայ Բագրատունեանց Թագաւորութեան վերջին տիրակալների տիրոյթները: Սակայն ԺԲ. դարի քսանականների սկզբին ազատագրական պայքարի ընթացքում անցել են վրաց գերիշխանութեան տակ՝ մնալով տեղական Արծրունի-Մահկանաբերդցի իշխանների աւատական տիրոյթները: ԺԳ. դարի սկզբին Թամար թագուհու գահակալութեան առաջին տարիներին բռնկուած խռովութեան ճնշման ժամանակ Մխարգրձէլ Զաքարեան Իւանէի գլխաւորութեամբ գրաւուել եւ վերջինիս տիրոյթն են դարձել, ակներեւաբար 1189/90ին, որից յետոյ նա ազատագրել է Արցախ-Խաչէնը, ապա աւագ եղբօր՝ Զաքարէ Մեծի հետ գրաւել Շիրակը, Անին, Արագածոտնն ու Կարսը եւ այլ երկրամասեր:

Յովսէփեանը, Այրիվանքի նշեալ արձանագրութիւնը թուագրելով 1215-19ով, ակներեւաբար նկատի է ունեցել Վարդան Վարդապետի վերոյիշեալ վկայութիւնը:

THE INSCRIPTION OF IVANE ZAKARYAN I ON THE SOUTHERN WALL OF AYRIVANK-GEGHARD MONASTERY AND RELATED ISSUES (13TH CENTURY)

(Summary)

RUBEN RAFIK GASPARYAN (ruga55@mail.ru)

Taking the 13th century inscription on the southern wall of Ayrivank Monastery as a reference, the author focuses on the military activities of Ivane Zakaryan I, who captured the Kaya(n) and Kaytson fortresses in the valley of the Aghstev River. The paper details the history of these two fortresses and the changes of ownership they went through during the 12th-13th centuries.

[159] Կ. Կոստանեան, *Վիմական տարեգիրք*, Սանտ Պետերբուրգ, 1913, էջ 74:

ԲԱՆԱՀԻՒՍԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԸ ՄՇՈՅ ԳԵՂԱՄԻ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ

ԼՈՒՍԻՆԷ ՀԱՅՐԻԵԱՆ (hayriyan.1976@mail.ru)

ՄՈՒՏՔ

Գաւառական տոհմիկ գրականութեան ականաւոր ներկայացուցիչ Գեղամ Տէր Կարապետեանը (1865-1918) գրական շրջանակներին առաւել յայտնի է Մշոյ Գեղամ գրչանունով: Ժողովրդի ցաւերով ապրող մտաւորական-գրողի, հրապարակագրի, հասարակական գործչի ու բանահաւաք-ազգագրագէտի դիմանկարն առաւել արտայայտիչ եւ ճանաչելի են դարձնում Երուանդ Օտեանի խօսքերը. «*Աղու հանկուցիչ աչքերով, փխուր ու խոնարհ դարաւոր տառապանքի դրոշմը դէմքին վրայ, վեհերոտ մարդ մըն էր... Իր անուշ, բարի ու անվնաս բնաւորութեամբը ամէնուն համակրելին եղած է... բացի ազգային գործիչ մը ըլլալէ, գրագէտ մըն ալ է ու առաջնակարգ տեղ մը կը գրաւէ գաւառացի գրողներու մէջ... գրական գողտրիկ էջեր արտադրած է, գաւառի ցաւերովը առլցուն*»[1]: Գեղամի խօսակցութեան ու անհանգստութիւնների միակ նիւթն, ինչպէս նշում է Օտեանը, Մուշն էր «*գիւղացիներուն վիճակը, էշրաֆներու բռնութիւնները, կառավարութեան ընթացքը, տնտեսական խեղճութիւն, կրթական խեղճութիւն, հողային յափշտակութիւն, զուլում...*»[2]:

Զարուհի Գալեմքերեանի շնորհիւ ամբողջանում է նրա դիմապատկերը. Հէք Գեղամ, գլխիկդ ծուռ, տժգոյն շրթունքներդ դառնութեան ամենեն լեղի բաժակին մէջ թաթխած, աչքերդ արցունքով լեցուն, հայրենիքիդ աւերակներուն վրայ կ'ողբերգէիր: Մուշի քաղցր պլպուլ... գէշ խապրիկներ բերիր քու անուշիկ հայրենիքիդ մասին, ըսիր թէ բոլոր հայութիւնը ջարդուեր, տղաքը խողխողուեր էին, ամէնքն ալ, ափսոս, ամէնքն ալ մահացուցեր էին ու յետոյ աւերակ, քարուքանդ ըրեր էին երկիրդ ու եկեղեցիդ... Այդ սուրբ տեղերուն հարստութիւնները, զորս նկարագրելու համար անշուք կը գտնէիր ամենեն շողշողուն բառերդ, Դուն, Հայաստանի հոգին, այնքան համեստ ու այնքան խոնարհ[3]:

1888ին Սրուանձտեանցին ուղղած նամակներից մէկում խօսելով համատարած անտարբերութեան եւ միքանի հայրենանուէրների մասին՝ Գեղամն ակամայ բնութագրում է նաեւ իր սկզբունքներն ու կեանքի ուղին. «*Անտարբերութիւն մը միայն կը տեսնեմ իմ չորս դին, անտարբերութիւն մը, այո՛, ոչ թէ ուրիշ պատճառով, այլ դա մի սովորական յատկութիւն է մարդոց՝ մեր հայրենակցաց, մտածել աւելի այն նիւթերու վրայ, որ անմիջական առնչու-*

[1] Երուանդ Օտեան, «Մեր երեսփոխանները (Գեղամ Տէր-Կարապետեան)», *Մանանայ*, Կ. Պոլիս, 30 Նոյեմբեր 1913, թիւ 8 , էջ 117-22:

[2] Նոյն, էջ 119:

[3] Զարուհի Գալեմքէրեան (Եւտէրպէ), *Կեանքիս ճամփէն, դէմքեր*, ՏՄՏԿԿ, Անթիլիաս, 1952, էջ 214:

թիւն ունին իրենց կեանքին ու գործոց հետ, չեմ մոռնար ըսելու թէ բացառութիւններ ալ կան, որք կ'որոնեն աւելի բարձր եւ հանրային շահեր…»[4]:

Գեղամը ոչ միայն ստեղծել է հայրենի եզերքի հողաբոյրով, ազգային հոգեբանութեան եւ աշխարհընկալման, ժողովրդական բանահիւսութեան ենթաշերտերի ու լեզուամտածողութեան յենքով գոյաւորուող գրականութիւն, այլեւ հեղինակել է ազգագրական, բանագիտական, տեղագրական, կրօնական եւ հրապարակախօսական յօդուածներ՝ թողնելով հարուստ ու բազմազան ժառանգութիւն: Առ այսօր ազգագրագէտների ու բանագէտների պատշաճ ուշադրութեանը չեն արժանացել, գիտական շրջանառութեան չեն դրուել նրա ազգագրագիտական աշխատանքների ու բանահիւսական բազմասեռ գրառումների մեծ մասը, իսկ գրական ստեղծագործութիւնները թէեւ ժողովրդագիտական սկզբնաղբիւրների արժէք ունեն, սակայն դրանց նուիրուած փոքրաթիւ ուսումնասիրութիւնները[5] սահմանափակւում են հիմնականում գրականագիտական վերլուծութիւններով՝ հիմնականում շրջանցելով Գեղամի հեղինակային հեքիաթների ժողովրդագիտական շերտերը:

Սոյն ուսումնասիրութեան ծիրում են յայտնւում արձակագիր Գեղամն ու, սեռի զարգացման նոր մակարդակը նշանաւորող, նրա փոքրաթիւ հեքիաթները, որոնք գեղարուեստական խօսքի, ժողովրդական բանահիւսութեան, ազգագրական հարուստ վկայութիւնների իւրօրինակ համադրութիւններ են:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԳՐԱՌՄԱՆ ՊԱՏՈՒԹԻՒՆԻՑ

Հայ ժողովրդական հեքիաթների գրառման պատմութիւնը մեկնարկում է 1860ին Շուշիում, երբ Առաքել, Ալեքսանդր եւ Գրիգոր Բահաթրեանները գրի են առնում 61 հեքիաթ՝ յանձնելով Տիգրան Նաւասարդեանին[6]: Հայ իրականութեան մէջ հեքիաթը հետաքրքրութեան դիտակէտում է յայտնւում առաւելապէս 1870-80ականներին, երբ հայ ժողովուրդը թեւակոխում է պատմական նոր՝ ազգային ինքնորոշման եւ ինքնութեան բացայայտման

---

[4] Յակոբ Պետրոսեան, «Մշոյ Գեղամի նամակները Գարեգին Սրուանձտեանցին», *Բանբեր Երեւանի համալսարանի*, 1(31):1977, էջ 194:

[5] Գեղամ Տէր Կարապետեան, *Տարօնի աշխարհ*, նահատակ գրագէտներու բարեկամներ մատենաշար – թիւ 3, Փարիզ, 1931. նաեւ՝ Ն. Վ. Պ., «Տարօնի Աշխարհ, պատկերներ ու պատմուածքներ.- Գեղամ Տեր Կարապետեան, Փարիզ, 1931», Երուսաղէմ, մայիս, Զ(5):1932, էջ 152. նաեւ՝ Արմէնուհի Տէրկարապետեան (Գեւոնեան), *Նշխարներ Մշոյ Գեղամէն*, Փարիզ, 1946. նաեւ՝ Հայր Մեսրոպ Ճանաշեան, *Հայ գրականութեան նոր շրջանի համառօտ պատմութիւն (1901–1920)*, Վենետիկ, 1973. նաեւ՝ Յակոբ Պետրոսեան, *Գեղամ Տէր Կարապետեան, Մշոյ Գեղամ*, Երեւան, ԵՊՀ հրատ., 1983. նաեւ նոյնի՝ «Գեղամ Տէր-Կարապետեան (Մշոյ Գեղամ)», *Էջմիածին*, ԿԸ(Ը):2012, էջ 107-19:

[6] Ն. Յակոբեան, Արծրունի Սահակեան, «Հայ ժողովրդական հեքիաթների գրառման պատմութիւնից», *Բանբեր Երեւանի համալսարանի*, 1(58):1986, էջ 127:

շրջափուլ, երբ հայոց պատմութեան, լեզուի, գրականութեան եւ բանահիւսութեան հետազօտութեան ընթացքը ձեռք է բերում գիտակցուած բնոյթ: Հայրենասիրական զգացումներ ներարկելու, հայրենի երկիրն ու ժողովրդի հոգեւոր արժէքները բացայայտելու ձգտումով, հայ բանահիւսութեան նշխարներին եւ, մասնաւորապէս, հեքիաթներին անդրադառնում է նաեւ Գարեգին Վրդ. Սրուանձտեանցը՝ դնելով բանահաւաքչական շարժման հիմքն ու բացելով գրականութեան կենսատու երակներից մէկը:

Սրուանձտեանցի գործունէութիւնը պատմամշակութային շրջադարձային նշանակութիւն է ունենում: Ժողովածուների առաջաբաններում (*Գրոց ու բրոց* (1874), *Հնոց-նորոց* (1874), *Մանանայ* (1876), *Համով-հոտով* (1884), որոնք ունէին ծրագրային բնոյթ, վարդապետը հիմնական գծերով շարադրում է այն ուղենիշերը, որոնք կարող էին օժանդակել ե՛ւ ազգագրագէտ-բանագէտներին, ե՛ւ գրողներին: Իսկ *Մանանայի* «Հայրենեաց վէպք եւ զրոյցք» բաժնի առաջաբանում հանդէս է գալիս որպէս հայկական ժողովրդական հեքիաթի առաջին բնութագրողն ու արժեւորողը. «*Վէպն ու զրոյցը, որ ժողովրդեան բերնով հեքիաթ է, յօրինուած կը լինի բարոյական խրատու համար. եւ իբրեւ դիւցազներգութիւն՝ քաջաց քաջութիւն հռչակելու կամ այլոց օրինակ տալու համար: Հեքիաթներու շարադրութեան մէջ միշտ կարգ մը կայ. Ուղեւորութիւն հեռաւոր եւ անծանօթ աշխարհները. հրաշալի եւ ահռելի նկարագրութիւնք վայրուց եւ անձանց դիպուածք, արկածք ի նենգութենէ ընկերաց կամ եղբարց, երբեմն եւս ի ծնողաց*»[7]՝ նկատում է նա, խորամտօրէն հաստատելով, որ հեքիաթների բարբառներն ու բնակիչների տեղական սովորոյթները, նաեւ բնակլիմայական պայմանների նկարագրութիւնները յուշում են ասացողի որտեղացի լինելը[8]: Կարեւորելով ժողովրդական բանահիւսութեան դերը գրականութեան, ինչպէս նաեւ՝ պատմութեան, լեզուի եւ մանկավարժութեան համար՝ Սրուանձտեանցը գրում է. «*Մտածելով թէ փայտերը, քարերը եւ ամէնայն ակունք ու այլ նիւթերը նախքան զարուեստաւորել՝ իրենց բնական բոյսին եւ կազմին մէջ թէպէտ անվայելուչ եւ անշնորհք երեւոյթ մը ունին, բայց արուեստաւորք զանոնք թանգ կը գնեն. եւ ինչու ամէն արհեստական նիւթը իրեն նախնականը պատրաստող ու վաճառողն ունի, ինչու՞ գրարուեստն ալ չունենայ: Ահա այս խորհրդով իմ երկրէս իբրեւ ընծայ այս գրուածքս կը նուիրեմ…զորս քաղած եմ հայրենի մրգաստանէն… այն հողէն ու ջրէն, որ Հայաստան անունը կը կրեն…*»[9]: Բանահաւաքը նպատակ էր հետապնդում «*ժողովրդական կեանքէ ծանօթութիւններ յիշել, որոնք լոյս կարող են տալ մեր ազգային պատմութեան եւ*

[7] Գարեգին Սրուանձտեանց, *Մանանայ*, տպ. Ե. Մ. Տնտէսեան, Կ. Պոլիս, 1876, էջ 149-50:

[8] Նոյն, էջ 148-49:

[9] Գարեգին Սրուանձտեանց, *Գրոց ու բրոց եւ Սասուցի Դաւիթ կամ Մհերի դուռ*, տպ. Ե. Մ. Տնտէսեան, Կ. Պոլիս, 1874, էջ 3:

լեզուին կամ գրականութեան,... որոնք մեր առհասարակ կեանքի եւ լեզուի պատմութիւնը կը կազմեն»[10]:

ԲԱՆԱՀԱՒԱՔՆ ՈՒ ՇՆՈՐՀԱԼԻ ԳՐՈՂԸ

Հետեւելով Սրուանձտեանցի օրինակին՝ ԺԹ. դարի վերջին տասնամեակների հայ գրողները, բանահաւաքներն ու ազգագրագէտները (Տիգրան Նաւասարդեան, Երուանդ Լալայեան, Գէորգ Շերենց, Քաջբերունի (Գաբրիէլ Տէրյովհաննիսեան), Թլկատինցի (Յովհաննէս Յարութիւնեան), եւ ուրիշներ) շարունակում էին հարստացնել մամուլը ազգային բանահիւսական նիւթերով: Շնորհիւ հայոց տարբեր գաւառներից հաւաքած բանահիւսական ու ազգագրական գողտրիկ նմուշների, գիտական ճիշտ կողմնորոշման եւ ճշգրիտ դիտարկումների, մտաւորականներին ուղղորդելու իր բացառիկ ձիրքի՝ Սրուանձտեանցը դառնում է ժողովրդագիտական մեծ շարժման հիմնադիրն ու ժողովրդական հարուստ նախանիւթը գրական ստեղծագործութիւնների ատաղձ դարձնելու ջատագովը:

Սրուանձտեանցի հայրենանուէր աշխատանքը տալիս է երկարասպաս արդիւնքներ. տաղանդաւոր գրողների մի բոյլ՝ Թլկատինցին, Մշոյ Գեղամը, Ռուբէն Զարդարեանը, Հրանդը (Մելքոն Կիւրճեան) ընտրում են բանահիւսական սկզբնաղբիւրներից օգտուելու, գաւառի դիմագիծը ներկայացնելու եւ հայրենի ոգին յայտնաբերելու գրական ուղին[11]:

Գեղամը Սրուանձտեանցի բազմոլորտ գործունէութիւնն արժեւորող այն գեղագէտներից էր, ով պաշտամունքի հասնող յարգանք ու սէր էր տածում նրա նկատմամբ: Յատկապէս բարձր էր գնահատում վարդապետի գրական, բանահաւաքչական եւ մանկավարժական վաստակը, նրա ահռելի ներդրումը մշակութային եւ հասարակական կեանքի կազմակերպման գործընթացում. «*Եւ միթէ՛ կը սխալինք, եթէ ըսենք Դուք էք այո՛, Ս. հայր, մի միակ արժանաւոր վարձատրութեան եւ քաջալերութեան, Դուք միայն իրաւունք ունիք բռնանալու հայ ժողովրդեան համակրանաց ու երախտագիտութեան, վասն զի ժրաջան մեղուի նման Դուք էիք, որ եդնէ եղած, յոգնեցաք ու տքնեցաք ծաղիկներ հասցնել մեր գրական պարտէզին, զի դուք մատակարարեցիք բարոյական հացը մեր ժողովրդեան*»՝ գրում է նա Սրուանձտեանցին ուղղած նամակներից մէկում[12]: Իդէպ, Սրուանձտեանցի համակրանքն էր վայելում Գեղամի հայրը՝ Տ. Կարապետ քահանայ Յովհաննէսեանը[13]:

---

[10] Նոյն, էջ 7-8:

[11] Հայկազ Յակոբջանեան, «Բանահիւսական ժանրերի մշակումները արեւմտահայ գաւառական գրականութեան մէջ», *Լրաբեր հասարակական գիտութիւնների*, 1:1993, էջ 24:

[12] Պետրոսեան, «Մշոյ Գեղամի նամակները», էջ 182:

[13] Գեղամ, «Տէրտէրին մահը», *Մասիս*, 27 Յուլիս 1902, էջ 482:

Ժողովրդական պատկերաւոր մտածողութեանը Գեղամը ծանօթանում է դեռեւս մանկութեան տարիներին Խէյիբան գիւղում՝ հեքիաթասաց Շիրօ ջոջիկից, լսելով եւ հմայուելով՝ «Կարմիր դեւ», «Հազարանց պլպուլ», «Ջրահատ հուշապը», «Ոսկի ծամերը», «Թուր ու թամբը», «Ակն ոսկի, ճանկն ոսկի», «Դարբին Ներսօն», «Վէճկրար դաւրէշը» եւ բազմաթիւ այլ հեքիաթներով[14]: Հետեւելով իր հոգեւոր ուսուցչի օրինակին նա նուիրւում է բանահաւաքչական աշխատանքին՝ գրառելով Տարօն-Տուրուբերանի, Մշոյ դաշտի, Սասունի, Բուլանըխի, Վարդոյի, Գինջի եւ Տիգրանակերտի ազգագրական, վիպական, քնարական ու ասոյթաբանական բանահիւսութեան բազմասեռ եւ արժէքաւոր նիւթեր ու թողնում բանահաւաքչական հարուստ ժառանգութիւն՝ հեքիաթներ («Անխելք մարդը», «Տուտիի հեքիաթը», «Տումասիի հեքիաթը», «Իրիք պանդուխտներու հեքիաթ», «Ակն ոսկի, ճանկն ոսկի, ոսկի գաւազան ձիռք», «Ով որ աղէկութիւն ընէ իր անձին կ'ընէ», «Գառնուկ աղբէր» «Մէկիկ Տելիշար» նաեւ՝ անվերնագիր հեքիաթներ) ժողովրդական երգեր, առած-ասացուածքներ, հանելուկներ եւ առակներ, տեղեկութիւններ ժողովրդական նախապաշարմունքների վերաբերեալ[15]:

«Մշոյ մուրատատուր Ս. Կարապետ. իր գրոց ու բրոց բանկլիկը» մօտ 1500 էջանոց աշխատութեան մէջ, որն ամբողջութեամբ նուիրուած է Մշոյ Ս. Կարապետ վանքին, այդ թեմի մէջ մտնող վանքերին, պատմական անցքերին ու վանահայրերին, դպրութեանն ու աւանդութիւններին, Գեղամն անդրադառնում է նաեւ ձմեռային երեկոներին գիւղական օդաներում, աշխարհիկ-ռամկական հեքիաթներից ու զրոյցներից բացի, կռատների, վանքերի, եկեղեցիների, սրբերի, նրանց մասունքների, զանազան հրաշազան անցքերի մասին պատմուող աւանդութիւններին, հեքիաթ-զրոյցներին, որոնք իր պատանեկան տարիների քաղցր վերյուշը կարելի է համարել[16]:

Հարուստ ժողովրդագիտական նիւթ է պարունակում «Տարօնի վանքերը. ուղեւորի յիշատակներ» գիրքը որտեղ հրապարակուել են Գեղամի մեծաթիւ յօդուածները նուիրուած Ս. Կարապետ, Ս. Յովհաննէս, Եղրդուտի, Ս. Սարգիս վանքերին, Եդեսիայի, Տիարպեքիրի եկեղեցիներին, տարբեր սրբավայրերի շուրջ հիւսուած եւ կենցաղավարած նուիրական աւանդութիւններին, ժողովրդական հաւատալիքներին, հայերի եւ քրդերի կենցաղին ու սովորութիւններին: Այսպէս օրինակ՝ խօսելով Եղրդուտի վանքի եւ այնտեղ աճող եղրդենու մասին՝ արձակագիրը ազգագրական ուշագրաւ տեղեկութիւններ է փոխանցում ընթերցողին.

> Եղրդուտը մշտադալար ծառ մըն է, միջակ մեծութեամբ՝ փոքրասարաս ծառերու տեսակէն: Մինչեւ հիմա կ'ապրի այս ծառուկը՝ վանքին արեւելքը՝ տաճարին քովիկ, մշտահոս աղբիւրի մը շալակ, իր խնկենի շուքով: Գրեթէ միակն է իր

[14] Պետրոսեան, *Գեղամ Տէր Կարապետեան, Մշոյ Գեղամ*, էջ 267:

[15] Գեղամ Տէր Կարապետեանի (Մշոյ Գեղամ), ԳԱԹ, ֆոնդ, N15-21:

[16] Գէղամ Տէր Կարապետեան, «Մշոյ մուրատատուր Ս. Կարապետ. իր գրոց ու բրոց բանկլիկը», *Էջմիածին*, Ապրիլ, Դ(ԾԸ):2002, էջ 45-56:

տեսակին մէջ՝ Սիմի այդ շղթային վրայ ու մասնաւոր խնամքով կը պահպանուի: Բոլորտիքը ցանկով ու պատով պատսպարուած է, արմատին քովեր ցան ու ցիր կը մնան խաչքարերու նշխարներ եւ դերբուկները վաղաշէն մատուռի մը: Նուիրական է եղրդուտը՝ մանաւանդ հայ կնիկներու եւ աղջիկներու, ցաւագար հիւանդներու, որոնք՝ ամէն ատեն երբ այցելեն՝ լաթերով պիտի պատանեն անոր ոստն ու տերեւը, ցաւն ու չոռը հոն թողլու համար եւ կը տանին ջերմեռանդութեամբ անոր դալարի տերեւները ու թփերը՝ իբր բուժիչ ախտերու եւ հիւանդութեանց: Կանաչութիւնը այս ծառի խորհրդաւոր մէկ հմայքը կը կազմէ ուխտաւոր երկիւղած ժողովրդին, որ դարերէ ի վեր դիւթեր է ծառերու սօսափիւնէն, ջերմուկներու խոխոջէն, եւ բարձանց ու խորոց սրբութիւններէն[17]:

Ուշագրաւ է, որ նոյնիսկ հօրը նուիրուած «Տէրտէրին մահը» վերյուշում Գեղամը ժողովրդագիտական կարեւոր տուեալներ է փոխանցում ընթերցողին, ինչպէս օրինակ. «Մէծօրէից աւանդութեամբ՝ շինականք պէտք կը տեսնեն, որ նոր գերեզմանատան մէջ՝ ամէնէն յառաջ՝ անպատճառ քահանայ մը թաղուի, որպէս զի հողը օրհնուի, սրբանայ ու նուիրական ըլլայ: Հակառակ մերիններու եւ միամիտներու ընդդիմութեան թէ մինակ ու մալուլ թողելու չէ քահանային գերեզմանը, ես հաւանեցայ սակայն գիւղացիներու անկեղծ ու բարեմիտ առաջարկութեան»[18]:

Գրողի համոզմամբ՝ «*ժողովուրդն աւանդութեան շրեմարան մ'է, չկայ հին քար մը, հին ծառ մը, աւերակ ու շէն տեղեր, ծեր սարեր, ծեր գերեզմաններ, եւ բլուրներ, եւ աղբիւրներ, որք չունենան աւանդութիւններ հրաշից*»[19]: Գեղամին գրաւում էին հայրենի աւանդութիւնները, որոնց նուիրել է «Իննակնեաց մեհեանները եւ Նաւասարդի տօնը Տարօնոյ մէջ»[20] աշխատութիւնը: Անկրկնելի են ժամանակի մամուլում նրա հրապարակած՝ «Շահմարա՞ն թէ Շամիրամ»[21], «Խորենացին. իր ջաղացքն ու ջըխջըխիկը»[22], «Կարինէն»[23] եւ այլ աւանդազրոյցները, որոնք բանահիւսական բացառիկ նմուշներ են՝ ներկայացուած հիւթեղ խօսքով, տեղացու փայլուն իմացութեամբ: Բանահաւաքը գիտակցում եւ արժեւորում էր իր գրառած եւ հանրայնացրած պատումները, դրանց մեծ մասի սկզբնաղբիւրային նշանակութիւնը (որոշ պատումներ, ինչպէս՝ «Շահմարա՞ն թէ Շամիրամ», «Վարդ-

[17] Գեղամ Տէր Կարապետեան, *Տարօնի վանքերը: Ուղեւորի յիշատակներ*, Մուղնի, Երեւան, 2003, էջ 143:

[18] Գեղամ, «Տէրտէրին մահը», էջ 484:

[19] Պետրոսեան, *Գեղամ Տէր Կարապետեան, Մշոյ Գեղամ*, էջ 269:

[20] *Նաւասարդ, տարեգիրք, Ա.*, Տպագրութիւն Օ. Արզուման, Կ. Պոլիս, 1914, էջ 148-57:

[21] Գեղամ, «Շահմարա՞ն թէ Շամիրամ», *Բիւզանդիոն*, 24 Յունուար-3 Փետր. եւ 6 Յունուար-25 Փետր. 1900**:**

[22] Գեղամ, «Խորենացին. իր ջաղացքն ու ջըխջըխիկը», *Ժամանակ*, 1-14 Յունուար 1914, էջ 2:

[23] Գեղամ Տէր Կարապետեան, «Կարինէ», *Ազատամարտ*, 1/4 Յունուար 1914, էջ 1-2:

խաղը»[24], չեն հանդիպում այլ բանագէտ-բանահաւաքների գրառումներում). «*Թէ՛ այս, թէ շրջակայ գիւղերու մէջ զանազան աւանդական պատմութիւններ կ'գտնուին հնասէր ժողովրդեան մօտ, որոց մէկն հետեւեալն է ու կ'վերաբերի Շամիրամին ծագման եւ ինչ ինչ գործերուն: Բանասէրներու համար նուազ հետաքրքրական չպիտի ըլլայ կարծեմ*»[25]:

Հնագոյն հաւատալիքների իւրօրինակ անդրադարձ է «Ոսկեճանկը» հեքիաթատիպ-աւանդութեան գեղարուեստական մշակումը, որն ըստ Գեղամի վկայութեան, ասուել է չափածոյ. «*Պարսկերէն եւ քիւրտերէն ուրանաւոր հեքիաթներով մինչեւ հիմա դեռ կը պատմուին Ոսկեճանկն եւ իր Տըմփըմ քաղաքը…*»[26]: Աւանդութեան հիմքում ընկած է մարդ-կենդանի օրգանական կապի հնագոյն առասպելաբանական ընկալումը, այսինքն՝ մարդկային հոգու կերպարափոխման հաւատալիքը: Այսպէս, քնած հովուի քիթը ճանճ է մտնում եւ անէանում, արթնանալուց յետոյ նա գանգատւում է, թէ մահուանից է ազատուել: Պարզւում է, որ ճանճը քնածի հոգին է՝ կերպարանք առած. «*Ոսկեճանկն հասկցաւ եղածը. էր ճանճը հովուին հոգին էր, սրիպակ ծովը՝ կաթի ամանը, իսկ եօթն փրէ կամուրջը՝ եօթն աչքով սրինգն էր*»[27]: Պատումում արտացոլուած է քնած ժամանակ հոգին մարմնից անջատուելու նախնական հաւատալիքը, ըստ որի, հոգին հեռանում, երբեմն նոյնիսկ փորձանքի է հանդիպում՝ վերադառնալով կամ ընդմիշտ լքելով մարմինը: Ժողովրդական պատկերացումներում մեռնելիս մարմինը թողած հոգին հիմնականում բերանից (Գեղամի մօտ՝ քթից) է դուրս գալիս եւ կարող է տարբեր տեսանելի կերպարանքներ ընդունել: Հոգին մարմնից կարող է անջատուել ինչպէս ժամանակաւորապէս՝ տեսիլքների եւ երազների դէպքերում, այնպէս էլ ընդմիշտ՝ մահուան դէպքում[28]. «*Հարմանք, նա տեսաւ որ ճանճը սրինգից դուրս գալով՝ ահաբեկուածի նման կծկած, թռաւ եւ հովուին քիթը մտնելով, անհետացաւ: Իզուր՝ Ոսկեճանկը հովուին պնչերը կը խառնէր. ճանճ չկար: Ահա եղբայրն ալ զարթեցաւ հովիւը տագնապալից քրտինքէ մը ողողուած,- Օ՜ֆ, ասաց նա, փա՛ռք քեզ, Տէր Աստուած, ինչպէս մահուանէ ազատուեցայ, մազ մնացեր էր որ խեղդուէի…*»[29]: Գեղամի մեծագործ եւ խիզախ հերոսի ճակատագրի բեկումը՝ բարոյական անկումը, նոյնպէս գուժում է ճանճի յայտնութիւնն ու անէացումը: Նկատենք, որ հին պարսկական դիցաբանութեան մէջ լոյսի թշնամի Ահրիմանն աշխարհ

---

[24] Գեղամ Տէր Կարապետեան, «Վարդ-խաղը», *Ազատամարտ*, 17 Փետուար-2 Մարտ, 1911, էջ 1:

[25] Գեղամ, «Շահմարա՞ն թէ Շամիրամ», 24 Յունուար-3 Փետր., էջ 1:

[26] Գեղամ, «Հնուց բանք. ոսկեճանկը», *Բիւզանդիոն*, 12-24 Յուլիս 1899:

[27] Նոյն:

[28] Սարգիս Յարութիւնեան, *Հայ առասպելաբանութիւն*, Անտարէս հրատ., Երեւան, 2018, էջ 386-87:

[29] Գեղամ, «Հնուց բանք. ոսկեճանկը»:

է թափանցում ճանճի տեսքով, ըստ Եսայի մարգարէի՝ ճանճի բզզոցը դժբախտութիւն է գուժում[30]:

ՄՇՈՅ ԳԵՂԱՄԻ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԳԵՂԱՐՈՒԽՏԱԿԱՆ ԱՐԺԷՔՆ ՈՒ ԱՐԱՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Գեղամը թէեւ իր «Կեանքը գաւառի մէջ» յօդուածում կարեւորում էր հեքիաթի կրթադաստիարակիչ նշանակութիւնը, սակայն նրա հեքիաթներին բնորոշ չէ ընդգծուած խրատական-մանկավարժական ուղղուածութիւնը. «*Մէկնումին քայլ մը մնացած էր, երբ տարեց-պոբոր* [ճարպիկ-ճարտարախօս] *կին մը, լի երկիւղած զգացումներով՝ հետեւեալ ճէոօքն արտասանեց, որուն հետաքրքրութեամբ կ'ունկնդրէին երկու ճամփորդ տղաք ալ, թերեւս առակաւոր խրատէն օգտուելու փափաքով: Գիտենք թէ ժողովրդական լեզուով պատմուած հեքիաթ կամ ճէոօքներն ո՛րքան մատչելի, ո՛րքան դիւրահասկնալի ու ներգործող տպաւորութիւն ունին տղոց վրայ: Ու ո՛րքան ալ կը սիրեն լսել*»[31]:

Կարեւորելով մեր ժողովրդի բանաւոր աւանդութեան տարբեր սեռերի գրառման, հրատարակման եւ ուսումնասիրման պատմամշակութային նշանակութիւնը՝ Գեղամը նոյնիսկ իր հեղինակային ստեղծագործութիւններում առաջնորդւում է բանահիւսական տարրերի ներմուծման սկզբունքով: Ըստ հեքիաթագէտ Ալվարդ Ջիւանեանի իրաւացի տեսակէտի՝ ժողովրդական եւ գրական հեքիաթները մշտապէս «գտնւում են երկկողմանի կայուն փոխազդեցութեան մէջ»[32]: Արդի հայ գրականութիւնը հետաքրքրութիւն է դրսեւորում հեքիաթի պոէտիկ տարբեր ձեւերի նկատմամբ՝ յաճախ կիրառելով դրանք գրական գործերում (1960-70ականներից սկսած այս միտումը խիստ արդիական է դիտւում ժամանակակից գրականութեան մէջ), կարեւոր է ընդգծել, որ այս խիստ նորարական մօտեցումը նկատելի էր դեռեւս Մշոյ Գեղամի արձակում[33]: Չնայած փոքրաթիւութեանը՝ Գեղամի հեքիաթներն արժէքաւոր են հեքիաթագիտութեան համար, յատկապէս մի քանի առանձնայատկութիւնների շնորհիւ: Լինելով «գաւառական» գրական շարժման ոճամտածողական սկզբունքների հետեւորդներից եւ արժեւորելով հեքիաթի անկրկնելի դերը ժողովրդի հոգեւոր կեանքում՝ Մշոյ Գեղամն ընտրում է հեքիաթաստեղծման երկու ուղի. Ա) բանահիւսական հեքիաթների դիպաշարերի մշակում, Բ) բանահիւսական տարրերի առկայու-

---

[30] Գագիկ Մանասեան, *Խորհրդանշանների հանրագիտարան: Երկրաչափական, կենդանիների, թռչունների, բոյսերի, քարերի*, Նշանակ, Երեւան, 2007, էջ 135:

[31] Գեղամ, «Կեանքը գաւառի մէջ», *Բիւզանդիոն*, Սեպտ. 22-5 Հոկտ., 1906:

[32] Ալվարդ Ջիւանեան, *Հեքիաթը որպէս եզր եւ հասկացութիւն. բանահիւսական եւ գրական հեքիաթների փոխառնչութիւնը*, Աստղիկ 20-21, Երեւան, 2010-11, էջ 69:

[33] Նուարդ Վարդանեան, Ալվարդ Սեմիրջեան-Բեքմէեզեան, Նարինէ Վարդանեան, *Հայ ժողովրդական եւ գրական հեքիաթի արդի հիմնախնդիրները*, ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն, Երեւան, 2015, էջ 91:

թեամբ գրական-հեղինակային հեքիաթների արարում, իւրաքանչիւր հեքիաթի ստեղծման ընթացքում՝ ցուցաբերելով առանձնայատուկ մօտեցումներ ու սկզբունքներ:

Այսպիսով՝ իր գրառած հեքիաթներից Մշոյ Գեղամը մշակել է «Ողորմածը»[34]՝ հաւատաւոր մարդու խոնարհութեան պատմութիւնը, ով, դառը փորձութիւնների յաղթահարումով, վերագտնում է կորցրածն ու աստուածային օրհնութեան արժանանում: Սոյն հեքիաթի Շուլաւերի փոփոխակը Գեղամից երեք տարի առաջ մշակել եւ հրատարակել է Սարգիս Քամալեանը *Հեքիաթներ*[35] ժողովածուում: Մշոյ Գեղամի հեքիաթային հերոսն ինքնակամ է ունեզրկւում (նիւթական հարստութիւնն աղքատներին բաժանելու արդիւնքում), իսկ Քամալեանի «Ջրատար եւ գայլատար»[36] հեքիաթի հարուստ վաճառականը՝ խոնարհաբար ընդունելով ու յաղթահարելով իրեն բաժին հասած փորձութիւնները (չքաւորութիւն, հարազատների տեւական կորուստ):

Այստեղ գրողը խուսափում է բանահիւսական հեքիաթի պոէտիկայի յենքով հեղինակային հեքիաթներ ստեղծելու մեթոդից: Պահպանելով դասական հեքիաթի կաղապարային որոշ յատկանիշեր՝ հեքիաթագիրն ընտրում է ժանրային համադրականութեան սկզբունքը: Հեքիաթաստեղծման այս եղանակը նոր խօսք ու մօտեցում էր, որն, իդէպ, չի կորցրել իր արդիականութիւնը: Արդի գրական հեքիաթը նոյնպէս յաճախ զանազան սեռերի համամիասնութիւն է դիտւում, այսպէս, օրինակ, հեքիաթ-վէպ (Արմինէ Անդա (Արմինէ Աբրահամեան) *Անկիմիւրի բնակիչները*), հեքիաթ-վիպակ (Էդուարդ Միլիտոնեան, *Արքայադուստր Թարսինէն*, Էդուարդ Աւագեան, *Մանգասչգտնես վերջին թագաւորը*), հեքիաթ-պատմուածք (Էդուարդ Աւագեան, *Փոքրերի մեծ աշխարհը* ժողովածուի որոշ հեքիաթներ, Էդուարդ Միլիտոնեան, *Շաքարաւազ արքայազնը* ժողովածուում ընդգրկուած հեքիաթները), հեքիաթ-պոէմ (Սամսոն Ստեփանեան, «Ֆերդինանդ անունով թռչող վիշապը») եւն.[37]:

Նկատենք, որ գրական սեռերն աւանդոյթի եւ նորարարութեան միասնութիւն են կազմում՝ արագ արձագանգելով գեղարուեստական մտածողութեան մէջ կատարուող փոփոխութիւններին, ուստի, Մշոյ Գեղամի հեքիաթագրութիւնը թարմ լիցք հաղորդեց սեռի զարգացման գործընթացին: Յենուելով նախորդների ստեղծած գրական աւանդոյթների վրայ՝ Գեղամը երբեք չմնաց կանոնարկման սահմաններում՝ ընտրելով գեղարուեստական նոր միջոցների որոնման ու նոր ձեւերի ստեղծման դժուարին ուղին:

---

[34] Գեղամ Տէր Կարապետեան, «Ողորմածը», *Արեւելք*, Կ. Պոլիս, 7, 9, 10, 11, 12 եւ 13 Դեկտեմբեր 1895:

[35] Սարգիս Քամալեանց, *Հեքիաթներ*, տպ. Յ. Մարտիրոսեանց, Թիֆլիզ, 1892:

[36] Քամալեանց, էջ 117-38:

[37] Վարդանեան, Սեմիրջեան-Բեքմէեզեան, Վարդանեան, էջ 92-93:

Պահպանելով դասական հեքիաթի կաղապարային որոշ յատկանիշեր՝ Մշոյ Գեղամն ընտրել է սեռի համադրականութեան սկզբունքը: Հեղինակի հեքիաթագրութեանը բնորոշ այդ համադրականութիւնը լաւագոյնս դրսեւորուել է «Տնանկ Մարտօն» (1897) եւ «Մէկ ու ճար Շուշիկը» (1907), հեքիաթ-պատմուածքներում, որոնց շարադրանքն առանձնանում է պատմուածքին յատուկ արտայայտչաձեւերով, գրական կերպարներին բնորոշ տարրերով, կերպարաշարի անհատականացման միտումներով, բնապատկերների եւ կենցաղի մանրամասն նկարագրութիւններով: Գեղամը հեքիաթների չար եւ բարի հակոտնեայ ուժերի բախումը վերաիմաստաւորում է ժամանակի հրատապ խնդիրների արծարծումով:

Ժամանակի հայ հասարակական կեանքը թունաւորող գերխնդիրներով մտահոգ՝ արձակագիրն իր երկերում առանձնացնում է պանդխտութեան թեման, որն առաւել սրութիւն էր ստացել 1894-96ի ջարդերից յետոյ: Յիշեալ թեման ընկած է «Տնանկ Մարտօն» հեքիաթի եւ մի շարք այլ պատմուածքների ու պատկերների հիմքում («Մայրամ ջոջիկը» (1895), «Եղսիկի պարագան» (1900), «Երկու տարի միայն» (1903) եւն.), սակայն միայն հեքիաթում է, որ պանդխտութեան դառնութիւնը ճաշակած հերոսին յաջողւում է երջանկութեան եւ բարեկեցութեան հասնել: Այդուհանդերձ, Գեղամի հեքիաթները կտրուած չեն իրական հողից եւ հեքիաթագիրը ճշգրտօրէն է ներկայացնում գեղջկական անդորրը խափանող հանգամանքները:

Հեքիաթային իրադարձութիւններին հաւաստիութիւն են հաղորդում հեղինակի լեզուն, պատմելաոճը, ցայտուն կերպարագծումը՝ առաջացնելով իրականութեան պատրանք: Յենուելով՝ «Ինչ կ'եղնի թըղ էղնի, համբերէ, ուրախ կ'եղնի», «Ինչ որ գրուկ է ճակտիդ, էն է բերքը բաղդիդ» եւ «Զոր որ սիրտը կը սիրէ, խորոտիկն էն է» ասացուածքների բարոյախօսութեան վրայ, նա ստեղծում է «Տնանկ Մարտօն» հեքիաթը: Յակոբ Պետրոսեանի կարծիքով, հայ բանարուեստը «*իր անջնջելի կնիքն է դրել* [Մշոյ Գեղամի] *բոլոր երկերի վրայ*» եւ «*դարձել նրա գեղարուեստական մտածողութեան տիրական յատկանիշերից մէկը*»[38]: Բանահիւսական արժէքները ոչնչացումից փրկելու եւ գեղարուեստական խօսքն առօրեայ ժողովրդախօսակցական բառամթերքով խտացնելու միտումով՝ արձակագիրն իր երկերում լայնօրէն օգտուել է ժողովրդական առած-ասացուածքներից, թեւաւոր խօսքերից ու դարձուածքներից: Գրողի արխիւում պահւում է ժողովրդական ասոյթաբանութեան մի հարուստ շտեմարան, որտեղ բանահաւաքի գրառումների կողքին տեղ են գտել նաեւ արժէքաւոր նշումներ եւ մեկնութիւններ[39]:

«Տնանկ Մարտօն» տարբեր հեքիաթներից փոխառուած տարրերի հիմքով յօրինուածք է[40], որտեղ այլազան պատուհասների անընդհատելիութիւ-

---

[38] Պետրոսեան, *Գեղամ Տէր Կարապետեան, Մշոյ Գեղամ,* էջ 268-69:

[39] Գեղամ Տէր Կարապետեանի (Մշոյ Գեղամ), ԳԱԹ, ֆոնդ, N19:

[40] Պետրոսեան, *Գեղամ Տէր Կարապետեան,* էջ 179-83, 269:

նից յոգնած, ընչազուրկ գիւղացին իր բոլոր անյաջողութիւնների ու թշուառութեան, «իրանայ թուրանայ» պատուհասների արմատները փնտռում է «չկատարուած մեղքերի» մէջ. «*Մարտօն կը մտածէր թէ՝ կարելի է որ իւր արտը, եզները, սերմն, արդար ժառանգութիւն մը չէին, անոր համար չէր արդիւնաւորուած իւր դափք ու դատումը*»[41]: Այս սեւեռուն միտքը նրան հանգիստ չի տալիս. «*Տէր Խաչատուրը՝ Աստուած լուսաւորէ վախճանած հոգին - միթէ ամէն տեղ չէ՞ր քարոզեր «արդար վաստակին մէկն հարիւր կը դառնայ», կ'ըսէր մտովի, եւ կոտրուկ սրտով՝ ել, ճանապարհ մը կը փնտռէր*»[42]: Փակուղուց դուրս գալու ճանապարհը հայրենի տունն ու հողը լքելու այլընտրանքն էր: Սակայն պանդխտութիւնը խնդրի լուծում կարող է հանդիսանալ միայն հեքիաթում: Եւ երկի հանգուցալուծումն արդէն տեղի է ունենում հեքիաթային իրականութեան մէջ. օտար ափերում մշակութիւն անող Մարտօն տուն է վերադառնում հարստացած[43]:

Հեքիաթ որակուող «Մէկ ու ճար Շուշիկն» իր կառուցուածքում ներառում է հեքիաթի բաղադրատարրեր, որտեղ զգալի է բանահիւսութիւնից արտածուած հոսքը, սակայն ստեղծագործութիւնը ժանրային խաչաձեւումների արդիւնք է: Այս պատմուածքատիպ հեքիաթում հեղինակը շեղւում է սեռին բնորոշ *սիւժէտ*ային գծից՝ ներկայացնելով մարդկային փոխյարաբերութիւնների իրատեսական պատմութիւն՝ հեքիաթների համար անսովոր վերջաբանով: Գիւղական միջավայրում ծնուած սէրը փորձութեան է ենթարկւում՝ անսպասելիօրէն բացայայտելով Յարոյի իրական զգացմունքներն ու էութիւնը: Թուացեալ սիրահարը անզօր է գտնւում վտանգի առջեւ եւ նախընտրում է չդիմել սիրած աղջկան վիշապից ազատելու անձնազոհութեանը: Երկում յայտնուած վիշապը զուգամիտւում է մահը խորհրդանշող վիշապի բանահիւսական կերպարի հետ, սակայն, տարբերուելով ժողովրդական հեքիաթի կերպարից, կարողանում է իրագործել իր նպատակն ու յափշտակել աղջկան՝ վիշապասպան հերոսի բացակայութեան պայմաններում: Գեղամի իրապատումն անսպասելի աւարտ ունի. Բլեջանի սարսափազդու վիշապը ոչ թէ գիւղացիների վառ երեւակայութեան արգասիքն է, այլ՝ իսկութիւն, որն իր թունալից որջից նշմարում է վառուող կրակն ու կուլ տալիս Շուշիկին[44], հետեւաբար, այստեղ տեղի չի ունենում կուսազրկումի այլաբանական նկարագրութիւնը, այսինքն՝ փեսացուի կողմից սիրեցեալի ազատագրումը[45]:

---

[41] Տէր Կարապետեան, *Տարօնի աշխարհ*, էջ 154:

[42] Նոյն:

[43] Նոյն, էջ 160:

[44] Նշան Պապիկեան, *Տարեցոյց, Գ. տարի*, Յ. Մատթէոսեան հրատ., Կ. Պոլիս, 1907, էջ 117-20:

[45] В. Я. Пропп, *Исторические корни волшебной сказки (Брачная ночь)* (Հրաշապատում հեքիաթի պատմական արմատը (Ամուսանական գիշեր)), Լենինգրադ, ԼՊՀ հրատ., 1946, էջ 303-8:

«Մէկ ու ճար Շուշիկը» թէպէտ հեղինակային հեքիաթ է, որն աչքի է ընկնում տեղագրական տուեալների ու անուանումների որոշակիութեամբ, գիւղական միջավայրի, բնապատկերների նկարագրութեամբ, կերպարների դիմաքանդակներով, սակայն այստեղ էլ առկայ են ժողովրդական հեքիաթներին բնորոշ աւանդական կայուն բանաձեւեր, լեզուադարձուածային կայուն կաղապարներ («ժում-ժամանակ»), ասոյթաբանական սեռերի ինքնատիպ դրսեւորումներ («Աղուէսին քառսուն առակներ կան, բոլորն էլ տանձին վրայ են»[46], «Ուլը կողովի տակ չի մնար, ոչ էլ սէրը՝ սրտանոցին մէջ»[47], «Երբ գողը տնէն ըլլայ եզը երդիքէն կ'ելլայ»)[48], ժողովրդական լեզուամտածողութեանը բնորոշ երդումներ («Թող մէկիկ Աստուածն ու սուրբերն Սիփնայ Պլեճնայ վկայ մնան», «ապրիմ քումն եմ, մնամ հողերուն…»)[49], անէծքներ («Իսկի մուրադ չառնէ քու սիրտը», «քան զԱդամ մերկ, քան զօձն անօթի իյնես», «քու անկողին փուչ, քու բարձն տատաշ եղնի», «կայնիս քու միս թափի, նստիս քու ոսկոր հալի», «իսկի կշտանալիք չունենաս»[50], աղօթքներ՝ «Եաման մուրատատուր Ս. Կարապետ, դու որ ամէն նեղածին կը հասնիս, ընձի էլ հասիր, սիրտս կոտրուկ է, թեւերս թափուկ է …»[51]):

Հեքիաթում տեղ է գտել նաեւ բուլանըխցու ճակատագրապաշտութիւնը. Օր մը, թիզ չափող կին մը, ասեր էր Մանուշին. «Շուշկայ գիրն Յարոյի ճակատն է գրուկ-: Սեւ խապարը միամիտ կնոջը միսն ու ոսկորն էր մտեր: «Ինչ գրուկ է էն կը կատարի.- ու կը մտածէր: Նա կը հաւատար ճակտի գրին, բայց կը հաւատար նաեւ որ թուղթն ու թամասուկն կրնային շրջել ճակտի գիրը, ուստի բոլոր վիճկրարները ալե ալ տուաւ[52]:

Ուշագրաւ է աղուէսի կաշուի վրայ թուղթ գրելու հատուածը. Գեղամը քայլ առ քայլ ներկայացնում է հմայական ծէս՝ թուղթ գրելու գործընթացը, եւ հմայական խօսքեր, որոնք արտաբերում է տիրացու Մկրօն. «*Երկնուց եօթը աստղերով, եօթ դաս հրեշտակներով, ժամի եօթ խորհրդով կապեմ զսէրն Շուշիկին ընդդէմ Յարոյին, բանամ զսիրտ Շուշիկին ի դէմ ծառային Աստուծոյ Գրոյին …որպէս քաղցրացաւ Ադամ ի վերայ Եւայի, քաղցրասցի Շուշիկն ի վերայ Գրոյին…*»[53]: Այսպիսով, Գեղամն իր հեղինակած հեքիաթում անդրադարձել է հայրենի Բուլանըխի գաւառաբարբառում գոյատեւած հնագոյն հաւատալիքների տարբեր արտայայտութիւններին՝ ցանկութեան խօսքերին (հմայական ասոյթներ, անէծքներ, օրհնանքներ ու երդումներ), հեղինակային հեքիաթը վերածելով անէծքի հմայական զօրու-

[46] Պապիկեան, էջ 106:
[47] Նոյն:
[48] Նոյն, էջ 112:
[49] Նոյն, էջ 111:
[50] Նոյն, էջ 119:
[51] Նոյն, էջ 115:
[52] Նոյն, էջ 111-12:
[53] Նոյն:

թիւնը հաւաստող ստեղծագործութեան, քանի որ «արդարացի անէծքն», ըստ ժողովրդական ընկալումների, իրականանում է: Նկատենք, որ անէծքներին, օրհնանք-բարեմաղթութիւններին, երդումներին եւ հմայական աղօթքներին ենթակայ առարկաների վիճակների փոփոխութեան ցանկութիւնը ենթադրում է հաւատ այդ ցանկութեան իրականացման նկատմամբ եւ ինչպէս՝ անիծող, օրհնող, երդուող, աղօթող, այնպէս էլ՝ դրանց ենթակայ անձինք հաւատացել են անէծքի, օրհնանքի, երդման ու հմայական աղօթքի զօրութեանն ու իրագործմանը, որը ծագում է խօսքի հմայական ներգործութեան ենթադրեալ զօրութեան հաւատալիքից[54]:

«Մէկ ու ճար Շուշիկ»ում մշեցի հեղինակը ներկայացնում է նաեւ հմայական առաւել բարդ բանաձեւեր՝ աղօթքներ, որոնց միջոցով հեքիաթային հմայողը ցանկանում է շրջել իրավիճակն ըստ իր ցանկութեան: Հմայական հաւատալիքներից ու արարողութիւններից եւ այդ արարողութիւններն ուղեկցող խօսքի հմայական բանաձեւերից զատ Գեղամը հաղորդում է Բլեջան[55] լեռան, նրա «ամպ-զամպ ու մթնտուն[56]» կատարների շուրջ հիւսուած աւանդութիւններն ու հեքիաթները. գիւղացին հաւատում էր, որ այնտեղ բնակւում են դիւային ուժեր՝ դիւածին այծեր ու վիշապներ, որոնք վայրկենապէս սարերի չափ կարող են մեծանալ, եթէ հրեշտակները ժամանակին հրեղէն շղթաներով չշղթայեն ու չքաշեն նրանց անդունդը՝ արգելակելով աշխարհը կուլ տալու չար միտումը[57]: Ըստ ժողովրդական պատկերացուների՝ «*ինչպէս օձին ջրայինն ու ցամաքայինը կայ, նոյնպէս ալ վիշապին. ուստի կ'ըսեն թէ,*- փոխանցում է Սրուանձտեանցը,- *տեսնուած է երբեմն Վանայ ծովուն մէջէն, երբեմն ալ ամայի լեռներէն վիշապներուն երկինք քաշուիլը*»[58]: Ըստ Գեղամի ներկայացրած վարկածին՝ վիշապը լեռներից է երկինք քաշւում, մինչդեռ, ըստ մէկ այլ վարկածի՝ հսկայ վիշապը Վանայ լճից է երկինք տարւում[59]:

Հեքիաթի դիպաշարային կառուցուածքին են միահիւսուել նաեւ վիշապի կենդանական ծագման մասին ժողովրդական պատկերացումները[60].

---

[54] Սարգիս Յարութիւնեան, *Անէծքի եւ օրհնանքի ժանրը հայ բանահիւսութեան մէջ*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1975, էջ 8, 22-23:

[55] Գտնւում է Բուլանըխում: Գաւառը բաժանում է երկու մասի՝ Վերին եւ Ներքին Բուլանըխներ: Ըստ աւանդութեան, ոմն Բլեջան ժամանակին տիրապետել է այս կողմերում, որի անունով լեռը կոչուել է Բլեջան (Արամ Ղանալանեան, *Աւանդապատում*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1969, էջ 26):

[56] Պապիկեան, էջ 109:

[57] Պապիկեան, էջ 109-10:

[58] Գարեգին Սրուանձտեանց, *Երկեր, հտր. 1*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1978, էջ 69:

[59] Ղանալանեան, էջ 82-83:

[60] Վիշապների երկրածին ծագման մասին տե՛ս՝ Սարգիս Յարութիւնեան, *Հայ առասպելաբանութիւն*, «Համազգային» հրատ., Պէյրութ, 2000, էջ 85-86:

Ի կողերն Պլեճնայ կ'ոստոստէր վերին այծն դիւաձին, որ երբեմն կը ծնէր ուշապներ էլ, ուշապ, որ վայրկեան սարերու չափ կրնար մեծնալ, զոր սակայն հրեշտակներ՝ հրեղէն շղթաներով կապկպած կը քաշէին, կը քշէին դէպ անդունդն, որ չելնէր ու կուլ տար զաշխարհ արարած...:
Շողիկ առասպելը կը յաւելու նաեւ թէ երբեմն տեսնուեր են Պլճնայ ուշապներ, որ օդին մէջ գալար գալար կը տարուէին էն հրեշտակներէն եւ թէ կը լսուէր նոյնիսկ շղթաներու չխըրտոցը[61]:

Այսպիսով, Գեղամն ամէնայն պատասխանատուութեամբ նուիրուեց հեքիաթի մշակման եւ արարման աշխատանքներին՝ ցուցաբերելով նախանիւթի գործածութեան ինքնատիպ մօտեցումներ եւ երբեք անջրպետ ու խզում չառաջացնելով բանահիւսական հեքիաթների եւ դրանց գրաւոր վերապատումների միջեւ:

FOLK ELEMENTS IN THE FAIRY TALES OF MSHO GEGHAM

(Summary)

LUSINE HAYRIYAN (hayriyan.1976@mail.ru)

Not all the fairy tales of Msho Gegham, the western Armenian author, have the characteristic features of fairy tales. Notwithstanding the fact that his tales are not necessarily based on real events, the mixture of the real and fiction featured in these tales conveys such feelings to the reader.

Reading his fairy tales one may encounter folk myths, legends, curses, prayers and traditional rituals in a real setting. Thus the expressions of the late 19th century traditional and folk mindset are intertwined with the human concerns of everyday life of the same period. This combination of the legendary and the real generates the characteristic features of Gegham's fairy tales.

[61] Մէջբերումը՝ Պապիկեան, էջ 108-9:

READING AN ARMENO-TURKISH NOVEL AS ANOTHER PHENOMENON: A NARRATOLOGICAL APPROACH TO *BİR SEFİL ZEVCE* BY HOVSEP MARUŞ (1868)[1]

ARİF TAPAN (arif1tapan@gmail.com)

INTRODUCTION

This paper examines an Armeno-Turkish[2] novel, *Bir Sefil Zevce* (*Պիր Սէֆիլ Զէվճէ* [*A Miserable Wife*]),[3] authored by Hovsep Maruş. It studies the novel as a literary text in itself and analyzes it in view of especially two main narratological elements: narrator[4] and focalization[5], and time and space. Such an analysis may help for a better literary understanding of the novel and for determining its place among 19th C. Armeno-Turkish novels. Besides, this paper may increase awareness and visibility of Armeno-Turkish novels in literary theory studies, since these are, above all, literary texts in their own right.

A reason why this author chose to deal with *Bir Sefil Zevce,* the third published novel of modern[6] Ottoman literature, is that it has not been subjected

---

[1] This article is derived from my unpublished MA thesis, "Reading Armeno-Turkish Novels Narratologically in the Context of the Nineteenth-Century Modern Ottoman Novel: *Akabi Hikyayesi* and *Bir Sefil Zevce*," Istanbul Şehir University, 2018.

[2] Turkish texts written with the Armenian alphabet.

[3] Hovsep Maruş, *Bir Sefil Zevce*, Asitane, H. Mühendisyan Tabhanesi, 1868.

[4] The term "narrator" refers to the narrative voice that does not belong to the author in a story (Mieke Bal, *Narratology: Introduction to the Theory of Narrative*, University of Toronto Press, Toronto, 1997, p. 18).

[5] Focalization is "a term coined by Genette (1972)" as a replacement for 'perspective' and 'point of view'." However, Genette's formulation is slightly different from these traditional concepts (Burkhard Niederhoff, "Focalization", in Peter Hühn et al. (eds.), *The Living Handbook of Narratology*, Hamburg, Hamburg University; http://www.lhn.uni-hamburg.de/article/focalization [view date: 5 June 2020]).

[6] By "modern," I mean the "Western-style" fictional, polyphonic, multi-layered, long literary texts that first emerged after the first half of the nineteenth century in the Ottoman Empire. Turkish literary historiographies point to Şemsettin Sami (Frashëri)'s *Taaşşuk-i Tâl'at ve Fitnat* (1872) and Namik Kemal's *İntibah: Sergüzeşt-i Ali Bey* (1873-76) regarding the first local-modern novels in Ottoman-Turkish. However, some literary texts, which are pre-modern or in which traditionality and modernity are intertwined, should also be taken into consideration regarding the modern Ottoman-Turkish novel, such as *Hançerli Hanim Hikâye-i Garibesi* (1851), Aziz Efendi's *Muhayyelât* (1852), Ahmet Mithat's *Letaif-i Rivayat* (1870-71), or Emin Nihat's *Musameretnâme* (1871-75).

to a purely narratological reading so far, even though it is one of the most-studied texts of 19th C. Armeno-Turkish novels.[7] Another reason is that it has always been assessed in the framework of 19th C. *Tanzimat*-period novels. However, does it have to be read only in its historical, political, and sociological context? How fair is it to assess a literary text only as a tool for the ultimate purposes of its author? Would it not be better to consider such texts *per se* before seeking a secondary and tertiary meaning between the lines of the novels?

SOME PERCEPTIONS OF THE *TANZIMAT* NOVELS

It is not wrong to call 19th C. Ottoman-Turkish novels "*Tanzimat* novels" or "*Tanzimat*-period novels" since the first "modern," "original" Turkish novels appeared during the *Tanzimat* period, which started after 1839. These novels display some similarities, like the prevalence of similar conflicts, the intermingling of author-narrator identities, and are perceived as instruments to educate people. It is not useful, however, to study them with a reductionist approach in the narrow context of similarities and messages. In fact, until recently, most of the studies define modern Ottoman novels as novels written in the Arabic script by Ottoman-Muslims, excluding the texts written in different scripts (Armeno-Turkish, Karamanlidika, Latino, etc.) by non-Muslim Ottoman authors.[8]

Interestingly, the most studied texts in the context of the 19th C. modern Ottoman novel are *Taaşşuk-i Tâl'at ve Fitnat* (1872), *Felâtun Bey ile Râkim Efendi* (1875), *İntibah* (1876), *Cezmi* (1880), *Sergüzeşt* (1888), *Turfanda mi Yoksa Turfa mi?* (1892), *Araba Sevdasi* (1898), and *Udî* (1899). These studies mainly problematize the limits of Westernization, snobbery, East-West conflict, morals, and patriotism. On another note, as already mentioned, studies of Armenian-Ottoman authors and Armeno-Turkish novels are rare. Republican Turkish literary historiography ignored Armeno-Turkish novels and their

---

[7] Erkan Erğinci, "The Other Texts, the Other Women: Turkish Novels in Armenian Scripts and the Image of Women in These Works," MA Thesis, İhsan Doğramaci Bilkent University, 2007; Murat Cankara, "Empire and Novel: Placing Armeno-Turkish Novels in Ottoman Turkish Literary Historiography," Ph.D. Thesis, İhsan Doğramaci Bilkent University, 2011; Cankara, "Türkçe Romanin Emekleme Yillarinda Bir Kadin Kahraman: '*Bir Sefil Zevce*'nin Vartug'u," *Roman Kahramanlari* 19:2014, pp. 6-11.

[8] For instance, Şemsettin Sami (1850-1904), Ahmet Mithat (1844-1912), Namik Kemal (1840-88), Samipaşazade Sezai (1860-1936), Nabizade Nazim (1862-93), Mizanci Mehmet Murat (1854-1917), Recaizade Mahmut Ekrem (1847-1914), and Fatma Aliye (1862-1936) are also studied using such reductionist approaches.

authors, while recent studies have the tendency to "otherize" these novels and authors since they do not address a wide audience in the empire.

This negligence takes on a serious shape when we gauge the mass of the published materials. The earliest known example of Armeno-Turkish books is from 1727. Hasmik A. Stepanyan lists 1856 Armeno-Turkish books and 366 theatrical plays, while 99 printed periodicals and 20 handwritten newspapers and magazines published after 1840.[9] These publications came to light "in nearly fifty different cities around the world and in some 200 different printing houses."[10] "Between 1850 and 1890, about 100 periodicals were published by Armenians, in Istanbul alone. Of these 54 were partly or completely Armeno-Turkish."[11]

List of the first Armeno-Turkish literary books[12]					
Author	Title	Place of Publication	Printing House	Year	# of Pages
Hovsep Vartanyan	*Akabi Hikyayesi*	Istanbul	Hovhannes Mühendisyan	1851	438
	Boşboğaz Bir Adem Lafazanlik ile Husule Gelen Fenaliklerin Mukhtasar Risalesi		Mühendisyan	1852	31
Haçadur Oskanyan	*Veronika Hikayesi*		Noyan Ağavni	1853	32
Hovhannes Balikçiyan	*Karnig, Gülünya ve Dikranin Dehşetlu Vefatleri Hikyayesi*		Harutyun Minasyan	1863	218
Hovsep Maruş	*Bir Sefil Zevce*		Mühendisyan	1868	303

[9] For more detailed information on Armeno-Turkish, see Murat Cankara, "Rethinking Ottoman Cross-Cultural Encounters: Turks and the Armenian Alphabet," *Middle Eastern Studies*, 51/1:2015, pp. 1-16; Cankara, "Armeno-Turkish Writing and the Question of Hybridity," *An Armenian Mediterranean* (Eds.), Kathryn Babayan and Michael Pifer, Palgrave Macmillan, Michigan, 2018, pp. 173-91; Bedross Der Matossian, "The Development of Armeno-Turkish (Hayatar T'rk'eren) Language in the 19th Century: Marking and Crossing Ethno-Religious Boundaries," *Intellectual History of the Islamicate World*, 2019, pp. 1-34.

[10] Hasmik A. Stepanyan, *Ermeni Harfli Türkçe Kitaplar ve Süreli Yayinlar Bibliyografyasi, 1727-1968,* Turkuaz Yayinlari, Istanbul, 2016, pp. 21-22.

[11] Rober Koptaş, "Ermeni Harfleriyle Türkçe," in *Ermeni Harfli Türkçe Metinler Ermeni Kaynaklarindan Tarihe Katkilar – II* (Kevork Pamukciyan), Osman Köker (ed.), Aras Yayincilik, Istanbul, 2002, p. XVIII.

[12] This table is based on the information given in Cebe's chapter on "19th Century Armeno-Turkish 'Modern' 'Original' Works", Ibid.

Viçen Tilkiyan	*Gülünya yahut Kendi Görünmeyerek Herkesi Gören Kiz*		Vezir Han	1868	540
	Mezarlikta Yuvarlanan Eski Kafa		Mühendisyan	1870	20
	Seda-i Nahak				10

One needs to focus on this output and assess its place in 19th C. Ottoman literary production. It is noteworthy that these Armeno-Turkish literary texts were not surveyed or traced only by Armenians. For instance, Ahmet Mithat's novel *Felâtun Bey,* which was published in Turkish with Arabic script, was also published in Armenian script in 1879.[13] His other novel, *Müşâhedât*, published in 1891, indicates that the author was aware of Ottoman Armenian authors, readers and Armeno-Turkish texts.[14] It seems demand for Armeno-Turkish texts was higher than expected among the non-Armenian readership that a booklet, *Method of Reading Armenian in Four Days for Those Who Know Ottoman,*[15] written by Haci Beyzâde Ahmed Muhtar, was published in 1892. Indeed, contrary to what has been claimed, 19th C. Armeno-Turkish texts had a sphere of influence which included not only the Armenian community but also Ottoman-Muslim readers and authors. According to Ayaydin-Cebe, between 1851 and 1893, forty "copyrighted," "modern" Armeno-Turkish literary texts were printed in Istanbul, Izmir (Smyrna), and Aleppo alone,[16] which shows the geographic breadth of these books and that their sphere of influence was not as limited as thought.

One should note that the first modern Turkish novel printed in Arabic script, *Taaşşuk-i Tâl'at ve Fitnat,* was published in 1872 in contrast to the first Armeno-Turkish novel, which was published in 1851.

Generally, Armeno-Turkish texts attracted the interest of the Turkish scholars after 2000.[17] However, some of the studies have a number of

---

[13] M. Orhan Okay, "Felâtun Bey ile Râkim Efendi", *TDV İslam Ansiklopedisi c.12*, Türkiye Diyanet Vakfi Yayinlari, Ankara, 1995, pp. 302-3.

[14] Ahmet Mithat Efendi, *Müşahedat*, ed. Necat Birinci, TDK Yayinlari, Ankara, 2000, pp. 46-7.

[15] Haci Beyzâde Ahmed Muhtar, *Osmanlica Bilenlere Dört Günde Ermenice Okumanin Usuli*, Nişan Berberiyan Matbaasi, Istanbul, 1892.

[16] Günil Özlem Ayaydin Cebe, "19th Century Ottoman Society and Printed Turkish Literature: Interactions, Exchanges, and Diversity", Ph.D. Thesis, İhsan Doğramaci, Bilkent University, 2009, pp. 374-75.

[17] For these studies, see Güzin Gonca Gökalp, "Traditional Elements in Tanzimat Literature (The Analysis of Structure in 19th Century Written Narratives with Special Analysis of the Oral Culture: Theme, Plot, Story, Characters)," Ph.D. Thesis, Hacettepe University, 1999; Selin Tunçboyaci, "19th Century Ottoman Modernization

weaknesses, particularly when they examine Armeno-Turkish texts in the context of the *Tanzimat*-period novel:

a) It is difficult to locate these novels precisely in the set of *Tanzimat* novels. Should these novels be included among the *Tanzimat*-period novels? If yes, is it enough to examine them with the usual framework of forms and themes used for the *Tanzimat*-period novels? Or, does the fact that they originate from a different ethnic group locates them elsewhere?

b) One may assess the studies of these novels in two ways: a) while studied separately, they have been assessed through the prisms of identity and modernization, and have been problematized due to their exclusion by republican Turkish literary historiography and their re-positioning in the context of the *Tanzimat*-period novels. b) On the other hand, when they are studied as *Tanzimat*-period novels, they are presented in a cause-effect relationship as if they were only the manifestation of a purpose, or, again, revolve around certain themes only related to the *Tanzimat*-period novel (e.g. religious conflict, social disintegration, Europeanism, dandyism). In fact, notwithstanding the significant contribution the studies of these novels have made in elaborating them, these studies have considered the novels as merely social and political documents of their times. As will be shown in the following parts of the article, 19th C. Armeno-Turkish novels, on the other hand, are a part of modern Ottoman literature.

Bir Sefil Zevce has been read only in the *Tanzimat*-period novel paradigm. Let us see what it tells us when it is approached narratologically. Will this narratological reading support the present history-oriented analysis of the novel, or will it also show some of the deficiencies in these analyses? Can we say that this novel has all the common features of the *Tanzimat*-period novel,

---

with Respect to the Novels *Akabi Hikayesi, Boşboğaz Bir Adem* and *Temaşa-i Dünya*," MA Thesis, Boğaziçi University, 2001; Erkan Erğinci, "The Other Texts, the Other Women: Turkish Novels in Armenian Scripts and the Image of Women in These Works," MA Thesis, İhsan Doğramaci Bilkent University, 2007; Ayşegül Utku Günaydin, "Public Sphere and Leisure Activities in the Tanzimat Novel," MA Thesis, İhsan Doğramaci Bilkent University, 2007; Şeyda Başli, "From 'National Allegory' to Metaphor of Empire: Multi-layered Narrative Structure in the Ottoman Novel," Ph.D. Thesis, İhsan Doğramaci Bilkent University, 2008; Murat Cankara, "Empire and Novel: Placing Armeno-Turkish Novels in Ottoman Turkish Literary Historiography," Ph.D. Thesis, İhsan Doğramaci Bilkent University, 2011; Ömer Delikgöz, "Identity in Turkish Novels in Turkish and in Armenian Script During the Tanzimat Period," Ph.D. Thesis, Istanbul University, 2016.

or does its particularity put it in another place among the other 19th C. Ottoman novels?

BIR SEFIL ZEVCE

Bir Sefil Zevce was written by Hovsep Maruş and first published in Istanbul in 1868. There is no reliable information about the author. Whatever we know (or what we think we know) about him is based on the fact that he is the author of *Bir Sefil Zevce*. Murat Cankara, one of the earliest scholars in Turkey to study Armeno-Turkish texts, offers no information on Maruş. Naturally we can only make inferences about the author by looking at the text itself. It can be speculated that Maruş was Catholic, knew languages (alongside Armenian and Ottoman Turkish maybe French, Russian, and English), and that "he was familiar with European culture" and open to improvement and modernity.[18]

The characters in *Bir Sefil Zevce* are:

1. Hagop Muhib, Sebuh Muhib, Tereza
2. Irani Melkon Agha, Irani Mardiros Agha, Vartug Dudu (Roz)
3. Hovhannes Bahriyan, Veronika Bahriyan, Hodja Artin
4. Mikayel Agha Krikoryan, Mesrob Agha
5. Armaveni, Diruhi, İsbir, other servants and collaborative persons
6. Sergey Petroviç, Olga İvanovna, Pavlo Andreiç.

Thus, there are six separate sets of characters in the novel, classified according to their families or affinities, social class and living places. In the first set, in the Muhib[19] family, Sebuh is one of the main characters of the novel. In the Irani[20] family Vartug Dudu (Roz),[21] Mardiros Agha's wife, is the main character. In the third set, Hodja Artin is one of the important supporting characters of the novel along with his family. The fourth set includes the arch-

[18] Murat Cankara, "Ermeni Harfleriyle İlk Türkçe Romanlar Üzerine," in *Tanzimat ve Edebiyat Osmanli İstanbulu'nda Modern edebi Kültür*, Mehmet Fatih Uslu, Fatih Altuğ (eds.), İş Bankasi Kültür Yayinlari, Istanbul, 2014, p. 121.

[19] It is originally *Muhibb* and means one who has a conversation or one who is affectionate, a lover.

[20] *Irani* means Iranian. The family is called *Irani* because they came to Istanbul from Iran. Even though the word *Irani* might be translated as Persian, in this context, *Irani* indicates a region.

[21] Her names are both *Vartug* and *Roz*, which no doubt come from the word "rose" and symbolize beauty and purity. Despite these meanings, Vartug turns into *A Miserable Wife* in the title of the novel. While she gets the Armenian name *Vartug*, after she comes to Istanbul, *Roz* is the name given by her stepfather.

villain of the novel, Mardiros Agha's collaborator and friend, Mikayel Agha.[22] The employees, servants, and others, who belong to the lower class of society and who take care of the main characters' dealings, are in the fifth set. The last set, includes Vartug Dudu's family and her close friends, who are from St. Petersburg.

Vartug, the daughter of an Istanbul-Armenian family, disappears in a boat accident when she is three years old. She is rescued by a ship heading for Crimea and is adopted by Sergey Petroviç. After growing up, she returns to Istanbul and marries an Armenian moneychanger, Mardiros Agha. Mardiros has a gambling habit, his business fails, and gradually he loses his wealth and owes money to the state. He asks one of his friends, Mikayel Agha, for help. The latter had proposed to Vartug Dudu prior to her marriage to Mardiros. But since Mikayel did not have a good reputation, he was refused. Now, Mikayel conspires with Mardiros, and both try to seize the wealth she has inherited from her stepfather, Petroviç. In this manner, Mikayel aims to take revenge on Vartug as she had previously refused his proposal. Meanwhile, Vartug meets Sebuh Muhib, who had seen her at the opera and had fallen in love at first sight. Sebuh is a well-educated, wealthy, and reputable businessman who has newly returned to Istanbul. Vartug reciprocates Sebuh's love and becomes pregnant. Mikayel, who knows that Vartug is pregnant by Sebuh, with Mardiros' help succeeds in abducting Vartug, and scheme to legally acquire Vartug's fortune. They plan to gain the right to inherit the fortune and, after the birth, get rid of both Vartug and the baby. Sebuh, who somehow learns Vartug's whereabouts, succeeds in saving her. But after the childbirth Vartug dies. Before her death, however, it is disclosed that she is the sister of Hodja Artin, one of Sebuh's most loyal assistants. Veronika, who finds and loses her daughter Vartug, after twenty-three years, loses her mind and dies a year later. Sebuh, with his newborn daughter and servants, leaves for St. Petersburg.

DOES THIS SOUND COMMON TO OTTOMAN NOVELS OR NOT?

In order to make a narrator analysis of *Bir Sefil Zevce*, Wolf Schmid's narrator categorizations and criteria are used to reveal the narrator profile of the novel.[23] I will start by trying to reveal the narrator profile of *Bir Sefil Zevce*:

---

[22] The Armenian word *Krikoryan* comes from the Late Greek name *Grēgorios,* which means "watchful" and "alert." It is not a coincidence that the "bad" character of the novel is given this name.

[23] Wolf Schmid, *Narratology: An Introduction*, trans., Alexander Starritt, De Gruyter, Berlin, 2010, pp. 66-67.

Criteria	Narrator Type in *Bir Sefil Zevce*
Diegetic status	Non-diegetic
Hierarchy	Primary
Degree of markedness	Marked
Evaluative position	Subjective
Ability	Omniscient
Spatial fixing	Omnipresent
Access to characters' consciousness	Expressed

The novel consists of a three-part preface (*Evveli Kelam*), thirty-two separate main chapters, and a closing chapter (*Son Kelam*). Throughout these chapters, we are met by a single narrator, who is not involved in the story. Thus, the novel has one *primary* and *non-diegetic* narrator,[24] as he is the only one "narrating exclusively about other people."[25] Because the narrator is non-diegetic, the narration can already belong solely to the level of *exegesis*, but not *diegesis*.[26] This narrator can also be called *extradiegetic*, to use Gérard Genette's terminology.[27]

Concerning the degree of markedness of the narrator, one may check whether the narrator's presence is clear enough throughout the text, where and how he shows himself and whether he[28] merely tells the story or does more than that.[29]

Obviously, the narrator in this text is *marked*, but not *strongly marked*.[30] Throughout the novel the narrator speaks of himself as "we/us". This "we/us" voice is heard in particular when the narrator intervenes in the narration or for the addressee. Unlike several other *Tanzimat*-period novels, the narrator of this novel does not include the addressee in the narration process. The fact that he is well aware of himself being the only narrator underlines the degree

---

[24] While a *diegetic* narrator "narrates about himself," a *non-diegetic* narrator narrates "about other people" in a story. In classical terminology, this distinction is also known as "first-person narrator" and "third-person narrator." Ibid., p. 68.

[25] Ibid.

[26] In this context, the *exegesis* corresponds to "the narration" itself, and the *diegesis* corresponds to "the narrated story." Ibid., pp. 68-69.

[27] Gérard Genette, *Narrative Discourse: An Essay in Method*, trans., Jane E. Lewin, Cornell University Press, New York, 1983, pp. 227-28.

[28] I call the primary narrator of *Bir Sefil Zevce* "he" for two reasons: a) the primary narrator has an author-narrator profile throughout most of the novel, b) the primary narrator does not have a "female narrator call" anywhere in the novel.

[29] Schmid, pp. 61-4.

[30] Ibid.

of his markedness: "*Our basic intention is only to narrate the incident, and we hope that we will not be obliged to suppose which side is righteous.*"[31] Indeed, the narrator emerges and becomes marked wherever his voice is heard throughout the text.

Another evidence of markedness is that at certain points the narrator stops the flow of the story and speaks directly to the *reader*, not to the *presumed addressee* (interlocutor).[32] At these points, it is clear that the narrator is replaced by the author, Hovsep Maruş, as we cross from the *narrated world* to the *represented world*.[33] In fact, both the narrator, the presumed addressee, and the act of narration are represented fictional elements in a fictional narrative.

In order to distinguish between the narrator and the author, we should look at the text and see whether he states "me as author;" otherwise we should infer it. However, to be on the safe side, we may claim that whenever the author is talking the narrator is present too.

The narrator distinguishes himself from the author in two significant ways: a) by *providing direct information*, b) through the *narrator's subjectivity*.[34]

> Although we take our friend readers from one house to another, we hope that if they first trust what we are saying, and secondly then if we have no doubt that they wish to deeply understand this story, because their participation is so important here, we would keep visiting other houses by leaving the child's enemies where they are … Since incidents related to the infant in the cradle happened in that house, we should be present at the place.[35]

This quote is a good example of how the narrator first determines his and the other side's (the reader/addressee) positions in the initial sentence. With this mode of address the narrator tries to justify his act of narration to make the novel more plausible for the readers. Hence, the information presented belongs to the narrated world. There are other examples, which provide direct information about the presented world:

> There were not many people who knew European languages in this century. Reading and writing Armenian was considered sufficient, with a basic [knowledge of] numbers' background and without a complete education. And if one would read and write Ottoman language, he would been considered completely educated.

---

[31] Maruş, p. 27. All translations from the novel are mine.

[32] For the difference between these two concepts see Schmid, pp. 51-88.

[33] Schmid, pp. 32-5.

[34] This situation not only pertains to 19th century Armeno-Turkish novels, but also to 19th century Ottoman literature in general.

[35] Maruş, p. 8.

But, how much time would be lost by a student for so little education.
First *Keragan*,[36] then *Hencharan*, followed by *Sağmos*[37] and then *Avedaran*,[38] all of these were for the purpose of learning Armenian and would take at least four or five, sometimes six years.[39]
Some sayings, which are called old-wives' tales, are not total nonsense. They say the destiny decides about marriage. In fact, sometimes contrary examples of marriages unlike what is expected may happen, and many were such [cases] at the time of this story.[40]
Even if dancing seems to be meaningless in appearance, after giving a good thought, it is understood why the creator's ideas is not nonsense. Because it helps both women and men to show their conditions with grace, it also causes people to stay away from anxieties, at least for a period of time.[41]

This information about the represented world belongs to the author and is not included in the story itself, yet it shows the presence of the narrator.

One of the ways the narrator reveals himself is through statements he makes throughout the text, giving direct information, mostly about situations, human relations, human nature, and psychology:

Many people think that, in general, if there is a disagreement between husband and wife, the fault is caused by the wife; however, when carefully and objectively considered, actually it is the husbands who are at fault. [42]
Undoubtedly it is obvious that if one suddenly sorts out a difficult situation despite no hope existing to make it happen, [he] will be grateful to whoever bestows that favor, in case [he] is not completely ungrateful.[43]
In addition to its several virtues, affection also provides (enables – A.T.) mastering eloquence. If an awful situation exists between the lovers, it is resolved immediately. Because the language of the heart acts to show the true path, and as lovers talk only this language, they do not have any difficulty silencing each other.[44]
Human nature is very strange. If someone resides in a place for a long time, gradually [he] forgets about the city he was born, and becomes familiar with the place, and is determined to settle there.[45]

---

[36] *Keragan* (Քերական) is Armenian primer.
[37] *Sağmos* (Սաղմոս) is Psalm.
[38] *Avedaran* (Աւետարան) is the New Testament.
[39] Maruş, pp. 56-7.
[40] Ibid., p. 60.
[41] Ibid., p. 104.
[42] Ibid., pp. 63-4.
[43] Ibid., p. 112.
[44] Ibid, p. 244.
[45] Ibid., p. 144.

While providing direct information from those worlds and through different narrative perspectives, sometimes the author jumps out of the story, and offers, for instance, footnotes! He deems it necessary to explain, define and describe some terms, foreign words, and places.[46]

The need for such extra explanations is answered by a footnote from the novel: "*Since we think that some of our friends reading [this] may not have any information [about the subject], we notify [them]...*"[47] Thus, we are told that the presence of this extra information is for a very pragmatic reason (though it violates the narratological norm). Usually it is the author who interferes during the narrator's narration and provides extra information, thus suddenly shifting the level of narration from the narrated world to the represented world.[48]

As already mentioned, the first thing that indicates the degree of markedness of the narrator who has the "we/us" voice is the provision of direct information. This provision, carried out for different purposes and through different narratological methods, levels and diegetic statuses makes the text richer and multilayered in terms of narratology. This in turn suggests a more careful look at the questions to be asked about the novel.

The fact that the narrator presents himself to the addressee as if he is not included in the narrative construction process is evidence that he is not strongly marked in the novel. However, the fact that he pretends he only narrates his story, and nothing more, is directly related to the narrator's evaluative position: "*Our basic intention is only to narrate the incident, and we hope that we will not be obliged to suppose which side is righteous.*"[49] Although the narrator explicitly states his job, there is no doubt that he is also *subjective*, as, throughout the text, he tries to justify each of his actions and treats every situation in a causal relation.

---

[46] For examples of these footnotes and explanations, see Ibid., pp. 9, 13, 31, 100, 128, 129, 162, 185, 244, 291.

[47] Maruş, p. 291.

[48] Schmid, p. 35. "Accordingly, Schmid distinguishes between the 'concrete author,' who creates the literary narrative work for the 'concrete reader(s),' the 'abstract author,' (more commonly called the 'implied author'), who creates the 'represented world' for the 'abstract reader(s),' the 'fictive narrator,' who creates the 'narrated world,' for the 'fictive reader(s),' and the characters in the 'narrated world,' who can communicate narratively as well, creating merely 'quoted worlds' (Schmid, pp. 34-88)" (quoted from Jan-Noël Thon, *Transmedial Narratology and Contemporary Media Culture*, University of Nebraska Press, Lincoln and London, 2016, p. 125).

[49] See note 31.

We witness the conflict between the Catholic and Orthodox denominations of Istanbul Armenians in Hovsep Vartanyan's *Akabi Hikyayesi,* the first Armeno-Turkish novel, published in Istanbul in 1851. However, this intra-Armenian conflict is transformed into an intra-Catholic conflict in *Bir Sefil Zevce*.[50]

> This intra-Catholic conflict spilled over into the Catholic Armenian public. Students taught in the schools of the Mekhitarist congregation reacted strongly against Hasunyan. Mgrdich Beshigtashlian, S. Hekimyan, and G. Karakash established the *Hamazkyats Engerutyün*[51] in 1846 with the aim of raising the educational level of the community through schools and strengthening the community's relations with Europe.[52]

Both the author and the narrator of the novel are on the side of the *Hamazkyats*:

> At the time this story [is being] narrated it was common knowledge to everybody that there had been great enmity among Armenian Catholics; that is, the Catholic community had been divided into two parts. And this schism was caused by an association named *Hamazkyats Engerutyün*, which essentially aimed at building a school for girls and making an effort to promote knowledge. However, the majority opposed this association, arguing that there were other reasons behind the founding of this association.
>
> ...As we related earlier, people often appeared to have quarrels. In many houses fathers and sons, wives and husbands, and sisters and brothers looked at each other

---

[50] In this context, apart from being Armeno-Turkish novels, one of the first resemblances between *Akabi Hikyayesi* and *Bir Sefil Zevce* is the existence of a division based on an understanding of religion in the text. *Akabi Hikyayesi* is built on a conflict based entirely on the understanding of religion, and this novel is completely roman à thèse. It shouts at us a suggestion, another option, a different way and promises us that another world is possible. In this context, it is not wrong to claim that *Akabi Hikyayesi* is highly reformist in terms of the period it was published and the milieu it addressed since it emphasizes the needlessness of the separation between the Catholic and Orthodox Armenians and suggests a secular, progressive Armenian society. This situation also answers the question why *Akabi Hikyayesi* was published without an author name, anonymously and why after a little, it was banned and confiscated. It was "reported by Cardinal Andon Hasunyan and forbidden by the Vatican Inquisition on the grounds that it was contrary to Catholic belief" (quoted from Suren Shdigyan, by Murat Cankara, "Hovsep Vartanyan'a ve Boşboğazliğa Dair," *Boşboğaz Bir Âdem*, Koç Üniversitesi Yayinlari, Istanbul, 2017, pp. 10-11).

[51] *Hamazkyats Engerutyün* means in Armenian "Pan-National Association."

[52] "According to Kevork Pamukciyan, the writer of *Akabi Hikyayesi*, Hovsep Vartanyan, is also among the founders of this association." From Pamukciyan, Cankara, "Empire and," pp. 341-42.

with long faces. Even in trade, both parties hesitated to deal unless it was necessary. This fact was considered a priority in marriage relations.[53]

In the passages above, the narrator clearly states that the dissension among the Catholic Armenians due to the *Hamazkyats* association created divisions within the community. Despite all the significance of the matter, the narrator does not offer a solution to the crisis, though some implications make us feel that the narrator/the author criticizes this division and tries to seem as neutral as possible. He never states that he is *anti* or *pro-Hamazkyats* even if we may guess which side he is on.

> We should first state [here] that Sebuh's nice behavior was not because of his acquaintance. Likewise, on our behalf, [we should say that by telling this] we also did not aim at ill-treating the members of the *Hamazkyats* association.[54]

The narrator clearly states that his intention is simply to narrate the story, and nothing more. Besides, it is only reasonable for the author not to create a narrator who is biased, bearing in mind the ban imposed on *Akabi Hikyayesi*.[55] Therefore, it is highly unlikely that *Bir Sefil Zevce* is a *roman à thèse*.

Notwithstanding the explicit statement of the narrator, the latter is highly subjective due to the conflict between *anti-* and *pro-Hamazkyats* groups as this intra-communal conflict overlaps with the basic conflict between the characters of the novel, even though the novel does not revolve around it.

The conflict between the main characters of the novel is displayed through good and evil personalities. While Sebuh, Vartug and those on their side are the good, Mardiros, Mikayel and their collaborators are represented as villains. The narrator's subjectivity is obvious from the contrast he makes: "*Whoever saw Muhib Bey and Vartug Dudu, would clearly see how much God the Almighty is great and perfect, because both were perfect – one more than the other - without any deficiency.*"[56] Both are depicted as "perfect" and "flawless" figures. Sebuh has studied in Europe and Vartug in Russia. Both are educated, multilingual, honorable, and are loved by people. According to the narrator, one has to be born "evil" in order not to love these two characters. On the other hand, Mardiros and Mikayel are portrayed as extremely "vile,"

---

[53] Maruş, pp. 27-8.

[54] Ibid., pp. 31-32.

[55] See footnote 50. There may be those who oppose this because the author's name is explicitly on the novel. However, "Hovsep Maruş" might be a pseudonym, since we still do not have any confirmed knowledge about the author.

[56] Maruş, p. 104.

"dishonest," "cowardly," and "evil" figures. The narrator explains why these two characters are "bad", and act together:

> (...) Because perpetrators of evil bond together to realize their wicked thought, and Irani, besides his meanness, was a coward and was afraid of Krikoryan.[57]
> As we know Mardiros Agha was both a coward and a villain...[58]
> These two, namely, Irani and Krikoryan, were expelled from God's gate and [had] surrendered to Evil ...[59]

What makes Mardiros and Mikayel evil is not them being against *Hamazkyats*, but that they are inherently evil: "*Just as mean tempered people burst with anger when their guilt became vivid, İrani's anger exploded excessively...*"[60] The fact that the narrator presents the evil characters as inherently evil makes him more "objective" (even if he is not) and the story more convincing. Obviously, however, the narrator is on the side of the good ones and, thus, highly subjective.

As already mentioned, there is a parallelism between the conflict based on *Hamazkyats* and the conflict based on the characters. While those who oppose *Hamazkyats* are "bad" characters in the novel, those who support it are "good" (Sebuh is a member of *Hamazkyats).* However, there is not enough information in the text to infer that all good characters of the novel support *Hamazkyats* and vice versa.

> We will better know the aforementioned young man later, but for now we inform the following about him that he had come to Istanbul a short time before and he went to the meeting with his friends just for their sakes even though he did not know much about the matter.[61]

It is not expected that Sebuh, who was born and raised in Peru and came to Istanbul in his twenties after studying in Britain and France, will turn into an ardent fan as soon as he comes to the city. We cannot read every situation in the novel through the *Hamazkyats* dissension,[62] as Sebuh participates in the meetings only at his friend's insistence.

Alongside the fact that the narrator is quite subjective, his *omniscience* and *omnipresence* enable us to reveal the narrator typology of *Bir Sefil Zevce*.

---

[57] Ibid., pp. 257-58.
[58] Ibid., p. 125.
[59] Ibid., p. 252.
[60] Ibid., p. 116.
[61] Ibid., p. 29.
[62] According to Cankara, "*the 'bad' characters are anti-Hamazkyats and the 'good' characters are pro-Hamazkyats in the novel.*" But, as stated above, we do not have enough information to make such an inference (Cankara, "Empire and," p. 343).

A NARRATIVE STRUCTURE FROM SINGULARITY TO PLURALISM

In this part of the paper, I will try to reveal the focalization model and the time and space structure of the novel by using Shlomith Rimmon-Kenan's model.[63]

The Perceptual Facet	The Psychological Facet	The Ideological Facet
Temporal Focalization External: Panchronic Retrospective Internal: Synchronous	The Cognitive Component External: Omniscience Internal: Limitedness	Narrator-focalizer's ideology
Spatial Focalization External: Panoramic view Simultaneous Internal: Limited observation	The Emotive Component External: Objectivity Internal: Subjectivity	Other ideologies

I would like to begin with the perceptual aspect by addressing the temporal focalization process of the novel. While external temporal focalization is related to a primary non-diegetic narrator who has knowledge of all temporal dimensions, internal temporal focalization is related to a narrator who has temporal knowledge only of the present or of the characters within the text.[64] Indeed, the temporal knowledge of the narrator in the novel is externally *retrospective* since he does not have "at his disposal all the temporal dimensions of the story."[65] He starts to narrate his story from the present, and through flashbacks to the 1810s and 1820s we are able to see what happened in the past. However, his flow of time is not chronological; the narrator makes chronological mistakes.

The narrator's main story begins with: "*Three years before the Orient [Crimean] War, during the reign of Sultan Abdülmecid Han, one night in Naum's theatre, an announcement stated that La Straniera would be staged.*"[66] The Crimean War was fought from 1853 to 1856, and "three years before the Crimean War" means that we are in 1850 (narrative tense), taking into account the date of the beginning of the war. But Cankara, citing Emre Araci's statement notes that the Italian opera composer Vincenzo Bellini's *La Straniera* was performed at Naum Theater in the 1852-1853 season in Istanbul. Accordingly,

[63] Shlomith Rimmon-Kenan, *Narrative Fiction: Contemporary Poetics*, Routledge, New York, 2002, pp. 73-87.
[64] Ibid., pp. 79-81.
[65] Ibid., p. 80.
[66] Maruş, pp. 20-21.

the events in the novel should start from 1852 or 1853.[67] In fact, chronological problems in the novel begin at this point. Had the novel begun in 1852 or 1853, we would have been far beyond the date stated at the end of the novel, which is January 24, 1852. Therefore the events of the novel should have started before 1852. However, if this conforms with the statement "three years before the Crimean War" it is incompatible with the staging date of *La Straniera*.[68] There are mistakes too in the chronological flow of time. The narrator narrates the story with ambiguous datings such as "three or four months later," "soon after," "for a space," and "within a few years." Even when he gives exact dates, such as "three months later," "the day after," or "next week," he cannot follow the chronological progress economically. Thus, there are other temporal problems and mistakes from 1850 to 1852.

Indeed, the external narrator-focalizer of *Bir Sefil Zevce* has *unreliable*[69] retrospective temporal knowledge. The limited temporal knowledge of character-focalizers, on the other hand, is *synchronous*, as they transmit only the temporal knowledge of the moment they are in.

While the external narrator-focalizer uses *panoramic view* focalization (spatial focalization), more often he shows us the scenes *simultaneously*. In line with the definition of panoramic focalization, the narrator-focalizer presents panoramic views at the opening and closing scenes of the novel, and at the beginning of certain sections, espeacially in the flashback scenes.[70]

> (...) even child's hostiles were wake and came close to the doorstep. At the same time, in a house a block away two men were having the following conversation.[71]
>
> Although we take our friend readers from one house to another, we hope that if they first trust what we are saying, and secondly then if we have no doubt that they wish to deeply understand this story, because their participation is so important here, we would keep visiting other houses by leaving the child's enemies where they are ...

---

[67] From Emre Araci (Cankara, "Empire and", p. 343.)

[68] On the other hand, it should not be forgotten that the author-narrator does not have to be faithful to any historical truth in a fictional narrative.

[69] "The, not entirely clear, concept of the 'unreliable narrator' was created by W. C. Booth (1961). According to his definition, we are dealing with an unreliable narrator when the norms of the narrator and of the implied author do not coincide." Schmid, p. 60.

[70] "This is the classical position of a narrator- focalizer, yielding either a panoramic view or a 'simultaneous' focalization of things 'happening' in different places. Panoramic views are frequent in the beginning or end of a narrative or of one of its scenes (Uspensky 1973, p. 64)." Rimmon-Kenan, p. 79.

[71] Maruş, p. 5.

> Since incidents related to the infant in the cradle happened in that house, we should be present at the place.[72]

In this excerpt, the external narrator-focalizer allows his addressees to accompany him everywhere by making instant moves between different places and scenes.

As the last point of the perceptual facet, I would also like to give an example of internally limited observation from the text. Internally spatial focalization belongs to the character-focalizers, and their knowledge comes from each character's limited visual-spatial ability.[73] We can see in the example below a limited observation-based focalization; the narrator tells us what the characters see and know about what is in Sebuh's secret mansion:

> Those who saw him leaving late at night waited till the morning, they thought he had been crying when they looked at his eyes, but others saw him several times leaving the house in a cheerful mood, although they were in two minds. The villagers' hearsay was divided in two.
>
> Some said there was a treasury room, because the door was so reinforced and the windows had bars, supposedly he was afraid thieves. Besides if there was no money inside, then why was he afraid of them? In addition, he had supposedly been going there to count the money.
>
> It seemed that some have paid attention to the mansion at the time of construction, and as they remembered, there were a few stoves, so they assumed the building was a kind of factory or workshop. In short everyone interpreted this fact differently.[74]

The external narrator-focalizer narrates what others think about Sebuh's villa through their eyes. Even though the narrator is omniscient and knows what is inside Sebuh's villa, he makes this observation internally limited as he narrates this information through the characters' eyes.

As for the psychological facet of focalization, we need to examine both the narrator's and the characters' knowledge cognitively.[75] We have already stated that the external narrator of *Bir Sefil Zevce* is omniscient. He is able to access the characters' minds and their past and to know exactly what they feel.[76]

---

[72] See note 35.

[73] Rimmon-Kenan, *Narrative Fiction*, p. 80.

[74] Maruş, pp. 148-49.

[75] Rimmon-Kenan, pp. 81-2.

[76] The fact that the narrator has retrospective temporal knowledge should not be attributed to his omniscience. The narrator provides knowledge only of the present and past, but being omniscient he does not base this knowledge solely on temporal knowledge competence.

Although this fact is clear enough in the text, the narrator sometimes acts as if he does not know everything:

> Those who get married become lucky. We are not sure how true is this saying.[77]
> But we cannot prove if Vartug Dudu's heart was filled with gratitude when she realized that Muhib Bey had not forgotten her again this time.[78]
> Eventhough we do not know after that moment how the lovers spent their time, we are at least sure of the fact that any sorrow or grief was far away from them.[79]

We can explain these examples in two different ways: an intentional "digression strategy,"[80] and "rhetorical considerations."[81] In order to make his story more interesting and convincing, the narrator tries to direct his addressees and to attract their attention. A second explanation about the narrator's "act as if" attitude is that it is a mode of self-control. Sometimes he prefers to mention things that he does not consider appropriate to tell us by using other words, or simply he does not present any information about these "inappropriate" things by saying that he has no idea about them. In the third quotation above, one can see that the narrator chooses not to talk about the night Vartug and Sebuh make love and Vartug gets pregnant. The reason why the narrator needs to develop such a self-control mechanism, may be explained by the author's ideological and religious stance, or as the result of a basic socio-cultural concern.

Alongside the characters' internal focalizations, one may repeat that the competence of the character-focalizers based on the cognitive component is not unrestricted since s/he "*is restricted by definition: being a part of the represented world, s/he cannot know everything.*"[82] The information in the text

---

[77] Maruş, p. 56.

[78] Ibid., p. 180.

[79] Ibid., p. 228.

[80] "A digressive and multiple narration, one that is 'dispersed into many trickles', is a strategy deliberately adopted by the narrator in order to preserve the narrative possibilities at his disposal...By avoiding a focus on a single story, the narrator has the advantage not only of handling the story with more detachment but also of not exhausting its potentiality... Through digression the novel recharges itself and becomes a 'machine for multiplying narratives'" (Olivia Santovetti, "Straight Line or Aimless Wandering? Italo Calvino's Way to Digression," *Digressions in European Literature: From Cervantes to Sebald*, Alexis Grohmann and Caragh Wells (eds.), Palgrave Macmillan, New York, 2011, p. 173; Italo Calvino, *Six Memos for the Next Millennium*, Harvard University Press, Cambridge, MA, 1988, p. 120).

[81] Rimmon-Kenan, p. 81.

[82] Ibid.

conveyed by the characters and the actions and words of the characters in the text are all examples of this limited internal focalization.

The narratological problem for the emotive component of the psychological facet encountered in *Bir Sefil Zevce* is the following: While the narrator with an external focalization position throughout the text is expected to be objective and "uninvolved," the narrator of *Bir Sefil Zevce* is quite subjective and "colored."[83] It is obvious that the narrator is on the side of the "good" characters of the novel, although his explicit statement of "neutral"ity.[84] There are other issues that the narrator refers to in the love story. He criticizes the intra-Catholic division, the education system, the ways that parents give away their daughters in marriage, and "bad" habits such as gambling.[85] These might be seen as necessary indicators for an intervening narrator. We need to see how and why this intervention emerges.

The second element of the emotive component, the subjectivity based on the internal character focalizations, originates in the basic conflict between the "good" and "bad" characters of the novel. While Vartug and Sebuh see each other "*come un'angelo celeste*,"[86] they are an enemy to be eliminated for Mardiros and Mikayel. It is not expected that these characters should be neutral, since there is a conflict between the characters in the text. Since the emotive component is directly related to the focalizer's mind and his or her emotions and reactions, the more focalizers there are in the text, the more minds and represented worlds there exist. Hence, we see each character, especially the main ones, as coloured, subjective elements of different represented worlds.

The last facet of the focalization model I use here is the ideological facet, and before finishing analysis of the focalization structure of *Bir Sefil Zevce* we need to consider "the norms" of the text. At this point, it is useful to consider how Rimmon-Kenan describes the ideological facet by referring to Uspensky:

> This facet, often referred to as 'the norms of the text', consists of 'a general system of viewing the world conceptually', in accordance with which the events and characters of the story are evaluated... In the simplest case, the 'norms' are presented through a single dominant perspective, that of the narrator focalizer. If additional ideologies emerge in such texts, they become subordinate to the dominant focalizer, thus transforming the other evaluating subjects into objects of evaluation.[87]

---

[83] Ibid., 82.

[84] Maruş, p. 27.

[85] Ibid., pp. 56-7; 60-1; 65-7, 136-37.

[86] Means "like a celestial angel", Ibid., p. 24.

[87] Rimmon-Kenan, pp. 83-84.

We may claim that there is dominance of a narrator-focalizer in this novel. This dominance does not mean drubbing an idea into the characters, the addressees, or even the readers. The narrator-focalizer does not try to transform the community. He does not offer "a dream world." He is simply uncomfortable with the religious divisions in the community. But he allows us merely to feel this discomfort and does not go beyond that.

Even when he explicitly criticizes issues, he does not provide solutions or remedies. He tries not to cross the borders thanks to his own self-control, as he has set himself a boundary, and always tries to stay within that boundary. This attitude of the narrator, as mentioned earlier, may be explained by the likelihood that he was aware of what happened after *Akabi Hikyayesi* was published. He may be trying not to seem overly "reformist" or "marginal." Throughout the novel one barely sees the domination of the narrator-focalizer's ideology. Nonetheless, the narrator tries to legitimize the "forbidden" love of Vartug, a married woman, and Sebuh: they secretly meet and talk, Vartug cheats on her husband and gets pregnant. Interestingly, however, the narrator does his best to show that this relationship is inevitable.

CONCLUSION

Bir Sefil Zevce does not have a happy ending. Vartug and her mother Veronika die, Sebuh is left alone with his newborn daughter and leaves for St. Petersburg, while Mardiros and Mikayel do not attain their goal. In other words, at the end of the novel there are no winners, everybody loses. The reason for such an ending can be explained by the paradigm of the 19th C. modern Ottoman romance.

The novel is partly a *Tanzimat*-period novel and has common features with novels published in Istanbul in the same century, and at the same time it is an example of the modern Ottoman novel. However, the novel should not be assessed solely through these standpoints. Unlike previous studies of the novel, this study argues that there is a need to consider its narratological analysis in order to reveal its narrative structure as a literary text.

ՅՈՎՍԷՓ ՄԱՐՈՒՇԻ ՀԱՅԱՏԱՌ ԹՐՔԵՐԷՆ *ՊԻՐ ՍԷՖԻԼ ՋԷՎՃԷ* (1868) ՎԷՊԸ՝ ՊԱՏՄՈՂԱԿԱՆ ՄՕՏԵՑՈՒՄՈՎ

(Ամփոփում)

ԱՐԻՖ ԹԱՓԱՆ (arif1tapan@gmail.com)

Ընդհանրապէս օսմանեան վէպի ուսումնասէրներ կը կեդրոնանան ատենի թրքատառ վէպերուն վրայ, անտեսելով յոյն, հայ եւ այլ փոքրամասնութիւններու հեղինակներու կողմէ գրուած թրքերէն վէպերը:

Յովսէփ Մարուշի *Պիր Սէֆիլ Ջէվճէ* հայատառ թրքերէն վէպը հրատարակուած է Կ. Պոլիս, 1868ին եւ չէ արժանացած համապատասխան հետազօտութեան: Ուսումնասիրութեան մէջ հեղինակը երկին կը մօտենայ պատմողական ելակէտերէ, կը քննարկէ պատմողները, լուսարձակի տակ կ'առնէ դիպաշարին դէպքերը, ժամանակը եւ տարածութիւնը:

Այս իւրօրինակ մօտեցումով յօդուածագիրը կը ջանայ ամբողջացնել գրավերլուծական մօտեցման բացը եւ այլ մեկնաբանութիւն տալ երկին, եզրակացնելով որ կարելի չէ զայն դիտել լոկ իբրեւ ԺԹ. դարու օսմանեան վէպ: Միաժամանակ, հեղինակը կը կարեւորէ ԺԹ. դարու հայատառ թրքերէն վէպերուն ընդգրկումը օսմանեան վէպի ուսումնասիրութեան ընդհանուր տեսադաշտ:

ԳՈՅԱԿԱՆՆԵՐՈՒ ՅՈԳՆԱԿԻՆ[1]
(ՅՈԳՆԱԿԵՐՏՈՒՄ)

ԱՐՄԵՆԱԿ ԵՂԻԱՅԵԱՆ (armenag@gmail.com)

ՄՈՒՏՔ

Արեւմտահայ լեզուաբանութեան մէջ յոգնակերտումը գրեթէ անտեսուած մարզ է կամ ալ կը գտնուի շատ նախնական շրջագիծի մը մէջ. մեր առաջին ձեռնարկներուն մէջ՝ 19-րդ դարու կէսերուն, կը յիշուին յոգնակերտումի երկու բոլորովին մեքենական պարագաներ միայն՝ միավանկ բառերու **եր**-ով, իսկ բազմավանկ բառերու **ներ**-ով կազմութիւնը՝ առանց ներքին տարբերակումներու:

Դարավերջին հետզհետէ զգալի կը դառնան լեզուական այլ պահանջներ, որոնք կը բխին բաղադրեալ բառերու ներքին կառոյցի թելադրանքով. արեւմտահայ հեղինակներ կը զանազանեն մասնաւորաբար բարդ բառերու երկու հիմնական տեսակներ՝ միավանկ վերջաբաղադրիչով օժտուածները եւ բազմավանկ վերջաբաղադրիչով կազմուածները:

Զուգահեռաբար արեւելահայ հեղինակներու, որոնք շատ բաներով կը կանխէին արեւմտահայ քերականները, եւ օգտուելով անոնց գործերէն, ուշադրութեան առարկայ դարձաւ նաեւ միավանկ վերջաբաղադրիչին բնոյթը, իմա՝ **առարկայանիշ** եւ **դերբայանիշ** (բայական) արմատներ, որոնց իւրաքանչիւրը ունէր յոգնակերտումի իր իւրայատկութիւնը:

Վերահաս Եղեռնը առիթ չտուաւ, որ այս բոլորը բիւրեղանային, համադրուէին, կանոնակարգուէին ու ընդհանրանային:

Այս աշխատութիւնը այդ մեծ բացը դարմանելու ճիգերէն մէկն է:

Այնքան միամիտ չենք, որ յաւակնինք, թէ մէկ օրէն միւսը պիտի սրբագրուին բոլոր թերիները, վերնան երկւութիւնները եւ ունենանք յոգնակերտումի մէկ ու միասնական համատարած կիրարկումներ: Այսուհանդերձ կանոնին արձանագրումը կը թոյլատրէ յուսալ, որ կացութիւնը հետզհետէ պիտի բարելաւուի:

ՄԻԱՎԱՆԿ ԲԱՌԵՐ

Ըսժ մեր քերականութեան հանրօրէն ծանօթ կանոններուն միավանկ պարզ բառերը, որոնց թիւը կ'անցնի հազարը, յոգնակի կը կազմեն **եր** մասնիկով՝ **ամպ-ամպեր**, **արտ-արտեր**, **գիրք-գիրքեր**, **զարդ-զարդեր**, **թուփ-թուփեր**, **խօսք-խօսքեր**, **ծառ-ծառեր**, **ծիլ-ծիլեր**: Արեւմտահայերէնը ընդհանրապէս միավանկ բառերու յոգնակին անհնչիւնափոխ կը կազմէ, այսուհանդերձ կան կարգ մը շեղումներ, օրինակ՝ **գիրք-գրքեր**, **դուռ-դռներ**, **միտք-մտքեր**, **սիրտ-սրտեր** եւ այլն. թելադրելի է, ոչ՝ պարտադիր, որ

[1] Բացառաբար, պահպանած ենք հեղինակին ուղղագրական մօտեցումները:

այսպիսիները եւս անհնչիւնափոխ կազմեն յոգնակին՝ **գիրքեր**, **դուռեր**, **միտքեր**, **սիրտեր**՝ միշտ ականջալուր մնալով բարեհնչութեան:

Յատուկ ուշադրութեան արժանի են կարգ մը միավանկ գոյականներ, որոնք անցեալին՝ գրաբարի մէջ, «**ն**» բաղաձայնը ունէին իրենց վերջը, ինչպէս՝ **ակն**, **անձն**, **ափն** (եզերք), **բեռն**, **բուրգն**, **բուռն**, **գառն**, **գեղմն**, **դուռն**, **եզն**, **երկն**, **եօթն, թոռն**, **ինն**, **լեառն**, **խաշն**, **կաթն**, **կամն**, **կողմն**, **հարսն**, **հիմն**, **հիւսն**, **ձեռն**, **ձուկն**, **ճուռն**, **մասն, մատն**, **մուկն**, **նուռն**, **շուրթն**, **ողն**, **ոսպն**, **ոտն**, **որդն**, **որմն**, **ունկն**, **ջերմն**, **ռունգն**, **սերմն**, **տասն**, **փուռն**[2] եւ այլն: Ասոնց մեծ մասը աշխարհաբարի մէջ նետած է բառավերջի «ն» բաղաձայնը եւ յոգնակի կը կազմէ **եր**-ով առանց այդ **ն**-ին. այսպէս են՝ **ակ**, **անձ**, **ափ**, **բուրգ**, **գեղմ**, **դուռ**, **երկ**, **կաթ**, **հիմ**, **կողմ**, **ձեռք**, **ճուռ**, **մաս**, **մուկ**, **ոտք**, **որդ**, **որմ**, **ոսպ**, **ունկ**, **ռունգ**, **սերմ**, **փուռ.** ուրեմն ասոնք պարզապէս կու տան՝ **ակ-ակեր**, **անձ-անձեր**, **ափ-ափեր**, **դուռ-դուռեր**[3] եւ այլն:

Ուրիշներ եզակիի մէջ նմանապէս կը կիրարկուին առանց **ն**-ի, սակայն յոգնակիի կազմութեան ատեն կարգ մը գրողներու քով երեւան կը հանեն իրենց այդ արմատական վաղեմի **ն**-ն, օրինակ՝ **բեռ-բեռներ**, **գառ-գառներ**, **դուռ-դռներ**, **եզ-եզներ**, **թոռ-թոռներ**, **լեռ-լեռներ**, **հարս-հարսներ**, **մատ-մատներ**, **շուրթ-շրթներ**. արդ, ասոնք **ն**-ով կամ առանց **ն**-ի յոգնականացնելը որեւէ կայուն կանոնի ենթակայ չէ, հետեւաբար այնքան ատեն, որ ակնբախ անբարեհնչութիւն մը չ'առաջանար, ասոնք պէտք է յոգնականացնել **եր**-ով, այսինքն՝ **դուռ-դուռեր**, **եզ-եզեր**, **թոռ-թոռեր**, **հարս-հարսեր**, **ձեռք-ձեռքեր**, **մատ-մատեր**, **շուրթ-շուրթեր:** Յամենայն դէպս, այստեղ կը գործէ ենթակայական դատողութիւնն ու ճաշակը, եւ կարելի չէ պահանջել կամ ակնկալել, որ բացարձակ միօրինակութիւն տիրէ. օրինակ՝ սովորական են **մատեր-մատներ**, **հարսեր-հարսներ** եւ նման երկւութիւններ մեր նորագոյն գրողներուն քով, մինչ Դ. Վարուժան, Գրիգոր Զոհրապ եւ ու-

[2] Բառավերջի **ն**-ի կորուստը յատուկ է բազմավանկ բառերու եւս. օրինակ՝ նախկին **գագաթն,** որ կու տայ **գագաթն-ա-կէտ**, աշխարհաբարի մէջ դարձած է **գագաթ,** այլեւ՝ **ատամն-ատամ, ամառն-ամառ, ձմեռն-ձմեռ, ուսումն-ուսում, հատուցումն-հատուցում** եւ այլն: Ասոնք բոլորը իրենց յոգնակին կը կազմեն **ներ**-ով՝ իբրեւ բազմավանկ բառեր՝ **գագաթ-ներ, ատամ-ներ** եւ այլն:

[3] Այս եւ նմանները՝ միավանկ թէ բազմավանկ, բարդութեան ատեն կրնան տարբեր վերաբերում ցոյց տալ բառավերջի **ն**-ին հանդէպ. օրինակ՝ **ակ**, սակայն **բիւրակն. անձ**, սակայն **վեհանձն. մաս**, սակայն **մասն**աւոր-մանրա**մասն** եւ այլն, այսինքն՝ բարդութեան մէջ կրնան վերականգնել «**ն**»-ն. այսպէս է, որովհետեւ բառակազմութիւնը հակամէտ է հիմնուելու գրաբարեան բառաձեւերու եւ կաղապարներու վրայ:

րիշներ հարիւր տարի առաջ ազատօրէն գրած են **մատեր**, **հարսեր**[4] եւ այլն: Կան վերջապէս քանի մը բառեր, որոնք **ն** բաղաձայնով հանդերձ անցած են աշխարհաբար, ինչպէս՝ **հիւսն**, **ողն**, **ստեղն**. ասոնք պարտադրաբար պիտի տան **հիւսն-եր**, **ողն-եր**, **ստեղն-եր**[5]**.** ուրեմն պէտք է գիտնալ, որ այս վերջին խումբի գոյականներուն ետին երեւցող **ներ** հնչիւնախումբին միայն **եր**-ն է յոգնակերտը, իսկ **ն** բաղադրիչը արմատական է:

* * *

ԲԱԶՄԱՎԱՆԿ ՊԱՐԶ ԲԱՌԵՐ

Բազմավանկ պարզ բառերը, որոնց թիւը անհամեմատ աւելի մեծ է, յոգնակի կը կազմեն **ներ** մասնիկով՝ **մատիտ-մատիտներ**, **քաղաք-քաղաքներ**, **ընտանիք-ընտանիքներ: Ն**-ով վերջացող բառերը ուրեմն պիտի ունենան կրկնակի **ն**. ինչպէս՝ **աւազան-աւազաններ**, **սեղան-սեղաններ**, **պատուհան-պատուհաններ**, **մատեան-մատեաններ**, **դասարան-դասարաններ** եւ այլն: Զանց կ'ընենք այստեղ յոգնակերտ միւս մասնիկներու անդրադարձը՝ **աւազ-աւազանի**, **մատ(ն)-մատունք**, **բանջար-բանջարեղէն**, **դեղ-դեղորայք**, **մարդ-մարդիկ**, **կիլիկեցի-կիլիկեցիք**, **պարոն-պարոնայք, տղայ-տղաք**[6] եւ այլն:

Վերոնշեալներու յոգնակերտումի իւրացումն ու կիրարկումը առհասարակ դժուարութեան չի հանդիպիր. թոթովախօս մանուկէն մինչեւ զառամ-

---

[4] Կարգ մը տատանող յոգնակիներ, ինչպէս՝ **հարս, մատ, դուռ**... դառնալով բարդ բառի երկրորդ բաղադրիչ, յոգնակի կը կազմեն միայն **եր**-ով. այսպէս՝ **հարս-նորահարսեր, մատ-բթամատեր, նախադուռ-նախադուռեր**:

[5] Այս բառը քիչ մը զարտուղի կարգավիճակ ունի. ան օժտուած է նախադաս եւ յետադաս գաղտնավանկերով՝ **(ը)ստեղ(ը)ն**, որով բնական հակում մը ունինք երկվանկ հաշուելու զայն եւ յոգնակին կազմելու **ներ**-ով, այսինքն՝ **ստեղններ**: Բայց ահա բարեհնչութիւնը արգելք կը հանդիսանայ նման կազմութեան մը, եւ իր ոճը խնամող հայը կ'ըսէ **ստեղներ**. ճիշդ այսպէս ալ բազմիցս մէջբերած են զայն թէ՛ Մալխասեանը, թէ՛ Ակադեմիայի քառահատորը: **Եր**-ով յոգնակի կը կազմեն նաեւ՝ **արքայազն-արքայազներ** (սակայն՝ **արքայազուններ**), **բեւեկն-բեւեկներ, դիւցազն-դիւցազներ** (սակայն՝ **դիւցազուններ**), **շողակն-շողակներ, հետիոտն-հետիոտներ,** բայց՝ **այծոտն-այծոտններ** (այծի ոտք ունեցող) բառերը:

[6] Պէտք է խուսափիլ **տղաքներ** ձեւէն, որ կրկնակ յոգնակի մըն է, նոյնիսկ եթէ մեր կարգ մը ընտիր գրողները կիրարկած ըլլան զայն, ինչպէս՝ «Լեզուն անուշ զոր խօսեր էին անուշ **տղաքներ...**» (ՎԹ, «Լեզուն որով գրեցի»), «**Տղաքնե՛ր**,- ըսաւ ուրիշ մը,- վաղը հայոց Կաղանդն է» (ՌՍ, «Կռունկը»), «Այս մարդերն ու **տղաքները** հեւ ի հեւ կը վազէին« (անդ, «Ահաւոր տարակոյսը»),-- «Կան **տղաքներ**, որք չգիտեն թէ իրենց հայրն...» (Մ. Կիւրճեան, ՆԳԲ, էջ 40): Այլեւս ժամանակավրէպ են ու բեռ մըն են լեզուին **երիկամունք-երիկամունքներ, ծնողք-ծնողքներ, նախնիք-նախնիքներ, պահանջմունք-պահանջմունքներ** (Որքա՜ն մեղմ էին մեր **պահանջմունքները**--Օտեան, «Փանջունի», Ե. նամակ) եւ նմանները, որոնց փոխարէն արդի արեւմտահայերէնը կը նախընտրէ **երիկամ-երիկամներ, ծնող-ծնողներ, նախնի-նախնիներ, պահանջ-պահանջներ** ըսել:

եալ ծերունին, գրաճանաչն ու անգրաճանաչը հաւասարապէս ճիշդ կը կիրարկեն զանոնք: Եւ դժուար է պատկերացնել հայ մը, որ ըսէ գիւղ**ներ** կամ քաղաք**եր**. այդպէս ալ միւսները:

Անդին կը գտնենք խումբ մը գոյականներ, որոնք «մէկուկէս վանկանի» կը կոչուին. ասոնք օժտուած են խուսափուկ արտասանուող ու չգրուող **ը**-ով մը, որ կը կազմէ գաղտնավանկ մը: Այդ գաղտնավանկը կրնայ գտնուիլ բառին սկիզբը, օրինակ՝ **բնազդ**, **բնիկ**, **բլուր**, **բրիչ**, **գնորդ**, **գրիչ**, **գրող**, **դպիր**, **զրոյց**, **դպրոց**, **թրթիռ**, **թրթուր**, **թրիք**, **լճակ**, **խնջոյք**, **խրատ**, **մկան**, **վկայ**, **սխալ**, **սլաք**, **տնանկ** եւ այլն. այսպիսիները **ներ**-ով կը կազմեն իրենց յոգնակին՝ **բ(ը)նազդ-ներ**, **բ(ը)լուր-ներ**, **մ(ը)կան- ներ** եւ այլն, կարծես ասոնք լիարժէք երկվանկ ըլլային:

Պարագան նոյնն է նաեւ այն մէկուկէս վանկանիներուն, որոնց **ը** ձայնաւորը բառին սկիզբն է. այսպիսիները կը սկսին **սկ**, **սպ**, **ստ**, **սթ**, **սք**, **սփ**, **զբ**, **զգ**, **շտ** զոյգ բաղաձայններով. օրինակ՝ (ը)**սկիզբ-ներ**, (ը)**ստինք-ներ**, (ը)**սպայ-ներ**, (ը)**սպունգ-ներ**, (ը)**զգեստ-ներ**, (ը)**շտապ-ներ**:

Կարգ մը «մէկուկէս վանկանի» բառերու գաղտնավանկը կը գտնուի բառին վերջը, օրինակ՝ **ազդր**, **անգղ**, **աստղ**, **արկղ**, **գամփռ**, **դուստր**, **եզր**, **լիտր**, **ծաղր**, **կայսր**, **կուպր**, **հիւսն**, **մեղր**, **ոսկր**, **որմ**, **սակր**, **սանտր**, **վագր**, **տագր**, **տարր**, **տետր** եւ այլն եւ որոնք **եր**-ով կը կազմեն իրենց յոգնակին. այսպէս՝ **անգ-ղեր**, **աստ-ղեր**, **արկ-ղեր**, **եզ-րեր**, **դուստր-եր**, **կայսր-եր**, **սանտր-եր**, **վագ-րեր**, **տետ-րեր**, **տար-րեր**, **հիւս-ներ**. պէտք է խուսափիլ այս վերջիններէն ոմանց եռավանկ արտասանութենէն՝ **ար-կղեր**, **գամ-փռ-ներ**, **դուս-տրր-ներ**, **կայ-սրր-ներ**[7], **սան-տրր-ներ** եւ այլն: Ասոնցմով բարդուած գոյականները իրենց կարգին **եր**-ով կը կազմեն յոգնակին. օրինակ՝ **դրամարկղեր**, **ճամբեզրեր**, **արքայադուստրեր** եւ այլն:

Ուրեմն մինչեւ այստեղ մասնաւոր շփոթ գոյութիւն չունի:

Շփոթը կը սկսի բարդ բառերու յոգնակիի կազմութեան պարագային. սակայն ո՛չ բոլորին:

ԲԱԶՄԱՎԱՆԿ ՎԵՐՋԱԲԱՂԱԴՐԻՉՈՎ ԲԱՐԴ ԲԱՌԵՐ

Բացարձակապէս ոչ մէկ շփոթի առարկայ է եւ ոչ մէկ մտային ճիգ կը պահանջէ յոգնակերտումը այն բարդ բառերուն, որոնց երկրորդ արմատը բազմավանկ է. ասոնք յոգնակին մեքենականօրէն կը կազմեն **ներ** մասնիկով. օրինակ՝ գիւղա**քաղաք**-գիւղա**քաղաքներ**, ննջա**սենեակ**-ննջա**սենեակներ**, ճաշա**սեղան**-ճաշա**սեղաններ** եւ այլն, ճիշդ ինչպէս անսխալ պիտի ըսէինք՝ **քաղաք-քաղաքներ**, **սենեակ-սենեակներ**, **սեղան-սեղաններ**:

---

[7] Մանուկ Աբեղեան հետեւողականօրէն եռավանկ՝ **ներ**-ով կը կիրարկէ այս գոյականները՝ **արկղներ, դուստրներ** եւ այլն: Մինչեւ իսկ **տարրներ**՝ փոխան **տարրեր**-ու «ՀՀԳՊ.2, էջ 305): Աճառեան նմանապէս կը գրէ **կայսրներ**. «Ընդունելով իր թագը Ֆրեդերիկոս եւ Հենրիկոս Զ. **կայսրների** ձեռքից…» (ՀԼՊ.2, էջ 297):

Գայթակղութեան քարը կը գտնուի ճիշդ հո՛ն, ուր բարդ բառին երկրորդ կամ վերջին արմատը միավանկ է. այսպիսիները կը կոչուին «միավանկ վերջաբաղադրիչով բարդ բառեր»:

Հէնց այստեղ կը սկսին դժուարութիւնները:

ՄԻԱՎԱՆԿ ՎԵՐՋԱԲԱՂԱԴՐԻՉՈՎ ԲԱՐԴ ԲԱՌԵՐ

Երբ բարդ բառին երկրորդ արմատը միավանկ է, ապա կը ներկայանայ երկու պարագայ.-

ա) Տուեալ բարդ բառը իր յոգնակին կրնայ կազմել **եր**-ով, օրինակ՝ **նախամարդ-նախամարդեր**, **գետաձի-գետաձիեր**, **մարզադաշտ-մարզադաշտեր** եւ այլն:

բ) Այլ բառեր յոգնակին կը կազմեն **ներ**-ով, օրինակ՝ **պատմագիր-պատմագիրներ**, **հայագէտ-հայագէտներ**, **երկրաչափ-երկրաչափներ**, **խոտակեր-խոտակերներ** եւ այլն:

Ահա այս զանազանութիւնն է, որ արդի արեւմտահայը՝ լրագրող, գրող, ուսուցիչ եւ անշուշտ դպրոցական, կա՛մ բոլորովին կ'անգիտանայ, կա՛մ չի յաջողիր ճիշդ կիրառել՝ տեղիք տալով համատարած սխալագրութեան:

Անոր ակնարկած են ու զայն կանոնակարգել փորձած են արեւմտահայ գրեթէ բոլոր դասագիրքերը, սակայն այն չափով ու ձեւով որ սերտուած է կանոնը, դժուար թէ ան որեւէ օգուտ բերէր մեր լեզուն սորվողներուն ու կիրարկողներուն: Ա՛լ զանց կ'ընենք անոր երբեմն սխալ, կամայական ու խայտաբղէտ բանաձեւումի եւ ուսուցումի պարագաները նո՛յն այդ դասագիրքերուն ճամբով:

* *

Ի՞նչ կանոնի հիմամբ տեղի կ'ունենայ այս զանազանութիւնը:

1. Առարկայանիշ վերջաբաղադրիչ

Եր-ով իրենց յոգնակին կը կազմեն միավանկ վերջաբաղադրիչով այն բարդութիւնները, որոնց երկրոդ արմատը առարկայանիշ է, եւ բարդութեան ընդհանուր իմաստը կը նոյնանայ այդ առարկայանիշ արմատի իմաստով. օրինակ՝ **նախամարդը մարդ** մըն է (որ կանխած է արդի մարդը), եւ ինչպէս որ **մարդ** կու տայ **մարդեր**, ապա **նախամարդ** պիտի տայ **նախամարդեր**. **գետաձին ձի** մըն է (այսինքն՝ ձիու նմանցուած անասուն մը, որ գետին մէջ կ'ապրի), եւ քանի **ձի** կու տայ **ձիեր**, **գետաձի** ալ կու տայ **գետաձիեր**. **մարզադաշտը դաշտ** մըն է (որ մարզումի կը ծառայէ), քանի **դաշտ** կու տայ **դաշտեր**, ապա **մարզադաշտ** ալ կու տայ **մարզադաշտեր,** այսպէս ալ՝ **երգ-երգեր-քայլերգեր**, **հայ-հայեր-արեւմտահայեր**, **գիրք-գիրքեր-դասագիրքեր**, **քար-քարեր-խաչքարեր** եւ այլն: Պէտք է նկատել, որ քանի այս բարդութեանց երկրորդ բաղադրիչը գոյական մըն է, այս պարագային բարդութեան ընդհանուր իմաստը ունի առարկայական՝ գոյականական նշանակութիւն, այսինքն՝ կը պատասխանէ **ո՞վ** կամ **ի՞նչ** հարցումներուն, որոնք յատուկ են գոյականին. **ո՞վ** - **մարդ** (նախամարդ), **ի՞նչ** - **ձի**

(գետաձի), **դաշտ** (մարզադաշտ) եւ այլն: Այս նոյն տրամաբանութեամբ՝ **ազդազանգեր**, **ազդալամբեր**, **ազդալոյսեր**, **ազդանիշեր**, **ահազանգեր**, **աղբակոյտեր**, **բանավէճեր**, **բռնագաղթեր**, **գինեձօներ**, **գինետուներ**, **գլխացաւեր**, **գիւղապետեր**, **գլխագրեր**, **գործադուլեր**, **դաշտավայրեր**, **դասակարգեր**, **դասապահեր**, **դրամատուներ**, **երկրաշարժեր** (շարժում), **տեղաշարժեր**, **զօրաշարժեր**, **զօրագունդեր**, **լրագրեր**, **լեռնանցքեր**, **խաղաթուղթեր**, **ծովափեր**, **ծովախորշեր**, **համակարգեր**, **հողատէրեր**, **հողաթումբեր**, **հօրաքոյրեր**, **ձեռագրեր** (ձեռքի գիր), **ճգնաժամեր**, **մօրաքոյրեր**, **յենակէտեր**, **նշանաձողեր**, **շիրմաքարեր**, **շքամուտքեր**, **շքերթեր**, **ուղեբեռ**(ն)**եր**, **ջրհորեր**, **սակաւապետեր**, **սրբավայրեր**, **ստորակէտեր**, **սփիւռքահայեր**, **վերջակէտեր**, **փաստաթուղթեր**, **քաղաքապետեր**, **օրիներգեր** եւ այլն:

2) Դերբայանիշ վերջաբաղադրիչ

Ներ-ով իրենց յոգնակին կը կազմեն այն բարդութիւնները, որոնց ընդհանուր իմաստը ցոյց կու տայ՝ ա) բան մը **ընողի**, կամ բ) բան մը **ունեցողի**, կամ գ) բան մը **եղողի**, կամ դ) կացութեան մը մէջ **գտնուողի** նշանակութիւնը. ասոնց միավանկ բաղադրիչը սովորաբար բայարմատ մըն է, երբեմն՝ գոյական մը, իսկ ստացուած բարդ բառերը, գոյականներ ըլլալով հանդերձ, դերբայական կամ ածականական բաւական շեշտուած իմաստ եւս ունին:

ա) Բան մը ընող

Այս նշանակութիւնը կը ստանանք ընդհանրապէս, երբ վերջին բաղադրիչը բայարմատ մըն է. օրինակ՝ **ականատեսներ** (տեսնող), **արիւնախումներ** (խմող), **բանասէրներ** (սիրող), **բարձրադիրներ, մենադիրներ** (դրուած կամ դիրք ունեցող), **գիշերապահներ** (պահող), **գնդացիրներ** (ցրուող), **գրագիրներ** (գրող), **դասալիքներ** (լքող), **դերբայներ** (բայի դերը կատարող կամ բայը փոխարինող), **դիպուկահարներ** (հարուածող), **դռնապաններ** (պահող, պահպանող), **հոգեբաններ** (սերտող), **լեզուագէտներ** (գիտցող), **մակբայներ** (գիտցող), **երկրաչափներ** (չափող), **ինքնաշարժներ** (շարժող), **խանութպաններ** (ունեցող), **խմբագիրներ** (գրող), **հողագործներ** (գործող), **մսակերներ** (ուտող), **նռնականետներ** (նետող), **նորածիններ** (ծնող, ծնած), **շաղկապներ** (կապող), **ուղղաթիռներ** (թռչող), **ոմբաձիգներ** (ձգող, նետող), **ջրկիրներ** (կրող), **սերմնացաններ** (ցանող), **փայտահատներ** (հատող, կտրող), **օրինախախտներ** (խախտող) եւ այլն:

բ) Բան մը ունեցող

Առիւծասիրտներ (առիւծի սիրտ ունեցողներ), **արծուաքիթներ** (արծիւի քիթ ունեցողներ), **բազմաձայններ** (բազում ձայներով օժտուածներ), եւ այդպէս նաեւ **բազմավանկներ**, **բարեսիրտներ** (բարի սիրտ ունեցողներ), **բթամիտներ**, **գեղադէմներ**, **գերադասներ** (բարձր դաս կամ դիրք ունեցող կամ բարձր դասուած), **գինեմոլներ**, **գործազուրկներ**, **խաժակ(ն)-խա-**

ժակ(ն)ներ, **խեցեմորթներ**, **կակղամորթներ**, **կենդանակերպներ**, **մեծամիտներ**, **մեծատուններ**[8] (մեծ տուն ունեցող, մեծահարուստ), **միավանկներ**, **նախագահներ** (առաջին աթոռը՝ գահը ունեցող, գրաւող), **բազմավանկներ**, **վաչկատուններ** (վաչը՝ կառքը, իբրեւ տուն ունեցողներ), **յովազակերպներ**, **շիկահերներ**, **ջլաթեւներ**, **ուղղաթեւներ**, **սեւամորթներ**, **փափկամորթներ** եւ այլն: Պէտք է նկատել, որ այս խումբի գոյականներէն շատերուն առաջին արմատը ածական մըն է, եւ ասոնք բոլորը ազատօրէն կրնան գործածուիլ նաեւ իբրեւ ածական:

Այս կանոններուն տակ կ'երթան բազմահազար բառեր, եւ ակնկալելի չէ, որ անոնք բոլորը եւ բոլորին կողմէ միօրինակ ընկալուին ու կիրարկուին: Շեղումներն ու խախտումները սովորական են՝ ընդհանրապէս կանոնի չիմացութեան, երբեմն ալ մտքի ծուլութեան, անուշադրութեան, անփութութեան ու մանաւանդ դպրոցական անբաւարար ուսուցումի հետեւանքով: Միւս կողմէ՝ կայ նաեւ կանոնին ներկայացուցած կնճռոտութիւնը, որ յարատեւ ուշադրութիւն ու զգօնութիւն կը պահանջէ հայերէն խօսողէն ու մանաւանդ գրողէն: Բայց կարելի է տեղէ մը սկսիլ ու **հետզհետէ** նուազեցնել սխալագրութիւնները, որոնք դժբախտաբար շատ տարածուած են մեր մէջ[9]:

* *

[8] **Մեծատուն** բառը հին եգիպտերէնի մէջ յանգած է թագաւորի, փարաւոնի հասկացութեան (Per-տուն, Aa-մեծ) Per.aa (մեծատուն), որ հետզհետէ արտասանուած է **pharao**(**n**)-**փարաւոն**, իսկ սպանական լեզուներու մէջ տուած է **casa grande:**

[9] Արեւմտահայերէն Այտընեան չէ անդրադարձած հարցին: Զապել Ասատուր կու տայ հետեւեալ բանաձեւումը. «Երբ իրենց վերջին բառը միավանկ է, բարդ բառերը երբեմն **ներ**-ով եւ երբեմն **եր**-ով յոգնակի կ'ըլլան, ինչպէս՝ **յօդացաւեր, արժեթուղթեր**, **գրագէտներ**, **նաւավարներ**» (Բ. գիրք, 1922, էջ 31). ան չի բացատրեր կանոնը, չ'ըսեր, թէ ինչո՛ւ առաջին երկուքը **եր**-ով կը կազմեն իրենց յոգնակին, միւսները՝ **ներ**-ով: Աւելի գիտական մօտեցում ունի Գազանճեան, որ սակայն թերի ըլլալէ չի դադրիր. «**Եր**-ով յոգնակի կ'ըլլան այն բազմավանկ բարդ բառերը, որոնց ... բաղադրիչ երկրորդ բառը միավանկ անուն մըն է եւ բարդութեան մէջ կը պահէ իր բուն իմաստը. օրինակ՝ **գետաձի-գետաձիեր**, **զօրագունդ-զօրագունդեր**, **բաժնեթուղթ-բաժնեթուղթեր**, **ածխահանք-ածխահանքեր**, բայց՝ **քարասիրտ-քարասիրտներ**, **մարդասէր-մարդասէրներ**, **սիրամարգ-սիրամարգներ***, **բուսաբան-բուսաբաններ**, **գինետուն-գինետուններ**» (Բարձրագոյն եւ լրացուցիչ, 1924, § 209),-- եթէ տրուած բանաձեւումին լոյսին տակ կարելի է ըմբռնել, թէ ինչո՛ւ առաջին չորսը յոգնակի կը դառնան **եր**-ով, ապա ոչինչ կ'ուսուցեն մնացեալ հինգ օրինակները, մանաւանդ որ սխալ յոգնակերտուած են **սիրամարգ** ու **գինետուն** բարդ բառերը, որոնք պէտք է տային **սիրամարգեր** ու **գինետուներ**:

* Գազանճեան, *Նոր հայկազեան*-ի հետեւողութեամբ, **սիրամարգ**-ը ընկալած է իբրեւ «մարգը սիրող»,- մինչդեռ ան կը նշանակէ «չինական թռչուն» (սինա-չինական, մուրգ-թռչուն, տեսնել «Արմատական»-ի մէջ):

- **ազդ**. այս արմատով աշխարհաբարը կազմած է **գովազդ**, **լուսազդ**, **մահազդ**, **որմազդ** եւ այլն**,** որոնց մէջ **ազդ** արմատը կը պահէ իր գոյականական իմաստը. ուրեմն՝ **գովազդեր**, **լուսազդեր**, **մահազդեր**, **որմազդեր: Բնազդ** բառին մէջ այդ արմատը բոլորովին տժգունած է, հետեւաբար այս մէկը բնական հակումով պիտի արտասանենք **բնազդներ**:

Ծանօթ.-- Աղայեան կը թելադրէ **գովազդեր**, **լուսազդեր**, **մահազդեր**, **որմազդեր**, իսկ Մեյթիխանեան «բոլոր **ազդ**-ով բարդութիւններու յոգնակին» կը թելադրէ կազմել **ներ**-ով, այսինքն՝ **գովազդներ**, **լուսազդներ**, **մահազդներ**, **որմազդներ**: Գիւրջինեան կը թելադրէ **գովազդներ**, **մահազդներ**. չունի միւս երկուքը:

- **անցք**. ամենէն շատ շփոթներու տեղիք տուող արմատներէն մէկն է:

Երբ այս արմատով կազմուող բառին մէջ յստակ ընկալելի է **ճեղքի**, **ա-րանքի**, **ծակի** առարկայական գաղափարը, ապա ընդհանրապէս դիւրաւ այսպիսիները յոգնակի կը դարձնենք **եր**-ով, օրինակ՝ **գետանցքեր** (գետի այն կէտը, ուրկէ կարելի է մէկ ափէն միւսը անցնիլ), **շեղանցքեր**, **ծխանց-քեր**, **միջանցքեր**, **սողանցքեր**, **քարանցքեր**, **քթանցքեր** (ռունգեր), **օ-դանցքեր**: Իսկ երբ բարդ բառը,- երբեմն նոյնը,- ցոյց կու տայ **անցնելու շարժումը, գործողութիւնը՝ անցումը**, կամ երբ ան խզուած է իր առարկա-յայական նշանակութենէն, հակամէտ ենք զայն յոգնակերտելու **ներ**-ով. օրինակ՝ **գետանցքներ**, **լեռնանցքներ** (լեռան մէկ կողմէն միւսը անցնիլը), **նրբանցքներ: Ջրանցքներ**, եթէ ցոյց կու տայ ջրային կառոյցներ՝ իրարու կապուող աւազաններ՝ ոռոգման կամ նաւարկութեան համար, սակայն **ջրանցքեր**, որոնք ծակեր, ճեղքեր, բացուածքներ են, ջուրին անցքը դիւ-րացնող կամ թոյլատրող: Երբ **լուսանցք** ըսելով նկատի ունինք այն ճեղքը կամ անցքը, ուրկէ լոյսը կը թափանցէ, ապա այս մէկը հեշտութեամբ կու տայ **լուսանցքեր.** իսկ երբ կը հասկնանք էջի մը սպիտակ մասը, ուր ոչինչ գրուած է կամ կը գրենք, ապա կը ստանանք **լուսանցքներ:** Իբրեւ անցք չեն ընկալուիր նաեւ **առանցքը**, **զօրանցքը**, **տողանցքը**, **քղանցքը**, որոնք կ'ընկալուին իբրեւ սովորական բազմավանկ բառեր եւ կու տան **առանց-քներ**, **զօրանցքներ**, **տողանցքներ**, **քղանցքներ**:

Անց-ով աւարտող գոյականները՝ **գետանց, ժամանց, շրջանց, վա-զանց,** կու տան **գետանցներ**, **ժամանցներ**, **շրջանցներ**, **վազանցներ**: Ա-սոնցմէ ոչ մէկը նիւթական անցքի կամ անցակէտի նշանակութիւն ունի:

Իսկ **գերազանց, երդմնազանց**, **ուխտազանց** արդէն **ներ**-ով կը կազ-մեն յոգնակին. ասոնց մէջ շատ զգալի է ածականական իմաստը եւ երեքն ալ բան մը ընող կը նշանակեն: Այս բոլորէն ետք դժուար է ակնկալել, որ **անցք** վերջաբաղադրիչը ունեցող բոլոր գոյականները միակերպ ընկալուին ու կիրարկուին բոլորին կողմէ անխտիր:

- ափ. գրաբարեան **ափն**, որ կը նշանակէ եզերք, ուրկէ՝ **ծովափնեայ** կազմութիւնը: Յոգնակին՝ **ափունք** էր գրաբարի մէջ, մինչ ձեռքի ափը կու տար **ափք**: Պէտք է ենթադրել, թէ ոմանց գիտակցութեան մէջ կը վերապրի

գրաբարեան սկզբնաձեւը՝ **ափն,** եւ կը թելադրէ քար**ափն**եր[10], նոյնհետայն նաեւ **գետափներ**, **դարափներ**, **լճափներ**, **լողափներ**, **ծովափներ**, որոնք անցեալին աւանդուած են **ափն** արմատով, միւս կողմէ, սակայն, շատ սովորական ու բարեհունչ են նաեւ **ափ**-ով կազմութիւնները՝ **գետափեր**, **լճափեր**, **լողափեր** եւ **ծովափեր**՝ աշխարհաբարեան **ափ**-ի թելադրականութեամբ:

- **բան**. արդի հայերէնի մէջ այս արմատի դասական իմաստը գրեթէ լրիւ մթագնած է, եւ ան իրմով կազմուած բոլոր բարդութեանց մէջ կ'ընկալուի իբրեւ վերջածանց, ուստի այդ բարդութիւններն ալ իրենց յոգնակին կը կազմեն **ներ**-ով. օրինակ՝ ա) **աստուածաբաններ**, **բուսաբաններ**, **լեզուաբաններ**, **կատակաբաններ**, **կոկոզաբաններ**, **հնաբաններ**, **հոգեբաններ**, **ճոռոմաբաններ**, **միաբաններ** եւ այլն, որոնք ցոյց կու տան տուեալ մարզի մէջ մասնագիտացած անձեր: Իսկ **բնաբան**, **յառաջաբան**, **նախաբան**, **նշանաբան**, **վերջաբան,** որոնց մէջ «բան» կը պահէ իր բառային առարկայական վաղեմի իմաստը՝ խօսք, կու տան **բնաբաներ**, **յառաջաբաններ**, **նախաբաներ**, **նշանաբաներ**, **վերջաբաներ**:

Ծանօթ.- Աղայեան կու տայ՝ յառաջաբան-**ներ**, նախաբան-**ներ**, նշանաբան-**եր**, վերջբան-**եր**, ինչ որ անըմբռնելի է, քանի որ այս չորսին բառային կաղապարները ամեն տեսակէտով կը համընկնին. ուրեմն ինչո՞ւ առաջին երկուքը **ներ**-ով, մինչ միւս երկուքը կը յոգնակերտուին **եր**-ով: Իսկ ժամանակակիցներէն Գիւրջինեան եւ Մեյթիխանեան բոլորին համար, ներառեալ **բնաբան**, միահամուռ կը թելադրեն – **ներ յոգնակերտը**: Այս եւ նման մոլորեցուցիչ մօտեցումները, դժբախտաբար, քիչ մը աւելի աւելի կը դժուարացնեն միօրինականացումի ճիգերը:

Աշխարհաբարը ունի **բան** անկախ արմատը, որ կ'ընկալուի իբրեւ գոյական եւ կը նշանակէ «անորոշ բնոյթի հասկացութիւն մը՝ իր, առարկայ, երեւոյթ, դէպք, պատահմունք» եւ այլն՝ մօտենալով անորոշ դերանուններուն. օրինակ՝ «Բան մը պիտի ըսեմ»,- իր այս իմաստով ան որեւէ բարդութեան մէջ չի մտներ, ուստի ոչ մէկ նմուշ ունինք համապատասխան բաղադրիչով:

- **բուժ.** այս վերջաբաղադրիչով ստացուած բոլոր բարդութիւնները **ներ**-ով կը կազմեն իրենց յոգնակին, քանի բոլորն ալ **բուժող** կը նշանակեն, այսպէս՝ **ատամնաբուժներ**, **բեկաբուժներ**, **հոգեբուժներ**, **վիրաբուժներ** եւ այլն:

- **գաղթ**. կը հանդիպինք **ներգաղթ** եւ **արտագաղթ**, **բռնագաղթ**, բառերուն մէջ, որոնք կը նշանակեն **գաղթ դէպի ներս** եւ **գաղթ դէպի դուրս**, այլ խօսքով՝ ունին բոլորովին առարկայական իմաստ, ուստի կու տան **ներգաղթեր** եւ **արտագաղթեր, բռնագաղթեր**:

- **գար**. այս վերջաբաղադրիչը կրող բոլոր բարդութիւնները **ներ**-ով կը կազմեն իրենց յոգնակին՝ **խելագարներ** (խելքով հիւանդ), **մտագարներ**, **ջղագարներ**, **սրտագարներ**, **ցաւագարներ** եւ այլն:

---

[10] Երկձեւ յոգնակի ունեցող բառ է. Մեյթիխանեան եւ Գիւրջինեան ունին **քարափներ**, Աղայեան՝ **քարափեր**:

- **գիծ**. այս վերջաբաղադրիչով կազմուող բոլոր բարդութիւնները կը պահեն իրենց առարկայական նշանակութիւնը, ուրեմն՝ **դիմագիծեր**, **յատակագիծեր, նախագիծեր**, **ուղեգիծեր**, **ուղղագիծեր**, **ուրուագիծեր**, **սահմանագիծեր**, **վարքագիծեր**, **տրամագիծեր**, **փակագիծեր**, **օրինագիծեր** եւ այլն:

- **գիր**, որ հաւասարապէս կը նշանակէ **գիր**, **գրութիւն**, բայց նաեւ **գրող**. օրինակ՝ **ամսագիր**, որ է ամէն ամիս հրատարակուող գիր կամ գրութիւն, ուրեմն՝ **ամսագրեր**, իսկ **գրագիր** ցոյց կու տայ պաշտօնեայ, որ կը գրէ, կը շարադրէ, ուրեմն՝ **գրագիրներ**:

Բաղդատել նաեւ՝

Գիր + եր	Գրող+ներ
ամսագրեր	գրագիրներ
ծրագրեր	խմբագիրներ
լրագրեր	գիւղագիրներ
ճակատագրեր	վիպագիրներ
մեղայագրեր	տարագիրներ
նշանագրեր	նշանագիրներ[11]
դեղագրեր	նամակագիրներ
վաւերագրեր	կենսագիրներ
զարդագրեր	մատենագիրներ
կանոնագրեր	պատմագիրներ
օրագրեր	առակագիրներ

Եթէ առաջին սիւնակի բառերուն յոգնակին փորձենք անհնչիւնափոխ կատարել եւ զայն արտասանել **լրագիրեր** ձեւով, ապա հակում պիտի յառաջանայ ըսելու **լրագիրներ**, որ սխալ է. լրագիրը բան մը գրող չէ, գրաւոր լուրերու պատճէնն է: Ասոնց հնչիւնափոխ կիրարկութիւնը՝ **լրագրեր**, կը թոյլատրէ մեզի խուսափիլ նման սխալ կիրարկութենէ: Պէտք չէ միւս ծայրայեղութեան մէջ ալ մտնել՝ հնչիւնափոխելով երկրորդ սիւնակի բառերը, որպէսզի չստիպուինք ըսել **գրագրներ** եւ այլն, որ նմանապէս սխալ է անշուշտ: Ռաֆֆի 135 տարի առաջ կը գրէր «Ինքնախաբէութիւն»-ին մէջ. “Նրանք լինում են…**լրագիրների** եւ **ամսագիրների խմբագիրներ**”. այսօր արեւելահայերու բացարձակ մեծամասնութիւնը հեշտութեամբ, հեզասահօրէն ու անթերի պիտի ըսէր՝ «…**լրագրերի** եւ **ամսագրերի խմբագիրներ**[12]»:

---

[11] Բառս հաւասարապէս կը նշանակէ՝ ա) գիր, տառ, այբուբեն, նամակ, գիրք, մատեան, յիշատակարան. բ) նշանագրող, արձանագրող, դպիր, նոտար:

[12] Արեւմտահայը նման կրթանքի չէ տիրացած, բայց նաեւ հաւանաբար կանոնը շատ թերի ուսուցուած կամ յարգուած է, ինչ որ տեղիք կու տայ բոլորովին կամայական կառոյցներու. օրինակ՝ «Հաթեան **նշանագիրներէն** խումբ մը՝ անձուկ նմանութիւն ունի եգիպտական **նշանագրերուն** հետ…» (Հ. Աճառեան, *Հայոց գրերը*, Վիեննա, 1928, էջ 8)--ուր մէյ մը **նշանագիրներ** է, մէյ մը՝ **նշանագրեր**, եւ

Ծանօթ.-- **Ձեռագիր** բառը ունի հետեւեալ նշանակութիւնները.-

ա) Մէկուն սեփական ձեռքին գիրը, որ կրնայ ըլլալ վարժ կամ անվարժ, գեղեցիկ կամ խառնակ, ընթեռնելի կամ անընթեռնելի եւ այլն: Այս պարագային, ուր կ'ակնարկուի ձեռքով յօրինուած գրային պատկերներու, աներկբայօրէն պիտի ստանանք **ձեռագիր-ձեռագրեր**:

Գրային տեսակ կը բնորոշեն նաեւ՝ **գլխագիր-գլխագրեր**, **երկաթագիր-երկաթագրեր**, **մեհենագիր-մեհենագրեր**, **տպագիր-տպագրեր**, **մեծատառ-մեծատառեր**, **փոքրատառ-փոքրատառեր** (տեսնել՝ **տառ**):

բ) Ձեռքով գրուած գրութիւն,-- ի հակադրութիւն տպագիր գրութեան,-- որ կրնայ ըլլալ թերթ մը կամ ամբողջ գիրք մը: Այս վերջին իմաստով կան տարակարծութիւններ: Աբեղեան կը թելադրէ **ձեռագիրներ** (ՀԼՏ), սակայն կիրարկած է նաեւ **ձեռագրեր** ձեւը (ՀՀԳՊ.2, էջ 393): Ստեփան Մալխասեան ունի **ձեռագիրներ**: Աղայեան, Մեյթիխանեան եւ Գիւրջինեան առանց մասնաւորելու կու տան՝ **ձեռագիր-ձեռագրեր**: Ակադեմիայի քառահատորը իւրացուցած է հետեւեալ օրինակը. «Վանքի խոնաւ ու մութ խցերից հանուեցին փոշեծածկ **ձեռագրերը**»:

- **գոյն**. այս արմատը կը գործածուի իր բուն իմաստով եւ կը նշանակէ տուեալ գոյնը **ունեցող**. նկատելի է ասոնց դերբայական նշանակութիւնը եւս, ուրեմն՝ **մոխրագոյններ**, **սրճագոյններ**, **վարդագոյններ**: **Գոյն**-ը կը կազմէ նաեւ ածականին գերադրականը, որոնք փոխանունաբար կիրարկուելու պարագային ինքնաբերաբար **ներ**-ով կը կազմեն իրենց յոգնակին՝ **բարձրագոյններ**, **լաւագոյններ**, **մեծագոյններ**:

- գործ, որ կը նշանակէ ձեռքի աշխատանքի **արդիւնք**, **բանուածք.** Օրինակ՝ **ձեռագործեր**, **ասեղնագործեր** (ասոնք **գործեր** են). կը նշանակէ նաեւ **գործող**, **գործ մը ընող,** ուրեմն՝ **այգեգործներ**, **բարեգործներ**, **դեղագործներ**, **թիթեղագործներ**, **կաշեգործներ**, **հողագործներ**:

- **դարձ**. կը նշանակէ՝ **վերադարձ** դէպի մեկնակէտը, եւ այս պարագային՝ **անկիւնադարձեր**, **անցուդարձեր**, **արեւադարձեր**, **գրադարձեր**, **դարադարձեր**, **հայրենադարձեր**[13] (դարձ՝ վերադարձ առ հայրենիք, ներգաղթ), **շրջադարձեր**, **վերադարձեր**, **տարեդարձեր**, **տունդարձեր**, **տողադարձեր** եւ այլն: **Անդրադարձ** (réflexe) բառը նմանապէս **դարձ** է, ճիշդ է, սակայն շատ խոր վերացականութիւն կայ անոր մէջ, եւ ան դժուար կ'ըմբռնուի իբրեւ սովորական **դարձ**. ասկէ ալ կը յառաջանայ զայն **ներ**-ով յոգնակերտելու բնական հակում մը. միայն լեզուական մանր վերլուծում կատարողն է, որ պիտի կիրարկէ քերականօրէն ճիշդ ձեւը՝ **անդրադարձեր**, նաեւ՝ **հեռուստաանդրադարձեր**: Իսկ հոն ուր ան կը նշանակէ **դարձող** անձ, օրինակ՝ հ**այրենադարձ** (իր հայրենիքը դարձող), **նորադարձ** (նոր գաղափար մը կամ նոր դաւանանք մը ընդգրկող) բնականաբար կը

նոյն նախադասութեան ծիրէն ներս տիրող այս անմիօրինակութեան հեղինակը Աճառեանն է: Անտարբերութիւնն ալ իր դերը հաւանաբար ունի այստեղ:

[13] Ա. Տէր Խաչատուրեան, ճիշդ կողմնորոշումով մը, երկու իմաստ տուած է այս բառին. ա) հայրենիք դարձող, բ) դարձ դէպի հայրենիք:

ստանանք **հայրենադարձներ**, **նորադարձներ**, այլեւ **դիմադարձներ**, որ կը նշանակէ դիմադարձող, հակադրուող անձ:

Անդրադարձ բառը ունի ածականական կիրարկութիւն մը եւս՝ **անդրադարձ**(նող) մակերես, **անդրադարձ**(ող) ճառագայթ, **անդրադարձ**(ող) դերանուն ու բայ եւ այլն. այս ածականին իբրեւ գոյական կիրարկութիւնը նմանապէս կու տայ **անդրադարձներ**, քանի որ **դարձ** արմատը ասոնց մէջ **դարձող**-ի կամ **դարձնող**-ի նշանակութիւն ունի եւ ոչ թէ **վերադարձ**-ի, որոնց վրայ կ'աւելնայ փոխանուանական յատկութիւնը եւս:

- **դիր** վերջաբաղադրիչով կազմուած բոլոր բառերուն մէջ այս արմատը որեւէ ատեն գոյականական իմաստ չ'արտայայտեր, այլ խօսքով՝ **դիրք** չի նշանակեր, այլ կ'արտայայտէ դերբայական իմաստներ՝ **դրուած**, **դրուող** կամ **դնող**. ուստի՝ **առընթերադիրներ**, **դաւադիրներ**, **թագադիրներ**, **մակդիրներ**, **մեղայադիրներ**, **ներդիրներ**, **ուսադիրներ**, **պսակադիրներ**, **վրադիրներ** եւ այլն:

- **դուլ** արմատը, որ կը նշանակէ **դադարեցում**, իր բոլոր կիրարկութեանց մէջ ունի առարկայական նշանակութիւն. ուրեմն՝ **գործադուլներ**, **դասադուլներ**, **զինադուլներ**, **հացադուլներ** եւ այլն**:**

- **երգ**-ով վերջացող բոլոր բարդ բառերը ունին առարկայական նշանակութիւն. ուրեմն՝ **ասերգեր**, **զուգերգեր**, **թախծերգեր**, **ժամերգեր**, **խմբերգեր**, **կրկներգեր**, **մեներգեր**, **յաղթերգեր**, **յանգերգեր**, **ողբերգեր**, **պարերգեր**, **սիրերգեր**, **փառերգեր**, **քայլերգեր**, **քնարերգեր**, **քներգեր**, **օրհներգեր**:

Երգող-ի, կատարող-ի, յօրինող-ի իմաստը կը ստանանք «ակ» ածանցով՝ **կատակերգակներ**, **հովուերգակներ**, **ողբերգակներ**, **սիրերգակներ**, **քնարերգակներ** եւ այլն:

Կանոնը միշտ միանշանակ չէ ընկալուած. օրինակ՝ Մալխասեան կ'ըսէ **պարերգներ**, իսկ Աղայեան, Գիւրջինեան եւ Մեյթիխանեան՝ **պարերգեր:** Իսկ **համերգ**՝ «երգ» չի նշանակեր, այլ գեղարուեստական ելոյթ, հանդէս, որ միշտ կամ միայն երգով չի սահմանափակուիր. միւս կողմէ՝ իբրեւ ածանցաւոր բառ, սովորաբար կու տայ **համերգներ**:

- երթ. հոն ուր բառս կը պահէ գնացքի իմաստը, յոգնակին կը կազմէ **եր**-ով. օրինակ՝ **խմբերթեր**, **յաղթերթեր**, **չուերթեր**, **ջահերթեր**, **վրայերթեր**, **քայլերթեր**. սակայն **ողջերթներ**, որովհետեւ **ողջերթ**-ը «երթ» մը չէ, հրաժեշտի առթիւ արտասանուած մաղթանքներու ամբողջութիւնն է, եւ **շքերթներ**, որ տօնական արարողութիւն մըն է:

- զանց. բարդութեանց մէջ կը պահէ իր բայական իմաստը, ինչպէս՝ **գերազանցներ**, **պարտազանցներ**, **օրինազանցներ**. նկատելի է այս բառերուն նաեւ ածականական շեշտուած երանգը: Ասոնցմէ դուրս կ'իյնայ **չափազանց**-ը, որ մակբայ է:

- **զուրկ** արմատը բոլոր բարդութեանց վերջը կու տայ զրկուածի, զրկանք ունեցողի կամ կրողի իմաստը, ուրեմն՝ **աչազուրկներ**, **գահա-**

զուրկներ, **ծնողազուրկներ**, **հայրենազուրկներ**, **շնորհազուրկներ**, **տնազուրկներ** եւ այլն:

- **զօր** կրնայ նշանակել **զօրք**, ուրեմն՝ **աշխարհազօրեր**, **զրահազօրեր**, **կայազօրեր**, **հեծելազօրեր**, **պահակազօրեր**, սակայն կրնայ նշանակել նաեւ զօրութիւն ունեցող, զօրութեամբ օժտուած, ուրեմն՝ **լիազօրներ**, **ամենազօրներ**, **համազօրներ**. նկատել այս վերջիններուն ածականական շեշտուած բնոյթը:

- **էջք**. **լուսնէջքեր**, **ջրէջքեր**, **վայրէջքեր**, բայց՝ **ելեւէջներ**: Այս խտրութիւնը հաւանաբար հետեւանք է **էջք** արմատի անկախութեան եւ **էջ**-ի կախեալութեան:

- **թաղ**. այս արմատը ընդհանրապէս ունի առարկայական նշանակութիւն, օրինակ՝ **դիաթաղ**՝ դի կամ դիակ թաղելու արարողութիւնը, **աշխարհաթաղ**՝ աշխարհական մը թաղելու արարքը, կարգը, այնպէս ալ՝ **տղայաթաղ**՝ տղայ կամ անչափահաս թաղելու արարքն ու կարգը, **քահանայաթաղ, մեռելաթաղ** եւ այլն, ուրեմն՝ **դիաթաղեր**, **աշխարհաթաղեր**, **տղայաթաղեր**, **քահանայաթաղեր** եւ այլն: **Դիաթաղ** եւ **մեռելաթաղ** կը նշանակեն նաեւ **դիակ** ու **մեռել թաղող** եւ առ այս կու տան **դիաթաղներ,** այնպէս ալ **մեռելաթաղներ:**

- **լար**. Հետեւեալ բարդութեանց մէջ կը պահէ իր առարկայական իմաստը՝ **ելեկտրալարեր**, **կապարալարեր**, **ձայնալարեր**, **տրամալարեր**. իսկ **տրտմալար** ածականը՝ տրտում լարեր ունեցող (նուագարան), փոխանունաբար կու տայ տայ **տրտմալարներ**:

- **լոյս.** այս վերջաբաղադրիչով բառերը միշտ **եր**-ով կը կազմեն իրենց յոգնակին. օրինակ՝ **ազդալոյս**, **արշալոյս**, **իրիկնալոյս**, **վերջալոյս:**

- խաղ. այս արմատը գոյականական իմաստ կու տայ հետեւեալ բառերուն՝ **բախտախաղ**, **թղթախաղ**, **մականախաղ**, **պորտախաղ**, ուրեմն՝ **բախտախաղեր**, **թղթախաղեր**, **մականախաղեր**, **պորտախաղեր**. իսկ դերբայական իմաստ ունի **լարախաղ** (լարախաղաց) բառը, որ լարի՝ պարանի վրայ խաղեր ընողն է. ուրեմն՝ **լարախաղներ**:

- **խոյզ.** արմատն է **խուզել** բային, որ կը նշանակէ որոնել, փնտռել, զննել, պրպտել, ըստ այսմ բայական իմաստ կ'արտայայտեն՝ **հետախոյզ**, **հնախոյզ**, **մանրախոյզ**, **դատարկախոյզ**, **բազմախոյզ**, **գանձախոյզ**, **ժամանակախոյզ**, **իրախոյզ**, **լեռնախոյզ**, **հարցախոյզ** (հարցասէր, հարցեր լուծելու հետամուտ), **քննախոյզ**, որոնք **ներ**-ով կը կազմեն իրենց յոգնակին՝ **գանձախոյզներ**, **հետախոյզներ**, **հնախոյզներ** եւ այլն:

Հարցախոյզ բառը ունի գոյականական կիրարկութիւն եւս ու կը նշանակէ որեւէ այժմէական հարցի մասին կատարուած քննութիւն, տեսակէտներու ու կարծիքներու հաւաքում ու վիճակագրում. ըստ այսմ կու տայ **հարցախոյզեր**:

- **խօս. կարգախօս**-ը միակ բառն է, որուն մէջ այս արմատը կը պահէ իր գոյականական **խօսք** իմաստը. ան այսպէս կամ այնպէս բան մըն է, եւ

բան մը ընող չէ, խօսող չէ, ուստի **կարգախօսեր**, բայց՝ **ատենախօսներ**, **գրախօսներ**, **դասախօսներ**, **թոթովախօսներ**, **շատախօսներ**, **սակաւախօսներ**, **ստախօսներ** (որոնք խօսողներ են):

Գալով **բարձրախօս** եւ **հեռախօս** սարքերուն, ասոնք ոչ խօսք են, ոչ խօսող են. ուրեմն ինչպէ՞ս յոգնակերտել այս երկուքը: Ճիշդ է, խօսող չեն, սակայն խօսքը, ձայնը ընկալելի դարձնող, կողմերու միջեւ հաղորդակցութիւն հաստատող, ուրեմն՝ «բան մը ընող» հնարքներ են, ուստի շատ աւելի պատշաճ է, որ կոչուին **բարձրախօսներ** եւ **հեռախօսներ**:

- **խոտ. ծխախոտ** կրնայ նշանակել այն բոյսը, որուն մշակումով պիտի պատրաստուի (ծխա)գլանիկը, եւ այս պարագային դիւրաւ կ'ըսենք **ծխախոտեր**, եւ ասոր հետեւողութեամբ ալ՝ **մոլախոտեր**, **քթախոտեր** եւ այլն, քանի խոտի գաղափարը առկայ է ասոնց մէջ. սակայն երբ կարգը կու գայ բուն իսկ գլանիկին, որ կը ծխենք, կը դժուարանանք **ծխախոտեր** ըսելու եւ հակամէտ ենք ըսելու **ծխախոտներ**, քանի այս վերջինին մէջ խոտի գաղափարը արդէն վերացած է, եւ գլանիկը չենք ընկալեր իբրեւ խոտ:

- ծին. այս վերջաբաղադրիչը զինք կրող բոլոր բարդ բառերուն մէջ ունի դերբայական՝ **ծնած**-ի կամ **ծնունդ տուող**-ի նշանակութիւն. ուրեմն՝ **բազմածիններ**, **բնածիններ, բորակածիններ**, **երկրածիններ**, **եօթնածիններ**, **ընդոծիններ**, **թթուածիններ**, **ինքնածիններ**, **հողածիններ**, **հրէշածիններ**, **միածիններ**, **նորածիններ**, **ջրածիններ** եւ այլն:

- **կազմ**. այս արմատը կրող բառերը երկբնոյթ են. ա) մաքուր գոյականները, եւ բ) դերբայական առում ունեցող, ուրեմն՝ ածականին յարող բարդութիւնները:

Յարաբերաբար աւելի մեծ թիւ մը կը կազմեն վերջինները. օրինակ՝ **ամրակազմ**, **գրակազմ** (գիրք կազմող), **թղթակազմ**, **թուլակազմ**, **լաթակազմ**, **կաշեկազմ**, **նրբակազմ**, **տկարակազմ**, **փափկակազմ**, **փառակազմ** եւ այլն. ուստի ասոնք իրենց յոգնակին կը կազմեն **ներ**-ով. օրինակ՝ **ամրակազմներ**, **գրակազմներ**, **թղթակազմներ**, **թուլակազմներ** եւ այլն:

Որոնց դիմաց ունինք հետեւեալ յարաբերաբար սակաւ առարկայանիշ բարդութիւններ, ինչպէս՝ **անձնակազմ**, **աշխատակազմ**, **խմբագրակազմ**, **վարչակազմ**, որոնք կու տան **անձնակազմեր**, **աշխատակազմեր**, **խմբագրակազմեր**, **վարչակազմեր**:

- կալ. այս արմատը բարդութեանց ետեւը միշտ ալ ունի դերբայական նշանակութիւն, որ է՝ բան մը ընող, բռնող կամ ունեցող. ուրեմն՝ **անակնկալներ**, **աշխարհակալներ**, **առագաստակալներ**, **բերանակալներ**, **բռնակալներ**, **գրակալներ**, **գործակալներ**, **երախակալներ**, **զգեստակալներ**, **ինքնակալներ**, **լաթակալներ**, **խնամակալներ**, **ծամակալներ**, **կրծկալներ**, **հաշուակալներ**, **հերակալներ**, **մազակալներ**, **մահճակալներ**, **մաճկալներ**, **մոմակալներ**, **վարձակալներ**, **վարսակալներ**, **տոմարակալներ** եւ այլն:

- **կապ**. եթէ **անկիւնակապ**, **բերանակապ**, **գլխակապ**, **թեւակապ, կրծկապ**, **ձեռնակապ**, **վզակապ** (անուր), **վիրակապ**, **ցռկակապ** բառերուն մէջ թելադրական է նիւթական կապի կամ կապուող պարանի, լաթի, պիտոյքի գաղափարը,- ուրեմն՝ **անկիւնակապեր**, **բերանակապեր**, **գլխակապեր**, **թեւակապեր**, **կրծկապեր**, **ձեռնակապեր**, **վզակապեր**, **վիրակապեր**, **ցռկակապեր**,- ապա **վզկապը** (սկաուտներու վիզը զարդարող նախշաւոր լաթ) եւ **փողկապը** կը տարբերին նախորդներէն. ասոնք այլեւս իբրեւ կապ չեն ընկալուիր, այլ՝ զգեստաւորումի բաղկացուցիչ մասեր, եւ առ այդ լեզուն կը թելադրէ **վզկապներ** եւ **փողկապներ** ձեւերը, որպէսզի չշփոթենք զանոնք սովորական կապերու՝ հանգոյցներու հետ: Կ'ըսենք նաեւ **ձայնակապներ** (ձայնաւորները կապող բաղաձայն կամ կիսաձայն հնչիւններ), **շաղկապներ**, **յօդակապներ**, քանի ասոնք կապող բառեր են:

Եւ վերջապէս **բերանակապ** կրնայ նշանակել նաեւ բերանը կապուած էակ՝ մարդ կամ անասուն, եւ առ այդ փոխանունաբար կու տայ **բերանակապներ:**

- **կեր.** կրնայ նշանակել **ուտելիք**, օրինակ՝ **թռչնակերներ**, **անասնակերներ**, **գազանակերներ**. շատ պիտի ռամկանար հայերէնը ու այլանդակէր, եթէ ասոնք յոգնակերտէինք **ներ**-ով. օրինակ՝ **թռչնակերներ**, որ այս պարագային պիտի նշանակէր «թռչուն ուտողներ», կամ **գազանակերներ**՝ «գազան ուտողներ», իսկ **անասնակերներ**՝ «անասուն ուտողներ»**:** Կը նշանակէ նաեւ **ուտող՝ ամենակերներ**, **արմատակերներ**, **գիշակերներ**, **ընդակերներ**, **խոտակերներ**, **մարդակերներ**, **մսակերներ**, **շատակերներ** եւ այլն:

- **կերպ.** առարկայանիշ են՝ **գրելակերպեր**, **գործելակերպեր**, **մտածելակերպեր**, **վարուելակերպեր** եւ այլն. դերբայական նշանակութիւն ունին՝ իբրեւ բան մը ունեցող եւ իրենց յոգնակին **ներ**-ով կը կազմեն կամ պէտք է կազմեն՝ **խեցգետնակերպներ**, **կենդանակերպներ**, **ձկնակերպներ**, **մարդակերպներ**, **մողէզակերպներ**, **սագակերպներ**, **սարդակերպներ** եւ այլն, որոնք տուեալ կերպը կրող կամ ունեցող կենդանաբանական կարգեր կը նշեն:

Վերջիններուն հետ չենք նշեր **կերպ**-ով վերջացող ածականները, որոնք իբրեւ գոյական կիրարկուելու պարագային նմանամապէս **ներ** պէտք է առնեն բոլոր փոխանուն ածականներու պէս. օրինակ՝ **լուսակերպներ, իգակերպներ**, **գազանակերպներ**, **կայսերակերպներ**, **բազմակերպներ** եւ այլն:

- **կէտ.** բոլոր բարդութեանց մէջ կը պահէ իր առարկայական իմաստը. այսպէս՝ **անցակէտեր**, **բարձրակէտեր**, **դարձակէտեր**, **դիտակէտեր**, **ելակէտեր**, **ենթակէտեր**, **եռակէտեր**, **ժամկէտեր**, **ծայրակէտեր**, **կրակակէտեր**, **կրկնակէտեր**, **հեռակէտեր**, **մակակէտեր**, **մեկնակէտեր**, **միջակէտեր**, **յենակէտեր**, **նպատակակէտեր**, **սկզբնակէտեր**, **ստորակէտեր**, **ստուգակէտեր**, **վերջակէտեր**. ասոնք բոլորը այսպէս կամ այնպէս **կէտեր**

են: Սակայն նոյնը չէ **տեսակէտ** բառին պարագան, որուն մէջ **կէտ** արմատը որեւէ թելադրականութիւն չունի. տեսակէտը **կէտ մը չէ**, կամ թէ կէտի գաղափարը չքանալու աստիճան մթագնած է անոր մէջ, այս պատճառով ալ հակում ունինք ամբողջութիւնը ընկալելու իբրեւ սովորական բազմավանկ բառ մը ու անոր յոգնակին կազմելու **ներ**-ով՝ **տեսակէտներ:** Մինչդեռ ասոր հոմանիշ **հայեցակէտ** բառը ընդհանրապէս եւ շատ հեշտութեամբ **հայեցակէտեր** կու տայ («Իսլամական որոշ **հայեցակէտերու** անփոփոխ բնութեան պատճառով...»[14]),-- թէեւ շատ հազուագիւտ կը պատահի **հայեցակէտներ** ձեւը եւս. ինչո՞ւ այսպէս է, ինչպէ՞ս – բացատրել այս առեղծուածը,-- չենք գիտեր: Ռոպեր Հատտեճեան ունի հետեւեալ բարացուցական կիրարկութիւնը. «Մարդիկ ամեն օր ունին... օրուան վերջա**կէտներն** ու սկզբնա**կէտեր**ը»[15]. նոյն նախադասութեան նեղ ծիրէն ներս մէյ մը՝ **կէտներ**, ու երկու բառ անդին՝ **կէտեր**...:

- **կիր**. այս արմատը իր բոլոր կիրարկութեանց մէջ կը պահէ կրողի իմաստը, ուրեմն՝ **բեռնակիրներ**, **դրօշ**(ակ)**ակիրներ**, **խաչակիրներ**, **ծիրանակիրներ**, **համակիրներ**, **նիզակակիրներ**, **օդանաւակիրներ** եւ այլն:

- **կից**. այս արմատը կրող բոլոր բարդութիւնները **ներ**-ով կը կազմեն իրենց յոգնակին, որովհետեւ բոլորն ալ կ'ըմբռնուին իբրեւ նոյն կամ նման բան մը ունեցողներ, բաժնեկցողներ. օրինակ՝ **ազգակիցներ**, **աթոռակիցներ**, **անուանակիցներ**, **աջակիցներ**, **բախտակիցներ**, **բանտակիցներ**, **դռկիցներ**, **զինակիցներ**, **թղթակիցներ**, **ժամանակակիցներ**, **խօսակիցներ**, **կարգակիցներ**, **կենակիցներ**, **կողակիցներ**, **հասակակիցներ**, **հեղինակակիցներ**, **ձայնակիցներ**, **ուղեկիցներ**, **սեղանակիցներ**, **սենեկակիցներ**, **սրտակիցներ**, **տարեկիցներ** եւ այլն:

- **հայր**, **մայր**, **քոյր**. ընդհանրապէս երկձեւութեան առարկայ չեն, կանոնաւորապէս **եր**-ով կը կազմեն յոգնակին. օրինակ՝ **աբբահայրեր**, **մեծհայրեր**, **նախահայրեր**, **սանահայրեր**, **կնքահայրեր**. **եղերամայրեր**, **մեծմայրեր**, **սանամայրեր**, **տիրամայրեր**. **հօրաքոյրեր**, **մօրաքոյրեր** [«Շատ մը ընտանիքներու մէջ կը հանդիպինք ընտանեզուրկ **հօրաքոյրերու** եւ **մօրաքոյրերու**...» (Քասիմ, *Օրուան մտածումներ*, էջ 289)],– այսուհանդերձ բացառուած չեն շեղումները եւս՝ **մօրաքոյրներ**, **տէրհայրեր** եւ այլն:

- **հան** եւ **հանք. Հան**-ը բոլոր բարդութեանց մէջ կը պահէ իր դերբայական՝ հանողի նշանակութիւնը, ուստի՝ **գլխահաններ**, **ծխ**(ի)**աններ**, **հրահաններ**, **ջրհաններ**, **քաղհաններ** եւ այլն:

Իսկ **հանք**-ը, էապէս առարկայանիշ ըլլալով, կու տայ՝ **ածխահանքեր**, **մետաղահանքեր**, **ոսկեհանքեր**, **քարահանքեր** եւ այլն:

Ուրեմն այս երկուքին առնչութեամբ շեղումները բացառուած են:

---

[14] *Ազդակ*, 19-9-2016:

[15] Նոյն, 30-7-2013, էջ 6:

- **հատ** կրնայ նշանակել սերմ, հունդ, հատիկ եւ առ այս կու տայ՝ **գարեհատեր**, **դեղահատեր**, **կտաւահատեր**, **մարգարտահատեր**, **ցորենահատեր** եւ այլն. դերբայաբար կրնայ նշանակել նաեւ հատող՝ կտրող ու գողցող՝ կողոպտող, ըստ այսմ ալ պէտք է տայ՝ **գանձահատներ**, **գերեզմանահատներ**, **գրպանահատներ**, **դրամահատներ**, **եղնգահատներ** (անձ կամ իր), **փայտահատներ**, **քսակահատներ** եւ այլն:

- **հար.** կը պահէ իր բայական կամ դերբայական իմաստները՝ իբրեւ **զարնող**, **զարնուած** կամ **նուագող**. օրինակ՝ **դաշնակահարներ**, **նետահարներ**, **ջութակահարներ**, **սիրահարներ**, **ցրտահարներ**:

- ձայն. կը կազմէ սահմանափակ բարդութիւններ՝ ա) առարկայական իմաստով. օրինակ՝ **երգաձայներ**, **կիսաձայներ** (երաժշտական եզր), **ոտնաձայներ**, նաեւ՝ բ) դերբայական իմաստով՝ իբրեւ բան մը ունեցող. Օրինակ՝ **բաղաձայններ**, **երկձայններ** (քերականական եզր), **կիսաձայններ**, **հեռաձայններ**[16], **նմանաձայններ**, **քառաձայններ**, որոնց դերբայական նկարագիրը բացայայտ է եւ որոնք կը նշանակեն տուեալ «ձայնը ունեցող, արտադրող կամ անով օժտուած»:

- ձիգ. բոլոր բարդութեանց կու տայ յառաջացնողի, ձգողի, նետողի նշանակութիւն. օրինակ՝ **ականաձիգներ**, **ակօսաձիգներ**, **հրետաձիգներ, նետաձիգներ**, **թնդանօթաձիգներ**, **հր(ա)ձիգներ**, **քաջաձիգներ** եւ այլն:

- **մաս**. այս արմատը կրող բոլոր բառերը **եր**-ով կը կազմեն իրենց յոգնակին՝ **երկրամասեր**, **զօրամասեր**, **հողամասեր**, **մանրամասեր**, **յառաջամասեր**, **յետսամասեր**, **հիմնամասեր**, **ցամաքամասեր** եւ այլն: Բերուած օրինակներէն **մանրամաս**-ը կը նշանակէ որեւէ սարքի բաղադրիչ՝ նիւթական մանր մասնիկը: Արեւելահայերէնի մէջ ընդհանրացած է **մանրամասներ** յոգնակի մը, երբ ան պարզ ու մեկին կը նշանակէ **մանրամասնութիւններ**, ինչպէս արեւմտահայերս կ'ըսենք. նկատի առած այս վերջինին բոլորովին վերացական նկարագիրը, նկատի առած նաեւ, որ գրաբարի մէջ **մաս** արմատը **մասն** էր, ուրեմն պէտք է յարգել այս բառին **ներ**-ով յոգնակերտումը: Հիմա որ աւելի ու աւելի կը մօտենանք արեւելահայերէնին եւ արդէն մեր մէջ եւս **մանրամասներ** ձեւը սկսած է կիրարկուիլ,– իսկ հետագային աւելի՛ պիտի կիրարկուի,– պատշաճ է որ յարգուի այս վերջինին յոգնակիի **ներ**-ով կազմութիւնը:

Անշուշտ **մանրամասն** ածականը՝ **ն**-ով, եւ **մանրամասնութիւն** գոյականը կը պահեն իրենց բոլոր իրաւունքները մեր երկու բարբառներուն մէջ:

- **մատ**. բոլոր բարդութեանց մէջ կը պահէ իր առարկայական իմաստը, ուրեմն՝ **բթամատեր**, **մատնեմատեր**, **միջնամատեր**, **ցուցամատեր**: Պէտք

---

[16] Աղայեան եւ Մեյթիխանեան կու տան հեռաձայն-**եր**. Գիւրջինեան՝ հեռաձայն-**ներ**: Կը կարծենք, թէ այս վերջինն է տրամաբանականը. **հեռաձայն**-ը վերջին հաշուով ձայն մը չէ, ան սարք մըն է, որ լսելի կը դարձնէ հեռուի ձայնը կամ կը փոխադրէ ու հասանելի կը դարձնէ ձայնը: Այլ խօսքով՝ բան մը ընող սարք մըն է:

է խուսափիլ **բթամատներ**, **մատնեմատներ**... արտասանելու եւ գրելու որոշ չափով ըմբռնելի փորձութենէն ու յաղթահարել զայն:

- **մարտ**. բոլոր բարդութեանց մէջ կը պահէ իր առարկայական իմաստը, ուրեմն՝ **բռնցքամարտեր**, **գոյամարտեր**, **գօտեմարտեր**, **դիւցազնամարտեր**, **ծովամարտեր**, **հերոսամարտեր**, **ճակատամարտեր**, **մենամարտեր**, **օդամարտեր**, **սուսերամարտեր**, **ցլամարտեր** եւ այլն: Ունինք **ընդդիմամարտ**, որ ածական է եւ փոխանունաբար պէտք է տայ **ընդդիմամարտներ**, որ կիրարկութիւն չունի արդի հայերէնի մէջ:

Անձի, ուրեմն՝ բան մը ընողի, անուն դառնալու համար լեզուն կը կիրարկէ **մարտիկ** բառածեւը. օրինակ՝ **ազատամարտիկ**, **յառաջամարտիկ**, **սուսերամարտիկ**:

Ծանօթ.-- Ունեցած ենք **ըմբշամարտ**, ըմբշամարտիկ նշանակութեամբ, եւ **ընդդիմամարտ**, ոսոխ, թշնամի նշանակութեամբ, որոնք աշխարհաբարի մէջ ընդհանրացած չեն եւ բնական է պիտի տան ըմբշամարտ**ներ** եւ ընդդիմամարտ**ներ**:

- **մոլ**. այս արմատը կրող բոլոր բառերը ցոյց կու տան բան մը ընողի կամ ունեցողի, բան մը խօլաբար ցանկացողի իմաստը. ունին ածականական շեշտուած իմաստ եւ բոլորն ալ իրենց յոգնակին կը կազմեն **ներ**-ով՝ **գինեմոլներ**, **գրամոլներ**, **երազամոլներ**, **խաղամոլներ**, **կնամոլներ**, **խօսամոլներ**, **մատենամոլներ**, **մեծամոլներ**, **մենամոլներ**, **տեսամոլներ**, **ցուցամոլներ** եւ այլն:

- **մուտ.** այս արմատը երեք տարբեր իմաստներով կը կիրարկուի արդի հայերէնի մէջ. 1) կրնայ նշանակել **մտնող**, **մտցնող** կամ **մտած**, եւ իր այս իմաստով անվերապահօրէն կը ստանանք **դարանամուտներ**, **եկամուտներ**, **խելամուտներ**, **լուսամուտներ** (լոյսին իբրեւ անցք ծառայող), **ծակամուտներ**, **հետամուտներ**, **հմուտներ**, **նորամուտներ** եւ այլն. նկատենք այս բոլորին ածականական շեշտուած երանգը եւս, որով աւելի կը բացատրուի ու կ'արդարանայ **ներ**-ով յոգնակին. 2) ան կրնայ նշանակել մտնելու արարքը՝ **սկիզբ** կամ **մուտք**, եւ այս իմաստով ունինք հետեւեալները՝ **ամառնամուտ**, **արեւամուտ**, **գարնանամուտ**, **ելեւմուտ**, **կիրակնամուտ**, **ձմեռնամուտ**, **մայրամուտ**, **տարեմուտ**, **վերամուտ** եւ այլն**.** նաեւ՝ **ելեւմուտք** եւ **կիրակմուտք** (Միսաք Մեծարենց գործածած է ա՛յս ձեւը) տարբերակները. **3)** ան կրնայ նշանակել նաեւ որեւէ հաստատութեան մատչելու նիւթական **անցքը**՝ մուտք, օրինակ՝ շէնքին, տան, դպրոցին մուտքը, ուրեմն՝ **շքամուտքեր**, **ճակատամուտքեր**, **յետնամուտքեր**, **նախամուտքեր:**

Այս երեք տարբեր իմաստները տնտեսելու համար լեզուն ունի միայն երկու միջոց՝ **եր** կամ **ներ**: Յստակ ու թելադրական են առաջին եւ երրորդ իմաստները, եւ ասոնց պարագային որեւէ տուայտանք կամ շփոթ չունինք: Բայց ո՞ւր զետեղել երկրորդ խումբի բառերը: Ասոնք շատ յստակօրէն ունին գոյականական կամ առարկայական իմաստ, բայց եւ այնպէս **մուտ** անկախ արմատի մը չգոյութիւնը՝ մէկ կողմէ, միւս կողմէ՝ այս խումբի բառերուն զգալի վերացականութիւնը պատճառ կը դառնան, որ բնական հակում ու-

նենանք ասոնք եւս յոգնակերտելու **ներ** մասնիկով՝ **արեւամուտներ**, **գարնանամուտներ**... եւ այլն: Սակայն որոշ ճիգով մը կարելի է շրջանցել այս հակումը եւ կիրարկել կանոնը՝ գրելով **գարնանամուտեր**, **կիրակնամուտեր**, **մայրամուտեր**, **տարեմուտեր**, **վերամուտեր** ճիշդ ձեւերը: **Ելեւմուտք**, **ժամամուտք** եւ **կիրակմուտք** տարբերակները արդէն ինքնաբերաբար **եր** կ'առնեն՝ **ելեւմուտքեր**, **ժամամուտքեր** եւ **կիրակմուտքեր**: Միակ բացառութիւնը պէտք է վերապահել **եկամուտ** գոյականին, որուն մէջ **մուտքի** գաղափարը բոլորովին աղօտած է. եկամուտը՝ մուտք չէ, շահոյթ է, գալով ունեցածիդ վրայ **աւելցող** բարիք է, այլ խօսքով՝ անհատին կամ հաստատութեան գանձը **մտնող** գումար է, ուստի եւ ըսել **եկամուտներ**, ինչպէս նշեցինք վերը:

- **նետ**. սա **նետել** բային արմատն է, որով կազմուած երկու բարդութիւնները՝ **ականանետ** եւ **նռնականետ,** պէտք է տան **ականանետներ** և **նռնականետներ**: Եւ որովհետեւ **նետ-նետեր** պարզ գոյականը շատ զօրաւոր հաստատուած է մեր գիտակցութեան մէջ, ապա հակում ունինք արտաբերելու սխալ ձեւերը՝ **ականանետեր**, **նռնականետեր:**

- **նիշ.** կրնայ նշանակել որեւէ **նիշ** կամ **նշան** եւ առ այդ՝ իր յոգնակին կազմել **եր**-ով. օրինակ՝ **ազդանիշեր**, **ախտանիշեր**, **աստղանիշեր**, **բարենիշեր**, **գաղափարանիշեր**, **դրամանիշեր**, **դրոշմանիշեր, էջանիշեր**, **թուանիշեր**, **խաչանիշեր**, **խորհրդանիշեր**, **ձայնանիշեր**, **մրցանիշեր**, **յայտանիշեր**, **յատկանիշեր**, **նամականիշեր**, **ուղենիշեր**, **չափանիշեր**, **պայմանանիշեր**, **սահմանանիշեր**, **սանդխանիշեր**, **վաճառանիշեր**, **վարկանիշեր**, **ցուցանիշեր** եւ այլն:

Ան կրնայ նշանակել նաեւ **նշող**, **ցոյց տուող**, **նշանակող**, **ունեցող**. Օրինակ՝ **բազմանիշներ**, **հոմանիշներ**, **հականիշներ**, **մերձանիշներ**, **միանիշներ**, **յոգնանիշներ**, **նոյնանիշներ**, **վանկանիշներ** եւ այլն:

Այս առթիւ ըսենք, որ **նիշ** արմատին մեկնաբանութիւնը միշտ ալ միօրինակ չէ եղած. այսպէս՝ ոմանք **չափանիշ**-ը կ'ընկալեն իբրեւ «չափի նշան», ուրեմն՝ **չափանիշեր**, ուրիշներ զայն կ'ընկալեն իբրեւ «չափ նշող» (ուրեմն՝ բան մը ընող), հետեւաբար՝ **չափանիշներ**: Այս շփոթը շատ խառնակ կը դարձնէ **նիշ** վերջաբաղադրիչը կրող բարդ բառերու յոգնակին: Նման պարագաներու եւ միօրինակութեան համար նախընտրելի է իբրեւ գոյական ընկալել այսպիսիները: Երբեմն նոյնիսկ վաւերական հայագէտներ ու լեզուագէտներ տարբեր մեկնաբանութիւն կու տան. օրինակ՝ Մեյթիխանեան կ'ըսէ **դրամանիշներ**, **չափանիշներ**, մինչ Աղայեան՝ **դրամանիշեր**, **չափանիշեր**[17]**,** իսկ Մալխասեան ունի՝ **չափանիշներ**, եւ սա միակ պարագան չէ, ուր անուանի հեղինակութիւններ կը հակադրուին իրարու:

[17] Աղայեան **չափանիշեր** կը թելադրէ իր բառարանին մէջ, բայց ահա *Ընդհանուր եւ հայկական բառագիտութիւն*-ի մէջ կը գտնենք **չափանիշներ** (էջ 266):

- **շար** արմատը կրնայ նշանակել **շարք** եւ տալ **ատամնաշարեր**, **դիպաշարեր**, **զօրաշարեր**, **կառաշարեր**, **հաղորդաշարեր**, **հնչիւնաշարեր**, **մատենաշարեր**, **նկարաշարեր**, **որմնաշարեր**, **սիւնաշարեր**, **ստեղնաշարեր**[18]. ան կրնայ նշանակել նաեւ շարող եւ տալ **ադամանդաշարներ**, **գրաշարներ** եւ **տողաշարներ** (linotype):

- **շարժ** կրնայ նշանակել **շարժում՝ երկրաշարժեր**, **զօրաշարժեր**, **տեղաշարժեր** եւ այլն, բայց նաեւ **շարժող**, շարժում կատարող՝ **ինքնաշարժներ**, **շոգեշարժներ**, **վայրաշարժներ**:

- **չափ** կրնայ նշանակել թուային ծաւալ, երկարութիւն, մակերես եւ այլն, ուստի՝ **յարաչափեր** (paramètre), **արժեչափեր**, **ձեւաչափեր**, **ոտնաչափեր**, **պատժաչափեր**, **տրամաչափեր**, **քայլաչափեր**. բայց ան կրնայ նշանակել նաեւ չափող՝ **անկիւնաչափներ**, **բարձրաչափներ**, **երկրաչափներ**, **խտաչափներ**, **ուղեչափներ**, **ջերմաչափներ**, **ցրտաչափներ** եւ այլն:

- **պահ** կը նշանակէ որոշ՝ յարաբերաբար կարճ ժամանակ մը, ըստ այսմ ալ՝ **դասապահեր**, **իրիկնապահեր**. կը նշանակէ նաեւ **պահող**, ուրեմն՝ **աւանդապահներ**, **գիշերապահներ**, **կարգապահներ**, **հերթապահներ**: Ունինք **շաբաթապահ** բառը, որ կը նշանակէ միաշաբաթեայ պահք կամ պաս՝ ի տարբերութիւն մեծ պահոց, որ կը տեւէ եօթը շաբաթ. այս բառը կու տայ **շաբաթապահեր**: **Շաբաթապահ** կը կոչուին նաեւ ծանօթ աղանդաւորները, որոնց համար շաբաթ օրը սուրբ է. այս վերջինը կու տայ **շաբաթապահներ**:

- **պաշտ**. բարդ բառերու վերջը կը կիրակուի մի՛այն իբրեւ բայարմատ եւ բարդութեան կու տայ բան մը ընողի՝ պաշտողի, դաւանողի, հետեւողի, ծառայողի նշանակութիւնները. ուրեմն՝ **գեղապաշտ-գեղապաշտներ**, **իրապաշտ-իրապաշտներ**, **խաչապաշտ-խաչապաշտներ**, **կռապաշտ-կրապաշտներ**, **վիպապաշտ-վիպապաշտներ** եւ այլն:

- **պետ.** շատ քմայքոտ արմատ մըն է, ամէնէն շատ բազմաձեւութիւն յառաջացնողներէն մէկը**:** Ենթադրուած է **իշխողի**, **մեծաւորի**, **գլխաւորի** իմաստով՝ **եր**-ով կազմել յոգնակին հետեւեալ բառերուն՝ **ագարակապետեր**, **ազգապետեր**, **ախոռապետեր**, **անտառապետեր**, **ատենապետեր**, **արարողապետեր**, **աւազակապետեր**, **աւատապետեր**, **բանտապետեր**, **բերդապետեր**, **բժշկապետեր**, **գաւառապետեր**, **գիւղապետեր**, **գնդապետեր**, **գրադարանապետեր**, **դիւանապետեր**, **դպրապետեր**, **զօրապետեր**, **թաղապետեր**, **խմբագրապետեր**, **կուսակցապետեր**, **կրօնապետեր**, **հազարապետեր**, **համայնքապետեր**, **հարիւրապետեր**, **հովուապե-**

[18] Բազմիմաստ բառ մըն է այս,– գոնէ արեւմտահայերէնի մէջ,– որ առայժմ կը նշանակէ՝ ա) բնական ատամներու շարքը ծնօտին վրայ, բ) կեղծ ատամներու շարժական շարք (prothèse), գ) այն մասնագէտը, որ կը շարէ կեղծ ատամները մոմի վրայ: Առաջին երկու իմաստները կու տան **ատամնաշարեր**, երրորդը կու տայ **ատամնաշարներ**:

տեր, **հրեշտակապետեր**, **մառանապետեր**, **յիսնապետեր**, **նահանգապետեր**, **նաւապետեր**, **ոստիկանապետեր**, **ուսուցչապետեր**, **պահակապետեր**, **պահեստապետեր**, **սեղանապետեր**, **սենեկապետեր**, **սպարապետեր**, **վեհապետեր**, **տասնապետեր**, **տոհմապետեր**, **ցեղապետեր**, **քահանայապետեր**, **քաղաքապետեր**, **քրմապետեր** եւ այլն:

Այդ իմաստը անթելադիր կը մնայ **անջրպետ**, **ասպետ**, **ատենապետ**, **բռնապետ**, **հայրապետ**, **ճարտարապետ**, **մայրապետ**, **մարդպետ**, **մարզպետ**, **մաքսապետ**, **միապետ**, **նահապետ**, **սակաւապետ** (oligarque), **վարդապետ**, **վարժապետ**, **վարչապետ** եւ **վարպետ** բառերուն մէջ, քանի որ ասոնք **պետ**-ի իմաստը չեն թելադրեր, կ'ընկալուին իբրեւ սովորական բազմավանկ գոյականներ եւ բնականօրէն կու տան **անջրպետներ**, **ասպետներ**, **ատենապետներ**, **բռնապետներ**[19], **հայրապետներ**, **ճարտարապետներ**, **մայրապետներ**, **մարդպետներ**, **մարզպետներ**, **մաքսապետներ**, **միապետներ**, **նահապետներ**, **սակաւապետներ**[20], **վարդապետներ**, **վարժապետներ**, **վարչապետներ** եւ **վարպետներ**:

- **վար.** բոլոր բարդութեանց մէջ կը պահէ իր դերբայական իմաստը՝ իբրեւ վարող, քշող, առաջնորդող, կառավարող, ղեկավարող. օրինակ՝ **ատենավարներ**, **ժողովավարներ**, **ժողովրդավարներ**, **խմբավարներ**, **կառավարներ**, **ղեկավարներ**, **մեքենավարներ**, **շարժավարներ**, **ռազմավարներ**:

- **տառ.** ընդհանրապէս կը պահէ իր առարկայական իմաստը՝ տառ, գիր. ուրեմն՝ **թաւատառեր**, **լուսատառեր**, **մեծատառեր, շեղատառեր, փոքրատառեր**: Կը նշանակէ նաեւ տուեալ տառերով գրուած. օրինակ՝ **հայատառներ**, **թրքատառներ** եւ այլն:

- **տես** արմատը **ականատես**, **ամենատես**, **երազատես**, **լրտես**, **կարճատես**, **հանդիսատես**, **տնտես** բառերուն կու տայ տեսնողի իմաստը. ուրեմն՝ **ականատեսներ**, **ամենատեսներ**... եւ այլն: Իսկ **աղջիկտես**, **համտես**, **հիւանդտես** բառերուն մէջ տեսնողի գաղափարը չի ծագիր հայ լեզուամտածողութեամբ, այլ միայն՝ տեսնելու արարքի գաղափարը, ուստի ասոնք կու տան **աղջիկտեսեր**, **համտեսեր**, **հիւանդտեսեր**: Այսպիսիները, սակայն, կանոնի ամբողջական անիմացութեան պայմաններու մէջ, շատ դիւրաւ կ'ընկալուին իբրեւ սովորական բազմավանկ բառեր, որոնց յոգնակին կը կատարուի **ներ**-ով:

---

[19] Բարացուցական է պարագան անոնց, որոնք իրարու կից տարբեր ձեւերով կը յոգնակերտեն. օրինակ՝ «Կուսակալները գացին-ինկան **բռնապետներու** գիրկը»,- ճիշդ երկու տող վարը՝ «Սկսած է հարստահարողները, **բռնապետերը**, կեղեքողները ճաշի հրաւիրել» (Քասիմ, *Օրուան մտածումները*, էջ 430),- իսկ երկու էջ անդին՝ դա՛րձեալ **բռնապետեր**:

[20] **Սակաւապէտ** (արմատը՝ **պէտ**), որ կը նշանակէ սակաւ՝ քիչ պէտքեր կամ կարիքներ ունեցող, կու տայ **սակաւապէտներ** եւ այս ցանկին չ'առնչուիր:

- **տու**. սա տալ բայի արմատն է եւ իրմով բաղադրուող բոլոր բառերը կ'օժտէ **տուող**-ի իմաստով, հետեւաբար այսպիսիները իրենց յոգնակին կը կազմեն **ներ**-ով. օրինակ՝ **աւանդատուներ**[21] **գովազդատուներ**, **գործատուներ**, **դասատուներ**, **խորհրդատուներ**, **կաթնատուներ**, **հարկատուներ**, **մրգատուներ**, **նուիրատուներ**, **պատասխանատուներ**, **պատուիրատուներ**, **ստնտուներ**, **տեղեկատուներ** եւ այլն:

Տեսնել ստորև **տուն** վերջաբաղադրիչով բարդութիւնները:

- **տուն** արմատը իրմով կազմուած բոլոր բառերուն մէջ՝**աղօթատուն**, **աւանդատուն**[22], **գերեզմանատուն**, **գրատուն**, **դասատուն, դրամատուն**, **զանգակատուն**, **թոնրատուն**, **կաթնատուն**, **հանրատուն**, **հացատուն**, **ձեռագրատուն**, **սեղանատուն**, **վերնատուն**, կը պահէ իր բուն իմաստը. ասոնք բոլորը տուներ են, շինութիւններ, հաստատութիւններ, բան մը բովանդակող նիւթական կառոյցներ. ըստ այսմ ալ՝ **աղօթատուներ**, **գերեզմանատուներ**, **գործատուներ**, **գրատուներ**, **դարմանատուներ**, **դրամատուներ**, **թոնրատուներ**, **ձեռագրատուներ**, **կառատուներ**, **հանրատուներ**, **հացատուներ**, **սեղանատուներ**, **վերնատուներ**. իսկ **մեծատուն** արդէն կը նշանակէ **մեծ տուն ունեցող անձ**, ուրեմն՝ **մեծատուններ**, նաեւ՝ **վաչկատուններ** (վաչի՝ կառքի մէջ բնակողներ, վաչը իբրեւ տուն ունեցողներ):

Ծանօթ.- Բերուած ցանկին մէջ կը գտնենք **աւանդատուներ**, **գործատուներ**, **դասատուներ**, **կաթնատուներ** բարդութիւնները (չորսն ալ իբրեւ **տուն**), որոնք այս նոյն ուղղագրութեամբ, սակայն տարբեր կառոյցով եւ իմաստով մտած են վերը՝ նախորդ պարբերութեան մէջ՝ **տուողի** իմաստով: Ձեւաբանական նման զուգադիպութենէ խուսափելու համար է, հաւանաբար, որ օրին Զապել Ասատուր առաջարկած է **տուն** արմատով վերջացող գոյականները յոգնակերտել **ներ**-ով, այսինքն՝ **գրատուն-ներ**, **դարմանատուն-ներ**, **գինետուն-ներ** եւ այլն, որպէսզի տարբեր գրուին զուգահեռ ձեւերը՝ **գործատու-ներ** եւ **գործատուն-ներ**, **դասատու-ներ** եւ **դասատուն-ներ**, **կաթնատու-ներ** եւ **կաթնատուն-ներ** եւ այլն: Գազանճեան իր կարգին ունի **գինետուններ**: Յակոբ Պարոնեան, Գրիգոր Զոհրապ, Յակոբ Օշական, Աճառեան, օրինակ, հետեւողականօրէն ունին **գինետուններ**, **սեղանատուներ**, Օտեան՝ **գարեջրատուններ** («Փանջունի», նախաբան), Դ. Վարուժան՝ նմանապէս («Նամականի»): **Գործատուններ** կը գրէ Գ. Մենեւիշեան: Աւելի ուշ Բենիամին Թաշեան իր կարգին յարուցած է այս նոյն հարցը՝ իր կողմէ առաջարկելով զանազանել **դրամատու-ներ** եւ **դրամատուն-ներ** տարբերակները, եւ ան ունի հետեւորդներ ալ: Այսպիսի զուգադիպութիւններ կը պատահին ամեն լեզուի մէջ, եւ մարդոց միտքէն բնաւ չ'անցնիր հակականոնական ու բռնազբօսիկ լուծումներով աղաւաղել իրենց ուղղագրութիւնը. օրինակ՝ ֆրանսերէն **որդ** բառի յոգնակին (ver+s) կը

---

[21] Կը նշանակէ իր խնայողութիւնը դրամատան մը տոկոսով աւանդ՝ պահ տուող:

[22] Այսպէս կը կոչուին եկեղեցւոյ սովորաբար խորանին երկու կողմերը գտնուող խուցերը, ուր կը պահուին արարողական զանազան իրեր, մասնաւորաբար քահանային եւ դպրաց դասին զգեստները, հողաթափերը, հոգեւոր գիրքեր, խաչ ու բուռվառ, առհասարակ նաեւ մկրտութեան աւազանը եւ այլն:

նոյնանայ **դէպի** նախադրութեան (vers) եւ **տող** գոյականին հետ (vers), եւ ոչ մէկ ֆրանսացիի միտքէն անցած է ասոնցմէ մէկուն եւ շատ ուրիշներու ալ ուղղագրութիւնը փոխել՝ բառնալու համար անախորժ զուգադիպութիւնները: Հետեւաբար ընդունելի չէ ուղղագրական երկուութիւնը. մենք գրենք մէկ ու միասնական, բայց մանաւանդ կանոնական ձեւով **գործատուներ**, **դասատուներ** եւ **կաթնատուներ**,– որոնք, այո, երկիմաստ են,- այն խոր համոզումով, որ խօսքային միջավայրի մէջ կարելի պիտի ըլլայ շատ դիւրաւ զանազանել բառին իմաստը, այլ խօսքով՝ գործ տուողն ու գործատեղին, դաս տուողն ու դասատեղին, կաթ տուողն ու կաթի մշակումին ծառայող շինութիւնը:

- **ցան** արմատը կրնայ նշանակել **ցանք**, եւ այս պարագային կը ստանանք **աշնանացաններ**, **գարնանացաններ**. ան կրնայ նշանակել նաեւ **ցանող**, ուրեմն՝ **մահացաններ**, **մոխրացաններ**, **որոմացաններ**, **սերմնացաններ**, **հրացաններ** եւ այլն:

- **ցոյց**. կը նշանակէ հրապարակային երթ, բողոք, ուրեմն՝ **զօրացոյցեր**, **հակացոյցեր**, **նստացոյցեր**. կը նշանակէ նաեւ բան մը ցոյց տուող, ուրեմն՝ **ապացոյցներ**, **ժամացոյցներ**, **կողմնացոյցներ**, **հաշուեցոյցներ**, **յարացոյցներ**, **տողացոյցներ**, **օրացոյցներ**, սակայն տրուած ըլլալով որ անկենդան առարկաներ են ասոնցմէ ոմանք, խօսողին համար անթելադրելի կը մնայ անոնց բան մը ցոյց տուողի համգամանքը, եւ ան հակամէտ է ըսելու **ժամացոյցեր**, **հաշուեցոյցեր** եւ այլն, ինչ որ կը նշանակէ, թէ յատուկ ճիգ ու արթնութիւն պէտք է այսպիսիները ճիշդ կիրարկելու համար, ինչ որ միշտ պարագան չի կրնար ըլլալ մարդկայնօրէն:

- **փող**. այս արմատով ունինք **աւագափող**, **եղեգնափող**, **եղջերափող**, **լսափող** (հեռախօսի), **խոչափող**, **խօսափող**, **շնչափող**, **որսափող**, **ջրփող** գոյականները, որոնք իրենց բուն իմաստով՝ **խողովակ** կամ **շեփոր** կը նշանակեն եւ իրենց յոգնակին կը կազմեն **եր**-ով, օրինակ՝ **աւագափողեր**, **լսափողեր** եւ այլն:

Ասոնցմէ **լսափող** եւ **խօսափող** փոխաբերաբար միայն կը բնորոշեն յատուկ անձեր, առաջինը՝ իբրեւ լրտես, երկրորդը՝ իբրեւ պատգամաբեր կամ բանբեր, եւ այս պարագային կը ստանանք **լսափողներ** եւ **խօսափողներ**:

- **փոխ**. **փոխող** իմաստով կու տայ **լումայափոխներ**, **անուանափոխներ**, **դաւանափոխներ**, **դիմափոխներ**, **հաւատափոխներ**, **կրօնափոխներ** եւ այլն. իսկ **փոփոխութիւն** իմաստով՝ **հերթափոխեր**, **քայլափոխեր**:

- **քաղ.** կրնայ նշանակել հաւաքուած առարկաներու ամբողջութիւնը կամ ինքնին հաւաքելու գործողութիւնը. օրինակ՝ **ծաղկաքաղեր**, **հասկաքաղեր**, **պտղաքաղեր**, **փայտաքաղեր** եւ այլն. կրնայ նշանակել նաեւ քաղող, եւ այս պարագային կը ստանանք **ծաղկաքաղներ**, **հասկաքաղներ**, **պտղաքաղներ**, **փայտաքաղներ**, **պատառաքաղներ**, **զօշաքաղներ** (կաշառք ստացող) եւ այլն:

- **քեր**. շփոթ կամ երկակի թելադրականութեամբ օժտուած է արմատ է սա, որ կը գործածուի **երկնաքեր** բառին մէջ, որ ստուգաբանօրէն կը նշա-

նակէ «երկինքը քերող»[23], սակայն միջին հայուն անծանօթ կը մնայ այս ստուգաբանութիւնը, այսինքն՝ քերելու գործողութեան գաղափարը, եւ ան ընդհանրապէս հակամէտ է ընկալելու բառս իբրեւ **քեր** միավանկ վերջաբաղադրիչով (թէկուզ իրեն անծանօթ) կառոյց մը եւ ըսելու **երկնաքերեր՝** փոխանակ **երկնաքերներ:**

ՄՈԼՈՐԵՑՈՒՑԻՉ ՊԱՐԱԳԱՆԵՐ ՈՒ ԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կանոնի խախտում կը յառաջանայ, երբ միավանկ արմատը, օրինակ՝ **զէն**, **կիթ**, **կութ,** անկախ գործածութիւն չունի (ոչ մէկ առիթ եղած է **զէներ**, **կիթեր**, **կութեր** ըսելու), ուստի ասոնցմով ստացուած բարդութիւնները իրենց կարգին կ'ընկալուին իբրեւ սովորական բազմավանկ բառեր եւ իրենց յոգնակին կը կազմեն **ներ**-ով՝ **արձակազէններ**, **հրազէններ**, **կովկիթներ**, **հաւկիթներ**, **հողկիթներ**, **ձկնկիթներ**, **այգեկութներ** եւ այլն: Նոյն կացութեան մէջ կը գտնուի **քարայր** բառը. հակամէտ ենք ըսելու՝ **քարայրներ**, քանի որ **այր** գոյականը անջատ կամ ազատ կիրարկութիւն չունի արդի արեւմտահայերէնի մէջ, ուստի եւ թելադրական չէ **այրեր** ձեւը, որպէսզի ըսենք՝ **քարայրեր** (ինչպէս կը թելադրեն մեր բոլոր աղբիւրները). ամբողջութիւնը մեզի կը թուի երկվանկ բառ մը, ուրեմն՝ **քարայրներ**, մինչ արեւելահայը շատ հեշտութեամբ կ'ըսէ **քարայրեր**, որովհետեւ **այր-**ը շատ ընթացիկ բառ է իրեն համար**:** Նոյնքան անթելադիր է **ականթարթ** բառը՝ իբրեւ գումարը **ակն** գոյականին եւ **թարթ** բայարմատին. **թարթ** անկախ բառ մը չունինք, որպէսզի վարժ ըլլայինք ըսելու **թարթեր**. միւս կողմէ՝ **ակնթարթ** բառը,– շատ կարճ պահիկ մը,– շատ ու շատ հեռացած է **թարթել** բայի ցոյց տուած գործողութենէն, ահա թէ ինչու դժուար է ակնկալել, որ ըսենք **ականթարթեր** (ինչպէս կը թելադրէ Աղայեան), այլ կ'ըսենք՝ **ականթարթներ** սխալ, սակայն նուիրականացած ձեւը:

Կերպ, **տուն**, **վանկ**...ասոնք շատ զօրաւոր անհատականութիւն ունեցող անկախ բառեր ըլլալով, մեզ կը մղեն իրենցմով աւարտող բարդ բառերն ալ **եր**-ով յոգնակերտելու՝ **յովազակերպեր**, **մեծատուներ**, **միավանկեր** եւ այլն, որովհետեւ շատ սովորական է ըսել՝ **կերպեր**, **տուներ**, **վանկեր**: Ուրեմն որոշ կրթանք, որոշ վարժութիւն եւ ուշադրութիւն կը պահանջէ այսպիսիները **ներ**-ով յոգնակերտելը՝ **յովազակերպներ** (յովազի կերպ ունեցող)**, մեծատուններ** (մեծ տուն ունեցող, մեծահարուստ), **միավանկներ** (մէկ վանկ ունեցող) եւ այլն, որոնց բոլորն ալ ունեցողի իմաստ կ'արտայայտեն:

Ներ-էն խուսափելու հակամէտ են նաեւ **ականանետ** եւ **նռնականետ** բառերը, մէկ կողմէ որովհետեւ **նետ** արմատը շատ հեշտութեամբ կ'ընդու-

[23] Սա բառացի թարգմանութիւնն է ֆրանսերէն **gratte-ciel**-ին եւ անգլերէն **sky-scraper**-ին:

նի **նետեր** յոգնակին, միւս կողմէ նաեւ՝ հաւանաբար խուսափելու համար **ն** բաղաձայնի կրկնութենէն:

Ծանօթ.– Ասոնք եւ նմանները «բան մը ընողի» գաղափարը չեն արթնցներ խօսողին մէջ, որովհետեւ ըստ ինքեան իրենք բան մը ընող չեն, անշունչ ու անշարժ առարկաներ են: Բան մը ընելու համար, ըսենք՝ բան մը նետելու համար, պէտք է միջամտէ մա՛րդը, ձեւով մը մարդը ի՛նք է որ բան մը նետող կը նկատուի: Այնքան ատեն որ ան բացակայ է, ապա սոսկական սարքը ինքնին **ներ**-ով յոգնակի կազմելու թելադրանքը չ'ըներ: Միւս կողմէ, սակայն, նոյն **նռնականետեր** ըսողը շատ դիւրաւ **նռնականետներ** պիտի անուանէ այն **մարտիկները**, որոնք կը գործածեն նռնականետը կամ թէկուզ իրենց սեփական ձեռքով կ'արձակեն նռնակը: Որքան ալ այս վերջինը բնորոշելու համար ունենանք **նռնականձիգ** յատուկ եզրը, այսուհանդերձ միջին հայուն համար **նռնականետը** (իբրեւ նռնակ նետող անձ) եւ **նռնականձիգը** այնքան ալ տարբեր չեն ինչեր:

* *

Ինչպէս նկատելի է, կը գտնուինք դէմ-յանդիման շատ փխրուն ու քմայքոտ կանոնի մը, ուստի եւ կարելի չէ գրչի մէկ հարուածով միօրինակ տնտեսել այն բազմահազար բառերը, որոնք պէտք է յիշեալ կանոնին ու տրամաբանութեան ենթարկուէին: Մեծ դերակատարութիւն ունին այստեղ ենթակայական գործօնները, մէկ կողմէ հոգեբանական ազդակը, միւս կողմէ՝ սովորութիւնը, յատկապէս ռամիկին քով: Ան շատ աւելի շեշտուած է արեւմտահայուն մէջ, որուն լեզուն ոչ մէկ ատեն ձեռնհասօրէն ուսուցուած է դպրոցներու մէջ

ՄԻԱՎԱՆԿ ԱՐՄԱՏՈՎ ԱԾԱՆՑԱԽՈՐՆԵՐ ԳՈՅԱԿԱՆՆԵՐ

ա) Նախաձանցաւորներ

Ասոնք ընդհանրապէս **ներ**-ով կը կազմեն յոգնակին՝ իրենց իմաստին բերումով:

ան – **անբաններ**, **անգութներ**, **անսիրտներ**, **անտուններ** եւ այլն

ապ(ա) – **ապուշներ**, **ապաբախտներ**, **ապագաներ**

առ – **առանցքներ**, **առդիրներ**

բաղ – **բաղաձայններ**

բաց – **բացականներ**, **բացատներ**, **բացիկներ**

դժ – **դժբախտներ**, **դժգոհներ**, **տժգոյններ**

ենթ – **ենթականներ**, **ենթասպաներ**

ընդ – **ըն**(դ)**կերներ**, **ընկերներ**

մակ – **մակդիրներ**, **մակբայներ**, **մակաբոյծներ**, **մակարդներ**

նախդիր – **նախդիրներ**

տ – **տգէտներ**, **տհասներ**

տար – **տարաբախտներ**, **տարագիրներ**, **տարակերպներ**, **տարասերներ** (տարբեր սերում ունեցող), **տարակոյսներ**

տի – **տիկիններ**

Կը գտնենք նաեւ նախածանցաւոր գոյականներ, որոնք յոգնակի կը կազմեն **եր**-ով, ինչպէս՝ **առափեր**, **արտագաղթեր**, **ներգաղթեր**, **ենթագրեր**, **ենթաճիւղեր**, **ենթաբուրդեր**, **ենթահողեր**, **ենթագանկեր**, **ենթաշերտեր**, **ենթագիծեր**, **ենթադասեր**, **ենթակէտեր**, **ենթամասեր**, **ենթապոչեր**, **ենթատոհմեր**, **ենթատիպեր**, **ենթափորեր**, **մակագրեր**, **մակաշերտեր**, **յետսակողմեր**, **վերադարձեր**, **վերնագրեր** եւ այլն:

բ) Վերջածանցաւորներ

Վերջածանցաւոր ամէն գոյական կ'ընկալուի իբրեւ բազմավանկ եւ իր յոգնակին կը կազմէ **ներ**-ով. օրինակ՝ **այգեպաններ**, **անցորդներ**, **գառնուկներ**, **գեղջուկներ**, **գոգնոցներ**, **դիակներ**, **դրսեցիներ**, **երգարաններ**, **երգիչներ**, **էակներ**, **ընթացքներ**, **լեռնցիներ**, **խուժաններ**, **ծնողներ**, **ծովայիններ**, **մատանիներ**, **նշաններ**, **շինականներ**, **չարիքներ**, **սերուցքներ**, **վիպասաններ** եւ այլն:

Միայն **ք** վերջածանց (երբեմնի յոգնակերտը) ունեցող միավանկ գոյականները **եր**-ով կը դառնան յոգնակի. օրինակ՝ **աչքեր**, **բերքեր**, **գիրքեր**, **դիրքեր**, **խելքեր**, **ծալքեր**, **կեանքեր**, **միտքեր**, **մուտքեր**, **վազքեր**, **խօսքեր** եւ այլն:

* *

Այս յօդուածի շարադրման առթիւ մենք շատ լաւ կը գիտակցինք, որ յոգնակերտումի իտէալական միօրինակութիւն մը գրեթէ անկարելի կամ գէթ շատ տարտամ երազ մըն է: Առաւելագոյնը, որուն կարելի է իրապաշտօրէն ձգտիլ առայժմ, վերացումն է արեւմտահայ իրականութեան մէջ աղաղակող սխալագրութեանց, որոնք կը գրուին կանոնի մը բացարձակ անգիտացումի բնազդական պայմաններուն մէջ, եւ ազնիւ ձգտում մը՝ դէպի նուաճագոյնը հասցնելու այդ սխալագրութիւնները:

Յապաւումներ

ՀՀԳՊ Մանուկ Աբեղեան, *Հայ հին գրականութեան պատմութիւն*, 2 հատոր.
ՀԼՏ Մանուկ Աբեղեան, *Հայոց լեզուի տեսութիւն.*
ՆԳԲ «Նահատակ գրագէներու բարեկամներ» մատենաշար.
ՀԼՊ Հրաչեայ Աճառեան, *Հայոց լեզուի պատմութիւն*, 2 հատոր.

THE PLURALIZATION OF NOUNS IN THE ARMENIAN LANGUAGE

(Summary)

ARMENAG YEGHIAYAN (armenag@gmail.com)

This is the first scientific attempt to standardize the pluralizing of nouns, and generally words that identify an object, in Western Armenian, a topic which has been overlooked and has led to diverse and unacceptable practices.

The study tries to clearly differentiate and categorize words according to their structural features: a) monosyllabic words as well as multisyllabic simple words, b) complex words which have a monosyllabic or multisyllabic second constituent. The latter are the basic material of this study.

The author divides the complex words with a multisyllabic second constituent into two groups: 1) multisyllabic second constituents which identify an object, 2) multisyllabic second constituents which have adverbial features. These eventually help us discern whether to use the pluralizing **եր** or **ներ** suffix.

The author examines and discusses an extensive list of words which constitute the most often used words in Western Armenian. He expects using these words as templates will enable individuals to orient themselves and pluralize according to the norms.

Still, there is, however, a set of words which lack any norms of pluralization and are practiced according to personal perceptions. So far these have escaped the possibility of following any rules of pluralization. One may optimistically state, however, that time will offer solutions for these.

ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՏԻՈՔԻ ՇՐՋԱՆԻ ՀԱՅԵՐԷՆ ԽՕՍՈՒԱԾՔՆԵՐԸ

ՅԱԿՈԲ ՉՈԼԱՔԵԱՆ (hagopcholakian@hotmail.com)


Աղեքսանդրակ
Դարմսեակ
Գրգրգիան
Աքրին
Գէլլանպէօյ
Մապաղի
Ֆարրըզը
Սեւ լեռներ
Գիւրէլի
Հովուտ
Սուլուք Օլուք
Չադրալ թեփէ
Սրըզ
Պէլլան
Սուլուք Սու
Գանըզ Տերէ
Գէշտ Տերեսի
Նարինկիլիք
Դադրաս
Սեւ գետ
Պաւուտա
Հաւաս
Հէնտէքիս
Ս. Սիմոն
Աթմա
Սեւ լեռներ
Ասպրոպ Փիւրք (Նորաշէն)
Սրթաձո (Բիհանփէ)
Ասպաղ Չալթի (Հալաչէն)
Մինասա
Գոմ (Ընդշէհիր)
Սեւ լեռներ
Սեւ գետ
Սեւ գետ
Ասթրիի գետ
Սեւ գետ
Սեւ գետ
Սեւ

նոյնպէս բարբառախօս էր, բայց իր բարբառային յատկանիշերով էապէս տարբեր էր հարաւի հայերէն խօսուածքներէն:

Ասոնցմէ Սուետիոյ եւ Քեսապի բարբառները համեմատաբար լայն ուսումնասիրութիւններու արժանացած են ու տակաւին ուշադրութիւն կը գրաւեն՝ տրուած ըլլալով որ տակաւին կենդանի բարբառներ են Այնճարի եւ Քեսապի մէջ:

Մեր իրականութեան մէջ կայ թիւր պատկերացում մը, թէ այս շրջանները Հայկական Կիլիկիոյ մաս կը կազմեն: Փաստ է, որ Անտիոքի շրջանը - ներառեալ վերոյիշեալ հայկական տարածքները - չեն մտած Կիլիկիոյ հայկական իշխանութեան սահմաններէն ներս, թէեւ անոր քաղաքական ու տնտեսական ազդեցութիւնը կարելի չէ ուրանալ Անտիոքի լատին դքսութեան վրայ (1098-1268), որուն սահմաններէն ներս կը գտնուէին վերոյիշեալ հայկական գաւառակները: Դեռ Թ. դարէն այստեղ հայ հոծ գաղթականութեան կար. Անտիոքի կառավարիչներէն ոմանք հայեր եղած են, իսկ Փիլարտոս Հայը (Վահրամ Վարաժնունի) 1078ին իր իշխանապետութեան կեդրոնը դարձուց Անտիոք քաղաքը: 1085ին քաղաքը անցաւ սելճուք թուրքերուն ձեռքը: Լատին եւ արաբ պատմիչներ բազմաթիւ դրուագներով կը ներկայացնեն Անտիոք քաղաքի եւ անոր շրջակայ Ռուճի հովիտի եւ Սեւտիի (Սուետիոյ) հայոց մասնակցութիւնը Անտիոքի անկման պատմութեան մէջ: Սուրիացի արաբ ժամանակակից պատմաբան Սուհէյլ Զաքքար Անտիոքի եւ շրջակայքի մասին կը ծանօթագրէ, թէ «*շրջանին բնակիչները մեծամասնութեամբ ոչ-մահմետականներ էին, հայեր էին*»[1]: Ժամանակակից ուրիշ արաբ պատմաբան մը՝ Մուհամմէտ Տամէն, կը գրէ. «*Երբ խաչակիր զօրքերը յարձակեցան Անտիոքի շրջակայ գիւղերուն վրայ, տեղւոյն բերդերուն եւ ամրոցներուն հայերը ապստամբութիւն հռչակեցին... Անտիոքի շրջակայ հայ բնակչութեան այս կեցուածքին դրդապատճառը Աղսիանի գէշ վերաբերմունքն էր հայոց դէմ, բրտութիւնն ու անգթութիւնը, զորս ի գործ կը դնէր իր երկրին մէջ*»[2]: Ըստ Տամէնի՝ «*Նաեւ կը թուի, թէ ոմանք ունէին անկախութեան ձգտումներ իրենց ապրած շրջաններուն մէջ: Ափիկա զօրաւոր ազդակ մըն էր անոնց կեցուածքին*»[3]:

Յիրաւի, ԺԹ. դարուն յայտնի դարձած Անտիոքի շարք մը բնակավայրերու այս հայերը տեղւոյն հայ հին գաղթականութեան յետնորդներն են:

ԺԹ. դարու վերջաւորութեան արեւմտահայ մամուլը լրջօրէն սկսաւ հետաքրքրուիլ ժողովրդական բառ ու բանով, գաւառաբարբառներով ու հայերէնի տարբեր խօսուածքներով՝ տեղ տալով Մշոյ, Սասունի, Հազրոյի, Քղի-

---

[1] د. سهيل زكار, *الحروب الصليبية* (Խաչակրաց պատերազմները), Բ. հատոր, Դամասկոս, 1984, էջ 536, ծանօթ. 3:

[2] محمد ضامن, *إمارة حلب في ظلّ الحكم السلجوقي* (Հալէպի իշխանութիւնը սելճուքեան տիրապետութեան տակ), Դամասկոս, 1990, էջ 183-84:

[3] Նոյն, էջ 55:

ի, Խարբերդի, Արաբկիրի, Մարաշի, Զէյթունի, Հաճընի եւ այլ շատ տեղեր-ու բարբառներով գրի առնուած բանահիւսական նիւթերու, բառային ցանկերու, բարբառներու քերականական նկարագրութեան նուիրուած ուսումնասիրութիւններու: Գարեգին եպս. Սրուանձտեանցի սկսած գործը շարունակութիւն ունեցաւ: Արեւմտահայ գաւառներէն բաւականին նիւթ հասաւ մամուլին: Կ. Պոլսոյ *Բիւրակն* հանդէսը փաստօրէն շտեմարան մը եղաւ նման հաւաքագրումներու եւ ուսումնասիրութիւններու: Այս ընդհանուր ծիրին մէջ կը հանդիպինք նաեւ Անտիոքի շրջանէն բարբառային քանի մը գրառումներու: Այսպէս՝

1,- Զ. Կէնճեան (Հալէպէն), «Անտիոքի (=Անթաքիոյ) մօտակայ հայաբնակ գիւղերու գաւառաբարբառէն նմոյշ մը», *Բիւրակն*, ԺԷ. տարի, 7 Յուլիս 1899, թիւ 28, էջ 443: Հոս կը տրուի Յովհաննու աւետարանի ԺԲ. գլուխի 24 համարի բնագիրը եւ անոր թարգմանութիւնը: Բարբառագէտ Գաղթուհի Կ. Հանանեան կը յայտնէ, որ ան «Հաջի-Հաբիբլիի խօսուածքով է»[4]:

2.- Սիսական Վարդ., «Լեզուաբանական - Անտիոքայ Քէսապ գիւղի հայոց լեզուով ըսուած «Հայր մեր»ը», *Բիւրակն*, ԺԸ. տարի, 12 Դեկտեմբեր 1900, թիւ 46, էջ 731: Յետ թարգմանութեան՝ կու տայ 4 բառի բացատրութիւն. *պիւպ*՝ հայր, *չիւցըրքի*՝ ինչպէս որ, *թըրզէն*՝ այնպէս, *Խալըսօ*՝՝ ազատէ:

3.- Արամոյի բարբառով կը հանդիպինք երկու նիւթերու.- 1) գրաբար երեք աղօթքներէ քաղուած 8 տողանի վերածում մը, զոր կու տայ Բերիոյ Թղթակիցը՝ Արսէն քահանայ Յարութիւնեան («Կիլիկեան մոռցուած անկիւններ», *Արեւելեան Մամուլ*, 1906, էջ 1203), 2) Այծեամն, «Թղթակցութիւն – Նմոյշ մը Արամո գիւղին հայ լեզուէն», *Հանդէս ամսօրեայ*, ԻԱ տարի, Յունուար, 1:1907, էջ 27. հոս թարգմանաբար կը տրուի «Հայր մեր»ը եւ հատուած մը սաղմոսերգուէն՝ «Սաղմոս եւ մաղթանք»:

Ի. դարու սկիզբը, թէ՛ արեւելահայ եւ թէ՛ արեւմտահայ իրականութեան մէջ, մամուլի մէջ թէ առանձին գիրքերով մէկտեղուած բարբառագիտական նիւթը հայագէտներուն մտածել տուաւ հայ բարբառները աշխարհագրական տեղաբաշխումէն անկախ՝ դասակարգել լեզուական ընդհանուր յատկանիշի մը հիման վրայ: Այդ բանին ձեռնարկեց Հրաչեայ Աճառեան 1911ին հրատարակած իր *Հայ բարբառագիտութիւն (ուրուագիծ եւ դասաւորութիւն)*[5] աշխատասիրութեամբ, որով ան, հիմնուելով սահմանական եղանակի ներկայ ժամանակի կազմութեան տարբերութիւններուն վրայ, հայ բարբառները ձեւաբանօրէն դրաւ երեք ճիւղերու մէջ՝ *ում, կը* եւ *ել*: Ան փաստօրէն հիմը կը դնէր հայ բարբառագիտութեան՝ բարբառներու գիտական նկարագրութեան եւ դասակարգումին:

---

[4] Գաղթուհի Կ. Հանանեան, *Սվեդիայի բարբառը (Խտրբեկի խօսուածք)*, Երեւանի Համալսարանի հրատ., Երեւան, 1995, էջ 12:

[5] Հր. Աճառեան, *Հայ բարբառագիտութիւն (ուրուագիծ եւ դասաւորութիւն հայ բարբառների)*, Մոսկուա-Նոր Նախիջեւան, 1911:

Աճառեան Անտիոքի շրջանի վերաբերող վերոյիշեալ առաջին եւ երրորդ նիւթերու եւ այլ միջոցներով հայթայթած մասնակի տուեալներու հիման վրայ կիլիկեան բարբառներու մէջ կ'առանձնացնէ Սուրիոյ բարբառը՝ նկատի ունենալով Արամոյի եւ շրջակայ գիւղերու խօսուածքները, սակայն ան կիլիկեան բարբառախումբին մէջ «Անթաքայի բարբառ» անունին տակ կը դնէ Սուետիոյ, Քեսապի, Արամոյի, Քիլիսի, Պէյլանի եւ Ճսըր Շուղուրի գիւղերու խօսուածքները: Բոլորը կը դնէ *կը* ճիւղին մէջ: Պէտք է նկատի ունենալ, որ մեծ գիտնականը իր այս եզրայանգումները կատարած է բարբառային եւ աշխարհագրական խիստ սահմանափակ ու յաճախ ոչ-ճիշտ տեղեկութիւններու վրայ. օրինակ՝ բարբառներու այդ շրջանակին մէջ կը յիշատակէ Քիլիսը, որ արդէն թրքախօս էր այդ ատեն, իսկ Ճսըր Շուղուրի գիւղերը (նկատի ունենալ Եագուպիէ եւ Գնիէ գիւղերը) արաբախօս էին:

Աճառեան իր միւս կոթողային աշխատութիւններուն համար եւս, մանաւանդ Սուետիոյ բարբառէն բաւական առատ տուեալներ ձեռք անցընելու եւ օգտագործելու առիթ կ'ունենայ: 1929ին իր գլխաւոր տեղեկատուն է Մուսա Լեռան բարբառին լաւապէս տիրապող Մասիս Փանոսեանը, Հաճի Հապիպլի գիւղէն: *Արմատական բառարան*ի Կ տառէն ետք բարբառային բառերու պարբերութեան մէջ կ'աւելցնէ Սուետիոյ բարբառի տարբերակը: Ան *Հայոց լեզուի պատմութեան* մէջ «Սուրիայի բարբառ» ենթաբաժինին մէջ փաստօրէն կը կրկնէ *Հայ բարբառագիտութեան* մէջ բերուած նիւթերը, բայց *Լիակատար քերականութեան* մէջ աւելի հանգամանօրէն կ'անդրադառնայ Սուետիոյ բարբառի ձեւաբանութեան՝ խօսքի մասերուն ու անոնց քերականական դրսեւորումներուն: Այստեղ՝ Սուետիոյ բարբառին իր տուեալները կ'աւելնան, երբ, 1949ին, կը ծանօթանայ Մուսա լեռան Հաճի Հապիպլի գիւղէն Յովսէփ Գրըգեանի հետ, որուն մայրն ու կինն ալ բարբառի կրողներ էին, իսկ ան կ'աշխատէր Ակադեմիայի տպարանին մէջ, այնպէս որ մշտապէս կրնար տուեալներ փոխանցել Աճառեանին:

Մեծ լեզուաբանին հասու չեն կրնար ըլլալ Քեսապի եւ Արամոյի խօսուածքներէն յաւելեալ տուեալներ: Իդէպ, յիշենք, որ *Արմատական բառարան*ին մէջ միայն մէկ օրինակով կը յիշատակէ Քեսապի բարբառը, հաւանաբար դարձեալ Մասիս Փանոսեանի միջոցով, որովհետեւ հին հայերէնեան այդ բառը մնացած է միայն Քեսապի բարբառին մէջ: Այսպէս՝ քէնթ (կամ քենթ, քենդ, «էգ շուն», «էգ շան ցանկութեամբ կատաղիլը») գլխաբառի բարբառային ձեւերու բաժնին մէջ գրած է. «*Պահուած է Անտիոքի Քեսաբ գիւղում՝ քէյնթ*[6] *'աղջիկ' ձեւով*»[7]:

Յետագային յայտնի լեզուաբան-բարբառագէտներ շարունակած են նոր խօսք ըսել բարբառներու դասակարգման հարցով եւ աւելի ընդարձակ նկարագրութիւններ տուած են առանձին բարբառներու վերաբերեալ: Այս-

[6] Պէտք է ըլլայ *քինթ*. *քէյնթ* կամ *քէնթ* ունինք գրաբար *քիթ* բառին դիմաց:

[7] *Հայերէն արմատական բառարան*, Երեւան, 1979, էջ 576:

պէս՝ Անտիոքի շրջանի հայ բարբառներու առաւել խոր ուսումնասիրութեամբ, նկարագրութեամբ եւ դասակարգումով կը զբաղի Արարատ Ղարիբեան: Ան «Հայ բարբառների դասակարգման հարցի շուրջը» յօդուածին մէջ[8] քննելով շարք մը բարբառներու սահմանական եղանակի ներկայ եւ անցեալ անկատար ժամանակներու կազմութեան ձեւերը՝ նոր ճիւղեր կ'աւելցնէ Աճառեանի յայտնի երեք ճիւղերուն վրայ: Ասոնց մէջ՝ *հայ (հա, ա > ահա)* բառ մասնիկով այդ ժամանակները կազմող բարբառները կը ներկայացնէ իբրեւ առանձին ճիւղ՝ *հայ գըրիմ, հայ գըրէրէմ:* Այս ճիւղին գլխաւոր բարբառը կը նկատէ Քեսապի բարբառը:

Ղարիբեան իր *Հայ բարբառագիտութիւն* գործին մէջ բարբառներու դասակարգման նոր սկզբունք կ'առաջադրէ՝ հնչիւնական սկզբունքը, այսինքն՝ պայթականներու եւ պայթաշփականներու պատմական հնչիւնափոխութիւնը՝ հաստատելով որ Անտիոքի շրջանի բարբառներուն յատուկ է միջին հայերէնեան կամ կիլիկեան բաղաձայնական համակարգը. սա եռաշարք է, ուր գրաբարի ձայնեղները խլացած են, իսկ խուլերը՝ ձայնեղացած, այսինքն՝ տեղաշարժ-տեղափոխութեան ենթարկուած են, շնչեղ խուլերը մնացած են անփոփոխ: Անդ կու տայ նաեւ Սուետիոյ բարբառին հնչիւնաբանութիւնն ու ձեւաբանական նկարագրութիւնը, որուն համար իր գլխաւոր տեղեկատուն է Հաճի Հապիպլի գիւղէն Ալեքսան Փաշայեանը[9]: «Հայ բարբառներու *հա* ճիւղը» գլուխին տակ համառօտ կը նկարագրէ Քեսապի բարբառը՝ հնչիւնաբանութիւն, ձեւաբանութիւն, նմուշներ: Ասիկա մինչ այդ Քեսապի բարբառին նուիրուած ամենէն ընդարձակ հրապարակումն է[10]:

Ղարիբեան 1958ին հրատարակեց *Հայերէնի նորայայտ բարբառների մի նոր խումբ* ուսումնասիրութիւնը, որուն երեք բաժինները նուիրուած են Արամոյի, Քապուսիէի եւ Եդեսիոյ (Ուրֆա) բարբառներուն: Հեղինակը Քապուսիէի բարբառին նուիրուած բաժնին մէջ կը յայտնէ. «*Սուետիոյ մէջ մտնող Քապուսիէ գիւղը եւս խօսում է մի առանձին բարբառով*»[11]: Քապուսիէն Սուետիոյ բարբառին մէջ կ'առանձնանայ իբրեւ առանձին խօսուածք: Գիրքին ամենէն կարեւոր բաժինը, ըստ իս, Արամոյի բաժինն է[12]: Իր հիմնական տեղեկատուն է արամոցի Ալեքսան Յարութիւնեանը, որ 1947ին 120 արամոցիներու հետ ներգաղթած է Հայաստան ու հայրենակիցներու մեծամասնութեան հետ հաստատուած Նոր Արէշ, Երեւան: Ղարիբեան անոր մասին կը գրէ. «*Ալեքսան Յարութիւնեանը... զարմանալի նրբութեամբ ճանա-*

[8] Արարատ Ղարիբեան, «Հայ բարբառների դասակարգման հարցի շուրջը», *Տեղեկագիր ՀՍՍՌ ԳԱ հասարակական գիտութիւնների*, 8:1952:

[9] Ա. Ղարիբեան, *Հայ բարբառագիտութիւն*, հրատ.՝ ՀՍՍՌ պետ. հեռ. մանկ. ինստիտուտի, Երեւան, 1953, էջ 430-42:

[10] Նոյն, էջ 443-57:

[11] Ա. Ս. Ղարիբեան, *Հայերէնի նորայայտ բարբառների մի նոր խումբ*, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1958, էջ 79-78:

[12] Նոյն, էջ 9-77:

չում է հայերէն բառերը, առանց սխալի տարբերելով արաբական բառերից... առանց սխալի բնորոշում է հայերէն բառերը արաբերէնից, անգամ հին ասորերէն բառերը, որոնք պահպանուել են հայերէնի մէջ՝ համարելով հայերէն, տարբերում է արաբերէնից»[13]: Ղարիբեան կու տայ Արամոյի բարբառի հնչիւնաբանութիւնը, ձեւաբանութիւնն ու նմուշներ: Ասիկա եզակի աշխատանք մը կը մնայ, որովհետեւ Արամոյի բարբառին մասին գրուած ուրիշ աշխատանքներ չունինք: Հայրենադարձները չեն պահած բարբառը, իսկ Լաթաքիա ապրող բոլոր արամոցիներն ալ արաբախօս են արդէն: 1970ականներուն նոյն բարբառը խօսող մէկ-երկու ղնեմիէցիներ տակաւին կային. ափսոս, չենք կրցած անոնցմէ արձանագրութիւններ կատարել:

Էդ. Աղայեանի կատարած հայ բարբառներու ձեւաբանական երկճիւղ բաժանումին համաձայն՝ Քեսապի բարբառը կը մտնէ Բ. ճիւղի՝ գրաբարակերտ մասնիկաւոր կազմութեամբ բարբառներու *հա* ենթաճիւղին մէջ[14]:

Ըստ Գէորգ Ջահուկեանի կատարած հայերէն բարբառներու բազմայատկանիշ վիճակագրական դասակարգումին՝ Քեսապի, Քապուսիէի, Եողուն Օլուքի, Հաճի Հապիպլիի եւ Արամոյի խօսուածքները կը մտնեն Անտիոքի կամ ծայր հարաւարեւմտեան բարբառախումբի Քեսապ-Սուետիա անկախ ենթախումբին մէջ եւ անով կը զանազանուին Պէյլանի բարբառէն[15]:

Ինչպէս տեսանք՝ հայ բարբառներու դասակարգմամբ զբաղող հայ լեզուաբանները առաւել կամ նուազ չափով կատարած են նաեւ բարբառներու նկարագրութիւն, բայց իրենց գրաւոր կամ կենդանի աղբիւրներու անբաւարարութեան, սխալ տեղեկութիւններուն եւ մասնակի ըլլալուն պատճառաւ ունին որոշ թերութիւններ՝ հնչիւնական եւ քերականական որոշ պարագաներու անտեսում, տառադարձման երկձեւութիւններ, բառացանկերու անբաւարարութիւն եւն.: Հասկնալի է՝ անոնք, Աճառեանէն սկսեալ, բոլոր բարբառներու բաղաձայնական տառադարձումը կատարած են հինհայերէնեան բաղաձայնական համակարգով՝ արտայայտելու համար այն իրողութիւնը, որ գրաբարի ձայնեղները այս բարբառներուն մէջ արտասանուած են խուլ, իսկ խուլերը՝ ձայնեղ, ինչպէս բան>պուն, գիր> կէր, դուռ>տօռ, ձայն> ձ<u>ա</u>ն, ջուր>ճէօր, իսկ պանիր>բէ’նէր, կարմիր>գէ’րմէր, տուն> դէօն, ծայր>ձ<u>ա</u>րք, ճանճ>ջ<u>ա</u>նջ ձեւերով, որ ճիշտ-արտասանելի է արեւելահայերէն բաղաձայնական համակարգը կրողներուն համար, բայց սխալ տեղ կրնայ տանիլ միջինհայերէնեան բաղաձայնական համակարգը կրողները:

Այս միջոցին սուետիացի եւ քեսապցի բարբառակիր հայրենակիցներ եւս կը կատարեն բարբառի նկարագրութեան ծաւալուն փորձեր: Կարեւոր ուսումնասիրութիւն մըն է Իգնատիոս Մարտիրեանի (Հաճի Հապիպլի գիւ-

---

[13] Նոյն, էջ 9-10:

[14] Էդ. Աղայան, *Մեղրու բարբառը*, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1954, էջ 404:

[15] Գ. Բ. Ջահուկեան, *Հայ բարբառագիտութեան ներածութիւն*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1972, էջ 132:

ղէն) աւարտական շարադրանքը, որուն առաջին մասը տպուած է *Էջմիածին* հանդէսին մէջ[16]: Ան կը յայտնէ, որ Անտիոքի շրջանի բարբառները ժողովուրդին կողմէ կը կոչուին «Քիստինյուք», այսինքն քրիստոնեայի լեզու, անով իրենց խօսուածքը տարբերելով արաբերէնէ եւ թրքերէնէ: Հեղինակը կը յայտնէ, որ բարբառը ունի հետեւեալ մասնաճիւղերը, իմա՝ խօսուածքները.-

1.- Հաճի Հապիպլիի մասնաճիւղ՝ «խապլըցնյուք», որով կը խօսին Հաճի Հապիպլիի եւ Պիթիասի բնակիչները:

2.- Եողուն Օլուքի մասնաճիւղ՝ «եուղնըլըցնյուք», որով կը խօսին Եողուն Օլուքի, Խտըրպէկի եւ Վագըֆի բնակիչները:

3.- Քապուսիէի մասնաճիւղ՝ «քեպուսցընյուք», որով կը խօսին քապուս-իէցիները:

4.- Քեսապի մասնաճիւղ՝ «քեսպըցնյուք»[17], որով կը խօսին Քեսապ, Գարատուրան, Սեւ Աղբիւր, Տուզաղաճ, Պաղճաղազ, Քէօրքիւնա, Չինար գիւղերու բնակիչները[18]:

5.- Ընեմիէկի մասնաճիւղ[19] եւ իր արուարձաններ:

Մուսա Լեռան կամ Սուետիոյ բարբառի նկարագրութեան մէջ առանձնայատուկ տեղ ունի վերապատուելի Տիգրան Անդրէասեանը[20]: Ան բնիկ Եողուն Օլուք գիւղէն է, ստացած է աստուածաբանական կրթութիւն ու ծառայած՝ հայ աւետարանական եկեղեցւոյ ի Զէյթուն, Եողուն Օլուք, Քեսապ, Լաթաքիա, Հալէպ: Եղած է Մուսա Լեռան հերոսամարտի կազմակերպիչներէն մէկը: Եողուն Օլուքի խօսուածքը իր մայրենին է, բայց ծառայողական դաշտի մէջ ըլլալով գիտէր նաեւ Զէյթունի ու Քեսապի բարբառները: Քեսապի եկեղեցւոյ իր ծառայութեան տարիներուն (1924-29, 1935-38), յաճախ հանդիպումներ ունեցած է տոքթ. Աւետիս Ինճեճիքեանի հետ, որ իր կարգին նիւթեր կը հաւաքէր Քեսապի բարբառի ուսումնասիրութեան համար: Անդրէասեանի աշխատանքի նիւթը Եողուն Օլուք-Խտրպէկ-Վագըֆ խօսուածքն է: Աշխատանքը բազմակողմանի է, լեզուական-բարբառային ատաղձի հիման վրայ կը պարզաբանէ գաղթավայրի ծագումը, հարեւան

---

[16] Իգնատիոս Մարտիրեան, «Ջեբէլ Մուսայի բարբառը», *Էջմիածին*, 3:1952, էջ 33:

[17] Լեզուն եւ խօսուածքները կազմող անուններու («քիստինյուք», «խապլըցնյուք», «եուղնըլըցնյուք», «քեպուսցընյուք» «քեսպըցնյուք») «յուք» կամ «նյուք» (աւանդական ուղղագրութեամբ՝ *իւք* կամ *նիւք*) ածանցը հեղինակը կը համարէ փաղաքշական ածանց, մինչ աւելի տրամաբանական է կարծել, որ մակբայակերտ ածանց է՝ *ակ* կամ *անակ*, որ Քեսապի բարբառին մէջ կու տայ *ուօկ/ինուօկ*, իսկ Եողուն Օլուքի մէջ՝ *ըգ/ինըգ*. ձեւի մակբայներ կազմելէ բացի՝ կը կազմէ լեզուներու եւ խօսուածքներու անուններ՝ *փիժկինուօկ/փիժկինըգ*՝ տաճկերէն, թրքերէն, *քիսփինուօկ /քիսթինըգ*՝ քրիստոնեայի լեզու: Լեզուները կը կազմուին նաեւ թրքերէն *ճա* ածանցով՝ *արաբճա, էրմանճա*:

[18] Պէտք է աւելցնել Ներքի Գիւղ, Չագալճըք, Պաշորտ եւ Էքիզոլուք գիւղերն ալ:

[19] Ընեմիէ գիւղն է, որով փաստօրէն Արամօն պէտք է նկատի ունենալ: Արամօ-Ընեմիէն նոյն խօսուածքը կը գործածէին:

[20] Տիգրան Անդրէասեան, *Սվեդիայի բարբառը կամ Քիսթինըգ լեզուն*, ՀՍՍՀ հրատ., Երեւան, 1967:

միւս խօսուածքներուն եւ կիլիկեան բարբառներուն հետ ունեցած առնչութիւնները: Այս շրջանակի հայոց ծագումին վերաբերեալ կիլիկեան վարկածը առաջին անգամ իրաւացիօրէն կը հերքուի վեր. Անդրէասեանի կողմէ: Ան Անտիոքի շրջանին բարբառները (Քեսապ-Սուետիա) կը դիտէ որպէս ամբողջութիւն մը ու անոնց կու տայ ժողովուրդին կողմէ տրուած անունը՝ *քիսփինըգ* (քիստինակ), այսինքն՝ «քրիստոնեայի լեզու»: Բառը Քեսապի բարբառին մէջ ունի **քիստինուօկ**, իսկ Սուետիոյ բարբառին մէջ՝ **քիսթինըգ/քիստինիւք** ձեւերը: Ան քննական համեմատութիւն մը կը կատարէ անոնց եւ կիլիկեան բարբառներուն միջեւ (Մարաշ, Հաճըն, Զէյթուն) ու կ'եզրակացնէ, որ այս բարբառային նիւթերը հիմնովին «*կը բաժնեն քիսթընըգը կիլիկեան բարբառներէն եւ բոլորովին անընդունելի կը դարձնեն Սուետիա-Քեսապի հայութեան Կիլիկիայէն գաղթած ըլլալու տեսութիւնը*»[21]:

Իբրեւ տեղացի, Անդրէասեան լաւապէս կը ճանչնայ բուսական ու կենդանական աշխարհը, կենցաղը ու այդ բոլորը կ'արտայայտուին իր բառացանկերուն մէջ՝ ընդհանուր հայերէնեան, բարբառային, թրքերէնէ, արաբերէնէ, քրտերէնէ եւ արեւմտեան լեզուներէ փոխառեալ բառերու ցանկերով: Բարբառի նկարագրութիւնը կատարած է աւանդական քերականութեան համակարգով: Գիրքը խմբագրած է Ալեքսան Փաշայեան: Գործին մէջ լայնօրէն արժեւորուած են Մարտիրեանի վերոյիշեալ աշխատութեան անտիպ բաժինները: Մուսալեռցի բարբառագէտ Հանանեան կը գրէ, թէ տառադարձման ու առկայացման որոշ թերութիւններ ճշգրտելու պարագային «*Տ. Անդրէասեանի այս ուսումնասիրութիւնն իր ամբողջութեան մէջ փաստական հարուստ նիւթ կարող է մատակարարել հետազօտողին*»[22]:

Սուետիոյ բարբառին մասին Յակոբ Թորոսեան ունի երկու ուսումնասիրութիւններ՝ «Ակնարկ մը Մուսա Լեռան (Սուետիոյ) գաւառաբարբառին վրայ» եւ «Համառօտ բառացուցակ Մուսա Լեռան գաւառաբարբառին»[23]: Վերջինը անպայման նոր ատաղձ ունի բարբառի ուսունասիրութեան համար: Բառագիտական իմաստով կարեւոր ներդրում է Թովմաս Հապէշեանի *Մուսա-Տաղի պապենական արձագանգներ* գիրքի այն բաժինները[24], որոնք քննութեան առարկայ կը դարձնեն բառամթերքը՝ «Հայերէն ուշագրաւ բառեր», «Հայերէնանման բառեր», «Ծագումը անծանօթ բառեր», «Եւրոպական բառեր Մուսա-Տաղի բարբառին մէջ», «Մանուկներու յատուկ բառեր» եւ «ձայնարկութիւններ»:

---

[21] Նոյն, էջ 312:

[22] Հանանեան, Սու, էջ 18:

[23] *Յուշամատեան Մուսա Լերան*, խմբ.՝ Մարտիրոս Գուշագճեան եւ Պօղոս Մատուռեան, հրատ.՝ Ճեպէլ Մուսայի հայրենակցական միութեան, Պէյրութ, 1970:

[24] Թովմաս Հապէշեան, *Մուսա-Տաղի պապենական արձագանգներ*, հրատ.՝ Համազգային կրթական եւ մշակութային միութեան Այնճարի «Պարոյր Սեւակ» մասնաճիւղի, Պէյրութ, 1986:

Սուետիոյ բարբառին (Խտըրպէկի խօսուածք) վրայ, կարելի է ըսել, որ ամբողջական աշխատանք տարած է Հանանեան, մասնագիտութեամբ՝ լեզուաբան եւ բարբառագիտութեան դասախօս Երեւանի Պետական Համալսարանի մէջ: Ան վերոնշեալ բոլոր ուսումնասիրութիւնները աչքի առաջ ունենալով ու կենդանի ահագին նիւթի վրայ գիտական ամբողջ յագեցուածութեամբ կու տայ Խտըրպէկի խօսուածքի հնչիւնաբանութիւնը, ձեւաբանութիւնը (գոյականը՝ թիւով, հոլովումներով, առկայութեամբ, ածականը, թուականը, դերանունները, բայը՝ խոնարհումով, դերբայները, չթեքուող խօսքի մասերը՝ մակբայ, կապ, շաղկապ, վերաբերականներ (եղանակաւորիչ բառեր), ձայնարկութիւն, շարահիւսական պարագաներ): Ունի նմուշներու յաւելուած: Հանանեան իր աշխատանքը եզրափակած է «Հին հայերէն-բարբառ» համեմատական բառացանկով մը, որ կ'ընդգրկէ 1370 բառ:

Քեսապի բարբառի՝ հայրենակիցներու կողմէ կատարուած նկարագրութիւնները աւելի կանուխէն կու գան: Առաջինը Ալպերթ Ս. Աբէլեանն է, որուն 1913ին գրած գիրքին երկրորդ մասը նուիրուած է «Քեսապի գաւառաբարբառ»ին, 15 էջ: Գիրքը հրատարակուեցաւ շատ ուշ՝ Երուանդ Հ. Քասունիի ներածութեամբ եւ ծանօթագրութիւններով[25]: Աբէլեան կը գրէ. «*Մեր լեզուն, թէեւ աղաւաղեալ եւ այլափոխուած, հայերէն է, մեր հայախօս ժողովուրդը հայ է հոգիով եւ սրտով... Ձայնաւորները, առանց բացառութեան, զգալի կերպով փոխուած են ուրիշ ձայներու*»[26]: Ան արեւմտահայերէն օրինակներու դիմաց կու տայ ա, ե, է, ը, ի, ո եւ օ ձայնաւորներու հնչիւնափոխութեան օրինակներ. չ'անդրադառնար երկբարբառներուն: Տարօրինակ է, որ շեշտակիր բաց դիրքի մէջ գոյացած ***ա***ն կու տայ իբրեւ ***է***՝ *հայելի>հիլլէ, ջորի>ջիւրէ* եւն., մինչ ժամանակակից բարբառին մէջ ասիկա միշտ ***ա*** է, որ առկայացման պարագային կը վերածուի ***է***ի՝ *հիլլա-հիլլէն, ջիւրա-ջիւրէն*: Յոգնակերտ մասնիկներէն՝ *իր, նիր, վա, վէք, վիւն, տէ, ք, նէ, նա, ստիւն, օնք, տիւն, էօնք,* մէկական օրինակ կը տրուի, *զ* եւ *ի* նախդիրներով՝ նոյնպէս: Աբէլեան օրինաչափական պարագաներ չի նշեր, քերականական-շարահիւսական երեւոյթներ չի բացատրեր: Հոլովման համակարգը կը ներկայացնէ չափազանց թերի՝ տալով միայն *ի* եւ *ու արտաքին եւ ա* ներքին հոլովման բարբառային տարբերակներու մէկական օրինակ (բան>բուն, հաւ>հէօվ, շուն>շուօն)՝ եզակի եւ յոգնակի որոշեալ ձեւերու յարացոյցով: *Սիրիմ, ուրթում* եւ *խնտիմ* բայերու օրինակով (հինհայերէնեան ե եւ ա խոնարհիչներ) կը տրուի սահմանական եղանակի ներկայ, անցեալ անկատար, կատարեալ անցեալ, ապառնի (բացարձակ) ժամանակներու եւ հրամայականի ձեւերը, աներեւոյթը եւ անցեալ ընդունելութիւնը: Ներկայ եւ անկատար ժամանակներու ցուցիչներն են *հէ* (որ է հա. Չ) եւ *հայ,* իսկ ապառ-

[25] Ալպերթ Ս. Աբէլեան, *Քեսապ եւ իր գիւղերը*, խմբ.՝ Երուանդ Հ. Քասունի, united printers and traders, Պէյրութ, 2002:

[26] Նոյն, էջ 84:

նիի ցուցիչը՝ *միր* (որ է մըր – Յ.Չ.): Չեն տրուած ի>է եւ ու>օ խոնարհիչները, ապառնի ցուցիչին *պըր* տարբերակը եւն.:

Աբէլեան կը նշէ, թէ թրքերէն եւ արաբերէն բառերէն ոմանք «հայացած են», ըսել կ'ուզէ՝ ենթարկուած են հայերէն բառերու հնչիւնափոխութեան ու կ'աւելցնէ. «*Բողոքական շրջանակներու մէջ վերջերս ներմուծուած թուրքերէն բառերը յաճախադէպ են: Պատճառը եկեղեցիներու մէջ թրքերէն լեզուին սովորական գործածութիւնն է*»[27]:

Աւարտին տուած է շարք մը առածներ եւ խաղիկներ:

Հեղինակը իր մէկ այլ ժողովածուին մէջ եւս կ'անդրադառնայ Քեսապի բարբառին, աւելի համառօտ՝ «էջ մը Քեսապի գաւառաբարբառէն»[28]:

Տեսանք, որ Քեսապի բարբառին մէջընդմէջ անդրադառնալով՝ անկէ որոշ երեւոյթներ կը ներկայացնէ նաեւ Անդրէասեան իր վերոյիշեալ ուսումնասիրութեան մէջ:

Ծաւալուն աշխատանք է տոքթ. Աւետիս Ինճեճիքեանի «Քեսապը եւ իր բարբառը»: Բնագիրը հրատարակութեան եւ խմբագրութեան ճամփուն վրայ կորսուած է 1970ականներու սկիզբը: Մենք Նշան Պասմաճեանի միջոցով գտանք ու հրատարակեցինք զայն մեր *Քեսապ* Գ. հատորին մէջ[29]: Աշխատանքին առաջին մասը նուիրուած է գաղթավայրի պատմութեան. բարբառին նուիրուած բաժինը կը կոչուի «Քեսապի քիստինուօկ բարբառը», եւ կ'ընդգէկէ 111-78 էջերը: Հայերէնի ձայնաւորներու եւ երկբարբառներու պատմական հնչիւնափոխութիւնը կու տայ հայերէնի, մեծ մասով աշխարհաբար, բառերու դիմաց: Անդրադարձած է ձայնաւորներու յետադարձ հնչիւնափոխութեան՝ *վուօրդ-վարդիրինա, պուօրզ-պարզիլ:* Բաղաձայներու պարագային տուած է դիրքային եւ փոխազդեցական հնչիւնափոխութիւններու, ինչպէս նաեւ բաղաձայներու դրափոխութեան, անկումի եւ կրկնութեան օրինակներ: Տուած է 10 յոգնակերտ մասնիկ: Հոլովական համակարգին մէջ տրուած օրինակները մեծամասնութեամբ կը պատկանին ը՛ (<ի), մասամբ նաեւ ուջ (<ոջ), ուօ (<այ>օ) հոլովումներուն: Հոլովման պատկերը կու տայ եզակի եւ յոգնակի ձեւերով: Կը խօսի *զ* եւ *ի* նախդիրներու դերանուանական գործածութեան մասին *(Չէ՞ կիէր եը՝* ինչ կար անոր մէջ կամ հոն*: Չի տէօ զը՝* չտուաւ զայն): Հակիրճ կ'անդրադառնայ անձնական, ստացական, ցուցական եւ փոխադարձ դերանուններուն, որոշիչ յօդին, շաղկապին, ձայնարկութիւններուն, նախադրութեանց (կապ), մակբային, ածականին ու թուականին: Կու տայ ածականակերտ եւ գոյականակերտ 15 ածանցներ՝ օրինակներով: Կը ներկայացնէ բայի խոնարհման պատկերը,

---

[27] Նոյն, էջ 91-92:

[28] Ալպերթ Աբէլեան, «Հնգամեայ զրոյցներ», Պոստոն, 1928, էջ 408:

[29] Տոքթ. Աւետիս Ինճեճիքեան, «Քեսապ եւ իր բարբառը»՝ Յակոբ Չոլաքեան, *Քեսապ, Գ. հատոր*, հրատ.՝ Ամերիկաբնակ քեսապցիներու ուսումնասիրաց միութեան, Հալէպ, 2004, էջ 11-178:

նախ էական բայը, ապա 18 աններաձանց, ներաձանցաւոր, կանոնաւոր, անկանոն, տարահիմք ու զարտուղի բայեր՝ տալով անոնց սահմանական եղանակի շարունակական *(հայ սիրիմ)* եւ պայմանական *(կը սիրիմ, կը լուղում)* ներկայ, եւ անցեալ անկատար, բացարձակ ապառնի եւ անկատար ապառնի *(պըր սիրիմ, պըր սիրէրէմ),* անցեալ կատարեալ ժամանակները, հրամայականը՝ հաստատական եւ ժխտական ձեւերով: Բաղադրեալ ժամանակներէն կը յիշէ վաղակատարը *(փիսիրիմ)*, յարակատարը *(փիսուօծիմ)* եւ «անորոշ ապառնի»ն *(փըսնիլա իմ),* եղանակներուն վրայ կ'աւելցնէ հարկադրական եղանակը *պիփա* ցուցիչով *(պիփա փըսնէմ)*, ըղձականը՝ առանց ցուցիչի: Կ'աւելցնէ նաեւ «կարողական»ը, որ կը կազմուի *կրնալ* բայի եւ լրացեալ բայի ըղձականներով *(կարնում սիրիմ):*

Աշխատութիւնը ունի նաեւ բառարան, ուր տեղ գտած են շուրջ 2650 բառ՝ իմաստաբանական, ծագումնաբանական (թրքերէն, արաբերէն, պարսկերէն...) եւ քերականական տուեալներով: Բայերը նշուած են անորոշով, որ բարբառին մէջ *իլ* է, երբեմն կը նշուի խոնարհիչը, որ կը համապատասխանէ գրաբարին *(ե>ի՝ սիրեմ>սիրիմ, ի>է՝ խօսիմ>խուսէմ, ա>ու՝ կարդամ>կարդում, ու>օ՝ թողում>թուղօմ):*

Նշենք, որ Ինճեճիքեանի ուսումնասիրութիւնը գրուած է արեւմտահայերէնի քերականական ըմբռնումներով, աւանդական ուղղագրութեամբ: Հրատարակութեան ատեն տառադարձման հակասութիւնները միօրինականացուած են մեր կողմէ՝ առանց իր կողմէ բերուած բառին հնչիւնական պատկերը խաթարելու: Նիւթի բաւական մեծ կուտակում կայ, բայց օրինաչափութիւններ եւ վերլուծութիւն չկան: Բառարանը հիմնական ատաղձ կրնայ ծառայել ուսումնասիրողներու համար:

Մենք եւս՝ ելլելով բարբառի մինչ այդ եղած նկարագրական եւ գիտական ծանօթ նիւթերէն, իբրեւ բարբառակիր՝ մշտապէս ուսումնասիրութեան նիւթ դարձուցած ենք Քեսապի բարբառը: Անոր համար հիմք հանդիսացան նաեւ մեր կողմէ գրի առնուած, ապա հրատարակուած բանահիւսական հսկայ նիւթը, ազգագրական նիւթի նկարագրութիւնները՝ նիստ ու կաց, աշխատանքի տեսակներ, բուսական եւ կենդանական աշխարհ[30]: 1973ին Երեւանի Պետական Համալսարանի իմ աւարտաճառը եղաւ «Քեսապի բարբառի հնչոյթաբանութիւնը», ղեկավար՝ Էդուարդ Աղայեան: Աւարտաճառին մէկ բաժինը լոյս տեսած է համալսարանի *Ուսանողական գիտական աշխատանքներ* պարբերաթերթին մէջ[31]: Յետագային լոյս տեսաւ Քեսապի բար-

[30] Նկատի ունենալ մեր *Քեսապի ժողովրդական երգարուեստը* (1980), նաեւ *Քեսապ, Ա. հատոր* (1995), Բ. հատոր (1998) եւ Գ. հատոր (2004) աշխատութիւնները, բոլորն ալ Հալէպ:

[31] Յ.Մ. Չոլաքեան, «Քեսաբի բարբառի ձայնաւորներն ու երկբարբառները», *Ուսանողական գիտական աշխատանքներ*, 17:1975, Համալսարանի հրատ., Երեւան, էջ 170-74:

բառին նուիրուած իմ ծաւալուն աշխատասիրութիւնս՝ *Քեսապի բարբառը*, որ Երեւանի Պետական Համալսարանին կողմէ արժանացաւ երկրորդ տպագրութեան[32]: Գիրքը ներածականի մը հետ՝ արդի բարբառագիտութեան պահանջած բոլոր հիմունքներով կ'ընդգրկէ հնչիւնաբանութիւնը, ձեւաբանութիւնը, բառագիտութիւնը՝ բառացանկերով հանդերձ: Հնչիւնաբանութեան մէջ կը ներկայացնէ ձայնաւորներու եւ երկբարբառներու պատմական եւ շեշտի հետ կապուած հնչիւնափոխութիւնը, վերջինիս հետ կապուած ետընթաց հնչիւնափոխութիւնը (*շուօն/շունվա, մուօրդ-մարդօն*), բաղաձայները իրենց բոլոր փոփոխութիւններով: Կը պարզուի, որ բարբառին մէջ առկայ բազմաձեւութիւնը կապ չունի առանձին խօսուածքի մը հետ, այլ ընդհանուր է բոլորին համար *(է'սէ'կէ/է'սէ'կիէց/է'սկիէ/է'սկիէց/հէ'սէկէ /հէ'սէկիէց/հէ'սկիէց/հէ'սկիէ*[33]*, գըրիցա/գրիցամ, հէ'րէր/հիրէր, ըզքի/ զըսքի*...): Այս երեւոյթը ընդհանուր է բոլոր բարբառներուն համար եւ իզուր է տեղական խօսուածք մը փնտռել այդ փաստով: Առանձին կը ներկայացուին գրաբարէ բարբառ, այսինքն առանց իմաստափոխութեամբ եւ ձեւաբանական փոփոխութեամբ գրաբարէն բարբառ անցած բառերու ցանկ՝ 2400 բառ, բարբառային, այսինքն հայերէն հիմքերով կամ իմաստափոխուած բառերու ցանկ՝ 2800 բառ, փոխառեալ բառերու, այսինքն արաբերէնէ, թրքերէնի, պարսկերէնի եւ այլ լեզուներէ փոխառուած բառերու ցանկ՝ 2500 բառ, ընդամէնը 7700 բառ: Ունի նաեւ բարբառային անձնանուններու եւ տեղանուններու ցանկ: Աշխատանքը հետեւողականօրէն կատարուած է գիտական տառադարձութեամբ, միայն առանց փոխելու պայթական եւ պայթաշփական բաղաձայներու բարբառի իւրայատկութիւնները՝ այսինքն բարբառի ձայնեղները (պ, կ, տ, ծ, ճ) եւ խուլերը (բ, գ, դ, ձ, ջ) տառադարձուած են նոյնութեամբ, եւ ոչ՝ ըստ գրաբարի ձայնեղներու եւ խուլերու:

Վերջերս՝ 2019ին, Քեսապի Ուսումնասիրաց Միութիւնը Լոս Անճելոսի մէջ հրատարակեց Նշան Ա. Յովսէփեանի *Քեսապերէնի բառարան*ը: Յայտնապէս սիրողական գործ մըն է. բառարանը կազմուած է միալեզուեան բացատրական բառարաններու սկզբունքներով, անհրաժեշտ պարագային տալով բայի դիմաւոր քանի մը ձեւեր, առկայացման պարագաներ, յոգնակիի նշում: Կ'ընդգրկէ 3850 գլխաբառ. չի զատորոշեր բառի

---

[32] Յակոբ Չոլաքեան, *Քեսապի բարբառը*, հրատ.՝ տոքթ. Թորոս Թորանեանի, Հալէպ, 1986, Բ. տպագրութիւնը՝ հրատ. Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան, ԵՊՀ եւ «Հայաստան» հրատ.ներ, Երեւան, 2009, 380 էջ:

[33] Բարբառը կը զանազանէ երկու է (նախաշեշտ՝ *է'րիվ, է'մուն* {արեւ, աման}, շեշտակիր՝ *վիրէն* {արիւն}), երկու ը (թոյլ՝ *ծուօռը {ծառը}*, շեշտակիր՝ *ծառը՛ {ծառի}*), երկու ի (թոյլ՝ *տէօնիղ* {տունդ}, սովորական՝ *կիշա* {կաշի}). պարզ ա, օ, ու ձայնաւորներու կողքին ունի նաեւ ասոնց քմայինները, որ հոս արտայայտուած են ընդգծումով՝ **ա**: Բարբառին յատուկ են նաեւ *էյ, էօ, իյ, իէ, ուօ* երկբարբառներն ու *ուօյ* եռաբարբառը: Ունի նաեւ կոկորդային **կ** ձայնեղ պայթական եւ ղ շփական բաղաձայները:

ծագումը: Կ'ընդգրկէ նաեւ յատուկ տեղանունները: Տառադարձութիւնը կատարուած է արեւմտահայերէնի աւանդական ուղղագրութեան սկզբունքներով (հեղինակի արտայայտութեամբ՝ «արեւմտահայերէնի հնչաբանութեամբ»), «վ» բաղաձայնի դերով պահուած են ւ եւ ու *(արեւ՝ էրիւ, նշանուիլ՝ նիշեենուիլ),* բայց բայական վերջաւորութիւնը տրուած է ***վ***ով՝ *հիծնիլ՝ հիծծուօվ,* բոլոր «ա» ձայնաւորով վերջացող բառերուն վրայ աւելցուցած է անձայն յ՝ *թիթենի՝ թիթինայ, լեղի՝ լիղայ, թաղեցի՝ թաղցայ, լափայ,* տեղ-տեղ՝ առանց ատոր՝ *էւիլա, լուլա,* բառավերջի «օ» հնչիւնը տեղ մը տառադարձուած է ***օ***, ուրիշ տեղ ***ոյ***՝ *խեռընծօ, խըրբոյ*, Բառասկիզբի «հ» բաղաձայնը, ըստ ծագումնաբանութեան, գրած է ***յ***՝ *յիսսօն, յիշիլ*: Տեղ մը հնչիւնական օրէնքը կը կիրարկուի, տեղ-տեղ՝ աւանդականը: Ասիկա խառնաշփոթութիւն կը ստեղծէ բազմաթիւ պարագաներու, երբ բարբառագիտութեան մէջ ընդունուած է, որ իւրաքանչիւր հնչիւն արտայայտուի մէկ գիրով, կամ գիրը չունենայ հնչիւնական մէկէ աւելի արտայայտութիւն: Օրինակ՝ վերի *յիսսօն* բառը ինչպէ՞ս կարդալ՝ *եիսսօ՞ն* թէ *հիսսէօն*, որովհետեւ բարբառը լաւ իմացողը գիտէ, թէ բառը ունի կրկնակ արտասանութիւն: Հեղինակը մեզի ադիթ չի տար ճանչնալու նախաշեշտ վերին բարձրութեան ***ա***ն, զոր կը գրէ ***է*** կամ ***ե*** *(էրիւ, հելըւիրից.* պէտք է կարդալ՝ *է՛րիվ, հէ՛լըվըրից)* եւն.: Բարբառի տեղաշարժ-տեղափոխութեան եռաստիճան համակարգը պահպանուած է, բայց այդ մասին չէ յիշատակուած:

Այս գործին նպաստը պէտք է նկատել քանի մը տասնեակ նոր բառերու արձանագրութիւնն ու բացատրութիւնը[34]:

Այսօր խօսելով Անտիոքի շրջանի հայերէն խօսուածքներուն մասին, պէտք է նշել, որ Քեսապի եւ Սուետիոյ բարբառները տակաւին կենդանի են, Քեսապի բարբառը՝ իր բնօրրանին՝ Քեսապի, իսկ Սուետիոյ բարբառը՝ Լիբանանի Այնճար հայաւանին մէջ: Մէկուն համար տնտեսութեան ու կեցցաղի հիմնովին փոփոխութիւնը, միւսին համար՝ միջավայրի փոփոխութիւնը մեծապէս նուազեցուցած են բնիկ բառերու քանակը, միւս կողմէ՝ արեւմտահայերէնի տարածման հետ՝ համեմատաբար լայն տեղ տուած են հայերէն անհնչիւնափոխ բառերու գործածութեան՝ նախկին թրքերէն եւ արաբերէն բառերու փոխարէն: Գրեթէ բոլոր տուներուն մէջ փոքրիկներու լեզուն արեւմտահայերէնով կը բացուի, բայց յետագային անոնք բարբառը կ'իւ-

[34] Հեղինակը, ըստ երեւոյթին, հայ բարբառագիտութեան առհասարակ ծանօթ չէ, ո՛չ հայրենի բարբառագիտութեան, ո՛չ ալ Սփիւռքի բերած ներդրումին: Կ'անգիտանայ Քեսապի բարբառին մասին գրուած ոչ-արհամարհելի քանակ ու որակ ունեցող վերոյիշեալ ուսումնասիրութիւնները. կը գրէ, թէ Քեսապի բարբառը «*դժբախտաբար, մեր գիտութեամբ, մինչեւ այսօր, բարբառագէտներու մասնաւոր ուշադրութեան չէ արժանացած, հակառակ անոր, որ հայկական Կիլիկիոյ բարբառներէն միակ կենդանի բարբառն է, որ կ'ապրի ու կը շարունակէ գործածուիլ ի՛ր իսկ բնօրրանէն ներս*» (անդ, էջ 7):

րացնեն ընտանիքի տարեցներէն եւ շրջապատէն: Նոյնիսկ փորձ եղած է Այնճարի եւ Քեսապի դպրոցներուն մէջ բարբառախօսութեան վարժութիւններ կատարել:

Ասոնցմէ դուրս՝ այս բարբառները կը գոյատեւեն նաեւ Սփիւռքի հայրենակից ընտանիքներու տարեցներուն մէջ: Նոյնը՝ Վագըֆի մէջ: Վերջերս օգտակար արշաւ մըն ալ կը նկատեմ: Սկսած են բարբառախօսներէ արձանագրութիւններ կատարել եւ տարածել դիմատետրի կամ այլ կայքերու միջոցով: Այս արձանագրութիւնները՝ Ամերիկայէն, Քանատայէն, Հայաստանէն, Քեսապէն, Այնճարէն, Պէյրութէն, հիանալի ատաղձ են բարբառներու արդի պատկերին մէջ երեւցած նորութիւնները փաստագրելու եւ ուսումնասիրելու համար: Երուանդ Սարնունին (Մ. Նահանգներ) ունի «Քեսպընուօք - Քեսապի բարբառը» կայքը, ուր մարդիկ Քեսապի բարբառով կենդանի խօսք կը փոխանցեն՝ բառեր, դարձուածքներ, առածներ, ասացուածքներ եւ նոյնիսկ կը շարժեն օտար բարբառագէտներու հետաքրքրութիւնը: Կար ժամանակ, երբ արեւմտահայերէնի տարածման առջեւ խոչընդոտ էր բարբառախօսութիւնը, այսօր՝ նպաստաւոր գետին կը ստեղծէ անոր համար: Բարբառախօսութիւնը չափով մը շարունակէ գոյատեւել: Այս պարագային անիկա նպաստ մըն ալ կը բերէ հայապահպանութեան գործին:

THE STUDY OF THE DIALECTS AND ARMENIAN VERNACULARS OF THE ANTIOCH REGION

(Summary)

HAGOP CHOLAKIAN (hagopcholakian@hotmail.com)

The Armernians of Beylan, Svedia, Kesab, and Aramo-Ghnemiye in the historical Antioch region had their own vernacular and dialects. These have been studied, described and categorized by renowned linguists and dialectologists like Hrachya Adjarian, Ararad Gharibian, and Gevork Djahougian. In Djahugian's categorization, which is based on a multi-featured approach, these dialects are included as two diverse groups (of Beylan and Svedia-Kesab) in the most south-western group of the Cilician dialects. The description of the dialects has been formulated by different dialectologists. Fortunately, the dialects of Kesab and Svedia are still alive and are used mostly in Ainjar (Lebanon) and Kesab (Syria).

THE EKMEKJI INDUSTRIAL INITIATIVE (Aleppo-Beirut, 1920-2016)[1]

DIKRAN EKMEKJI (dikran3@gmail.com)

The first factory in Aleppo, Syria

In the early 1920s, Yervant Ekmekji (Diarbekir, Turkey 1901-1991, Vienna, Va., USA) son of Hagop Ekmekji[2] (Aintab, Turkey 1872-1958, Aleppo, married to Marroum Deukmejian) and father of Garabed (1898-1928, Yervant, Eugene, Georges, Nora and William) was appointed by his maternal uncle, Zahny Deukmeji, who was a prominent attorney in Aleppo and owner of an oriental rug weaving facility, to run his business.

---

[1] ***Editorial Note***: For many reasons (not the least the Lebanese civil war, the ensuing unstable years, emigration of a large number of industrialists) it has become almost impossible to draw a broad picture of the Lebanese Armenian industrial contribution and output as of the mid-1960s. Perhaps a collection of separate, individual articles on industrialists and their oral history can help at least partly to reconstruct their contribution. This article, based on the owners' archives, oral history and collective memory, reconstructs a century-old industrial endeavor of the Ekmekji family.
Furthermore, this article is both a template and a call for all Armenian industrialists of the Middle East to put into words and document the oral history, memories, documents, and data of their industrial endeavors in the region. The Haigazian Armenological Review welcomes such well documented articles, which may eventually provide the researcher tangible and reliable materials to trace the industrial, artisanal, etc. output and contribution of the Diaspora Armenians in general and the Middle East Armenians in particular.

[2] Hagop Ekmekji (1872-1958) was the son of Garabed Ekmekji, who, with a group of a handful of believers, started in 1856 the Armenian Evangelical Emmanuel Church in Aleppo.

On the left Comotek Building, far right Usine Ekmekji

Yervant became familiar with textile weaving and an expert in dyeing woolen and cotton yarns, which were the main asset of a weaver, who needed the flexibility of having a wide range of dyed yarns at a low cost.

Slowly he converted the plant into a yarn dye house to serve the textile weaving industry, which was booming in Aleppo. The business grew, and he had to ask his brother Eugene (Aleppo, 1903-Beirut, 1988) to join him. Eugene worked in Baghdad as a mechanic with the British Red Cross from 1922 till 1932, when he moved to Aleppo and started a partnership with Yervant in his new venture. They renamed the company of Yervant's dye house YEE, standing for Yervant & Eugene Ekmekji. Their expertise in textile dyeing made them known in the Near East as the number one custom dye house with the trademark YEE.

They kept the plant up to date by continually investing in new machinery. The business grew, and sales extended to neighboring Lebanon and Iraq. A sales branch was opened in Baghdad to cater to the Iraqi clients (because Baghdad was an important stop on the Silk Road). Also note that Yervant's paternal uncle was a prominent political figure in British colonial Iraq and

continued serving the newly independent kingdom of Iraq as an advisor to the government until his death in 1952 in Beirut, Lebanon).[3]

Eventually, a new improved and up-to-date plant was erected in Lebanon in 1943 in Warwar in the region of Hadath/Beirut. Yervant bought the land in Warwar on the outskirts of Hadath because it was zoned for heavy industry and also not far from the textile weaving hub that had been established around the *Lainiere Nationale* in Hadath. The building consisted of a one-story facility of around 4000 sq. meters and expanded to over 7000 sq. meters. Yervant rented an apartment in Hamra Street, in Beirut, where he lived.

The Aleppo branch was managed by Eugene while the Beirut plant was managed by Yervant.

Since the Baghdad office at AlAroussa was merely a sales and retail store, it was managed by their friend Georges Touma, who was a Christian free-lance textile salesman from Aleppo and dealt only with the Iraqi market. He introduced Iraqi clients to YEE, and he later bought the Ekmekji's share in AlAroussa and continued independently.

Open-air conventional dyeing machine

The new boiler in Aleppo

First open-air German fabric drying line and a calendar press giving a shine to fabrics

[3] Arda Arsenian-Ekmekji, "Dikran Garabed Ekmekjian (1879--1952) A Man for All Seasons," *Armenians of Iraq: Proceedings of the Conference (29-31 May 2017)*, ed. Antranik Dakessian, HU Press, Beirut, 2021, pp. 539-46.

Yordan Obegi and Yervant Ekmekji experimenting with a new chemical

View of the conventional wool dyeing machine

Under the management of Eugene, the business in Aleppo thrived, and soon enough, the youngest brother, William (Aleppo, 1912-Beirut, 1978), freshly graduated from high school and being trained by his elder brothers, was in his turn invited to join forces and to manage the dyeing and finishing section. The Aleppo plant, with 5000 sq. meters of land bought by the brother, had a 3000 sq. meter building divided into four sections, one for administration, the second for dyeing and washing the fabrics, the third for drying-finishing and packing the production. YEE employed around 40 employees, mainly men, in the washing, dyeing and drying section; the few women employed were generally employed in sewing, packing and quality control.

The Aleppo branch was now catering to almost all the famous weavers in the region, and the YEE trademark was in great demand among all the fabric wholesalers. The main product dyed by the Beirut plant, named **Usine Ekmekji**, was to be used for the black veil and black *abaya*, which was the main female garment in the Arab world.

Noseda Salvadore Italian fibers dyeing machine and the Swiss "Jigger" dyeing machine

Aleppo was mainly catering to Iraq and beyond. Beirut was more focused on Palestine and the southern Arab world. Usine Ekmekji employed as a start 30 men and women workers.

The color black signed by YEE was exceptionally black and did not fade after many washes; the two brothers held its secret formula.

Gradually, new synthetic fibers and fabrics were introduced to the market and Usine Ekmekji became the first to handle their dyeing and finishing based on the latest techniques and the most modern methods. The peak of production was from 1967 till 1975, when Usine Ekmekji employed over 70 workers, Christians and Muslims equally, around 60% men and 40% women. The workers were treated like family by the Ekmekjis who even knew their family members.

Yervant's best friend, Yordan Obegi, with whom he had graduated from the German school in Aleppo around 1914, was a supplier of textile chemicals and dyestuffs. They helped each other to grow their businesses and their friendship lasted till the end of their days.

Yordan Obegi was, in the 1930s, the representative of several textile mills and textile chemical companies in both Syria and Lebanon. Since the Obegi Chemicals offices were located in Aleppo and had no branch in Beirut, in the mid-1950s, Yervant partnered with Yordan to launch an Obegi Chemicals branch in Beirut.



They started with a small office in Souk Al Kazaz and afterwards moved to the Asseily Building, also known as the Cinema Capitol building, in Ryad el Solh square. The business was run by Henry Yordan Obegi but under the

supervision of Yervant until 1961, when the Obegis approached Yervant to partner with them in opening a financial institution, namely the **Credit Libanais Bank**.

Yervant used all his shares in Obegi Chemicals and, with his brothers Eugene, William and Georges,[4] raised enough money to invest in substantial stocks in the new bank. Yervant eventually became the Chairman of the bank's board for almost ten years.

However, the early 1960s witnessed an unstable political situation in Syria and a wave of nationalizations of all industries, especially of textile factories. Besides this, a very big decline was registered in the business sector as Syria united with Egypt to form the United Arab Republic. Both countries nationalized all industries and banking systems and established a socialist economy. YEE was neither nationalized nor confiscated, but all their clients' plants were confiscated, and they had to deal only with nationalized companies. YEE could not survive this situation and had to be sold as land and building, not as a business. Eugene left Aleppo and joined forces with his brother in Beirut. Shortly after, their brother William left also, and joined the brothers' business in Beirut.

Eugene invested with his brother Georges in a 3-story apartment building in Hamra Street, where he occupied one apartment and Georges the next one while the 3rd was rented. As for William, he rented an apartment in the Badaro area to be near his Aleppo friends.

The Aleppo chapter was thus closed.

The Ekmekji brothers' love of the textile industry, which ran in their blood, made them look forward to new investments, and soon enough they built a new factory in 1973 in the same location as **Usine Ekmekji**. It was the first plant in the Near East for nonwoven material which used a new technique in the manufacturing of felt, compressing it by the needle punch method. The plant, named **Comotek SAL**, manufactured blankets and wall-to-wall carpets. The machinery was mainly purchased from West Germany and Switzerland, because those two countries were very advanced in dyeing and finishing equipment, and also West Germany was the pioneer in nonwoven techniques. The raw material was mainly imported from Italy and Austria while the USA was the best for good deals. Yervant and Nabil were good negotiators for machinery; as for the raw materials, Raja was in charge until he handed over to Dikran.

In the late 1960s, the second generation of the Ekmekji family started taking over, and the two brothers, Yervant and Eugene, started delegating the

[4] Georges was a dentist and the only Ekmekji brother who was not involved in the Usine Ekmekji.

management of the business to their sons, first Nabil and later, in the early 1970s, to Raja and Dikran.

Nabil, the son of Eugene, after finishing his studies in business administration at the American University of Beirut (AUB), left for Germany to study textile dyeing and finishing. A few years later, Yervant's sons, Raja and Dikran, after finishing their textile studies in France, moved back to Beirut armed with a strong knowledge in textile spinning and weaving.

Nabil and Dikran were entrusted with managing the **Usine Ekmekji**. Nabil, in addition to using his dyeing skills, introduced many new dyeing techniques which lowered production costs. Furthermore, his mechanical competency allowed him to introduce a few changes in the machinery in order to improve its production and speed up processes while maintaining the same Ekmekji quality.

As for Raja, due to his weaving and spinning expertise, he was entrusted with managing **Comotek SAL** and maintaining the production of blankets and wall-to-wall carpets in a professional manner. He also introduced wadding, which is used in the quilting process.

Fabric scraping and fiber raising machine

Continuous terry towel sewing machine

Chemical impregnating machine

Fong 500kg. of terry towel dyeing machine

Comotek ran two shifts usually, but when the book of orders was full, the two shifts totaled 22 hours; the two remaining hours were dedicated to cleaning

the machines and doing some minor maintenance as the major maintenance was done for both factories every Monday morning. Usine Ekmekji ran mainly on a 10-hour shift daily.

Dikran was assisting both Nabil and Raja, but his sales talents and his contacts in the Arab world led him to explore the needs of the neighboring countries and start catering to them with the Ekmekji Group production. He added an import-export company, "BURICO SARL", which he started with textile products mainly, to become a supplier for the textile industry in Baghdad and act as a buyer for the private sector as Iraqis were banned from travelling outside Iraq.

By now, the plant had started looking more like a modern establishment with modern innovations and new machinery. The expertise of the new generation, who had studied the textile industry in Europe, raised the local business to international standards and the export of fabrics, blankets and wall-to-wall carpeting spread to the neighboring Arab countries. The Ekmekji group was awarded several contracts such as supplying blankets to Iraqi government stores (alias Orosdi-back), geotextiles to the Dijla erosion control project (Iraqi government contracting Co.), blankets to The King Faysal hospital in Ryad, Saudi Arabia and blankets to UNRWA for the refugees in Lebanon, just to name few. They also worked with Sukleen in Nahme, Lebanon on a solid waste management project.

Krantz Stenter fabric dryer and the jersey drying machine



High temperature Noseda Salvatore fabric and the Krupp Spinbaw spinning machine dyeing machine

Though they had no local retail outlets, the factory itself had a retail sales point for blankets and wall-to-wall carpets to serve walk-in customers. However,

in 1975 the Lebanese civil war started, and all the dreams and hopes started fading. The policy of the cousins was to preserve and protect the business they were entrusted with. Despite all the difficulties that this civil war created, they went to work daily, crossing dangerous demarcation lines, even under fierce shelling, road closures or kidnappings. In addition, they had to deal with daily hardships, such as power cuts and fuel/diesel scarcity. This was aggravated when the Lebanese army entered the factory and converted it into a kind of military barracks, as the factory was facing the no man's land on the southwest outskirts of Beirut, namely the "dahya" (suburbs) and the southern no man's land near Choueifat, "Durzyland."

In spite of all this turmoil, the cousins were able to continue operating the businesses and supplying their foreign clients, but on a much lower scale. In 1983 the **Comotek SAL** plant burnt down due to the civil war. Following that, Raja had to emigrate to Canada for personal reasons.

Dikran and Nabil were stuck with a burnt **Comotek** and a huge debt to the banks. In 1983, the two cousins made a vow to each other to rebuild the family business and bring it back to full operation.

The dyehouse, **Usine Ekmekji**, was intact and fully operating; as for the fire that damaged Comotek,[5] the process of renovating the machinery started gradually. Since the sampling machine was intact, a new business of throw pillows was started on a small scale, but enough to generate income to slowly renovate and rebuild the factory. Once **Comotek** was fully operational in mid-1985, the cousins started on new ventures to cut their losses and re-establish their industrial position in Lebanon.

Usine Ekmekji partnered with a terry towel business, **Weaveprint SAL**, and invested in new machinery to cater to that industry. **Comotek SAL** added to its production line the geotextile, "a kind of fabric used in the construction business" and the recycled felt which is used in the manufacturing of mattresses and flooring pads in homes and automobiles. Both businesses started exporting to neighboring countries, and their products also reached Europe and even the USA.

Lebanese Armenian industry was booming until the Israeli aggression against Lebanon in 2006. Both factories, with all their production and exports, stopped.

Though the factories were not damaged, after the 2006 hostilities all foreign customers lost interest in Lebanon and found new suppliers elsewhere. Reassuring the export clients was a hopeless task since no one wanted to rely

[5] Note that the Comotek building's structure was not damaged by the fire. There was damage to the walls and the floors from smoke, ash and heavy tar, while the machines were mostly affected by the heat and tar.

on Lebanese goods as the losses they had incurred during the aggressions was enormous.

The cousins started thinking seriously of stopping all business and manufacturing activities. Liquidation started and by 2016 both companies were dissolved and their machinery sold. The Ekmekji Manufacturing Era was terminated.

ԷՔՄԷՔՃԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱՅ ԸՆԹԱՑՔԸ (ՀԱԼԷՊ-ՊԷՅՐՈՒԹ, 1920-2016)

(Ամփոփում)

ՏԻԳՐԱՆ ԷՔՄԷՔՃԻ (dikran3@gmail.com)

Հիմնուելով Էքմէքճի ընտանիքին երկրորդ եւ երրորդ սերունդի յուշերուն, վկայութիւններուն, փաստաթուղթերուն, լուսանկարներուն վրայ, այս յօդուածով կը վերակառուցուի Էքմէքճի ընտանիքին ճարտարարուեստական հարիւրամեայ ընթացքը Հալէպի եւ Պէյրութի մէջ:

Ընտանիքը ճարտարարուեստական իր առաջին քայլերը կ'առնէ Հալէպի մէջ, 1920ականներուն, երբ Երուանդ Էքմէքճի կը նշանակուի Հալէպի նշանաւոր իրաւաբան Զահի Տէօքմէճիի Հալէպի մէջ գործող արեւելեան գորգի գործարանին տնօրէն:

Կարճ ժամանակ ետք, Երուանդ կը խորացնէ իր գիտելիքն ու փորձառութիւնը կտաւի ներկումի ասպարէզին, ու գորգագործութեան գործարանը տակաւ կը վերածէ կտաւաներկումի գործարանի, որ ծաւալելով կ'ունենայ վաճառման գրասենեակ մը Պաղտատի մէջ, եւ գործարան մը՝ Պէյրութի: Այս յաջողութեանց մէջ կարեւոր դեր կը խաղան եւրոպական նորագոյն մեքենաներու գնումն ու գործարաններուն արդիականացումը:

Յօդուածը կը նկարագրէ այս ճարտարարուեստականներուն անցած ուղին, տնտեսական այլ մարզերու մէջ անոնց ներդրումներ կատարումը, դիմագրաւած մարտահրաւէրները, նախաձեռնած ծրագրերը եւ կ'աւարտի գործարանին փակումով՝ 2016ին, երբ այլեւս անկարելի կը դառնայ անոր գոյատեւումը, հակառակ բազմիցս կատարուած ճիգերու եւ զոհողութիւններու:

Ծ.Խ.- Նկատի առնելով որ կարելի չէ համապատկեր մը յառաջացնել լիբանահայ ճարտարարուեստականներուն՝ Լիբանանի ճարտարարուեստին ունեցած նպաստին, նման առանձին պատումներու մէկտեղումը կրնայ օգնել յառաջիկայ ուսումնասէրին՝ գէթ մասամբ վերականգնել պատմութիւնը՝ հայօճախին ճարտարարուեստական նպաստին՝ Լիբանանի:

ԱԿՆԱՐԿ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՄԲ ՊՂՆՁԵԱՅ ԹԱՍԵՐՈՒ ՎՐԱՅ

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱԳԷՍԵԱՆ (adakessian@haigazian.edu.lb)

ՄՈՒՏՔ

Դեռ կանուխ կը թուի ակնկալել հայ պղնձագործութեան ամբողջական ուսումնասիրութեան փորձ մը: Առայժմ հայկական պղինձին մասին մեզի ծանօթ հրապարակումները, ուսումնասիրութիւնները կը մնան նեղ, առանձնակի, չընդհանրացուող (կամ սահմանափակ ընդհանրացումի ուժականութեամբ) հետազօտութիւններու ծիրին մէջ: Այս առումով, նախապատրաստական քայլ կը նկատենք համահաւաք շտեմարանի մը յառաջացումը, ուր գէթ նկարներով (եւ համապատասխան չափագրումներով) ներկայացուի հայկական պղինձին տեսականին: Յիրաւի, Հայաստանի Հանրապետութեան Սարդարապատի ազգագրութեան, Երեւանի Յովհաննէս Շարամբէեանի անուան ժողովրդական արուեստներու, կամ Հայաստանի պատմութեան թանգարաններէն մէկուն կամ միասնական նախաձեռնութեամբ կարելի է յառաջացնել հայ պղնձարուեստի շտեմարանը, որուն վստահ ենք - տակաւ - կ'աջակցին Սփիւռքի հայկական թանգարաններն ու անհատ հաւաքորդները՝ տրամադրելով իրենց պղնձեայ հաւաքածոներուն լուսանկարներն ու չափագրութիւնները: Նոյն նպատակին համար, տեղին է դիմել նաեւ ռուսական, Կովկասի եւ Միջին Արեւելքի թանգարաններուն եւ այլուր...:

Հայկական պղնձագործութիւնը, Հալէպի նորագոյն պատերազմին հետեւանքով, կը թուի թէ իր մայրամուտը ապրեցաւ Սփիւռքի մէջ: Կը կարծենք սակայն որ Հայաստանի Հանրապետութեան կարգ մը քաղաքներուն

մէջ - ինչպէս Գիւմրի - կարելիութիւն է ապահովել անոր մասնակի գոյատեւումը[1]:

Այսքանով անշուշտ չ'աւարտիր հայ պղնձարուեստին ուսումնասիրութեան նախափուլը: Կայ տեսաբանական առնուազն մէկ հարց՝ պատկանելիութեան խնդրայարոյց պարագան: Ի՛նչը պիտի համարել «հայկական պղինձ», կամ ի՛նչ է «հայկական պղինձ»ին կամ «հայկական պղնձարուեստ»ին սահմանումը. պղնձեղէնին ինքնութիւն տուողը իր 'ծննդավայր' հանք-տեղավա՞յրն է, թէ՞ զինք իբրեւ կիրառական իր արտադրող անձ-աշխատանոցը, կամ՝ իրեղէնը գործածողը, կամ նաեւ - եթէ գտածոյ է - իր պեղավայրը:

Յամենայնդէպս, մեզի կը թուի թէ, երբ հումքը, լուսանկարները մէկտեղուին, կրնայ նուազ դժուար ըլլալ հայկական պղնձարուեստին սահմանումին մատչումը, ուստի եւ հետազօտումը՝ մեկնելով առկայ նիւթին տրամադրած հնարաւոր փաստերէն:

Մինչեւ այդ, սակայն, այս աշխատութեամբ կ'անդրադառնանք բաղնիքի հայկական թասերու մէկ տեսակի մը[2], առանց յաւակնութիւնն ունենալու ամբողջական պատկեր մը ներկայացնելու: Մերը փորձ մըն է, բայց մանաւանդ կոչ մը՝ հայկական արհեստարուեստի այս բնագաւառին առաւել տիրութիւն ընելու:

ԲԱՂՆԻՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՍԵՐ

Նիւթը ուսումնասիրելու համար ջանացինք մէկտեղել-ցուցակագրել առկայ թասերը: Հարցուցինք հաւաքորդներու[3], թերթատեցինք հայկական

---

[1] Գորիս մեր այցելութեան (9/1-2/2/2021), իմացանք որ քաղաքին մէջ կը գործէ պղնձագործ մը, որ կը թուի ունենալ ստեղծագործական սահմանափակ պայմաններ:

[2] Կարելի է առանձնացնել բաղնիքի հայկական թասերու առնուազն երեք տեսակ, ըստ ձեւի:

[3] Կարօ Անտոնեան մեր ուշադրութեան յանձնեց պոլսահայ հնավաճառ Մուրատ Պիլիրի կայքէջին մէջ ցուցադրուած թաս մը: Կայքէջին (http://www.muratbilir.com/Products/Bath-Bowls), մատչեցանք 23 Յունուար 2017ին, ուրկէ քաղեցինք աղիւսակին մէջ տեղադրուած տուեալները: Արուեստաբան Հրազդան Թոքմաճեան տրամադրեց հալէպահայ հաւաքորդ եւ պղնձագործ Ներսէս Պարսումեանի հաւաքածոյի վեց թասերու նկարները: Հալէպահայ հաւաքորդ, բանասէր Միհրան Մինասեան մեր տրամադրութեան տակ դրաւ իր մօտ գտնուած հաւաքածոյէն, իսկ լիբանահայ հաւաքորդ Սասուն Սիմոնեան մեր տրամադրութեան տակ դրաւ իր նմուշները: Դիմած ենք նաեւ այլ հաւաքորդներու, որոնք պատասխանած են թէ չունին նման նմուշներ (Օսէփ Թոքաթ՝ Փետրուար 2021) եւ Արթօ Թաւուքչեան՝ Մայիս 2021):

պղնձեայ իրերու հաւաքածոյ-նկարագիրքեր[4], յօդուածներ[5], դիմեցինք թանգարաններու[6], յայատարարեցինք մամուլով[7], ընդգրկեցինք նաեւ մեր հաւաքածոյին օրինակները եւ կարելի եղաւ մէկտեղել 28 նմուշ: Այս քանա-

[4] *Treasured Objects: Armenian Life in the Ottoman Empire 100 Years Ago*, Vazken Khatchig Davidian, Susan Paul Pattie, Gagik Stepan-Sarkissian (eds.), Armenian Institute, London, 2012 գիրքին մէջ գտանք մէկ նմուշ (էջ 39): Մէկ նմուշ կար նաեւ վերջերս լոյս տեսած Մարետա Կիրակոսեանի *Հայաստանի պատմութեան թանգարանի ազգագրութեան ֆոնդի մետաղէ իրերի հաւաքածուն. 1 (XV-XIXդդ.)* (Անտարես հրատ., Հայաստանի պատմութեան պանգարան, Երեւան, 2021) նկարագիրքին մէջ: Թոքմաճեանի պատրաստած *Գալէմքեարեաններ. Այնթապ-Դամասկոս-Հալէպ/The Kalemkiarians: Ayntab-Damascus-Aleppo* (Տիգրան Մեծ, Երեւան-Հալէպ 2016). նաեւ՝ *A Legacy of Armenian Treasures: The Alex and Marie Manoogian Museum*, Edmond Y. Azadian (ex. Editor), Indiana University Press, 2013. նաեւ՝ *Էջմիածնի գանձեր*, Էրեբունի հրատ., Ֆինլանտա, 1984. նաեւ՝ Osep Tokat, *Armenian Master Silversmiths*, Van Publishing Inc., Los Angeles, 2005. նաեւ՝ *Aspects of Armenian Art, The Kalfayan Collection*, Museum of Byzantine Thessaloniki, Athens, Greece, 2010 հատորները չեն պարունակեր վերոյիշեալ թասերէն:

[5] Րոպերթա Ըրվայնի նկարագրած պղնձեայ տասներկու իրերուն շարքին չհանդիպեցանք մեր որոնած տեսակին (Roberta Ervine, "Twelve Objects with Armenian Inscriptions from a Private Collection in New York," in *Between Paris and Fresno: Armenian Studies in Honor of Dickran Kouymjian*, Barlow Der Mugrdechian (ed.), California, Mazda Publishers, Inc. Costa Mesa, 2008, էջ 125-139): Իր «Հայկական պղինձը 1600-1915» յօդուածին մէջ (*Հայկազեան հայագիտական հանդէս, Զ*:1977-78, էջ 197-242), Պերճ Կարապետեան չ'առանձնացներ բաղնիքի այս թասերը: Սակայն իր յօդուածին նկար 26ին մէջ (էջ 223) կը տեսնենք այդպիսի երկու թասեր, որոնք արձանագրութիւններ ունին:

[6] Սեպտեմբեր 2016ին Սարդարապատի ազգագրութեան թանգարանի պղնձեայ իրերու բաժնի պատասխանատու Նարինէ Եղիկեանի հետ փնտռտեցինք թանգարանին պահեստը եւ գտանք մէկ նմուշ: Աւելի ետք Եղիկեան ղրկեց չափագրութիւնն ու նկարագրութիւնը թասին, որուն համար շնորհակալ ենք իրեն եւ թանգարանի տնօրէնութեան: Ծիծեռնակաբերդի Ցեղասպանութեան յուշահամալիրը եւ Կիլիկիոյ հայոց կաթողիկոսութեան թանգարանը չունին այս թասերէն: Յունուար 2022ին՝ Մ. Նահանգներու Ուոթըրթաունի (Մեսեչուսէց) Armenian Library and Museum of Americaն մեզի տրամադրեց երեք թասի նկար, համապատասխան չափագրութիւններով (շնորհակալութիւն՝ գործադիր տնօրէն Ճէյսըն Սոհիկեանին, Կերի Լինտ Սինանեանին եւ լուսանկարիչին). ստացանք նաեւ չափագրութիւնը չորրորդ թասի մը, առանց նկարի: Այս թասերէն առաջին երեքը պատկանած են Պերճ Կարապետեանի հաւաքածոյին: 20 եւ 22 Նոյեմբեր 2021ին Երեւանի Յովհաննէս Շարամբէեանի անուան ժողովրդական արուեստներու թանգարանի պահեստին մէջ մեր կատարած փնտռտուքը չարդիւնաւորուեցաւ, մինչ Երեւան քաղաքի պատմութեան թանգարանի պահեստներուն մէջ գտանք նմուշ մը, որ անթուակիր էր եւ չունէր արձանագրութիւն, այլ՝ խորհրդանշան մը: Յատուկ շնորհակալութիւն՝ համապատասխանաբար տնօրէններ Լուսինէ Թորոյեանին եւ Արմինէ Սարգսեանին:

կը, կը կարծենք, կարելի կը դարձնէ գրաւոր ակնարկ մը նետելը անոնց վրայ:

Այստեղ պիտի ջանանք ներկայացնել այս թասերուն մշակման եղանակը, արձանագրել ընդհանրական յատկութիւնները, անդրադառնալ նախշերուն, արձանագրութիւններուն եւ յանգիլ պայմանական եզրակացութիւններու, մասնակի հիմք մատուցելով յառաջիկային կատարուելիք աւելի ամբողջական ուսումնասիրութեան[8]:

Մեր դիտարկումէն դուրս թողած ենք նոյն տեսակի այլ թասեր, որոնք որեւէ արձանագրութիւն չունին: Դուրս թողած ենք նաեւ անոնք, որոնք միայն զարդանախշ-խորհրդանշան ունին:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ[9] ԵՒ ՄՇԱԿՄԱՆ ԵՂԱՆԱԿ

Թասերը շրջանաձեւ են, յատակի նստուածքը հարթ ըլլալով հանդերձ, ծայրամասերը գոգաւոր են եւ այդ վիճակով (կիսակլոր դրութեամբ) կը բարձրանան վեր, կը գոյացնեն ուռուցիկ փորիկը (իրանը), ապա ուղղահայեաց կ'ուղղուին վեր՝ գոյացնելու համար վիզը ու կ'աւարտին պռունկին յառաջացնելով փոքր ոլորք մը: Թասին ներսը, յատակին կան համակեդրոն շրջագիծեր: Դուրսէն, իրանը եւ վիզը գօտեւորուած են մակերեսային շրջագիծերով:

Կարմիր պղնձաթերթէ պատրաստուած այս թասերը ունին նոյն ոճը: Առկայ տարբերութիւնները կը վերաբերին ձեւին, ծաւալին[10] եւ նախշերուն:

Ըստ Յովսէփ Թոքաթի, յատակը հարթելէ ետք բարձրացուած են կողմերը, որմէ ետք, յատակէն դէպի վեր բարձրացող հատուածի առաջին մասը ընդարձակուած է, մինչ շարունակուող հատուածը պահպանուած է իր նեղութեամբ[11]:

---

[7] Տե՛ս՝ *Զարթօնք* եւ *Արարատ* օրաթերթեր, Երեքշաբթի եւ Չորեքշաբթի, 10 եւ 11 Յունուար 2017, *Ազդակ*՝ Հինգշաբթի, 12 Յունուար 2017: Մամուլի մեր յայտարարութեանց արձագանգեցին Թանիա Տէմիրճեան (12 Յունուար 2017) եւ Սեդա Սմսարեան Գարաքըլեան (2 Փետր. 2017):

[8] Մեր եզրակացութիւնները արդիւնք են միայն մեր ի ձեռի ունեցած թասերու դիտարկումներուն:

[9] Նկարագրութեան համար օգտուած ենք նաեւ Եղիկեանի մեզի ղրկած մանրամասնութիւններէն:

[10] Չափ, բարձրութիւն եւ կշիռք (որ կը յառաջանայ նաեւ մետաղի հաստութենէն):

[11] Անձնական զրոյց՝ Մ. Նահանգներ, Ա. Էսքիճեան թանգարան, Փետրուար 2016ին:

Աղիւսակ հայկական պղնձեայ թասերու պատկանելիութեան, արձանագրութեանց եւ չափագրութեանց									
Թա-սեր	**Պատկանելիութիւն**	**Արձանագրթն.**	**Կշիռք (կր.)**	**Բրձրթն. (սմ.)**	**Հստթն. (մմ)**	**Տրմգծ. (սմ.)**	**Տարի**	**Վայր**	**Վիզ (սմ.)**
1	Ամերիկահայ Գրադարան-Թանգարան (ԱԳԹ)	ՇԻՐԻՆԻՆՑ ՍԱՌԱՅ	1294	7.5	1.45	22.5	1286/1869		
2	ԱԳԹ[12]	[Ի ՎԱՅԵԼՈՒՄՆ ԻՍԿՈՒՀԻ ՏԷՐՏԷՐ ՕՏԱԲԱՇԵԱՆ]	1389	7	2.5	22.5	1885		
3	Գագիկ Ստեփան Սարգիսեան[13]	ԿԱՏԱՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ					1887		
4	Արարատ Էսքիճեան Թանգարան (ԱԷԹ)[14]	ՄԷյիկ ՕՂԼԻ ԳԷՈՐԳՈՒ ՈՐԴԻ ՄԱՐԻԵԱՄ		7.6		21.6	1897		3,3
5	Սասուն Սիմոնեան	ՈՒՄԹՊԱՇԻԼՕԼԷԻ ԱՂՋԻԿՊ ՄԱՆՍՈՒՐԱ	632.65	7.2	1-1.2	21.5	1897		
6	ԱԳԹ[15]	ՓԻԼԻՊՈՍԻ ՈՐԴԻ ՄԸՆՈՒԾ	847	8	2	21.	1897		
7	Ներսէս Պարսումեան	ԽԱՐԲԵՐԴՑԻ ՄԱՐԳՐԻՏ ՏԱՇՕԵԱՆ					1898		
8	Ներսէս Պարսումեան	ՍԱՌԱՅ ՏԷՐ ՔԱՍԲԱՐԵԱՆ					1899		
9	Սարդարապատի Ազգագրութեան Թանգարան	ՊԱՅԾԱՌ ԸՍԹԱՆՊՕԼԵԱՆ	658	7.6	0.5	21	1900		
10	ԱԷԹ	ՇԽԼՕԵԱՆ ՄԻՔԱԷԼ ԱՂԱՅԻ ԴՈՒՍՏՐ ՄԱՐԻԱՄ. Տ.ԿԵՐՏ		7.6		21.6	1900	Տ.կերտ	3,8
11	Մուրատ Պիլիր	ՄԱՔՐՈՒՀի զԱՐիֆԵԱՆ		8	2	21	1900	Թոքաթ	
12	Սեդա Սմսարեան-Քարագըլեան[16]	ԿԱՏԱՐ ՊՕՅԱՃԵԱՆ	500	8	2	21	1902	Տ.կերտ	
13	Հայաստանի Պատմութեան Թանգարան[17]	«Հայկանուշ Կա(ր)չիեան»		9		22,2	1903	Կարչին Թոքաթ	
14	Ներսէս Պարսումեան	ԼՈՒՍԻԵԱՅ					1903		
15	Միհրան Մինասեան	ՆՈՒԱՐԴ	619		1	21.9	1903		
16	Անդրանիկ Տագէսեան	ԷԼԻԶԱ ՄՈՒՇԷԽԵԱՆ	710	7.5	1.3	22	25 Սեպտ. 1904		
17	Սասուն Սիմոնեան	ՊԱՅԾԱՌ ՖՈՒՌՈՒՆՃԵԱՆ	767	8.5	1,3	23.5	1906		
18	Ներսէս Պարսումեան	ՋՈՀՐԱՅ ՏԱՄՈՒՌՃԵԱՆ					1906		
19	Միհրան Մինասեան	Սալլախ Կարապետի դուստր Պայծառ					1906		

20	Անդրանիկ Տագէսեան	ՀԱՅԿԱՆՈՒՇ ՊԷՐՊԷՐԵԱՆ	685	8	1.1	21	1908		
21	Սասուն Սիմոնեան	ԱՐԷՔ ՉՈՒՎԱԿԵԱՆ	599	7.5	1.2	21	1909		
22	ԱԳԹ	ԴՈՒՄԱՅ ՅԱԿՈԲԵԱՆ	866	8	1.25	20.3	1909		
23	Անդրանիկ Տագէսեան	ԿԻՒՎԱՐԴ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ	555	7	0.9	20.5	1911		
24	Վիքթորիա Պօյաճեան						1911		
25	Ներսէս Պարսումեան	ԱՂԱՒՆԻ ԹՒՐՋԻԱՆ					1912		
26	Միհրան Մինասեան	ԱԶՆԻՎ ՅԱԿՈԲԵԱՆ	573	6.32	1	20.3	1913		
27	Ներսէս Պարսումեան	ԿԱՏԱՐ					1921		
28	Անդրանիկ Տագէսեան[18]	روز صابونجي يان [Րոզ Սապունճեան]	670.5	6.1-7	1.5	20.3	1930		

[12] Այս նմուշին նկարը չունինք, այլ միայն չափագրութիւնն ու անգլիատառ հայերէն արձանագրութիւնը:

[13] Թասին տուեալները քաղած ենք *Treasured Objects* գիրքէն, էջ 39):

[14] Նատիա Պարսամի վերջերս նուիրած շուրջ 102 կտոր պղնձեղէնին մէջ գտանք մեզ հետաքրքրող երկու թաս: Ըստ նուիրատուին ասոնք կուգան Արաբկիրէն, Մուշէն եւ Սասունէն:

[15] Պերճ Կարապետեանի հաւաքածոյէն:

[16] Այս թասին մասին իմացանք ելմակի մը միջոցով: Ելմակը ստորագրուած է Սեդա Սմսարեան-Գարաքըլեանի կողմէ, որ որոշ տեղեկութիւններ կու տայ թասին մասին, թէ «Կատար Պօյաճեանը իմ հօրենական մեծմօրս աղջկական մականունն է: Թասը շինուած է Տիգրանակերտ: Հօրս ընտանիքը մինչեւ 1915 Աբրահամեան կը կոչուէր, իսկ այնուհետեւ՝ Սմսարեան» (ելմակ, 2 Մարտ 2017):

[17] Թասին տուեալները քաղած ենք Կիրակոսեանի գիրքէն, էջ 204:

[18] Թասին արձանագրութիւնը եւ թուականը գրուած են արաբերէն:

Ըստ Պուրճ Համուտ բնակող ծերունի պղնձագործ Զաւէն Գազանճեանի[19]՝

> 30 սանթիմնոց *փիսք* մըն է [որմէ] գաւաթ պիտի շինուի: Վեց սանթիմի չափ ամէն մէկ կողմէն ձգելով կարկինով յատակագիծը կը գծեմ, ապա կը սկսիմ դէպի վեր բարձրացնել: Կը բարձացնեմ պէտք եղած հասակով, յետոյ կը սկսիմ յատակի բաժինէն դէպի վեր բարձրացուած հատուածը ուռեցնել եւ կլորութիւն տալ: Արդէն մետաղը կարծրացած կ'ըլլայ, կրակին վրայ կը թաղեմ, մետաղը աղուոր կասկարմիր կ'ըլլայ, կը կակուղնայ, կը հանեմ ու ջուրին մէջ կը թաղենք, կը պաղի: Նորէն կը սկսիմ ծեծել մուրճով, կը սկսիմ շտկել-հարթել փորիկին կլորութիւնը, *փերփախ* կ'ընեմ, նախապէս զարնուած մուրճին տեղերը անհետացնելու համար եւ մուրճին տեղն ալ կ'ելլէ: Փորիկը աւարտելէս ետք, կը վերադառնամ վիզին, կը հաւաքեմ յետոյ կը շտկեմ, հաւասար հորիզոնական մակերես կը յառաջացնեմ, յետոյ շիտակ եզերք կը բանամ, թէլ կը դնեմ մէջը, զայն տարբեր տեղերէ կը բռնեցնեմ որ չբացուի (դուրս չելլէ թէլը պղինձէն): Թէլը տարբեր տեղերէ բռնեցնելէ յետոյ կը զարնեմ տախտակէ *թոխմախ* ով ու պղինձը կը ծածկեմ թէլին վրայ: Բնականաբար զանազան մուրճեր ու սալեր կը գործածեմ այս աշխատանքներուն համար: Կամաց-կամաց թէլը կը ծածկուի պղինձով, յետոյ դուրսէն կը սկսիմ զարնել, կամաց-կամաց եւ պղինձին ծայրը կը փաթթեմ թէլին վրայ ու դարձեալ հորիզոնական համահարթութիւն կը յառաջացնեմ պռունկին: … Այս աշխատանքը շատ-շատ կը տեւէ երկու ժամ: Եթէ մէկը պիտի շինէ տասը հատ կը շինէ օրական:

ՆԱԽԱՏԻՊԱՐ, ՆՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Նախատիպար.- առանձին ուսումնասիրութեան նիւթ է այսպիսի թասերու յառաջացման պատմական ընթացքը: Ուշագրաւ է Երեւան քաղաքի պատմութեան թանգարանի կաւէ թասը, որ իր ձեւով կը յիշեցնէ մեր ուսումնասիրած պղնձեայ թասերուն ձեւը[20]:

Նմանութիւններ.-

1) Բոլոր թասերը պատրաստուած են կարմիր պղինձէ: Միքանին կլայուած են:

2) Բոլոր թասերը ունին համակեդրոն շրջագիծեր, որոնք թէ՛ որոշ յարդարանք կու տան թասին, թէ՛ կը ծառայեն անոր համաչափ ձեւաւորման:

3) Մետաղին հարթութեան փաստը կը մղէ մեզ հետեւցնելու որ արհեստաւորները ոչ թէ իրենք յառաջացուցած են այդ թերթերը, այլ՝ օգտա-

[19] Անձնական հարցազրոյց, 7 Մարտ 2018ին:

[20] Այցելութիւն՝ 28 Յունուար 2021: Թասերուն զարգացման ընթացքը (ձեւի, հումքի, չափի թէ այլ առումներով) շահեկան ըլլալով հանդերձ՝ այս յօդուածին ծիրէն դուրս կը նկատենք:

գործած են գործարանային կիսաճարտարարուեստական պղնձեայ թերթեր[21]:

4) Թասերուն մեծ մասը ունի արձանագրութիւններ՝ անուն ազգանուն, եւ թուական: Բոլոր անունները իգական սեռի կը պատկանին, ինչ որ կը հաստատէ թէ ասոնք իգական գործածութեան համար եղած են եւ պատկանած են թասերուն վրայ փորագրուած անուանատէրերուն: Ենթադրելի է որ թասերուն պատուիրատուները եղած ըլլան անուանատէրերուն ծնողքը կամ հարազատը, կամ նոյնինքն արձանագրուած անուանատէրը: Յաճախ այս ենթադրութիւնը կը հաստատուի արձանագրութեան առաջին բաժնին մէջ նշուած հայրանունի գոյութեամբ: Ենթադրելի է նաեւ որ թասերը ապսպրուած ըլլան անուանատէրերուն ծննդեան, մկրտութեան առթիւ կամ՝ իբրեւ օժիտ:



Շիրինինց Սառայի եւ Կիւլվարդ Յովհաննէսեանի թասերը

5) Թասերը ունին թուական, որ կ'արտայայտէ անուանատիրոջ կեանքին մէջ անկիւնադարձային դէպքի մը, առիթի մը տարեթիւը:

6) Բոլոր թասերը ունին զարդանախշ:

[21] Այս վարկածը կրնայ հերքուիլ՝ երբ յայտնագործուի թաս մը, որուն տաբրեր մասերը մետաղային տարբեր հաստութիւններ ունին:

Այս հաւաքածոյին մէջ կան թասեր, որոնք կը թուի նոյն արտադրամասի արդիւնքն են. օրինակ՝ աղիւսակի թիւ 3, 13 եւ 20 թասերը շատ նման են իրարու, նաեւ՝ թիւ 1 եւ 22 թասերը եւն.:

Բ.- Տարբերութիւններ

Զեւի առումով նկատելի է երեք տարբերակ.-

1) Յատակը տափակ կամ ոչ-ողորկ թասեր.
2) Կիսալուսնաձեւ իրանի կամ իրանի երկրորդ կէսը անկիւնաւորուած թասեր.
3) Պռունկը կլոր կամ հարթ թասեր:

Կան արձանագրութեան ու ձեռագրի տարբերութիւններ. ոմանք գծային են, ուրիշներ՝ աւելի լաւ մշակուած:

Կան նաեւ զարդանախշերու տարբերութիւններ. ոմանք շատ պարզ են, ունին փոքր նախշ-խորհրդանշան մը, մինչ ուրիշներ ունին ճոխ նախշազարդում:

Մէյիկ օղլի Գէորգի որդի Մարիամի եւ
Շխլոյեան Միքայէլի աղայի դուստր Մարիամի թասերը

ԱՐՀԵՍՏԱԽՈՐ, ՎԱՅՐ, ԺԱՄԱՆԱԿ, ԹԱՍԻ ՏԷՐ ՈՒ ՉԱՓԱԳՐՈՒԹԻՒՆ

Դիտարկուած թասերէն ոչ մէկը ստորագրութիւն ունի, կամ կնքուած է: Եղիկեան՝ «Ըսթանպօլեան» թասին վրայ եղած երեք խորհրդանշանները՝ փ փ փ, կը համարէ վարպետին ստորագրութիւնը («հաւանաբար վարպետի նշանն է»)[22]: Մեզի այդպէս չի թուիր, որովհետեւ անոնց չենք հանդիպիր նոյն ոճի այլ թասերու վրայ:

Հետեւաբար, մէկտեղուած այս հաւաքածոյին տուեալները թոյլ չեն տար որեւէ ենթադրութիւն կատարելու արհեստաւորներուն մասին: Սակայն կարգ մը թասերու նոյնանմանութենէն մեկնելով կարելի է փաստացիօրէն հաստատել այս արհեստատուներուն գործունէութեան աւելի քան երեսնամեայ տեւողութիւնը:

Թասերուն արձանագրութիւնները եւ այլ կողմնակի տուեալներ կը յուշեն որոշ բան՝ անոնց "ծննդավայր"երուն մասին: Այսպէս, աղիւսակի թիւ 7 արձանագրութիւնը կը խօսի թասի տիրոջ հօր խարբերդցիութեան մասին, թիւ 10 թասի արձանագրութիւնը կը հաւաստէ վայրը՝ Տիգրանակերտ: Որոշ վերապահութեամբ կը մօտենանք թիւ 12 թասի արձանագրութեան, քանի որ ան մեզի փոխանցուեցաւ գրաւոր: Այս ալ կը խօսի Տիգրանակերտի

[22] Եղիկեան նամակ:

մասին: Իսկ թիւ 11 թասի տուեալը զոր քաղած ենք համացանցէն կը նշէ Թոքաթը: Մինչ թիւ 3 թասի մասին կը հաւաստուի որ ան գնուած է 1985ին, Ուրֆայէն: Անդին, տակաւին, կարելի է մատնանշել արաբերէն արձանագրութիւնը թիւ 28 թասին, որ մտածել կու տայ թէ գործ ունինք արաբական տարածքի մը, հաւանաբար Հալէպի հետ: Արարատ-Էսքիճեան թանգարանի նուիրատուութեան արձանագրութիւնը կը նշէ թէ իրերը կու գան Արաբկիրէն, Մուշէն ու Սասունէն:

Աւելի հաւաստի են թասերուն 'ծննդեան' թուականները: Մէկտեղուած բոլոր թասերուն արձանագրուած են թուականներ, որոնք կը տարուբերին 1869ի եւ 1930ի միջեւ:

Վերը նշեցինք արդէն թէ այս թասերը պատկանած ու մանաւանդ գործածուած են իգական սեռին կողմէ: Կարապետեան զանոնք կը համարէ բաղնիքի թասեր:

Թասերէն մին ունի 1930 թուակիր արաբատառ արձանագրութիւն մը (թիւ 28): Կարելի է ենթադրել թէ ան աշխատուած ըլլայ Սուրիոյ եւ շատ հաւանաբար Հալէպի մէջ: Կարելի է մտածել, հետեւաբար, որ Արեւմտեան Հայաստանի եւ Փոքր Ասիոյ այլ տարածքներու հայութեան ցեղասպանութիւն-արմատախլում-աքսորէն ետք, Հալէպը դարձաւ գլխաւոր 'ժառանգորդը' հայ պղնձագործութեան...մինչեւ սուրիական փուլը 2011ին ծայր առած «Արաբական գարնան», որ անվերականգնելի աւեր գործեց իմիջիայլոց տեղական արհեստներուն:

Դումա Յակոբեանի եւ Փիլիպոսի որդի Մընուշի թասերը

Ինչպէս ըսինք, թասերը թուակիր են. հնագոյնը՝ 1869, իսկ նորագոյնը՝ 1930: Կարելի է հետեւցնել, ուրեմն, որ այս թասերու արտադրանքին հայ պղնձագործները ձեռնարկած էին առնուազն 1860ականներէն: Եւ քանի որ դժուար թէ Հալէպի հայ պղնձագործները կարենային իրենց ապրուստը ապահովել միայն բաղնիքի թասեր արտադրելով, կարելի է պնդել, թէ այս թասերով շօշափելիօրէն կը հաստատուի Հալէպի մէջ հայ պղնձագործութեան առկայութիւնը գէթ ԺԹ. դարակէսէն:

Թասերուն թուակիրութիւնը ենթադրել կու տայ որ անոնք գործածութեան դրուած ըլլան իրադարձութեան մը առթիւ:

Պէտք է ընդգծել նաեւ որ արդէն 1860ականներուն պղնձեայ իրեղէններու արտադրութիւնը կիսաճարտարարուեստականացած էր:

Չափագրութիւն.- Այս թասերը կը կշռեն 500 կրամէն մինչեւ շուրջ 1390 կրամ: Աղիւսակին տուեալները կը թելադրեն նաեւ նկատել թէ կշիռքի յստակ նուազում մը եղած է 1880ականներու վերջերէն սկսեալ:

Թասերուն բարձրութիւնը կը տարուբերի 6.1-9 սմ.ի միջեւ:

Մետաղին հաստութիւնը կը տարուբերի 0.5-3մմ.ի միջեւ:

Թասերը ունին 20.3-23.5 սմ. տրամագիծ:

Նախշեր եւ խորհրդանշաններ.- Ուրիշ առիթի թողլով աւելի մանրամասն քննարկումը թասերուն վրայի նախշերուն եւ խորհրդանշաններուն, այստեղ ըսենք միայն թէ անոնց կը հանդիպինք թասի յատակին, իրանին եւ վիզին վրայ:

Հայկանուշ Պէրպէրեանի եւ Էլիզա Մուշեղեանի թասերը

Թասի փէր.- Բոլոր արձանագրութեանց մէջ կը հանդիպինք իգական անուններու.- Ազնիւ, Աղաւնի, Արէք, Դումայ, Զոհրայ, Էլիզա, Իսկուհի, Լուսիեայ, Պայծառ, Հայկանուշ, Կիւլվարդ, Կատար, Մանսուրա, Մարգրիտ, Մարիամ/Մարիեամ, Մաքրուհի, Մընուշ, Նուարդ, Սառայ եւ Րոզ:

Կան եւ միքանի արական անուններ՝ Մէյիկ Օղլի Գէորգ, Միքայէլ աղա, Ուսթապաշի Լօլէ, Սալլախ Կարապետ, Փիլիպոս, ինչպէս եւ մականուններ.- Զարիֆեան, Ըսթանպօլեան, Թերզիան, Կա(ր)չիեան, Մուշէխեան, Յակոբեան, Յովհաննէսեան, Շիրինինց, Շխլօեան, Չուվլակեան, Պետրոսեան, Պէրպէրեան, Պօյաճեան, Սապունճեան, Տամուռճեան, Տաշօեան, Տէր Քասբարեան, Օտաբաշեան, Ֆուռունճեան:

ԱՄՓՈՓՈՒՄ

Եզրափակելով, կրնանք հաւաստել[23] թէ հայկական պղնձագործութեան բաղնիքի թասերու այս տեսակի մեզի ծանօթ նմուշներուն հիմամբ կը պարզուին, թէ այս թասերը պատկանած են հայուհիներու, ունեցած են կիրառական եւ աշխարհագրական լայն ծիր՝ Թոքաթ (Կարչին), Հալէպ, Ուրֆա, Տիգրանակերտ, որոշ վերապահութեամբ՝ նաեւ Արաբկիր-Մուշ-

[23] Հասկնալի է, որ այս եզրակացութիւնները ենթակայ են փոփոխութիւններու՝ նոր նիւթերու յայտնաբերման պարագային:

Սասուն: Անոնք չեն ստորագրուած եւ ոչ մէկը կը կրէ վարպետի կամ արհեստանոցին անունը:

Ժամանակային առումով անոնք գոյատեւած են գէթ մինչեւ 1930ականները: Անոնց սկսնաւորման թուականը սակայն, կը մնայ անլոյծ, որոշապէս՝ 1860ականներէն առաջ:

Անոնք ընդհանրապէս ունեցած են կայուն ձեւ եւ ենթարկուած են չափագրական ոչ-մեծ ձեւափոխումներու:

A SURVEY ON THE ARMENIAN COPPER BATH *TASS*

(Summary)

ANTRANIK DAKESSIAN (adakessian@haigazian.edu.lb)

Among the three basically different forms of Armenian bath *tass*es (the Armenian plural for *tass)* of the 19th and early 20th century this study focuses on one specific form. It is the first examination in its kind.

Through extensive research in different museums, catalogues, and private collections the author has been able to collect data on 28 such *tass*es and accordingly develop his observations.

Based on a collection of 28 *tass*es, the study describes these *tass*es, their Armenian inscriptions, the dates and places of their production, and the names of their owners. The study concludes that these were owned and used by females and given to them as a present on a special occasion, which could be their birth or baptism, or wedding. Unfortunately, nothing can be said about the workshops and their Armenian identity as none of the *tass*es has a stamp or the inscription of the craftsman.

The author notes that the *tass*es were produced between the late 1860s and the 1930s, and infers that these were produced in different areas of Western Armenia and the peripheries.

The article offers a table that details the height, diameter, weight, and thickness of the 28 *tasse*s described here.

ԿՈՄԻՏԱՍԻ ԵՒ ՏԻԳՐԱՆ ՉԻԹՈՒՆՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ

ԱՐՓԻ ՎԱՐԴՈՒՄԵԱՆ (avardumyan8@gmail.com)

ՄՈՒՏՔ

Կոմիտասի կեանքն ու ստեղծագործական գործունէութիւնը մշտապէս գտնուում են երաժշտական հանրութեան ուշադրութեան կենտրոնում: Սակայն նրա թողած թանկագին ժառանգութեան ուսումնասիրման բնագաւառում դեռեւս կան հարցեր, որոնք կարօտ են առաւել հանգամանալից ուսումնասիրութեան:

Կոմիտասի երկերի ժողովածուի ակադեմիական 14 հատորների տպագրութիւնն աւարտուել է 2006ին[1], սակայն գոյութիւն ունեն նրա ձայնագրած ձեռագիր որոշ երգեր, որոնք հանգամանքների բերումով դեռեւս անտիպ են. դրանցից է իր ծննդավայր Քէօթահիայում (Կուտինա) ձայնագրած երգերի ժողովածուն, որի մեծ մասը՝ շուրջ 50 երգ, երբեւէ լոյս չի տեսել, քանի որ դրանց բնագրերը հայատառ թուրքերէն են, թէեւ այդ բոլոր երգերի կատարողները հայեր են, ընդ որում՝ Կոմիտասի մօտիկ ազգականներն ու ընտանիքի բարեկամները[2]:

---

[1] Կոմիտաս, *Երկերի ժողովածու, 14 հատորով, գիրք Ձ.*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., (խմբագիր՝ Ռոբերտ Աթայեան, Գէորգ Գէօդակեան), Երեւան, 2006:

[2] Քանի որ Արեւմտեան Հայաստանում, այդ թւում՝ Քէօթահիայում, արգելուած է եղել հայերէն խօսքը՝ տեղի բնակչութիւնը ակամայ դարձել էր թրքախօս, հետեւաբար՝ երգերն էլ այդ լեզուով էին յօրինւում ու երգւում: Սակայն հայոց եկեղեցում հոգեւոր երգեցողութիւնը կատարւում էր հայերէն: Հանրայայտ է, որ մանուկ Սողոմոնը նոյնպէս մինչեւ Էջմիածին տարուելը հայերէն խօսել չի կարողացել, սակայն Գէորգ Դ. կաթողիկոսի համար հրաշալիօրէն կատարել է «Լոյս զուարթ» երգը եւ անչափ յուզել վերջինիս:

Վերոնշեալ անտիպ երգերի մասին 2010ին անգլերէն զեկուցել եմ Լոս Անճելըսի Համալսարանի հայագիտական ամբիոնի 13րդ միջազգային գիտաժողովում, որի նիւթերը լոյս են տեսել 2014ին (Arpi Vardumyan, "Komitas Vardapet and the Armenian Musical Culture of Asia Minor," *Armenian Communities of Asia Minor, UCLA Armenian History and Culture Series: Historic Armenian Cities and Provinces 13*, ed. by Richard Hovannisian, 2014, էջ 195-208): Նաեւ 2013ին այդ մասին զեկուցել ենք ՀՀ ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի տարեկան գիտաժողովում՝ Արփի Վարդումեան, «Քէօթահիայի հայերի երաժշտական մշակոյթը (ըստ Կոմիտասի գրառած հայատառ թուրքերէն երգերի անտիպ ժողովածուի)», որը հրատարակուել է *Հայ ժողովրդական մշակոյթ – XVI, Դերենիկ Վարդումեանի ծննդեան 90-ամեակին նուիրուած գիտաժողովի նիւթերի ժողովածուի մէջ*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2014, էջ 153-160:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԲԱՆԱՐՈՒԵՍՏ

Ինչ վերաբերում է երաժշտական բանահիւսութեանը, որ Կոմիտասի համար մշտապէս առաջնահերթ նշանակութիւն է ունեցել, այս ոլորտը հարկաւոր է դիտարկել առաւելագոյն ուշադրութեամբ, քանզի հե՛նց սրա վրայ են յենւում Կոմիտասի ստեղծագործական գործունէութեան միւս բոլոր ասպարէզները:

Կոմիտասի եւ վանեցի յայտնի բանասէր, բանահաւաք Տիգրան Չիթունու (Տիգրան Յարութիւնի Չթճեան կամ Չիթճեան)[3] գործակցութիւնը երաժշտական ազգագրութեան բնագաւառում բաւականին բեղմնաւոր է եղել: Չիթունին Վասպուրականի բանահիւսութեան հմուտ մասնագէտ էր, նա քաջ յայտնի էր որպէս Վանաշխարհի գիտակ, Վասպուրականի բանարուեստի անխոնջ հաւաքող, Վանայ բարբառի հմուտ ուսումնասիրող, ինչպէս նաեւ աւելի քան հազար էջից բաղկացած «Սասունական - Սասունցի Դաւթի եօթ ճիւղի տաղաչափեալ ամբողջական պատմութեան» շարադրող՝ ընդարձակ մասնագիտական առաջաբանով հանդերձ[4]:

Կոմիտասը ջերմ գուրգուրանքով էր վերաբերւում հայաշխարհի իւրաքանչիւր գաւառի երաժշտական բանահիւսութեանը: Սակայն Չիթունուն հանդիպելուց առաջ Արեւմտեան Հայաստանի գաւառների հարուստ բանարուեստին ի մօտոյ առնչուելու առիթ եւ հնարաւորութիւն նա դեռեւս չէր ունեցել, այլ գրառել էր սոսկ հատուկենտ նմուշներ տարբեր անձանցից: Ահա թէ ինչպէս է բնութագրում բանասէր Յակոբ Սիրունին Կոմիտասի հոգեվիճակը մինչեւ Վան-Վասպուրականի երգերին ծանօթանալը.

> Կոմիտաս դժբախտ կը սեպէր ինքզինք: Ան լրիւ չէր կրցած պրպտել հայ հոգին իր երգերուն մէջ: Գեղջուկ երգերը, զորս հաւաքեր էր, չէին ներկայացներ բոլոր հայ գաւառները: Ճիշտ է, Արարատեան դաշտը ծանօթ էր իրեն՝ իր հոգեկան գանձով, եւ Արեւմտեան Հայաստանէն եւս կրցեր էր նմուշներ հաւաքել տարիներու ընթացքին, բայց այդ աշխարհը դեռ շատ բան կը ծածկէր իրմէ[5]:

Եւ միանգամայն բնական է, որ առաջին իսկ պատեհ առիթին Կոմիտասն սկսել է անյագ եռանդով նոթագրել Վանայ երգերի մեղեդիները հե՛նց Չիթունու կատարումներից, որոնց բառերը վերջինս արդէն իսկ գրառել էր, սակայն երաժշտական կրթութեան պակասի պատճառով հնարաւորութիւն չէր ունեցել ձայնագրել նաեւ դրանց մեղեդիները: «Կոմիտասի հետ» վերտառութեամբ իր արժէքաւոր յուշ-յօդուածում Չիթունին,

---

[3] Գառնիկ Ստեփանեան, *Կենսագրական բառարան, հտր. Գ., գիրք 1,* «Խորհրդային գրող», հրատ., Երեւան, 1990, էջ 213. նաեւ՝ Բ. Մ. Յովակիմեան, *Հայոց ծածկանունների բառարան*, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 2005, էջ 696:

[4] Ստեփանեան, էջ 214:

[5] Յակոբ Սիրունի, «Կոմիտասին հետ», *Էջմիածին*, 1966 (շարունակեալ *Էջմիածին* ամսագրի 1965ի թիւ Ա., Ե.-Զ.-Է., Ը.-Թ., Ժ.ից, 1966ի Ա., Բ., Գ., Դ., Ե., Զ., Ը.ից), թիւ Թ.-Ժ., էջ 72:

որ օժտուած էր երաժշտական սուր լսողութեամբ եւ հոյակապ յիշողութեամբ, գրել է.

> Ազգագրական հարուստ քաղերուս մէջ՝ Վասպուրականէն եւ շրջակայ գաւառներէն՝ ես ունէի նաեւ հայ ժողովրդական երգերը: Անոնց բառերը միայն գրի առած ըլլալով՝ ազգագրի իմ դերը լրացած չէի ընդուներ: Պէտք էր նաեւ ձայնագրելով յաւերժացնել անոնց եղանակները, զոր տղայ տարիքէս լսած, երգած ու մտքիս ձայնական ծալքերուն մէջ ծծած էի, եւ որ միշտ ալ լեզուիս ու շրթներուս վրայ կը թրթռային: Բայց խազերուն լեզուն չէի գիտեր, որ ես ինքս ձայնագրէի: Աչքս՝ Կոմիտաս վարդապետին վրայ էր: Ինչպէ՞ս ընել սակայն: Ան՝ Էջմիածին, ես՝ Վան: Նամակով մը միտքս պարզեցի Կոմիտասին[6]:

ՏԻԳՐԱՆ ՉԻԹՈՒՆՈՒ ՀԵՏ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲԸ

Փաստօրէն, Կոմիտասի եւ Չիթունու գործակցութիւնը սկիզբ է առել վերջինիս նախաձեռնութեամբ: Անչափ հետաքրքիր եւ յուզական են Չիթունու արձանագրած յուշերն այս մասին.

> Խրիմեանի յաջորդին՝ Իզմիրլեանի կաթողիկոսական օծման հանդէսն ալ լաւագոյն առիթն ընձեռեց: Եւ 1909ի Սեպտեմբերին Էջմիածին էի: Ժամանելուս օրն իսկ, ցերեկի ճաշէն ետքը, գացի Կոմիտաս վարդապետը տեսնելու: Սեղանատունէն Գէորգեան Ճեմարանի երգասրահը տանող ճամփուն վրայ հանդիպեցայ իրեն՝ երգեցիկ խումբին հետ: Բարձրահասակ, վեղարով, սքեմին մէջ պիրկ, խուզարկու վառվռուն աչքերով, երիտասարդ վարդապետ մը: Գլխարկս հանելով մօտեցայ, եւ «Աստուած օգնական, վարդապետ, պատիւ ունիմ ինքզինքս ներկայացնելու՝ Չիթունի» ըսելով՝ ձեռքս երկարեցի իր աջը համբուրելու: Համբոյրի չձգեց, սրտալի ամուր-ամուր սեղմեց ձեռքս իր երկու ափերուն մէջ եւ ժպտուն ըսաւ.
>
> – Աստուած պահապան... Օ՛, մե՛ր Չիթունի՛ն...
>
> Անսեթեւեթ մտերմական մեր-ը մէկ անգամէն հարթեց փոխադարձ անծանօթութիւնը: Չինքը դեռ չճանչցած, հեռուէն, կը կարծէի թէ՝ անմատչելի մէկը պիտի գտնեմ դէմս, սքեմին պէս մութ ու մռայլ, ինչպէս շատ վեղարաւորներ: Սակայն, Կոմիտաս եղաւ րոպէապէս եղբօր ու ընկերի պէս մօտիկ, – Բարի ես եկել, Չիթունի, շատ ուրախ եմ քեզ անձամբ եւս ճանչնալու[7]:

Այս գողտրիկ յուշը երեւակում է Կոմիտասի խառնուածքի բազում նրբերանգները. նա ունէր բացառիկ անմիջականութիւն, որ իսկոյն գրաւում էր դիմացինին: Այնուհետ տեղեկանալով, որ Չիթունին մէնակ երկու օր կարող է մնալ Էջմիածնում, Կոմիտասը երկու երեկոն էլ (մնացած ժամերին

---

[6] Տիգրան Չիթունի, «Կոմիտասի հետ», *Հայրենիք ամսագիր*, Պոստոն, 2(170):1936, Դեկտեմբեր, էջ 80-99. նաեւ՝ *Կոմիտասը ժամանակակիցների յուշերում եւ վկայութիւններում, գիրք Գ.*, հրատ. պատ.՝ Գուրգէն Գասպարեան), Սարգիս Խաչենց – Փրինթինֆօ, Երեւան, 2009, էջ 262-300:

[7] Չիթունի, էջ 80: Մատթէոս Բ. Իզմիրլեանը հայոց կաթողիկոս է դարձել 1908ի Հոկտմբերին, իսկ 1909ի Սեպտեմբերի 13ին՝ Խաչվերացի օրը, օծուել է կաթողիկոս որպէս Մատթէոս Բ. ամէնայն հայոց կաթողիկոս (*Հայ եկեղեցու հանրագիտարան, պրակ Ա., ամէնայն հայոց կաթողիկոսներ*, Ս. Էջմիածին, 2008, էջ 162):

չափազանց զբաղուած էր՝ կաթողիկոսի օծման արարողութեան հանդիսաւոր պատարագի համար իր երգչախմբի փորձերով), ու մինչեւ շատ է ափսոսում եւ, իհարկէ, պայմանաւորւում է հանդիպել նրա կէսգիշերն անց՝ ձայնագրել նրա երգածից հնարաւորինս մեծ թուով երգեր: Ուշագրաւ է նաեւ Չիթունու տպաւորութիւնը Կոմիտաս վարդապետի կացարանից.

Աչք կը պտտեցնեմ իր միաբանական խուցին ներսի յարդարանքին վրայ: Նուագարաններու միւզէոն մը պարզապէս – դաշնակ, ջութակ, քնար ու սրինգ, թմբուկ, թառ ու կիթառ, մանտոլին - ի՞նչ գիտնամ, երաժշտական՝ ստեղնաւոր թէ լարաւոր ու անլար, նախնական թէ կատարելագործուած ամէն տեսակ գործիք ունէր իր ձեռքին տակ, բաց կամ ապակեփակ դարակներու մէջ կախուած: Խնամով շարուած բազմաթիւ գիրքեր, երաժշտական նօթատետրեր եւ թղթեղէն[8]:

Կոմիտասն սկսում է նոթագրել Չիթունու երգերի եղանակները.

Ցանկիս վրայէն՝ կը սկսիմ երգերը: Տող առ տող կ'երգեմ, ինք կը ձայնագրէ: Քառեակը կամ երկեակը կամ տունը լրանալուն պէս՝ կ'անցնի դաշնակին վրայ՝ կը փորձէ գրած խազերը[9] եւ կ'ուզէ որ դիտողութիւններ ընեմ՝ յաջողած կէտերուն: Երգին պահանջին համեմատ՝ երբեմն ջութակի վրայ կը փորձէ, մերթ սրինգի, յաճախ իր հագագովը: Կրկնել ու նորէն երգել կու տայ ինծի այն կտորները, որոնց իր լսողութիւնն առաջին անգամն է որ կը հանդիպի: ... Երբեմն աչքերը լայն բանալով՝ վրաս կը սեւեռէ եւ հիացական կը խնդրէ, որ նորէն կրկնեմ ինքնատիպ երգի մը արտակարգ մէկ եղանակը, զոր անհնար կը գտնէ ծանօթ հայկական խազերով գրի առնելը: Ու յաջողած թէ յուսահատ, կամ կիսովի հազիւ բուն եղանակը բռնած՝ կը բացականչէ.

– Ա՛յ տղայ, ի՞նչ հարազատ ձայներ ունիս հագագիդ մէջ: Ու ձայներ եւս, ինձ համար բոլորովին նոր, որոնք հայկական ու եւրոպական ծանօթ խազերուն չեն

[8] Չիթունի, էջ 81. նաեւ՝ *Կոմիտասը ժամանակակիցների, գիրք Գ.*, էջ 262-300:

[9] Նկատի ունի Համբարձում Լիմոնճեանի ստեղծած ձայնանիշերը, որոնց հիմքում ընկած են հայոց միջնադարեան խազանշաններից միքանիսը, եւ որն այլ կերպ կոչւում է հայկական-եկեղեցական կամ պարզապէս՝ *եկեղեցական ձայնագրութիւն*, *հայկական ձայնագրութիւն* կամ *նոթագրութիւն*, *նոր հայկական* կամ *արդի ձայնագրութեան համակարգ*, ինչպէս նաեւ *Համբարձումեան* կամ, ամէնից յաճախ՝ *Լիմոնճեանի համակարգ* (Նիկողոս Թաշճեան, *Դասագիրք եկեղեցական ձայնագրութեան հայոց*, Վաղարշապատ, 1874. նաեւ՝ Արշակ Բրտեանց, *Դասագիրք հայկական-եկեղեցական ձայնագրութեան*, Վաղարշապատ, 1890. նաեւ՝ Եզնիկ Երզնկեանց, *Դասագիրք հայկական ձայնագրութեան*, Վաղարշապատ, 1880. նաեւ՝ Ռոբերտ Աթայեան, *Ձեռնարկ հայկական ձայնագրութեան*, ՀՀ ԳԱԱ Արուեստի ինստիտուտ, Երեւան, 1950. նաեւ՝ Անահիտ Բաղդասարեան, *Հայկական նոտագրութեան ձեռնարկ*, «Ամրոց գրուպ», Երեւան, 2010. նաեւ՝ Ռոբերտ Աթայեան, «Լիմոնճեան», *Հայկական սովետական հանրագիտարան*, *հտր. 4*, Հայկական ՍՍՀ ԳԱ, Երեւան, 1978, էջ 617. նաեւ՝ Ներսէս Մկրտչեան, *Երաժշտական բառարան*, ՀՀ ԳԱԱ արուեստի ինստիտուտ, Երեւան, 2000, էջ 194-95. նաեւ՝ Արփի Վարդումեան, «Համբարձում Լիմոնճեան (կեանքը եւ գործը, 1768-1839)», *Բազմավէպ*, 2009, էջ 448-65:

ենթարկուիր. կարելի չէ ձայնագրել. իսկ մօտաւոր ձայներով գրի առնուածը չի տար քու եղանակը[10]:

Այս մէջբերումը կարեւոր է նրանով, որ հեղինակն այն շարադրել է հե՛նց Կոմիտասի բառերով, որոնք վկայում են Վանայ երգերում կիսաթոնից փոքր ձայնամիջոցների առկայութիւնը: Չիթունին համեմատում է սա հայոց բարբառներով բանահիւսական նմուշները գրառելու դժուարութեան հետ.

Ճիշտ ինչպէս գաւառաբարբառին յատուկ կարգ մը ձայներուն՝ տառերը կը պակսին ու չենք կրնար թուղթի վրայ անցընել այն ձեւով, որ կը լսենք: Այս կէտին մէջ՝ միայն ձայնագիր գործիքը[11]կրնայ օգտակար դեր կատարել, ինչպէս սինեման միայն կրնայ վերարտադրել պարող ոտքերուն ու մարմնին ծեքծեքումները...[12]: ...Վարդապետը՝ աչք ու ականջ կտրած՝ մտիկ կ'ընէ զիս: Իրեն ցարդ անծանօթ նոր ձայներու առջեւ կը գտնէ իր լսելիքը ու ինծի դարձած կը բացականչէ.

– Դուն երաժիշտ լինելու էիր: Կեցի՛ր, լայն ժամանակ ունենանք՝ քեզի ձայնագրութիւն սովորեցնեմ՝ որ աւելի մեծ չափով օգտակար լինես հայ ազգագրութեան: Այդ օգտակար փափաքը, որ իմս ալ էր, պիտի փորձէինք իրագործել Պոլիս 1914ին: Չափազանց ուրախ էր վարդապետը, որ իմ մէջս գտած էր, իր բառերովը՝ "ոսկեհանք" մը հայ ժողովրդական սքանչելի երգերու եւ "հարազատ հայկական ու բազմազա՛ն եղանակներու" (դարձեալ ի՛ր բառերովը)[13]: ... Այսպէս, երկու գիշեր ետեւ ետեւէ, յետընթրիքէն մինչեւ կէս գիշերն անց, վարդապետը տքնեցաւ, պարապեցաւ ինձ հետ, ձայնագրութեան խազերուն վրայ ապրեցնելով, կորուստէ փրկելով յիսնեակ մը նոր ժողովրդական երգի եղանակներ՝ Վասպուրականի հայ հարազատ աշխարհէն»[14]:

ԲԱԶՄԱՎԷՊԻ ԱՐՁԱԳԱՆԳԸ ԵՒ Հ. ՂԵՒՈՆԴ ՏԱՅԵԱՆԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

Չիթունու այս ուշագրաւ յիշողութիւններին իսկոյն եւեթ *Բազմավէպ*ում անդրադարձել է Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան անդամ հայր Ղեւոնդ Տայեանն իր «Կոմիտաս Վարդապետ» յօդուածում[15].

1909 թուականին ալ Տիգրան Չիթունիէն, երբ սա Իզմիրլեանի կաթողիկոսական ընտրութեան առթիւ էջմիածին երթալով՝ միասին կը տանի Վանայ ժողո-

---

[10] Չիթունի, էջ 81, նաեւ՝ *Կոմիտասը ժամանակակիցների,* էջ 265: *Ձայն*եր ասելով Կոմիտասը նկատի ունի երգի հնչիւնները կամ թոները:

[11] Ձայնագիր (յուն. phone-grafo).– յատուկ մեքենական սարք, որի օգնութեամբ ձայնասկաւառակի վրայ էր գրանցւում երաժշտութիւնը: Էտիսոնը հնարել է այս սարքը 1877ին (Մկրտչեան, էջ 154):

[12] Չիթունի, էջ 81-82, նաեւ՝ *Կոմիտասը ժամանակակիցների*, էջ 265-66:

[13] Հեղինակն առել է չակերտների մէջ, քանի որ դրանք հե՛նց Կոմիտասի արտասանած բառերն են (Չիթունի, *Կոմիտասը..., գիրք* Գ., էջ 265-66):

[14] Չիթունի, էջ 82:

[15] Հ. Ղեւոնդ Տայեան, «Կոմիտաս վարդապետ», *Բազմավէպ*, 1-2:1936, էջ 18:

վրդական երգերէն 50ի չափ, զորս Կոմ. Վ. գրի կ'առնէ, որոնք կը կազմեն իր հաւաքածոյին զմայլելի ու թանկագին գոհարները[16]:

Մխիթարեան հայրն իր *Ձայնագրեալ Շարակնոց*ի առաջին՝ դեռեւս անտիպ հատորում նոյնպէս առանձնայատուկ ուշադրութիւն է դարձրել Կոմիտասի եւ Չիթունու ստեղծագործական գործակցութեանը: Ահա թէ ինչ է գրել նա Ս. Ղազարի մայրավանքում հնչող երգեցողութեան՝ իր նոթագրած բազմահատոր *Ձայնագրեալ Շարակնոց*ի[17] ձեռագիր Ա. հատորի վերջին էջերում. «*1899 թուականին օր մը Կոմիտաս վարդապետ կ'ունենայ իր խցիկին մէջ անդրանիկ այցելութիւնը ազգագրագէտ Տիգրան Չիթունի*»[18]: Ակնյայտ է, որ վերոնշեալ տարեթիւը Տայեանի ձեռագրում վրիպանք է. պէտք է լինի 1909: Իսկ Չիթունու երգերի ձայնագրման առնչուող դրուագներից կրկին որոշ մէջբերումներ կատարելով՝ Տայեանը յատկապէս ընդգծում է հայ գեղջուկ երգերում կիսաթոնից փոքր ձայնամիջոցների առկայութիւնը: Քանի որ ինքը երկար տարիներ զբաղուած է եղել հայոց շարականներն առաջին անգամ եւրոպական նոթաներով գրառելով, իսկ հայոց եկեղեցական որոշ ձայնեղանակներ նոյնպէս պարունակում են կիսատոնից փոքր ձայնամիջոցներ, ապա Տայեանը յօրինել է ածանցման յաւելեալ նշաններ, որոնց օգնութեամբ կարելի է արտայայտել նաեւ ¼ ձայնամիջոցները՝ հնարաւոր դարձնելով եւրոպական նոթաներով եւս ճշգրիտ կերպով գրառել մեր բոլոր շարականները: Սակայն դա արդէն 1933ին էր, երբ «Մեր փրկութեան ներկայ 19րդ դարադարձին առթիւ»[19], Տայեանը լոյս ընծայեց «Աւագ Ուրբաթու Համբարձին՝ *Եկայք*»ը[20], ուր կա-

---

[16] Նոյն, էջ 18:

[17] Հ. Ղեւոնդ Վ. Տայեան Մխիթարեան, *Շարական Հայաստանեայց Եկեղեցւոյ, հտր. Դ., Ե., Բ., Գ., Զ., Է., Ը.*, Վենետիկ, Ս. Ղազար, 1954-69:

[18] *Ձայնագրեալ Շարակնոց*ի առաջին հատորը դեռեւս անտիպ է: Վենետիկի Մխիթարեան միաբանութեան անդամ հայր Վահան Օհանեանից ստանալով բնագրի պատճէնը, պատրաստել ենք այն հրատարակման՝ առաջաբանով եւ ծանօթագրութիւններով հանդերձ եւ ուղարկել *Բազմավէպ*ի խմբագրութիւն, սակայն առայժմ լոյս է տեսել միայն առաջաբանը՝ Արփի Վարդումեան, «Հ. Ղեւոնդ Տայեանի Շարականների արեւմտեան ձայնանիշերով ձայնագրութեան առաջին ներածական անտիպ հատորը. 'Մխիթար եւ Մխիթարեաններ, քրիստոնէական լուսաւորութեան դպրանոց մը' միջազգային գիտաժողովի նիւթեր» *Բազմավէպ*, 1-2:2018, էջ 372-400. նաեւ՝ Արփի Վարդումեան, «Հայր Ղեւոնդ Տայեանի 'Շարական Հայաստանեայց Եկեղեցւոյ' բազմահատոր շարակնոցի անտիպ Ա. Հատորը», *Վենետիկի Մխիթարեան միաբանութիւն 300, միջազգային գիտաժողով, զեկուցումների ժողովածու*, ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտ, Երեւան, 2018, էջ 598-618:

[19] Տայեանը նկատի ունի Քրիստոսի Ս. Յարութեան 1900ամեակը, որ Հռոմը հռչակել էր Սրբազան Տարի (*Բազմավէպ*, 9-10:1933):

[20] Նոյն, էջ 465-76. նաեւ՝ Հ. Ղեւոնդ Տայեան, *“Եկայք հաւատացեալք”. նմուշ մը Հայ Եկեղեցւոյ սրբազան երաժշտութեան եւրոպական ձայնագրութեամբ՝ հան-*

տարեալ «*յայտնութիւն մը եղաւ քառորդձայնեան իր նորահնար դրութիւնը եւ մեծ հռչակ հանեց եւրոպական շրջանակներու մէջ, եւ իր անուանակոչումները (մոնեզիս, թրիէզիս, պեմոլլէթ, պեմոլլոն)*[21] *եւ անոնց համապատասխան նշանները որդեգրուեցան միջազգային համեմատական ցուցապահպակներու մէջ՝ Սիսթէմ Տայեան անունով*»[22] Տայեանի յոբելեանի առթիւ գրել է *Բազմավէպի* Հ. Ներսէս Տէր-Ներսէսեանը:

Սակայն երբ Կոմիտասն էր գրառում Վանայ երգերը Չիթունու կատարումներից, այդ յաւելեալ նշանները դեռեւս չէին ստեղծուել, եւ նրան մշտապէս օգնութեան էին հասնում Լիմոնճեանի ձայնանիշերը, որոնք իրենց բնոյթով համապատասխանում էին արեւելեան ձայնակարգին: Յայտնի է, որ այն ժամանակ դրանք առաւել յարմար էին երաժշտական ազգագրութեան ծառայելու, քանզի նոյնիսկ հնգագծով թուղթ չէր պահանջւում այդ համակարգի գործնական կիրառման համար[23]:

ԿՈՄԻՏԱՍԻ ԵԼՈՅԹՆԵՐԸ ՎԵՆԵՏԻԿՈՒՄ

1907ի յունիսեան մի երեկոյ Վենետիկի Ս. Ղազար կղզում կայացել է Կոմիտասի անմոռանալի ելոյթը Մխիթարեան միաբանութեան անդամների համար՝ հայոց միջնադարեան խազերի մասնագէտ, Իգնատիոս Կիւրեղեան աբբահօր նախագահութեամբ: Ինչպէս միշտ, Կոմիտասն իր համերգն սկսել է դասախօսութեամբ՝ բացատրելով հայկական ու եւրոպական երաժշտութեան էական տարբերութիւնները: Հնչել են ինչպէս գեղջուկ, այնպէս էլ հոգեւոր բազմաթիւ երգեր: Համընդհանուր հիացմունքի շնորհիւ Կոմիտասը հրաւիրուել է կրկնել այդ ելոյթը նաեւ Վենետիկի Մուրատ-Ռափայէլեան Վարժարանում[24], սակայն նա երբեք նոյնութեամբ չէր կրկնում իր դասախօսութիւններն ու երգերը, այլ յաւուր պատշաճի փոփոխում էր ամէն անգամ թէ՛ խօսքի նիւթը, եւ թէ՛ երգացանկը: Կոմիտասի այս պատմական այցից իվեր նա եւ Տայեանը տարիներ շարունակ նամակագրական սերտ կապեր ունէին միմեանց հետ[25]: Ահա թէ ինչ է գրել Կոմիտասի անձնական բժիշկը նրանց միջեւ եղած հոգեւոր հարազատութեան մասին.

դերձ մասնագիտական ուսումնասիրութեամբ, Վենետիկ-Ս. Ղազար, 1933, էջ 10, 15:

[21] Այդ նշանների մասին տե՛ս նաեւ՝ Ա. Վարդումեան, «Ուշ միջնադարեան հոգեւոր երաժշտութեան Վենետիկի դպրոցն ըստ հայր Ղեւոնդ Տայեանի Ձայնագրեալ Շարակնոցի, մաս Ա.», *Բազմավէպ*, 1-4:2005, էջ 386:

[22] «Ոսկեղէն արշալոյսը զոյգ յոբելեարներու յիշատակին», *Բազմավէպ*, 11-12:1956, էջ 282-83:

[23] Վարդումեան, «Համբարձում Լիմոնճեան», էջ 462:

[24] Հ. Կ. Տ. Սահակեան (Կարապետ վրդ. Տէր-Սահակեան), «Հայկական երաժշտութիւն», *Բազմավէպ*, 1-4:1965, էջ 369-73:

[25] Տայեան, «Կոմիտաս», էջ 5-33:

Վարպետները հոգեկան հաղորդակցութիւն մը կ'ունենան իրարու հետ. Մանաւանդ երգի վարպետները: Եւ Հ. Ղեւոնդ Վրդ. շատ կանուխէն մտերիմ նամակագրութիւն ունեցած է անմահն Կոմիտասի հետ Վենետիկէն Էջմիածին: Աքսորի ժամանակ, բանտին մէջ, մինչ օր մը Կոմիտաս յուզուած սրտով կ'երգէ իր Տէր ողորմեան, վարդապետին սիրելի բժշկապետը՝ Վահրամ Թորգոմեան՝ աքսորակից, կը հարցնէ հետաքրքրութեամբ, թէ ո՞վ կայ մեր մէջ իրեն հետեւող.– Վենետիկի մէջ կայ հ. Ղեւոնդը,– կը պատասխանէ Կոմիտաս,- սոխակի մը ձայն ունի, կը սիրէ երաժշտութիւնը, նա կարող է մեծ երաժիշտ ըլլալ եւ Ս. Ղազարի հանդարտ մթնոլորտին մէջ մշակել հայկական երաժշտութիւնը[26]:

Կոմիտասն անհուն հիացմունք էր տածում հայոց ե՛ւ հոգեւոր, ե՛ւ գեղջուկ երաժշտութեան հանդէպ: Ահա թէ ինչ է գրել նա Վահրամ եպիսկոպոս Մանկունուն 1907ի Սեպտեմբերին.

Եթէ մենք պարծենալիք ունենք մեր եղանակներով, ունենք միայն շարականի հին, պարզ, հասարակ (ո՛չ տօնական, որ խիստ աղաւաղուած է) երգերով: Սոցա մէջ յստակ, միամիտ, ջերմեռանդ, հաւատացեալ ոգի կայ. ոգի, որի մէջ պայծառ փայլում է մեր նախնեաց աննման, զգայուն, կենդանի եւ վեհ սիրտը, որ ջինջ է առաւօտեան օդի պէս»[27]: Ապա անդրադառնում է հայ գեղջուկ երաժշտութեանը. «Մեր երաժշտութեան երկրորդ, բայց հիմնական ու մշտաբուխ աղբիւրն է հայ շինականի խորունկ, անպաճոյճ ու վսեմ, խնդացող եւ լացող երաժշտութիւնը, որի մէջ պայծառանում է հայ անմեղուկ գեղջուկն իր ամբողջ ներքին եւ արտաքին կեանքի բոլոր երեւոյթներով[28]:

ՅԱԿՈԲ ՍԻՐՈՒՆՈՒ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Յաջորդ աղբիւրը, որ նոյնպէս վկայում է Կոմիտասի եւ Չիթունու առաջին հանդիպման ու գործակցութեան մասին, 1965-66ին *Էջմիածին* ամսագրի համարներում Սիրունու հրատարակած ընդարձակ ու հանգամանալից յօդուածաշարն է.

Անգամ մը հանդիպեր էին անոնք իրարու, երբ 1909ի աշնան, Իզմիրլեանի օծման օրերուն, Չիթունին անցեր էր Էջմիածինէն. իր գլխաւոր նպատակն էր եղեր Կոմիտասը տեսնել հոն: Բանասէրին եւ երաժշտագէտին Էջմիածինի մեջ առաջին հանդիպումը բեղմնաւոր եղեր էր, թէեւ կարճատեւ, որովհետեւ Չիթունին հազիւ երկու օր տրամադրելի ունեցեր էր մնալու Էջմիածինի մէջ[29]:

Ուշադրութեան է արժանի յատկապէս այն, որ ընդամէնը երկու օրում, այն էլ սոսկ ընթրիքից յետոյ՝ մինչեւ կէսգիշեր, Կոմիտասը հասցրել է գրառել շուրջ 50 երգ, այն էլ այնպիսի բարդութեան երգեր, որոնք պարունա-

[26] «Ոսկեղէն արշալոյս (նամակ Բժ. Յ. Թորգոմեանի առ Հ. Ղ. Տ. Փարիզէն, 24 Ապ-րիլ 1936, (խմբ.՝ Հ. Ներսէս Տէր-Ներսէսեան)», *Բազմավէպ*, 11-12:1956, էջ 282. նաւ՝ Վարդումեան, «Ուշ միջնադարեան», 1-4, էջ 382:

[27] *Ժամանակակիցները Կոմիտասի մասին*, էջ 37:

[28] Նոյն:

[29] Սիրունի, «Կոմիտասին հետ», *Էջմիածին*, Թ.-Ժ:1966, էջ 72:

կում են ընդհանրապէս բանարուեստին եւ մասնաւորապէս Վասպուրականի բանահիւսութեանը յատուկ՝ *միկրոքրոմատիկ* ձայնամիջոցներ[30]:

Սակայն Կոմիտասն Արեւմտեան Հայաստանը ճանաչելու համար չի սահմանափակուել լոկ Չիթունու հետ գործակցութեամբ: Ինչպէս վկայում է Սիրունին՝

> Ան երգել կուտար հանդիպած գաւառացիին: Եւ բարեբախտաբար իր խումբին մէջ շատ էին գաւառացիները: Երգել կուտար նաեւ իր այցելուներին, եթէ ա-նոնք հայկական գաւառներէն ըլլային[31]:

ՊԱՏՄՈՒՄ Է ԳՐՈՂ ՍՕՍ-ՎԱՆԻՆ

Ահա թէ ինչ է պատմում այն ժամանակ դեռեւս սկսնակ վանեցի գրող Սօս-Վանին (Կարապետ Յովհաննիսեան)[32] Կոմիտասին կատարած իր յիշարժան այցի մասին.

> 1912ին, Կոմիտասը, Փանոս Թերլէմէզեանի հետ, կը բնակէր Բանկալթի: Նոր հրատարակուած Հայկական պարերգներ-էս օրինակ մը առած՝ կը մտնեմ Կոմիտաս վարդապետի սենեակը, վախվխելով իրեն կու տամ գիրքը, վրան կը նայի. ոմանք իրեն ծանօթ են, կ'երգէ ու իրեն-իրեն կը խնդայ ինծի, բայց յանկարծ կը կենայ Բոպիկ մի՛ քէլէ, լալուխան պարերգին վրայ.
>
> - Տօ՛, վանեցի՛, երգէ՛ այս պարերգը:
>
> Ա՛խ, երանի թէ երգած չըլլայի. հազար անգամ զղչացի երգելուս համար: Պիտի ձայնագրէր, եւ ձայնագրեց. բայց երաժշտական դարձուածք մը չէր հպատակեր ձայնագրին. փորձեց ու փորձեց. չեղաւ: Երաժշտութենէ չէի հասկնար. ինչ գիտնամ, որ կոկորդս երաժշտագէտին պիտի տար անգտանելի գանձ մը, սակայն ըմբոստ ու վայրի, զոր սանձել կ'ուզէր վարդապետը՝ իրեն օգնութեան կանչելով եւրոպական ու ասիական ձայնագրութիւնը[33]:
>
> – Ծօ՛ տղայ, այստեղ Շատախի լեռներուն վրայ արածող «այծ» մը կայ. նորէն երգէ, կամաց երգէ, որ կոտոշէն բռնեմ:
>
> «Այծ»ը իմ երգած պարերգին մէկ խազն էր: Ժամ մը վերջ բռնեց «այծ»ը, բայց ոչ թէ ձայնագրով, այլ հովուական սրինգով. «այծ»ը չմտաւ թուղթէն ներս, ընդվզեցաւ ձայնագրի բռնադատութեան դէմ. բայց կ'երեւի, թէ գթալով ինծի՝ կոկորդէս փոխադրուեցաւ Կոմիտասի սրինգին մէջ...

«Հիմա, որ Կոմիտասն ու իր սրինգը չկան, ի՞նչ եղաւ արդեօք Շատախու լեռներէն Պոլիս բերած իմ խեւ «այծ»ը...»[34] դառն ափսոսանքով մտո-

---

[30] Երաժշտագէտ Աթայեանը այսպէս է անուանել կիսաթոնից նուազ ձայնամիջոցները (Ռոբերտ Աթայեան, «Լադ. միկրոքրոմատիկ (կիսատոնից փոքր տարածութեամբ) ձայնամիջոցներ», *Հայ սովետական հանրագիտարան, հտր. 4*, էջ 467-68:

[31] Սիրունի, «Կոմիտասին հետ», *Էջմիածին*, Թ.-Ժ:1966, էջ 74:

[32] Յովակիմեան, էջ 406:

[33] *Ասիական ձայնագրութիւն* ասելով հեղինակը նկատի ունի ձայնագրութեան Լիմոնճեանի համակարգը:

[34] Սիրունի, «Կոմիտասին հետ», *Էջմիածին*, Ժ.-Թ:1966, էջ 74. նաեւ՝ Սօս-Վանի, «Կաղնիին համար, որ տապալեցաւ», *Նոր օր*, Աթէնք, 15 Դեկտեմբեր 1935:

րում է Սօս-Վանին իր՝ «Կաղնիին համար, որ տապալեցաւ» յուզական ակնարկում:

Այս պերճախօս յուշագրութիւնները վկայում են Կոմիտասի ծայրայեղ բծախնդրութեան ու նուիրուածութեան մասին՝ իր ամենասիրելի զբաղմունքին, որ երաժշտական բանահիւսութեան անգին նմուշների հնարաւորինս ճշգրիտ ձայնագրումն էր:

Չնայած այս ամէնին՝ Կոմիտասն ստիպուած էր հայ երաժշտական բանահիւսութիւնը եւրոպական երկրներում ներկայացնելիս անտեսել իր համար այնքա՞ն կարեւոր վերոնշեալ նրբերանգները, այսինքն՝ նոթագրել դրանք եւրոպական ձայնանիշերով՝ առանց հաշուի առնելու *միկրոքրոմատիկ* հնչիւնները: Տայեանն այս մասին գրել է.

> Կոմիտաս վարդապետի այդ բոլոր արտայայտութիւնները կը համարինք որ իբր ամբողջ՝ արդիւնք են կիսաձայնէ նուազ ձայնի մասին պատահմամբ զգացած անհրաժեշտ հարկին: Եւ սակայն բնազդաբար ստիպուած է ներկայացնել իր ժողոված հայկական գեղջուկ երգերու հարուստ հաւաքածոն եւրոպական աշխարհի՝ հետեւելով մի միայն եւրոպական ձայնագրութեան կանոններուն եւ օրէնքներուն: Այսպէս ստիպուեր է երաժշտասէրներուն թողուլ իր բոլոր գեղարուեստական եւ հոգեբանութեամբ ձայնագրած երգերուն տոհմիկ զգացումին ու ներքին իմաստներու գուշակութիւնը[35]:

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ ԳՐԱՌՈՒՄԸ ՉԻԹՈՒՆՈՒ ՀԵՏ

Կոմիտասի եւ Չիթունու վերջին հանդիպումը, ըստ ամէնայնի կայացել է լոկ առաջին համաշխարհային պատերազմի սկսուելուց յետոյ: Սակայն մինչ այդ, հենց որ Չիթունին ընտանեօք հաստատուեց Պոլսում, նրանք գրեթէ մի տարի յաճախ հանդիպում էին որպէս մտերիմ ընկերներ ու լաւ հարեւաններ: Ահա թէ ինչ է գրում Չիթունին այդ մասին.

> Կոմիտասէն բաժնուելէս յետոյ՝ 1909ի աշնան, զինքը չտեսայ մինչեւ 1913ի աշունը: Պոլիս փոխադրուած էի ընտանիքով՝ կանոնաւոր տպարաններու մօտիկութենէն օգտուելու համար: Կոմիտաս կ'ապրէր Փերա-Փանկալթի, Հայոց գերեզմանատան դէմ, նկարիչ Փանոս Թերլէմէզեանի հետ: Ես գրեթէ դրացի էի Կոմիտասին: Յաճախ իրեն կ'երթայի: Երբեմն ինքը մեզի կուգար: Այս կերպով հազուադէպ էր որ իրար չտեսնէինք օր մը: Այս յաճախակի տեսակցութիւնները, գաղափարակցութիւնը, անկեղծ եւ իրերաթափանց մտերմութիւնը, բացին իմ հոգիիս առաջ՝ Կոմիտասին հոգին – մաքուր, պատուական, թրթռուն, բարձրօրէն զարգացած, անհունօրէն համեստ, անձնուէր, գորովոտ – աննմա՜ն մարդ մը: Մեծ էր՝ մեծի հետ, փոքր էր՝ փոքրերուն հետ: Ո՛չ աշխարհական էր, ո՛չ վերապահ ձեւերու մէջ կծկուած կուսակրօն մը: Եղբայր էր ամէնուն, ընկեր՝ ամէնքի հետ: Իր բնակարանը բաց էր ամէնուն առաջ, ինչպէս իր սիրտը՝ որ փակ դուռ չունէր ոչ ոքի հանդէպ[36]:

---

[35] Տայեան, Ձայնագրեալ Շարական, հտր. Ա. (ձեռագիր), էջ 144-145:

[36] Չիթունի, էջ 84-85:

Չիթունու յիշողութիւնների այս հատուածն այնքա՜ն ճշմարիտ ու գորովալից է բնութագրում Կոմիտասի մարդկային առինքնող յատկութիւնները: Սակայն, չնայած վերը նկարագրուած առօրեայ մտերմութեանը, Կոմիտասի եւ Չիթունու ստեղծագործական երկրորդ գործակցութիւնը դեռեւս չէր կայացել, քանի որ երկուսն էլ ծայրաստիճան բազմազբաղ էին: Այն իվերջոյ տեղի ունեցաւ 1914ի աշնանը՝ համաշխարհային պատերազմն սկսուելուց յետոյ միայն: Ահա Սիրունու գրառումներն այս մասին.

> Չիթունի յետոյ Վան դարձաւ նորէն, եւ հաւաքեց ու ամբարեց անընդհատ, իսկ 1913ի աշնան, երբ կուգար Պոլիս հաստատուիլ, Կոմիտասի հետ նոր աշխատակցութեան մը առիթը կը ստեղծուէր ինքնին, բայց այդ առիթը ուշացաւ, աւա՜ղ[37]: Չիթունի ինքը կը պատմէ, թէ կեանքի այլազան հոգեր հնարաւոր չըրին անմիջական աշխատակցութիւն մը Կոմիտասին հետ, եւ թէ 1914ի Նոյեմբերին էր միայն, որ իրենք՝ Կոմիտաս եւ ինք, վերսկսան 1909ին Էջմիածինի մէջ կէս ձգուած աշխատանքը: Ամբողջ ամիս մը, երբ թնդանօթը կը գոռար դուրսը, անոնք աշխատած են միասին՝ ընթրիքէն մինչեւ կէսգիշեր, ինք երգելով եւ Կոմիտաս ձայնագրելով՝ դաշնակին առջեւ նստած: Այս կերպով ձայնագրած են Վասպուրականի ժողովրդական երգերէն նոր յիսնեակ մը, որոնց մէկ մասը մանկական երգեր[38]:

Այս մանկական երգերի մասին ուշագրաւ տեղեկութիւններ է տալիս նաեւ Չիթունին. «*Գրասեղանին ու դաշնակին առջեւ, ցանկիս վրայէն կ'երգէի, Կոմիտաս կը ձայնագրէր իմ գրի առած Վասպուրականի ժողովրդական երգերէն ու խաղասացքներէն նոր յիսնեակ մը, Մանկապարտէզի երգերն ալ միասին առած*»[39],- յայտնում է հեղինակը՝ տողատակում կցելով մանկական երգերի մի երկար ցուցակ՝ կազմուած 69 երգից: Դրանց ձայնագրման ընթացքում էլ Կոմիտասն ու Չիթունին յղանում են կազմել մանկապարտէզի սաների համար յատուկ երգաշար՝ քաղուած ու մշակուած ժողովրդական երգերից: «*Կոմիտասի հետ լծուեցանք այդ տքնութեան: Եւ նոյն տարուան, 1914ի Դեկտեմբեր ամսուն գիշերաջան նուիրումներով մէջտեղ դրինք* քառասունի չափ մանկական *երգեր: Անոնց ամբողջին նիւթերը ես հանած էի իմ եւ մասամբ ուրիշներու գրի առած ժողովրդական մանկական երգա-խաղերէն: Ապա՝ թէ՛ խօսքերը եւ թէ՛ եղանակները Կոմիտասի հետ յղկեցինք ու մշակեցինք՝ հարկ եղած տեղը նիւթն ընդլայնելով կամ կրճատելով*»[40]: Այս մէջբերումն ապացուցում է, որ մանուկները եւս եղել են Կոմիտասի անհուն սիրոյ եւ հոգածութեան առարկան:

Չիթունին բազմազաւակ հայր էր, ունէր վեց երեխայ, որոնց հետ Կոմիտասն անչափ կապուած էր: Ահաւոր աքսորից մազապուրծ վերադառնալուց յետոյ, Կոմիտասն ամէն ինչ անում է, որպէսզի զինակոչից ազատի իր

---

[37] Սիրունի, «Կոմիտասին հետ», *Էջմիածին*, Ժ.-ԺԲ:1966, էջ 73:

[38] Նոյն:

[39] Չիթունի, էջ 87:

[40] Նոյն, էջ 87:

մտերիմներին, քանզի արդէն տեղեակ էր, որ զինակոչի անուան տակ հայ ընտանիքների տղամարդկանց տանում էին ստոյգ մահուան՝ նրանց անպաշպան ընտանիքներն էլ հեշտութեամբ տեղահանելու եւ վերացնելու նպատակով: 1916ին իր կապերի միջոցով Կոմիտասը փոխել է տալիս ընկերոջ անձնագրային տուեալները. 36 տարեկան վանեցի Չիթունին դառնում է 50 տարեկան Կարապետ Փանոսեան՝ կարնեցի: Նրան հայթայթում է նաեւ գերմանացի զինուորի տարազ ու անցագիր, որ իբրեւ թէ արձակուրդով իր ծննդավայր պիտի մեկնէր, եւ զինուորական գնացքով Պուլկարիա է ուղարկում նրան՝ հանդերձ ընտանեօք, փրկելով ամբողջ ընտանիքին վերահաս վտանգից:

Կրկին անդրադառնանք Սիրունու վերոնշեալ յօդուածին. «*Չիթունի իր յօդուածին կը կցէ ցանկ մը ժողովրդական երգերու, զորս ինք երգած է Կոմիտասին, եւ ան գրի առած է: Այդ երգերը, որոնց ցանկը կու տանք ստորեւ, 48 են թիւով: Անոնք մեծ մասամբ 1909ին Էջմիածնի մէջ ձայնագրուածներն են*»[41]: Ըստ Չիթունու՝ սրանցից Կոմիտասի ուշադրութիւնը գրաւել են յատկապէս «Սասմանց Տունի *Ափսոս*-ներն ու *Յիշամ*-ները, *Պուրկով փըլաւ եմ եփէ*, *Լուն ու ճանճ*, *Օ՜օо Տալակօ*, *Սանդ կը ծեծեմ*, *Մոկաց Միրզէն*, *Դե՛հէ զընկ-զընկ*, *Է՛գ բարեւ* ու միւս հարսներգերը»[42]: Ըստ Կոմիտասի՝

> Մեր ժողովրդական անգիր երգերու գանձարանին մէջ՝ մի-մի գոհարներ են Փիրուզէն եւ Իլիլի-Տիլիլին»[43]: «Անոնք մեծ մասամբ 1909ին Էջմիածնի մէջ ձայնագրուածներն են. Չիթունի կ'ըսէ, սակայն, թէ «կրնայ ըլլալ, որ յիշեալ երգերէն մէկ քանին Էջմիածնի մէջ երգուած ու ձայնագրուած երգերու խումբին չեն պատկանիր, այլ 1914ին Պոլիս երգածներուս ցանկէն ըլլան[44]:

Իսկ յետագայում՝ պատերազմի ժամանակ իր անձնական արխիւը կորցնելուց յետոյ, Չիթունին յիշողութեամբ յաւելել է եւս մի ցուցակ՝ բաղկացած 29 երգից, որոնք նոյնպէս ձայնագրել էր Կոմիտասը 1914ին նրա երգածից[45], ինչպէս նաեւ մօտ 40 մանկական երգ[46]: (Սրանք միասին կազմում են վերոնշեալ 69 երգերը): Այսպիսով, մանկական երգերի հետ միասին Կոմիտասի՝ միայն Չիթունուց ձայնագրած Վան-Վասպուրականի երգերի թիւը հասնում էր շուրջ 120ի: Դրանցից միքանիսը՝ «Մոկաց Միրզէն», «Իլիլի-տիլիլի»ն, «Դե՛հէ զընկ-զընկ, դեհէ՛ ջան», Կոմիտասը յետա-

---

[41] Սիրունի, «Կոմիտասին հետ», *Էջմիածին*, Թ.-Ժ:1966, էջ 73: Սիրունու յօդուածում երգերի վերնագրերը տրուած են արեւելահայ ուղղագրութեամբ, իսկ կէտադրութեան նշանները որոշ փոփոխութիւններ են կրել. մենք վերնագրերը բերել ենք Կոմիտասի երկերի ժողովածուի ուղղագրութեամբ:

[42] Չիթունի, էջ 83:

[43] Նոյն:

[44] Սիրունի, «Կոմիտասին հետ», *Էջմիածին*, Թ.-Ժ:1966, էջ 73:

[45] Նոյն, էջ 73-74. նաեւ՝ Չիթունի, էջ 87:

[46] Նոյն, էջ 78. նաեւ՝ Չիթունի, էջ 88:

գայում մշակել եւ կատարել է իր համերգերում՝ ընդգրկելով դրանք հայ ժողովրդական երգի գանձարանի սքանչելի նմուշների շարքում:

ՎԱՆԱՅ ԵՐԳԵՐԸ ԿՈՄԻՏԱՍԻ *ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ* ՀԱՏՈՐՆԵՐՈՒՄ

ՀՀ ԳԱԱ հրատարակած Կոմիտասի *Երկերի ժողովածուի* 10րդ հատորում ներառուած են վերոնշեալ երեք երգերից առաջին երկուսը, ըստ որում՝ *Մոկաց Միրզա* երգն առկայ է *Օրն էր Ուրբաթ* վերնագրով (քանի որ սկսւում է այդ բառերով, իսկ *Մոկաց Միրզէն* բառերով աւարտւում է)՝ երկու տարբերակով[47], որոնցից առաջինը ներկայացնում է երգի կոմիտասեան հիմնական գրառումը[48]: Կոմիտասի երգացանկում միքանի երգեր կային, որոնք նա մշտապէս պարտադիր կերպով կատարում: Դրանցից մէկը Վասպուրականի բանարուեստի ամէնից ցայտուն նմուշն էր՝ Չիթունու երգածից ձայնագրած «Մոկաց Միրզա» դիւցազներգը կամ պարզապէս վիպերգը (ինչպէս ճշգրիտ կերպով անուանել է ինքը՝ Կոմիտասը)[49], որ նա կատարել է տարբեր վայրերում տուած իր համերգերում, երբեմն նախապէս բացատրելով նաեւ դրա բովանդակութիւնը:

Ահա թէ ինչ է գրել այդ մասին Սիրունին.

> 1913ի Մայիսի 28ին Ատաբազարում՝ – Երգելով Մոկաց Միրզէն, Կոմիտաս ըսաւ. Մոկաց Միրզէն վիպերգ է: Մոկաց իշխանը կը հրաւիրուի հացկերոյթի. կերակուրէն յետոյ ձմերուկ կը բերեն, կէսը կուտան Մոկաց Միրզէին, կէսը կ'ուտէ հիւրասիրողը: Վերադարձին, թունաւորուած հայ իշխանը կը մեռնի, զի ձմերուկի իրեն ինկած բաժինը դեղած էր: Երգին մէջ կը պատմուի մանրամասն դէպքին եղելութիւնը եւ Մոկաց իշխանի ազնուութիւնը: Երգին առաջին մասը կը բովանդակէ պատմական մասն իբրեւ ասերգ, իսկ երկրորդը՝ քնարական բաժինը, բուն երգն է, որ երկար ու ձիգ՝ բարձր ձայնէն վար կ'իջնէ ու կ'անյայտանայ, նման սրտի խորէն ելած ափսոսանքի մը»[50]: Կամ՝ «Հանճարեղ դասախօսը ունկնդիր ժողովուրդին բուռն փափագին վրայ Մոկաց Միրզէն երգելէ յետոյ փակեց դասախօսութիւնը, իբր երկուքուկէս ժամ խօսելէ եւ երգելէ ետք, ու այս անգամ ալ նախորդին պէս դիւթեց, հիացուց եւ վերացուց մեզ՝ ժուռ բերելով երաժշտական սրբազան մթնոլորտին մէջ, ուր լիաթոք շնչեցինք Բարին, Ճշմարիտն ու Գեղեցիկը[51]:

---

[47] Կոմիտաս, *Երկերի ժողովածու, 10րդ հատոր, երաժշտա-ազգագրական ժառանգութիւն. հայ ժողովրդական երգեր, գիրք Բ.*, կազմ., խմբ. եւ ծանօթ.՝ Ռոբերտ Ատայեան, ՀՀ ԳԱԱ արուեստի ինստիտուտ, «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2000, էջ 92-93:

[48] «Ծանօթագրութիւններ եւ վերլուծական դիտողութիւններ», Կոմիտաս, *Երկերի ժողովածու, 10րդ հատոր*, էջ 181:

[49] Նոյն:

[50] Սիրունի, «Կոմիտասին հետ», *Էջմիածին*, Զ:1966, էջ 29:

[51] Նոյն, էջ 31:

Վերը նշուած երեք երգերից երկրորդի վերնագիրն է *Հինգ էծ ունեմ* (ըստ սկզբնաբառերի, իսկ *Իլիլի-փիլիլին* երգի կրկնակն է)[52]: Հատորի վերջում նշուած է, որ սա փոքր զանազանութեամբ կայ նաեւ Կոմիտասի՝ Չիթունուց գրառած նիւթերում. հնարաւոր է, որ այստեղ ներկայացուածը վերջինից գրառածի թեթեւ խմբագրումն է[53]:

Տասներորդ հատորում առկայ է նաեւ *Էսօր երազ մ'եմ տիսեր* երգը (վերնագրից ցած նշուած է, որ այն գրառուած է վանեցի Տիգրան Չիթունուց)[54]: Ուշագրաւ է այս երգի պատմութիւնը. Չիթունու յուշերում մի ամբողջ ենթավերնագիր է նուիրուած սրան՝ «Մըսրամելիքի երազը», որից մի հատուած արժէ մէջբերել. *«...հայկականէն եւրոպական խազերու վերածուած ու մաքուրի քաշուած [Կոմիտաս] ինծի ղրկեց միայն մէկ երգի ձայնագրութիւնը,* – Մըսրամելիքի Երազը՝ *Սասմանց Տունէն: Նոյն տարին (1909-1910) մաքուրի առեր եւ ընդարձակ ուսումնասիրութեամբ պատրաստեր էի* Սասմանց Տուն *հայ ժողովրդական ծանօթ դիւցազնավէպին եօթը ճիւղին պատմութիւնը...: Վէպին երգուած կտորներուն ձայնանիշերը ուզեցի: Իր բազմազբաղ ժամերէն գողնալով՝ փութացուց ինծի միայն* Մըսրամելիքի Երազը*, իր իսկ ձեռագրովը գրուած. Ու մակագրուած այս խորագրով.* – Խուդոյէ լսելով երգեց Տիգրան Չիթունի, գրի առաւ Կոմիտաս վարդապետ, – Մեներգ, Դիւցազներգ» (*Խուդօն* այն ասացողի անունն է, ումից լսել էր Չիթունին այս երգը – Ա.Վ.): *Այս նոթատետրին հետ ղրկեր էր ինծի նաեւ իր վեղարաւոր մէկ լուսանկարը ինքնագիր ձօնովը:* Երազին *ձայնագրուած թերթը, ճնշատիպ օրինակը հանելէ յետոյ, զետեղեցի* Սասմանց տուն*-ի ձեռագրիս մէջ, յաջորդ տարի ղրկեցի Պոլիս...»*[55]: Նշելի է, որ նոյն հատորի՝ *«Կատակի, կենցաղային հումորի եւ երգիծանքի երգեր»* վերտառութեամբ երգերի շարքում առկայ է նաեւ *Եկին, եկին Մոկաց խարսներ*[56] երգը, որի ծանօթագրութիւնը վկայում է, որ Կոմիտասն այն նոյնպէս գրի է առել Չիթունու երգածից[57], սակայն երգի վերնագրի մօտ դա նշուած չէ, իսկ 11րդ, 12րդ եւ 13րդ հատորներում կան նաեւ մի շարք այլ երգեր, որոնց վերնագրին կից նշուած է *Վան* տեղանունը: Հատոր 11ում այդ երգերն են.-*Նարէ՛: Սարի ուսին բլեր ա*[58], *Հոյ նարըմ, Թագվոր,*

---

[52] Կոմիտաս, *Երկերի ժողովածու, 10րդ հտր.*, էջ 131:

[53] «Ծանօթագրութիւններ եւ վերլուծական դիտողութիւններ», Կոմիտաս, *Երկերի ժողովածու, 10րդ հատոր*, էջ 197:

[54] Նոյն, էջ 91:

[55] Չիթունի, էջ 83-84:

[56] Կոմիտաս, *Երկերի ժողովածու, 10րդ հտր.*, էջ 134:

[57] Նոյն, էջ 198:

[58] Կոմիտաս, *Երկերի ժողովածու, 11րդ հատոր, Երաժշտա-ազգագրական ժառանգութիւն. հայ ժողովրդական երգեր, գիրք Գ., ազգագրական ժողովածու, մաս առաջին,* կազմ., խմբ. եւ ծանօթ.՝ Ռոբերտ Աթայեան, ՀՀ ԳԱԱ հրատ., Երեւան, 2000, էջ 78:

դու բարով եկար, Լէ, լէ, եաման[59], *Սոնալար*, *Թուրս բերէք*, *Բոբիկ մի՛ քէլէ* ու *Մէկ կոլոտիկ*[60], իսկ հատոր 12ում՝ *Ելէք տեսէք որն ի կերէ*[61], *Ուսկիցը կու գասը յուշիկը*[62] (սա աշխուժ երգ է, որի վերջում նշուած է՝ *Վանայ կողմերէն*. ծանուցւում է, որ անշուշտ, գրառուած է վանեցի մի գաղթականից): Յաջորդ՝ *Ես քեզի սիրեցի* երգը նոյնպէս գրառուած է Վանայ գաղթականից՝ Վաղարշապատում[63]: Հատոր 13ում բոլոր երգերը նախ բերուած են Կոմիտասի ձեռագրով՝ գրառուած Նոր հայկական ձայնանիշերով, ապա նաեւ եւրոպական նոթաներով. *Էս օր աշուն ի, Մայրամ*[64] (ծանօթագրութիւնը փաստում է, որ սա հնագոյն երգիծական երգ է՝ Կոմիտասի ամենահին գրառումներից մէկը): Յաջորդ երգերն են՝ *Տուն եմ շինէ*[65], *Տօ, գէշ կնիկ*[66], եւ *Ծալ էրա, հա՛յ* հարսանեկան երգը[67]: Չիթունուց ձայնագրած երգերը հիմնականում զետեղուած են Կոմիտասի երկերի վերջին՝ 14րդ հատորում[68]: Սրանք թուով 65ն են, ըստ որում՝ առաջին 40ը 1909ին գրառուած երգերն են, իսկ միւս 25ը 1914ին ձայնագրածները:

ԿՈՄԻՏԱՍԻ ՀԱՄԵՐԳԵՐԸ՝ ՅՕԳՆՈՒԹԻՒՆ ՎԱՆԱՅ ՍՈՎԵԱԼՆԵՐԻ

1907ին հայ ուսանողութիւնը Կոմիտասին հրաւիրում է Ժնեւ, որպէսզի տեղական ուժերից երգեցիկ խումբ կազմի եւ համերգ տայ Վանայ սովեալների օգտին: Յունիսի 1ին Ժնեւի երաժշտանոցի մեծ դահլիճում տեղի

---

[59] Նոյն, էջ 100:

[60] Նոյն, էջ 102 եւ 103:

[61] Կոմիտաս, *Երկերի ժողովածու, 12րդ հատոր, Երաժշտա-ազգագրական ժառանգութիւն. հայ ժողովրդական երգեր, գիրք Դ., ազգագրական ժողովածու, մաս երկրորդ*, կազմ., խմբ. եւ ծանօթ.՝ Ռոբերտ Աթայեան, խմբ.՝ Ռոբերտ Աթայեան, Գէորգ Գէօդակեան, ՀՀ ԳԱԱ հրատ., Երեւան, 2003, էջ 46-47:

[62] Նոյն, էջ 141-42, ծան. էջ 188:

[63] Նոյն, էջ 145, ծան.՝ էջ 188-89:

[64] Կոմիտաս, *Երկերի ժողովածու, 13րդ հատոր, երաժշտա-ազգագրական ժառանգութիւն. հայ ժողովրդական երգեր, գիրք Ե., ժողովրդական երգերի ժողովածու («ձայնակարգային»). ֆաքսիմիլային հրատարակութիւն*, կազմ. եւ ծանօթ.՝ Ռոբերտ Աթայեան, խմբ.՝ Ռոբերտ Աթայեան, Գէորգ Գէօդակեան, ՀՀ ԳԱԱ հրատ., Երեւան, 2004, էջ 89 (ծանօթ., էջ 206):

[65] Անդ, էջ 101:

[66] Անդ, էջ 138:

[67] Անդ, էջ 140-41: Փաստօրէն, վերը բերուած երգերից ոչ-բոլորն են Չիթունուց գրառուած, սակայն քանի որ վերջիններս նոյնպէս Վանայ երգեր են, հարկ համարեցինք թուարկել դրանք:

[68] Կոմիտաս, *Երկերի ժողովածու, 14րդ հատոր, երաժշտա-ազգագրական ժառանգութիւն, գիրք Զ., հայ ժողովրդական եւ աշուղական երգեր, նուագներ, թուրքական երգեր, քրդական երգեր եւ նուագներ*, կազմ. եւ ծանօթ.՝ Ռոբերտ Աթայեան, խմբ.՝ Ռոբերտ Աթայեան, Գէորգ Գէօդակեան, ՀՀ ԳԱԱ հրատ., Երեւան, 2006, էջ 41-61:

է ունենում այդ համերգը՝ 57 հոգուց բաղկացած երգչախմբով, որին մասնակցում է նաեւ Արմենակ Շահմուրատեանը, իսկ հայ երաժշտութեան ու բանաստեղծութեան մասին բանախօսում է Արշակ Չօպանեանը: Համերգից գոյացած 2000 ֆրանկ գումարն անմիջապէս ուղարկւում է Վան: Չնայած որ Կոմիտասը մի նուիրական նպատակ ունէր՝ Պոլսում երաժշտանոց բացել, որի համար բաւական մեծ գումար էր անհրաժեշտ, սակայն երբ խօսքը վերաբերում էր ժողովրդին օգնելուն՝ դա միշտ առաջնահերթ էր դառնում նրա համար:

ԷՋՄԻԱԾԻՆ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ԱՆՅԱՋՈՂ ՓՈՐՁԸ

1913ի ամռանը, ըստ երաժշտագէտ Ալեքսանդր Շահվերդեանի[69], Կոմիտասը նորից ձգտեց Էջմիածին, որտեղ կարող էր տետրակն ու մատիտը ձեռքին շրջել գիւղերում ու գրի առնել բանահիւսութեան նորանոր նմուշներ: Օգոստոսի 11ին՝ տեղ հասնելուն պէս, Կոմիտասը ներկայանում է Բիւրականում հանգստացող Գէորգ Ե. կաթողիկոսին, որը ողջունում է նրան հետեւեալ կերպ. «*Հա, բարով, Կոմիտաս հայր սուրբ, ասում են՝ Պոլսում մեծ պապիւ ունես, գործդ շատ աջող է գնում, շատ ոսկի են տալիս, ե՞րբ ես գնում, իհարկէ քեզ համար այդ լաւ է…*»[70]: Կոմիտասը մինչեւ սրտի խորքը խոցւում է հայոց հայրապետի այս անսպասելի եւ անհոգի վերաբերմունքից. «*Վիրաւորանքից ու զզուանքից քիչ մնաց խելքս թռցնէի: Ջղայնացած, կարճ ու կտրուկ պատասխանեցի. – Այսօր եկայ, վաղը կը գնամ*»[71]: Եւ այդպէս էլ վարւում է. հենց յաջորդ օրը կրկին Պոլիս է մեկնում՝ առանց հրաժեշտ տալու որեւէ մէկին: Այս նոյն ցաւալի իրադարձութեան մասին գրել է նաեւ Մանուկ Աբեղեանը. «*1913 թուի ամռանը ես Ծաղկաձորումն էի: Լսեցի որ Կոմիտասը Պոլսից վերադարձել է Էջմիածին, ամէնայն հաւանականութեամբ այն մտքով, որ մնայ այնտեղ, բայց երբ ներկայացել էր կաթողիկոսին, վերջինս նրան հարցրել է, թէ նա երբ պիտի վերադառնայ Պոլիս: Լսեցի եւ շատ ցաւեցի, որ նա իսկոյն եւթ է գնացել, առանց իր ընկերների հետ տեսնուելու*»[72]: Արդ՝ հարց է ծագում. մի՞թէ հայոց հայրապետին վայել էր նման վերաբերմունքը… Էջմիածնում Կոմիտաս Վարդապետի համար աշխատանքի պայմաններ ստեղծելու փոխարէն կաթողիկոսի ծայրայեղ աննրբանկատութիւնը պատճառ դարձաւ նրա շուտափոյթ վերադարձին Պոլիս:

---

[69] Ա. Շահվերդեան, *Հայ երաժշտութեան պատմութեան ակնարկներ*, Հայպետհրատ, Երեւան, 1959, էջ 365:

[70] Անդ:

[71] Անդ:

[72] Մանուկ Աբեղեան, «Յիշողութիւններ Կոմիտասի մասին», *Ժամանակակիցները Կոմիտասի մասին*, էջ 73. նաեւ՝ *Կոմիտասը ժամանակակիցների*, էջ 20:

Իսկ Պոլսում Կոմիտասի անունն արդէն թնդում էր իր ողջ փայլով: Սիրունին վկայում է.

> Ան կուգար անգամ մը եւս թուրքերուն զգացնելու, թէ ուր են մնացած իրենք: Ահագին կայսրութիւն մը ստեղծեր էին անոնք եւ դեռ չէին կրցած տէր դառնալ ինքնուրոյն մշակոյթի մը եւ կը շարունակէին գերին մնալ արաբական եւ պարսկական մտքին եւ արուեստներուն եւ ողորմութիւն մուրալ իրենց ռայաներէն[73], սեփական թատրոն ու երաժշտութիւն ստեղծելու, իրենց շէնքերը կառուցանելու, նկար յօրինելու համար: Մինչ սա հէգ հայը, զոր հալածեր ու ջարդեր էին դարերէ իվեր, կը ծառանար ահա իրենց դէմ իր հոգեկան գանձով, ու հիմա Կոմիտաս մը ստեղծեր էր աշխարհը անգամ մը եւս շփոթեցնելու համար»[74]:
>
> Իսկ ահա թէ ինչ է գրել Չօպանեանը, որը մտերիմն էր Կոմիտասի, իր խմբագրած Անահիտ հանդէսում. «1914ին, երբ [Կոմիտաս] Փարիզ եկաւ ամսուան մը համար, խօսակցութեան մը մէջ անգամ մը հետեւեալն ըսաւ ինծի. «Պոլիս թուրք մտաւորականներ եղան, որ իմ կատարած գործովս շատ հետաքրքրուեցան եւ փափաք յայտնեցին որ նոյն աշխատանքը կատարեմ նաեւ թուրք ժողովրդական երգերուն համար. եւ իրօք կան անոնց մէջ որ գեղեցիկ են, եւ եթէ ինչ-ինչ մասեր հանեմ, որոշ կոկումներ ընեմ, շատ սիրուն բան դուրս կու գայ: Բայց չպիտի ընեմ...»: Իր չպիտի ընեմ-ն ալ յատկանշական է, եւ այդ խօսքը կ'արժէր որ արձանագրուէր ու մնար իբր յիշատակ մը մեր մեծ հայրենակցին կեանքէն: Կոմիտաս ջերմ ազգասէր էր՝ առանց ազգամոլ ըլլալու, հետաքրքրուած էր Արեւելքի եւ Կովկասի շատ մը ցեղերու երաժշտութեամբ. եթէ ջարդերը բարոյական ահաւոր խրամատ մը բացած չըլլային Հայուն ու թուրքին միջեւ, ան թուրք եղանակներուն վրայ ալ որոշ չափով աշխատիլ պիտի չմերժէր, բայց այդ բարի Հայը, այդ ազնիւ մարդը իր ցեղը կոտորողներուն երգին յղկիչն ու փրոփականտիստը չէր կրնար դառնալ[75]:

Կոմիտասը իսկական գիտնական էր՝ բառիս բուն իմաստով. նա անաչառութեամբ ձայնագրել եւ ուսումնասիրել է ո՛չ միայն հայկական, այլեւ հարեւան ժողովուրդների երաժշտական բանահիւսութեան արժէքաւոր նմուշները: Պահպանուել են քրտական 13 եղանակների կոմիտասեան արժէքաւոր ձայնագրութիւնները, որոնք լոյս են տեսել *Էմինեան ազգագրական ժողովածու*ի 1904ի Յաւելուածում[76], իսկ յետագայում վերահրատարակուել են նաեւ Վենետիկի Ս. Ղազար կղզում՝ «Կամար» մատենա-

---

[73] Օսմանեան պետութիւնում *ռայա* էին թուրքերի ոչ-մուսուլման հպատակները. այն նշանակում էր իրենց գերիշխանութեան տակ գտնուող ժողովուրդ:

[74] Սիրունի, «Կոմիտասին հետ», *Էջմիածին*, Ը:1966, էջ 21:

[75] Ա. Չօպանեան, «Կոմիտաս վարդապետ եւ հայ երաժշտութիւնը», *Անահիտ*, Մայիս-Օգոստոս 1931, էջ 111:

[76] *Էմինեան ազգագրական ժողովածու, հտր. Ե.*, Մոսկուա-Վաղարշապատ, 1904, Յաւելուած:

շարով[77]: Մինչ օրս Կոմիտասի կատարած այս ձայնագրութիւնները համարւում են քրտական բանարուեստի չգերազանցուած նմուշներ:

ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆԻ ԽՈՐԱԹԱՓԱՆՑ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ

Չօպանեանը երաժշտագէտ չէր, սակայն լայնախոհ մտաւորական լինելով՝ այս նոյն յօդուածում շատ խորամիտ է բնութագրել Կոմիտասի մօտեցումը հայ ժողովրդական եղանակներին.

> Կոմիտաս ոչ միայն գիտէր ընտրել հայ եղանակներու ամենէն հարազատները, բնորոշներն ու սիրուններ, այլ եւ, կարծեմ, մերթ կը կոկէր զանոնք՝ ձայնագրելու ատեն. երգի մը ամէն մէկ փոփոխակը արդէն, քանի մը սերունդի հազար բերաններէն անցնելէ յետոյ, իր սկզբնական մաքուր ձեւին մէջ չէ որ մեզի կը հասնի. ատկից զատ, երգիչ կայ որ ճիշտ ու ամբողջ կ'երգէ, կայ որ պակասաւոր կամ խաթարուած. Կոմիտաս (ենթադրութիւն մըն է որ կ'ընեմ, ան այդ մասին իր գաղտնիքը ոչ մէկուն չէր յայտներ) ոչինչ կ'աւելցնէր ապահովապէս, ոչինչ կը փոփոխէր, բայց հաւանօրէն կը վերցնէր՝ ինչ որ աւելորդ յաւելում, բիծ, եղծում կը նկատէր: ... Կոմիտասի ընտրած ու հաւաքած եղանակները ոչ միայն թրքական եւ այլ արեւելեան երաժշտութիւններէն էապէս տարբեր պէտք է ըլլան ընդհանրապէս, այլ եւ նոյն իսկ եթէ այդ եղանակներուն մէջ կան քանի մը հատ ուր օտար ազդեցութիւն կը նշմարուի, ատիկա մասնական է եւ հայ տարրերու հետ խառնուած, անոնցմէ տիրապետուած, – ինչպէս է նաեւ՝ մերթ՝ Քուչակեան հայրէններու ա՛յնքան խորապէս հայկական բանաստեղծութիւնը[78]:

Չօպանեանը սրտի ցաւով է յաւելում, որ նոյնիսկ 1914ի գարնանը Կոմիտասի՝ Փարիզում ունեցած ֆրանսերէն փայլուն բանախօսութիւնից ու հայոց եկեղեցում Աւագ Հինգշաբթի երեկոյեան կազմած հայ եկեղեցական երաժշտութեան հոյակապ համերգից յետոյ տեղի հայոց եկեղեցու հոգաբարձութիւնը միջոցներ չտրամադրեց՝ նրան այդ եկեղեցում դպրապետ կարգելու համար, պատճառաբանելով որ իրենք պարտաւոր են եկեղեցու տարեկան հասոյթը դրամատուն դնել՝ դրա ապագան ապահովելու...

> Տեսութիւն որ ամէն կերպով սխալ էր,- իրաւացիօրէն նշում է Չօպանեանը եւ շարունակում.- իրենք իսկ կը նկատէին թէ ինչպէս ամէն Կիրակի եկեղեցին լեփ-լեցուն կ'ըլլար Կոմիտասի դիւթիչ երգեցողութիւնը լսելու եկող խուռն բազմութեամբ. իրենց ընելիք «զոհողութիւնը» դիւրաւ կրնար փոխարինուիլ, նոյն իսկ նիւթապէս: Տեսած էին նաեւ թէ մեր ազգային վարկին համար ի՛նչ արժէք ունէր Կոմիտասի ներկայութիւնը Փարիզի մէջ, թէ՝ «Փարիզի Հայկական Միութեան» նախաձեռնութեամբ եւ օգնութեամբ Կոմիտասի տուած համերգը ի՛նչքան խոր սքանչացում պատճառեց Փարիզի ֆրանսական երաժշտասէր

---

[77] *Քրտական եղանակներ. ձայնագրեց Կոմիտաս Վարդապետ, Melodies Kurds Receuillies par Archimandrite Comitas*, KAMAR / 4, I/ COM, S. Lazaro – Venezia, 1982:

[78] Անդ, էջ 110-111:

հասարակութեան եւ ի՞նչպիսի ուրախութիւն եւ հպարտութիւն հայ գաղութին: ... Եւ օր մը այդ անորոշ կացութենէ ձանձրացած, Կոմիտաս դարձաւ Պոլիս[79]:

Պսրզ է. Պոլիս վերադառնալն աղէտաբեր եղաւ Կոմիտասի համար:

Կ. ՊՈԼԻՍ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ԱՂԷՏԱԼԻ ՀԵՏԵՒԱՆՔԸ

Կոմիտասն ինքն էլ արդէն պարզորոշ զգում էր այն բացասական մթնոլորտը, որ տիրում էր Պոլսում, նախանձի եւ ատելութեան ալիքը, որ կուտակւում էր օրէցօր հայերի հանդէպ... : Շուտով վրայ է հասնում 1915ը

Էջմիածին ամսագրի 1965ի բոլոր համարները՝ Մեծ Եղեռնի 50ամեակի առթիւ, լեցուն են այդ մասին յօդուածներով ու ականատեսների սրտակեղէք յուշերով: Դրանցից է Առաքել Պատրիկի «Գուժկանը» մանրապատումը Դանիէլ Վարուժանի նահատակութեան մասին, որ նրան պատմել էր իսլամ ընդունած մի հայ, ում տանն աքսորի ժամանակ ապաստանել էին Կոմիտասը, Ռուբէն Սեւակն ու Վարուժանը:

Վարուժանը կարդում էր իր գրած նոր բանաստեղծութիւնները. սակայն յաճախ այնքան էր յուզւում, որ չէր կարողանում շարունակել, ու նստում, հեկեկում էր, դէմքը ձեռներովը ծածկած: Այդ ժամանակ լսում էր Կոմիտաս վարդապետի 'Տէ՛ր, ողորմեա՛ն: Ներկաները նրան ձայնակցում էին արտասուագին: Էլ ո՞ր մէկ սիրտ կը դիմանար...: Կողքի սենեակից այդ ամէնը լսում էինք ու մենք էլ լաց լինում...: Կոմիտաս վարդապետը յետոյ արտօնուեց վերադառնալ Պոլիս[80]:

Քանի որ Ռուբէն Սեւակը հմուտ բժիշկ էր եւ ազդեցիկ մի թուրք պաշտօնեայի աղջկայ կեանք էր փրկել ծանր հիւանդութիւնից, նրան առաջարկուել էր հաւատափոխ լինել եւ փեսայանալ այդ թուրքին, սակայն Սեւակը մերժել էր: Իսկ Վարուժանը՝ վերջին օրը, երբ Օգոստոսի սկզբներին ոստիկանները եկել են նրան ու Սեւակին տանելու, իր բանաստեղծութիւնների տետրակները թաքցրել է բարձի տակ, սակայն տանտէրը չի հասցրել վերցնել դրանք. ոստիկանները խուժել են սենեակ ու յափշտակել այդ անգին մասունքները եւս:

Կոմիտասի ճակատագիրը բոլորիս քաջ յայտնի է, սակայն աւելորդ չի լինի մէջբերել նրա աշակերտներից մէկի՝ Վարդան Պետոյեանի յուշն այն մասին, թէ ինչպիսի՛ անճանաչելի վիճակում է եղել իրենց սիրելի ուսուցիչն աքսորավայրից վերադառնալուց յետոյ, երբ առաջին անգամ մտել է դպրոց՝ շարունակելու իր մանկավարժական գործունէութիւնը.

Ուսման առաջին օրն էր, հաւաքուել էինք դպրոց պարապմունքներն սկսելու... Որքա՜ն մեծ ուրախութիւն եւ անակնկալ բան էր, երբ դպրոց ոտք կոխելով իմացանք Կոմիտասի գալը եւ նորից երգի եւ երաժշտութեան դասատու նշանակուելը ազգային Կեդրոնական վարժարանում: Կոմիտասին տեսնելու միտքը յուզում էր մեզ անուշ երազով, թերեւս եւ միւսներին տեսնելու յոյսով: Ահա

[79] Անդ, էջ 121-122:

[80] Առաքել Պատրիկ, «Գուժկանը», *Էջմիածին*, 1965, էջ 133-35:

Կոմիտասը գալիս է, մեր աչքերը բեւեռւում են նրա վրայ... Կոմիտա՞ս, թէ՞ Կոմիտասի ուրուական... ժպտուն, թովուն, կատակող, սիրով, ծաղրով, «տօ՛ լաճ», «տօ՛ ծուռ» ասող, աշակերտներով հրճուող Կոմիտասը տխուր, «խռով», «կմախքացած» դէմքով, ատամներից մի քանիսը փշրուած, – ո՛վ գիտէ ո՛ր գազան թուրքի բռունցքից, – գլուխը կախեց, բարեւեց եւ առանց ժպիտի մտաւ դպրոց[81]:

Իր ազգի անտանելի տառապանքները խորն ու անբուժելի հետք էին դաջել Կոմիտասի նրբազգաց հոգու վրայ. այդ կեղեքող ցաւն այլեւս երբեք չամոքուեց: Տեղին է մէջբերել նաեւ աքսորից վերադարձած Կոմիտասի մասին Չիթունու պատումը, որի ենթավերնագիրն է «Առաւօտ լուսոյ»[82].

1915, Ապրիլ 11ի (սա Ապրիլի 24ն է՝ հին տոմարով – Ա.Վ.) անակնկալ աղէկտուր գիշերէն յետոյ՝ ահ ու սարսափ, արիւն-արցունք, – կենդանի մա՛հ – ամէն հայու բաժինը եղաւ աքսորի ճամփան: Շատերը հոն ինկան եղերամահ: Ուրիշներ՝ դեռ նոր Գողգոթաներու խաչակիր: Քանի մը բախտաւորներ ետ դարձան... Կոմիտաս այդ բախտաւորներէն մէկն եղաւ: Չէինք կրնար հաւատալ: Վերադարձած օրն իսկ՝ վազեցի զինքը տեսնելու: ... համերգերու, հանդէսներու՝ ամէնուս գիտցած շէ՛ն Կոմիտասը չկար այլեւս: Բան մը խորունկէն փլա՛ծ էր անոր մէջ... Իր իսկ ձայնագրած եղերաշունչ երգին նմանակ: Բան մը նաեւ, հրեղէն տէգի պէս, կանգնած էր մտքին ու աչքին առաջ: – Այն ժողովուրդը, որ այդ պատկերը փոռեց իմ տեսած ճամփուն վրայ, չի՛ մահանար, – կ'ըսէր կը յեղյեղէր՝ դարձէն յետոյ՝ ամէն առիթով: Ու կը պատմէր. – Աքսորի ճամփուն վրայ, օր մը, արշալոյսին, հազարաւոր հայերու հալածավար կարաւան մը, ... բլուրի մը գլուխ գիշերած, առտուն նորածագ աղօթարանին շողերուն առաջ, յանկարծ՝ մէկ մարդու պէս՝ ծունկի եկան, գլուխ բաց, ձեռները երկինք տարածած, արտասուալից աչքերով, մեծ Բնութեան բաց տաճարին տակ, միաձայն դղրդացուցին՝

«Առաւօտ լուսոյ, / Արեգական արդար, / Առ իս լո՛յս ծագեա»... շարականը... Այս մեծավայելուչ ու սրտագրաւ նկարը, կը թուի թէ երբեք չեղծուեցաւ Կոմիտասի հոգիի ու մարմնի աչքերէն: Ու այդ չեղծուած պատկերը, օրէ օր, յամրաբար, կրծեց, փորեց, եղծեց Կոմիտասի բանական տաճարն ու խորանը... Աքսորի ճամփայէն իր Բանին դագաղը հետն էր բերեր...[83]:

Չիթունու այս տողերն իր գրական ձիրքի վկայութիւնն են, որոնք նաեւ Կոմիտասի՝ հոգեկան հիւանդ լինել-չլինելու վերաբերեալ հատորների արժէք ունեն՝ իրենց բացառիկ սրտացաւութեամբ ու խորաթափանցութեամբ: Տեղին կը լինի յիշել նաեւ Շահան Շահնուրի դիպուկ բնութագիրը Կոմիտասի մասին որպէս եղեռնի զոհ. «*Ան կ'ըլլայ մեծագոյնը, Ապրիլ 11ի մեր կորուստներուն*»[84]: Այս առիթով տեղին է տարակուսել, որ Մեծ Եղեռնի

---

[81] *Ժամանակակիցները Կոմիտասի մասին*, էջ 217-18:

[82] Չիթունի, էջ 92-93:

[83] Անդ:

[84] Շահան Շահնուր, *Ազատն Կոմիտաս եւ իբր յաւելագիր՝ Վաղը*, Փարիզ, 1970, էջ 8:

100ամեակի օրերին Հայոց Եկեղեցին սրբադասեց մէկուկէս միլիոն բոլոր զոհերին, բացի Կոմիտասից, պատճառաբանելով, որ նրան հարկաւոր է առանձին սրբադասել, սակայն մինչ օրս դա տեղի չի ունեցել:

ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ ԿԱՆԽԱԶԳԱՑՈՒՄ

Կոմիտասը միաժամանակ այնքա՞ն ծրագրեր ունէր եւ այնպիսի՞ հսկայական խանդավառութեամբ էր ջանում իրագործել դրանք՝ կարծես կանխազգալով, որ իր կեանքը չի բաւականացնելու այդ բոլորը կեանքի կոչել. ինչպէս Յակոբ Ասատուրեանն է նկատել՝ «*Մարգարէական նախազգացում մը կայ աճապարելու…*»[85], սակայն նրա գործունէութիւնն այնպէ՞ս վայրագ կերպով խաթարուեց, որ դրա շուրջ մտորելիս անհնար է զսպել դառն ափսոսանքի ու խոր կսկիծի զգացումը:

Կոմիտասն իրաւամբ համարւում է մեծ ազգագրագէտ ու ժողովրդական երգերի հմուտ բանահաւաք-բանագէտ. նրա անվիճելի ձիրքերից էին երաժշտական բարձրագոյն ճաշակն ու հեռատես գիտնականին յատուկ լայն մտահորիզոնը. նա մշտապես բացառիկ նուիրուածութիւն ու նրբանկատ վերաբերմունք էր ցուցաբերում ժողովրդի բանաւոր ստեղծագործութեան հանդէպ:

Կոմիտասը հսկայական աւանդ ունի հայոց բազմազան գաւառների երաժշտական բանարուեստի ձայնագրման եւ ուսումնասիրման ասպարէզում. այդ ծաւալուն գործունէութեան մէջ ուրոյն տեղ են զբաղեցնում Վան-Վասպուրականի բանահիւսութեան բազմաթիւ ինքնատիպ նմուշները: Կոմիտասը բարձր էր դասում հմուտ բանասէր Չիթունու վաստակը. իր «Հայն ունի ինքնուրոյն երաժշտութիւն»[86] յօդուածում Կոմիտասը Չիթունուն յիշատակում է Գարեգին Սրուանձտեանցի, Գարեգին Յովսէփեանի, Աբեղեանի, Սարգիս Հայկունու, Ստեփան Կանայեանի եւ այլոց անուններիի շարքում՝ որպէս թանկագին հրատարակութիւնների հեղինակ[87]:

Կոմիտասը ո՛չ միայն օտարներին ապացուցեց, որ հայն ունի ինքնուրոյն երաժշտութիւն, այլեւ մեզ՝ հայերիս աչքում բարձրացրեց մեր գեղջուկ երգ-եղանակների արժէքը. նա ժողովրդին վերադարձրեց ի՛ր իսկ ստեղծած երաժշտական բանահիւսութեան անգին գոհարները՝ մշակելով

---

[85] Յակոբ Ասատուրեան, *Կոմիտաս Վարդապետի հետ (հայ երգի արահետներով)*, Թենըֆլայ, Նիու Ճըրզի, 1994:

[86] Կոմիտաս, *Յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ* (հաւաք.՝ Ռուբէն Թերլէմէզեան), Պետական հրատարակչութիւն, Երեւան, 1941, էջ 45-50. նաեւ՝ *Ազատամարտ*, Կ. Պոլիս, 1913, N 1316. նաեւ՝ Կոմիտաս, *Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ, գիրք Բ*,. Սարգիս Խաչենց – Փրինթինֆօ, Երեւան, 2007, էջ 85, 90:

[87] Անդ, էջ 47:

դրանք, ինչպէս հմուտ վարպետն է յղկում գոհարն ու դարձնում անգին ադամանդ:

CREATIVE COLLABORATION BETWEEN KOMITAS AND TIGRAN CHITUNI

(Summary)

ARPY VARDUMYAN (avardumyan8@gmail.com)

The creative collaboration of Komitas and the famous ethnographer and folklorist Tigran Chituni was quite efficient. Already at their first meeting, in just two evenings, Komitas notated from Chituni's performances 50 melodies of Van folk songs, the words of which the latter had written down; however, having no musical education, he could not record their melodies.

Their second meeting took place only years later, after the outbreak of the First World War, in December 1914 in Constantinople, when, collaborating for a whole month, they recorded many of Van songs, including melodies of children's ethnic songs. Komitas processed and performed some of the best songs of Van-Vaspurakan many times in his many concerts, presenting them as valuable patterns of Armenian folklore.

ՅԱՐՈՒՑԵԱԼ ՄՈՎՍԷՍԸ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՎԿԱՅ՝ ԸՍՏ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՍՏԵԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՔԱՆԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԻ[1]

ՀԱՅԱՐՓԻ ՅԱԿՈԲԵԱՆ (hayarpi.hakobyan30@gmail.com)

ՄՈՒՏՔ

ՄՄ, ձեռ. թիւ 10780 եւ Ծղրութի Աւետարան

Հայկական եօթ նկարազարդ Աւետարաններ տէրունական պատկերաշարի Պայծառակերպութեան եւ Երկրորդ գալստեան նկարազարդումներում Մովսէս մարգարէին ցուցադրում են պատանքով: Այս խմբի ձեռագրերից վաղագոյնը Վազգէն վեհափառի Աւետարանն է, որը թուագրւում է Ժ.-ԺԱ. դարերով (Մաշտոցեան Մատենադարան, [ՄՄ], ձեռ. թիւ 10780[2]): ԺԱ. դարում են ստեղծուել ներկայումս Ջաւախքի Ծղրութ գիւղում պահուող[3] եւ հանրայայտ ՄՄ 6201[4] մատեանները: Շուրջ երկուսուկէս դար անց Բերկրիի Արգելեան վանքում 1294ին արտագրուել է ՄՄ 4814ը[5], իսկ ԺԴ. դարի առաջին տասնամեակներին՝ ՄՄ 4806[6], ՄՄ 4818[7] եւ Բրիտանական Գրադարանի Or. 2680[8] Աւետարանները:

Բնականաբար, առանձնայատուկ պատկերագրական մօտեցումը չի վրիպել մասնագէտների ուշադրութիւնից: Երախտաւոր գիտնականներ Լիլիթ Զաքարեանը եւ Տատիանա Իզմայլովան վերոնշեալ մատեանների համակողմանի ուսումնասիրութիւնների առիթով միքանի նախադասութեամբ անդրադարձել են նաեւ «Պայծառակերպութեան» աննախադէպ պատկերագրութեանը, բնութագրել այն ընդհանուր կողմերով: Զաքարեանը այս պատկերագրութիւնը պայմանաւորել է հնագոյն գրուածքներով՝ մասնաւորեցնելով միայն Յովհան Ոսկեբերանի՝ Մատթէոսի Աւետարանի մեկնութիւնը[9]: Իզմայլովան եզրակացրել է, թէ պատկերագրութիւնը հիմնուած է ապոկրիֆի վրա եւ պահպանուել է միայն ՄՄ 6201 Աւետարանի դպրոցում[10]: Յղելով Նիկոլայ Պոկրովսկու աշխատութիւնը, փաստօրէն, նա եւս

գրական հնարաւոր սկզբնաղբիր է համարել Ոսկեբերանի՝ նշուած մեկնութիւնը[11]: Պայծառակերպութեան քննուող տարբերակի արժեւորման տեսանկիւնից կարեւոր մեկնաբանութիւններ են տուել բիւզանդագէտ Ռայնէ Շտիխէլը եւ արուեստաբան, բիւզանդագէտ, հայագէտ Նիրա Սթոունը: Այս հեղինակներն առաւել հանգամանօրէն են լուսաբանել խնդրայարոյց տիպը՝ ուսումնասիրութիւնների յենքում կրկին վերցնելով ՄՄ 6201 Աւետարանի նոյնանուն տեսարանը: Շտիխէլը պատկերագրութիւնը կապել է «Պատմութիւն Մովսէսի» հայկական պարականոնի հետ, իսկ վերջինիս ակունքները վերագրել հրէական աւանդոյթներին[12]: Սթոունը, իմի բերելով Իզմայլովայի եւ Շտիխէլի առաջքաշած դրոյթները, քննուող տարբերակը համարել է ներյատուկ հայկական արուեստին, միաժամանակ՝ Մովսէսի այդօրինակ պատկերումը կրկին կապել հրէական անկանոն գրքի ազդեցութեան հետ[13]:

Ներկայացուած խմբի առաջին երեք պատկերները գիտական միջավայրում բաւականաչափ յայտնի են, մինչդեռ ԺԴ. դարի նմուշները քիչ են շրջանառուել (ՄՄ 4806, ՄՄ 4814, ՄՄ 4818) կամ դեռեւս չեն ուսումնասիրուել (ՄՄ 4818ի «Երկրորդ գալուստ»ը, Or. 2680): Այսօր, երբ նորագոյն արհեստագիտամիջոցների շնորհիւ հասանելի են մեծաթիւ ուսումնասիրութիւններ եւ տարբեր հաւաքածուներում առկայ մատեանների նկարագրդումները, անհրաժեշտութիւնը կայ թեմայի վերաբերեալ եղած առանձին դիտարկումներն իմի բերելու եւ պատկերատիպի ստեղծման պատմութեան ու նշանակութեան մասին ամփոփիչ եզրայանգումների: Ներկայ յօդուածում կ'անդրադառնանք պատկերագրութեան խորհրդաբանութեանը, հնարաւոր գրական աղբիւրներին, մատնանշուող օրինակների գաղափարական զուգահեռներին քրիստոնէական արուեստում, եւ, նոր օրինակների զուգադրմամբ, կը դիտարկենք հայկական մանրանկարների դերը պատկերագրութեան պատմական զարգացման մէջ:

ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Որպէս մեկնակէտ՝ տեսնենք, թէ ինչ կանոնից են շեղւում նշուած օրինակները:

Կանոնաւոր պատկերագրութիւն ասելով նկատի է առնւում Աստուածաշնչին համաձայն, բիւզանդական արուեստի կողմից հաստատուած պատկերագրական այն յօրինուածքը, որին հետեւում էր արեւելաքրիստոնէական աշխարհը[14], ապա նաեւ՝ քրիստոնեայ Արեւմուտքը[15]: Պայծառակերպութեան տեսարանի համար որպէս գրական ընդունելի աղբիւր օգտագործւում են համատես Աւետարանների հետեւեալ հատուածները.- Մտթ. ԺԷ. 1-13, Մրկ. Թ. 2-12, Ղուկ. Թ. 28-36: Իրադարձութեան մասին վկայութեանը հանդիպում ենք նաեւ Պետրոս առաքեալի Թուղթ Բ. Ընդհանրականում (Ա.

ՄՄ 6201 եւ ՄՄ 4814

16-18)[16]: Շարադրուած աւետարանական պատումի համաձայն՝ Քրիստոսը իր չարչարանքների, մահուան եւ յարութեան մասին աշակերտների հետ զրուցելուց յետոյ (վեց օր անց՝ ըստ Մտթ. ԺԷ. 1ի եւ Մրկ. Թ. 1ի, ութ օր անց՝ ըստ Ղուկ. Թ. 28ի) նրանցից երեքին՝ Պետրոսին, Յակոբին եւ Յովհաննէսին, տանում է մի բարձր սար[17] եւ նրանց առջեւ այլակերպւում՝ երեւան բերելով իր աստուածային էութիւնը: Նոյն պահին նրա առջեւ ներկայանում են Մովսէս ու Եղիա մարգարէները եւ խօսում նրա մահուան մասին, որ պէտք է տեղի ունենար Երուսաղէմում (Ղուկ. Թ. 30-1):

Գրական այս աղբիւրների թելադրանքով բիւզանդական պատկերագրութեան մէջ տեսարանի կենտրոնական առանցքը շեշտուած է լեռան վրայ կանգնած ճերմակազգեստ Քրիստոսի լուսեղէն կերպարով՝ շրջանակուած փառապսակով: Նա աջ ձեռքով օրհնում է, իսկ ձախում պահում է գալարակ կամ գիրք: Օծեալի ճերմակ հանդերձը կոչուած է շեշտադրելու անդրանցական աշխարհը: Քրիստոսի երկու կողմերում նրա զրուցակիցներն են. Մովսէսը սովորոյթի ուժով երիտասարդ է պատկերւում (երբեմն՝ մօրուսով), սեւահեր, ձեռքին՝ գիրք կամ օրէնքի տախտակները, Եղիան ներկայացւում է որպէս ալեզարդ ծերունի, ձեռքում պահում է գիրք: Կենտրոնում՝ լեռան ստորոտում, ծնրադիր[18] պատկերւում են Աստուածայայտնութեանն ականատես երեք աշակերտները՝ տարբերակիչ դիրքերով. Պետրոսը նայում է պայծառակերպուող Քրիստոսին, երիտասարդ Յովհաննէսը դէմքն ամբողջութեամբ փակել է ձեռքերով, մինչ Յակոբը ծածուկ հետեւում է իրադարձութեանը: Աստծոյ ներկայութիւնն ընդգծւում է ամպերից իջած Աջի պատկերմամբ՝ ի հաւաստումն աւետարանական պատմութեան դրուագի, թէ՝ «*Ամպից մի ձայն եկաւ, որ ասում էր. 'Դա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ, դմա լուարուք'*» (Մատթ. ԺԷ. 5, նման կերպ՝ Մարկ. Թ. 6, Ղուկ. Թ. 35): Աջն այս տեսարանի հայկական մեկնաբանութիւններում ոչ-հազուադէպ հանդիպող մանրամասն է: Այն բիւզանդական արուեստի կողմից մեծ տարածում չի ստացել, չնայած, բնագրով պայմանաւորուած, ընդունելի էր կա-

նոնական պատկերագրութեան համար[19]: Տեսարանի հինկտակարանային զուգահեռը Սինա լեռան վրայ տեղի ունեցած Աստուածայայտնութիւնն է,





ՄՄ 4806 եւ ՄՄ 4818

երբ Մովսէս մարգարէն ստանում է օրէնքի տախտակները[20]: Համանման ձեւով՝ Մովսէսից ճառագող լոյսի շիթերը համեմատւում են Յիսուսից ճառագող լոյսի հետ:

Ուսումնասիրուող եօթ մանրանկարների մէջ յօրինուածքի կենտրոնում լեռը խորհրդանշող փոքրիկ բլրի վրայ կանգնած է Քրիստոսը՝ օրհնող Աջով: Նրա հանդերձը երփներանգ է՝ հակառակ աւետարանական պատումների: Հանդիպում են նարնջագոյնի եւ կանաչի, մանուշակագոյնի եւ դեղինի, վարդագոյնի եւ լազուր կապոյտի զուգակցումները: Բոլոր օրինակներում, բացառութեամբ ՄՄ 4814ի, Քրիստոսն առանց փառապսակի է: Փառապսակի բացակայութիւնը վկայում է խորհրդանշանի իմաստի զարգացման մասին, երբ այն այլեւս չէր դիտւում որպէս աստուածային բնութեան արտայայտման պարտադիր նշան[21]: Նման օրինակի հանդիպում ենք նաեւ Լալիբելայի Բեթա Մարիամ (Մարիամի տուն) եկեղեցում (Եթովպիա)[22]: Էջի վրայ յօրինուածքի տեղադրումը հորիզոնական է, ինչը հնարաւորութիւն է տուել պատկերագիրներին տեսարանի մէջ ներառել բնապատկերային մանրամասներ: Ձախ կողմից Քրիստոսին են մօտենում Մովսէսը եւ Եղիան[23]: Վաղագոյն՝ Վեհափառի Աւետարանում Մովսէսը եւ Եղիան Քրիստոսի աջ կողմում են, համապատասխանաբար՝ աշակերտները ձախ հատուածում: Յետագայ վեց նկարազարդումների դէպքում կերպարների դիրքադրումը հակառակ ձեւով է: Այս առիթով Իզմայլովան ճշգրտում է, թէ Վեհափառի Աւետարանում պատկերը շրջուած ուրուագծով է, եւ սխալն առաջ է եկել գալարաթերթից ընդօրինակման ժամանակ, ինչպիսին, ըստ նրա, եղել է Վեհափառի Աւետարանի գաղափար օրինակը[24]: Դրա համար նա բերում է այն ակնառու փաստարկը, որ Քրիստոսն օրհնում է ոչ թէ աջ, այլ ձախ ձեռքով: Երեք աշակերտները կանոնաւոր կերպով պատկերի ստորին հատուածում տեղակայուելու փոխարէն պատկերուած են հակառակ կողմում՝ ծառ(եր)ի տակ: Ուշագրաւ է, որ մեր եօթ օրինակներում աշակերտները դիրքերի առումով չեն տարբերակւում. երեքն էլ ներկայացուած

են ծունր իջած դիրքով, համանման ձեւով ծածկել են դէմքերը ափերով, իսկ նրանց ինքնութիւնը բացայայտւում է մակագրութիւնների միջոցով (դրանք առկայ են ՄՄ 10780, Ծղրութի, ՄՄ 4814, Բրիտ. Or. 2680 Աւետարաններում եւ ուղեկցւում են բացատրագրերով՝ «աշակերտքն զարհուրեցան», «առաքեալքն զարհուրեալ ոչ կարէին հայել ի լոյս աստուածութենէ», «առաքեալքն թմբրեալ»): Բրիտ. օրինակի դէպքում նկարիչն այնքան է հեռացել սկզբնաղբիւրից, որ ոչ միայն չի հետեւել դիրքերին, այլեւ երեքի փոխարէն պատկերել է երկու աշակերտների: Ըստ Գաբրիէլ Միյէի՝ աշակերտների միանման ներկայացուելը բնորոշ է տեսարանի արեւելեան պատկերագրութեանը, որի արտայայտութիւնը կարող ենք տեսնել դեռեւս հայկական 1057ի Մելիտինէի Աւետարանի պատկերաշարում (ՄՄ 3784)[25]:

Յօրինուածքի դասաւորութեան մէջ ակներեւ է զուգահեռ ուղղահայեացների կշռոյթը, որն արտայայտուած է Քրիստոսի մարմնի առանցքին զուգահեռ մարգարէների կերպարներով՝ ձախ կողմում, եւ ծառերի վերասլաց բնով՝ աջում: Մանրանկարիչ Յովսիանը այդ նպատակով պատկերում է երեք աշակերտներին յօրինուածքի աջ կողմում: Հեռանկարի բացակայութիւնը պայմանաւորուած է միջնադարեան արեւելաքրիստոնէական արուեստի գեղարուեստական արտայայտչամիջոցներով: Պահպանուել է նուիրապետական սկզբունքը՝ Քրիստոսը ամէնից վերեւ, բլրակի վրայ է պատկերուած, իսկ միւսները՝ առաւել ցած: Վառ եւ յագեցած գոյների՝ կարմիրի եւ նարնջագոյնի կիրառմամբ շեշտադրւում են իրադարձութեանը մասնակից կարեւոր կերպարները. նախ՝ Քրիստոսը եւ ապա՝ Մովսէսը:

Աստծոյ Աջը առկայ է բոլոր եօթ մանրանկարներում[26]: Այն ուղեկցւում է կից գրութեամբ. «Դու ես Որդի» (Ծղրութի Աւետարան) կամ «Ձայն յամբոյն դա է որդի իմ սիրելի» (ՄՄ 4818): Խօսելով Գլաձորի Աւետարանի (Քալիֆորնիայի Համալսարան, Լոս Անճելըս, ձեռ. Հմր 170/466, 1300-07) այդ մանրամասնի մասին՝ Թոմաս Մեթիւսը նկատում է, որ Աջի պատկերումը բիւզանդական կանոնի մէջ չէր ներառւում, այնինչ հայկական ԺԴ. դարի մանրանկարչութեան մէջ նկարիչները, թէեւ հազուադէպ, բայց կիրառել են: Գլաձորի Աւետարանից բացի՝ գիտնականը յիշատակում է իրեն յայտնի երեք մանրանկար-օրինակներ[27]:

Կանոնաւոր պատկերագրութեան կողմից չեն արդարացւում խորքի բնապատկերային մանրամասները: Դիտարկուող մանրանկարներում ծառերի առկայութիւնը, այն էլ՝ պտղատու, ըստ Մեթիւսի, հայկական համալրում է: Այն խորհրդանշում է Կենաց Ծառը եւ մատնացոյց անում դրախտը՝ պայծառակերպուած Քրիստոսի աշխարհը[28]: Բիւզանդագէտ Աթանասիոս Սեմօղլուն պտղատու ծառերի պատկերումը պայմանաւորում է «Պետրոսի յայտնութիւնը» պարականոն պատմութեան ազդեցութեամբ, որում Թաբոր լեռը նկարագրւում է որպէս դրախտ[29]: Ասորական աւանդութեան մէջ, իր հերթին, դրախտը ներկայացւում էր որպէս անհաս մի լեռ[30]:

Հայկական մատենագրութեան մէջ Թաբոր լեռան եդէմական բուսակա-

նութեան նկարագրութեանը հանդիպում ենք Եղիշէի մօտ.

> Այլ վասն լերինն գեղեցկութեան եւ վայրացն վայելչութեան՝ եթէ կամիք ախորժելով ունկն դնել, սակաւիկ մի երկրորդեցից ձեզ զտեսիլ ցանկալի տեղւոյն: … նիստ նորա է ի մեծ դաշտի միոջ յերկրին գալիլեացւոց, եւ այլ լեառն ամենեւին հուպ ոչ գոյ ի նմա, բայց տեսանելով հեռագոյն. եւ ինքն է բարձր եւ բոլորանիստ եւ զիւրեւ ունի ինքնաբուխ գուբս ջրոց եւ խիտ առ խիտս ծառատունկս բազումս՝ որք պտղաբերին եանձրեւաբուղխ ամպոց, եւ լինին ազգի ազգի միրգք քաղցրահամք. եւ բազումք եւ այլ համադամք անուշութեան. որթք գինեբերք, որ իբրեւ թագաւորաց ըմպել արժանիք. Զդէմս լերին յաճախագոյն ծառք ձիթենիք եւ եղջիւրենիք. չորեքեան աւդք ի նա շնչելով, յոլովագոյն հիւսիսի զաւրանայ ի նա[31]:

Աւետարանական պատմութեան մէջ Քրիստոսի երկու կողմերում Մովսէսի եւ Եղիայի ներկայացուելը համապատասխանաբար խորհրդանշում է օրէնքը եւ մարգարէութիւնները[32], Հին ու Նոր կտակարանների միութեան շարունակութիւնը[33]: Ի յաւելումն վերոնշեալի՝ պատկերի ոչ-կանոնական տարբերակը աւելի է ընդգծում Աստծոյ Որդու իշխանութիւնը: Այն բացայայտ ներկայացնում է ընդհանրական եկեղեցու հայրերի մեկնութիւններում քանիցս արծարծուած այն միտքը, թէ կենդանութեան օրօք երկինք համբարձած Եղիան խորհրդանշում էր ողջերի աշխարհը, մահացած եւ երկրի վրայ թաղուած Մովսէսը՝ մեռածների[34]: Այս դրոյթից զարգանում է աստուածաբանական մէկ այլ ընկալում. Քրիստոսը, որին ենթակայ են այդ երկու աշխարհների տէրերը, գերիշխում է ե՛ւ մեռեալների, ե՛ւ ողջերի աշխարհներին[35]: Ս. Դմիտրի Ռոստովցու Ժամագրքում ասւում է, թէ Մովսէսը կանչուեց մեռեալներից, որպէսզի վկայի Քրիստոսի մասին մեռեալների աշխարհում, Եղիա Ենովքացին՝ դրախտում, իսկ երեք առաքեալները՝ երկնքի տակ գտնուողներին[36]: Ըստ Սթոունի՝ հինկտակարանային հերոսները՝ Մովսէսը եւ Եղիան, ներկայանում են որ վկայեն, թէ Քրիստոսը նոյնն է անցեալում[37], ներկայում եւ ապագայում: Ընդունւում է նաեւ, որ յարութիւն առած Մովսէսը խորհրդանշում է Քրիստոսին (նոր Ադամին) եւ նրա յարութիւնը, ծառը ցոյց է տալիս դրախտը, ուր պէտք է վերադառնայ Ադամը[38]: Եղիան խորհրդանշում է տառապանքը եւ նախակերպարն է բոլոր նրանց, ովքեր պէտք է տառապեն յանուն Յիսուսի[39]: Պայծառակերպութեան մէջ ներմուծուելով՝ Մովսէսի պատանքով ներկայացուելը, այն է՝ յարութիւնը, յարութեան աւետիսն է եւ Քրիստոսի յարութեան կանխատեսումը[40]: Միաժամանակ, Մովսէսի յարութեան զուգակցումը դրախտի պատկերմամբ, վեր են հանում Քրիստոսի երկրորդ գալստեան գաղափարը, ինչն էլ արժեւորում է տօնի փրկչագործական բովանդակութիւնը[41]: Դեռեւս Յովհան Ոսկեբերանը մեկնաբանում է Պայծառակերպութիւնը որպէս Քրիստոսի Երկրորդ գալստեան նախապատրաստում *(…յեր այսորիկ փառօք հօր գայցէ,*

Բրիտանական Գրադարան, Or. 2680 եւ ՄՄ 4818

ոչ միայն Մովսէսիւ եւ Եղիայիւ, այլ անեզր զօրութեամբ հրեշտակաց անհամար գնդիւք)[42]: Ուստի, պատահական չէ, որ Մովսէսի պատանքով պատկերման միւս տարբերակը հանդիպում է Քրիստոսի «Երկրորդ գալստեան» տեսարանում՝ ՄՄ 4818 Աւետարանի պատկերաշարը եզրափակող 13ա էջի վրայ: Այն ներկայացնում է Աստծոյ գահը՝ ըստ Յովհաննու յայտնութեան (Յայտն. Գ. 6-7)[43]: Կենտրոնում՝ չորեքկերպեան աթոռի վրայ, Քրիստոսն է՝ օրհնող Աջով: Գահը շրջապատում են քառակերպի կենդանիների գլուխները՝ առիւծը եւ ցուլը առջեւից, մարդը եւ արծիւը՝ ետեւից: Գահակալ Քրիստոսի երկու կողմերում Մարիամը եւ Յովհաննէս Մկրտիչն են՝ որպէս «Բարեխօսութեան» տեսարանի անքակտելի կերպարներ[44]: Մարիամի կողքին, էջի աջ հատուածում պատանքով պատկերուած կերպարը մակագրուած է որպէս «Եղիայ», նրան առաջնորդողը՝ «Մովսէս»: Այստեղ, ինչպէս «Պայծառակերպութեան» մանրանկարի դէպքում էր, Յովսիանը շփոթել է հերոսների ինքնութիւնը (ծնթ. 22): Էջի աջ հատուածում՝ Յովհաննէս Մկրտիչի կողքին, պատկերուած է Յովհաննէս Աւետարանիչը, իսկ երրորդ կերպարի վերեւի գրութիւնը եղծուած է, եւ հնարաւոր չէ վստահօրէն ասել, թէ ով է: Վերեւում երկնային զօրքի չորս ներկայացուցիչներ են, որոնց չորսական թեւերն են միայն նշմարելի: Ըստ կից գրութեան, պատկերուածները վեցաթեւ են, այն է՝ սերովբէներ: Նրանցից երկուսի ձեռքին փողեր են, որով պէտք է յայտարարեն Քրիստոսի երկրորդ գալուստը[45]:

ՄՈՎՍԷՍԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԳՐԱԿԱՆ ԱՂԲԻՒՐՆԵՐՈՒՄ

Ուսումնասիրուող մանրանկարներում անկանոն պատկերագրութեան կարեւորագոյն ցուցիչը Մովսէս մարգարէի՝ պատանքով պատկերուած լինելն է: Պարզ է, որ այդ մասին մէջբերում չկայ Աստուածայայտնութիւնը ներկայացնող կանոնական Աւետարաններում: Հին Օրէնքի գրքում պատմւում է Մովսէսի մահուան մասին. «*եւ վախճանեցաւ Մովսէս ծառայ Տեառն յերկրին Մովաբու ըստ բանի Տեառն. եւ թաղեցին զնա ի Գայի՝ մերձ ի տունն Փոգովբայ. եւ ոչ ոք գիտաց զգերեզման նորա մինչեւ ցայսօր*» (Երկրորդ Օրինաց, ԼԴ:5-6): Սակայն, մեզ հետաքրքրում է ոչ թէ Մովսէսի

մահուան բնագրային վկայութիւնը, այլ այն, թէ ինչ հիմունքներով է նա մասնակցում նորկտակարանային իրադարձութեանը՝ մահուանից յետոյ:

Մովսէսի կեանքին է նուիրուած կապադովկեան հայրերից Գրիգոր Նիւսացու համանուն աշխատութիւնը[46], որը հետեւում է Աստուածաշնչի պատմութեանը: Անկանոն գրականութեան մէջ Մովսէսի անուան հետ են կապւում միքանի գրքեր: Դրանց մի մասը մեզ են հասել տարալեզու խմբագրութիւններով, մինչդեռ միւսների մասին պահպանուել են միայն յիշատակութիւններ: Յայտնի են «Մովսէսի կտակարանը» կամ «Վերացումն Մովսիսի»[47], «Մովսէսի յայտնութեան գիրքը»[48], «Մովսէսի խորհրդաւոր ճառերի գիրքը»[49], «Մովսէսի համբարձումը»[50], Մովսէսին վերագրուող «Սաղմոսների գիրքը»[51], «Մովսէսի մահը»[52]:

Ի յաւելումն վերոյիշեալ գրքերի՝ հայկական մատենագրութիւնը մեզ է աւանդել «Պատմութիւն Մովսէսի» պարականոն գրուածքը[53]: Մատենագէտ Յակոբ Անասեանն այս գիրքը դասում է յունարէնից կամ ասորերէնից թարգմանուած անվաւերների շարքը եւ չի բացառում, որ այն հայկական միջավայր մտած լինի թարգմանիչների դարաշրջանում[54]: Հնարաւոր է, որ ա՛յս գրուածքն է նկատի ունեցել կաթոլիկ հոգեւորական Յոհաննէս Գրիգորիուսի յիշատակած հայ վանականը, որը նրան փաստել էր, թէ հայկական միջավայրում կան Մովսէսին վերաբերող անկանոն գրքեր, որոնք ուրիշ տեղ յայտնի չեն[55]:

Գրքի վերջաբանում խօսւում է, թէ ինչպէս վէմում (Նաբօ լեռ, այժմ՝ Յորդանան) թաղուած Մովսէսը յարութիւն է առնում, որպէսզի ականատեսը դառնայ Թաբոր լեռան վրայ Քրիստոսի այլակերպմանը.

> Պահեաց Մովսէս երեք քառասուն, ըստ թուոյ ամաց նորա օր ընդ տարւոյ. Զի ամք կենաց նորա էին երեք քառասուն, որ գայ հարիւր եւ քսան տարի. եւ ոչ ոք գտաւ նման նմա յամենայն ազգս եւ ի մարգարէսն Իսրայէլի. Զի բերան ի բերան ընդ Աստուծոյ խօսեցաւ. եւ նորա կատարեալ յարութիւն եղեալ է, որ յարուցեալ եկն ի Թաբօր վկայ աստուածութեանն Յիսուսի Քրիստոսի որդւոյն Մարիամու[56]:

«Պատմութիւն Մովսէսի» պարականոնի բնագրային- համեմատատական ուսումնասիրութիւնն իրականացրել է հայր Բարսեղ Սարգիսեանը: Ըստ նրա, Մովսէսի պատմութեան մեզ հասած հայկական տարբերակը ստեղծուել է ԺԳ. դարից յետոյ, մինչդեռ առաւել վաղ յայտնի է եղել այդ պատմութեան այլ տարբերակ՝ վերնագրուած՝ «Վերացումն Մովսիսի»[57]: Վերջինս վերցուած է եղել հրէական գրքերից[58] եւ յիշատակւում է Մխիթար Այրիվանեցու կողմից 1283ին արտագրուած հրէաների ծածուկ գրքերի ցանկի մէջ[59]:

Համեմատելով 1714ի՝ արեւելագէտ Գիլբերտ Գաուլմինի հրատարակած եբրայերէն բնագրի համբուրգյան վերահրատարակութեան հետ՝ Սարգիսեանը փաստել է, որ հայկական տարբերակը ոչ թէ եբրայականի ճշգրիտ թարգմանութիւնն է, այլ՝ համառօտագրութիւնը: Արտագրութեան ժամանակ հայ գրիչը չի ներառել այն դրուագները, որոնց մասին Աստուածա-

շնչում չկան վկայութիւններ, կամ ինչը ոչ-արժանահաւատ է թուացել նրան[60]: Սակայն, հայկական բնագրում կան յաւելեալ տեղեկութիւններ, որոնք ենթադրել են տալիս, թէ հայ խմբագիրը եբրայական թարգմանութեան հետ համադրել է Մովսէսի պատմութեան այլ սկզբնաղբիւրներ[61]: Գիրքը եզրափակող չորս դրուագները, այդ թւում Մովսէսի յարութիւնը նկարագրող հատուածը, բացակայում են եբրայերէն բնագրում, ընդ որում, ըստ հայագէտի, յարութեան դրուագը հաւանօրէն ազդուած է ոչ թէ հրէական աւանդոյթներից, այլ եկեղեցական գաղափարներից[62]:

«Մովսէսի պատմութիւն»ը մեզ է հասել մի շարք արտագրութիւններով, որոնք ամփոփուած են տօնական-վարքագրական բնոյթի ժողովածուներում (Մովսէսի եւ Ահարոնի տօնի առթիւ՝ Յոռի ամսուայ Թ. օրը): Սարգիսեանը պատմութեան բնագիրը հրատարակել է Վենետիկի Մխիթարեան մատենադարանի թիւ 1309[63] (անյայտ)[64] եւ 1447 (223)[65] մատեանների համադրութեամբ, բայց յիշատակում է վենետիկեան հաւաքածուի մեջ առկայ եւս երկու՝ թիւ 279 (729) եւ թիւ 742 (231) գրքերի մասին[66]:

«Մովսէսի պատմութեան» մէջ յարութեան գաղափարի ներառուածութիւնը դիտարկելու համար բնագրային-համեմատական ուսումնասիրութիւն անցկացրինք Սարգիսեանի հրատարակութեան եւ «Մովսէսի պատմութեան» միքանի այլ օրինակների միջեւ (ՄՄ 941, ՄՄ 1099, ՄՄ 1339, ՄՄ 1511, ՄՄ 2695, ՄՄ 2711, Ղալաթիայի Ազգային Մատենադարանի [ՂԱՄ] թիւ 76)[67]: Ինչպէս պարզ դարձաւ, քննուած մատեաններից երկուսում Մովսէսի տօնի կապակցութեամբ ընդգրկուած պատումը խիստ սեղմ է եւ հեռաւոր նմանութիւն ունի Սարգիսեանի հրատարակած բնագրին: Հինգ մատեանները հետեւում են այդ բնագրին, բայց երեքում բացակայում է յարութեանը վերաբերող՝ վերջին նախադասութիւնը, չնայած որ դրանցից մէկը պատմութեան էլ աւելի ընդարձակ տարբերակն է: Իվերջոյ, միայն երկուսն են (ՄՄ 941 Ոսկեփորիկ-Ճառընտիր եւ ՂԱՄ 76 ժողովածոյ), որ հարազատօրէն կրկնում են Վենետիկի 1447ի բնագիրը՝ Մովսէսի յարութիւնը հիմնաւորող եզրափակումով: Գրքի արտագրութիւնների համեմատական հետազօտութիւնը դուրս է ներկայ թեմայի ընդգրկման տիրոյթից, եւ, դա թողնելով պարականոն բնագրերի ուսումնասիրութեամբ զբաղուող մասնագէտներին, կ'անդրադառնանք միայն քննուող պատկերագրութեանն առնչուող վերջաբանին. Մովսէսի յարութեան գաղափարի ընդգծուելը մատեաններից միայն միքանիսում հաստատում է, որ այն աստուածաբանական գրոյթներին ծանօթ գրչի յաւելում է եւ ոչ միայն «Վերացումն Մովսիսի» պարականոնի, այլ նաեւ՝ Մովսէսի հայկական «Պատմութեան» բովանդակութեան սկզբնական կամ պարտադիր մասը չի կազմել (ինչպէս իրաւացիօրէն նկատել է Սարգիսեանը): Ըստ ամէնայնի, «Վերացումն Մովսիսի» պարականոնը հիմք է դարձել Մովսէսի վարքագրական «Պատմութեան» խմբագրման համար, որը Ճառընտիր ժողովածուներում եզրափակուել է աստուածաբանական հիմնաւորումներով: Այդ դէպքում, որո՞նք են աստ-

ուածաբանական հնարաւոր հիմք հանդիսացած գրուածքները:

Ե. դարի հայ մատենագիր Եղիշէի՝ Պայծառակերպութեանը նուիրուած ճառում քանիցս անդրադարձ է կատարւում Մովսէսի յարութեան գաղափարին: Այսպէս, օրինակ,

> Սոյնպէս եւ յայսմ տեղւոջ բազում ինչ նշանս արար Աստուած ի ձեռն Մովսէսի, եւ մեծարեաց զնա քան զամենայն մարգարէսն. զսա յարոյց ի մեռելոց, զսա տեսաքն եւ վկայեմք, որպիսութիւն յարութեան նորա՝ Տեառն միայն յայտնի: Այլ զի եկին Մովսէս եւ Եղիա եւ խաւսեցան ընդ Քրիստոսի եւ տեսին երեք Առաքեալքն, վկայեմք ճշմարիտ բանից նոցա. եւ որ յաչս մեր անհնար է, Աստուծոյ ամենայն ինչ հնարաւոր է[68]:

Եղիշէի մեկնողական միտքը ձեւաւորուել է վաղ աստուածաբանական գրուածքներով[69], ինչը հիմնաւորւում է նրա ճառերում ընդհանրական եկեղեցու հայրերի մեկնութիւնների ոչ-ուղղակի մէջբերմամբ կամ նմանութեամբ[70]: Այս առիթով, Մովսէսի յարութեան ակնարկը կայ նաեւ Եփրէմ Խորին Ասորու, Եպիփան Կիպրացու, Ոսկեբերանի մեկնութիւններում[71] (չնայած որ Եղիշէի մեկնաբանութիւնը ամէնից ընդարձակն է): Ըստ Գարեգին Զարբհանալեանի՝ Ոսկեբերանի «յաւետարանագիրն Մատթէոս» եւ Եփրէմ Ասորու՝ Աստուածաշնչի մեկնութիւնները եղել են Ոսկեդարի առաջին թարգմանութիւնների շարքում՝ հայերէն թարգմանուելով դեռեւս 442ին[72]: Յետագայ դարերի հայ մատենագիրների՝ այլակերպութեանն առնչուող մեկնութիւնները եւս ցոյց են տալիս հեղինակների ծանօթութիւնը ինչպէս հայկական Ոսկեդարի, այնպէս էլ՝ վաղ թարգմանական մեկնութիւնների հետ[73]:

Ժ.-ԺԱ. դարերի հայկական երեք մանրանկարները վկայում են, որ առնուազն ԺԱ. դարի առաջին կէսին այս պատկերագրութիւնն արդէն ձեւաւորուած է եղել: Եւ ուրեմն, դրա համար հիմք հանդիսացած աղբիւրը կարող էր Ճառընտրի՝ ԺԱ. դարից առաջ ստեղծուած նմուշ եղած լինել, որը պարունակել է աստուածաբանական քննուած ճառերը կամ (եւ) դրանց ազդեցութեամբ խմբագրուած «Մովսէսի պատմութիւնը»: Վերջինս, վաղքրիստոնէական թարգմանական եւ հայերէն ճառերից որդեգրելով Մովսէսի յարութեան դրոյթը, ըստ ամէնայնի, եղել է միջանկեալ օղակ, իսկ պատկերագրութեան ակունքները պէտք է դիտարկել ոչ միայն Ոսկեբերանի, այլ նաեւ Եփրէմ Ասորու մեկնութիւններում, որոնք հայկական միջավայրում եղել են նոյնքան տարածուած, որքան պարականոնի տեղական արտագրութիւնը: Թէեւ Ճառընտիրների բովանդակութիւնը որեւէ յստակ խմբագրութեան չի հետեւում, մեզ հասած Ճառընտիրների շարքում կան նմուշներ, որոնք «Մովսէսի պատմութեան» հետ մէկտեղ, պարունակում են նաեւ Ոսկեբերանի, Եփրէմ Ասորու, Եղիշէի ճառերը: Ճառերի եւ պարականոնների այդօրինակ ժողովածուները պատկերագիրներն, ըստ ամէնայնի, կարող էին օգտագործել աւետարանական պատումների առաւել ընդլայնուած եւ ընդգրկուն մեկնաբանութեան համար[74]:

ՄՈՎՍԷՍԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԵՐՈՒՄԸ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏՈՒՄ

Մովսէսի յարութեանն առնչուղ դրուագի հիմքում ընկած մեկնութիւնները համաքրիստոնէական ճանաչում ունէին: Սակայն եթէ հայկական արուեստում Մովսէսի յարութիւնը պատկերող նմուշները յայտնի են առնուազն Ժ.-ԺԱ. դարերից, ապա դրա գաղափարական զուգահեռները ռուսական եւ յունական արուեստում ի յայտ են գալիս միայն ԺԵ.-ԺԶ. դարերից[75]: Թեմայի շրջանակներում ռուսական սրբապատկերների եւ հիւսիս-արեւմտեան Յունաստանի (Մակեդոնիա, Էպիր) կոթողային գեղանկարչութեան կապը խորապէս ուսումնասիրել է Սեմօղլուն, ով, «Պայծառակերպութեան» հետաքրքրական պատկերագրութիւնը համարել է նոր եւ գեղարուեստական ազդուածութեան սկզբնակէտում դիտարկել ռուսական պատկերները: Միաժամանակ, ծանօթ լինելով ՄՄ 6201ի մանրանկարին, գիտնականն ընդգծել է վերջինիս կարեւորութիւնը՝ որպէս Մովսէսի յարութիւնը ներկայացնող վաղագոյն յուշարձան՝ ստեղծուած չպահպանուած նախատիպի հիման վրայ: Դարերի ընթացքում ուղղափառ եկեղեցին Պայծառակերպութեան տեսարանի պատկերագրութիւնը համալրել է իրադարձութեանը նախորդող եւ յաջորդող դրուագներով՝ մի կողմից Քրիստոսը եւ աշակերտները բաձրանում են սարը, իսկ միւս կողմից՝ իջնում: ԺԵ. դարից սկսած ներմուծւում են մեր թեմային անմիջականօրէն արձագանգող՝ մարգարէներին առնչուող մանրամասները. Քրիստոսի երկու կողմերում պատկերուելուն զուգահեռ ցոյց է տրւում, թէ նրանք որտեղից են գալիս (վաղագոյնը Թէոֆանէս Յոյնին վերագրուող 1403ի սրբապատկերն է)[76]: Աւելի ուշ՝ Եղիան ժամանում է ամպի վրայ՝ հրեշտակի ուղեկցութեամբ, իսկ Մովսէսը ներկայացւում է քարէդագաղից դուրս գալիս՝ հրեշտակի առաջնորդութեամբ[77]: Յաճախ քարէդագաղը պատկերուած է Մովսէսի կողքին կամ յօրինուածքի ստորին հատուածում: Պատկերատիպին հետեւող ռուսական նմուշներից յայտնի են Նովգորոդի դպրոցի եւ Կիրիլօ-Բելոզերսկի թանգարանի 1595ի երկու սրբապատկերները[78], Սիայի, Պետրոպաւլովեան Աւետարանների մանրանկարները[79]: Սիմէոն Սպիրիդոնովի հեղինակած սրբապատկերում Մովսէսի ետեւում բաց դագաղ է, Եղիայի մօտ երեւում է երկնքի հատուած[80]: Կան նաեւ օրինակներ, որոնցում Մովսէսը ուղղանկիւն դագաղի մէջ կանգնած է[81]: Փոքր-ինչ ուշ յօրինուածքը տեսնում ենք Աթոս լեռան Քսենոփոն եւ Քրիստոս Ամէնակալի վանքերի՝ ԺԷ. դարի ռուսական երկու սրբապատկերներում[82]: Յունական գեղանկարչութեան նմուշներից պէտք է յիշատակել Զաւորդայի Ս. Նիկանորի (1542-48), Ս. Բարաղամի վանքի Կաթողիկէի (1548), Աթոս լեռան Մեծ Լաւր վանքի Ս. Նիկողայոսի ժամատան (1560[83])

որմնանկարները եւ այլք[84]:





Սրբապատկեր, Նովգորոդ, ԺՋ. դար
(http://www.pravoslavie.ru/foto/image13303.htm) [մատչում՝ 28.02.2022] եւ
Սրբապատկեր, Աթոս լեռ, ԺԷ. դար (**A. Semoglou,** "La version théophanienne de la Transfiguration", էջ 45, նկ. 7)

ԱՄՓՈՓՈՒՄ

Մանրանկարներում Մովսէսին յարուցեալ պատկերելը բխում է ոչ թէ նրա անձի կամ կեանքի նկատմամբ հետաքրքրութիւնից (ինչպէս եզրակացրել է Շտիխէլը), այլ բացառապէս քրիստոսաբանական-փրկչագործական գաղափարներից:

Պատկերագրութեան ձեւաւորման համար, ըստ ամէնայնի, աղբիւր են ծառայել ընդհանրական եկեղեցու հայրերի (ոչ միայն Ոսկեբերանի, այլ՝ առաւել վաղ՝ Եփրէմ Ասորու եւ Եպիփան Կիպրացու) սուրբգրային մեկնութիւնները եւ ճառերը: Կարելի է ենթադրել, որ Եղիշէի՝ «Այլակերպութեան» ճառը եւս իր նպաստն է ունեցել հայկական միջավայրում եկեղեցական այդ դրոյթի տարածման մէջ, քանի որ նախընթաց աստուածաբանների համեմատութեամբ նրա մեկնութիւնը շատ աւելի ընդգրկուն եւ պարզորոշ է: Քննուած ճառերը Ե. դարում արդէն շրջանառուել են Հայաստանում եւ պէտք է որ դրանց ազդեցութեամբ գրուած լինի Մովսէսի պարականոն պատմութեան հայկական խմբագրութեան վերջաբանը, որը բացակայել է եբրայական նախօրինակում:

Պատկերատիպը կարող էր ստեղծուել ինչպէս Հայաստանում (Սթոուն), այնպէս էլ՝ Հայաստանից դուրս՝ արեւելայունական-ասորական միջավայ-

րում (ինչը հաւանական է համարել Իզմայլովան՝ Վեհափառի Աւետարանի նախատիպի վերաբերեալ),[85] սակայն ասորական կամ յունական նմանատիպ վաղ պատկերների բացակայութեան պայմաններում հայկական օրինակները հաւասարապէս արժէքաւոր են որպէս արեւելեան երբեմնի պատկերագրութեան յուշարձաններ: Դրանք փաստում են պատկերատիպի գոյութեան մասին, որը Ժ.-ԺԱ. դարերում իր հետեւորդներն է ունեցել Հայաստանում: Մովսէսի եւ Եղիայի կեանքին առնչուող աստուածաբանական մեկնութիւնները յայտնի են եղել ողջ քրիստոնէական աշխարհում՝ Դ. դարից սկսած, սակայն միայն ԺԵ. դարից յետոյ է, որ Մովսէսի յարութեան գաղափարն իր պատկերումն է գտել Ուղղափառ Եկեղեցու հաստոցային եւ կոթողային գեղանկարչութեան նմուշներում:

Քրիստոսի երկրորդ գալստեան ԺԴ. դարի նկարազարդումը յարուցեալ Մովսէսի պատկերմամբ թեմայի այդօրինակ մեկնաբանման մեզ յայտնի միակ տարբերակն է: Դրա գրաւոր հիմնաւորումը, ինչպէս տեսանք, տուել է Յովհան Ոսկեբերանը, բայց, ի լրումն նշուած ճառերի, պատկերագրութիւնը կարող էր ազդուած լինել նաեւ Պայծառակերպութեան պատկերներից:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ծխ.- Տպագրական թեքնիք պատճառներով ծանօթագրութիւնները բացառաբար տրուած են ուսումնասիրութեան աւարտին:

[1] Շնորհակալ եմ դոկտոր Լեւոն Չուգասզեանից, դոկտոր Արմէնուհի Դրոստ-Աբգարեանից, գիտ. թեկնածու Մարի Մամեանից՝ յօդուածն ընթերցելու եւ դիտարկումների համար, լուսանկարիչ Հրայր Բազէից եւ Բրիտանական Գրադարանից՝ # 1-6, 8 եւ 7 պատկերների լուսանկարները տրամադրելու համար:

[2] Գլխաւոր յիշատակարանը չի պահպանուել, այդ պատճառով ստեղծման վայրը, ժամանակը, գրչի, ծաղկողի եւ պատուիրատուների անուններն անյայտ են: 1088ին ձեռագիրը վերանորոգուել է: Հաւանաբար յաջորդ վերանորոգմանն է վերաբերում չպահպանուած մէկ այլ յիշատակարանի հազիւ ընթեռնելի 1371 թուականը: ԺԵ. դարում ձեռագիրը վերստին վերանորոգուել է, այնուհետեւ Սեւանայ լճի շրջակայքից՝ Գեղարքունի գաւառից տեղափոխուել է Արցախի Փառիսոսի գաւառ, ապա՝ մօտակայ Քիւրլար գիւղ, 1720ին՝ Նուկզար գիւղ՝ Խադարի վանք: 1978ին նուիրաբերուել է ՄՄին: Ըստ Արտաշէս Մաթեւոսեանի այն եւ ՄՄ 6201ը տարբեր ժամանակներում արտագրուել են նոյն դպրոցի գաղափար օրինակներից, իսկ Տատիանա Իզմայլովան հաւանական է համարում, որ Վեհափառի Աւետարանի ծննդավայրը եղած լինի Սեպուհ լեռը: Մատեանի մասին տե՛ս՝ *Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտր.* Գ., կազմ.՝ Ա. Մալխասեան, խմբ.՝ Ա. Տէրստեփանեան, ԵՊՀ հրատ., Երեւան, 2007, էջ 112, Ա. Մաթեւոսեան, Տ. Իզմայլովա, *Ազգէն վեհափառի Աւետարանը,* «Նաիրի» հրատ., Երեւան, 2000, էջ 556-98. նաեւ՝ Ա. Մաթեւոսեան, «Վեհափառի Աւետարանը», *Էջմիածին*, 5:1978, էջ 34-51, նոյնի՝ «Երկու արժէքաւոր ձեռագրեր Ս. Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանին», *Էջմիածին*, ԺԲ:1976, էջ 45-51:

[3] Ձեռագրի հնագրութեան եւ նկարազարդումների վրայ հիմնուելով՝ մասնագէտները առանձնացնում են ձեռագրի երկու մասերը: Առաջին մասն ստեղծուել է 974ին եւ ոճով հարում է 966ի Թարգմանչաց Աւետարանին (Պալթիմորի Ուոլթըրզ պատկերասրահ, ձեռ. թիւ 537): Աւելի ուշ նրան կցուել են այլ Աւետարանի մասեր՝ հինգ էջ համաբարբառի խորաններ, տօնական շարքի երեք մանրանկարներ՝ «Պայծառակերպութիւն», «Մուտք Երուսաղէմ», «Յարութիւն» եւ չորս Աւետարանիչների պատկերը: Այս երկրորդ մասն ակնյայտ յիշեցնում է ՄՄ 6201ի նկարազարդումները եւ, ըստ մասնագէտների, ստեղծուել է նրանից առաջ՝ Ժ.-ԺԱ. դարերում: Թէեւ այս երկու մատեանների ստեղծման վայրերը եւս անյայտ են, բայց ԺԹ. դարում երկուսն էլ գտնուել են Էրզրումի մօտ՝ համապատասխանաբար Իլիճա եւ Շխնոց գիւղերում: Կարնեցիների մեծ գաղթը տեղորոշել է առաջինի վերջնական հանգրուանը՝ Ախալցխայի Ծղրութ գիւղ, եւ երկրորդինը՝ Ախալցխա, այնուհետեւ՝ ՄՄ: Աւետարանի մասին համապարփակ ուսումնասիրութիւնը տե՛ս՝ Ն. Քոթանջեան, *Ծղրութի Աւետարանը*, Անահիտ հրատ., Երեւան, 2006:

[4] Արտագրուել է 1038ին՝ Եւարգր անունով գրչի կողմից: Ձեռագրի ֆիզիկական նկարագրութեան համար տե՛ս՝ *Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտր. Բ.*, կազմ.՝ Օ. Եգանեան եւ ուրիշներ, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1970, սիւն. 269. նաեւ՝ Ա. Մաթեւոսեան, *Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Ե.-ԺԲ. դդ.*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1988, էջ 85: Լիդիա Դուրնովօն առաջինն է անդրադարձել է այս Աւետարանի տեղագրութեանը եւ ընդգծել է Տարօն-Տուրուբերանի դպրոցի աշխատանքների՝ իր նշելով՝ ՄՄ 4814, ՄՄ 4818 եւ ՄՄ 6201 Աւետարանների պատկերատիպերի հարազատութիւնը (Л. Дурново, *Краткая история древнеармянской живописи* (Հին հայկական նկարչութեան համառօտ պատմութիւն), Հայկական պետական հրատ., Երեւան, 1957, էջ 44-45: Իզմայլովան եւս գտնում է, որ 1038ի Աւետարանի արտագրման վայրը կարող էր Տարօնը լինել. տե՛ս T. Izmailova, “Le Tetraévangile illustré arménien de 1038 (Matenadaran n° 6201)”, *Revue des études arméniennes*, 1970, էջ 204-5. նաեւ՝ Т. Измайлова, *Армянская миниатюра XI века* (ԺԱ. դարի հայկական մանրանկարչութիւնը), «Իսկուստվո» հրատ., Մոսկուա, 1979, էջ 45: Մաթեւոսեանը վերոնշեալ ձեռագրերը տեղորոշում է Վասպուրականի Տարբերունի՝ Բերկրի գաւառով (Մաթեւոսեան, Իզմայլովա, էջ 562):

[5] Գրուել է 1294ին Բերկրիում՝ ‹‹*ի գաւառիս Տուրբերունոյ, ... յառաջնորդութեան սուրբ ուխտիս Արգիլանա տէր Սարգսի, ընդ հովանեաւ կենսունակ Սուրբ Նշանիս Իւսկան որդո եւ Սուրբ Աստուածածնիս...*››: Մանրանկարները ստեղծուել են Խաչերի կողմից, սակայն կարծես աւելի ուշ: Այսպէս, Յակոբ գրիչը որպէս ձեռագրի պատուիրատուներ՝ յիշատակում է նախեւառաջ Խելոքին եւ նրա տիկնոջը՝ Փոխանին, ապա միայն նրանց զաւակներին՝ Պռոշին եւ դեռեւս կենդանի Թումային: ԺԴ. դարասկզբին, Խելոքի մահից յետոյ, Փոխանը Աւետարանն ի պահ է յանձնել Մութ գիւղի Ս. Թադեւոս ժամատանը (Բիթլիսի նահանգում, Մուշից հարաւ-արեւելք): Շատ աւելի ուշ՝ ծնողների մահից յետոյ, Պռոշը ետ է գնում Աւետարանը: Ահա այս ժամանակ է, որ Խաչերը ստեղծում է նկարազարդումները եւ թողնում իր յիշատակարանը. «*ՁԽաչեր նկարիչս յիշեցէք ի Քրիստոս, ընդ նմին եւ զՊռաւշ հաւատարիմ քրիստոնեայ, եւ ծնողսն իւր, եւ զեղբայրն իւր՝ զփոխեալն ի Քրիստոս, եւ Աստուած յիշողացդ ողորմեսցի*»: Այստեղ Պռոշի անուան յատուկ մէջբերումը եւ նրա ծնողների եւ եղբօր անունների հարեւանցի յիշատակումը կարծել են տալիս, թէ նկարազարդումներն արուել են Պռոշի մեկենասութեամբ: ԺԴ. դարաս-

կզբին մատեանն արդէն նրա սեփականութիւնն էր, դրա յետգնումը նա ձօնել էր վախճանուած հարազատների յիշատակին (*Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտր. Ա.*, կազմ.՝ Օ. Եգանեան եւ ուրիշներ, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1965, սիւն. 1292. նաեւ՝ Ա. Մաթեւոսեան, *Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, ԺԳ. դար*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1984, էջ 735):

[6] Ստեղծուել է 1306ին՝ «*յերկրիս Տարբերունի, ի գեղ Բերդակ, ընդ հովանեաւ սուրբ եւ կենսաբեր Նշանի խաչին Քրիստոսի, եւ սուրբ զաւրավարացն՝ սրբոյն Գէորգեա եւ սրբոյն Սարգսի զաւրավարի*»: Գրիչը, ծակողը եւ կազմողը Յովսիաննն է (*Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան, հտր. Ա.*, սիւն. 1291. նաեւ՝ Լ. Խաչիկեան, *ԺԴ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1950, էջ 42-43):

[7] 1316ին ընդօրինակուել է Յակոբ եւ Յովսիան գրիչների կողմից՝ «*ի գեղս, որ կոչի Հազարակն, ընդ հովանեաւ սուրբ Դանիէլի, եւ սուրբ եւ կենսաբեր Նշանի խաչի Քրիստոսի, եւ սուրբ Մինասա*» (*Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան, հտր. Ա.*, սիւն. 1293. նաեւ՝ Խաչիկեան, *ԺԴ. դարի*, էջ 122-23):

[8] Աւետարանը գրի է առնուել Աստուածատուրի կողմից՝ 1317ին: Գրիչը չի յիշատակում ստեղծման սկզբնական վայրը: Կազմուել է Վաւռ գիւղի (անյայտ) Ս. Գէորգ եկեղեցում, 1562ից յետոյ նուիրաբերուել է Ակռբի գիւղի Ս. Աստուածածին եկեղեցուն (Վան քաղաքից հարաւ-արեւելք) (F. C. Conybeare, *A Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum*, Օքսֆորտ, 1913, էջ 20-22. նաեւ՝ V. Nersessian, *Treasures from the Ark*, Լոս Անճելըս, 2001, էջ 211):

[9] Լ. Զաքարեան, «XIII դարի մի ձեռագրի մանրանկարների ոճն ու պատկերագրութիւնը», *Բանբեր Երեւանի Համալսարանի*, 1(7):1969, էջ 250, Л. Закарян, *Из истории васпураканской миниатюры (Վասպուրականի մանրանկարչութեան պատմութիւնից)*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Մոսկուա, 1980, էջ 20:

[10] Izmailova, "Le Tetraévangile", էջ 221-2. նաեւ՝ Измайлова, էջ 60-1: Այս դպրոցը, ըստ նրա, զարգացել է Վեհափառի Աւետարանի հիմքի վրայ: Դրա մէջ են ներառւում Վեհափառի Աւետարանի առաջին պրակի մանրանկարները (խորանները, ողջ էջով արուած մանրանկարները), Ծղրութի Աւետարանի տօնական շարքի պատկերները եւ խորանները, Բերկրիի ձեռագրերը, այդ թւում՝ ՄՄ 4813ը (1338, գրիչ՝ Մելքիսեդէկ) (Измайлова, էջ 45-64. նաեւ՝ Մաթեւոսեան, Իզմայլովա, էջ 581, 594):

[11] Измайлова, էջ 60. նաեւ՝ Н. Покровский, *Евангелие в памятниках иконографии (Աւետարանը պատկերագրութեան յուշարձաններում)*, Մոսկուա, 2001, էջ 293-4: Առաւել ուշ Հրաւարդ Յակոբեանը սեղմ անդրադարձ է յղել տեսարանի պատկերագրութեանը՝ հիմնուելով Իզմայլովայի աշխատութեան վրայ (Г. Акопян, *Миниатюра Васпуракана XIII-XV вв.* [Վասպուրականի մանրանկարչութիւնը ԺԳ.-ԺԵ. դդ.], Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1989, էջ 23): Վարդան Դեւրիկեանը Պայծառակերպութեան պատկերագրութեանը նուիրուած աշխատութեան մէջ անդրադարձել է նաեւ քննուող պատկերագրութեան հինգ նմուշներին (*Պայծառակերպութիւնը եւ Վարդավառի տօնը*, Մագաղաթ հրատ., Երեւան, 2006):

[12] R. Stichel, "Una Rappresentazione Armena della Transfigurazione di Cristo", *Atti del Primo Simposio Internationale di Arte Armena*, Վենետիկ-Ս. Ղազար, 1978, էջ 670-1:

[13] Խօսքն այստեղ նեղ առումով վերաբերում է Մովսէսի՝ պատանքով ներկայացուելուն եւ ոչ թէ վերջինիս մահուան գաղափարին առհասարակ: Ըստ հայագէտի՝ թէպէտ յօրինուածքի բաղկացեալ տարրերը տարբեր աղբիւրներից են սնուած,

դրանց համադրումը հայկական է (N. Stone, “The Illuminations of the Transfiguration”, *Revue des études arméniennes*, 2010:32, էջ 205-6, 209):

[14] Դեռեւս Դ. դարում տօնը նշւում էր արեւելեան եկեղեցական տօնացոյցով՝ ի դէմս Հայաստանի եւ Սիրիայի: Է. դարից Երուսաղէմի Եկեղեցին (եւ նրա կազմում գտնուող Սինայի թերակղզին) յստակեցնում է նաեւ օրը՝ Օգոստոսի 6, թէպէտ Սինայի՝ 566ին կառուցուած Ս. Կատարինէ վանքում տեսարանը պատկերող խճանկարի առկայութիւնը ցոյց է տալիս, որ դեռեւս Զ. դարում տօնն արդէն յայտնի էր: Աւելին, եկեղեցին ի սկզբանէ նուիրուած է եղել Պայծառակերպութեան տօնին (F. Bœspflug, *Les Théophanies Bibliques dans l’Art Médiéval, d’Occident et d’Orient*, Ժնեւ, 2012, էջ 309. նաեւ՝ Покровский, էջ 295):

[15] Արեւմուտքում, Է. դարից սկսած, տօնն ընթերցւում էր պահքի շրջանում, թէեւ եկեղեցական ծէսի համար ընդունելի է դառնում Թ. դարում, Սպանիայում: Արեւմտեան առաջին օրինակները յայտնի են վաղքրիստոնէական մարտիրոսներ Ս. Ներէուսին եւ Ս. Աքիլլէուսին նուիրուած եկեղեցու խճանկարներից (Ը.-Թ. դդ.), Ուտրեխտի Սաղմոսագրքից (Թ. դարի առաջին կէս, Ռեմսի դպրոց, այժմ՝ Ուտրեխտի Համալսարանական Գրադարան, ձեռ. 32, էջ 83բ): Ժ. դարում տօնը յիշատակւում է վկայաբանութիւններում, ԺԱ. դարում՝ Կասսէն լեռան արխիւներում, ապա՝ Կլիւնիում, իսկ 1131ից յետոյ տարածւում է Կլիւնիի աբբայութեան եկեղեցիներում: Այնուհետեւ տօնը տարածւում է Ֆրանսայում եւ Իտալիայում, թէպէտ լիարժէք ճանաչում է գտնում միայն 1457ից յետոյ, երբ Կալիստոս Գ. պապն այն մտցնում է ռոմանական օրացոյցի մէջ: Այսպիսով, մինչեւ ԺԵ. դար տօնը բացակայում էր արեւմտաքրիստոնէական կաթոլիկ եկեղեցու տօնացոյցից: Այս պատճառով Արեւմուտքը ոչ միայն տեսարանի սեփական մեկնաբանութիւնը չի տուել, այլեւ շատ հազուադէպ պատկերել՝ օգտագործելով բիւզանդական պատկերագրութիւնը (Bœspflug, էջ 309-16. նաեւ՝ Покровский, էջ 294):

[16] «*Քանզի ոչ եթէ պաճուճեալ ինչ առասպելաց զհետ երթեալ ցուցաք ձեզ զՏեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի զզօրութիւն եւ զգալուստն, այլ մեզէն եղեալ ականատեսք նորա մեծութեանն: Քանզի առեալ յԱստուծոյ Հօրէ զփառս եւ զպատիւ, յեկեալ յայնպիսի բարբառոյ ի մեծվայելուչութեան փառաց անտի, եթէ Դա է Որդի իմ սիրելի ընդ որ ես հաճեցայ*»:

[17] Աւետարաններում չի յստակեցւում, սակայն, ըստ Կիւրեղ Աղեքսանդրացու, խօսքը Թաբոր լեռան մասին է (Bœspflug, էջ 307. նաեւ՝ G. Schiller, *Iconography of Christian Art, vol. 1*, Լոնտոն, 1971, էջ 146):

[18] Արուեստի յուշարձաններում աշակերտները պատկերւում են կամ նիրհելիս, ինչը փաստւում է Ղուկասի Աւետարանի տողերով (Ղուկ. Թ. 32), կամ գետնատարած՝ ի հաւաստումն Մատթէոսի վկայութեան (Մտթ. ԺԷ. 6): Արուեստագէտներն առաւել նախընտրում էին երկրորդ տարբերակը՝ տեսարանին աւելի մեծ խորհրդաւորութիւն եւ դրամատիզմ հաղորդելու միտումով:

[19] Թեմայի պատկերման վաղագոյն օրինակներում՝ Ռաւեննայի Սանտ Ապոլինարէին Կլասէ բազիլիկայում (մօտ 549), ապա Սինայի Ս. Կատարինէ վանքի «Պայծառակերպութեան» եկեղեցու գմբէթարդում (565-6), Աստծոյ Աջը՝ որպէս պարտադիր դրուագ, առկայ է եւ խորհրդանշում Աստծոյ ձայնը: Սինայի օրինակը ընդհանուր բնութագրական կողմերով կրկնւում է Դաֆնիի Տիրամօր Նինջի եկեղեցու խճանկարում (Յունաստան, մօտ 1100), Լոււրի խճանկար-սրբապատկերում (մօտ 1200), Ֆրանսիայի Ազգային Գրադարանի ղպտական թիւ 13 ձեռագրում (1180): Արեւմտեան արուեստի յուշարձաններից Աստծոյ Աջն առկայ է Օտտոն Գ.ի Աւե-

Մէկ ուրիշ ուշագրաւ վկայութիւն՝ Հասուա երկրի (յետագայում՝ Տարօն) ցեղապետ-արքային Խաթուսիլի Ա.ը կոչում է «Տաւաննայի որդի», որը խէթերէնում նշանակում էր «թագուհու որդի»[6]: Խէթերի թագուհին պարզապէս թագաւորի կինը չէր, այլ լայն արտօնութիւններ ունեցող նրա գլխաւոր կինը: Գահաժառանգումը տեղի էր ունենում նրա միջոցով: Սովորաբար, հանգուցեալ թագաւորին փոխարինում էր կա՛մ թագուհու եղբօրորդին, կա՛մ թագաւորի փեսան՝ գլխաւոր տիկնոջից ծնուած արքայադստեր ամուսինը[7]: Տելեպինու թագաւորի Ք.ա. 1525ին իրագործած բարեփոխումով միայն ժառանգելու իրաւունք ստացան արքայատոհմի արական գծով ներկայացուցիչները: Այդ հին կարգը գործել է նաեւ Հասուա երկրում: Աւելին, Խաթուսիլի Ա.ը վկայում է, որ հասուացիներն իրենց ցեղապետ-արքային գահընկեց էին արել: Այստեղից հետեւում է, որ Հասուայում եւս գործել է խէթական պանկուսի կամ տուլիյայի[8] լիազօրութիւններով օժտուած մի հաստատութիւն:

Խէթական թագաւորներն հետիոտն եւ կառամարտիկ զօրամասերից բաղկացած իրենց մեծ բանակներն Հայկական Լեռնաշխարհի երկրների դէմ հանելիս նախընտրում էին արշաւել երկու բանուկ ճանապարհներից որեւէ մէկով: Դրանցից առաջինը Արեւելեան Եփրատի (Արածանի) հոսանքն իվեր, գետափնեայ շրջաններով բերում էր լեռնաշխարհի կենտրո-

---

[5] *Хрестоматия I*, էջ 265.

[6] Խաթուսիլի Ա.ի նախորդի՝ Հին Խէթական Թագաւորութեան թագաւոր Լաբարնա//Տաբարնա Ա.ի անունը այնուհետեւ դարձել էր խէթ թագաւորների տիտղոսը (Ceram, էջ 126. նաեւ՝ В. И. Авдиев, *История древнего Востока*, Государственное издательство политической литературы, Լենինգրադ, 1953, էջ 332. նաեւ՝ О. Р. Герни, *Хетты*, Издательство «Наука», Մոսկուա, 1987, էջ 60): Ճիշտ նոյն կերպ նրա տիկնոջ Տաւաննանա անունը դարձել էր խէթ թագուհիների տիտղոսը (Герни, էջ 62):

[7] *Хрестоматия I*, էջ 265, пр. 2. նաեւ՝ Г. И. Довгяло, "О характере наследования царской власти у хеттов в эпоху Древнего царства," *Вестник древней истории*, Մոսկուա, 1:1964, էջ 23-24. նաեւ՝ Герни, էջ 62, 190:

[8] Խէթական պանկուսի եւ տուլիյայի վերաբերեալ տե՛ս՝ *История древнего Востока*, Под ред. В. И. Кузищина, «Высшая школа», Մոսկուա, 1979, էջ 199-200. նաեւ՝ Авдиев, էջ 333:

նական շրջաններ եւ Վանայ լճի հիւսիսային ու արեւմտեան ափեր, իսկ երկրորդը՝ Արեւմտեան Եփրատի մեծ ոլորանի կողմից, նրա հոսանքն իվեր առափնեայ շրջաններով բերում էր գետի ակունքների շրջան եւ Ճորոխ գետի աւազան: Դրանցից առաջին ճանապարհով էին ներխուժել, օրինակ, Խաթուսիլի Ա.ի եւ նրա յաջորդ Մուրսիլի Ա.ի (Ք.ա. 1620-1590) բանակները[9]: Նրանց յաջորդներն օգտւում էին նաեւ երկրորդ ճանապարհից: Այդպէս էր վարուել, օրինակ, Մուրսիլի Բ.ը (Ք.ա. 1345-15), որն ուղղակի յայտարարում էր. «*Իսկ երբ գարուն բացուեց, երկրորդ ճանապարհով գնացի Ազզի երկիր*»[10]:

Արդէն Խաթուսիլի Ա.ից սկսած հզօրացած խէթական թագաւորութեան գահակալները ձգտում էին հասնել Հայկական Լեռնաշխարհի նկատմամբ իրենց ռազմավարական եւ տնտեսական հեռահար նպատակների իրագործմանը: Դրանք էին.- *ա)* Խոչընդոտել լեռնաշխարհի էթնիկապէս միատարր ցեղային երկրների միաւորմանը ռազմական, վարչական եւ կրօնական միասնութեան տանող ցեղամիութիւնների մէջ[11], *բ)* Խաթուսիլի Ա.ից եւ Մուրսիլի Ա.ից սկսած խէթ արքաները ձգտում էին իրենց գերիշխանութիւնն հաստատել Եփրատից արեւելք ընկած Հայկական Տաւրոսի ցեղային երկրների վրայ եւ դրանով իսկ խափանել այստեղից իրենց գլխաւոր հակառակորդ Միտանիին մետաղի ու փայտանիւթի մատակարարումը (որոնք չափազանց կարեւոր էին մարտակառքերի պատրաստման համար), *գ)* Այդ ցեղային երկրների հպատակեցումը խէթերին հնարաւորութիւն կը տար Պիթլիսի լեռնանցքով դուրս գալ ասորեստանեան հարթավայր, որտեղ նրանց սպասում էր Միտանիի լուծը թօթափելու պատրաստ Աշուր քաղաքպետութիւնը: Նրա հետ դաշնակցած խէթերը կարող էին Միտանիին հարուածել նաեւ թիկունքից եւ վերականգնել իրար հետ ունեցած վաղեմի առեւտրատնտեսական կապերը, *դ)* Խէթ թագաւորները երբեւէ աչքաթող չէին անում նաեւ Հայկական Լեռնաշխարհի ցեղային երկրներից թանկարժէք մետաղներ, հարուստ աւար եւ ռազմագերիներ ձեռք բերելու հնարաւորութիւնները: Խաթուսիլի Ա.ը Հասուայի մասին ասում էր. «*Այդ երկրի արծա-*

---

[9] *Хрестоматия I*, էջ 264-5. նաեւ՝ «Keilschrifturkunden aus Boghazköi (Staatliche Museum zu Berlin,Vorderasiatische Abt)» (KUB), Berlin, 1923-1939, XXXI, 64, II. նաեւ՝ Ս. Գ. Պետրոսեան, «Մուրսիլի Ա.ի արեւելեան արշաւանքի երթուղին», *Գիտական աշխատութիւններ,* IV:2001, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազօտութիւնների կենտրոն (ՇՀՀԿ), Գիւմրի, էջ 53-60:

[10] *Քրեստոմատիա, հտր. I*, էջ 10:

[11] Այդպէս էր վարուել Մուրսիլի Բ.ը կասկեան ցեղերի դէպքում, պատճառաբանելով, որ «*Պիխունիան կասկերի երկրում չէր իշխում այնպէս, ինչպէս ընդունուած էր նրանց մօտ: Կասկերի երկրում միանձնեայ չէին իշխում: Իսկ նշեալ Պիխունիան թագաւորավայել էր իշխում*» (Ռ. Ղազարեան, «Մուրսիլի II-ի «Տասնամեայ» տարեգրութիւնը», *Խէթական աղբիւրները Հայկական Լեռնաշխարհի մասին*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2013, էջ 53):

թին ու ոսկուն հաշիւ չկար»[12], իսկ արհեստավարժ զինուորականներ եղած հայկական ռազմագերիները մշտապէս համալրում էին խէթական բանակների շարքերը:

Խաթուսիլի Ա.ը իր արեւելեան արշաւանքի նկարագրութիւնն անելուց առաջ համառօտ պատմում է Ադալուր լեռան մօտ Հասուա եւ Խալպա (Հալէպ) երկրների միացեալ բանակների դէմ տարած յաղթանակի մասին: Սրանցից առաջինը յետագայ Տարօնն[13] է, իսկ երկրորդը՝ Եամխադի հիւսիսասորիքեան թագաւորութիւնը՝ կոչուած իր մայրաքաղաքի անունով: Դրանից յետոյ խէթ թագաւորը շարունակում է. «*Ընդամէնը միքանի օր անց ես անցայ Պուրանա գետը, եւ Հասուա երկիրն ինչպէս առիւծ ես ուրնատրակ տուի*»[14]: Պուրանա//Եփրատ գետի անցումը խէթ թագաւորը շատ է արժեւորել, ուստի շարունակութեան մէջ նա կրկին անդրադառնում է դրան, յայտարարելով. «*առաջներում ոչ ոք չէր անցել Պուրանա գետը, իսկ ես՝ մեծ արքաս՝ Տաբարնան, այն անցայ գետանցով, եւ իմ զօրքը իմ ետեւից անցաւ այդ գետանցով*»[15]:

Գետանցը լինելու էր Մալաթիայից հիւսիս, Եփրատի ձախ ափին գտնուող Իզոլու բնակավայրի մօտ գտնուող գետանցը, որն հին դարերում յայտնի էր նրա մօտ գտնուող Տոմիսա/Թմնիս բնակավայրի անունով[16]: Իզոլուի մօտ գտնուած Ուրարտուի Սարդուրի Բ. թագաւորի (Ք.ա. 764-35) արձանագրութիւնը ցոյց է տալիս, որ այս գետանցից օգտուել են նաեւ ուրարտական թագաւորները, բայց հակառակ ուղղութեամբ՝ անդրեփրատեան տարածքներ արշաւելիս[17]: Խաթուսիլի Ա.ը չի ասում, թէ մինչեւ Հասուա//Տարօն մտնելը ինչ երկրով է անցել, բայց յետագայի խէթական արձանագրութիւններից պարզւում է, որ դա եղել է Իսուան՝ յետագայ Ծոփքը[18]: Սրա ցեղապետ արքան թոյլ էր տուել խէթերին անարգել անցնել ոչ միայն գետանցով, այլեւ իր երկրի տարածքով եւ ներխուժել Հասուա, որն, հաւանաբար, աւելի ընդարձակ է եղել, քան յետագայ Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Տարօն կենտրոնական գաւառը: Նրա նուաճումից յետոյ Խաթուսիլի Ա.ը իր բանակով ներխուժել էր հարեւան Խախա երկիր եւ գրաւել անգամ նրա ար-

---

[12] *Хрестоматия I*, էջ 264:

[13] Պետրոսեան, էջ 56-8:

[14] *Хрестоматия I*, էջ 264:

[15] Նոյն, էջ 265:

[16] Ս. Տ. Երէմեան, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»ի*, Հայկական ՍՍՌ ԳԱ պատմութեան ինստիտուտ, Երեւան, 1963, էջ 53:

[17] Ն. Ադոնց, *Հայաստանի պատմութիւն. ակունքները. X-VI դդ. մ.թ.ա.*, «Հայաստան» հրատ., Երեւան, 1972, էջ 178, 201-2:

[18] Ադոնց, էջ 47, 57. նաեւ՝ Н. В. Арутюнян, *Топономика Урарту*, АН Арм. ССР, Институт востоковедения, Հայկ. ՍՍՌ հրատ., Երեւան, 1985, էջ 92-4. նաեւ՝ Ա.Վ. Քոսեան, *Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խէթական սեպագիր աղբիւրների)*, ՀՀ ԳԱԱ արեւելագիտութեան ինստիտուտ, Երեւան, 2004, էջ 61-2:

քայանիստ Խախա քաղաքը[19]: Այս քաղաքը չէր կարող գտնուել Հայկական Լեռնաշխարհից դուրս կամ նոյնանալ Երզնկայի շրջանի յետագայ Խախ գիւղի հետ[20] այն պարզ պատճառով, որ Խաթուսիլի Ա.ի արեւելեան արշաւանքի ընդհանուր ուղղութիւնը «*առաջին ճանապարհով» էր՝ Արածանիի հոսանքն իվեր, իսկ նրա վերջնակէտը դարձել էր Հասուայից արեւելք՝ Վանայ լճին մերձ գտնուած Խախան, որն, ըստ տարեգրութեան, «Արեւի աստուածութեան երկրներից» մէկի արքայանիստն էր:

**

Խախա երկիրը իր կենտրոնական բնակավայրի՝ իր ցեղապետ-արքայի նստավայրի անունով են խէթերը կոչել *Խախա* (Ḫaẖẖa): Դա Մեծ Հայքի Բզնունիք գաւառի տարածքն է: *Խախա* անուան յիշատակն ենք տեսնում Ի. դարի սկզբներին իր գոյութիւնը դեռեւս պահպանած Պիթլիսի գաւառի Դատուանի գաւառակի *Խախրեւ* գիւղի անուան մէջ: Վերջինս գտնւում էր Վանայ լճից 6 կմ հեռաւորութեան վրայ[21]: *Խախրեւ*/Ḫaẖẖa նոյնացմամբ մենք գործ կ'ունենանք արեւի պաշտամունքի տեղանուանական դրսեւորման հետ, որովհետեւ *Խախրեւ* ձեւը ենթադրում է նախնական **Խախարեւ* ձեւից իր առաջացումը: Նոյնպիսի հնչիւնական անցումներ (շեշտակիր վերջնավանկին նախորդած միջնաձայն ***ա***ի հնչիւնափոխութիւն եւ սղում) տեղի են ունեցել հայերէն բազմաթիւ բառերում. հմմտ. *աշակերտ>աշկերտ, բաղանիք>բաղնիք, դադարել>դադրել, դարապաս> դարպաս, վարդապետ>վարպետ* եւն.: Աւելի հին են *Բագարատունի>Բագրատունի* (*Բագարատ* անձնանունից *-ունի* ազգանուանակերտ վերջաւորութեամբ) եւ *Սրմանց<*Սիրամանց* (*<սիրամ* «խայտաբղէտ մորթով կով կամ եզ») ձեւերը: *Խախրեւ* բնակավայրը այդպէս է կոչուել Խաթուսիլի Ա.ի տարեգրութեան մէջ յիշատակուած «Արեւի աստուածութեան երկրներ»ից մէկում գտնուելու, արեւի աստուածութեան պաշտամունքի կենտրոն լինելու պատճառով: Մեր կարծիքով, **խախ*ը եղել է առաւօտեան արեւին տրուած մակդիր-մականուն եւ պահպանուած է Մշոյ, Ալաշկերտի եւ Կարնոյ բարբառների *խախանդ* «հանդարտ, հանգիստ» բառերում[22]: *Խախանդ* բաղադրիչնե-

---

[19] *Хрестоматия I*, էջ 265:

[20] В. Хачатрян, *Восточные провинции Хеттской империи*, Երեւան, 1971, էջ 53. նաեւ՝ Վ. Խաչատրեան, *Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում*, ՀՀ ԳԱԱ Ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտ, Երեւան, 1998, էջ 35-6, 42: Խախա քաղաքի տարբեր տեղորոշումները՝ համապատասխան գրականութեան յղումով տե՛ս՝ Քոսեան, էջ 51-2:

[21] Ա-Դօ, *Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայէթները*, տպարան «Կուլտուրա», Երեւան, 1912, էջ 86. նաեւ՝ Թ. Յակոբեան, Ստ. Մելիք-Բախշեան, Յ. Բարսեղեան, *Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, հտր. II*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1988, էջ 629:

[22] *Հայ ժողովրդական հեքիաթներ, հտր. X*, ՀՍՍՀ ԳԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ, Երեւան, 1967, էջ 608, *հտր. XIII*, Երեւան, 1985, էջ 516.

րից բաղկացած բառի *-անդ* վերջածանցի համար հմմտ. *աղանդ, աւանդ, եռանդ, մարմանդ* բառերի համապատասխան վերջածանցները: *Խախ* արմատի ծագումը յայտնի չէ, սակայն *խախանդ* բառն իր հնդեւրոպական *-անդ* վերջածանցով, կարծես, յուշում է որ իր *խախ-* բաղադրիչը եւս շատ հին արմատ է՝ թերեւս նոյնպէս հնդեւրոպական կամ բնաձայնական ծագում ունեցող:

Հայ ժողովրդական հաւատալիքների համաձայն, ցերեկուայ երկիր-երկինք-երկիր յոգնատանջ շրջագայութիւնից յետոյ Արեւը գնում է հանգստանալու մօր գիրկը՝ մայր է մտնում: Հեքիաթներից մէկում՝ «*եկաւ Արեգակն բոցերով, մտաւ աւուզը (ջրաւազանը - Ս.Պ.), աստղերն արթնացան, ոտքի վրայ բարեւի կայնեցան. թագուհին (Արեւամայրը - Ս.Պ.) գրկեց, վեր հանեց ջրէն Արեգակը եւ պառկեցուց անկողինը՝ իր ծոցը ու ծիծ կու տար՝ անհնանալի, անծերանալի, մշտամանուկն Արեգակ*»[23]: Սրան պաշտած մարդիկ, անտարակոյս լինելու էին նախեւառաջ Վանայ լճի արեւմտեան ափի բնակիչները, որոնք առաջինն էին տեսնում ծովածին արեւի երեւումը: Այդ ժամանակներից հազարամեակներ անց Վանայ լճի արեւմտեան ափին արեւածագը դիմաւորողների մէջ եղած Գարեգին Սրուանձտեանցը դրա հետեւեալ նկարագրութիւնն է մեզ աւանդել.

> Արշալոյսէն առաջ ելանք, թողլով Դատուան եւ իւր բերդն ու ծովածոցը…եւ ահա հովն հանդարտօրէն շարժեցաւ, ոսկեղէն շողեր տեսնուեցան ալեաց շղարշատես ծալքերէն, առագաստի հարսի մը պէս ի հանդերձս ոսկեհուռ զարդարեալ եւ պաճուճեալ. երեւեցան Օգոստոսի օգոստափառ արեգական ճառագայթները, հրեղէն վրանը (երկինքը - Ս.Պ.) դեղին լոյսով ներկեալ արկաւ Վարագէն մինչեւ Մոկաց լեռները, որոյ ներքեւ կը մնային Վանը, Հայոց Ձորը, Ռշտունիքը եւ երեւոյթն ամբողջ ծովուն՝ իբր յատակ փռուած վրանին, կապոյտով ու դեղինով, ոսկեթէլ գործած. կակու՛ղ գորգ, որուն վրայ դրաւ լոյսն իր ոտները. բարձրացա՛ւ արեգակն[24]:

Հնում Վանայ լիճն յայտնի էր *Բզնունեաց* ծով անունով: Եթէ մեր նախնիները լճի անուանադրի պատուին արժանացրել էին Բզնունիք գաւառը, ուրեմն, նա լիճը շրջապատած գաւառներից ամենաանուանին է եղել: Բայց հայ մատենագիրների ապրած ժամանակաշրջաններում Բզնունիքը այդպիսի համարում չի ունեցել, այդուհանդերձ՝ հեթանոսական դարերում կարող էր ունենալ, որովհետեւ այդ դարաշրջաններում նա արեւի եւ արեւի աստծու պաշտամունքի կարեւոր կենտրոններից էր: *Բզնունիք* գաւառա-

---

նաեւ՝ Ռ. Գրիգորեան, «Գեղարքունիք», *Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն. նիւթեր եւ ուսումնասիրութիւններ, 14*, ՀՍՍՀ ԳԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ, Երեւան, 1983, էջ 77: Իմ մանկութեան եւ պատանեկութեան տարիներին՝ 1950ականներին Գիւմրիում *խախանդ* բառը նոյն իմաստներով (նաեւ բայական *խախընդաւ, խախընդուան* ձեւերով) գործածւում էր:

[23] Գ. Սրուանձտեանց, *Երկեր, հտր. I*, ՀՍՍՀ ԳԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ, Երեւան, 1978, էջ 494:

[24] Նոյն, էջ 372:

նունն արդէն ենթադրում է գաւառի արեւապաշտութեան կենտրոններից լինելու հանգամանքը: Նրա անուան եւ *Բզնունի* տոհմանուան հիմքում (հակառակ Մովսէս Խորենացու աւանդած ժողովրդական ստուգաբանութեան) ոչ թէ *Բազ* անձնանունն է, այլ *բուզի* բառը. *Բզնունի*<***բուզին-ունի*: *Բուզի*ի բացատրութիւնը «*Բուզի*-արեգակն» է[25]: Հմմտ. *-ի* վերջածանցը բուսական եւ կենդանական աշխարհներին վերաբերող *այգի*, *բարդի*, *մայրի*, *հացի*, *գոճի*, *մոզի*, *ջորի* եւ այլ բառերում: *Բուզի* բառի արմատը նոյնն է հնդեւրոպական ծագումով *բուժ* «կաթնկեր գառնուկ կամ ուլիկ» բառի հետ: *Բուզի* բառում ***ծ***ի փոխարէն ***զ***ի առկայութիւնը պէտք է բացատրել վերջինիս երկու ձայնաւոր հնչիւնների միջեւ գտնուելու հանգամանքով, ինչպէս ունենք, օրինակ, *մոզի* բառի ***զ***ի դէպքում: *Բուզի* եւ *բուժ* բառերի արմատակիցներ լինելու հանգամանքը զարմանալի չի թուայ, եթէ նկատի առնենք իմաստային նոյնպիսի զարգացման հետեւանքն արձանագրած եւ վաղ հնդեւրոպական DY արմատից ծագած ազգակից լեզուների բառերը: Դրանց մի մասը ունեն «այծ», «այծենի», «տիկ», «պարկապզուկ», իսկ միւս մասը՝ «աստուածութիւն», «լոյս», «ամպրոպ» եւն. իմաստներ[26]: Հմմտ.՝ հայ. *տիկ* «տկճոր, պարկապզուկ» (<«այծ») եւ *տիւ* «ցերեկ, օրուայ լուսաւոր մասը»:

Արեւի եւ Վանայ լճի սերտաճած պաշտամունքի բաղադրիչներից է եղել առասպելական արեւատար թռչնի պաշտամունքը: Վանայ լիճը վերեւից (Սիփանի՞ց) դիտուած յիշեցնում է գլուխն հիւսիս-արեւելք ուղղած եւ թռիչքի պատրաստ թանձրամարմին թռչուն՝ անշուշտ ծովային թռչուն: Առասպելական մի հսկայ թռչնի վերաբերող զրոյցի համաձայն, ծովից ծագող արեւը կարող է այրել երկիրը, եթէ թռչունն իր հսկայական թեւերով նախօրօք հովանի չանի եւ չուղեկցի արեւին մինչեւ իր ուղու բարձրակէտը: Արեւի սաստիկ ջերմութիւնից իր թեւերն այրած թռչունը այնտեղից կիսակենդան ընկնում է ծովը: Այստեղ նա զովանում է, ծովի ջուրը բուժում է նրա թեւերը եւ յաջորդ արեւածագին կազդուրուած թռչունը կրկին անցնում է երկրին հովանի անելու իր առաքելութեանը[27]: Կարծում ենք, որ առասպելական այս թռչնի նախատիպը եղել է Վանայ լճի գծագրութեանը նման մարմնակազմ ունեցող հաւալուսն թռչունը: Նրա երկու տեսակներն էլ՝ վարդագոյնն ու գանգրահերը դեռեւս հանդիպում են ՀՀ տարածքում եւ աչքի են ընկնում 3 մետրի հասնող թեւերի բացուածքով, «*երկայն, տափակ կտուցով, որի տակ*

---

[25] *Բառգիրք հայոց*, քննական բնագիրը, առաջաբանը եւ ծանօթ.՝ Յ. Ամալեան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., «Մատենադարան», Երեւան, 1975, էջ 58:

[26] Н. Д. Андреев, *Раннеиндоевропейский праязык*, Մոսկուա, 1986, էջ 86-7:

[27] Ա. Ղանալանեան, *Աւանդապատում*, ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղեանի անուան գրականութեան ինստիտուտ, Երեւան, 1969, էջ 3-4: Թռչնի նկարը տե՛ս՝ Հ. Մարտիրոսեան, Հ. Իսրայէլեան, *Գեղամայ լեռների ժայռապատկերները, «Հայաստանի հնագիտական յուշարձանները, 6, ժայռապատկերներ», պրակ II*, ՀՍՍՀ ԳԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ, Երեւան, 1971, նկ. 290:

կախուած է շատ մեծ մորթէ պարկ»[28]: Սա այն թռչունն է, որը կոչուել է նաեւ *թոնձ*, *փորահաւ*, *դարաբ*, *արօս*:

Հայոց մի աւանդութիւնում ասւում է, որ որդուն եւ ամուսնուն կորցրած «*խեղճ կինը դառնում է հաւալասան (հաւալուսն - Ս.Պ.) թռչունը: Նա թռչում է շարունակ ու ողբագին կանչում, եւ հանգիստ է առնում միայն այն ժամանակ, երբ սրտից երեք կաթ արիւն է կաթում*»[29]: Յունական առասպելներից մէկի համաձայն, Յունաստանում Թեսալիայի Կէիքս արքայի կինը՝ Ալկիոնը, ծովն էր նետուել, երբ սիրելի ամուսինը նաւարկութիւնից չէր վերադարձել: Աստուածները նրան ու ամուսնուն հաւալուսն (յուն. ±αλκυών) էին դարձրել[30]: Ամուսնական մի զոյգ էլ կազմել էին Վան քաղաքում (Ṭušpa//Sոuպ) պաշտուած ուրարտական դիցարանի Խուտուինի եւ Աւի աստուածութիւնները: Սրանցից Ꞑutuin Ա.ի անունը, ըստ երեւոյթին, նոյնպէս հաւալուսն է նշանակում (հմմտ. «*Խոթ. ըստ ոմանց է անուն թռչնոյ. որպէս աղկիովն, կամ արտուտ ծովեզերեայ*» եւ *աղկիոնիդաս աւուրք* կամ *խոթական ժամանակ*, այսինքն՝ աղկիոն//*խոթ*)[31], իսկ իր կնոջ Aꞑi անունը (<*aꞑ-i) արմատակից է հնդեւրոպական ծագումով հայերէն *հաւ* բառի[32]:

Հաւալուսնին Վասպուրականում *արօս* էին կոչում եւ սուրբ թռչուն համարում: Վանի նահանգի Արճակ գաւառի Գիազնա կիրճը սատանաների բնակութեան վայր էր համարւում, բայց նրա «*ժայռերի ծերպերին իրենց բոյնն էին հիւսում ծանրամարմին եւ ազգաբնակչութիւնից սրբացուած արօս կոչուող թռչունները: Աններելի մեղք էր համարւում ոչ միայն արօսի ձագ գողանալը, այլեւ անգամ նրա բնին ձեռք տալը, քանի որ այն կարծիքը կար, որ իբր մայր արօսը, երբ հեռուից նկատում է, թէ իր բնին մարդ է մօտեցել, ինքը սկսում է իր կուրծքն այնքան խփել ժայռերին ու փրորուել ժայռի վրայ, մինչեւ սատկում է: Մէկի վիշտը, ողբը նկարագրելիս ասում էին՝ «Արօսու պէս ուր դոշ (կուրծքը - Ս.Պ.) վեր քարերաց կը փրորի: Հաւատում էին, որ Գիազնի չարքերն անգամ արօսներին չեն անհանգստացնում*»[33]:

---

[28] *Красная книга Армянской ССР. Животные*, Երեւան, 1987, էջ 37-3. նաեւ՝ Ստ. Մալխասեանց, *Հայերէն բացատրական բառարան, հտր. III*, Երեւան, 1944, էջ 79:

[29] Ղանալանեան, էջ 140:

[30] I. Becher, "Alkyone," *«Lexikon der Antike»*, VEB Bibliographisches Institut, Leipzig, 1985, էջ 27. նաեւ՝ М. Н. Ботвинник, "Алкиона," *«Мифология. Золотой фонд. Энциклопедия»*, Մոսկուա, 2003, էջ 31:

[31] Հ. Գաբրիէլ Աւետիքեան, Հ. Խաչատուր Սիւրմէլեան, Հ. Մկրտիչ Աւգերեան, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հտր. I*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1979, էջ 956:

[32] Ս. Պետրոսեան, «Վանեան աստուածութիւնների երկրորդ զոյգը», *Շիրակի պատմամշակութային ժառանգութիւնը, Հանրապետական VI գիտական նստաշրջանի նիւթեր*, Գիւմրի, 2004, էջ 18-21:

[33] Սերինէ Աւագեան, «Արճակ», *Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն. նիւթեր եւ ուսումնասիրութիւններ, 8*, ՀՍՍՀ ԳԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ, Երեւան, 1978, էջ 88-89:

Այս թռչնի *արօս<արաւս* (<**արաւ-ս*, որտեղ *–ս* վերջնաձայնը աճական է) անունը արդէն ցոյց է տալիս նրա առնչութիւնը արեւի պաշտամունքին: Նրա **արաւ* հիմքը նոյնական է հ.-ե. *reu̯- արմատից ծագած *արեւ, արեգ* բառերի (վերին ձայնդարձ) եւ *յարագել* բայի (ստորին ձայնադարձ) **արագ* հիմքի հետ: Վերջինի առթիւ Հրաչեայ Աճառեանը գրում է. «*յ* նախդիրով ունինք հին եւ ընտիր մի բառ՝ *յարագել* «արեւի առաջ դնել»[34]: Նոյն այս հիմքն ենք տեսնում *արագիլ* թռչնանուան մէջ. *արագիլ*<**արագ-իլ*, որտեղ *–իլ* վերջածանցը ծագած է հ.-ե. *-elo/*-ilo- նախածեւից. հմմտ. նոյն նախածեւից ծագած վերջածանցները *բորեղ, մաթիլ, որջիլ, տառեղն* եւ այլ կենդանիներ նշող բառերում: Փաստօրէն *արագիլ* թռչնանունը եւս «արեւային» ստուգաբանութիւն ունի: Գրաբարում *արագիլը* նախ «ձկնկուլ, ծովային ճայ» է նշանակել, ապա՝ «արագիլ, լագլագ»[35]: Ըստ երեւոյթին, *արագիլ* բառը *ձկնկուլի* նման, գործածուել է հաւալուսն ջրլող ու ձկնակեր թռչունին եւս նշելու համար:

Հաւալուսնի պաշտամունքի տեսանկիւնից ուշագրաւ են նաեւ Վանայ լճի կղզիներից երկուսի անունը: *Աշխարհացոյց*ում կարդում ենք. «*Եւ Բզնունիք ունի յիւր հոմանուն ծովէն կղզիս երեք՝ զԱրծկեոյն, զԾիպանին եւ Տոքեանն, որոյ ըստ հարաւոյ ի մէջ լերինն Տաւրոսի եւ ծովու՝ գաւառ Երեւարք*»[36]: Այս կղզիներից Ծիպանին կամ Ծիպանը գտնւում էր Վանայ լճի արեւմտեան ափի դիմաց, որտեղ Խաթուսիլի Ա.ը յիշատակում էր նոյնական անուն կրած Խախա երկրի Zipasna քաղաքը: Այստեղ է *Ադաբաղ* հրուանդանը[37], որի անունը բացայայտում է կղզու եւ հրուանդանի երբեմնի միասնութեան փաստը (*Ադաբաղ*<թրք. *ադա* «կղզի» եւ *բաղ* «այգի»): Իդէպ, այս կղզում կամ նրան յարած հրուանդանի տարածքում էր գտնուելու միջնադարեան *Ծպնայ անապատը*[38], որի անունը (Ծպնայ< Ծիպանայ) եւս կապ ունի կղզու *Ծիպան/Ծիպանայ* եւ Խաթուսիլի Ա.ի յիշատակած Zipasna քաղաքի անունների հետ: Վանայ լիճը յայտնի էր իր մակարդակի տատանումներով[39]: Ահա թէ դրանցից մէկի վերաբերեալ ինչ է պատմել Կտուց կղզու (լճի հիւսիս-արեւելեան ափի մօտ) վանահայրը.

---

[34] Հ. Աճառեան, *Հայերէն արմատական բառարան, հտր. I*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1971, էջ 311:

[35] Աճառեան, *հտր. I*, էջ 292-93:

[36] *Աշխարհացոյց*, էջ 107-8:

[37] Նոյն, էջ 56:

[38] Նոյն:

[39] Ա-Դօ, էջ 13-4:

1892 եւ 1893 թուերին լճի ջուրը այնքան նուազել էր, որ կղզին միացել էր ցամաքին եւ ուխտաւորները սայլերով ուղիղ գնում էին վանքը, իսկ 1896 թուի կոտորածների ժամանակ լճի ջուրը արդէն այնքան էր բարձրացել, որ կղզին անջատուել էր ցամաքից եւ շնորհիւ այդ բանի գազանացած քրդերը անկարող եղան մտնել այնտեղ…[40]:

Ծիպան տեղանուան հիմքում հայ. *ծիպ/ծիփ* եւ *նայ* «թաց, խոնաւ» (<հ.ե. *snā- «հոսել, հեղուկ») բառերն են: Սրա արմատակիցներից են. յուն. νᾶμα «հոսուն ջուր, ակունք», νοτία «խոնաւութիւն, անձրեւ», աւեստ. snā «լուանալ», հին հնդկ. snā «լողանալ, լուացուել», լատին. nare/natāre «լողալ», իռլ. snuadh «գետ» եւն.[41]: Երբ նկատի ենք առնում հ.-ե. *sn-> հայ. *ն* օրինաչափ անցումը (հմմտ. դրա դրսեւորումները *նեարդ, նու, նուրբ* բառերում), ապա Zipasna/Ծիպան(-այ) համարժէքութիւնը դառնում է ակնյայտ: Քննարկուող տեղանուան առաջին բաղադրիչ *ծիփ/ծիպ*/zipը իր արմատակիցներն ունի իդէմս *ծիփիկ* (<ծիփ-իկ) «փոքր վառեկ, հաւի ձագ» եւ նոյնիմաստ *ծիպ-ծիպ* (ունի *ծիկ-ծիկ* հնչիւնական տարբերակը) բառերի[42]: Սրանցից վերջինները գործածուելով նաեւ որպէս «այն ձայնը, որով կանչում են հաւի ձագերին»[43], ցոյց են տալիս *ծիպ/ծիփ* արմատի բնաձայնական լինելը: Zipasna տեղանուան երկրորդ բաղադրիչը՝ -sna, խօսում է այն մասին, որ տեղանուան դէպքում գործ ունենք ոչ թէ ընտանի հաւի, այլ ջրլող թռչնի հետ: Դա լինելու էր հաւալուսնը:

Հաւանաբար, Վանայ լճում հաւալուսն թռչունների մի հաւաքատեղի եղել է Ծիպան կղզին, իսկ միւսը՝ լճի հիւսիսարեւմտեան մասի Չքատան կղզին՝ յետագայում կոչուած Կտուց[44] (հաւալուսնի մեծ կտուցի պատճառո՞վ): *Աշխարհացոյց*ում կարդում ենք. «*զԱռբերանի [գաւառ] ելից ծովուն Բզնունեաց, յորում կղզիք Չքատան եւ Լիմն, ցամաքակղզին Ամիւկ, եւ Առեսպաւան, ուստի ելանէ [գետեխ] ձուկն*»[45]: Ինչ վերաբերում է Խաթուսիլի Ա.ի յիշատակած Zipasna բերդաքաղաքին, ապա այն գտնուելու էր Ծիպանա կղզու շարունակութիւնը կազմած հրուանդանի բարձրադիր մասում՝ հաւալուսն թռչունների հաւաքատեղիին կից:

**

Վերեւում տեսանք, որ հասուսացիները դժգոհ լինելով իրենց ցեղապետ արքայից, սրան գահընկեց էին արել, իսկ սա ինչ-որ չբացայայտուած հանգամանքներում (տարեգրութիւնն այստեղ լռում է) յայտնուել էր խէթ թագաւորի մօտ: Խաթուսիլի Ա.ը գլխատել էր նրան, իսկ Հասուսան նուաճելուց յե-

[40] Նոյն, էջ 13:
[41] Աճառեան, *հպր. III*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1977, էջ 426:
[42] Աճառեան, *հպր. II*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1944, էջ 338, 340:
[43] Աճառեան, *հպր. II*, էջ 338:
[44] *Աշխարհացոյց*, էջ 45, 109:
[45] *Աշխարհացոյց*, էջ 109:

տոյ շարունակել էր արշաւանքը, բայց արդէն Հասուայի հարեւան եւ դաշնակից Խախա երկրի դէմ: Տարեգրութեան մէջ դրա առթիւ ասւում է. «*Զիպասնա քաղաք ես գնացի: Եւ գիշերը ես բարձրացայ Զիպասնա քաղաք: Եւ ես նրանց հետ մարտնչեցի: Եւ նրանց կապկպած ես տարայ: Եւ արեւի աստուածութեան երկրները ես մտայ*»[46]: Մէջբերման վերջին նախադասութիւնը իր տեղում չէ: Դա պէտք է լինէր պարբերութեան սկզբում եւ խէթ դպիրը իր կատարած բացթողումն հասկանալով, ստիպուած է եղել բաց թողածը զետեղել այդտեղ: Դրանով միտքը կրկնուել է. «*Եւ ես՝ Տաբարնաս, Զիպասնա քաղաք մտայ*», ապա՝ «*Խախա քաղաքին ես՝ որպէս առիւծ, կատաղի հայեացքով նայեցի*»[47]: Այդուհանդերձ, սա ուղղակի ցուցում է, որ Զիպասնա եւ Խախա քաղաքները գտնուել են «Արեւի աստուածութեան երկրներից» մէկում: Զիպասնա քաղաքի անունը երրորդ անգամ Խաթուսիլի Ա.ը տալիս է նրա գրաւման առիթով. «*Եւ Զիպասնա քաղաքը ես աւերեցի եւ նրանից աստուածներին վերցրի եւ դրանք տուեցի Արիննա քաղաքի Արեւի աստուածութեանը: Եւ Խախա քաղաք ես գնացի*»[48]:

Զիպասնայից յափշտակած կուռքերը խէթական Արեւի դիցուհու տաճարին նուիրելիս, Խաթուսիլի թագաւորը, բնականաբար, նկատի էր առել դրանց Արեւի աստծու պաշտամունքին առնչուած լինելու հանգամանքը:

Խաթուսիլի Ա.ի խէթական բանակը Զիպասնա քաղաքից յետոյ գրաւել էր Խախա երկրի նոյնանուն արքայանիստ քաղաքը: Սրա գրաւման մասին խէթ արքան իր տարեգրութեան մէջ ասում է. «*Եւ Խախա քաղաք ես մտայ: Խախա քաղաքի դարպասների մօտ ես երիցս մարտ տուեցի եւ Խախա քաղաքը ես ոչնչացրի: Նրա ունեցուածքն էլ վերցրի եւ իմ քաղաք Խաթուսա ուղարկեցի: Երկու սայլ բեռնուած արծաթով: Մէկ ծածկով կառք, մէկ արծաթեայ անկողին, մէկ ոսկէ սեղան, մէկ արծաթէ սեղան՝ Խախա քաղաքի աստուածների, մէկ արծաթէ ցուլ, մէկ նաւ, որի քիթը ոսկեպատ էր մեծ արքայ Տաբարնաս (նոյն ինքը՝ Խաթուսիլի Ա.ը - Ս.Պ.) տարաւ Խախա քաղաքից եւ տուեց Արեւի դիցուհուն*»[49]: Յստակ չէ, թէ յափշտակած թանկարժէք իրերից որոնք ո՞ր աստծուն են ձօնուած եղել: Պատճառն այն է, որ դրանք բոլորը, ըստ երեւոյթին, միեւնոյն տաճարից են տարուել: Այդ դէպքում մնում է ենթադրել, որ Խախա քաղաքի գլխաւոր տաճարը ձօնուած է եղել Ամպրոպի եւ Արեւի աստուածների միասնական պաշտամունքին: Կասկած լինել չի կարող, որ Արեւի աստուածութեանն են պատկանել ինչպէս «մէկ ոսկէ սեղան»ը, այնպէս էլ «մէկ ոսկեպատ քթով նաւ»ը: Այս վերջինի՝ Խախա քաղաքից տարուելու հանգամանքը վկայում է, որ Խախա քաղաքի որոնումները Վանայ լճից հեռու՝ անհեռանկար է: Կարծում ենք, որ «ոսկեպատ

[46] *Хрестоматия I*, էջ 264:
[47] Նոյն, էջ 265:
[48] Նոյն:
[49] Նոյն, էջ 265:

քթով նաւ»ը նախատեսուած է եղել Վանայ լճում ծնուող Արեւի աստծու ծիսական նաւարկութեան համար:

Խաթուսիլի Ա.ի տարած աւարի մէջ կարելի է առանձնացնել նաեւ Խախա քաղաքի Ամպրոպի աստծուն պատկանած «մէկ արծաթէ անկողին»ը, «մէկ արծաթէ սեղան»ը, «մէկ արծաթէ ցուլ»ը: Վերջինի առթիւ նկատենք, որ Մերձաւոր Արեւելքի շատ երկրների նման Հայկական Լեռնաշխարհում եւս ցուլն համարւում էր Ամպրոպի աստծու սրբազան կենդանին եւ խորհրդանիշը[50]: Խախայից տարուած երկու սայլաբեռ արծաթը եւս, ամէնայն հաւանականութեամբ, Ամպրոպի աստծուն ձօնուած ծիսական նպատակներով գործածուած իրերից է բաղկացած եղել: Ինչպէս ոսկին էր համարւում՝ իր գոյնի պատճառով, Արեւի աստծուն ձօնուած մետաղ, այնպէս էլ արծաթն էր՝ իր գոյնի պատճառով (կայծակի նման) համարւում Ամպրոպի աստծուն ձօնուած մետաղ: Առասպելաբանական վերջին զուգադրման տեսանկիւնից ուշագրաւ է Սրուանձտեանցի այն վկայութիւնը, որը վերաբերում է պատմական Անգեղտուն գաւառի Արկնոյ Ս. Աստուածածին վանքին: Ահա դա. «*Ս. Տաճարին մէջը ճրագ մը տեսանք վրան արծաթ մէջը հողէ, զոր կը վառեն* կայծակի *օրերը, եւ կ'անուանեն «արնէ ճրագ,* կայծակի *ճրագ», վանքն իր դիրքով յաճախ ենթակայ է* կայծակի: *Այդ ճրագի արծաթին վրայ գրուած «Յիշատակ…ի յապահովութիւն տեղւոյս միաբանիցն ի* կայծական, *ի Ռ.Մ.Զ.»*[51]:

Արեւի եւ Ամպրոպի աստուածների զոյգով պաշտամունքը (անգամ միեւնոյն տաճարում) հնդեւրոպական ակունքներ ունէր՝ պայմանաւորուած հնագոյն հնդեւրոպական հասարակութեան երկմիասնական կառուցուածքով[52]: Հնդեւրոպացիների երկու գլխաւոր աստուածութիւններից առաջինը եղել է գերագոյն աստուածութիւն, պարզ երկնքի եւ արեւի աստուածութիւն, քրմական գործառոյթներով օժտուած եւ պտղաբերութեան հովանաւոր աստուածութիւն, իսկ երկրորդը՝ ոչ-գերագոյն աստուածութիւն, ամպրոպային երկնամերձ ժայռի ու կայծակի աստուածութիւն, ռազմական գործառոյթներով օժտուած եւ տնտեսական գործունէութեան ու պտղաբերութեան

---

[50] B.B. Piotrovsky, *Ourartou*, «Archaelogia Mundi» Les Ėditions Nagel, Genève-Paris-Munich, 1970, էջ 69, 128. նաեւ՝ Ս. Հմայակեան, *Վանի թագաւորութեան պետական կրօնը*, Հայաստանի ԳԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ, Երեւան, 1990, էջ 41-43: Խաթուսիլի Ա.ի Հասուայից տարած աւարի մէջ եղել են նաեւ ցուլի արծաթէ երկու արձաններ: Հաւանաբար, դրանք ձօնուած են եղել Թէշուբ//Ամպրոպի աստծու ուղեկից զոյգ ցուլերին (Герни, էջ 127):

[51] Գ. Սրուանձտեանց, *Երկեր, հտր. II*, ՀՍՍՀ ԳԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ, Երեւան, 1982, էջ 413:

[52] Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов, *Индоевропейский язык и индоевропейцы. Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры, т. I-II,* Թբիլիսի, 1984, *հտր. 2*, էջ 776-86:

հովանաւոր աստուածութիւն[53]: Ըստ այսմ, հնդեւրոպական աւանդոյթը պահպանած Հայկական Լեռնաշխարհի ցեղային երկրներն ունենում էին երկու առաջնորդ արքաներ՝ քուրմ-արքայ եւ զինուոր-արքայ, բայց որոնցից գերագոյնի կարգավիճակը որոշում էր հասարակութիւնը՝ իր առաջնային պահանջարկներից ելնելով:

Խախա երկրում Արեւի աստծու գերագոյն լինելը բխում է նրանից, որ նա մէկն էր Վանայ լճի շրջակայքը բռնած «Արեւի աստուածութեան երկրնե-ր»ից: Իսկ որ այդ աստծու հովանաւորեալը եղել է քուրմ-արքայ՝ պարզւում է հայոց հին աւանդազրոյցից, ըստ որի Բզնունի տոհմի հիմնադիրը որդին էր Հայկ նահապետի Մանաւազ որդու: Սա Հայկի քուրմ որդին էր՝ հասա-րակական եռեակ կազմած իր եղբայրներ հողագործ Արամանեակի եւ զին-ուոր Խոռի հետ: Աւանդազրոյցը վկայում է. Արամանեակը «*թողեալ զերկուս յեղբարց իւրոց՝ զԽոռ եւ զՄանաւազ ամէնայն աղխիւն իւրեանց ի կո-չեցեալն Հարք, եւ զորդի Մանաւազայ զԲազ. յորոց Մանաւազ ժառանգէ զՀարք, իսկ որդի նորա Բազ՝ յարեւմտից հիւսիսոյ զեզր ծովուն Աղւոյ, եւ զգաւառն եւ զծովն անուանէ իւրով անուամբ: Եւ ի սոցանէ ասեն լեալ զնահապետութիւնս Մանաւազեան եւ Բզնունեաց, եւ Որդունին անուան-եալ…*»[54]: Բզնունիք գաւառի՝ որպէս նախկին քրմապատկան տարածքի մա-սին վկայում է նաեւ Ե. դարում նրա կաթողիկոսական տիրոյթ[55] լինելու

---

[53] Նոյն, էջ 793-4: Երկուորեակների պաշտամունքը գալիս է մարդկութեան վաղա-գոյն հաւատալիքներից: Բաբելոնեան տիեզերաստեղծման առասպելի համա-ձայն, գերագոյն աստուած Մարդուկը երբ ստեղծեց երկինքը եւ նրան զարդարեց Կենդանակերպի 12 համաստեղութիւններով, սրանցից իւրաքանչիւրին յանձնա-րարեց յաջորդաբար՝ իւրաքանչիւրը 2000 տարի շարունակ, հսկել նրան: Առա-ջինն այդ պատուին էր արժանացել *Երկուորեակներ* համաստեղութիւնը, որում էր տեղի ունենում Գարնանային գիշերահաւասարը Ք.ա. 6030-3880ի միջեւ (Դ. Գ. Ռեդեր, *Мифы и легенды древнего Двуречья*, Մոսկուա, 1965, էջ 37): Պաշտամ-ունքում նախապէս երկուորեակներ (բայց տարասեռ) համարուել են արեւն ու լու-սինը (Ղանալանեան, էջ 5-7. նաեւ՝ Ս. Յարութիւնեան, *Հայ ժողովրդական հանե-լուկներ*, ՀՍՍՌ ԳԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ, Երեւան, 1965, էջ 7): Բայց երբ Սառցապատմանն յաջորդած (Ք.ա. Ժ. հազարամեակից սկսուած) հալոցքի տաք ու խոնաւ կլիման հետզհետէ տեղի տուեց չոր կլիմային, Հայկական Լեռնաշխարհի եւ յարակից շրջանների վաղագոյն հողագործների կեանքում, կարեւորուեց նաեւ անձրեւների դերը: Այսպիսի պայմաններում տեղի ունեցաւ Ամպրոպի աստծու դերի բարձրացումը եւ հնդեւրոպական նախամայր ժողովրդի պաշտամունքում նրա հաւասարեցումը ջերմութիւն ու լոյս յղող Արեւի աստծու դերին: Այդպիսով, այդ աստուածութիւններն սկսեցին ըմբռնուել նաեւ որպէս (երբեմն նոյնիսկ հակոտնեայհակամարտ) երկուորեակներ:

[54] *Մովսիսի Խորենացւոյ պատմութիւն հայոց*, քննական բնագիրը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, ԵՊՀ հրատ., Երեւան, 1981, գիրք Ա, գլ. ժբ:

[55] *Փաւստոսի Բիւզանդացւոյ պատմութիւն հայոց*, բնագիրը Ք. Պատկանեանի, ԵՊՀ հրատ., Երեւան, 1987, գիրք Գ, գլ. ը:

փաստը: Մեծ Հայքի թագաւոր Խոսրով Կոտակը (330-38) Բզնունի նախարարական տոհմը բնաջնջել տալուց յետոյ բռնագրաւել էր նրա տիրոյթ Բզնունիք գաւառը[56], որն այնուհետեւ յանձնուել էր եկեղեցուն: Ուրեմն, իսկապէս Խախա-Բզնունիքում ի սկզբանէ, ինչպէս հնդեւրոպական աւանդոյթն էր պահանջում, գերագոյնը զոյգ աստուածներից համարուել է Արեւի աստուածը, իսկ իշխանութեան առաջին դէմքը մնում էր նրա հովանաւորեալ քուրմ-արքան՝ Բզնունի տոհմի նահապետը:

Զոյգ աստուածները պաշտւում էին նաեւ հարեւան եւ դաշնակից Հասուայում, բայց գերագոյն աստուած այնտեղ համարւում էր Ամպրոպի աստուածը: Խաթուսիլի Ա.ի զինուորներն այստեղ կողոպտել էին երկու տաճար, որոնց յետին պատերը ոսկեպատ եւ արծաթապատ էին, իսկ դռները՝ ոսկուց ու արծաթից: Անշուշտ, այդ տաճարներից ոսկեպատած պատովն ու ոսկէ դռնովը ձօնուած է եղել Արեւի, իսկ արծաթապատած պատովն ու արծաթէ դռնովը՝ Ամպրոպի աստծուն: Տաճարների այդ զոյգը, հաւանաբար, գտնուել է Տարօնի Քարքէ լեռան շրջանում, որտեղ նախաքրիստոնէական դարերում գտնւում էին Գիսանէ եւ Դեմետր աստուածային եղբայրների տաճարները: Խախա-Բզնունիքի հարաւային հարեւան Ասուայում (յետագայ Երեւարք գաւառը) Ք.ա. ԺԵ. դարակէսին գործում էին առաջնորդներ Պիյաինարան եւ Կուկուլին[57], որոնցից առաջինը զինուորարքան էր՝ Ամպրոպի աստծու երկրային փոխանորդը, իսկ երկրորդը քուրմ արքան էր՝ Արեւի աստծու երկրային փոխանորդը[58]:

---

[56] Նոյն, Գ, ը: Այլ մեկնաբանութեամբ տե՛ս՝ Խորենացի, Գ, բ:

[57] KUB, XXIII, 11; XXIII, 14.

[58] Ս. Պետրոսեան, «Ասուա երկիրը եւ զոյգ առաջնորդների սոցիալական ինստիտուտը», *Պատմաբանասիրական հանդէս*, 3:2002, էջ 261-76: «Արեւ աստուածութեան երկրներից» մէկ ուրիշում՝ Վանայ լճի հիւսիս-արեւելեան ափերը բռնած Արամալիում (յետագայում Առբերանի գաւառ) նոյնպէս գոյութիւն է ունեցել զոյգ աստուածների պաշտամունքը: Դրանցից Ամպրոպի աստծու պաշտամունքի կենտրոնը եղել է սեպագրային Arṣaškuն (յետագայ Արճէշը. *Արճէշ<*արծ-էշ*, որում *արծ-* հմմտ. *արծ-աթ*), իսկ Արեւինը՝ Alniunսն: Սրանք երկուսն էլ աւերուել էին Սալմանասար Գ. ասորեստանցու բանակի ներխուժման ժամանակ Ք.ա. 859ին: Ուրարտու Թագաւորութեան հիմնադիր Արամէի յաջորդ Սարդուրի Ա.ը (Ք.ա. 845-25) աւերուած Ալնիունուի «սուրբ» քարերը փոխադրելով Վանայ լճի արեւելեան ափ, կառուցեց Ṭušpa (Տոսպ, Վան) քաղաքի պարիսպը (Г. А. Меликишвили, *Урартские клинообразные надписи*, Մոսկուա, 1960, надп. N1. նաեւ՝ *ՀԺՊՔ, h. I*, էջ 39-40): Դրանց մասին աւելի մանրամասն տե՛ս՝ Ս. Պետրոսեան, «Ալնիունու քաղաքի եւ Արեւաստծու դերը վաղ Ուրարտուի կրօնական քաղաքականութեան մէջ», *ՇՀՀ կենտրոնի «Գիտ. աշխ.»*, Գիւմրի, 2004:VII, էջ 11-8. նաեւ՝ նոյնի, «Արեւաստուածը վաղ Ուրարտուի կրօնական քաղաքականութեան մէջ», *Պատմաբանասիրական հանդէս*, 2005:3, էջ 232-47:

Հայ բանահիւսութեան տարբեր նիւթեր ցոյց են տալիս, որ զոյգով գործող արքաները կարող էին իրար մէջ բաժանել ոչ միայն երկրի իշխանութիւնը, այլեւ տարածքը: Հայ ժողովրդական հեքիաթների մի ամբողջ շարք պահպանել է դրա յիշողութիւնը: Դրանցից մէկում թագաւորը «*էրկու զաւակ կ'ունենայ, մեծի անունը Պօղոս, պստիկինը՝ Պետրոս*», իվերջոյ «*բերին օծին թագաւոր, արեւելքին կողմին թագաւոր ըրին Պետրոսը, Պօղոսը մնաց արեւմուտքին կողմին թագաւոր*»[59]: Աւագ եղբայր Պօղոսը ամպրոպային երկուորեակն է, իսկ կրտսերը՝ արեւայինն է: Դա ցոյց է տալիս կրտսեր երկուորեակին տրուած «Պետրոսը շատ սիրուն էր» որակումը: Ուրեմն, արեւելեան կողմի թագաւոր արեւային երկուորեակ Պետրոսը սիրուն էր արեւմտեան կողմի թագաւոր ամպրոպային (ուրեմն նաեւ մռայլ) եղբօրից: Եղբայրների միջեւ նոյն տարբերութիւնը կայ նաեւ *Սասնայ ծռեր*ի երկուորեակների դէպքում: Դեղձուն Ծամի սիրոյ բացատրութեամբ նամակը յղուած էր աւագ՝ ամպրոպային եղբօրը, բայց նամակատարների մեղքով յայտնուել էր կրտսեր երկուորեակի ննջասենեակում[60]: Թիւրիմացութեան պատճառ էր դարձել այն, որ սա նրանից «տասնապատիկ դիա աղէկ» էր[61]: Դիւցազնավէպի առթիւ Մ. Աբեղեանը նկատել է տալիս, որ «*մեր նոր վէպն իր ոգով ու միջադէպերով եւս հնի արձագանգ է կրում իր մէջ: Այսպէս. Սանասարի եւ իր եղբօր հաստատուելը Տաւրոսի վրայ նոյնն է, ինչ որ Մամիկ-Կոնակի պատմութիւնը*»[62], բացի դրանից «*հին աստուածութեան կամ աստուածութիւնների անուններն այնուհետեւ փոխանակել են Մամիկոնեան նախնիների անուններին: Երկու տարբեր առասպելները շփոթուել են, եւ Գիսանեայ-Դեմետրի անունով պատմուել է Մամ-Կոնի զրոյցը*»[63]:

---

[59] *Հայ ժողովրդական հեքիաթներ, հտր. IV*, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1963, էջ 360-3:

[60] *Սասնայ ծռեր. ժողովրդական վէպ, հտր. I*, Պետական հրատ., Երեւան, 1936, էջ 142-3, 483-5, 536-9, 610-1, 849-50, 1033:

[61] Նոյն, էջ 143:

[62] Մ. Աբեղեան, *Երկեր, հտր. I*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1966, էջ 298:

[63] Նոյն, էջ 300: Ինչպէս երեւում է Սանասար եւ Բաղդասար, Գիսանէ եւ Դեմետր երկուորեակ եղբայրների մասին աւանդազրոյցների օրինակով, դրանք աւելի հին են, քան հնդեւրոպական եռադասութեան արդիւնք աւանդազրոյցները նրանց որդիների կազմած եռեակների՝ Վերգօ, Յովան, Մեծ Միեր եւ Կուառ, Մեղտես, Հոռեան, մասին: Եռադասութեան սկզբունքի տարածումից յետոյ էլ երկուորեակների մասին աւանդազրոյցները պահպանուեցին շնորհիւ երկուորեակների կերպարների եւ կառամարտիկ զոյգի կերպարների համադրման, ապա վերջիններիս եւ հեծեալների զոյգի նոյնացման: Դրա արձագանգներն առկայ են անգամ հայ ժողովրդական քրիստոնէութեան մէջ, որտեղ երբեմն զոյգ հեծեալների տեսքով են հանդէս գալիս մեծ ժողովրդականութիւն վայելող սրբերը: Օրինակ, Տերսիմի Սալահունեաց գաւառի Այղր լճի վերաբերեալ «*Ասում են, թէ Ս. Սարգիսն ու Ս. Գէորգը հեծած այս ջրերի մէջ ապրող իրենց ձիերին, խելայեղ թափով հասնում են այն-*

Մինչեւ Հասուա երկրի դէմ ձեռնարկած արշաւանքին անդրադառնալը, Խաթուսիլի Ա.ը համառօտ նկարագրութիւնն է արել Հասուայի եւ Խալպայի միացեալ բանակների դէմ իր տարած յաղթանակի, ապա թուարկել յաղթանակի շնորհիւ իր ձեռք բերած աւարը: Թուարկումն սկսւում է «Արմարուքի Ամպրոպի աստծու պատկերով» եւ «Խալպա քաղաքի տէր Ամպրոպի աստծու պատկերով», որոնց հետեւում է այլ աստուածութիւններինը[64]: Անկասկած յաղթող խէթ արքան պարտուած երկրների կուռքերը թուարկում է ըստ այդ երկրների ունեցած կարեւորութեան: Ասել է թէ, առաջինը լինելու է Հասուայի գերագոյն աստուածը, որ այստեղ հանդէս է գալիս ինչ-որ Արմարուքի (Armaruk) առնչութեամբ: Մեր կարծիքով, Arm-ar-uk բաղադրիչներով կազմուած այս բառի առաջին բաղադրիչը՝ **արմ*ը, հայերէն զուգահեռն է հին յունարէն ἅρμα «ձիակառք, մարտակառք» [65] բառի: Հայկական Լեռնաշխարհում մարտակառքի եւ նրա նախատիպ երկանիւ ձիասայլի շատ վաղ գործածութեան մասին խօսում են Հայաստանի ժայռապատկերները[66]: Իսկ մեր **արմա*ի զուգահեռներից են նաեւ հայ. *յարմար* բառի *արմ* հիմքը, յուն ἁρμός «կցուածք, յաւելուած», լատին. arma «յարմարանք, սարք», աւեստ. arəm «յարմար, համապատասխան» եւ հին սլաւ. jarĭmŭ «լուծ» (որից՝ ռուս. ярем, ярмо «լուծ, լծասարք») բառերը[67]: Հայ. *յարմար* բառը կազմուած է **արմ* հիմքին *յ* նախդիրի եւ *-ար* վեր-ջածանցի յաւելումով [68] : Բերուած բոլոր բառերը կազմուել են հ.-ե. **ar-* «կցորդել, միացնել, արուեստով յօրինել» արմատից *-m* ա-ճականով[69]: Մեր բառի *-ար* վեր-ջածանցի համար հմմտ. *արդ-ար, գալ-ար, դալ-ար, կեր-ակ-ար* եւն.:



փեղ, ուր գլուխ է բարձրացնում եւ աւերներ է գործում չարը» (Ղանալանեան, էջ 86):

[64] *Хрестоматия I*, էջ 264:

[65] *Древнегреческо-русский словарь, т. I*, Մոսկուա, 1958, էջ 236:

[66] Գ. Կարախանեան, Պ. Սաֆեան, *Սիւնիքի ժայռապատկերները, «Հայաստանի հնագիտական յուշարձանները, 4, ժայռապատկերներ»*, ՀՍՍՀ ԳԱ. Երեւան, 1970, նկ. 117-V եւ 276-II:

[67] Гамкрелидзе, Иванов, *հտր. II*, էջ 723, 731. նաեւ՝ Աճառեան, *հտր. III*, էջ 389-90:

[68] Նոյն, էջ 387-8:

[69] Աճառեան, *հտր. III*, էջ 388:



Կառամարտիկ զոյգի եւ երկուորեակների կերպարների համադրման բազմաթիւ օրինակներից նախ անդրադառնանք **արմ* հիմքին առնչուող հեքիաթային զոյգի *Արմէն* եւ *Զարմէն* անուններին: Արցախեան «Արմէնը նաեւ Զարմէնը» հեքիաթից [70] յայտնի երկուորեակ այս եղբայրների անձնանունների *-են* բաղադրիչները արտացոլում են *-ին* վերջածանցի (հմմտ. *ամուսին*, *գետին*, *դեղին*, *Լուսին*, *խորին*, *սպորին* եւն.) աւելի հին ձեւը: Այս երկուորեակների անունների շատ հին լինելու մասին խօսում է նաեւ *Արմէն*<**արմ-էն* անձնանուան երկուորեակ *Զարմէն*<**զ-արմ-էն* անուան մէջ նախաձայն ***զ***ի առկայութիւնը: Սա հայերէնի *զ-* սաստկական նախաձանցն է՝ առկայ նաեւ նոյնպէս շատ հին եւ նոյնարմատ *Զարմայր*<**զ-արմ-այր* անուան մէջ (տե՛ս՝ ստորեւ): *Արմէն* անուան *զ-* սաստկականով գործածումը՝ որպէս երկրորդ երկուորեակի անուն, թոյլ չի տալիս դա նոյնացնել «հայ» նշանակող եւ օտարների գործածած *արմէն* ցեղանուան հետ, որի գործածումը՝ որպէս անձնանուն Ի. դարից է (իդէպ, հեքիաթասացը՝ շուշեցի Փիրուզա Տէրյովիաննիսեանը ծնուել էր 1876ին)[71]: Հեքիաթում դարվիշի տուած խնձորի կէսը թագաւորն է կերել, միւս կէսը՝ թագուհին: Ծնուած երկուորեակներից աւագին տրուել է *Արմէն*, իսկ կրտսերին՝ *Զարմէն* անունը: Ըստ դրա, նրանցից աւագը՝ Արմէնը լինելու էր ամպրոպային եւ արեւմտեան երկուորեակը, իսկ կրտսեր Զարմէնը՝ արեւայինն ու արեւելեանը: Վերջինն արեւի պաշտամունքին առնչւում է իր հրեղէն ձիով եւ փրկիչի իր դերով (կենդանացնում է չար կախարդի քար դարձրած մարդկանց եւ եղբօրը՝ Արմէնին): Ուրախութեամբ որդիների վերադարձը դիմաւորած ծեր

[70] *Հայ ժողովրդական հեքիաթներ, հտր. V*, ՀՍՍՀ ԳԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ, Երեւան, 1966, էջ 142-148: *Արմէն եւ Զարմէն* հմմտ. *ամպ ու զամպ* (<զ-ամպ), *արդ ու զարդ* (<զ-արդ):

[71] Նոյն, էջ 685-7:

թագաւորը հրաժարւում է գահից, իսկ «*ուրան հարսփութիւնն էլ կէս ա անըմ, կէսը տամ Արմէնին, կէսն էլ՝ Զարմէնին, իշխանութիւնն էլ ուրանց տամ*»[72]:

Խաթուսիլի Ա.ի յիշատակած *Արմարուք*<arm-ar-uk բառի երկրորդ բաղադրիչը՝ -ar-, հայերէն *այր* (հոգն. *ար-ք*) «տղամարդ» բառի սեպագրային գրանցումն է լինելու. հմմտ. *եղբայր*>*եղբարք*, *հայր*>*հարք*, *մայր*>*մարք*: Այս դէպքում **ար-մար*ը իր կազմութեամբ յիշեցնում է *այրուձի, այրեւձի, առնուձի, առնեւձի* բառերը, որոնք նշանակում են «*արք հեծեալք ի ձի. գունդ ձիաւորաց, հեծելագունդ, հեծելազօր*»[73]: Arm-ar-uk բառի վերջին բաղադրիչը, ըստ երեւոյթին, վերարտադրումն է հայ. *-ոյք* յոգնակիակերտ վերջաւորութեան: Սրանով նշւում էին մարդկանց ինչ-ինչ խմբեր եւ առկայ է հին հայկական տեղանուններում եւս. հմմտ. *Երերոյք, Կաղանկատոյք, Մոգոյք, Երիցկոյք* եւն.[74]: Ըստ այսմ, arm-ar-uk// **արմա-րոյք*՝ «կառամարտիկներ»:

*Հնագոյն *արմար/ *արմայր* կազմութիւնը կարելի է տեսնել *զ-* սաստկական նախածանցի յաւելումով ստեղծուած *Զարմայր* անձնանուան մէջ[75]: Խորենացին Զարմայրին համարում է Տրովադայի պատերազմի մասնակից, գրելով. «*Զարմայր. սա օգնական Պռիամու ի Տեւտամայ առաքեալ ընդ եթովպացի զօրուն՝ մեռանի ի քաջացն Հելլենացւոյ*»[76]: Մենք ցոյց ենք տուել, որ «եթովպացի զօրք»ը վերաբերում է խէթական բանակում ծառայած հայ կառամարտիկներին[77]: Նրանց պէս վարձկան կառամարտիկներ խէթական բանակում կային նաեւ Հայասա-Ազիից եւ Հայկական Լեռնաշխարհի մանդա, սալա, խեմուա եւ այլ ցեղերից: Այս տեսանկիւնից ուշագրաւ են եգիպտական որմնանկարները, որոնք խէթական բանակի զինուորներին պատկերում են տարբեր մարդաբանական տիպերով[78]: Իգոր Դիակոնովը,

---

[72] Նոյն, էջ 148:

[73] *Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հտր. I*, էջ 99:

[74] Մկրտիչ Էմին, *Սփեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի պատմութիւն տանն Սիսական*, Մոսկուա, 1861, գլ. ՀԳ, էջ 373, 374, 377:

[75] Ս. Պետրոսեան, «Պատմականը՝ Զարմայր նահապետի մասին աւանդազրոյցում», *«ԳՊՄԻ հանրապետական գիտական նստաշրջանի նիւթեր», պրակ 2*, Գիւմրի, 2009, էջ 28-32:

[76] Խորենացի, Ա, լբ:

[77] Ս. Պետրոսեան, «Հայկական Լեռնաշխարհի հնագոյն կառքերի եւ կառամարտիկների մասին», *Վէմ. համահայկական հանդէս*, 4:2014, էջ 36. նաեւ նոյնի՝ «Զարմայր նահապետի եւ «Քաղդէացւոց» արքայացանկի մասին», *ՇՀՀԿ գիտ. աշխ.*, XVII:2014, Գիւմրի, էջ 59-61:

[78] Նոյն, էջ 59-61. նաեւ՝ O. R. Gurney, *Hetyci, państwowe Wydawnictwo Naukowe,* Warzawa, 1970, էջ 261, նկ. 56 a եւ b.: Խէթական բանակում ծառայող հայրենակիցների փաստը քաջ յայտնի էր մեր նախնիներին, ուստի երկրորդ անգամ Ազի ներխուժած Մուրսիլի Բ.ին ազիցիներն ասում էին, որ եթէ նա իրենց երկրում աւերածութիւններ չանի, ապա իրենք պատրաստ են նրան տրամադրելու հետիոտն զինուորներ եւ կառամարտիկներ (*KBo, IV*, 4, *ՀԺՊՔ, հտր. I*, էջ 11-13):

սալա եւ խեմուա ցեղերը տեղորոշում է Հայկական Լեռնաշխարհում՝ Եփրատի եւ Վանայ լճի միջեւ եւ կարծում, որ «*Զիակառքերի միջոցով մարտ վարելու արուեստը Փոքր Ասիա կարող էր մուտք գործել նաեւ շրջանցելով խուռիներին, օրինակ, Մանդա ցեղի կամ Սալա ցեղի նման ինչ-որ վարձկան զօրքի միջոցով*»[79]: Յիշուած ցեղերը Տարօնից էին, որովհետեւ նրանց ցեղային աւագանուց սերած հայկական նախարարական Մանդակունի եւ Սաղկունի/Սլկունի տոհմերը ժառանգական տիրոյթներ ունէին Տարօնում[80] եւ, ինչպէս Գրիգոր Ղափանցեանն էր նկատել տալիս, նրանք տարօնցի լինելով են միասին յիշատակւում թէ՛ Վաղարշակ թագաւորի կողմից նախարարութիւններ հաստատելու ժամանակ, թէ՛ Գահնամակում (47րդ եւ 48րդ գահերով), թէ՛ Զօրանամակում («Արեւմտեան դռան» 14րդ եւ 15րդ տեղերում)[81]:

Կառամարտիկ զոյգը, նրա զոյգ լծկան ձիերը եւ անգամ մարտակառքը այնքան կարեւոր դեր ունէին մեր նախնիների՝ յատկապէս զինուորական դասի կեանքում, որ նրանց վերագրուել են որոշակի հասարակական բնոյթ՝ որպէս հասարակութեան առաջատար բարձր խաւը ներկայացնող երեւոյթների: Հայերէն *կառավարիչ* բառը վաղուց իվեր գործածութեան մէջ է ժամանակին երկրորդական եղած իր այժմեան նշանակութեամբ, այնինչ՝ նրա բուն իմաստը *կառ-ա-վար-իչ* «կառք վարող» է: Մարտակառքի զինուորների զոյգի՝ որպէս աստուածային զօրութեամբ օժտուած անձանց, վերաբերեալ եղած պատկերացումները այնքան ամուր էին նստած մարդկանց ըմբռնումներում, որ յետագայում զոյգերով էին պատկերացնում նաեւ նրանց փոխարինելու եկած հեծելազօրայիններին: Ինչպէս հնագէտ Մ. Պոգրեբովան է նշում, ուրարտական բանակի հեծեալները՝ որպէս կանոն, գործում էին զոյգերով: Զոյգի մի զինուորը զինուած էր լինում նետաղեղով, իսկ միւսը՝ նիզակով ու վահանով[82]: Նիզակն համարւում էր Կայծակի եւ Ամպրոպի աստծու խորհրդանիշը, իսկ նետը՝ արեւի ճառագայթի եւ Արեւի աստծու:

---

[79] И. М. Дьяконов, *Предыстория армянского народа*, Երեւան, 1968, էջ 43:

[80] Ն. Ադոնց, *Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում. քաղաքական կացութիւնը ըստ նախարարական կարգերի*, «Հայաստան» հրատ., Երեւան, 1987, էջ 344-6:

[81] Նոյն, էջ 281-2, 292, 294. նաեւ՝ Գ. Ղափանցեան, *Հայոց լեզուի պատմութիւն (հին շրջան)*, Երեւան, 1961, էջ 45-6. նաեւ՝ Гр. Капанцян, *Историко-лингвистические работы к начальной истории армян. Древняя Малая Азия*, Երեւան, 1956, էջ 136-7:

[82] М. Н. Погребова, *Иран и Закавказье в Раннем железном веке*, Մոսկուա, 1977, էջ 138:



Ըստ Հայասայի դիցարանի աստուածներին յիշատակող խթական բնագրի, դիցանուանացանկում 13րդ եւ 14րդ տեղերը զբաղեցնում էին Karḫuṣa եւ Šilili աստուածները[83]: Սրանց անունների ստուգաբանութիւնները ցոյց են տալիս, որ նրանք եղել են կառամարտիկ աստուածներ[84]: Կառամարտիկները սրբացուելով երկինք էին բարձրացուել եւ նոյնացուել Երկուորեակներ համաստեղութեան զոյգ պայծառ աստղերի հետ[85], իսկ նրանց մարտակառքը նոյնացուել էր Մեծ Արջ (երբեմն նաեւ Փոքր Արջ) համաստեղութեան հետ: Այս համաստեղութիւնները հին հայերը *Սայլ* էին կոչում (մի կարծիքի համաձայն, բառը ծագում է հ.-ե. *ḱat- «կռուել, պայքարել» արմատից եւ ենթադրում է նախապէս հենց մարտակառքին վերաբերելու հանգամանքը)[86]: Մարտակառքի զոյգ ձիերը *Սասնայ ծռեր*ի Քուռկիկ Ջալալիի նման, նախ ծովածին ու երկրային են համարուել: Նրանց այդպիսին ըմբռնուելու հետեւանք է Վանայ լճի հակադրամիասնական ընկալուած հիւսիսային ափի սեպագիր Ziuqu-(ni) երկրանունը (Ziuqu - <*Ձիուկ, սեռ. հոլ. *Ձիուկոյ*) եւ հարաւային ափի *Երեւարք* (հմմտ. *երիվար* «լաւ ձի») գա-

---

[83] *KUB.* XXVI, 39.

[84] Ս. Պետրոսեան, *Դասերը եւ եռադասութեան դրսեւորումները հին Հայաստանում*, ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտ, Մեսրոպ արք. Աշճեան մատենաշար, 21, Երեւան, 2006, էջ 130-131. նաեւ նոյնի՝ «Հայկական Լեռնաշխարհի հնագոյն», էջ 31-34:

[85] Յիշենք հին յունական Դիոսկուրներին՝ «Զեւսի որդիներ» Կաստորին եւ Պոլիդեւկէսին, որոնք նոյնացուել էին Երկուորեակների համաստեղութեան երկու պայծառ աստղերի հետ (I. Becher, Dioskuren, «Lexikon Antike», էջ 136. նաեւ՝ F. Comte, *Larousse des Mythologies du Monde*, Editions Loisirs, Paris, 2004, էջ 67):

[86] Աճառեան, *հտր. IV*, Երեւան 1979, էջ 169. նաեւ՝ Գ. Ջահուկեան *Հայոց լեզուի պատմութիւն. նախագրային ժամանակաշրջան*, ՀՍՍՀ ԳԱ Հ. Աճառեանի անուան լեզուի ինստիտուտ, Երեւան, 1987, էջ 311, 346: Հմմտ. հայոց *Սադուն/Սաթուն* (-*ուն* վերջածանցով կազմուած նոյն *ḱat- արմատից) անձնանունը (համարուել է անյայտ ծագումից (Հ. Աճառեան, *Հայոց անձնանունների բառարան, հտր. IV*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1948, էջ 339-41):

ւառանունը[87]: Դրանք անուններն էին Բզնունիքի հիւսիսային եւ հարաւային հարեւանների: Ծովածին ձիերի զոյգը նաեւ երկնասլաց համարուելու փաստն է արձանագրել հայոց Տիրան թագաւորի ձիերի մասին զրոյցը: Ըստ դրա, նրան «*ձիոց երկուց* լեալ. թեթեւ առաւել, քան զՊիգասոս, երագութեամբ անբաւ, զորս ոչ երկրակոխ, այլ օդագնացս համարէին. յոր խնդրեալ հեծանել Դատաքէի ուրումն *իշխանի Բզնունեաց*՝ պարծէր ընչեղագոյն գոլ քան զարքայն»[88]: Միջնադարեան հայ ձեռագրերը Երկուորեակներ համաստեղութիւնը պատկերում էին մէկ մարմով եւ զոյգ գլխով պատանու տեսքով, երբ շատ աւելի վաղ մէկ մարմին եւ ծայրերին հակադիր կողմեր նայող գլուխներով ձի է պատկերում ինչպէս Գաւառ քաղաքի Բերդի գլուխ հնավայրից պեղուած կաւէ կնիքը, այնպէս էլ Արեւմտեան Հայաստանի պեղումներից յայտնաբերուած եւ Լոնտոնի բրիտանական թանգարանում պահուող արձանիկը[89]:

**

Տարօնի եւ Բզնունիքի քաղաքական միաւորման երկուստեք ձգտումը եկել էր փոխշահաւէտութեան գիտակցումից: Հասոււա-Տարօնը շահագրգռուած էր Խախա-Բզնունիքի միջոցով Վանայ լճի շրջակայ բոլոր երկրների հետ առեւտրատնտեսական կապերն ամրապնդելու մէջ, իսկ Խախա-Բզնունիքը՝ Հասոււա-Տարօնի ռազմական հնարաւորութիւններից օգտուելով, իր պաշտպանունակութիւնը ամրապնդելու մէջ: Յ. Տէրմարտիրոսեանի (Ա-Դօ) համաձայն, անգամ Ի. դարի սկզբներին նախկին Բզնունիքի տարածքում գտնուած Դատուան աւանը, որը տեղաւորուած էր «*Վանայ լճի հարաւարեւմտեան ափին. ունի թէեւ փոքր, բայց յարմարաւոր նաւահանգիստ. այդ տեղով փոխադրում են Բիթլիսից եւ Մուշի դաշտից մթերքներ դէպի Վան եւ ստանում են Վանից այլ մթերքներ. այդ տեղից նստում են նաեւ Վան գնացողները եւ այդտեղ ափ ելնում Վանից եկողները: Այդպիսով,*

---

[87] Այդ անունները եւ դրանք կրած վայրերի դիրքը մղում են ենթադրելու, որ առասպելաբանական մտածողութեամբ՝ Բզնունիքը պատկերացուել է Արեւի եւ Ամպրոպի աստուածների մարտակառքը, որին լծուած ձիերից ձախակողմեանը կոչուել է *Ձիուկ* (հիւսիս//ձախ կողմ), իսկ աջակողմեանը՝ *Երիվար* (հարաւ//աջ կողմ): Ջրային տարերքին առնչուող հիւսիս-հարաւ առասպելաբանական հակադրամիասնութեամբ ստեղծուած տեղանունների ականատեսն ենք այլ դէպքերում եւս (С. Петросян, “Древнейшие названия Черного моря, озер Урмия и Ван в свете мифологических представлений древних армян,” *Լրաբեր հասարակական գիտութիւնների*, 4:1984, էջ 53-64. նաեւ նոյնի՝ «Երկգոյն-երկյարկ տիեզերքի մասին առասպելաբանական պատկերացումը Հայկական Լեռնաշխարհում», *Լրաբեր հասարակական գիտութիւնների*, 2:1991, էջ 126-31):

[88] Խորենացի, Բ, կբ:

[89] Գ. Միքայէլեան, «Ուելիքուխի երկրի կենտրոնական կիկլոպեան ամրոցը», *Պատմաբանասիրական հանդէս*, 1:1964, էջ 119-32, նկ. 4. նաեւ՝ E. Herzfeld, “Iran in the Ancient East,” «Archeological Studies presented in the Lowell Lectures at Boston», London-New York, 1941, էջ 175, fig. 295 d.

Դափռանը հանդիսանում է լճի արեւմտեան ափի գլխաւոր նաւահանգիստը»[90]: Նա նշում է նաեւ, որ «*Լճի ամենահեռաւոր տարածութիւնը նաւակներով անցնելու համար հարկաւոր է 10-12 ժամ… մինչդեռ այդ տարածութիւնը ցամաքով անցնելու համար հարկաւոր է 2-3 օր. նաւակներով ապրանք տեղափոխելը եւ երթեւեկելը անհամեմատ էժան է, քան ձիով կամ սայլերով*»[91]: Ինչ վերաբերում է Բզնունիքի հարեւան Տարօնին, ապա նա բերք ու բարիքի երկիր լինելուց բացի, հնագոյն ժամանակներում աչքի էր ընկնում անուն հանած իր մարտակառքերով եւ կառամարտիկ զօրամասերի ունեցած բարձր որակներով:

Արտաքին վտանգի դէմ յանդիման քաղաքական միութեան ձգտող երկու երկրների քաղաքական վերնախաւի ներկայացուցիչները հաշուի էին առնելու ինչպէս էթնիկական այնպէս էլ գաղափարական-կրօնական գործօնները: Վերջինի յենքը Ամպրոպի եւ Արեւի եղբայր աստուածների սերտաճած պաշտամունքն էր: Այն կարող էր ապահովել եւ գաղափարապէս հիմնաւորել ոչ միայն երկու երկրների միութիւնը, այլեւ նրանց անջատ գոյութիւնը, որովհետեւ Հասուաա-Տարօնը միութեան կազմում կը շարունակէր համարուել աւագ՝ ամպրոպային երկուորեակի երկիր՝ արեւմտեան երկիր, իսկ կրտսեր՝ արեւային երկուորեակի երկիր համարուելու էր արեւելեան դիրք ունեցած «Արեւի աստուածութեան երկիր» Խախա-Բզնունիքը: Այդպիսի պատկերացումը թերեւս ստեղծուած էր լինելու շատ աւելի վաղ եւ այնքան ամուր էր նստած մարդկանց գիտակցութեան մէջ, որ, ըստ *Անաբասիսի*, Տարօնն իր շրջակայքով «Արեւմտեան Արմենիա» էր կոչւում[92], ըստ երեւոյթին, հակադրամիասնութեան մէջ լինելով «Արեւի աստուածութեան երկրների» կազմած *«Արեւելեան Արմենիայի»՝ Վանայ լճի շրջակայքի հետ: Ուշագրաւ է մանաւանդ այն, որ վաղքրիստոնէական Հայաստանում Տարօնն ու Բզնունիքը միասնութեան մէջ էին դիտւում, որովհետեւ երբեմն մէկ ընդհանուր եպիսկոպոս էին ունենում[93]:

Ամէնայն հաւանականութեամբ, Հասուաան եւ Խախան եղել է երկմիասնական կառուցուածքով այն կազմաւորումը, որի հիմքի վրայ նոյն այդ տարածքում յետագայում ձեւաւորուել էր Հայասան, որի եւ Ազիի միաւորումով[94] ստեղծուել էր երկմիասնական կառուցուածք ունեցած Հայասա-Ազզի ցեղամիութիւնը[95]: Կարելի է ենթադրել, որ յետագայ Հայասայի միջուկը կազմած Հասուաա-Խախա միաւորումը կարող էր ունենալ երկու կառավարիչ-ցեղա-

---

[90] Ա-Դօ, էջ 87:

[91] Նոյն, էջ 12:

[92] Xenophon, *Anabasis*, IV, IV, 4 (Քսենոփոն, *Անաբասիս*, թարգմ.՝ Սիմոն Կրկեաշարեան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1970, էջ 93):

[93] Ադոնց, *Հայաստանը Յուստինիանոսի*, էջ 365, 379, 381, 387:

[94] E. Forrer, "Ḫajaša-Azzi," *Caucasia*, 1931:IX, էջ 4:

[95] С. Петросян, "Племенной союз Хайаса-Аззи в системе двоичных противопоставлений," *Լրաբեր հասարակական գիտութիւնների*», 3:1987, էջ 77-87:

պետեր՝ Հասուա-Տարօնում Ամպրոպի աստծու երկրային փոխանորդն համարուած զինուոր-արքան, իսկ Խախա-Բզնունիքում՝ Արեւի աստծու երկրային փոխանորդն համարուած քուրմ-արքան:

Ըստ երեւոյթին, սրա օրինակով էր յետագայ Հայասա-Ազիում իշխանութեան հարցը լուծուել փոխզիջումային այնպիսի տարբերակով, որի համաձայն, գահակալում էր մի դասի (ասենք, զինուորական) ներկայացուցիչ ցեղապետ-արքան, իսկ գահաժառանգ համարւում միւս դասի (քրմութեան) ներկայացուցիչ նրա փեսան՝ ցեղապետ արքայի առաջին տիկնոջից (գլխաւոր տիկնոջից, խէթերէն *տաւանաննա*) նրա ունեցած աւագ դստեր ամուսինը: Եթէ Հայասա-Ազիի գահին Սուպիլուլիումա Ա. խէթ թագաւորի (Ք.ա. 1380-40) օգնութեամբ բազմած Խուկանան[96] քրմական դասի ներկայացուցիչն էր, ապա նրա փեսան՝ դստեր ամուսին Մարիան, ներկայացնում էր զինուորական դասը, հետեւակ ու կառամարտիկ զօրքի հրամանատարն էր[97], եւ համարւում էր օրինական գահաժառանգ: Ահա թէ ինչու իր քրոջը Խուկանային կնութեան տուած Սուպիլուլիումա Ա.ը Խուկանայից պահանջում էր ետ վերցնել իր դստերը Մարիայից եւ տալ նրա եղբօրը (չգրուած օրէնքի համաձայն, ուրիշի տալ չէր կարող), որը զինուորների դասապետը չլինելով, արքայադստեր հետ ամուսնանալու դէպքում անգամ, չէր կարող օրինական ճանապարհով յաւակնել արքայական գահին: Դրանով Սուպիլուլիուման ձգտում էր գահի ժառանգման հարցը լուծել յօգուտ իր քրոջ՝ Հայասա-Ազիի տաւանաննայի (գլխաւոր տիկնոջ) ապագայ սերունդների[98]:

Հասուա-Տարօնի եւ Խախա-Բզնունիքի միջեւ փոխզիջումային ճանապարհով ստեղծուած այդպիսի միանգամայն ամուր կապի մասին են, կարծես, խօսում ինչպէս երկու երկրների խէթական միաժամանակեայ յարձակման թիրախներ դառնալու, այնպէս էլ երկու երկրների ցեղապետ-արքաների գերեվարման եւ ստրկացման փաստերը: Ահա թէ Խաթուսիլի Ա.ը ինչ է ասում իր տարեգրութեան եզրափակիչ մասում.

> Ճիշտ է Սարգոնը նոյնպէս ժամանակին անցել է այն (Եփրատ գետը - Ս.Պ.): Նա յաղթել է Խախա երկրի զօրքին [սակայն], Խախա քաղաքին ոչինչ չէր արել եւ այն չէր հրկիզել, եւ ծուխն այդ քաղաքների մինչեւ երկնային Ամպրոպի աստուած չէր հանել, իսկ ես՝ մեծ արքայ Տաբարնաս, ոչնչացրի Հասուա եւ Խախա քաղաքները եւ ես դրանք հրկիզեցի եւ դրանց ծուխը հանեցի երկնային Ամպ-

---

[96] *KUB.* XXVI, 37; XXVI, 38. նաեւ՝ Ադոնց, *Հայաստանի պատմութիւն*, էջ 34. նաեւ՝ *ՀԺՊՔ. I*, էջ 8-9:

[97] Ինչպէս Ադոնցն է նշում, այս Մարիային է նկատի առել Սուպիլուլիումա Ա.ը (Ք.ա. 1375-35), երբ պարտաւորեցնում էր «*Հայասայի մարդկանց եւ ոմն Մարիայի... առաջին իսկ կանչին օգնութեան հասնել իրեն իրենց հեծելաւոր զօրքերով եւ մարտակառքերով*» (Ադոնց, *Հայաստանի պատմութիւն*, էջ 36):

[98] Պետրոսեան, *Դասերը եւ եռադասութեան*, էջ 126-7:

րոպի աստուած: Իսկ Հասոււա քաղաքի արքային եւ Խախա քաղաքի արքային ինչպէս լծկան ցուլեր ես լծեցի մարտակառքին[99]:

Այդուհանդերձ, ո՛չ Հասոււա քաղաքը, ոչ էլ Խախա քաղաքը, հակառակ Խաթուսիլի Ա.ի յայտարարութեան, ոչնչացուած չեն եղել եւ յետագայում եւս պայքարել են Խաթուսիլի Ա.ի յաջորդ խէթ թագաւորների դէմ:

Իր տարեգրութեան աւարտական մասում, ինչպէս տեսանք, Խաթուսիլի Ա.ը որպէս Խախա երկրի երբեմնի հակառակորդ յիշատակում է Սարգոն (Šarru-ken) Աքադացուն՝ Միջագետքը միաւորած եւ Հայկական Տաւրոս արշաւած առաջին բռնակալին: Նրա մեծ բանակին դիմադրած Խախա երկիրը միայն Բզնունիքը լինել չէր կարող: Ամէնայն հաւանականութեամբ, դա եղել է Խախա-Բզնունիքի գլխաւորած Հասոււա-Տարօնի եւ Վանայ լճի շրջակայ «Արեւի աստուածութեան երկրներ»ի միութիւնը Խախա կենտրոնով: Այս միութիւնն ստեղծուած էր լինելու Սարգոն Աքադացու ժամանակաշրջանից (Ք.ա. ԻԴ. դ. Բ. կէս) առաջ:

ԳԻԼԳԱՄԷՇ

Սարգոնեան դարաշրջանի կնիքն են կրում *Գիլգամէշ* միջագետքեան դիւցազներգութեան մէջ պահպանուած կիսառասպելական տեղեկութիւնները Հայկական Լեռնաշխարհի՝ մասնաւորապէս հնագոյն Տարօն-Բզնունիքի մասին, թէպէտեւ դրանք գալիս են լեռնաշխարհի եւ Շումէր-Աքադի բնակչութեան փոխյարաբերութիւնների շատ աւելի վաղ ժամանակներից: Միջագետքի հնագոյն ժողովուրդների՝ շումէրների եւ աքադացիների, ինչպէս նաեւ հին հրեաների, դրախտի մասին ունեցած առասպելաբանական պատկերացումների իրական յենքի Հայկական Լեռնաշխարհում եւ հնդեւրոպական-հայկական միջավայրում ստեղծուած լինելու վերաբերեալ վաղուց յայտնի տուեալներին վերջին տասնամեակներին աւելացել են նորերը[100]: Դրանց մէջ իր կարեւոր տեղն ունի լեզուաբանական նիւթը՝ դրախ-

---

[99] *Хрестоматия I*, էջ 265:

[100] Ա. Մովսիսեան, *Սրբազան լեռնաշխարհը. Հայաստանը Առաջաւոր Ասիայի հնագոյն հոգեւոր ընկալումներում*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2000. նաեւ նոյնի՝ *Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամեակում (ըստ գրաւոր աղբիւրների)*, ԵՊՀ հրատ., Երեւան, 2005. նաեւ՝ Ս. Պետրոսեան, «"Գիլգամէշը եւ Խուլուպպու ծառը" վիպերգի հնդեւրոպական-հայկական բաղադրատարրը», *Պատմաբանասիրական հանդէս*, 3:2008, էջ 172-84. նաեւ նոյնի՝ «Հայկական Լեռնաշխարհի տեղը էնլիլ եւ Էնկի աստուածների պաշտամունքում», *ՀՀ ԳԱԱ եւ ՇՀՀԿ, Միջազգային ութերորդ գիտական նստաշրջանի նիւթեր*, Երեւան, 2010, էջ 58-65. նաեւ նոյնի յօդուածները ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի *Գիտական աշխատութիւններ*, հատոր *XIV, XVI, XIX, XX*ում (2011, 2013, 2016, 2017):

տային չորս գետերի հնագոյն անունների հնդեւրոպական-հայկական ստուգաբանութիւններով հանդերձ[101]:

Հնագոյն Տարօն-Բզնունիքի պատմութեան աղբիւրներից *Գիլգամէշ*ին անդրադառնալիս ուղղորդուել ենք այն հանգամանքով, որ նրանում առկայ են լինելու նաեւ Հայկական Լեռնաշխարհին վերաբերող տուեալներ: Իսկ դրանց բացայայտումն ու իմաստաւորումը պահանջում է, որ պատմական բնոյթի փաստերի հետ միասին նկատի առնուեն նաեւ ինչպէս շումէր-աքադական առասպելաբանութեան հայաբնոյթ կերպարներին ծնած Հայկական Լեռնաշխարհի աշխարհագրութիւնը, այնպէս էլ սրա նախնադարեան բնակիչների դիտողականութեան եւ երեւակայութեան արդիւնք այն մտացի զուգորդումներն ու համադրումները, որոնք պահպանուել են հայկական առասպելաբանութեան եւ հայ լեզուամտածողութեան մէջ:

Աշխարհի հնագոյն դիւցազնավէպի հերոս Գիլգամէշը մտացածին կերպար չէ: Առասպելաբանուած այս հերոսն ունեցել է իր պատմական նախատիպը[102]: Իրական Գիլգամէշը Ուրուկի Ա. արքայատոհմի (Ք.ա. ԻԸ.-ԻԶ. դդ.) հինգերորդ արքան էր՝ ապրած Ք.ա. ԻԸ.-ԻԶ. դարերի սահմանագլխին[103]: Հայկական Լեռնաշխարհի առնչութեամբ յատկապէս ուշագրաւ է դիւցազնավէպի այն մասը, որը սկսւում է Գիլգամէշի՝ իր անմահացած նախնի Ուտնապիշտիմին հասնելու որոշումով, նրանից անմահանալու գաղտնիքն իմանալու համար: Սա աստուածաշնչային Նոյ նահապետի շումէրական նախատիպն է[104]:

Ուտնապիշտիմին հասնելու համար Գիլգամէշը անասելի երկար ճանապարհ էր կտրելու. հասնելու էր աշխարհի ծայրը, այնտեղ, որտեղ Միջագետքի երկու մեծ գետերի՝ Տիգրիսի եւ Եփրատի ակունքներն էին: Աւելի կարճ, բայց աւելի դժուարանցանելի էր Տիգրիսի ափերով Հայկական Լեռնաշխարհ բերող ճանապարհը: Գիլգամէշը այս ճանապարհն էր ընտրել եւ մինչեւ Հայկական Լեռնաշխարհ հասնելը ստիպուած է եղել յաղթահարելու «վարարած գետերի»[105] յարուցած արգելքները: Այդ գետերը լինելու էին Տիգրիսի բազմաթիւ վտակները: Դրանց գետանցումից յետոյ Գիլգամէշը Լուսնի Սին աստծու եւ միւս աստուածների հաղորդած զօրութեամբ կարողացել էր ցրել «բարձրաբերձ լեռների կիրճերի» առիւծներին, ապա «*լեռան մը մօտեցաւ, որուն անունը Մաշու՛… Այդ երկու լեռներուն կատարին վրայ*

---

[101] Ս. Պետրոսեան, «Դրախտի գետերի եւ Խաւիլա, Քուշ երկրների տեղադրութեան շուրջ», *Պատմաբանասիրական հանդէս*, 2006:2, էջ 237-55:

[102] В. Афанасьева, *Гильгамеш и Энкиду. Эпические образы в искусстве*, Մոսկուա, 1979, էջ 33:

[103] В. Афанасьева, “Гильгамеш,” *Мифологический словарь*, Մոսկուա, 1991, էջ 154:

[104] *Գիլգամէշ. Հին Արեւելքի դիւցազնավէպ*, թարգմ. եւ ներած. Նշան Մարտիրոսեան, ՀՍՍՌ ԳԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ, 1963, Երեւան, էջ 120, ծան. 4:

[105] Նոյն, էջ 73:

կը հանգչի երկնակամարը, անոնց վարի ներքնամասը մինչեւ դժոխքին խորքը կը հասնի»[106]: Գիլգամէշն հասել էր Միջագետքի հնագոյն բնակչութեան պատկերացրած բնակելի աշխարհի ծայրը՝ «Մաշու լեռը»:

Հարաւից եկող Գիլգամէշը, բնականաբար, լեռնաշղթան պէտք է հատէր հարաւ-հիւսիս ուղղութեամբ, հաստատելով նրա արեւելքից արեւմուտք ձգուած լինելու իրողութիւնը: Եւ իսկապէս, լեռան խաւար անցուղին բռնած Գիլգամէշը «*Երբ ինը երկժամէն աւելի խորացաւ, զգաց հիւսիսային քամին*»[107]: Գիլգամէշը ճանապարհ է ընկնում եւ խաւար ճանապարհի վերջնամասին տեսնում է, որ «*Լոյսը ծագեցաւ: Գիլգամէշ հեռուէն նշմարեց աստուածներու պարտէզը եւ անոր քով փութաց*»[108]: Միջագետքի դիւցազնը ոտք էր դրել հայոց դրախտավայր: Գիլգամէշի յաղթահարած խաւարչտին ճանապարհի՝ Տիգրիսի ակունքների (հին ըմբռնումով) շրջանում գտնուած Կղեսուրք լեռնանցքների գօտին լինելու յիշողութիւնը Միջագետքի հին բնակչութեան արաբացած սերունդների միջոցով թափանցել էր արաբական մատենագրութիւն: Օրինակ, Եակուտ ալՀամաուին, աւելի վաղ ապրած Քասրաուիին յղելով, Տիգրիսի (արաբ. Դիջլա) մասին գրում է. «*Բաղդադի գետն է, որի առաջին ակը գտնւում է մի վայրում, որը կոչւում է այն Դիջլաթ (Տիգրիսի ակն - Ս.Պ.), Ամիդից երկու օրուայ ճանապարհով հեռու: Այդ վայրը ծանօթ է Հալուրաս անուամբ եւ գտնւում է մի մութ քարայրի մէջ*»[109]:

Ինչպէս տեսանք անդնդախոր եւ խաւար լեռնանցքը յաղթահարած Գիլգամէշը դուրս գալով լոյս աշխարհ, իր առջեւ գտել էր «աստուածների պարտէզը» եւ փութացել այնտեղ: Ահա թէ ինչեր էր տեսել նա այստեղ.-

> Սարդիոնէ ծառը հոն իր պտուղը ունէր: Որթատունկերը պատած էին զայն եւ խաղողի ողկոյզները կախուած էին անկէ: Լազվարթն ալ տերեւ եւ գեղեցիկ տեսքով պտուղներ ունէր: Դարաւոր մայրիներուն եւ կասկենիներուն վրայէն կախուած ազնիւ քարերը կը շողշողային: Կանաչ զմրուխտը ծովասէզի նման ծառերուն ստորոտը տարածուած էր: Հոս քեսի եւ ուղտափուշի տեղ գոյնզգոյն ազնիւ քարեր կը փայլէին: Պտուղին կուտը շափիւղայ էր... Դիցուհի Սիդուրին ծովեզրի գահին վրայ բազմած, աստուածներու պարտէզին կը հսկէ[110]:

«Աստուածների պարտէզը» գտնուելով լեռան «մութ եւ անդնդախոր կիրճ»-անցուղու եւ ծովի (Վանայ լճի) միջեւ, բնականաբար, ներառելու էր

---

[106] Նոյն, էջ 74: Mašu, Masius, Մասիս/Մասիք լեռնանունների ստուգաբանութիւնը (<հ.-ե. *mṇ-s- «լեռ»<men- «բարձրանալ, բարձունքուել») տե՛ս՝ Ս. Պետրոսեան, «Հնդեւրոպական-հայկական բաղադրատարրը "Գիլգամէշ" դիւցազնավէպում», ՇՀՀ կենտրոնի *Գիտական աշխատութիւններ,* X:2007, Գիւմրի, էջ 33:

[107] Նոյն, էջ 78:

[108] Նոյն:

[109] *Արաբական աղբիւրները Հայաստանի եւ հարեւան երկրների մասին*, կազմ. Հ. Նալբանդեան, ՀՍՍՌ ԳԱ արեւելագիտութեան սեկտոր, Երեւան, 1965, էջ 63:

[110] *Գիլգամէշ*, էջ 78-79:

յետագայ Տարօն եւ Բզնունիք գաւառները: Նրա Սարդիոնէ ծառը՝ իրեն պատած որթատունկերով, փարթամ մայրիները, կասկենիները, պտղատու ծառերը իրենց իրական նախատիպերն են ունեցել հենց նշուած տարածքներում: Սրուանձտեանցը Տարօնի Մշոյ դաշտի համար նկատել էր տալիս, որ «առատ ցորեն կը բերէ, *ունին պատրուական խաղող եւ ուժով գինի*»[111], իսկ Բզնունիքի Խլաթի գաւառի «*այգեստրանք, ծառաստրանք, մանաւանդ մրգաբերները ընտիր են եւ հռչակեալ՝ կեռասն, ծիրանը, տանձն ու խնձորը իրենց զանազան տեսակներով*» են[112]: «Աստուածների պարտէզը» ունէր իր հսկիչը՝ «ծովեզրի գահին բազմած ծովադիցուհի Սիդուրին», որն, իդէպ, աստուածների մատռուակն[113] էր, ուրեմն, ուղղակի կապ ունէր խաղողագործութիւն-գինեգործութեան հետ:

Հետեւենք Գիլգամէշի յաջորդ արկածին, որը կապուած է Սիդուրի դիցուհու հետ.

> Երբ դիցուհին անոր մօտենալը տեսաւ, փակեց դուռ ու երդիկ, կողպեց դուռը ու փականը քաշեց: Բայց Գիլգամէշն անյապաղ բիրը առաւ ու դուռը բախեց: Գիլգամէշ, Սիդուրիին դառնալով, ըսաւ.- Դիցուհիդ, ի՞նչ տեսար, որ դուռդ ու երդիկդ առջեւս գոցեցիր ու կողպեցիր: Եթէ դուռը գոցես եւ փականքը քաշես, դուռդ կը ջախջախեմ եւ փականքը ջարդ ու փշուր կ'ընեմ: Սիդուրին դուռը բացաւ եւ դռան առջեւ քաջարի Գիլգամէշին ըսաւ.- Օտարակա՛ն, ո՞վ ես դուն եւ ու՞ր կ'երթաս այդպէս արագաքայլ: Ըսէ, թէ ինչպէ՞ս կրցար անցնիլ Մաշու լեռան արեւի դռնէն եւ ինչու՞ տապարովդ դուռս ջախջախել կ'ուզես[114]:

Ծովադիցուհու գահն ու կացարանը, կարծում ենք, որ մեր հեռաւոր նախնիները տեղայնացրած են եղել Վանայ լճի այն ափին, որտեղ յետագայում կառուցել են Բզնունիք գաւառի Խլաթ քաղաքը: Այս քաղաքի *Խլաթ* անունը նոյնական է հայերէն *խղաթ* «կին - ամուսին», «մէկի կինը, կին»[115] բառի հետ (*ղ/լ* համարժէքութեան համար հմմտ. *աղի* եւ *անալի, դանդաղ* եւ *դանդալոշ, մառախուղ* եւ *մառախղապատ* զոյգերը): Պարզ է, որ քաղաքն այդպէս կոչուել կարող էր ոչ թէ ինչ-որ անյայտ կնոջ անունով, այլ իր վրայ կրելով ինչ-որ դիցուհու մականունը: Հմմտ. *Տիկին*, որը նախապէս միայն Անահիտ դիցուհու մականունն էր, իսկ *տիկին<տի-կին*//«մեծ կին»: Այս Ծովադիցուհին էր լինելու նաեւ նոյն շրջանի *Շամիրամ* գիւղում[116] աւելի վաղ պաշտուած դիցուհին՝ յետագայում նոյնացուած առասպել-աւանդազրոյցներից յայտնի հռչակաւոր Շամիրամի հետ[117]: Երկու դէպքում էլ, մեր կար-

---

[111] Սրուանձտեանց, *հտր. I*, էջ 418:

[112] Նոյն, էջ 405:

[113] *Գիլգամէշ*, էջ 120, ծան. 8:

[114] Նոյն, էջ 79-80:

[115] *ՀԲԲ, հտր. II*, էջ 267, Աճառեան, *հտր. II*, էջ 375:

[116] Ա-Դօ, էջ 89. նաեւ՝ Արիստակէս Տեւկանց, *Այցելութիւն ի Հայաստան 1878թ.*, ՀՍՍՀ ԳԱ պատմութեան ինստիտուտ, Երեւան, 1985, էջ 87:

[117] Խորենացի, Ա, ժե-ժը:

ծիքով, գործ ունենք *Սասնայ ծռերի* վիպական Ծովինարի նախատիպի հետ, որից էր Ծովինարը ժառանգել իր անունը. հմմտ. *Ծովա-դիցուհի* եւ *Ծովինար:* Խլաթում էր տեղայնացուել նաեւ Ծովադիցուհու գահը: Յայտնի է, որ «*հին քաղաքը կառուցուած էր ձորալանջին, իսկ միջնաբերդը գտնւում էր ձորամիջի մօտ 60 մ բարձրութեան ժայռին*»[118]: Այս ժայռից էլ դիցուհին կարող էր հսկել «աստուածների պարտէզին»:

Սիդուրի դիցուհին Գիլգամէշին ասում էր. «*Միայն արեւասփռած Շամաշը... կրնայ այս ծովէն անցնիլ...Գիլգամէ՛շ, ինչպէ՞ս կ'ուզես անցնիլ ծովէն: Յետոյ ինչ պիտի ընես, երբ մահուան ջուրերուն հասնիս...տե՛ս, Գիլգամէշ, ահաւասիկ այնտեղ է Ուրշանաբին՝ Ուտնապիշտիմի նաւավարը, այնտեղ, ուր տաշուած քառակուսի քարերը կը գտնուին*»[119]: Այս լսելուն պէս, Գիլգամէշը «*նետի պէս սուրալով քարակերտ կամուրջին քով գնաց: Նաւը ծովափը կեցած էր, բայց մէջը մարդ չկար: Նաւավար Ուրշանաբիին կը կանչէ, բայց իզուր. որեւէ մէկը երեւան չ'ելլեր: Եւ ցասումէն [կամուրջի] քարերը ջարդ ու փշուր ընելէ յետոյ եւր կը դառնայ*»[120]: Բնականաբար, «տաշուած քառակուսի քարերով» կառուցուած կամրջի մասին պատկերացումը շումէրական կամ աքադական միջավայրի ծնունդ լինել չէր կարող, այն բնորոշ չէր միջագետքեան իրականութեանն ու առասպելաբանական պատկերացումներին: Ծովի վրայով անցնող քարէ կամրջի առկայութիւնն այս դրուագում կարող է ունենալ իր թէ՛ իրականութիւնից, թէ՛ հնդեւրոպական առասպելաբանութիւնից բխող բացատրութիւնները: «Տաշուած քառակուսի քարերով» կառուցուած կամուրջը չի համապատասխանում եղէգնեայ եւ կաւաղիւսէ շինութիւնների երկիր հարաւային Միջագետքին (Շումէր եւ Աքադ), բայց համապատասխանել կարող է քարէ շինութիւնների երկիր Հայկական Լեռնաշխարհին, որը եւ հնդեւրոպացիների նախահայրենիքն էր: Առաջին բացատրութեան կողքին կարելի է տալ նաեւ երկրորդը: Հնդեւրոպական առասպելաբանութեան մէջ գոյութիւն ունէր «քարէ երկնքի» եւ «քարէ երկնակամարի» մասին պատկերացումը (հմմտ. «երկնակամար»/«կամար»/«կամուրջ» առասպելաբանական զուգորդումը)[121]:

Թէ առասպելական ո՞ր կամրջի հետ կարող էր նոյնացուած լինել «տաշուած քառակուսի քարերով» իրական կամուրջը (կար նաեւ «ծիածան»//կամուրջ երկրի եւ երկնքի միջեւ առասպելաբանական համադրումը)՝ այնքան էլ կարեւոր չէ, բայց որ այդպիսին գոյութիւն ունեցել է, վկայում է Խլաթ քաղաքից մօտ 8 կմ հարաւ-արեւմուտք գտնուող Գիւղի Կամուրջ[122] անունը (ներկայիս *Քարմուչ* աղաւաղեալ անունով գիւղն է): «Քարէ կամուրջն» աւե-

---

[118] Յակոբեան, Մելիք-Բախշեան, Բարսեղեան, *հտր. II*, էջ 737:

[119] *Գիլգամէշ*, էջ 82-83:

[120] Նոյն, էջ 83:

[121] Гамкрелидзе, Иванов, *հտր. II*, էջ 667:

[122] Ա-Դօ, էջ 89. նաեւ՝ Տեւկանց, էջ 87. նաեւ՝ Յակոբեան, Մելիք-Բախշեան, Բարսեղեան, *հտր. II*, էջ 925:

րած Գիլգամէշը ծովով եւ նրա «մահուան խաղաղ ջուրերէն» անցնելու համար ստիպուած է եղել իր նախնու մօտ տանող անյայտ եւ վտանգաւոր ուղին բռնել «Ուտնապիշտիմի ծառայ եւ նաւավար»[123] Ուրշանաբիի նաւով, որով էլ իվերջոյ հասել էր իր նպատակակէտին:

«*Մահուան խաղաղ ջուրերը Վանայ լճի ջրերն են, որոնք խմելու համար միանգամայն անպէտք*» են, որովհետեւ պարունակում են «*բորակային մաքրիչ աղեր, որից միքանի տեղերում պատրաստում են լուացքի համար բորակ*»[124]: Գիլգամէշը լճի հակադիր ափ հասել էր Ուրշանաբիի հետ դէպի արեւելք նաւելով: Այնտեղ էր Արեւաստծու պաշտամունքի մէկ այլ կենտրոն՝ յետագայ Վանը: Ուտնապիշտիմը վրդովուած յանդիմանում է իր նաւավարին. «*Չըլլայ որ ուրիշ անգամ այս քարափը ոտք կոխես, Ուրշանաբի, չըլլայ որ ուրիշ անգամ որեւէ մէկը ջուրէն այս կողմ անցկացնես*»[125]: Սա կարելի է համարել Վանի քարաժայռի առաջին յիշատակումը. «*Բուն քաղաքի հիւսիս-արեւելեան ամբողջ երկարութեամբ՝ իբրեւ բնական պատնէշ, դուրս է ցցուած մի երկար եւ ուղղածիգ* քարաժայռ*..., որի ուղղահայեաց եզրերը միանգամայն անմատչելի են դարձնում նրա կատարը*»[126]:

Կարծում ենք, որ Uršanabi դիցանունը պիտի տրոհել ոչ թէ Ur-šanabi, այլ Urša-nabi բաղադրիչների եւ այն սեպագրային արտացոլումն համարել *Orsa-nau(i) նախաձեւի (սեպագր. u//o, š//s, b//u): Urša-nabi դիցանուան առաջին բաղադրիչի իմաստի պարզաբանման տեսանկիւնից ուշագրաւ է Տիգրիսով եւ Եփրատով նաւարկող հին նաւակների կառուցուածքի մասին Հերոդոտոսի վկայութիւնը[127]: Դրանից պարզւում է այդ նաւակների՝ ուռենիներից պատրաստուած լինելու փաստը: Այդ իրողութիւնը մեզ իրաւունք է տալիս դիցանուան առաջին Urša-//*orsa- բաղադրիչին վերագրելու հենց այդ իմաստը եւ նրա մէջ տեսնելու հայերէն *ուռ* (որից՝ *ուռի, ուռենի*) բառի նախաձեւը: *Ուռ* նշանակում է «ճիւղ, ընձիւղ», «ուռի ծառը», «գեղձի ծառը», «խաղողի որթի ողկուզաբեր ճիւղը»[128]: Աճառեանը չի ընդունում *ուռ//ուռի* բառի եւ յունարէն ἄρσικος//ἄρσιχος//ἄρριχος «կողով» բառի հ.-ե. *ers//*ors- («փափուկ ճկուն ճիւղերով հիւսել») արմատից բխեցնող տեսակէտը[129], չնայած դա հաստատւում է *ուշի* «մի տեսակ ծառ», «ուռու նման տերեւներով մի թուփ»[130] զուգահեռ արմատակից բառի գոյութեամբ: Հ.-ե. *orsը հայերէ-

---

123 *Գիլգամէշ*, էջ 83:

124 Ա-Դօ, էջ 11:

125 *Գիլգամէշ*, էջ 101-2:

126 Ա-Դօ, էջ 16:

127 Հերոդոտոս, *Պատմութիւն ինը գրքից*, թարգմ.՝ Սիմոն Կրկեաշարեան, ՀՍՍՀ ԳԱ հրատ. Երեւան, 1986, էջ 79-80:

128 Աճառեան, *հտր. III*, էջ 607. նաեւ՝ Ստեփանոս Մալխասեանց, *Հայերէն բացատրական բառարան, հտր. III*, ՀՍՍՌ հրատ., Երեւան, 1944, էջ 605:

129 Աճառեան, *հտր. III*, էջ 607:

130 Նոյն, էջ 606:

նում վերածուել կարող էր թէ՛ *ուռ*ի, թէ՛ **ուրշ*ի, ինչը պարզւում է հայերէնում միեւնոյն բառի ***ռ***ով եւ ***րշ***ով տարբերակների գոյութեամբ (հմմտ. *թառամ/ թարշամ, թոռոմ/թորշոմ, խոռ/ խորշ, թուռ/*թուրշ>թուշ, մոռ/*մորշ> մոշ*):

Ըստ երեւոյթին, Գիլգամէշին ընդառաջելու, այսինքն՝ իր պարտականութեան մէջ թերանալու պատճառով Ուրշանաբին պաշտօնազուրկ էր եղել եւ ստիպուած Գիլգամէշի հետ ուղեւորուել սրա արքայանիստը՝ շումէրական Ուրուկ քաղաք[131]: Նա այնտեղ, խաղաղութեան մէջ էր սպասելու իր վախճանին: Ենթադրում ենք, որ Ուրշանաբին կերպարանաւորումն է մեր նախնիների այն հատուածի, որը Հայկական Լեռնաշխարհից Եփրատի ու Տիգրիսի հոսանքներն իվար յետագայ Շումէր հասնելով եւ հաստատուելով այնտեղ[132], նրա բնակիչներին նաեւ իրազեկել էր լեռնաշխարհի ինչ-ինչ իրողութիւնների մասին:

Բերուած ամբողջ նիւթը եւ դրան մեր տուած մեկնաբանութիւնները խօսում են Ք.ա. Գ. հազարամեակի երկրորդ եւ Բ. հազարամեակի առաջին կէսերին հայութեան կեանքի ռազմական եւ հոգեւոր բնագաւառներում Բզնունիքի եւ Տարօնի ունեցած առաջատար դերի մասին: Դրանով պայմանաւորուած է եղել նաեւ Արեւի եւ Ամպրոպի աստուածների՝ որպէս երկուորեակներ հանդէս գալը զինուորական եւ քրմական դասերի հովանաւորների դերում: Ընդ որում, քննութեան առարկայ նիւթին վերաբերող յատուկ եւ հասարակ անունների հնդեւրոպական-հայկական ստուգաբանութիւնները մէկ անգամ եւս գալիս են հաստատելու Վանայ լճին յարող տարածքների եւ հնագոյն Տարօնի սեպագրային ժամանակաշրջանի բնակչութեան հնդեւրոպա-հայկական բնոյթը: Նա՛ է եղել աշխարհակալ խէթական եւ ասորեստանցի թագաւորների բանակների աւերիչ արշաւանքներին դիմադրողն ու դիմադարձողը: Իսկ դրանք իվերջոյ յաջողութեամբ են աւարտուել շնորհիւ կառամարտիկների գլխաւորած զինուորական դասի եւ քրմական դասի վերնախաւի կայուն դաշինքի:

---

131 *Գիլգամէշ*, էջ 104-5:

132 Ս. Պետրոսեան, «"Արմենոսի առասպելի" եւ Արամանեակի աւանդազրոյցի պատմական յենքը», *ՎԷՄ համահայկական հանդէս*, 3:2018, էջ 43-64. նաեւ նոյնի՝ «Հնդեւրոպական եւ շումէրական Հողմի աստծու բնօրրանը», *Գիտական աշխատութիւններ*, XIX:2016, Գիւմրի, էջ 52-61:

OLD BZNUNIK: FEATURES OF ITS PRIVILEGED CLASS AND RELIGION

(Summary)

SARKIS PETROSYAN (vahe1996@mail.ru)

The first inscriptions and authentic information on the state formations of the Armenian Highlands,their inhabitants and religion are found in the chronology of the Hittite king, Hattusili I (1620-1590BC). He is the first among the Hittite kings who crossed the Euphrates and reached the hinterland of the Armenian Highlands, and the Beznunik region in particular. Thanks to these invasions the Hittites called the states around the military routes by the names of the tribes-heads-kings' residences. These localities were also the unified worshipping centers of the main pair of the principal old Indo-European Gods: the God of thunders in Hasuva and the God of the Sun in Ḫaḫḫa. To be sure, in Hasuva the supreme god (the god of storms) was considered the patron of the local soldier-king, while in Ḫaḫḫa, the God of the Sun was considered to be the patron of the local priest-king.

It seems while cooperating with each other, the privileged military and the religious classes of these two states took into consideration not only their military and economic interests but their ethnic commonality too. They spoke Armenian and had similarities in ideology and worshipping practices.

The author argues that eventually these factors were pivotal in leading to the union of the Hasuva- Ḫaḫḫa tribal formation.

Though it lost the war against Hattusili I, the union served as a base for the formation of the Hayasa tribal union later on.

ՅԵՏ-ԵՂԵՌՆԵԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՄԻՔԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ, ԼԻԲԱՆԱՆԷՆ

ՄՈՒՏՔ

Հայոց Ցեղասպանութիւնը արեւմտահայութիւնը անճիտեց իր միջավայրի արմատներէն, հազարամեակներու կերտուածք ունեցող գրեթէ ամէն բանէ: Արմատախիլ եւ տասանորդուած արեւմտահայութիւնը կորսնցուց թէ՛ պապենական միջավայրը եւ թէ՛ այնտեղ կերտուած շունչն ու ոգին եւ ուրիշ շատ բան, որ խթան, գործօն ու ներշնչարան հանդիսացած էին արեւմտահայ ժողովրդական ստեղծագործութեան, երգ ու բանին:

Այսօր, այս ելակէտէն ու հարիւրամեայ հեռաւորութենէ, երբ նայինք նախաեղեռնեան բանահիւսութեան, հարցում մը ինքզինք կը պարտադրէ.- ի՞նչ մնաց արեւմտահայ ժողովրդական բանահիւսութենէն, գոյատեւե՞ց, աճեցա՞ւ, ձեւափոխուեցա՞ւ, նորը ծնա՞ւ...:

Արագ մատնանշումներու գնով, թերեւս կարելի է առանձնացնել հայրենակցական հատորներուն եւ կարգ մը ժողովածուներու մէջ իբրեւ աւանդ հաւաքուած նշխարներ այդ բանահիւսութենէն: Թերեւս կարելի է մատնանշել նաեւ կարգ մը բարբառներու մայրամուտային պահպանումը: Նաեւ՝ արեւմտահայ բնօրրանէն եկած լուսանկարներ ու հոգեպահուստ փշուրներ՝ տան բանալի, կալուածաթուղթ, փաստաթուղթ, Աստուածաշունչ եւն....:

Միւս կողմէն, պէտք է առանձնացնել նորակերտ բնակավայրերուն մէջ, նոր կեանքին հետ ծլարձակած ժողովրդային ստեղծագործութիւնները, որոնք արտացոլեցին նոր միջավայրը, նոր խնդիրներ, նոր ապրումներ, կարօտը անցեալին ու պապենական բնօրրանին, անդրադարձը նորաձագ շատ խնդիրներու եւ անշուշտ՝ յուշերը տեղահանութեան, արմատազրկումին, հողազրկումին, Ցեղասպանութեան:

Ստորեւ հրատարակուող երկու փունջերը կ'արտացոլացնեն 1940-50ականներու լիբանահայ ազգային ապրումներու մէկքանի երեսակներ, ինչպէս՝ հայրենական կարօտ, կենցաղային պայմաններու անդրադարձ, պապենական հողէն դարձեա՛լ ելից եւն.:

Ա.- Փունջ մը յօրինուած բանաստեղծութիւն Վահան Ա. քհնյ. Քենտիրճեանէն

Արժ. Տ. Վահան Ա. Քահանայ Քենտիրճեան ծնած է Մուսալեռան Պիթհաս գիւղը, 1888ին: Նախնական ուսումը ստացած է գիւղի նախակրթարանին մէջ, 1908ին զինուորագրուած օսմանեան բանակ, 1914ին վերադարձած հայրենի գիւղ, ուր ամուսնացած եւ ունեցած է վեց զաւակ: Մասնակցած է Մուսալեռան ինքնապաշտպանութեան, ապա Փոր Սայիտի վրանաքաղաքին մէջ վարած ուսուցչական պաշտօն: 1937ին կը ձեռնադրուի քահանայ (ծաղկեայ փիլոն՝ 1949, լանջախաչ՝ 1956, աւագութեան աստի-

ճան՝ 1960), կը քահանայագործէ իր պապենական գիւղին մէջ: Կը շրջագայի Ալեքսանտրէթի գիւղերը՝ Պիթիասի անաւարտ եկեղեցիին (շինութեան ձեռնարկուած 1912ին) շինութեան հանգանակութեան համար, որուն խնդրով կը նամակցի Եգիպտոսի հայոց առաջնորդ Մամբրէ եպս. Սիրունեանին հետ: Նոյն խնդրով նամակներ կը յղէ Մ. Նահանգներ[1]:

...1939 Վարդավառի մեռելոցին մուսալեռցիք կը լքեն իրենց հայրենի բնօրրանը ու կ'անցնին, Լաթաքիոյ հիւսիս՝ Պասիթ ծովեզերեայ շրջանը, ուրկէ 40 օր ետք՝ Լիբանան, Այնճար, ուր կը քահանայագործէ Քենտիրճեան մինչեւ իր վախճանումը՝ 9 Յունուար 1985ին:

Վահան քահանայ ունի շարք մը բանաստեղծութիւններ, աղօթքներ, կիրակնօրեայ եւ բարոյախօսական գրութիւններ, որոնք հաւաքուած են *Հաւաքածոյ ընտիր գրուածոց* վերնագրեալ գրքոյկին մէջ (Անթիլիաս, 1985, 96 էջ): Քահանան իր բանաստեղծութիւններէն միքանիին յօրինած է երաժշտութիւն եւ երգած գիւղական թէ ընտանեկան շրջանակներու մէջ, մանաւանդ՝ Այնճարի սկզբնական ցուրտ ու չոր տարիներուն: Ստորեւ կը հրատարակենք այդ երգերը, որոնք երգուեցան իր թոռան՝ Սեւակ Քենտիրճեանի կողմէ, Այնճար, Օգոստոս 2021ին, նոթագրուեցան լիբանահայ խմբավար, երաժիշտ Զաքար Քէշիշեանի կողմէ, Դեկտեմբեր 2022ին:



[1] Հանգանակութեան նպաստած է եկեղեցիին սկզբնական շինութեան սատարած ոմն Իսահակ Արամեան, որ ստանձնած է ղրկուած 100 տոմսերու սպառման աշխատանքը: Իր մահէն ետք, զաւակը՝ Յակոբ, վաճառած բոլոր տոմսերուն փոխարժէքը՝ 1010 եգիպտական դահեկան կը յանձնէ Գահիրէի առաջնորդարան, որուն համարժէք չէք մը կը ղրկուի Վահան քահանային...:

Քայլերգ Կիրակնօրեայ դպրոցի

Օն ընկերներ երթանք
Կիրակնօրեայ դպրոց,
Սորվինք աղօթք մաղթանք,
Շարականներ եւ գոց:

Օրհնենք անոր սուրբ անուն
Խնդրենք միաբերան
Որ տայ շնորհ անհուն
Ու պահէ անսասան:

Մենք կը սիրենք Կիրակին
Սուրբ օրը պատուական,
Երգենք-երգենք կրկին
Տիրոջ փառքն յաւիտեան:

Օն ընկերներ երթանք
Կիրակնօրեայ դպրոց,
Սորվինք աղօթք մաղթանք,
Շարականներ եւ գոց:

Անուշիկ Մայրիկ

Ով կերակրեց զիս տալով կաթ անուշ
Ով առաւ իր գիրկն որ ննջեմ մուշ-մուշ,
Իմ վարդ երեսիս ծաղիկներ թափեց,
Անուշիկ մայր իմ, սիրունիկ մայր իմ,
Անուշիկ մայր իմ, սիրունիկ մայր իմ:

Երբ իմ աչքերէս փախաւ քուն գնաց,
Ով ինձ անուշիկ օրօրներ ասաց,
Անքուն աչքերով հսկեց իմ վրաս,
Անուշիկ մայր իմ, սիրունիկ մայր իմ,
Անուշիկ մայր իմ, սիրունիկ մայր իմ:

Ես կրնամ միթէ մոռնալ քեզ հոգիս,
Դուն որ սնուցիր ու հոգացիր զիս,
Ու այնքան ցաւեր ոչինչ սեպեցիր,
Անուշիկ մայր իմ, սիրունիկ մայր իմ,
Անուշիկ մայր իմ, սիրունիկ մայր իմ:

Հայաստան Երկիր

Հայաստան երկիր մեր դրախտավայր,
Երթանք հայեր մեր երկիրը
Շէն ըլլանք ուրախ [երկու անգամ]:

Մեր մայրաքաղաքն է լոյս Երեւան,
Երկուհազար եօթը հարիւր
Յիսուն տարեկան [երկու անգամ]:

Դիմացն Արարատ է միշտ ձիպւնապատ
Նոյեան Տապան անոր վրայ
Նստած է հանդարտ [երկու անգամ]:

Սեւանայ լիճին ջուրն է անուշ,
Անուանի է իշխանաձուկն
Ուտողին անուշ [երկու անգամ]:

Սուրբ Էջմիածին լուսոյ վառարան,
Լուսաւորչի անմար կանթեղ,
Լոյս տուր հայութեան[երկու անգամ]:

Ընտանեկան խմբանկար, հաւանաբար լուսանկարուած Պիթիաս, 1934ին, Տէր Վահանի օծման առթիւ: Ետեւի շարք, ձախէն աջ.- Սարա (ծն. 1921), Սարգիս (1914), Մկրտիչ (1918), Մարտիրոս (1924, Տէր Բաբկէն քահանայ): Առջեւի շարք.- Արմէնուհի (1927), երէցկին Րեբեկա, Տէր Վահան եւ Եփրէմ (1929) Քենտիրճեաններ. (ընտանեկան արխիւ)



Պիթիասի անգմբէթ եկեղեցին.
Մշակ-քահանան շուրջ 1955ին, երբ Այնճարի նորահաստատ բնակչութիւնը նիւթապէս դժուար վիճակի մէջ էր



Ծիծեռնակը[2]

Ծիծեռնակը տեսէ՛ք ահա
Նորէն ճամփայ է ելեր
Թեւերը բաց կը թռչի կ'երթայ
Դէպ անծանօթ երկիրներ

Ձմռան ցուրտին չեմ դիմանար
Տաք տեղ կ'երթամ անոր համար
Սակայն գարնան հետը նորէն
Ձեզի կու գամ զուարթօրէն

Կեցի՛ր մ'երթար ա՛յ ծիծեռնակ,
Մեր երկիրը աղուոր է
Կեցի՛ր մ'երթար սիրուն թռչնակ,
Մեր երկիրը աղուոր է:

Բոյն կը շինեմ երդիքի մօտ
Հաւկիթներով լեփլեցուն
Ձագուկներս թող ճըլըլլան
Ուրախ զուարթ օրնիբուն:

[2] Այս բանաստեղծութիւնը անտիպ է, չէ ընդգրկուած Վահան քահանայի վերոյիշեալ գրքոյկին մէջ:

Ձախէն աջ՝ Վարդուհի, Արաքսի, Թագուհի Տէր Դանիէլեաններ եւ Արաքսի Տէր Ապաճեան (1956)

Արաքսի Տէր Ապաճեանի ասեղնագործութիւններէն

Բ.- Ալեքսանտրէթէն հայկական ելիցին նուիրուած տեսթան

Ստորեւ հրատարակուող ձեռագիր տեսթանը եւ առնչեալ ընտանեկան տուեալները, նկարները մեզի տրամադրեց Հայկազեան համալսարանի ուսանողուհի Հելենա Ապուսէֆեանը, որ զանոնք բչերաւ իր մեծմօր մօտէն:

Տեսթանը հայատառ թրքերէն է, կը վերաբերի Ալեքսանտրէթի Սանճաքէն հայոց ելիցին: Ձեռագիրը՝ 20 քառատող տուն, դիւրընթեռնելի է, գրուած է մատիտով, պարզ, միակտոր, 93x11,5 սմ ծաւալի թուղթի երկու երեսներուն: Առաջին 12 տունը գրուած է թուղթի Ա. երեսին, իսկ մնացեալը՝ երկրորդ երեսին: Տուները գրուած են տակ-տակի, իւրաքանչիւր երկու տուն կը գոյացնէ մէկ հատուած:

Ըստ Ապուսէֆեանի, տեսթանին հեղինակը՝

Արաքսի Տէր Ապաճեան, մեծմօրս մեծմայրն է: Ծնած է Ատափազար, 1904ին եւ մահացած 5 Յունուար 1978ին, Պէյրութ: Յաճախած է Ատափազարի հայկական վարժարանը, 1925ին ամուսնացած է ասպարէզով շինարար, մարաշցի Միքայէլ Տէր Դանիէլեանի հետ (1900-54), Ալեքսանտրէթ, ունեցած 11 զաւակ, որոնցմէ 9ը մահացած են 12-18 ամսական տարիքին: Ողջ մնացած են Նազելին (1927-41)[1] եւ Վարդուհին (ծն. 1934, Պէյրութ): Ընտանիքը 1929-30ին հաստատուած է Պէյրութ, Սանճաք հիւղաւան, ուր բնակած է մինչեւ 1968-69: Վարդուհի կ'ամուսնանայ Յակոբ Վելետեանին հետ, կ'ունենայ չորս զաւակ՝ Արաքսի, Լուիզա, Միքայէլ եւ Թագուհի (վաղամեռիկ): Արաքսի կ'ամուսնանայ Բիւզանդ Նազարեանի հետ, կ'ունենայ երկու զաւակ՝ Սիլվի եւ Նշան: Սիլվի կ'ամուսնանայ Ռաֆֆի Ապուսէֆեանի հետ, կ'ունենայ զիս՝ Հելենա եւ քոյրս՝ Սերենա:

Ըստ մեծմօրս՝ Արաքսի Տէր Դամնիէլեանին, հեղինակուհին (Հաճի նենէ՝ այդպէս կանչած են զինք) կը հպարտանար, որ ինք Կոմիտաս վարդապետի երգչա-

[1] Ըստ ընտանեկան պատումին, Նազելի կը մահանայ, երբ իր հայրը կը կառուցէր իրենց տունը, որ հիւղաւանին առաջին քարաշէն տունն էր: Մինչ Նազելին կ'օգնէր հօր տան շինութեան՝ մօտակայ ծովեզրին աւստրալիացի զինուորի մը զինավարժական կոյր փամփուշտը կը սպաննէ զինք: Յանցաւոր զգալով՝ բանակայինը հոգացած է յուղարկաւորութեան ծախքերը ...:

խումբի կրտսերագոյն մասնակիցը եղած է եւ իր ամուսնական տան մէջ կ'երգէր կոմիտասեան երգերը: Ան ամէն Կիրակի եկեղեցի կ'երթար կանուխէն: Ծանօթ էր իբրեւ հիւղաւանի բնակիչներուն նամակները գրողը. խորհուրդ, խրատ եւ օրհնութիւն շատ կու տար: Բարեսէր էր, կարճահասակ, որբ երեխաներու կը հոգար, միշտ մութ գոյն կը հագնէր, մազերը կը գնդէր գլխուն ետին: Տան գնումները եւ ճաշը ինք կ'ընէր. յաճախ անուշապուր, թոփիկ, ճիտապուր, *սարըպուրմա* կը պատրաստէր. ասոնք իր մասնագիտութիւնն էին, կ'այցելէր պոլսեցի հայերուն եւ անոնց կ'օգնէր վերոյիշեալ ճաշերը եփելու:

Ան ասեղնագործութեամբ կը զբաղէր. իր անուանակիր թոռնուհիին՝ կրտսեր Արաքսիին սորվեցուցած էր ասեղնագործութիւն: Մեծմայր ու թոռնուհի շատ սիրալիր ու սերտ յարաբերութեան մէջ էին: *Տեսթան*ը հեղինակուհին անձամբ յանձնած է իր թոռնուհիին՝ Արաքսիին, որ միքանի այլ աւանդներու հետ իբրեւ յիշատակ պահած է տուփիկի մը մէջ:

Արաքսին կու գար հարուստ ընտանիքէ. ամուսնութեան առաջին երեք օրերուն ան անօթի մնացած է, որովհետեւ իր տան մէջ, ընտանիքի իւրաքանչիւր անդամ ունէր իր պնակը...եւ սպասած էր իր պնակին...որ չէր բերուած, որովհետեւ ամուսնական տան մէջ բոլորը կ'ուտէին մեծ ափսէի մը մէջ դրուած ճաշէն՝ ձեռքով: Երրորդ օրը, ան ...կը ստիպուի հրաժարիլ իր հօրենական տան ճաշելու սովորութենէն եւ յարմարիլ նոր կացութեան:

Արաքսի Տէր Ապաճեան, կողքին որբուկ մը, որուն ինք թիեցուցած է. որբուկին ետին՝ անոր քոյրը, միւսները՝ անծանօթ (1934)

*Տեսթան*ը[2] կ'ընէ պատումը Ալեքսանտրէթի հայութեան ելիցին, համառօտա-կի կը ներկայացնէ այնտեղի կեանքը, թուրք-հայ յարաբերութիւններ, ելիցի ցաւը, տեղափոխութիւնը, արաբ ասպնջականութիւնը...: Ան ունի պատկերալից լեզու, դիպուկ արտայայտութիւններ, սիրուն (երբեմն պարզունակ) նկարագրութիւններ: Օգտագործուած են նաեւ հայերէն բառեր: Կան խնդրառութեան անհամապատասխանութիւններ, լեզուական թիւրըմբռնումներ, խորթութիւններ, վրիպանքներ, թրքերէն բառեր գործածուած են այլ ենթիմաստներով, ուրիշներ՝ երկիմաստ (հող-հայրենիք, միլլէթ-ազգ): Լեզուական այս երեւոյթները կրնան արդիւնքն ըլլալ Տէօրթ Եոլի տեղայնացուած խօսուածքին, կամ բարբառային շեղումներու:

[2] *Տեսթան*ին երբեմն բառացի, երբեմն մեկնաբանեալ թարգմանութիւնը կատարեց Կարօ Աբրահամեան, որուն կը յայտնենք մեր խորին շնորհակալութիւնը:



Ձեռագիր տեսթանը

Ալեքսանտրէթի Սանճաքէն ելիցի տեսթան

Հմր	Բնագիրը	Բնագիրը լատինատառ	Հայերէն թարգմանութիւն
1	Ֆիղան տըր պու, գան էթմէյին պիր տեստան Ալըպ օգուսուն հէր էրմէնի օլան Ճիկէրիմիզ տօլտու գան իլէ հիճրան Հէփիմիզ իւչին պու զէհիրլի ֆինճան:	Figan dir bu, kan etmeyin bir destan Alib okusun her ermeni olan Cigerimiz doldu kan ile hicran Hepimiz icun bu zehirli fincan.	Ճիչ մըն է այս, մի արիւնէք դիւցազնավէպ մը [զոր] առնէ եւ ընթերցէ ամէն հայ Մեր թոքերը լեցուեցան արիւնով, ցաւով Մեր բոլորին համար է թունաւոր այս սկահակը:
2	Կէլմէզ օլաեըտը օթուզ տօգուզ տէյիրի, Նէ տիր պիզէ աճէպ Ալլահըն գահրի, Եըգտը խարապ էթտի, թաթլը տիեարը, Չօք մը կէօրտիւն պիզէ Սանճակ ճիվարը:	Gelmez olayidi otuz dokuz deyiri Ne dir bize aceb Allahin kahri Yikdi harab etti, tatli diyari, Cok mu gordu bize Sancak civari.	Չեկած ըլլար երեսուն իննի շրջանը Ի՞նչ է արդեօք մեզի Աստուծոյ պատճառած կսկիծը Փլցուց, աւերակի վերածեց անուշ երկիրը Շա՞տ տեսար մեզի Սանճաքի շրջանը:
3	Գան թէր տէօքտիք շէնէլտիք չէօլիւ տաղը	Kan ter doktuk seneldik colu dagi	Արիւն քրտինք թափեցինք, շէնցուցինք անապատը, լեռը
	Պիր չօճուգ կիպի կիւթտիւք կիվ Սանճաղը	Bir cocuk gibi gutduk gul Sancagi	Մանուկի նման հետապնդեցինք (սիրեցինք) վարդ Սանճաքը
	Գարա տաշտան չըգարտըք պալ իլէ եաղը	Kara dastan cikardik bal ile yagi	Սեւ քարէն հանեցինք մեղրով իւղը
	Կէօնէնմէտիք, չէքէրիզ վախը:	Gonenmedik, cekeriz vahi.	Չկրցանք վայելել՝ կ'ողբանք:
4	Աճը իլէ կէչէրտիք պիզ կիւլ պահարը,	Aci ile gecerdik biz gul bahari,	Ցաւով անցուցինք մենք ծաղկած գարունը
	Ֆէլէկ թահմ էյլէսին եօգարըտան պարը	Feleg tahm eylesin yokaridan bari	Ճակատագիրը փառք թող տայ ամբողջ երկայնքով
	Պըրաքըպ կիտէրիզ եուրտու տիեարը	Birakib gideriz yurdu diari	Կը լքենք կ'երթանք հայրենիքը,
	Գուրուտու միլլէթին գանը տամարը:	Kurudu milletin kani damari.	Չորցաւ ազգին արիւնը եւ երակը:
5	Սէօնմէզ ալէֆ եանար եուրէք եօգ չարէ	Sonmez alef yanar yurek yok care	Սիրտը անմար կրակով կը վառի անճար:
	Զալիմ տիւշման ալտը պու եարէ,	Zalim dusman aldi bu yare,	Անգութ թշնամին գրաւեց (պատճառե՞ց - Թ.) այս .... վէրքը
	Աճէպա վար մը պիզիմ կիպի պիչարէ	Aceba var mi bizim gibi bicare	Արդեօք կա՞ն մեզի նման անճարներ

	Քիմսէ եօք մը պիզի տէրթտէն գուրթարա	Kimse yok mi bizi dertden kurtara	Մէկը չկա՞յ որ ազատէ մեզ այս տարտէն:
6	Հէր ներէ կիթսէք տէնիրիզ քէյվանը Էքիպ պիչէրիզ եէմէյիզ մէյվայը, Պու տիւնեատա եօգըմըշ պիզէ տայը, Քի գալտըրսըն պիզտէն պու գայկը:	Here nere gitsek denirizi kervani Ekib biceriz yemeyiz meyvayi, Bu dunyada yokimis bize dayi, Ki kaldirsin bizden bu kaygi.	Ուր որ երթանք՝ կը հետեւինք Երեւակին Կը ցանենք կը հնձենք չենք ուտեր պտուղը Այս աշխարհին մէջ մօրեղբայր չունինք եղեր Որպէսզի վերցնէ մեզմէ այս անձկութիւնը:
7	Կէլիր միլլէթ իշ եօգ կիւճ եօգ նէ չարէ Այրան սաթար կիւն կէչիրիր պիչարէ Սանճաքտա իքէն եաղ սաթար թիւճարէ, Շիմտի արթըգ պօյուն էյէր նաչարէ:	Gelir millet is yok guc yok ne care Ayran satar gun gecirir bicare Sancakda iken yag satar tuccare, Simdi artik boyun eger nacare	Ժողովուրդը կու գայ. ոչ գործ ունի ոչ կարողութիւն, ոչ ճար Անճարը թան կը ծախէ օր կ'անցընէ Սանճաք եղած ատեն իւղ կը ծախէր վաճառականին Իսկ հիմա, անճար, վիզը կը ծռէ:
8	Թէսլիմ էթտիք եուրտու ճանի էլինէ Եազըք օլտու սու վերէն եօգ կիւլիւնէ Եէշիլ եօնճա պիթսին լալէ եէրինէ Տէսթան օլտու շու Ճիհանընտիլինէ:	Teslim ettik yurdu cani eline Yazik oldu su veren yok gulune Yesil yonca bitsin lale yerine Destan oldu su cihanin diline	Յանձնեցինք հողը ոճրագործին ձեռքը Մեղք եղաւ, վարդին ջուր տուող չմնաց Կանաչ արուոյտ բուսնի թող փոխան կակաչի Տեսթան եղաւ ասիկա աշխարհի լեզուին վրայ:
9	Այն-Տելֆէեա եըքտըխ հուտուտուն տաշը, Խաչատուր պայը գօյտու միլլէթ պաշը Իլք տէֆա վուրտուրտու միլլէթա տաշը Փարա իլէ սաթտը քէնտի գարտաշը:	Ayn Delfeya yikdik hududun dasi, Hacadur bayi koydu millet basi Ilk defa vurdurdu millet dasi Para ile satti kendi kardasi.	Այն Տելֆէի վրայ դրինք սահմանաքարը Խաչատուր պէյը դրաւ [նշանակուեցաւ] ազգապետ Առաջին անգամ ազգին գլուխը քարին զարնել տուաւ Դրամով վաճառեց իր եղբայրը:
10	Նէ եափմալը միլլէթ գալտը սահիպսիզ Եէր եաթագ կէթիրսէ կէչմէզ կէօմրիւքսիզ Չօքլարը քաչտըլար, պիր թէք կէօմլէկսիզ Կիւնլէրի կէչմէյօր ահու ֆիղանսըզ:	Ne yapmali millet kaldi sahibsiz Yer yatak getirse gecmez geomruksuz Coklari kacdilar, bir tek gomlegsiz Gunleri gecmeyor ahu figansiz.	Ի՞նչ պէտք է ընել. ազգը մնաց անտէր Եթէ անկողին բերէ՝ չ'նցնիր առանց մաքսի: Շատերը փախան, առանց իսկ շապիկի [Իրենց] օրը չ'անցնիր առանց ախի ու ճիչի:
11	Թիւրք չաղըրըր գարտաշըզ պիզ քաչմայըն Եիւրէքլէրէ թազէ եարէ աչմային Կիտիպ Հալէպ սուլարընը իչմէյին	Turk cagirir kardasiz biz kacmayin Yureklere taze yare acmayin Gidip Haleb sularini icmayin	Թուրքը կանչեց՝ եղբայր ենք մենք, մի՛ փախչիք Մեր սիրտերուն թարմ վէրք մի՛ բանաք Մի՛ երթաք Հալէպի ջուրը մի՛ խմէք

	Պիզ գարտաշըզ, պիզէ սիլքէն պիչմէյին:	Biz kardasiz, bize siz ken bicmeyin.	Եղբայր ենք մենք, մեզի քէն մի՛ պահէք [բռնէք]:
12	Սէօնսիւն օճաղընըզ, կէօզ ըշըղընըզ Լազըմ տէկիլ պիզէ գարտաշլըղընըզ Պօզ պիթսին եագամըզտան էնինիզ,	Sonsun ocaginiz, goz isiginiz Lazim degil bize kardasliginiz Boz bitsin yakamizdan eniniz,	Մարի՛ թող ձեր օճախը, աչքին լոյսը Պէտք չէ մեզի ձեր եղբայրութիւնը Թող վերջանա. իջէք մեր օձիքներէն
	Սիզի կէօրմէսէք տահա էյի օլուրուզ:	Sizi gormesek daha eyi oluruz.	Աւելի լաւ կ'ըլլանք եթէ ձեզ չտեսնենք:
13	Եազըգ օլտու օ աթըղըն սույունա Ագար գուրպաղալար կէօզիւնէ Եազըգ օլտու Հաճ Աբիկին էլինէ	Yazik oldu o atasin suyuna Akar kurbagalar gozune Yazik oldu Hac Apig'in eline	Ափսոս՝ այդ առուին ջուրին Գորտեր կը հոսին ակին Ափսոս եղաւ Հաճի Աբիկին ձեռքին
	Գարղա գօնտու սարը պիւլպիւլ երինէ:	Karga kondu sari bulbul yerine.	Ագռաւ թառեցաւ դեղին պլպուլին փոխան:
14	Եազըգ օլտու օ սօվուքլուք քէօյինէ Եազ կիւնլէրի պէնզէր իտի տիւկիւնէ Հա՜յ վախ օլտու կէչտի ապտալ էլինէ Պու էլլէր սանա գալսա վար կիթտէ օյնա	Yazik oldu o sovugluk koyune Yaz gunleri benzer idi dugune Hay vah oldu gecdi abdal eline Bu eller sana kalsa var gitde oyna	Ափսոս եղաւ այդ Սովուքլուք գիւղին Ամռան օրերը հարսանիքի կը նմանէին Հէյ վախ եղան անցան չտեսի ձեռքը Եթէ այս ձեռքերը քեզի մնան գնա՛ ուրախացիր:
15	Հայտութ կիպի տէօրթ էթրաֆը եալատը	Haydut gibi dort etrafi yaladi	Յելուզակի նման չորս կողմը լափլիզեց [կողոպտեց]
	Ազկըն գուրտսըն գուզումուզու թալատըն Գարղալար կիպի կէօզիւմիւզիւ սէն օյտուն	Azgin kurdsun kuzumuzu taladin Kargalar gibi gozumuzu sen oydun	Կատղած գայլ, մեր գառը կողոպտեցիր Ագռաւներու նման մեր աչքը դու՛ն փորեցիր
	Միլլէթիմիզի էլմա կիպի սէն սօյտուն:	Milletimizi elma gibi sen soydun	Մեր ազգը խնձորի նման դուն կեղուեցիր [կողոպտեցիր]:
16	Հիչ գուրուլմա գապարմա սէն քէնտինէ Տարպէ եէրսին էնէրսին եէր զէմինէ Կէօզ տիքմէ միլլէթին պաղճէսինէ էվինէ	Hic kurulma kubarma sen kendine Darbe yersin enersin yer zemine Goz dikme milletin bagcesine evine	Բնաւ մի՛ պարծենար, մի՛ ուռիր դուն քեզի Կը հարուածուիս կ'իյնաս գետնին Աչք մի՛ տնկեր մարդոց պարտէզին, տան
	Գօվուլուրսուն քէօփէկ կիպի էսկի եէրինէ:	Kovulursun kopeg gibi esgi yerine	Կ'արտաքսուիս/կը վռնտուիս շան նման նախկին տեղդ:
17	Սօն փօստալար պաշլատըլար կէլմէյէ Նէ՞ տերման օլուր աչըլմըշ եարայէ Զալըմ տիւշմանը պրագտըք լալէյէ կիւլէ	Son posdalar basladilar gelmeye Ne derman olur acilmis yaraye? Zalim dusmani brakdkik laleye gule	Վերջին հանրակառքերը սկսան հասնիլ Ի՞նչ դարման կ'ընէ բացուած վէրքին Անխիղճ թշնամիին ձգեցինք կակաչը, վարդը
	Պիր տալ պիզէ ռահան կէլմէօր էլէ:	Bir dal bize rahan gelmeyor ele	Րեհանի ճիւղ մ'իսկ չ'անցնիր մեր ձեռքը:

18	Հէփ անալար մէքթէպլէրի եուտուլար Կելէն ճանլար մէքթէպլէրէ տօլտուլար Ֆիղան էտիպ սաչլարընը եօլտուլար	Hep analar mektebleri yudular Gelen canlar mekteblere doldular Figan edib saclarini yoldular	Բոլոր մայրերը դպրոցները լեցուեցան Եկող անձերը դպրոցները լեցուեցան Ճչալով մազերնին փետեցին
	Ճահիլլէրին կիւլ եիւզլէրի սօլտուլար	Cahillerin gul yuzleri soldular	Ճահէլներուն խնդումերեսները խամրեցան:
19	Եաշասըն արապլար միսաֆիր սէվէր Պիր էքմէքլէրի օլսա պիզիմլէ եէրլէր	Yasasin arablar misafir sever Bir ekmekleri olsa bizimle yerler	Կեցցեն արաբները հիւրասէր Մէկ հաց (իսկ) ունենան՝ մեզի հետ կը կիսեն
	Եիւզ պին տահա կէլսէ պէսլէրիզ տէրլէր	Yuz bin daha gelse besleriz derler	Հարիւր հազար դեռ գայ՝ զանոնք ալ կը կերակրենք կ'ըսեն
	Պու տարպէ, հէր հէփիմիզէ տիր տէլլէր:	Bu darbe, her hepimize dir deller.	Այս հարուածը, մեր բոլորին է [ուղղուած] է կ'ըսեն:
20	Սէֆիլ միլլէթ իւմիտին կէսմէ տիւնեատան Պիր միլեօն ֆրանգ եարտըմ Ֆրանսատան Տէօրթ պին պէշ եիւզ տօլար Ամերիգատան Զամիրլի օլայտը պարի պունու տաղըտան	Sefil millet umidin gesme dunyadan Bir milyon frank yardim Fransadan Dort bin bes bes yuz dolar Amerikadan Zamirli olaydi bari bunu dagidan	Թշուառ ժողովուրդ, յոյսդ մի՛ կտրեր աշխարհէն Մէկ միլիոն ֆրանք օգնութիւն Ֆրանսայէն Չորսհազար հկինգհարիւր տոլար՝ Ամերիկայէն Գոնէ խիղճ ունենար զայն բաշխողը:

POST-GENOCIDE ARMENIAN POPULAR POETRY AND MUSIC FROM LEBANON

(Summary)

Genocide, deportation and uprooting from the homeland were a severe blow to the natural creation and development of Armenian folklore, which had developed for centuries in the natural environment of the Armenians. Furthermore, several other factors undermined the natural flow of new folkloric creations in the new settlements of the refugee Armenians, not the least the instability and continual relocation of the decimated families. Against such odds, however, some new folkloric creations have been observed. Some are the reshaped remnants of pre-Genocide folklore, and others are totally new creations that reflect the new conditions of the refugees, their nostalgia, etc.

Five poems which were written and composed by Father Vahan Kendirdjian, the priest of the village of Bitias in Musa Dagh, who accompanied his flock to Ainjar, are presented in the first section. These poems were sung in Anjar, in the 1940s and 1950s.

In the second section an unpublished *destan*, written in Turkish using Armenian script, by Araxi Der Abadjian, probably shortly after her arrival in Beirut. This 20-verse poem narrates the departure of the Armenians from the Sandjak of Alexandretta and their exodus to Lebanon through Ras Basit, an area north of Latakia.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՍՈՅԹԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԴՐՍԵԽՈՐՈՒՄՆԵՐԸ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ԼՈՒՍԻՆԷ ՂՈՒԷՋԵԱՆ (lgrejyan@yandex.ru)

ՄՈՒՏՔ

Ժողովրդական բառ ու բանի խոր իմացութիւնը նշանակալից ազդեցութիւն է ունեցել Յովհաննէս Թումանեանի ողջ գրական ժառանգութեան վրայ: Դժուար է գտնել մէկ ուրիշ գրողի, ով այդքան կարեւորութիւն է տուել ժողովրդական բանարուեստին՝ իր գրական ստեղծագործութիւնների համար նիւթ դարձնելով հասարակ հայ մարդու կեանքը, ազգային ցաւն ու ճակատագիրը, ազգային իդէալները՝ համեմելով դրանք ժողովրդական բանահիւսութեան բանաստեղծական լեզուին բնորոշ անհամար բառերով ու ոճերով, դարձուածքներով, պատկերաւոր, կարճ ու դիպուկ արտայայտութիւններով եւն.:

Յօդուածում քննութեան են առնւում Յովհաննէս Թումանեանի գրական ժառանգութեան մէջ հանդէս եկող ժողովրդական խօսքի ամենակենսունակ ու ժողովրդականութիւն վայելող բանաձեւային կառոյցները (աղօթք, անէծք, օրհնանք-բարեմաղթանքներ, երդում) եւ փորձ է արւում բացայայտելու դրանց դերն ու կիրառման դրդապատճառները գրողի արձակ եւ չափածոյ երկերում:

Ըստ Թումանեանի՝ գրողի հիմնական խնդիրը պէտք է լինի ժողովրդական նիւթերի ներքին իմաստի յայտնագործումն ու ընդգծումը: Գրողը պէտք է ձգտի ըստ ամենայնի գեղարուեստօրէն եւ գաղափարապէս կատարելագործել ժողովրդի ստեղծածը՝ առանց դրա ոգին եւ արմատները խաթարելու: Գրողի շնորհքը, նշում է Թումանեանը «*հենց էդ պատմելու մէջն է, որ իմանան ինչը փոխեն, ինչը դուրս գցեն, ինչը պահեն, ինչ լեզուով, ինչ ոճով ու ինչպէս պատմեն, որ ե՛ւ գեղեցիկ դուրս գայ, ե՛ւ ժողովրդականի համն ու հոտը չկորցնի… Սա է էն ուղիղ ճանապարհը, որով հոսանք պէտք է տալ, ներս բերել առողջ ժողովրդական սփեղծագործութիւնները եւ ուժեղ, հարուստ, կենդանի լեզուն*»[1]:

Թումանեանի չափածոյ եւ արձակ ստեղծագործութիւններում բաւականին շատ են հանդիպում ժողովրդական բանարուեստի վիպական սեռի կարճառօտ ստեղծագործութիւնների կամ այլ կերպ ասած՝ բանաձեւային կառոյցների բազմաշերտ եւ բազմատեսակ կիրառութիւնները (օրհնանք-բարեմաղթանքներ, անէծքներ, երդումներ, աղօթքներ եւն.):

[1] Յովհաննէս Թումանեան, *Երկերի լիակատար ժողովածու, հտր. 6*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 1994, էջ 161:

Խօսքի հմայական զօրութեամբ շրջապատի վրայ ներգործելուն նպատակաուղղուած բանաձեւային որոշ կառոյցներ՝ անէծք, օրհնանք, ողջոյնի ու մաղթանքի խօսքեր, աղօթքներ եւն., Թումանեանի ստեղծագործութիւններում հանդէս են գալիս ոչ միայն իրենց ներքին եւ արտաքին յատկանիշերի կիրառութեամբ, այլ նաեւ դրանց անմիջական մէջբերմամբ:

Աստծուն, այդ թւում նաեւ զանազան սրբերին ուղղուած ժողովրդական տարատեսակ աղօթք-բանաձեւերը, որոնք խօսքի զօրութեամբ շրջապատի առարկաների վրայ ազդելու միջոցներ են, կոչուած են մարդուն պաշտպանել նրա գործողութիւնները կաշկանդող չար ուժերից: Թումանեանի միքանի բանաստեղծութիւններ ամբողջութեամբ կառուցուած են աղօթքների արտաքին ու ներքին օրինաչափութեամբ՝ պահպանելով թէ՛ կառուցուածքային տարրերը եւ թէ՛ ինքնաբուխ խօսքը: Օրինակ՝

Տէ՛ր արագահաս,
Աստուած արդարի,
Ու՞ր ես, եթէ կաս,
Ես աղօթք արի,
Բայց սրածութեան
Ահարկու ձայնից
Խլացաւ իսկոյն
Իմ աղօթքն անբիծ[2]…

Բանաստեղծութիւնն ինքնին անկեղծ խօսք է, աղերս-աղօթք եւ պահանջ-ընդվզում՝ ուղղուած երկնային տիրոջը՝ երկրային անարդարութիւնների դէմ:

Ինչու՞ տակաւին
Չես պատժում չարին.
Ուժդ է պակասում,
Թէ՞ չենք աղերսում.
Թէ՞ դու չըգիտես,
Որ այստեղ, երկրում
Մարդը ժպտերես
Մարդ է գիշատում…

Աղերս-աղօթքի կաղապարով է կառուցուած 1887ին գրուած «Աղօթք» բանաստեղծութիւնը, որտեղ արտայայտւում է գրողի հումորային մօտեցումը:

Սողոմոնի պէս, տէ՛ր,
Ես խելք չեմ ուզում,
Ինձ երկար օրեր
Եւ փող տուր բազում…
Մի ձեռք էլ շոր,
Միայն մոդնի, տէ՛ր,
Մին էլ մի հաստ փոր,
Տրոստ ակնոցներ[3]…

Գրողն իր քննադատութեան սլաքներն ուղղում է այն ձեւապաշտների դէմ, ում համար արտաքին տեսքն աւելի կարեւոր է, քան մարդկային միտքն ու հոգեկերտուածքը:

Մարդկային տառապանքի եւ հայ ժողովրդի ազգային դառը ճակատագրի արտացոլումն ենք տեսնում «Թագաւորն ու չարչին» բալլադում հանդի-

[2] Յովհաննէս Թումանեան, *Երկեր, հտր. 1*, «Սովետական գրող» հրատ., Երեւան, 1958, էջ 41:

[3] Նոյն, էջ 179:

պող աղօթքում, որը եւս կառուցուած է նոյն «ժողովրդական պաղատանք»[4] աղօթքների տիպաբանական սկզբունքով.

Ետ նայեցինք ու կանչեցինք.

- Աստուածածի՜ն Վերին Կաթան,
Քեզ ամանաթ մեր սուրբ վաթան,
Ուր որ գընանք մեր վաթանից՝
Մեզ դարձըրու գերութիւնից…

Աղօթողը յոյսով ու հաւատով դիմում է Աստուածածնին՝ իրեն ու իր հայրենիքը բնական ու ընկերային չարիքներից պահպանելու խնդրանքով:

Ձեռքերը երկինք պարզած՝ աղօթողը պաղատանք-աղերսանքով դիմում է Աստծուն՝ որպէս աշխարհի բարիքների արարչի եւ ստեղծողի՝ աղերսելով չարին արժանի պատիժ տալ.

Ո՜վ բարեգութ, քեզ եմ խընդրել.
Ինչպէս որդիս իր մօր գըրկին
Գընաց կարօտ աչքն աշխարհից,
Նըրանք էլ թող իրենց կեանքից
Կարօտ գընան լիքն աշխարհքից…
(*Հազարան բլբուլ*)

Աղօթքն աւարտւում է բանադրական հմայական բանաձեւով՝ անէծքով, որն իդէպ ժողովրդական հմայական աղօթքներում լայն դրսեւորում ունի:

Խօսքն ուղղելով արդարամիտ Աստծուն՝ աղօթողը նպատակ ունի նրա միջամտութեամբ վերականգնելու խախտուած ներդաշնակութիւնը. «Տէր աստուած, արդարն ու մեղաւորը դու գիտես: Եթէ էս մարդը մեղաւոր է, ինձ ուժ տուր, որ մի զարկով թռցնեմ սրա գլուխը, իսկ եթէ արդար է, թող փայտ դառնայ իմ թուրը» («Քէֆ անողին քէֆ չի պակսիլ»), եւ հայցում է Աստծոյ բարեհաճութիւնը «Տէր աստուած, բարին կատարի» («Մեհրի») «Ողորմած Աստուած, Քո դուռը բանաս,// Քու ոտի տակի հողն ենք,//Դու ես ըստեղծել» («Անուշ»), «Տէր Աստուած, ասին,// Ինչ կ'ըլնի գըթաս՝// Գոնէ թեւեր տաս…» («Պօղոս-Պետրոս»):

Կորած անասունին գազաններից պաշտպանելուն ուղղուած արարողութիւնը՝ գէլկապը եւ դրան ուղեկցող հմայական խօսքային բանաձեւը՝ աղօթքը, լաւագոյնս ներկայացուած են «Գէլը» պատմուածքում: Գէլկապ անող կանայք ցածրաձայն մրմնջալով աղօթքն ու անիծելով աներեւոյթ չար ուժերին («Վու՜յ, անտէր մնաս դու, անտէր»)՝ աւանդական սուրբ զօրութիւնների օժանդակութեամբ (Ս. Սարգսի ձիու մազ, Աստուածածնի կաթ եւն.) «կալում, կապում են» գայլին.

Գէլը կապեմ երկու բըթով,
Երկու բըթով, երկու մատով,
Աստուածածնայ քաղցր կաթով,
Սուրբ Սարգսի ձիու ձարով,
Նահատակաց կարմիր քարով,
Գիլի ճանփէն մոլոր անեմ,
Գիլի ատամը խըմոր անեմ,
Ոտները թուլ,
Ականջը խուլ…

[4] Սարգիս Յարութիւնեան, *Հայ ժողովրդական եւ հմայական աղօթքներ*, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 2006, էջ 307:

Թումանեանի ստեղծագործութիւններում անէծքների, օրհնանք-բարեմաղթանքների եւ երդումների տարատեսակ դրսեւորումները վկայում են խօսքի հանդէպ դարերի խորքից եկող եւ նրանց գաղափարական իմաստ ու կարեւորութիւն հաղորդող հաւատքի մասին: Վերոնշեալ բանաձեւերը խօսքի գերբնական զօրութեամբ մարդու եւ նրան շրջապատող աշխարհի, իրերի ու երեւոյթների վրայ բացասական կամ դրական ներգործութիւն ունեցող կիրառական սեռերից են:

Թումանեանի արձակ եւ չափածոյ երկերում անյծքը ներկայանում է.-

ա. իր ուղղակի նշանակութեամբ՝ իբրեւ հմայական խօսք, որից վախեցել ու զգուշացել են ոչ միայն հայերը, այլեւ աշխարհի բոլոր ժողովուրդները՝ անկախ իրենց քաղաքակրթութեան աստիճանից: Օրինակ՝

…Տէրտէրն օրհնեց, անվարձ մնաց,
Կը բարկանայ, կ'անիծի: («Գութանի երգը»)
Նալլաթ չար սատանին:(«Սովի ժամանակից»)
Ծերի անէծքի հետ միասին
Տարան թուրքերըն իւր խոնարհ հարսին: («Մեհրի»)
…Ես միշտ էլ էսպէս անբախտ կը լինեմ,
Մանուկ օրից են ինձ դեռ անիծել («Անուշ»)
…Ո՞վ քեզ ծեծեց, Մարօ ջա՜ն,
Ո՞վ անիծեց, Մարօ ջա՜ն: («Մարօ»)
…Ու նա կատաղած՝ յանդուգն անէծքով
Ծառս եղաւ դուշման երկընքի դիմաց,
Եւ հայհոիւմ[5] էր, եւ կուրծքը ծեծում (*Անուշ*)

Եւ հաւատալով անէծքի անկասելի զօրութեանը՝ ժողովուրդը զգուշանում է. «Դու թագաւոր ես, քեզ անիծել չի կարելի» (*Հազարան բլբուլ*):

բ. հեղինակային խօսքի բաղադրիչ մաս.

Չարն էլ է միշտ ապրում անմեռ,
Անէծք նրա չար գործին…(*Թմկաբերդի առումը*)

գ. հերոսի բերանով արտաբերուած եւ որպէս ուղղակի խօսք հնչող անէծքներ. Օրինակ՝ «- *Վա՜յ, գետինն անցնէք…//Թող դուք կորչէիք հորթերի տեղակ,//Անփակ ձորի մէջ, անժաժ քարի տակ…*» (*Պօղոս-Պետրոս*), «-*Այ քու տունը քանդուի, ա՛յ ճայ,//Այ դու դառնաս գըրողի փայ*» (*Անբախտ վաճառականներ*), «-*Ա՛յ անասպուած, քու տունը քանդուի, ինչ իմ տունը քանդեցիր…*» (*Տէրն ու ծառան*) եւն.:

---

[5] Մարդկային ջղագրգիռ հոգեվիճակի բանաւոր արտայայտութիւն է հայհոյանքը, որն իբրեւ ժողովրդախօսակցական լեզուի աւանդական պատկերաւոր բանաձեւ եւս գործածութիւն ունի Թումանեանի ստեղծագործութիւններում: Օրինակ՝ «Վայ, քու արտն էլ հարամ ըլի, քու հացն էլ, քու տուած ռոճիկն էլ… - սկսում է հայհոյել յուսահատուած» (*Տէրն ու ծառան*): Այսինքն՝ իր խօսքի ուժին վստահ լինելու հաւատով եւ, ինչու չէ՝ հոգու զայրոյթը մեղմելու համար մարդը դիմում է անէծքի կամ հայհոյանքի օգնութեանը:

Ուղղակի խօսքով եւ բազմաստիճան կառուցուածքով անէծքի դրսեւորում ենք տեսնում «Անիծած հարսը» առասպելում.

Մին էլ յանկարծ բացուեց դուռը, Լեզուդ լալկի,
Ու ներս մըտաւ ծեր կեսուրը: Մազըդ թաղքի,
- Հոպոպ դառնաս, Գըլխիդ կըպչի
Անամօթ հարս… Սանրը միջի:

Եւ չի ուշանում պատիժը. հարսը կերպարանափոխւում է թռչունի՝ սանրը գլխին: Կերպարանափոխման պատճառը կարգազանցումն է («լրբի» պէս գլուխը բաց, ազատ նստած, բարձր ձայնով երգելը), այսինքն՝ ընտանեկան-բարոյական աւանդական նորմերի խախտումը:

Ընտանեկան-բարոյական աւանդական նորմերի խախտման պատճառով է (առանց ծնողների համաձայնութեան ամուսնանալը եւ եղբօր թշնամանքը Սարոյի հանդէպ) Անուշն արժանանում հօր անէծքին.

- Դո՛ւրս գընա, կորի՛, ա՛յ լիրբ, անըզգա՛մ,
Սեւ ու սուգ լինի թագ ու պըսակըդ.
Կորի՛, չերեւաս աչքիս միւս անգամ,
Գետինը մըտնի երկար հասակըդ: («Անուշ»)

Համայական խօսքի հանդէպ ժողովրդի ունեցած հաւատի լաւագոյն դրսեւորումն ենք տեսնում «Եղջերուն» պատմուածքում, որտեղ, ըստ հաւատալիքի, «որսականութիւնը» եւ «ձկնորսութիւնը» անիծուած մասնագիտութիւններ են. «Հնուց դրած նզովք ա, որ որսկանի եւ ձկնորսի փորը կշտանայ ոչ»: Մասնագիտութեան անիծուած լինելը պատճառաբանւում է գերբնական զօրութեամբ օժտուած էակի տուած անէծքով. «*…Ագա՛հ, ոչ կշտանաս դու, որ չես կշտանում լիքն աշխարհում: Թուանքդ արնով լցուի, գնդակդ խմոր դառնա, չորանա էդ թուանքը բռնող կուռը…*», որին հետեւում է անէծքի արդիւնքն՝ իբրեւ խօսքի զօրութիւնը հաւաստող փաստ. «*…Որսկան Փիրումը խելօք մարդ էր, գլխի ա ընկնում, որ էս որսի փէրն ա, ծեռաց թուանքը գցում ա մի ծառի ճիւղքի. անիծելուն պէս ծառի ճիւղքը տեղն ու տեղը չորանում ա*»:

դ. անուղղակի խօսքով, այսինքն՝ միջնորդաւորուած կերպով հնչող անէծքներ.

Ու դարվիշն էնտեղ անիծում է ինձ,
Թէ՝ դըրա օրը լացով անց կենայ…
Ա՛խ, էն դարվիշի անէծքին անգութ
Ու էս վիճակին տեղեակ է Աստուած…(*Անուշ*)

ե. պայմանի եւ հետեւութեան յարաբերութեամբ կառուցուած անէծքներ.

…Բայց տե՛ս, մտիցդ երբեք չըծգես
Պապիդ օջախը, քո հայրենիքդ,
Ծերունի հօրդ, ջահել կնիկդ,
Թէ սրանց, Միէ, դուն կը մոռանաս,

Իմացի՛ր, թէկուզ թագաւոր դառնաս,
Օր չես քաշելու քո արած մեղքից: (*Մեհրի*)

Այսպէս, անէծքի պայմանը հանդէս է գալիս իբրեւ պատճառ, որին էլ հետեւում է իբրեւ պարտադիր հետեւանք ինչող անէծքը:

զ. ձայնային արտաբերման եղանակով կառուցուած անէծքներ, *այսինքն*՝ միեւնոյն բանաձեւը, պայմանաւորուած արտասանութեան տոնայնութեամբ, կարող է ընկալուել թէ՛ իբրեւ անէծք, թէ՛ հանդիմանութիւն, թէ՛ պարսաւանք: Օրինակ՝ «*Էս Աւագը թէ՝ ա՛յ տղայ, էդ ի՞նչ խաբար է, էդ ի՞նչ ես եղել: Ասի՝ էլ խաբարը ո՞րն է, քո տունը քանդուի, էսենց բան եկաւ գլուխս*» («Արջառոս»):

Պարսաւանք կամ հանդիմանութիւն կարելի է համարել նաեւ Անուշի մօր անէծքը: Ըստ ժողովրդական մտածողութեան՝ ի տարբերութիւն հայրական անէծքի՝ մայրական անէծքը զերծ է *էներգետիկ* ուժից ու զօրութիւնից, որի վառ ապացոյցն է «Հօր անէծքը անէծք է, մօր անէծքը՝ օրհնանք» ժողովրդական ասացուածքը.

-Ու՞ր կորար, Անուշ, այ մազդ կըտրած…
-Աղջի՛, սեւասի՛րտ, քո ահը կըտրի,
Աղջիկը մէնակ ձորը կը մըտնի…(*Անուշ*)

«*Անէծքները հանդիմանութիւնների փոխարկուելիս նշանակալից դեր են խաղում նաեւ ժխտականները: Վերջիններս դրուելով անէծքի բանաձեւերի բայերի վրայ, անէծքները փոխարկում են թեթեւ հանդիմանութեան*»[6]: Օրինակ՝ «Քու տունը չըքանդուի, միամիտ նստել ես…» (*Չախչախ թագաւորը*), «*Պահ, քու տունը չըքանդուի…,- ծափ տուին ու ծիծաղեցին միքանի գիւղացի*»:

է. անէծքի դրսեւորում ենք տեսնում նաեւ ժողովրդական երգախաղիկի կառոյցում.

Ա՛յ թուխ մազաւոր աղջիկ,
Ա՛յ սարի սովոր աղջիկ,
Ջիգեարին գիւլլա դիպչի
Ով քեզ սիրի, աղջիկ: (*Անուշ*)

Օրինանք-մաղթանքների կիրառութիւնները Թումանեանի ստեղծագործութիւններում եւս զգալի քանակ են կազմում: Կիրառական այս սեռերի գործածութիւններում եւս գերակշռում են ժողովրդական լեզուի տարատեսակ դրսեւորումները թէ՛ անաղարտ տեսքով, թէ՛ հեղինակային խօսքի վերափոխմամբ, եւ երբեմն դժուար է լինում տարանջատել գեղարուեստական կերպարի հնչեցրած օրհնանքը ժողովրդականից.

Շնորհակալ եմ, անցուոր ախպէ՛ր,
Աստուած պահէ քու եարին.

---

[6] Սարգիս Յարութիւնեան, *Անէծքի եւ օրհնանքի ժանրը հայ բանահիւսութեան մէջ*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1975, էջ 156:

Ուրախ սըրտով դուք ձեր սէրը
Վայելեցէք անթառամ…(*Անուշ*)
Կամ՝
Տաշտներդ լի հաց լինի
Դուռներըդ միշտ բաց լինի: (*Մարօ*)

Ժողովրդական օրհնանք-բարեմաղթանքի արտայայտած գաղափարի եւ քնարական հերոսի ապրումների միջեւ կապը բանաստեղծն ինքնատիպ հնարքով է վերարտադրում.

-Ով էլ որ լինիս՝ բարով ես եկել,
Անփորձանք լինի քո ճանապարհը,
Աստուած կեանք տայ ձեզ, որ հարցնէք դուք էլ,
Թէ ինչ ցաւ ունի խեղճ ռանչպարը: (*Հառաչանք*)

Կենաց-մաղթանքի կամ բաժակաճառի ու օրհնանքի համաձուլուածքի ինքնատիպ դրսեւորում ենք տեսնում «Հին օրհնութիւն» բանաստեղծութեան մէջ, որտեղ նահապետական գիւղի անբախտ հայրերն ու պապերը օրհնում են զաւակներին՝ բարեմաղթելով նրանց աւելի լաւ կեանք.

Նըրա հետ վերցրին լիք բաժակները
Բոլոր մեծերը
Ու մեզ օրհնեցին.«Ապրէ՛ք, երեխէ՛ք,
Բայց մեզ պէս չապրէք…»:

Բարի գործերի եւ յատկապէս գործի անմահութեան գաղափարն է նրբօրէն բացայայտւում «Աղբիւր» բանաստեղծութեան մէջ, որտեղ լաւ ու օգտակար արարքի հեղինակին անցորդի կողմից ուղղւում է ջերմ, բարեբանական օրհնանք.

Քո շինողի օր-կեանքը
Ջրի նման երկարի՛…

«Հալածուածութեան եւ վրիժառութեան թեման»[7] է արծարծւում գրողի «Ալեք» պոէմում, որտեղ քաջ հերոսը՝ Ալեքը, վրիժառութեամբ լցուած՝ սպանում է հայ ժողովրդի գլխին երկնային պատուհաս դարձած թուրք Ալին եւ տէրհօրը խոստովանելով իր «մեղքը»՝ արժանանում վերջինիս օրհնանքին.

Ապրես Ալեք, շատ ապրես,
Թող Աստուած զօրացնէ քեզ,
Որ Ալնի պէս լիրբ թուրքին,
Գիտես պատժել իւր կարգին:

Ժողովրդական ծիսակենցաղային սովորոյթները եւ դրանց իսկ առիթով ստեղծուած օրհնանք-բարեմաղթանքների բազմաշերտ ու բազմախոր-

[7] Հրանտ Թամրազեան, *Յովհաննէս Թումանեան. բանաստեղծը եւ մտածողը*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1995, էջ 121:

հուրդ դրսեւորումները նոյնպէս առաջնակարգ տեղ են գրաւում Թումանեանի ստեղծագործութիւններում:

Ամուսնութիւնն իրականացնող ու վաւերացնող ծիսական տարբեր արարողութիւններ, որոնք ուղեկցւում են ծիսական ամենատարբեր մաղթանքներով, անուանում ենք հարսանեկան մաղթանքներ[8]:

Հարսանեկան ծիսական արարողութեան ժամանակ առանձնակի տեղ են գրաւում աներից փեսային ուղղուած օրհնանք-մաղթանքները, ինչպէս օրինակ՝

Հայրն էլ եկաւ ու ծէսին
Էսպէս օրհնեց իր փեսին.
- Ջաղացիդ միշտ հերթ լինի
Մէջքըդ ամուր բերդ լինի: (*Մարօ*)

Մաղթանքի գլխաւոր նպատակը փեսայի գործնական-ընկերային կեանքի յաջողութիւնն է, որը միանգամայն համախօս է «Կալիդ քամի ըլի, ջաղացիդ հերթ ըլի»[9] ծիսական մաղթանք-օրհնանքին:

Ազգային ծիսակենցաղային սովորոյթների մէջ մեծ խումբ են կազմում սգոյ եւ թաղման արարողակարգին առնչուող բարեմաղթութիւնները: Օրինակ՝ «…Աստուած հոգին լուսաւորի, աստուած նրա դատաստանը քաղցր անի…» («Քաջերի կեանքից»), կամ՝

-Է՛հ, Աստուած նըրա հոգուն ողորմի,
Մի օր էլ մենք ենք էսպէս գընալու (*Մեհրի*)
… Յաւիտենական հանգիստ անվրդով[10]:
Ոսկերացդ հանգիստ,
Աննման արտիստ[11]:

Մաղթանքների հիմնական գաղափարը ննջեցեալի հոգու փրկութեան, լուսաւորութեան եւ երկնային արքայութեանն արժանանալու ցանկութիւնն է, որը միանգամայն համընկնում է ժողովրդական աշխարհընկալմանը, մասնաւորապէս մահուան եւ հանդերձեալ կեանքի հնագոյն հաւատալիքներին:

Քիչ չեն հանդիպում ինչպէս եկվորների գալուստը կամ հանդիպումն աւետող մաղթանքները. «-Ով էլ որ լինիս՝ բարով ես եկել…» (*Հառաչանք*), «-Բարով եկար, դերվիշ բաբա…» (*Քէֆ անողին քէֆ չի պակսիլ*), «-Բարի աջողում, ուստա փիսօ…» (*Շունն ու կատուն*), «Բարի օր ախպէրացու…» (*Խօսող ձուկը*) եւն., այնպէս էլ հրաժեշտի ողջոյն-մաղթանքները.

-Դեհ, մնաք բարով, ծերունի հայրիկ,
Նազելի Մեհրի, սիրուն հայրենիք,

---

[8] Յարութիւնեան, *Անէծքի*, էջ 225:

[9] Երուանդ Լալայեան, «Ամուսնութիւն եւ հարսանիքի սովորութիւններ», *Ազգագրական հանդէս, եօթներորդ տարի, գիրք IX*, Թիֆլիս, 1902, էջ 239:

[10] Թումանեան, *Երկեր, հտր. 1*, էջ 71:

[11] Նոյն, էջ 50:

Սրտակից տղերք, ընկեր-հարեւան,
Մօտիկ բարեկամ, արիւն-ազգական… (*Մեհրի*)

Ինչպէս տեսնում ենք, հրաժեշտի ողջոյն-մաղթանքը գնացողի, հեռացողի մաղթանքն է՝ ուղղուած տուեալ վայրում մնացողներին: Վերջիններս էլ, ի պատասխան ճանապարհ կամ օտարութիւն գնացողին, ողջոյնի բարեմաղթութեամբ ապահովում են նրա գնալիք ճանապարհը, ձեռնարկելիք գործը, բարի դարձը, ողջ ու առողջ եւ ամէն փորձանքից հեռու մնալը.

- Դուն գիտես, որդի, գնա՛, Տէրն ընդ քեզ…
…Բարի ճանապարհ, թող քեզ ուղեկից.
Լինի այն հրեշտակն, որ երբեմն տարաւ
Տովբիթի որդուն դէպի Մարաստան.
Իսկ ես հայրական սրտով վիրաւոր
Քեզ համար աղօթք կ'անեմ ամէն օր,
Է՛հ, գնա՛, որդի, գնաս-գաս բարով…(*Մեհրի*)

Կամ՝ «-*Աստուած լինի քո օգնականը, բալա ջա՛ն,- խօսում էր պապս։- Չոր քարին գնալիս՝ չոր քարն էլ կանաչի քեզ համար։ Պակաս օրդ խնդութիւնով անց կենայ… Վեր կաց, բալա ջան, աստուած բարի ճամփայ տայ, ոտդ ոչ դիպչի քարի…Դէ, գնա, քեզ մատաղ, աստուած բարի ճամփայ տայ*» (*Աիմադը*):

Իւրայատուկ բարեմաղթանք է աչքալուսանքը, որ ասւում է որեւէ օգտակար եւ հաճելի առիթով. «-Հէ՛յ, աչքդ լուս,- ասում է,- քու հողումը մի կարաս ոսկի դուրս եկաւ, արի տա՛ր» (*Ոսկու կարասը*), «Ըհը՛, աչքդ լուս,- ասում է ծառային տէրը, կըկուն կանչեց, ժամանակդ լրացաւ…» (Տէրն ու ծառան) եւն.:

Օրինանք-բարեմաղթանքները Թումանեանի հեքիաթներում երբեմն հանդէս են գալիս որպէս աւանդական կայուն բանաձեւերին համակցուած միաւորներ՝ սկսուածքային, միջնամասային եւ եզրափակիչ: Օրինակ՝ ***սկսուածքային*** «Աստուած բարի տայ ձեզ էլ, երկու ախպորն էլ» (*Տէրն ու ծառան*), ***միջնամասային*** «-Անպակաս լինի քո ուրախութիւնը, ո՛վ Հասան…» (*Քէֆ անողին, քէֆ չի պակսիլ*), ***եզրափակիչ*** «Բարին էստեղ, չարն էն ագաի թագաւորի մօտ» (*Ոսկու կարասը*):

Այսպիսով, Թումանեանի գրական ժառանգութեան մէջ հանդէս եկող օրինանք-բարեմաղթանքները ներառում են օրինանքների եւ մաղթանքների ապահովութեան ու պահպանութեան բոլոր տարատեսակները՝ իրենց բազմաբնոյթ դրսեւորումներով:

Երդումը՝ իբրեւ ժողովրդախօսակցական լեզուի աւանդական պատկերաւոր բանաձեւ, եւս լայն կիրառութիւն ունի Թումանեանի երկերում: Իբրեւ ցանկութեան խօսք այն կոչուած է դիմացինին հաւաստիացնելու ասացողի ճշմարտացիութիւնը, հաւատարմութիւնն ու նուիրուածութիւնը: Ինչպէս հմայական միւս բանաձեւերի (անէծք, օրհնանք, բարեմաղթութիւն), այնպէս էլ երդման հիմքում ընկած է խօսքի հմայական զօրութեան գաղափա-

րը, որի վրայ յենուելով՝ երդուողը վկայակոչում է նուիրական սրբութիւններն ու առարկաները, որոնք բոլոր ժամանակներում էլ ընդունուած են եղել ժողովրդի կողմից:

Թումանեանի գրական ժառանգութեան մէջ երդումը հանդէս է գալիս.

ա . *անէծքաերդումային կառուցուածքով.*

-Ով սուտ ասի՝ գետինը մտնի,- երդուեց Գիքորը, ու ամէն բան լրացաւ: (*Գիքորը*): Այսպէս, երդումն ինքը ասացողի իրաւացիութեան, պայման-հաւաստիացումն է, այսինքն՝ թող ինքը չարի, փորձանքի հանդիպի, մեռնի, եթէ իրաւացի չէ:

բ. *երդում-վկայակոչումով, որն ի տարբերութիւն նախորդ տեսակի՝ առաւել յաճախ է հանդիպում:* Օրինակ,

Վկայ է սուրբ օծումս,
Մի նշխար կայ ծոցումս… (*Ալեք*)

Կրօնաճիսական պաշտամունքի սուրբ արժէքների վկայակոչումն արժանահաւատ է դարձնում երդուողի խօսքը:

Մարդը, հաւաստելու համար իր իրաւացիութիւնը, դիմում է Աստծուն, սրբերին, ովքեր ճշմարտութեան առաջին աղբիւրներն են՝ երդուելով կամ վկայակոչելով նրանց. «-Էս ինչ ցաւ էր, աստուած վըկայ…» (*Անբախտ վաճառականներ*), «Չէ, մեզանում, աստուած վըկայ,// Արժանաւոր մի մարդ չըկայ» (*Հայի տրտունջը*) եւն.:

Հնագոյն ժամանակներից է սերում հայոց մէջ ձեւաւորուած աշխարհի երկմաս (երկինք եւ երկիր) կառուցուածքի պատկերացումը, որի հաւատալիքի դրսեւորումն ենք տեսնում ինչպէս ժողովրդական երդումների սեղմ բանաձեւերում («Իրկենք, գիտեն վոկօ»[12], «Երկինք, գետինք»[13] եւն.), այնպէս էլ Թումանեանի՝ բանաստեղծական վերարտադրութեան ենթարկուած գրուածքներում.

Երկինք, գետինք թող միանան
Կանգնի վկայ տիեզերք,
Տուողը հոգուս կարողութիւն,
Էլ չեմ սիրիլ քեզ երբեք[14]:

Ասուածի ճշմարտացիութիւնն ապացուցելու համար վկայակոչւում են ոչ միայն երկինքն ու գետինը, այլեւ ամբողջ տիեզերքը՝ որպէս անվերջութեան եւ յաւերժութեան խորհրդանիշներ:

Հայի ոգու անմահութիւնը ապացուցելու համար վկայակոչւում է ամբողջ աշխարհը.

Վկայ է սակայն բովանդակ երկիր,

---

[12] Հ. Ալլահվերդեան, *Ուլնիա կամ Զէյթուն*, Կ. Պոլիս, 1884, էջ 131:

[13] Սարգիս Հայկունի, «Երդումներ», *Էմինեան ազգագրական ժողովածու, հտր. Զ.*, Մոսկուա-Վաղարշապատ, 1906, էջ 388:

[14] Նոյն, էջ 46:

Որ մենք կարեվէր ապրում ենք կրկին
Եւ ուր հասնում է հայի գիրքն ու գիր՝
Կենդանի է դեռ հայութեան ոգին[15]:

5

Հոգու եւ հանդերձեալ կեանքի հաւատալիքներից ու պաշտամունքից են սերում սեփական կամ հարազատ որեւէ մէկի հոգով երդուելը.«Ես իմ հոգին» (*Անբախտ վաճառականներ*), «Ես իմ հոգին, արժէ, որ էդ սրտով թագաւորի պալատական լինէիր դու…» (*Քէֆ անողին քէֆ չի պակսի*»):

Ժողովրդական պատկերացումներում արեւը միշտ ընկալւում է իբրեւ կեանքի գոյութեան ու կենդանութեան խորհրդանիշ եւ իր կամ որեւէ հարազատի արեւով երդուելը լայն տարածում ունի ինչպէս առօրեայ ժողովրդախօսակցական լեզւում, այնպէս էլ Թումանեանի ստեղծագործութիւններում.

-Թող գա՛յ, գոռում է, որ բըռնենք նորից,
Թէ չէ նամարդը, արեւս եմ երդւում,
Էլ չի պըրծնելու երբեք իմ ձեռից: (*Անուշ*)

Օրը եւ յատկապէս լուսաբացը, արշալոյսը՝ իր Լուսաստղով (Աւրորա), որ ժողովրդական պատկերացումներում բարու մարմնաւորումն է, եւս դառնում է վկայակոչման առարկայ.

Էս օրը վըկայ
Սըրանից կը գայ: («Սասունցի Դավիթ»)
Երդւում եմ ահա ճառագող օրով
Վառ Աւրորայի մաքուր շողերով[16]…

Երդումը խօսքային բարոյականութեան բարձրակէտն է, որը չի կարող խաթարել երկրային ոչ մի ուժ ու զօրութիւն.

Մընաց հանդերում, երդում կերաւ նա,
Ուր որ էլ լինեն՝ նրանց միասին,
Գըտնի՝ կոտորի, սիրտը հովանա: (*Անուշ*) Կամ՝
Իսկ մարդիկըն իրանց դինը
Վըկայ կանչում եւ երդւում են,
Թէկուզ Ալեքին չըգտնեն,
Գէթ մի ուրիշ հայ սպանել,
Ալնի ղսասը միայն հանել… (*Ալեք*)

Այսպիսով, Յովհաննէս Թումանեանի գրական ժառանգութեան մէջ ժողովրդական խօսքի բանաձեւային կառոյցների կիրառութիւնները բխում են ժողովրդի լեզուամտածողութեան, դարաւոր կենսափորձի, բառ ու բանի եւ

---

[15] Նոյն, էջ 119:

[16] Աւրորան հռոմէական առասպելաբանութեան մէջ այգաբացի կամ արշալոյսի աստուածուհին է, որ ամէն օր աստուածներին եւ մարդկանց բերում է ցերեկային լոյսը (В. Иванов, *Аврора, Мифы народов мира [Արշալոյսը. աշխարհի ժողովրդների դիցաբանութիւնները], հտր. 1, Энциклопедия,* изд. «Советская энциклопедия», Մոսկուա, 1980, էջ 29):

ժողովրդական աւանդներին հաւատարիմ մնալու նրա որդեգրած դաւանանքից:

Համայական բանաձեւերի առատ գործածութիւնը բանաստեղծի համար ծառայել է որպէս գեղարուեստական արտայայտչամիջոց՝ իր ժամանակի ազգային ու համամարդկային խնդիրներին արձագանգելու համար:

FOLK PAREMIOLOGY IN HOVHANNES TUMANYAN"S LITERARY HERITAGE
(Prayer, curse, blessings and best wishes, oath)

(Summary)

LUSINE GREJYAN (lgrejyan@yandex.ru)

The article covers various manifestations of the most vital and popular literary structures (prayer, curse, oath, blessings-wishes) in Tumanyan's works, using various thematic, structural and pictorial means. An attempt is made to reveal the originality of Tumanyan's folklore, as well as various manifestations of folk language thinking.

The issues raised in the article and the detailed analysis provide an opportunity to assess the position and role of Tumanyan's works in the process of literature development with new principles and methods, as well as the close connection with folklore.

The excessive use of popular folk expressions, the variety of their application have made Tumanyan's literary heritage deeper and more multi-layered, giving incredibly special freshness and uniqueness to his linguistic thinking. In addition, the excessive use of them served as a poetic means of artistic expression to respond to the national and universal problems of his time.

ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ-ԲԱՆԱՀԻՒՍԱԿԱՆ ՊԱՏՈՒՄՆԵՐԸ ՅՈՎՀԱՆ ՕԶՆԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՍԻՆ

(աղբիւրագիտական ուսումնասիրութիւն)

ՏՈՐՔ ԴԱԼԱԼԵԱՆ (torqdal@yahoo.com)

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Հայ բանահիւսական մի շարք պատումներում, որոնց գրի առնուած տարբերակները յայտնի են Ժ. դարից, իբրեւ գլխաւոր հերոս հանդէս է գալիս Ը. դարի հայրապետ Յովհան(նէս) Իմաստասէր Օձնեցին (717-728):

Գիտական ուսումնասիրութիւններում Օձնեցու բանահիւսական կերպարին առաջին անգամ հանգամանօրէն անդրադարձել է ազգագրագէտ Երուանդ Լալայեանը, որը դաշտային բանահիւսական նիւթեր է գրառել հենց Օձնեցու ծննդավայրում՝ Լօռիում[1]: Լալայեանից յետոյ՝ խորհրդային շրջանում, Լօռիին վերաբերող ընդհանուր բանահիւսական ժողովածուում բանագէտ Թամար Գէորգեանը բերել է Օձնեցուն վերաբերող պատումների նոր տարբերակներ[2], որոնք, ամէնայն հաւանականութեամբ, հիմնականում ազդուած են Լալայեանի տարբերակներից: Օձնեցու բանահիւսական կերպարն առանձին հրապարակումներով վերլուծել են Աստղիկ Իսրայէլեանը, Լիլիթ Սիմոնեանը եւ ուրիշներ[3]:

Իրական պատմական անձանց բանահիւսական կերպարն ձեւաւորւում է դիցաբանական եւ վիպաբանական կանոնների համաձայն, սակայն հիմքում բնականաբար ընկած է լինում տուեալ գործչի ապրած կեանքը: Օձնեցու կեանքին եւ գործունէութեանը մենագրութիւն է նուիրել Մեր Պապեա-

---

[1] Ե.Ա. Լալայեան, *Բորչալուի գաւառ*, Թիֆլիս, 1903:

[2] Թ. Գէորգեան, «Լօռի (Տաշիրք-Ձորագետ)», *Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն, հտր. 20*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն», Երեւան, 1999:

[3] Ա. Իսրայէլեան, «Ս. Յովհաննէս Օձնեցին ժողովրդական աւանդութեան մէջ»՝ *Հայոց սրբերը եւ սրբավայրերը. ակունքները, տիպերը, պաշտամունքը*, խմբ.՝ Ս.Բ. Յարութիւնեան, Ա.Ա. Քալանթարեան, ՀՀ ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ, «Հայաստան», Երեւան, 2001, էջ 71-78. նաեւ՝ Л.Д. Симонян, “Народный культ Ованеса Одзунского” (Յովհաննէս Օձնեցու ժողովրդական պաշտամունքը) *Страны и народы Востока, вып. XXXVI. Религии на Востоке* (под ред. И.Ф. Поповой, Т.Д. Скрынниковой), РАН, Институт восточных рукописей, Восточная комиссия Русского географического общества, «Москва - Восточная литература», Մոսկուա, 2015, էջ 362-77. նաեւ՝ Տ. Դալալեան, «Յովհան Օձնեցու վիպական կերպարի համեմատական քննութիւն», *Լրաբեր հասարակական գիտութիւնների*, 2(659):2020, էջ 306-23:

նը[4], որի տուեալները նոյնպէս կարեւոր են՝ Օձնեցու վիպական կերպարի համեմատական քննութիւնը կատարելիս:

Օձնեցու երկերի նոր հրատարակութիւնը աշխարհաբարով՝ Վազգէն Համբարձումեանի աշխատասիրութեամբ[5], եւս խթան դարձաւ հայ նշանաւոր կաթողիկոսի հանդէպ գիտական հետաքրքրութեան աճի: Օձնեցու ժամանակին վերաբերող պատմական, դաւանաբանական, աղբիւրագիտական եւ արուեստաբանական հարցերին նուիրուած գիտաժողով տեղի ունեցաւ 2003ին Հաղպատի վանքում, որին ներկայացուած զեկուցումները՝ յօդուածների տեսքով, հրատարակուեցին գիտաժողովի նիւթերի ժողովածուում[6]: Ինչպէս երեւում է, Օձնեցու իրական-պատմական եւ վիպական կերպարների հանդէպ հետաքրքրութիւնը աճել է յատկապէս Հայաստանի Հանրապետութեան 1991ի անկախացումից իվեր, թէեւ նախախորհրդային տարիներին նոյնպէս Օձնեցուն եւ նրա աշխատանքներին բազմաթիւ անդրադարձներ են կատարուել պատմագրական եւ բանասիրական բնոյթի ուսումնասիրութիւններում:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Յովհան Օձնեցու գահակալմանը նախորդող ժամանակաշրջանը բաւական ծանր էր Հայաստանի համար: Երկիրը չունէր ո՛չ թագաւոր, ո՛չ էլ ընդհանուր իշխան: Է. դարի վերջ-Ը. դարի սկզբին արաբական զօրքերը գրաւում են Հայաստանը եւ մայրաքաղաք Դուինը՝ ստեղծելով *Արմինիա* վարչական միաւորը Արաբական Խալիֆայութեան կազմում[7]: Արմինիա ոստիկանութիւնն ընդգրկում էր Հայաստանը, Վիրքը եւ Աղուանքը, իսկ նրա առաջնային քաղաքական դէմք էր ընդունւում հայոց կաթողիկոսը[8]: Ի տարբերութիւն Ասորիքի (Սիրիայի) եւ Եգիպտոսի պատրիարքների՝ հայոց կա-

---

[4] Մ. Պապեան, *Յովհան Իմաստասէր Օձնեցի. կեանքը եւ գործունէութիւնը*, «Ամրոց», Երեւան, 1998:

[5] Յովհաննէս Օձնեցի, *Երկեր*, գրաբարից փոխադրում, առաջաբան եւ ծանօթ.՝ Վազգէն Համբարձումեան, «Անահիտ», Երեւան, 1999:

[6] *Սուրբ Յովհան Օձնեցի հայրապետը եւ իր ժամանակը. 2003 թ. Յունիսի 3-5, Հաղպատի վանք (Գիտաժողովի նիւթեր)*, (հրապարակման պատրաստ.՝ Ազատ Բոզոյեան), Ս. Էջմիածին Ս. Էջմիածին, «Գարեգին Ա.» հայագիտական-աստուածաբանական կենտրոն, 2004:

[7] Ա. Եղիազարեան, «Արաբների կողմից Հայաստանի նուաճման հարցի շուրջ», *Բանբեր Երեւանի Համալսարանի*, 1(124):2008, էջ 157-164:

[8] А. Тер-Гевондян, *Армения и арабский халифат* (Հայաստանը եւ Արաբական Խալիֆաթը), ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1977, էջ 73-74, 79-82. նաեւ՝ Տ. Միքայէլեան, «Յովհաննէս Օձնեցին եւ արաբները (Ը դարի կէսեր)», *Սուրբ Յովհան Օձնեցի*, էջ 27-30:

թողիկոսը նախ եւ առաջ քաղաքական դէմք էր համարւում[9]: Օձնեցի կաթողիկոսին յաջողւում է դաշնակցել մուսուլման արաբների հետ եւ նրանց օգնութեամբ Հայաստանից դուրս մղել քաղկեդոնականութիւնը, որը ջլատում էր Հայ Եկեղեցու միասնութիւնը:

Սոյն յօդուածը վերաբերում է Օձնեցու քաղաքական-վարչական գործունէութեանն առնչուող ընդհանուր տեղեկութիւններին ու պատումներին, որոնք յաճախ ունեն ժողովրդական ակունքներ: Այս պատումներն իրենց դրսեւորումներն են գտել հայ միջնադարեան պատմագիրների երկերում, ինչպէս եւ մերօրեայ աւանդազրոյցներում ու վիպական շարքերում: Առանձին խումբ են կազմում տեղագրական բնոյթի աւանդազրոյցները, որոնց բազմաթիւ տարբերակներ տարածուած են յատկապէս Օձունում եւ նրա շրջակայքում: Վերջիններիս քննութիւնը թողնելով ապագայ մի յօդուածի՝ այստեղ կը կենտրոնանանք առաջին խմբի աւանդազրոյցների եւ դրանցում արտացոլուած պատկերացումների վրայ[10]: Դրանցում հանգուցային դեր ունի Օձնեցու պատմական հանդիպումը Արաբական Տէրութեան խալիֆայի հետ, որը նկարագրւում է վիպական սեռին բնորոշ գծերով՝ Օձնեցու ընդհանրական բանահիւսական կերպարի համապատկերում:

ՕՁՆԵՑՈՒ ԿԵՐՊԱՐՆ ԸՍՏ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՑՈՒ

Յովհան Օձնեցու մասին առաջին մանրամասն տեղեկութիւնները ստանում ենք նրանից շուրջ երկու դար անց *Պատմութիւն հայոց* գրած կաթողիկոս Յովհաննէս Դրասխանակերտցուց[11]: Վերջինս հաղորդում է, որ Եղիա Արճիշեցուց (703-717) յետոյ կաթողիկոս է դարձել Յովհան(նէս) Օձնեցին[12]: Օձնեցին, ըստ ամէնայնի, կաթողիկոսի գահին նստել է արդէն բաւական յառաջացած տարիքում, քանի որ հմուտ ու տեղեակ էր բոլոր «*քերթողական գրուածքներին, խօսքի մասերին ու մասունքներին, ինչպէս նաեւ տեսակների ուսմունքին, արարածների տեսակներին ու տարբերութիւններին մինչեւ անբաժանելին, անտեղեակ չէր նաեւ տարբերութիւնների հանգա-*

[9] Ա. Տէրղեւոնդեան, *Արաբական ամիրայութիւնները Բագրատունյաց Հայաստանում*, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1965, էջ 41:

[10] Օձունում եւ ընդհանրապէս Լօռիում եւ այլուր տարածուած տեղագրական աւանդազրոյցներին ու հաւատալիքներին - նաեւ Ի. դարավերջ-ԻԱ. դարասկզբին արձանագրուած - մանրամասնօրէն անդրադառնում է՝ Симонян, էջ 365-68, 370-72:

[11] Ինչ վերաբերում է դրանից վաղ թուագրուող՝ Մովսէս Կաղանկատուացու կարճ տեղեկութեանը, ապա այն զուտ անուանական յիշատակութիւն է ոմն Յովհաննէս Վարդապետի, որին արդի ուսումնասիրողները նոյնացնում են յետագայում կաթողիկոս դարձած Յովհան Օձնեցու հետ (Պապեան, էջ 9):

[12] *Յովհաննու Կաթողիկոսի Պատմութիւն հայոց*, աշխատ.՝ Գ.Բ. Թոսունեան, ԵՊՀ հրատ., Երեւան, 1996, էջ 102-4:

մանքներին եւ բաժանելի ու անբաժանելի պարագաներին»: Նա յօրինում էր ճառեր, բանաստեղծութիւններ եւ խրատական գրուածքներ[13]:

Ներքին բարեմասնութիւնների հետ մէկտեղ, պատմագիրները մեծ ուշադրութիւն են դարձնում նաեւ Օձնեցու արտաքին յատկանիշերի գովերգմանը՝ սկսած հենց Դրասխանակերտցուց: Նրա արտաքին նկարագրութեան մէջ զգալի են հրաշագործ տարրերը: Սա ցոյց է տալիս, որ Օձնեցու կեանքից երկու դար անց արդէն իր կերպարը վիպականացուած էր, եւ հնարաւոր է, որ Դրասխանակերտցին օգտուած լինի ժողովրդական բանահիւսական կամ եկեղեցական գրաւոր աղբիւրներից:

Դրասխանակերտցու հաղորդմամբ՝ Օձնեցին իր զգեստի տակից ոչ թէ բրդեայ, այլ այծի մազից գործուած կոպիտ ու անտանելի քուրձ էր հագնում, որը կոչւում էր *ցփսի*: Մինչդեռ դրսից նա զարդարւում էր գունաւոր ընտիր նիւթից պատրաստուած զգեստով: Եւ ոսկին խարտոցով մանրացնելով ու նրա հետ անուշահոտ խունկեր խառնելով՝ փչում էր ալեխառն մօրուքին, որն իջնում էր մինչեւ իր զգեստի գրպանները[14]:

Ամէնայն հաւանականութեամբ, նշուած գծերը միանգամայն իրական են, քանի որ միջնադարում հոգեւոր եւ քաղաքական բարձրաստիճան գործիչների զգեստաւորման յատուկ արարողակարգեր էին ընդունուած: Ժողովրդի մէջ այնքան մեծ ազդեցութիւն էր թողել ոսկեզօծ մօրուքով Օձնեցու վեհատեսիլ արտաքինը[15], որ արդէն իր ողջութեան իրեն վերագրում էին սրբի գերբնական լուսապսակ, ստեղծւում էին հրաշապատում զրոյցներ, որոնք քով-քովի բերուելով՝ կազմում էին Օձնեցուն ձօնուած մի վիպաշար:

Այնուհետեւ, Օձնեցին ինքն էլ, կարծես, հակում ունէր հրաշագեղ տեսարաններ ստեղծելով՝ մարդկանց ենթագիտակցութեան եւ բնազդային զգացումների վրայ խաղալու: Այսպէս, ըստ Դրասխանակերտցու, Օձնեցին տեսողութեան համար հաճելի խտղտանք հաղորդելու համար՝ եկեղեցու անշունչ քարերին պճնաւորում էր գեղեցիկ զարդերով. *«Եւ վասն զի ոչ այնպէս յաներեւութից ոմանց ահից զօրութիւն ընդոստուցանօղ մարդկան բերցի ՚ի վախթարէն ՚ի լաւն՝ որպէս յերեւելեացս գերաբուն զարդուց խտղտանք, եւ վասն սորին իսկ այսորիկ կլաւ սովորութիւն գեղեցիկ զարդուք պճնազգեստել զանշունչ քարինս եկեղեցւոյ, ապա ո՛րչափ առաւել մարդ քան զքարինս բերէ ՚ի զարմացումն զտեսողն, սակայն այսքիկ ոչ ամենեցուն՝ այլ նոցա միայն, որոց դատողական հաւատացեալ է գործ»*[16]: Ուրեմն, Աստծուն իրական հաւատացողներն աւելի Օձնեցու վրայ էին ուշադրութիւն դարձնում՝

[13] Նոյն, էջ 104-5:

[14] Նոյն, էջ 104:

[15] Ոսկեփայլ մօրուքի մոտիւն իր դրսեւորումն է գտնում նաեւ ուշ բանահիւսական պատումներից մէկում, որտեղ Օձնեցին համբուրում է զինուորների գլուխները, (Քաջբերունի [Գաբրիէլ Տէրյովհաննիսեան], «Ճանապարհորդական նկատողութիւնք», *Փորձ, ազգային եւ գրականական միամսեայ հանդէս*, Ապրիլ 4:1881, էջ 85:

[16] *Յովհաննու Կաթողիկոսի*…, էջ 104:

մարդն էր նրանց զարմացնում, սակայն ոչ բոլորն էին ունակ վեր կանգնելու նիւթական զարդեղէնի յարուցած շքեղութեան փայլից:

Ինչպէս պատմում է Դրասխանակերտցին, Օձնեցուն տեսել էր Վլիթ անունով հայոց մի ոստիկան[17], որը արաբ ամիրապետին պատմել էր Օձնեցու վայելչութեան մասին, եւ ամիրապետը ցանկացել էր տեսնել նրան[18]: Դրանից յետոյ Օձնեցուն մեծ պատուով բերում են արքունական քաղաքը, եւ ամիրապետը նրան պատգամ է յղում, որպէսզի նա զգեստաւորուի սովորական ձեւով, եւ ինքը նրան այդպէս տեսնի: Սակայն Օձնեցին իր բարձրահասակ կերպարանքն է՛լ աւելի փայլուն զգեստներով զարդարելով եւ նոր ճերմակած մօրուքը ոսկէ ծաղիկների փնջի նման կազմելով ու ձեռքն առնելով ոսկենկար գաւազանը, որը եբենոսեայ փայտից էր, «ահա այդպէս,- Դրասխանակերտցու խօսքով,- լաւ գոյն ունեցող ու թիկնաւէտ այդ մարդը», մտնում է ամիրապետի մօտ (*«Իսկ նորա զաւարտահասակ դիտակն իւր եւս առաւել փայլուն եւ պաղպաջուն զգեստուք պճնաւորեալ՝ եւ զաղէբեկ ծաղկեալ մօրուսն ոսկեփունջ կազմեալ, եւ զոսկինկար գաւազանն, որ ’ի փայտից ոպնիազից՝ ’ի ձեռն առեալ, այնպէս ապա գունեան այրն եւ թիկնաւէտ առ ամիրապետն մտանէր»*)[19]:

Արաբ ամիրապետին հաճոյ չի թւում Օձնեցու՝ արտաքին շքեղութեան ձգտումը: Սակայն երբ նրանք երկուսով առանձնանում են, Օձնեցին հանում է իր դրսի հագուստը եւ ցոյց տալիս այծամազէ ցփսին՝ ասելով. *«Մերկութեան անդամոցս ա՛յս է զգեստ. իսկ արտաքոյքդ միայն են ’ի տեսիլ արտաքնոց»*: Ամիրապետը ձեռքով հպւում է ցփսիին եւ խոժոռուելով ու քստմնելով ասում. *«Ձհա՞րդ արդեօք կարէ մարմին մարդոյ տեւել ժուժկալել այսպիսի դժոխըմբերելի քրձի, եթէ ոչ յԱստուծոյ տուեալ լինի նմա համբերութիւն»*: Ապա ամիրապետը մեծարում է Օձնեցուն, «*եօթ անգամ նրան պճնազարդելով արքունական գեղեցիկ զգեստով[20] եւ ոսկու ու արծաթի գանձեր նրան պարգեւելով*»՝ ուղարկում է Հայաստան: Գալով հայրենիք՝

---

[17] *Վլիթ* անուանածեւը պէտք է արաբ. وليد *Վալիդ* անուան մի տարբերակը լինէր (Тер-Гевондян, էջ 82): Ըստ Քաջբերունու ենթադրութեան՝ իր գրառած տարբերակում Վլիթ ոստիկանը դարձել է *Ալի* (Քաջբերունի, էջ 86), որն Օձնեցու հետ Հայաստան եկած արաբական զօրքերի հրամանատարն էր (տե՛ս վարը):

[18] Ըստ Վարդան Պատմիչի՝ արաբ բարձրատոհմիկ պաշտօնեաները յաճախ մասնակցում էին եկեղեցական տօնախմբութիւններին, որոնց ընթացքում բազմիցս տեսել էին Օձնեցուն եւ նրա մասին բարեխօսել Օմար ամիրապետին (տե՛ս՝ ստորեւ) (Վարդան Արեւելցի, «Ճառ ի վերայ Յոհան Օձնեցւոյ ըստ խնդրոյ Համազասպ եպիսկոպոսի Հաղբատայ», *Արարատ*, 10:1888, էջ 584):

[19] *Յովհաննու Կաթողիկոսի…*, էջ 105-7:

[20] Դրասխանակերտցու պատումի եօթ անգամ պճնազարդելը (կամ ըստ Ասողիկի՝ եօթը հանդերձ ընծայելը) Վարդան Արեւելցին նկարագրում է այսպէս. *«եւ եօթն անգամ ագուցեալ զնա յարքունական եւ ի մեծածախ հանդերձից, առաքէ զնա յաշխարհս մեր երեւելի փառօք…»* (Վարդան Արեւելցի, էջ 586):

Օձնեցին տասնմէկ տարի նստում է հայրապետական աթոռին եւ վախճանւում. *«Որոյ եկեալ եւ կեցեալ ամս սակաւ՝ վախճանի, կացեալ յաթոռ հայրապետութեան ամս մեւրասան»*[21]: Դրասխանակերտցին ոչինչ չի գրում բիւզանդացիների եւ քաղկեդոնականութեան դէմ Օձնեցու մղած պայքարի մասին, որին անդրադառնում են մեր միւս պատմագիրները:

ՕՁՆԵՑՈՒ ԿԵՐՊԱՐՆ ԸՍՏ ԳԱՆՁԱԿԵՑՈՒ

Դրասխանակերտցուց յետոյ՝ Օձնեցու կեանքի եւ գործունէութեան մասին հիմնական սկզբնաղբիւրներից մէկը Կիրակոս Գանձակեցու (1203-71) *Հայոց պատմութիւն*ն է[22], որը հետաքրքրական եւ բաւական ընդարձակ տեղեկութիւններ է հաղորդում նաեւ Օձնեցու հայաստանեան գործունէութեան մասին: Օձնեցու՝ արաբների ամիրապետի «դուռը» մեկնելուն առնչուող դէպքերի նկարագրութիւնը տալիս՝ Գանձակեցին նշում է. *«Իսկ յետ տեառն Եղիայի առնու զկաթողիկոսութիւնն տէր Յովհաննէս Օձնեցի: Սա էր այր իմաստասէր եւ սուրբ, եւ վայելուչ հասակաւ մարմնոյն, եւ հոգւովն եւս առաւել գեղեցիկ: Զսա կոչեաց Հէշմ ի դուռն իւր, եւ վասն վայելչութեան երեսաց նորա մեծապէս պատուեաց զնա. քանզի խարտեաղ զոսկի եւ արկեալ զմօրուօք իւրովք՝ եմուտ առ նա»*[23]: Այսպիսով, ի տարբերութիւն Դրասխանակերտցու, որն անուանապէս չի յիշատակում արաբ ամիրապետին, Գանձակեցին նշում է նրա անունը՝ Հեշմ: Այլ պատմագիրներ, սակայն, այլ անունով են յիշում Օձնեցուն իր մօտ հրաւիրած արաբ ամիրապետին:

Գանձակեցին փոքր-ինչ այլ բառերով է մէջբերում Հեշմի եւ Օձնեցու միջեւ տեղի ունեցած երկխօսութիւնը: Հայագէտ Կարապետ Մելիք-Օհանջանեանը, Գանձակեցու աշխատութեան քննական բնագրի առաջաբանում նշում է, որ Գանձակեցին մեծապէս արժեւորել եւ օգտագործել է բանաւոր աղբիւրը՝ ժողովրդական աւանդազրոյցները, ականատեսների եւ ականջալուրների պատմածները: Նա իրաւամբ ենթադրում է, որ Օձնեցու մասին Գանձակեցու հաղորդած աւանդազրոյցները վերաբերում են «եկեղեցական զրոյցներ»ին կամ «կրօնա-ժողովրդական մանրապատումներ»ին[24]: Ըստ երեւոյթին, Գանձակեցուց առաջ Դրասխանակերտցին նոյնպէս անկախաբար օգտուել է ժողովրդական բանահիւսական կամ եկեղեցական գրաւոր աւանդապատումներից:

---

[21] *Յովհաննու Կաթողիկոսի…*, էջ 106-107:

[22] Դրասխանակերտցուց (Ժ.դ.) յետոյ եւ Գանձակեցուց առաջ՝ Օձնեցու մասին տեղեկութիւններ են հաղորդում նաեւ Ստեփանոս Տարօնեցի Ասողիկը (ԺԱ.դ.) եւ Միքայէլ Ասորին (ԺԲ.դ.), որոնք յատկապէս մանրամասնօրէն նկարագրում են Օձնեցու դաւանաբանական գործունէութիւնը (Պապեան, էջ 9-10):

[23] Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն հայոց,* աշխատ.՝ Կ.Ա. Մելիք-Օհանջանեան, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1961, էջ 67:

[24] Գանձակեցի, էջ ԽԹ, ԾԱ:

Համեմատելով Գանձակեցու եւ Դրասխանակերտցու պատումները Օձնեցու մասին՝ տեսնում ենք, որ դրանց ընդհանուր իմաստը եւ շեշտադրումները երկու պատմագիրների մօտ գրեթէ նոյնական են՝ չհաշուած որոշ նրբերանգներ: Հեշմի այն հարցումին, թէ՝ «Ձեր Քրիստոսի մասին ասում են, թէ չափազանց հեզ էր ու խոնարհ եւ աղքատութիւնը աւելի էր սիրում: … Իսկ դու ինչու՞ ես այդպէս զարդարուել»[25], Օձնեցին պատասխանում է. «*Դու քո ծառաներից աւելի ոչինչ չունես, բացի միայն թագաւորական թագից ու հանդերձանքից. դրա համար վախենում են քեզանից ու մեծարում են քեզ: Մեր առաջին հայրերը հրաշագործներ ու վարքով սքանչելի էին, դրա պատճառով՝ նրանց ձեռքի տակ գտնուողները երկիւղում էին նրանցից ու նրանց հրամանները դողահար կատարում: Իսկ մենք այդպիսիք չենք, այդ պատճառով՝ հանդերձներով ու զարդերով զարդարւում ենք, որպէսզի մեր հրամանները չանտեսուեն*»[26]: Այս ասելով՝ Օձնեցին բացում է իր կուրծքը եւ ցոյց տալիս այն մազեղէն հագուստը, որ կրում էր տակից[27]:

Օձնեցու այս համեստ պահուածքն ու շիտակ խօսքերն այնքան են ազդում ամիրապետի վրայ, որ նա մեծարում ու պատիւների է արժանացնում նրան: Նաեւ՝ երաշխիք է տալիս, որ քրիստոնեաները հարկերից կ'ազատուեն եւ ամէնուրեք ազատ կը կարողանան կատարել իրենց հոգեւոր պաշտամունքը, եւ ոչ ոք չի ստիպի նրանց ուրանալ իրենց հաւատը, դրա փոխարէն՝ հայ ազգը քաղաքական առումով կ'ենթարկուի իրեն: Հեշմն իր մատանիով կնքում է այս համաձայնագիրը եւ մեծ պարգեւներով ու զօրքով Օձնեցուն յետ է ուղարկում Հայոց Աշխարհ: Այնուհետեւ հայոց կաթողիկոսը արաբների օժանդակութեամբ Հայաստանից հալածում է բոլոր բիւզանդացիներին՝ «թէ՛ վերակացուներին, թէ՛ զինուորներին», եւ դրա շնորհիւ կարողանում է արդիւնաւէտ պայքարել քաղկեդոնականութեան դէմ ու վերահաստատել Գրիգոր Լուսաւորչի սահմանած տօները: Հետաքրքիր է, որ Օձնեցին սահմանում է նաեւ Դաւիթ մարգարէի ու Յակոբ առաքեալի տօները Դեկտեմբերի 25ին, երբ *«այլ ազգերը Տիրոջ ծննդեանն են տօնում…»*[28]: Ինչպէս տեսնում ենք, Օձնեցին լրջօրէն զբաղուել է հայոց եկեղեցական տօնացոյցի կանոնակարգմամբ[29]:

---

[25] Նոյն, էջ 67. նաեւ՝ Կիրակոս Գանձակեցի, *Հայոց պատմութիւն*, աշխատ.՝ Վ. Առաքելեան, «Սովետական գրող», Երեւան, 1982, էջ 59:

[26] Նոյն, էջ 60. նաեւ՝ Գանձակեցի 1961, էջ 67-68:

[27] Գանձակեցի 1961, էջ 68:

[28] Գանձակեցի 1982, էջ 60-61. նաեւ՝ Գանձակեցի 1961, էջ 69:

[29] Այս մասին մանրամասն տե՛ս՝ Ռ.Հ. Վարդանեան, «Յովհան Օձնեցու արմատական բարեփոխումները հայոց ճաշոց-տօնացոյցում», *Հայոց տօնացոյցը (4-18րդ դարեր)*, «Գիտութիւն», Երեւան, 1999, էջ 198-99, 206. նաեւ՝ Մ. Յակոբեան, «Սուրբ Յովհան Օձնեցի հայոց հայրապետի կանոնական եւ իրաւագիտական ժառանգութիւնը», *Էջմիածին*, 2009:Ա, էջ 40-41. նաեւ՝ Լ.Ա. Սարգսեան, *Հայոց*

Կարծիք կայ, թէ «Յովհան Օձնեցի եւ Հեշմ» աւանդազրոյցը վիպական անդրադարձն է այն պատմական իրողութեան, որ 652ին Թէոդորոս Ռշտունին յատուկ պայմանագիր է կնքում արաբ խալիֆ Մուաւիայի հետ, որի համաձայն՝ եթէ որեւէ թշնամի պետութիւն (նկատի էր առնուած յատկապէս Բիւզանդիան) յարձակուէր Հայաստանի վրայ, խալիֆաթը պարտաւորւում էր զօրքով անմիջապէս օգնութեան հասնելու նրան[30]: Իրականում նման ենթադրութիւն անելն անիմաստ է, եթէ հաշուի առնենք, որ Օձնեցու եւ արաբ ամիրապետի հանդիպումը իրական պատմական փաստ է:

ՕՁՆԵՑՈՒ ԿԵՐՊԱՐՆ ԸՍՏ ՎԱՐԴԱՆ ԱՐԵՒԵԼՑՈՒ

Վարդան Արեւելցի պատմագիրը (ԺԳ. դար) յատուկ աշխատանք ունի գրած Յովհան Օձնեցու մասին, որը կոչւում է «Ճառ ի վերայ Յոհան Օձնեցւոյ»: Այս երկում Օձնեցին կոչւում է Հայրապետ Յովհան *Ուժնեցի*: Ճառի մէջ Վարդան պատմագիրը խօսում է Օձնեցու եկեղեցաշինական գործունէութեան մասին. *«Շինէր եւ ինքն ի բազում տեղիս եկեղեցիս որպէս եւ յիւրականն աւանի զերկնանմանն խորան, բարի առնելով տանն իւրոյ եւ ընտանեաց, որպէս դայեկաց եւ առաջին խանձարրաց…»*[31]: Եթէ Յովհաննէս Դրասխանակերտցին ընդհանուր գծերով խօսում է լոկ Օձնեցու կողմից եկեղեցու անշունչ քարերը պճնազարդելու մասին, այնուհետեւ՝ Կիրակոս Գանձակեցին յիշատակում է Օձնեցու կառուցած միայն մէկ եկեղեցին Օձունում, ապա Վարդան պատմիչը նշում է միքանիսի մասին, որոնց թւում եւ՝ իր սեփական աւանի (Օձունի) տաճարը (*«որպէս եւ յիրականն աւանի»*): Ուշագրաւ է նաեւ, որ Վարդան Արեւելցին նախ դնում է Օձնեցու եկեղեցաշինական գործունէութիւնը, յետոյ միայն նրա այցը առ արաբ ամիրապետը (ճիշտ ինչպէս Դրասխանակերտցին է նախ պատմում «եկեղեցազարդ» գործերի, յետոյ՝ արքունական քաղաքն այցելելու մասին), մինչդեռ Գանձակեցու պատմական շարադրանքում հակառակն է՝ ամիրապետ Հեշմի հետ հանդիպումից յետոյ է միայն, որ Օձնեցին կառուցում է Օձունի եկեղեցին:

Պատմական անհամաձայնութիւն կայ նաեւ արաբ ամիրապետի անձի շուրջ: Կիրակոս Գանձակեցին նրան կոչում է Հէշմ, մինչդեռ Վարդան Արեւելցին՝ Օմար[32] (իսկ Յովհաննէս Դրասխանակերտցին ընդհանրապէս ո-

---

փօնացոյցի ծագումն ու զարգացումը (4-8-րդ դդ.), «Էդիթ Պրինտ», Երեւան, 2010, էջ 260-65:

[30] Գանձակեցի 1982, էջ 60-1, ծան.:

[31] Վարդան Արեւելցի, էջ 584:

[32] Այդպիսով, ըստ հայ պատմագիրների՝ Օձնեցու այցը Դամասկոս տեղի է ունեցել կա՛մ Օմայեան Օմար իբն Աբդ ալԱզիզ խալիֆայի (717-20), կա՛մ էլ Հեշմ/Հիշամ (724-43) խալիֆայի օրօք (Միքայէլեան, էջ 27): Տէրղեւոնդեանը հակուած էր Օմար Բ. (717-20)ի օգտին՝ գտնելով, որ Հիշամի օրօք անհաւանական կը լինէր այդ այցը (Тер-Гевондян, էջ 83, ծնթ. 47):

րեւէ անուն չի նշում[33]): Այդպիսով, ըստ միջնադարեան հայ պատմագիրների՝ Յովհան Օձնեցու այցը Դամասկոս տեղի է ունեցել կա՛մ Օմայեան Օմար իբն Աբդ ալ-Ազիզ խալիֆայի (717-20), կա՛մ էլ Հէշմ/Հիշամ (724-43) խալիֆայի օրօք[34]: Տէրղեւոնդեանը հակուած էր Օմար Բ. (717-20) խալիֆայի օգտին՝ գտնելով, որ Հիշամի օրօք անհաւանական կլինէր այդ այցը[35]:

Վարդան Արեւելցին այսպէս է տալիս պատմական դէպքերի նկարագրութիւնը.-եկեղեցիներ կառուցելուց յետոյ Օձնեցին մեծ շուքով կրօնական տօնախմբութիւններ էր կազմակերպում Հայաստանի տարբեր վայրերում, հաւաքում էր երկրի իշխաններին՝ աշխարհախումբ բազմութեամբ, *«եւ նոքօք կատարէր զլուսաբեր աւուրսն՝ զարդարելով զգեղեցկադիտակ հասակն հայրապետական զգեստիւք եւ խնդութեան աւուրսն առ ի ցնծութիւն եւ ի պարծանս փառաց տօնասէր եւ Քրիստոսասէր ժողովրդեանն, ուր եւ հաւաքէին եւս ի տաճիկ* [= արաբ] *տոհմէ բազումք, եւ յաւագ արանց եւ ի զօրագլխոց որք եւ զարմացեալ հիանային եղեալ ձեռն ի ծնօտի, երանի տալով աշխարհին, որ այսպիսի ունիցի առաջնորդ»*[36]: Ահա այս արաբ իշխանաւորներն ու զօրապետերը, որ «ձեռքները ծնօտներին դրած», այսինքն՝ բերանները բաց ապշահար հիացմունքով տեսել ու լսել էին Օձնեցուն, նրա մասին գնում-պատմում են Օմար ամիրապետին, որին Վարդանը կոչում է «աշխարհակալ սուլթան Օմար»[37]: Ըստ Վարդան Արեւելցու՝ *«Որք* (արաբ մեծատոհմիկները - Տ.Դ.) *եւ գնացեալ առ աշխարհակալ սուլթանն Օմար, գովէին առնա զայրն փառաւոր, որպէս թէ չէ տեսեալ ակն մարդոյ, այնպիսի գեղեցիկ որդի յԱդամայն տոհմէ»*[38]: Դրանից յետոյ է, որ Օմարը ցանկութիւն է յայտնում տեսակցելու Օձնեցուն, եւ վերջինս մեկնում է արաբների մայրաքաղաքը:

Վարդան Արեւելցին Օձնեցուն համեմատում է Գրիգոր Լուսաւորչի հետ: Այս վիպաբանական բաղդատութեամբ՝ ստորգետնեայ վիհի մէջ մտնելն այլաբանօրէն զուգադրւում է Հայկական Լեռնաշխարհից դէպի հարաւ՝ դաշտավայրային երկրներ իջնելու հետ: Ըստ Ագաթանգեղոսի՝ Գրիգոր Լուսաւորիչը ստորգետնեայ զնդանում մնում է օձերի ու կարիճների ընկերակցութեան մէջ, իսկ Յովհան Օձնեցին, մեկնելով հարաւ, դիւանագիտական յարաբերութիւնների մէջ է մտնում «օձաբարոյ» արաբների հետ. *«եւ լուսաւորիչն մեր ի մէջ օձիցն եւ նա ի մէջ թշնամեացն օձաբարոյ եւ չար-*

---

[33] Դրասխանակերտցու նման՝ արաբ ամիրապետի անունը չեն նշում նաեւ Ասողիկը եւ Սամուէլ Անեցին (Тер-Гевондян, էջ 83, ком. 47):

[34] Միքայէլեան, էջ 27:

[35] Тер-Гевондян, էջ 83, ծնթ. 47:

[36] Վարդան Արեւելցի 1888, էջ 584:

[37] Արաբ. سلطان «իշխանութիւն», «տիրակալ» բառը, հենց Վարդանի նոյն երկում տառադարձւում է մե՛րթ **թ**ով, մե՛րթ **տ**ով՝ սուլթան/սուլտան:

[38] Վարդան Արեւելցի 1888, էջ 584:

չարիչ նենգաւոր ազգին իսմայէլի. զանձն եդեալ ի վերայ հօտին իբրեւ զհովիւն քաջ»[39]:

Ըստ Վարդան Արեւելցու՝ Յովհան Օձնեցին արաբ ամիրապետ Օմարի պալատ է մտնում հանդիսաւոր կերպով, գլխին՝ ճերմակ քօղ ունեցող վարսակալ-թագ, ձեռքին՝ խաչանշան գաւազան[40]. Վարդան Արեւելցու խօսքով՝ *«…զգենոյր զպճղնաւորն եւ ի վերայ զվակաս եմիփորոնին, եւ զքողն ծիւնափայլն վարսակալ պսակովն դնէր ի գլուխն եւ մտանէր յարքունիսն. զինեալ խաչանշոյլ եւ ականակուռ գաւազանաւն, զոր իբրեւ տեսանէր արքայն արքայից ահիւ եւ դողութեամբ լնոյր, եւ քսփմնեալ սոսկայր յոտից մինչեւ ցծայր հերացն, եւ ծածկեալ զերեսն հազիւ կարէր պահել զուշ խելացն, առ ժամանակ մի լռութիւն կալեալ զպալատն արքունի, ապա սրտապնդեալ զինքն սուլտանն բանայր զերեսն իւր եւ հարցանէր…»*[41]: Այսպիսով, միայն որոշակի ժամանակամիջոցից յետոյ է յաջողւում այլայլուած դողահար Օմարին ուշքի գալ եւ հարց ուղղել Օձնեցուն:

Դրանից յետոյ գրեթէ նոյն երկխօսութիւնն է տեղի ունենում, ինչ որ նախորդ աղբիւրներում արդէն նկարագրուած է: Արդիւնքում Օձնեցին Օմարին ցոյց է տալիս իր տակի հագուստը. *«եւ նոյն ժամայն արտաքս հանեալ զամենեսեան, տեսանէր ի ներքս զտգատասկածեւ գլգլեակն եւ անկեալ յերեսս ողջունէր զնա, եւ շօշափմամբ ձեռաց գանձէր յինքն օրհնութիւն ի նմանէ»*: Այնուհետեւ Օմարը հրամայում է կանչել իր զօրքերում եղած բոլոր հիւանդներին («նեղեալներին»), որոնց Օձնեցին իսկոյն բժշկում է: Օմարը խոստանում է որդիաբար կատարել ամէն բան, ինչ որ հաճոյ է Օձնեցուն: Վերջինս օգնական զօրքեր է խնդրում, որից յետոյ Օմարը *«նորա խնդրութեամբ հրաման տուեալ եւ ձեռագրով կնքեալ եւ տուեալ զօրագլուխս յօգնականութիւն, եւ եօթն անգամ ագուցեալ զնա յարքունական եւ ի մեծածախ հանդերձից, առաքէ զնա յաշխարհս մեր երեւելի փառօք եւ բազում դրուատիւք պսակեալ ի յաշխարհակալ գոռոզէն…»*: Օձնեցին վերադառնում է Հայաստան եւ Սմբատ Կիւրոպաղատի ու արաբների զօրագնդերի միջոցով դուրս է մղում բիւզանդացիներին «ի վերին աշխարհէն Հայոց»[42]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Փաստօրէն, յենուելով հին ու նոր աղբիւրների տեղեկութիւնների վրայ, կարելի է վստահօրէն եզրակացնել, որ միջնադարում գոյութիւն է ունեցել Յովհան Օձնեցուն վերաբերող մի վիպաշար, որի առանցքային դրուագներից էր «Յովհան Օձնեցի եւ արաբ ամիրապետ» պատումը՝ վկայուած հիմ-

[39] Նոյն, էջ 585:

[40] Այս խաչանշան գաւազանը կարեւոր դեր է խաղում Օձնեցու վիպական կերպարի ձեւաւորման մէջ:

[41] Վարդան Արեւելցի 1888, էջ 585:

[42] Նոյն, էջ 585-586:

նականում Դրասխանակերտցու, Գանձակեցու եւ Արեւելցու պատմական շարադրանքներում: Այս վիպական դրուագի ձեւափոխուած եւ երբեմն նոր ժամանակների իրողութիւններին յարմարեցուած տարբերակներ են գրի առել ազգագրագէտ Լալայեանը[43], գրող եւ բժիշկ Տէր-Յովհաննիսեանը[44], բանագէտ Հայկունին[45]: Վերջինիս տարբերակն, ի տարբերութիւն առաջին երկուսի, գրի է առնուած տեղական բարբառով (Բզնունիք գաւառում), բանասացի մասին հակիրճ տեղեկատուութեամբ: Լալայեանի գրառած տարբերակում Հեշմ կամ Օմար անունով ամիրապետերի փոխարէն հանդէս է գալիս *Բաղդադի խալիֆան*, չնայած որ պատմականօրէն Օձնեցու հանդիպումը Արաբական Տէրութեան խալիֆայի հետ տեղի է ունեցել մայրաքաղաք Դամասկոսում[46]: Լալայեանի պատումին հակառակ՝ Հայկունու տարբերակում Օձնեցու եւ մուսուլման տիրակալի հանդիպումը տեղի է ունենում նոյնպէս Սիրիայում[47]:

Եթէ վիպաբանական վերլուծութիւնից շեղուելով՝ հպանցիկ պատմագիտական հայեացք նետենք, մասնաւորաբար, Գանձակեցու պատմական նկարագրութեանը, ապա կարելի է նշել, որ, փաստօրէն, քաղաքական անկախութեան բացակայութեան պայմաններում՝ Հայաստանն Օձնեցու օրօք ձեռք բերեց կրօնական անկախութիւն, եւ դրա շնորհիւ՝ երկրի իրական իշխանութիւնը կենտրոնացաւ հենց կաթողիկոսի ձեռքում:

Վերջինս, երկիրը կարգաւորելուց յետոյ, ըստ Գանձակեցու, սկսում է զբաղուել «ուսուցչութեամբ ու աղօթքներով». *«Եւ այսպէս կարգաւորեալ զաշխարհս ամենայն առաքինութեամբ, եւ ինքն վարդապետութեան եւ աղօթից պարապեալ: Շինէ եւ եկեղեցի մեծ ի գիւղն իւր Օձուն, որ հուպ է առ քաղաքն Լօռէ, եւ իւր ընտրեալ տեղի բնակութեան սակաւ մի ի բացեայ ի գիւղէն՝ անդ դադարէր»*[48]: ԺԸ. դարասկզբին Ստեփանոս Ռօշքան իր եկեղեցական ժամանակագրութեան մէջ գրում է. *«Տէր Յոհան ի Տաշրաց, ի գեղջէն Օձնոյ, ամս Ժ»*[49]: Իր հայրենի Օձուն աւանում Օձնեցու կառուցած եկեղեցին «երկնանման խորան» է անուանում Վարդան պատմագիրը[50]:

---

[43] Լալայեան, էջ 176. Նաեւ՝ Ա.Տ. Ղանալանեան, *Աւանդապատում*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1969, էջ 305 (№ 773 Դ):

[44] Քաջբերունի, էջ 84:

[45] «Օխան Օձնելի», գրի է առել՝ Ս. Հայկունի, պատմել է Խլաթայ Փրխուս գիւղից Քրսեցի Արեւշատ (Սարիբէկ), *Արարատ*, Սեպտեմբեր, Թ:1898, էջ 412:

[46] Тер-Гевондян, էջ 83: Այդուհանդերձ, ո՛չ Դրասխանակերտցին, ո՛չ Գանձակեցին, ո՛չ էլ Վարդան Արեւելցին քաղաքի անունը չեն նշում:

[47] «Օխան Օձնելի», էջ 413:

[48] Գանձակեցի 1961, էջ 69-70:

[49] Ստեփանոս Ռօշքայ, *Ժամանակագրութիւն կամ փարեկանք եկեղեցականք*, հրատ.՝ Հ. Համազասպ Ոսկեան, Մխիթարեան տպարան, Վիեննա, 1964, էջ 86:

[50] Վարդան Արեւելցի 1888, էջ 584:

Այսպիսով, հայոց պատմական աւանդութիւնը, սկսած Գանձակեցուց, ասում է, որ իր հայրենի Օձուն գիւղում Յովհան Իմաստասէր կաթողիկոսը մեծ եկեղեցի է կառուցել: Տարօրինակ է, սակայն, որ աւելի քան հինգ դարերի ընթացքում՝ ընդհուպ մինչեւ Գանձակեցու ժամանակը, որեւէ տեղեկութիւն չունենք՝ Օձնեցու կողմից եկեղեցի կառուցելու վերաբերեալ: Ընդսմին, սա կարող է ունենալ այլեւայլ պատմագիտական եւ մատենագրական բացատրութիւններ, որոնց քննութիւնը դուրս է ներկայ յօդուածի շրջանակից[51]:

HISTORIOGRAPHICAL-FOLKLORISTIC NARRATIVES ABOUT CATHOLICOS HOVHAN ODZNETSI (RESEARCH OF SOURCES)

(Summary)

TORK DALALYAN (torqdal@yahoo.com)

In the Middle Ages, starting from the 10th c., several Armenian historiographers, such as Hovhannes Draskhanakerttsi, Kirakos Gandzaketsi, and Vardan Areveltsi, communicated valuable information concerning Armenian Catholicos Hovhan Odznetsi (717-728 AD). The central episode of the Catholicos's activity was his meeting with the Arab Caliph in the capital of the Caliphate. This episode was described in an epic manner. In our days, the epic image of Hovhan Odznetsi has been studied by Yervand Lalayan, Tamar Gevorgyan, Astghik Israyelyan, Lilit Simonyan and others. The epic image of an historical person is usually formed according to mythological rules; however, the real life of this person naturally lies at the base of epic narratives. Our paper examines the epic narratives about Hovhan Odznetsi which describe his political-administrative activity, with the exception of the topographical-religious legends preserved in his native village of Odzoun and in its surroundings.

[51] Օձունի եկեղեցու թուագրման ժամանակի վերաբերեալ առկայ գիտական քննարկումների մասին տե՛ս՝ Դալալեան, էջ 317-19:

ԳԱԼՈՒՍՏ ԿՈՍՏԱՆԴԵԱՆԻ ԴՐԱՊԱՇՏ ԱՇԽԱՐՀԱՅԵԱՑՔԸ ԵՒ ԴԵՐԸ ՕՍՄԱՆԵԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ՃԱՆ ԷՐԶՈՒՐՈՒՄԼՈՒՕՂԼՈՒ (canerzurumluoglu@hotmail.com)

ԴՐԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆ

Օկիւսթ Քոնթ (1798-1857), ֆրանսական յեղափոխութեան յաջորդող ճգնաժամային տարիներուն կը զարգացնէ փիլիսոփայական դրութիւն մը, զոր կը կոչէ «դրական փիլիսոփայութիւն», որ ընկերային խնդիրներու լուծումը կը գտնէ գիտական մտքի պաշտպանութեան մէջ՝ ի դէմս աստուածաբանութեան ու բնազանցութեան: Այս փիլիսոփայական ըմբռնումը, ըստ Քոնթի, կը բխի Ֆրենսիս Պէյքընի[1], Րընէ Տեքարթի[2] եւ Կալիլէոյի[3] հայեացքներէն եւ անընդհատ զարգացող մարդկային մտքի վերջին հանգրուանն է: Քոնթ նաեւ կը հիմնէ միութիւն[4] մը՝ իր փիլիսոփայութիւնը տարածելու համար, որով դրապաշտութիւնը արձագանգ կը գտնէ նաեւ Ֆրանսայէն դուրս:

Քոնթ կը նշէ, որ շատ նմանութիւններ կան Նիւթընի[5] բնափիլիսոփայութեան եւ դրական փիլիսոփայութեան միջեւ, բայց ինք չէ նախընտրած իր համակարգը անուանել «բնափիլիսոփայութիւն» կամ «գիտութիւններու փիլիսոփայութիւն», որոնք չեն պատշաճիր իր հայեացքները ընդգրկող բոլոր երեւոյթները ճշգրտօրէն բնորոշելու համար, մանաւանդ որ դրական փիլիսոփայութիւնը կ'ընդգրկէ նաեւ ընկերային երեւոյթներ[6]:

Մարդկային բանականութիւնը միասնաբար կ'օգտագործէ տրամաբանումն ու դիտարկումը՝ ուսումնասիրելու համար երեւոյթներու իսկական օրէնքները եւ կ'ընդունի բացարձակ ճշմարտութիւններու անհնարինութիւնը:

Քոնթի համաձայն, վերջին հինգհարիւր տարուան ընթացքին աստուածաբանական փիլիսոփայութիւնը, անդառնալիօրէն փլուզուած է: իսկ այդ փիլիսոփայութեան վրայ հիմնուած քաղաքական համակարգը, ենթարկուած է արմատական լուծարման: Իվերջոյ անկարելի դարձած է պահպա-

---

[1] Ֆրենսիս Պէյքընն (1561-1626).- անգլիացի փիլիսոփայ եւ քաղաքական գործիչ:

[2] Րընէ Տեքարթ (1596-1650).- ֆրանսացի փիլիսոփայ եւ մաթեմաթիկոս:

[3] Կալիլէօ Կալիլէի (1564-1642).- իտալացի աստղագէտ:

[4] Société Positiviste, հիմնուած է 1848ին Քոնթի կողմէ:

[5] Այզաաք Նիւթընն (1643-1727).- անգլիացի բնագէտ, ուսողագէտ եւ աստղագէտ:

[6] «Նախաբան», Auguste Comte, *Cours de Philosophie Positive*, *հտր. Ա.,* Rouen Frères, Libraires-Éditeurs, Paris, 1830, էջ 8:

նել հին վարչակարգը եւ տեղի ունեցած է Մեծ Ճգնաժամը՝ 1789ի յեղափոխութիւնը[7]:

Քոնթ կը մտածէ, որ ժամանակակից հասարակութիւնը ճգնաժամի մէջ է. ընկերային խառնաշփոթութիւնները յառաջ կու գան անհետացող աստուածաբանական եւ զինուորական հասարակարգի ու զարգացող գիտական եւ ճարտարարուեստական հասարակարգի միջեւ գոյութիւն ունեցող հակասութիւններէն: Ճգնաժամը կը դադրի, երբ գիտական միտքը կը ստանձնէ աստուածաբանական մտքի անցեալի դերակատարութիւնը՝ պահպանել հասարակարգը[8]: Ըստ Քոնթի, գիտական եւ ճարտարարուեստական հասարակարգի յաղթանակը անխուսափելի է, քանի որ պատմական անհրաժեշտութիւն է, զոր սակայն կարելի է դանդաղեցնել կամ արագացնել[9]:

ԴՐԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԻԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՓՈՒՄՆԵՐԸ ՕՍՄԱՆԵԱՆ-ԹՐՔԱԿԱՆ ՄՏՔԻՆ ՀԵՏ

Դրապաշտութիւնը օսմանեան թուրք մտաւորականութեան մօտ կը համարուէր փլուզուող օսմանեան պետութիւնը փրկելու միջոց[10]: Ուստի, քաղաքական պատճառները կարեւոր դեր խաղացին օսմանեան քաղաքական եւ մտաւորական շրջանակներու մէջ դրապաշտութեան տարածման:

Դրապաշտները կը փորձեն իրենց գաղափարները տարածել օսմանեան հողերու վրայ: Քոնթ նամակներ կ'ուղարկէ Մուսթաֆա Ռեշիտ փաշային[11]՝ ներկայացնելով դրապաշտութիւնը իբրեւ «մարդկութեան կրօնք»[12]: Բայց այս նախաձեռնութիւնը դրական արձագանգ չի գտներ: Որոշ դրապաշտներ, որոնք ջանքեր իգործ կը դնէին իսլամ ժողովուրդներու մէջ դրապաշտութեան տարածման համար, 1877ին կ'այցելեն Միտհաթ

---

[7] Auguste Comte, *Traité Philosophique d'Astronomie Populaire*, Carilian Goeury et Vor Dalmont Éditeurs, Paris, 1844, էջ 50:

[8] Նոյն, էջ 85:

[9] Raymond Aron, *Les Étapes de la Pensée Sociologique*, Gallimard, 1967, էջ 80-81:

[10] Այդ մտաւորականներէն են, օրինակ՝ Պեշիր Ֆուատ, իսկ աւելի ուշ՝ երիտթուրքերը, որոնց գործունէութիւնը կը սկսի Կոստանդեանէն ետք:

[11] Մուստաֆա Ռեշիտ Փաշա (1800-1858).- թանզիմաթեան շրջանի օսմանեան քաղաքական գործիչ:

[12] 4 Փետրուար 1853 թուակիր նամակին մէջ Քոնթ կը նշէ, որ իսլամական հաւատքը աւելի յարմար է դրապաշտութեան համար, քանի որ այն աւելի պարզ է, քան կաթոլիկութիւնը (նկատի ունենալու է քրիստոնէութիւնը ընդհանրապէս) եւ կ'արտայայտէ իր համոզումը, որ դրական կրօնքը աջակցութիւն կը գտնէ մահմետականներու մօտ (Auguste Comte, *Systѐme de Politique Positive, ou Traité de Sociologie, Instituant la Religion de l'Humanité*, Paris, 1853, էջ 47-49. նաեւ՝ Robert H. Hewsen, *Tarihi Kentler ve Ermeniler: İzmir*, ed. Richard G. Hovannisian, «Ege'deki Ermeniler», çev.: Aras Ergüneş, Aras Yayincilik, 2018, İstanbul, էջ 51:

փաշային[13], երբ ան կը գտնուէր Փարիզ եւ կը ինքնաբնութագրեն իբրեւ կրօնական եւ էթնիկ նախապաշարումներէ ազատ մարդիկ: Անոնք կը ներկայացնեն դրապաշտութիւնը, կը նշեն որ Օսմանեան Կայսրութիւնը մեծ ծառայութիւններ մատուցած է մարդկութեան, ի տարբերութիւն ցարական Ռուսաստանին՝ կրօնական, լեզուական եւ այլ ազատութիւններ տուած է փոքրամասնութիւններուն: Կը յայտնեն իրենց մտահոգութիւնը համասլաւոնականութեան եւ համագերմանականութեան սպառնալիքի դէմ: Այս սպառնալիքի դէմ յոյս կը յայտնեն Անգլիոյ, Աւստրիա-Հունգարիոյ եւ Օսմանեան Կայսրութեան (նաեւ Սպանիոյ ու Իտալիոյ հաւանական) միասնութեամբ կազմուած դաշինքի մը գոյութեան: Կը նշեն, որ իրենք կը պաշտպանեն *status quo*ն: Կը յայտնեն յատկապէս, թէ իրենք կողմնակից են Օսմանեան Կայսրութեան տարածքային ամբողջականութեան:

Միտհաթ փաշան կը կիսէ իրենց մտահոգութիւնը Ռուսիոյ մասին, կը քննադատէ Եւրոպան՝ Օսմանեան Կայսրութեան դէմ ցուցաբերած ամբաստանական վերաբերումի համար՝ յայտնելով նաեւ իր հիացումը անոր ազատական կառոյցներուն[14]:

Օսմանցի թուրք առաջին դրապաշտ մտաւորականը Պեշիր Ֆուատն է, որ առաւելաբար կը հետաքրքրուէր դրապաշտութեան գիտական մտքին վերաբերող ուսմունքով: Ֆուատ դրապաշտութեան յառաջդիմութեան գաղափարը կ'ընկալէր որպէս նիւթական յառաջդիմութիւն:

Պեշիր Ֆուատ (1852-87) այն կարեւոր մտաւորականներէն է, որ լուրջ ներդրում ունեցած է յետթանզիմաթեան շրջանի օսմանեան փիլիսոփայական մտքին: Իր ուսումը ստացած է Յիսուսեան Հայրերու մօտ: Դրապաշտութեան եւ գիտական աշխարհայեացքի անզիջող ջատագով Ֆուատ՝ յատկապէս պարբերականներու իր յօդուածներուն մէջ քննադատած է բնազանցութիւնը, պաշտպանելով այն տեսակէտը թէ հասարակութիւնը կրնայ լուսաւորուիլ միայն գիտութեամբ: Ըստ իրեն, փիլիսոփայ ըլլալու պայմանը գիտական պատրաստութիւն ունենալն ու աշխատանք կատարելն է[15]: Որովհետեւ ան կը հաւատար, որ փիլիսոփայութիւնը բաղկացած է բոլոր գիտութիւններու գումարումէն[16]: Իր մտածողութեան վրայ ազդե-

[13] Միտհաթի Փաշա (1822-1884).- օսմանեան քաղաքական գործիչ: Մեծ դեր խաղացած է 1876ին հռչակուած օսմանեան սահմանադրութեան պատրաստման մէջ:

[14] *Adresse des Positivistes à Midhat-Pacha, Ancien Grand-Vizir de l'Empire Ottoman*, P. Ritti, Փարիզ:

[15] M. Orhan Okay, *Beşir Fuad - İlk Türk Pozitivist ve Naturalisti*, Dergah Yayinlari, İstanbul, Mart. 2012, էջ 170-71:

[16] Նոյն, էջ 179:

ցութիւն ունեցած են ֆրանսացի լուսաւորիչները[17], դրապաշտ փիլիսոփաներ Քոնթ, Լիթրէ[18] եւ նիւթապաշտ Պիւխնէր[19]:

Պարբերականներու յօդուածներէն դուրս Ֆուատի փիլիսոփայական միակ աշխատանքը Վոլթէրի մասին մենագրութիւնն է, զոր աւարտած է 1886ին[20]: Ասիկա Վոլթէրի մասին գրուած ամէնէն մանրամասն թրքերէն մենագրութիւնն է օսմանեան շրջանին[21]: Մենագրութենէն հնարաւոր է հետեւիլ Ֆուատի կրօնական եւ փիլիսոփայական տեսակէտերուն, ուր ան կը յայտարարէ թէ քրիստոնէութիւնը յետադիմական դեր խաղացած է մարդկութեան յառաջդիմութեան մէջ, բայց Սպանիոյ մէջ իսլամի եւ քրիստոնէութեան համադրութեամբ յառաջ եկած է Վերածնունդը: Ֆուատի քննադատութիւններուն կիզակէտն է քրիստոնէական մոլեռանդութիւնն ու հաւատաքննութիւնը. ան տեղ կը յատկացնէ արեւմուտքի մէջ կրօնական անհանդուրժողութեան դէմ պայքարող մտաւորականներուն: Ֆուատ, քրիստոնեայ արեւմուտքէն բերած օրինակներով հաւանաբար կ'ուզէր թաքուն կերպով հարուածել օսմանեան ընկերային կեանքին մէջ նաեւ իսլամ կրօնաւորներու ճնշումը:

Ֆուատ հրատարակած է նաեւ հեղինակային կամ թարգմանական գիրքեր եւ յօդուածներ բնախօսութեան, բժշկութեան, գրականութեան, թատրոնի, նշանաւոր մարդոց կենսագրութեան, լեզուի ուսուցման, զինուորական ծառայութեան վերաբերեալ: Ասոնց մէջ *Պեշէր*ը (Մարդ) (1885), որ գիտական բնոյթ ունէր, յատկապէս ուշագրաւ է մեր նիւթի առումով: Ֆուատ այնտեղ կը քննարկէ բնախօսական եւ մարդաբանական հարցեր: Գիրքին ներածութիւնը կը սկսի Սփենսըրի[22] գիտութիւններու դասակարգումով: Ֆուատ կը հետեւի ԺԹ. դարու դրապաշտ բժիշկ-գիտնական Քլոտ Պերնարին, պնդելով թէ կենսաբանութիւնը ենթակայ է նիւթի օրէնքներուն ինչպէս բնագիտութիւնը եւ տարրաբանութիւնը, եւ ճիշտ չէ մարմնի եւ կեանքի մէջ բնազանցական տարրեր փնտռել[23]:

ԴՐԱՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ ՕՍՄԱՆԵԱՆ ՀԱՅԵՐՈՒ ՄԷՋ

Դրապաշտութիւնը օսմանեան հայերու մէջ սկսած էր արձագանք գտնել. ան որոշ շրջանակներու համար գիտական մտքին համարժէք կը

---

[17] ԺԸ. դարու ֆրանսացի որոշ փիլիսոփաներ, որոնք կը պաշտպանէին անհատի ազատութիւնը եւ կը պայքարէին կրօնական անհանդուրժողութեան դէմ:

[18] Émile Littré (1801-1881).- Քոնթի հետեւորդ, ֆրանսացի դրապաշտ փիլիսոփայ:

[19] Okay, էջ 169: Ludwig Büchner (1824-99).- նիւթապաշտ գերմանացի փիլիսոփայ:

[20] Okay, էջ 166:

[21] Remzi Demir, *Philosophia Ottomanica-Osmanli Felsefesi*, Lotus Yayinlari, İstanbul, 2018, էջ 452:

[22] Herbert Spencer (1820-1903).- անգլիացի փիլիսոփայ, կենսաբան, մարդաբան եւ ընկերաբան:

[23] Okay, էջ 98-99:

համարուէր եւ կը ներկայացնէր նորն ու յառաջդիմականը: Այս փիլիսոփայութեան հետեւող հայերը կը հաւատային, որ ընկերային զարգացումը տեղի պիտի ունենար դրապաշտութեամբ: 1870ականներէն իվեր հայկական պարբերականներու մէջ կը նկատուէր գիտական յօդուածներու եւ թարգմանութիւններու զգալի աճ: Գալուստ Կոստանդեանի, Եղիա Տէմիրճիպաշեանի[24], Մսեր Մսերեանի[25] նման դրապաշտ հակումներով մտաւորականներ ջանքեր կը գործադրէին տարածելու համար գիտական այս միտքը[26]: Կոստանդեան հրատարակած էր *Մէթոտի վրան*, որուն մէջ մեծ ոգեւորութեամբ կը պաշտպանէր դրապաշտ գաղափարները եւ գիտական մեթոտը: Տէմիրճիպաշեան լոյս ընծայած էր *Գրական եւ իմաստասիրական շարժում* հանդէսը՝ դրապաշտութիւնը ծանօթացնելու համար հայերուն: Տէմիրճիպաշեան համոզուած էր, որ ազգային հաստատութիւնները կը զարգանան դրապաշտութեան տարածմամբ, հետեւաբար կը պահանջէր, որ դրական գիտութիւնները աւելի լայն տեղ գտնեն հայկական դպրոցներէն ներս: Այս հանդէսէն բացի լոյս կը տեսնեն նաեւ Մսերեանի *Մեփեօրան*, ուր լայն տեղ տրամադրուած էր դրական փիլիսոփայութեան, եւ Նազարէթ Տաղաւարեանի[27] *Գիտական շարժում*ը, որ կը բովանդակէր առաւելաբար գիտական յօդուածներ:

Միւս կողմէ, պահպանողական շրջանակներու համար դրապաշտութիւնը անկրօն փիլիսոփայութիւն էր կամ անհաւատութեան յանգեցնող միջոց: Յիրաւի, Կոստանդեանի *Մէթոտի վրան* մեծ անհանգստութիւն կ'առաջացնէ կրօնական եւ պահպանողական շրջանակներու մէջ, որոնք խստօրէն կը քննադատեն Կոստանդեանը, պնդելով որ գիրքը ունի անաստուածեան բովանդակութիւն:

ԳԱԼՈՒՍՏ ԿՈՍՏԱՆԴԵԱՆ

Կոստանդեանի ընտանիքը գործուն մասնակցութիւն կը բերէր Զմիւռնիոյ փոքր հայկական համայնքին՝ ԺԹ. դարու առաջին քառորդին[28]: Հայ-

---

[24] Եղիա Տէմիրճիպաշեան (1851-1908).- հրապարակագիր, արձակագիր, բանաստեղծ, կրթական մշակ եւ փիլիսոփայ:

[25] Գրիգոր Մսերեան (1846-93).- զմիւռնիահայ մտաւորական, խմբագիր, թարգմանիչ:

[26] S. Է. Յարութիւնեան, «Պոզիտիւիզմի մուտքը հայ իրականութիւն եւ պայքարը նրա գնահատման շուրջ», *Բանբեր Երեւանի Համալսարանի*, 3(63):1987, էջ 183-84:

[27] Նազարէթ Տաղաւարեան (1862-1915).- հասարակական գործիչ, խմբագիր եւ բժիշկ:

[28] Զմիւռնիան իր հարուստ մշակութային կեանքով հանդիսացած է հայ լուսաւորութեան կարեւոր կեդրոններէն մէկը: Յոյները, հայերը, հրեաները, թուրքերը, լեւանթէնները եւ եւրոպացիները կազմած էին այս բազմերանգ քաղաքը: Հայերը, հակառակ անոր, որ բնակչութեան փոքր տոկոսը կը կազմէին,

րը՝ Գրիգոր, յայտնի մտաւորական էր, կատարած թարգմանութիւններ ա-րեւմտահայերէնի՝ որուն բարելաւման ջանադիրներէն էր: Հետաքրքրուած էր նաեւ ընկերային խնդիրներով եւ կ'աջակցէր անոնց, որոնք զբաղուած էին գիտութեամբ: Մայրը՝ Հռիփսիմէ, նոյնպէս Զմիւռնիոյ հայ համայնքի յառաջադէմ կիներէն էր: 1845ին հրդեհի զոհ գացած Հռիփսիմեանց օր-իորդաց դպրոցը, որ վերանորոգուած էր 1849ին, Հռիփսիմէի աջակցու-թեամբ օժտուած էր եւս երկու յարկերով[29]: Կոստանդեանի եղբայրներէն մէկը Վոլթէրի համակիր յայտնի բժիշկ մըն էր[30]:

Ընտանիքի միջնեկը՝ Գալուստ, ծնած է Զմիւռնիա, 1840ին, ստացած որակաւոր կրթութիւն եւ երիտասարդ տարիքին հնարաւորութիւն ունեցած հօր հետ մեկնելու Եւրոպա: Գալուստ որ կը կարդար անգլերէն, ֆրանսե-րէն, իտալերէն, գերմաներէն եւ յունարէն լեզուներով[31], 15 տարեկանին կը

ուշագրաւ գործունէութիւն կը ծաւալէին առեւտուրի, կրթութեան, մշակոյթի եւ հրատարակչութեան ոլորտներէն ներս: Զմիւռնիահայերը ունէին թանգարան, գրադարան, հիւանդանոց, հոգեբուժարան, թատրոն, ուր ֆրանսական ներկայացումներ կը տրուէին 1836էն իվեր: Զմիւռնիոյ հայ համայնքը կը փայլէր ֆրանսախօս վերնախաւով: Այս վերնախաւը հայ լուսաւորութեան ռահվիրան եղած է յատկապէս 1825-1860 շրջանին, երբ Պոլիս դեռ չէր հասած նման մշակութային մակարդակի (Robert H. Hewsen, *Tarihi Kentler ve Ermeniler: İzmir*, ed. Richard G. Hovannisian, «Ege'deki Ermeniler», çev.: Aras Ergüneş, Aras Yayincilik, 2018, İstanbul, էջ 51. նաեւ՝ Vahé Ochagan, "L'Ecole des Traducteurs Arméniens de Smyrne au XIXe Siècle", *Haigazian Armenological Review*, 4:1973, էջ 199-216):

Զմիւռնիոյ մէջ լոյս տեսած է Օսմանեան Կայսրութեան առաջին ազգային հայկա-կան թերթը՝ *Արշալոյս Արարատեան:* Աւելի ետք, վերջինս՝ *Ծաղիկի* եւ *Արեւելեան մամուլի* նման թերթերու հետ իր շուրջ կը հաւաքէր մտաւորականները եւ կը նպաստէր ազատական գաղափարներու տարածման ու ժամանակակից արեւ-մտահայերէնի զարգացման:

Վահէ Օշական արժէքաւոր տեղեկութիւններ կու տայ կատարուած թարգմանա-կան աշխատանքներու վերաբերեալ: Ըստ իրեն՝ 1843-93 յիսնամեակին հրատա-րակուած են աւելի քան հարիւր հատոր թարգմանեալ գիրքեր, որոնց հեղինակ-ներուն շարքին են Ֆենելոն, Շաթոպրիան, Մոլիէր, Վիքթոր Հիւկօ, Ռասին, Լա-մարթին, Կէօթէ, Վոլթէր, Շէյքսփիր, Պոկաչիո (Ochagan, էջ 199-216):

[29] Այս դպրոցը բացուած էր 1820ին, բայց մինչեւ 1840ականները չէր կրցած ունե-նալ իր սեփական շէնքը (Albert Kharatian, *Tarihi Kentler ve Ermeniler: İzmir, ed. Richard G. Hovannisian*, Ortaçağ'dan Tanzimat Dönemi'ne Kadar İzmir ve Ege Bölgesindeki Ermeniler, çev.: Aras Ergüneş, Aras Yayincilik, İstanbul, 2018, էջ 86:

[30] Արտաշէս Կարինեան, «Արեւմտահայ լուսաւորիչներ 60-70-ական թուականնե-րին», *Տեղեկագիր Հայկական ՍՍՌ ԳԱ*, 6-7:1944, էջ 35:

[31] Նոյն:

հրատարակէ յայտնի եգիպտագէտ Շամփոլիոնի տախտակը «Եգիպտական նշանագիրք» վերնագիրով[32]:

Կոստանդեան գրական գործունէութեան կը լծուի շատ երիտասարդ տարիքին: Անոր առաջին գիրքը՝ *Միպել կամ բնական գիտութեան պիտանի մասերուն համառոտ պատմութիւնը,* կը յիշատակուի 1856 Ապրիլ 11ին *Մասիս*ի մէջ տպագրուած գովազդի մը մէջ: 1858ին ան կը սկսի հրատարակել *Հասարակաց Թանգարան* (ֆրանսերէն ենթավերնագիրով՝ Bibliothèque Populaire) գիտահանրամատչելի շարքը, որ բաղկացած էր 16 գրքոյկներէ: Կոստանդեան հետաքրքրուած էր նաեւ երաժշտութեամբ. ան լաւ դաշնակահար մըն էր[33]:

Կոստանդեան աշխատակցած է *Միութիւն* եւ *Ծաղիկ* ամսաթերթերուն: Ան անդամակցած է Փարիզի Société Asiatique de Paris[34] ընկերակցութեան եւ Մեսմէրականութեան[35] միութեան: 1860ականներուն գրած յօդուածները ցոյց կու տան անոր հետաքրքրութիւնը ոգեպաշտութեան հանդէպ: Ան կը ձեռնարկէ հանրագիտարանային բառարան մը պատրաստել, բայց չի կրնար իրագործել: Գ. Փափազեանի հետ 1869ին կը հիմնէ «Հայ Ընթերցատուն»ը, որուն նախագահը կ'ըլլայ երկար տարիներ[36]:

Կոստանդեան նաեւ թարգմանիչ էր: 1855ին Մեսրոպեան վարժարանի *Թռութակ Հայկազեան* ամսաթերթին մէջ լոյս կը տեսնէ անգլերէնէ կատարուած իր թարգմանութիւնը *նշանախօս վարժապետը* խորագրեալ[37]: Թարգմանական աշխատութիւնները կը հրատարակուին նաեւ այլ պարբերականներու մէջ: 1860ին Հաշտենից Միութեան[38] պաշտօնաթերթին առաջին համարին մէջ որպէս թերթօն կը սկսի հրատարակել Féréalի *Mystères de l'Inquisition et autres Sociétés Secrètes d'Espagne* գիրքի թարգմանութիւնը՝ *Գաղտնիք հաւատաքննութեան* վերնագրով: 1862 Ապրիլին եւ Մայիսին *Ծաղիկ*ին մէջ կը հրատարակէ Վիքթոր Լանկլուայի[39] *Voyage*

---

[32] Գալուստ Կոստանդեան, «Եգիպտական նշանագիրք», *Արեւելք*, 15 Հոկտեմբեր 1855, էջ 251:

[33] Մեսրոպ Նուպարեան. «Գալուստ Կոստանդեան (անձնական յիշատակներ)», *Արեւելեան մամուլ*, թիւ 9, 1 Մայիս 1902, էջ 401-11:

[34] Société Asiatique de Paris հիմնուած է 1822 ին արեւելագէտներու կողմէ:

[35] Société du mesmérisme de Paris հիմնուած է 1844ին: Մեսմէրականները ուսումնասիրութիւններ կը կատարէին «կենդանի մագնիսականութեան» վրայ:

[36] Միքայէլ Յակոբեան, «Գալուստ Կոստանդեան եւ նրա «Մէթոտի վրայ» գիրքը», *Լրաբեր Հասարակական Գիտութիւնների*, 3:1979, էջ 48:

[37] *Թռութակ Հայկազեան*, Մարտ, թիւ 3, 1855, էջ 38-40:

[38] 1859ին հիմնուած է Զմիւռնիոյ մէջ կրթական եւ մշակութային նպատակներով:

[39] Victor Langlois (1829-1869).- ֆրանսացի պատմաբան եւ հնագէտ:

dans la Cilicie et dans les Montagnes du Taurus ճանապարհորդագրութեան թարգմանութիւնը[40]:

Կոստանդեան գիտութեամբ զբաղող բացառիկ մտաւորական մըն էր: Ան ունէր գիտաշխատանոց եւ աստղադիտարան: 1878ին, Զմիւռնիոյ մէջ կը հրատարակէ *Մէթոտի վրայ* գիրքը[41], որ հսկայ ազդեցութիւն կ'ունենայ եւ տեղիք կու տայ բուռն բողոքներու: Այս գիրքը առաջինն էր այն մատենաշարին, զոր ան կը ծրագրէր հրատարակել, բայց յատկապէս պահպանողական շրջանակներէ բարձրացող բողոքներէ ետք հրաժարեցաւ հրատարակել երկրորդը եւ նախընտրեց գրել ֆրանսերէն:

ՄԷԹՈՏԻ ՎՐԱՅ

Կոստանդեանի այս գիրքը կը ներկայացնէ անոր դրապաշտ աշխարհայեացքը: Գիտական մտքի եւ յառաջդիմութեան հանդէպ անոր հաւատքը ակնյայտ է այս աշխատութեան մէջ[42]: Կոստանդեան, որ կը հետեւէր Քոնթի եւ ժամանակաշրջանի դրապաշտներուն, գիտութեան պատմութենէն մէջբերած օրինակներով կը փորձէ ցոյց տալ, որ մարդկութեան զարգացումը կ'ընթանայ դէպի դրապաշտութիւն: Ան իր միտքը կը պաշտպանէ եռանդով: Գիրքը, իր հակակրօնական բովանդակութեան համար, թիրախ կը դառնայ պահպանողականներու յարձակումներուն, մինչ հեղինակը կ'ենթարկուի մեծ ճնշման: Կոստանդեան կը հերքէ ոչ միայն կրօնական, այլեւ բոլոր բնազանցական հայեացքները: Ան յաճախ կը կրկնէ այն համոզումը, որ յառաջդիմութեան կարելի է հասնիլ միայն գիտութեան միջոցով եւ կ'ընդգծէ գիտական մեթոտի կարեւորութիւնը մարդկութեան զարգացման գործին մէջ:

Դրապաշտ ըմբռնում եւ գիտական մեթոտ

Կոստանդեան բացատրութիւններ կու տայ մեթոտին մասին: Կը նշէ, որ մեթոտի «իմաստը» ժամանակի ընթացքին բարդուած է. փիլիսոփայական կամ մանկավարժական իմաստներ ստանձնած է ան: Ինք նախընտրած է ամէնէն ընդարձակ իմաստով գործածել բառը, զայն նկատելով ճշմարտութեան, իրողութեան եւ յառաջդիմութեան տանող ճամփայ[43]:

---

[40] «Ճանապարհորդութիւն Վիքթոր Լանկլուայի ի Կիլիկիա եւ ի Տաւրոսի», *Ծաղիկ*, 1862, թիւ 29:

[41] Գալուստ Կոստանդեան, *Մէթոտի վրայ, Ա. հտր.,* Արեւելեան Գիտական Մատենաշար, տպագրութիւն Եղբարց Տէտէեան, Իզմիր, 1878, 163 էջ

[42] «Ընկերութիւնը յառած է դէպի յառաջդիմութիւն, դէպի ճշմարտութիւն, ինչպէս որ այսօրը յառած է դէպի վաղը» (*Մէթոտի վրայ*, էջ 160):

[43] Նոյն, «Մուտք»: Կոստանդեան մեթոտը կը գործածէ յաճախ եւ անփութօրէն: Երբեմն ան կ'առնչուի պատմական ժամանակաշրջանի, երբեմն՝ աշխարհագրական շրջանի, երբեմն ալ պատմական դէմքերու: Հետեւաբար, ամբողջովին հասկնալի չէ, թէ ան ի՛նչ նկատի ունի մեթոտով: Կ'ակնարկէ տարբեր «մեթոտներ»ու,

Ըստ Կոստանդեանի՝ ԺԹ. դարու յատկանիշը գիտական եւ քննադատական ոգին է, որուն պատմութիւնը կ'ուզէ ուսումնասիրել ինք: Ան կը նշէ, որ «*ինչ որ է կողմնացոյցը նաւուն՝ նոյնն է մէթոտը ուսանողին*»[44]: Նոր Վերածնունդի ծրագիրի մը պէտք ունինք, կ'ըսէ ան, որուն առաջին նպատակը պէտք է ըլլայ գիտութիւնը կատարելագործել, իսկ երկրորդը՝ գիտութիւնը տարածել[45]: Ասոնք «սրբազան ու վեհ» պարտականութիւններ կը նկատէ ան[46]:

Կոստանդեան համոզուած է, որ գիտութիւնը վերջ պիտի տայ պատերազմներուն եւ երջանկութիւն պիտի բերէ մարդկութեան: Ան կը կիսէ ժամանակակիցներու դրապաշտներու լաւատեսութիւնը: Դրապաշտութիւնը կը տեսնէ որպէս մարդկութեան զարգացման անհրաժեշտ ուղի[47]: Կը բերէ օրինակներ գիտութեան պատմութենէն: Ըստ իրեն, գիտական զարգացումները մարդկութիւնը պիտի փրկէին: Ան կը յուշէ, որ բնագիտութիւնն ու տարրաբանութիւնը զարգացուցած են ճարտարարուեստը, հեռագիրը իրարու կապած է Եւրոպան, Ամերիկան եւ Ասիան, շոգենաւերը ծովերը անցած են, շոգեկառքերը լեռները ծակած են, հիւանդութիւններու դարմաններ գտնուած են, երկրաբանութիւնը եւ օդերեւութաբանութիւնը զարգացած են, շոգեշարժ մեքենաները կատարելութեան հասած են եւն.: Միջազգային արուեստահանդէսները այս բոլորին պսակը կրնան համարուիլ: Փեսթալոցցիի[48] եւ Ֆրէօպէլի[49] դրութեամբ նոր դպրոցներ բացուած են՝ գիտական կրթութեան տարածման համար: Կոստանդեան կը հաւատայ, որ ԺԹ. դարը այլեւս մարդու իշխանութեան դարն է, իսկ այդ ամբողջ յառաջդիմութիւնը կը պարտինք գիտնականներուն: Եւ դեռ, կը նշէ ան, թէ կը շարունակուին գիտական միութիւններ հիմնուիլ, գիտական հանդէսներ հրատարակուիլ, նոր գիւտեր կատարուիլ: Կոստանդեան կը հաւաստէ. «*ներհակ բնազանցներու ըսածին, մեթոտը գիտութեան կը խառնուի եւ գիտութիւնը մեթոտի*»[50]:

ինչպէս՝ մարդաբանական, արեւելեան, հնդկական, յունական, դրապաշտական, յունահռոմէական, արաբա-մաւրիտանական, Յիսուսի սիրոյ, կրակի, դիտարկման եւ փորձառական, հռովմէական, բնազանցական եւն.:

[44] Նոյն, «Մուտք»:

[45] Նոյն, էջ 157:

[46] Նոյն, էջ 158:

[47] «Ինչպէս որ մագնասեղը բեւեռի կը նայի՝ նոյնպէս եւ մարդկութեան ընտրագոյն զարգացումը դատապարտուած է դրականութեան դիմելու՝ քիչ շատ միջին աստիճաններէ անցնելով», նոյն, էջ 159:

[48] Johann Heinrich Pestalozzi (1746-1827).- զուիցերիացի մանկավարժ եւ կրթական բարենորոգիչ:

[49] Friedrich Froebel (1782-1852).- գերմանացի մանկավարժ:

[50] *Մէթոտի վրայ*, էջ 103-105:

Կոստանդեանի համաձայն, մեր մանկութեան, պատանութեան, երիտասարդութեան, ծերութեան շրջաններուն պէս մարդկութիւնն ալ ունի շրջաններ՝ իւրաքանչիւրը իւրայատուկ մեթոտներով եւ կարողութիւններով: Ի տարբերութիւն Քոնթի, ան մարդկութեան մտքի զարգացումը չորս շրջանի կը բաժնէ[51].- բնազդային, հաւատական, տրամաբանական (rationnel) եւ գիտական:

Ըստ Կոստանդեանի, նախապատմական վայրենի ժամանակաշրջանները կը համապատասխանեն «բնազդային» շրջանին: Այս ժամանակահատուածը կ'արտացոլէ մարդու մանկութեան փուլը, երբ մարդիկ նկատի կ'առնէին միայն իրենց ամէնօրեայ կարիքները: Գիրի գիւտով այս շրջանը կ'աւարտի: Երկրորդ շրջանի յատկանիշը զգայուն եւ միամիտ միտքն է: Կոստանդեան այս շրջանը կ'անուանէ «հաւատական», որուն ընթացքին հանդէս կու գան հնդեւրոպական կրօնքները: Պրահմա, Օսիրիս եւ համազօր աստուածներ հանդէս կու գան: Աստուածներու բազմութիւնը, երկնային իշխանութեան մը երկրային հնազանդութիւնը, անիմանալի եւ անպէտք «խորհուրդներ» ու երգեր կը յատկանշեն այս շրջանը: Այս շրջանի մեթոտներն են կրօնքը, հրաշքները եւ բանաստեղծութիւնը: Այս շրջանը կ'աւարտի հելլէնական արշալոյսով Ք.ա. Է. դարուն: Իսկ երրորդ շրջանը աւելի «նուրբ ձեւեր» ունի եւ կը սկսի յոյներով: Կոստանդեան դիտել կու տայ, որ այս շրջանին երեւակայութիւնը կը մեղմանայ, իսկ աստուածները կ'աննիւթանան: Տարակոյսը կը դրդէ մտածել, քան հաւատալ[52]: Ան այս շրջանը կ'անուանէ «տրամաբանական», զոր կը գործածէ բնազանցականի իմաստով[53]: Յունաստանի մէջ անհատի տրամաբանական ոգին նկատելի կը դառնայ եւ ամէն ինչ քննադատութեան կ'ենթարկուի: Կոստանդեան կը պնդէ, որ տրամաբանական մեթոտի հետեւանքն է *a priori* բնոյթով սխալ փիլիսոփայութիւն մը, որուն հիմքն են բնազանցական յղացքները: Այս շրջանը կը բնորոշեն անվերջ տրամաբանական կռիւները, անհատական սնապարծութիւնը, *սքոլաստիք* համակարգերու աղմուկը, յոյսի ու տարակոյսի վէճը եւ բազմաթիւ գրական գործեր: Տրամաբանական շրջանը կ'երկարի ԺԵ.-ԺՋ. դարեր եւ կ'աւարտի Քոլումպուսով[54], Պէյքընով ու Կալիլէով: Մտքի չորրորդ եւ վերջին շրջանը՝ «գիտական»ը, կը սկսի Վերածնունդով եւ ցարդ կը շարունակուի[55]:

Կոստանդեան կը նշէ, թէ վերոնշեալ գիտնականներու աշխատութեանց շնորհիւ *սքոլաստիք* կրթութիւնը կը վերջանայ եւ կ'անցնինք բնա-

---

[51] Քոնթ մտքի պատմութիւնը երեքի կը բաժնէ.- աստուածաբանական, բնազանցական եւ դրական:

[52] Նոյն, էջ 107-10:

[53] Քոնթ այս շրջանը կ'անուանէ բնազանցական:

[54] Christopher Columbus (1451-1506).- իտալացի երկրախոյզ:

[55] Նոյն, էջ 110-11:

կան գիտութիւններու շրջանին, որ կը կոչուի «գիտական շրջան»: Այս շրջանին հաւատականութիւնը կ'անհետանայ, հրաշքները կը բացատրուին եւ եսապաշտ պատմաբանը կը զգաստանայ, ու մարդը կը սկսի իրական եղելութիւնները տեսնել, վաւերացնել ու վերլուծել, ինչ որ ցոյց կու տայ դրական շրջանի մը սկիզբը. «*Ըսել է՝ մարդս նախ **կ'զգայ**, եւրքը **կը հաւտայ**, եւրքը **կը տրամաբանէ** ու **կը գիտնայ**, հոգեբանական կամ ուղեղի չորս տեսակ կարողութեանց դասակարգութիւն մը յայտնելով*»[56]՝ կը գրէ ան: Արտաքին աշխարհի հեղինակութիւնը, փորձը, աշխատութեան ու ճարտարարուեստի յաղթանակը, ընկերային ընդհանուր բարօրութիւնը այս շրջանի յատկանիշերն են[57]:

Կոստանդեանի համոզմամբ, ի տարբերութիւն նախկին մեթոտներու, գիտական մեթոտը հիմնուած է եղելութիւններու վրայ՝ փոխանակ գիրքերու եւ գաղափարներու: Ան կը լքէ իտէական եւ *a priori* համոզումները եւ կը դիմէ արտաքին աշխարհին, ուր կարելի է գտնել եղելութիւնները: Գիտական մեթոտը կը յառաջանայ մակածութեամբ. առաջին պատճառները չ'ուսումնասիրեր, այսինքն բնազանցական հարցումներով չի զբաղիր: Ըստ Կոստանդեանի, այս մեթոտը միւսներէն անհամեմատօրէն գերա-զանց է եւ ասիկա կը պարտի իր առարկայականութեան[58]: «*Ելեկտրու-թիւն, ջերմութիւն, թթուածին, ազօտ, ասոնք «բռնաւոր» ու իրական ճշմարտութիւններ են, որոնց նկատմամբ՝ ոչ նախապէս տրամաբանելը ստակ մը կ'արժէ եւ ոչ հաւտալ կամ չհաւտալ: Անոնք են՝ ու այս եղե-լութիւնը բաւ է ամէն վէճ դադրեցնելու, ամէն բերան գոցելու*»:[59]

Կոստանդեան կ'ընդգծէ հաւատական եւ տրամաբանական մեթոտներու թերութիւնները եւ ամլութիւնը ու կը պնդէ, որ զգայարանները մեզի աւելի «*խելք տուած են*» քան մարդկութեան հազարաւոր աստուածները[60]: Ճշմարտութեան հասնելու միակ միջոցը դիտարկութիւն եւ փորձն է[61]՝ կը հաւատայ ան:

Գիտութեան առնչութիւնը կրօնքի, բարոյականութեան եւ իրաւագիտութեան

Կոստանդեան կը պնդէ, որ քրիստոնէութիւնը յետադիմական դեր խաղացած է մեթոտի պատմութեան մէջ: Իր կարծիքով՝ քրիստոնէութիւնը որեւէ դեր չէ ունեցած գիտութիւններու յառաջացումին մէջ[62]: Ան կը նշէ թէ

---

[56] Նոյն, էջ 114 (ընդգծումները՝ հեղինակային):
[57] Նոյն, էջ 111-12:
[58] Նոյն, էջ 142-43:
[59] Նոյն, էջ 143-44:
[60] Նոյն, էջ 145-46:
[61] Նոյն, էջ 157:
[62] Նոյն, էջ 43, տողատակ:

քրիստոնէութեան բնորոշ ոչ մէկ մեթոտ եւ կրթութիւն գոյութիւն ունի, եւ թէ ան հին կրօնական մեթոտներու վերադարձը կամ շարունակութիւնն է, որով քրիստոնէութիւնը նորոգած է միայն այն, ինչ որ կտակուած էր հին ժամանակներէն[63]:

Կոստանդեան կը մերժէ նաեւ բարոյականութեան եւ կրօնքի միջեւ հաստատուած փոխյարաբերութիւնները: Ան ծիծաղելի կը համարէ կրօնքը ընդունիլ որպէս բարոյականութեան եւ ընկերային փրկութեան պայման: Ըստ իրեն, բարոյականութիւնը յառաջ եկած է աւանդութիւններու, ընտանեկան եւ տնտեսական յարաբերութիւններու հետեւանքով: իր համոզումը ընկերային զարգացման նկատմամբ՝ ակնյայտ է այստեղ: Ան կրօնքը կ'ընդունի ոչ թէ իբրեւ անփոփոխ գաղափարներու համակարգ, այլ՝ ընկերային զարգացման արդիւնք. կը պաշտպանէ այն միտքը, թէ կրօնքը մարդուն իծնէ տրուած չէ:

Կոստանդեան խիստ քննադատութիւններ կ'ուղղէ կրօնականներուն, պնդելով, որ անոնք հակագիտական եւ անբարոյական սովորութիւններու աղբիւր են: Անոր կարծիքով, կրօնականները սուրբ համարուող բաները կը ծախեն, ոսկիէ եւ մարմարէ եկեղեցիներ կը կառուցեն: Մարդիկը կը շահագործեն յանուն «երկնային իրաւունքներու» պաշտպանութեան[64], եւ բարոյական կեղծ արդարացումներով թաքցուցած են իրենց շահերը՝ տգէտ պահելով ժողովուրդը[65]: Կոստանդեանի համաձայն, կրօնական պնդումները ապացոյցի կարիք ունին:

> Կրօնը կը ստիպէ, ոչ թէ «բարին բարիի համար» ընել՝ այլ անորոշելի վարձի մը յուսով ու սոսկալի պատիժի մը երկիւղիւ: Եւ ընդունինք պահ մը, թէ անպատճառ երկնային **Անձի** մը հեղինակութիւնը ու դժոխի մը վախը պէտք է, որպէս զի բարոյականը **հիմ** մը ունենայ, բայց ասով խնդիրը չի լուծուիր, կը մնայ դարձեալ գիտական ճշմարիտ փաստերով ցուցնել, թէ իրօք այն **Անձը** գոյութիւն ունի, եւ թէ դժոխքի կաթսաները կատարելապէս կը գործեն[66]:

Կոստանդեան, ի տարբերութիւն ժամանակակից օսմանեան թուրք մտաւորականներու եւ դրապաշտ Տէմիրճիպաշեանի, համոզիչ չի գտներ կրօնքը եւ գիտութիւնը հաշտեցնելու ջանքերը: Թուրք մտաւորականները կը փորձէին ցոյց տալ, որ գիտութեան եւ կրօնքի միջեւ հակասութիւն չկայ՝ հաշուի առնելով ժողովուրդի զգայնութիւնը: Նոյնպէս ալ Տէմիրճիպաշեան՝ հակառակ անոր որ երբեմն հակակրօնական միտքեր արտայայտած է, հաւատարիմ մնացած էր քրիստոնէութեան: Մինչդեռ Կոստանդեան անզիջող էր կրօնքին հանդէպ. «*Յուսալ, թէ կարելի է տգիտութեան յօդել ու **հաւասարակշռութեան** մը գալ՝ կը նմանի ուղտը երկա-*

---

[63] Նոյն, էջ 44:

[64] Նոյն, էջ 161:

[65] Նոյն, էջ 124-25:

[66] Նոյն, էջ 124 (ընդգծումները՝ հեղինակային):

թուղիին կապելու, ծառի մը արմատները տերեւներուն խառնելու եւ կամ երէկը այսօր ընելու»[67]՝ կը գրէ ան:

Կոստանդեանի փիլիսոփայական աշխարհայեացքը

Օսմանեան Կայսրութեան մէջ ժամանակակից արեւմտեան փիլիսոփայութեան ուսումնասիրութիւնները թափ ստացան միայն երկրորդ սահմանադրութեան հռչակումէն (1908) ետք[68]: Կոստանդեանի գործած տարիներուն հրապարակի վրայ կը գտնուէին փիլիսոփայական բնոյթով ոչ-բովանդակալից միքանի թրքերէն գիրքեր: Որպէսզի կարենանք պատշաճօրէն եւ հիմնաւորապէս արժեւորել *Մէթոտի վրայ*ն, հարկ է նկատի առնել այս իրողութիւնը:

Կոստանդեանի փիլիսոփայական գրութիւնները բովանդակային խորք չունենալով հանդերձ, ցոյց կու տան անոր քաջատեղեակութիւնը իմաստասիրական զանազան բանավէճերու եւ փիլիսոփայութեան պատմութեան[69]: Իր դրապաշտ հայեացքներուն աջակցելու եւ հակակրօնական բանավէճը շարունակելու համար Կոստանդեան կը դիմէ մեծամասնութեամբ գիտական բնոյթ ունեցող բազմաթիւ աղբիւրներու, որոնցմէ մէջբերումներ կը կատարէ: *Մէթոտի վրայ*ն կարելի է կարդալ նաեւ որպէս գիտութեան եւ փիլիսոփայութեան պատմութիւն:

Կոստանդեան, հելլէնական մտքին կարեւորութիւն տալով հանդերձ, կը նշէ, որ այս շրջանին մարդը չէ կրցած լքել մտքի ենթակայական աշխար-

---

[67] Նոյն, էջ 159-60:

[68] Այս շրջանին թրքերէն փիլիսոփայական փոքրաթիւ գիրքեր լոյս տեսած են: Միւնիֆ փաշան (1830-1910), հրատարակած է *Telhis-i Hikmet-i Hukuk* (1884), *Hikmet-i Hukuk* (1885) եւ *Muhaverat-i Hikemiye* (1859) երկերը: Հրատարակած է նաեւ յօդուածաշարք մը՝ «Tarih-i Hükema-yi Yunan» խորագրով, *Mecmûa-i Fünûn* թերթին մէջ: Այս շրջանին Ահմէտ Վեֆիք փաշա (1823-91) ատենի միակ համալսարանի՝ Dârülfünoի մէջ, պատմութեան փիլիսոփայութիւն դասաւանդած է. իր դասերը 1863ին որպէս յօդուածաշարք հրատարակուելէ ետք վերածուած են գիրքի: Ահմէտ Միտհաթ (1844-1912) ալ, 1872ին իր հիմնած *Dağarcik* պարբերաթերթով զանազան փիլիսոփայական նիւթերու կողքին, բարեշրջական դպրոցի մասին տեղեկութիւններ տուած է: Գրած է *Schopenhauer* խորագրեալ գրքոյկ մը: Ալի Սուաւիի (1839-78) *Ulûm* թերթին մէջ յոյն փիլիսոփաներու մասին տուած տեղեկութիւններն ալ օսմանեան փիլիսոփայութեան պատմութեան տեսանկիւնէն արժէք կը ներկայացնեն: Սուաւի թարգմանած է նաեւ Սոկրատի աշակերտ Kiyotiyosի պատկանող երկխօսութիւն մը, որ հրատարակուած է 1867ին (Ճան Էրզուրումլուօղլու, «Եղիա Տէմիրճիպաշեանի դրական փիլիսոփայութեան արժեւորումը օսմանեան փիլիսոփայութեան պատմութեան մէջ (1840ականներէն սկսեալ)», *Հայկազեան հայագիտական հանդէս*, Խ:2020, էջ 656-57):

[69] Կոստանդեան գրած է Քանթի, Հեկէլի, Տեքարթի, Արիստոտէլի, Պղատոնի, Սփինոզայի, Պէյքընի, Վոլթէրի, Տարուինի, Քոնթի, Միլի, Լիթրէի, Տրէյփըրի, Ռենանի, Վոլնիի, Պաքլի, Հեկէլի, Պիւխնէրի, Սփենսըրի մասին:

հը ու «*փարերաց անանձնութեան (impersonnalité) մեծ գաղափարին հասնիլ*»: Ըստ իրեն, այս շրջանի իշխող մտային համակարգը իտէապաշտութիւնն ու բանապաշտութիւնն է: Կոստանդեանի համաձայն այս վերջինը, «*անխզելի կապեր ունի մեր ներքին մութ զգացումներու հետ*»[70]: Ան յատուկ կարեւորութիւն կ'ընծայէ Հիպոկրատին, զոր կը համարէ առաջին փիլիսոփան, որ նշմարած է «*զննական (դիտարկման) մէթոտի*» արժէքը, նախընտրելով քննել իրերը քան գաղափարները[71]:

Իսկ «*ճշմարտութեան առաջին նահատակ*»[72] Սոկրատ «Գիտեմ միայն այն, որ ոչինչ գիտեմ» ըսելով, ըստ Կոստանդեանի մատնանշած է նախկին մեթոտներու անբաւարարութիւնը եւ հիմնած է փիլիսոփայական տարակոյսը[73]: Ենթակայական մեթոտի հետեւորդ ըլլալով հանդերձ, Սոկրատ քանդած է աւանդական մտածելակերպը, քննադատելով նաեւ իր ժամանակի աստուածաբանութիւնը: Կոստանդեան կը նշէ, թէ Զեւս, Պրահմա, Եզտ ու Միհրա իրենց լոյսը կորսնցուցած են եւ խիղճը ասոնց տեղը առած է[74]:

Ըստ Կոստանդեանի, Արիստոտէլ կը հանդիսանայ յոյն իմաստութեան կատարը: Անոր *Օրկանոն*ը կրնայ համարուիլ մեթոտի մը կիրառութեան առաջին համակարգուած փորձը: Ան նաեւ ըմբռնած է մակածութեան կարեւորութիւնը: Սոկրատ եւ Արիստոտէլ հին աստուածաբանութիւնը հերքեցին տարակոյսի եւ բնազանցութեան միջոցով[75]:

Հելլէնական լուսաւորութեամբ սկսող շրջանը տրամաբանական շրջանն է: Իտէապաշտութիւնը կրօնքի հետ նոյնացնող Կոստանդեան, խիստ պայքար կը մղէ անոր դէմ: Կոստանդեանի համաձայն բանապաշտութիւնը աշխարհիկ եւ անհատական կրօնք մըն է: Այս մեթոտը մեկուսացուած է կրօնքէն բայց ոչ՝ բնազանցութենէն[76]: Այսպիսի համակարգերու գլխաւոր սխալը այն է, որ հիմնուած են բնածին գաղափարներու վրայ եւ դատողութիւնը (raison) անկախ ու *a priori* սկզբունք մը ըրած են: Կոստանդեանի կարծիքով, բանապաշտներու մեծամասնութիւնը իտէապաշտներ են եւ այս պատճառով տրամաբանումը դարձած է բառախաղ[77]: Յոյներէն սկսեալ, իտէապաշտները ուրիշ բան չեն ըրած, եթէ ոչ բանակռիւ: Ան Պղատոնի իտէաները անհասկնալի կը գտնէ եւ այս բոլորին պատճառը հաւաքաբանութիւն (syllogisme) կը համարէ:

---

[70] Կոստանդեան, *Մէթոտի վրայ*, էջ 29:
[71] *Մէթոտի վրայ*, էջ 29:
[72] Նոյն, էջ 30:
[73] Նոյն, էջ 31:
[74] Նոյն, էջ 30-31:
[75] Նոյն, էջ 85-87:
[76] Նոյն, էջ 131:
[77] Նոյն, էջ 132-133:

Կոստանդեան կ'ակնարկէ միջնադարի անուանապաշտներու եւ իրապաշտներու վիճաբանութեան: Քրիստոնեայ արիստոտէլականները երկուքի բաժնուած էին. իրապաշտներ եւ անուանապաշտներ: Անուանապաշտները համոզուած էին, որ արդարութեան, իրաւունքի նման հանրային (universel) գաղափարները միայն մեր մտքին մէջ գոյութիւն ունին, իսկ ըստ իրապաշտներու՝ անոնք ինքնին իրական գոյութիւններ են՝ անկախ մարդկային միտքէն: Այս խնդիրը լուծելու համար կը դիմէին հաւաքաբանութեան: Ամբողջ միջնադարը այս երկու դպրոցներուն հակաճառութիւններով անցաւ: Հաւաքաբանութիւնը անբաւարար կը մնայ եւ կը սկսին զիրար նզովել: Կոստանդեան, այս տեղեկութիւնները տալէ ետք, կը մերժէ իրապաշտներու այն կարծիքը, թէ գաղափարները իրական պէտք է համարել:

Կոստանդեանի համաձայն, հաւատական շրջանին հետեւող բանապաշտ շրջանը աւելի նուրբ միջոցներու կը դիմէ. կռապաշտ ֆեթիշները եւ անձնաւոր երկնային էակները «բարոյական ուժեր» կ'ըլլան, Օսիրիս եւ Եհովա «արդարութիւն» անունը կը ստանան: Հաւատական մեթոտը կրնայ համարուիլ նաեւ բնազանցական[78]: Պատմական օրինակներով Կոստանդեան կը քննադատէ *աքոլասթիք* մեթոտը, որ անտեսած էր դիտարկումը եւ փորձը:

Կոստանդեանի համաձայն, իմացականութեան աղբիւրը ոչ թէ *a priori* ճշմարտութիւններն ու բնածին գաղափարներն են, այլ՝ դիտարկման եւ փորձի վրայ հիմնուած գիտական մեթոտն է, որ իր գերազանցութիւնը կը պարտի առարկայականութեան: Կոստանդեան միտքը կը նմանցնէ աղօրիքի, իսկ ցորենը՝ արտաքին աշխարհի եղելութիւններուն: Զգայարաններով ստացուած ցորենը միտքի միջոցով ալիւրի՝ այսինքն ճշմարտութեան, կը վերածուի: Եթէ ցորեն չըլլայ՝ միտքը կը յոգնի յումպէտս բանելէ եւ վերացականութիւններու կը դիմէ[79]: Արտաքին աշխարհը թողլով՝ ճշմարտութիւնը մտքի մէջ փնտռելը կը նմանի չափելու համար չափերիզը թողլով մարդու բազուկը գործածելուն[80]:

Լիթրէի զօրակցութիւնը

Կոստանդեանի «Propagande Scientifique en Orient» վերնագրով նախագիծը կը տպագրուի 1878ի Յուլիս-Դեկտեմբեր ամիսներուն Լիթրէի *La Philosophie Positive* հանդէսին մէջ: Իբրեւ այս յօդուածի մուտք գրած կարճ պարբերութեամբ Լիթրէ կ'ընդգծէ, որ դրական գիտութիւնը արմատապէս պիտի փոխէ Արեւելքի մտածելակերպը եւ զայն պիտի պատրաստէ արեւմտեան քաղաքակրթութեան: Կոստանդեան, որ յօդուածը ստորագրած է՝

[78] Նոյն, էջ 136:
[79] Նոյն, էջ 132-33:
[80] Նոյն, էջ 140:

Constant, կը յայտնէ թէ քաղաքակրթութեան օրրանը հանդիսացող Արեւելքը դարերու նահանջէն ետք կրկին մտած է յառաջդիմութեան ուղին: Ինչպէս այլուր, Արեւելքի մէջ եւս, ամենամեծ չարիքը աստուածաբանական կրթութեան եւ ժամանակավրէպ վարդապետութիւններու պատճառած տգիտութիւնն է, զոր ոչնչացնելու համար անհրաժեշտ է տարածել դրական ճշմարտութիւններ՝ կը նշէ Կոստանդեան: Ասոր համար ալ, ան կը յայտնէ իր մտադրութիւնը՝ պատրաստելու գիտական գիրքեր, առանց ցեղային եւ ազգային խտրականութեան: Այդ նպատակով ստեղծուելիք բարեգործական միութիւն մը, իր նպաստը պիտի բերէ թուրքերուն, քրիստոնեաներուն եւ հրեաներուն: Կոստանդեան կը ձեռնարկէ արեւելեան գիտական մատենաշարի մը հրատարակման: Հայերէն հրատարակուելիք այս շարքին նպատակը նոր գաղափարներու տարածումն էր: Մատենաշարը, բացի փորձառապաշտ դպրոցի փիլիսոփայական գիրքերէն – որոնք ցոյց կու տան արեւմուտքի վեհութիւնը - պիտի ընդգրկէր նաեւ հասարակական գիտութիւններու եւ մարդաբանութեան վերաբերեալ գիրքեր: Այս յառաջդիմական նախաձեռնութեան նպատակն է նոր գաղափարներու տարածումը Արեւելքի մէջ եւ Օսմանեան Կայսրութիւնը ենթարկել գիտութեան՝ Եւրոպայի ամենամեծ ուժի ազդեցութեան: Մատենաշարին առաջին գիրքը տպագրուած *Մէթոդի վրայն* էր: Կոստանդեան տառապող եւ տգիտութեան մատնուած մարդոց անունով կոչ կ'ընէ մարդու փրկութեան համար աշխատող եւրոպացի մտաւորականներուն[81]:

Նոյն շրջանին, ատենի նշանաւոր գրողներէն Ստեփան Ոսկանեան կը հրատարակէ ֆրանսերէն գրքոյկ մը՝ *August Comte ȧ Smyrne et l'Athéisme*[82], ուր կը քննադատէ Կոստանդեանը: Ոսկանեանի քննադատութիւնները կը գնահատուին Զմիւռնիոյ Լատին Եկեղեցւոյ առաջնորդին կողմէ[83]:

Լիթրէ ի պատասխան Ոսկանեանի գրքոյկին, կը յայտնէ, որ ճնշումներ գործադրուած են Կոստանդեանի վրայ, վերջինիս գիրքին տպագրութենէն ետք: Հոգեւորականները հետապնդած են Կոստանդեանը, այրուած են անոր գիրքերը, Զմիւռնիոյ եւ Պոլսոյ թերթերը յարձակած են անոր վրայ: Լիթրէի փոխանցմամբ, ըստ Ոսկանեանի, Կոստանդեան մեղք գործած է, քանի որ Աստուածաշունչը կը տեսնէր ոչ թէ որպէս Աստուծմէ ներշնչուած գիրք, այլ՝ որպէս մարդկային արտադրանք: Լիթրէ իր յօդուածի վերջին

[81] «Propagande Scientifique en Orient», *La Philosophie Positive*, Յուլիս-Դեկտեմբեր, Paris, 1878, էջ 304-306:

[82] E. Oscan, *August Comte ȧ Smyrne et l'Athéisme,* Զմիւռնիա, 35 էջ: Այս գրքոյկի բովանդակութեան կը հետեւինք Յակոբեանի նշուած յօդուածին միջոցով:

[83] Յակոբեան, էջ 52:

մասով Կոստանդեանը արժանի կը նկատէ քաջալերութեան եւ զօրակցութեան[84]:

Ոսկանեան Լիթրէին կը պատասխանէ *Littré et Atheisme* յօդուածով, ուր կը նշէ, որ հայերը բացի եկեղեցիէն այլ յենարան չունին եւ կը քննադատէ դարձեալ Կոստանդեանի եւ Լիթրէի անաստուածութիւնը[85]:

Մամուրեանի քննադատութիւնները

Մամուրեան, որ նաեւ Կոստանդեանի բարեկամն էր, *Մէթոտի վրայ*ին հրատարակութենէն ետք, *Արեւելեան մամուլ*ի մէջ հինգ շարունակելիով յօդուածաշարք մը կը հրատարակէ: Ան կը յայտնէ, որ գիրքը «անախորժ» տպաւորութիւն կը թողու եւ չի յարգեր հակադիր տեսակէտերը: Կը քննադատէ մեթոտի օգտագործումը տարբեր իմաստներով եւ գիրքը կը տեսնէ որպէս մարդկային մտքի պատմութիւն[86], «եւ չէ թէ գործիք մը, organon մը, criterium մը ճշմարտութեան առաջնորդ»[87]:

Մամուրեան Կոստանդեանի ոճը կը նմանցնէ ոչ թէ Լիթրէի ուսանողի, այլ՝ աստուածաբան հռետորներուն: Ըստ իրեն, Կոստանդեան ոգեբանական, բանաւորական, գիտական եւ ուրիշ իրարու ներհակ դպրոցներ իրեն առաջնորդ կ'ընդունի եւ կը դատապարտէ բարոյական, կրօնական, իրաւագիտական եւ ազգային բոլոր տեսակի սկզբունքները: Ան կը պնդէ, որ նշեալ գիրքը աւելի բաւիղ մըն է, որուն մէջ հասարակ ընթերցողը կը կորսուի, քան՝ ուղեցոյց, բացատրելով թէ իւրաքանչիւր քայլի՝ կը հանդիպինք կնճռոտ խնդրի, մինչ կենսագրական եւ պատմական տեղեկութիւնները կը խառնուին ծանր գիտական խնդիրներու:

Մամուրեան կը նշէ նաեւ, որ հեղինակը չ'առաջարկեր ազգի հիմնական խնդիրներու շօշափելի լուծումներ՝ այլ նպատակ ունի վերացական գիտական բարիքը պաշտպանել: Իր կարծիքով, Կոստանդեան կը հեգնէ կրօնական հաւատքը՝ յատկապէս քրիստոնէութիւնը: Մամուրեան կը յիշեցնէ Կոստանդեանի այն մտքերը, թէ խղճի ազատութիւնը գիտական զարգացումի արդիւնք է եւ կ'ընդգծէ, որ անոր խօսքն ու գործը հետեւողական չեն:

Շարունակելով իր քննադատութիւնները, Մամուրեան կը հարցադրէ՝

> ի՞նչ հարկ կայ հաւատը **տղայական, անհեթեթ, ծիծաղելի սկզբունք** անուանել, [...] ինչու՞ քարկոծել քրիստոնէութիւնն, որ միլիոնաւոր հետեւորդներ ունի՝ մինչեւ անգամ այն ժողովրդոց մէջ որ գիտութեամբ եւ երեւելի գիտուններով կը պարծին: Գիտութիւնը ցասկոտ, ջլուտ ու նախանձոտ մոլեռանդ մը չէ որ փա-

[84] Émile Littré, "Auguste Comte à Smyrne," *La Philosophie Positive*, Յունուար-Յունիս, 1879, Paris, էջ 313-17:

[85] Յակոբեան, էջ 56:

[86] Մատթէոս Մամուրեան, «Մէթոտի վրայ», *Արեւելեան մամուլ*, 1878, թիւ 6, էջ 76-77:

[87] Նոյն էջ 77:

փաքի ամէն հակառակորդ անարգել, հալածել ու այրել **գահելու** համար, այլ հանդարտ, համբերատար, ժիր ու անյողդողդ ուսուցիչ մ'է որ գտնել, կրթել ու լուսաւորել կ'ջանայ, այնպէս որ երբ իր անխոհեմ թարգմաններ իրեն տխուր ու քստմնելի դեր մը տալու կ'ելնեն, զանոնք կ'դատապարտէ[88]:

Մամուրեան կը նշէ, որ մեթոտը կ'անտեսէ յառաջդիմութեան բոլոր ներքին պայմանները, ինչպիսիք են՝ զգացում, շահ, օգուտ, կրօնք, քաղաքական հիմնարկութիւն եւն., իսկ գիտութիւնը կը նկատէ մարդկութեան երջանկութեան միակ դեղամիջոց, որ անխնայ կը քննադատէ գիտութեան սահմաններէն դուրս գտնուողները, յատկապէս հին եւ նոր կրօնքները: Մամուրեան կը քննադատէ նաեւ Կոստանդեանի ըմբռնումը պատմութեան մասին: Ըստ Մամուրեանի, իսկական պատմաբանը պէտք է խառնուի այն մարդոց մէջ, զորս կ'ուսումնասիրէ եւ տեղեակ պէտք է ըլլայ անոնց բարքերուն, հիմնարկութիւններուն, աւանդութիւններուն եւ կիրքերուն եւ այստեղ փնտռէ յառաջդիմութեան սերմը: Բացի այդ, ան պէտք է նկատի առնէ մարդոց կրօնական եւ փիլիսոփայական միտքերը: Մինչդեռ Կոստանդեան մեզի կ'առաջարկէ կիսատ ու տժգոյն պատմութիւն մը: Մամուրեանի կարծիքով, մեծ յանդգնութիւն է ճշմարտութեան մասին բացարձակ ոճով քարոզել՝ առանց նկատի առնելու պատմական, բնական, գերբնական, բարոյական եւ ընկերաբանական հարցերու շուրջ առկայ անորոշութիւնները: Մամուրեան կը նշէ նաեւ, որ տարակարծութիւններ կան դրապաշտ դպրոցին մէջ, որուն հետեւորդն է Կոստանդեանը, որ ինչպէս օտարասէր հայերը, կ'օրինակէ այս ծուռ դրութիւնը: Մամուրեան Կոստանդեանը կը համարէ «*հայոց մէջ գիտութեանց բռնակալ մը*»[89]:

Մամուրեան կը քննադատէ նաեւ Քոնթը. մարդկութեան յառաջդիմութեան ընթացքի բաժանումը շրջաններու եւ իւրաքանչիւր շրջանի համար առանձին զարգացում վերագրելը կը համարէ աւելի ենթադրութիւն, քան՝ ճշմարտութիւն: Ժողովուրդները չունին բացարձակ աստուածաբանական, բացառապէս բանական կամ գիտական շրջաններ: Ըստ իրեն՝ այս բոլորը տարբեր չափերով գտնուած են տարբեր ժամանակաշրջաններու մէջ: Քննադատուող կրօնական համակարգերը անցեալին ընդլայնած են նաեւ գիտութեան հորիզոնը: Մամուրեան կը փոխանցէ Սփենսըրի այն միտքերը, թէ գիտութիւններու պատմական զարգացումը տեղի չէ ունեցած յաջորդականութեամբ, այլ՝ միասնական յառաջդիմութեամբ: Մամուրեան կրօնքի վերաբերեալ Կոստանդեանի դատողութիւնները կը համարէ ծայրայեղ, նշելով որ հին ազգերու մէջ կրօնքը եւ գիտութիւնը իրարմէ անջատ չէին: Քրիստոնէութեան պատմութիւնը ունեցած է տխուր ու արիւնալի է-

---

[88] Մատթէոս Մամուրեան, «Մէթոտի վրայ», *Արեւելեան մամուլ*, 1878, թիւ 8, էջ 125-33:

[89] Մատթէոս Մամուրեան, «Մէթոտի վրայ», *Արեւելեան մամուլ*, 1878, թիւ 9, էջ 198-202:

ջեր ու դէպքեր, սակայն այս դէպքերը «*ոչ այնքան քրիստոնէական զուտ սկզբանց հետեւութիւններ են որքան անոնց տրուած թիւր մեկնութեանց, պաշտօնէից տգիտութեան, մոլեռանդութեան ու մարդկային կրից արդիւնքն են*»[90] կը գրէ Մամուրեան իր յօդուածաշարքին մէջ:

Մամուրեան կը նշէ, որ կրօնքի ազդեցութիւնը դեռ կը շարունակուի Եւրոպայի քաղաքական եւ գիտական հաստատութիւններու մէջ. կրթական հաստատութիւններու ծրագիրերու մէջ գիտական գիւտերու կողքին տեղ կը տրամադրուի նաեւ աւանդական պատմութիւններու: Մամուրեան Եւրոպայի հաստատութիւններու նշեալ վիճակը «*գրեթէ հակասական*» համարելով հարց կու տայ. «*միթէ խեղճ Հայոց մնացած է **հիմնովին** յեղաշրջել իրենց արդի կենաց պայմաններն եւ Մէթոփի հեղինակին յատակագիծն ի գործ դնել*»[91]:

Մամուրեանի համաձայն, Կոստանդեան նկատի չ'առներ պատմական բարեշրջութեան օրէնքը: Ըստ Կոստանդեանի՝ ազգի համար վնասակար է հայերու կրօնական հաստատութիւնները եւ պատմութիւնը հարուածել, քանի որ հայերը այս միջոցներով կը ջանան կարեւորութիւն, համակրանք եւ պաշտպանութիւն ստանալ Եւրոպայէն՝ կարելի դարձնելով իրենց ազատութիւնն ու յառաջդիմութիւնը: Մամուրեան կ'ընդգծէ Կոստանդեանի գաղափարներու հաւանական ժխտական հետեւանքները քաղաքական դաշտի վրայ: Ան կ'աւելցնէ նաեւ, որ մինչ հայ եկեղեցիի եւ հայկական հարցի ներկայացուցիչ Խրիմեան կը պաշտպանէր հայերու իրաւունքները, Կոստանդեան կը վիրաւորէ ժողովուրդի զգացումները եւ կը տապալէ հիմքը անոր ազատութեան ձգտումին[92]: Մամուրեան անժամանակ կը նկատէ *Մէթոփ*ի հրապարակումը:

Եզրափակելով իր յօդուածաշարքը՝ ան Կոստանդեանին խորհուրդ կու տայ ուսումնասիրել մարդոց ներկայ կեանքը, նիւթական եւ բարոյական վիճակը եւ հրատապ կարիքները[93]:

Ճորճ Վուտի (George Wood) քննադատութիւնները

Երիցական քարոզիչ Ճորճ Վուտ (1824-1901), «*երեւելի ազգասէր անձն*է» ստացած հրաւէրին ընդառաջելով կը գրէ հայերէն քննադատութիւն մը *Մէթոփի վրայ*ին մասին[94]: Ասիկա փաստ մըն է թէ որքա՛ն ազդեցիկ եղած

---

[90] Մատթէոս Մամուրեան, «Մէթոտի վրայ», *Արեւելեան մամուլ*, 1878, թիւ 12, էջ 323-27:

[91] Մատթէոս Մամուրեան, «Մէթոտի վրայ», *Արեւելեան մամուլ*, 1879, թիւ 1, էջ 345:

[92] Նոյն, էջ 342-347:

[93] Նոյն:

[94] George Warren Wood, *Քննութիւն մէթոփի վրայ գրքոյկին ուղղեալ առ ուսումնասէր եւ ողջամիտ հայ երիտասարդաց,* Արամեան տպարան, Կոստանդնուպոլիս, 1882, 137 էջ: Մեր ունեցած գիրքի օրինակէն կարելի չեղաւ ստուգել հեղինակը:

է Կոստանդեան: Վուտի գիրքը նաեւ ապացոյց է, որ Կոստանդեանի գիրքին շուրջ բանավէճերը կը շարունակուէին նաեւ անոր հրատարակութենէն 4 տարի յետոյ: Վուտ կը շօշափէ այնպիսի թեմաներ՝ ինչպէս բարեշրջում, նախամարդը, յառաջդիմութիւն եւլն.: Ան կը փորձէ ցոյց տալ, թէ կրօնքը չի հակասեր գիտութեան:

Վուտի գիրքի ազդին մէջ գրուած է, որ անոր նպատակը օգտակար տեղեկութիւններ տալ է, քան՝ Կոստանդեանին պատասխանել: Կը նշուի նաեւ, որ ազգասէր հայոց համար ամենակարեւոր խնդիրը այն է, թէ ինչպիսի գիտութեամբ կարելի է հասնիլ յառաջդիմութեան:

Վուտ Կոստանդեանի գիրքը քննադատելով, կը նշէ, որ *Մէթոդն* ու անոր հետեւութիւնները կը թանձրացնեն խաւարը Արեւելքի մէջ, եւ թէ՝ իր նպատակը երիտասարդները զգուշացնելն է[95]:

Վուտ բարձր կը գնահատէ գիտութիւններ սորվելու Կոստանդեանի կիրքը, բայց կը քննադատէ անոր գիրքերու ընտրութիւնը: Ան նաեւ կը նշէ, որ Կոստանդեան գիրքերը ճիշտ չ'օգտագործեր: Վուտ կը բացատրէ թէ բնական գիտութիւններու սկսնակները, սահմանափակ գիտելիքներով բաւարարուելով կ'իյնան անկրօնութեան անդունդը[96], ու կը հաւաստէ թէ կէս-ճշմարտութիւններու խառնուած են խոշոր սուտեր[97]: Ըստ Վուտի, Կոստանդեան կը շփոթէ սնապաշտութիւնն ու իրական կրօնքը եւ այս պատճառով անիրաւութիւն կը գործէ ճշմարիտ կրօնքին հանդէպ[98]: Քրիստոնէութեան վերագրուող չարիքներու պատճառը անոնք են, որոնք կը գործեն Աւետարանի ոգիին հակառակ[99]: Պատասխանելով Կոստանդեանի բնազանցութեան ուղղուած քննադատութիւններուն, Վուտ կը նշէ, թէ ան «*Կը ծաղրէ եւ կ'արհամարհէ բնազանցական գիտութիւնն, բայց շարունակ մէջ կը բերէ իւր բնազանցութիւնը որ սուտ եւ ծաղրելի է*»[100]:

Վուտի կարծիքով, Կոստանդեան գաղափարներու, պատճառներու, սկզբունքներու կարեւորութիւնը կը մերժէ եւ կը խօսի այնպէս, իբրեւ թէ չկայ իրականութիւն բացի նիւթական իրերէն: Հուսկ, կը պատասխանէ Կոստանդեանի բնածին գաղափարներու ուղղուած քննադատութիւններուն, ուշադրութիւն կը դարձնէ կարգ մը *a priori* սկզբունքներու գոյութեան: Վուտ հակաճառելով Կոստանդեանին, որ կը հաւաստէր, թէ դատողութիւնը (raison) անկախ եւ *a priori* չի կրնար ըլլալ, կ'առարկէ, որ բանը պէտք է մեկնաբանէ զգայութիւնները: Վուտի համաձայն մտքի գոյու-

---

Յակոբեան իր վերոյիշեալ յօդուածին մէջ որպէս հեղինակ նշած է Woodի անունը (էջ 52):

[95] Նոյն, էջ 6:

[96] Նոյն, էջ 13:

[97] Նոյն, էջ 16:

[98] Նոյն, էջ 17:

[99] Նոյն, էջ 18:

[100] Նոյն, էջ 18:

թիւնը աւելի ստոյգ գիտենք քան նիւթի գոյութիւնը եւ հարց կու տայ. «*իւր գոյութեան գիտակից եւ խորհող հոգիս չէ՞ այնչափ գիտակից եւ իրական որչափ ծառն որ առարկայ է խորհրդոյս*»[101]:

Ըստ Վուտի, կրօնքի եւ գիտութեան ենթադրեալ հակասութիւնները կը բխին կրօնքի սխալ մեկնաբանութենէն[102], ու կ'աւելցնէ թէ Կոստանդեան կը հետեւի անաստուած փիլիսոփաներուն, եւ թէ՝ ան չէ ուսումնասիրած Նոր Կտակարանի մէջ պատմուած Յիսուսի վարդապետութիւնը եւ կեանքի պատմութիւնը[103]:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Գալուստ Կոստանդեան, Եղիա Տէմիրճիպաշեանի հետ, եղած է Օսմանեան Կայսրութեան մէջ դրապաշտական մտքի ջահակիրներէն: Ի տարբերութիւն Տէմիրճիպաշեանի, ան խզեց բոլոր կապերը բնազանցական մտքի հետ, խստօրէն համոզուած ըլլալով, որ գիտութիւնը կրնայ լուծել բոլոր խնդիրները: *Մէթոտի վրան* կրօնքի եւ բնազանցութեան դէմ մղուած գրչի պայքար մըն է: Կայսրութենէն թէ՛ ներս, թէ՛ դուրս գիրքին գտած արձագանգը, անոր մասին տեղի ունեցած բանավէճերը արդէն ցոյց կու տան Կոստանդեանի ազդեցութիւնը:

THE POSITIVIST VIEWS OF KALOUST GOSDANTIOAN AND HIS ROLE IN THE HISTORY OF OTTOMAN PHILOSPHY

(Summary)

CAN ERZURUMLUOGLU (canerzurumluoglu@hotmail.com)

Positivist thought found some echoes within the Armenian circles of Constantinople and Smyrna as of the second half of 19th century.

Positivism promoted positivism against metaphysics and religion. Old norms were to be replaced by new perceptions. Gosdantian Armenian book, *About Method*, is nothing but a promotion of positivist thought. It was an attack against religion and metaphysics. Gosdantian believed that progress is possible only by of defending the scientific mind in an unyielding manner.

The book caused a wave of protests within the conservative circles and Gosdantian was strongly criticized. On the other hand the French positivist philosopher Litre, solidarized with him in his magazine.

As an ottoman citizen the legacy of Gosdantian constitute a part of the history of Ottoman philosophy. Indeed, alongside Demirdjibashian, GFosdnatian was onew of the very first positivist thinkers of the Ottoman Empire.

---

[101] Նոյն, էջ 23:
[102] Նոյն, էջ 36:
[103] Նոյն, էջ 89:

ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՁԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՐԴԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ԵՆԹԱԽՈՐՔՈՒՄ

ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐԵԱՆ (mariam.margaryan@paara.am)
ԳԱՐԻԿ ՊՕՂՈՍԵԱՆ (garik.poghosyan2011@gmail.com)

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Ֆրանսիացի գիտնական Դոմինիկ Մոյզին արդի միջազգային յարաբերութիւնների ցանցային բազմաչափութիւնը դիտարկում է «զգացմունքների բախման» պրիսմակով[1]: Ըստ նրա՝ վախի, յոյսի, ստորացման զգացմունքները մարդկութեան քաղաքական գործունէութեան շարժիչ ուժեր են: Ըստ Մոյզիի՝ «*Ասիայի որպէս մարտահրաւէր վերելքով եւ արմատականութեան որպէս սպառնալիք ծաւալմամբ Արեւմուտքն այսօր բախւում է իր ինքնութեան վերաբերեալ լուրջ հարցերի*»[2]: Մանրամասնելով՝ Մոյզին **յոյսի մշակոյթը** ներկայացնում է որպէս «տնտեսական եւ ընկերային» հզօրացում, որի «հիմնական բնակավայրն Արեւելքն է»[3]: **Ստորացման մշակոյթը** յոյսի հակապատկերն է. «*եթէ յոյսը վստահութիւն է, ապա նուաստացումն անկարողութիւն է, մի զգացմունք, որ առաջին հերթին բխում է այն զգացողութիւնից, որ դու այլեւս չես վերահսկում քո կեանքը ոչ հաւաքապէս՝ որպէս ժողովուրդ, ազգ կամ կրօնական համայնք, ոչ էլ անհատապէս*»[4]: Յատկանշական է, որ Մոյզին **ստորացման մշակոյթը** վերլուծում է իսլամի եւ քրիստոնէութեան յարաբերութիւնների ենթախորքում՝ շաղկապելով այն ինչպէս Իսրայէլի, այնպէս էլ - իր բնորոշմամբ - արաբական մշակութային անկման հետ: Համոզուած ենք, որ Մոյզիի այսպիսի մեկնաբանութիւնը լոյս է սփռում քաղաքակրթութիւնների երկխօսութեան միջոցով տեղական քաղաքակրթութիւնների վերածննդի պատկերացումների քաղաքական էութեան հիմնաւորման վրայ: Որպէս միջազգային յարաբերութիւնների երրորդ անկիւնաքար Մոյզին դիտարկում է **վախը**՝ այն բնորոշելով որպէս «ինքնութեան ճգնաժամ, որին բախւում է Արեւմուտքը»[5]:

Քաղաքակրթութեան ուսումնասիրման իւրօրինակ ձեւաչափ է առաջարկում Նիիլ Ֆրգըսընը: Ըստ նրան՝ երկրների գաղափարախօսութիւնն ու տնտեսական ձեռքբերումները նոյնքան կարեւոր են, որքան կենցաղն ու

[1] Dominique Moisi, *The Geopolitics of Emotion: How Cultures of Fear, Humiliation, and Hope Are Reshaping the World*, Doubleday, 2009:
[2] Նոյն, էջ 21:
[3] Նոյն, էջ 32:
[4] Նոյն, էջ 56:
[5] Samuel P. Huntington, *The Clash of Civilizations and the Remaking of World Order*, Simon & Schuster, 1996:

ընկերային-մշակութային բազմաձեւ առնչութիւնները եւ դրանց դերակատար «փափուկ ուժը»[6] :

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱԻԷՐՆԵՐԻ ՈԼՈՐԱՊՏՈՅՏՈՒՄ

Հնարաւո՞ր է արդեօք իմի բերել հայկական քաղաքակրթութեան ոգեղէնութիւնը աշխարհաքաղաքական սրընթաց իրողութիւնների ենթախորքում: Եթէ Առնոլդ Թոյնպին նշում էր, որ «*առնչակցութիւնների (intercourse) անփիկ ալիքները, որոնցով մշակոյթի կենարար առուն հոսում էր Իրանից դէպի Անատոլիա, վերջին չորսհարիւր տարում փակուեց Օսմանեան եւ Սէֆեան կայսրութիւնների, ինչպէս նաեւ սուննիների եւ շիաների առանձին փիրոյթների (segregated domain) միջեւ նոր սահմանով*»[7], ապա կարո՞ղ ենք արդեօք հայերս, անուշադրութեան մատնել քաղաքակրթական ներքին ու արտաքին կողմնորոշիչների որոշակիացման անհրաժեշտութիւնը:

Անհնար է երեւակայել, որ հայկական քաղաքակրթական ինքնութիւնը դիտարկուի Արեւելք-Արեւմուտք խաչուող ուղիներից հեռու՝ մի կովկասեան անկիւնում: Հայ մարդու համար խորթ են Արեւելքի վերաբերեալ Արեւմուտքի կարծրատիպային պատկերացումները: Դրա վառ վկաիութիւններից է Կոստան Զարեանի հաւաստումն առ այն, որ «*մահմետական Սպանիան դառնում է աշխարհի մեծագոյն քաղաքակրթական կենտրոններից մէկը… հիմնում են բարձրագոյն դպրոցներ, որ զարկ են տալիս գիտութեան եւ փիլիսոփաիութեան: Անապատները ոռոգւում են, երկիրը հարստանում է… Սպանիայի ոգին, նախ ընկճուած, գրեթէ անհետացած, կամաց կամաց արթնանում է*»[8]: Զարեանական ընկալումը պատմութիւնը դիտարկում է իր հարահոս զարգացման գործօնների բազմաչափութեան մէջ՝ առանց նախապաշարմունքների: Հայկական քաղաքակրթական միջավայրը բազմաբովանդակ եւ ներքին հակասութիւններով ու փոխլրացնող կենսաձեւերով հարուստ մերձարեւելեան-հարարեւելաեւրոպական տարածութեան բաղկացուցիչ մաս է: Հետեւաբար, հայկական քաղաքակրթութեան՝ արդի մարտահրաւէրներին արձագանգելու ոգեղէնութիւնը պէտք է դիտարկել հենց այդ տարածութիւնից բխող ազդակների որոշակիութեամբ: Այս է պատճառը, որ քաղաքակրթութեան սահմանման համար մենք հիմք ենք ընդունում ազգային գաղափարախօսութեան հետեւեալ սահմանումը. **«Ազգային գաղափարախօսութիւնը օրգանական միասնութեան մէջ գտնուող, պատ-**

---

[6] Ниал Фергюсон, *Цивилизация. Чем Запад отличается от остального мира*, Издательство АСТ, 2014 (Niall Ferguson, *Civilization: The West and the Rest*), էջ 160:

[7] A. J. Toynbee, *A Study of History, volume one*, fourth Impression, Oxford University Press, 1948, էջ 395, 484:

[8] Կոստան Զարեան, *Սպանիա*, Ձանգակ հրատ., Երեւան, 2018, էջ 52:

մականօրէն ձեւաւորուած տեսակի կենսունակութեան ապահովմանն ուղղուած արժէքների համակարգ է»[9]:

Եթէ հայկական ինքնութիւնն իր տարաբնոյթ չափումներով, ինքնարտայայտման եւ ինքնաիրացման միջոցներով կարող է կենցաղ-մշակութային կամ քաղաքական հակասութիւններ ծնող պատճառ հանդիսանալ, ապա հայկական քաղաքակրթութեան բազմաշերտութիւնը, պէտք է համարել համապարփակ: Յիրաւի, Հայաստանն ըստ էութեան մերձարեւելեան քաղաքակրթութիւն է առաջին հերթին եւ նրա եւրոպական ձգտումներն ու կողմնորոշումը դէպի Արեւմուտք պէտք է դիտարկել հենց այս մտայնութեամբ: Իսկ քանի որ, քաղաքակրթութիւնը որպէս յարատեւ շարժընթացային երեւոյթ ունի իր ե՛ւ անփոփոխ, ե՛ւ փոփոխական չափման միաւորները, ուստի պէտք է ընդունել, որ անհրաժեշտ է քաղաքակրթութիւնների սահմանները գծել այնպէս, որ դրանք համապատասխանեն քաղաքական արդի իրողութիւններին: Իըն Ջէյմս Քիդն այս կապակցութեամբ պնդում է, որ «*եթէ Շպենգլէրը հաւատարիմ մնար պատմութեան իր շրջափուլային (ցիկլային) տեսութեանը, ապա նա չէր կարող մատնանշել (identify) որեւէ քաղաքական երեւոյթ, որը որպէս համաշխարհային կշռութաւոր պատմութեան հերթական շրջափուլից զատ որեւէ բան է*»[10]: Փաստօրէն տեղի է ունենում **արժէքաբանական մեքենական համադրում, ինչը մեր խորին համոզմամբ կարող է յանգեցնել հայ մարդու՝ հայկական ընկերամշակութային միջավայրից օտարման: Ակնյայտ է, որ** հայկական քաղաքակրթութիւնը կարիք չունի վազել եւ հասնել արեւմտեան քաղաքակրթութեանը՝ քաղաքական արդիականացման աֆրօ-լատինական փորձի օրինակով: Այսինքն, կարիք չկայ մեքենական արդիականացման՝ վտանգելով պատմութեան հոլովոյթում քննութիւն բռնած սեփական ինքնութիւնը: Մինչդեռ անհրաժեշտ է չմոռանալ, որ «*ողջ ընկերային կեանքը մարդկանց միջեւ տեղի ունեցող փոխազդեցութիւնների գործընթաց է, որը հնարաւորութիւն է տալիս ներկայացնելու սեփական շահերն ու նպատակները՝ ենթադրելով անխուսափելի մրցակցութիւն մարդկանց միջեւ*»[11]:

Ասուածը հիմնաւորենք այն համոզմամբ որ 2020ի աշնանը Արցախի դէմ սանձազերծուած թուրք-ադրբեջանական պատերազմի ողբերգական հետեւանքները մերձարեւելեան քաղաքական օրինաչափութիւնների օրինակ են եւ չեն ենթարկւում արեւմտեան քաղաքակրթական չափորոշիչների մեծամասնութեանը: Աւելին՝ միայն միջազգային կառուցակարգերի շնորհիւ

---

[9] Մ. Մարգարեան, *Քաղաքական արդիականացման հրամայականները Հայաստանի Հանրապետութիւնում*, «Պետական ծառայութիւն հրատ.», Երեւան, 2019, էջ 239-40:

[10] J. I. Kidd, "Oswald Spengler, Technology, and Human Nature," *The European Legacy*, 17(1):2012, էջ 22:

[11] Մ. Մարգարեան, *Քաղաքական լիդէրութիւն: Տեսութիւն եւ պրակտիկա*, ՀՀ պետական կառավարման ակադեմիա, Երեւան, 2017, էջ 23:

է (խաղաղապահ առաքելութիւն), որ յաջողւում է զսպել բռնութեան նոր ալիքի առաջացումն ընդդէմ արցախահայութեան եւ Արցախի ինքնապաշտպանական ուժերի: Մարդատեացութեան դրսեւորումները, Թուրքիայի կողմից վարձկան ահաբեկիչների ներգրաւումը[12] պատերազմի ընթացքում փաստում են որ հակաարցախեան ահաբեկչական պատերազմի արմատներն աւելի խորն են: Անհրաժեշտ է խոստովանել այն, որ եթէ պոսնիական պատերազմից[13] յետոյ եւրոպական մայրցամաքում մեծ հաշուով բացառւում են ազգամիջեան յարաբերութիւնների սրման այնպիսի դէպքերը, որոնք յանգեցնեն լայնածաւալ ահաբեկչական պատերազմի, էթնիկ զտումների կամ ցեղասպանութեան, ապա Արցախի դէմ յարձակումը հայ-թուրքական միջքաղաքակրթական փոխյարաբերութիւնն այս իմաստով դարձնում է անգամ աւելի՛ խոցելի, քան ռուս-վրացական լարուածութիւնն է կամ պատերազմը Դոնբասում[14]: Ակնյայտ է, որ արցախեան իրադարձութիւններն աւելի նման են Սիրիայում ծաւալուող իրադարձութիւններին, ինչպէս նաեւ «արաբական գարնան» հետեւանքով արաբական աշխարհը պառակտումների ու բռնութեան տարածութեան վերածած քաղաքականութեանը, իրանահպարսյէլեան դիմակայութեանը, քան ոչ միայն եւրոպական, այլեւ յետխորհրդային տարածքի հակամարտութիւններին: Ադրբեջանը եւ Թուրքիան, Իսրայէլի արհեստագիտական աջակցութեամբ[15] եւ միջազգային ահաբեկչական խմբերի ներգրաւմամբ, լայնածաւալ յարձակում են սանձազերծում Արցախի չճանաչուած Հանրապետութեան դէմ: Անհնար է անուշադրութեան մատնել այն փաստը, որ արեւմտեան պետութիւններն ու կառոյցները - առանձին բացառութիւններ չհաշուած - չեն դատապարտել Արցախի դէմ ահաբեկչական պատերազմը: Իրադարձութիւնների այսպիսի ընթացքը լոյս է սփռում մի կողմից ՀՀի ներքաղաքական դաշտում եւ արտաքին քաղաքականութեան մէջ ուրուագծուող անորոշութիւնների տարածման, միւս կողմից քաղաքակրթական կողմնորոշիչների՝ որպէս արտաքին քաղաքականութեան հիմնարար դրոյթների բացակայութեան

---

[12] "Turkish-Backed Syrian Fighters Join Armenian-Azeri Conflict" *The Wall Street Journal*, October, 14, 2020 (https://www.wsj.com/articles/turkish-backed-syrian-fighters-join-armenian-azeri-conflict-11602625885):

[13] I. H. Daalder, "Decision to Intervene: How the War in Bosnia Ended," Brookings, https://www.brookings.edu/articles/decision-to-intervene-how-the-war-in-bosnia-ended/ :

[14] "Conflict in Ukraine's Donbas: A Visual Explainer," International Crisis Group (https://mineconomy.am/en/page/789):

[15] R. Dixon, "Azerbaijan's drones owned the battlefield in Nagorno-Karabakh - and showed future of warfare," *The Wall Street Journal*, November 11, 2020 (https://www.washingtonpost.com/world/europe/nagorno-karabkah-drones-azerbaijan-aremenia/2020/11/11/441bcbd2-193d-11eb-8bda-814ca56e138b_story.html):

վրայ: **Այս է պատճառը, որ աշխարհագրական գործօնի ազդեցութեամբ ձեւաւորուած այն համոզմունքը, որ պետութիւնները չեն կարող «ինչ-որ տեղ գնալ», անհրաժեշտ է դարձնել որոշակի մակարդակներում յստակ ձեւակերպուած քաղաքական տեսլական:** Բնական է, որ քաղաքական զարգացման որոշ առանձնայատկութիւններով պայմանաւորուած ՀՀն չի կարող կատարել ոչ միայն աշխարհաքաղաքական, այլեւ քաղաքակրթական շրջադարձեր: Հայաստանն համարկւում է ինչպէս եւրասիական, այնպէս էլ եւրոպական վերազգային կառոյցներին: Այս համարկման նախագծերը, սակայն, միայն մասամբ են արտայայտում հանրութեան քաղաքական զարգացման նկրտումների քաղաքակրթական չափումները, իսկ միջազգային փորձը ցոյց է տալիս, որ դրանք միշտ չէ որ արդիւնաւէտ են մրցունակ ռազմավարութեան տեսակէտից: Յայտնի է, որ «*Հենց մրցունակ ռազմավարութեան տեսակէտից էլ քննադատուեց եւ վերահմաստաւորուեց 1970-80ականներին Լատինական Ամերիկայում եւ Ափրիկէում «ժամանակակից հասարակութիւն» կառուցելու նպատակով ծաւալուած, սակայն ակնկալուած ժողովրդավարութիւն չհաստատած փոփոխութիւնների ձեւական ռազմավարութիւնը*»[16]: Ակնյայտ է, որ դիցուք Եւրոպայի Խորհրդին անդամակցութեամբ Հայաստանը կոչուած էր լուծելու բարեփոխումների առաջադէմ երկրների փորձից ետ չմնալու, ինչպէս նաեւ դէպի Արեւելք ընդլայնուող եւրոպական նախագծերում «ձայնի իրաւունք» ունենալու խնդիրներ: Յետսովետական տարածքի քաղաքական կերպափոխումների տրամաբանութիւնն ամէնեւին խորթ չէր Հայաստանի երրորդ Հանրապետութեանը:

Այս իրավիճակում բոլորովին նպատակայարմար չենք դիտարկում ՀՀն մերձարեւելեան քաղաքական ու աշխարհաքաղաքական ընթացքից զատելը: Նախ, ինչպէս արդէն ասուեց, դա ոչ միայն ՀՀ քաղաքակրթական պատկանելութիւնը միակողմանիօրէն դատելու, այլեւ քաղաքական անհեռատեսութեան հետեւանք է: Երկրորդ, ինչպէս արցախեան վերջին պատերազմը, այնպէս էլ պատերազմին յաջորդած թուրքական յարձակողամէտ եւ իրանական քաղաքականութեան նրբերանգները թոյլ են տալիս պնդելու, որ ՀՀն ոչ թէ «Հարաւային Կովկաս» տարածաշրջանի, այլ Հայկական Լեռնաշխարհում ձեւաւորուած հայկական քաղաքակրթութեան կրողն ու արարողն է:

Վստահ ենք, որ միայն հորիզոնական (ցանցային) կապերի զարգացման ճանապարհով քաղաքակրթօրէն կողմնորոշուելու էաբանութիւնը (ontology) կարեւոր հանգրուան է հայ երիտասարդութեան ինքնութեան արդիականացման չափորոշիչների մշակման տեսանկիւնից: Համոզուած ենք,

---

[16] Մ. Մարգարեան, «Քաղաքական արդիականացման քաղաքակրթական չափումը որպէս ռազմավարական կառավարման ապահովման հիմք», *Հայկական բանակ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ ռազմագիտական հանդէս*, 4(94):2017, էջ, 21-22:

որ քաղաքականութեան եւ քաղաքակրթութեան ուսումնասիրութիւնները խաչւում են հայկական քաղաքակրթութեան գոյաբանական հարցերի արծարծման ծիրում:

ԼԻԲԱՆԱՆ

Այս ժամանակաշրջանում ծանր օրեր ապրող Լիբանանի ժողովրդի համար եւս կարեւոր է քաղաքականութեան եւ քաղաքակրթութեան խաչմերուկում առաջացող խնդիրների լուծումը քաղաքակրթական պատկանելութեամբ տեսնելը: Այն կարող է նկատելիօրէն նուազեցնել հայ եւ լիբանանցի ժողովուրդների կախուածութիւնը քաղաքակրթական ինքնութիւնը շահարկող դերակատարների խաղային քաղաքականութիւնից: Որքանո՞վ են հայ եւ լիբանանցի ժողովուրդները պատրաստ ոչ միայն դիմագրաւելու, այլեւ մարտահրաւէրներ նետելու: Եթէ հայկական քաղաքակրթութեան դէպքում հակուած ենք խնդիրը բացատրել ինքնութեան կողմնորոշիչների յետսովետական տարերայնութեամբ, ապա Լիբանանի բազմամշակութային միջավայրը քաղաքական դերակատարների բազմաչափ հակասութիւնների տարածութիւն է: Ստացւում է, որ մինչ Հայաստանն ու Լիբանանն ունեն մերձարեւելեան քաղաքականութեան քաղաքակրթական տիրոյթում գործակցութեան ու փոխըմբռնման տարածութիւնում ինքնադրսեւորուելու հնարաւորութիւն, արդի խառնաշփոթութեան պայմաններում վտանգուած է նրանց քաղաքակրթական ինքնութեան բնականոն արդիականացման գործընթացը: Այս խնդրում շարունակում է կարեւոր դեր վերապահուած մնալ Անգլիայի Ճոն արքայի կողմից 1215ի Յունիսի 15ին ստորագրած «Ազատութիւնների Մեծ Ուխտ» (Magna Carta Libertatum) փաստաթղթում տեղ գտած արժէքաբանութեան զարգացմանը: Լինելով թագաւորի դէմ ապստամբած խոշոր աւատատէրերի, հոգեւորական բարձր դասի եւ քաղաքային բնակչութեան վերնախաւի յաղթանակի արդիւնք՝ Ուխտը դարձաւ Մեծն Բրիտանիայի սահմանադրական-օրէնսդրական հիմնարար փաստաթղթերից մէկը՝ ազդելով այլ արեւմտեան երկրների իրաւական համակարգի կայացման վրայ: Այս փաստաթղթի 800ամեայ պատմութիւնն ապացուցում է, որ այն անգլօսաքսոնական քաղաքակրթութեանը թոյլ տուեց ոչ միայն բնականոն կերպով արդիականանալու, այլեւ ընդարձակելու իր սահմանները՝ իմաստաւորելով ազատութեան, օրէնքի գերակայութեան, ժողովրդավարութեան ընկալման հաստատութենական, վարքաբանական եւ գործառութակառուցուածքային հիմքերը: Այս ենթախորքում այլ քաղաքակրթութիւններ որոշակիացրին բանականի եւ զգայականի փոխյարաբերութիւնները յետագայ քաղաքական զարգացումներում: «*Ազատութիւնների Մեծ Խարտիայի» օգնութեամբ մարդիկ ազատութիւնը եւ ազատականացումն (freedom and liberty) սկսեցին իմաստաւորել որպէս հարկադրանքից ձերբազատուած հնարաւորութիւն, որը թոյլ է տալիս մարդուն անվտանգ*

կեցութիւն կազմակերպել ինքնարտայայտուելով եւ ինքնադրսեւորուելով»[17]: Այս առումով կարեւոր դեր է վերապահուած էթնիկական այն հանրութիւններին, որոնք տուեալ երկրի քաղաքակրթական ինքնութեան սահմաններում կը ձգտեն դառնալ փոփոխութիւնների ցուցիչ կամ յարուցիչ: Հենց այստեղ է, որ հորիզանական կապերով ցանցային տրամաբանութիւնը դառնում է ե՛ւ այժմէական, ե՛ւ պահանջարկ ունեցող քաղաքական երեւոյթ:

«ՀԱՅԿԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ԵՒ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆ

ՀՀ անկախութեան եւ անվտանգության ապահովման հետ է կապուած համայն հայութեան համախմբումը Հայաստանի շուրջ: Այսինքն «Հայկական աշխարհը» ներառում է ոչ միայն հայ հանրութեան մշակութաբանական էութիւնը, այլեւ աշխարհագրառազմավարական եւ ազգային-գաղափարախօսական շահերի, նպատակների, առանձնայատկութիւնների ամբողջութիւնը[18]: Քաղաքական դերակատարները քաղաքական խաղի մասնակից կարող են դառնալ իրենց քաղաքակրթական ինքնութեամբ: Եթէ աշխարհաքաղաքական ցանցերի դէպքում գործ ունենք այս կամ այն չափով դրսեւորուող քաղաքակրթական միաւորի հետ (դիցուք Արաբական Լիգան միաւորում է արաբական աշխարհի երկրները), ապա քաղաքական դերակատարների տարաբնոյթ ուղերձները ենթադրում են էթնօկրօնական ու քաղաքակրթական ինքնութեան ոգեղէնութեան համակարգուած ուսումնասիրութիւն: Տարածաշրջանային դերակատարների շարքում Իրանին ու Թուրքիային զուգահեռ խիստ արդիական են դարձել Սաուտեան Արաբիայի եւ Ծոցի Երկրների, Իսրայէլի քաղաքական-քաղաքակրթական դերաբաշխման հետազօտութիւնները: Բնականապէս հարց է առաջանում. որքանո՞վ են հայկական, լիբանանեան, սիրիական, իրանական քաղաքակրթական ինքնութիւնները պատրաստ ընկալելու աշխարհաքաղաքական միջավայրի արագընթաց (հիմականում անորոշ) փոփոխութիւնները եւ դրանք տեղաւորելու իրենց **«ես»**ի բնականոն արդիականացման ծիրում: Ընդունա՞կ ենք արդեօք տեղայնական քաղաքակրթութիւնները վերարժեւորելու եւ ինքնորոշուելու...:

Համոզուած ենք որ հենց քաղաքակրթական ինքնորոշման ցածր աստիճանն է պատճառը յաճախակիացող մերձարեւելեան ճգնաժամերի համար: Հետեւաբար, անհրաժեշտ է քաղաքակրթական ինքնորոշումը, քաղաքակրթական բնոյթ ունեցող այլ չափորոշիչների հետ, դիտարկել որպէս քաղաքական զարգացման գործընթացի բաղադրիչ: Մեր առաջարկած այս

---

[17] Մ. Մարգարեան, «Ազատութիւնների մեծ խարտիան եւ արդի քաղաքական զարգացման արժէքաբանութիւնը», *Տարեգիրք Ազատութիւնների Մեծ Խարտիա,* Պատմութեան հարցեր 5, Երեւան, 2019, էջ 210:

[18] Մ. Մարգարեան, Համընդհանուր անվտանգութեան համակարգի արդիականացման հիմնախնդիրները եւ «Հայկական աշխարհը», *Հայկական բանակ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ ռազմագիտական հանդէս,* 1-2(67-68):2011, էջ 118-29:

մօտեցման հիմքում դրել ենք ԱՄՆ ընկերաբան Պիտիրիմ Սորոկինի այն մօտեցումը, որ առանց միաւորի կամ տրամաբանական առարկայի ոչ մի գործընթաց, ոչ մի շարժընթաց վիճակ (state) ընդհանրապէս հնարաւոր չէ նկատել, երեւակայել կամ նկարագրել: Միաւորը որպէս տրամաբանական առարկայ, փոփոխութիւն կամ փոխակերպում (modification) պէտք է տրուի[19]: **Բնականօրէն Մերձաւոր Արեւելքին կապուած լինելով քաղաքակրթօրէն, հայկական համայնքները, մասնաւորապէս նրանց երիտասարդութեան հայրենասէր (ինքզինք հայ դերակատար համարող) շերտը, կարող են կամրջել ՀՀն** արաբական աշխարհի, Իրանի, ինչու՞ ոչ՝ նաեւ Իսրայէլի եւ Թուրքիայի հետ: Վերջին երկուսի պարագայում հայկականութեան, Հայ Եկեղեցու իրաւունքների, հայոց պատմութեան, մասնաւորապէս Հայկական Ցեղասպանութեան (Մեծ Եղեռնի) եւ պահանջատիրութեան ու յարակից հարցերն աւելի սուր են, քան արաբական արեւելքի եւ Իրանի դէպքում: Բայց չպէտք է անտեսել որ հայկական քաղաքակրթութեան ինքնորոշման ազդակները ցանցային բնոյթ ունեն եւ որքան աշխարհագրօրէն ընդարձակ լինեն, այնքան աւելի հեշտ ընկալելի կը դառնան տարածաշրջանի մեծ ու փոքր պետութիւնների համար: Հասկանալով հանդերձ մերձարեւելեան հակասութիւնների եւ աններդաշնակ քաղաքականութեան բնոյթը, կարծում ենք, որ Մերձաւոր Արեւելքի ժողովուրդները ունակ են հասնելու մի նոր «Վեստֆալեան հաշտութեան»: Սակայն ինչպէ՞ս հասնել մի այդպիսի աշխարհակարգի, եթէ դեռեւս ճանաչուած չեն տեղային քաղաքակրթութիւնների ինքնորոշման իրաւունքն ու իրաւական շահերին հետամուտ լինելու արտօնութիւնը: Ինչպէս ցոյց տուեցին Սիրիայի աղէտալի գործընթացները, Թուրքիայի Հանրապետութեան կայսերապաշտական նկրտումները կրում են պատժիչ բնոյթ (թուրքական բանակի գործողութիւնները քրտական ուժերի դէմ)[20], իսկ Թուրքիան ինքը հակուած չէ ճանաչելու տարածաշրջանային այլ ուժերի իրաւական նպատակները:

Հենրի Քիսինճըրը գործող աշխարհակարգի քննութեան մէջ զգալի տեղ յատկացնելով Վեստֆալեան հաշտութեան[21] ուշադրութիւն է հրաւիրում այն հանգամանքի վրայ, որ «*մեր օրերում Վեստֆալեան խաղաղութիւնն ընդունուած է համարել յետպատերազմեան ամբողջ աշխարհում տարածուած աշխարհակարգի իրականացման առաջին փուլը*»[22]: Ակնյայտ է, որ Վեստֆալիան որպէս աշխարհակարգի հիմք ունեցել է զարգացման բնաշրջման բնոյթ: Այս տրամախօսութեամբ էլ պայմանաւորում ենք մեր այն համոզ-

[19] P. Sorokin, *Social and Cultural Dynamics*, 3 Volumes, American Book Company, New York, 1937:

[20] Council on Foreign Relations, "Conflict Between Turkey and Armed Kurdish Groups," https://www.cfr.org/global-conflict-tracker/conflict/conflict-between-turkey-and-armed-kurdish-groups :

[21] Henry Kissinger, *World Order*, Penguin Press, New York, 2014, էջ 30-38:

[22] Նոյն:

մունքը, որ հնարաւոր է քաղաքակրթութիւնների երկխօսութեան ճանապարհով հասնել հարաւարեւելաեւրոպական-մերձարեւելեան տարածաշրջանի քաղաքակրթութիւնների մերձեցմանն այն աստիճան, որ ձեւաւորուի տարածաշրջանի բնիկ ժողովուրդների իրաւական ձգտումներն ու իրաւունքները արտայայտող նոր որակի Վեստֆալիայի քաղաքական-հանրային պահանջ: Համոզուած ենք, որ առաջարկուող նմանօրինակ քաղաքական զարգացումը ոչ միայն նպաստելու է Արեւելք-Արեւմուտք աւանդական երկուութիւնը քաղաքակրթութիւնների երկխօսութեամբ փոխարինելուն, այլեւ զսպելու է «ուժային բեւեռների» պատմականօրէն ձեւաւորուած եւ չհիմնաւորուած քաղաքակրթական նկրտումներն:

ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԵՒ ՅԱՐԱԿԻՑ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Հայկական քաղաքակրթութիւնը բազմակողմ յարաբերութիւններ ունի Արեւելքի եւ Արեւմուտքի ժողովուրդների հետ: Այս դիտանկիւնից մենք այն համոզումն ունենք որ քաղաքակրթական ինքնորոշումն այն բանաձեւն է, որն ունակ է օգնել տարածաշրջանի ժողովուրդներին սեփական ճակատագիրն ինքնուրոյն տնօրինելով՝ բռնել ազգային **«ես»**ի բնականոն արդիականացման ուղին: Այս եզրահանգումը բազմանշանակէտ է եւ առնչւում է Արեւելք-Արեւմուտք փոփոխուող ընկալումների ենթաշերտերում հայկական քաղաքակրթութեան դերընտրութեանը: Այսպէս, Քոլումպիայի Համալսարանի պրոֆեսոր Համիտ Տապաշին մինչեւ անգամ փորձում է հիմնաւորել Արեւմուտք եզրի (notion) վախճանը՝ պնդելով, որ երբ Սեպտեմբերի 11ի ահաբեկչութիւնից յետոյ ԱՄՆ առաջնորդուեց «կամաւորութեան դաշինքի» սկզբունքով (coalition of the willing), Արեւմուտք հասկացութիւնն այլեւս արժէք չունէր ՆԱՏՕի համար: Աւելին, Տապաշին գտնում է, որ այսպէս կոչուած Հին Եւրոպայի եւ Նոր Եւրոպայի բաժանումը նոյնպէս Արեւմուտքի ներքին ոչնչացման մասին է վկայում[23]: Քաղաքակրթական ինքնորոշումը չի ենթադրում այս կամ այն քաղաքակրթութեան մերժում կամ վերջնական կողմնորոշում դէպի որեւէ մէկը: Ուստի արտաքին քաղաքակրթական ազդակներին ճիշտ արձագանգելու համար անհրաժեշտ է որոշակիացնել քաղաքակրթական **«ես»**ի տարածութիւնը բազմաչափ ժամանակի մէջ: Այստեղից էլ ինքնաճանաչողութեան իւրայատկութիւններով պայմանաւորուած հիմնային է Հանթինկթընի այն պնդումը որ «*առաջիկայ տասնամեակներում ինքնութեան, մշակութային ժառանգութեան, լեզուի եւ կրօնի հարցերը կենտրոնական դեր կը խաղան քաղաքականութեան մէջ*»[24]:

---

[23] H. Dabashi, *Iran: The Rebirth of a Nation*, Palgrave Macmillan, 2016, էջ 238:

[24] S. Huntington and Ali A. Hirsi, "The Clash of Civilizations Revisited," *New Perspective Quarterly*, Winter, 24(1):2007, էջ 53-59:

Այս դիտանկիւնից կատարենք հետեւեալ հարցադրումը՝ ունէ՞ր արդեօք նորանկախ Հայաստանը բաւարար պաշարներ կեանքի կոչելու իր քաղաքակրթական ինքնորոշման բանաձեւը յետխորհրդային անցման բարդ ժամանակաշրջանում: Չցանկանալով հապճեպ գնահատականներ տալ մեր պետութեան հաստատութենական բնաշրջմանը, փաստենք, որ մինչ օրս ՀՀն, չնայած «Հոգեւոր Հայաստանի» եւ հայկական ցանցերի գաղափարների առկայութեանը, չի մշակել իր քաղաքակրթական ինքնութեան տեսլականը, որը նրան հնարաւորութիւն կը տար ինքնարդիականանալ եւ ինքնաներկայանալ: Ըստ էութեան ՀՀի քաղաքական զարգացման անորոշութիւնները ընթացել եւ ընթանում են արեւմտեան ՝ քաղաքակրթական արժէքների մեքենական ընդունման հիման վրայ, ինչը թոյլ չի տուել ճիշտ գնահատելու ժամանակի ընձեռած հնարաւորութիւնները: Այսօր, 44 օրեայ պատերազմի հետեւանքներով եւ յետպատերազմեան Հայաստանի ու հայութեան անվտանգութեամբ պայմանաւորուած կարող ենք պնդել, որ քաղաքակրթութիւնն է ուղենշում բազմամակարդակ յարաբերութիւնների խաղային ընթացքը: Թէ՛ Արցախի ինքնորոշման իրաւունքի իրացման, թէ՛ հայութեան ընդարձակուած օրակարգով անվտանգութեան ապահովման հիմնախնդիրներին անդրադառնալիս ակնյայտ է որ գործ ունենք «ուժային բեւեռների» կողմից «փափուկ ուժի» միջոցով ուղղորդուող կրաւորական ազդակների հետ: Սակայն, քանի որ քաղաքակրթական կողմնորոշիչները մաքուր չեն լինում, ապա մեր համոզմամբ՝ ինքնութեան արդիականացումը չի ենթադրում քաղաքակրթական այս կամ այն բանաձեւի մերժում: Այդուհանդերձ ի՞նչ պայմաններում կը կարողանային հայկական եւ Մերձաւոր Արեւելքի միւս տեղային քաղաքակրթութիւնները բացայայտօրէն ինքնորոշուել՝ ձեւաւորելու սեփական օրակարգ:

Այս դիտանկիւնուց կարեւոր ենք համարում առաւել խորութեամբ զննել երկու հիմնախնդիր: **Առաջին,** արաբական գարնան[25] տարերայնութիւնն ու համընդգրկուն բնոյթը (չնայած դրա աղէտաբեր ընթացքին), վերահաստատում են այն տեսակէտը, որ միջազգային քաղաքականութիւնը քաղաքակրթօրէն եւ առարկայօրէն վերլուծելու անհրաժեշտութիւն կայ: **Երկրորդ,** հայկական քաղաքակրթութեան վերադարձը Մերձաւոր Արեւելք նման է հայկական վերածննդի, քանի որ քաղաքական ապակողմնորոշումների, անորոշութիւնների եւ ձախողումների յորձանուտում յայտնուած ՀՀն հնարաւորութիւն է ստանում վերարժեւորելու իր պատմական **«Ես»**ը, արժէքաբանօրէն կողմնորոշուելու դէպի ինքզինքը եւ ձեւաւորելու միւս տեղային քաղաքակրթութիւնների հետ յարաբերուելու գաղափարաբանական յենարան: Հայկական կենսական շահերի իրաւականացումը ոչ միայն պատմական արդարութեան վերականգնում է, այլեւ հայկական ռազմավարական շահերի գիտակցուած վերակառուցման, բանական քաղաքական որոշում-

[25] “Arab Spring,” *Britannica*, https://www.britannica.com/event/Arab-Spring :

ների կայացման իւրօրինակ փուլ: Այն տարածական առումով մեծացնում է հայկական արժէշահային հետաքրքրութիւնների աշխարհագրութիւնը, իսկ ժամանակային առումով - թէեւ եռաչափ՝ անցեալ-ներկայ-ապագայ - այնուամէնայնիւ միտուած է ապագայի հիմնախնդիրների բացայայտմանը:

Հայկական քաղաքակրթական միջավայրը հնարաւոր չէ բացայայտել առանց այլ քաղաքակրթութիւնների հետ նրա ունեցած կապի: Ուստի, եթէ հայկական քաղաքակրթութեան տեղն ու դերը վճռելու լինենք քաղաքական զարգացման լոյսի ներքոյ, ապա պէտք է ընդունել, որ այն լիովին տեղաւորւում է պատմութեան ու քաղաքակրթութեան անորոշութիւններից առաջ եկած անխախտ օրինաչափութիւնների դաշտին: **Բաւական է նշել, որ արցախեան վերջին պատերազմի հետեւանքով ՀՀն փաստօրէն յայտնուել է Արեւելք-Արեւմուտք, Հիւսիս-Հարաւ[26] շահային անորոշութիւնների տիրոյթում:** Անցած քառորդ դարի պետականաշինութեան փորձը վկայում է, որ մինչ օրս ՀՀին, առնուազն իր արտաքին քաղաքականութեան ծիրում, հնարաւորութիւն չի տրուել քաղաքակրթական ինքնորոշման միջոցով ձեւաւորելու ազգային քաղաքական օրակարգ: Մի կողմից եւրոպական ու ամերկեան, իսկ միւս կողմից եւրասիական վերազգային նախագծերին իր մասնակցութեամբ ՀՀն փորձել է օգուտներ քաղել, որի արդիւնքում յայտնուել է բարդ աշխարհաքաղաքական գործընթացների էպիկենտրոնում: Ներկայ միջազգային քաղաքական գործընթացները Մերձաւոր Արեւելքում եւ Եւրասիայում թոյլ են տալիս մտածել, որ քաղաքակրթութիւնների երկխօսութեան տեւական ազդեցութիւն ունեցող կառուցակարգերի առկայութեան պայմաններում հնարաւոր է անորոշութիւնների տիրոյթից դուրս բերել այն պետութիւնները, որոնք անորոշութիւններ մակածելով դառնում են դրանց զոհը: Ակնյայտ է, որ ստեղծուած բարդ իրավիճակում այդպիսի կարգավիճակում են այնպիսի արեւելաեւրոպական, եւրասիական-կովկասեան, մերձարեւելեան երկրներ, ինչպիսիք են Ուկրաինան, Վրաստանը, Հայաստանը, Յունաստանը, Լիբանանը, Սիրիան, անգա՛մ Թուրքիան, Արաբական Միացեալ Էմիրութիւնները, Իրանը: Անհրաժեշտ է կանխատեսել, թէ ԱՄՆ զինուած ստորաբաժանումների դուրս բերելուց յետոյ, քաղաքակրթութիւնների զարգացման համամոլորակային պրիսմակով դիտարկելիս ինչպիսի հեռահար հետեւանքներ կարող է ունենալ Աֆղանստանի կառավարումը փաստացի ստանձնած Թալիպան շարժումը[27]: Այս իրավիճակում անհասկանալի է, թէ առանց քաղաքակրթութիւնների երկխօսութեան ինչպէս կարող են Մերձաւոր Արեւելքի եւ ամբողջ Եւրասիայի քաղա-

[26] N. Korrami, “How China gains from Armenia-Azerbaijan war,” https://eurasianet.org/perspectives-how-china-gains-from-armenia-azerbaijan-war

[27] R. Weitz, “Central Asia’s Taliban Surprise,” Middle East Institute, September 16, 2021, https://www.mei.edu/publications/central-asias-taliban-surprise :

քական դերակատարների շահերը համընկնել կամ համադրուել առանց ա-ւելորդ հակամարտութեան աճի:

Եթէ բազմակրօն եւ բազմաէթնիկ այնպիսի երկրներ, ինչպիսիք են Լի-բանանը, Սիրիան, մասամբ՝ Իրանը եւ Վրաստանը, քաղաքակրթօրէն կողմնորոշուեն, իսկ ՀՀն վերջապես ինքնորոշուի իր քաղաքական-քաղա-քակրթական առաջնահերթութիւնների մէջ, ապա մեր համոզմամբ հնա-րաւոր կը լինի զարգացնել ազգային քաղաքական օրակարգ: Ելակէտ ըն-դունելով Ֆրկըսընի մեկնաբանութիւնները աշխարհի զարգացման մասին ըստ քաղաքակրթական օրինաչափութիւնների՝ յուժ կարեւոր է հասկանա-լու համար այն տեղապտոյտը, որն առաջանում է միջազգային յարաբերու-թիւնների ապաքաղաքակրթական վերլուծութեան արդիւնքում[28]: Հարկ ենք համարում նշել, որ հայկական քաղաքակրթութեան վերադարձը Մեր-ձաւոր Արեւելք պայմանաւորուած է տեղի ունեցող գործընթացների քաղա-քական ժամանակի մէջ դրսեւորած քաղաքակրթական ցանցային տրամաբանութեամբ: Երկխօսութեան ծաւալման հարթակները կարող են տարաբնոյթ լինել: Արցախեան վերջին պատերազմի անարդարացի ելքը, փաստօրէն վտանգելով արցախահայութեան ինքնորոշման, կեանքի, զար-գացման իրաւունքն ու հնարաւորութիւնը կամ դրա իրացումը դրել է մի-ջազգային համայնքի բարեհաճութիւնից կախեալ վիճակում[29]: Դա էլ հար-կադրում է հայկեան քաղաքակրթութեանը՝ վերարժեւորել իր ինքնաճանա-չողութեան աստիճանը եւ վերագտնել իր տեղը Մերձաւոր Արեւելքի ազգե-րի եւ տեղային քաղաքակրթութիւնների շքերթում: Բաւական է նշել, որ ա-րաբական արեւելքի երկրներում եւ Իրանում առկայ են բարգաւաճ եւ ըն-դունող հասարակութեան քաղաքական, մշակութային, հասարակական կեանքին ըստ ամէնայնի լաւագոյնս համարկուած համայնքներ: Սրա մա-սին են վկայում լիբանահայութեան, սիրիահայութեան, իրանահայութեան համայնքային կեանքի կազմակերպման բարձր մակարդակը, Մերձաւոր Արեւելքի հայկական գաղթօճախների էթնոմշակութային կեանքը, նրանց մասնակցութիւնն ընդունող պետութիւնների քաղաքական կեանքին: Ցա-ւօք մինչ օրս ՀՀ արտաքին քաղաքական առաջնահերթութիւնների շարքին չի դասուել Մերձաւոր Արեւելքի երկրների հետ բազմաչափ յարաբերութիւն-ները որպէս ռազմավարական դիտարկելու անհրաժեշտութիւնը: Սակայն արցախեան 44օրեայ պատերազմի հետեւանքով հայկական պետութեան անվտանգային մարտահրաւէրներին արձագանգելու անհրաժեշտութիւնը, միջքաղաքակրթական ցանցային երկխօսութեան բարենպաստ պայման-ների զարգացման ակնկալիքով, կարեւորել են հայկական գաղթօճախնե-

[28] Фергюсон, էջ 28:

[29] “Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group,” 29 July 2021, https://www.diplomatie.gouv.fr/en/country-files/armenia/news/article/statement-by-the-co-chairs-of-the-osce-minsk-group-29-jul-2021 :

րի՝ քաղաքակրթական երկխօսութեան հարթակի դեր ստանձնելու գիտակցումը: Այսօր, քաղաքական իրողութիւններից ծնուած մարտահրաւէրներին արձագանգելու ձգտումն անպայմանօրէն պէտք է բխի իրական հնարաւորութիւնների իրատեսական գնահատումից: Հնարաւոր է, որ հայկական մերձարեւելեան ցանցը եւ դրա հնարաւորութիւնների տեսական դիտարկումներն ընդամէնը թերահաշուարկ են: Այս առումով կարեւորում ենք ՀՀ՝ որպէս հայկեան քաղաքակրթութեան վերածնման ուղեկցողի քաղաքական դերը: Այսուհետ անհրաժեշտ է դիտարկել ՀՀ արտաքին քաղաքականութիւնն իր դերային գործառութային բազմիմաստութեան մէջ: Այսպէս, ՀՀն որպէս հայկական աւանդական գաղթօճախների հովանաւոր, որպէս քաղաքակրթութիւնների երկխօսութեան նախաձեռնող եւ առաջամարտիկ, նաեւ այն պարզ պատճառով, որ «*համաշխարհային քաղաքականութեան եւ միջազգային յարաբերութիւնների վերջին զարգացումները յուշում են, որ կրօնը շարունակելու է գերիշխող դեր խաղալ համաշխարհային քաղաքականութեան մէջ [նոյնպէս] հեռու ապագայում*»[30]:

Այս առումով կարեւոր են ոչ միայն լեզուն, եկեղեցին, ազգային ծէսերն ու աւանդոյթները, այլեւ դրանց խորհուրդը, սերունդների միջեւ քաղաքակրթական երկխօսութեան պահպանմամբ վարուող ընտանիքի քաղաքականութիւնը, հայութեան երկու մասերի՝ հայաստանաբնակ սփիւռքաբնակ, ցանցային կապերի ձեւաւորումն ու զարգացումը կարճաժամկէտ եւ երկարաժամկէտ փոխայցերի, գիտական, մշակութային, մարզական, կրթական հնարաւորութիւնների եւ նմանատիպ նախաձեռնութիւնների միջոցով: Մասնաւորապէս կարեւորում ենք ապաքաղաքական օրակարգի ձեւաւորումը, որի շուրջ հնարաւոր կը լինի համախմբել քաղաքական արժէքաբանութեամբ եւ վարքաբանութեամբ տարբերուող մարդկանց խմբերի: Փաստօրէն միջքաղաքակրթական երկխօսութիւնն ու ՀՀ «վերադարձը Մերձաւոր Արեւելք» ժամանակի հրամայականներով պայմանաւորուած իրողութիւններ են, որոնք առաջացել են ՀՀի շուրջ փոփոխուող անվտանգային միջավայրի ծնած անորոշութիւններով, ինչպէս նաեւ Մերձաւոր Արեւելքի հայութեան ճակատագրով: Փաստենք, որ արաբական գարունը, սիրիական քաղաքացիական պատերազմը, Լիբանանի ներքին խմորումներն իրենց ուղղակի ազդեցութիւնն են ունեցել հայութեան տարբեր շերտերի՝ Մերձաւոր Արեւելքում մշտապէս բնակուելու հնարաւորութեան վրայ, ինչն էլ իր հերթին վտանգել է հայկական քաղաքակրթութեան ներկայութիւնն այս գերկարեւոր տարածաշրջանում:

---

[30] S. G. Carter, "Christopher Dawson and Ayatollah Khatami and 'The Dialogue of Civilizations': A Christian–Muslim Conversation," (paper delivered at the Centre for Christianity and Interreligious Dialogue, Heythrop College, University of London on 17 January 2007):

Հայկական քաղաքակրթութեան զարգացման տեսակէտից կարեւորում ենք հայկական էթնօաւազանի համախմբման համալիր քաղաքականութեան մշակումը՝ գիտավերլուծական յարացոյցի (պարադիգմայի) շրջանակներում: Նախաձեռնողականութիւնը, տնտեսական մրցակցութիւնը, հորիզոնական կապերի ամրապնդումը, մտաւոր ներուժի կիրառումը այսպիսի տեսլականի ձեւաւորման միտում ունեն: Բաւական է նշել, որ հայութեան շուրջ երկու երրորդը բնակւում է ՀՀից դուրս, Սփիւռքի միակ հայկական համալսարանը Պէյրութի Հայկազեան Համալսարանն է: Հայկական մտաւոր ներուժի յառաջացումն ու ուղղորդումը հայկական էթնօաւազանում անհրաժեշտ է իրագործել առաջին հերթին հայկական կրթական տարածութեան ստեղծմամբ: Եթէ ՀՀն համարկւում է եւրոպական բարձրագոյն կրթութեան տարածութեանը[31], իսկ Սփիւռքն աչքի է ընկնում իր կենտրոնացուածութեամբ եւ կազմակերպական բարձր մակարդակով, ապա ակնյայտ է, որ հայկական հանրակրթական եւ բարձրագոյն կրթութեան ցանցի բացակայութիւնը, որտեղ հորիզոնական կապերով եւ ընդհանուր կամ համատեղ կառավարմամբ կարելի է հասնել հայկական արժէքների եւ ազգային օրակարգի ձեւաւորման, ոչ միայն մարտահրաւէր է, այլեւ բացթողում: Նկատի ունենալով Սփիւռքի դպրոցների աւանդոյթներն ու համբաւը, ՀՀ եւ Սփիւռքի շահագրգիռ կողմերի ներգրաւմամբ անհրաժեշտ ենք համարում աղբիւրները համակարգող, հաշուառող եւ իրացնող կառուցակարգերի ձեւաւորում, հայկական ազգային կրթական ցանցի զարգացում, ՀՀ եւ Սփիւռքի կրթական ցանցերի, էթնօգիտակցութեան, էթնօկրօնական կեանքի, եկեղեցական, մարզական, գիտակրթական, ուղեղների շրջանառութեան, մտաւորական ներուժի համակարգման կենտրոնացում: Սոսկ ըղձախօսութեան չվերածուելու նպատակով անհրաժեշտ է ուղեղային կենտրոններում նախ վերլուծել կրթական հաստատութիւնների յաջողութեան բանաձեւերը, հայկական համայնքների ներուժը, ՀՀ հաստատութենական եւ ֆինանսական աջակցութեան ծաւալներն ու հնարաւորութիւնները եւն.: Հայկական ինքնութեան, հայկական քաղաքակրթութեան իրացման, ՀՀ արտաքին ու ներքին քաղաքականութեան ծիրում հայութեան քաղաքակրթական ինքնորոշման խնդրում նկատում ենք հայութեան կողմից քաղաքական-քաղաքակրթական վախ: Փաստօրէն, հայութեան ինքնութեան ու քաղաքակրթական ինքնորոշման հնարաւորութիւնների վերծանման, գնահատման փոխարէն, գործ ունենք «փախուստ ինքնութիւնից» երեւոյթի հետ: Ցաւօք հայութիւնն իր առաջ ծառացած հիմնախնդիրների լուծումը տեսնում է իրենից դուրս՝ համակուած փոքրի բարդոյթով՝ թերագնահատելով իր հնարաւոր ազդեցութիւնը քաղաքական եւ ռազմավարական գնահատականի

[31] “European Higher Education Area,” https://www.coe.int/en/web/higher-education-and-research/european-higher-education-area :

սպասող ընթացիկ իրողութիւնների վրայ: Հայոց պատմութեան վերջին հարիւրամեակի գնահատման հատուածայնութիւնը, զգացմունքայնութեան եւ պատմական ջոկովի յիշողութիւնների զգայական ընկալումները ծնել են որոշակի թերարժէքութիւն: Սա մասնաւորապէս ակնյայտ է դառնում հայութեան տարբեր հասարակական շերտերի կողմից Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացի զգայահոսք ընկալումները դիտարկելով: Միւս կողմից պատմական յիշողութեան նորովի ընկալման ճանապարհով հնարաւոր ենք համարում այս երկհակադիր երեւոյթն օգտագործել որպէս համախմբող ներուժ: Դրա շնորհիւ հայութեան զգայական շերտերը հնարաւորութիւն կ'ունենան իրենց պատմական յիշողութեան ծնած զոհի բարդոյթից ազատուել հայութեան քաղաքակրթական ինքնորոշման ծիրում: Այդ պարագայում երբ հայկական ընդհանուր կրթական համակարգը, հայոց իրաւաքաղաքական պահանջատիրութիւնը, Սփիւռքի մտաւորական ներուժի մէկտեղումը, ցանցային կապերի ստեղծած համագործակցութեան մեծաքանակ հնարաւորութիւնները, երկիրասպան անվտանգային գործընթացներին արդիւնաւէտօրէն հակազդելու կամքը կ'իրացուեն զգացմունքային ընկալումներից դուրս՝ իրաւաքաղաքական, մշակութային, գիտակրթական, պետական հաստատութիւնների միջոցով:

Հանդիսանալով ընդունող հասարակութիւնների հետ համարկման ոլորտ եւս, հայկական կրթական տարածութիւնը կարող է հորիզոնական առաձգական կապերը ընդլայնել մինչեւ ընդունող երկրների քաղաքական, մշակութային վերնախաւ, ինչը հայկական կրթական տարածութեանը կը հաղորդէր արժէքային կողմնորոշիչների յարուցիչի դեր: Ուսանողական փոխայցերը, մարզական, մշակութային միջոցառումները եւ համատեղ գիտական նախագծերը, ուղեղային կենտրոնների հետ համատեղ աշխատանքի համադրմամբ, կարող են էապէս ընդլայնել հայկական քաղաքակրթութեան եւ ՀՀ հնարաւորութիւնների տիրոյթը՝ յաղթահարելով մեր ձեւակերպմամբ **«քաղաքական-քաղաքակրթական վախի»** երեւոյթը ՀՀում եւ Սփիւռքի գաղթօճախներում:

Հայաստանի վերադարձը Մերձաւոր Արեւելք անհրաժեշտ է հետեւեալ առումներով.-

ա) Հայաստանը գտնուելով Մերձաւոր Արեւելքի ամենաբարձրադիր գօտիներից մէկում՝ Հայկական Բարձրաւանդակում, պատմականօրէն ձեւաւորել է յարաբերութիւնների բազմաբնոյթ ձեւաչափ, թէ՛ արաբական երկրների, թէ՛ հարեւան Իրանի Իսլամական Հանրապետութեան հետ: Այս տիրոյթում կարեւոր է հայկական գաղթօճախների պահպանումն ու զարգացումը Մերձաւոր Արեւելքի խոշոր քաղաքներում հենց մարդկային ու միջմշակութային հաղորդակցութեան տեսակէտից:

բ) Արեւելք-Արեւմուտք շփումների արագացումը յանգեցրել է տեղային քաղաքակրթութիւնների հանդիպման, երբ Ֆրանսիան, Յունաստանը, Ե-

գիպտոսը, Կիպրոսը 3+1 ձեւաչափով[32] փորձում են զսպել թուրքական ծաւալապաշտութիւնն Արեւելեան Միջերկրականում, իսկ Իսրայէլի եւ Թուրքիայի ռազմավարական շահերը չնայած յաճախ համընկնում են, Անքարան փորձում է պաղեստինցիների իրաւունքները դարձնել արաբական աշխարհում իր դիրքերն ամրապնդող խաղաքարտ՝ մերթընդմերթ ընդհարուելով Իսրայէլի հետ:

գ) Նկատի ունենալով Իսրայէլի եւ Թուրքիայի անմիջական ներգրաւուածութիւնը 2020ի ադրբեջանական ահաբեկչական պատերազմում ընդդէմ Արցախի կեանքի եւ երջանկութեան իրաւունքի պետութենական նիւթականացման...:

Անհրաժեշտ է կողմնորոշուել դէպի մերձաւոր եւ դաշնակից պետութիւնների մերձարեւելեան օրակարգի եւ հայկական շահերի համարկման, մանաւանդ նկատի ունենալով ՌԴ լայնածիր ներգրաւումը մերձարեւելեան աշխարհաքաղաքականութեան մէջ Սիրիայի քաղաքացիական պատերազմի թնճուկում: Հնդիկ մեկնաբան Տիլիփ Հիրօն Ռուսաստանի ներգրաւումը սիրիական հակամարտութիւնում փաստում է, որ այն յանգեցրել է «տարածաշրջանի ուժային հաւասարակշռութեան» փոփոխութեան: Պատահական չէ, որ «*2015ի Հոկտեմբերից մինչեւ 2016ի Օգոստոս Փութինի հետ բանակցութիւններ են վարել բարձրաստիճան պաշտօնեաներ Սաուդեան Արաբիայից, Արաբական Միացեալ Էմիրութիւններից, Քաթարից, Պահրէյնից եւ Թուրքիայից*»[33]:

Թուրքիայի Հանրապետութիւնն արցախեան վերջին պատերազմի ընթացքում ունէր ուղիղ մասնակցութիւն ազատ Արցախի դէմ ադրբեջանական գործողութիւնների մէջ: Այս մասին են վկայում ոչ միայն երրորդ կողմերի արձագանգը, այլեւ հենց թուրքական պետութեան եւ ՀՀ պաշտօնական փաստաթղթեր, յայտարարութիւններ[34]: Բնական է, որ թուրքական պետութեան ընդարձակումն արդէն իրողութիւն է Կիպրոսից մինչեւ Սիրիա եւ Լեռնային Ղարաբաղ: Չնայած ռուսական խաղաղապահների առկայութեանը, շարունակում ենք ականատես լինել արցախահայութեան կեանքի իրաւունքի կոպտագոյն խախտումների: Այս հայկական քաղաքկրթութեան անվտանգային ինքնորոշման կարեւոր ազդակ է: Ակնյայտ է, որ Ուկրայնայում եւ այլուր անվտանգային պատի առաջ կանգնած Ռուսաստանի Դաշնութիւնը չի կարող միայնակ յաղթահարել Կովկասեան Լեռնաշղթա-

---

[32] Ministry of Foreign Affairs of the Hellenic Republic “Meeting of the Ministers of Foreign Affairs of Greece, Cyprus, Egypt and France (Athens, 19.11.2021),” https://www.mfa.gr/en/current-affairs/statements-speeches/meeting-of-the-ministers-of-foreign-affairs-of-greece-cyprus-egypt-and-france-athens-19112021.html :

[33] D. Hiro, *Cold War in the Islamic World: Saudi Arabia, Iran and the Struggle for Supremacy*, Oxford University Press, 2018, էջ 296:

[34] «ՀՀ ԱԳՆ Յայտարարութիւնը», 21 Հոկտեմբերի, 2020, https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2020/10/21/mfa_st/10562 :

յից հարաւ գտնուող իր աւանդական դաշնակիցների անվտանգային մարտահրաւէրների ծնած վտանգները: Հնարաւոր է, որ հայկական, իրանական, Լեւանտի արաբական, յունական տեղային քաղքակրթութիւնների ինքնորոշումը ստեղծի մի այնպիսի անվտանգային համագործակցութեան տիրոյթ, որում իրենց առաւել շօշափելի դերակատարութիւն ունենան Մոսկուան եւ Փարիզը:

Առաջիկայ տարիների եւ երկարաժամկէտ կտրուածքով դժուար չէ կանխատեսել ուժերի վերադասաւորումները Մերձաւոր Արեւելքում, սակայն արդեօ՞ք հայկական քաղաքակրթութիւնը պատրաստ է ինքնորոշման միջոցով ներկայացնել մերձարեւելեան քաղաքականութեան հիմնական դերակատարի հայտ: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ արցախահայութիւնը ամբողջութեամբ ռուսական խաղաղապահ առաքելութեան շնորհիւ է հայրենազրկումից խուսափելու եւ կեանքի իր հիմնարար իրաւունքների իրացումը, այս պահին անվտանգային դերակատարի կարգավիճակի փոփոխութեան ձգտումները կարող են յանգեցնել քաղաքական խառնաշփոթութեան: Սակայն եթէ նկատի ունենանք մերձարեւելեան քաղաքականութեան արժէքային բազմաչափութիւնը, ապա ակնյայտ է դառնում, որ քաղաքական խառնաշփոթութիւնը միայն ժամանակաւոր է, իսկ ՀՀի առաջանցիկ զարգացման, նրա տնտեսական իրողութիւնների բարեշրջման, անվտանգային ներքին ու արտաքին միջավայրի հնարաւոր փոփոխութեան պարագայում է՛լ աւելի է կարեւորուելու հայկական քաղաքակրթութեան դերը ներքաղաքակրթական երկխօսութեան տիրոյթում:

Հայկական գաղթօճախների միջոցով կրթական տարածութեան ստեղծմամբ, ՀՀն հնարաւորութիւն կը ստանայ ապահովելու իր «վերադարձը» Մերձաւոր Արեւելք, որին կարող են յաջորդել երկկողմ եւ բազմակողմ ձեւաչափերով քաղաքակրթական երկխօսութիւնը տնտեսական ու անվտանգային համագործակցութեան վերածելու ջանքերը: Այս առումով էլ կարեւորում ենք քաղաքացիավարական սկզբունքների կիրառումը համազգային համախմբման համար, քանի որ, նմանօրինակ մօտեցումը լրացնում է ժողովրդաիշխանութեան տեսութեան մեթոդաբանական բացը՝ կարեւորելով ժողովրդաիշխանութեան որակի, քաղաքացիակենտրոն կառավարման, օրէնքի գերակայութեան, մարդու քաղաքական, տնտեսական, ընկերային եւ մշակութային իրաւունքների պաշտպանութեան ներպետական եւ միջազգային ընթացակարգերի կայացումը:

Քաղաքացիական հասարակութեան զարգացումը ՀՀում կարեւոր է հենց պետութեան որպէս քաղաքական գերակայ ինստիտուտի ռազմավարութեան իրացման տեսակէտից: Այս խնդրին լուծում տալու մտայնութեամբ էլ առաջարկում ենք քաղաքացիավարութիւնն ընդունել որպէս ՀՀում քաղաքացիական մշակոյթի զարգացման տեսական հիմք: Փաստօրէն մշակութային ինքնորոշման արժէքաբանական կողմնորոշիչների յարուցիչները պէտք է գտնել հենց հայկական միջավայրում՝ ձգտելով ապահովել անց-

եալ-ներկայ-ապագայ եռաչափ կենսաքաղաքակրթական միջավայր, որտեղ անցեալից սնուող մշակութային իրողութիւններն ապահովում են ՀՀ եւ հայութեան անվտանգութիւնը մի շարք ուղղութիւններով: Հայկական քաղաքականութեան էթնօգիտակցական միջավայրը մինչ օրս մեծապէս սահմանափակուել է **Հայաստան-Սփիւռք** կապերի ամրապնդմամբ եւ փոխօգնութեամբ: Այսօրուայ հրամայականն է, դադարել անորոշութիւններ մակածելուց եւ բնականոն արդիականանալ հայկական քաղաքականութեան առանցքային արժէքների շրջանակում: Տարակուսելի է, որ հայկական քաղաքական վերնախաւը չի կարեւորում քաղաքակրթական միքանի հարթութեան մէջ դերային բազմաձեւութեամբ ինքնորոշուելու կարեւորութիւնը, այլապէս հայկական քաղաքացիական հասարակութեան արժէքաբանական կողմնորոշիչները չէին կարող հակադրուել ազգային ինքնութեան բնականոն արդիականացմամբ հայկականութեան ծիլերի պահպանմանն ու զարգացմանը: Եկեղեցու, տղամարդու եւ կնոջ աւանդական կերպարի, ազգային արժէհամակարգի, անգամ՝ կենցաղային հարթութեան վրայ պահպանուող աւանդոյթների ու սովորոյթների դէմ տարատեսակ գրոհները միարժէք են: Միարժէք են քանի որ զրկում են հայութեան կա՛մ քաղաքակրթօրէն ինքնորոշուելու, կա՛մ ինքնուրոյն քաղաքակրթական պատկանելութիւնը վճռելու հնարաւորութիւնից եւ յանգեցնում են նրա մեքենական համարկման:

Այս հանգրուանում անհրաժեշտ է զուգահեռներ անցկացնել իսլամական եւ հայկական քաղաքակրթութիւնների միջեւ: Իսլամական քաղաքակրթութեան նկատմամբ վերաբերմունքն ունի հայկական քաղաքակրթութեան ինքնորոշման խնդիրների բարդութեան բազմաշերտութիւնը: Մի կողմից, ներքաղաքակրթական տարանջատուածութիւնը յանգեցրել է տարբեր ճամբարների միջեւ կատաղի մրցակցութեան, միւս կողմից, սակայն, Արեւմուտքի ստեղծած «ուրիշը» դիտարկուել է որպէս հակադիր բեւեռ՝ ինքն իրեն մղելով անորոշութիւնների յորձանուտ: Արեւմտեան քաղաքակրթութեան կողմից իսլամի նկատմամբ դրսեւորած վարքաբանութեան կողմնորոշիչներն են այլ կրօնական պատկանելութիւնը, քաղաքակրթութեան տարածութեան աշխարհագրական փոխդասաւորութիւնը, զարգացման տարբերութիւնները, աշխարհաքաղաքականութիւնը եւն.:

Յատկանշական է, որ քաղաքակրթութիւնների բախումն արդէն ԻԱ. դարում ստանում է Արեւելք-Արեւմուտք աշխարհագրական նրբերանգներ, երբ իսլամական Քոսովոյի անկախութիւնը[35], որը հակամարտում է ուղղափառ քրիստոնեայ Սերպիայի դէմ, դառնում է աշխարհաքաղաքական ուժային կենտրոնների միջեւ մրցավազքի արտացոլում:

[35] "A Guide to the United States' History of Recognition, Diplomatic, and Consular Relations, by Country, since 1776: Kosovo, Office of the Historian," https://history.state.gov/countries/kosovo :

Քոսովոյի դէպքը մեծ տէրութիւնների աշխարհաքաղաքական վարքաբանութեան դասական օրինակ է եւ քաղաքական-քաղաքակրթական կողմնորոշիչների ցուցիչ: Բնական է, որ ՀՀն, նկատի ունենալով ՀՀ քաղաքացիների մեծամասնութեան կրօնական զգացմունքներն ու պատկերացումները, հարկադրուած է հաշուի առնել միջմշակութային փոխազդեցութիւնների եւ հասարակութիւնների քաղաքական վարքաբանութեան վրայ կրօնի ազդեցութիւնը: Սակայն հայկական քաղաքակրթութեան վերածնունդը միջկրօնական երկխօսութեան դաշտում դիտարկելով՝ ՀՀն կարող է ստանալ քաղաքակրթութիւնների երկխօսութեան լայն դաշտ, որտեղ իր քաղաքակրթական ինքնորոշումն ընկալուի որպէս տեղային քաղաքակրթութեան քաղաքական նկրտումների հաստատութենականացում:

Հետեւաբար կարեւոր է, որ հայ մարդն ինքնորոշուի նախ իր պատկերացումներում՝ հայ մարդու նշանային համակարգի բազմաշերտութեան եւ արտաքին ու ներքին հակասութիւնների յաղթահարման հերոսական-ոգեղէն արդիականացմամբ: Պատմական յիշողութիւնը դիտարկելով որպէս ազգային կենսափորձի կուտակման ձեւ, այդուհանդերձ հարկադրուած ենք համարում շեշտել, որ ազգային նշանային համակարգի եւ հնատիպերի մշակութաբանական-մարդաբանական ուսումնասիրութիւնների քաղաքական գնահատման սակաւութիւնը սահմանափակում են հայ մարդու՝ «ո՞վ եմ ես» հարցին յստակօրէն պատասխանելու հնարաւորութիւնները, ինչն էլ նրան դրդում է անհատի մակարդակում փնտռելու իր ազգային ինքնութեան չափորոշիչները՝ դառնալով զանազան արտաքին հոսանքների համակիր կամ զոհ: Այս իմաստով հայկական քաղաքակրթութիւնը յարում է նաեւ իսլամական քաղաքակրթութեանը՝ ինչպէս ինքնութեան որոնումների մշակութային իմաստաբանութեան բազմաչափութեամբ, այնպէս էլ, մեր համոզմամբ, արժէքաբանօրէն: Սրա հետեւանքով էլ հայ եւ մահմետական մշակութային տարածքների փոխազդեցութիւնների դաշտում ձեւաւորուած քաղաքական եւ ընկերային մարդաբանութեան հարցերը մեր համոզմաբ դեռեւս մնում են մեծապէս չուսումնասիրուած:

Վերոշարադրեալը մեզ թոյլ է տալիս հայկական կրթական տարածութիւնը դիտարկել մի շարք քաղաքական-քաղաքակրթական չափումներով: Նախ, կրթական տարածութեան համարկումը կարող է նոր հնարաւորութիւններ ստեղծել հորիզոնական կապերով ցանցային յարաբերութիւնների զարգացման համար, գործնական հարթակ դառնալ ինչպէս միջմշակութային հաղորդակցութեան ու մարդկային շփումների, այնպէս էլ տարբեր արժէշահային խմբեր ներկայացնող մարդկանց միջեւ երկխօսութիւն ձեւաւորելու համար: Մեր համոզմամբ հայկական կրթական տարածութիւնը կ'օգնի ՀՀին ու հայկական գաղթօճախներին մասնակցել աշխատանքի միջազգային բաժանմանը, մէկտեղել հայկական էթնօաւազանի մարդկային եւ մտաւորական աղբիւրները՝ միեւնոյն ժամանակ պահպանելով յարաբերական ինքնուրոյնութիւնն ինչպէս քաղաքակրթական ինքնութեան,

այնպէս էլ քաղաքական կողմնորոշման իմաստով: Այլ կերպ ասած, հայկական կրթական համակարգը ունակ է ձեւաւորելու մի ընդհանրական հարթակ, որտեղ գաղափարների յառաջացման եւ մարդկանց ուղիղ շփումների խաչմերուկում հնարաւոր է մեծացնել հայութեան համազգային մրցունակութիւնը եւ ձեւաւորել ազգային քաղաքական-քաղաքակրթական տիրոյթ:

Յատկանշական է, որ «փափուկ ուժի» տեսութեան հիմնադիր, ամերիկացի գիտնական Ճոզըֆ Նայը որպէս փափուկ ուժ դիտարկում է մշակոյթը, քաղաքական արժէքները եւ արտաքին քաղաքականութիւնը[36]: Եթէ նկատի ունենանք, որ հայկական գաղթօճախները եւ հայկական կրթական տարածութիւնը մշակութային եւ արտաքին քաղաքական նպատակների են ծառայում անուղղակիօրէն, ապա ստացւում է, որ փափուկ ուժի համապարփակ օրակարգ ձեւաւորելու համար հայկական քաղաքակրթութեանը հաստատութենական մակարդակում պակասում է սոսկ քաղաքական արժէշահային կողմնորոշիչների համալիրը, իսկ որպէս այդպիսին մեր պատկերացմամբ կարող են ծառայել միջքաղաքակրթական երկխօսութիւնը, Մերձաւոր Արեւելք-Եւրասիա-Արեւելեան Եւրոպա քաղաքական հարթակի ձեւաւորումը, որոնք կ'իրաւականացնեն բնիկ քաղաքակրթութիւնների քաղաքական նկրտումները՝ ուղիղ սպառնալիք չհանդիսանալով ազատական աշխարհակարգի կամ իսլամական, ռուսական, չինական ձգտումների համար: Պատահական չէ Նայի այն դիտարկումը, թէ «երբ որեւէ երկրի մշակոյթ ներառում է տիեզերական արժէքներ, իսկ նրա քաղաքականութիւնը (policies) նպաստում է ուրիշների կողմից ընդունելի արժէքների եւ շահերի առաջխաղացմանը, այն մեծացնում է ցանկալի արդիւնքին հասնելու հաւանականութիւնը՝ գրաւչութեան եւ պարտականութեան յարաբերութեան պատճառով, որն այն ստեղծում է»[37]:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Հայկական քաղաքակրթութեան քաղաքական չափման ուսումնասիրութիւններով յանգում ենք հետեւեալ եզրակացութեան.-

Անհրաժեշտ է փաստել, որ հայկական քաղաքակրթական ինքնութիւնն իր արժէքաբանութեան եւ կողմնորոշումների մէջ անորոշ է այն առումով, որ չկան քաղաքակրթական ինքնութեան կենցաղ-մշակութային եւ ընկերային չափանիշեր, ընդհանուր կրթական տարածութիւն, ազգային իտէալների ռազմավարական համակարգում եւն.: Այս բացը լրացնելու նպատակով առաջարկում ենք յետագայ հետազօտութիւններով պարզել հայկական ինքնութեան ընկերային, կենցաղային, մշակութային բազմաշերտութեան

[36] J. S. Nye Jr., *Soft Power: The Means to Success in World Politics*, Public Affairs, New York, 2004, էջ 26:

[37] Նոյն:

դրսեւորումները՝ հիմք ընդունելով **լեզուի-հավատի- եկեղեցու-նիւթական ու ոգեղէնական մշակութային ժառանգութիւն բնականոն արդիականացման ցանցային գործընթացը:**

Հայկական քաղաքակրթութեան արժէքաբանական իմաստաւորման տեսակէտից անհրաժեշտ ենք համարում յետագայում նմանօրինակ հետազօտութիւնները՝ ազգային աշխարհայեցողութեան ընկերամշակութային միջավայրից բխեցուած օրինակների հիման վրայ: Համոզուած ենք, որ առանց հայկականութեան, հայեցիութեան, հայ մարդու նախակերպարների քաղաքական ու մշակութային վերծանման հնարաւոր չէ ապահովել հայկական քաղաքակրթութեան շարունակականութիւնը ե՛ւ ՀՀի ե՛ւ Արցախի ե՛ւ Սփիւռքի անվտանգ ապագան:

ARMENIAN CIVILZATION IN THE CONTEXT OF CURRENT POLITICAL DEVELOPMENTS IN THE MIDDLE EAST

(Summary)

MARIAM MARGARYAN (mariam.margaryan@paara.am)
GARIK POGHOSYAN (garik.poghosyan2011@gmail.com)

In the context of the clash and dialogue of Eastern and Western civilisations, the paper argues the importance of the reemergence of the Armenian civilization in the Middle East, which should be based on an Armenian educational platform. In this regard, the paper theorizes a number of relevant issues and assesses them from past, present and future perspectives.

The authors highlight the importance of the paradigmatic analysis of the implications of current uncertainties. They note that in order to manage these implications it is necessary to include a broad set of cultural and anthropological issues, which should be analysed through current political processes.

IRAN'S ASSERTIVE FOREIGN POLICY IN THE SOUTH CAUCASUS

YEGHIA TASHJIAN (yeghia.tash@gmail.com)

INTRODUCTION

Many Iranian experts and scholars believe that the influence of the US is eroding in the region. This argument is justified by the US withdrawal from Afghanistan, Iraq, and other parts of the Middle East. The US now has a bigger threat to deal with; which is China and has to contain Beijing in South Asia. However, the US military withdrawal and redeployment from the region does not mean its influence will diminish since the Americans will pursue their policy through their proxies and allies. Hence, the Saudis, Israelis, and Turks will try to shape US interest in the region by containing the Russian, Iranian and Chinese interests. Iranians, especially the conservatives, view the regional geopolitical and geo-economic developments through this (anti-Israeli and anti-American) prism. This is why Iranians directly intervened in Syria and Iraq since they saw the "Sunni-Islamist jihadism" as an "American-Zionist plot" to change the balance of power in the region and destabilize Iran.[1]

Similar to its traditional "anti-US/Israeli" policy in the Middle East, Tehran perceives the South Caucasus through the same prism. Although Tehran, diplomatically and militarily was not pro-active as its presence in the Middle East, however, this paper will highlight Iran's limitations and "red lines" in the region. The paper will discuss why Iran shifted from passive to assertive diplomacy, and raise few recommendations to strengthen Armenian-Iranian relations.

IRAN'S POLICY TOWARDS ARMENIA AND ARTSAKH

Since the collapse of the Soviet Union, Iran has patiently and cautiously followed the developments in the South Caucasus. The main strategic objective of Tehran was to prevent US-Israeli penetration into the region and it viewed the Russian political and military presence in the region, particularly in Armenia, as a buffer zone against Western and even Turkish expansionist activities.[2] However, after 2018, the Iranians viewed the developments in

[1] "Iran 'concerned' by Israeli 'presence' in the Caucasus", *Al Jazeera*, October 6, 2021, https://www.aljazeera.com/news/2021/10/6/iran-concerned-by-israeli-presence-in-the-caucasus , accessed 10/3/2022.

[2] Benyamin Poghosyan, "Opinion: In the South Caucasus, Tehran has its red lines too", *commonspace.eu*, October 4, 2021, https://www.commonspace.eu/opinion/opinion-south-caucasus-tehran-has-its-red-lines-too , accessed 10/3/2022.

Armenia from the prism of "Western-funded color revolutions", such phrases were highlighted in Iranian newspapers.[3]

Turkey, on the other hand, started to follow an independent foreign policy and came to terms with Russia to share power in North Africa, the Middle East, and the Caucasus. Iranian policymakers thought that Turkey by cooperating with Russia would reduce western influence in the region and give up its Pan-Turkic and neo-Ottoman claims.[4] However, regional developments in the post-Second Artsakh war showed that Ankara pushed for assertive pan-Turkic foreign policy in the region. Indeed, after the trilateral statement of November 9, 2020,[5] and the Shushi Declaration of June 15, 2021,[6] it was clear that Turkey's ambitions went beyond the Caucasus and Iran was being further marginalized.

During the recent war in Artsakh, Iran's policy was clear. It called for Armenia's withdrawal from the adjacent territories of Nagorno-Karabakh and a peaceful resolution for the conflict. It even tried to mediate between both sides. In an interview with Iranian political analyst Seyed Mohammad Marandi, the analyst argued that Iran's position from the beginning, was based on the preservation of international law, hence "the occupied territory that was largely Azerbaijani has to be returned to Azerbaijan and the territories that belong to

---

[3] "تحولات سیاسی در ارمنستان پس از انقلاب مخملی و منافع روسیه" (Political developments in Armenia after the Velvet Revolution and Russian interests), *Tasnim News*, June 1, 2019, https://www.tasnimnews.com/fa/news/1398/03/11/2023282/%D8%AA%D8%AD%D9%88%D9%84%D8%A7%D8%AA-%D8%B3%DB%8C%D8%A7%D8%B3%DB%8C-%D8%AF%D8%B1-%D8%A7%D8%B1%D9%85%D9%86%D8%B3%D8%AA%D8%A7%D9%86-%D9%BE%D8%B3-%D8%A7%D8%B2-%D8%A7%D9%86%D9%82%D9%84%D8%A7%D8%A8-%D9%85%D8%AE%D9%85%D9%84%DB%8C-%D9%88-%D9%85%D9%86%D8%A7%D9%81%D8%B9-%D8%B1%D9%88%D8%B3%DB%8C%D9%87, acessed 10/3/2022

[4] Interview with Iranian political analyst and former Fars News Agency (English) chief editor Dr. Seyed Mostafa Khoshcheshm, October 2021.

[5] Yeghia Tashjian, "Iran and the Second Artsakh War: Has Tehran lost its leverage over the South Caucasus?", *Armenian Weekly*, January 27, 2021, https://armenianweekly.com/2021/01/27/iran-and-the-second-artsakh-war-has-tehran-lost-its-leverage-over-the-south-caucasus/ , accessed 10/3/2022.

[6] Yeghia Tashjian, ""Shushi Declaration" and its Implications on the South Caucasus and Beyond", Armenian Weekly, June 29, 2021, https://armenianweekly.com/2021/06/29/shushi-declaration-and-its-implications-on-the-south-caucasus-and-beyond/ , accessed 10/3/2022.

Armenia has to be part of Armenia".[7] Therefore during the war, "Iran accepted and supported Azerbaijani sovereignty and today Iran supports Armenia's sovereignty and will not allow Turkish or other regional forces to weaken the sovereignty of Armenia" mentioned Dr. Marandi.[8] Moreover, other Iranian experts whom this writer met or interviewed were very cautious on the subject of Nagorno-Karabakh, despite the fact that they firmly opposed Armenian control over the adjacent territories of 1988 borders of NKAO, they did not have a clear opinion on the future status of Nagorno-Karabakh. They showed their mistrust towards Azerbaijan, they were silent towards the pre-2020 status quo, however, they favored a compromised solution so as not to drag the region into another regional war that would pave the way for Turkish, NATO, or Israeli intervention.

Hence, many Iranians criticized Armenia's "non-compromising position" over Nagorno-Karabakh. They viewed PM Nikol Pashinyan's pre-war statements on changing the format of the negotiations as a path to pave the way towards war and trigger foreign (mainly Turkish and Western) intervention in the region.

IRAN'S LIMITATIONS AND "RED LINES" IN THE SOUTH CAUCASUS

Traditionally, Iran had two "red lines" in the South Caucasus. However, after the November 9, 2020 trilateral statement, another "red line" was added to its list. These red lines sometimes are dependent variables on the limitations of Iran's foreign policy in the region.

What are those limitations?

Tehran's limitations are linked to geo-economic projects in the region which explain why Iran has not intervened in the war.

1- A key factor that has pushed Iran to have a passive stance towards Turkey was Ankara's political and economic transit role in the region. Turkey is an important trade partner and transit corridor to transfer Iranian gas and oil to European markets. Both Ankara and Tehran also cooperate against the Kurdish insurgency in the region. They also face the same regional rivals – the United Arab Emirates and Saudi Arabia.[9] Turkey is also a useful conduit for mitigating the effects of unilateral US sanctions. At a time when Iran was

[7] Interview with Iranian political analyst and advisor to Iranian deligation for Iranian nuclear talks Dr. Seyed Mohammad Marandi, October 2021.

[8] Ibid..

[9] Alex Vatanka, "Iran's strong hand in the Arab world is missing in the Caucasus", *Middle East Institute*, November 19, 2020, https://www.mei.edu/publications/irans-strong-hand-arab-world-missing-caucasus?fbclid=IwAR2ER1GikSJQvxemf1HHGIPAou0ddDYCogkyEDrPIZPvLZPJP1zBTrnELI4 , accessed 10/10/2021.

being squeezed by the Trump administration's "maximum pressure" campaign and an array of regional rivalries, it can hardly afford to alienate Turkey.[10]

2- The military-technical-intelligence partnership between Israel and Azerbaijan which is actively and permanently developing and strengthening has raised alarms in Iran.[11] However, Azerbaijan is not the only country in the South Caucasus that is being actively supported by Israel, there is Georgia too. For Iran, Georgia is influenced by NATO and especially US decision-makers. This is why, during the 2008 Russo-Georgian war, Iran has neither criticized nor openly supported Russia's annexation of Abkhazia and South Ossetia. Nevertheless, for Iran; Georgia, and Azerbaijan (given Armenia's poor infrastructural role) are important transit hubs to trade with European and Russian markets. For this reason, Iran could not directly contain or challenge the American and Israeli influence alone in this region. Hence, unlike the Middle East, where Iran has proxies and allies (Syria, Hizbollah, and Iraqi and Yemeni militias), where they contain Tehran's enemies, Tehran lacks such allies in the South Caucasus and cannot go to a direct confrontation against them.

Nevertheless, after August 2021, as the threats intensified against Iran's national security, Tehran's new government redrew its "red lines" in the South Caucasus and replaced its passive diplomacy with a pro-active assertive foreign policy.

According to Iranian political analyst, Dr. Seyed Mostafa Khoshcheshm currently Iran is reviewing former President Hassan Rouhani's policies in the South Caucasus. The analyst argued that the former President and his FM Mohammad Zarif took a passive stance towards the 2020 war in Artsakh since they thought Iran needs Turkey to push the nuclear negotiations forward.[12] Iran also valued its trade with Ankara more than its relations with Yerevan. However, with the coming of conservatives to power, the Iranian government realized that its geopolitical and geo-economic interests are at stake.

First, as mentioned earlier, most Iranian scholars and experts this author has interviewed, viewed the regional dynamics from an anti-Israeli prism. During the last years, there were high-ranking official meetings between Azerbaijan and Israel, both sides signed economic, security, and military

---

[10] Joshua Kucera, "Bolton visits Caucasus amid anti-Iran campaign", *Eurasianet*, October 23, 2018, https://eurasianet.org/bolton-visits-caucasus-amid-anti-iran-campaign , accessed 10/10/2021.

[11] Yeghia Tashjian and Mona Issa, "The axis of instability: The Azerbaijani-Israeli alliance", *Nour News*, October 4, 2020, https://nournews.ir/En/News/54444/The-axis-of-instability-The-Azerbaijani-Israeli-alliance , accessed 18/11/2021.

[12] Interview with Dr. Khoshcheshm, October 2021.

agreements. Moreover, Israel used Azerbaijan as an intelligence base to spy on Iranian military activities in Northern Iran. According to Dr. Khoscheshm, Mossad has sent hitmen and agents from the Azerbaijani border to Iran to assassinate Iranian nuclear scientists.[13]

Second, Turkey's growing influence in the South Caucasus is another "red line" for Iran which had been crossed by Ankara after the end of the Second Artsakh War (September 27-November 9, 2020). Iran had concerns that this conflict would trigger Turkey's proactive policy of supporting Azerbaijan and this would come to give Ankara a bigger stake in the future of the South Caucasus. As the war ended with Azerbaijan's military victory, it was clear that the Baku-Ankara alliance has been radically strengthened and Turkey was going to stay in Azerbaijan. It is worth mentioning that with the outbreak of the war in late September 2020, demonstrations erupted in Azeri majority cities in Iran (ethnic Azeris make up about 25 percent of Iran's population) demanding active support for their ethnic kin on the other side of the border. The war had already fueled a sense of Azerbaijani nationalism inside northern Iran. Tehran feared it would be dragged into the Armenian-Azerbaijani war. This was followed by President Erdogan's remarks by citing a controversial poem during the military parade in Baku (December 10, 2020) thus further antagonizing the Iranians.[14] Many Iranians believed that Turkey with the help of Israeli and Azerbaijani agents was going to destabilize northern Iran.

Finally, despite the fact that Tehran has welcomed the end of hostilities, its passive diplomacy in the recent war cost her to lose its important transit role in the region. Based on the trilateral statement, Azerbaijan's exclave of Nakhichevan will be connected to Azerbaijan proper through a route passing by Southern Armenia, possibly the Meghry district. Now that Turkey has infiltrated the region, and Israel, through this war, has succeeded in politically isolating Iran, Tehran is concerned to be economically isolated too. In 2005, around 1700-km-long pipeline between Baku and the Turkish port of Ceyhan started operating. Even before the imposition of sanctions, these pipelines replaced the Iranian gas exports with Azerbaijani. Energy security has consolidated Turkish-Azerbaijani trade relations and their ties with Europe: now the oil from Baku is shipped from Turkey to European states through the Baku-Tbilisi-Ceyhan pipeline. As Hamidreza Azizi from the German think-tank SWP pointed out, the new route will diminish Iran's image of being a regional transit and its leverage over Nakhichevan. Meanwhile, Turkey, which borders

[13] Interview with Dr. Khoshcheshm, October 2021.

[14] "Iran protests to Turkey over 'meddling' poem recited by Erdogan", *Aljazeera*, December 11, 2020, https://www.aljazeera.com/news/2020/12/11/iran-protests-to-turkey-over-meddling-poem-recited-by-erdogan , accessed 15/10/2021.

Nakhichean, gains land access to the Azerbaijani proper without having to pass through Iran or Georgia, thus directly being connected to the Central Asian markets.[15] Thus Iran would lose its leverage over Azerbaijan as well.

As border clashes erupted between Armenia and Azerbaijan, and Azerbaijani President declared his clear intentions regarding territorial demands from Armenia (December 10, 2020), the Iranians started reviewing their policy out of concern of increasing Azerbaijani influence on Armenia's southern province, Syunik. Iran is one of the regional powers actively concerned with the developments in Syunik. From the Iranian perspective, any change regarding the internationally recognized borders with Armenia or a de facto loss of Armenian sovereignty over Syunik would threaten Iran's national security and place Iran at the mercy of Turkey and Azerbaijan when it comes to trade routes linking Tehran to Russia and Europe. Iran values Armenia for its North-South corridor projects and Armenia can turn into a valuable geo-economic transit hub only if it finalizes this corridor thus connecting Iran to the Black Sea and beyond.[16]

RECOMMENDATIONS TO STRENGTHEN ARMENIAN-IRANIAN RELATIONS

As an outcome of interviews and meetings with Iranian scholars and experts, based on their political linings, and my participation in the "Armenia-Iran: Historical Past and Present" International Conference which took place in Yerevan between Febraury 9 and 10, 2022 and meetings with Iranian diplomats this author came up with the following suggestions to strengthen Armenian - Iranian relations.[17] Some of these suggestions were welcomed by the Iranians and other suggestions were proposed by them. Some of them are realistic and should be viewed carefully by Yerevan, other recommendations may seem idealistic or far-fetched given the complex geopolitical system in the region but also highlight how far Iranian conservatives may go if they feel their national security is threatened.

- If in the future, Iran joins the Russian-led Eurasian Economic Union (EAEU), it would have better access to the Eurasian, Russian, as well as European markets. This accession would also provide EAEU member states with increased access to the Persian Gulf, increase trade and give stronger impetus

[15] Tashjian, "Iran and the Second Artsakh War: Has Tehran".

[16] Yeghia Tashjian, "Is Iran making a comeback to the South Caucasus?", *The Armenian Weekly*, October 20, 2021, https://armenianweekly.com/2021/10/20/is-iran-making-a-comeback-to-the-south-caucasus/ , accessed 29/11/202.

[17] Yeghia Tashjian, "Reflection on the "Armenia-Iran: Historical Past and Present" International Conference", *Armenian Weekly,* Febraury 28, 2022, https://armenianweekly.com/2022/02/28/reflection-on-the-armenia-iran-historical-past-and-present-international-conference/ , accessed 10/3/2022.

and incentive for both sides (Iran and EAEU members) to pursue common interests in third-party states like in the Levant. Therefore Russia and Iran would have stronger cooperation in the Levant, and other regions, hence they will work to protect their shared economic interests. Therefore, with the unblocking of regional trade routes, in the long run, Armenia would have access to the Levantine markets and reach the Eastern Mediterranean through railways.

- Both Armenia and Iran could launch rapid joint cooperation through joint venture plans and also through Iran's investments in Armenia's highways, especially from the Norduz border crossing to Yerevan in order to widen the capacity of the north-south corridor. From the Iranian perspective, this would widen not only the Armenian-Iranian and regional trade but also promote Iran's geo-economic interests in Armenia. Such steps may further attract Indian, Chinese, and European investments which would empower Armenia's security and stability.

- Both Armenia and Iran may also have military cooperation for the sake of regional stability and to ensure that geopolitical borders of regional countries will remain stable and unharmed especially in Armenia and to ensure that states like Israel and the US will not try to make a scapegoat of Armenia and weaken it for the sake of their plans in the Caucasus. For this reason, an intelligence cooperation center should be created both in Armenia and Iran where both sides can share, analyze and assess regional threats and terror activities that may expose a threat to both countries and regional securities. To facilitate this process, direct communication channels must be established between the security service institutions of both countries.

- Opening of an Iranian consulate in Syunik with a military coordinator/attache. This will pave the way for other states to take similar steps and preserve Armenia's sovereignty with international backing on Syunik.[18]

- Establishing a military base in Syunik (suggestion from Iranian conservative expert) with Armenia's and Russian Federation's consent with the presence of 700-1000 Iranian forces.

-To increase pressure on the Azerbaijani side, the Iranian side can increase the transit fees for Azerbaijani trucks passing through Iran heading for Nakhichevan.

- Enhancing communication between Armenia and the Diaspora communities in Iran, Iraq, Syria, and Lebanon in order to compare and assess Iranian intentions and policies in the Middle East and the South Caucasus.

[18] It is important to note that Iran already took such a decision on December 2021. "Iran To Open Consulate In Strategic Armenian Region", *Azatutyun*, December 29, 2021, https://www.azatutyun.am/a/31631830.html , accessed 27/1/2022.

These communities can act as secondary embassies to facilitate communication and information sharing between different Iranian and pro-Iranian organizations and the Republic of Armenia.

ԻՐԱՆԻ ՀԱՐԿԱԽՈՐՈՂ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՄԷՋ

(Ամփոփում)

ԵՂԻԱ ԹԱՇՃԵԱՆ (yeghia.tash@gmail.com)

Ուսումնասիրութիւնը կը քննարկէ Հարաւային Կովկասի մէջ Իրանի արտաքին քաղաքականութեան արձանագրած որոշակի շրջադարձը:

Ըստ հեղինակին, Թուրքիոյ աջակցութեամբ Արցախի դէմ սանձյազերծուած Ա-զրպէյճանի 44օրեայ պատերազմին հետեւանքով վերահաստատուեցան Թուրքիոյ ախորժակները դէպի Կեդրոնական Ասիա: Եւ քանի որ նման ծրագիր մը Իրանը կը դնէ թրքական աւազանի մէջ, Իրան շրջադարձ մը կատարեց իր հիւսիսին հանդէպ վարած արտաքին քաղաքականութեան մէջ:

Քննարկումին աւարտին, հեղինակը շարք մը յառաջադրանք-առաջարկներ կը ներկայացնէ որոնք կրնան յաւելեալ գործակցութեան միջոցներ հանդիսանալ՝ Հա-յաստանի եւ Իրանի պետութիւններուն համար, կ'ամրապնդեն անոնց փոխյարաբե-րութիւնը, կը սատարեն շրջանի խաղաղութեան եւ կը խոչընդոտեն օտար մի-ջամտութիւնները այնտեղ:

ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆԻ ՍԱՂԻՄԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԵՆԷՆ

ՎԱՉԷ ՂԱԶԱՐԵԱՆ (vatcheg@gmail.com)

Վահան Թէքէեանի (1878–1945) կենսագիրը՝ Արշակ Ալպոյաճեան (1879-1962), իր *Վահան Թէքէեան - իբր հանրային մարդ եւ հրապարակագիր* աշխատութեան մէջ ծաւալուն հատուած մը յատկացուցած է Պոլսոյ Պէրպէրեան Վարժարանի դպրոցակից, կուսակցական յարումով գաղափարակից, Ազգային Երեսփոխանական Ժողովի գծով պաշտօնակից, հրատարակչական ու խմբագրական դաշտի մէջ գործակից եւ այլապէս ալ հոգեկից բարեկամին սաղիմական առաքելութեան[1], նկատի ունենալով չորս գլխաւոր աղբիւրներ.- առաքելութիւնը նշանակող մարմնին՝ Թուրքիոյ հայոց Ազգային Երեսփոխանական Ժողովի 1913-14 տարիներու համապատասխան նիստերու ատենագրութիւնները, Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան տպարանէն Եղիշէ արքեպիսկոպոս Դուրեան պատրիարքի (1860-1930) հրամանով լոյսին տրուած Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեանի (1841–1918) ինքնակենսագրական բնոյթի *Խոհք եւ խօսք* հատորը[2],- որուն «Երկու խօսք»ին մէջ հրատարարակիչները անհրաժեշտ նկատած են զգուշացնել ընթերցողները, նշելով. *«... թէ ո՛րչափ իրաւունք ունի [Օրմանեան] իր դատումներուն մէջ անոնց հանդէպ՝ որոնց հետ շփում եւ գործակցութիւն ունեցած է, ընթերցողներուն կը թողուի վերապահումներ ընել...»*[3],- Թուրքիոյ հայոց պատրիարք Զաւէն արքեպիսկոպոսի (1868–1947) յուշագրական հատորը[4],- որուն պատրաստութեան մէջ Ալպոյաճեան ինք ալ բաժին մը ունեցած է,- եւ Օրմանեանի վերոնշեալ հատորին

---

[1] Արշակ Ալպոյաճեան, *Վահան Թէքէեան իբր հանրային մարդ եւ հրապարակագիր*, խմբագրեց եւ ծանօթագրեց դոկտ. Վաչէ Ղազարեան, հրատ. Թէքէեան Մշակութային Միութեան Մ. Նահանգներու եւ Գանատայի կեդրոնական վարչութեան, Պէյրութ, 1988, էջ 171–213:

[2] Մաղաքիա արքեպս. Օրմանեան, *Խոհք եւ խօսք. իր կեանքի վերջին շրջանին մէջ (յեփմահու հրատարակութիւն)*, տպարան Սրբոց Յակոբեանց, Երուսաղէմ, 1929: Ալպոյաճեան իր աշխատութեան մէջ Երուսաղէմի խնդրին ընթացքին շուրջ ընդհանուր գաղափար մը կազմելու համար յղում կը կատարէ Օրմանեանի գործին յատկապէս 220-9 էջերուն:

[3] Անդ:

[4] Զաւէն Արքեպ., *Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ եւ վկայութիւններ*, հրատարակութիւն թիւ 7 Մտաւորական Սպասարկութեանց Գրասենեակի, տպարան Նոր Աստղ, Գահիրէ, 1947, էջ 44-8:

հրատարակութեան առիթով Թէքէեանի գրած քառամաս խմբագրականն[5] ու անոր յաջորդած տասնամասնեայ յօդուածաշարքը[6]:

1863ին վաւերացեալ Ազգային Սահմանադրութիւնը Օսմանեան Կայսրութեան տիրապետութեան ենթակայ տարածքներուն մէջ բնակող հայոց ազգային գործերու գլխաւոր համարառութիւնը վերապահած էր Ազգային Երեսփոխանական Ժողովին, որ կը բաղկանար Պոլսոյ եւ արուարձաններու վիճակներէն ընտրեալ 20 եկեղեցական եւ 80 աշխարհական, ինչպէս նաեւ գաւառներէ ընտրուած 40 երեսփոխաններէ, ընդամէնը՝ 140 երեսփոխան: Գաւառական երեսփոխանները կը ներկայացնէին Արեւմտահայաստանի նահանգներու, Կիլիկիոյ, Սուրիոյ, Իրաքի, Թրակիոյ եւ Փոքր Ասիոյ հայերը:

Ազգային Սահմանադրութեան 60րդ եւ 61րդ յօդուածները Ազգային Երեսփոխանական կամ Ընդհանուր Ժողովին կը վերապահէին Կոստանդնուպոլսոյ եւ Երուսաղէմի պատրիարքներուն ընտրութիւնը[7], իսկ «Պատրիարք Սրբոյ Երուսաղէմի» խորագրեալ հատուածին 19րդ Յօդուածը կը յստակացնէր թէ Ս. Երուսաղէմի պատրիարքը ամբաստանութեան կրնայ ենթարկուիլ իր Միաբանութեան կամ Կոստանդնուպոլսոյ Խառն Ժողովին կողմէ, Ազգային Ընդհանուր Ժողովին վերապահելով ամբաստանութեան քննութիւնը՝ Պոլսոյ Պատրիարքին վերաբերող սահմանադրական տրամադրութիւններուն համեմատ[8], այդպիսով պատրիարքներու ընթացքին եւ գործառնութիւններուն վերաբերեալ հիմնաւոր թէ անհիմն մտահոգութիւններ կամ շահադիտական թէ ազգասիրական կեցուածքներ ունեցողները մղելով դիմել Ժողովին՝ որպէս հաշուեպահանջ քննելու կացութիւններն ու առնելու անհրաժեշտ քայլերը:

Թէքէեանի սաղիմական առաքելութեան նախապատմութիւնը կարելի է ըսել թէ սկսած էր դամասկացի Ղեւոնդ վարդապետ Մագուտեանի (1852–1922) Սրբոց Յակոբեանց Միաբանութեան ելեւմտից տեսուչ նշանակումով 1878ին: Լաւ եւս է ըսել այն օրէն, ուր ան Միաբանութեան Տնօրէն Ժողովին համարատու տեսուչի իր պաշտօնը կատարելով, միաժամանակ անդա-

---

[5] Խմբագրական [Թէքէեանի], «Խոհք եւ խօսք» (*Արեւ* օրաթերթ, 23 Մայիս 1929–28 Մայիս 1929):

[6] Վահան Թէքէեան, «Օրմանեան Ս. եւ Երուսաղէմ – անձնական բողոք մը եւ ճշդում մը» (*Արեւ*, 4 Յունիս 1929–15 Յունիս 1929):

[7] *Ազգային սահմանադրութիւն հայոց – նիզամնամէի միլլէթի էրմէնիան*, տպարան Յ. Միւհէնտիսեան, Կ. Պոլիս-Սթանպոլ, 1863, էջ 39–40:

[8] Նոյն, էջ 21–22: 19րդ Յօդուածը ամբաստանող կողմ կը նկատէ Պոլսոյ Կրօնական եւ Քաղաքական Ժողովները, որոնք նաեւ կը կոչուէին Խառն Ժողով՝ երբ միասնաբար կը գումարէին իրենց նիստերը, կը ներկայանային նոյնպէս որպէս Կեդրոնական Վարչութիւն, նիստը Թուրքիոյ հայոց պատրիարքին կամ անոր տեղապահին ներկայութեամբ գումարուելու պարագային:

մակցած էր համարառու Տնօրէն Ժողովին եւ նոյնիսկ վարած ատենապետութիւնն անոր[9]:

Այս կրկնակ հակադիր հանգամանքները տեսականօրէն պարարտ հող կրնային ընծայել հաշուեխուսական փորձութեան դիմելու հակամէտ որեւէ անձի եւ վերը նշուած աղբիւրներն ու սաղիմահայ միաբաններու կենսագիր Մկրտիչ արք. Աղաւնունի (1863–1942)[10] յստակ կը դարձնեն թէ Ղեւոնդ վարդապետ դիմած այդ փորձութեան:

Հաշուեխուսութեան տարիներ շարունակ նպաստած էր Ազգային Երեսփոխանական Ժողովին կազմալուծեալ վիճակը, որովհետեւ 1896ի 20 Նոյեմբերի նիստէն ետք օսմանեան կառավարութիւնը դադրեցնել տուած էր սահմանադրութեան գործադրութիւնը[11], որ պիտի վերսկսէր 1908 Յուլիսի

---

[9] Օրմանեան կը գրէ. «*Մագսուտեան ապօրինի կացութեան մէջ կը գտնուի, երբ՝ հակառակ Կանոնագրին՝ ինքն պաշտօնեայ ըլլալով Տնօրէն Խորհրդոյ անդամակից եւ ատենապետ կը մնայ, եւ ելեւմտապետի, գանձապետի, կալուածապետի, շինուածապետի պաշտօնները հաւաքաբար իր վրայ կ'ամփոփէ, եւ իր գործողութիւնները ինքն կը վաւերացնէ*» (Օրմանեան, էջ 227):

[10] Աղաւնունի իր *Միաբանք եւ այցելուք հայ Երուսաղէմի* աշխատութեան մէջ (տպարան Սրբոց Յակոբեանց, Երուսաղէմ, 1929) Ղեւոնդ վարդապետի մասին կը գրէ. «*Իր հսկողութեամբ կը կառուցուին Յարութիւն [Վեհապետեան] պատրիարքի կալուածը ... եւ* Ալէմպի *հիւրանոցը* վանքին *դրամովը եւ յօգուտ նոյն հաստատութեան: Այս շինութիւններուն եւ իր ելմտական բոլոր գործառնութիւններուն համար ամբաստանուելով՝ երբ հաշուետուութենէ կը խուսափի...» մանրակրկիտ քննութեամբ մը կը վճռուի թէ Ղեւոնդ վարդապետ «11267 օսմ. ոսկի Ս. Յակոբի վանքին պարտական է*»: Ենթական տետրակ մը հրատարակելով կը մերժէ ընդունիլ վճիռը: Վրայ կը հասնի առաջին աշխարհամարտը, միաբանութեան կարգ մը անդամներու հետ Ղեւոնդ ալ «կը մեկուսանայ Դամասկոս», բայց 1916ին Սահակ Բ. Խապայեան կաթողիկոսին հրաւէրով 1916-18՝ կրկին կը գտնուի նոյն պաշտօնին գլուխը: «*1922-ին կը վախճանի Երուսաղէմի մէջ առանց հաշուական խնդիրներուն վախճան մը տալու: Տիրացած հարստութիւններէն ու գեփիններէն Ս. Յակոբի վանքը չ'օգտուիր. վասն զի մահուանէ առաջ ուրիշներու կը փոխանցէ զանոնք. միայն վանքին կը մնան եօթը մթերանոցները որոնք իր ծախքովը շինուած էին վանքապատկան գեփնին վրայ...*» (էջ 233):

[11] Ալպոյաճեան կը գրէ. «*[Օսմանեան] Սահմանադրութեան վերահաստատութե-նէն առաջ ... հանրութեան բոլոր խաւերը զբաղեցնող կարեւորագոյն խնդիրն էր Երուսաղէմի վանքին հաշուական հարցը, որ տարիներու անցեալ մը ունէր,- եւ կ'աւելցնէ.- Ղեւոնդ վրդ. Մաքսուտեանը ... իրեն գործակից քանի մը միաբաններով,- անոնց գլխաւորն ըլլալով Երուսաղէմի Պոլսոյ փոխանորդ Գէորգ եպս. Երէցեանը,- ո'չ միայն զեղծումներ ըրած էր, այլեւ տարիներով իր մատակարարութեան հաշիւը չէր տուած, օգտուելով Պոլսոյ մէջ Ազգային Երեսփոխանական Ժողովին նիստերուն արգիլուած ըլլալէն: Միաբաններէն մաս մը աւելի «մեղրի կարասէն» իրենց հեռու մնալէն քան անկեղծ նախանձախնդրութեամբ մը, հաշիւ պահանջած էին եւ, ա'յսպէս, միաբանութիւնը երկուքի բաժնուած էր*՝ հաշուեխոյս *եւ* հաշուեպահանջ *կոչումներով*» (Ալպոյաճեան, էջ 171): Սակայն միայն Մագսուտեան-Ե-

օսմանեան նոր սահմանադրութեան հաստատումէն քանի մը ամիս ետք՝ 3 Հոկտեմբեր 1908ին: Օրմանեան պատրիարքի հրաժարեցումով Պոլսոյ աթոռին Մատթէոս Գ. Իզմիրլեան արքեպիսկոպոսի (1845–1910) վերընտրութենէն ետք միայն Ազգային Ընդհանուր Ժողովը պիտի զբաղէր Երուսաղէմի խնդրով՝ որպէս օրակարգ-նկատի ունենալով քննիչ յանձնաժողովի մը կազմութեան հարցը:

Թէքէեանի Եգիպտոսի վիճակէն որպէս երեսփոխան ընտրութիւնը կը վաւերացուի Ազգային Ընդհանուր Ժողովի 21 Նոյեմբեր 1908ի նիստի ընթացքին, երբ Թէքէեան Աղեքսանդրիայէն արդէն անցած էր Պոլիս, իսկ Երուսաղէմի Քննիչ Յանձնաժողովի համեմատական ընտրութիւնը կ'ամբողջանայ Ժողովին յաջորդ՝ 5 Դեկտեմբեր 1908ի նիստի ընթացքին:

Մինչ քննիչ յանձնաժողովը առաջ կը տանի իր աշխատանքները, Սրբոց Յակոբեանց Միաբանութեան տնտեսական աննախանձելի վիճակը կը յամենայ՝ չարաշահումներով մէկտեղ[12]:

Առանց աւելի խորանալու մանրամասնութիւններու մէջ, որոնք լաւապէս ներկայացուած են արդէն մա՛նաւանդ Ալպոյաճեանի աշխատութեան մէջ եւ նիւթ կրնան կազմել առանձին ուսումնասիրութեան մը, նշենք թէ Թէքէեան, որ Ազգային Ընդհանուր Ժողովի նիստերու ընթացքին ելոյթներով եւ ընդդիմախօսութիւններով մասնակցութիւն բերած էր սաղմնական խնդրին ու կանոնադրական բարեփոխումներու քննարկումներուն, Պոլսոյ Պէրպէր-

---

րէցեանի հարց չէր Ազգային Ժողովը յուզածը: Ինչպէս Օրմանեան կը նշէ, սաղմնական խնդիրը ընդհանուր առմամբ նոյն անունը պահելով հանդերձ, «բուն խնդիրը նոյնը մնացած չէ[ր], այլ տարուէ տարի կամ միջոցէ միջոց նոր կերպարներ առած է[ր]»: Ապա կը յիշատակէ խնդրին հանգրուանները՝ Մագսուտեանի անձնական խնդիր, Պատրիարքի դէմ ամբաստանութիւն, տեղապահի նշանակում՝ Պատրիարքը աթոռի վրայ պահելով մէկտեղ, Պատրիարքի վախճանում, Պոլսէն իրարայաջորդ պատուիրակութիւններու առաքում, տեղապահի ձեռնթափութիւն, նոր պատրիարքի ընտրութեան խնդիր, կանոնագրի փոփոխութիւն (Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, *Դիտողագիր. Երուսաղէմի համար կազմուած նոր կանոնագիրին գննութիւնն ու լուսաբանութիւնը*, Երուսաղէմ, տպարան Առաքելական Աթոռոյ Ս. Յակոբեանց, 1915, էջ 1):

[12] Ընթացքը Երուսաղէմի պատրիարքութեան գլուխը գտնուող Յարութիւն արքեպիսկոպոս Վեհապետեանի, որ իր մահկանացուն պիտի կնքէր 1910ին, կրնայ գաղափար մը տալ իրերու դրութեան մասին: Ազգային Ընդհանուր Ժողովի 5 Յունիս 1909ի նիստին ներկայացուած Երուսաղէմի Քննիչ Յանձնաժողովի պաշտօնագիրը կը տեղեկացնէր թէ սպառնալիքներու տեղի տալով եւ իր դիրքն ալ փոխելով, Վեհապետեան պատրիարք Ազգային Ընդհանուր Ժողովը ապակողմնորոշող տեղեկութիւններ հաղորդած եւ անոր տնօրինումներուն հակադիր ընթացք ցոյց տուած էր: Աւելի՛ն, մինչեւ իսկ Բարձրագոյն Դռան մօտ Պոլսոյ պատրիարքութիւնը ամբաստանած էր Երուսաղէմի անկախ Աթոռին իրաւունքները ոտնակոխել փորձելու մէջ, ինչպէս պիտի պարզուէր նոյն նիստին ընթերցուած 20 Մայիս 1909 թուակիր հեռագրէն, որ պատճէնն էր ամբաստանագրին:

եան Վարժարանին մէջ որպէս դասատու իր նոր պաշտօնավարութեան ձեռնարկելիք օրն իսկ, 1913ի Սեպտեմբեր 15ին, կը հարկադրուի մեկնիլ Կեսարիա որպէս նորանշանակ տեսուչը Ս. Կարապետ վանքի ժառանգաւորացին կամ՝ իր բնորոշումով՝ երկրորդական վարժարանին[13], ուր եւս իր պաշտօնավարութիւնը կը մնայ թերաւարտ, որովհետեւ Ազգային Ընդհանուր Ժողովը զինք ներկայացուցիչ ընտրած ըլլալով Երուսաղէմի պատրիարքութեան մօտ, 31 Յունուար 1914ին ճամփայ կ'ելլէ դէպի Պոլիս՝ իր նոր սաղիմական առաքելութիւնը ձեռք առնելու համար:

Դա՛րձեալ առանց խորանալու Ազգային Ընդհանուր Ժողովին կողմէ քուէարկուած կանոնագրային փոփոխութիւններուն եւ անոնց յառաջացուցած թեր ու դէմ տեսակէտերու մանրամասնութիւններուն մէջ[14], հակիրճ

---

[13] Թէքէեան այդ առիթով պիտի գրէր իր միակ ճամփորդական օրագիրը՝ «Կեսարիա երթուդարձի եւ բնակութեան օրագիր մը», որ տարիներ անց հրատարակութեան պիտի յանձնէր Պոլսոյ *Ժողովուրդի ձայնը-Ժամանակ* թերթին մէջ եւ որ Գրիգոր Պըլտեանի եւ Սեւան Տէյիրմենճեանի համատեղ պատրաստութեամբ ու Պըլտեանի յառաջաբանով պիտի հրատարակուէր Պոլիս, 2016ին, իբրեւ *Ժամանակ* օրաթերթի մատենաշարին 4րդ հատորը: Հարկ է դիտել տալ թէ օրագրութեան եւ հետեւաբար 2016ի հրատարակութեան մէջ թուականները նշուած են հին տոմարով, որով ընթերցողը Սեպտեմբեր 15ի փոխարէն կը հանդիպի Սեպտեմբեր 2ի: Պըլտեանի յառաջաբանին վերաբերեալ նշելի է երկու կէտ.- Ա. Թէքէեան դէպի Երուսաղէմ ճամփայ ելած է ոչ թէ Մարտ-Ապրիլին, այլ՝ ստուգապէս հին տոմարով Ապրիլ 29ին (նոր տոմարով՝ Մայիս 12) եւ Զմիւռնիոյ մէջ Օրմանեանին միանալով միասնաբար Յոպպէ (Եաֆա) հասած են Մայիս 5/18ին: Իդէպ, Թէքէեան շոգենաւին մէջ ուրուագծած է դիմանկարը Օրմանեանի՝ «անոր մրափի պահուն» (Թէոդիկ, *Ամէնուն տարեցոյցը*, ԺԶ. տարի, 1922, էջ 230): Բ. Թէքէեան հրաւիրուած էր որպէս տեսուչ կամ տնօրէն Ս. Կարապետ վանքի վարժարանին եւ ո՛չ թէ վանքին: Յարակցաբար նշենք թէ Թէքէեանի ճամփայ ելած օրը Օտեան ժամանակագրապէս խափանեալ *Ժամանակի* «Հեռաձայն» անուամբ լոյս տեսնող 57րդ համարին մէջ (1562), 2/15 Սեպտեմբերին կը ստորագրէր «Գեր. Բարսեղ Ս. Թէքէեան պատրիարք Կ. Պոլսոյ» կտորը, ուր նախ կ'ըսէր. «*Այս առտու կանուխ մեր բարեկամը, Վահան Թէքէեան, շոգեկառքով կը մեկնի դէպի իր նոր պաշտօնատեղին, Կեսարիոյ Ս. Կարապետի վանքը որուն վարժարանին տեսուչ անուանուած է*» ու իր երգիծական շունչով բանաստեղծ եւ հետեւաբար *միսթիք* Թէքէեանը երեւակայաբար կը դարձնէր Արմաշի վանքէն շրջանաւարտ եւ Դուրեանի կողմէ վարդապետ օծեալ Տէր Բարսեղ, որ պիտի դառնար Կեսարիոյ առաջնորդ եւ հուսկ պատրիարք Թուրքիոյ հայոց...:

[14] Բաւարարուինք նշելով թէ սաղիմական միաբաններու մեծամասնութիւնը, Օրմանեանի նման, կ'ուզէր բարեփոխեալ կանոնադրութիւնը քննարկման դնել հին կանոնադրութեան հիմամբ Սրբոց Յակոբեանց Աթոռի նոր պատրիարքին ընտրութենէն ետք եւ այդ ուղղութեամբ տարուած աշխատանքները յաջողած էին նաեւ ապահովել օրհնութիւնը Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե. Սուրէնեանցի, որ իր 14 Փետրուար 1914 թուակիր կոնդակին մէջ՝ ի պատասխան Զաւէն Պատրիարքի 19 Դեկտեմբեր 1913 թուակիր նամակին, կ'ըսէր թէ աչքի առջեւ ունենալով

նշենք թէ Թէքէեան կը հարկադրուի իրադարձութիւններու բերումով մինչեւ Մայիս սպասել Պոլիս, իսկ երբ վերջապէս կը հասնի պահն ու կը մեկնի, Երուսաղէմի մէջ հանդիպելով Ազգային Ընդհանուր Ժողովին կողմէ վարչական պատուիրակ կարգուած Օրմանեանի մեքենայութիւններուն, կ'եզրակացնէ թէ նման պայմաններու մէջ ապարդիւն պիտի անցնէր իրեն վստահուած առաքելութիւնն ու կ'որոշէ մեկնիլ Եգիպտոս՝ սպասելու համար Ազգային Երեսփոխանական Ժողովին կատարելիք կարգադրութիւններուն:

Օրմանեանի *Խոհք եւ խօսք*ին մէջ ներկայացուած կարգ մը տեղեկութիւններ հերքող, ճշգրտող կամ լուսաբանող իր վերը յիշուած յօդուածաշարքին մէջ Թէքէեան յիշատակելէ ետք Ազգային Երեսփոխանական Ժողովի իր «հին հակառակորդին՝ [դաշնակցական] Յար[ութիւն] Շահրիկեանի» հետ փոխանակած թղթակցութիւնը[15], կը գրէր. «… փափաքելի էր որ Երուսաղէմի Միաբանութիւնը *որ պատշաճ դատած է տպել Օրմանեանի սխալապատում տեղեկութիւնները*, անոր հոն թողած թուղթերուն մէջէն գտնէ եւ հրատարակութեան տայ … Պատրիարքարանի եւ ինծի հետ փոխանակած թղթակցութիւնը մեր խնդրոյն վերաբերմամբ: Ատիկա շատ բան պիտի լուսաբանէ եւ պիտի հաստատէ ըսածներուս ճշդութիւնը»[16]:

Թէ Օրմանեանի թողած թուղթերուն մէջ պահպանուած պիտի ըլլա՞ն Թէքէեանի ակնարկած թղթակցութիւնները կամ հակող պիտի ըլլա՞յ անոնց վրայ՝ այդ հարցին դժուար է պատասխան մը տալ: Ներկայիս, կարելին ներկայացումն է Թէքէեանի սաղիմական առաքելութեան վերաբերող

հին եւ ներկայ իրադարձութիւններն ու բոլոր հանգամանքները Ս. Յակոբեանց վանուց, երկպառակութիւններն ու խռովայոյզ վիճակը անոր միաբանութեան, եւայլն, նպատակայարմար եւ օգտակար չի գտներ պատրիարքի ընտրութենէն առաջ հիմնական փոփոխութիւններու մուծումը կանոնադրութեան մէջ, բայց պատրիարքական ընտրութիւնը ղեկավարելու, առժամապէս միաբանութեան գործերը կանոնաւորելու եւ ելեւմտական հաշիւներն ու կալուածներու եւ ստացուածքներու վիճակը քննելու համար անհրաժեշտ կը նկատէր անյապաղ ղրկել լիազօր մարմին մը «կազմեալ ի ձեռնհաս եւ ի հեղինակաւոր անձանց, յորոց մինն լիցի արքեպիսկոպոս կամ եպիսկոպոս» (*Արարատ* պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի, Մարտ, Գ:1914, էջ 198–200): Ալպոյաճեան այս մասին կը գրէ. «… *հաւանական է կարծել թէ Մանկունի եպս.ը որ … սաստիկ հակառակ էր կանոնագրին, ինք Գէորգ Ե. կաթողիկոսին թելադրած ըլլար մտերմական գրութիւնով մը*» անգործադրելի ձգել կանոնագիրը: Ու կ'աւելցնէ. «Ամէն պարագայի, այդ կոնդակը բնաւ Ազգային Ժողովին չհաղորդուեցաւ» (Ալպոյաճեան, էջ 195):

[15] Ատոմ գրչանունով ծանօթ, Ցեղասպանութեան զոհ Յարութիւն Շահրիկեան (1860–1915), Ազգային Ընդհանուր Ժողովի նիստերու ընթացքին հանդէս եկած է Երուսաղէմի Յանձնաժողովի տեղեկաբերի դերով:

[16] Թէքէեան, «Օրմանեան Ս. եւ Երուսաղէմ» (*Արեւ*, 14 Յունիս 1929):

ցարդ անտիպ նիւթերու, յայտնաբերուած՝ Պոլսոյ պատրիարքութեան Տեղեկատու Դիւանի (ՊՏԴ) Երուսաղէմ գտնուող վաւերաթուղթերուն մէջ:

Թէքէեան ի՛նք այդ նիւթերը յանձնած ըլլալու է Տեղեկատու Դիւանին, թերեւս նկատի ունենալով անոնց աղերսը իրեն վստահուած առաքելութեան հետ: Կարեւորն այն է, որ պահպանուած նիւթերը լոյսին կը բերեն սաղիմական պատուիրակներու դերակատարութեան կարգ մը մանրամասնութիւններ եւ կը ծառայեն հաստատելու կամ ջրելու այդ առաքելութեան վերաբերող ցարդ յայտնի գրականութեան մէջ հանդիպող տեղեկութիւններ, միաժամանակ նպաստելով աւելի հիմնաւոր պատկերացումի մը կազմութեան՝ դերակատարներու նկարագրային գիծերուն եւ անոնց պատասխանատուութիւններուն մասին:

Վաւերագրերու լեզուն պահպանած ենք նոյնութեամբ, անկիւնաւոր փակագիծեր կիրարկելով հո՛ն ուր անհրաժեշտ նկատած են, բացառելով Թէքէեանի 14/27 Յունիս թուակիր յապաւումներով ծանրաբեռն տեղեկագիրը:

ՎԱՒԵՐԱԳՐԵՐԸ

Ա.

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ
Համար 1931

Կոստանդնուպոլիս, 18 Յունվար 1914

Ազնուաշուք
Վահան Էֆ. Թէքէեան
ի Կեսարիա

Ազգ[ային] Երեսփոխանական Ժողովը, երէկ իր ԻԳ. նիստին մէջ, վերջին անգամ վաւերացուցած Երուսաղէմի կանոնադրութեան 44րդ յօդուածի տրամադրութեան համաձայն[17], կատարելով ընտրութիւնը Ազգային Ժողովի ներկայացուցչի, քուէարկութեան մասնակցող 59 երեսփոխաններէ 30ին քուէով, նոյն պաշտօնին կոչեց Ձեր Ազնուութիւնը[18]:

Ձեր ուղեւորութեան եւ պաշտօնին կիրառութեան համար հարկ եղած կարգադրութիւնները ընելու մասին գրուած ըլլալով արդէն Ամեն[ապատիւ] Ս[րբազան]

---

[17] 44րդ խնդրայարոյց յօդուածը կը տրամադրէր հետեւեալը. «*Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովը Ս. Երուսաղէմի Յակոբեան վանուց վարչութեան բոլոր մասերուն վրայ իր հսկողութեան իրաւունքը տեղւոյն վրայ անմիջական կերպով կը գործադրէ իր կողմէ ընտրուած մնայուն ներկայացուցչի մը միջոցաւ*» (ԺԹ. Նիստ Ազգ. Ընդհ. Ժողովոյ, 15 Նոյեմբեր 1913, էջ 359): Նոր կանոնագրին «հիմնական տրամադրութիւններ»ուն համաձայն, ակնարկուած վարչութիւնը կը բաժնուէր երեք մասի՝ կրօնական, տնտեսական եւ ուսումնական, եւ կը շեշտուէր. «*Երուսաղէմի վանքին վարչութեան բոլոր մասերուն վրայ Թուրքիոյ Հայոց Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովը իր վերին հսկողութեան իրաւունքը կը գործադրէ իր կողմէ ընտրուած ներկայացուցչի միջոցով*» (ԻԱ. Նիստ Ազգ. Ընդհ. Ժողովոյ, 20 Դեկտեմբեր 1913, էջ 385):

[18] Երկրորդ առաւելագոյն քուէ ստացողն եղած էր Օրմանեան՝ 15 ձայնով (17 Յունուար 1914ի ԻԴ. նիստ Ազգ. Ընդհ. Ժողովոյ, էջ 417):

Պատրիարք Հօր, Ազգ[ային] Վարչութիւնը Երուսաղէմի խնամակալութեան հետ համախորհուրդ պիտի գործադրէ կարեւոր միջոցները եւ պիտի հաղորդէ Ձեզ:

Ազգ. Ժողովը վստահ Ձեր արժանեաց վրայ, լիայոյս է որ Երուսաղէմի վանքին բարեկարգութեան նկատմամբ Ձեր ունեցած նախանձախնդրութիւնը, որուն ապացոյցը տուած էք Ձեր երեսփոխանական պաշտօնավարութեան միջոցին օգտակար թելադրութիւններով եւ առաջարկներով, գործնական փորձով ալ ցոյց պիտի տաք, այս կարեւոր պաշտօնին մէջ, կատարելով կէտ առ կէտ այն պարտաւորութիւնները, որոնք սահմանուած են կանոնագրին առանձին յօդուածներով: Այս պատճառաւ ներփակեալ կը խրկենք Ձեզ վաւերացեալ կանոնագրէն օրինակ մը:[19]

Ազգ. Ժողովոյ քուէարկութեան արդիւնքին հետ յայտնելով մեր շնորհաւորութիւնները, կը մաղթենք արդիւնաւորութիւն Ձեր ջանքերուն համար:

Մնամք յարգանօք

Ազգ. Ժողովոյ
Ատենապետ
Տօգ. Ն[ազարէթ] Տաղաւարեան[21]

Ատենադպիր
Ե[րուանդ] Պէյազճեան[20]

Բ.

Վերի նամակէն բացի, 20 Յունուար 1914 թուակիր երկու հեռագրեր, մին՝ [Սարգիս] Սուին, [Յարութիւն] Շահրիկեան եւ Արամ Հալաճեան սփորագրութեամբ[22], միւսը՝ միայն Հալաճեան[23], Թէքէեանին կը տեղեկացնեն Ազգային Երեսփոխանական Ժողովին որոշումը:

Թէքէեան Հալաճեանի ուղղուած երկու հեռագրերով, 22 եւ 27 Յունուար 1914ին կը յայտնէ շնորհակալութեամբ սփացած ըլլալը Սուին-Շահրիկեան-Հալաճեան հեռագրին եւ սկզբունքօրէն ընդունիլը եղած կարգադրութեան[24]:

Թէքէեանի պաշտօնակոչութեան վերաբերեալ հեռագիր մըն ալ առաքած է Զաւէն Պապրիարք 23 Յունուար 1914ին[25]:

Ազգային Կեդրոնական Վարչութեան Քաղաքական Ժողովի պաշտօնաթուղթով Թէքէեանի կ'ուղարկուի 55 թուահամարով հեռեւեալ պաշտօնագիրը:

Կ[ոստանդնու] Պոլիս, 23 Ապրիլ 1914

Ազնուաշուք
Վահան Էֆէնտի Թէքէեան
եւն. եւն. եւն.

---

[19] Ակնարկուած կանոնադրութեան վաւերացեալ օրինակը չէ պահպանուած նամակին հետ:

[20] Պէյազճեան Բ. ատենադպիրն էր Ազգային երեսփոխանական Ժողովին՝ Հմայեակ Արամեանցն ընտրուած ըլլալով Ա. ատենադպիր:

[21] ՊՏԴ, տուփ 4, թղթապանակ Թ, Թ2:

[22] ՊՏԴ, տուփ 9, թղթապանակ LMN51, Թ4 (օսմաներէն, ձեռագիր):

[23] ՊՏԴ, տուփ 9, թղթապանակ LMN51, Թ5 (օսմաներէն, ձեռագիր):

[24] ՊՏԴ, տուփ 9, թղթապանակ LMN51, Թ6 (օսմաներէն, ձեռագիր):

[25] ՊՏԴ, տուփ 9, թղթապանակ LMN51, Թ8 (օսմաներէն, ձեռագիր): Թէքէեան հեռագրին հայատառ վերարտադրութիւնը ներկայացուցած է Երուսաղէմէն Հրանդ Մամուրեանի ուղղած 5/18 Յունիս թուակիրին մէջ:

Ազգային Կեդր. Վարչութեան Խառն Ժողովոյ որոշման համաձայն Վարչական Պատուիրակութիւն մը, որ կազմուած է անդամակցութեամբ Կրօնական Ժողովոյ Ատենապետ Ամեն[ապատիւ] Տ[էր] Մաղաքիա Արքեպսկ. Օրմանեանի եւ Քաղաքական Ժողովոյ անդամներէն Ազն[ուամեծար] Կիւրեղեան էֆէնտիի, կ'ուղեւորի Երուսաղէմ՝ Միաբանութեան մէջ տիրող երկպառակութիւնը բառնալով վանքը խաղաղեցնելու եւ անոր ելեւմտական վիճակը քննելու եւ ստուգելու եւ ըստ այնմ Ընդհանուր Ժողովէն վաւերացեալ կանոնագիրը գործադրութեան դրուելու համար: Ազգային Վարչութիւնը բանաւոր եւ պատշաճ դատած է որ Ձեր Ազնուութիւնն եւս՝ իբրեւ ներկայացուցիչ Ընդհ[անուր] Ժողովոյ, ընկերակցի Վարչական Պատուիրակութեան՝ կանոնագրին գործադրութեան վերոյիշեալ նախապատրաստական աշխատութեանց գիտակից ըլլալու եւ յետոյ[26] ձեռնարկելու համար ի գործ, Ընդհանուր Ժողովոյ կողմէ իրեն տրուած իրաւասութեանց սահմանին մէջ:

Վարչական Պատուիրակութիւնը պիտի մեկնի մէկ քանի օրէն. հետեւաբար, որոշմամբ Քաղաքական Ժողովոյ կը հրաւիրենք Ձեր Ազնուութիւնն որ բարեհաճի տեսնել իր պատրաստութիւններն՝ ճամբայ ելլելու համար Պատուիրակութեան հետ:

Մնամք աղօթարար
Պատրիարք Հայոց Թուրքիոյ
Ձաւէն Արքեպ. Տէր Եղիայեան[27]

Գ.

[20 Մայիս 1914]

Ամենապատիւ
Տ. Ձաւէն Ս. Արքեպս. Տէր Եղիայեան
Պատրիարք Հայոց Թուրքիոյ
Նախագահ Ազգ. Երեսփ[ոխանական] Ընդհ. Ժողովոյ
Կ. Պոլիս

Ազգ. Երեսփ. պատկառելի Ժողովն, համաձայն նոր Կանոնագրի 44րդ Յօդուածին, ընտրութիւն կատարած եւ պատիւ ըրած ըլլալով զիս ընտրել իր կողմէ Ներկայացուցիչ Երուսաղէմի Ս[րբոց] Յակոբեանց Վանուց Միաբանութեան մօտ, յանձնած էր ըստ օրինի բովանդակ Կանոնագրին եւ իր այս որոշման գործադրութիւնը Ազգ. Կեդր[րոնական] Վարչութեան, ինչպէս կը ծանուցանէր ինձ Մայր Դիւանի 18 Յունվ. 1914 թուականաւ պաշտօնագիրը: Սոյն գրութեան հետ միաժամանակ ստանալով Ձերդ Ամենապատուութեան 23 Յունվ.ի հեռագիրը, որով Ազգ. Կեդր. Վարչութեան Պատ. Խառն Ժողովին որոշմամբ զիս ի Պոլիս կը հրաւիրէիք, Յունվ. 31ին մեկնեցայ Կեսարիայէն ուր կը գտնուէի տեղւոյն Ս. Կարապետ Վանուց Ժառանգաւորաց Բարձր. Վարժարանին Տեսուչի պաշտօնով եւ Պոլիս հասայ Փետր. 6ին, ուր անմիջապէս ինքզինքս դրի Ձեր Սրբազնութեան տրամադրութեանը ներքեւ: Յայտնի է Պատկ[առելի] Երեսփ. Ժողովին՝ թէ ի՛նչ պատճառներով, այսինքն միմիայն ղրկող մը չգտնուելուն պատճառաւ, մնացի Պոլիս մինչեւ Ապրիլ 29, երբ վերջապէս նորընտիր Ազգ. Կեդր. Վարչութեան որոշմամբ (որմէ տեղեկութիւն ունեցաւ նաեւ

[26] Այս «յետոյ» բառը Օրմանեան պիտի վերածէր գլխաւոր կռուանի՝ իր մեքենայութիւններն անով արդարացնելու համար, ինչպէս պիտի պարզուի յաջորդական նամակներէ:

[27] ՊՏԴ, Թ291–Թ292:

Ազգ. Ժողովը) մեկնեցանք Վարչութեան պատուիրակներէն Տիար Գէորգ Կիւրեղեանի հետ եւ Իզմիրի մէջ միանալով Վարչութեան միւս պատուիրակ Ամեն. Մաղաքիա Ա[րք]եպս. Օրմանեանի, Եաֆա հասանք Մայիս 5ի առաւօտուն եւ Երուսաղէմ՝ յաջորդ օրը՝ Մայիս 6ի երեկոյին:

Մեր ժամանումը հեռագրաւ Ձեր Սրբազնութեան ծանուցուած ըլլալով արդէն, զիս ընտրող եւ իր կողմէ ներկայացուցիչ կարգող Ազգ. Երեսփ. Պատկ. Ժողովին հետ առաջին հաղորդակցութիւնս սկսելու համար սպասեցի որ պաշտօնիս բնութեան համաձայն միջոց ունենամ քիչ ու շատ իրողութեանց տեղեկանալու եւ ըստ այնմ տեղեկացնելու Ժողովին: Այս առթիւ սոյն առաջին գրութեանս մէջ օգտակար կ'ընեմ զուրկ չեմ համարեր յայտնել թէ՝ Ազգ. Վարչութիւնը, Ապրիլ 23 թուակիր Ձեր Սրբազնութեան կողմէ ինծ ուղղուած պաշտօնագրով՝ կը յայտնէր վերոյիշեալ Պատուիրակութեան կազմութիւնն եւ մօտալուտ ուղեւորութիւնը Յերուսաղէմ «Միաբանութեան մէջ տիրող երկպառակութիւնը բառնալով վանքը խաղաղեցնելու եւ անոր ելեւմտական վիճակը քննելու եւ ստուգելու եւ ըստ այնմ Ընդհ. Ժողովէն վաւերացեալ կանոնագիրը գործադրել տալու համար» եւ կ'աւելցնէր. «Ազգ. Վարչութիւնը բանաւոր եւ պատշաճ դատած է որ Ձեր Ազնուութիւնն եւս, իբրեւ ներկայացուցիչ Ընդհ. Ժողովոյ, ընկերակցի Վարչական Պատուիրակութեան՝ կանոնագրին գործադրութեան վերոյիշեալ նախապատրաստական աշխատութեանց գիտակից ըլլալու եւ յետոյ ձեռնարկելու համար ի գործ, Ընդհ. Ժողովոյ կողմէ իրեն տրուած իրաւասութեանց սահմանին մէջ:» Սոյն պաշտօնագրին պարունակութեան համաձայն, Ազգ. Վարչութիւնն իր Ապրիլ 25ի նիստին միջոցին բերանացի եւս սահմանած ըլլալով պաշտօնիս սկզբնական մասին բնութիւնը, հանդերձ մի քանի կարեւոր լուսաբանութեամբք, փութացի ինծի ուղղուած հրաւէրն ընդունիլ եւ գոնէ գտնուիլ պաշտօնատեղիս, այն վստահութեամբ թէ շուտով առիթ պիտի տրուի ինծի բուն իսկ պաշտօնավարութեանս ձեռնարկելու:

Վասն կանոնաւորութեան համառօտիւ հաստատելէ ետք իբր ներկայացուցիչ Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովոյ Երուսաղէմ ժամանումիս նախընթաց կէտերը, կը փութամ հաղորդել Պատկ. Ժողովոյն թէ տասնըհինգօրեայ բնակութիւն մը արդէն ունեցանք, Վարչութեան պատուիրակները եւ ես, Ս. Յակոբեանց Վանքին մէջ, որ զիս ի վիճակի չի դներ տակաւին ուղղակի Պատուիրակութեան նախապատրաստական աշխատութեանց մասին գաղափար մը կազմելու եւ յուսալու որ մօտերս պիտի կրնամ ձեռնարկել բուն այն գործին որ Պատկ. Ընդհ. Ժողովէն յանձնուած է ինձ, համաձայն իր գծած Կանոնագրին:

Այս տասնըհինգօրեայ նախամիջոցը, սակայն, եթէ ինձ համար անօգուտ եղաւ Պատուիրակութեան նախապատրաստական աշխատութեանց հետեւելու տեսակէտէն, բոլորովին օգտակարութենէ զերծ չեղաւ սա՛ նկատմամբ որ կրնայ գաղափար մը կազմել Միաբանութեան ներկայ կացութեան մասին, ինչ որ կը մղէ զիս հաստատելու թէ՝

1° Վանական գործոց անգոհացուցիչ ընթացքը այնպիսի իրողութիւն մըն է զոր անխտիր կը խոստովանին Միաբանութեան բոլոր անդամները եւ մէյ մէկ կերպ տարբեր միջոցաւ կ'սպասեն անոր վերջ դրուելուն.

2° Նոր Կանոնագրի գործադրութեան ի նպաստ եւ հակառակող միաբաններ կը գտնուին.

3° Հակառակողներու մէջ կան որ բարեմտօրէն եւ անկեղծ համոզմամբ այդ կարծիքը կը յայտնեն եւ ես կը յուսամ որ Պատուիրակութիւնը մի քիչ ջանք ընելով

պիտի յաջողի այդպիսիներն համոզել եւ օգտուիլ անոնց բոլորանուէր աջակցութենէն ստեղծուելիք նոր դրութեան մէջ, որ գէթ պիտի գայ կասեցնել ներկայ կործանարար ընթացքին շարունակութիւնը.

4° Եւ գլխաւորապէս, Կեդրոն[ական] իշխանութիւնը[28] որ մինչեւ վերջերս իր հետեւած անորոշ եւ անվճռական ուղղութեամբ պատասխանատուութեան մեծ բաժին մը ունի, պէտք է այսուհետեւ շարունակէ դարմանելու իր սխալները՝ կորովի եւ հետեւողական քայլեր առնելով, ինչպէս սկսաւ, եւ կատարէ անմիջապէս ըստ Կանոնագրի իրեն վերաբերող գործերը, ինչպէս կազմութիւն խնամակալութեան, ընտրութիւն եւ վաւերացում որոշեալ մի քանի կարեւոր պաշտօնեաներու, եւ որոշում ի մասին Ներքին Կանոնագրի կազմութեան:

Բացարձակապէս վստահ եմ, այժմ աւելի քան առաջ, թէ այն պարագային միայն՝ երբ Պատկ. Ազգ. Ժողովն եւ Ազգ. Վարչութիւնը ուղիղ մտքով եւ ուղիղ քայլերով կատարեն իրենց գործի պարտականութիւնը հանդէպ Երուսաղէմի, Երուսաղէմը եւս կը դադրի ազգին մտահոգութիւն պատճառելէ եւ կ'ըլլայ մեծապէս աւելի արդիւնաւոր քան այժմ, որուն համար շատ միջոցներ եւ տարրեր բաւական ունի եւ կրնան ուրիշներ ալ դիւրաւ ստեղծուիլ այն ատեն:

Մնամ ամենախորին յարգանօք
Վահան Թէքէեան
Ներկայացուցիչ Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովոյ[29]

Դ.

Երուսաղէմ, [Մայիս 1914]

Վսեմաշուք
Գաբրիէլ Էֆէնտի Նորատունկեան
Ատենապետ Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովոյ
ի Կ. Պոլիս

Ազգ. Երեսփ. Պատկ. Ժողովդ, Երուսաղէմի Ս. Յակոբեանց Վանուց 1913ի կանոնագրին 44րդ Յօդ[ուած]ին համաձայն Ներկայացուցչի ընտրութիւն կատարած եւ զիս այդ պաշտօնին կոչելու պատիւն ըրած ըլլալով, ըստ օրինի թէ՛ իր այս որոշման եւ թէ՛ բովանդակ կանոնագրին գործադրութիւնը յանձնած էր Ազգ. Կեդր. Վարչութեան: Ըստ այնմ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրն, Պատկ. Խառն Ժողովոյ որոշմամբ, իր Յունվ. 18, 1914ի հեռագրաւ զիս ի Պոլիս կը հրաւիրէր Կեսարիայէն՝ ուր կը գտնուէի իբրեւ տեսուչ Ս. Կարապետի Բարձր. Վարժարանին, ուրկէ մեկնելով Յունվ. 31ին, Փետր. 6ին հասայ Պոլիս, ուր ինքզինքս անմիջապէս դրի Ժողովին տրամադրութեան ներքեւ: Ծանօթ է Պատկ. Երեսփ. Ժողովիդ՝ թէ նոյն միջոցին Վարչութիւնը հրաժարական մատուցած ըլլալով, մինչեւ նոր Վարչութեան կազմութիւնը, մօտաւորապէս երեք ամիս, ո՛եւէ ձեռնարկ չեղաւ զիս պաշտօնատեղիս ղրկելու մասին, ինչպէս ծանօթ է նաեւ՝ թէ ի վերջոյ Վարչական Պատուիրակութեան մը հետ միասին, որ կը բաղկանար Ամեն. Մաղաքիա Արքեպս. Օրմանեանէ եւ Պրն. Գէորգ Էֆ[էնտի] Կիւրեղեանէ, Ապրիլ ամսոյ վերջերը մեկնեցանք Պոլսէն, պատուիրակութեան պաշտօնն ըլլալով, Ապրիլ 23 թուակիր Ս. Պատրիարք Հօր Վարչութեան որոշմամբ ինձ ուղղած գրութեան համաձայն, «Միաբանութեան մէջ տիրող երկպառակութիւնը բառնալով վանքը խաղաղեցնել եւ անոր ելեւմտական վիճակը

[28] Այսինքն Պոլսոյ Ազգային Կեդրոնական Վարչութիւնը:
[29] ՊՏԴ, տուփ 4, թղթապանակ Ը, Ը979–Ը980:

քննել եւ ստուգել եւ ըստ այնմ Ընդհ. Ժողովէն վաւերացեալ կանոնագիրը գործադրութեան դնել», աւելցնելով թէ՝ «*Ազգ. Վարչութիւնը բանաւոր եւ պատշաճ դատած է որ ես եւս, իբրեւ ներկայացուցիչ Ընդհ. Ժողովոյ, ընկերակցիմ Վարչական Պատուիրակութեան՝ կանոնագրին գործադրութեան վերոյիշեալ նախապատրաստական աշխատութեանց գիտակից ըլլալու եւ յետոյ ձեռնարկելու համար ի գործ, Ընդհ. Ժողովոյ կողմէ ինծ տրուած իրաւասութեանց սահմանին մէջ։*»

Ըստ այս հրահանգին, Մայիս 6էն ի վեր արդէն Երուսաղէմ գտնուելով, ճիշդ երեք շաբթուան բնակութենէ մը ետք Վանքին մէջ, կը փութամ ներկայիս տեղեկագրել Ազգ. Պատկ. Ժողովիդ հետեւեալը:

Վարչական Պատուիրակութիւնը, կամ աւելի ճիշդ Ամեն. Մաղաքիա Ա[րք]եպս. Օրմանեան, առ այժմ տակաւին միմիայն ելեւմտական վիճակի քննութեամբ զբաղած, կը յայտարարէ թէ մօտ ժամանակէն դեռ ոչ մէկ նոր կարգադրութիւն կարելի է կատարել: Համոզուած եմ թէ Միաբանութեան կողմէ իրեն ցոյց տրուած մեծարանքից վերաբերումը ազդած է իր վրայ, որով մինչեւ իսկ փոխած է ճանապարհորդութեան միջոցին իր պարզած նախնական եւ աւելի անմիջական գործունէութեան ծրագիրը: Պէտք է աւելցնեմ թէ Միաբանութիւնը ի փոխարէն անգիտանալ կը ձեւացնէ, գէթ մեծամասնօրէն եւ իր գլխաւոր անդամներուն վարմունքով, Ազգ. Ժողովոյդ ներկայացուցիչը եղող անձին պաշտօնական գոյութիւնը վանքին մէջ եւ մասնաւոր խօսակցութեանց մէջ անոնցմէ մին նոյնիսկ կը ժխտէ անոր պաշտօնին օրինաւորութիւնը, եւ ա՛յս՝ ի ներկայութեան Օրմանեան Սրբազանի, որ ո՛չ միայն չի հերքեր, այլեւ համամտութիւն կը յայտնէ յիշեալ միաբանին մէջ բերած պատճառաբանութիւններուն: Ըստ որում այս է իր տրամադրութիւնը՝ Օրմանեան Սրբազան ինք եւս Ներկայացուցչին պաշտօնին չի տար պատշաճ կարեւորութիւնը, որով յաճախ զանց կ'առնէ զայն ներկայացնել օտար պաշտօնական անձնաւորութեանց, ինչպէս տեղւոյս Վսեմ. Կառավարիչին տրուած այցելութեան պահուն, եւ հիւպատոսներու իր տուած այցելութիւններուն համար ալ բոլորովին կը մոռնայ կանխաւ լուր տալ Ազգ. Ժողովոյ Ներկայացուցչին: Բաց աստի, կարգ մը խնդիրներու, ինչպէս Վարչութեան նախորդ պատուիրակ Պարգեւ Էֆ. Փափազեանի դէմ վերջին անգամ ցոյց տրուած եւ Ազգ. Կեդր. Իշխանութիւնը ոտնահարող անորակելի վարմունքին[30] մասին իր ցարդ պահած լռութիւնը կամ աւելի եւս նոյն ինքն խարազանահար վարդապետը ի կարգին միաբանութեան միւս անդամոց ճաշի հրաւիրելն եւ այդ դէպքին մասին անոր հետ կատակաբանելով խօսիլը, ինծի բաւական տարօրինակ կը թուին եւ շատ քիչ յոյս կը ներշնչեն թէ Ազգ. Պատկ. Ժողովիդ քուէարկած կանոնագրին ոգւոյն համաձայն կարելի պիտի ըլլայ նոր վիճակ մը ստեղծել Ս. Յակոբեանց վանուց մէջ, որով եւ ես պիտի կրնամ ինձ յանձնուած պաշտօնը արդիւնաւորապէս կիրարկել:

Եզրակացնելով, կը գտնեմ թէ՝ 1° Տակաւին երկար ժամանակ նախնական աշխատութիւններու տեւողութեան հեռապատկերը, եւ 2° Այդ աշխատութիւններուն ըստ իս աննպատակայարմար եւ անուժ սկզբնաւորութիւնը, միանալով սա՛ պարագային թէ Ազգ. Ժողովոյ ներկայացուցիչը, հակառակ իր պաշտօնին կարեւորութեան, դեռ բաւական երկար ատեն պիտի մնայ առանց ոեւէ իրական իշխանու-

[30] Ակնարկութիւն պաշտօնական առաքելութեամբ Երուսաղէմ ուղարկուած ազգային երեսփոխան Պարգեւ Փափազեանի եկեղեցականի մը կողմէ խարազանահար եղած ըլլալու իրողութեան:

թեան՝ գրեթէ իբրեւ հիւր մը վանքին մէջ, ինչ որ Ազգ. Պատկ. Ժողովոյդ հեղինակութիւնն ու վարկը նուազեցնելու միայն կը ծառայէ, եւ դարձեալ, նկատելով որ ամիսներու ընթացքին առանց ո՛եւէ օգտակարութիւն ունենալու վանքի սնտուկէն թոշակ ստանալը թէ՛ ես պիտի չկարենամ թոյլատրել ինքզինքիս եւ թէ՛ ապագային պիտի կրնայ իմ կողմէս իբրեւ շահադիտական արարք մը մեկնուիլ,- բոլոր այս պատճառներով՝ նախամեծար կը համարեմ, որքան կարելի է կանուխ, հրաժարիլ ինծի յանձնուած պաշտօնէն, յայտնել անոր վերջնական հանգամանքը եւ խնդրել միանգամայն որ Պատկ. Ժողովդ հաճի հաղորդել ինծի հրաժարականիս ընդունուած ըլլալը որպէսզի ժամ առաջ մեկնիմ այստեղէն:

Վերջացնելով, աւելորդ չեմ նկատեր յայտնել Պատկ. Ժողովիդ, իբրեւ արդիւնք երեք շաբաթուան միջոցին կատարած քննութեանս, թէ կարելի եւ անհրաժեշտ է փութով գործադրութեան դնել նոր կանոնագիրն ամբողջովին, առ այդ կազմելով կամ վերակազմելով Կ. Պոլսոյ մէջ յատուկ խնամակալութիւնը եւ անուանելով նախատեսեալ վարչական պաշտօնէութիւնը: Առանց այս պայմանին, գուցէ ողոքել եւ ողոքուիլ սիրող պատրիարք մը միայն յաջողի, առերեւոյթ հանդարտութեամբ մը եւ փոխադարձ համաձայնութեան դիւրաւ հաստատելի հիման մը վրայ, կառավարել Միաբանութիւնը որչափ ինք կենդանի է կամ զառամած չէ, որմէ ետք բնականաբար կրկին կը տիրէ նախկին վիճակը եւ անցեալին իբր աւանդ բերած վէրքերն ալ ոեւէ կերպով դարմանուած չեն ըլլար՝ այլ ծածկուած միայն:

Սպասելով որ բարեհաճիք շուտով հաղորդել ինձ պաշտօնէս արձակման լուրը եւ ցաւելով որ բովանդակ պատրաստակամութեանս հակառակ՝ ինծի կարելի չեղաւ իրականացնել Պատկ. Ժողովիդ յայտնած վստահութիւնը որուն համար սակայն վերստին կը ներկայացնեմ խորին շնորհակալութիւնս,

Կը մնամ, Վսեմաշուք Ատենապետ Էֆէնտի,

Ամենախոնարհ յարգանօք,
Հրաժարեալ Ներկայացուցիչ Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովոյ Յերուսաղէմ,
Վահան Թէքէեան[31]

Ե.

Երուսաղէմ, 5/18 Յունիս 1914

Մեծ. Տիար Հ[րանտ] Մամուրեան
Տնօրէն-խմբագրապետ «Դաշինք» օրաթերթի
Իզմիր

Ձեր թերթին 31/13 Մայիսի թիւը կը պարունակէ իբրեւ առաջին յօդուած *Հայորդի* ստորագրութեամբ Կ. Պոլսէն թղթակցութիւն մը, որուն իմ անձիս վերաբերեալ մասերը հետեւեալ կերպով ճշդուելու կը կարօտին[32]:

---

[31] ՊՏԴ, տուփ 4, թղթապանակ Ը, Ը981–Ը984:

[32] *Դաշինք*ի Ե. տարուան 1470րդ համարով լոյս տեսած գրութիւնը կը կրէր «Ազգ. գործեր եւ գործիչներ Պոլսոյ մէջ» խորագիրը, Պոլսէն ուղարկուած 26 Մայիսին: Հոն, Հայորդի «Ազգային կատակերգութիւնը» ենթաբաժինը կը սկսէր Թէքէեանը կոչելով Ազգային Ժողովին վաւերացուցած Երուսաղէմի կանոնագրին կատակերգութիւն մը եղող առաջին տեսարանին դերակատար, կը նշէր թէ կանոնագիրը կը կնճռոտէ Երուսաղէմի խնդիրը եւ հարց կու տար. «*ճշմարիտ զաւեշտ մը չէ՞ր Ազգ. Ժողովին ներկայացուցչին ուղեւորութիւնը դէպի Երուսաղէմ*»: Հետաքրքրական զուգադիպութեամբ, տարի մը ետ երթալով, *Դաշինք* օրաթերթի 31/13 Մա-

Ձեր թղթակիցը ինծի համար կ’ըսէ. «… երբ տեսաւ թէ իր պաշտօնը վտանգուելու աստիճանին հասած է, գրեթէ ամէն օր դիմում կատարեց Ս. Պատրիարքին մօտ եւ վերջերս նոյն իսկ սկսաւ պոռալ կանչել, ոչ թէ Ազգ. Ժողովին որոշումը գործադրել տալու նախանձախնդրութեամբ, այլ առարկութեամբ թէ ինք Կեսարիոյ մէջ իբրեւ տնօրէն իր ստացած 10 ոսկի ամսաթոշակը կորսնցուցած է եւ վնասուց հատուցում պիտի պահանջէ, եթէ Երուսաղէմ չղրկուի»:

Կը պատասխանեմ: Ազգ. Ժողովոյ Մայր Դիւանին 18 Յունվ.ի պաշտօնագրէն ետք՝ Կեսարիոյ մէջ ստացայ Ս. Պատրիարքին 28 Յունվ.ի հեռագիրը որ Խառն Ժողովոյ որոշմամբ զիս Պօլիս կը հրաւիրէր, սապէ՛ս. «*Մաճլիսի ումումիի միլլեդէ[.-] մէճլիսի մէզքիւր նամընա Գուրսը Շէրիֆ մանասթըրը նէզդինդէ վազիֆէի վէքեալէթէ ինթիխապ օլփըղընըզդան Իսթամպօլա հարէքէթինիզ մէճլիսի միւխթէլիթ գարարըրա թավսիյէ օլընըր. Էրմէնի Բաթրիքի Զաւէն*»[33]:

Ես այս պաշտօնին թեկնածու եղած չէի ո՛չ պաշտօնապէս ո՛չ անպաշտօն կերպով, ո՛չ մէկ բարեկամի բառ մը գրած չէի թէ կը փափաքիմ ընտրուիլ, բայց ընտրութենէն ետք երբ վերոյիշեալ պաշտօնագրէն ու հեռագրէն զատ՝ ի միջի այլոց ստացայ Արամ Հալաճեան, Շահրիկեան եւ Սուին էֆ[էնտի]ներէ ստորագրուած հեռագիր մը որ շատ ջերմօրէն կը յանձնարարէր ընդունիլ ինծի տրուած պաշտօնը եւ կ’ապահովցնէր թէ բովանդակ ժողովին վստահութիւնն ու աջակցութիւնը պիտի վայելէի անոր գործադրութեան միջոցին, *ե՛ս որ համամիտ էի նոր Կանոնագրին*՝ ընդունեցի յարգել Ազգ. Ժողովին կամքը, մանաւանդ որ թերթերուն մէջ հետեւած էի քանի մը շաբաթէ ի վեր ներկայացուցիչի ընտրութեան մէջ Ազգ. Ժողովոյ կրած դժուարութիւններուն եւ տեսայ թէ հրաժարելովս ուրիշ բան ըրած պիտի չըլլայի բայց եթէ զայն նոր դժուարութեան մը մատնել եւ հացին իւղ քսել, ինչպէս կ’ըսուի, Երուսաղէմի խնդրոյն տարիներէ ի վեր մնալուն աշխատող շահախնդիր խմբակի մը: Հետեւաբար՝ ընդունեցի սոյն պաշտօնը եւ Յունվ. 31ին Կեսարիայէն մեկնելով Փետր. 6ին Պօլիս հասայ, ուր ինքզինքս անմիջապէս Ս. Պատրիարքին եւ Խառն Ժողովին տրամադրութեան տակ դրի: Խառն Ժողովը յաջորդաբար երկու շաբաթ զիս ի նիստ հրաւիրեց. առաջինին՝ Ձեր *Հայորդի* թղթակցին այնքա՛ն սրտին մօտիկ

յիսի համարին առաջին յօդուածը եւս կը վերաբերէր սաղիմական վէրքին՝ «Երուսաղէմի հնհնուքը» խորագրով եւ Գ. Բ. ստորագրութեամբ, ուր յօդուածագիրը կը դատափետէր «գողութեամբ ու անորակելի *էյէպսիզ*ութեամբ [իմա՛ անկրթութեամբ]» ազգն զբաղեցնող արծաթասէր հոգեւորականները, բաժին մըն ալ հանելով Ազգային Կեդրոնական Վարչութեան դանդաղաշարժութեան՝ այդ հարցը լուծելու ուղղութեամբ: Հայորդին նոյն թերթին 11/24 Յունիսի 1479րդ համարով ալ նոյն խորագրին տակ գրելով Երուսաղէմի խնդրին մասին, ակնարկութիւն մը կը վերապահէ «անպաշտօն կերպով պատուիրակութեան ուղեկցած» Թէքէեանի, գրելով. «…երեւակայել որ, Վահան Թէքէեան,- որ կրնայ շատ բան գիտցած ըլլալ առանց սակայն վանական կեանքի իրադարձութիւններուն տեղեակ ըլլալու-, խորհո՞ւրդ պիտի տայ իր կեանքին մեծագոյն մասը վանքերու մէջ անցուցած Օրմանեան սրբազանին եւ ասոր համար վեց ամսուան մէջ 180 ոսկի պիտի ստանայ ազգին նիհար քսակէն…»:

[33] Ազգային Ընդհանուր Ժողով[.-] Յիշեալ ժողովը ձեզ որպէս իր ներկայացուցիչը ընտրած ըլլալով Սուրբ Երուսաղէմի վանքին մօտ, Խառն Ժողովի որոշումով ձեր Պոլիս մեկնումը կը թելադրուի. Հայ Պատրիարք Զաւէն:

եղող Պէշիկթաշի խնդրով զբաղած՝ ան բնաւ չկրցաւ ինձմով զբաղիլ. երկրորդին՝ կարծիքի փոխանակութիւն մը միայն ըրաւ հետս եւ ուզեց թոշակի մասին պայմանս գիտնալ՝ զոր որոշելը ժողովին թողուցի: Ատկէ վերջ, սոյն Վարչութիւնը հրաժարեցաւ կամ հրաժարեցուցուեցաւ [sic!], եւ մինչեւ նորին ընտրութիւնը, վաւերացուիլն ու գործի ձեռնարկելը (որ բաւական ժամանակ տեւեց), գիտնալով թէ ապարդիւն է՝ ո՛եւէ դիմում չըրի Ս. Պատրիարքին մօտ: Երբ նոր Վարչութիւնը գործի գլուխ եկաւ, այն ատեն էր որ Ս. Պատրիարքին գացի յիշեցնել փութով որոշում մը տալու պէտքը: Ատոր վրայ, երկո՞ւ թէ երեք նիստ ըրաւ Վարչութիւնը, առանց յիշելու եւ ոչ ալ իր նախագահն իրեն ի յուշ ածելու, թէ Ազգ. Ժողովին նախորդ Վարչութեան որոշմամբ ու ներկայ Պատրիարքին հեռագրով գաւառէն յատկապէս կանչուած եւ այդ որոշումներն ու հրաւէրը բանի մը տեղ դնելով հոնկէ եկած՝ պաշտօնեայ մը կը գտնուէր Պօլսոյ մէջ աւելի քան երկու ամիսէ ի վեր: Ահա՛ երկիցս այս բանը ըսել գացի Ս. Պատրիարքին, առանց ոեւէ վնասուց հատուցում պահանջելու սպառնալիքի (քանի որ կա՛ր Ազգին բարձրագոյն մարմնին որոշումը որով երբեք չէի կրնար «պաշտօնս վտանգուելու աստիճանին հասած» տեսնել[)], ինչպէս կ'ենթադրէ թղթակիցդ, այլ պահանջելով որ «Ազգ. Ժողովին որոշումը գործադրուի», ինչպէս կ'ենթադրէր թէ ըրած ըլլամ Պատրիարքարանի նրբանցքներուն մէջ կ'երեւի սլքտող բայց հակառակ պատերու ետեւէն լսելու իր ջանքին՝ ո՛չ այնչափ սուր ականջներ ունեցող Ձեր նոյն... Հայորդի թղթակիցը, որ «պօռալ-կանչելս» ալ լսած ըլլալ կը յաւակնի՝ նոր բայց սուտ րէքլամ[34] մըն ալ ընելով իր ականջներուն...: Պէ՞տք կայ հոս աւելցնելու թէ Կեսարիոյ ամսաթոշակս 10 ոսկի չէր, այլ 15, եւ թէ՝ հակառակ Ազգ. Ժողովոյ մէջ ընտրութեանս պահուն տրուած որոշման - զոր հաղորդեցին ինծի - թէ Ներկայացուցիչը եթէ պահանջէ՝ Վարչութիւնը պիտի չկրնայ մերժել մինչեւ 50 օսմ. ոսկի ամսաթոշակ սահմանել անոր, ես առանց սակարկութեան ընդունեցի նոր Վարչութեան առաջարկած 30 ոսկի ամսաթոշակը, որուն «դիւթական ազդեցութիւնը»՝ Պատրիարքարանի մէջն ու շուրջը դեգերող եւ իբրեւ ո՛եւէ տարտամ Յանձնաժողովի մը քարտուղար՝ շաբաթը մէկ քանի նամակ գրելու փոխարէն ամսական քանի մը ոսկի գրպանող սովալլուկ ծոյլ երիտասարդները միայն կը կրեն:

Գալով Ձեր թղթակցին այն տեղեկութեան թէ Ս. Պատրիարքը ստիպուեր է իմ սպառնալիքիս ներքեւ զիս «իբրեւ... կցորդ ղրկել Օրմանեան Ս.ի նախագահութեան տակ Երուսաղէմ գացող վարչական պատուիրակութեան հետ» եւ թէ «Ազգ. Ժողովի պատուոյն ու իր անձնական արժանապատուութեան նախանձախնդիր ո՛չ մէկը պիտի յօժարէր այս ուղեւորութիւնը կատարել այսքան նուաստացուցիչ պայմաններու մէջ», թղթակիցն իր այս տողերով նախ՝ *արջի ծառայութիւն* մը կը մատուցանէ Ս. Պատրիարքին եւ Վարչութեան, որոնք Ազգ. Ժողովոյ որոշումը զեղչելով եւ ակամայ գործադրած եւ զայն խաբած պիտի ըլլային այսպէսով. յետոյ՝ կը յայտնէ իր կատարեալ անգիտութիւնը Վարչութեան եւ իմ միջեւ կատարուած համաձայնութեան, որուն համեմատ ես եկայ Երուսաղէմ իբրեւ սոսկ ներկայացուցիչ Ազգ. Ժողովոյ, այդ հանգամանքով՝ Վարչական Պատուիրակութեան գործերուն հետեւելու եւ բնականաբար տեսնելո՛ւ համար թէ այդ գործերը արդեօք իրապէս կը հարթե՞ն կանոնագրի գործադրութեան ճամբան: Այս ըմբռնումը, որ Ազգ. Ժողովոյ զիս ընտրող զանազան խմբակցութեանց լիտըրներուն[35] եւս - մէջը ըլլալով նաեւ Սահմ[անադրական] Ռամ-

[34] Ծանուցում:

[35] Պարագլուխներուն, ղեկավարներուն:

կավարներու խմբակցութիւնը, այո՛- ըմբռնումն է, բնաւ չի նսեմացներ պաշտօնիս ներկայ բնոյթը. թերեւս զայն կը բարձրացնէ իսկ, եւ ամէն պարագայի մէջ, ե՛ս, համոզուած մը Կանոնագրին օգտակարութեան, շատ աւելի *լուայալ*[36] մարդու գործ է կարծեմ որ հսկեմ անոր գործադրութեան վրայ, քան թէ ատոր համոզուած չըլլայի ու խոստանայի - պիտի բռնէի՞ սակայն խոստումս - գործադրութեանը ճամբան հարթելու աշխատիլ:

Իսկ իմ «արժանապատուութեանս նախանձախնդրութիւնը» ո՛եւէ դիմակաւոր ու չճանչցուելու համար յաճախ դիմակը փոխող սինլքորէ մը չէ որ ունենալ պիտի սորվիմ: Կ'զգամ որ չափազանց պատիւ է արդէն իրեն պատասխանելը: Յետոյ, իրաւունք չեմ տար այդ դիմակաւորին որ զիս իրեն աստիճանակից նկատելով՝ առանց ածականի իմ անունովս կոչէ զիս: Իրաւ է թէ այսպէս բարակ բաներու չի նայիր հիմա *Դաշինք*ը, որուն էջերուն մէջ կ'սպասեմ միայն հրատարակուած տեսնել այս անձնական պատասխանս եւ կը մնամ յարգանօք

Վահան Թէքէեան[37]

Զ.

Թէքէեանի վերոյիշեալ նամակը իր մաքրագիր տեսքով արդէն կը յուշէ կրկնօրինակ մը չըլլալը, միաժամանակ մղելով ենթադրելու թէ ան չէ ղրկուած հասցէատիրոջ:

Յիրաւի, Դաշինքի 17/30 Յունիս 1914ի 1484րդ համարով «Երուսաղէմի վարչական պատուիրակը» խորագրին ներքեւ կը հրատարակուի Թէքէեանի մէկ այլ՝ 6/19 Յունիսին գրած նամակը: Մամուրեան այդ առիթով խմբագրական նշումով կը գրէ, ի միջի այլոց, «Թէքէեան էֆ.ի ուղղամտութիւնն, անշահախնդրութիւնն եւ ազգին օգտակար ըլլալու ինքնաբեր փափաքն ամէն կասկածանքէ վեր է ... երբէք չպիտի թոյլատրէինք մեզի ամենաթեթեւ կերպով իսկ վիրաւորել զինք, նկատելով Թէքէեան էֆ. արտասահմանէն երկիր դարձող ամենէ մաքուր, ամենէ պայծառ եւ ամենէ խղճամիտ յեղափոխականներէն մին[38]»:

Ահաւասիկ այդ նամակը:

Երուսաղէմ, 6/19 Յունիս 1914

Մեծ. Տիար Հ. Մամուրեան

Տնօրէն-Խմբագրապետ «Դաշինք»ի

Իզմիր

Չեմ գիտեր ի՛նչ տեսակ մտայնութեան մը տէր է Ձեր Պոլսոյ թղթակիցը որ զիս կը մեղադրէ Ազգ. Ժողովոյ մէկ որոշումը ընդունած եւ գործադրութիւնը հետապնդած ըլլալուս համար: Իրեն պէս իր *քլիք*էն[39] շատեր, ուղղակի եւ անուղղակի միջոցներով, մերթ վախցնել եւ մերթ յուսահատեցնել փորձելով, աշխատեցան, Կեսար-

---

[36] Ուղղամիտ, հաւատարիմ:

[37] ՊՏԴ, տուփ 9, թղթապանակ LMN51, Ը997–Ը998:

[38] Թէքէեան, որ իբրեւ 1908ին կազմուած Հայ Սահմանադրական Ռամկավար Կուսակցութեան հիմնադիրներէն մին մէկէ աւելի առիթներով քննադատած է գէշ հասկցուած եւ գործադրուած յեղափոխութիւնը, պատահականօրէն անդամակցած էր Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան 1896ին եւ նոյն տարին թրքական հետապնդումներէ փախուստ տալով Եւրոպա անցնելէ ետք գործած էր որպէս Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան անդամ:

[39] Խմբակէն:

իայէն Պոլիս դառնալէս մինչեւ Երուսաղէմ մեկնած օրս, որ ջուրը ձգեն նոր կանոնագրին ամենէն հիմնական մէկ տրամադրութիւնը, Ազգ. Ժողովին՝ ներկայացուցչի մը միջոցաւ վանքը այսուհետեւ ազգին հակակշռին տակ պահելու փափաքը: Ձեր թղթակցին կողմէ *Դաշինք*ի հիւրընկալ սիւնակներուն գագաթէն վրաս նետուած նախատինքի եւ զրպարտութեան տիղմը այս *սթօք*ին[40] մնացորդն է՝ հիմա, որ բացարձակապէս անտարբեր պիտի թողուր զիս եթէ միայն գնահատում (appréciation) պարունակէր եւ դէպքերն ալ չխեղաթիւրէր:

Այսպէս, սուտ է որ «վերջերս սկսած ըլլամ ամէն օր դիմում կատարել Ս. Պատրիարքին մօտ ... նոյն իսկ պոռալ կանչել, ... եւ սպառնալ որ վնասուց հատուցում պիտի պահանջեմ եթէ Երուսաղէմ չղրկուիմ»:

Մօտ երեք ամսուան մէջ, մինչեւ մեկնումիս թուականին որոշուիլը, չորս անգամ գացեր եմ Ս. Պատրիարքին քով, անշուշտ յիշեցնելու համար թէ՝ ինքը իր հեռագրով զիս կանչած էր Կեսարիայէն որպէսզի Երուսաղէմ ղրկէ եւ թէ պէտք էր վերջապէս գործադրել Ազգ. Ժողովին որոշումը: Պոռալ կանչելը Պատրիարքարանի մէջ եւ անկէ դուրս այս կամ այն Խորհուրդին կամ Յանձնաժողովին քարտուղարի անունով իբրեւ տզրուկ փակած այն գարշելի արարածներուն կը վայլէ որոնք հայ մամուլին մէջ ալ յաջողած են ոտք մը նետել եւ անոր յաւիտենական արատը կը կազմեն:

Գալով «Օրմանեան Սրբազանի նախագահութեան տակ Երուսաղէմ ղրկուելիք վարչական պատուիրակութեան իբրեւ կցորդ...» ընկերակցելուս, Պօլսոյ թերթերը ժամանակին գրեցին արդէն թէ ես կու գայի միմիայն իբրեւ ներկայացուցիչ՝ Ազգ. Ժողովոյ, ինչպէս նոյնը որոշած ու պաշտօնապէս ինծի գրած ալ է Վարչութիւնը: Պիտի չկրնամ հոս ըսել, թէ նոյն ինքն Վարչութեան ատենապետին յանձնարարութեամբ, ի՞նչ կ'ընեմ եւ պիտի ընեմ այստեղ մինչեւ Կանոնագրի գործադրութեան սկզբնաւորութիւնը, բայց կրնամ յայտնել, թէ Կանոնագիրը կազմող եւ զիս ընտրող երեսփոխան ընկերներուս մէկ կարեւոր մասը անպատճառ ուզած եւ պնդած է որ գամ Երուսաղէմ՝ Վարչական Պատուիրակութեան կատարած ներկայ աշխատութիւններուն վրայ ալ հսկելու համար:

Իսկ թէ «Կեսարիոյ մէջ 10 ոսկի ամսաթոշակ կ'առնէի» (Ձեր թղթակիցը այս պարագային 50 առ հարիւր միայն կը սխալի. ամսականս 15 ոսկի էր հոն) եւ թէ «30 ոսկիի թոշակը դիւթական ազդեցութիւն մը գործած է վրաս», չեմ զիջանիր իսկ պատասխանելու: Միայն պէտք է ըսեմ այդ պարոնին, որ իմ ունեցած «անձնական արժանապատուութեան նախանձախնդրութեանս» մէկ ամենաչնչին մասն ալ եթէ ինք ունենար՝ նորէն մարդ մը կ'ըլլար, փոխանակ այն արհամարհելի, դուռնէ դուռ սլքտացող եւ բազմաթիւ ծածկանուններու տակ իր դէմքին տգեղութիւնը ծածկելու ստիպուած մարդուկին՝ զոր շատ որոշ տեսայ *Դաշինք*ի... *Հայորդի* թղթակցին տողերուն ներքեւ:

Խնդրելով որ այս նամակս հրատարակէք Ձեր թերթին մօտաւորագոյն թիւին մէջ,

Մնամ յարգանօք
Ներկայացուցիչ Ազգ. Ժողովոյ
յԵրուսաղէմ
Վահան Թէքէեան

[40] Ապրանք (արհամարհական երանգով):

Է.

Երուս[աղէմ] 11/24 Յունիս 1914

Ամեն[ապատիւ Մաղաքիա Ս. Արքեպս. Օրմանեան]

Լիազօր Պատ[ուիրակ] Ազգ. Կեդր. Վարչութեան

Աստ

Երկու օր առաջ յայտնած էի Ձեր Սրբազնութեան թէ բնակութիւնս վանքէն դուրս փոխադրելուս առթիւ՝ պէտք ունէի Պատրիարքարանի յարկաբաժնին մէջ գրասենեակի մը, ուր կարենայի մնալ ցերեկները: Ձեր Սրբազնութիւնը պատասխանեց որ «իրենց» դիմեմ. դիմեցի Պատր[իարքական] Տեղապահութեան Փոխ[անորդ]ի եւ Տնօրէն Ժողովոյ ատենապետի մատակարարի պաշտօնը վարող Գեր. Սարգիս Վրդ. Աճէմեանի, որ այն ատեն խոստացաւ մէկ-երկու օրէն յարմար կարգադրութիւն մը ընել, իսկ այսօր, հաւանօրէն որոշմամբ Տնօրէն Ժողովոյ, որ գումարուած է երէկ Ձեր Սրբազնութեան տակ, յայտնեց թէ այժմ տրամադրելի սենեակ մը չկայ: Այսօր այս պատասխանը բերանացի կերպով հաղորդեցի Ձեր Սրբազնութեան, աւելցնելով թէ տեղ չգտնուելուն առարկութիւնը ինծի համար անընդունելի պատրուակ մըն է. Ձեր Սրբազնութիւնը ոչինչ պատասխանեց:

Արդ, նկատելով որ Պատրիարքարանի մէջ ինծի գրասենեակ մը յատկացնելը կը նշանակէ պարզապէս չճանչնալ իմ պաշտօնս եւ ինծի միջոց չտալ որ զայն գործադրեմ, եւ նկատելով որ ինծի համար կարեւոր է գիտնալ թէ արդեօ՞ք Միաբանութիւնն ալ այս կարծիքէ՞ն է թէ ոչ միմիայն Տն[օրէն] Ժողովի կամ Տեղ[ապահ] Փոխ[անորդ]ի եւ Ձեր Սրբազնութեան կարգադրութիւնով է այս,

Ներկայիս կը խնդրեմ որ հաճիք ընդ փոյթ (ըստ սովորութեան 1 օր առաջ, վաղը՝ հրաւէր ուղղելով՝ Ուրբաթի համար) Միաբանական ընդհ. ժողով գումարել եւ ինծի ալ ծանուցանել որպէսզի ներկայ գտնուելով պաշտօնիս վերաբերեալ պէտք եղած բացատրութիւնները տամ ժողովին եւ անձամբ գիտնամ իր տրամադրութիւնը[41]:

Ը.

Երուսաղէմ, 12/25 Յունիս 1914

Ազն. Վահան Էֆ. Թէքէեան, ներկայացուցիչ եւն.

Ազնուամեծար սիրելի,

Երէկ գիշեր ձեռքս հասաւ յունիս 11/24 թուակիր գիրերնիդ, որուն կը փութամ պատասխանել:

Սենեակներու բաշխումը եւ անոնց կիրառութիւնը խնդիր մըն է, որուն ես չեմ խառնուած տակաւին: Իսկ վանքի մէջ սենեակ մը ունէիք դուք, եւ կրնայիք եւ կրնաք զայն պահել որեւէ կիրառութեան համար, առանց ատոր փոփոխութենէն խնդիրի պատճառ մը ստեղծելու:

Գալով ներկայացուցչութեան պաշտօնին, անձանօթ չէ Ձեր սիրելութեան, որ անիկա կապուած է նոր կանոնագիրի գործադրութեան մտնելուն եւ Կոստանդնուպոլ-

---

[41] ՊՏԴ, տուփ 9, թղթապանակ LMN51, Ը977–Ը978: Թէքէեան այս սեւագիր նամակին մաքրագիր օրինակը յանձնած է Օրմանեանի: Սեւագրին մէջ ջնջած է վերջին պարբերութիւնը, ուր կ'ըսուի. «Խնդրելով նոյնպէս որ այս մասին Ձեր որոշումը հաճիք ժամ առաջ ինձ իմացնել որպէսզի ըստ այնմ Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովոյ արժանապատուութեան համաձայն պարտականութիւնս փութով կատարեմ Մնամ խորին յարգանօք»

սոյ մէջ խնամակալութեան մը գործի սկսելուն հետ: Իսկ Կեդրոնական Վարչութիւնը, Ազգային Ընդհանուր Ժողովոյ համաձայնութեամբ, անկէ առաջ պատուիրակութեան միջոց ժամանակի մը կարգադրեց, դժուարութիւնները հարթելու եւ գետինը պատրաստելու համար. եւ այդ միջոցն է, որ կը տեւէ տակաւին:

Իսկ Միաբանական Ընդհանուր Ժողով գումարելու պատեհը՝ պատուիրակութեան խոհականութեան եւ գնահատութեան պատկանող մի կէտ է, եւ համարձակ պիտի յայտարարեմ, թէ տիրող մտայնութեան եւ շարունակուող կացութեան պարագաները զիս չեն քաջալերեր՝ գործը այսպիսի փորձի մը ենթարկել:

Ողջունիւ սիրոյ մնամ Ազնուութեանդ աղօթարար

Մաղաքիա Օրմանեան[42]

Թ.

Երուսաղէմ, 12/25 Յունիս 1914

Ամեն. Մաղաքիա Ս. Արքեպս. Օրմանեան

Լիազօր Պատուիրակ Ազգ. Կեդր. Վարչութեան

Աստ

Ի պատասխանի Ձեր Սրբազնութեան այսօրուան թուականով գրութեան, կը փութամ յայտնել թէ պաշտօնիս ճանաչումը եւ գործադրութիւնը երկու տարբեր խնդիրներ են որոնք իրարու հետ չեն շփոթուիր: Պատուիրակութեանդ տրուած միջոց ժամանակին կը վերաբերէր Կանոնագրի գործադրութեան եւ ո՛չ թէ պաշտօնիս ճանաչման՝ որ առաջին օրէն իսկ պէտք էր կատարուած ըլլալ: Ցարդ վանքին մէջ բնակութիւնս անորոշութեան մը տեղի տուած ըլլալով՝ այժմ Պատրի[արքարան]ի կողմը սենեակի մը յատկացման խնդիրն է որ կը ճշդէր կացութիւնը եւ ինծի փափաքելի կ'ընէր գիտնալ բովանդակ Միաբանութեան եւ ոչ թէ առժամեայ Փոխ[անորդ]ի մը կամ Տնօրէն Ժողովոյ մը,- որոնք իրապէս եւ օրինապէս պաշտօնէ դադրած պիտի ըլլային պատուիրակութեան ժամանումովը,- տրամադրութիւնը հանդէպ իմ պաշտօնիս: Իմ մասիս, այն իշխանութեամբ զոր ունինք, ոչ իսկ օր մը պիտի հանդուրժէի ոտնակոխ ընել տալ Ազգ. Գերագոյն Ժողովին հեղինակութիւն[ը] եւ արժանապատուութիւնը՝ եթէ գիտնայի որ Միաբանութիւն[ը] չի ճանչնար պաշտօնս: Ձեր Սրբազնութիւնը, մօտ ամիսուկէս ետքը, տակաւին ժամանակը եկած չի համարեր «տիրող մտայնութեանց եւ շարունակուող կացութեան մէջ», այս առաջին, պարզ բայց էական կէտն իսկ լուծելու: Կը համարձակիմ հարցնել կրկին, ինչպէս ասկէ առաջ մի քանի անգամներ ըրած եմ, եւ ա՛յս Ազգ. Կեդր. Վարչ.էն ինծ տրուած խորհրդակցական իրաւամբ, թէ մինչեւ հիմա ի՞նչ եղած է այդ «տիրող մտայնութիւնն ու շարունակուող կացութիւնը» փոփոխելու համար, եւ թէ՝ պարզ սենեակի մը խնդրին մէջ անգամ մի քանիներու կամքին առջեւ խոնարհելո՞վ է որ արդեօք կը յուսանք այդ փոփոխութիւնը կատարել:

Անշուշտ, Վանքի պաշտօնական բաժնին՝ Պատր[իարքարան]ի մէջ՝ սենեակ մը կարենալ ունենալու համար Պօլսոյ Խնամակալութեան կազմուած ըլլալը հարկ չէր: Գալով Ձեր հրաւէրին՝ որ է վերստին գրաւել նախորդ թողած սենեակս, պէտք է յայտնեմ որ իբրեւ հիւր կամ իբրեւ ուխտաւոր եկած չըլլալով այստեղ, պիտի չկրնամ այլեւս շարունակել այդ հանգամանքով Վանքը մնալ, որով անմիջապէս պիտի մեկնիմ դէպի Պօլիս, պատասխանատուութեան տակ աւելի երկար չմնալու համար:

Մնամ խորին յարգանօք

[42] ՊՏԴ, տուփ 4, թղթապանակ Ը, Ը995:

Վահան Թէքէեան
Ներկայացուցիչ Ազգ. Ժողովոյ Յերուսաղէմ[43]

Ժ.

Երուսաղէմ, 13/26 Յունիս 1914

Ազն. Վահան Էֆ. Թէքէեան, ներկայացուցիչ եւն.

Ազնուամեծար սիրելի,

Երէկ գիշեր ձեռքս հասաւ նոյն օրուան 12/25 թուակիր գրութիւննիդ: Իմ նամակիս պատասխանելով կը գրէք թէ պաշտօնը ճանչնալ եւ գործադրութեան սկսիլ տարբեր են, թէ սենեկի խնդիրը նշանակութիւն ունի, եւ թէ մտադիր էք Կ. Պոլիս դառնալ պատասխանատուութեան ներքեւ չմնալու համար: Առանց երկարաբանութեանց մէջ մտնելու՝ համառօտիւ կը պատասխանեմ:

Ձեր պաշտօնին հրատարակութիւնը արդէն կատարուեցաւ Մայիս 12ի միաբանական գումարման առջեւ, պատրիարքական պաշտօնագիրն ալ կարդացուեցաւ, ուստի չեմ իմանար թէ ինչո՞ւ ինքզինքնիդ չներկայացած եւ չճանչցուած կը նկատէք:

Ասկէց անդին ըլլալիքը պաշտօնի կիրառութիւնն էր՝ Ազգ. Ժողովի որոշմանց գործադրութեամբ, որ՝ ինչպէս դուք ալ կ'ընդունիք, պատուիրակութեան տրուած միջոց ժամանակիէն ետքը տեղի պիտի ունենար:

Սենեակին խնդիրը պատահական պարագայ մըն է, զի եթէ բնակած սենեակնիդ չնուազեց Ձեր պաշտօնը անցեալ ամսուան մէջ եւ չարգիլեց պաշտօնապէս կամ կէս պաշտօնապէս դիմումներ ընդունիլ եւ խորհրդակցութիւններ կատարել, տարբեր հետեւանք չէր ունենար ասկէ ետքն ալ:

Կոստանդնուպոլիս մեկնիլնիդ կամ մտադրութիւննիդ Ձեզի վերաբերեալ գործ մըն է, եւ ես իմ վրայ միջամտութեան կամ դիտողութեան իրաւունք չեմ զգար. միայն թէ եղելութեանց կարգին օրինական պահանջները յարգուած ըլլալով, կը կարծեմ թէ պատասխանատուութեան տեղի փնտռել աւելորդ կը լինի:

Ողջունիւ սիրոյ մնամ սիրելութեանդ աղօթարար

Մաղաքիա Օրմանեան[44]

ԺԱ.

Երուսաղէմ, 14/27 Յունիս 1914[45]

Ամենապատիւ Տէր Զաւէն Սրբազան Արքեպիսկոպոս Տէր Եղիայեան

Պատրիարք Հայոց Թուրքիոյ, Նախագահ Ազգային Կեդրոնական Վարչութեան Պատկառելի Խառն Ժողովոյ

Կ. Պոլիս

Սրբազան Հայր,

Ամսոյս 12/25ի երեկոյեան հետեւեալը հեռագրեցի Ձեզ. «Impossible et inutile rester, fait nouveau, partira par bateau prochain»[46]: Այս առաւօտ ի պատասխան ստացայ Ձեր Սրբազնութեան երէկի թուականաւ սա հեռագիրը. «Partez pas, ecrivez

---

[43] ՊՏԴ, տուփ 4, թղթապանակ Ը, Ը994: Նամակը գրուած է Երուսաղէմ գտնուող Hotel Fast պանդոկի նամակաթուղթին վրայ:

[44] ՊՏԴ, տուփ 4, թղթապանակ Ը, Ը992:

[45] Թէքէեան այս սեւագրութեան մէջ գործածած է բազմաթիւ յապաւումներ: Խուսափելու համար բազմաթիւ անկիւնաւոր փակագիծերով վերարտադրութիւնը խճողելէ, յապաւումները փոխարինած ենք ամբողջական բառերով:

[46] Անկարելի եւ ապարդիւն է սպասել, նոր իրողութիւն, պիտի մեկնիմ յաջորդ նաւով:

causes, attendez lettre.»[47]:

Նախ կու գամ յայտնել թէ Ձեր հրահանգին համաձայն յետաձգեցի վաղն իսկ այստեղէն Եաֆա եւ հոնկէ Եգիպտոսի ճամբով Պօլիս մեկնելու որոշումս, թէպէտ չեմ յուսար որ այս յետաձգումը ոեւէ օգտակարութիւն ունենայ:

Գալով հեռագրին պատճառներուն, անոնց ամէնուն թուումը երկար պիտի տեւէ, բայց պարտական եմ առանց վերապահութեան ամէնքն ալ շարադրելու: Պատկառելի Վարչութեանդ պատուիրակներէն Գ. Կիւրեղեան էֆ., որ այժմ վերադարձած ըլլալով Պօլիս յուսամ երէկի Խառն Ժողովոյ նիստին ներկայ էր եւ տեղեկացաւ հեռագրիս, արդէն գիտակ է այդ պատճառներէն մէկ մեծ մասին, այսուհանդերձ, որպէսզի միմիայն անոնց վրայ չհիմնուի Պատկառելի Ժողովդ, ներկայ որոշումս բացատրելու համար, հարկ համարեցի fait nouveau բառերը աւելցնել, որոնք կը հետեւցնեմ թէ հասկցուած են եւ այդ է որ «պատճառները» կը հարցնէք Ձեր հեռագրաւ:

Սոյն բոլոր պատճառները թուելէ առաջ, աւելորդ չեմ նկատեր սա՛ ալ յայտնել թէ Կիւրեղեան էֆ.ի մեկնումէն ութ օր առաջ, արդէն, մանրամասն բացատրութիւններ պարունակող հրաժարագիրս խմբագրած էի եւ պիտի ղրկէի Ազգային Ժողովին, երբ Կիւրեղեան էֆ. ջերմօրէն ստիպեց չղրկել զայն, խոստանալով թէ՛ այստեղ եւ թէ՛ ի Պօլիս վերադարձին կացութիւնը հասկցնել եւ բառնալ գանգատանացս պատճառները, որոնց իրաւացիութիւնը ինքն ալ լրիւ կ'ընդունէր:

Արդ, մինչեւ նոր եղելութեան պատահումը, գանգատներս հետեւեալ կերպով կ'ամփոփեմ:

1.- Վարչական Պատուիրակ Ամենապատիւ Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեան օտար պաշտօնական անձնաւորութեանց առջեւ կ'ուզէ անշուք եւ անծանօթ պահել Ազգային Ժողովի ներկայացուցիչը: Ատոր ապացոյց՝ Ա. Կառավարական եւ կրօնական օտար հաստատութեանց մեր տուած այցելութեանց միջոցին՝ մէկ քանի անգամ նախ զայն բնաւ չներկայացնելը, յետոյ իմ պահանջմամբս միայն մէկ անգամ եւ միայն անունս տալով ներկայացնելը եւ յետոյ կրկին այս կարեւոր ձեւակերպութիւնը մոռնալը: Բ. Հիւպատոսներու այցելութեան նախապէս առանձին երթալը, որմէ յետոյ, իմ դիտողութեանս վրայ, լուր տալէ եւ Գերման ու Աւստրիական հիւպատոսարանները միասին այցելելէ ետք՝ վերջին անգամ կրկին Իտալական հիւպատոսին իր տուած առաջին այցելութիւնը մինակ կատարելը:

2.- Օրմանեան Սրբազան նոյնքան եւ աւելի անշուք եւ անկարեւոր կ'ուզէ անցընել Ներկայացուցիչին պաշտօնն ու ներկայութիւնը Միաբանութեան մօտ: Ապացոյց՝ Ա. Նորին Սրբազնութեան յայտնեցի թէ Միաբանութեան այժմ գործի վրայ գտնուող եւ հեղինակաւոր նկատուած անդամները, որոնք ջերմ վերաբերում ցոյց կու տան իրեն եւ ինքն ալ անոնց, չեն փոխադարձած իմ իրենց տուած այցելութիւններս. Սրբազանը ոչ իսկ պատասխանեց այս դիտողութեանս եւ անշուշտ բան մըն ալ չուզեց ընել այս զանցառութիւնը դարմանել տալու համար: Բ. Նորին Սրբազնութիւնը Կեդրոնական Պատկառելի Իշխանութեանդ պաշտօնագիրը ընդհանուր Միաբանութեան կարդալէ ետք երբ զայն մեկնաբանեց իր կողմէ ընդարձակ ճառախօսութեամբ մը, հազիւ ամենաթեթեւ կերպով անցողակի յիշատակութիւնն ըրաւ Ներկայացուցիչին եւ անոր պաշտօնը հաստատող կանոնագրին, ինչ որ հեռու էր անշուշտ Միաբանութեան վրայ տպաւորիչ ազդեցութիւն մը ընելէ եւ ըստ այնմ նկատել տալէ անոր ներկայութիւնը: Գ. Օրմանեան Սրբազանի ամենէն աւելի

[47] Մի հեռանաք: Գրեցէք պատճառները: Սպասեցէք նամակի:

վստահութիւնն ու համակրանքը գրաւող եւ Միաբանութեան մէջ այժմ ամենէն կարեւոր կամ ազդեցիկ անդամը նկատուող Դաւիթ Վրդ. Տէրտէրեան (լուսարարապետ) երբ գիշեր մը յետ ճաշու խօսակցութեան ընթացքին, հակառակ ինձ հանդէպ մինչեւ այն ատեն իր պահած վերապահութեան մղուեցաւ կանոնագրի մասին իր սկզբունքային հակառակութեան պատճառները պարզելու եւ ես հետզհետէ կ'աշխատէի ջրել զանոնք, Օրմանեան Սրբազան, ինձ համար բոլորովին ապշեցուցիչ միջամտութեամբ մը սկսաւ Վարդապետին տեսութեան ուժ տալ եւ այս՝ այնքան բուռն համոզումի թափով մը, որ լաւագոյն համարեցի տեղի տալ եւ լռել քան թէ շարունակել վիճաբանութիւնը, որ գայթակղութեան մը հանգամանքը կ'առնէր: Կիւրեղեան էֆ. ներկայ էր այս միջադէպին եւ արդէն բոլոր այս դէպքերը յիշատակուած էին առ Ազգային Ժողով ուղղած եւ չղրկած հրաժարագրիս մէջ:

3.- Օրմանեան Սրբազան կ'ուզէ Ներկայացուցիչը հեռացած տեսնել հոսկէ: Ապացոյց՝ Երբ հոս հասնելէ 2 շաբաթ վերջ, տեսնելով որ դեռ ոեւէ գործի սկզբնաւորութիւն չկայ, յայտնեցի թէ կը խորհիմ 7-8 օր Դամասկոս եւ Պէյրութ այցելել, փութաց պատասխանել թէ լաւ կ'ընեմ եւ թէ այդ առթիւ նոյն տեղերու տեսչութեանց հաշիւները ու վիճակը քննելու պաշտօնն ալ կրնամ կատարել: Այն ատեն հետեւանք չտուի այդ դիտաւորութեանս: Վերջէն, Կիւրեղեան էֆ.ի ներկայութեամբ, կրկին նոյն փափաքը յայտնեցի դիտումնաւոր կերպով: Կիւրեղեան էֆ. ընդդիմացաւ. Օրմանեան Սրբազան Կիւրեղեան էֆ.ի ընդդիմութեան ընդդիմացաւ մինչեւ զայրանալու եւ ինքիրմէ ելլելու չափ, այդ առթիւ անարժան միջոց մըն ալ փորձելով եւ ըսելով ինձ թէ «Կ'ուզե՞մ Կիւրեղեան էֆ.ի հպատակիլ»: Գոհ էի այս լուսաբանութենէն, եւ Կիւրեղեան էֆ.ի այն հաւաստումին վրայ թէ պիտի սկսէին գործելու, որով իմ ներկայութիւնս ալ պէտք պիտի ըլլար, դարձեալ հրաժարեցայ ճամբորդելու գաղափարէն, յայտնապէս դժգոհութիւն պատճառելով Սրբազանին:

4.- Պատկառելի Վարչութեան Լիազօր Պատուիրակ Օրմանեան Սրբազան, որ ամէն իշխանութիւն ունի իր ձեռքը գտնուած պաշտօնագրերուն ուժովը վանքին վարչութիւնը ձեռք առնելու եւ այդպէս ալ յայտարարեց թէ պիտի ընէ, եւ այդ իշխանութեամբ փոխեց ալ արդէն Ելեւմտից Տեսուչը, այժմ եւ ատկէ դուրս՝ կը զգուշանայ սովորական կացութեան ոեւէ միջամտութիւն ընելէ: Պատրիարքութեան առժամեայ հանգամանքով ընտրուած եւ 2½ տարիէ ի վեր գործող Տնօրէն Ժողովը կը ճանչնայ օրինաւոր եւ կը թողու պաշտօնավարել: Տեղապահի Փոխանորդ Սարգիս Վարդապետ Աճէմեանը, որուն պաշտօնն իբրեւ այլեւս աւելորդ պիտի դադրէր, ինչպէս մեր հոս գալէն օր մը վերջն ալ մեզ ըսած էր, կը պահէ միշտ պաշտօնի վրայ սա՛ անհիմն առարկութեամբ թէ պաշտօնատանց եւ դրամատանց մօտ իր ստորագրութիւնը ճանչցուած է: - Տարակոյս չկայ որ երբ Պատուիրակութեան հոս գալէն մօտ 1½ ամիս ետքը տակաւին բոլոր գործերը ըստ առաջնոյն առանց հսկողութեան եւ առանց օրէնքի կ'ընթանան, Պատուիրակութեան եւ իրեն հետ նաեւ Կեդրոնի ազդեցութեան նշանակութիւնը չափազանց կը տկարանայ: Այս՝ ներկայի ընթացիկ գործերու համար: Գալով հիմնական վերակազմութիւն մը կատարելու մտօք ձեռնարկներու, կը ցաւիմ ըսել թէ այս մասին ալ ոչինչ կատարուած է, եթէ նկատի չառնենք բնաւ անմիջական օգտակարութիւն չունեցող եւ միմիայն կարծես ժամանակ անցնելու համար կազմակերպուած վերջին 8-10 տարուան հասութից եւ ծախուց ի նորոյ արձանագրութեան երկար եւ դանդաղ գործողութիւնը: Վստահօրէն գիտեմ թէ իրաց վիճակին այսպէս պահպանումը ջղագրգռութիւն եւ յուսահատութիւն միայն յառաջ բերած է գրեթէ ամբողջ Միաբանութեան մէջ, բացի մէկ քանիներէ, ո-

րոնք յարաժամ շրջապատած են Սրբազանը եւ որոնց տրամադրութեան եւ խորհուրդներուն միայն կարեւորութիւն կու տայ ինք: Այս առթիւ յիշեմ հոս շաբաթ մը առաջ իրեն հետ ունեցած խօսակցութեանս միջոցին, յորում կը յայտնէի գործելու պէտքը, իր տուած սա՛ պատասխանը թէ «առիթի պէտք է սպասել մէկիկ մէկիկ նորութիւններ մտցնելու համար», ինչ որ, եթէ տարբեր նկատումներու ալ ծնունդ չըլլար, պիտի նշանակէր գէթ որոշ ուղղութեան մը արտայայտութիւնը. ուղղութիւն՝ որ սակայն անօգուտ եւ վտանգաւոր է միանգամայն, ըստ որում Միաբանութեան ստուարագոյն մեծամասնութիւնը պատրաստ էր կտրուկ գործողութիւններու հանդէպ գտնուելու, եւ ինչ որ ալ ըլլային՝ զանոնք ընդունելու, միմիայն այն պատճառաւ որ կը փափաքէր մի քանի մենաշնորհեալները ինկած տեսնել, հոգ չէ թէ ի փոխարէն ինքն ալ նոր կարգ-կանոնի լուծին տակ մտնէր: Այս հոգեբանական վայրկեանը գրեթէ անցած է, կամ անցնելու վրայ [է], եւ վաղը դժբախտաբար շատ ուշ պիտի ըլլայ, կը վախնամ, Կեդրոնի իշխանութիւնը ամբողջովին յարգելի ընծայելու համար:

5.- Օրմանեան Սրբազան առհասարակ բոլոր միաբաններու հանդէպ իր կատակող վարմունքովը եւ մի քանիներու հանդէպ իր ծայրայեղօրէն մտերիմ վարմունքովը, նախ վտանգեց Կեդրոնին հեղինակութիւնը ամէնուն վրայ եւ երկրորդ բուռն նախանձ եւ դժգոհութիւն ստեղծեց մեծամասնութեան քով հանդէպ այդ մէկ քանիներուն, որով նաեւ անվստահութիւն հանդէպ Կեդրոնին: Ապա, Ա. երբ Պարգեւ էֆ. Փ[ափազեանը] խարազանահարող վարդապետը առաջին անգամ իր սենեակը այցելութեան եկաւ, Սրբազանը ծիծաղելով ըսաւ թէ «Արդեօք փայտ չունի՞ դարձեալ ծոցը եւ իրեն ալ պիտի չզարնէ՞», Բ. Վարդապետի մը պաշտօն տուաւ վանքին գոյքերը ցուցակագրելու. վարդապետը խստիւ մերժեց, պահանջելով նախապէս իր ունեցած պաշտօնէն արձակման քննութիւնը կատարել, եւ ըսաւ թէ զինք <…> շրջապատողները իր վրայ ազդեցութիւն կը բանեցնեն գործել չտալու համար: Գ. Ուրիշ վարդապետ մը, Հրեշտակապետացի տեսուչ Սամուէլ Վարդապետ, եկաւ խնդրել որ Սրբազանը պաշտօնէն արձակէ զինք եւ հրաման տայ օդափոխութեան երթալու: Սրբազանը տուաւ այդ հրամանը, բայց վարդապետը այնուհետեւ էր որ սկսաւ իր գանգատները յայտնել. «Գործ չես տեսներ», «քուկիններդ քեզի ինչպէս կը հասկցնեն այնպէս կ'ընես», եւայլն ըսել: Այդ հրաժարող վարդապետին պաշտօնը յանձնել ուզեց ուրիշի մը՝ Թովմա Վարդապետի, որ զանազան առարկութիւններով մերժեց, թէպէտ Սրբազանը կը կարծէր թէ այս վարդապետը աւելի համակերպող պիտի ըլլար իրեն: Ե. Այժմ մեկնումի հրաման ստացած եւ Սրբազանին անհաճոյ վարդապետներու թիւը 4ի յանգած է, մինչ Փոխանորդ Սարգիս Վարդապետը, որ նոյնպէս հրաման ուզեց մի քանի օր առաջ մեկնելու, չստացաւ այդ հրամանը, եւ անշուշտ պէտք չէր որ ստանար, թէպէտ միւսներուն այնքան դիւրաւ արտօնութիւն տրուիլը կասկածները շեշտած է թէ Սրբազանը կ'ուզէ իրեններով միայն մնալ, հեռացնելով անոնց դէմ գանգատ ունեցողները:

6.- Օրմանեան Սրբազան կը սիրէ վանքէն դուրս եւ ներս զուարճութիւններ կազմակերպել, որոնց հրաւիրուած են միշտ եւ միայն իր նախընտրած մէկ քանի վարդապետները: Պարոն Տէրի պարտէզին հացկերոյթէն ետք, այս շաբթու կրկին, նոյն ընկերներով եւ այս անգամ վարժարանի աշակերտներն հետն ունենալով գացած են Համբարձման բլուրը ճաշելու: Ասոր հետեւանքը եղած է Միաբանութեան մտքին մէջ աշխատութեան եւ լրջութեան գաղափարին թուլնալը, նախանձին արծարծումը եւ այն քննադատութիւնը թէ ելեւմուտքը հաւասարակշռելու պաշտօնն ունեցող Կեդրոնի պատուիրակը առայժմ իր հաճոյքին համար ծախսելէ զատ ուրիշ բան չ'ըներ:

Արդ, բոլոր այս իրողութիւնները գոյութիւն ունէին արդէն, շատերը ծանօթ էին Կիւրեղեան էֆ.ի եւ այն 1-2 փորձերը զորս ըրի իր մեկնումէն ետք Սրբազանին հասկցնելու թէ իր այս ուղղութիւնը դժգոհութիւններ միայն կ'ստեղծէ եւ ձախողութեան միայն կ'առաջնորդէ, բոլորովին ապարդիւն եղած էին, երբ երեք օր առաջ պատահած նոր դէպք մը ստիպեց զիս վերջացած նկատելու համբերութեան շրջանը եւ վճռական քայլ մը առնելու: Այդ դէպքը հետեւեալն է:

Վանքին մէջ բնակութիւնս բնակարանով, ծառայութեամբ եւ կենցաղով այլեւս անկարելի գտած եւ այս շաբթու սկիզբէն փոխադրուած էի պանդոկ ամսական 10 ոսկւոյ վճարմամբ մը: Մեկնած օրս յայտնեցի Սրբազանին թէ Պատրիարքարանի բաժնին մէջ գրասենեակ մը կ'ուզէի ունենալ՝ ցերեկները գալու եւ եթէ ոչ առայժմ աշխատելու՝ գոնէ նստելու համար: Սրբազանը դժկամակութեամբ պատասխանեց որ «իրենց», այսինքն Փոխանորդին կամ Տնօրէն Ժողովին դիմեմ: Յայտնեցի Փոխանորդ Սարգիս Վարդապետին, որ խոստացաւ տրամադրելի քանի մը սենեակներէն մին 2-3 օրուան մէջ պատրաստել տալ: Յաջորդ օրը Տնօրէն Ժողովը գումարուած է Օրմանեան Սրբազանի նախագահութեամբ (բացառաբար) եւ միւս օրը՝ Չորեքշաբթի, երբ Սարգիս Վարդապետին հարցուցի սենեակի խնդրոյն հետեւանքը, պատասխան ստացայ թէ տրամադրելի սենեակ չկայ, որովհետեւ Եղիշէ Եպիսկոպոս, որ վանքին մէկ ուրիշ կողմը կը բնակի, Պատրիարքարանի իր նախապէս ունեցած երկու սենեակներէն վերջերս թողած մէկ հատն ալ ետ պահանջած է ... ձմեռը հոն բնակելու համար, եւ ասոնցմէ դուրս փոքր սենեակն ալ, զոր ի հարկին ընդունելու պատրաստ ըլլալս յայտնած էի, պիտի չկրնայ ինծի բացուիլ, որովհետեւ մէկ երկու ծառայող միաբաններ կը նստին հոն: Այս մերժումը Սրբազանին հաղորդեցի, որ «ինչ ընենք, տեղ չկայ եղեր»ի պէս պատասխան մը տուաւ նեղուած շեշտով մը: Ըսի թէ «պատրուակ է եւ սխալ է տեղ չըլլալը». ա՛լ չխօսեցաւ, ոչ ալ ես: Նոյն իրիկունը պանդոկէն նամակ մը ղրկեցի Սրբազանին, եւ ըսելով թէ «Պատրիարքարանի մէջ ինծի գրասենեակ մը չտալը կը նշանակէ պարզապէս չճանչնալ պաշտօնս եւ միջոց չտալ գործադրելու», թէ «ինծի համար կարեւոր է գիտնալ թէ Միաբանութիւնը արդեօք այս կարծիքէ՞ն է մեծամասնութեամբ թէ ոչ՝ միմիայն Տնօրէն Ժողովոյ, կամ Փոխանորդին, կամ Ձեր Սրբազնութեան կարգադրութիւնն է», կը խնդրէի «ընդ փոյթ Միաբանական Ընդհանուր Ժողով գումարել եւ ինծի ալ ծանուցանել որպէսզի ներկայ գտնուելով պաշտօնիս վերաբերեալ անհրաժեշտ բացատրութիւնները ժողովին տամ եւ անձամբ գիտնամ Միաբանութեան տրամադրութիւնը»: Այս նամակիս Սրբազանը պատասխանեց թէ «սենեակներու խնդրով ինք չզբաղիր, թէ կրնայի նախորդ սենեակս պահել, թէ ներկայացուցչական պաշտօնիս գործադրութիւնը կապուած է Պօլսոյ մէջ խնամակալութեան գործի սկսելուն հետ. թէ Կեդրոնին կողմէ պատուիրակութեան միջոց մը տրուած ըլլալով գետինը պատրաստելու՝ այդ միջոցը տակաւին կը տեւէ, եւ թէ, վերջապէս, [Միաբանական] Ընդհանուր Ժողով գումարելու պատեհը պատուիրակութեան խոհականութեան եւ գնահատութեան թողուած ըլլալով, տիրող մտայնութեան եւ շարունակուող կացութեան պարագաները զինք չեն քաջալերեր գործը այսպիսի փորձի մը ենթարկել»: Նոյնիսկ պատասխանեցի հետեւեալը.

«Պաշտօնիս ճանաչումը եւն...»[48]: Այս նամակը ղրկելէ ետք երբ մինչեւ երեկոյ

[48] Կը թուի թէ Թէքէեան արտագրած է բովանդակութիւնը 12/25 Յունիս թուակիրի համապատասխան պարբերութեան:

ոեւէ պատասխան չեկաւ (ճիշդ Համբարձման բլուր գացած օրերնին էր), ծանօթ հեռագիրս տուի Ձեր Սրբազնութեան: Յաջորդ առաւօտուն Օրմանեան Սրբազան կը պատասխանէր հետեւեալը. «Ձեր պաշտօնին հրատարակութիւնը եւն...»[49]: Իսկ ես աւելորդ նկատեցի այլեւս այս նամակին պատասխանել, միայն պէտք կ'զգամ Ձեր Սրբազնութեան եւ Պատկառելի Ժողովիդ յայտնելու թէ «պաշտօնապէս կամ կէս պաշտօնապէս դիմումներ ընդունիլ եւ խորհրդակցութիւններ կատարելը» կը վերաբերի մի քանի դժգոհ վարդապետներու սենեակս տուած այցելութեանց, որոնց հետ ունեցած խօսակցութիւնս կրկնած եմ միշտ սակայն Սրբազանին, երբեք զիրենք չեմ քաջալերած մինչեւ այժմ, եւ երբեք Սրբազանին հետ տարակարծութիւն մը յայտնած չեմ մինչեւ երէկ: Գալով Պօլիս մեկնելու յայտարարութեանս տուած պատասխանին, անիկա անգամ մը եւս կը յայտնէ եւ կը հաստատէ ինչ որ գրեցի արդէն վերերը:

Արդ, այստեղ գալէ, Երուսաղէմի մէջ ազգին դիրքը, վանքին հարստութիւնը եւ կարեւորութիւնը տեսնելէ ետք, բոլորովին կը խղճամ ներկայ կացութեան վրայ եւ աւելի քան երբեք կ'ուզեմ դիւրացնել ոեւէ կերպով անոր կարգադրութիւնը: Այս պատճառով, հակառակ պարտականութեանս, կ'զգուշանամ դեռ խնդիրը Ազգային Ժողովին հանելէ: Բայց խորապէս համոզուած եմ որ այս ընթացքին շարունակութիւնը ոչինչ չի լուծեր, ընդհակառակը աւելի կը վատթարացնէ կացութիւնը: Սա՛ ալ ըսեմ, թէ Օրմանեան Սրբազանի ընթացքին գաղտնիքին շատոնց թափանցած եմ. իմ դիրքս չէր ներեր այդ մասին իրեն յոյսեր ներշնչել, ինչպէս իմ ներկայութեանս քանիցս ըրին իր մտերիմ վարդապետները՝ մեծ հաճոյք պատճառելով իրեն: Բայց թերեւս շատ ալ հեռու չէի նոյնը փափաքելէ, եթէ այս ուղղութիւնը չի բռնէր ինք[50]: Այդ գաղտնիքը այժմ բոլոր Միաբանութեան համար յայտնի եղած է, եւ ստուար մեծամասնութիւնը որ դժգոհ մնացած է ոչ թէ կատարուած գործողութիւններէն այլ գործողութիւն կատարուած չըլլալուն համար, որոշապէս պիտի ընդդիմանայ այնպիսի բանի մը, զոր իր իրաւունքներուն բռնաբարումը կը նկատէ: Այսպէս, Սրբազանը, հակառակ իր խելքին՝ անգամ մը եւս կը սխալի իր փառասիրութեան եւ «գգուանսիրութեան» պատճառաւ: Իրեն համար իսկ, երբ վերջնականապէս մնայ այստեղ, կացութիւնը չափազանց դժուար պիտի դառնայ, Ազգային Ժողովոյ ներկայացուցիչ մը իր քով գտնուի թէ չգտնուի: Իսկ այն պարագային որ ինքը մեկնի, հաստատած առերեւոյթ հանդարտութիւնը, որ մեր գալէն առաջ ալ կար արդէն, յո-

---

[49] Կը թուի թէ Թէքէեան արտագրած է բովանդակութիւնը 13/26 Յունիս թուակիրի համապատասխան պարբերութեան:

[50] Թափանցիկ է Թէքէեանի ակնարկութիւնը թէ Օրմանեան կը փափաքէր պատրիարք դառնալ եւ ի՛նք ալ Օրմանեանը յարմար թեկնածու կը նկատէր, բայց կը զգուշանար այդ ուղղութեամբ որեւէ յուսադրիչ արտայայտութիւն ունենալէ: Գաղափար մը ունենալու համար Թէքէեանի պարկեշտութեան եւ անաչառութեան մասին, տեղին է նշել հետեւեալը: *Արեւի* 9 Յունուար 1943ի համարին մէջ (թիւ 7312) «Օրմանեանի ինքնադատաստանը» խորագրով *Խոհք եւ խօսք*ի «ամենէն լաւ գրուած մասերէն» մին կազմող վերջին գլուխներէն մէկը ներկայացնելու առիթով, Թէքէեան խմբագրական նշումի մը մէջ կ'ըսէ. «Այս գլուխը այլապէս ալ կարեւոր է՝ ցոյց տալուն համար սքօղուած բայց անպարտկելի կերպով հեղինակին նկարագիրը իր դրական գիծերուն հետ նաեւ ժխտական գիծերով...» ու կ'աւելցնէ թէ հոն «կ'երեւի կարգ-կանոնի, վարչագիտութեան եւ անշուշտ նաեւ ազգասէր ու հոգեսէր մարդու եզական պատկերը»:

ռեգոյն կերպով պիտի խանգարուի ու այս անգամ գուցէ անդարմանելի ըլլալու աստիճան: Իմ մասիս, կ'սպասեմ տեսնելու թէ Պատկ. Ժողովիդ միջամտութիւնը ոեւէ փոփոխութիւն պիտի ներմուծէ՞ արդեօք: Եթէ այո՛, քիչ մը եւս կը մնամ անկէ վերջ, ու կը թողում պաշտօնս ուրիշ փափաքողի մը: Եթէ ոչ, անմիջապէս կը մեկնիմ, գործն ու պատասխանատուութիւնը՝ որմէ չի խուսափիր՝ թողլով Սրբազանին:

Մնամ ամենախոնարհ յարգանաց հաւաստեօք

Ներկայացուցիչ

[Վահան Թէքէեան][51]

ԺԲ.

Յաջորդ նամակէն բացորոշապէս կը հասկցուի թէ Թէքէեան նամակ մը ուղղած է Շահրիկեանի, որուն սեւագիր պատճէնը, ի տարբերութիւն իր այստեղ ներկայացուող նամակներուն, չէ պահած կամ չէ պահպանուած:

Պերայ, 15/28 Յունիսի 1914

Յարգելի Տիար Վ. Թէքէեան

Երուսաղէմ

Ամսոյս 3/16 անդրանիկ նամակնիդ այսօր ստացայ: Շնորհակալ եմ: Ձեր հաղորդած տեղեկութիւնները ինձ չի զարմացրին. այդպէս էլ սպասում էի. հակառակը հրաշք պիտի լինէր: Ձեր նամակը ինձ չը հասած՝ դուք տեսած կը լինէք մեր թերթի այն համարը՝ ուր խմբագրականով կանխատեսուած ու հրապարակ էր դրուած ձեր հաղորդածների ամփոփումը[52]:

Բայց դուք Ազգային Ժողովին ո՛չ թէ հրաժարագիր՝ այլ տեղեկագիր էք ղրկելու: Ձեր առաջին եւ մեծագոյն ծառայութիւնը պիտի լինի այն՝ որ մասնաւոր նամակով գրածները ի պաշտօնէ ուղղակի Ազգային Ժողովին տեղեկագրէք, ամբաստանէք Վարչութեան եւ Պատուիրակութեան եւ պահանջէք տնտեսական մարմինը: Աւելին կ'ասեմ. ձեր տեղեկագրին մէջ մտցնելու էք նախ քան այստեղից մեկնելը անցուդարձերը, Պատրիարքի ցոյց տուած վերաբերմունքները, գործ դրած միջոցները՝ որոց պատմութիւնը արել էք մեզ եւ որ պատճառ եղաւ, ինչպէս յիշում էք, Պատրիարքի մօտ մեր բացատրութիւն պահանջելու գնալուն:

Եթէ դուք այս տեղեկագիրնիդ չը փութացնէք, Օրմանեան պիտի փութացնի նոր առաջարկը, որից յետոյ՝ եթէ դուք բողոքէք կամ տեղեկագրէք, շատ դժուար կը լինի առաջը առնել:

Եթէ դուք փոխանակ տեղեկագրելու՝ հրաժարական ղրկէք, դուք տուած պիտի լինէք մեծագոյն հարուածը Երուսաղէմի խնդրին, մաքրագործութեան դատին, եւ ես մեծ յոյս, հաւատը ունեմ որ այդ դուք չէք անի: Դուք կարող էք միայն ասել, որ եթէ չը պիտի ղրկուի տնտեսական մարմինը, եթէ թոյլ պիտի տրուի Օրմանեանական քաղաքականութեանը, աւելորդ կը լինի ձեր Երուսաղէմ մնալը եւ ի զուր ռոճիկ ստանալը:

Ձեր բարոյականի վրայ ո՛չ ոք կը կասկածի եւ ո՛չ ոք տեղի ունի ասելու որ դուք այդ պաշտօնին եւ ռոճիկին տիրանալու հետամտել էք:

---

[51] ՊՏԴ, տուփ 9, թղթապանակ LMN51, Ը975–Ը976:

[52] Ակնարկութիւնը որոշապէս կը վերաբերի *Ազատամարտի* մէջ հրատարակուած խմբագրականի մը, որուն մասին ոչ մէկ ծանօթութիւն կրնանք տրամադրել՝ ձեռքի տակ չունենալով թերթին տուեալ շրջանի համարները:

Դուք քաջութիւնը ունեցաք ստանձնելու մի կարեւոր դեր, խնդրում եմ կէս ճանապարհին չը թողել եւ քաջաբար մինչեւ վերջը տանել. այդ դերը պատմական պիտի լինի:

Այս օր իսկ գրեցի Խօճասարեանին[53] որ գաղափարակից նեղ շրջանակի հաւաքոյթ կատարուի՝ ձեր գրածները կարդալու համար: Այս տեղ պէտք եղածները զանց չեն առնուի, բայց *վահան*ը ձեզնից է գալու, ձեր տեղեկագիրն է լինելու:

Յարգալիր բարեւներով

[Շահրիկեան][54]

ԺԳ.

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ԽԱՌՆ ԺՈՂՈՎ
ԱԶԳ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ՀԱՄԱՐ 317

Կ. Պոլիս, 8 Յուլիս 1914

Ազնուաշուք
Վահան Էֆէնտի Թէքէեան
Ներկայացուցիչ Ազգ. Ժողովոյ Երուսաղէմի
ի Գահիրէ

Ստացանք նախորդ ամսոյ 30ին Յոպէէն Ձեր Ազնուութեան ուղղած հեռագիրն, որով կը ծանուցանէիք թէ՝ կը մեկնիք Գահիրէ, եւ հոն կ'սպասէք հրահանգի. ինչպէս արդէն ընդունած էինք Երուսաղէմէն Յնս. 14ի Ձեր ընդարձակ նամակը՝ Ձեր մեկնելու պատճառներու մասին:

Կը տեսնենք որ պարզ թիւրիմացութիւններ առիթ եղած են Ձեր դժգոհութեանց, եւ այն աստիճան որ ինքզինքնիդ հարկադրուած զգացած էք լքել վանքը ու մեկնիլ, ինչ որ ցաւ պատճառեց մեզ եւ Ազգ. Կեդր. Վարչութեան:

Այն շարժառիթներն՝ զորս առաջ կը բերէք իբրեւ պատճառ Ձեր անակնկալ մեկնումին, կրնային կարգադրուիլ փոխադարձ հասկացողութեամբ, եւ ի հարկին Կեդրոնին միջամտութեամբ, որպէսզի սկսուած բարենորոգչական գործ մը՝ թէ՛ Ձեր եւ թէ՛ մեր պատուիրակներուն միջոցաւ ի գլուխ ելնէր:

Ձեր Ազնուութեան պաշտօնն Ազգային Ժողովէն սահմանուած կանոնագրով արդէն ճշտուած է, եւ պիտի սկսի այն օրէն, երբ կանոնագիրը դրուի գործադրութեան: Իսկ առայժմ լոկ ուսումնասիրութիւններ են՝ որք առարկայ պիտի ըլլան Ձեր ուշադրութեան եւ անոնց պէտքն կը յուսամք որ դուք իսկ կ'զգաք, ցորչափ անծանօթ էք միջավայրին, անձանց ու հանգամանաց:

Իբրեւ տեղեկութիւն կը հաղորդենք Ձեզ թէ՝ վարչական պատուիրակ Գէորգ Էֆէնտի Կիւրեղեանի տեղ, որ վերադարձած է Պոլիս, այս անգամ նոր ընտրութեամբ վարչական պատուիրակ կարգուած է Քաղ[աքական] Ժողովոյ անդամներէն Ազն.

---

[53] Հայկ Խօճասարեան անդամ էր Ազգային Երեսփոխանական Ժողովի Նախաձեռնութեան Դիւանին եւ գլխաւոր դէմքերէն մին էր որպէս «Կեդրոն» ճանչցուած երեսփոխանական խմբակցութեան:

[54] ՊՏԴ, տուփ 4, թղթապանակ Թ, Թ18:

Բարսեղ Աւետիսեան Էֆէնտին, որ ի մօտոյ կը մեկնի ի Ս. Երուսաղէմ[55], գլխաւորաբար գործակցելու եւ փութացնելու համար պատուիրակութեան աշխատութիւնները:

Գալով Ձեր թոշակին վճարման, ինչպէս նաեւ յարմարագոյն սենեակի խնդրոյն, արդէն կարեւոր հրահանգները տրուած են Ամեն. Տ. Մաղաքիա Սրբազանի, որով այդ մասին ալ խնդիր չմնար, եւ քաղցր է մեզ յուսալ որ՝ Ձեր Ազնուութիւնն՝ աւելի ոգեւորուած Ս. Աթոռին օգտին ու պայծառութեան նախանձախնդրութեամբ, փափագուած համերաշխութիւնը պիտի արդիւնաւորէ ի պայծառութիւն Ս. Աթոռոյն:

Այս մասին գրած ենք վարչական պատուիրակ Ամեն. Տ. Մաղաքիա Սրբազանի՝ յԵրուսաղէմ, եւ կը հրաւիրենք զՁեզ մեր Յունիս 30 թուականաւ հեռագրին համաձայն վերադառնալ ի Ս. Երուսաղէմ, ուր կարեւոր է Ձեր ներկայութիւնը:

Մնամք Աղօթարար
Պատրիարք Հայոց Թուրքիոյ
Զաւէն Արքեպ. Տէր Եղիայեան[56]

ԺԴ.

9 Յուլիս [1914] թուակիր հեռագրով, ուղղուած Երուսաղէմի վանք՝ Թէքէեանի ուշադրութեան, երբ ան արդէն մեկնած էր Երուսաղէմէն, Զաւէն Պատրիարք կ'ըսէ. «Վճարելու հրահանգ ղրկած ենք Օրմանեան Սրբազանին: Սպասեցէք Խառն Ժողովի որոշումին»[57]:

Copie

Երս., 27/10 Յուլիս 1914

Ամեն. Տ. Զաւէն, Պատր. եւ Նխգի. Խառն Ժողովոյ

Կը հաստատեմ հետեւեալ հեռագրերու փոխանակութիւնը. Յուլիս 7 (իմս), Յուլիս 8, ստ[ացուած] 9ին (Զաւէն Պատր.), Յուլիս 9 (իմս)

Սպասելով սոյն վերջին հեռագրիս պատասխանին, պատիւ ունիմ յայտնելու Պատկ. Ժողովոյդ թէ, ինչպէս հեռագրէս ալ կը հասկցուէր, վճարման խնդիրը այժմ սերտ կերպով կապուած կը նկատեմ բողոքիս տրուելիք գոհացման հետ, եւ երբեք չեմ կրնար ընդունիլ որ մին միւսէն նոյնիսկ մէկ օրով անջատուելով խնդիրը այն երեւոյթն առնէ որ դրամական մասին գոհացումը առաջնակարգ կը համարեմ քան բարոյական մասին՝ այսինքն՝ վարչական պատուիրակին կողմէ Ազգային Ժողովոյ Ներկայացուցչին կրել տուած նուաստացման մասին բողոքիս գոհացման: Այս պատճառաւ ստիպուեցայ տալ Բ. հեռագիրը, որուն պարունակութիւնը կը կրկնեմ հոս, այն է *«Վճարումը կը մերժեմ առանց կացութեան յստակ եւ անմիջական կարգադրութեան»*: Անշուշտ այս չի նշանակեր թէ նիւթական իրաւունքներէս կը հրաժարիմ, այլ կը նշանակէ միայն թէ *ներկայիս* զայն չեմ ուզեր անջատել խնդրոյն ամբողջութենէն մինչեւ Պատկ. Վարչութեանդ կողմէ անոր մասին տրուելիք որոշումը, թէպէտ չափազանց զարմանալի կը գտնեմ միեւնոյն ատեն որ մինչեւ այժմ (Պօլսէն մեկնումէս 2 ամիս ետքը) Պատկ. Վարչութիւնդ տակաւին հաղորդած չըլլայ ուղղակի կամ իր պատուիրակին միջոցաւ այստեղ Միաբանութեան, այդտեղ տրուած ո-

[55] Բարսեղ Աւետիսեան՝ պարագլուխներէն մին Ազգային Երեսփոխանական Ժողովի դաշնակցական խմբակցութեան եւ անդամ՝ անոր Յարաբերական Դիւանին, պիտի չկարենար Երուսաղէմ մեկնիլ:

[56] ՊՏԴ, տուփ 4, թղթապանակ Թ, Թ11–12:

[57] ՊՏԴ, տուփ 9, թղթապանակ LMN51, Ը941:

րոշումը ի մասին ինձի տրուելիք ամսաթոշակին: Գոնէ այսպէս կ'ըսէր Օրմանեան Ս. Կիւրեղեան Էֆ.ի մեկնած օրը (Յունիս 3, Ն[որ] Տ[ոմար]) եւ այսպէս է որ այսօր, Յունիսի վերջը, Մայիսի ամսաթոշակն ալ դեռ վճարուած չէ ինձի:- Աւելցնեմ նաեւ որ Ձեր Սրբազնութեան հեռագիրը ստանալէ եւ պատասխանելէ ետք, Վանք գացի երէկ, ուր դիմեցի ելեւմտից տեսուչ Գայլրգճեան Վարդապետի, որուն յայտնեցի իսկ ստացած հեռագիրս: Վարդապետը պատասխանեց թէ ինք ոեւէ տեղեկութիւն չունի, որու վրայ խնդրեցի իրմէ հաղորդել դիմումս Օրմանեան Ս.ի, եւ յայտնել թէ երբ այս մասին ինձի լուր մը ղրկէ՝ պատրաստ եմ վանք երթալու: Անշուշտ՝ եթէ կանչէր՝ միեւնոյնը պիտի յայտարարէի ինչ որ յայտնած եմ արդէն հեռագրիս մէջ, բայց մինչեւ այժմ (օր մը ետքը, երեկոյ) Սրբազանը ոեւէ լուր չէ ղրկած:

Կ'կարծեմ [sic!] հասկնալ Ձեր Սրբազնութեան հեռագրին Բ. մասէն թէ Պատկ. Խառն Ժողովը տակաւին որոշում մը տուած չէ իմ ներկայացուցած խնդրոյս մասին: Արդ, իմ ընդարձակ տեղեկագիրս գրած եւ թղթատարին յանձնած եմ 14/27 Յունիսին, որով 11 օր անցած է արդէն Ձեր հեռագիրը տրուած ատեն, ինչ որ բաւական երկար ժամանակ մըն է արդէն՝ ստիպողական խնդրոյ մը համար: Ատկէ զատ, Ձեր Սրբազնութիւնը իր 26 Յունիսի (Ն.S.) հեռագրին մէջ կ'ըսէր «Attendez lettre»[58], մինչդեռ ոեւէ նամակ ստացած չեմ ցարդ:

Ութ օր առաջ ի լրոյ իմացայ թէ կառավարութեան թարգմանը վանք գալով, Փոխանորդ Աճէմեան Վարդապետի պաշտօնէ դադրած ըլլալը իմացուցած եւ աւելցուցած է, ի պատասխան Տնօրէն Ժողովոյ կողմէ մեր գալէն քիչ առաջ տրուած թագրիրի[59] մը - ուր ըսուած է եղեր թէ Պատուիրակութիւնը կ'ընդունին գործոց կարգադրութեան եւ Պատրիարքի ընտրութեան համար, բայց ո՛չ նոր կանոնագրի գործադրութեան համար - թէ կառավարութիւնը ոեւէ նոր կանոնագիր չի ճանչնար եւ Պատուիրակութիւնը այդպիսի պաշտօն մը չունի: Անշուշտ Վարչական Պատուիրակը Պատկ. Ժողովիդ տեղեկագրած է զայս: Եթէ իրողութիւնը այսպէս է, իմ մասիս բաւական տարօրինակ կը գտնեմ զայն... Իսկ Աճէմեան Վարդապետի փոխանորդական պաշտօնէն դադրիլը 1 օր միայն տեւած է. Օրմանեան Ս.ի կարգադրութեամբ ըստ առաջնոյն յիշեալը կը շարունակէ պաշտօնավարել:

Նկատելով որ Պատկ. Վարչութեանդ որոշում մը տալն եւ ինձի հաղորդելը կրնայ դեռ օրեր տեւել՝ նոյն իսկ նպաստաւորագոյն հաշուով, մտադիր եմ վաղը կամ միւս օր Եգիպտոս անցնիլ եւ հեռագրել Ձեզ թէ այնտեղ կ'սպասեմ որոշման, ըստ այնմ վերադառնալու համար կա՛մ Երուսաղէմ եւ կա՛մ Պօլիս:

Մնամ խորին յարգանօք

Վ. Թ.

Ներկայացուցիչ Ազգ. Երեսփ. Ժողովոյ Երուսաղէմ[60]

ԺԵ.

Թէքէեան, իր սաղիմական թղթածրարին մէջ պահպանած է պատճէնը անթուակիր նամակի մը (իսկութեան մէջ՝ 6 Օգոստոս 1914 թուակիր, ըստ Օրմանեանի սփորեւ ներկայացուող նամակի պատճէնին), ուր կ'ըսուի.

Ինչպէս յայտնի է, Ազգ. Ժողովոյ Երուսաղէմի ներկայացուցիչ Թէքէեան մօտաւորապէս ամիսէ ի վեր Եգիպտոս կը գտնուի:

---

[58] Սպասեցէք նամակի:

[59] Պաշտօնագիր:

[60] ՊՏԴ, տուփ 9, թղթապանակ LMN51, Ը988:

Քանի մը օր առաջ՝ [Կոստանդնուպոլսոյ] Ս. Պատրիարք Հայրը գրած էր իրեն վերադառնալ իր պաշտօնատեղին, որուն համաձայն Թէքէեան Եաֆա կը մեկնէր այսօր, սակայն ազգային տեղական կարեւոր խնդրոյ մը մէջ այստեղ իր ներկայութիւնը անհրաժեշտ դատելով՝ հրաւիրեցինք գէթ շաբաթ մը յետաձգել իր մեկնումը:

Թէքէեան ընդունեց մեր առաջարկը, սակայն խօսակցութեան միջոցին յայտնեց թէ Ս. Պատրիարքը գրած ըլլալով իրեն որ Ձեր Սրբազնութեան հաղորդուած է կարգադրել նաեւ իր ամսաթոշակներու պահանջքը, պիտի չկրնայ հոս մնալ՝ եթէ այդ պահանջքէն գոնէ մէկ ամսաթոշակը՝ երեսուն օսմ. ոսկի, փութով չստանայ: Ըստ այսմ, իմացնելով Ձեր Սրբազնութեան, պիտի խնդրէի որ հաճէիք Credit Lyonnaisի կամ Banque Ottomaneի միջոցաւ հեռագրով այդ գումարը ղրկել Աղեքս[անդրիա] Առաջնորդարանիս անուան:[61]

ԺԶ.

Բնագրին մէջ կատարուած ջնջումներ եւ յաւելումներ կը թողուն տպաւորութիւնը թէ Թէքէեան ի՛նք հեղինակած է նամակը, զոր Թորգոմ Եպսկ. Գուշակեան (1874–1940) յղած է Մաղաքիա Արքեպս. Օրմանեանի:

Աղեքս. 2/15 Օգս. 14

Ամեն. Տ. Զաւէն

Պատրիարք եւ Նախագահ Ազգ. Կեդր. Վարչութեան

Կ. Պօլիս

Ձեր Սրբազնութեան 8 Յուլ. եւ համար 327 պաշտօնագիրը հազիւ 1 շաբաթ առաջ այստեղ ստանալու պատիւը ունեցայ:

Ես եւս կը ցաւիմ որ բազմաթիւ հեռագրերու փոխանակութենէն եւ երկու տեղեկագրերուս առաքումէն ետք՝ այսքան ուշ միայն կ'ստանամ Ձեր Սրբազնութեան գրութիւնը, որ Ձեր հեռագրով իսկ ծանուցուած էր: Ա՛լ աւելի կը ցաւիմ որ առանց ներկայացուցած իրողութիւններուս մասին <…> ընելու, Ձեր Սրբազնութիւնը եւ Պատկ. Վարչութիւնը «պարզ թիւրիմացութիւններ» կ'անուանէ զանոնք, երբ խնդիրը կը դառնայ Ազգ. Ժողովոյ պատիւն ու որոշումը յարգել կամ ոտնակոխ ընել տալու շուրջը: Այս պատճառաւ, մերժելով հանդերձ թիւրիմացութիւն բառը որ ինծի յանձնուած պաշտօնին գիտակցութիւնը չունենալս պիտի նշանակէր, գոհութեամբ կը հաստատեմ միւս կողմէ որ Պատկ. Վարչութիւնը խնդիրը բաւական լուրջ նկատած է, քանի որ զայն կարգադրելու համար իր մէջէն նոր աշխարհական պատուիրակի առաքումը հարկ դատած է, ինչպէս եւ, Ձեր Սրբազնութեան ծանուցման համաձայն, սենեակի եւ թոշակի խնդրոց համար պէտք եղած «կարեւոր հրահանգները» տուած է Ամեն. Մաղաքիա Սրբազանին: Առանց ատոնց, իմ ներկայութիւնս Երուսաղէմի մէջ բացարձակապէս աւելորդ եւ անկարելի ըլլալով, հարկ համարեր էի Եգիպտոս գալ եւ սպասել անոր գործադրութեան լուրին, մասնաւորապէս վարչական նոր պատուիրակ Բ[արսեղ] Աւետ[իսեան] էֆ.ի մեկնման, որուն հետ միասին յարմար կը գտնէի դառնալ Երուսաղէմ: Ինչպէս բոլոր այս խնդրոյն ընթացքին հետեւած ուղղութենէս յայտնի եղած է Ձեր Սրբազնութեան, յօգուտ գործին եւ ի յարգանս Ազգ. Վարչութեան եւ իր Սրբազան Նախագահին, իմ ջանքս եղաւ խնդրոյն վարչական շրջանակի մէջ կարգադրութիւնը, Ազգ. Ժողովոյ առջեւ զայն հրապա-

[61] ՊՏԴ, տուփ 9, թղթապանակ LMN51, Ը969:

րակելէ առաջ, եւ այս է պատճառը որ մինչեւ իսկ չուզեցի ճշտել լրագրական խեղաթիւրուած եւ նպատակաւոր հրատարակութիւնները:

Ինչպէս ըսի, կ'սպասէի Բ. Ա. էֆ.ի Պօլսէն մեկնելու լուրին. սակայն անցեալ շաբթու տեսնելով պատերազմի առթիւ կացութեան փոփոխութիւնը, որ հաւանօրէն անկարելի ըրած էր պատուիրակին մեկնումը, պատրաստուեցայ Երուսաղէմ դառնալ եւ ըստ այնմ յաջորդ օրը Աղեքսանդրիայէն մեկնող փոքրիկ նաւով մը դէպի Եաֆա ճամբորդել որոշած, գացի մնաք-բարով ըսել տեղւոյս Առաջնորդ Գեր. Թորգոմ Եպս.ի: Առաջնորդ Հայրը, տեղւոյս մէջ ծագած խիստ կարեւոր ազգային խնդրոյ մը համար աջակցութիւնս պահանջելով, ստիպուեցայ գէթ շաբաթ մը եւս մնալ, ինչ որ Եգիպտոսի երեսփոխանութեան հանգամանքով ի վերջոյ չկրցայ մերժել: Դժբախտաբար, նոր դէպքերու վրդովիչ բնութիւնը թոյլ պիտի չտայ որ մէկ քանի օրէն մեկնիմ: Առաջնորդ Հայրը ասիկա ծանոյց Ամեն. Օրմանեան Ս.ի, իմ կողմէն խնդրելով նաեւ որ յետամնաց 3 ամսաթոշակներէն միոյն փոխարժէքը իսկոյն հոս փոխադրէ հեռագրաւ: Սպասելով այն կարգադրութեան, որ արդէն ուշացած է, ներկայիս կը խնդրեմ Ձեր Սրբազնութենէն ալ որ հաճիք Պօլիս գտնուող եղբօրս, Ճ[իւան] էֆ. Թէքէեանի, վճարել քսան օ[սմանեան] ո[սկի] ի հաշիւ ամսաթոշակներուս, ինչպէս գրած եմ իրեն որ ներկայանայ պատրիարքարան սոյն գումարը գանձելու համար: Բաց աստի, պիտի խնդրէի որ հաճէիք պէտք եղած կարգադրութիւնը ընել այդտեղ եւ ինձ իմացնել անմիջապէս, որ Երուսաղէմ դարձիս խնդիր չունենամ զինուորական իշխանութեան հետ[62], առանց որու բոլորովին անիմաստ պիտի ըլլար այս պահուս հոն գտնուիլը:

Յուսալով որ Ձեր Սրբազնութիւնը պիտի հաճի բարեացակամօրէն գոհացում տալ այս երկու կէտերուն, որոց առաջինն արդէն ոեւէ առարկութիւն չի կրնար յարուցանել քանի որ թոշակին Պօլիս կամ Երուսաղէմ վճարումը նոյնն է եւ արդէն որոշուած է, իսկ երկրորդ կէտն ալ ամենակարեւոր է պաշտօնին գործադրութեան համար,

Մնամ որդիական խորին յարգանօք

Վ. Թ.

Ներկայացուցիչ ...

Հասցէ՝ Առաջնորդարան Հայոց Աղեքսանդրիոյ[63]

ԺԷ.

Պատճէն
Աթոռ
Առաքելական
Երուսաղէմ

16 Օգոստ.ի 1914 ամի

Համար 88
Գեր. Տ. Թորգոմ Ս. Եպս.
Առաջնորդ Եգիպտոսի

---

[62] Պարտադիր զինուորագրութեան նոր օրէնքով կը նախատեսուէր զէնքի կոչել մինչեւ 45 տարեկանները: Թէքէեան 1914ին ընդամէնը 36 տարեկան էր: Առանց զերծ կացուցուած ըլլալը հաստատող պաշտօնաթուղթի, Թէքէեան կրնար ձերբակալուիլ:

[63] ՊՏԴ, տուփ 9, թղթապանակ LMN51, Ը989:

յԱղեքսանդրիա

Գերապատիւ Սիրելի,

Ստացայ Օգոստ. 10ի գրութիւննիդ, որով կը միջնորդէք որ Պն. Թէքէեան էֆ.ի գումար մը վճարուի:

Իրաւ ժամանակով այսպիսի յանձնարարութիւն մը եղաւ Ազգ. Պատրիարքարանէն, բայց մեր տուած բացատրութեանց վրայ խնդիրը փակուեցաւ եւ չկրկնուեցաւ:

Թող որ եթէ կրկնուած ալ ըլլայ, վանական մատակարարութիւնը ծանրապէս զգացած է ժամանակի տագնապը եւ հացի դրամ ճարելու իսկ դժուարութիւն կը կրէ:

եւն. եւն. եւն.

Ողջունիւ սիրոյ մնամ սիրելութեանդ աղօթակից

(Ստոր[ագրութիւն]) Մաղաքիա Արք. Օրմանեան[64]

ԺԸ.

Ս. Յակոբեանց միաբան Կիրակոս Վարդապետ Մարգարեան Սիսի մայրավանքէն 11/24 Յուլիս 1914ին Թէքէեանի կը գրէ.

Ի մասին զեղծարար վարդապետներու վանքէն դուրս հանելու խորհուրդէդ գոհ եւ ուրախ եմ. միթէ զեղծարարները դուրս հանելով իրենց ձեռքով եղած 40 հազար լիրա եղած պարտքը պիտի վճարուի՞. ոչ. պարտքը դարձեալ վանքին վրայ պարտք պիտի մնայ. ինչ ընելու է: Ես խորհուրդ պիտի տայի ձեզ յօրինակ այլոց յանկարծ այդ զեղծարար վարդապետներու սենեակները կնքելով եւ իրենց շարժական եւ անշարժ կալուածնին գրաւել մօրուքնին գերծել տալով դուրս ընելու է, եթէ ոչ ըսել կ'ուզուի թէ գացէք այդ ձեր գողցած դրամները անուշ անուշ վայելեցէք ... հետ[65]:

ԺԹ.

Պատճէն

Աղեքս. Օգս. 19/Սեպտ. 1 1914

Ամեն Տ. Զաւէն Ս.

Պատիւ ունիմ հաստատելու տեղէս 2/15 Օգս. թուականաւ գրած նամակս, որմէն վերջ ստացայ Գահիրէէն հոս ղրկուած հետեւեալ հեռագիրը զոր Ձեր Ս.ը ինձ ուղղած էր 9/22 Օգս.ին

....

Հասկնալով որ այս հեռագիրը տրուած պահուն նամակս ստացուած չէր տակաւին, աւելորդ համարեցի հեռագրաւ պատասխանել, մանաւանդ թէ կ'սպասէի Երուսաղէմէն Օրմանեան Սրբազանի առ Թորգոմ Սրբազան տալիք պատասխանին եւ թէ այստեղէն Թուրքիա հեռագրի ծախքը բաւական սուղ է:

Արդ, Օրմանեան Ս. պատասխանեց Թորգոմ Ս.ի, հետեւեալ բառացի պարունակութեամբ...[66]

Ձեր Սրբազնութեան 8 Յուլիս թուակիր պաշտօնագիրը կը յայտնէր թէ «սենեակի եւ թոշակի խնդրոց կարգադրութեան համար պէտք եղած կարեւոր հրահանգները տրուած են Ամեն. Մաղաքիա Ս.ի», մինչ Ամեն. Մաղաքիա Ս. կը գրէ, ինչպէս

---

[64] ՊՏԴ, տուփ 9, թղթապանակ LMN51, Ը990:

[65] ՊՏԴ, տուփ 4, թղթապանակ Թ, Թ13:

[66] Թէքէեան այստեղ կ'արտագրէ Օրմանեանի նամակը՝ «*Ստացայ*էն ... մինչեւ դժուարութիւն կը կրէ»: Տեսնել Օրմանեան Արք.ի 16 Օգոստոս թուակիրը:

կը տեսնէք, որ իր տուած բացատրութեանց վրայ այդ խնդիրը փակուած է եւ կրկնուած չէ»: Եթէ կատակերգութիւն մը չէ ասիկա, ուրեմն Օրմանեան Ս. բարձրագոյն իշխանութեամբ մը կը տնօրինէ ամէն ինչ, արհամարհելով թէ՛ Ազգային Ժողովին եւ [թէ՛] Պատկառելի Վարչութեան որոշումները: Ասով կ'ապացուցուի անգամ մը եւս իմ դիտողութիւններուս հիմնաւորութիւնը:

Ինչպէս Գերաշնորհ Թորգոմ Ս. կը գրէ Ձեզ, հակառակ այս յոյժ աննպաստ պայմաններուն, կրկին ուզեցի դառնալ Երուսաղէմ, բայց տեղի տուի եղած ստիպումներուն, որով առ այժմ դեռ այստեղ կը մնամ: Ինչպէս գիտէք, Պօլսէն մեկնելէս ի վեր բնաւ թոշակ ստացած չեմ եւ դրամական միջոցներս սպառած են այլեւս: Երուսաղէմ դառնալով չեմ ուզեր երթալ վանքը իյնալ եւ Օրմանեան Ս.ի խնդրամատոյց ըլլալ որպէսզի հաճի զիս սնուցանել եւ ազատել զին[ուորական] խնդրէն: Կ'սպասեմ եւ կը պահանջեմ որ Պատկ. Վարչ.ը վերջ տայ այս խաղին, որ արդէն չափազանց երկար տեւեց, Օրմանեան Ս.ի բացատրութիւններուն վրայ իր փակած խնդիրը վերաբանայ, ընդփոյթ ինծի գումար մը հասցնէ հոս առ հաշիւ Մայիսէն սկսեալ եւ իր կողմէ որոշեալ թոշակիս եւ Երուսաղէմի մէջ պաշտօնավարութեանս պայմանները ապահովելէ վերջ ինծի հրահանգ տայ Երուսաղէմ դառնալու՝ ըստ այնմ Ազգ. Ժողովոյ ներկայացուցչի պաշտօնս այնտեղ կատարել կարենալու համար:

Ներկայ գրութեանս *ստիպողական* հանգամանքը նկատի առնելով, ըստ այնմ անմիջական կարգադրութիւնը ընելնիդ կը խնդրեմ եւ

կը մնամ ամենախորին յարգանօք

Վ. Թ.
Ներկայացուցիչ ...[67]

Ի.

ԲԻՒԶԱՆԴԻՈՆ ՀԱՅԱԹԵՐԹ
Կ. ՊՈԼԻՍ, Հօճա Խան Ճատտէսի

Կ. Պոլիս, 5/18 Սեպտ. 1914

Սիրելի Թէքէեան,

Ստացայ Ձեր 19/2 Սեպ. թուակիր նամակ[ը] եւ ինչ որ կրնայի ընել ըրի, օգտակար ըլլալու համար քեզի: Նամակիդ մէջ դառնութիւն մը կայ բոլոր անոնց դէմ որոնք հաւատք ունեցած են Օրմանեանին վրայ: Անոնցմէ մէկն ալ ես եմ եւ բնական է թէ այդ մասին ունեցած կարծիքս արտայայտելով, քու մտքիդ մէջ ոեւէ շփոթութեան տեղի չթողում: Օրմանեանի բարեկամները կրնան տարբեր խորհիլ. իմ մասիս ես Օրմանեանի եւ Թէքէեանի մէջ նախընտրութիւն ընելու պէտք չունիմ, վասնզի ես Օրմանեանը կը ճանչնամ նաեւ իր թերութիւններուն մէջ. գիտեմ թէ անիկա իր փառքը, իր յաջողութեանց պատիւ[ը] ուրիշներու հետ կիսելու կուսակից չէ, ուրիշները տապալելու մէջ հաճոյք կ'իմանայ եւ առաջին կարգի *էնդրիկաէ*[68] մըն է: Ասոնք գիտնալով է որ ես Ձեզի Երուսաղէմ մեկնած ատեննիդ խիստ վերապահութիւն եւ ծայրայեղ չեզոքութիւն եւ կարծեմ նոյնիսկ սոսկ հանդիսատեսի մը դիրք առնելու պէտքը շեշտեցի: Այդ դիրքը չպահեցիք եւ անկէ է որ առաջ եկա[ն] բոլոր այս անտեղութիւնները եւ անհամաձայնութիւնները: Օրմանեան՝ Երուսաղէմի մէջ միաբաններու գլուխը անցաւ եւ կեդրոնին դէմ ըմբոստ մը եղաւ: Վարչութիւն, Պատրիարք եւ Ազգ. Ժողով այսօր կատարելապէս համոզուած են թէ արդէն շատոնց ե-

[67] ՊՏԴ, տուփ 9, թղթապանակ LMN51, Ը987:
[68] Խարդաւանող, մեքենայող:

կած հասած է Օրմանեանը ետ կանչելու ժամը, սակայն արդի ծանր տագնապին մէջ վանքը մատակարարելու դժուարութիւնները աչքի առջեւ ունենալով կը վարանին այս բանը ընելու, վասնզի վանքը այս դրամական անօրինակ տագնապին մէջ վարելն շատ դժուար է: Գալով Պատրիարքին, անիկա Ձեզի դէմ ոչինչ ունի եւ կատարելապէս համամիտ է որ Ձեզի դրամական վճարում մը ըլլայ, սակայն անկարելիութեան առջեւ կը գտնուի: Երուսաղէմ դրամ չունի կամ դրամատուններէն ոչինչ չկարենալով ստանալ Կ. Պոլսէն կը ստանայ ամսական հարիւր ոսկի: Կ. Պոլսոյ Հիւանդանոցը, պատրիարքարանը եւ բոլոր թաղային մարմինները չկարենալով կալուածներու վարձքերը ստանալ, ինչպէս նաեւ իրենց պանքաները թողած աւանդ դրամներէն օգտուիլ՝ նոյնպէս անլուր վիճակի մը ենթարկուած են, եւ Պատրիարքը այս պայմաններուն մէջ վերջէն հաշուակցելու համար ոեւէ կերպով, ձեռքին տակ տրամադրելի գումար մը չունի Ձեզի խրկելու համար: Միայն 20 ոսկին անպատճառ պիտի վճարուի Ձեր եղբօրը հակառակ Օրմանեանի պնդումներուն եւ մաքառումին, որ Ձեզի հրաժարած նկատելով այլեւս դրամ ստանալու իրաւունք չունենալնիդ կը պնդէ: Այս վճարումն ալ ապօրէն եղանակով մը պիտի ըլլայ, վասնզի Վարչութիւնը Երուսաղէմ խրկուած 100 ոսկի գումարէն բռնի վար պիտի դնէ 20 ոսկին եւ 80-ը Երուսաղէմ պիտի խրկէ: Ձեր իսկապէս հրաժարած ըլլալը կամ չըլլալն ալ ճշդել Ազգ. Ժողովին կը պատկանի, որ սակայն այս պահուն գումարել անյարմար նկատուեցաւ, խմբակցական ներկայացուցիչներու մէկ գումարման մէջ: Ասով հանդերձ որչափ որ իմ առօրեայ յարաբերութիւններովս կարող եմ շօշափել մեր բարեկամներու կարծիքը, ամենէն աւելի համակիր շրջանակներու մէջ քու Երուսաղէմը ձգել մեկնիլդ ամենավատ տպաւորութիւն ըրած է եւ շատերու կողմէ դասալիքութիւն կը մեկնուի: Ձեր դատը շատ ու շատ տկարացած է Եգիպտոս մեկնելովնիդ, մինչ կրնայիք օրինակի համար վանքէն դուրս ապրիլ այլ սակայն Երուսաղէմ մնալ կամ շատ շատ եաֆա բնակիլ մինչեւ կարգադրութիւն մը ըլլալը: Դուք անմիջապէս Եգիպտոս անցաք, հոն մնացիք նոյնիսկ Վարչութեան կողմէ Ձեզի մեկնելու եւ Երուսաղէմ դառնալու հրաման տրուելէն յետոյ, եւ ասով կերպով մըն ալ հարկադրեցիք Վարչութիւնը որ Օրմանեանի կողմն աւելի հակի, վասնզի անոր[69] մեկնելէն յետոյ Վարչութիւնը մէկը չունէր հոն անոր ապաւինելու եւ զայն լծակ գործածելու համար Օրմանեանի դէմ, որուն դէմ ալ ոչ նուազ զայրոյթ կայ:

Կը ցաւիմ որ աւելի բան մը չկրցայ ընել: Արդի պարագաներն ուր կ'ապրինք աւելի բանի մըն ալ ձեռնտու չեն, եւ հոս թշուառութիւնը այնքան ճնշիչ է որ Երուսաղէմով զբաղիլն արդէն ծիծաղելի պիտի ըլլար: Հետեւաբար ես համոզուած եմ թէ արդի ձեւով պիտի երթան գործերը մինչեւ որ վիճակի փոփոխութիւն մը ըլլայ: Ձերդ

Արշակ Ալպոյաճեան[70]

ԻԱ.

Հետեւեալ նամակով կը պարզուի թէ Թէքէեան ուզած է Երուսաղէմ վերադառնալ, բայց անհրաժեշտ նկատած է պարտադիր զինուորագրութենէ զերծ մնալու կարգադրութիւն մը, որպէսզի կարենայ անարգել ճամբորդել եւ լծուիլ իր պաշտօնին գործադրութեան:

---

[69] Կը թուի թէ *Ձեր* պէտք է ըլլայ՝ նախադասութիւնը իմաստաւորելու համար:

[70] ՊՏԴ, տուփ 4, թղթապանակ Թ, Թ14:

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ[71]
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ԽԱՌՆ ԺՈՂՈՎ
ԱԶԳ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ՀԱՄԱՐ 471

Կ. Պոլիս, 22 Սեպտ. 1914

Ազնուաշուք
Վահան Էֆ. Թէքէեան
Ներկայացուցիչ Ազգային Ժողովոյ Երուսաղէմի
ի Գահիրէ

Ստացանք հետզհետէ Ձեր Ազնուութեան նախորդ ամսոյ 2 եւ 19 թուականաւ Աղեքսանդրիայէն ուղղած երկու նամակներն՝ որոնք կը վերաբերէին Ձեր թոշակին վճարման եւ Երուսաղէմ վերադառնալու մասին զինուորական ծառայութենէ ազատ մնալու խնդրոց, եւ յանձնեցինք զանոնք Ազգային Կեդր. Վարչութեան Խառն Ժողովոյ ուշադրութեան:

Ձեր զեկուցման համաձայն ներկայացաւ մեզ Ձեր եղբայրը՝ Ճիվան Էֆէնտի՝ ստանալու համար թերհաշիւ քսան ոսկւոյ գումարն, եւ Ազգային Վարչութիւնն Ձեր խնդրանաց համաձայն որոշեց անոր վճարումն եւ կարեւոր յանձնարարութիւններն ըրաւ Երուսաղէմ, Ամեն. Տ. Մաղաքիա Սրբազանի:

Դժբախտաբար, Ազգային Վարչութեան փափաքին հակառակ Ձեր բացակայութիւնն ալ իր երկարատեւ հանգամանքովն չկրնար այլեւս արդարացի հիմ մը կազմել ո՛եւէ վճարման շարունակութեանը, եւ չենք ալ յուսար որ Ձեր Ազնուութիւնն Ս. Աթոռին նիւթական ա՛յնքան մեծ ճգնաժամուն մէջ ուզէ հետամտիլ յարատեւ վճարմանը նոյն թոշակին, զոր Ազգային Վարչութիւնն հարկադրուած է դադրեցնել Ձեր Երուսաղէմէն մեկնելու թուականէն սկսեալ: Այսուհանդերձ, որոշուած է որ Ձեր Ազնուութիւնը՝ ցորչափ մնացած է ի Ս. Երուսաղէմ, ստանայ անվթար կերպով Վարչութեան կողմէ իրեն համար սահմանուած ամսական գումարն, եւ այս մտօք կարեւոր զեկուցումն եղած է վերստին վարչական պատուիրակ Ամենապատիւ Տ. Մաղաքիա Սրբազանի:

Իսկ գալով Ձեր Ազնուութեան զինուորական ծառայութեան պարագային՝ կը ցաւինք յայտնելու որ խնդիրն ներկայացուած է մեզ ա՛յնպիսի պահու մը՝ ուր վարչական ո՛եւէ կարգադրութիւն մատնուած է ապարդիւն մնալու: Հրատարակուած օրէնքներու բացարձակ տրամադրութեանց առջեւ, եւ իրաց այս վիճակին մէջ աւելի Ձեր Ազնուութեան անկ էր եւ կը պատկանի շարժիլ համաձայն ա՛յն պետական տնօրէնութեանց՝ որոնք կը վերաբերին այս մասին:

Մնամք Աղօթարար
Պատրիարք Հայոց Թուրքիոյ
Չաւէն Արքեպ. Տէր Եղիայեան

ԻԲ.

Երեք փոքրածաւալ թերթիկներու վրայ հետեւեալ թերաւարտ, անթուակիր եւ անխորագիր (թէեւ կը յստկանայ աւելի ուշ թէ խորագիրը պէտք է ըլլայ «Օրմանեանի Մասին») սեւագրութիւնը կը ներկայացնէ Թէքէեանի առաջին փորձը՝ մերկացնելու Օրմանեանի մեքենայութիւնները, երբ 1915ին

[71] ՊՏԴ, տուփ 4, թղթապանակ Թ, Թ1:

Եգիպտոս հասած է Օրմանեանի թիւ 11 ծանօթագրութեամբ նշեալ Դիտողագիրը:

Որքան տեղեակ ենք, Թէքէեան, որ արդէն տարուած կրնար ըլլալ իր խմբագրապետութեամբ Արեւ *թերթը լոյս ընծայելու նախապատրաստական աշխատանքներով կամ վերահաս եղեռնագուժ իրադարձութիւններով, չէ հրատարակած զայն եւ միայն* Խոհք եւ խօսք *հրատարակութենէն ետք հրապարակաւ ձեռք առած է նիւթը*[72]*:*

Նոր Եգիպտոս ղրկուած բայց 4/17 Սեպտ. 1914 թուականը կրող ձեռագիր խմորատիպ տետրակի մը մէջ, որուն անունն է *ԴԻՏՈՂԱԳԻՐ. Երուսաղէմի համար կազմուած նոր կանոնագրին զննութիւնն ու լուսաբանութիւնը*, Մաղաքիա Արքեպս. Օրմանեան կը ճգնի

ա. ցոյց տալ վերոյիշեալ կանոնագրին վնասակարութիւնը

բ. ինքզինք արդարացնել այն ամբաստանութենէն թէ կանխաւ ծանօթ ըլլալով նոյն կանոնագրին, զայն գործադրելու կամ անոր գործադրութեան ճամբան յարդարելու պաշտօնով եւ խոստումով գնաց Երուսաղէմ, ուր ոչ միայն բան մը չըրաւ այդ մտօք այլ եւ գլուխ անցաւ կանոնագիրը մերժող միաբաններուն, որով դաւեց թէ՛ գործին եւ թէ՛ իրեն պաշտօն յանձնող կեդրոնին:

Այդ *Դիտողագիր*ին մէջ գլուխ մըն ալ, վերջընթեր Խ. գլուխը, յատկացուցած է ըստ նոյն կանոնագրին ընտրուած եւ իրեն հետ Երուսաղէմ ղրկուած Ազգ. Ժողովոյ ներկայացուցչին, *Յանկ*ին մէջ «Թէքէեանի մասին» վերտառութեամբ[73]: Ատկէ թե-

---

[72] Թէքէեան 5 Սեպտեմբեր 1921ին նոր պատրիարքի ընտրութեամբ զբաղող Ազգային Երեսփոխանական Ժողովի նիստի ընթացքին խօսք առնելով պիտի ըսէր. «Ըստ որում իմ յիշատակութիւնը եղած էր տեղեկագրին մէջ իբրեւ քննիչ Ազգ. Ժողովին կողմէ, կը փափաքիմ մանրամասն տեղեկութիւն տալ իմ կատարած պաշտօնին համար: Հարկ կը դատեմ ըսելու թէ 1914ի Յունուարին կոչուելով այդ պաշտօնին, մեկնած եմ Երուսաղէմ, ուր Ազգ. Ժողովին ընդունած օրէնքին գործադրութեան համար լուրջ անհամաձայնութիւններ ունեցած եմ Օրմանեան Ս.ի հետ ու մեկնելով Եգիպտոս, [համաշխարհային Ա.] պատերազմը ծագած ու որեւէ կարգադրութիւն չէ կրցած ըլլալ: Ազգ. Պատուիրակութեան կարգադրութեամբ անգամ մըն ալ գացած եմ Երուսաղէմ 1918ին, բայց միաբանութեան նիւթական վիճակը այնքան աննպաստ էր որ Եգիպտոսէն սպասուած օգնութիւնները չեն կրցած ըլլալ եւ վանքին վիճակը մնացած է նոյն կացութեան մէջ: Փափաքելի է որ ըստ որում անգլ. կառավարութիւնը այս անգամի համար կ'արտօնէ ընտրութիւնը կատարել Ազգային Ժողովէն, Ժողովին շնորհակալութեան հետ փափաք յայտնուի նաեւ որ յառաջիկայ ընտրութիւններն ալ տեղի ունենան ազգային օրէնքներու անփոփոխ պահպանութեամբ» (*Համահաւաք ատենագրութիւններ Թուրքիոյ հայոց Ազգային երեսփոխանական ժողովի, Համագումար ազգային Ժողովի եւ Համազգային խորհուրդի (1919–1922)*, կազմեց եւ խմբագրեց Վաչէ Ղազարեան, Փորթսմութ, 2021, էջ 604): Թէքէեանի սաղիմական առաքելութեան երկրորդ՝ 1918ի հանգրուանին անդրադարձը դուրս կը մնայ ներկայ հրապարակման ծիրէն:

[73] Օրմանեան կը գրէր. «Հապա ինչո՞ւ ինձի ուղեկից տրուեցաւ Վահան Թէքէեան էֆէնտին, որ Ընդհանուր Ժողովէն ներկայացուցիչ ընտրուած էր նոր կանոնագիրին հսկելու: … Վարչութիւնը չէր կրնար Ընդհանուր Ժողովին ըրածը ինքնին եղ-

լադրուած ու քաջալերուած, փոխադարձ անսեթեւեթութեամբ մը ՕՐՄԱՆԵԱՆԻ ՄԱՍԻՆ անուանակոչեցի ներկայ գրութիւնը, որ պատասխան մըն է յիշեալ տետրակին: Այդտեղ պաշտպանուած թէզին հիմնական անճշտութիւնը երեւան հանելու եւ տասնեակ մը տարիներէ ի վեր Երուսաղէմի անունով խաղցուած խաղին հին ու նոր մեծագոյն դերակատարը՝ նոյն ինքն Օրմանեանը՝ քօղազերծելու գործը, դժբախտաբար կարելի չէ կատարել այս էջերով:

Կան Հայ Եկեղեցւոյ ոգիին եւ օրէնքներուն ինձմէ աւելի հմուտ, ինչպէս նաեւ Օրմանեանի պատրիարքութեան շրջանին մէջ Երուսաղէմի գործերուն աւելի մօտէն հետեւած մէկ քանի անձեր, որոնք անշուշտ պիտի կատարեն այդ աշխատութիւնը՝ երբ պարագաները քիչ մը թոյլատու ըլլան ատոր:

Այսուհանդերձ, որովհետեւ ճիշդ նոյն պարագաները նկատի առնելով բայց ա-նոնցմէ օգտուելու դիտումով է որ Երուսաղէմի վարչական պատուիրակը մէջտեղ նետած է իր ինքնապաշտպանողականը, հարկ կ'ըլլայ որ ես ալ գոնէ համառօտակի զննեմ ու լուսաբանեմ իր <…>

Վեց ամիսէ ի վեր, փափաքի պակասը չէր որ զիս արգիլեց այս խնդիրը հրապարակելու, այլ այն նկատումը թէ Ազգ. Ժողովէն ստացուած պաշտօնի մը համարատուութիւնը նոյն Մարմինին մօտ պարտ էի կատարել՝ անկէ սպասելով նաեւ ծագած կնճիռներուն կարգադրութիւնը[74]

Ազգային Երեսփոխանական Ժողովը 1914ի ամռան արձակուրդային դադարէն ետք պիտի չգումարէր որեւէ նիստ վերահաս աշխարհամարտին պատճառով եւ պիտի կասէր գործադրութիւնը սաղիմական բարեկարգութեան ծրագրին՝ վերստին ձեռք առնուելու համար 1918ի զինադադարէն ետք, ա՛յս անգամ Ազգային Պատուիրակութեան կողմէ, երբ Պաղեստին կը գտնուէր բրիտանական հակակշռի ներքեւ:

ծանել … Բայց ըրաւ ինչ որ կրնար. բացորոշակի յայտարարեց թէ Թէքէեան էֆէնտի պիտի երթայ, ոչ այժմէն պաշտօնի ձեռնարկելու, այլ կարեւոր ուսումնասիրութիւնն ընելու, գործերը սերտելու … որպէսզի անփորձ չգտնուի երբ որ կարգը գայ իւր պաշտօնը վարելու: Վարելու սկսիլն ալ ենթարկուած էր հետապնդելու գործողութեանց արդիւնքին … հետեւաբար յայտնի խօսելու համար, աւելի Թէքէեան էֆէնտին Կոստանդնուպոլսէն հեռացնելու նպատակը կը շեշտուէր: … Թէքէեան էֆէնտի պաշտօնի չէր մտնար, դիրք մը չէր ստանար, պաշտօնական անձ չէր դառնար … Չեմ գիտեր թէ Թէքէեան էֆէնտի ներքնապէս ինչ համոզում կամ դիտում կամ շարժառիթ ունէր իւր ուղեւորութեանը մէջ. միայն գիտեմ թէ երբ զգաց որ պաշտօն վարելու ժամանակը հասած չէ, հարկ տեսաւ պատճառանք մը փնտռել եւ հեռանալ…»:

[74] ՊՏԴ, տուփ 7, թղթապանակ MD7000, Ը970–Ը972:

FACTS RELATED TO VAHAN TEKEYAN'S JERUSALEMITE MISSION

(Summary)

VATCHE GHAZARIAN (vatcheg@gmail.com)

Owing to administrative and financial mismanagement, which lingered for more than a decade in the Armenian Brotherhood of St. James in Jerusalem—under Ottoman rule at the time—the Armenian National Assembly of Constantinople was compelled to discuss, vote, and adopt new by-laws for the Brotherhood in late 1913.

Consequently, in 1914, the Assembly elected Tekeyan as its representative to the Brotherhood, while Malachia Ormanian, the former Patriarch of the Armenians in Turkey, was entrusted with the role of plenipotentiary delegate of the Central National Administration, to travel together to Jerusalem and contribute to the remediation of the situation.

When the stance and actions of Ormanian—who had masterfully concealed his opposition to the new by-laws—convinced Tekeyan—a true and honest supporter of their implementation—that his efforts would remain futile without an intervention, Tekeyan delivered reports to the Assembly outlining the obstacles placed before him and left for Egypt to await further instructions from the Assembly. Meanwhile, Ormanian remained in Jerusalem.

Ensuing international developments and the eruption of WWI confined Tekeyan to Egypt, and the mission was tabled.

The recently discovered documents presented in this article shed new light on the historic mission and the intentions and actions of Ormanian and Tekeyan. The documents help establish the truth regarding claims that have been in circulation since 1929, when the Brotherhood published Ormanian's account of the mission post mortem, triggering an elaborate response by Tekeyan about the events in 1914, in which he relied on his memory, since these documents were out of his reach at the time.

ՆՈՐԱՅԱՅՏ ՆԱՄԱԿ ՓԱՐԱՄԱԶԻՆ[1]՝ ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆԷՆ

ԵՂԻԿ ՃԷՐԷՃԵԱՆ (jerejianyeghia@hotmail.com)

1908 Յուլիսին Օսմանեան Կայսրութեան մէջ տեղի կ'ունենայ պետական յեղաշրջում. 30 տարուան միահեծան իշխանութենէ ետք կը տապալի սուլթան Ապտուլ Համիտի բռնատիրութիւնը: Իշխանութեան կու գայ երիտթրքական շարժումէն ծնունդ առած եւ վտարանդիութեան պայմաններուն մէջ ձեւաւորուած Միութիւն եւ յառաջդիմութիւն (ՄԵՅ) կուսակցութիւնը (Ittihat ve Terakki Cemiyeti): Կը վերահաստատուի սուլթան Համիտին կողմէ 1876ին հռչակուած եւ 1878ին առկախուած սահմանադրութիւնը (Միթհատեան): Սահմանադրական այս յեղաշրջումը խանդավառութեամբ կ'ընդունուի յատկապէս հայութեան կողմէ:

Խանդավառ այդ մթնոլորտին մէջ, Սոցիալ դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան (ՍԴՀԿ) կեդրոնական վարչութեան ատենապետ եւ միաժամանակ անոր պաշտօնաթերթ *Հնչակի*ն խմբագիր Ստեփան Սապահ-Գիւլեան[2] կը գրէ.

---

[1] Փարամազ (Մատթէոս Սարգիսեան).- 1863, Մեղրի-1915 Յունիս 15ին կախաղան հանուած Կ.Պոլսոյ մէջ: 1878-83՝ կը յաճախէ Էջմիածնայ Գէորգեան ճեմարանը: 1884-95 ուսուցչութիւն կ'ընէ Նախիջեւանի եւ Արտապիլի (Պարսկաստան) մէջ: 1895-96 Սալմաստի (Պարսկաստան) մէջ կը մասնակցի Արեւմտահայաստան զէնք եւ ֆետայական խումբեր փոխադրելու աշխատանքին: 1897ին, իր գլխաւորութեամբ զինատար խումբ մը կը հասնի Վան: Իր առաքելութիւնն էր փոխարինել նահատակուած Մարտիկը (Մարտիրոս Սարուխանեան): Կը ձերբակալուի եւ 1898ին Վանի դատարանին առջեւ կ'ունենայ իր հանրայայտ պաշտպանական ճառը: 1903ին, Անդրկովկասի հայաշատ քաղաքներուն մէջ կը կազմակերպէ հայ եկեղեցապատկան գոյքերը բռնագրաւելու ցարական որոշման դէմ ժողովրդային ընդվզումները: Այս առիթով, Թիֆլիսի մէջ կը կազմակերպէ Անդրկովկասի կառավարիչ, իշխան Գոլիցինի (այս որոշումը մտայղացողը) ահաբեկչութիւնը: 1905-06՝ Ղարաբաղի եւ Զանգեզուրի մէջ կը ղեկավարէ հայ-թաթարական բախումներուն մասնակից հնչակեան խումբերը: 1906ին, Շուշիի մէջ, քանի մը գործակիցներով կը ձերբակալուի. 1907ին Թիֆլիսի դատարանին կողմէ կը դատապարտուի մէկ տարուան բանտարկութեան: 1909ին որպէս պատգամաւոր կը մասնակցի Կ.Պոլսոյ ՍԴՀԿ Զ. համագումարին: 1910-13՝ հակա-իթթիհատական քարոզչութիւն կը կատարէ Տիգրանակերտի, Խարբերդի, Մալաթիոյ, Վանի եւ այլ շրջաններու մէջ: 1914ին Փարիզի եւ Գահիրէի մէջ կը մասնակցի իթթիհատական եռապետութիւնը բռնի հեռացնելու ծրագրումին ու կը ստանձնէ Կ.Պոլսոյ մէջ ՍԴՀԿին վերաբերող բաժինը: Աշխատակցած է *Հնչակ*, *Մշակ*, *Նոր աշխարհ*, *Արեւելք* թերթերուն: Ունի թատերգութիւններ:

[2] Ս. Սապահ-Գիւլեան (Ստեփանոս Տէր Դանիէլեան).- 1861, Նախիջեւանի Ջահուկ գիւղ-Նիւ Ճըրզի, 1928: Աւարտելէ ետք Թիֆլիսի Ներսէսեանը, ուսուցչութիւն կը կատարէ Նախիջեւանի, Երեւանի թեմական դպրոցին, Մշոյ Ս. Կարապետ վանքի

Երիտասարդ Թուրքիայ»ի անունից խօսող “ՄԻՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՌԱՋԴԻՄՈՒԹԻՒՆ” Կուսակցութեան տիրապետութեամբ՝ քաղաքական գործօն ասպարէզի եւ ղեկավարի դերի մէջ է մտնում թուրք նացիոնալիզմը, …[որ] տիրապետուող ժողովրդներին ազատութեան այնքան պայմաններ կտայ, որքան որ իր ընդգրկած նացիոնալիստական սկզբունքների շրջանակը կը ներէ.- այսինքն բաղկացուցիչ ժողովրդների ազգային զարգացումը պիտի մտնի այն շրջանակի մէջ ինչ որ թուրք նացիոնալիզմը կը գծի[3]:

Այս առիթով, ՍԴՀԿ կեդր. վարչութեան թիւ 14 շրջաբերականը, որուն լեզուամտածողութենէն դատելով կասկած չունինք, որ կը պատկանի Սապահ-Գիւլեանի գրչին, կը գտնէ, թէ սահմանադրութեան վերահաստատումով, *«մեր այն մի կարգ նկատումները, որոնց հիման վրայ մենք կը ձգտէինք անկախութեան, անջատականութեան՝ տիրող բռնապետութենէն, այժմ այլեւս գոյութեան իրաւունք չունին: Բացարձակ միապետութիւնը տապալուած լինելով՝ մենք կը գտնուինք սեղմ սահմանադրութեամբ օժտուած Թուրքիոյ հանդէպ. հետեւաբար այսուհետեւ, մենք պիտի աշխատինք ամբողջ Թուրքիոյ համար իրականացնել ռամկավարական սահմանադրու-*

ժառանգաւորացին եւ Երուսաղէմի Ս. Յակոբայ վանքին մէջ: 1894ին կ'աւարտէ Փարիզի Ecole Libre Des Siences Politiquesը: Փարիզի մէջ կը հիմնադրէ Հայ ուսանողական միութիւնը, որ աշխուժ գործունէութեամբ Հայկական Հարցը կը ներկայացնէ ֆրանսական հանրային կարծիքին: 1899ին, ՍԴՀԿ Ռոստովի խորհրդաժողովին կ'ընտրուի ՍԴՀԿ կեդր. վարչութեան անդամ: 1905-15՝ ՍԴՀԿ երեք համագումարներով (1905 Փարիզ, 1909 Կ.Պոլիս, 1913 Քոսթանցա) կ'ընտրուի ՍԴՀԿ կեդր. վարչութեան ատենապետ. որմէ ետք, 1916-24՝ կը նշանակուի ՍԴՀԿ ԱՄՆի եւ Եւրոպայի լիազօր գործիչ: Խմբագրած է *Հնչակը* 1901-03 (Լոնտոն) եւ 1906-12 (Փարիզ): 1908-12՝ բնակութեան հիմնական վայրը եղած է Կ.Պոլիսը. 1913-16՝ Գահիրէն. 1917էն ետք՝ ԱՄՆ: Հիմնադրած եւ խմբագրած է *Աշխարհ* (Ռուսճուք, 1898), *Երիտասարդ Հայաստան* (Պոստոն, 1903-05 եւ 1917-24), *Նոր աշխարհ* (Կ.Պոլիս, 1912), *Ինքնավար Հայաստան* (Պուքրէշ, 1916) թերթերը. աշխատակցած է *Մեղու Հայաստանի* (Թիֆլիս, 1880-84), *Նոր դար* (Թիֆլիս,1895-96), *Արեւ* (Աղեքսանդրիա, 1915-16), *Կռան* (1919-20) եւ այլ թերթերու: Անոր գրչին կը պատկանին գաղափարական-քաղաքական բնոյթի գիրքեր.- *Եւրոպայի քաղաքական դրութիւնը բերլինի դաշնադրութիւնից յետոյ* (Ռուսճուք, 1898), *Սոցիալիզմ եւ Հայրենիք* Ա. պրակ, (Փարիզ, 1907), *Երիտասարդ Թիւրքիա* (Փարիզ, 1908. բ. տպ. Երեւան, 1991), *Հերդեր եւ իր քաղաքական հայեացքները* (Կ.Պոլիս, 1909), *Ինքնավար Հայաստան* (Գահիրէ, 1915. բ. տպ. Թիֆլիս, 1915), *Սոցիալիզմ եւ Հայրենիք* Բ. պրակ (Փրովիտընս, 1916), *Պատասխանատուները* (Փրովիտընս, 1916. բ. տպ. Պէյրութ, 1953. գ. տպ. Պէյրութ, 1974. դ. տպ. Երեւան, 2017), *Փոքր Հայքի յիշատակներ* (Շիքակօ, 1917. բ. տպ. Պէյրութ, 1956-57), *Արմենակ եւ Աբրահամ* (Շիքակօ, 1917), *Բառերի եւ եզրերի բացատրութիւններ* (Պոստոն, 1927. բ. տպ. 1957, Պէյրութ):

[3] [Սապահ-Գիւլեան], «Սահմանադրական Թուրքիա եւ Հայկական Խնդիր», *Հնչակ*, 1908 Յունիս-Յուլիս ([] ձեւի փակագիծերուն մէջ առնուած անուններուն պարագային, յօդուածը անստորագիր է, բայց մենք վստահ ենք յօդուածագիրին ինքնութեան):

թիւն, իսկ բաղկացուցիչ ազգութիւններու համար ալ ինքնավարութիւն»: Այս նոր առաջադրանքին դիմաց, շրջաբերականը կը թելադրէ. *«Մեր նպատակին հասնելու համար, մենք պիտի ձգտինք համերաշխիլ այն բոլոր ընդդիմադիր տարրերուն հետ - հայ, թուրք, արաբ, քուրտ, բուլգար, եւայլն - որոնք իրենց ծրագրով մօտիկ են մեզի: «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» թուրք կոմիտէն այժմ կառավարական կուսակցութիւնը կը կազմէ Թուրքիոյ մէջ եւ մեզ հակառակորդ է բացարձակապէս: Իշխան Սապահէտտինի կուսակցութիւնը, սակայն, իր ծրագրով ու պահանջներովը, յայտնի աստիճան, մօտ է մեր հայեացքներուն: Աւելի քան երբեք, այժմ կարիքը կը զգացուի անյետաձգելիօրէն համերաշխելու բոլոր ընդդիմադիր տարրերուն հետ»*[4]:

Յաջորդող տարիներուն, ՍԴՀԿ կը խորացնէ Իթթիհատի հանդէպ իր ընդդիմադիր կեցուածքը:

1909 Յուլիս 12ին, Կ.Պոլսոյ մէջ բացուած ՍԴՀԿ Զ. համագումարին հիմնական օրակարգը կ'ըլլայ ճշտել կուսակցութեան կեցուածքն ու գործելաձեւը սահմանադրական Թուրքիոյ հանդէպ: Մեծամասնութիւն կը կազմէ օրինական կուսակցութիւն դառնալով իթթիհատական իշխանութեան դէմ պայքարը օրինական ձեւերով (քաղաքական, քարոզչական, ընտրական) շարունակելու տեսակէտը՝ *«ցորչափ այդ օրինական իրաւունքները չեն խլուած աշխատաւոր ժողովուրդի ձեռքէն»:* Այնուհետեւ համագումարը կ'եզրակացնէ. *«Նկատելով որ թուրք նացիոնալիստները եւ այդ նացիոնալիզմի քաղաքական գործիչները* (իթթիհատականները - Ե.Ճ.) *գիտակցաբար ձգտում են ապազգայնացնելու Թուրքիայի մէջ գտնուող ազգութիւնները եւ նրանց ձուլելու Թուրք ազգութեան մէջ ՕՍՄԱՆՅԻ, ՕՍՄԱՆԵԱՆ ԱՋԳՈՒԹԻՒՆ ընդհանուր անուան տակ, Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Զ.րդ Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը ժխտելով ժխտում է ազգայնացման այդ գաղափարը եւ վճռում է ոգի ի բռին պայքարել այդ ուղղութեան դէմ՝ ընդունելով ազգերի պատմա-անհատական գոյութեան անձեռնմխելիութիւնը եւ նրանց անկաշկանդ, ազատ զարգացման ու ինքնորոշման իրաւունքը»*[5]*: Հնչակ* իր հերթին կը գրէ. *«Ժողովը՝ վերլուծելով այս բոլորը, կանգնած դասակարգային կռւի ուղղութեան վրայ, համաձայն Սօցիալ-Դէմօկրատական սկզբունքների, վերստին շեշտեց անյետաձգելի պէտքը ազգերի համերաշխութեան շուտափոյթ իրականացման, ճանաչելով որպէս պայման ԱԶԳԵՐԻ ՊԱՏՄԱ-ԱՆՀԱՏԱԿԱՆ ԳՈՅՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ, ժխտելով մի կողմից՝ ՍԵՊԱՐԱՏԻՍ-*

[4] ՀԱԱ. Ֆ.1456, ց.1, գ.147. «Շրջաբերական ՍԴՀԿ Կեդր. Վարչութեան թիւ 14. Փարիզ, 1908 Օգոս. 19»:

[5] Նոյն:

ՏԱԿԱՆ-ԱՆՋԱՏՈՂԱԿԱՆ գաղափարները եւ միւս կողմից՝ Ո՛ԵՒԷ ԱԶԳԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԳԵՐԱԿՇՌՈՒԹԻՒՆԸ ՄԻՒՍԻ ՎՐԱՅ»[6]:

Յաջորդող տարիներուն, ՍԴՀԿի գործունէութեան կարեւոր բաժիններէն կ'ըլլայ իթթիհատական իշխանութեան հանդէպ ընդդիմադիր դաշնակիցներ գտնելու հարցը: Այս ուղղութեամբ տարուած փորձերը կու տան որոշակի արդիւնք: Գործակցութեան եզրեր կը նախաձեռնուին Սապահէտտինի[7] գլխաւորած հոսանքին հետ[8], որ այդ շրջանին գրեթէ միաձոյլ կը գործէր Օսմանեան ազատական կուսակցութեան (Osmanli Ahrar Firkasi) հետ. Փարիզէն սկսած բարեկամական կապերը կը շարունակուին Պետիր պէյ Պետիրխանի քրտական հոսանքին[9] եւ արաբ քրիստոնեայ Նեճիպ Ազուրիի Անկախ Արաբիա կազմակերպութեան հետ[10]: Գործակցութիւն կը ստեղծուի նորաստեղծ Օսմանեան սոցիալիստական Կուսակցութեան[11] (Osmanli Sosyalist Firkasi), ինչպէս նաեւ Մանիասիզատէ Ռեֆիկ պէյի[12]

---

[6] «Յայտարարութիւն ՍԴՀԿ շարքերուն - ՍԴՀԿ վեցերորդ ընդհանուր պատգամաւորական ժողով (Կ.Պոլիս, 1909 Նոյ. 26)», *Հնչակ*, 1910 Օգոս.-Սեպ.:

[7] Prince Sabaheddin (1877-1948).- Սուլթան Համիտի շրջանի քաղաքական յայտնի գործիչ Տամատ Մեհմուտ փաշայի զաւակը, որ հօր եւ եղբօր՝ Լութֆուլլահի հետ, որպէս վտարանդի, 1899ին կ'ապաստանի Փարիզ: Հօր մահէն ետք (1903) կը հիմնէ Անձնական նախաձեռնութեան եւ ապակեդրոնացման կուսակցութիւնը (Tesebbus-u Sahsi ve Adem-i Merkeziyet Cemiyeti), որ օսմ. ընդդիմադիրներու Բ. խորհրդաժողովին (1907, Փարիզ), համապետական ծրագիրով գործելու սկզբունքին շուրջ համատեղ դաշինք կը կնքէ ՄԵՅի եւ ՀՅԴի հետ: Սահմանադրութենէն ետք, Կ.Պոլսոյ մէջ կը շարունակէ պաշտպանել ազատական տեսակէտեր, կը հակադրուի Իթթիհատին, սակայն կուսակցական գործունէութիւն չի ծաւալեր: 1913ի իթթիլաֆականներու ձախող պետական հարուածէն ետք, կեանքի մնացած մասը կ'անցընէ Եւրոպայի մէջ:

[8] Arsen Avagyan, *Ermeniler ve Ittihat ve Terakki*, Istanbul, Aras Yayincilik, 2005, էջ 40. նաեւ՝ Սապահ-Գիւլեան, *Պատասխանատուները*, տպ. Տօնիկեան, Պէյրութ, 1974, էջ 287:

[9] Սապահ-Գիւլեան, *Պատասխանատուները*, էջ 275:

[10] 1904ին Փարիզի մէջ հիմնադրուած Անկախ Արաբիա Կուսակցութեան հիմնադիր Ազուրիի եւ Սապահ-Գիւլեանի միջեւ ընկերական կապը կը սկսէր այդ օրերէն: Աւսոր արտայայտութիւններէն մէկն ալ, Ազուրիի *L'independence Arabe*ին (1908 Փետր.-Մարտ, # 11-12) մէջ, Սապահ-Գիւլեանի «La Tyrannie Turque et les Jeunes-Turcs» (*Հնչակ*, 1908 Յունուար) ծրագրային յօդուածին հրատարակութիւնն էր: Յօդուածին որպէս թարգմանիչ կը նշուի Serge d'Herminy, որ Մ. Ս. Դաւիթ Բէկն է (Մարտիրոս Սարգիսեան):

[11] Էնդիժէն [Սապահ-Գիւլեան], «Թուրք ճարտարագործական հասարակապետութեան ներկայացուցիչները», *Երիտասարդ Հայաստան*, 1918 Օգոս. 17:

[12] Manyasizade Refik (1853-1909).- Իրաւաբանութեան դասախօս: Եղած է օսմանեան սահմանադրութեան հեղինակ Միտհաթ փաշայի գործակիցը ու անոր նման աքսորուած: ՄԵՅի անդամ, բայց յուսախաբուած անկէ: Կ.Պոլսոյ շրջանէն երեսփոխան: Կը ներկայացուի որպէս արդարադատ եւ ազատախոհ անձ:

գլխաւորած բազմազգի (թուրք, ալպան, չերքէզ, արաբ) Օսմանեան դեմոկրատ կուսակցութեան (Osmanli Demokrat Firkasi) հետ[13]: 1889ին Կ.Պոլսոյ բժշկական համալսարանի ուսանողներով ՄԵՅը հիմնադրած ալպանացի Իպրահիմ Թեմոյի հետ «ծածուկ» ժողովներ տեղի կ'ունենան վերջինիս բնակարանին մէջ[14]: Սալոնիկի աշխատաւորական ֆետերացիայի («Գլուպիստներ», ՍԱՖ) հետ յարաբերութիւնները կ'արդիւնաւորուին, երբ անոր ղեկավարներէն, երեսփոխան Տիմիթար Վլախովի[15] ներկայութեան, 1912 Սեպտեմբերին, ՍԴՀԿ Տաճկաստանի Բ. պատգ. ժողովը կը վաւերացնէ ՍԴՀԿ-ՍԱՖ գործակցութեան համաձայնագիրը[16]: ՍԴՀԿ նաեւ մաս կը կազմէ Օսմանեան Եւ Պալքանեան սոցիալիստ կուսակցութիւններու համախմբումին, որ կը գլխաւորէ ռումանացի Ռաքովսկի[17]. *«Մասնաւորապէս հնչակեաններուն համար,* [ընդդիմադիր] *այս շարժումները յուսոյ կայծեր էին, որ Օսմանեան Կայսրութիւնը, իր ոչ-թուրք փոքրամասնութիւններուն հանդէպ աւելի ընդունելի ներքին քաղաքականութիւն մը որդեգրէ: ՍԴՀԿ-ը, որ Իթթիհատին հանդէպ ընդդիմադիր էր փակաւին արտասահմանէն, յստակօրէն կը պայքարէր Իթթիհատ Վէ Թերաքքը-ին դէմ, որպէսզի անոր ազատ չձգէ իր Թրքական ծրագիրը գործադրելու: Անոր մերձեցումը Ահրարին եւ*

---

[13] Սապահ-Գիւլեան, *Պատասխանատուները*, էջ 278 եւ 285:

[14] Նոյն, էջ 285:

[15] Dimitar Vlahov (1874-1954).- Ծնունդով մակեդոնացի քաղաքական գործիչ: Քաղաքական գործունէութեան սկսած Պուլկարիոյ մէջ, միանալով Ներքին մակեդոնական յեղափոխական կազմակերպութեան. անջատուած անկէ եւ հիմնած Ազգային դաշնակցային կուսակցութիւնը: Ապա միացած ՍԱՖին: 1909-12՝ երեսփոխան, ընտրուած ՄԵՅի ցանկով՝ ինչպէս բոլոր հայ երեսփոխանները: Խորհրդարանին մէջ կը գործակցի հայ երեսփոխաններուն հետ, յատկապէս աշխատաւորական հարցերու շուրջ:

[16] «ՍԴՀԿ Տաճկաստանի Բ. պատգ. ժողովի որոշումները», *Նոր աշխարհ*, 13/26 Սեպտ. 1912:

[17] «ՍԴՀԿ-ը եւ բրօլեթարիան», *Կոհակ*, 5/18 Սեպտ. 1912. նաեւ՝ Paul Dumont, «A Jewish, Socialist and Ottoman Organization: The Worker's Federation of Salonica»՝ *Socialism and Nationalism in the Ottoman Empire 1876-1923*, Mete Tuncay, Eric Zurcher (eds.), British Academic Press & International Institude of Social History, London, 1994, էջ 72-73, 183: Պալքանեան պատերազմներէն ետք, երբ թերակղզին կ'անջատուի Օսմ. Կայսրութենէն, հոն գործող սոցիալիստ կուսակցութիւններուն հետ գործակցութեան հարցն ալ կ'անցնի պատմութեան: Քրիստիան Ռաքովսկի (1873-1941).- Ազգութեամբ ռումանացի, քաղաքացիութեամբ պուլկարացի միջազգայնական յեղափոխական: 1905էն Ռումանիոյ սոիցիալ դեմոկրատ կուսակցութեան ղեկավարներէն: 1917ին կը մասնակցի ռուսական յեղափոխութեան Օտեսայի եւ Փեթրոկրատի մէջ ու կը միանայ Պոլշեւիկ կուսակցութեան: Քաղաքական, պետական, դիւանագիտական պաշտօններ վարած է Խ. Միութեան եւ Կոմկուսի մէջ: Հրապարակային ելոյթներով կը քննադատէ Ստալինի քաղաքականութիւնը, այդ պատճառով երեք անգամ կը ձերբակալուի: Կը մահանայ բանտին մէջ:

ապա Իթթիլաֆին, Երիտթրքական ազգայնամոլութեան դէմ պայքարէն անդին, այլ նպատակ չէր հետապնդեր»[18]: Այս կուսակցութիւններն ու համախմբումները քաղաքական փոքր ուժեր էին եւ ՄԵՅին համար լուրջ մրցակիցներ չէին. սակայն, Սապահ-Գիւլեանի տրամաբանութեամբ, *«շիւղն անգամ մեզ համար ուժ էր, երբ նա Իփտիհատի դէմ ցցուէր»*[19]:

Իթթիհատին լուրջ մրցակից ուժը հրապարակ կու գայ 1911 Նոյեմբերին, երբ ծնունդ կ'առնէ Ազատութիւն եւ համաձայնութիւն կուսակցութիւնը (Hurriyet ve Itilaf Firkasi): Իթթիլաֆ ոչ միայն մրցակից էր Իթթիհատին, այլեւ՝ իր նախընտրական ծրագիրով աւելի ազատական: Ան կը պաշտպանէր բաղկացուցիչ ազգութիւններուն շատ մը պահանջները եւ վարչական ապակեդրոնացումը[20]: Բնականաբար, ՍԴՀԿի եւ Իթթիլաֆի միջեւ կը ծնի գործակցութիւն, որ 1912 Փետրուար 7ին, երեսփոխանական ընտրութեան նախօրէին, կը վերածուի ընտրական դաշինքի[21]. *«Տեսնելով, որ արեւմտահայութեան հանդէպ վտանգը կը սպառնար Իթթիհատին կողմէ, Հնչակեան Կուսակցութիւնը ձեռնամուխ կ'ըլլայ հետեւողականօրէն զարգացնելու Իթթիլաֆի հետ պլօքի սփեղծման գաղափարը»*[22]: Հայ կեանքին մէջ գործող միւս կուսակցութիւններէն, Ազգային երեսփոխանական ժողովի Կեդրոն, Ազատական, Անկախ եւ ՀՅԴ խմբակցութիւններէն եւ հայ առաքելական ու աւետարանական համայնքներէն կազմուած միացեալ ժողովը կը նախընտրէ երեսփոխանական ընտրութեան մասնակցիլ Իթթիհատի ընտրացանկերով:

1912ի երեսփոխանական ընտրութիւնը տեղի կ'ունենայ ծայրայեղ բռնութեան եւ զեղծարարութեան պայմաններու տակ. այդ պատմութեան մէջ կը յիշատակուի որպէս «մահակի ընտրութիւն»[23]: Իթթիհատ ձեռք կը ձգէ խորհրդարանի աթոռներուն աւելի քան 95%ը, ինչ որ բացարձակապէս չէր համապատասխաներ իրականութեան: Անոր հանդէպ դժգոհութեան ալիքը

---

[18] Raymond Kevorkian, *The Armenian Genocide – A Complete History*, Tauris, London and N. Y., 2013, էջ 70:

[19] Սապահ-Գիւլեան, *Պատասխանատուները,* էջ 288:

[20] Արսէն Կիտուր, «Իթթիհատը Եւ Իթիլաֆը», *Նոր աշխարհ*, 7/20 Մարտ 1912. նաեւ Dikran Kaligian, "The Armenian Revolutionary Federation Under Ottoman Constitutional Rule" (dissertation for the degree of Doctor of Philosophy in Boston College), 2003, էջ 191:

[21] «ՍԴՀԿ-ի եւ Ազատականներու միջեւ հետեւեալ համաձայնութիւնը գոյացաւ», *Ռահվիրայ*, 8/12 Փետր. 1912: 1912ի սկիզբը, *Բիւզանդիոն* իշխանութեան կողմէ կը խափանուի. ան 15 օր լոյս կը տեսնէ *Ռահվիրայ* անունով:

[22] Мери Кочар, «Армяно-Турецкие Общественно-Политические Отношения И Армянскии Вопрос» (հայ-թրքական հասարակական-քաղաքական յարաբերութիւնները եւ հայկական հարցը), ԵՊՀ հրատ., Երեւան, 1988, էջ 180:

[23] Erik Zurcher, *Turkey – A Modern History*, London, 1994, էջ 107-08:

նոր թափ կը ստանայ: Յուլիսին, գնդապետ Սատըք պէյի[24] գլխաւորութեամբ ըմբոստ սպաներու խումբ մը՝ *Հալասկարանի զապիթան կուրուփու* (Փրկարար սպաներու խումբ), *«որ փասփօրէն Իթթիլաֆի զինուորական թեւն էր»*[25], կը պահանջէ երեսփոխանական ժողովին հրաժարականը, այլապէս կը սպառնայ խիստ քայլերու դիմել: Յուլիս 17ին, վարչապետ Սայիտ փաշայի[26] իթթիհատական կառավարութիւնը, խորհրդարանի գրեթէ ամբողջական վստահութեան քուէն ստանալէն երկու օր անց, կը հրաժարի[27]: Սուլթանին կողմէ նոր վարչապետ կը նշանակուի Ահմէտ Մուխթար փաշա[28], որ նոր դահլիճը կը կազմէ ընդդիմադիր նախարարներէ: Յուլիս 30ին հակա-իթթիհատական կառավարութիւնը կը ստանայ իթթիհատական երեսփոխանական ժողովի վստահութեան քուէն[29]: Օգոստոս 4ին, նոր վարչապետը խորհրդարանին կը կարդայ երեսփոխանական ժողովի լուծարման սուլթանական հրամանագիրը: Իշխանութիւնը սահմանադրական ճեւերով կ'անցնի Իթթիլաֆին եւ ընդդիմադիրներուն ձեռքը:

1913 Յունուար 13ին, լաւապէս կազմակերպուած պետական հարուածով մը, Իթթիհատ կը վերագրաւէ իշխանութիւնը: Էնվէր փաշայի գլխաւորութեամբ խումբ մը սպաներ մուտք կը գործեն Բ. Դուռ, կը սպանեն պատե-

---

[24] Mehmed Sadik (1860-1940).- Սպայական ուսումնարանը աւարտած գնդապետ: Սահմանադրական յեղաշրջման ժամանակ կը ծառայէր Մոնասթիր նահանգին մէջ եւ կը գլխաւորէր տեղի իթթիհատական մասնաճիւղը: Սահմանադրութենէն ետք, Կ.Պոլսոյ մէջ կը հիմնէ *Hizb-i Cedid*ը (Նոր կուսակցութիւն), որ 1911ին լրիւ կազմով կը միանայ Իթթիլաֆ ընդդիմադիր կուսակցութեան: Պատերազմէն յետոյ, որպէս թշնամի ուժերու հետ գործակցած, անոր չի թոյլատրուիր Թուրքիա մտնել:

[25] Feroz Ahmed, *The Young Turks (the Committee of Union and Progress in Turkish Politics 1908-1914)*, Oxford, 1969, էջ 110:

[26] Mehamed Said Paşa (1838-1914).- Երիտասարդ տարիքէն, ծննդավայր Էրզրումի մէջ մաս կազմած քաղաքական վերնախաւին: Սուլթան Համիտի օրով եօթ անգամ ստանձնած վարչապետի պաշտօնը: Իթթիհատ, սկզբնական շրջանին, պէտք ունենալով նման փորձառու քաղաքական գործիչի մը ծառայութեան, ներքին հասկացողութեան կու գայ անոր հետ:

[27] Երբ սուլթանը Սայիտ փաշային կը հարցնէ, թէ վստահութեան քուէ ստանալէն ետք ինչու՛ կը հրաժարի, ան կը պատասխանէ. «*անոնք իմ վրաս վստահութիւն ունին, ես է որ անոնց վրայ վստահութիւն չունիմ*» (Ahmed, էջ 110):

[28] Gazi Ahmed Muhtar Paşa (1839-1918).- Իր ասպարէզին մէջ յաջողակ նկատուած զինուորական: *Gazi* տիտղոսին արժանանացած 1877-78 ռուս-թրքական պատերազմին: 1885-1906՝ Եգիպտոսի բարձրագոյն կառավարիչ: 1911ին ծերակոյտի նախագահ: Ընդդիմադիրները զայն վարչապետ բերելով կը փորձեն օգտուիլ անոր հեղինակութենէն:

[29] Բացատրելու համար այս անսովոր երեւոյթը, իթթիհատական թերթերը կը գրեն, որ այդ ոչ թէ վստահութեան քուէ էր կառավարութեան, այլ երկիրը ծանր կացութեան մէջ չձգելու գիտակցութեան արտայայտութիւն (*Ազատամարտ*, Յուլիս 19/1 Օգոս. 1912):

րազմական նախարար Նազիմ փաշան[30] եւ զէնքի սպառնալիքի տակ կը ստիպեն վարչապետին հրաժարական ստորագրել, որ շուտով կը վաւերացուի սուլթանին կողմէ: Վարչապետ կը նշանակուի Մահմուտ Շեւքէթ փաշա[31]: Իշխանութիւնը կ'անցնի Իթթիհատի եռապետութեան ձեռքը՝ Էնվէր, Թալաթ, Ճեմալ. *«Կարմիր եռապետութիւնը կը սկսի երկիրը ղեկավարել կարմիր սուլթան Համիտին նմանողութեամբ»*[32]:

Վերջին իրադարձութեան ժամանակ Սապահ-Գիւլեան կը գտնուէր Փարիզ: Անոր մօտ արդէն ձեւաւորուած էին հաստատ համոզումներ, որոնք կ'արտայայտէ մամուլով. *«Մի անգամ ընդմիշտ, որպէս անվիճելի ճշմարտութիւն, աչքի առաջ պիտի ունենալ հետեւեալը.– երբ ամենափոքր **յարմար րոպէն**[33] ներկայանայ եւ համոզուած լինի, որ իր արարմունքը դիւրութեամբ կարող է մարսել, Թուրք Ազգայնականութիւնը, որի ձեռքն է այսօր երկրի կառավարական գործը, առանց տպատանուելու, որպէս **պատմական անհրաժեշտութիւն**, անխնայ կերպով պիտի կոտորի Հայերին (sic!!!): Եւ այս անգամ աւելի անողոք (sic!), քան 1895-1896-ին, աւելի սաստկութեամբ՝ քան Ադանայի Եղեռնը»*[34]: Իսկ ե՞րբ կրնար ըլլալ այդ «յարմար պահը». Սապահ-Գիւլեան, համաշխարհային պատերազմ մը, իր բառերով՝ «ընդհանուր պատերազմ» կամ «համաեւրոպական պատերազմ», մօտալուտ կը գտնէ, *«որի մէջ յաղթողը յաղթածից չի տարբերուիլ, որովհետեւ, վերջին հաշուով, տուժողը կը լինի ամբողջ Եւրոպան, քաղաքակրթութիւնը, մարդկութիւնը»*[35]: Ան նաեւ կասկած չ'ունենար, որ նման պարագայի մը, Իթթիհատ հանդէս պիտի գայ իր գերմանամէտ դիրքորոշումով, իսկ Իթթիլաֆ՝ անգլիամէտ[36]: Իդէպ, ասոնց միջեւ իշխանութեան համար մղուող արիւնոտ պայքարին արտաքին ազդակը ա՛յս հակադրութիւնն էր:

---

[30] Huseyin Nazim Paşa (1848-1913).- Սպայից վարժարանէն ետք, զինուորական բարձրագոյն կրթութիւնը ստացած Ֆրանսայի մէջ: Սահմանադրական յեղաշրջման ժամանակ, որպէս Էտիրնէի 2րդ բանակի հրամանատար, գործակցած երիտթուքերուն հետ: 1910-11՝ Պաղտատի նահանգապետ, ուր յարգուած է արաբներէն: Զինուորական կարգապահութեան տէր եւ բարեկարգիչ նկարագրին համար՝ անհամաձայն Իթթիհատի ապօրինութիւններուն:

[31] Mahmud Şevket Paşa (1874-1957).- Ծնած է Պասրա: Աւարտած է սպայական ուսումնարանը: Նշանակուած է Քոսովոյի նահանգապետ: Ինը տարի ապրած է Գերմանիա: 1909ի յետաշրջական շաժման ժամանակ, որպէս 3րդ բանակի (Ազատարար բանակ) հրամանատար, Կ.Պոլսոյ մէջ զսպած է ապստամբ ուժերը: Այդ օրէն ձեռք բերած է «Թուրքիոյ ամենէն զօրաւոր մարդը» ըլլալու համբաւը:

[32] Անտրէյ Մանտելշթամ [Կ.Պոլսոյ ռուսական դեսպանատան առաջին թարգման], *Երիտասարդ Թուրքերը պատերազմէն առաջ*, Կ.Պոլիս, 1919, էջ 93-94:

[33] Այս եւ բոլոր սեւագրուած ընդգծումները բնագրային են:

[34] Սապահ-Գիւլեան, «Փաստեր եւ իրողութիւններ», *Հնչակ*, Մարտ 1913:

[35] Սապահ-Գիւլեան, «Եւրոպա եւ Թուրքիա», *Հնչակ*, Յունուար 1913. նաեւ՝ «Պատրիարքարանի հրահանգների առթիւ», *Նոր աշխարհ*, 6/19 Սեպտ. 1912:

[36] Սապահ-Գիւլեան, «Անգլիա Եւ Թիւրքիա», *Նոր աշխարհ*, 11/24 Ապրիլ 1912:

Այս բոլորէն ետք Սապահ-Գիւլեան կ'եզրակացնէ. *«Երեք անգամ ճանապարհորդեցի Փոքր Հայք*[37]*: Վերջին ճանապարհորդութիւնս ինձ այն վերջնական եզրակացութեանը հասցրեց, որ **կա՛մ մենք պիտի սպաննենք Իթթիհատին, կա՛մ Իթթիհատն է որ մեզի պիտի սպաննի**: Բոլոր տեսածներս, կրած տպաւորութիւններս, կատարուած եղելութիւնները, արտայայտուած ձգտումներն ու միտումները կասկած չը թողեցին իմ մէջ, որ Իթթիհատը, ինչ գնով էլ որ լինի, վաղ թէ ուշ, իր արմատական հայաջինջ քաղաքականութիւնը (sic!) ձեռք պիտի առնի: Ուստի, ո՛չ միայն պէտք էր պատրաստուիլ, այլ՝ Իթթիհատին սպաննելը՝ (sic!!!) քաղաքական առաջին եւ անմիջական ձգտումը պիտի լինէր՝ ժամանակի ոգին ու պահանջը հասկացող հայ յեղափոխական գործիչի համար»*[38]:

Իր համոզումները գործադրութեան դնելու համար, Սապահ-Գիւլեանին կը կաշկանդեն երկու պարագաներ: Առաջին՝ արեւմտահայ ազգային-քաղաքական մտածողութիւնը տակաւին շատ հեռու էր «Իթթիհատին սպաննելու» նախաձեռնակ ըլլալու գաղափարէն[39]. ան բաւարարուած էր Հայաբնակ նահանգներու բարեկարգման ծրագիրով: Երկրորդը ՍԴՀԿ Զ. համագումարի որոշումներն էին, որոնց համաձայն, ՍԴՀԿը որդեգրած էր օրինական գործունէութիւն եւ ազգային ինքնութիւնները ձուլել միտող «թրքական նացիոնալիզմի ներկայացուցիչներուն» դէմ պայքարը կը շարունակէր օրինական ձեւերով, *«ցորչափ այդ օրինական իրաւունքները չեն խլուած աշխատաւոր ժողովուրդի ձեռքէն»*[40]: Սապահ-Գիւլեանին համար պարզ էր, որ Իթթիհատի «կարմիր եռապետութեան» իշխանութեան գալով, «այդ

---

[37] Սապահ-Գիւլեան, հակա-իթթիհատական քարոզչութիւն կատարելու համար, 1911-12ին երեք շրջագայութիւններ կը կատարէ Սեւ ծովու ափերը եւ Փոքր Հայքի շրջանները՝ Սամսոն, Օրտու, Ամասիա, Մարզուան, Սեբաստիա, Թոքատ, Էւերէկ-Ֆենեսէ, Կեսարիա, Թոմարզա եւն.:

[38] Սապահ-Գիւլեան, *Փոքր Հայքի յիշատակներ*, տպ. «Արարատ», Պէյրութ, 1957, էջ 431:

[39] Աւելի ուշ, Կ.Պոլսոյ պատրիարք Զաւէն Եղիայեան, այս մասին կը կատարէ ուշագրաւ խոստովանութիւն մը. «*Երբ 1914-ի կիսուն կարգ մը յեղափոխականներ ձերբակալուելու վրայ էին, հետաքրքիր եղանք իմանալու շարժառիթը: Եւ երբ վերահասու եղանք Թալաաթի անձին դէմ դաւադրական փորձին, քաղաքական կուսակցութիւններէն մինչեւ օրուան ազգային վարչութիւնը, նոյնիսկ ես, քննադատեցինք ձերբակալուած հնչակեանները, վասնզի ամէնքս ալ այն համոզումը գոյացուցած էինք թէ Թալաաթ կը սիրէր հայերը եւ միշտ ժպտուն դէմքով մը կ'ընդունէր զիս եւ [ազգային] վարչութենէն իրեն ներկայացող անձերը: «Այդ ժպիտը կեղծ է, մի խաբուիք» խօսեր էին այդ Քսանները: Եւ ժամանակը փաստեց թէ անոնք որ կախուեր էին հուսկ ապա, մեր բոլորէն, ամենէն ճիշդն էին ըմբռներ».* (Թէոդիկ, «Քսան հնչակեաններու պանծացումը – Դ. տարելից» [արտատպուած *Ժամանակէն*, *Երիտասարդ Հայաստան*, 23 Յուլիս 1919]):

[40] Հնչ. արխիւ. «ՍԴՀԿ Զ. ընդհ. պատգամաւորական ժողովի գլխաւոր որոշումները»:

օրինական իրաւունքները» արդէն խլուած էին ժողովուրդէն: Աւելին. օսմանիզմի դէմ գաղափարական պայքարը, որուն մէջ ամենէն շատ «կոկորդը պատռողը» եւ «մելան հոսեցնողը» ի՛նք եղած էր, դարձած էր ժամանակավրէպ: Հարցը հայ ժողովուրդի ֆիզիքական գոյութեան խնդիրն էր: Անոր համար, սպառնացող վտանգին դէմ պայքարելու միակ միջոցը կը մնայ վերադառնալ գործունէութեան յեղափոխական-անօրինական ձեւերուն: Վճռական, նոյնիսկ ճակատագրական որոշում մը՝ որուն իրաւունքը միայն կուսակցութեան համագումարը ունէր:

Հերթական Է. համագումարին կազմակերպական, քաղաքական եւ քարոզչական հարցերով, 1913 Մայիսին Սապահ-Գիւլեան կը մեկնի Ռումանիա, ապա Պուլկարիա: Պալքանեան Բ. պատերազմին պատճառով համագումարը կը յետաձգուի. իսկ իր քաղաքէ-քաղաք տեղափոխութիւնը մեծապէս կը դժուարանայ[41]: Այս միջոցին՝ Յունիս 11, Կ.Պոլսոյ մէջ Իթթիլաֆ կը կազմակերպէ հակադարձ պետական հարուած մը: Կը սպանուի վարչապետ Շեւքէթ փաշան: Սակայն պետական հարուածը չի յաջողիր: Իթթիհատ կը շարժի շատ արագ եւ բիրտ: Մեծ թիւով ընդդիմադիրներ կը ձերբակալուին եւ անոնցմէ 12 հոգի կախաղան կը հանուի Սուլթան Պայազիտ հրապարակին վրայ: Ընդդիմադիր այլ գործիչներ, որոնց շարքին Սատըք պէյ, Շերիֆ փաշա[42], Սապահէտտին, Իսմայիլ Հաքքը եւ այլք կ'ապաստանին արտասահման՝ Փարիզ, Գահիրէ, Աթենք: Բանակին մէջ գործող ընդդիմադիր բջիջները կ'անցնին ընդյատակ:

Նոյն տարին, Փարիզ վերադառնալէն ետք, Սապահ-Գիւլեան հանդիպումներ կ'ունենայ հոն ապաստանած Շերիֆ փաշային հետ եւ կը համոզուի, որ հակառակ ձախող պետական հարուածին թողած ծանր հետեւանքներուն, անոնք կառչած կը մնային Իթթիհատի իշխանութիւնը դաւադրաբար տապալելու գաղափարին: Ան նաեւ կը հասկնայ, որ արտասահման

---

[41] Հնչ. արխիւ. «Սապահ-Գիւլեանի նամակը Վարազդատին. Սօֆիա, 28 Յունիս 1913»:

[42] Şerif Paşa (1865-1944).- Քրտական ծագումով օսմանեան դիւանագէտ: Վարչապետ Սայիտ փաշայի որդին եւ վարչապետ Սայիտ Հալիմ փաշայի աներձագը: Եղած է Շուէտի մօտ Թուրքիոյ դեսպան: 1911ին, Կ.Պոլսոյ մէջ, կը հրաժարի Իթթիհատէն ու կը միանայ Իթթիլաֆին: Կը հրատարակէ ընդդիմադիր *Mecheroutiet* (Սահմանադրութին) թերթը, զոր կը շարունակէ Փարիզի մէջ: 1913ի ձախող պետական հարուածէն ետք կ'ապաստանի Փարիզ: Կը հիմնէ ընդդիմադիր Islahat Esasiyei Osmaniye Firkasıն (Օսմանեան արմատական կուսակցութիւն): 1914 Յունուարին, Փարիզի մէջ, Իթթիհատին կողմէ իր հանդէպ կազմակերպուած ոճրափորձ մը կը ձախողի: 1915 Սեպտեմբերին, *Journal de Geneve*ի մէջ խստօրէն կը դատապարտէ Իթթիհատի ղեկավարութիւնը՝ «հայերը բնաջնջելու» ոճիրին համար: 1918ին կը հիմնէ քրտական *Khoybur* կազմակերպութիւնը: 1919ին Պօղոս Նուպար փաշայի հետ համաձայնագիր կը կնքէ անկախ Հայաստանի եւ անկախ Քիւրտիստանի գաղափարները, դիւանագիտական շրջանակներու մօտ, երկուստեք միաժամանակ պաշտպանելու շուրջ:

գտնուող իթթիլաֆականներուն կազմակերպիչ միտքը Սատըքն էր, որ կը գտնուէր Գահիրէ: Կը մտադրէ անպայման հանդիպիլ անոր: Տակաւին 1895էն Իթթիհատին ոխերիմ թշնամի եւ անոր հանդէպ բուռն քարոզչութիւն ծաւալած Սապահ-Գիւլեան, հայ ժողովուրդի գոյութեան սպառնացող «կարմիր եռապետութեան» վտանգը վերացնելու գործնական միակ միջոցը կը նկատէ Իթթիլաֆի դաւադրական ծրագիրին յաջողութիւնը:

1913 Սեպտեմբեր 7ին, Ռումանիոյ Քոսթանցա քաղաքին մէջ բացուած ՍԴՀԿ Է. համագումարը, կը կատարէ Իթթիհատի քառամեայ իշխանութեան գնահատականը եւ կ'որոշէ.

…Պարզ լինելով, որ Օսմանեան պետական ամբողջ կազմը եւ նրա պետական հասկացողութիւնը որոշապէս ուղղուած է ձուլելու, բնաջնջելու (sic!!) բաղկացուցիչ ազգութիւնները, ու «տիրող ազգը» անընդունակ հանդիսացաւ մինչեւ ցարդ յառաջ բերելու Նորագոյն Պետութիւն. Նկատելով, որ Տաճկաստանի մէջ տիրապետում է մի ՕԼԻԿԱՐԽԻԱ, որի ղեկավարիչ ոյժն է «Իթթիհատ Վէ Թերագգը» Կուսակցութիւնը. Որոշ լինելով որ այդ Կուսակցութեան հիմնական սկզբունքներն են պահել թրքական բիւրօկրատիան, թոյլ չտալ, որ նորագոյն Պետութիւն յառաջանայ ու նրա ակնյայտնի դիտաւորութիւնն է բաղկացուցիչ ազգութիւնները ձուլել, ոչնչացնել՝ ի հարկին եւ կոտորել (sic!!!). Անվիճելի համարելով, որ իշխանութիւնը իր ձեռքում ունեցող Տիրող Դասակարգը իր հայակործան քաղաքականութիւնը սիստէմատիկ եւ անողոք կերպով յառաջ է տանում: Տեսնելով, որ հայ ժողովուրդը գործադրուող ու տիրող շարունակական ներքին քաղաքականութեան շնորհիւ քայքայման ու կործանման շէմքին վրայ է կանգնել. Համոզուած լինելով, որ քաղաքական մի այնպիսի կուսակցութիւն, որպիսին է Սօցիալ-Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութիւնը, Օսմանեան Պետութեան տուած ներկայ պայմաններով այլեւս չէ կարող իր սկզբունքների իրականացումը հետապնդելու եւ Հայ Ազգի գլխին կախուած մահաբեր սուրը (sic!) յետ հրելու ու Թիւրքիայում տիրող դասակարգը տապալելու՝ միմիայն ՕՐԻՆԱԿԱՆ հողի վրայ կանգնելով. Սօցիալ-Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան Է.-րդ Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը միաձայնութեամբ, բացի մէկից, որոշեց, յանուն պրօլետարական շահի, Մարդկային եւ Ազգային անձեռնմխելի իրաւունքների, այսուհետեւ կանգնել ԻԼԼԷԳԱԼ հողի վրայ եւ այդպիսով մղել իր Կուսակցական Պայքարը՝ մինչեւ որ աւելի յարմարաւոր քաղաքական ու տնտեսական նոր պայմաններ յառաջանան[43]:

Համագումարը, որպէս քաղաքական պահանջք, կ'ընդունի «Ինքնավար Հայաստան»ի սկզբունքը[44]:

---

[43] Հնչ. արխիւ. «ՍԴՀԿ Է. ընդհ. պատգամաւորական ժողովի որոշումները. Քէօստէնջէ, 1913 Սեպտ. 7»:

[44] Նոյն: «Ընդհանուր Եւ Մասնակի Բարենորոգումներ – Ինքնավար Հայաստան» վերնագիրին տակ, Է. Համագումարը կ'որոշէ. «*Ի նկատի առնելով որ թիւրք կառավարութեան, ինչպէս եւ իթթիհատական կուսակցութեան համապետական ընդհանուր եւ մասնակի բարենորոգչական խոստումները լոկ դիւանագիտական հնարիմացութիւններ են ժամանակ շահելու եւ ներքին ըմբոստացումները անդամալուծելու. Պատմականապէս ճշդուած լինելով, որ Թիւրքիոյ Ղեկավարիչ Դասա-*

Համագումարի փակումէն անմիջապէս ետք, «ոչ-օրինական» որոշումները գործնական ծրագիրի վերածելու համար տեղի կ'ունենայ գաղտնի ժողով մը, որուն կը մասնակիցին, Բ. Վարազդատ[45], Սապահ-Գիւլեան, տոքթ. Պէննէ[46], Սարգիս Սարգիսեան[47] եւ Ս. Վահագն[48]: Դռնփակ նիստին որո-

---

կարգը միշտ այդպիսի խաղերի մէջ է մտել, երբ բաղկացուցիչ ազգութիւններից որեւէ մէկի ԽՆԴԻՐԸ սպառնական հանգամանք է սպացել. Տեսնելով եւրոպական կապիտալիստական պետութիւնների հակամարտութիւնները եւ նրանց շահադիտական ընթացքը Արեւելեան Խնդրի մէջ. Հիմունք ընդունելով Ազգերի ինքնորոշման իրաւունքը եւ Թուրքիայի մարմնի մէջ ապրող ազգերի օտարասեռութիւնը՝ կուլտուրական տարբեր աստիճանաւորումներով. Որոշում է. Պաշտպանել Ինքնավար Հայաստանի գաղափարը, որպէս միակ միջոցը Հայաստանի մէջ ապրող թէ հայ եւ թէ միւս տարրերի հաշտ, խաղաղ, անվրդով զարգացմանը եւ յառաջադիմութեանը. Համոզուած լինելով, որ դա այն անհրաժեշտ պայմանն է որով Հայ ազգը կարող է իր ազգային անհատական գոյութիւնը ապահովել՝ ներքին եւ արտաքին ոտնձգութիւնների դէմ. եւ որովհետեւ թիւրք տիրող ազգի եւ նրա ղեկավարիչ դասակարգերի պատմական անընդունակութիւնը եւ չուզողացութիւնը այլեւս անվիճելի է, ինչպէս եւ որոշ է նաեւ արտաքին ոյժերի յարաբերութիւնները ու քաղաքական ձգտումները – պաշտպանել ԻՆՔՆԱՎԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՂԱՓԱՐԸ՝ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԿՕՆՏՐՈԼՈՎ»:

[45] Բ. Վարազդատ (Յակոբ Թիւրապեան).- Արեւմտահայ հնչակեան գործիչ: ՍԴՀԿ կեդր. վարչութեան անդամ՝ 6րդ եւ 7րդ համագումարներով: 1913-15՝ խմբագրած է *Հնչակը*. աշխատակցած է մամուլի այլ օրկաններու: Համաշխարհային Ա. պատերազմին, յարաբերութիւններ պահած է Եւրոպայի դիւանագիտական եւ մամլոյ շրջանակներուն հետ: Ապա, կուսակցական գործունէութիւն ունեցած է ԱՄՆի եւ Ֆրանսայի մէջ: Որպէս տպարանատէր, հրատարակած է Հայ Դատի եւ Ցեղասպանութեան հարցերուն նուիրուած գիրքեր:

[46] Տոքթ. Պէննէ (Պետրոս Թորոսեան).- 1887, Խարբերդի Հիւսէյնիկ գիւղ-1915 Յունիս 15, կախաղան հանուած Կ.Պոլսոյ մէջ: Նախակրթութիւնը ստացած է Եփրատ գոլէճին մէջ. բարձրագոյն ուսումը՝ Պէյրութի ամերիկեան համալսարանը, ուր իր ջանքերով հիմնադրուած է Հնչակեան ուսանողական միութիւն: Մեկնած է ԱՄՆ եւ Քանատա, ուր տարած է կուսակցական գործունէութիւն: Ազգային ժողովի ե-րեսփոխան՝ Խարբերդէն:

[47] Համագումարի նիստերուն ատենադպիր, Քոսթանցայի պատգամաւոր:

[48] Ս[եբաստացի] Վահագն (Գրիգոր Նալպանտեան).- 1872, Սեբաստիա-1953, Երեւան: Կ.Պոլսոյ մէջ կը մասնակցի Գում Գափուի (1890), Պապ Ալիի (1895) ցոյցերուն, ահաբեկչական արարքներու, Պանք Օթթոմանի գրաւման (1896)՝ ուր ծանրօրէն կը վիրաւորուի: 1903ին, Սեւ ծովու հայաշատ քաղաքներու մէջ կը կազմակերպէ հայ եկեղեցապատկան գոյքերու գրաւման դէմ ժողովրդային բողոքի ելոյթները: 1905ի հայ-թաթարական բախումներուն իր խումբով կը պաշտպանէ Էջմիածնի վանքը: Սահմանադրութենէն ետք, Սեբաստիոյ եւ Տիգրանակերտի մէջ կը ծաւալէ հասարակական աշխուժ գործունէութիւն: Քոսթանցայի համագումարէն ետք կը վերադառնայ Կ.Պոլիս, ապա Վան՝ զինման նպատակով: Իշխանութեան կողմէ կը փնտռուի եւ կը ստիպուի քալելով կտրել Պարսկաստանի ճամփան: 1915-17՝ Անդրկովկասի ռազմաճակատին վրայ կը մասնակցի Վանի, Պիթլիսի, Եր-

շումները խիստ գաղտնի կը պահուին եւ չեն հաղորդուիր նոյնիսկ պատգամաւոր ընկերներուն[49]: Ժողովին կը քննարկուի Իթթիհատի եռապետութեան հանդէպ Իթթիլաֆի դաւադրական ծրագիրը եւ անոր մաս կազմելու հարցը: Այդ ծրագիրին գործնական մասը հետապնդելու համար կը կազմուի մարմին մը, որուն մաս կը կազմեն, տոքթ. Պէննէ, Ս. Վահագն, Ռուբէն Կարապետեան[50] եւ Փարամազ, որ համագումարին՝ հետեւաբար «գաղտնի ժողովին» չէր մասնակցեր:

Այս միջոցին ժողովատեղի կը հասնի Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ պատգամաւոր Արշաւիր Սահակեան՝ ապագայի վատահամբաւ դաւաճան Արթիւր Եասեան: Ան կը ծանօթանայ առնուած որոշումներուն եւ կու տայ իր համաձայնութիւնը: Ատենագրութեան մէջ «մատնութեան» արժանի ոչինչ կար: Հոն արձանագրուած էր կուսակցութիւնը անօրինական դարձնելու որոշումը՝ որ գաղտնիք մը չէր: Այդ մասին նշուած էր համագումարի եզրափակիչ յայտարարութեան եւ ներքին շրջաբերականին մէջ ու առանձին յօդուածով լոյս պիտի տեսնէր *Հնչակի*[51] մէջ: Բ. Վարազդատ կը պնդէ, որ Եասեան գաղտնի ժողովէն տեղեակ չէր[52]: Սակայն ան, ատենագրութեան նիւթերէն եւ պատգամաւորներուն հետ ունեցած զրոյցներէն դատելով գուշակած էր, որ առնուած «իլլեգալ» գործունէութեան ետին գտնուող շարժիչ ուժը Սապահ-Գիւլեանն է, որուն յաջորդ հանգրուանը պիտի ըլլար Եգիպտոսը[53]: Քոսթանցայէն Կ.Պոլիս երթալով, Եասեան իր գիտցածն ու կռահա-

---

զնկայի, Էրզրումի կռիւներուն: 1918ին կը մասնակցի Ստեփան Շահումեանի գլխաւորած Պաքուի պաշտպանութեան: 1919ին Կ.Պոլսոյ մէջ կը մասնակցի Մեծ Եղեռնի օրերուն մատնութիւն կատարածները պատժելու գործին: 1920ին կը գլխաւորէ ԱՄՆէն Կիլիկիա մեկնող հնչակեան կամաւորական գունդերը: 1921-38՝ Սփիւռքի տարբեր գաղութներու մէջ կը ծաւալէ ազգային-կուսակցական աշխուժ գործունէութիւն, ընդ որում, 1929 Ապրիլին, անոր ջանքերով, Պէյրութի մէջ կը գումարուի ՍԴՀԿ Լիբանանի շրջանի Ա. պատգամաւորական ժողովը. 1934ին, որպէս պատգամաւոր կը մասնակցի ՍԴՀԿ Մարսէյի 9րդ համագումարին: 1947ին կը ներգաղթէ Հայաստան:

[49] [Բ. Վարազդատ], «Պատմական անցքեր – ինչո՞ւ կախուեցան քսան հնչակեանները», *Զանգ*, 17 Փետրուար 1934:

[50] Ռուբէն Կարապետեան (Յակոբ Պոյաճեան).- Չմշկածագ, 1874-1915 Յունիս 15, կախաղան հանուած Կ.Պոլսոյ մէջ: 1893ին ԱՄՆէն Զէյթուն մեկնած կամաւորներու խումբով կը հասնի Լոնտոն: Կեդր. վարչութիւնը յարմար կը գտնէ, որ ան մնայ եւ օգտակար դառնայ *Հնչակի*ն տպագրութեան: 1900-08՝ կուսակցական յանձնարարութիւններ կատարած է Պուլկարիա, Օտեսա, Եգիպտոս: Կ.Պոլսոյ ազգային ժողովի երեսփոխան՝ Չմշկածագէն:

[51] «Քաղուածքներ ՍԴ հնչակեան կուսակցութեան Է. ընդհ. պատգամաւորական ժողովի որոշումներէն», *Հնչակ*, Մայիս 1914:

[52] [Բ. Վարազդատ], «Պատմական անցքեր»:

[53] Հնչ. արխիւ. «Արթիւր Եասեանի նամակը ՍԴՀԿ Գահիրէի վարչութեան. Կոստանցա, 1913 Սեպտեմբեր 22»: Նամակի աւարտին, Ա. Եասեան ունի Յ.Գ. բաժին մը,

ծը կը փոխանցէ թրքական գաղտնի ոստիկանութեան, որ կը սկսի Սապահ-Գիւլեանը փնտռել, յատկապէս Եւրոպայէն Կ.Պոլիս ժամանող նաւերուն մէջ: Այս մասին Ռումանիոյ ընկերները կը զգուշացնեն զինք: Սապահ-Գիւլեան կը յամենայ Քոսթանցայի մէջ. այս ընթացքին ան նամակներ կը գրէ Վան գտնուող Փարամազին *«ուր նորից ամենաստրիպողական բառերով շեշտել եմ իր օր առաջ մեկնելու բացարձակ անհրաժեշտութիւնը»*[54]:

Դեկտեմբեր 6ին Սապահ-Գիւլեան Իտալիոյ Թրիէսթէ քաղաքէն Աղեքսանդրիա կ'ուղղուի այնպիսի նաւով մը, որ Կ.Պոլիս չէր հանդիպեր: Զինք դիմաւորելու եկած ընկերներէն կ'իմանայ, որ նոյն օրը, Թուրքիոյ գաղտնի ոստիկանապետ Ազմի պէյ եկած է Աղեքսանդրիա եւ Եասեան հանդիպած է անոր հետ: Ամէն կողմ լեցուած է գաղտնի ոստիկաններով եւ զինք կը փնտռեն՝ հաւանաբար ուղղակի սպանելու համար: Կ'ապաստանի անվտանգ տեղ մը եւ լուր կը ղրկէ իր հետ կապ ունեցող ընկերներուն եւ կնոջ՝ միառժամանակ չնամակցելու իր հետ, մինչեւ նոր հասցէն ղրկելը:

Կարճ ժամանակ անց Փարամազ կը հասնի Փարիզ: Բնականաբար ան կը զարմանայ, երբ «*անընդհատ նամակներով*»[55] զինք Փարիզ կանչող Սապահ-Գիւլեանը հոն չի գտներ եւ կը գրէ նամակ մը, որուն Սապահ-Գիւլեան կը պատասխանէ միայն 1914 Մարտ 3ին՝ զոր կը ներկայացնենք ստորեւ: Նամակը աննկատ մնացած է հնչակեան արխիւին մէջ եւ առաջին անգամ է որ կը դրուի շրջանառութեան: Մեզի հասած են նամակին առաջին 8 էջերը, ուր Սապահ-Գիւլեան կը բացատրէ Փարիզ չգտնուելուն եւ Գահիրէէն վերադարձը ուշանալուն պատճառները: Ուստի ան կը ստիպուի խօսիլ այնպիսի մանրամասնութիւններու մասին, որոնց շուրջ, այլ առիթներով, ան

որ մեր ուշադրութիւնը գրաւեց. *«Չմոռնամ ըսելու ընկերներ թէ Սապահը եկածին պէս հրապարակային ժողովներ պէտք է սարքել: Դրա համար հարկ է թափրոն եւս. ուրեմն Ձեր աւագ պարտականութիւնն է թափրոնի ներկայացման գործը յաջողցնել, եթէ կ'ուզէք որ կուսակցութիւնը բարձր մնայ եւ շինուած հսկայ ծրագիրներ ջուրը չիյնան: Ընկերը հազիւ 20-30 օր պիտի մնայ: Անկէ վերջ պիտի մեկնի ուրիշ մէկ կողմ: Քաջալերեցէք ընկերներ թափերախումբը: Ամէն գնով եւ զոհողութիւնով դրամ հայթայթեցէք. ահաւասիկ հոս է որ Ձեր յեղափոխականի ժէտթը ցոյց պիտի տաք որուն արդէն ես վստահ եմ»:* Ի՞նչ կապ ունէր թատերական ներկայացումը Սապահ-Գիւլեանի մտահոգութիւններուն հետ. ի՞նչ կապ ունէր սիրողական ուժերով կազմուած թատերախումբի մը ելոյթը «կուսակցութեան հսկայ ծրագիրներուն» եւ ընկերներու յեղափոխական նուիրուածութեան հետ. արդեօք փորձ մը չէ՞ր տուեալ օրը եւ ժամուն, տուեալ վայրին մէջ Սապահ-Գիւլեանի ներկայութենէն ի սկզբանէ տեղեակ ըլլալու…

[54] ՀԽ. արխիւ. «Սապահ-Գիւլեանի նամակը Վարազդատին. Կոստանցա, 1913 Հոկտեմբեր 15/28»:

[55] ՀԱԱ, ֆ.1456, ց.1, գ.179, թ.41 – 47: «Սապահ-Գիւլեանի նամակը անյայտ ընկերոջ»: Ենթադրաբար գրուած Սիրվարդին (Եղիա Գրիգորեան), Հելիոպոլիս, 1915 Ապրիլ 6/19:

արտայայտուած չէ եւ անոնք մնացած են որպէս պատմական գաղտնիքներ:

ՆԱՄԱԿԸ

Գահիրէ, 3 Մարտ 1914

«Սիրելի Փարամա՛զ,

Ստացայ նամակդ, ինչպէս եւ երկու հեռագիրներդ: Հոութիւնս շատ եղաւ, ըստ երեւոյթին՝ դա սրտնեղութեան առիթ պիտի տար, բայց այլապէս էլ չէր լինել: Հարկաւոր էր, որ խնդիրները լուսաբանուէին եւ որոշեալ ընթացքի մէջ մտնէին, որպէսզի անելիքս եւ գրելիքս գիտնայի:

Հեռագրել էի, որ «դադրեցրէք նամակները, գալիս եմ», թէ ինչո՛ւ այդպէս, ասեմ համառօտակի: Թշուառական Եասեանի մատնութիւնների մասին տեղեկութիւն ունես: Երբ Ազըմի բէյը Պօլիս դարձաւ վերջերս, նա մի առանձին գործունէութիւն ցոյց տուեց: Եգիպտոս լցուեցաւ լրտեսների եւ տեռոռօրների վոհմակներով, բոլորն էլ կազմակերպուած եւ որոշ նպատակի համար Իտտիհատի կեդրոնական կօմիտէի կողմից ուղարկուած: Այդ լակոտին ձգել էի իր նախկին տան մէջ եւ իւր հոմանուհուն կաշառել էի՝ ոչ միայն հսկելու, այլեւ պէտք եղած տեղեկութիւնները ինձ բերելու, ինչ որ կատարում էր, թէեւ ո՛չ ցանկացածս չափով, բայց այնուամենայնիւ որոշ տեղեկութիւններ ստանում էի: Ցաւն այն է՝ որ հայ, յոյն, արաբ ուրիշ լրտեսներ էլ, նոյն իսկ կիներ, այդ թշուառականի տրամադրութեան տակն էին. իրենց կազմակերպութեան ցանցը ամէն կողմ էին տարածել: Տեսակցութիւնները լինում էին այդ թշուառականի տանը եւ քաղաքից դուրս, թուրք commissariat-ի մէջ[56], մասնաւորների տներում: Իմացայ, որ Ազըմի բէյից կարեւոր հրահանգներ-թուղթեր է ստացուել: Թշուառականի հոմանուհին՝ Արաքսի խոստովանեց, որ Արթիւրը վաղը պիտի փախչի, բոլորովին ծպտուած. ինչո՞ւ, որովհետեւ կարգադրուել էր Սատըգ բէյին եւ ինձ զարկեն, ուստի կարգադրութիւնը անելուց յետոյ՝ ինքը օձիքը ազատել էր ուզում: Տեղեկացրել էին, որ Պօլսից եկած յատուկ **էմիսէրները**[57] տպեալ ցուցակ էին կազմում: Աղջկան ամէն խոստում արեցի, որ սրիկայի դէմ պատուոյ դատ բանայ, չհամաձայնեց: Մեթր Ասատուրեանը[58], Սատըգ պէյը, ես, մինչեւ Թէֆֆիկ բէյ, եւայլն[59], նախ որոշեցինք, որ Սատըգ բէյի կողմից ոստիկանութեան գանգատագիր տրուի, որպէսզի կարողանանք ոչ միայն այդ սրիկայի երթը արգիլել՝ գէթ ժամանակաւորապէս մինչեւ որ իր մասին բաց թողած շրջաբերականները նկարով միասին՝ տեղ հասնեն, այլեւ տունը կոխել, խուզարկել եւ նամակները գրաւել: Վերջը՝ օրէնքի ուրիշ միջոց չգտնելով, Մեթր Ասատուրեանի կողմնակի աշխատանքի պատճառով, մեր ընկերներից 6-7 հոգի ոստիկանութեան գանգատ ներկայացրին, որպէս **դրամաշորթի եւ խաբեբայի**, մի կերպ յաջողեցինք: Տունը կոխել տուինք: Սոսկալի կերպով ծպտուած (1/2 ժամ յետոյ պիտի փախէր), անճանաչելի: 30

---

[56] Յատուկ յանձնարարութիւններու գրասենեակ:

[57] Ֆրանսերէն՝ յատուկ առաքելութեան գործակատարներ:

[58] Յակոբ Ասատուրեան (Արծրունի).- փաստաբան՝ 1890ականներուն Փոքր Հայքի մէջ մաս կազմած ազատագրական շարժումներուն:

[59] Սապահ-Գիւլեան, իր *Պատասխանատուները* աշխատութեան մէջ կը նշէ, որ Գահիրէի այս փորձանքէն դուրս գալու համար թանկագին ծառայութիւն կը մատուցէ նաեւ Ազուրի:

սրուակ թոյն, **րոպէապէս** ներգործողից մինչեւ **1-2 ամիս շարունակողը**, թունաւոր դաշոյն, թունաւոր ասեղներ եւ գնդասեղներ, քնացնելու եւ ներարկելու զանազան գործիքներ՝ կատարեալ մի շտեմարան: Սրիկային ձերբակալեցին: Ա-րար-աշխարհ՝ Պօլիս-Գահիրէ իրարու եկաւ: Չէ՞ որ Ազըմի պէյը եկել էր Աղէքսանդրիա իր տեռոռներով՝ նախքան Պարիզ գնալը[60]: Չէ՞ որ նա այստեղ տեսակցութիւն էր ունեցել **Խտիվի հետ**, գործի մէջ առանձին մասն ունեցել էր այստեղի թուրք բարձր commissair-ը, չէ՞ որ Սայիդ Հալիմը[61] (սատրազմ) եգիպտացի եւ Խտիվի մօտիկ ազգականը (մօրեղբօր որդին) է, ուստի երկիւղ կրելով, որ սրիկան ամէն բան կարող է խոստովանիլ՝ Պօլսից եկած հեռագրերի վրան՝ բանտից բաց թողեցին եւ ոստիկանական հսկողութեան տակ առան: Ասեմ, սրիկան խոստովանեց իր պաշտօնական լրտես լինելը, ասաց, որ ինքը հսկողութեան տակ էր առել Սատըգ բէյին եւ հնչակեաններին: Չորրորդ օրը գիտցանք, որ խնդիրը փակել են ուզում: Հրատարակեցինք նոյնիսկ այն հեռագիրը, որով այստեղի թուրք բարձր commissair-ը, Արթիւրին կանչում է Աղէքսանդրիա՝ Սավօյա պանդոկ, Ազըմիի եկած օրը, ուր եւ այդ օրը եւ ժամին եղել է Խտիվը եւ նրան ունկնդրութիւն շնորհել: Նախարարապետ, արդարութեան նախարար, Խտիվը ուղղակի խայտառակւում էր, որ անգիտակցաբար մի ծուղակի մէջ էր ընկել… վերջը, սրիկային հսկողութեան տակ բաց թողնելով, 4-5 օր սրանից առաջ փախաւ՝ ասում են: Բայց մասնաճիւղը սրիկայի 2 տեսակ նկարը եւ մի փոքր շրջաբերական[62] արդէն ցրուել է ամէն կողմ: Ուր որ երթայ կը ճանչցուի: Ես էլ ամէն կողմ գրել եմ: Դաշնակիցներին (Ֆրանսայի եւ Անգլիոյ ներկայացուցիչներուն - Ե.Ճ) էլ ցրուել ենք: Արդ, այդ օրերի մէջ, օսմանեան բարձր commissair-ը, պահանջ դրեց, յանուն իր կառավարութեան, որ **մեր տները** խուզարկեն, այն հիմունքով, որ մենք դաւադրութիւն ենք կազմում օսմանեան պետութեան եւ նրա բարձր պաշտօնատարների կեանքի դէմ: Բոլոր ընկերները պէտք եղած զգուշութիւնները ձեռք առան: Ես պակաս տեղ չթողեցի՝ մօտս մի կտոր թուղթ անգամ չթողեցի: Մեր փոստապետը անգամ կասկածելի դարձաւ: Եւ որովհետեւ նամակ գրելու եւ Վարազդատին հասկացնելու ժամանակ չկար, ուստի հեռագրեցի, որ **նամակները դադրեցնի** եւ ես գալիս եմ: Վերջը, լորդ Քիչիները[63] եկաւ, սա էլ թոյլ մարդ է: Սատըգ բէյը ճարտար դուրս եկաւ եւ բացեց **մի մեծ գաղտնիք**, այն է՝ Իտտիհատը ուզում է (համաձայն մի որոշման) ներկայ

---

[60] Շատ հաւանաբար Ազմի պէյի Փարիզ մեկնիլը կապ ունի Շերիֆ փաշայի դէմ կազմակերպուած ոճրափորձին հետ: Տեսնել ծանօթ. թիւ 42:

[61] Mehmed Said Halim Paşa (1863-1921).- Եգիպտոսի իշխանական ընտանիքէն: 1888ին Surayi Devleth (Պետական խորհուրդ) անդամ: Սահմանադրութենէն ետք՝ ծերակոյտի անդամ: 1912ին՝ Պետական խորհուրդի նախագահ: 1913ին՝ Իթթիհատի ընդհ. նախագահ եւ արտգործ նախարար (հրաժարած 1917ին): 1919ին, Դաշնակիցներուն կողմէ աքսորուած Մալթա: Հայ վրիժառուներու կողմէ զգետնուած Հռոմի մէջ:

[62] ՀԱԱ. Ֆ.1456, ց.1, գ.178, թ. 2. «ՍԴՀԿ Գահիրէի վարչութեան յայտարարութիւնը Արշաւիր Սահակեանը թրքական լրտես ըլլալուն մասին, անոր լուսանկարով եւ կեղծանուններուն նշումով»:

[63] Lord Kitchener.- Սուտանը նուաճած անգլիացի հրամանատար, 1911-14՝ Եգիպտոս-Սուտանի զինուորական կառավարիչ:

Խտիվին գահընկեց անել եւ Սայիտ Հալիմին խտիվ անել եւ դրա համար ֆէտվա[64] են պատրաստում, այն հիմունքով, որ ներկայ խտիվը հայրը խտիվութիւնը **կաշառքով** է առել եւ ոչ թէ օրինականապէս, քանի որ ըստ մեծութեան եւ ժառանգականութեան իրաւունքի խտիվութիւնը պիտի հասնէր Սայիտ Հալիմի հօրը, ուրեմն նրանք ուզում էին այն խտիվին **ուզուրպատոր**[65] յայտարարել ըստ ղուրանական օրէնքի[66]: Դրա վրայ խտիվը ֆրօնտը[67] փոխեց եւ նա, որ մէկ օր առաջ Սատըգ բէյից պահանջել էր երկրից դուրս գալ՝ պատուիրեց **արխային**[68] նստել: Այդ հարուածը այդպէս հեռացրեցինք:

Մէկկայի Շէրիֆի որդին այստեղ պիտի գար՝ Պոլիս երթալու որպէս պարլամենտի անդամ[69]: Սատըգ բէյը յատուկէն խնդրեց, որ մնամ եւ նրա երթալու առաջը

---

[64] Արաբերէն՝ կրօնական բարձրագոյն հրովարտակ:

[65] Ռուսերէն՝ զեղծարար:

[66] Սապահ-Գիւլեան քաջածանօթ էր Եգիպտոսի քաղաքական նորագոյն պատմութեան: Ան այս մասին լուրջ ուսումնասիրութիւն մը հրատարակած էր *Նոր դար*ի մէջ («Եգիպտոս», 4, 6, 10, 11 Ապրիլ 1896), ուր բացատրած «խտիւ» պաշտօնին յառաջացման պարագաները (ներառեալ այդ պաշտօնին փոխանցման ժառանգական եղանակը), Խտիւ-սուլթան յարաբերութեան օրինական ձեւը, Եգիպտոսի բնակչութեան բաղկացուցիչ խաւերը՝ ֆելլահներ, օսմ. բանակի չերքէզներ, մեմլուքներու մնացորդացներ եւն., Եգիպտոսի տնտեսական վերիվայրումները, Ֆրանսայի եւ Անգլիոյ ռազմա-տնտեսական շահերը եւն.: Ուսումնասիրութեան սկիզբը Սապահ-Գիւլեան կը գրէ. *«Եգիպտոսի ժամանակակից պատմութեան գլխաւոր գծերի հետ ծանօթանալն աւելի կարեւոր է մեզ համար, …որովհետեւ այդ երկրում եւս գործող ոյժերը (facteur) (նկատի ունի Օսմ. Կայսրութիւնը, Անգլիան, Ֆրանսան - Ե.Ճ.) աւելի կամ պակաս շրջուն դիրքով նոյնն են եղած ինչ որ Հայաստանում»:* Ժամանակը այնպէս կը բերէ, որ Սապահ-Գիւլեան ի՛նք ըլլայ իր տուած խորհուրդէն ամենէն շատ օգտուողը:

[67] Լատիներէն՝ ճակատ. փոխաբերաբար՝ կողմնորոշում:

[68] Թրքերէն՝ անհոգ:

[69] Մեքքայի Շերիֆը, պաշտօնապէս Հիճազ նահանգի (ներկայիս Սէուտական Արաբիա) նահանգապետ էմիր Հուսէյն Իպն Ալին էր. Մուհամմէտի շառաւիղէն, արաբ ցեղախումբերուն մօտ մեծ հեղինակութիւն վայելող: Ան կը գլխաւորէր արաբ ապստամբական շարժումները եւ այդ կապակցութեամբ յարաբերութեան մէջ էր անգլիացիներուն հետ: Մեծ Եղեռնի օրերուն, Շերիֆ Հուսէյն երկու ուղերձներով հայ ժողովուրդը *ահլ ալ զըմմէ* (իսլամներու կողմէ հոգածութեան արժանի ժողովուրդ) կը հռչակէ: Ան անձնապէս ալ, բազմաթիւ առիթներով, իր բարեացակամութիւնը ցոյց կու տայ հայ գաղթականներուն հանդէպ: Իր աւագ որդին՝ Շերիֆ Ֆայսալ, կարճ ժամանակ անց կը գլխաւորէ արաբական ապստամբ երեք բանակներէն մէկը եւ յառաջանալով հիւսիս, 1918ին կը մտնէ Դամասկոս, պատերազմէն ետք կը հռչակուի Սուրիոյ եւ Իրաքի թագաւոր: 1914 Մարտ-Ապրիլին կ'ընտրուի յետսահմանադրական Օսմ. Կայսրութեան Գ. երեսփոխանական ժողովի անդամ եւ Կ.Պոլիս կ'երթայ ներկայ ըլլալու ժողովի բացման նիստին՝ Մայիս 1/14ին: Շերիֆ Ֆայսասլի հետ օսմանեան ընդդիմադիրներու նախաձեռնած այս յարաբերութիւնները նկատի առնելով, Hasan Kayali կը գրէ. *«Եւրոպա հաստատուած իթթիլաֆականները եւս իրենց համախոհութիւնը կը յայտնեն Շերիֆ Հուսէյնին»*

առնենք: **Եկաւ մարդը, կատարելապէս համոզուեցաւ**, ո՛չ միայն ինքը չի ուզում երթալ Պօլիս, այլ աշխատում է արգիլել բոլոր **բուն արաբ** երեսփոխանների երթալուն, որքան էլ որ ընտրեն: Սա միւսլիմանական աշխարհի մէջ ամենաազդեցիկ անձի որդին լինելով՝ համոզեց եւ իր հօրը՝ այսօր Մէկկայի Շէրիֆը ընդդիմադիրների գլուխն է անցել՝ եւ ամէն զոհաբերութեան պատրաստ է: Սա ազդեց եւ **Խտիվի** վրան, որը հիմա ուղղակի հակաիտտիհատական գծի վրայ է կանգնել եւ պատրաստ զոհաբերութեան[70]:

Պասրայից **16** հազար արաբներ զէնքի տակ նշանի են սպասում[71] եւ սրանք մի շատ լաւ յայտարարութիւն են բաց թողել, որ թարգմանաբար «Երիտասարդ Հայաստան»ին պիտի ղրկեմ[72]: Տաճկաստանի զանազան շրջաններից խումբերով

(*Arabs and Young Turks – Ottomanism, Arabism, and Islamism in the Ottoman Empire, 1908-1918*, London, 1997, էջ 198):

[70] Խտիւ Ապպաս Հիլմի Բ. փաշան ունէր ազգայնական հակում եւ հաշտ չէր անգլիական գերիշխանութեան հետ. այս դիտանկիւնէն ան աւելի օսմանամէտ էր: Երբ արաբ ազատագրական շարժման ղեկը կը կեդրոնանայ անգլիամէտ եւ հակա-օսմանական Մեքքէյի Շերիֆին ձեռքը, անոր մօտ յառաջ կու գան քաղաքական տատանումներ: Սապահ-Գիւլեանի ակնարկը կը վերաբերի այս շրջանին: Իվերջոյ խտիւը կը դիրքորոշուի ի նպաստ Օսմ. Կայրութեան: Կը հաստատուի Կ.Պոլիս, ուր 1914 Յուլիսին կ'ենթարկուի ձախող ահաբեկչութեան: Երբ Օսմ. Կայսրութիւնը պաշտօնապէս կը միանայ Գերմանիա-Աւստրօ-Հունգարիա դաշինքին, Անգլիա 1914 Դեկտեմբերին, կը ջնջէ խտիւի պաշտօնը եւ Եգիպտոսի սուլթան կը հռչակէ Հուսէյն Քամիլը: Ապպաս Հիլմի 1915 Յունուար-Փետրուարին կը գլխաւորէ Սուէզի ջրանցքի անգլիական դիրքերուն վրայ օսմ. բանակին յարձակումը, որ կ'աւարտի օսմ. բանակին պարտութեամբ: Սա նաեւ խրախուսիչ ազդեցութիւն կ'ունենայ արաբ ապստամբ ուժերուն վրայ:

[71] Յետագային, 1915 Հոկտեմբեր 14ին, Եգիպտոսի մէջ ծառայած թուրք սպայ Ռիֆաթ էֆենտի, Հայկական Ցեղասպանութեան իրականութիւնն ու պատճառները քօղարկելու նպատակով, տանիմարքական *Extrabladet* թերթին տուած հարցազրոյցին մէջ, *«որ ամբողջ գերման մամուլին կողմէ կ'արտապատի»*, կը խօսի Թուրքիոյ գոյութեան սպառնացող եւ *«բովանդակ հայութիւնը իր մէջ ներփակող դաւադրութեան»* մը մասին, որուն նպատակն էր Կ.Պոլիսը յանձնել Դաշնակիցներուն: Անոր համաձայն, *«Թուրքիոյ պատմութեան մէջ մեծագոյնը նկատուող»* այս դաւադրութեան մասնակիցները, որոնց մէջ Արաբիոյ ապստամբապետ Ապտուլ Քատիր, կը ձերբակալուին եւ անոնցմէ 21 հոգի կախաղան կը հանուի Կ.Պոլսոյ մէջ. շուրջ 100 հոգի ալ կը դատապարտուի տաժանակիր աշխատանքի (Johannes Lepsius, *Rapport Secret sur Les Massacres D'Armenie*, Beirut, Hamaskaine, 1968, էջ 203-04):

[72] «Հայրենիքի բարենորոգութիւն կուսակցութեան Պասրայի ընդհանուր կեդրոն»ին կողմէ հրապարակուած թռուցիկը կը տպուի Սապահ-Գիւլեանի կողմէ Պուքրէշի մէջ խմբագրուած *Ինքնավար Հայաստան* եռօրեայ մէջ («Արաբական մի վաւերաթուղթ»՝ 24 Ապրիլ, 1, 8, 15 եւ 22 Մայիս 1916): Թռուցիկը - իսլամական սկզբունքներէ մեկնած - Իթթիհատի ղեկավարութիւնը կը մեղադրէր ամէն տեսակի ապօրինութիւններու եւ խայտառակութիւններու մէջ: Սապահ-Գիւլեանի համաձայն, թռուցիկը, 1914 Մարտին, *«մեր դիտողութեան վրայ՝ թուրքերէնի վերածուեց*

Սատըգ բէյի մօտն են գալիս՝ խորհուրդ հարցնելու համար: Կազմւում է դժգոհների մի բանակ, ամէն կողմերից, մանաւանդ բուն թուրք, արաբ եւ սիւրիացի տարրերից[73]: Սրանց բոլորի համոզումն այն է, որ Իտտիհատի ղեկավարիչ **ոգին** գերմանական դիւանագիտութիւնն է, իսկ գերմանական շահը Թուրքիայի կործանման մէջն է: Այդ մասի մէջ չեմ մտնում, չափազանց չերկարելու համար:

Նախ որոշած էինք, որ Սատըգ բէյի հետ միասին Պարիզ գանք: Բայց **այսօր** իրադրութիւնը մի այլ հանգամանքի ներքոյ ներկայացաւ: Քանի որ արաբական եւ դժգոհների աշխարհը շարժւում է, դա չի կարող լինել առանց Սատըգ բէյի ներկայութեան բուն թատերաբեմին վրայ: Բրիտանական այստեղի ներկայացուցիչը (երկու օր առաջ տեսնուեցանք) Ստօրս[74] կատարեալ հաւաստիացումն տուեց, ու նրան (Սատըգ պէյի – Ե.Ճ.) այստեղ խոստացան [Փարիզ մեկնումի] ճանապարհածախսը տալ: Սատըգ բէյը Իսմայիլ բէյին հեռագրով կանչեց, ես ասացի՝ նամակ պիտի գրեմ, եթէ նա չգայ կամ ուշանայ, դու իրեն հանդիպիր (Շէրիֆ փաշայի մօտ) եւ հարցրու թէ ինչո՞ւ չեկաւ, կամ երբ պիտի մեկնի կամ միասին գաք: Իսկ եթէ նա արդէն ճանապարհ է ընկել, այն ժամանակ **հեռագրիր** ինձ, որ քեզ ճանապարհածախս փոխադրել տամ II կարգի: Իսմայիլ բէյը բաւականին ազդեցութիւն ունի թուրք շրջանների վրայ, նրա երեւումը աւելի ոգեւորութիւն առաջ կարող է բերել, մանաւանդ որ ձեռներէց ոգու տէր է: Քո գալը դարձեալ անհրաժեշտութիւն է, որովհետեւ ընդհանուր շարժում եւ գործունէութիւն պիտի գծուի, որի թատերաբեմը գլխաւորապէս Պօլիս, Իզմիր, Իզմիթ, Բուրսա, Դամասկոս եւ Արաբիա (Միջագետք, Բասրա) պիտի լինի:

Ես առաջին օրից ասած եմ, որ մենք օգնութիւն կարող ենք տալ, բայց դրամ չունենք, նիւթականը իրենք պիտի ստանձնեն, ինչ որ խոստացել են: Արդ, ինչ եզրակացութեան, որ գալու լինենք, ըստ այնմ էլ մեր նիւթական պահանջ-ցուցակը կը ներկայացնենք: Գալդ բացարձակ անհրաժեշտութիւն է, մանաւանդ երբ Իսմայիլ բէյը գալու լինի:

Ես ինքս պիտի գայի, բայց գալովս խնդիրը չպիտի վճռուէր, քանի որ թէ Սատըգ բէյը թէ միւսները, մանաւանդ Շէյխի տղան եւ այլ ղեկավարիչները անկարող պիտի լինեն գալ:

եւ բուն Անատօլիի (Գօնիա, Պրուսա, եւայլն) շրջանի թուրք ժողովուրդի մէջը տարածուեց՝ ահագին թուով, մանաւանդ զինուորականների»:

[73] Օսմանեան ընդդիմադիրներուն կապը արաբ ապստամբներուն հետ, ինչպէս նաեւ անոնց յարաբերութիւնները Լորտ Քիչընըրի եւ Յունաստանի վարչապետ Վենիզելոսի հետ կը լրտեսուի Շերիֆ փաշայի Փարիզի գործակիցներէն Միտհաթի կողմէ, որ թրքական գաղտնի ոստիկանութեան կը տեղեկացնէ 1913 Յուլիս-1914 Յուլիս Սատըք պէյի եւ Շերիֆ փաշայի միջեւ փոխանակուած նամակներուն պարունակութիւնը, ուր կը պարզուի, որ *«այս դաւադրական գործին մէջ մտած էր նաեւ տեղակալ Սատըքի միջոցաւ Հնչակեան Սապահգիւլեանը Եգիպտոսէն»*. (Lepsius, էջ 206):

[74] Ronald Storss.- Եգիպտոսի անգլիական գաղտնի սպասարկութեան Արեւելեան գրասենեակի քարտուղար, Արաբական գրասենեակի պատասխանատու, որ աշխատանքները կը համադրէր արաբ ապստամբներուն հետ:

Որոշ է, Հայկական Հարցը կատարեալ ֆիասկօ կրեց, սիզիֆեան աշխատանքը նորից պիտի սկսուի[75], եւ եթէ ուրիշ ոչինչ չը կարողանանք անել, [անընթեռնելի բառ] Իտտիհատի գոյութիւնը ջնջելը, նրան տապալելը, թուլացնելը ահագին դիւրութիւն պիտի տայ մեր ապագային հասնելու: Առանց Ինքնավար Հայաստանի մենք չենք կարող ապրել, վտանգը միշտ կայ: Ա՛յնքան արիւնից, ա՛յնքան աշխատանքից յետոյ Հայաստանը **երկու** մասի բաժանուեց[76] որ ասել է **գրաւման** դուռը մի քայլ առաջ եկաւ. խնդիրը այդպէ՞ս կարող էր վերջանալ, եթէ հայ կուսակցութիւնները մինչեւ ցարդ թուլացրած լինէին Իտտիհատին: Ապուշ Դաշնակցութիւնը 4-5 տարի ոյժ տուեց Իտտիհատին, նրա ձեռքին խաղալիք դարձաւ եւ վերջն էլ աքացին կերաւ: Հնչակեանութիւնը սկզբից ի վեր (դեռ 1894-ից) այդ վտանգը տեսաւ եւ իր սլաքները չմոռցաւ Իտտիհատին ուղղելու:
Ես էլ ուզում եմ, որ երեքս[77] նախ միասին գանք, բայց ուշացար դու, եւ գործերի ընթացքը գահավիժում են. **գամ**, բայց առանց դրամի, իրարու երես պիտի նայենք Պարիզի մէջ, եւ այստեղի սկսուած գործը պիտի վտանգուի: **Կիլիկիայի գործը**[78] ձեռք եմ առել, այնտեղ ընդվզումի լաւ ոգի է տիրում, մանաւանդ այժմս: Ի՞նչ անենք, 2-3 հոգի չեն կարող ամէն բան անել: Ընկերները, որ օգնութեան չեն հասնում, ի՞նչ անենք: Խայտառակուեցանք. մէկ հիմունք առաջ բերենք, կայունութիւն ստեղծենք եւ «Հնչակ»ը սկսենք, եւ ո՛չ թէ տարին մէկ-երկու հատ հրատարակենք եւ յետոյ ըսենք՝ դրամի պատճառով, այնինչ չի կարող պատահել:
Ի՞նչ պիտի լինի մեր դերը եւ մեր անելիքը: Իրաւ է երեքս միասին պիտի լինէինք խորհելու համար, բայց սկզբունքի եւ գործունէութեան մասին չեմ կարծում, որ երեքիս մէջ համամտութիւն չը լինի: Եթէ իր հալին մնալու լինի, սրանից 1-2 տարի յետոյ «Իտտիհատ»ին տապալել այլեւս շատ դժուար պիտի լինի, եթէ ոչ անհնար: «Իտտիհատ»ին տապալելը, նրան թուլացնելը, ասպարէզից վար իջեցնելը է՛ն մեծ ժառանգութիւնը պիտի լինի, որ Հնչակեանութիւնը պիտի մատուցանի թէ սոցիալիզմին եւ թէ Հայ ազգութեան՝ ապագայի տեսակէտից: Այդ չափազանց վտանգաւոր՝ պանթիւրքիզմ, պանիսլամիզմ եւ նացիօնալիզմ մարմնացնող կուսակցութիւնը ապագային էն վտանգաւորը պիտի լինի **մեր** ապագայի տեսակէտից: Եւրոպական հակամարտ շահերն էլ, կարծես, նրա գոյութիւնը, գէթ ժամանակաւորապէս, իրենց հաշուին յարմար են համարում: Հարկաւոր է հարուածը տալ՝ քանի որ դեռ նա թոյլ է: Հնչակեանութիւնը, ինչպէս առաջին օ-

---

[75] Յունական դիցաբանութեան չաստուածներէն Sisyphus, ստախօսութեան պատճառով, կը դատապարտուի մեծ եւ ծանր գունդ մը գլորելով հասցնել բլուրին գագաթը. ամէն անգամ, երբ ան կը մօտենայ գագաթին, գունդը ետ կը գլորի մինչեւ ստորոտ. այս աշխատանքը ան կը կատարէ յաւիտեանս: Հայկական Հարցի հետապնդումը «սիզիֆեան աշխատանք»ին նմանցնելով, Սապահ-Գիւլեան նկատի ունի Հայաբնակ նահանգներու բարեկարգման ծրագիրը, որմէ ետք, Հայկական Հարցի հետապնդումը պիտի վերադառնար իր ելակէտին:

[76] Հայաբնակ Նահանգներու Բարեկարգութեան Ծրագիրին համաձայն, հայկական 6 նահանգները կը բաժնուին վարչական երկու տարածքներու:

[77] ՍԴՀԿ կեդրոնական վարչութիւնը բաղկացած էր երեք անդամներէ՝ Սապահ-Գիւլեան, Փարամազ, Բ. Վարազդատ:

[78] Կիլիկիոյ հայութիւնը զինելու ծրագիրը (տես նաեւ թիւ 83 ծանօթագրութիւնը):

րից արաւ, առաջինը պիտի լինի այդ ցրուած օտար ոյժերը[79] միացնելու եւ մի որոշ ուղղութեան մէջ դնելու: **Նրանք այդ վստահութիւնը ունեն** [մեր] **վրայ**: Եթէ Սատըգ բէյը այստեղից անմիջապէս հեռանայ, Մէկկայի Շէրիֆ, նրա որդին, արաբ երեսփոխաններ, այստեղի այն շրջան[ակ]ը, որ **նիւթական ահագին օգնութիւն** պիտի տան, այդ բոլորը կարող են ո՛չ միայն տատանուիլ, այլեւ պէտք եղած կորովը եւ արագաշարժութիւնը երեւան չբերել. չէ՞ որ արեւելքի զաւակ են: Սատըգ բէյին իբրեւ **դրօշակ**՝ ամէնքը հաւատում եւ հետեւում են, որովհետեւ **ուղղամիտ, ազնիւ** եւ վերին աստիճանի անշահախնդիր մարդ է: Շէրիֆ փաշան ո՛չ գործ ստեղծող է, ո՛չ էլ նրա վրայ լիակատար վստահութիւն ունեն դժգոհ տարրերը: Ամէնքի համոզումն է, անդրդուելի, որ Թիւրքիան պիտի ընկնի եւ Իտտիհատը նրա անկումը փութացնում է եւ անխուսափելի դարձնում, իր ներքին եւ արտաքին քաղաքականութեամբ: **Եթէ** Թիւրքիան փրկուի, միակ յոյսը՝ դա իթիլաֆականութեան լայն ծրագրի գործադրութեամբը պիտի լինի, մի յոյս ունեն վերջապէս, եւ դա զարմանալի չէ, այլ պատմական մօմէնտի հոգեբանութիւն:
Հայկական Հարցը - **«լեռը ծնաւ մուկն չնչին»**[80] այլապէս էլ լինել չէր կարող: Ի՞նչ անել.- կամ **րայական պահպանողականութիւն**, կամ **կորովի գործունէութիւն**, սրանցից առաջինի խօսքը չի կարող լինել, որքան էլ որ Մուրատների[81],

---

[79] Նկատի ունի թուրք, արաբ, քիւրտ, ալպան ընդդիմադիր ուժերը:

[80] Խօսքը դարձեալ կը վերաբերի հայաբնակ նահանգներու բարեկարգման ծրագիրին:

[81] Մեծն Մուրատ (Համբարձում Պոյաճեան).- 1860, Հաճըն-1915 Յուլիս, կախաղան հանուած Կեսարիոյ մէջ: 1885ին, մինչ ան կ'ուսանէր Կ.Պոլսոյ բժշկական համալսարանին մէջ, խումբ մը ընկերներով կը հիմնէ Հայ յեղափոխական ընկերութիւնը: 1890ին Մուրատ եւ ընկերութեան անդամները, լրիւ կազմով կը միանան Հնչակեան կուսակցութեան: Նոյն թուին կը գլխաւորէ Պապ Ալիի յայտնի ցոյցը: Փախստական կ'անցնի արտասահման՝ Ժընեւ, Աթենք: 1892ին, կը վերադառնայ Սասուն: Քալելով կը կտրէ ռուս-թրքական սահմանը եւ Թիֆլիս հասնելով կ'աշխատի զէնք հասցնել Սասուն: 1893-94՝ կը գլխաւորէ Սասունի Ա. ապստամբութիւնը: Կը ձերբակալուի եւ կ'աքսորուի Թրիփոլիթանիոյ (Լիպիա) Ֆիզան քաղաքի բերդարգելարանը: 1905ին, տակաւին աքսորական, ՍԴՀԿ Ջ. համագումարին կողմէ կ'ընտրուի կեդր. վարչութեան անդամ: 1906ին, առասպելական փախուստով մը կը հասնի Փարիզ ու կը միանայ Կեդրոնի գործընկերներուն: Նոյն տարին կոչով մը կը դիմէ հայ յեղափոխական կուսակցութիւններուն՝ գումարելու խորհրդաժողով, միասնական գործունէութիւն մը ստեղծելու համար: 1907ին կ'այցելէ Եգիպտոսի, Քանատայի եւ ԱՄՆի հայաշատ քաղաքները, ամէնուր արժանանալով ժողովրդային ջերմ ընդունելութեան: 1908-12՝ օսմ. խորհրդարանի երեսփոխան՝ Կիլիկիոյ (Գոզան) շրջանէն: 1908-15՝ ազգային ժողովի երեսփոխան: 1914ին, պատրիարքի հովանաւորութեան տակ կազմուած Հայաբնակ նահանգներու բարեկարգութեան յանձնաժողովի անդամ: 1915ին հայ մտաւորականներու հետ կ'աքսորուի Այաշ: Աքսորականներէն կը մեկուսացուի ու կը տարուի Կեսարիոյ բանտը, ուր կ'ենթարկուի անասելի չարչարանքներու:

Աչըգպաշեանների[82], այդ **մտաւոր ներքինիների**[83] իղձը եւ փափաքը այդ լինի: Բայական մտայնութեան հետ գործ չունենք, նա մեզ համար մեռել է սկզբից ի վեր, իրենց վարպետներով եւ աշակերտներով:

Արդ, ընդհանուր շարժման նախագիծ է պատրաստւում, լայն չափերի մէջ, որ շարունակական պիտի լինի, մինչեւ իտտիհատական կառավարութեան եւ կուսակցութեան արմատական տապալումը: Դրա համար ընդհանուր խորհուրդ է պէտք: Այդ խորհուրդը կամ այստեղ պիտի լինի եւ կամ Պարիզ: Պարիզ գալու համար խնդիրը չի վերջանալ միայն Սատըգ բէյի եւ իմ գալովս: Մեր բացակայութիւնը այստեղի գործը, որ ահագին դժուարութեամբ ստեղծել ենք, կարող է վտանգուել, եւ բացի դրանից, բոլորին չենք կարող առնել մեզ հետ բերել: Այսօր Սատըգ բէյը հեռագիր տուեց Պարիզ **Իսմայիլ բէյին** (կիւմիւլջինացի) որ [գայ] այստեղ:

Ես ասացի, որ միայն իմ փորձառութեամբ խնդիրը չի վերջանալ, մեր կողմից էլ, բացի ինձնից, հարկաւոր է, որ իմ ընկեր Փարամազն էլ այստեղ լինի եւ ծրագրերի կազմութեանը մասնակցի: Ուրախութեամբ ընդունեցին եւ.....»[84]:

Դժբախտաբար նամակին մնացեալ մասը, որ նոյնպէս կրնար մեզի անծանօթ մանրամասնութիւններ պարունակել, կը մնայ անյայտ: Վերջերս մեր յայտնաբերած արխիւային նիւթերէն կը պարզուի, որ Սապահ-Գիւլեան այնուամենայնիւ Մարսէյի վրայով Փարիզ կը մեկնի Մարտ 28ին[85՝] նամա-

---

[82] Արամ (Գրիգոր) Աչըգպաշեան.- 1867, Արաբկիր-1915 Յունիս 15, կախաղան հանուած Կ.Պոլսոյ մէջ: 1886ին՝ ուսանող Կ. Պոլսոյ իրաւաբանական կաճառին. կը միանայ Յեղափոխական ընկերութեան: 1890ին՝ Գում գափուի ցոյցի կազմակերպիչներէն: 1893էն Փոքր Հայքի ֆետայական խումբերու կազմակերպիչ եւ համադրող: 1895ին կը ղեկավարէ Շապին Գարահիսարի ինքնապաշտպանութիւնը: Մինչեւ 1905 կը գլխաւորէ դէպի Փոքր Հայք զէնքի փոխադրութեան ախատանքները: 1903ի Դ. (Լոնտոն) եւ 1905ի Ե. (Փարիզ) համագումարներուն կեդր. վարչութեան անդամ: 1905ին կը տեղափոխուի Փարիզ: Սահմանադրութենէն ետք, մերթ Փարիզ եւ մերթ Կ.Պոլիս՝ ուր նաեւ ազգային ժողովի երեսփոխան: 1914ին կը ձերբակալուի, որովհետեւ անոր կը վերագրուի Ա. Եասեանի դէմ ոճրափորձ մը:

[83] Խորքին մէջ, հայ ժողովուրդի ճակատագրական մէկ պահուն, Է. համագումարին կայացուցած «իլլեգալութեան» որոշումը խիստ պատասխանատու էր: Եւ ինչպէս նման պարագաներու, այդպէս ալ այս պարագային, բնական է որ հրապարակ գային տարբեր տեսակէտեր: Միայն Մուրատը եւ Աչըգպաշեանը չէին, որ մտահոգ էին առնուած որոշումին հանդէպ. անոնց նման, ազատագրական պայքարի «բանտ ու աքսորանքի» ճամփայէն անցած, Յարութիւն Ճանկիւլեան, Յակոբ Արծրունի (Աւետիսեան), Սաքօ (Աղամիրզեան) եւ ուրիշներ եւս խանդավառ չէին անորմով: Մեր կարծիքով, Սապահ-Գիւլեան խիստ չափազանցած եւ անիրաւ գտնուած է իր ընկերներուն այդ պիտակաւորումները տալով:

[84] Հնչ. արխիւ. «Սապահ-Գիւլեանի նամակը Փարամազին. Հէլիօպոլիս, 1914 Մարտ 3»:

[85] Հայաստանի պատմութեան թանգարան. նոր պատմութեան ֆոնդ-բաժնի մատեան 1369/17. «Արմենակ Կարապետեանի նամակը Զարեհ Գոչեանին. Աղէքսան-

կէն քանի մը շաբաթ ետք: Ան Կեդրոնի իր գործընկերներուն կը ներկայացնէ դաւադրական ծրագիրին մանրամասնութիւնները: Փարամազ կը ստանձնէ Կ.Պոլսոյ մէջ ՍԴՀԿին ստանձնած բաժնին պատասխանատուութիւնը: Սապահ-Գիւլեան Փարամազի հետ կը վերադառնայ Գահիրէ, Ապրիլի կէսերուն (Ապրիլ 19/2 Մայիսին Փարամազ կը մասնակցի եւ կը գլխաւորէ ՍԴՀԿ Գահիրէի վարչութեան ժողովը[86]): Անոնք Սատըգի հետ կը շարունակեն մշակել ծրագիրը, միաժամանակ հաւաքագրել անոր գործադրութեան ատակ փորձառու ընկերներ[87]: Շուրջ ամիս մը ետք, Թրիէսթէի եւ Քոսթանցայի վրայով Փարամազ կը մտնէ Կ.Պոլիս:

Յուլիս 17ի երեկոյեան, Կ.Պոլսոյ մէջ սկսած հնչակեան գործիչներու ձերբակալութիւններու առաջիններէն կ'ըլլայ նաեւ Փարամազ:

A NEWLY DISCOVERED LETTER FROM SABAH-KULIAN TO PARAMAZ

(Summary)

YEGHIG JEREJIAN (jerejianyeghia@hotmail.com)

Basing his revelation on a newly found letter written on March 3, 1914 by Sabah Kulian, a central figure of the Social Democrat Henchag Party, to an equally renowned figure of the party, Paramaz, the author discloses the details and the stages that led to the decision to assassinate the Triumvirate of the Committee of Union and Progress, namely Enver, Talaat and Djemal. The author notes that after a number of coups and counter-coups by the CUP and its opposing party, Ittilaf, the SDHP leadership came to the conclusion that the CUP was looking for the appropriate moment to annihilate the minorities in Turkey and materialize their dreams of Turkifying the state.

The documentary letter sheds light on the preparatory steps taken both in Cairo and Paris that brought the SDHP and the opposition Itilaf party into close collaboration in planning the assassination.

Having said that, unfortunately, details of the later steps taken are not clear as some of the final pages of the letter are missing.

դրիա, 1914 Մարտ 28». (Կարապետեան եւ Գոչեան՝ հնչակեան երկու երիտասարդներ, որոնք առնչուած են Միհրան Տամատեանի գլխաւորած յունական Փիրէաս նաւահանգիստէն Ալեքսանտրէթ զէնքի փոխադրութեան աշխատանքին. անոնք նամակցած են իրար եւ Տամատեանին հետ: Սապահ-Գիւլեանի ակնարկած «Կիլիկեան գործ»ը կը վերաբերի այս փորձին, որ ապա կ'ունենայ այլ հանգրուաններ):

[86] Հնչ. արխիւ. «Արձանագրութեան տետր ՍԴՀԿ Գահիրէի Վարչութեան նիստերուն. նիստ Դ., Ապրիլ 19/2 Մայիս», էջ 12:

[87] Ս. Սապահ-Գիւլեան, *Արմենակ եւ Աբրահամ*, Շիքակօ, ՍԴՀԿ ԱՄՆ-ի Գործ. Յանձ., 1917, էջ 21:

ԱՆՏԻՊ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՄԸ ՏԱՐՍՈՆԻ ՄԱՍԻՆ (1898)

ՄԻՀՐԱՆ ՄԻՆԱՍԵԱՆ (mihran.min@gmail.com)

ՄՈՒՏՔ

Հայոց Ցեղասպանութենէն եւ հայ ժողովուրդի հայրենազրկումէն ետք, սփիւռքահայ մտաւորականութեան եւ հայրենակցական միութիւններու գլխաւոր նպատակներէն մէկը եղաւ կորուսեալ հայրենիքի յիշատակը յաւերժացնել, որ դրսեւորուեցաւ առաւելաբար յուշագրութիւններու եւ յուշամատեաններու պատրաստութեամբ եւ հրատարակութեամբ: Եւ այսպէս, յաջորդաբար լոյս տեսան Արեւմտեան Հայաստանի, Կիլիկիոյ եւ Փոքր Ասիոյ տասնեակ հայկական կամ հայաբնակ բնակավայրերու տեղագրութեան, պատմութեան, ընկերային, կրթական, եկեղեցական, մշակութային անցեալին եւ Ցեղասպանութեան նուիրուած հատորներ, որոնք, գէթ մասամբ, կրցան փրկել հայրենի բնակավայրին անցեալ պատմութիւնը[1]:

Այդուհանդերձ այլեւայլ պատճառներով, օրին պատրաստուած բազմաթիւ յուշամատեաններ մնացին անտիպ ու ցարդ կը գտնուին իրենց հեղինակներու ժառանգորդներուն մօտ կամ արխիւային զանազան հաւաքածոներու մէջ:

Հատորի տեսքով պատրաստուած աշխատութիւններու կողքին, ստեղծուեցան նաեւ նոյն թեմաներով փոքրածաւալ երկեր, որոնք եւս, քաղաքի մը կամ գիւղի մը հայութեան անցեալին նուիրուած աշխատանքներ են: Անոնցմէ շատեր օրին տպագրուեցան հայ պարբերական մամուլի էջերուն, ուրիշներ կցուեցան հրատարակուած «Յուշամատեան»ներուն ու դարձան անոնց բաղկացուցիչ մաս, մինչ երրորդ մաս մը մնաց անտիպ: Փոքրածաւալ այդ գործերը եւս կարեւոր են հայրենի պատմութիւնը փրկելու իմաստով, որովհետեւ անոնք յաճախ անդրադարձած են այնպիսի թեմաներու, որոնց վրայ ուշադրութիւն չեն դարձուցած ընդարձակ յուշամատեանները, երբեմն ալ նուիրուած են այնպիսի բնակավայրու, որոնք ընդհանրապէս չեն ունեցած իրենց յատուկ յուշամատեաններ:

Այսու կը սկսինք հրատարակել այս *Հանդէս*ի ծաւալին յարմարող եւ Արեւմտեան Հայաստանի, Կիլիկիոյ ու Փոքր Ասիոյ հայկական բնակավայրերուն նուիրուած զանազան անտիպ գործեր, որոնք կրնան նպաստել այդ բնակավայրերու տեղագրութիւնն ու հայութեան անցեալը աւելի լաւ ուսումնասիրելու եւ ճանչնալու գործին:

[1] Հայրենակցական զանազան հրատարակութիւններու ամփոփ մատենագիտութիւնը տե՛ս՝ Mihran Minassian, "Tracking down the past. The memory book ("Houshamadyan") genre a preliminary bibliograpy", *Houshamadyan. Ottoman Armenians Life, culture, society, vol. 1*, Houshamadyan publication, Berlin, 2014, էջ 235-64:

Երբեմն դարու մը վաղեմութիւն ունեցող այս գրութիւնները ցարդ կը պահեն իրենց արժէքը, եւ անպայման արժէ որ լոյսին գան, որովհետեւ Երկրին վերաբերող որեւէ յիշատակարան պէտք է հանրայնացնել:

Այդպիսի փոքրածաւալ անտիպ գործերու կարեւոր հաւաքածոյ մը պահուած է Երեւանի Եղիշէ Չարենցի անուան Գրականութեան եւ Արուեստի Թանգարանի (ԳԱԹ) Թորոս Ազատեանի ֆոնտին մէջ, որուն մէկ մասը 1898-1900ին զանազան վայրերէ եւ զանազան հեղինակներէ Պոլսոյ *Բիւրակն* (1882-1908) հանդէսին ղրկուած գրութիւններ են:

Յիշեալ հանդէսը շրջան մը դարձած էր զուտ ազգագրական հանդէս, եւ այս գրութիւնները, հրատարակութեան համար անոր ղրկուած գործեր են, ինչպէս կը տեսնուի կարգ մը յօդուածներու կից թերթի խմբագրին յղուած նամակներէն: Անոնցմէ շատերը մնացած են անտիպ, որովհետեւ կիսաւարտ յօդուածներ ըլլալով, խմբագրութիւնը թերթին միջոցաւ խընդրած է անոնց հեղինակներէն որ փութացնեն անոնց շարունակութիւնները, որպէսզի կարելի ըլլայ հրատարակել զանոնք, բայց, կը թուի շարունակութիւնները չղրկուելով գրութիւնները մնացած են անտիպ, որմէ ետք, անցած են պոլսաբնակ Յովհաննէս քհնյ. Մկրեանին, ու անոր թողօնին հետ, աւելի ետք սեփականութիւնը դարձած Ազատեանի, որուն մահէն ետք, անոր արխիւային հաւաքածոյին հետ հանգրուանած են ԳԱԹ:

Ստորեւ հրատարակուող գրութեան հեղինակ Յ. Օ. Մանճիկեանի մասին կարելի չեղաւ որեւէ տեղեկութիւն գտնել: *Բիւրակն*ի մէջ իրմէ գտանք միակ յօդուած մը միայն, «Երզնկայի «Գրիգոր Լուսաւորչի Վանքը»»[2] վերնագրով, ղրկուած Տարսոնէն: Մեզի այնպէս կը թուի որ ան բնիկ տարսոնցի կրնայ չըլլալ, ու հաւանաբար հոն գաղթած է 1898էն ընդամէնը քանի մը տարի առաջ, որովհետեւ այս գրութեան մէջ տեղ մը, անդրադառնալով Տարսոնի հայ աւետարանական համայնքի յառաջընթացին, գրած է թէ «…մինչդեռ ասկէ հինգ տարի առաջ հազիւ 20, 25 տուն կայ եղեր», ինչ որ ենթադրել կու տայ որ ինք 1898էն հինգ տարի առաջ Տարսոն չէր գտնուեր: Մեր վարկածը հաստատող նմանօրինակ քանի մը այլ ակնարկութիւններու եւս կը հանդիպինք գրութեան մէջ:

Իդէպ, Մանճիկեան արհեստով լուսանկարիչ է, եւ իրմով այդ գեղեցիկ արուեստով պարապած հայ վարպետներու ցանկը կը համալրուի ցարդ անծանօթ նոր անունով մը:

Աւելցնենք, որ Տարսոնի հայութեան մասին մեզի ծանօթ տպագիր աղբիւրները շատ սակաւաթիւ են. ունինք ընդամէնը քանի մը ամփոփ թղթակցութիւններ ու գրութիւններ եւ տեղւոյն Գոլէճի քանի մը նախկին

[2] Յ. Օ. Մանճիկեան, «Երզնկայի «Գրիգոր Լուսաւորչի Վանքը»», *Բիւրակն*, Կ. Պոլիս, 15 Հոկտեմբեր 1898, էջ 648-50:

ուսանողներու յուշագրութիւններ միայն[3], այնպէս որ, այս հրատարակութիւնը կրնայ մասամբ գոցել գոյութիւն ունեցող այդ բացը:

Գրութիւնը հրատարակութեան տուած ենք նոյնութեամբ, առանց որեւէ լուրջ փոփոխութեան: Ուղղած ենք միայն հանդիպող ուղղագրական վրէպներն ու կէտադրութիւնը՝ բնագիրը աւելի ընկալելի դարձնելու համար, եւ մեր կողմէ աւելցուցած ենք անհրաժեշտ ծանօթագրութիւններ:

Գործին բնագիրը կը պահուի ԳԱՌի Թորոս Ազատեանի ֆոնտ, 16/III:

Տարսոն

Տարսոն շատ հին քաղաք մ'է, ունի բարեբեր դաշտ մը, խաղողի այգիներ եւ գեղեցիկ պարտէզներով շրջապատեալ է: Նշանաւոր է Գիւտնոս գետը, որ Տարսոնի արեւելեան կողմէն Տաւրոս լերանց կողերէն փոքրիկ ակերու առուակներուն միացմամբ ահագին գետակ մը կը ձեւացնէ եւ գալով կ'ոռոգէ Տարսոնի բոլոր այգիները եւ անտի կ'ընթանայ ուղղակի դէպ ի Միջեկրական ծով:

---

[3] Օրինակ՝ *Հայ Կարմիր Խաչը Կիլիկիոյ մէջ*, տպ. Յ. Մ. Ազնաւուր, Կ. Պոլիս, 1921. նաեւ՝ Ս[արգիս] Մ. Ծոցիկեան, *Արեւմտահայ Աշխարհ*, տպ. Ա. Յ. Էյլէկեան, Նիւ Եորք, 1947. նաեւ՝ Խորէն Դաւիթեան, *Կեանքիս գիրքը*, տպ. Շիրակ, Պէյրութ, 1967. նաեւ՝ Raymond H. Kévorkian, Paul B. Paboudjian, *Les Arméniens dans l'Empire Ottoman a la veille du génocide*, ARHIS, Paris, 1992. նաեւ՝ Անդրանիկ Տագէսեան, *Վահան Պէտրէեան երաժիշտ-մանկավարժը*, Սիփան հրատ., Պէյրութ, 2004. նաեւ՝ Անի Ոսկանեան, *Ադանայի նահանգի հայերի փնտրեսական վիճակը. 1909թ. ունեզրկում, Գիրք Ա.*, «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2017. նաեւ՝ Ռոպերթ Թաթոյեան, *Կիլիկիահայութեան թիւը Հայոց Ցեղասպանութեան նախօրեակին*, Երեւան, 2021. նաեւ՝ Ս. Դ. [Սմբատ Դաւթեան], «Հարեւանցի ակնարկ մը Թարսոսի վրայ», *Բիւրակն*, 24 Սեպտ. 1898, էջ 577-8. նաեւ՝ Բոյրաճու, «Տարսոնի կրթական հաստատութիւնները», *Ծաղիկ*, Կ. Պոլիս, 30 Դեկտեմբեր 1899/11 Յունուար 1900, էջ 1-2. նաեւ՝ Գր. Հ. Գալուստեան, «Տարսոնի Սէյնթ-Բօլ Գոլէճը եւ իր նուագահանդէսը», *Արեւելք*, Կ. Պոլիս, 12/25 Փետր. 1904, էջ 1. նաեւ նոյն՝ «Դպրոցական հանդէսներ Տարսոնի մէջ», *Արեւելք*, 7/20 Մայիս 1904, էջ 1. նաեւ նոյն՝ «Կրթական գործը Տարսոնի մէջ», *Արեւելք*, 29 Հոկտ./8 Նոյ. 1904, էջ 1. նաեւ՝ Տիգրան, «Եղերական փճացում Ատանայի հայութեան. սոսկալի ջարդ ու կրակ Տարսոնի մէջ», *Արեւելք*, 14/27 Ապրիլ 1909, էջ 1. նաեւ՝ Տիգրան Մ. Սէգ-Ձէն, «Ատանա մոխիր դարձած. Տարսոն բոցերու մէջ. Մերսին ահ ու դողի մատնուած», *Արեւելք*, 20 Ապրիլ/3 Մայիս 1909, էջ 1-2. նաեւ՝ Մուրատ, «Տարսոնի կացութիւնը Յունիս 20-էն մինչեւ Յուլիս 29», *Հայրենիք*, Պոստոն, 29 Սեպտեմբեր եւ 6 ու 30 Հոկտեմբեր 1920. նաեւ՝ «Տարսոնի Հայ կարմիր խաչը», *Կիլիկիա*, Ատանա, 8 Սեպտ. 1921, էջ 1. նաեւ՝ Ներսէս Պալեան, «Տարսոնի Սէյնթ Փոլ Գոլէճը», *Հայրենիք* ամսագիր, Ապրիլ 6(210):1940, էջ 141-54. նաեւ՝ Միհրան Մինասեան, «5 անտիպ վաւերաթուղթ՝ Կիլիկիոյ 1909 թուականի կոտորածներուն մասին», *Ազդակ*, 24 Ապրիլ 2009, էջ 85-92. նաեւ՝ Հելէն Դաւենպորտ Գիբոնս, *Տարսոնի կարմիր գորգերը. Մի կնոջ յուշերը 1909 թուականի հայկական կոտորածների մասին*, թարգմ.՝ Արծուի Բախչինեան, «Տիր» հրատ., Երեւան, 2015:

Բնակիչ: Տարսոն ունի 3200 տուն եւ 15,000 բնակիչ, բացի՝ գիւղերէն, թուրք, ֆէլլահ, այսինքն «Սադուկեցի», հայ, յոյն եւ մարոնի:

Թուրք: Այս ազգը կարի կրթեալ է հոս, ամէն արհեստի մէջ մուտ գտած է եւ խիստ յաջողակ: Բարեսիրտ, աշխատասէր, խոնարհ գառի մը պէս առանց խտրութեան կը վարուին ամէն ազգի հետ եւ միշտ սիրով են, որոց մեծամասնութիւնը երկրագործութեամբ կ'զբաղին եւ ունին ընդարձակ ու բարեբեր ագարակներ:

Մզկիթ: Գրեթէ տասը մզկիթ կայ ի Տարսոն, որոց մէջ նշանաւոր է Ուլու Ճամին իւր հնութեան կողմանէ յունաց ժամանակէն մնացած, ցարդ կը տեսնուի յունական տառերով նշանակուած բառերու բեկորներ եւ Քիլիսէ Ճամիսին[4], որոյ աւանդատան դրան վրայ հայերէն տառերով ոտանաւորներ կան քանդակուած: Սոյն մզկիթք մասնաւոր եկամուտներ ունին, որոց առթիւ միշտ պայծառ եւ միշտ միօրինակութիւն մը կը կրեն: Թուրք ազգը ունի հոս քանի մը վարժարաններ, որոց մէջ նշանաւոր է «Մէքթէպի Իպթիտայիէ եւ Ռիւշտիյէ»[5], բաց աստի, ամէն թաղ իր մասնաւոր վարժարանն ունի մանկապարտէզի դրութեամբ եւ երկսեռ: Սոյն վարժարաններու մէջ դասախօսութիւնք պարզ թուրքերէն են, կարդալ եւ գրել միայն, իսկ իպթիտայիէ եւ ռիւշտիյէի մէջ արաբերէն եւ պարսկերէն լեզուներու դասեր ալ կը տրուին, ուսմանց գլխաւորներն ալ աշխարհագրութիւն, թուաբանութիւն, համառօտ եւ օսմանեան պատմութիւն:

Ֆէլլահ: Այս ազգը թէեւ թուրք բայց բոլորովին տարբեր սովորութիւններ ունին ի ծածուկ: Կ'ընդունին հոգեփոխութիւնը եւ մեծ յարգ կ'ընծայեն ծառերու ոմանց, որոց տակը խունկ կը ծխեն միշտ եւ մշտավառ կանթեղներու շարքով մը կը բոլորեն այս ծառերը, երբեմն խոյեր ալ կը զենուն անդ իբր ողջակէզ եւ այն զինուած ողջակէզի արեամբ պիսակ պիսակ նշաններ կը դրոշմեն կուրծքերնուն եւ այլն տեղերնուն վրայ: Ունին մի քանի երեւելի շէխերու գերեզմաններ զորս կը պաշտեն խորին ջերմեռանդութեամբ, մանաւանդ այն օրը յորում մեծ բազմութեամբ կը դիմեն այդ վայրերը, ուր կ'աղօթեն երկիւղածութեամբ եւ կ'ընդունին օրհնութիւնը հոն գտնուող ներկայ շէխին, որ այն շիրիմներու մէջ հանգող շէխերու սերունդէն սերած են, այսինքն նոխորդն իր նախորդէն եւ այսպէս յաջորդաբար կ'ունենան այժմեան շէխն: Այս ներկայ շէխը կը բազմի զարդարուած աթոռի մը վրայ մօտ գերեզմանին, ձեռքերը երկինք բարձրացնելով աղօթք մը կը մրմնջէ, ամբողջ ժողովրդեան համար մաղթանքներ կը կարդայ, յետ աւարտման աղօթքին «փառք քեզ Աստուած» ըսելով ժողովուրդը բարձր ձայնով կ'արտասանէ այս նախադասութիւնը, աղօթքը, եւ մէկիկ մէկիկ գալով կը համբուրեն նախ գերեզմանը եւ ապա շէխին ձեռքը, ամենայն յարգանօք ի յետս ընկրկելով կը մեկնին՝ մասնաւոր նուէրներ տալով շէխին: Այս ժողովրդին «Պաղչէ միւսլիւմանի»[6] ալ կ'ըսեն, մեծ մասամբ պարտիզաբնակ ըլլալուն համար, եւ իրօք ալ պարտիզաբնակ են, ընդհանրապէս քաղաքէն դուրս

---

[4] Քիլիսէ Ճամիսի, արաբերէն՝ Եկեղեցի Մզկիթ: Կոչուած է նաեւ Էսկի-Ճամի՝ Հին Մզկիթ: Կառուցուած է Կիլիկիոյ Հեթում Բ. թագաւորին կողմէ եւ անուանուած է Ս. Պօղոս եկեղեցի (Միսաք Հ. Ճեւահիրճեան, «Տարսոնի Ս. Սոֆիա տաճարը»՝ *Էջմիածին*, Մայիս 2000, էջ 122):

[5] Մեքթէպի Իպթիտայիէ եւ Ռիւշտիէ.- արաբերէն՝ նախակրթարան եւ երկրորդական վարժարաններ:

[6] Պաղչէ միւսլիւմանի, թրքերէն՝ պարտէզի իսլամ:

վայրերը կը սիրեն ու բնակութիւն կը հաստատեն, մանաւանդ պարտէզներու մէջ, չունին վարժարան, չունին նաեւ մզկիթ, իրենց կրօնական արարողութիւնք կը կատարուին տուներու մէջ դարձեալ շէխի մը ներկայութեամբ, ունին տարբեր սովորութիւններ, էգ այծի, ոչխարի, կովու եւ այլն կենդանեաց, որք իգական սեռին կը վերաբերին, չեն ուտեր, շունի հետ խաղալ կամ ձեռք զարնելն բոլորովին մեղք կը համարեն, երեսնօրեայ ծոմապահութիւնը չեն յարգեր, կ'ուտեն գաղտնի, բայց տաճկաց հետ պայրամն ալ կ'ընեն, նոյնը գուրպան պայրամին[7] ալ կը կատարեն, զատիկ, ծնունդ, կաղանդ, Տօն Աստուածածնայ շատ կը յարգեն եւ երբեք չեն աշխատիր, միշտ սուրբ կը պահեն այդ օրերը, մաքուր լաթեր հագնելով մէկզմէկու փոխ այցելութիւններ կու տան այն օրերուն մէջ եւ կ'ըզբօսնուն խումբ խումբ: Ասոնց ծերունի դասը մեծ պատիւ ունի բոլոր ֆէլլահ ժողովրդեան մէջ թէ աղքատ ըլլայ եւ թէ հարուստ, բաւական է որ ծեր մ'է, ակնածելի է ատոնց մէջ եւ յարգանօք կը վարուին անոր հետ, ուր որ տեսնեն ուղղակի կը դիմեն ձեռքը, համբուրելով զայն օրհնութիւնը կը խնդրեն, վերջապէս այս ազգը բարի սովորութիւններ ալ ունի մէկզմէկ յարգելու, սիրելու, եղբայրաբար վարուելու կողմանէ նշանաւոր է ամէն ազգաց մէջ, չունի աղքատ մուրացկաններ, ամէնքն ալ աշխատասէր մարդիկ են, թէ այր եւ թէ կին մեղուի չափ գործունեայ, իրենց աղքատներն ալ իրենք կը խնամեն եւ չե՛ն թողուր բնաւ որ իրենց աղքատներէն մին փողոցէ փողոց մուրայ, այդ սովորութիւնը անպատուութիւն է ֆէլլահի մը համար, կը յարգեն նաեւ գաղտնապահութիւնը, այնպէս որ ամէն բան իրենց մէջ կը մնայ, եթէ կռիւներ եւայլն անկարգութիւններ պատահին, իսկոյն կը վերջացնեն իրենց մէջ, բաւական է որ ծերունի մը միջամտէ, երկուստեք կը հնազանդին այն միջամտող ծերուկի հրամանին, այսպէս ամէն ինչ դիւրութեամբ կը վերջացնեն մէջերնին: Զարմանալի ազգ մըն է այս սերունդը:

Հայք: Երեք հարիւր տունէ եւ 875 հոգիէ կը բաղկանան, եւ մեծ մասամբ արհեստով կ'զբաղին, ոմանք ալ առեւտրով: Հոս հայերը չունին երեւելի վաճառականներ, ինչպէս այլ ազգիք, այսինքն թուրք, յոյն եւ արաբացի ազգերն, որք երեւելի ու համբաւաւոր վաճառականներ ունին Տարսոնին մէջ, իսկ հայ ազգն երկու երեք միայն, անոնք ալ ուրիշ վաճառականի մը ձեռնատուութեամբ կրնան գործել եւ մնացեալք խանութպանութեամբ, այլեւայլ արհեստով կ'զբաղին, սափրիչի, կօշկակարի, հիւսնի եւ դերձակի նման արհեստներով: Հայ ազգը գրեթէ մեծ մասամբ աղքատ է հոս, որոց մեծամասնութիւնը հազիւ կարող է օրական ընտանեկան ծախքն հայթայթել, որոյ պատճառն է ծուլութիւնն: Անուրանալի ճշմարտութիւն մ'է այս, զի ծոյլ ծոյլ հայեր ունի Տարսոն, աւելի կը սիրեն զբօսնուլն քան թէ աշխատիլն, եթէ ամիս մը աշխատի տարսոնցի հայը, եւ մի քանի դրամ աւելցնէ, իսկոյն ինքը զինքը հաճոյքներու տալով կը մսխէ այն շահած պատրաստի դրամն, յետ սպառման պատրաստի դրամին նորէն կ'սկսի գործել կամ գործ որոնել, դրամ մսխելուն կերպը շատ լաւ գիտէ տարսոնցի հայը, վասն որոյ հարստութիւնը չը սիրեր եւ չախորժիր կալուածատէր ըլլալէն, որոյ իրաւացի ըլլալն յայտնի է արդէն, զի ահագին Տարսոն քաղաքի պէս տեղւոյ մը մէջ կալուած կամ եկամուտ ունեցող հայ մը չը կայ, ամենէն հարուստը միայն տուն մը կ'ունենայ եւ այս սահմանէն անդին չանցնիր:

[7] Գուրպան պայրամի, թրքերէն՝ ողջակիզման տօն, իսլամներու գլխաւոր տօնը, որ կը յատկանշուի խոյեր զենելով:

Տարսոնցի հայը չ'ախոժիր նաեւ եկեղեցի երթալն, վարժարանի բարւոքուիլն եւ զաւակին կրթութեան հոգ տանելէն: Ի մի բան՝ շատ անզգայ, անտարբեր հայեր են տարսոնցի ազգայինները, մանաւանդ բարոյականութիւննին վերջին ծայր խանգարուած է, այնպէս որ դարմանուիլն անկարելիութեան հասած է, մեծն Աստուած ինք ողորմի տարսոնցի հայուն:

Տարսոնցի հայերը ունին սքանչելի եւ հոյակապ եկեղեցի մը, որ իր հոյակերպ գմբէթով բոլոր Տարսոնի պարծանքը կրնայ համարուիլ, չի՛, չի՛ կայ շէնք մը որոյ նմանութիւնն ունենայ, ո՛չ թէ միայն Տարսոնի, այլ ընդհանուր Կիլիկիոյ մէջ եզակի է Տարսոնի սուրբ Աստուածածնայ եկեղեցին, նաեւ խիստ գեղեցիկ դիրք մը ունի, ընդարձակ բակ մը բոլորած է իւր շուրջ, այնպիսի բակ մը՝ որուն մէջ Պօղոսի պէս առաքեալ մը ծնած ու սնած է, բակ մը, ուր Լամբրոնացիներ փարած են հողին եւ պաշտած են զայն, ինչպէս մարգարէք Աւետեաց երկիրն պաշտեցին ու յարգեցին, այս այն բակն է որուն մէջ ի պատանեկութեան Պօղոս Առաքեալ իր փոքրիկ ու անզօր ձեռքերով ծառեր ու ծաղիկներ սերմանեց, գործաւորի մը պէս աշխատութիւն տուաւ զայնս խնամելու եւ ոռոգանելու համար արմատները, մէկ խօսքով այս այն բակն է, ուր դարձեալ Պօղոս Առաքեալ տաճար մը շինեց եւ սեղան մը կանգնեց իր սիրելի Տիրամօր անուան նուիրելով զայն, քարն ու կիրն ինք կրելով աղի քրտինք թափեց հոն, մաքրեց ու սրբագործեց եւ իր աչքին աղի արտօսրներով լուաց ու սպիտակացուց այս պաշտելի վայրը, այսինքն Տարսոնի հայ ազգին Սուրբ եկեղեցւոյն այս ընդարձակ բակը: Ահա այն ծառերէն մին է որ կ'երեւի այսօր այս համբաւաւոր բակին արեւմտեան կողմը գտնուող չոր ու ցամաք «Պօղոս Առաքեալի ծառ» ըսուած այն մեծ ծառին բո՛ւնը որ իր նախորդէն սերած եւ նախորդն իր նախորդէն այսպէս յաջորդաբար մինչեւ մեզ հասած է այսօր, որոյ վրայ եկեղեցւոյ խորհրդաւոր զանգակը կախուած է: Այո՛, խորհրդաւոր է այս զանգակը, զի ամէն օր, գրեթէ օրը երկու անգամ ձայն բարբառից եւ յանապատի կը պոռայ ու կը ղօղանջէ ի յուշ տարսոնցի հայուն ականջին, Պօղոս Առեքեալի յիշատակներն ի միտ ածելն եւ յարգել զայնս այս պաշտելի վայրին մէջ: Ի մի բան, այս բակը այն տո՛ւնն է, յորում Պօղոս Առաքեալի նախորդները կը բնակէին, ուր Յովնանի պէս մարգարէ մը փախուստ կու տայ Յոպպէէն գալով կ'ապաստանի անոնց քով: Բայց աւա՛ղ, եօթնիցս աւա՛ղ, որ տարսոնցի հայն բոլորովին պաղ աչօք կը նայի այս բակին եւ չի յարգեր զայն պէտք եղածին պէս այս օր: Պօղոս Առաքեալի արտօսրներով լուացուած ու մաքրուած տեղ մը աղբիւրով ծածկուած է այս օր եւ մաքրութիւն տեսած չէ բնաւ, թափուր ու ամայի գրեթէ բուերու բնակարան դարձած է, ուր մարդէ աւելի ջղջիկներ կը վխտան այս պաշտելի յարկին մէջ: Այս ընդարձակ բակին մէջ է նաեւ հին գերեզմանատունը, ուր կ'երեւին այսօր մի քանի շիրիմներ երեւելի անձանց, հին հայերէն ոտանաւորներով քանդակուած տապանաքարեր, ասոնց մէջ նշանաւոր է այս երկու ոտանաւորներն, մին քահանայի մը տապանաքարին վրայ քանդակուած հայերէն տառերով, եւ միւսը անգղիացիի մը, անգղիերէն լեզուաւ եւ գրերով: Այս անգղիացի բարեպաշտ ուխտաւորը ի կենդանութեան փափաք կը յայտնէ թէ յետ ի մահուան զիս Տարսոնի հայոց գերեզմանատունը թաղեցէք, եւ փափաքին համեմատ կը կատարեն զայն, այս անձը Տարսոն գալով կը մեռնի, ուստի մարմինը հոս կը թաղեն, որ կը մնայ հոս մինչեւ ցայսօր: Այս մարդը երեւելի բժիշկ մ'է եղեր, ազգաւ անգղիացի, կրօնքով բողոքական, կը փափաքի գալ եւ

Տարսոն լրացնել իր մնացած օրերը, այն արդար նպատակաւ, որ երբ մեռնի Պօղոս Առաքեալի օթեւանին մէջ հանգչին իր ոսկերք:

Ազգային վարժարան: Այս յիշեալ բակին մէջ արեւելեան կողմն է, որոյ կից, դէպ ի հիւսիս է նաեւ երկսեռ վարժարանը, բայց ցաւալին այն է որ ընդարձակ սենեակներու կը նմանին քան թէ վարժարանի մը, առանց դասարանի շինուած տձեւ սրահներ, ուր կ'ուսանին աշակերտք գրասեղանի մը նմանութիւն ունեցող մի քանի խախուտ տախտակներու վրայ նստած: Այս վարժարանը ունի բաւական կամուտներ, քանի մը տուներ որք վարձու կը տրուին եւ իւրաքանչիւր տարի գրեթէ 60 ոսկւոյ չափ գումար մը հասոյթ կը գոյացնեն եւ այդու հանդերձ միշտ աղքատ եւ միշտ խարխուլ կը մնան, թէեւ աշակերտք ալ մեծ մասամբ թոշակաւոր են ըստ կարողութեան մէկ մէճիտիյէն սկսելով մինչեւ 3 ղրուշ ամենէն յետինը[ին] համար կ'առնուի: Այս գործողութիւնք մասնաւոր գաղտնիքներ ունին, բայց թաղականք պատասխանատու են Գեթսեմանիի դատաւորին, մանաւանդ Գ. Գ., Կ. Ն., Տ. Մ.[8], որք այդ ազգային իրաւանց շնորհիւ կ'ապրին այսօր, զի տարսոնցին շատ ռամիկ է եւ դիւրաւ կը խաբուի:

Այս վարժարանը կ'ունենայ հարիւր-150 աշակերտ եւ երկու դասատու, մին տնօրէն 3 ոսկի ամսականով եւ միւսը օգնական 1 ոսկի, երկսեռ վարժարանն ալ գրեթէ 40-50 ուսանող կ'ունենայ, նոյնպէս թոշակաւոր, 1 վարժուհի որոյ ամսական 2 ոսկի կամ պակաս, վարժարանի շարունակութիւնը ութը ամիս կը տեւէ միայն, 4 ամիս արձակուրդ մը կ'ունենայ ամարանոց երթալու համար: Արձակուրդի ժամանակ պաշտօնէից ամսական չը տրուիր, կը մնան անվարձք մինչեւ որ նորէն պաշտօնի սկսին յաջորդ տարուան սկիզբը:

Ուսումնք: Կարեւոր դասեր չեն աւանդուիր, լոկ հայերէն, գաղիերէն եւ տաճկերէն պարզ ընթերցումներ են եւ գրավարժութիւն, ամէնէն բարձրագոյն դասը երկրորդ վարժութիւն, համառօտ թուաբանութեան չորս գործողութիւն եւ այսպիսի խաղալիք բաներ:

Նոյն է նաեւ երկսեռ վարժարանը, բայց այս տարի կը յուսանք թէ աւելի բարձր եւ աւելի բարւոքեալ պիտի տեսնեմք երկսեռ վարժարանը շնորհիւ համեստափայլ Օր. Րուհէմա Քեռիեանի, որ Ատանայի եւ Մարաշի Ամերիկացւոց երկսեռ վարժարաններէն վկայեալ եկած Տարսոնի երկսեռ վարժարանի ուսուցչութեան պաշտօնը ստանձնած է, երանի՛ թէ տգէտ ու կոշտ, վարժարանի երեսը բնաւ չը տեսնող սպասաւորութենէ առաջ եկած ճարպիկ որկրամոլներն արգելք մը չը յարուցանէին, վասնզի այս աղաները ուսեալ եւ յաջողակ ուսուցիչներէ չեն ախորժիր, չեմ գիտեր թէ ինչո՞ւ համար կ'ուզեն որ դասատու եւ դասատուհի միշտ իրենց պէս տխմար մը ըլլայ: Թէեւ խնդիրը պարզ է, բայց որո՞ւ պիտի հասկցնես, քանի որ Տարսոնի հասարակութիւնը վերջին ծայր ռամիկ է: Բնաւ չէ տեսնուած որ Տարսոնի մէջէն դասատու մը գոհունակութեամբ մեկնի, այլ հակառակը, միշտ գժտուած եւ միշտ դժգոհ մնալով գացած է կամ կիսկատար թողլով պաշտօնը ակամայ խոյս տուած է: Եղած են ոմանք որ կառավարութեան դիմումներ ալ ըրած են, ինչպէս 94 թուականին Ե. Փ. էֆէնտի օրերով անօթի եւ անդրամ թողլով ստիպեցին վերջապէս գալ կառավարութեան եւ բողոքել ազգութիւնը, մինչդեռ ազգը լումայ մը իսկ պարտական չէր մնացած, մի քանի ամիսներ առաջ ամէն անհատ վարժարանի պակտանեալ իր պարտքը մատուցած էր թաղական աղայից, եւ այդ աղաներն են որ կ'ստիպեն խեղճերը

[8] Հաւանաբար՝ Տարսոնի ազգային գործիչներու անուանց սկզբնատառեր:

սոյն եւ այսպիսի միջոցներու դիմել ու խայտառակուիլ, այդ գործողութեամբ արդարացի փաստ մը կ'ունենան ռամիկը խաբելու, թէ զայն փորձելու համար այսպիսի միջոցներ պէտք է որ ձեռք առնուին թերեւս ազգասէր չըլլայ: Այս եւ ասոր նման գործերով այնքան եկամուտով Տարսոնի վարժարանը կարգ կանոն դեռ մուտ գտած չէ, միթէ ազգին աղքատ իրաւունքները ուտող այսպիսի մուրացկան, չըսեմ գող աղաներ պիտի մարսե՞ն արդեօք, այս մասին ես տարակոյս չունիմ, զի ասոնց ստամոքսը շատ առողջ է, մանաւանդ վարժ են, կարող են դիւրաւ մարսել, ինչ որ ալ ըլլայ իմ կողմանէ բարի ախորժակ կը մաղթեմ, տարսոնցի հայ ռամիկը թող մտածէ, վասնզի դրամ տուողը ինքն է եւ ինքը կը կորսնցնէ, մանաւանդ իրեն զաւակնին ալ իրեն պէս ռամիկ ու տխմար կը մեծնան: Այս վերոյիշեալ աղաներու դարձեալը պատմեմ, որով մեծ դեր կը կատարեն Տարսոնի ազգային գործերուն մէջ: Այսքան եկամուտները հաւաքելէ զկնի, ազգը միշտ պարտական կը ձգեն, ահաւասիկ իրենց ցոյց տուած տարեկան հաշւոյ մէկ ցուցակը.

98 տարուան եկամուտ. տուներէն այսչափ, վարժարանի թոշակաւոր աշակերտներէն այսչափ, թապախներէն[9] (սկուտեղ) այսչափ, կնունքէն, հարսանիքէն եւ ազգային տուրքէն ալ այսչափ, զինուորական տուրքի հասոյթէն գոյացածն ալ այսչափ, ընդհանուր գումար այսքան, գալով ծախք, տասը տարիէ ի վեր տունի մը դատը կը տեսնուի հայ պապականաց հետ, որուն առթիւ իսկոյն հաշիւը ցոյց կու տան եւ տետրակը կը փակեն, ազգը դարձեալ պարտական ձգելով: Ահա ծախքի օրինակներէն մին. տան դատին համար տուածնիս. մեր փոխանորդ փաստաբան (տավա վէքիլի) այսինչ էֆէնտիին 5 ոսկի, դարձեալ 10 ոսկի, դարձեալ 50 ղրուշ, դարձեալ 23 ղրուշ, դարձեալ 15 ոսկի, դարձեալ 30 ղրուշ, դարձեալ 800 ղրուշ, դարձեալ 7 ոսկի, գումարն ի՞նչ եղաւ, այսչափ հանենք եկամուտէն կը մնայ այսչափ, ուրեմն ազգը դեռ պարտական է, ի՛նչ դիւրին հաշիւ: Եթէ ազգայիններէն մէկը երկու երեք ոսկի նուէր մը ընէ եկեղեցւոյ՝ դարձեալը իսկոյն կը դառնայ մէջտեղը եւ իսկոյն ի հուրն յաւիտենից կը ղրկէ այդ փայլուն կտորները: Այս աղաներու «դարձեալ»ը այնպիսի յատկութիւն մը ունի որ ջրաղացի դարձող քարի մը պէս կ'աղայ ինչ որ ըլլայ եւ իսկոյն կը լափէ, ուրեմն ապրի այս «դարձեալ»ը որ պարզերես դուրս կը հանէ ժողովէն մեր տարսոնցի աղաները: Ցաւալի բան, չի կայ ըսող մը թէ ե՛րբ, ո՛ր թուականին կամ ի՞նչ անուն փաստաբանի տրուեցաւ այս դրամները, կամ ո՛ւր է ատոնց ընկալագիրը: Թերեւս համարձակողներ ըլլան, բայց… ուրեմն ի՞նչ ընեն խեղճ ազգայինները, միշտ թող տան եւ անոնք ալ շարունակ «դարձեալ»ի թող փոխեն ու զբօսնուն, ինչպէս փոքրիկներն ալ նոյն ժողովոյ սրահին մէջ հոլ կը դարձնեն, որոնցմէ մին երկրորդ հաշիւ մըն ալ տուաւ, այս հաշիւները ալ մէկզմէկու կու տան իրենց մէջ եւ կը փակեն հաշուոյ տետրակները, դուրս ելնելով անմիջապէս կը հաղորդեն ժողովրդեան իրենց դեռ պարտական, այսինքն ազգին պարտական մնալը:

Երկրորդ հաշւոյն օրինակը: Եկեղեցւոյ համար ծախք. խունկ եւ մոմ, խունկ, խունկ, խունկ, մոմ, մոմ, մոմ, իւղ կանթեղին համար, իւղ, իւղ, իւղ, խունկ, մոմ, իւղ, խունկ, խունկ, խունկ, մոմ, մոմ, խունկ, իւղ, մոմ: Գումարը այսչափ, եկեղեցին ալ պարտական է, թապաղին հասոյթը չէ գոցած այս ծախքերը: Ահաւա-

[9] Նկատի ունի պատարագի ընթացքին դրամահաւաքութեան նպատակով պտտցուող սկուտեղը:

սիկ ճշմարիտ խայտառակութիւն մ'ալ թերեւս կատակ թուի, բայց ազգասէր հետաքրքիրը ուղղակի Ատանայի փոխ առաջնորդ Տ. Խաչատուր հօրմէն ալ կրնայ ստուգել, զի նորին արժանապատուութիւնը անգամ մը պատահեցաւ այս ժողովի կնճռոտ հաշիւներուն եւ չի գիտցուիր թէ ինչպէ՞ս լռութեամբ առանց բան մը ըսելու մեկնեցաւ յԱտանա: Ոչ քանականութիւնը յայտնի եւ ոչ ալ ժամանակը, ծախքի գումարէն զատ ուրիշ բան ցոյց չեն տար այս խունկ, խունկ, խունկ շարին մէջ, բայց այս ալ խոստովանիմք, որ Տարսոնի եկեղեցին խունկ ուտող ու մոմ կրծող մի քանի մուկեր ունի, որ շատ շուտ եւ գաղտնի պահարանը բանալով կ'ուտեն ու կը կրծեն զանոնք, ուստի կը հատնի շուտ մը, որով կ'ստիպուի այս լուսարարապետ Կ. Մ. էֆէնտին շուտ շուտ խունկ ու մոմ գնել: Ի՞նչ ընէ խեղճ մարդը, եկեղեցւոյ համար պէտք ըլլալիք բաներ են, խունկ ու մոմ գտնուիլն անհրաժեշտ պէտք է: Աստուած այսպիսի խունկ ու մոմ ուտող ու կրծող մուկերուն հոգին առնէ, ամեն:

Հայ պապական: Քսան տուն միայն, եւ 60-70 հոգի, ունին մեծկակ տուն մը որոյ սենեակներէն միուն մէջ շարժական սեղանի մը առջեւ կը կատարեն եկեղեցական արարողութիւննին, ունին վարդապետ մը, քարոզիչ եւ խոստովանահայր: Այս վարդապետը փոխանորդող է Ատանայի գերապայծառին: Այս տան սրահին մէջ նաեւ հայ պապականաց վարժարանը, ուր 10-15 հայ պապական մանուկներու հետ 25-30 ալ հայ լուսաւորչական տղայք կը յաճախեն: Այս վարժարանը ունի դասատու մը, բաւական յաջողակ, 20 ոսկի տարեկան թոշակով: Այս վարժարանի գլխաւոր դասերն են հայերէն, գաղիերէն, տաճկերէն պարզ ընթերցումներ, համառօտ թուաբանութիւն, եւ այլն, քրիստոնէական Հռովմէական ս. եկեղեցւոյ: Այս տարսոնցի կոչականք աւելի քրիստոնէական դասերու հոգ կը տանին քան թէ ուրիշ դասերու, եւ աշակերտք ալ աս պատճառաւ եկեղեցի պէտք է երթան, եթէ ոչ կ'աքսորուին:

Յոյն: 70-80 տուն, 300-330 հոգի, ունին երկսեռ վարժարան մը երկու դասատուներով, 100ի չափ ալ աշակերտ, վարժարանի տարեկան ծախքերն են 70 ոսկի, դասախօսութիւնք յունարէն եւ այլն:

Մարոնի: 30 տուն, 80-90 հոգի, 1 վարժարան, 50-ի չափ ալ աշակերտ, 1 դասատուով կը կառավարուի սոյն վարժարանը, 40 ոսկի տարեկան ընդունելով, ունին նաեւ եկեղեցի մը եւ մէկ ալ վարդապետ եւ քարոզիչ մը, երկուքն ալ արաբախօս ճարպիկ անձեր:

Բողոքական: 130 տուն, ամէնքն ալ արհեստաւոր, ունին վարժարան մը թաղային, մէկ դասատու, 60-70 աշակերտ, գրեթէ այս աշակերտաց ալ մեծ մասը հայ լուսաւորչական են: Ասոնց վարժարանը բաւական կանոնաւոր է, որոյ դէմն է ժողովարանը: Յիշեալ վարժարանի ծախքը ամերիկացւոց կողմէ կը հոգացուի: Ունին նաեւ երկսեռ մանկապարտէզ մը 2 վարժուհիով, ուր 30ի չափ աղքատ փոքրիկ երկսեռ մանուկներ կը կրթեն, որոց ծախքն ալ դարձեալ ամերիկացիներէն է: Բողոքականութիւնը օրէ օր յառաջ կ'երթայ ի Տարսոն, գրեթէ ժողովարանը փոքր կու գայ այսօր, ուր մեծ մասամբ հայ լուսաւորչականներ են դիմողք: Գրեթէ օրէ օր կ'աւելնան բողոքականութեան յարելով, մինչդեռ ասկէ հինգ տարի առաջ հազիւ 20, 25 տուն կայ եղեր, աչքերնին լոյս մեր մօրուքը երկար տէրպապաներուն, ամեն ազգ շահելու, աւելցնելու կ'աշխատի, ասոնք հակառակը կորսնցունելու վարժ են, մեռել թաղելէ, եղինձ (բիլաւ) ուտելէ զատ բան չեն գիտեր, միայն թաղական աղաներուն հետ թող գործեն, որպէսզի քիչ քիչ ազգը ցրուելով ամբողջ եկեղեցին իրենց մնայ որ կարողանան դիւրու-

թեամբ ծախել զայն ալ, եւ դրամը ազատօրէն վայելելով, վասնզի դարձեալի տեղի չը պիտի տրուի: Այս վերոյիշեալ բողոքական վարժարաններու ընդհանուր ծախքն են 100 ոսկի, 40ական վարժուհիներու, 20 ալ թաղային վարժարանի դասատուին: Ունին ուսեալ, կիրթ եւ բարեսիրտ քարոզիչ մը, որ գիշեր ցորեկ անդադար կ'աշխատի ու կը յորդորէ հոտը ուրոյն ուրոյն այցելութիւն տալով կը խնամէ զանոնք նորին մեծապատուութեան ջանքով, գրեթէ բոլորովին տարբեր է բողոքական ազգայիններու վարքն ու բարքն: Կիրակի օրեր, մեծ եւ պզտիկ, այր եւ կին, ամէն ոք ժողովարանն է, ուրիշ տեղ գործ չունի, իսկ մերայինք ուղղակի սրճարան կը դիմեն առանց բանի մը նայլեու, հազիւ հազ հոն կը նետուին խաղին ժամանակը չը կորսնցունելու համար, զի եկեղեցի եւ աղօթք ըսուած բանը նշանակութիւն չունի ասոնց քով: Վերջապէս նախանձելի կացութիւն ունի Տարսոնի բողոքականութիւնը անձանց ոմանց շնորհիւ: Աստուած մերիններուն հոգին առնէ որ առանց անոնց կառավարուէր եկեղեցին ու վարժարանը:

Գոլէճ: Ամերիկացիք ունին նշանաւոր գոլէժ մի ի Տարսոն, ընդարձակ վայրի մը մէջ գեղեցիկ շէնք մ'է, ունի առջեւը բաւական մեծութեամբ պարտէզ մը, ուր կ'ըզբօսնուն աշակերտք արձակուրդի ատենները:

Այս Գոլէճը ունի 100ի չափ աշակերտ, ամէնքն ալ հայ, բնիկ տարսոնցի, ատանացի եւ ոմանք ալ թեմերէն, որոյ տէր եւ տնօրէն Մըսթըր Քրիսթի[10] անուամբ ամերիկացի պատուելի մը, Ամերիկայէն ղրկուած, որոյ հսկողութեան տակ է ամբողջ վարժարանը: Այս անձը բանիբուն, ուսեալ մարդ մը ըլլալուն համար ամբողջ Ատանայի կուսակալութեան մէջ գտնուող հայ ազգայիններու համակրանաց արժանացած է, զոր կը սիրեն խիստ ու կը յարգեն զայն միշտ: Այս վարժարանը գիշերօթիկ է, աշակերտք ալ թոշակաւոր, բայց աղքատ եւ անպաշտպան որբեր ալ կ'ընդունի ձրիաբար, ուր գրեթէ քառասունէ աւելի որբեր կը խնամուին ամեն ծախսերնին վարժարանէն հոգացուելով: Այս վարժարանը բարեսիրական գործոց մայրն է, ուր արժանավայել գործողութիւնք կը ծնանին ու կ'աճին: Ունի 6 դասատու, յաջողակ եւ կարողատէր անձեր, որոց տարեկան 50-70 ոսկի թոշակ կը տրուի, 7 կարգէ կը բաղկանան վարժարանի աշակերտք, 6-րդ եւ 7-րդ կարգաց բարձր ուսումներ կը տրուին, գիտական դասեր, աստղաբաշխութիւն, հոգեբանութիւն, քիմիագիտութիւն, բնագիտութիւն, կենդանաբանութիւն եւ այլն, լեզուք անգլերէն, գաղիերէն, տաճկերէն, յունարէն եւ հայերէն, այս վարժարանը Ատանայի կուսակալութեան մէջ ամենէն բարձր ու առաջինն է: Saint Paul's institute, Սէյնդ Բօլ'զ Ինսդիդուդ անուամբ կը ճանչցուի ընդհանուր կուսակալութեան մէջ:

Գործարաններ: Տարսոնի նշանաւոր գործարաններ, որոց մէջ նշանաւր էր Մաւրօմաթիի դերձանի գործարանը (իբլիկ ֆապրիգասը): Այս գործարանը

[10] Rev. Thomas D. Christie.- ծնած է Իրլանտայի Թայրոն աւանը եւ մանուկ հասակին տեղափոխուած է Միացեալ Նահանգներ, ուր հետեւած է Էնտովըրի Աստուածաբանական ճեմարանի դասընթացքներուն եւ պսակուած պսակաւոր արուեստից տիտղոսով, ապա մասնակցած է Մ. Նահանգներու քաղաքացիական պատերազմին: 25-30 տարի անխափան վարած է Տարսոնի Սընթ Փոլզ Քոլէճին տնօրէնութիւնը, միաժամանակ դասաւանդելով զանազան նիւթեր (Պալեան, էջ 142-3): Իր նախաձեռնութեամբ հիմնուած է Մարաշի Ճեմարանը (Ակադեմիան): 1909ի կիլիկեան կոտորածներու ժամանակ փրկած է բազմաթիւ հայերու կեանքը:

կ'արտադրէ մանածի ամէնէն նուրբ եւ մաքուր տեսակները, կարող մեքենայից միջոցաւ տեսակ տեսակ թել ու դերձաններ կը շինէ այնպէս, որ բոլոր Թուրքիոյ մէջ մուտ գտած է այս գործարանի արտադրած մանածը: Տարսոնի մեծ ծառայութիւն մը կ'ընէ քանզի աղքատիկներ մեծ մասամբ հոս կ'աշխատին ու կը պատսպարուին ընտանեկան պիտոյքնին հոգալով: Կրնամ ըսել թէ այր եւ թէ կին սկսեալ հինգ տարեկան օրիորդներէն մենչեւ յիսուն տարեկան ծերուկներ կ'աշխատին ըստ աստիճանի եւ գործից օրական ընդունելով: Գրեթէ ութը, ինն հարիւր գործաւորաց տեղ մ'է այս գործարանն:

Ալիւրի ջրաղացք: Նշանաւոր ջրաղացներ կան հոս, նոյն եւրոպական մեքենաներու գործողութեամբ ամէն տեսակ ազնիւ ալիւր կ'արտադրեն, զորս Զմիւռնիա եւ Մարսելիա կը ղրկուին Տարսոնի ալիւր անուամբ (Թարսուս ունը), նոյնպէս չըրչըրի գործարաններ, ուր բամպակը կը բաժնեն կուտէն (այսինքն սերմէն): Այս յիշեալ գործարաններուն մէջ ալ հարիւրաւոր այր եւ կին կ'աշխատին օրական վարձք ընդունելով:

Այս գործարանները ամենքն ալ Կիւտնոս գետի ջրով կը դառնան այլեւայլ բաժանումներու վերածելով զայն, վրան գործարաններ հաստատած են, այս գործարանները թուրք եւ յունաց կը պատկանին, հայք ոչինչ ունին ասոնց մէջ, միայն կ'աշխատին այս գործարաններու մէջ:

Հնութիւնք: Տարսոն ունի շատ մը հնութիւններ, կրնամք ըսել թէ նոյն ինքն Տարսոն հնութիւն մ'է արդէն: Ամէն կողմը կը տեսնուի հին քարերու բեկորներ այլ եւ այլ հին լեզուաւ եւ գրով քանդակուած կենդանի վկաներ, նշանաւոր է նաեւ հայոց գերեզմանատունը, գեղեցիկ պարտէզի մը մէջ ահագին բերդ մը, չորս պատերէ բաղկացեալ քարաշէն պարիսպ մը, որուն Սարտինաբաղի գերեզմանն է կ'ըսեն, թերեւս ուրիշ բան մը ալ եղած ըլլայ որ չը գիտցուիր, ոմանք ալ գանձատուն է եղեր կ'ըսեն հռովմէացւոց ժամանակէն մնացած, կամ մահապարտներու յատկացեալ բանտ մը, որոյ ստուգութեան մասին տեղեկութիւն ունեցող մը չը կայ:

Պօչուկ Գուլէ: Ահագին բերդ մը ալ այս է, բլուրի մը նմանութեամբ, որոյ մէջ տեղ տեղ ահագին պատերու բեկորներ կը տեսնուին եւ սենեակի ձեւ ունեցող խոռոչներ, ասոր վրայ ալ շատ մը կասկածներ կան, այս յիշեալ բերդը Տարսոնի արեւելեան հիւսիսային կողմն է, որոյ դէմն է Ամերիկացւոց Գոլէժը դէպի հիւսիս: Տուներու ոմանց մէջ հոր փորելու առթիւ յղկուած քարեր կը գտնուին, որք յարգի են Տարսոնի մէջ նոր շինութեանց համար, այս քարերէն զատ նոյն փորուած հորի խորերէն մօզայիք քարերով հիւսուած գեղեցիկ սրահներ կը բացուին, որ շատ զարմանալի է, ընդհանուրի կարծիքն է թէ ի հնումն Տարսոն բաւական ցած է եղեր, քանիցս հիմնայատակ ըլլալով՝ մի քանի անգամ նորոգութիւն կրելու համար իր բնական դիրքը կորսնցուցած է, լեցուած ու բարձրացած ըլլալով, առաջի դրութիւնը կորսնցուցած է որ շատ հաւանական է:

Նշանաւոր սրճարան մը: Կիւտնոս գետի ճիւղերէն միոյն վրայ շինուած գեղեցիկ սրճարան մ'է, գրեթէ Տարսոն քաղաքի մէջ գտնուող սրճարաններու առաջինն է, իւր դիրքի գեղեցկութեան կողմանէ նշանաւոր է, վերոյիշեալ Կիւտնոս գետի մէկ ճիւղը գալով այս սրճարանի մէջէն կ'անցնի, երկուքի բաժնելով զայն, որոյ վրայ դախթեր հաստատած են, ուր կը նստին յաճախորդք, կայ հոս երկու դախթ դէմ առ դէմ շինուած, որոյ տակէն կ'անցնի այս նշանաւոր ջուրը, վերոյիշեալ դախթերու մէջտեղ ահագին քար մը կայ սանդուխի աստիճանի մը ձեւով, որոյ վրայ կոխելով կը լուացուին շատ անգամ, այս քարին 60-70 ոսկի

կու տան եւրոպացի այցելուք, յունական գրերով ոտանաւորի պէս բաներ կան գրուած, զորս արդի յոյնք, այսինքն տարսոնցի յոյները չեն կրնար հասկնալ այս գրութեան նշանակութիւնը, եւ քարն ալ բաւական մեծ եւ խիստ ծանր ըլլալուն համար, սայլակ մը հազիւ կարող է կրել զայն եւ տէրն ալ շատ հարուստ, որ ոչ կը ծախէ եւ ոչ ալ կը թողու որպէսզի վերցունեն զայն: Հոս կը մնայ միշտ, միայն յոյները ախ մը քաշելով կ'անցնին ու կը դառնան քովէն:

Տարսոն կը բաղկանայ 24 թաղէ եւ 3200 տունէ, 1500 կամ աւելի ֆէլլահ, 300 հայ, 70-80 յոյն, 70-90 կամ 130 բողոքական, 20 կամ պակաս, 50 կամ պակաս մարոնի, ընդամէնը գրեթէ 15,000-16,000:

Կիւտնոս գետը Տարսոնի արեւ. հիւսիս կողմը, Պոյամ դաշտավայրի մէջ գտնուող կիսակործան եկեղեցւոյ մը մէջէն կը բխի եւ գալով կ'անցնի «Քէհրիզպան թէփէսիի» ստորոտէն (բլուր գերեզմանաց), ուր կ'ընդունի ուրիշ առուակներ եւ երթալով կը մեծնայ, ահագին գետ մը կը կազմէ, ուղղակի Տարսոն գալով կը հասնի Միջերկրական ծով: Այս վերոյիշեալ բլրակի շրջակայքը կան շատ մը տաճկաբնակ գիւղեր, մանաւանդ այս բլրակի գագաթին վրայ կ'երեւի հազարաւոր գերեզմաններն հին աւուրց մնացած: Գեղեցիկ տապանաքարեր հայ, յոյն գրերով քանդակուած: Այս բլրակը գրեթէ 5-6 քմ. հեռի է Տարսոնէն:

Ջրվէժ: Տարսոն ունի ջրվէժ մը, հետաքրքրական տեղ մ'է այս վայրը, ուր Կիւտնոս գետը գալով բաւական բարձրութիւն ունեցող տեղէ մը վար կը թափի, այս յիշեալ տեղւոյն Իսքէնտէր համամի[11] ալ կ'ըսեն: Իբր թէ Մեծն Աղեքսանդրոս յաղթական բանակով գալով կ'իջեւանի այստեղ, եւ օրուան տաքութենէն նեղուելով այս ջրոյն մէջ կը մտնէ լողալու դիտաւորութեամբ, ուր կ'ըսկսի իսկոյն դողալ: Այս դողը սարսուռ կ'ազդէ Մեծն Աղեքսանդրի, ուստի իսկոյն ջուրէն դուրս ելնելով կը հրամայէ զօրաց խոյս տալ անտի, առարկելով թէ բոլոր աշխարհ ինէ դողաց, բայց ահա ես ալ այս ջուրէն կը դողամ, ուրկէ Մեծն Աղեքսանդրոս կը փախի:

Այս Կիւտնոս գետը ի հնումն Տարսոնի պարիսպներէն բաւական հեռի վայրէ մը կ'անցնէր, յետոյ յունաց կայսերներէն մին այս գետի ջուրը քաղաքին մէջ բաժնելու համար առջեւը ահագին պարիսպի պէս պատ մը կը քաշէ, ուրկէ ջուրը կը բաժնուի այլեւայլ առուակներով կ'ոռոգէ բոլոր Տարսոնը: Յետոյ պաշարումի մը ատեն սոյն պարիսպը կը կործանեն, քաղաքը անջուր թողելով անձնատուր ընելու համար:

Եւ այս ան կիսակործան պարիսպն է, որոյ վրայէն ջուրը վար կը թափի ահագին ջրվէժ մը կազմելով, որոյ տակ ցարդ կը տեսնուին սենեակներ, սանդուխտներու աստիճաններ եւ այլն հետաքրքրական բաներ, եւ որ անխախտ կը մնան ջրոյն տակ:

Շարունակելի:

Յ. Օ. Մանծիկեան, լուսանկարիչ, Տարսոն

[18]98, Հոկտ. 23

[11] Իսքէնտէր համամի՝ Իսքէնտէրի (Աղեքսանդր Մակեդոնացիի) բաղնիք:

AN UNPUBLISHED REPORT OF 1898 ON DARSON (TARSUS)

(Summary)

MIHRAN MINASIAN (mihran.min@gmail.com)

This unpublished report on Darson, written by the photographer H.O. Mandzigian in 1898, partly compensates for the absence of a memorial book on Darson/Tarsus. It describes the Armenian and other inhabitants of the city, its schools, religious buildings, factories, ruins, social life, etc.

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐՈՒ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Սերգէյ (Սերիակ) Ամիրեան **vahamir@yahoo.com**

Ծնած է 1937ին, Լանջաղբիւր (Գաւառի մարզ, ՀՀ): 1960ին աւարտած է ԵՊՀ պատմութեան ֆակուլտէտը պաշտպանելով «Լուկուլոսի արշաւանքը Հայաստան եւ նրա պարտութիւնը» աւարտաճառը: 1986ին պաշտպանած է թեկնածուական՝ Հայաստանի Կոմկուսի պատմութեան-հասարակական-քաղաքական հետազօտութիւններու հիմնարկին մէջ:

2000-17, եղած է ԵՊՀ պատմութեան, միաժամանակ (2002-2016)՝ Խաչատուր Աբովեանի անուան հայկական պետական մանկավարժական համալսարանի մշակոյթի ֆակուլտէտներու դասախօս: Վարած է շարք մը վարչական պաշտօններ ՀՀ թանգարաններու, մշակութային հիմնարկներու եւ խորհուրդներու մէջ, 1993-97 եղած է վարիչը «Յուշամատեան» հասարակական-մշակութային կազմակերպութեան վարչութեան:

1963-66՝ մասնակցած է Արթիկի եւ Հառիճի պրոնզէդարեան դամբարանադաշտի եւ բնակավայրի պեղումներուն: Հեղինակ է *Արխիւագիտութիւն*՝ առաջին բուհական դասագիրքին (2016), *ՀՅԴ կազմաւորումը եւ գործունէութեան սկզբնափուլը* (2019) գիրքին:

Խմբագրած է զանազան գիրքեր, ներառեալ՝ Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակուելու 1700ամեակին նուիրուած փաստաթղթերու ժողովածուն (*Բանբեր Հայաստանի արխիւների*, 1:2001):

Գիտաուսումնասիրական հետաքրքրութիւններու ծիրը եղած է հայ ժողովուրդի պատմութեան «սպիտակ էջերու», թերի ուսումնասիրուած, կամ չուսումնասիրուած, եղծուած ու կեղծուած հիմնախնդիրներու լուսաբանումը, ստալինեան բռնադատումները եւն.: 2003էն կ'աշխատակցի *Հայկազեան հայագիտական հանդէս*ին:

Յասմիկ Ամիրջանեան **Amirjanyan.hasmik@rambler.ru**

Ծնած է 1977ին, Լոռիի մարզի Շնող գիւղը: 1997ին աւարտած է Երեւանի Խաչատուր Աբովեանի Անուան Հայկական Պետական Մանկավարժական Համալսարանի պատմաաշխարհագրական ֆակուլտէտի պատմութեան բաժինը: 2009ին պաշտպանած է թեկնածուական՝ ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտին մէջ՝ «Լոռին ԺԸ. դ. վերջին եւ ԺԹ. դ. առաջին երեսնամեակին (պատմաժողովրդագրական ուսումնասիրութիւն)» նիւթով:

Ներկայիս ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի աւագ գիտաշխատող է, միաժամանակ պատմութիւն կը դասաւանդէ Երեւանի Չայքովսքիի անուան հանրակրթական դպրոցին մէջ:

Վերջին գիրքն է Մարկոս Խաչատրեանի, *Պարսկահայերի զանգուածային գաղթը եւ նրանց բնակեցումն Արեւելեան Հայաստանում (1828 թ.)* (2010) հատորի խմբագրումը:

Գիտաուսումնասիրական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ հայ ժողովուրդի նոր շրջանի պատմութիւնը, Լոռիի գաւառը, հայ-վրացական եւ հայ-ռուսական յարաբերութիւնները, ժողովրդագրութեան հարցերը, Հայ Եկեղեցւոյ պատմութիւնը:

Յովիկ Գասապեան **kassapianhovik1977@gmail.com**

Ծնած է 1977ին, Յունաստանի Թեսաղոնիկէ քաղաքը: 1995ին աւարտած է յունական երկրորդական վարժարան: 2011ին ընդունուած է Երեւանի Պետական Գեղարուեստական Ակադեմիա, ուր հետեւած է քանդակագործութեան: 2017ին աւարտած է ԵՊՀ պատմութեան ֆակուլտէտի սփիւռքագիտութեան ամբիոնի մագիստրոսականը, պաշտպանելով «Թեսաղոնիկէի (Սալոնիկ, Յունաստան) Հայկական Համայնքը 1990էն Ցայսօր» թեզը: Ներկայիս կը բնակի Թեսաղոնիկէ, ուր կը զբաղի ոսկերչութեամբ ու գեղարուեստական զարդերու պատրաստութեամբ, միաժամանակ շարունակելով իր բանասիրական հետազօտութիւնները:

Տորք Դալալեան **torqdal@yahoo.com**

Ծնած է 1977ին, Երեւան: 1999ին աւարտած է ԵՊՀ արեւելագիտութեան բաժինը: 2002ին պաշտպանած է թեկնածուական՝ «Հայ-օսական լեզուամշակութային առնչութիւններ» նիւթով: 2004-06 եւ 2011-13՝ հետեւած է Փարիզի Institut National des Langues et Civilisations Orientalesի եւ Université de Sorbonne - Ecole Pratique des Hautes etudesի դասընթացքներուն: 2019էն վարիչն է ՀՀ ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան հիմնարկի բանահիւսութեան տեսութեան եւ պատմութեան բաժնին, 2016էն աւագ գիտաշխատող՝ Հ. Աճառեանի անուան լեզուի հիմնարկի ընդհանուր եւ համեմատական լեզուաբանութեան բաժնի, 2019էն պատասխանատու խմբագիրն է *Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի աշխատութիւններ* պարբերականին:

Կազմած եւ համախմբագրած է շարք մը հնագիտական եւ ազգագրական բնոյթի գիրքեր եւ ուսումնասիրութիւններ, համահեղինակ է *Վայոց-ձոր. պատմամշակութային ժառանգութեան դրուագներ* գիրքին (2021): Գիտաուսումնասիրական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ բանագիտութիւնն ու առասպելաբանութիւնը, ինչպէս նաեւ հայերու, քիւրտեր, եզտիներու, օսերու ինքնութիւններու ձեւաւորումը: 2009էն կ'աշխատակցի *Հայկազեան հայագիտական հանդէս*ին:

Արմենակ Եղիայեան **armenag@gmail.com**

Ծնած է 1939ին, Պուրճ Համուտ, Լիբանան: 1964ին աւարտած է Սէն Ժոզէֆ Համալսարանի ֆրանսական գրականութեան եւ լեզուի (Ecole des Lettres), իսկ 1970ին՝ ատամնաբուժութեան բաժանմունքները: Խմբագրած եւ թարգմանած է բազմաթիւ հատորներ, կատարած է արեւելահայերէնէ արեւմտահայերէնի փոխադրումներ: Հեղինակ է *Մեսրոպեան տառերու ակունքները* (2005) մենագրութեան եւ նախակրթարանի *Ծիածան* դասագիրքերու (5 հատոր ընթերցարան, 5 հատոր քերականութիւն, 10 հատոր ուղեցոյց) (1991-95):

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն հայոց լեզուի կառոյցն ու շարահիւսութիւնը: 2014էն կ'աշխատակցի *Հայկազեան հայագիտական հանդէս*ին:

Ճան Էրզուրումլուօղլու **canerzurumluoglu@hotmail.com**

Ծնած է 1980ին, Պոլիս: 2017ին պաշտպանած է մագիստրոսականը՝ «Une Comparaison Critique de la Conception de L'espace Chez Leibniz et Chez Kant» նիւթով: 2001-10՝ իբրեւ ուսուցիչ պաշտօնավարած է պոլսահայ վարժարաններու մէջ, իսկ 2015էն՝ ուսողութեան դասախօս է Նիշանթաշը համալսարանին մէջ:

Տիգրան Էքմէքճի **dikran3@gmail.com**

Ծնած է Պէյրութ, 1950ին: Աւարտած է Լիոնի Ecole Supérieure Des Industries Textilesը, եւ վկայուած հիւսուածեղէնի մասնագիտութեամբ: 1978-82՝ անդամ Լիբանանի ճարտարարուեստականներու Միութեան վարչութեան: Ներկայիս կը բնակի Քալիֆորնիա:

Հետաքրքրութիւններու ծիրը համաշխարհային պատմութիւնն ու աշխարհագրութիւնն է:

Եղիա Թաշճեան **yeghia.tash@gmail.com**

Պսակաւոր քաղաքագիտութեան տիտղոսով վկայուած է Հայկազեան համալսարանէն, իսկ մագիստրոս քաղաքագիտութեան տիտղոսով՝ Պէյրութի ամերիկեան համալսարանէն:

Շրջանային քաղաքական հարցերու հետազօտող-վերլուծաբան է, 2010ին հիմնած է the New Eastern Politics առցանց կայքը: Իր "The Armenian Community in Iraqi Kurdistan" ուսումնասիրութիւնը լոյս տեսաւ *Armenians of Iraq* (2017) գիրքին մէջ: Եղած է օգնական հետազօտող Հայկական Սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոնին: Ներկայիս, ան Պէյրութի ամերիկեան համալսարանի Associate Fellow է՝ Issam Fares Institute for Public Policy and International Affairsի:

Մագիստրոսական թեզը նուիրուած է Իրանի եւ Ծոցի շրջանին մէջ Չինաստանի աշխարհաքաղաքական շահերուն:

Արթօ Թաւուքճեան **arto@designshiva.com**

Ծնած է Մոնթրէալ, 1958ին: 1982ին աւարտած է Քոնքորտիա համալսարանի Communication Studies բաժինը պսակաւոր արուեստից վկայականով:

Ան ինքզինք կը նկարագրէ իբրեւ «որսորդ մը արուեստի արժէքաւոր գործերու, որոնք լքուեցան, երբ հայեր ստիպուեցան փախչիլ Օսմանեան Կայսրութենէն՝ 1915ին»:

Իր հետաքրքրութիւններուն ծիրը կ'ընդգրկէ հայ արուեստն ու հայոց պատմութիւնը: Հաստատած է հայ արուեստին նուիրուած www.hyeantiques.com կայքը:

Արիֆ Թափան **arif.tapan@boun.edu.tr**

Ծնած է 1991ին, Նեւշեհիր, Թուրքիա: 2018ին պաշտպանած է մագիստրոսականը՝ "Reading Armeno-Turkish Novels Narratologically in the Context of the Nineteenth-Century Modern Ottoman Novel: Akabi Hikyayesi and Bir Sefil Zevce" նիւթով, Իսթանպուլի Շեհիր համալսարանին մէջ: Ներկայիս դոկտորականի ուսանող է Պողազիչի համալսարանին մէջ:

Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ Զապէլ Եսայեանը, Գրիգոր Զօհրապը, ԺԹ. դարու հայատառ թրքերէն գրականութիւնը/մամուլը, թուրք ժամանակակից գրականութիւնը, բաղդատական գրականութիւնը եւն.:

Պետրոս Թորոսեան **Bedros_torosian@outlook.com**

Ծնած է Պէյրութ, 1994ին: 2019ին պաշտպանած է մագիստրոսականը՝ «In Search of Haven and Seeking Fortune: The Economic Role of Ottoman Armenian Migrants in Brithish-Occupied Egypt (1882-1914)» նիւթով: Ներկայիս դոկտորական ուսման կը հետեւի պատմութեան մէջ՝ Մ. Նահանգներու Ըրվայն համալսարանէն ներս:

Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ ԺԹ. դարու Օսմանեան Կայսրութեան պատմութիւնը, կրթական համակարգը, որբախնամ գործունէութիւնը, ուսանողական-երիտասարդական շարժումները: 2018էն կ'աշխատակցի *Հայկազեան հայագիտական հանդէս*ին:

Լուսինէ Հայրիեան **hayriyan.1976@mail.ru**

Ծնած է 1976ին, Երեւան: 2012ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Հեքիաթների գրական մշակումները 19րդ դարավերջի եւ 20րդ դարասկզբի հայ նոր գրականութեան մէջ» նիւթով: 1998-99՝ պաշտօնավարած է «Հայբուսակ» ինստիտուտին, 2001ին՝ Խրիմեան Հայրիկի թիւ 10 դպրոցին մէջ: 2002-4՝ թղթակցած է *Այսօր* եւ 2009՝ *Տարեգիր* թերթերուն: 2017էն գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի բանահիւսութեան տեսութեան եւ պատմութեան բաժնի:

Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ հայ բանահիւսութեան ներթափանցումը հայ գրականութեան:

Լուսինէ Ղռէջեան **ghrejyan76@mail.ru**

Ծնած է 1976ին, Գեղարքունիքի մարզի Գաւառ քաղաքը: 1998ին աւարտած է Գաւառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտէտի հայոց լեզուի եւ գրականութեան բաժանմունքը: 1998էն իվեր ընդհանուր գրականութեան դասախօս է նոյն համալսարանին մէջ: 2010ին պաշտպանած է թեկնածուական, իսկ 2008էն գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի բանահիւսութեան տեսութեան եւ պատմութեան բաժնին մէջ:

Հեղինակ է *Երկուորեակների առասպելը եւ դրա տարբեր դրսեւորումները հայ վիպական աւանդութեան համակարգում* գիրքին, եւ *Ժողովրդական ասոյթաբանութեան տեսակներն ու գաղափարաբանութիւնը* մեթոդական ուղեցոյցին:

Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ հայկական ազգային աւանդութեան առասպելաբանական ժառանգութիւնը, մասնաւորապէս ինդեւրոպական ցեղակից ժողովրդներու համանման մշակոյթի հետ ունեցած պատմական ու տիպաբանական աղերսները եւն:

Եղիկ Ճէրէճեան **yeghjerj@dm.net.lb**

Ծնած է 1957ին, Պէյրութ: 1984ին աւարտած է Մխիթար Հերացիի անուան Երեւանի բժշկական ինստիտուտի ատանաբուժական բաժանմունքը:

Իր մասնագիտութեան կողքին աշխուժ ձեւով մասնակցած է ազգային-հասարակական կեանքին: Մաս կազմած է *Արարատ* օրաթերթի խմբագրութեան եւ խմբագրած *Արարատ երիտասարդական* պարբերաթերթը: 1992-2009՝ եղած է Լիբանանի խորհրդարանի անդամ: 1995-2017՝ մաս կազմած ՍԴՀԿ կեդրոնական վարչութեան: «Հայ ազգային-ազատագրական պայքարի պատմութեան ուսումնասիրութեան բնագաւառում ձեռք բերած ակնառու յաջողութիւնների համար», 2019ին, ՀՀ ԳԱԱին կողմէ ստացած է պատմական գիտութիւններու պատուաւոր դոկտորի կոչում: Հեղինակած վերջին գիրքն է *Պանդուխտ* (2018) հատորը:

Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ օսմանեան բռնատիրութեան դէմ հայ ազգային-ազատագրական պայքարը, Հայկական Ցեղասպանութիւնը, Հայ Դատի եւ հայ ժողովուրդի դիմագրաւած ժամանակակից հարցերը: 2007էն կ'աշխատակցի *Հայկազեան հայագիտական հանդէս*ին:

Կարէն Մկրտչեան **K86Mkrtchyan@gmail.com**

Ծնած է 1986ին, Երեւան: 2014ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Հայ-իրանական յարաբերութիւնները 1991-2005 թթ.» նիւթով:

Ներկայիս ՀՀ ԳԱԱ պատմութեան հիմնարկի հայ գաղթօճախներու եւ Սփիւռքի պատմութեան գիտաշխատող է:

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն համաշխարհային նոր համակարգը, Հայաստանի եւ Իրանի քաղաքական, տնտեսական, գիտակրթական, մշակութային յարաբերութիւնները, Իրանի հայ համայնքը, ղարաբաղեան հակամարտութիւնը, Հայոց Ցեղասպանութեան հարցերը: 2018էն կ'աշխատակցի *Հայկազեան հայագիտական հանդէս*ին:

Հեղինէ Մկրտչեան **heghmk@yahoo.com**

Ծնած է 1959ին, Երեւան: 1994ին հետեւած է Գերմանիոյ դաշնային հանրապետութեան Լրագրութեան միջազգային հիմնարկի դասընթացքներուն: 1997էն կը պաշտօնավարէ Մայր Աթոռ Ս. Էջմիածին, նախ իբրեւ մամլոյ դիւանի պատասխանատու, տեղեկատուական համակարգի մամուլի պատասխանատու, ապա՝ տեղեկատուական համակարգի խմբագիր: 1996էն հիմնադիր խորհուրդի անդամ է Երեւանի մամուլի ազգային ակումբին: Աշխատակցած է հայկական եւ ոչ-հայալեզու մամուլին: Խմբագրած է զանազան գիրքեր: Հրատարակած վերջին երկն է *Կանանց կուսութեան ուխտի նորայայտ կարգ Երուսաղէմի ԺԷ. դարի Մաշտոցում* (2015):

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Հայ Եկեղեցւոյ պատմութիւնը: 2019էն կ'աշխատակցի *Հայկազեան հայագիտական հանդէս*ին:

Վաչէ Ղազարեան **vatcheg@gmail.com**

Ծնած է 1954ին, Հալէպ: 1983ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Վահան Թէքէեանի կեանքը եւ ստեղծագործութիւնը» նիւթով: 2002-19՝ պաշտօնավարած է իբրեւ ակադեմական մասնագէտ, փրոֆեսորի աստիճանով, Մոնթերէյ, Քալիֆորնիա, օտար լեզուներու հիմնարկի մէջ: Խմբագրած եւ հրատարակութեան պատրաստած է բազմաթիւ անտիպ ուսումնասիրութիւններ, յուշեր, կատարած է թարգմանութիւններ: Հեղինակ է բազմաթիւ գիտական յօդուածներու եւ մենագրութիւններու, որոնց վերջինն է *Համահաւաք ափեներագրութիւններ Թուրքիոյ հայոց ազգային երեսփոխանական ժողովի, համագումար ազգային ժողովի եւ համազգային խորհուրդի (1919-1922)* հատորը (առցանց հրատարակութիւն՝ https://mayreni.net/):

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն արեւմտահայ պատմութիւնը եւ գրականութիւնը: 1981էն կ'աշխատակցի *Հայկազեան հայագիտական հանդէս*ին:

Վարդան Մատթէոսեան **varny1@yahoo.com**

Ծնած է 1964ին, Մոնթէվիտէօ: 2005ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Հայերը Արժանթինի մէջ՝ սկիզբէն մինչեւ 1950» նիւթով ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի մէջ: 2019էն կը վարէ Նիւ Եորքի Հայց. առաքելական եկեղեցւոյ արեւելեան թեմի (կիլիկեան աթոռ) դիւանապետի պաշտօնը:

Հեղինակ է հայերէն, սպաներէն ու անգլերէն հատորներու, բազմաթիւ գիտական յօդուածներու, խմբագրած ու թարգմանած է բազմաթիւ հատորներ՝ հայերէն, սպաներէն ու անգլերէն: Վերջին հրատարակուած հատորն է *Armenian language matters*, 2019ին:

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Սփիւռքը, հայոց հնագոյն եւ նոր պատմութիւնը, հայ նոր եւ նորագոյն գրականութիւնը, պատմաբանասիրական խնդիրներ: 1996էն կ'աշխատակցի *Հայկազեան հայագիտական հանդէս*ին:

Մարիամ Մարգարեան **Mariam.margaryan@paara.am**

Ծնած է 1950ին, Երեւան: 1972ին աւարտած է ԵՊՀ պատմութեան ֆակուլտէտը, 1987ին պաշտպանած է թեկնածուական՝ «Ազգային առանձնայատկութիւնները սովետական մարդու ապրելակերպում» նիւթով, իսկ 2006ին՝ դոկտորականը՝ «Քաղաքական ընտրանին ՀՀ ժողովրդավարական անցման պայմաններում» նիւթով: 1996էն ՀՀ պետական կառավարման ակադեմիայի քաղաքական կառավարման եւ հանրային քաղաքականութեան ամբիոնի վարիչն է: Պարգեւատրուած է «Մովսէս Խորենացի» մեդալով, 2014ին: Հրատարակած է բազմաթիւ ուսումնասիրութիւններ, հեղինակ է տասնեակ գիրքերու, որոնց նորագոյնն է *Գունաւոր յեղափոխութիւն. տեսութիւն եւ տեխնոլոգիաներ* (2021):

Գիտաուսումնասիրական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ հայապահպանութեան, ազգային ինքնութեան բնականոն արդիականացման խնդիրները, գունաւոր յեղափոխութիւնները:

Միհրան Մինասեան **mihran.min@gmail.com**

Ծնած է Հալէպ: Երկրորդական կրթութիւնը ստացած է Ազգային Քարէն Եփփէ ճեմարանէն: Կատարած է հայերէնէ արաբերէն եւ արաբերէնէ հայերէն թարգմանութիւններ: Արհ. Պետրոս արք. Միրիաթեանի համահեղինակութեամբ հրատարակած է *Հալէպցիներու ապստամբութիւնը կուսակալ Խորշիտ Փաշայի դէմ (1819-1820) - Աբրահամ արք. Քիւրէղեանի օրագրութիւնը* արաբերէն հատորը 2008ին: Կ'աշխատակցի *Հասկ հայագիտական տարեգիրք*ին, *Բագին*ին: Զբաղած է նաեւ բանահաւաքչութեամբ եւ Հայոց Ցեղասպանութենէն հարիւրաւոր վերապրողներէ գրի առած է անոնց վկայութիւններն ու ազգագրական-բանահիւսական հսկայական նիւթ: Անդամ է Սուրիոյ արաբ գրողներու եւ Հայաստանի գրողներու միութեանց: 2012էն կ'ապրի Երեւան ու կը պաշտօնավարէ «Մատենադարան» Մ. Մաշտոցի անուան Հին Ձեռագրերի գիտահետազօտական Ինստիտուտի եւ Ծիծեռնակաբերդի Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտ Հիմնադրամին մէջ:

1981էն կ'աշխատակցի *Հայկազեան հայագիտական հանդէս*ին:

Վարդան Մխիթարեան **vardan.mkhitaryan.g@gmail.com**

Ծնած է 1961ին, Երեւան: 1989ին աւարտած է ԵՊՀ աշխարհագրութեան ֆակուլտէտը, պաշտպանելով «Նախիջեւանի պատմաճարտարապետական յուշարձանները» նիւթը: 2014ին դոկտորականը պաշտպանած է Ֆրանսայի Փոլ Վալերի-Մոնփելիէ 3 համալսարանին մէջ՝ «Հայաստանի եւ Այսրկովկասի ֆրանսական քարտիսագրութիւնը» նիւթով: 2022էն աւագ գիտաշխատող է ԵՊՀ հայագիտական հետազօտութիւններու ինստիտուտին մէջ, միաժամանակ կը դասախօսէ ԵՊՀ աշխարհագրութեան եւ երկրաբանութեան ֆակուլտէտին մէջ: Վերջին հեղինակած գործն է *Հայաստանի աշխարհագրական ատլաս*ը (2015):

Գիտական հետաքրքրութիւններու ծղիրը կ'ընդգրկէ պատմական աշխարհագրութիւնն ու քարտիսագրութիւնը, տեղեկատուական արհեստագիտութիւնը: 2019էն կ'աշխատակցի *Հայկազեան հայագիտական հանդէս*ին:

Զաւէն Մսըրլեան
Ծնած է 1938ին, Պէյրութ: 1963ին՝ պաշտպանած է մագիստրոսականը: 2003ին ՀՀ ԳԱԱն իրեն շնորհած է Պատուոյ դոկտորայի կոչում, իսկ 2014ին ընտրուած է ՀՀԳԱԱ արտասահմանեան անդամ:

Ասպարէզով կրթական մշակ է: 1967-2017՝ եղած է Պէյրութի հայ աւետ. գոլէճի տնօրէնը: Հեղինակ է մօտ 100 պատմական ուսումնասիրութիւններու, բազմաթիւ գիրքերու, որոնց վերջինը՝ *Հայերը համաշխարհային Բ. պատերազմին* (2020): 1971էն կ'աշխատակցի *Հայկազեան հայագիտական հանդէս*ին:

Հայարփի Յակոբեան **hayarpi.hakobyan30@gmail.com**
Ծնած է Նոյեմբերեան, 1994ին: Ներկայիս կը բնակի Հալլէ, Գերմանիա: 2016ին պաշտպանած է մագիստրականը՝ արուեստաբանութեան մասնագիտութեամբ: Ներկայիս կ'աշխատի իր դոկտորականին վրայ: 2021էն ասպիրանտ-հետազօտող է Հալլէ-Վիթենպերկի Մարտին Լութէր Համալսարանին մէջ:

Գիտաուսումնասիրական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ հայ միջնադարեան արուեստը, արեւելաքրիստոնէական արուեստը, եւն:

Յակոբ Չոլաքեան **hagopcholakian@hotmail.com**
Ծնած է Գարատուրան, Սուրիա: 2016ին ստացած է պատմական գիտութիւններու դոկտորի աստիճան, պաշտպանելով «Քեսապ (պատմա-ազգագրական ուսումնասիրութիւն)» աւարտաճառը: 2014էն ՀՀ ԳԱԱ ազգագրութեան եւ հնագիտութեան ու Հրաչեայ Աճառեանի անուան լեզուի հիմնարկներու աւագ գիտաշխատող է, դասախօս՝ ԵՊՀի:

Հեղինակ է գիտական յօդուածներու եւ հատորներու, որոնց վերջինը՝ *Սուրիահայ դպրոցի պատմութիւն* (2 հատոր, 2021): Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Քեսապը, բանահիւսութիւնը, սուրիահայ վարժարանները, արեւմտահայերէնը: 1982էն կ'աշխատակցի *Հայկազեան հայագիտական հանդէս*ին:

Սարգիս Պետրոսեան **vahe1996@mail.ru**
Ծնած է 1942ին, Լենինական (այժմ Գիւմրի): 1967ին աւարտած է ԵՊՀ պատմութեան ֆակուլտէտը, պաշտպանելով «Հին Հայաստանի մարական ծագումով տեղանունները» (պարսկերէնով) թեզը: 1980ին պաշտպանած է «Արշակունիների ու հռոմէացիների փոխյարաբերութիւնները հիւսիսկովկասեան ցեղերի հետ եւ Հայաստանը (Ք.ե. Ա. դար)» թեկնածուականը, ՀԽՍՀ ԳԱ պատմութեան ինստիտուտին մէջ, իսկ դոկտորականը՝ 2001ին, «Դասերը եւ եռադասութեան դրսեւորումները հին եւ վաղմիջնադարեան Հայաստանում» նիւթով:
1997էն առաջատար գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազօտութիւններու կեդրոնին մէջ, 1998էն անդամ՝ կեդրոնի գիտական պարբերականի խմբագրակազմին: 1980-83՝ եղած է «Կումայրի պատմաճարտարապետական արգելոց թանգարանի» փոխտնօրէն, 1996-2006՝ Գիւմրիի Մ. Նալբանդեանի անուան պետական մանկավարժական ինստիտուտի (այժմ՝ Մ. Նալբանդեանի անուան «Շիրակի պետական համալսարան» հիմնադրամ) պատմաբանասիրական ֆակուլտէտի դեկան: Հեղինակ է *Դասերը եւ եռադասութեան դրսեւորումները հին Հայաստանում* (2006) եւ *Հայոց մեհենագրութեան ակունքներում* գիրքերուն: Գիտաուսումնա-

սիրական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ Հայաստանի եւ Արեւելքի երկիրներու հնագոյն ու հին պատմութեան, նաեւ հոգեւոր մշակոյթի հարցեր:

Գարիկ Պօղոսեան **garik.poghosyan2011@gmail.com**
Ծնած է 1989ին, Երեւան: 2015ին պաշտպանած է մագիստրականը ՀՀ պետական կառավարման ակադեմիայի (ՊԿԱ) քաղաքագիտութեան բաժանմունքին մէջ: Ներկայիս կ'աշխատի իր թեկնածուականին վրայ, միաժամանակ՝ 2021էն կը դասաւանդէ ՊԿԱի եւ՝ Երեւանի Global Bridge կրթահամալիրին մէջ:

Գիտաուսումնասիրական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ թուրք-միջինարեւելեան յարաբերութիւնները, ռազմավարական ծրագրում եւ հանրային վարչակառավարում, հայ քաղաքակրթութիւն եւ Եւրասիա, քաղաքակրթութիւններու երկխօսութիւն, արցախեան հիմնահարց:

Արփի Վարդումեան **avardumyan8@gmail.com**
Ծնած է 1948ին, Երեւան: 1972ին աւարտած է Կոմիտասի անուան Երեւանի պետական կոնսերվատորիայի երաժշտութեան պատմութեան եւ տեսութեան բաժանմունքը: Ներկայիս գիտաշխատող է «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անուան հին ձեռագրերի գիտահետազօտական ինստիտուտի արուեստի պատմութեան եւ գրչութեան կեդրոններու ուսումնասիրութեան բաժինին մէջ: 1998էն անդամ է Հայաստանի կոմպոզիտորների եւ երաժշտագէտների միութեան:

Հրատարակութեան պատրաստած է հայր Ղեւոնդ Տայեանի բազմահատոր Շարակնոցի, Ա. հատորը, նաեւ՝ Վիեննայի Մխիթարեան միաբանութեան մատենադարանի «Մատեան երաժշտականութեան» ծաւալուն ձեռագրի բնագիրը:

Գիտաուսումնական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ հայ միջնադարեան շարականները: 2013էն կ'աշխատակցի *Հայկազեան հայագիտական հանդէս*ին:

Անդրանիկ Տագէսեան **adakessian@haigazian.edu.lb**
Ծնած է 1960ին, Պէյրութ: 2011ին պաշտպանած է դոկտորականը՝ «Democracy and integration in multicommunal polities: the Armenians and the Kurds in Lebanon» նիւթով: 1993-2018՝ պատասխանատու քարտուղար, իսկ 2018էն պատասխանատու խմբագիրն է *Հայկազեան հայագիտական հանդէս*ին: Անդամ է *Հայագիտական հարցեր* (2014), *Յեղասպանագիտական հանդէս* (2018), *Բազմավէպ* (2019) պարբերականներու խմբագրակազմերուն: 2011էն տնօրէնն է Հայկազեան Համալսարանի հայկական սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոնին: Խմբագրած է գիրքեր, վերջինը՝ *Իրաքի հայերը գիտաժողովի նիւթերը* (2020), կազմած է գիրքեր, վերջինը՝ *ՀԲԸՄ Հաճընի որբանոցը* (1919-1920) (2021), ունի մենագրութիւններ, վերջինը՝ *Լիբանանի հայօճախը, գիրք Ա., համարկումին խաչուղիները (1920-2005)* (2015):

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն ժողովրդավարացումը, մարդկային իրաւանց, ինքնութեան, համարկումի, Սփիւռքի մշակոյթի եւ պահպանման, Միջին Արեւելքի հայօճախներու պատմութեան հարցերը: 1993էն կ'աշխատակցի *Հայկազեան հայագիտական հանդէս*ին:

Աշխատակիցներու Ուշադրութեան

Հայկազեան հայագիտական հանդէս (*ՀՀՀ*) տարեգիրքը լոյս կ'ընծայուի 1970էն իվեր, Հայկազեան համալսարանի հայագիտական ամբիոնին կողմէ:

Ան կ'ընդգրկէ Հայաստանի եւ հայութեան ազգագրական, աշխարհագրական, բանասիրական, գրական, իմաստասիրական, իրաւագիտական, լեզուագիտական, կրօնական, հնագիտական, մշակութային (կրթութեան, թատրոնի, սինեմարուեստի, երաժշտութեան, պարարուեստի, ճարտարապետութեան, կերպարուեստի, մամուլի, եւն.), պատմական, տնտեսագիտական, բնական, քաղաքական եւ ընկերային գիտութիւններու բնոյթի անցեալի եւ ժամանակակից նիւթեր:

*ՀՀՀ*ն կը հրատարակէ հայերէն, անգլերէն, արաբերէն, ֆրանսերէն անտիպ գիտական յօդուածներ, ուսումնասիրութիւններ, հետազօտութիւններ, վերլուծումներ, հրապարակումներ, քննարկումներ, յուշագրութիւններ, գրախօսականներ, հաղորդումներ, վիճակագրական-մատենագիտական ցանկեր, մահագրականներ, հրատարակուած նիւթերու տարակարծիք ուսումնասիրութիւններ: Բացառիկ պարագաներու *ՀՀՀ*ի խմբագրութիւնը իր հայեցողութեամբ նկատի կ'առնէ այլ բնոյթի նիւթեր եւս:

Ներկայացուած յօդուած-ուսումնասիրութիւնները եւ հրապարակումները պարտին ըլլալ նախընտրաբար՝ առաւելագոյնը շուրջ 10,000 բառ (ծանօթագրութիւններուն հետ), քննարկումները՝ առաւելագոյնը շուրջ 5000 բառ (ծանօթագրութիւններուն հետ), հաղորդումները՝ առաւելագոյնը 4000 բառ, գրախօսականները՝ 2000 բառ, մահագրականները՝ մինչեւ 1000 բառ, բոլորը՝ համակարգիչի ARMENIAN UNICODE ծրագրի շարուածքով:

Աշխատակցութիւնները պարտին ունենալ.- մուտք/ներածական, բուն նիւթը (ենթավերնագրերով մասնատուած) եւ եզրակացութիւն կառոյցը:

Ծանօթագրութիւնները պարտին ըլլալ հետեւեալ կերպ.-

Մամուլի պարագային՝ հեղինակ, «յօդուածի անուն», *մամուլի անուն* եւ տպագրութեան վայր, յօդուածի տպագրութեան թուական եւ էջաթիւ:

Յօդուածներու ժողովածուի պարագային՝ հեղինակ, «յօդուածի անուն»՝ *գիրքի անուն եւ հատոր*, խմբագիր/կազմող, հրատարակիչ/մատենաշար, տպագրութեան վայր եւ տպարան, տպագրութեան թուական եւ էջաթիւ:

Գիրքի պարագային՝ հեղինակ, *գիրքի անուն եւ հատոր*, խմբագիր/կազմող, հրատարակիչ/մատենաշար, տպագրութեան վայր եւ տպարան, տպագրութեան թուական եւ էջաթիւ:

Արխիւային փաստաթուղթերու պարագային՝ փաստաթուղթի հեղինակը, խորագիրը, գտնուած վայրը, թիւը:

Հարցազրոյցներու պարագային՝ մասնակիցներուն անունները եւ թուականը:

Կայքէջի պարագային՝ լրիւ հասցէն եւ մատչումի թուականը:

Աշխատակցութիւնը պարտի ունենալ նաեւ անգլերէն կամ հայերէն հակիրճ ամփոփում մը, շուրջ 150 բառ: Նիւթին պէտք է կցուած ըլլան նաեւ հեղինակային համառօտ ինքնակենսագրականը (ծննդեան թուական, ծննդավայր, բարձրագոյն ուսում, պաշտպանած գիտական բարձրագոյն աստիճանը եւ թեզին նիւթը, հրատարակած գիրքերու եւ նիւթերու ծիրը, վերջին երկու գիրքերուն անունները (թուական-հրատարակչատուն, վայր), ներկայ պաշտօնը, նկար մը եւ ելեկտրոնային հասցէն առ ի հրատարակութիւն:

Հրատարակելի աշխատակցութիւնները, ըստ կարիքի, կ'ենթարկուին լեզուական խմբագրումի: Այլ փոփոխութիւններ կը համաձայնեցուին հեղինակին հետ: Հայագիր յօդուածները կը հրատարակուին դասական ուղղագրութեամբ: Աշխատակցութիւններուն կրնան կցուիլ նաեւ լաւորակ պատկերներ, փաստաթուղթեր եւ քարտէզներ, որոնց աղբիւրը եւ հրատարակման արտօնութիւնը ապահովելու է հեղինակը:

Աշխատակցութիւնները կը ներկայացնեն հեղինակներուն տեսակէտը:

Աշխատակցութեան, թղթակցութեան, բաժանորդագրութեան, հատորներու ստացումի, հրատարակութիւններու փոխանակման եւ այլ հարցերով հաղորդակցիլ հետեւեալ կերպ.-

Dr. Antranik Dakessian
Haigazian Armenological Review
P.O.Box 111748 Beirut Lebanon
Fax: 01349230/1, 03712058
Email: adakessian@Haigazian.edu.lb

Իւրաքանչիւր աշխատակցութեան ստացումը անմիջապէս կ'իմացուի հեղինակին, իսկ հրատարակման որոշումը՝ աշխատակցութեան ստացումէն առաւելագոյնը երեք ամիս ետք:

Հատորի մը գրախօսուիլը փափաքողներ, խմբագրութեան սկզբունքային համաձայնութենէն ետք պարտին ՀՀՀի խմբագրութեան յղել այդ գիրքէն 2 օրինակ:

ՀՀՀի մէջ հրատարակուած նիւթերէն կարելի է մէջբերել: Հրատարակուած նիւթին հեղինակը կը ստանայ ՀՀՀի տուեալ հատորէն 1 օրինակ:

ՀՀՀի հատորները մատչելի են հետեւեալ կայքերուն վրայ.-

http://www.haigazian.edu.lb/Publications/Pages/HaigazianArmenologicalReview.aspx .

http://tert.nla.am/mamul/HAIGAZIAN/Table.html .

https://www.flib.sci.am/ .

Notes to Contributors

Haigazian Armenological Review (*HAR*) has been published annually since 1970 by the Department of Armenian Studies at Haigazian University.

The *Review* is devoted to studies concerning Armenia and the Armenians. These may include works dealing with archaeology, culture (education, theatre, cinema, music, dance, architecture, plastic arts, mass media, etc.), economics, ethnography, geography, history, linguistics, literature, philology, philosophy, politics, religion, legal, natural, and social sciences, previously unpublished documents, memoirs, investigative articles, reviews, briefings, bibliographical lists and necrologies in Armenian, Arabic, English and French. Other sorts of materials might be published at the discretion of the Editorial Board.

Articles submitted to *HAR* should preferably be not more than 10,000 words (including the footnotes), for investigative articles and briefings not more than 4000 words, for book reviews not more than 2000 words and for obituaries not more than 1000 words. They will be considered on the understanding that they are not being offered for publication elsewhere, and have not been published in any language. It is preferred that manuscripts submitted for consideration are on CD with a hard copy.

Manuscripts should have an introduction, the body (with subtitles) and a conclusion. Footnotes should have the following details.-

In case of newspapers/periodicals: author, "title of the article", *name of the newspaper*, place of publication, date and page number.

In case of an article from a book: author, "title of the article", *name of the book and volume*, editor, publisher/series, place of publication, date and page number.

In case of books: author, *name of the book and volume*, editor, publisher/series, place of publication, date and page number.

In case of archival materials: author of the document, "title of the document", name of the document file, place reserved, number, date.

In case of interviews: names of the interviewer and interviewee, date and place.

In case of websites: the title, the address and date accessed.

Submitted manuscripts must include a150 word summary in Armenian or English and a short biography of the author (birthplace and birth date, higher education, degree, title of the thesis defended, the scope of the books published, the titles of the last two books published – with date and publisher – current position, and a passport size photo).

The editors reserve the right to edit manuscripts to conform to the *HAR*'s style and format. Authors will be informed before publication in case of more substantial editing. Spelling in articles published in Armenian will be edited to conform to the rules of classical Armenian orthography.

Authors may submit with their contributions printable photographs, tables, figures, and maps on condition that they mention their sources and take responsibility for obtaining permission to publish any such material under copyright.

All opinions expressed (except those in the Editorial) are those of the individual authors and not necessarily of *HAR* or Haigazian University.

Manuscripts, correspondence, subscription queries, and inquiries regarding back issues should be addressed to:

Haigazian Armenological Review
P.O.Box111748, Beirut Lebanon.
Fax: (01)341230/31 or (03)712058
Email: adakessian@haigazian.edu.lb

All submissions received will be acknowledged immediately. Decisions concerning publication will be conveyed to the authors within three months of the date of receipt of the submitted contributions. Manuscripts not accepted for publication will be returned to their authors.

Authors or publishers who wish to have their titles considered for review should send two copies of the said publication to the Editor. One copy will be passed on to the reviewer, while the second will be deposited in the Derian Armenological Library of Haigazian University and become available to the general public.

Quotations can be made from contributions published in *HAR*. The Editorial Board likes to be kept informed in this regard.

Authors are entitled to one copy of the volume in which their contribution is published.

The *Haigazian Armenological Review* volumes are accessible on the website:
http://www.haigazian.edu.lb/Publications/Pages/HaigazianArmenologicalReview.aspx .
http://tert.nla.am/mamul/HAIGAZIAN/Table.html .
https://www.flib.sci.am/ .

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ/TABLE OF CONTENTS

Խմբագրական 3
Editorial 5

ՅՕԴՈՒԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ ARTICLES

Պատմութիւն-Հնագիտութիւն History-Archeology

Վարդան Մխիթարեան — Ադրբեջանական (թուրք-թաթարական) սպառնալիքները. տեղեկատուական պատերազմ — 7
Vardan Mkhitaryan — The Azerbaijanian (Turkish-Tatar) old/new threats: informationa warfare

Յովիկ Գասապեան — Թեսաղոնիկէի (Սալոնիկ, Յունաստան) հայկական համայնքը 1990-2017 շրջանին — 37
Hovig Kassapian — The Armenian Community of Thessaloniki between 1990 and 2017

Zaven Messerlian — Letters to dignitaries and publications on the Armenian Genocide issue and their responses (Part I) — 81
Զաւէն Մսըրլեան — Հայոց Ցեղասպանութեան առնչութեամբ նամակներ՝ բարձրաստիճան անձնաւորութեանց եւ հրատարակչատուներու եւ անոնց պատասխանները

Սերհակ Ամիրեան — Ստալինիզմ եւ ՀԿ(բ)Կ կենտկոմի 1937ի չարագուշակ սեպտեմբերեան *պլենումը* — 113
Serhak Amiryan — Stalinism and the notorious session of the Armenian Communist Party (September 15-18 and 22-23, 1937)

Վարդան Մատթէոսեան — Հալաճեան դատը (1909). հայոց քաղաքացիութեան դէմ առաջին իրաւական մարտահրաւէրը Միացեալ Նահանգներու մէջ — 131
Vartan Matiossian — The Halladjian case (1909): First challenge for Armenian citizenship in the United States

Bedros Torossian — In search of haven and seeking fortune: The economic role of Ottoman Armenian migrants in British-occupied Egypt (1882-1914) (Part II) — 169
Պետրոս Թորոսեան — Դրախտի որոնումը եւ հարստութեան փնտռտուքը. օսմանցի հայ պանդուխտներու տնտեսական դերը բրիտանական Եգիպտոսի մէջ (1882-1914) (Բ. մաս)

Յասմիկ Ամիրջանեան **Hasmik Amirjanyan**	Հովուապետ-կաթողիկոս Ղուկաս Կարնեցու ընկերային-քաղաքական գործունէութիւնը (1780-1799) The socio-political role played by the pastor Catholicos Ghukas Karnetsi (1780-1799)	191
Հեղինէ Մկրտչեան **Heghine Mkertchyan**	Արցախի կուսանաց անապատները The nunneries of Artsakh	203
Ռուբէն Գասպարեան **Ruben Gasparyan**	Այրիվանքի տաճարի հարաւային պատի Իւանէ Ա. Զաքարեանի արձանագրութիւնը եւ յարակից հարցեր (ԺԳ. դար) The inscription of Ivane Zakaryan I on the southern wall of Ayrivank-Geghard monastery and related issues (13th century)	219
	Գրականութիւն Literature	
Լուսինէ Հայրիեան **Lusine Hayriyan**	Բանահիւսական տարրերը Մշոյ Գեղամի հեղինակային հեքիաթներում Folk elements in the fairy tales of Msho Gegham	251
Arif Tapan	Reading an Armeno-Turkish novel as another phenomenon: A narratological approach to *Bir Sefil Zevce* by Hovsep Maruş (1868)	265
Արիֆ Թափան	Յովսէփ Մարուշի հայատառ թրքերէն *Պիր սէֆիլ զէվճէ* (1868) վէպը՝ պատմողական մօտեցումով	
	Լեզու Linguistics	
Արմենակ Եղիայեան **Armenag Yeghiayan**	Գոյականներու յոգնակին (յոգնակերտում) The pluralization of nouns in the Armenian language	287
Յակոբ Չոլաքեան **Hagop Cholakian**	Բարբառագիտութիւնը եւ Անտիոքի շրջանի հայերէն խօսուածքները The study of the dialects and Armenian vernaculars of the Antioch region	315
	Տնտեսաբանութիւն	
Dikran Ekmekji	The Ekmekji industrial initiative (Aleppo-Beirut, 1920-2016)	329
Տիգրան Էքմէքճի	Էքմէքճի ընտանիքին ճարտարարուեստական հարիւրամեայ ընթացքը (Հալէպ-Պէյրութ, 1920-2016)	
	Արուեստ եւ Արհեստ Arts and Crafts	
Անդրանիկ Տագէսեան **Antranik Dakessian**	Ակնարկ հայկական արձանագրութեամբ պղնձեայ թասերու վրայ A survey on the Armenian copper bath *tass*	339

Արփի Վարդումեան Կոմիտասի եւ Տիգրան Չիթունու ստեղծագործական գործակցութիւնը 351
Arpy Vardumyan Creative collaboration between Komitas and Tigran Chituni

Հայարփի Յակոբեան Յարուցեալ Մովսէսը Քրիստոսի աստուածայայտնութեան վկայ՝ ըստ պայծառակերպութեան եւ երկրորդ գալստեան հայկական միքանի մանրանկարների 373
Hayarpi Hakobyan The depiction of the resurrected Moses in some Armenian miniature paintings of Chrsit's transfigurationand the second coming

Arto Tavukcyan The case for Armenian prayer rugs 395
Արթօ Թաւուքճեան Հայկական աղօթագորգերու պարագան

Ընկերաբանութիւն sociology

Կարէն Մկրտչեան Համավարակը եւ հանրային կառավարման խնդիրը Այսրկովկասում 407
Karen Mkrtchyan Covid-19 and the problem of public governance in the Caucasian states

Սարգիս Պետրոսեան Հնագոյն Բզնունիքի արտօնեալ դասերի եւ պաշտամունքի մասին 433
Sarkis Petrosyan Old Bznunik: Features of its privileged class and religion

Բանահիւսութիւն-Ազգագրութիւն Folklore-Ethnography

Յետ-Եղեռնեան ժողովրդային միքանի ստեղծագործութիւն, Լիբանանէն
Ա.- Փունջ մը յօրինուած բանաստեղծութիւն Վահան Ա. քհնյ. Քենտիրճեանէն 465
Բ.- Ալեքսանտրէթի Սանճաքէն հայկական ելիցին նուիրուած *ղեսթան* 470
Few post-Genocide popular creations from Lebanon
A.- A bouquet of composed poems by Father Vahan Kendirdjian 465
B.- A *destan* dedicated to the departure of the Armenians from the Sandjak of Alexandretta 470

Լուսինէ Ղէյճեան Ժողովրդական ասոյթաբանութեան դրսեւորումները Յովհաննէս Թումանեանի գրական ժառանգութեան մէջ 477
Lusine Grejyan Folk paremiology in Hovhannes Tumanyan's literary heritage (Prayer, curse, blessings and best wishes, oath)

Տորք Դալալեան Պատմագրական-բանահիւսական պատումները Յովհան Օձնեցի կաթողիկոսի մասին (աղբիւրագիտական ուսումնասիրութիւն) 489
Tork Dalalyan Historiographical-folkloristic narratives about Catholicos Hovhan Odznetsi (research of sources)

Եկեղեցի, Կրօնք, Փիլիսոփայութիւն

Ճան Էրզրումօղլու Գալուստ Կոստանդեանի դրապաշտ աշխարհայեացքը եւ դերը օսմանեան փիլիսոփայութեան պատմութեան մէջ 501
Can Erzurumluoglu The positivist views of Kaloust Gosdantian and his role in the history of Ottoman philosphy

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ INVESTIGATIVE ARTICLES

Մարիամ Մարգարեան Հայկական քաղաքակրթութիւնը մերձարեւելեան 523
Գարիկ Պօղոսեան արդի քաղաքական զարգացման ենթախորքում
Mariam Margarian Armenian civilzation in the context of current polltlcal
Garik Poghossian developments In the MIddle East

Yeghia Tashjian Iran's assertive foreign policy in the South Caucasus 545
Եղիա Թաշճեան Իրանի հարկաւորող արտաքին քաղաքականութիւնը Հարաւային Կովկասի մէջ

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ UNPUBLISHED ARTICLES

Վաչէ Ղազարեան Պատառիկներ Վահան Թէքէեանի սաղիմական 553
Vatche Ghazarian առաքելութենէն
Facts related to Vahan Tekeyan's Jerusalem mission

Եղիկ Ճերէճեան Նորայայտ նամակ Փարամազին՝ Սապահ-Գիւլեանէն 591
Yeghia Jerejian A newly discovered letter to Paramaz from Sabah-Kulian

Միհրան Մինասեան Անտիպ տեղեկագիր մը Տարսոնի մասին (1898) 615
Mihran Minassian An unpublished report of 1898 on Darson (Tarsus)

Համառօտ կենսագրական հատորին աշխատակիցներուն 629

Աշխատակիցներու ուշադրութեան 637

Note to contributors 639

Բովանդակութիւն/Table of contents 641

Հայկազեան հայագիտական հանդէս, հտր. ԽԲ/1.
Տպաքանակ՝ 125
Գին՝ Լիբանան 100,000L. ոսկի, արտասահման 30 տոլար
Տպագրութիւն՝ Rouhana Chemaly, Daroun s.a.l.
Haigazian Armenological Review, Vol. 42/1
P.O.Box 111748 Beirut Lebanon
Fax: 01349230/1, 03712058
Email: adakessian@Haigazian.edu.lb